ՀԱՅ ԴԱՍԱԿԱՆՆԵՐԻ
ԳՐԱԴԱՐԱՆ

ԱՐՓԻԱՐ
ԱՐՓԻԱՐՅԱՆ

ԵՐԿԵՐ

ԵՐԵՎԱՆ
«ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳՐՈՂ»
1987

ԳՄԴ 84Հ5
Ա 952

Կազմեց՝ Ս. Գ. ՍԱՀԱԿՅԱՆ
Առաջաբանը՝ ՀԱԿՈԲ ՄԱՐԳԱՐՅԱՆԻ

Արփիարյան, Ա.

Ա 952 Երկեր/Արփիար Արփիարյան, (Կազմ.՝ Ս. Գ. Սահակյան։ Առաջաբանը՝ Հ. Մարգարյան).— Եր.։ Սովետ. գրող, 1987.— 524 էջ։ (Հայ դաս. գ-րան)։

Ժողովածուում զետեղված են հեղինակի լավագույն պատմվածքները ու վիպակները, ինչպես նաև գրականագիտական դիմանկարները։

Ա $\frac{4702080100(61)}{705(01)87}$ .13.87 ԳՄԴ 84Հ5

© «Սովետական գրող» հրատարակչություն, կազմելու, առաջաբանի և ձևավորման համար, 1987

ԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ ՈԳԵՇՈՒՆՉ ՄՇԻՆԵՑԻԿԸ

Անցյալ դարի ութսունական թվականների կեսերից մեր գրականության արևմտահայ հատվածը թևակոխեց իր զարգացման նոր շրջանը: Արևմտահայ ութսունականների գրական նոր սերունդը, որդեգրելով ռեալիստական գրականության սկզբունքները, նոր աստիճանի բարձրացրեց ոչ միայն գրականությունը, այլև մամուլը, հրապարակախոսությունը, գրական քննադատությունը: Գրականության ու հրապարակախոսության մտահոգության հիմնական առարկան դարձավ ժողովրդի նոր զանգվածների սոցիալական ու ազգային ինքնագիտակցության բարձրացումը: Գրական այդ նոր սերնդի անվիճելի առաջնորդը Ա. Արփիարյանն էր, որը մոտ երեք տասնամյակ տևող իր անխոնջ գործունեությամբ դարձավ տվյալ ժամանակաշրջանի հայ հասարակական առաջադեմ մտքի ամենահայտնի անուններից մեկը:

1

Արփիար Արփիարյանը ծնվել է 1851 թ. դեկտեմբերի 21-ին Սամսունի նավահանգստում, երբ նրա ծնողները՝ Փիլիպոսը և Թենուֆը Ակնի Ապուշեխ գյուղից տեղափոխվում էին Կոստանդնուպոլիս: Նրա մանկությունն ու պատանեկությունը անցնում է Կ. Պոլսի Միջագյուղ (Օրթագյուղ) թաղամասում, ուր հաստատվում են նրա ծնողները: Նախնական կրթությունը ստանում է նույն թաղամասի Թարգմանչաց վարժարանում: 1867-ին ուղարկվում է Վենետիկ՝ Մուրատ-Ռափայելյան վարժարանում սովորելու, ուր աշակերտում է Ղևոնդ Ալիշանին: Ալիշանը սիրում և հատուկ ուշադրություն է դարձնում իր ուշիմ աշակերտին: Այստեղ ուսանելու երեք տարիների ընթացքում Արփիարը կատարելապես տիրապետում է հայերենին, հայոց պատմությանն ու գրականությանը: Ինքնուրույն կարդում ու ծանոթանում է ֆրանսիական ու իտալական գրականության դասականներին:

Վարժարանը ավարտելուց հետո՝ 1870 թ. ամռանը, Արփիարյանը վերադառնում է

Կ. Պոլիս: Ըստ պայմանավորվածության, մեկ տարի անց Ալիշանը նրան հրավիրում է Վենետիկ՝ Մխիթարյան միաբանությունում ծառայելու համար: Սակայն դեռևս 1859-ին տեղի ունեցած հոր մահից հետո, քայքայման եզրին հասած ամիրայական հին տոհմի վերջին խնայողությունները իսպառ վերջանում են, և Արփիարյանն իր երկու կրտսեր եղբայրների՝ Ալեքսանի ու Տիգրանի, և մոր ապրուստի հոգսով ծանրաբեռնված, ստիպված է լինում 1870 թ. աշնանը աշխատանքի անցնել պատրիարքարանում՝ որպես օգնական-քարտուղար: Մոտ մեկ և կես տարի այստեղ աշխատելուց հետո, 1872 թ. հունվարից սկսած, երկար տարիների ընթացքում նա որպես հաշվակալ ծառայում է վարկային գործունեությամբ զբաղվող մեծահարուստ Խաչիկ Թոփհանելյանի գրասենյակում:

Հանգամանքների բերումով Արփիարյանենց ընտանիքում և շրջապատում անպակաս էին խոսակցությունները գավառի կյանքի մասին. այնտեղից ստանում ու ընթերցվում էին իրենց պանդուխտ հարազատներին ուղղված տրտմաքախիծ նամակներ...

«...Մանկութենէ ի վեր կարդացած եմ այդ նամակները, լսած եմ ակնցիներու պատմությունները, տեսած եմ անոնց արցունքները,— գրում է Արփիարյանը,— ու այդ ամենը վրաս խոր տպավորություն թողած են, և սիրտս լեցուցած են այնպիսի զգացումներով, զորս միայն պիտի կարենամ մասամբ բացատրել,— երբ օր մը ինձ հնարավոր ըլլա գրել ակնցիներու կյանքե այն վեպը, որուն կտենչամ երկար ատենե ի վեր» («Հայրենիք», Կ. Պոլիս, 1891, № 18): Պատրիարքարանում, ապա Թոփհանելյանի գրասենյակում աշխատանքի տարիներին Արփիարյանը հնարավորություն է ունենում մոտիկից ծանոթանալու ոչ միայն երկրից Կ. Պոլիս պանդխտածների, նրանց և գավառի սոցիալական ու ազգային ծանր իրավիճակին, այլև բուն Պոլսի ազգաբնակչության տարբեր խավերի կյանքին:

Եվ իսկապես, այդ շփումների հետևանքով Արփիարյանը ձեռք է բերում կյանքի լայն ճանաչողություն, որը ընդգրկում է թե՛ ժողովրդի մարդկանց, պանդուխտների, արհեստավորների, գործավորների, թե՛ մտավորականների, հոգևորականների, ունևոր հարուստ խավերի կյանքը, նրանց ըմբռնումները, հասարաքաղաքական ու բարոյական իրավիճակը: Հասարակական գործունեության առաջին իսկ քայլերից Արփիարյանը իրեն անվերապահորեն նվիրում է ժողովրդական ունեզրկված ամենալայն զանգվածների շահերի պաշտպանությանը: Դրա դրսևորումներից մեկը նրա գործոն մասնակցությունն է 1876 թ. ապրիլի 15-ին Կ. Պոլսում կազմակերպված «Արարատյան ընկերության Հայոցը», որը մի շարք դպրոցներ բացեց Արևմտյան Հայաստանի գավառներում: Նույն մտասևեռումը առկա է նաև այն բանում, որ ռուս-թուրքական պատերազմի տարիներին ձգտելով կամրջել մեր ժողովրդի երկու հատվածներին համախմբած ազատագրական ձգտումները, Գր. Արծրունու խմբագրությամբ Թիֆլիսում լույս տեսնող «Մշակ» թերթում 1878 թ. փետրվարից սկսած հանդես է գալիս Հայկակ ստորագրությամբ իր թղթակցությունների շարքով, և մոտ երեսուն տարի, երբեմն օրը օրին, արևելահայ ընթերցողներին ծանոթացնում է արևմտահայության հասարաքաղաքական ու տնտեսական ծանր կացությանը, «հայկական հարցի» միջազգային արձագանքներին, խոսում գրականության ու արվեստի և առհասարակ արևմտահայության ընդհանուր իրավիճակի մասին:

Կաթողիկոսական ընտրությունների առթիվ, որպես «Արևելք» թերթի թղթակից, 1884 թ. ապրիլին Արփիարյանը ուղևորվում է Կովկաս: Լինում է Թիֆլիսում, Երևանում, Էջմիածնում, ծանոթանում է Րաֆֆու, Գր. Արծրունու, Գ. Սունդուկյանի, Ղ. Աղայանի, Պ. Պռոշյանի և արևելահայ այլ գրողների ու մշակութային գործիչների հետ, Թիֆլիսում ներկա է լինում «Պեպո» կատակերգության ներկայացմանը, անջնջելի տպավորություններ ստանում Գ. Ճմշկյանի Պեպոյի դերակատարումից: Ճանապարհորդության արդյունքները տպագրվում են «Արևելքի» 1884 թ. համարներում:

Մինչ այդ Արփիարյանը մասնակցել էր «Արևելք» թերթի հիմնադրմանը (1884 թ.) և ղեկավարում էր նրա գրական բաժինը: Նրա նախաձեռնությամբ թերթի էջերում տպագրվեցին Րաֆֆու «Խաչագողի հիշատակարանը», ապա «Խամսայի մելիքությունները», որի տպագրումը մնաց կիսատ: Նույն թերթի էջերում «Հրազդան» ստորագրությամբ տպագրվում է նրա «Օրվան կյանքը» քրոնիկների շարքը, ուր նա համարձակ քննադատությամբ մերկացնում է պոլսահայ վերնախավի հաշտվողական քաղաքականությունը, ընթերցողներին ներշնչում ազատասիրական ոգի: «Արևելքի» խմբագրության հաշտվողական թևը Արփիարյանից ազատվելու համար նրան է հանձնում «Մասիսի» խմբագրությանը: 1884 թ. սեպտեմբերին «Մասիսի» էջերում լույս է տեսնում Արփիարյանի «Րաֆֆին և հայ վիպասանությունը» ընդարձակ հոդվածաշարը Րաֆֆու ստեղծագործության մասին: Համարձակորեն արտահայտվող հասարակաքաղաքական առաջադեմ նախասիրությունները, նրա անթաքույց դեմոկրատիզմը Արփիարյանին ապահովում են մեծ ժողովրդայնություն: Չնայած պոլսահայ հարուստ վերնախավի դիմադրությանը, 1884 թ. մայիսին, որպես Բաղեշի ներկայացուցիչ, Արփիարյանը ընտրվում է Կ. Պոլսում գործող Ազգային ժողովի պատգամավոր: Մամուլում և Ազգային ժողովի նիստերում նրա համարձակ մերկացումները Արփիարյանին ապահովում են ոչ միայն բարեկամներ ու համախոհներ, այլև բացարձակ թշնամիներ:

Արփիարյանը և նրա համախոհները զգում էին, որ առանձին ելույթներով, տարանջատ գործունեությամբ անհնարին է պարտության մատնել տիրապետող մտայնությունը. հին գաղափարախոսությանը անհրաժեշտ է հակադրել նորը, ժողովրդի սոցիալական ու ազգային զարթոնքը բարձրացնել նոր մակարդակի: Սուլթանական բռնապետության պայմաններում ժողովրդի ամենալայն զանգվածների համար այդ խնդրի իրագործման ամենամատչելի միջոցը գրականությունն ու հրապարակախոսությունն էր: Այդ մտայնությամբ էլ Արփիարյանի ղեկավարությամբ՝ Գր. Զոհրապի, Լ. Բաշալյանի, Հր. Ասատուրի, Տ. Կամսարականի, Մ. Կյուրճյանի մասնակցությամբ իր գործունեությունը ծավալեց գրական նոր սերունդը:

Հիմնականում Արփիարյանի խմբագրությամբ 1880—1895 թթ. ընթացքում Կ. Պոլսում լույս տեսնող «Արևելք», «Մասիս» և «Հայրենիք» պարբերականներում որպես տաղանդավոր գրողներ ձևավորվեցին ոչ միայն Գր. Զոհրապն ու Լ. Բաշալյանը, Տ. Կամսարականն ու Մ. Կյուրճյանը, այլև իրենց գրական մկրտությունը ստացան այդ տարիներին գրականություն մուտք գործող գրեթե բոլոր արևմտահայ գրողները, այդ թվում՝ Եր.

Օտյանը, Երուխանը, Թլկատինցին, Ռ. Զարդարյանը և ուրիշներ: Դա գրականության և հրապարակախոսության մեծ վերելքի շրջան էր: Կյանքի թելադրանքով ու գրական նոր սերնդի գործունեությամբ արմատական փոփոխություններ տեղի ունեցան գրականության թեմատիկայի, հերոսի ընտրության ու բացահայտման, ողջ գրականության գաղափարական նպատակասլացության ու պատկերավորման բնագավառներում: Երկար տարիներ լինելիության ընթացքի մեջ գտնվող ռեալիզմը վերջնականապես հաղթանակեց: Ռեալիստական գեղագիտության սկզբունքների հաղթանակը ապահովեց ինքնուրույն գրականության մինչ այդ չտեսնված ծաղկումը:

Այդ գործում Արփիարյանի դերը խիստ մեծ էր ու վճռական: Դժվար չէր, որ նա թե՛ իր գրչակից ընկերների, թե՛ հասարակության կողմից ճանաչվեց արևմտահայ ուրբանականների գրական շարժման անվիճելի առաջնորդն ու կազմակերպիչը: Այդ թվականների մամուլի բովանդակության անառարկելի հարստության վկայություններից մեկը, անկասկած, ռեալիզմի պաշտպանությամբ տոգորված նրա գրաքննադատական ու հրապարակախոսական հոդվածներն ու ելույթներն են: Ռեալիզմի նրա ըմբռնումը ընդգրկում է ոչ միայն գեղարվեստական գրականությունն ու արվեստը, այլև հասարակական ողջ կյանքն իր դասային կառուցվածքից բխող ներքին հակասություններով, սոցիալական ու քաղաքական տարբեր ուժերի ու դիրքավորումների բախումներով: Արփիարյանի ամբողջ գործունեությունն ունի սոցիալ-քաղաքական շեշտված միտում: Առաջադեմ ոգով են տոգորված նաև այդ և հետագա տարիներին լույս տեսած նրա գեղարվեստական ստեղծագործությունները՝ «Կյանքի պատկերներ» պատմվածքների ժողովածուն (1885 թ.), նույն խորագրի ներքո 1886-ին տպագրված «Ապուշը» վիպակը, «Դերասանուհին» (1887 թ.) «Հագու գավակը» (1894 թ.), «Հանույքի համար» (1894 թ.) պատմվածքները, «Մինչև ե՞րբ» (1890) և «Ոսկի ապարանջան» (1906 թ.) վիպակները:

Արփիարյանը, սակայն, ժողովրդի սոցիալական ու ազգային զարթոնքին մասնակցում էր ոչ միայն գրականությամբ ու հրապարակախոսությամբ, այլև որպես ազգային գործիչ չէր մերժում նաև քաղաքական բացահայտ ցույցերը և նույնիսկ զինված պայքարը ընդդեմ սուլթանական բռնապետության: Նկատի ունենալով 1877—1878 թթ. ընթացքում Զեյթունի ապստամբության նվաճումները, Հայկակ ստորագրությամբ իր թղթակցություններից մեկում նա գրում է. «Զեյթուն իրեն ինքնավարությունը ունեցավ, ամուր լեռներ, քանի մը հրացան և քիչ մը արյան շատ ավելի արդյունավոր եղան, քան վեհաժողովներ, անթիվ բողոքներ, կառավարությանց միջամտություններ:... Հուսամք թե Զեյթունցիք իրենց փրկությամբը Հայաստանի փրկությունը և ինքնավարությունը դյուրացնեն» («Մշակ», 1879, № 209):

1890-ին տեղի ունեցած Գում-Գափուի նշանավոր ցույցին մասնակցելու պատճառով ձերբակալվում է նաև Արփիարյանը և որոշ ժամանակ բանտում մնալուց հետո քաղաքական մի շարք այլ բանտարկյալների հետ 1891 թ. սկզբին ազատվում է բանտից: 1894—96 թվականներին Աբդուլ Համիդի կողմից կազմակերպված հայկական ջարդերի տարիներին բազմաթիվ հայ մտավորականներ փախչում են արտասահման: Խուսափելով

նոր ձերբակալումից՝ 1896 թ. մարտին արտասահման է անցնում նաև Արփիարյանը: Այստեղ էլ նա ծավալում է բուռն գործունեություն: Լոնդոնում հիմնում ու խմբագրում է «Նոր կյանք» ազգային-գրական հանդեսը, Վենետիկում՝ «Հայ հանդես» ամսագիրը, Կահիրեում խմբագրում է «Շիրակ» պարբերականը և «Լուսաբեր» եռօրյա թերթը: Իր խմբագրած և այլ պարբերականներում հրատարակում է մի շարք գեղարվեստական ստեղծագործություններ, տասնյակ գրախոսություններ և հարյուրավոր հրապարակախոսական հոդվածներ: Արտասահմանում ապրելու տարիներին Արփիարյանի տնտեսական վիճակը գնալով ծանրանում է, բայց նա շարունակում է ստեղծագործել, պայքարել անարդարության, քաղաքական կարճատեսության, կուսակցական անհանդուրժողականության դեմ... Եվ դա մինչև իր կյանքի վերջին օրը, մինչև իր կյանքի վերջին ժամերը... Իսկապես անհանգիստ ոգի, հասարակական առաջադեմ գործչի անմնացորդ նվիրում...

2

Աչքի առաջ ունենալով Արփիարյանի հասարակական-հրապարակախոսական և գրական-գեղարվեստական լայնածավալ գործունեությունը, դժվար է նախապատվություն տալ դրանցից մեկնումեկին: Ըստ էության, առհասարակ սխալ կլինի նրա ժառանգության այդ երկու բնագավառների հակադրումը: Իրականում դրանք իրենց ամբողջությամբ ու միասնությամբ են բնորոշում Արփիարյանի մարդկային ու ստեղծագործական անկրկնելի անհատականությունը: Արփիարյանը իր բուն խառնվածքով հասարակական գործիչ էր, տաղանդաշատ հրապարակախոս, խմբագիր, գրական միջավայրի կազմակերպիչ: Եվ չնայած տեսականորեն ընդունում էր գեղարվեստական գրականության հարաբերական ինքնուրույնությունը քաղաքականությունից ու հրապարակախոսությունից, այդուամենայնիվ նա շատ հաճախ հաշվի չնստելով դրա հետ, իր գեղարվեստական ստեղծագործություններին ու գրաքննադատական ելույթներին հաղորդում էր քաղաքական ու հրապարակախոսական բացահայտ շեշտադրում: Ըստ երևույթին, տվյալ հարցում խաչաձևվում էին մի շարք գործոններ՝ թե՛ նրա անհատական խառնվածքը, թե՛ հասարակական կյանքի ու ժողովրդի ոչ բարվոք վիճակը, թե՛ անհրաժեշտ անելիքների հրատապությունն ու դրանց արագ իրագործման անհապաղականությունը:

Իսկ ժամանակի, անհրաժեշտ իրագործումների արագության գործոնը իրոք վճռական էր: Ժողովրդի սոցիալական ու ազգային զարթոնքը նոր աստիճանի բարձրացնելու համար, ըստ էության, անհրաժեշտ էր առաջին հերթին նոր մակարդակի բարձրացնել գրականությունն ու արվեստը, նորովի բացահայտել դրանց հասարակական դերն ու նշանակությունը: Այդ գիտակցությամբ էլ արևմտահայ ռեալիստները գեղարվեստական ստեղծագործությանը զուգահեռ իրենց ուշադրությունը կենտրոնացրին նաև գրականության տեսական խնդիրների վրա: Այդ հարցադրումների կիզակետը դարձավ ռեալիզմի խնդիրը: Գր. Զոհրապը, Լ. Բաշալյանը, Տ. Կամսարականը, Հր. Ասատուրը հանդես եկան այդ խնդրին նվիրված ուշագրավ հոդվածներով: Բայց ռեալիստական մեթոդի, դրա

հասարակական ու գաղափարական նշանակության բացահայտման գլխավոր դեմքը դարձավ Արփիարյանը: Տարբեր առիթներով անդրադառնալով ռեալիստական գրականության խնդիրներին, Արփիարյանն, ըստ էության, մշակեց ամբողջական մի ինքնուրույն մոտեցում, որն ընդգրկում է թե՛ կյանքի ու գրականության նոր հարաբերության, թե՛ նոր թեմատիկայի, գրականության ժողովրդայնության, թե՛ գեղագիտական նոր ննչողության հարցադրումները:

Արփիարյանը գրականության ռեալիստական ուղղությունը առաջին հերթին դիտում է որպես կյանքի խոր ճանաչողության արտահայտություն և այդ առումով անմիջական նմանություն է տեսնում գրականության ու գիտության միջև: Իր «Ազգային տեսություն» ակնարկում նա գրում է. «Գրողներն ըլլան տնտեսագետ թե վիպասան, գիտնական թե բանաստեղծ, երբ չեն աշխատիր պարզ զբոսանքի համար, այլ կաշխատին իրենց ժողովրդին համար, պարտական են հիմնովին ուսումնասիրել այդ ժողովրդի նյութական ու բարոյական կյանքը և գրել այդ կյանքի պահանջներու համեմատ» («Մասիս», 1890, № 3944): Հրազդան ստորագրությամբ իր «Օրվան կյանքը» ակնարկներից մեկում, նշելով գրականության թեմատիկայի բնագավառում իր և իր համախոհների նախասիրությունները, Արփիարյանը գրում է. «Ազգի մը կյանքը ժողովուրդն է. իմաստուն հայրենասերը ժողովրդի համար կը խորհի. այդ ժողովուրդն երկրագործն է, արհեստավորն է, աշխատողն է, «անարգյալ ռամիկն» է: Թուրքիո հայոց գրականությունն սկսած է ըմբռնել այս տարրական ճշմարտությունն ու համոզվիլ, թե օգտավետ, հիմնավոր, տևական մատենագրությունը ժողովրդի կյանքեն կարելի է միայն ստեղծել» («Արևելք», 1888, № 1389):

Այդ առումով էլ Արփիարյանը իր մի շարք գրախոսություններում բարձր է գնահատում Գր. Զոհրապի նովելները, Մ. Կյուրճյանի «Պանդուխտի կյանքեն» շարքը, Լ. Բաշալյանի պատմվածքները, Տ. Կամսարականի «Վարժապետին աղջիկը» վեպը, որոնք դիտում է որպես ռեալիստական (իրապաշտական) գրական ուղղության կենսունակության արտահայտություն: Նկատելով գրական սուր պայքարը, ռեալիզմի նկատմամբ հարձակումները, Արփիարյանը հանդես է գալիս «Գրական դպրոցներ» և «Իրապաշտություն» հոդվածներով, որտեղ տեսականորեն փորձում է հիմնավորել ռեալիզմի իրավունքները և նրա հաղթանակի օրինաչափությունը: Ռեալիզմի առավելությունը գրական նախորդ դպրոցների նկատմամբ Արփիարյանը տեսնում է ժողովրդական կյանքի հետ նրա հաստատած սերտ կապակցության մեջ: «...Տասը տարիէ ի վեր,— գրում է նա,— գրողները կամաց-կամաց հետևեցան այնպիսի ուղղության մը, որ ժողովուրդը սկսավ համ առնել իր օրվան ընտանեկան, անհատական կյանքին հետ հարաբերություն ունեցող գրվածներեն»:

Գրական պայքարը նա բնական է համարում, քանի որ կան տարբեր, հակոտնյա գաղափարներ, հին ու նոր ըմբռնումներ: Գրականությունը հասարակության նման անընդհատ շարժման, զարգացման մեջ է, ըստ որում փոփոխվում են ոչ միայն գաղափարները, այլև գրելաձևը, իրականության պատկերման եղանակները: Նոր սերնդի գրողները իրենք անձամբ կարող են նաև տնտեսական ապահովված վիճակ ունենալ, բայց ղեկավարվելով ընդհանրության շահերով, տխրում, ցավում, զգացվում են իրենց շուրջը տի-

րաղ անիրավություններից: Նրանք «Առաքյալներ են, որք մասնավոր կոչում մը ունին. մարդկության ցավերը թեթևացնել, տառապանքները սփոփել, անոնց աղետներուն, ընկերական կազմակերպության առաջ բերած չարիքներուն դարմանը փնտռել» («Հայրենիք», Կ. Պոլիս, 1892, № 177):

«Իրապաշտություն» հոդվածում Արփիարյանը մերժում է «բաց տեսարանների» առթիվ ռեալիստական ստեղծագործությունների նկատմամբ առաջադրվող անբարոյականության մեղադրանքը: Խուսափելով կյանքի ստվերոտ կողմերի նկարագրությունից՝ գրական նախորդ դպրոցի գրողները ստեղծում են մարդկային այնպիսի կերպարներ, որոնք թեև գոյություն չունեն կյանքում, «բայց պիտի ըլլան հետևելու գեղեցիկ օրինակներ: Անոնց գրքերուն մեջ բարին կը հաղթե չարին, առաքինությունը պարզերես կելլե, մոլությունը կը խայտառակվի»: Իրապաշտները, սակայն, մտածում են, որ մարդիկ երեխաներ չեն, բարի օրինակներ կարող է ցույց տալ նաև դպրոցը: «Ներկայացնել մարդկային ընկերությունը ճիշտ այնպես՝ ինչպես որ է. բարին՝ բարի, չարը՝ չար: Ճշմարտությունը իր բոլոր մերկության մեջ երևան հանել, ահավասիկ իրապաշտական դպրոցի սկզբունքը» («Հայրենիք», 1892, № 193): Արփիարյանի ըմբռնումով կյանքի ստվերոտ կողմերի պատկերումը հասարակության առաջադեմ ուժերին հնարավորություն է տալիս մտածելու այդ չարիքների վերացման ուղիների մասին:

Գրականության հարցերին նվիրված իր հոդվածներում Արփիարյանը արծարծում է նաև բազմաթիվ այլ խնդիրներ, այդ թվում նաև հայ մշակույթի միասնության, ազգային բնավորության, նոր սերնդի գրողների ստեղծագործության գեղագիտական հնչողության հարցադրումները: «Գաղափարի մը համար արյուն տալ մեզի ցեղային ունակություն եղած է: Մեր զորությունը այդ ունակության մեջ է, վասնզի հինցած ունակությունը բնավորության մաս կկազմե» (Հրազդան, Օրվան կյանքը, «Նոր կյանք», 1900, № 17, էջ 266):

Արփիարյանը գրականությունը չի խզում արվեստի մյուս ձևերից, ընդհակառակը, փոխպայմանավորվածություն է տեսնում դրանց միջև: Հայկակ ստորագրությամբ իր թղթակցություններից մեկում խոսելով արևմտահայ նկարիչներ Նշանյանի ու Սրապյանի ստեղծագործությունների մասին, նշում է, որ «մեր հայկական գեղարվեստը բոցավառելով հին դասական ոճի լույսը», հետևում է «այն ուղղության, որմե կառաջնորդվի այժմ հայ գրականությունը»: Սրապյանը մի քանի տարի առաջ նկարել է վանեցի մի պանդուխտի «չլինէն արևառ, մեյտանին մեջ կայնած», սակայն հաջողություն չի գտնում, որովհետև բնորդի դեմքը տգեղ էր: «Տգեղության գեղեցկությունը զգալու և ըմբռնելու չափ զարգացած չեն պոլսեցիները»: Դրվատելով Նշանյանի «Մուշի հարսնիքը» լայնածավալ նկարը, Արփիարյանը գրում է. «Իցե թե պ. Նշանյան հաջողություն գտներ ու իրեն օրինակին հետևողներն ունենար: Գրականությունը իր զարգացումին համար կարոտ է գեղարվեստի աջակցության. ամեն հայ գրող, որ կզբաղի ժամանակակից կյանքով, կփափաքի անշուշտ հաջողություն հայ արվեստագետներուն» («Մշակ», 1890, № 72):

Գրականության և արվեստի խնդիրը, սակայն, Արփիարյանը արծարծում էր ոչ միայն հոդվածներով ու թղթակցություններով, այլ նաև համեմատաբար ծավալուն ուսումնասիրություններով: Այդպիսի ուսումնասիրություններից են Հրպետ ստորագրությամբ տպագրված «Հայոց արդի գրականությունը» («Գեղունի», 1902 թ.), «Թուրքիո հայոց գրականությունը» («Բազմավեպ», 1902 թ.), «Գրական դեմքեր» («Բազմավեպ», 1902 թ.), երկու աստղանիշով (**) ստորագրված «Արևմտյան հայոց արդի գրականությունը» («Բանբեր գրականության և արվեստի», Ս. Պետերբուրգ, Ա. գիրք, 1903 թ., Բ. գիրք, 1904 թ.) և «Գրական հուշեր» («Գեղունի», 1905 թ.): Վերոհիշյալ աշխատությունները 1944 թվականին ամփոփվեցին «Պատմություն ԺԹ դարու Թուրքիո հայոց գրականության» ընդհանուր վերնագիրը կրող գրքում, որը լույս տեսավ Կահիրեում:

«Պատմություն ԺԹ դարու Թուրքիո հայոց գրականության» գիրքը իր մեջ ամփոփում է, ինչպես ասվեց, սոսկ վերոհիշյալ հինգ աշխատությունները. հնարավորությունների սահմանափակության պատճառով գրքից դուրս են մնացել Արփիարյանի տասնյակ ու տասնյակ խիստ արժեքավոր հոդվածները, թղթակցություններն ու ասույթները գրականության ու արվեստի մասին: Գրքի խորագիրն իսկ հուշում է, որ դրանում ընդգրկված չեն նաև արևելահայ գրողների, ռուս ու եվրոպական գրականությանը նվիրված նրա հոդվածները:

Եվ առհասարակ, անկախ գրքի խորագրից, ընթերցողը այնտեղ չպետք է փնտրի 19-րդ դարի արևմտահայ գրականության գրականագիտական կանոնավորված ամբողջական պատմությունը: Արփիարյանը հանդես է գալիս հիմնականում որպես տվյալ շրջանի մշակույթի ու գրականության ականատես, հարցադրումները քննում է ոչ այնքան գրականագիտական, որքան ընդհանուր մշակութային տեսանկյունով: Բայց որպես գրական նոր սերնդի գործունեության անմիջական ղեկավարի տվյալ շրջանի հասարակաքաղաքական իրադրության, մամուլի, հրապարակախոսության, թատրոնի, թարգմանական գործունեության, գրողների ու գրականության գաղափարական ընդհանուր ուղղվածության մասին նրա արտահայտած տեսակետների զգալի մասը ոչ միայն հետաքրքիր են, այլև պատմականորեն միանգամայն հավաստի: Հատկապես նշանակալից է նրա դիրքորոշումը գուցե ոչ այնքան մանրամասնություններում, այլ ընդհանուր, գլխավոր հայեցակետում: «Հայ մատենագրության ոգին ընկերային եղած է,— գրում է նա,— գրական մարդը իր ցեղին օգուտ մը պարգևելու առաջադրությամբ երկասիրելով, բարոյացուցման նպատակի մը կը հետամտի, գիտակցաբար կամ բնազդմամբ» («Պատմություն ԺԹ դարու Թուրքիո հայոց գրականության», էջ 73):

Չբաժանելով հանդերձ Գր. Օտյանի գրական տեսակետներն ու նախասիրությունները, Արփիարյանը ըստ արժանվույն է գնահատում նրա հասարակական գործունեությունը: Նա մեծ բավարարությամբ է հիշում Ազգային ժողովի նիստերից մեկում Գր. Օտյանի արտասանած խոսքերը, «Ան հայը, որ իր պետական պաշտոնին բերմամբ դյուրություններեն օգտվելով իր շահերուն կը զոհե այս խեղճ ու տառապյալ ազգը, անիծյա՛լ ըլլա, եռի՛ցս անիծյալ» (Նույն տեղում, էջ 43):

Աշխարհայացքը, սակայն, պահանջում է ասել, որ ի վնաս գեղարվեստականության՝ գրականության հասարակական դերի օգտապաշտական բացարձակացումը երբեմն պայմանավորում է ոչ միայն որոշ ստեղծագործողների ու գրական երևույթների թերագնահատում, այլև բացահայտ աղավաղում: Արփիարյանի մոտ (և ոչ միայն նրա), բացի այդ, նկատելի է նաև ռեալիստական ու նատուրալիստական գրական ուղղությունների որոշ խառնաշփոթում, երբեմն նույնիսկ բացահայտ նույնացում: Եվ ինքնին հասկանալի է, որ նրա կողմից պաշտպանվող ռեալիզմի վերը համառոտակի շարադրված սկզբունքների թե՛ դրական (և անկասկած՝ հիմնականում դրական), թե՛ ստվերոտ, միակողմ տեսակետները իրենց կնիքն են դրել նրա գեղարվեստական ստեղծագործության վրա:

3

Դեռևս իր առաջին՝ «Դատապարտյալը», «Ծրագի մը գինը», «Կատակ մը» պատմվածքներում, որոնք նա 1885 թ. ամփոփեց «Կյանքի պատկերներ» խորագիրը կրող գրքում, երևում է Արփիարյանի ստեղծագործական դավանանքի էությունը՝ տիրապետող հասարակարգում իշխող բարքերի ու արժեքների անհարիրությունը մարդկային իսկական արժեքների հետ: Այդ անհարիրությունն իր արտացոլումն է գտնում կյանքի գրեթե բոլոր բնագավառներում՝ հասարակության դասային կառուցվածքում, ամուսնական հարաբերու-

թյուններում, ընտանիքում, ազգային հաստատություններում: Հասարակ ծագում ունեցող մարդը անօգնական է հասարակության բիրտ բարքերի, հարուստ մարդկանց լկտի անհոգության, ազգային հաստատություններում իշխող անարդարության, հոգևորականության կողմնապահության նկատմամբ: Այդ անհավասարությունը ներսից կրծում ու քայքայում է նույնիսկ հարազատների՝ հոր և զավակի, եղբոր և քրոջ հարաբերությունները:

«Դատապարտյալի» Սարգսենցը ոչ միայն հասարակության անհոգի բարքերի, այլև հարազատ ընտանիքում մուտք գործած այդ հարաբերությունների զոհն է: Հարազատ հայրն ու եղբայրները նրա ամենաճգնաժամային պահին իսկ երես են թեքում նրանից, կատարելապես լքում են նրան: «Երազի մը գինը» պատմվածքում մոտավորապես նույնանման հանգամանքների զոհ է դառնում Հրանտը, «Կատակ մը» պատմվածքում՝ Մաքրուհին: Իհարկե, տարբեր պատճառներով, ոչ միայն անհույս, այլև ողբերգական վախճան են ունենում նաև «Ապուշը» վիպակի երկու գլխավոր հերոսները՝ Կոնոնն ու Յոփյանը: Եվ առհասարակ, Արփիարյանի գրեթե բոլոր գեղարվեստական ստեղծագործություններում հասարակ ծագում ունեցող հերոսները ի վերջո կամ զոհվում են, կամ նկարագրվող իրադրություններից դուրս են գալիս բարոյապես լրիվ ընկճված, մարդկայնորեն վիրավորված, հուսալքված վիճակում («Դերասանուհին» պատմվածքի Արեգնազը, «Հանույքի համար» Զարուհի Ստեփանյանը):

Արդեն ասվեց, որ ավելի երևույթի հիմնական պատճառը Արփիարյանը տեսնում է հասարակական անարդար հարաբերություններում, հասարակ մարդկանց նկատմամբ ունևորների մեծ սոցիալական սովորույթի ու ստացած անհոգի, անմարդկային վերաբերմունքում: Տիրապետող արժեքներն ու բարքերը իրենց կնիքն են դրել և քաղքենիությամբ այլասերել նույնիսկ դեռատի օրիորդներին, որոնք կորցրել են անշահախնդիր սիրելու և սիրվելու մարդկային մեծագույն երջանկությունը («Երազի մը գինը» պատմվածքի Սոֆին ու Երանիկը): Ստեղծագործությունների այս շարքում իր հիմնական բովանդակությամբ «Հոգու զավակը» պատմվածքը ևս խակորեն չի հակասում վերոհիշյալ գործերին: Տարբերությունը համեմատաբար երջանիկ ավարտն է, որը Արփիարյանը ձգտում է հիմնավորել հին սերնդի առաջադեմ գրող Տիրանի կողմից իր քրոջ աղջկա՝ Արուսյակ Սարաֆյանի քնքուշ դաստիարակությամբ և հատկապես գրական նոր սերնդի ներկայացուցիչ Նավարյանի ընդդիմադիր ոգով: «Հոգու զավակը» իր բովանդակությամբ, փաստորեն, այն վեպն է, որ Նավարյանը պատրաստվում է ներկայացնել Կ. Պոլսի հայոց վերնախավին համակած եսամոլությունն ու շահամոլությունը:

Արփիարյանի գրեթե բոլոր հերոսներն ունեն իրենց ճշմարտությունը և իրենց մարդկային ու հասարակական էությամբ հետևողականորեն դավանում են այն, որը և սոս բախումների ու ողբերգական իրավիճակների հիմքն է հանդիսանում: Այդ ողբերգականությունը, սակայն, շատ հաճախ գեղարվեստականորեն մեծ ու մարդկայնորեն անկրկնելի արտահայտության չի բարձրանում: Թվում է, որ դրա բուն պատճառը գեղարվեստական հարցադրումների ու իրավիճակների, մարդկային կերպարների ու նրանց փոխհարաբերությունների ոչ թե հոգեբանորեն ամեն անգամ պարտադիր կերպով անկրկնելի լուծումն է, այլ ֆաբուլային մակարդակի եզրակացությունն է: «Կատակ մը» պատմվածքում, օրինակ, Վահրամի կողմից խաբված Մաքրուհին վերադառնում է տուն, իր մոտ ունեցած փողը տալիս է հորը, երեկոյան գնում է եկեղեցի, ապա նետվում է ծովը... Վախճանը անկասկած ողբերգական է, սակայն ընթերցողը չի տեսնում նրա հոգեկան ապրումները, այլ սոսկ կռահում է:

Արփիարյանի ուժը հասարակական հակասությունների ու անարդարությունների, վերնախավի մարդկանց անբարոյականության ու նրանց զոհերի անօգնականության բացահայտման ու արտացոլման մեջ է, բայց այդ բոլորը նա ձգտում է պատկերել և

յանել ֆարսայային գործողությունների մակարդակում, քիչ ուշադրություն դարձնելով իր հերոսների ներքին ապրումներին, նրանց իրավիճակների հոգեկան հիմնավորվածությանը: Սոցիալական ծագման գործոնը վճռական է Արփիարյանի կերպավորման արվեստում, դա է որոշում տվյալ գրական հերոսի հասարակական ու մարդկային էությունը: Ճիշտ չի լինի ասել, որ նա չէր զգում կերպավորման տվյալ սկզբունքի սահմանափակությունը: Իր մի քանի գործերում՝ «Հոգու զավակը», «Կարմիր ժամուց», նա նույնիսկ փորձում է հաղթահարել, գեղարվեստորեն քննել այն: Մի՞թե մարդը իր սոցիալական ծագման, շրջապատող հանգամանքների ու հոռի բարքերի հլու հնազանդ գերին է, մի՞թե նա ընդունակ չէ հաղթահարել այդ բոլորը և մարդկայնորեն ինքնահաստատվել, մտորում է «Հոգու զավակը» պատմվածքի Նավարյանը: Իսկ Տիրանը դիմելով իրենից խորհուրդ խնդրող Առուսյակին՝ նշում է. «Ամեն մարդու պատասխանատվությունը իր ազատ կամքովը բռած գործերուն մեջ է. արժանավորություն կամ անարժանավորություն հոն փնտռելու է»:

Այո՛, Արփիարյանը այդ բոլորը զգում էր, բայց և այնպես նրա կերպավորման սկզբունքը հիմնականում սոցիոլոգիական էր: Այդ երևույթը նա բացատրում էր ժամանակի պահանջով, ժողովրդի սոցիալական գիտակցությունը արագ զարգացնելու անհրաժեշտությամբ: Դրանով պիտի բացատրել նաև այն, որ ձգտելով ընթերցողին համոզեցնել, որ իր կարդացածը ոչ թե հորինովի, այլ իրական պատմություն է, իր մի քանի գործերում նշում է ոչ միայն գործողության ճիշտ տարեթիվը, ամիսն ու օրը, այլև պատմվածք է ներմուծում ժամանակակից իրական դեմքեր: «Դատապարտյալը» պատմվածքում, օրինակ, գրական հերոսների կողքին տեղ են գրավում ու գործողություններին մասնակցում իրենք՝ Արփիարյանը, Մինաս Չերազը, Հովհաննես Շահնազարը: «Մինչև ե՞րբ» վիպակում նույն նպատակով հիշատակվում են նարտարապետ Հակոբ Պալյանի, կիրակնօրյա դպրոցի դասախոս Քր. Ղազարոսյանի, իսկ «Ոսկի ապարանջանում» Գրիգոր Օտյանի և Եղիա Տեմիրճիպաշյանի անունները:

«Մինչև ե՞րբ» և «Ոսկի ապարանջան» ստեղծագործությունները իրենց գաղափարական էությամբ ոչ միայն չեն հակասում, այլ լրացնում, ամբողջացնում են Արփիարյանի ըմբռնումները հասարակության դասային կառուցվածքից բխող անարդարությունների մասին: Ավելին, եթե վերը հիշատակված նախորդ գործերի հիմնական ոլորտը ընտանեկան միջավայրն է, և այդ միջավայրն է անդրադարձնում հասարակության էությունը, այս երկու ստեղծագործություններում սոցիալական հակասությունները ուղղակիորեն են արտացոլվում: «Ոսկի ապարանջան» վիպակում, թեև գեղարվեստական ոչ կատարյալ մակարդակով, արևմտահայ գրականության մեջ Արփիարյանը առաջիններից մեկն էր, որ առաջ քաշեց հայ աշխատավորության անողոք շահագործումը իր իսկ՝ ազգային մեծահարուստների կողմից, որի բացահայտումն ու պատկերումը նրա կարծիքով ոչ պակաս կարևոր է, քան օտար կեղեքիչների մերկացումը:

«Կարմիր ժամուց» վիպակը, որն ավարտված ձևով առաջին անգամ հրատարակվեց Ն. Ադոնցի խմբագրությամբ Ս. Պետերբուրգում լույս տեսնող «Բանբեր գրականության և արվեստի» Ա. գրքում (1903 թ.), առանձնահատուկ տեղ է գրավում Արփիարյանի գեղարվեստական ժառանգության մեջ: Սա գրողի գեղարվեստական միակ ստեղծագործությունն է, որը թեմատիկ առումով ամբողջությամբ նվիրված է ազատագրական պայքարի գաղափարական հարցադրումներին:

Վիպակի գործողությունները տեղի են ունենում 90-ական թվականներին սուլթանական սաստկացած հալածանքների ու ջարդերի տարիներին: Արփիարյանի նպատակը, սակայն. ոչ այնքան բուն ջարդերի նկարագրումն է, որքան ազատագրական պայքարի անհրաժեշտության գաղափարի հիմնավորումը: Իրար են բախվում Օրբագյանի տեր ու տնօրեն պահպանողական Հայրապետ էֆենդին, որը ազատություն բառի արտասանու-

թյունը իսկ քաղաքական մեծ հանցագործություն է համարում, և Հայաստանից եկած Հուսիկ քահանան, որ հայության ազատության ջերմ կողմնակիցն է: Սյուժեն, կոնֆլիկտը, վիպական կառուցվածքի և կերպարների կերտման վարպետության առումով «Կարմիր ժամուցը», անկասկած, Արփիարյանի լավագույն գործերից է: Սակայն հեղինակը փայփայում է մեծահարուստին եւ իր նյութական կարողությամբ ու օժանդակությամբ ազատագրական պայքարին մասնակից դարձնելու միտքը: Եվ չնայած այդ առումով Հայրապետի կերպարը գեղարվեստորեն հիմնավորելու հեղինակի բոլոր ջանքերին, սյուժեի լուծման գործում, երբ երկու հակառակորդները հաշտվում են և փարվում ազատագրական պայքարի գաղափարին, այդուամենայնիվ, նկատելի է որոշակի կանխամտածվածության դրոշմը:

Անհրաժեշտ է, սակայն, նշել, որ 1903 թ. հետո, երբ լույս տեսավ «Կարմիր ժամուցը», Արփիարյանը վերամշակեց և 1906 թ. «Շիրակի» էջերում տպագրեց իր «Մինչև ե՞րբ» և «Ոսկի ապարանջան» ստեղծագործությունները: Եվ առհասարակ, այդ տարիներին նշանակալից փոփոխություններ տեղի ունեցան Արփիարյանի աշխարհայացքում: Նա հրաժարվեց Հնչակյան կուսակցությունից, որի գործոն անդամներից էր տարիներ շարունակ: Ի լուր բոլորի՝ հանդես եկավ արկածախնդրական ու տեռորիստական քաղաքականության դեմ: Նրա դեմ առաջին մահափորձը տեղի էր ունեցել դեռևս Կ. Պոլսում, 1895 թ. դեկտեմբերի 25-ին: Երկրորդ մահափորձը տեղի ունեցավ Վենետիկում, 1903 թ. փետրվարի 15-ին: Հակառակորդները նրանից պահանջում էին չմերկացնել և առհասարակ չգրել: Նրա առաջ ծառացավ ապրե՞լ, թե՞ գրել երկընտրանքը, քանի որ զգում էր, որ յուրաքանչյուր մերկացնող հոդված մահվան գերանդին ավելի էր մոտեցնում իրեն: Բայց չգրել չէր կարող: Հատկապես նշանակալից են 1905—1907 թթ. նրա ելույթները: Նա հանդես եկավ Կովկասում տեղի ունեցող ազգամիջյան ընդհարումների դեմ, ողջունեց 1905 թ. ռուսական հեղափոխությունը: «Պայթած հեղափոխությունը,— գրում է նա,— միահեծան իշխանություն մը չէ, որ պիտի տապալե, այլ նաև տնտեսական դրություն մը, ուստի և տարակույս չկա, թե իր հաղթանակը օր մը չէ օր մը պիտի սարսե ո՛չ միայն թագավորությունները, այլև հանրապետություններն ալ» («Լուսաբեր», 1905, № 147): Նկատի ունենալով ցարական կառավարության պատժիչ բռնությունները, Արփիարյանը գրում է. «...Թեև թնդանոթը բյուրավոր բանվորներ ջարդ ու փշուր կընե, բայց ընկերվարական գաղափարը գործնականապես կը հաղթանակե ու տիեզերքի բոլոր կալվածատերերը, դրամատերերը կը սարսափահարին: Նորատեսիլ հեղափոխություն մըն է, որ կը ծագի, անոր դեմ թնդանոթը, հրացանը, սուրը անզոր պիտի գտնվին» («Լուսաբեր», 1905, № 172): Նա ըմբռնում է, որ «մարտնչումը ցեղային չէ, այլ ընկերային, դասակարգային» («Լուսաբեր», 1906, № 171):

Կյանքի մեծ փորձը, միջազգային լարված իրադրությունը, կանխատեսվող ռուս-թուրքական նոր պատերազմը և այդ պայմաններում հայ ժողովրդի ճակատագրի որպիսությունը մեծապես մտահոգում են Արփիարյանին և նա իր վերջին՝ «Պատերազմի պարագային» հոդվածում տագնապով գրում է. «Թուրքիան հայ ժողովուրդը Ռուսիո անձնվեր համարելով, ըստ այնմ ալ մեզի իբր թշնամի պիտի համարի... Հայաստանը և հայ ազգը բոլորովին ոտքի տակ կրնան երթալ: Պարտվա՞ծ,— թուրքը ավեր ավերակ հայաթափուր Հայաստան մը կհանձնե Ռուսիո: Հաղթակա՞ն,— ալ ով պիտի կրնա իր առջևը թումբ կանգնել հայությունը իր երկրին մեջ բնաջնջելու քաղաքականությունը շուտով գլուխ հանել ուզած ատենը» («Լուսաբեր», 1908, 20 փետրվարի, № 485):

Սակայն նախքան այս հոդվածի տպագրումը Արփիարյանը այլևս չկար: Արփիարյանին «խոհեմաբան ու քնացնող քարոզությունների» մեջ մեղադրողները 1908 թ. փետրվարի 12-ի գիշերը վարձկան տեռորիստի ձեռքով թիկունքից արված ատրճանակի

երբ կրակոցներով սպանել էին նրան: Եր. Օտյանը, որ իր «Տասներկու տարի Պոլսէն դուրս» հուշերում մանրամասնորեն անդրադարձել է Ա. Արփիարյանի սպանության շրջանի կյանքին, խոսելով սպանության ու հուղարկավորության պարագաների մասին, նշում է. «Մորգը բերին, որ Արփիար սպանված պահուն քովէն հանցի կառք մը, քանի մը լրագիր և 6—7 դրուշ գտնված էր միայն: Իր ամբողջ հարստությունը» (Ե. Օտյան, Երկերի ժողովածու, հատոր 4, էջ 444): Հուղարկավորությունը տեղի է ունեցել 1908 թ. փետրվարի 14-ին: Արփիարյանի մարմինը հողին է հանձնվում Կահիրեի Մարմինայի գերեզմանատանը: 1911-ին տեղի է ունենում հանդիսավորությամբ կատարված նրա հուշարձանի բացումը: Հուշարձանի երեսին, կիսանդրու ներքև փորագրված է՝ Արփիար Արփիարյան, ծննդյան ու մահվան տարեթվերը, ապա չորս կողմերում նրա օգտագործած ծածկանունները՝ Հրազդան, Հայկակ, Սերոբիկ, Հրատա, իսկ հուշարձանի ստորոտում՝ «Գաղափարի զոհին. իր հիացողներն ու բարեկամները»:

1922-ին լույս տեսած Արփիարյանի կյանքին ու գրական գործունեությանը նվիրված իր մենագրությամբ՝ Ն. Հակոբյանը գտնում էր, որ Արփիարյանը դեռ արժանիորեն չի գնահատված: Այժմ արդեն դրությունը նկատելիորեն փոխվել է: Թե՛ հայրենիքում, թե՛ Սփյուռքում լույս տեսած հայ նոր գրականության պատմություններում Արփիարյանի գրական ժառանգությունը ըստ արժանվույն գնահատված է: Հայրենիքում լույս է տեսել Գ. Ստեփանյանի մենագրությունը նրա կյանքի ու ստեղծագործության մասին (1955 թ.), «Հայ գրական քննադատության քրեստոմատիայի» 2-րդ հատորում (1984 թ.)՝ նրա մի շարք քննադատական հոդվածները, իսկ «Հայ քննադատության պատմության» 1-ին հատորում (1985 թ.) առանձին գլուխ է նվիրված նրա քննադատական ժառանգությանը: Եվ վերջապես ներկա հատորը, որն ամփոփված նրա գրական ժառանգության մինչև այժմ լույս տեսած բոլոր հրատարակություններից ոչ միայն առավել ամբողջականն է, այլև իր ապարատով ամենամատչելին: Ա. Արփիարյանը իր կայուն տեղն ունի մեր նոր գրականության պատմության մեջ:

ՀԱԿՈԲ ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ

ՕՐՀՆՅԱԼ ԳԵՐԴԱՍՏԱՆԸ

Քառորդ դար մը առաջ Կ. Պոլսո հայերեն թերթերը ազգային լուրերու բաժնին մեջ հրատարակեցին հետևյալը.

— Հանգուցյալ Կարապետ էֆենտի Գարակյոզյան 40.000 ոսկի կտակած էր Կ. Պոլսո Գարակյոզյան առևտրական վարժարանի մը հաստատության համար։ Հանգուցյալին ընտանիքին և Ազգային պատրիարքարանին միջև նույն կտակին վերաբերյալ պաշտոնական գործողությանները կատարված վերջացած ըլլալով, Ազգային ժողովը իր երկվան նիստին մեջ, որուն անձամբ կը նախագահեր Ամեն. սրբազան պատրիարք հայրը, ոտնկայս օրհնեց վաղամեռիկ բարերարին հիշատակը ու երախտագիտության քվե տվավ համայն Գարակյոզյան ազգասեր տոհմին։— Օրհնյա՜լ գերդաստան։

* * *

Քառորդ դար մը վերջ, 1896-ին, Կ. Պոլսո հայերեն թերթերը ազգային լուրերու բաժնին մեջ հրատարակեցին հետևյալը.

— Պաշտոնապես Ամեն. ս. պատրիարք հոր հանձնված ըլլալով հանգուցյալ Տիգրան էֆենտի Գարակյոզյանի կտակը, որով իր հարստության մեկ երրորդը ազգին կը թողու Կ. Պոլիս Գարակյոզյան առևտրական վարժարանի մը հաստատության համար, ազգային վարչության խառը ժողովը երեկվան նիստին մեջ, որուն անձամբ կը նախագահեր Ամեն. սրբազան պատրիարք հայրը, ոտնկայս օրհնեց վաղամեռիկ բարերարի հիշատակը ու երախտագիտության քվե տվավ համայն Գարակյոզյան ազգասեր ընտանիքին։— Օրհնյա՜լ գերդաստան։

***

Քառորդ դար մը վերջ, 1921-ին, Կ. Պոլսո հայերեն թերթերը ազգային լուրերու բաժնին մեջ հրատարակեցին հետևյալը.

Պաշտոնապես Ամեն. սրբազան պատրիարք հոր հանձնված ըլլալով հանգուցյալ Գրիգոր էֆենտի Գարակյոզյանի կտակն, որով իր հարստության մեկ երրորդն ազգին կը թողու Կ. Պոլիս Գարակյոզյան առևտրական վարժարանի մը հաստատությանը համար, Ազգային ժողովը իր երեկվան նիստին մեջ, որուն անձամբ կը նախագահեր Ամեն. սրբազան պատրիարք հայրը, ոտնկայս օրհնեց ծերունազարդ բարերարին հիշատակը ու երախտագիտության քվե տվավ համայն Գարակյոզյան ազգասեր տոհմին.— Օրհնյա՜լ գերդաստան։

***

Հայաստանի մայրաքաղաք Լենինականի 2001-ի թերթերում մեջ կը կարդանք հետևյալը.

— Հայկական հանրապետությունը իր առաջին տարեդարձը կը տոնե հոյակապ նվիրատվությամբ մը։

Ամիս մը առաջ վախճանեցավ ծերունի վաճառական պ. Կարապետ Գարակյոզյան, թոռան թոռնորդին հարյուր քսանհինգ տարի առաջ Զարիկրատ[1] մեռած Կարապետ Գարակյոզյան վաճառականին։ Հանգուցյալը իր հարստության մեկ երրորդը՝ մեկ միլիոն ոսկի սկուտ. հայկական, կտակած է Լենինականի մեջ առևտրական վարժարանի մը հաստատությանը։ Սրբոյն Մատթեի Իզմիրլյանի Մայր եկեղեցիին մեջ երեկ հանդիսավոր պաշտոն և պատարագ մատուցվեցավ հանգուցյալին հոգուն։ Պատարագիչ սրբազան հայրը զգածեալ շեշտերով օրհնեց հիշատակը բարերարին և համայն Գարակյոզյան ազգասեր տոհմին.— Օրհնյա՜լ գերդաստան։

***

Անկողմնակալությունը կը պարտավորե մեզի արտատպել նաև ազատական կուսակցության գլխավոր բերանը եղող «Ազատ հայրենիքի» հետևյալ հատվածը.

— Կղերական թերթերը ծանուցին հայոց եկեղեցիներում մեջ «Օրհ-

---

[1] Նախկին Կ. Պոլիս։

նյալ գերդաստան» հին զավեշտախաղի մը չենք գիտեր քանիերորդ ներկայացումը։ Այդ խաղը երբ մեր անցյալ ստրկության օրերու արձագանքը կը բերե մեզի, իր հարատև կրկնությամբը կը հաստատե նաև, թե ժողովուրդ մը կրնայ ավելի դյուրավ ազատիլ քաղաքական գերութենեն, քան բարոյական ստրկութենե։ Թուրքերը հին ատեն իրենց քիմքին համար խաղ մը ունեին եղեր-մեր ծերերը աղոտ իմն կը հիշեն— «Գարակյոզ» կոչված կեղտոտ բարքերու կատարելագործյալ տիպարը. մենք հայերս ալ ունեցած ենք մեր Գարակյոզի խաղը, տարբերությամբ մը սակայն. իսլամները երբեք չեն մտաբերած իրենց մզկիթներուն մեջ ներկայացնել այդ զավեշտը Մահմետի հովանիին տակ, մոլլաներուն աղոթքովը, իսկ հայերը իրենց սրբության նվիրված տաճարին մեջ, իրենց Քրիստոսի աչքին առջևը, եպիսկոպոսական օրհնություններով կը ներկայացնեն ստության, կեղծավորության, խարդախության հրաշալի գլուխգործոց «Գարակյոզ» զավեշտը։

Այս կեղտոտ զավեշտին նյութը ամփոփենք երկու բառով։ Ասկե հարյուր քսանհինգ տարի առաջ Զարիկրատ մեռած մի ոմն Կարապետ Գարակյոզյան գումար մը կը կտակե առևտրական վարժարանի մը շինությանը, շտես հայ հասարակությունը անմիջապես մաղթանքներով ազգային բարերար կը հռչակե Կարապետ Գարակյոզյանը և ընտանիքը, չհիշելով գոնե ազգային առածը՝ «կեր ու ապա գոհացիր»։ Տարիներ կ'անցնին, առանց սակայն վարժարանին նշույլը նշմարվելու. բայց ձրիաբար անմահ բարերար և իրենց ընտանիքն ալ «օրհնյալ գերդաստան» կոչել տալու համը ամեն Գարակյոզյանի բերանը մնացած ըլլալով, ամեն Գարակյոզյան իր սնդուկին մեջ պատրաստ կտակ մը ունի, որ իր մեռած օրը երևան կուգա. մեռնողը ապահով է, թե իր կտակը պիտի չգործադրվի ու ինքն ալ «անմահ բարերարի» տիտղոսը պիտի վայելե։ Խաղը կը շարունակվի հարյուր քսանհինգ տարիե ի վեր և պիտի շարունակվի, վասն զի Գարակյոզյան ճետն ալ կը շարունակվի։ Եվ ահա այսպես այդ Գարակյոզյանները առանց լումա մը ծախսելու, ձրիաբար «օրհնյալ գերդաստան», «անմահ բարերարի» տիտղոսներ ժառանգական ըրած են իրենց համար, առանց ազգին ժառանգություն մը ձգելու։ Բայց կ'անդրադառնանք թե պիտի կարծվի, որ սխալ մը ըրած ըլլալու ենք «ձրիաբար» բացատրությունը գործածելով։— Հապա թո՞ւղթը, մելա՞նը, գրի՞չը, կտակները գրելու համար, ատոնք ստակով չե՞ն,— պիտի հարցվի։

Փութանք որևէ սխալ հասկացողություն շտկել։ Կա ավանդություն մը, որ հաստատվեցավ նաև նորոգ մեռնող Կարապետ Գարակյոզյանի գործովն ալ, թե ամեն կտակարար Գարակյոզյան իրենց թաղին եկեղե-

ցին երթալով թերթ մը թուղթ, գրիչ և մելան կ'ուզեն եղեր կտակը անանցմով պատրաստելու՝ ազգին բարիք պիտի ընենք, ծախքը գոնե ազգը հոգալու է, ըսելով։ Ու միանգամայն եկեղեցիին աթոռներուն վրա նստած՝ կը գրեն կտակնին, իրենց տան աթոռները նվեր մաշեցնելու հոգնածությամբ։ Պատճառ մը չունինք տարակուսելու այս տեղեկության ստուգության։

Հանրային կրթության պաշտոնատունը, որ կտակին օրինավոր տերն է, եթե հաջողի անկախ Հայաստանի մեջ գործադրել տալ այս վերջին կտակը, ալ անկե ետքը իրենց նշանակությունը պետք է կորսնցնեն սերունդե-սերունդ ժողովրդին բերանը դարձած ասածներ, որոնք երբ գործողության մը անհնարինությունը կը պատկերացնեն, օրինակի համար՝ կ'ըսեն՝ «Երբ ձուկը ծառը ելլէ»։ Գարակյոզյան կտակը եթե գործադրվի, ձուկին ծառը ելլելը՝ թռչունին ծառը թառելուն պես բնական գործողություն մը պիտի համարվի անկե ետքը։

* * *

Ահեղ օրը. տիեզերք տակն ու վրա. վերջին դատաստանը կը կատարվի Հովսափաթու Ձորին մեջ, ուր Հայր աստված գահը բազմած, աջ կողմը որդին, ձախը՝ Հոգին, կը դատե մարդկեղեն արարածները «ի սկզբանե աշխարհի ղկատարած»։ Առաջին քարտուղար Ռափայել կը կարդա կենաց-դպրության Մայր տոմարը, որուն առաջին գլուխը Հայոց ազգինն է, Հայերը ըլլալով ուղղակի շառավիղը նախաստեղծ մարդուն. Ադամեն-Նոյ, Նոյեն-Հայկ, անկե ալ շիփ-շիտակ մենք։ Կանչված անունը հարություն կ'առնե, կը ներկայանա ատյան, կը պատասխանե եղած հարցումներուն, կը լսե վճիռը։ Երբ կը սկսի մեր այս տեղեկագրությունը, Ռափայել հասած է Գ-ին և կը կարդա.

— Գարակյոզյան Կա...

Սակայն անդրադառնալով, որ այդ մականունը քանի մը հազար էջ գրաված է և ամենուն դիմացը իբր կենսագրական ծանոթության «բարերար ազգին» արձանագրված, լավագույն կը համարե բոլորը մեկեն կանչել լմնցնել. անանկ ալ ամենքը մեկտեղ արքայության դիմաց երթան, ասանկ ալ. ուստի կը գոչե.

— Գարակյոզյան ընտանիք։

Անշարժություն մեռելաստան աշխարհին մեջ. Ռափայել ապշած կը կրկնե.

— Գարակյոզյան ընտանիք։

Անշարժությամբ։ Ռափայել կը բարկանա թարգմանագրիչ հրեշտակներուն. սխալ մը ըրած ըլլալու են։

Այս միջոցին Գաբրիել կը վերադառնար կործանված աշխարհեն, փողը թևին տակ, ձեռքն ալ թուղթ մը զոր խնդալով կը կարդար։ Կործանումեն հետո մեյմը պտույտի ելած էր. նախնի Եդեմեն, ուր դեռ օր մը առաջ հայոց վերջին մայրաքաղաքը կար, փշրված տպարանի մը ավերակներուն վրա տեսավ թռչող թուղթի կտոր մը. տիեզերքի վերջին օրվան վերջին հայերին օրաթերթին վերջին լուրերը։ Գաբրիել զայն վերցուց առավ.— Աղեկ կը հիշեմ, ըսավ ինքնիրեն, որ մարդուն ստեղծվելեն հետո աս անցած տեղս իսկ իմացա աշխարհիս առաջին լուրը, օձին խաբեբայությունը. տեսնենք վերջին լուրը ի՞նչ եղած է։ Ահա ինչ կը կարդա.

— Պաշտոնապես Ամեն. ս. պատրիարք հոր հանձնված ըլլալով Կարապետ օրհնյալգերդաստանյանին կտակը, որով հանգուցյալը իր հարստության մեկ երրորդ մասը ազգին կը թողու ազատական վարժարանի մը հաստատության համար...։ Ավելորդ է շարունակությունը արտատպել. ուզողը կրնա զայն գտնել տասնիններորդ դարու վերջին քառորդեն աշխարհիս մինչև վերջի օրվան հայերեն թերթերուն մեջ։ Աստ կը բերենք միայն հետևյալ ծանոթագրությունը.

— Հիշյալ Կարապետ և իր բոլոր ազգականները թեև օրհնյալգերդաստանյան կը կոչվին, սակայն վերջերս հնագիտական խուզարկություններ հաստատեցին, թե ժամանակավ այս ընտանիքին մականունը Գարակյոզյան եղած է. բայց հայտնի չէ, թե դարերու հոլովումին մեջ մականունի փոփոխությունը ինչպես տեղի ունեցեր է։

Երբ Գաբրիել պաշտոնակիցներուն քով հասավ, Ռափայել հարցուց.

— Եղբայր Գաբր, անոնց հոգին դուն առած ես, հայտնի է, ամենքն ալ բարերար են, բայց թարգմանության մեջ սխալ մը եղած ըլլալու է. երկու անգամ կանչեցի, ելլող չեղավ։

— Սխալում չկա,— պատասխանեց Գաբրիել,— օրհնյալգերդաստանյան ձայնե և ամենքն ալ կ՚ելլեն. ինչ ըլլալը վերջը կ՚ըսեմ։

— Օրհնյալգերդաստանյան ընտանիք,— գոչեց Ռափայել։

Եվ ահա քանի մը միլիոն Գարակյոզյան գլուխ, թև, մարմնի ամեն մասեր վեր կանգնելով՝ իրարու մոտ եկան և օրինեցին իսկական իրանները. ամենուն ալ սակայն երկու ձեռքերնուն հնգական մատները ամուր մը գոցված։

— Ասոնք ամենքն ալ արքայություն, անանկ չէ՞,— հարցուց որդին ուրախությամբ։

— Հրամեր եք, տեր,— պատասխանեց Գաբրիել,— ամենքն ալ ազգերնուն բարեբարները. օրհնյա՜լ գերդաստանն։

Ու ահա հանկարծ շարժում չորս կողմեն. թաղլտուքներ գերեզմաններու մեջ. բողոքի խեղդուկ ձայներ։

— Ի՞նչ է աս,— ըսավ հայրը,— բան մը ծածո՞ւկ կը պահվի ինե. վրդովյալնե՛ր, ելեք եկեք, տեսնեմ ի՞նչ է։

Եվ կմախքները վեր բարձրացան. հուսահատ դեմքեր։ Գթառատ շեշտով մը որդին հարցուց.

— Դուք անիրավության զոհեր եղած ըլլալու եք. ինչո՞ւ սակայն այսքան անհամբեր։ Ըսեք, ի՞նչ կ'ուզեք։

— Ո՜հ, տեր արդարադատ,— գոչեցին ձայներ,— քննությո՜ւն, քննությո՜ւն։

Պտտելով հոնքերը, հայրը կանչեց Գաբրիելը.

— Գաբրիե՛լ, ի՞նչ է աս բողոքը. դո՞ւն առիր Գարակյոզյաններու հոգին. դո՞ւն «բարեբար» արձանագրել տվիր այդ անունները։

— Տեր,— պատասխանեց Գաբրիել,— ամեն անգամ որ կը շրջեի հայ ժողովրդին մեջ հոգի ժողվելու պաշտոնովս, միշտ ականջիս կը զարներ, «Գարակյոզյան, բարեբար, օրհնյալ գերդաստան» բացատրությունները իրարու ձուլված։ Տաճարներուդ մեջ այդ անունները կը փառաբանվեին պատրիարքական կոնդակներով. արդար մարդիկ կարծելով հոգինին ե՛ս առի։

* * *

— Հասկցա,— ըսավ հայրը,— քենե առաջ պատասխանատվությունը պատրիարքներուն վրա կը ծանրանա. առանց անոնց հավանության ո՛չ եկեղեցիներս կը պղծվին խաբեբայությամբ, ո՛չ ժողովուրդը ստությունններու զոհ կ'երթա։ Որո՞նք էին պատրիարքները։

Ռափայել, տետրակներեն ստուգելով.

— Առաջին կտակարար Կարապետ Գարակյոզյան, ժամանակին պատրիարքն ալ Ներսես Վարժապետյան։

— Ներսեսը մեծատուններուն քիչ մը շատ երես կու տար,— ըսավ հայրը,— ասոնց ալ աչք գոցած ըլլալու է։ Բայց ուրիշ աղեկ բաներ ալ ըրած է, անոնք դեմը կ'առնեն։ Կանչելու պետք չկա։ Ետևեն եկո՞ղը։

— Հաջորդ կտակարարը Տիգրան, պատրիարք Մատթեոս։

— Կանչե։

— Մատթեոս պատրիարք Իզմիրլյան։

Հանդարտ, հանդարտ գլուխը գերեզմանեն հանելով Իզմիրլյան կը առաջանա ծանրաքայլ. հրեշտակները պատկառանք կը զգան. հայրն

ալ ինքզինքը կը ժողովաե։ Պատրիարքը հարգանքով կը բարևե հայրը, որդին հոգին և կը կայնի։

— Մատթեոս,— կը հարցնե հայրը,— Գարակյոզյանները քու պատրիարքության օրովն ալ խաբեբա կտակ մը ըրած են։ Ինչպե՞ս օրհնեցիր զանոնք և ազգին բարերարները հռչակեցիր։

— Խառն ժողովին որոշումն այս էր,— կը պատասխանե Իզմիրլյան խստորեն։

— Որդիիս փոխանորդը դո՞ւն էիր, թե խառն ժողովը։

— Ե՛ս սահմանադրությունը միայն կը ճանչնամ։

Հրեշտակները տեսնելով այս դիմադրությունը, կը փսփսան.— Գնա՛ց, գնա՛ց, դժոխք գնա՛ց։

— Խղճիդ համար ինծի պատասխանատու ես։

— Ոչ. ես սահմանադրության վրա երդում ըրած եմ. պատրիարքական պաշտոնիս համար միայն ազգային ժողովին պատասխանատու եմ, իսկ համայնքի խնդիրներուն մեջ ալ հոգվույն սրբո. իրավասության սահմանները ճշտած եմ։

— Ինծի նայե, եղբայր,— ըսավ հոգին սուրբ,— գիս մեջ մի խառներ. քու պատրիարքական ընտրությանդ ես չեմ խառնված. ես աղավնի եմ, անուշ դեմքերը կը սիրեմ, քեզի պես խստադեմ մարդը ինծի դուր չի գար։ Ո՛չ առաքյալներուն, ո՛չ կաթողիկոսներուն, ոչ պապերուն մեջ նմանդ տեսա։

Որդին հորը ծռելով կ՛ըսե.

— Հայր, եթե կը հաճիս, կարճ կապե այս մարդուն հետ. փորձանք բան է. Համիդը չկրցավ հետը գլուխ ելլել, մե՞նք պիտի ելլենք։

— Ես ասանկ մարդը կը սիրեմ,— ըսավ հայր Աստված, ժպտելով։— Ասանկ համարձակ մարդիկը շիտակ կ՛ըլլան. եթե բոլոր կրոնավորները ասոր նմանեին, աշխարհը այսպես շուտ չէր վերջացներ. դժոխքի ալ պետք չէր մնար։

— Ի՞նչ,— կը հարցնե հոգին զուռնաճակ,— միտքդ ասիկա արքայությո՞ւն ղրկել է։

— Հապա ի՞նչ պիտի ընեք։

— Գթություն, հայր, ան տեղի խեղճերուն, եղանություններին քթերնուն, բերներնուն պիտի գա. սուրբեր կան, սրբուհիներ կան, քիչ մը անմեղ սիրաբանություններ պիտի ընեն, աս թող պիտի չտա։

— Ան ատեն դժո՞խք ղրկեմ,— կը հարցնե հայրը կատակի շեշտով։

— Ատ ալ չ՛ըլլար,— վրա կը բերե որդին.— ան տեղի թշվառները իրենց պատուհասը արդեն չափազանցորեն ունին. աս ալ վրանին մի՛ ղրկեր։

— Կ՚երևի թե,— ըսավ հայրը մելամաղձորեն,— շիտակ մարդուն եթե անդիի աշխարհքը տեղ չի կար, ասդին ալ տեղ պիտի չգտնվի։ Ինչևէ, ընելիքս գիտեմ. Սերովբե և Քերովբե, առեք Իզմիրլյան ծառաս ու շիտակ արքայություն տարեք, առանձնոց մը դրեք, Իսկուտարի, երկնքին մոտ, կարոտը առնե. իրեն ալ ընկեր տվեք Արծրունի Գրիգորը, ան ալ Մատթեոս պատրիարքի աշխարհականն էր. թող իրարու հետ նստին ելլեն։

— Ու իրարու ալ գլուխ պատռեն,— ըսավ Հոգին ժպտուն,— ամուսնալուծության վրա վիճելով։

Սերովբեն աջէն, Քերովբեն ետևեն Իզմիրլյան կը մեկնի, գլուխը խոնարհեցնելով հոր և որդիին առջև և չտեսնելու զարնելով Հոգին, որ կը ծիծաղի.

— Վա՜յ, քինախնդիր,— կ՚ըսե։

Այս միջոցին Նորեն Ռափայելը շվարումի մեջ էր։ Հայոց եկեղեցական պատմության մեջ արձանագրված էր. «Հաջորդ Իզմիրլյանի՝ տեղապահ Բարդուղիմեոս արքեպիսկոպոս»։ Եվ սակայն Կենաց դպրության հայոց գլուխը այդպիսի անուն չուներ... Բ-ը կարդացված ատեն Բարդուղիմեոս կանչված չէր. արդյոք աչքե՞ն վրիպած էր։ Նորեն անգամ մը նայեցավ. չէ, չի կար։

— Ա՜խ, սա հայոց ձեռքեն քաշածս,— կը հառաչեր խեղճ Ռափայելը։— Համիդը անոնց... ինչ է նե, քիչ մնաց մեղքը պիտի մտնեի։— Ու Գաբրիելին երթալով.

— Գաբո, Բարդուղիմեոսին անունը ինչպե՞ս արձանագրել տվեր ես։

— Բարդուղիմեոսը ո՞վ է։

— Արքեպիսկոպոս, պատրիարքական տեղապահ։

— Ռափիկ, հոգիս, քեզի հազար անգամ չե՞մ ըսած, որ եպիսկոպոսներուն հոգին առնելու ես չեմ երթար։ Որդիին մարմնանալեն ի վեր հազիվ տասը եպիսկոպոսի հոգի առած եմ, անոնց ալ կեսը սխալմամբ։ Միքայելին հարցուր։

— Միքե, աղբարս, Իզմիրլյանին հաջորդող Բարդուղիմեոսին անունը ի՞նչ արձանագրել տվեր ես։

Միքայել ցուցամատը շրթներուն տանելով.

— Ռափի՛կ, աս գործը շատ մի՛ խառներ, մեծավորը չիմանա, սխալմամբ մահմեդականներուն տետրակը արձանագրել տվի։

— Ինչ, մահմեդականներուն տետրակը մի՞...

— Ինչ գիտնամ. բան մըն էր, եղավ։ Հոգին բերած ատենս ճամփան շարունակ «Եա՜ մելեքիմ» ըսելով բաներ մը կը պատմեր. ես ալ շփոթեցա, մոլլա գիտցա, ան օրն ալ շիտակը չափազանց հոգնած էի,

առտվնե մինչև իրիկուն Համիդին հոգին քաշկռտեր էի. հազիվ կրցած էի հանել. երկուքը մեկտեղ կը բերեի, սատանաները վազեցին եկան հափշտակեցին. ես ալ երկուքը մեկ տետրակ անցուցի.

— Հիմա՞։

— Աս իրարանցումին ո՞վ բարակը պիտի փնտրե. «Ջամիչ օղլու» արձանագրել տված եմ։ «Օղլուն» կ'ընեն «յան», մահմեդականն ալ կ'ըլլա հայ քրիստոնյա։

— Վա՜յ չարաճճի։

Երբ Իզմիրլյան կը մեկնի, Ռափայել կը կանչե Բարդողիմեոսը, որ հեռվով կը առաջանա և կուգա ամբողջ իրանովը երեսի վրա կը փռվի հոր ոտքերուն տակ ու երկու ձեռքերը միայն վեր բարձրացուցած կ'աղաղակե.

— Շնքեճիլու, գուտրեթիլու, մերհամեթիլու փատիշահըմ։

Միքայել կը վազե կու գա, կը բռնե վեր կը հանե Բարդողիմեոսը։

— Մա՛րդ, Համիդին առջև չես, Աստծու առջևն ես. անոր համեմատ խոսե։

— Եա Րապպիմ Թեալամ...

Հայր Աստված ցասկոտ արհամարհանքով.

— Դու հայերեն չե՞ս գիտեր։

— Գիտեմ, գիտեմ։

— Ըսե նայիմ, ի՞նչ ըրիր Գարակյոզյան կտակին համար։

— Նա փատ... ա՞յ... Յա՛րապ, վազթը գևմանտա վար ըտը յոգ ըտը...

Որդին խնդալով.

— Հայր, աս ցնդածը աղեկ կը ճանչնամ. օրը իրիկուն պիտի ընե առակ պատմելով. մեջեն ալ պիտի չելլե. բան մըն ալ պիտի չհասկնանք. Նորեն գերեզմանը գարձուր։ Իր կարգին թող գա։

Բարդողիմեոս ետ կը դրկվի գերեզման։

— Հո՞ս ալ մի կես ճամփուն կը մնամ,— կը հառաչե։

Ռափայել կը կանչե.

— Մաղաքիա կաթողիկոս Օրմ...

Ու դեռ բառը չամբողջացված, Օրմանյան Հռիփսիմեանց վանքեն կլորիկ, գունդլիկ կու գա կը գլորի հոր առջև և ձեռքը երկնցնելով.

— Պոնժուռ, սենյոր։

— Աս ի՞նչ է, աս ալ ֆրանսիացի՞ է,— կ'ըսե հայրը խստությամբ։— Ռափայել, աս ի՞նչ սխալ է, հայ չէ՞ աս։

Օրմանյան անհամբեր.

— Սի, սի, հայ եմ, արմենյո և կաթողիկոս։

— Օրմանյա՛ն։

— Սինյորե։

— Հայերե՛ն խոսե նախ։

— Պե՛նե, պենո՛նե. ա՛խ, լա՛վ, լա՛վ։

— Ի՞նչ ըրիր Գարակյոզյան կտակին համար։

— Հա՛, հա՛, հա՛,— ձեռքերը շփելով, շփշփելով, քաղաքագիտությամբ վարվեցա։

— Քաղաքագիտությունը ի՞նչ է եկեղեցիին մեջ։

— Հա՛, հա՛, հա՛, Բեռ Տիո, եկեղեցական միլոնը քաղաքական վերարկու է։ Ազգին հավատացուցի, որ կտակը պիտի գործադրվի, սուլթանին հավատացուցի, որ պիտի չգործադրվի, և կաթողիկոս եղա։ Ասոնք իմ գիտնալու գործերս են. քոռբո տի պաքքո, հա՛, հա՛, հա՛։

— Ես հիմա դժոխքին մեջ կը սորվեցնեմ, թե քաղաքականությունը ի՞նչ է։

— Չէ՛, հայր, չէ՛,— կը միջամտե որդին,— հոն ալ սատանայապետին տեղը կ՚անցնի, բոլոր սատանաները կը ժողվե, մեղավորները կը միացնե, մեզի խաղ մը կը խաղա։

— Հայր, կ՚աղաչեմ, ինծի տուր Օրմանյանը,— ըսավ հոգին.— ինծի կը համմարի, խնդումերես է։ Արքայություն կը տանիմ, անտեղիններուն ուրախ զվարթ ընկեր մը կ՚ըլլա, Ազարյանն ալ Իզմիրլյանին հետ հաշտեցնելու կ՚ելլե, ժամանակ է, կ՚անցնի։

— Քեզի ըլլա, ուր կը տանիս, տար։

— Կրա՛ցիե, թա՛նթե, բատրե. կրա՛ցիե, թա՛նթե։ Ա՜խ, շնորհակալություն, հայր, շնորհակալություն։

Հոգին կու գա թևեն կը մտնե և կը տանի։ Օրմանյան ճամփան ինքնիրենը.

— Աս ալ շահեցանք. ասկե՞ ետքը։ Մեյմը սա հոգին բոլորովին ինծի կապեմ, անոր միջոցով Երրորդությունը չորրորդության վերածել կու տամ, օր մըն ալ մեծամասնություն կը շահիմ և կանցնիմ հոր տեղը։ Ան աշխարհքն ալ համբերելով գործը գիտցող խելացիինն է, աս աշխարհս ալ։

* * *

Հայր Աստված ա՛լ հարկ չի տեսներ մյուս պատրիարքները կանչել. ամենքն ալ աս պիտի ըսեն, ան պիտի ըսեն, մեջեն պիտի ելլեն։ Ինք սակայն գործին աղեկ մը տեղեկացած էր ու վճիռը կու տա.

— Դուք, տարաբախտներ, ինչ որ քաշեցիք աշխարհի մեջ, կը բա-

վե ձեզի. դուք պատասխանատու չեք ձեր մեղքերուն համար. դուք զոհերն եք ընչաքաղց մեծատուններուն, կը ներեմ ձեզի ամեն ինչ. գացեք արքայություն և հանգստացեք։

Կարապե՛տ և Բյուզա՛նդ Գարակյոզյաններ, զատվեցեք մյուսներեն, քիչ մը ավելի մեղմ պիտի վարվիմ ձեզի հետ։ Իսկ դուք մնացած բոլոր Գարակյոզյաններ, զրկեցիք աղքատը և բարերար հռչակվեցաք, խաբեցիք ժողովուրդը և օրհնյալ գերդաստան կոչվեցաք, կորե՛ք դժոխք, անիծյա՛լ գերդաստան։

«Նոր կյանք», Ա. տարի, 1898 թ. 2.

ԺԱՄԱՆՑ

ԱՐՎԵՍՏԱՀԱՆԴԵՍ ԳԱՑՈՂ ԿՈՎԿԱՍՑԻՆ

(1889-ին)

Զարթումյանի թղթերուն մեջ Լոնդոն փնտռտուքի մը պահուն ձեռքիս դպան 1889-ի Մասիսին մեկ քանի թիվերը։ Աշնասաղարթ այդ թերթերը ազդեցին վրաս պատանեկության օրերու սիրահարական նամակի մը պես, որ գրքի մը մեջ մոռցված է ու հանկարծ աչքերուդ կը զարնե, երբ ճնշված ես տարիքի ու հոգերու ներքև։ Հո՛ն քովե քով ենք Մելքոն Կյուրճյան, Զոհրապ, Բաշալյան ու ես։ Այդ դեղնած տերևներուն մեջեն բույե մը վերակենդանացավ հիշատակն այն սարսուռին, որով բնազդը կը հուզեր մեզի, փոթորիկին մոտալուտ պայթման ազդարարությամբ։

Ու առանց տրտմության չէր, որ հիշեցի այդ անցյալը, ուր Թուրքիո և Ռուսիո հայերը մեկ գաղափարով մը, մեկ սրտով իրարու փարած էին մեկ Հայաստանի սիրով։ Հայրիկ ամենուս համար հայոց ատծո իբր հոգին թևատարած կը սավառներ Պոլսեն Վարագ, Վարագեն Արարատ։ Եվ այս տողերը գրողը ամեն օր Պոլսո մամուլին մեջ Թուրքիո հայոց մտքերն ու սրտերը Կովկաս կ'ուղղեր, ուրկե Հայաստանի արևուն ծագման նախարձակ նշույլները կ'ընդնշմարվեին. ու ամեն օր ալ Կովկասի մտքերն ու սրտերը կը վարեր դեպի Թուրքիո տառապյալ հայերը։

Ու երբեմն «Ժամանցը» կուգար սրտերը զովացնել օրվան տառապալից կյանքին հրայրքեն։ Մերթ կովկասցիներուն հետ կը ժպտեինք պոլսական բարքերու ցուցադրությամբ, և մերթ պոլսեցիներուն հետ՝ ի տես կովկասյան դիմագծերու։ Այդ ժպիտներեն մեկն է, որ հին «Մասի-

ռեն» այս նոր երեսներուն կ'ուզեմ թուլտեցնել։ Տեսնենք, թե սերտ բարեկամությունը և ծիծաղը կրնար եղեր իրարու հետ հաշտ ապրիլ։

***

Պոլսեն անցնելով Փարիզի արվեստահանդեսին գացող կովկասցիին իր ծառայությունները մատուցանելու համար պ. Գր. Գալֆայան ամեն առտու արևը ծագելեն առաջ մակույկով կը սպասե Սև ծովեն գալիք շոգենավերուն։ Հայ Չիչերոնը շատ անգամ հուսախաբ ետ կը դառնա. բայց երբ Բաքվի շոգենավը կ'երևի, վստահ է, թե նույն օրը կովկասցիներու պատկառելի քանակի մը պիտի առաջնորդե։ Այո՛, ամենքն ալ Բաքվի շոգենավով կու գան, կամ ինչպես իրենք կ'ըսեն, «Պակետով»։ Ազգասիրական պարտականություն է։

— Մենք էլ, եղբայր, մի պան անենք նրանց համար, նրանք այնքան պաներ են անում մեզ համար, կ'ըսեն։

Եվ արդարև։ Բաքվի ընկերությունը կը կոչվի «Հայ և մարոքյան ընկերություն» իր շոգենավերուն մեկի անունը Արմենի է. Լորիս-Մելիքովի մարմինը այդ ընկերության շոգենավով փոխադրված է Բաթում, ու երթևեկության ծանուցումները «Մշակի» մեջ կ'երևին։ «Էլ ինչ պետք է», որ Բաքվի ընկերությունը կովկասցի հայուն աչքին ազգային հիմնարկության մաս և բաժին չհամարվի։

— Մեր ազգությունը երեք պանով է պահպանվում,— կ'ըսեն Կովկասի հայերը,— եկեղեցիով, ուսումնարանով, Պակետով։

Լույսը ճեղքվելուն պես շոգենավեն կ'ելլեն և կ'ուզեն երթալ «Արևելքի» խմբագրատունը, ուր կ'առաջնորդե զիրենք պ. Գալֆայան։ Ո՛չ ոք եկած է դեռ. կը զարմանան։ «Իրենք Բաթումից գալիս են, և պոլսեցիք դեռ անկողնումն են»։ Քանի մը ժամ վերջ կուգան խմբագիրները։ Ուղևորները կը փնտռեն անունով իրենց ծանոթ անձեր։

Քիչ մը հարցուփորձե և սուրճ խմելե հետո կը պատրաստեն պրոգրամմը, որ է՝ ծրագիր։ Նախ՝ հայրիկը պիտի տեսնեն։ Կովկասցին, որ Պոլիս կուգա և կը մեկնի հայրիկին աջը չհամբուրած, կը նմանի ուխտավորին, որ Երուսաղեմ կ'երթա ու առանց Քրիստոսի գերեզմանը համբուրելու կը դառնա։ Հետո պիտի այցելեն Ներսես պատրիարքի շիրմին ու անկե ետքն ալ Այա-Սոֆիան պիտի տեսնեն, Վոսփորը, կղզիները, Պոլսո «նշանավոր գործիչներին»։ Իրենց կ'առարկվի, թե առայժմ այդքանը կը բավե մեկ շաբաթվան համար։ Ի՞նչ մեկ շաբաթ։ Նույն իսկ իրիկվան շոգեկառքով պիտի մեկնին։ Չեն կրնար համոզվիլ, թե հայրիկը տեսնելու համար միայն երկու-երեք օր պետք է։ Ինչպե՞ս, «միթե հայրիկը Պոլսում չէ՞»։

— Այո՛, Պոլիս է,— կը պատասխանվի,— բայց ո՞վ գիտե ո՞ւր է։ Իսկուտա՞ր, Մաքրիգյուղ, Կղզի՞ն, Պեոյուք տերե՞։

Բայց միթե այդ ամեն տեղերն ալ Պոլսոյ մեջ չե՞ն, «մի կառք վեր առնենք և գնանք գտնել Հայրիկին» կը խնդրեն։ Չեն կրնար ըմբռնել, թե մեկ-երկու ժամվան մեջ Պեոյուքտերեեն Իսկուտար, հոնկե Մաքրիգյուղ անցնիլ հնարավոր չէ։ Զիրենք համոզելու համար կ՚առարկվի, թե Հայրիկը գուցե կղզիները ըլլա։

— Դե՜հ, պարախոդով գնանք, կ՚ըսեն և կը պատրաստվին։

— Բայց միշտ շոգենավ չկա։

— Ի՞նչ եք ասո՜ւմ. դեհ, գնանք այն պստիկ պանով, որը մեզ առավոտուն պարախոդից դուրս բերավ։ Սանդալ ըսել կ՚ուզեն։

Ինչպե՞ս հասկցնել իրենց, թե սանդալով կղզի չ՚երթցվիր. թե նույն իսկ մեկ օր պետք է շոգենավով երթալ գալու համար։ Կը վշտանան կարծելով, թե պոլսեցիները զիրենք կը ծաղրեն։

— Ախր մի օրից մենք Վիեննա ենք գնո՜ւմ։

Ժամանակը հառաջացած է. խմբագրատունեն դուրս կ՚ելլեն ծրագրին մյուս մասերուն գործադրության համար։ Բայց սոված են՝ այսինքն անոթի են։ Ղալաթիա Պզտիկ-Արթինին կ՚առաջնորդվին։ Կը փափագին տեղական ուտելիքի։

— Փլավ կ՚ուզե՞ք։

— Փլավ մեր երկրումն էլ կա։

— Տոլմա՞։

— Մեր երկրումն էլ կա։

— Միդիա՞։

— Դա ի՞նչ պան է որ։

— Տեսակ մը սև ոստրե։

— Չենք ուզում, մեր երկրում չենք տեսել։

Դժվարին ըլլալով գտնել ուտելիք մը, որ «իրանց երկրումը» թե՛ ըլլա և թե չըլլա՛, այսպես թե այնպես պատառ մը բան կ՚ուտեն, միայն թե գինին շատ կը հավնին, իրենց երկիրն ալ այդպես գինի չեն խմած. վրան «պստիկ-պստիկ աստղներ են պլպլում»։ Իրենց ընկերացող պոլսեցիները իրենք ալ կ՚ուզեն համը նայիլ. տարօրինակ համ, ձեթի համ։ Կը նային գավաթին մեջ. այո, «պստիկ-պստիկ աստղներ պլպլում են» գինիին երեսը։ Տարակույս չկա, զեթին եաղի է։ Պոլսեցի խմբագիր մը կամաց մը սպասավորին կը հարցնե, թե «ի՞նչ է աս»։ Մարդը ներողություն կը խնդրե, ականջեն փսփսալով, թե գինին աճապարանքով զեթին եաղիի շիշերուն մեջ լեցուցեր է։ Ու անոնք կը շարունակեն սքանչանալ։

— Ինչևէ, ձեր երկրումը գոնե մի լավ պան կա։

Ճաշեն վերջը կ՚անցնին Սթանպոլ. քանի մը կառք լեցվելով կը հասնին Այա-Սոֆիա։ Պ. Գալֆայան ներս կը մտնե և կը վերադառնա լուր բերելով, թե յուրաքանչյուր այցելուի համար պետք է մեճիտիե մը վճարել։ Կ՚ապշին. իրարու երես կը նային։ Կ՚ուզեն գիտնալ թե իրենց փողով ինչ կ՚արժե մեճիտը։ Երկու ռուպլի է գրեթե։ Քարացած կը մնան. գլուխնին կ՚երերցնեն։ Անկարելի է, որ ստակ վճարեն մուտքի համար։

— Մեր երկրումը մուզեների մուտքը ձրի է՝ կը գոչեն։

Իրենց կ՚առարկվի, թե քանի որ Կովկասեն Փարիզ երթալու համար այդքան ծախսեր կ՚ընեն, երկու ռուպլի ավելի, երկու ռուպլի պակաս, նշանակություն չունի. կ՚արժե տեսնել Այա-Սոֆիան։

Այս դիտողության կը նեղանան։ Սկզբունքի և ոչ թե խնայողության համար չեն ուզեր վճարել։ Հանրային շենքի մը մուտքը ձրի պետք է ըլլա, այս է իրենց երկրին սկզբունքը։ Ու իբր ապացույց իրենց համոզումին՝ իրենցմե մին թղթապանակեն երկու ռուպլի կը հանե, կը պատռե, հովին կուտա.

— Արի՛, Գրիգոր ջա՛ն, դու էլ, Ստեփան ջա՛ն, դու էլ, Կարապետ ջա՛ն, դու էլ, դու էլ, դու էլ։

Ու ամենք ալ հանդիսավորապես երկուքական ռուպլի կը հանեն, կը պատռեն, կը նետեն։

— Տեսնո՞ւմ եք։ Խո՛ մենք պոլսեցի հոսհոս չենք, որ սկզբունքից, ուղղությունից զուրկ լինենք։ Մենք Մշակ ենք կարդում. դուք Մշակ չունեք ուղղություն չունեք։ Դեհ, գնանք։

Ալ ուղղակի պատրիարքարան կ՚իջնեն։ Խոր լռությամբ կը հառաջանան, մտածկոտ, ինքնամփոփ, Ներսեսի գերեզմանին մոտենալու վրա են։ Մայր եկեղեցիին ի տես հանգուցյալ պատրիարքին շիրմին կը բանան գլուխնին երկյուղածությամբ, զգածեալ կ՚աղոթեն։ Կը խոնարհին, կը համբուրեն տապանաքարը և մխիթարված դուրս կ՚ելլեն արցունքոտ աչքերով։

Հայրիկի և Ներսեսի շիրմին հանդեպ է միայն, որ կովկասցիները քննադատություն ընելու սկզբունքը կը զոհեն։

Կարգը չարշուն տեսնելու եկած է։ Ոտքով ամենը մեկտեղ վեր կ՚ելլեն Կետիկ-Փաշայի դարիվերեն։ Երբ կը մտնեն նեղ փողոցը, ուրկե մեծ շուկան կ՚երթցվի, հանկարծ բանջարեղենի խանութի մը առջև կանգ կ՚առնեն հիացած.

— Ա՜խ, ի՜նչ մեծ խըյար, կը գոչեն. տես էտ էլ մեր երկրումը չկա։

— Ի՞նչ խըյար, ո՞ւր է. կը հարցվի պոլսեցիներեն։

— Դե՜հ, այդ կախը։

— Ծղրայր, այդ դղում է. ասմա զապագ կ՚ըսենք։

— Էդպես դղո՞ւմ կը լինի։

— Էյ այդպես ալ խըյա՞ր կ՚ըլլա։

Ասոր ալ չեն համոզվիր։ Կը պնդեն հատ մը առնել, այնտեղ ուտել համը տեսնելու համար. «ախր փողը մենք ենք տալիս»,— կ՚ըսեն։

Ի՜նչ փորձանք։ Բոնի պոլսեցիները զանոնք կը հեռացնեն. վշտացած կը հեռանան։

— Ախր, ինչո՞ւ մեզ էդպես ծաղրում եք։ Ուզում եք, որ խըյարը մեզ դդում հավատացնել տաք։ Դուք մեր երկիրը որ գալու լինիք, մենք ձեզ էդպես պան չենք անում։

Շուկան վեճը իրենց միջև կը սկսի։ Մեկը կ՚ըսե.

— Է՛հ, մեր քաղաքումն էլ էսպես չարշու կա. չարժե տեսնել։

— Տո՛, իդիոտ,— կը պատասխանե ուրիշ մը խնդալով,— քո ամբողջ քաղաքը այս չարշուի կեսը չէ. ո՞ր տեղաց էսպես չարշու պետք է ունենաք։

Այդ միջոցին լրագիր ծախողները կ՚անցնին։ Պոլսեցիները «Արևելք» մը կ՚առնեն. և երկրորդ երեսը, ազգային լուրերու շարքը կը տեսնեն այցելուներուն անունները, մականունները, քաղաքավարական հիշատակությամբ մը։ Ցոյց կուտան անոնց։ Չեն հավատար. իրենք ալ կը կարդան ու ձեռքե-ձեռք կ՚անցընեն։

— Տո՛, մենք ովքե՛ր ենք, որ գրել են. ո՞ր տեղաց էլ իմացել են։ Իսկ «Մշակ» էտպես պան չի՛ անի։ Ուղիղ ասած, որ հոսհոս եք։ Ու կը խնդան, կը խնդան։

Յուրաքանչյուրը իրենցմե քանի մը «Արևելք» կ՚առնե։ Ամեն մեկը կը բանան, կը նային, թե ստուգիվ անուննին ամենուն ալ մեջը կա՞։

Ալ ուրիշ բանի վրա չեն նայիր. աչքերնին «Արևելքին» է։

Հոգնած դադրած կը հասնին Սիրքեճի։ «Արևելքի» ցրուիչը, որ առտվընե ի վեր Հայրիկը կը փնտրեր, հոն կուգա, լուր բերելով, թե Հայրիկը այն օրը Պոլիս չէ իջած։ Ուղևորները անմխիթար են. մինչև իսկ «Արևելքն» ալ կը գոցեն։ Արվեստահանդեսը հարամ պիտի ըլլա։ Ի՞նչ երեսով երկիր պիտի վերադառնան։

— Դուք մարդ չեք, պիտի ասեն մեզ, մեր երեսին պիտի թքեն։

* * *

Ամսե մը ետքը իրենց երկիրն են։ Առաջին գործերնին է իրենց ազգականներուն, բարեկամներուն, ծանոթներուն «Արևելքը» ցույց տալ։

— Տեսեք, ի՜նչ հոսհոսներ են. մեր անունը, ազգանունը, Պոլիս

գնալը գրեր են. «Մշակ» էսպես պան կ՚անի՞։ Ի՞նչ ասես. հոսհոս են. մեզ պատիվ են արել. չէ՞։

Ու հետո հպարտորեն կ՚ավելցնեն.

— Ի՛նչ մեծ թերթ. չէ՞. իսկի մենք էլ էտպես մեծ թերթ չունենք։ Պատիվ է բերում հայերին. ուղիղ ասած եվրոպացու թերթ։

— Է՛հ, եղբայր, ուրիշ ի՞նչ պատիվ արեցին ձեզ պոլսեցիները։

— Ոչինչ. մի-մի փինջան ղայֆով հյուրասիրեցին մեզ։ Ի՜նչ մեծ թերթ։

«Նոր կյանք», 1900, թ. 12.

ԱԶԳԻՍ ԲԱՐԵՐԱՐՆԵՐԸ

Եվրոպա հիմնված հայ որբանոցի մը տնօրենը առևտրական կարևոր քաղաքի մը վաճառականներուն պաշտպանությունն ալ խնդրած ըլլալով, ժողովի մը մեջ նախ իրմեն ինչ-ինչ բացատրություններ պահանջվեցան՝ առաջարկը նկատողության առնելու համար։ Այդ գումարումին ատենագրությունը կը հրատարակենք։ Զանազան նկատումներ կը պարտավորեն մեզի ծածկանունով փոխանակել իրականները։

Ատյանը բացվեցավ ի ներկայության ինը երևելի վաճառականներու, ատենապետությամբ Օլոմ-Պոշյան էֆենտիի։

Ատենապետը *(տնօրենին).*— Մյուսյո՛, *քու ատ որբանոցիդ համար շատ գեշ բաներ լսած ենք։*

Տնօրենը.— *Կը խնդրեմ ի՞նչ են լսածներնիդ, բամբասողները ո՞վ են։*

— Ո՛վ ըսած է, ըսած է, բավական է, որ ըսված է։

— Կարելի՞ է, որ ամբաստանյալի մը չհայտնվի իրեն համար ըսվածները. թշնամական զրպարտություններ չե՞ն կրնար ըլլալ ատոնք։

— Զրպարտություն մը ճշմարտութենեն զանազանելու չափ խելքերնիս կը հասնի։

— Ձեր իմացական կարողությունը կասկածի տակ ձգել չէ միտքս. բայց աշխարհի օրենք է ամբաստանյալէ մը բացատրություն ուզել։

Ժողովական մը.— *Ատենապետ էֆենտի՛, ինչ որ մեջերնիս խոսեցանք, հարցուցեք, տեսնենք ի՞նչ պիտի պատասխանե։*

— Շա՛տ աղեկ։ Մյուսյո՛, *ատ որբանոցդ ո՞ւր է, աշակերտները ո՞ր տեղվանքներեն են։*

— Լուկանո է. տղաքը ամենքը Կիլիկիայեն են։

— Դեպք պատահա՞ծ տեղվանքներեն են, ո՞րբ են։

— Բնականաբար։

— Բան մը տեսե՞ր են. հարերնին, մարերնին մտքերնի՞ն է, ի՞նչ եղավը գիտե՞ն։

— Ի՞նչ ըսել է. ամեն բան տեսեր են. ամեն բան մտքերնին է. տասը-տասներկու տարեկան են. սիրտ պետք է դիմանա պատմածնին լսելով. «Մեյ մը մեծնա՜նք, ի՞նչ պիտի ընենք»,— կ'ըսեն։

— Անուններին ի՞նչ է։

— Լևոն, Հեթում, Սմբատ, Վահան, Արամ...

— Ձեռք կու տա։ Ի՞նչ կը սորվին։

— Քրիստոնեական, հայոց պատմություն, հայերեն, դաղիերեն, տաճկերեն...

— Երգ մե՞րգ։

— Անտարակույս։ Եկեղեցական, ազգային բոլոր երգերը։

— Ծըմլասթիք ալ կ'ընե՞ն։

— Տարակույս ունի՞ք. սքանչելի կ'ընեն։

— Արհեստ կը սորվի՞ն։

— Այո՛, երկաթագործություն, ատաղձագործություն, կոշկակարություն։

— Այսչափը բավական է։ Մյուսյո, ալ ի բերանո քումմե դատեցար։ Մեր գիտցածեն ավելը իմացանք։

— (Շվարած)։ Ի՞նչ կա. ի՞նչ ըսի՞ որ։

— Քիչ մը դուրս ելիր. ժողովը առանձին պետք է խորհրդակցի։

(Տնօրենը դուրս եկավ։ Կես ժամեն կանչվեցավ. ատենապետը իմացուց, որ ժողովը տրամադիր կ'երևի որբանոցին պաշտպանությանը մասնակցիլ. բայց նախ կ'ուզե տնօրենեն լսված պատասխաններուն վրա քանի մը դիտողություն ընել. ու նաև պիտի ներկայացվին առաջարկություններ ալ)։

— Ինչո՞ւ սա որբանոցը Եվրոպա բացեր ես։

— Ազատ երկրի մեջ չեմ ներվիր կրթություն տալու համար։

— Պարապ խոսք։ Օսմանյան կայսրության մեջ դպրոց, որբանոց պակաս չէ, ամեն օր ալ կը բացվին։ Որբանոցդ պետք է օսմանյան հողը փոխադրես, որպեսզի տղոցը շնորհքով ազգօգուտ դաստիարակություն տաս։

— Ի՞նչ կ'ըսեք, կարելի՞ բան է։

— Քո գիտնալու բանդ է։ Տղաքը ո՞ր կողմերեն են։

— Կիլիկիո զանազան քաղաքներեն. Այնթապ, Մարաշ, Ադանա, Ձեյ...

— (Բարեկամությամբ ընդմիջելով)։ Ձեռք կու տա, ձեռք կու տա։ Ատ քաղաքներեն չ՚ըլլար։ Ազգին բոլոր աղետները ատ քաղաքներուն երեսեն են. բարով խերով չըլլային։ Ուրիշ քաղաք չկա՞ մի։

— Ինչո՞ւ չէ. Վանեն, Մուշեն, Էրզրումեն...

— Մեզի ծաղրելո՞ւ եկեր ես։ Ատոնք գեշին գեշն են։ Ազգին բոլոր աղետները ատ քաղաքներուն երեսեն են. բարո՛վ խերով չըլլային։ Ուրիշ քաղաք կը պակսի՞։

— Շատ աղեկ, ուրիշ տեղերն ալ որբեր կան. Մարզուան, Ակն, Արաբկիր...

— (Բարկությամբ)։ Մենք քեզի շնորհքով քաղաք կ՚ըսենք՝ դուն ելեր ի՞նչ կ՚ըսես։ Անոնց բույնը էն առաջ ատ տեղվանքը դրվեցավ. մենք ալ բան գիտենք։ Աղգին բոլոր աղետները ատ քաղաքներուն երեսեն են. բարո՛վ խերով չըլլային։

— Կիլիկիայեն չառնե՛մ, Հայաստանեն չառնե՛մ, Փոքր Հայքեն չառնե՛մ, անդին ի՞նչ մնաց։

— Հայուն խըթլըխի՞ն եկեր ես, որ պիտի երթաս տերության ջիղերուն դպած տեղերեն առնես։ Մինչև Չինումաչուն հայ կա, ա՛ռ ու առ։ Աս աս է. կարճ կապենք։ Ի՞նչ տեսակ որբեր են նայինք։

— Որբին տեսակը կա՞, ամենուն ալ հարը մարը ջար...

Ժողովականները.— Սըս, սըս, սը...

— Մյուսյո, մտածելով խոսե։ Ամեն բան իր պատշաճ լեզուն ունի. ատանկ բաներուն կ՚ըսեն՝ դեպքին հանդիպած են։

— Ատ ալ աղեկ, ամենուն ալ հարը, մարը դեպքին հանդիպած են, տղաքն ալ որբ մնացած են։

— Շենքով շնորհքով որբեր չկա՞ն, որ կ՚երթաք ատանկները կը փնտրեք։

— (Զարմացած)։ Շենքով շնորհքով որբը ո՞րն է։

— Մարդը կը հիվանդանա, խոստովանանքը կ՚ըլլա, հաղորդությունը կ՚առնե, խելքը գլուխը անկողնին մեջ հոգին կ՚ավանդե, եկեղեցական արարողություններով կը տանին կը թաղեն. ասանկ կանոնավոր մեռնողին ո՞վ բան կ՚ըսե։ Ասոնց ձգած տղաքն ալ շենքով շնորհքով որբ են, մեղքցվելու ալ արժանավոր։ Ասա՛նկ որբեր առնելու ես։ Մեյ մըն ալ, ի՞նչ ըսել է ատ տարիքը տղաք առնել, որ մտքերնին բաներ մը դրած ըլլան։

— Ծիծի տղա՞քը առնեմ։

— Ատ քու գիտնալու բանդ է։ Ատ տարիքը տղաքներ կ՚առնեք, որ մտքերնին բաներ մը դրած ըլլան. անոնց գլուխը շուտով կը լեցվի.

երթան բան մըն ալ իրենք հանեն, վրեժ լուծենք ըսելով, ինչպես բերնովդ խոստովանեցար։ Անոնք ալ պատիժնին շուտ կը գտնեն, բայց ի՞նչ օգուտ, անոնց տղաքն ալ նորեն ասանկ մեր վրա կը մնան։ Ու մենք դատինք աշխատինք, մեր զավակներն ալ դատին, աշխատին, մեր թոռներն ալ դատին, աշխատին, որ ասանկները պահենք մեծցնե՞նք։ Ամա՜ն, աստված, ամա՜ն, աստված, աս ի՞նչ է մեր քաշածը։

(ժողովականները կես մը ոտքի ելած օձիքնին կը թոթվեն ու միաբերան). Ամա՜ն, աստված, ամա՜ն, աստված, աս ի՞նչ է մեր քաշածը։

— Ահա կը տեսնե՞ս, ժողովս ամբողջապես կը բողոքե, ա՛լ դուն մտմտա, թե ի՞նչ ընելու ես, ընտոր տղաք առնելու ես, որ մեր վստահությունը գրավես։ Գանք սա անուններուն։ Ասկե ետքը ա՛լ ատանկ անուններ պիտի չըլլան։ Ազգին բոլոր աղետները ատ անուններու երեսեն են. բարո՛վ խերով չըլլային։ Առաջ ի՜նչ երջանիկ էինք, երբ շենքով շնորհքով հայու անուններ կային։ Որբերուն ատ մեր հին անունները դնելու է։

— Ատ դյուրին է. հին անունները կը դնենք. Սարգիս, Գեորգ, Մկրտիչ, Գրիգոր, Թադեոս, Բարդողիմեոս...

— Կեցի՛ր, մյուսը, կեցի՛ր, ո՞ւր կը վազես։ Ատ անուններն ալ չեն ըլլար։

— Բայց մեր հորենական պապենական անունները ասոնք չե՞ն։

— Ամեն բան իր ատենին։ Հիմա ատ անունները շա՛տ ջուր կը վերցնեն։ Մեյ մը սա Սարգիսը, Գեորգը, երբեք չենք ընդունիր։ Ան ի՜նչ է ժամերը պատկերներուն վրան կա, ձեռքերնին սուր, ներքևնին ձի, ոտքերնուն տակ գաղան մը։ Տերության կասկած տալու չէ, տղոցը միտքն ալ բան ձգելու չէ։ Մկրտիչը՝ արմատեն ջնջելու է. հիմա գացեր էջմիածին հանգիստը կը նայի։ Ազգին բոլոր աղետները ատ մարդուն երեսեն են. բարո՛վ խերով չ՛ըլլար։ Ան Գրիգոր է, Թադեոս է, Բարդողիմեոս է, անոնք մտքե անցընելն ալ մեղք է։ Մենք ալ քիչ մը ի գրոց ենք, գիտենք։ Գրիգոր, Թադեոս, Բարդողիմեոս ըսի՞ր մի, լեպ տեմետեն լեպլեպիի աղնար, «Հայաստանյայցս» ալ ինքնիրենը ետևեն կու գա։ Հայաստան մայաստան չկա՜. ատ բաները ա՛լ լմնցան։ Ազգին բոլոր աղետները ատ Հայաստան անունին երեսեն են. բարո՛վ խերով չ՛ըլլար։ (Հեգնական շեշտով մը)։ Անուններուդ փունջին մեջ մեծ կարմիր վարդը կը պակսի։ Ներսեսնիդ ո՞ւր է, Ներսեսնի՜դ, ան ինչո՞ւ չես դրեր... Ինչ է նե, նորեն կարգավոր է, լեզուս բռնեմ։ Ազգին բոլոր աղետները ատ մարդուն երեսեն են. բարո՛վ խերով չ՛ըլլար։

— (Ժպիտով մը)։ Հասկցա, հասկցա, ավետարանիչներու, առաքյալներու անուններեն դուրս չեմ ելլեր։

— Հա՛, սանկ կարգի եկուր. ի՞նչ անուններ պիտի դնես նայինք։

— Ավետարանիչներեն կը սկսինք, Մատ...

— (Ժողովականները ամենքը մեկ զսպանակե մը մղվածի պես վեր կը ցատկեն գունաթափ, պոռալով)։ Պապանձե՛, պապանձե՛, լեզո՛ւդ բռնվի։

— Մյուսյո՛, մյուսյո՛, խելքդ գլուխդ կանչե, բերնեդ ելածը ականջդ թո՛ղ լսե։ Միտքդ ուր կ՚երթա, մենք կը հասկնանք։ Ազգին բոլոր աղետները ատ մարդուն երեսեն են. բարո՛վ խերով չըլլար։

— Բայց ի՞նչ անուն կ՚ուզեք, դուք ըսեք, ա՛լ բան չմնաց։

— Ատ քու գիտնալու բանդ է. անանկ երկու միտքով անուններ չ՚ըլլար, ժողովիս որոշումը աս է։ Գանք սորվըցուցանելուդ։ Նայե՛, քրիստոնեականին խոսք չունինք։ Աղեկ հոգ տար։ Ա՛ն խոնարհության, համբերության, հնազանդության պատվիրանքները, իշխանության աստուծմե ըլլալուն ճշմարտությունը, թագավորին հավատարիմ չեղողները դժոխք կ՚երթանը «ծառայք հնազանդ լերուք տերանց ձերոցը», հապա ան մեկ երեսիդ զարնողին մյուսը դարձուր պատվա՞կան խրատը, մարգրիտներ են, մարգրիտնե՞ր։ Ասոնք տղոցը մտքերուն, սրտերուն, հոգիներուն մեջը խոթե, որ իրենք ալ փորձանքի չհանդիպին, ազգն ալ, ու օր մը մեզի օրհնեն։ Բայց հայոց պատմություն ըսվածին անունը պիտի չլսվի, արմատեն, արմատե՛ն (ձեռքովը մանգաղի պես կը հնձե)։ Հայկ, Արամ, Տիգրան, Լևոն, չ՚ըլլար։ Ազգին բոլոր աղետները ատ հայոց պատմության երեսեն են. բարո՛վ, խերով չ՚ըլլար։ Օսմաներենը ինչո՞ւ էն ետքը ըսիր։ Է՛ն առաջ։ Եվ անանկ թուրքերեն, տաճկերեն նախատական բառերը պիտի վերցվին։ Օսմաներեն պիտի ըսվի։ Գանք էն կարևորին. ազգային երգը ի՞նչ է նայինք։ Բամ փորոտա՞ն, Արիք Հայկազո՞ւնք. ատոնց մե՛կ գիրը անգամ պիտի չլսվի։ Ազգին բոլոր աղետները ատ երգերուն երեսեն են, բարո՛վ, խերով չըլլային։

— Շատ աղեկ, մինակ եկեղեցական երգեր սորվեցընենք։

— Բայց անոնց մեջ ալ անանկ Հրաշափառ է, Վարդանանց է, Ղեվոնդյանց է, Թագավորաց, քրիստոնեից և զինվորյալ մանկանց նոցա է, ըլլալու չեն։ Զինվորյալ մանկանց եղեր, սըվոր նայե. ան լակոտներն ալ ժամը ասանկ բաներ լսելով կը հավատան, որ մանուկը զենքը կըրնա առնել, քրիստոնյա թագավորին հետ միանալ։ Ժըմլասթիքը ի՞նչ է, նայինք։

— Առողջության համար է, տղաքը ուժ կ՚առնեն, կը զորանան։

— Պետք չէ, մենք առողջ ենք նե ժըմլասթի՞ք ըրած ենք։ Ատանկ բաները կովի պատրաստություններ են։ Սորվըցուցած արհեստներդ ի՞նչ են։

— Արդեն ըսի, ի հարկին ապրուստ ճարելու գործ մը։ Երկաթագործություն, ատաղձագործություն, կոշկակարություն։

— Արհեստը աղեկ բան է, ոսկի պիլեզիկ է, կ՚ըսեն, նայե՛, ատիկա շատ խելացի մտմտացեր ես, բայց շնորհքով արհեստ սորվըցնելու ես, որ կառավարությունն ալ չկասկածի, ատ քու սորվըցուցածներդ օր մը շատ գեշություն առաջ կը բերեն։

— Ի՞նչ արհեստ կուզեք, դուք ըսեք։

— Ատ քու գիտնալու բանդ է. ժողովիս միտքը հասկցար։ Անանկ արհեստներ սորվցնելու ես, որ մեջը դանակ-մանակ, սուր-մուր ասեղ, թոփլու, պիզ-միզ չմտնեն։ Ատանկ արհեստներ շա՜տ։ Ատ լմնցավ. սա դաս տվողները ո՞վ են նայինք։

— Դպրոցն ելած, ուսյալ, շնորհքով մարդիկ են։

— Անշուշտ դպրոցն ելած են, հարցուցածնիս ատ չէ, անոնցմե՞ են։

— Որոնցմե՞։

— Ձե՞ք հասկնար կոր, հը, ի նոցանե՞ են։ Արդեն մեկիկ-մեկիկ պիտի քննենք յա։ Ազգին բոլոր աղետները անոնց երեսեն են, բարո՛վ խերով չ՚ըլլային։

— Հիմա՛, **մյուսյո**, ժողովիս հոգին ըմբռնեցիր, որոշումները հասկըցար, գնա ատոնց վրա աղեկ մը մտմտա, քեզի ժամանակ, եթե մեր բոլոր պայմանները հանձն կ՚առնես, մենք ալ որբանոցիդ համար ընելիքնիս գիտենք, ատիկա մեզի ձգե։

— Բայց նախ կը փափագեի գիտնալ, թե ձեր աջակցությունը մինչև ո՞ր աստիճան պիտի ըլլա, որպեսզի ես ալ անոր համեմատ ընելիքս որոշեմ։

— Է՜հ, ժամանակները հայտնի են. մենք ալ աս գործերուն երեսեն շատ վնաս ունեցանք, անոր համար սրտերնիս էրած կը խոսինք։ Մինակ մենք հոս եղողներս պիտի տանք. եթե մեր բոլոր որոշումները ընդունիս, մենք ալ մեջերնիս հանգանակություն ընելով քեզի ամիսը օսմանյան ոսկի մը կու տանք։

(Ժողովական մը) Ատենապետ էֆենտի, ամենքը չլմնցավ, ուրիշ պայման մըն ալ կա. սա գիտես...

— Աղեկ միտքս ձգեցիր, մենծ էշը ախոռը մոռցանք, **մյուսյո**...

(Տնօրենը, ոտքի ելլելով, աչքերը չորս դին ժուռ կ՚ածե, աղեկ մը կը նայի և հետո ատենապետին դառնալով) Ի՞նչ, դեռ դո՞ւրս ալ մնացող կա եղեր։ (Կը ձգե կը մեկնի)։

Քանի մը րոպե շվարում։

— Սրիկան, մեզի ամենքս էշ ըրավ, չլսեցի՞ք։

(Ժողովականները սթափած, ամենքը ոտքի վրա կը խոսին իրարու հետ)։ Տեսա՞ր ապերախտ շունը, մենք իրեն այնքան աղեկություն ընենք, ինք մեզի էշ ընե։ Հապա իր հասցուցած լակոտները ի՞նչ պիտի ըլլան։— Նկուր սա ազգին բարիք ըրե։— Աս ի՞նչ է էֆենտիմ քաշածնիս, աս ի՞նչ է, աշխարքիս հոգը մեզի՞ են տվեր։— Բարերար եղիր, որ էշ ըլլաս։— Հայդե երթանք մեյմեկ պիրա խմենք, քիչ մը պաղշկինք։ Էո՞ֆ, սա ազգին ձեռքեն քաշածներիս (օձիք թոթվելով կը մեկնին)։

«Նոր կյանք», 1898, թ. 24.

ՔԱՆԻՆԵՐ ՏԵՍԱ

Խասգյուղի մուրացիկ վարժապետը օրվան խոսակցության նյութ մըն է։ Ոմանք կը գթան, ուրիշներ կը զայրանան այն մարդու վրա, որ իբր կրպակի նշանակ մը վզեն կախած է իր նախկին արհեստին անունը։ Ոմանց համար անպիտան ծույլ մըն է— եթե խաբեբա մը չէ. և ոմանց համար ալ զայրացած թշվառ մը, որ կորսնցուցած է պաղարյունով մտածելու կարողությունը։ Ես ալ կը շվարիմ, թե որո՞նց համակարծիք ըլլամ։ Մեկ բան մը միայն գիտեմ. ամեն ատեն, որ թշվառություն մը կը ներկայանա մեր առջև, սրտե բխած կարեկցության ձայնը կը լռեցնե մտքի աղդարարությունը։ Կարեկցությունը ներողամիտ է մինչև իսկ անիրավության համար։ Առանց փոխադարձ ներողամտության կրնա՞ր գոյություն ունենալ մարդկային ընկերությունը։

Ու երբ կու գան նկարագրել ինծի այդ թշվառը իբր թշվառական մը, կը վարանիմ հավատալու։ Հիշողությունս գիս թերահավատ կ'ընե. քանինե՜ր տեսա անոթի։ Այդ սոված վարժապետները թերևս ունեին հոգեկան ավելի զորություն, բայց մի՞թե իրավունք ունինք պահանջելու, որ ամենքն ալ զորավոր ըլլան։ Եվ անոթիներու հոգեկան տկարությունը կ'արտահայտե ընկերության անիրավությունը, որու շնորհիվ ծերերն ու աշխատելու անկարողները կը մնան անոթի։

* * *

Մինչև իսկ հիմա,— թեև անցած են շատ տարիներ,— կը տխրիմ, երբ մտքիս առջև կը բերեմ դեմքերն այն վարժապետներու, որոնց մուրացկանությունը տեսած եմ, կամ մուրալու վիճակի մոտեցած ըլլալնին։

Օրթագյուղ Հունաց եկեղեցիին քով Բաբսեղյանի խանութը կա. իրի-

կունները, երբ դպրոցէն կ՚ելլէինք-քանի մը-քանի մը տարի առաջ— շատ անգամ հոն կ՚երթայինք թուղթ, գրիչ գնելու։ Խանութին առջև կը գտնվէր միշտ հինցած, աղտոտած զգեստներով ծերունի մը, նիհար դեմքով, մորուքը եկած։ Հայտնի էր, թե խեղճ մըն էր, բայց հիմա հիշելով այդ դեմքը, խորախորհություն կը նշմարեմ վրան։ Ամեն ատեն ձեռքը գիրք մը ուներ, այրված կանաչ գույնով, տպագրությունը կարծես շատ մաքուր։ Միշտ կը ջանար այդ գրքեն օրինակ մը ծախել խանութը եկողներուն. հացու փարա պիտի ըներ։ Կը բանայի, կը կարդայի գիրքը. նամակներ էին գրաբար գրված։ Խանութպանը օր մը ըսավ, թե այդ գիրքը շինողը նույն իսկ այդ մարդն է. «Հիմա սանկ եղեր է»։ Սկսա արտակարգ պատկառանքով նայիլ այդ կես մուրացկին վրա, վասնզի գիրք մը գրած էր և այն ալ գրաբա՜ր։

Գրաբարի վարժապետ մը եղած էր գրաբարի գրքի մը այդ խեղճ հեղինակը, որուն անունը չեմ հիշեր, բայց մականունը կարծեմ Ալեքսանյան էր։

Ի՞նչ եղավ ետքը. չեմ գիտեր. այսօր միայն միտքս կը բերեմ զինքը. հավանորեն տեղ մը ինկավ մեռավ անոթի. և ավելի գեշը, անծանո՜թ։

Ինչ որ արգելք չէ մեզ հայտարարել, թե գրաբարը մեր կրոնքին հիմն է, ու գրաբարի աշխատողները՝ մեր բարերարները։

* * *

Օրթագյուղ Թարգմանչաց վարժարանին մեջ կար վարժապետ մը, որուն պաշտոնը թեև մեծ չէր, բայց կարևոր էր. փոքրիկ տղոց կարդալ կը սորվեցներ։ Մատաղաշ մտքերու վրա աշխատողը ավելի կը հոգնի, քան թե մեծերուն դասախոսողը։ Ամեն օր իրեն առջև կ՚երթայի Նարեկս կարդալու. հանդարտ նստած էր աթոռի մը մեջ անժպիտ, բայց առանց բարկանալու մտիկ կ՚ըներ. կը շտկեր սխալները, նորեն կարդացնել կու տար։ Պապա մարդ մըն էր, անուշ, հանդարտ և հավանորեն բարեսիրտ. օր մը չնեղացավ և ոչ ալ ծեծեց զիս։

Տարիներ անցան։ Վենետիկեն վերադառնալես հետո, օր մը Օրթագյուղ քարափներու խանութի մը առջև տեսա հին վարժապետս. տղոց միտքը բարկացնողը՝ հիմա քարերը կը տաշեր, կը բարակցներ. ամչցա, լուիկ անցա, չտեսնելու զարնելով։

Հետո դարձյալ տարիներ անցան. առավոտները շատ անգամ Օրթագյուղեն քալելով կ՚երթայի Ղալաթիա. առտու մը Ֆընտըգլըի կողմերը

Հանդիպեցա քարակոփ-վարժապետին, որ առջեւս կ՚երթար գլուխը կախ։ Մօտեցա իրեն ու բարեւեցի․

— Նշան աղա, զիս ճանչցա՞ր,— ըսի։

— Ինչպե՞ս չեմ ճանչնար․ շատ մեծցեր ես, բայց քեզի Նարեկ կարդացնելս գիտեմ։

Ասդիեն անդիեն խօսեցանք ու բաժնվեցանք։ Քիչ մը ատեն անցաւ․ շաբաթ իրիկուն մը տեսա, որ նախկեար խանք գալով՝ մեր դրասենյակին դռնեն ներս կը նայեր․ ելա հրամցուցի սենյակ մը․ սուրճ մը խմցուցի։ Կերպով մը հասկցուց, թե ինչո՞ւ համար եկած է։

Ալ այնուհետեւ սկսավ ավելի ստեպ գալ․ երբեք չզժգոհեցա․ իր ցաված, խորհրդավոր, հեզուկ դեմքին վրա այնպիսի տխրություն մը կար, որ ինծի շատ մտածել կու տար։

Իրիկուն մը, շատ ուշ ատեն, դարձյալ Ֆընտըգլըի ճամփուն վրա տեսա զինքը, կ՚երթար առջեւեն․ կռնակը պարկ մը կար․ մեջը հաց լեցուցած էր։

Կու գար ամեն տեղ զիս կը գտներ․ ա՛լ ատեն մը չեկավ․ փնտրեցի հետքը, չգտա։ Չեմ գիտեր, ո՛ւր նետած էին այդ վարժապետին դիակը։

✻✻✻

Ուրիշ մըն ալ կա, որուն մարմինն ալ չեմ գիտեր տեղ մը նետվա՞ծ է, ողջ կամ մեռած։

Ան ալ վարժապետ մըն էր, ու ծանր վարժապետ մը, դարձյալ Օրթագյուղեն։ Դպրոցին կառավարիչն էր։ Առավել մինչեւ իրիկուն դատախազի, դատավորի եւ գործադիր իշխանության պաշտոն կը վարեր։ Կ՚ամբաստաներ աշակերտները, վճիռը կ՚արձակեր, պատիժը կը տնօրիներ ու կը գործադրեր։ Այն ատենի աշակերտները անշուշտ մինչեւ հիմա ինծի պես զգալու են, թե որպիսի սարսուռ կ՚ընթանար մեր ոսկորներուն մեջ, երբ պարոն Պողոս բերանը բանալով՝ կ՚արձակեր սոսկալի վճիռը, ամեն ցերեկ, ճաշի ժամուն․ «Երկու սահաթ ծունկի վրա, երկու սահաթ ոտքի վրա, սահաթ մը ետքն ալ՝ տիլիմ մը չոր հաց»։ Ամենքս ալ շաբաթը մեկ-երկու անգամ կ՚ենթարկվեինք այդ պատժին․ բոլոր մեջ մեկ չէր զերծ։ Հանցանքները շատ ոչինչ էին․ էն մեծ հանցանքնիս այն էր, որ երբ սանդուղեն վար կ՚իջնեինք, աղմուկ կը հանեինք։

Եվ սակայն չէինք ատեր պարոն Պողոսը, չեմ գիտեր ինչո՞ւ։ Քանի մը տարի առաջ տեսա զինքը նիհարցած, թոշնած, տկար, խեղճ։ Հին օրերեն գորով մնացած էր սրտիս մեջ, այնքան հիշատակներ կ՚արթնցըներ իս․ սիրով սղմեցի ձեռքը․ նստեցուցի․ պաշտոն մը կ՚ուզեր․ ի՞նչ

ըներ. լրագրին մեջ ազդ գրեցի. հարցնող, փնտրող չեղավ։ Ալ ինքն ալ երևան չելավ. չեմ գիտեր ի՛նչ եղավ խեղճ մարդը։ Բայց անպաշտոն, անհույս, լքյալ վարժապետի կսկծոտ դեմքը չ՚աներևութանար աչքես։

***

Եթե մուրացիկ մը չեղավ, բայց մուրացկանության վիճակին մոտեցավ այն ծերունին, որ մեր մեջ ծանոթ է իր ժամանակակից տոհմային տարեգրությամբը։

Ալ բավական ծերացած էր այդ պատվելին,— Ավետիս Պերպերյան,— երբ սկսավ մեզ դասախոսել։ Չեմ կրնար երբեք մոռնալ այդ սրտոտ վարժապետին մեր վրա թողած տպավորությունը։ Ժամ մը, երկու ժամ, մինչև երեք ժամ ալ կը խոսեր. մենք տղաքներս առանց ձանձրանալու մտիկ կ՚ընեինք. և ինչ որ կ՚ըսեր, կը դրոշմվեր մեր մտքին և սրտին մեջ և անկից չջնջվեցավ երբեք։ Զինքը կը սիրեինք ամենքս ալ։ Չեմ գիտեր վարժապետական ի՞նչ սկզբունքի համար հանեցին պատվելին, որ գնաց Ռոտոսթո, թափառեցավ հոս ու հոն ու եկավ մեռնիլ Օրթագյուղ։

Ձմռան օր մը, սաստիկ ձյուն կը տեղար բքախառն, երկու-երեք հոգի տարին թաղել այդ բազմավաստակ, սրտի տեր վարժապետը։ Գուցե գերեզմանն ալ անհետացած է։ Հարմար ժամանակին կը մեռներ. գրքերն ալ ծախած էր ու գիտեինք, թե գիրքը սիրողին համար՝ զայն ծախելը, մուրալու չափ դառն է։ Չէր գիտեր ի՞նչ պիտի ըներ քանի մը օրեն. մահը զինքը փրկեց այդ հոգեն և ձեռք երկնցնելու ամոթեն։

***

Վենետիկեն ընթացավարտ ելած Պոլիս վերադառնալու վրա էի. Հ. Իգնատիոս վ. Կյուրեղյան, հիմա Մխիթարյանց աբբահայրը, օր մը խոսակցության մեջ ըսավ ինծի, թե ի՞նչ պիտի ընեմ Պոլիս և ավելցուց.

— Չըլլայ թե վարժապետություն ընես. Պեշիկթաշլյանեն ավելի աղեկ վարժապետ պիտի չըլլաս. անոթի մեռավ։

Հ. Իգնատիոսի այս խրատը «ականջիս օղ» եղավ։ Եթե քիչ մը փորձություն ունեի, վարժապետության մեջ մտնելու, բոլորովին սթափեցա։

Օրթագյուղ մեռավ Պեշիկթաշլյան։ Մյութեվելլի փողոցի քովեն, բըլրակին ստորոտը կը գտնվի Սեդրակին տունը, զոր կը հովանավորե նըռնենի մը։ Ամեն անգամ որ կ՚անցնիմ լռակյաց ամայի փողոցեն, աչքս կը վերցնեմ այդ խրճիթին վրա, ուր աղքատ մեռավ ամենամեծ տաղանդ մը և կ՚ըսեմ, թե հարմար ատենին մեռավ։ Եթե քիչ մըն ալ ապ-

րեր, հոգնությունն ու ծերությունը վրա հասնելով՝ օրվան հացին կարոտը պիտի քաշեր։

Թողթե այն քարտեզը, զոր հայ վարժապետ մը վիզն անցուցած կը պտտի խասգեղի փողոցներուն մեջ, մի՞թե կախված չէր նաև Ավետիս Պերպերյանի, Մկրտիչ Պեշիկթաշլյանի բնակարաններուն դռան վրա։

«Հայրենիք», 1892, թ. 320.

ՄՐՏԻ ՀԱՂԹԱՆԱԿԸ

Շաբաթ օր մը 1867-ին Օրթագեղի աղքատախնամ ընկերության տիկինները իրենց սովորական նիստը կ՚ընեին Հռիփսիմյանց վարժարանին մեջ։ Դուրսը սպասող խեղճերը հետըհետե կու գային հայտնել ուզած պետքերնին։ Իր կարգին կին մը ալ ներս մտավ, ինը-տասը տարու աղջըկան մը ձեռքեն բռնած։ Ամենքը կը ճանչնային զանիկա, լաթ լվացող պարտիզակցի Հռիփսիմեն էր, քանի մը ամսե ի վեր որբևայրի մնացած։ Եկած էր խնդրելու, որ աղջիկը ձրի ընդունվի Հռիփսիմյանց վարժարանը։

— Ինչո՞ւ չես ղրկեր մեկալ դպրոցը,— հարցուցին։

«Մեկալ դպրոցը» ծանիկ ամիրային հաստատածը, ուր կ՚երթային աղքատ աղջիկները, շատ հեռու էր։ Լվացարար կինը կը նստեր ասդին կողմը, Ակնավորին լեռը, խրճիթի մը մեջ. չէր կրնար ամեն օր պըզտիկ աղջիկը մինակուկ ղրկել մեկ լեռնեն մյուսը։ Եվ ասկե զատ, հասկցուց, թե կ՚ուզեր, որ աղջիկը «քիպարի» զավակներու հետ նստի ելլե, որպեսզի անոնցմե բան սորվի, ճիպար ըլլա։

Այս հայտարարության վրա տիկինները քիչ մը խնդացին։ Իրենցմե մեկը արդեն առաջուց շահված էր լվացարարեն, ուստի շնորհեց իր պաշտպանությունը և Հայկանույշ ընդունվեցավ։

Հռիփսիմե շնորհակալություն հայտնելե և աղոթքներ ընելե հետո կը վարաներ դուրս ելլելու. կ՚երևար, թե ուրիշ առաջարկ մըն ալ ուներ. բայց կը քաշվեր. վերջապես համարձակեցավ բերանը բանալ։

Քանի մը տարի առաջ աղջիկը ծանրապես հիվանդացած էր և ինքնին ուխտ ըրած էր, որ եթե աղեկնա, ամեն հինգշաբթի Ղալաթիա ս. Փրկչին տանի։ Անկե ի վեր ուխտը կը կատարեր. բավական էր, որ անձրև ու ձյուն չ՚ըլլար. ոսկի մըն ալ տային, նորեն լաթի չէր երթար, բոլոր գեղր գիտեր ասո։ Առաջ գրկովը և հիմա որ ալ մեծցած էր, ձեռքեն բռնած կը տաներ աղջիկը։ Բերնին հացը կը կտրեր ու մոմ կը վառեր։

Իր խնդիրքն էր, որ ճանըմները հրաման տան մինակ հինգշաբթի օրերը մինչև կեսօր տանի բերե աղջիկը. դասերուն կը հասցնե։

Խեղճ Հռիփսիմեն կը կարծեր, թե պիտի հանդիպի մեծ դժվարություններու, դպրոցին կանոնները պիտի խանգարին։ Բայց տիկիններբ ընդհակառակը ունեցան գոհության ժպիտ մը, որ քիչ մըն ալ հեգնություն էր լվացարարին միամտությանը, որով կը կարծեր, թե իր աղջկանը քանի մը ժամվան բացակայությունը կրնար վնասել դպրոցին բարեկարգությանը։

— **Աֆերիմ, աֆերիմ,** *ապրիս, տանիկ աղեկ մեծցուր աղջիկդ,— ըսին ու հրամանը տվին։*

* * *

Օրթագյուղի բարեսեր ընկերության թատրոնին մեջ 1875-ի ամառը, երբ կը կատարվեր այդ տարվան շրջանավարտներու մրցանակաբաշխությունը, Հայկանույշ առաջին հանդիսացավ։

Երբ գնաց ընդունիլ նախագահ սրբազանին ձեռքեն իր փառավոր մրցանակն ու հանդիսականներու որոտընդոստ ծափերը ողջունեցին զինքը, Հայկանույշ պահ մը մոռցավ իր ութ տարվան դառնությունները և հաղթական ակնարկով մը նայեցավ ընկերուհիներուն, որք միշտ բարի եղած էին իրեն համար և անով զինքը ցավցուցած էին։

Քանի մը տարի անոնց կերակուրին մասնակից եղած էր ցորեկները. մայրերը այնպես պատվիրած էին. մեղք էր, աղքատի աղջիկ էր, ուտելիք չուներ, օգնելու էր։ Բայց երեք-չորս տարիե ի վեր, հորմեհետև խելահաս էր, ավելի լավ համարած էր բան չուտել, քան թե ուրիշեն ողորմություն ընդունիլ։

Մայրը երբեմն ուրախությամբ կը բերեր ծրարներ. զգեստներ էին այս ինչ ճանըմին տունեն տրված։ Հայկանույշի ընկերներուն հիներն էին. հաջորդ օրը կը հագներ զանոնք,— իրենները շատ հինցած ըլլալով,— ու դպրոց կ՚երթար։ Ո՛չ ոք երես կու գար, բայց իր վրա նետված գաղտագողի նայվածքներեն կը հասկնար, որ ոչ մեկուն համար գաղտնիք մը չէր, թե այդ զգեստները առջի օր ուրիշ մըն էր հագած դպրոցին մեջ։

Չէր մոռցած այս ամենը և դեռ ուրիշ բարերարություններ, որք խոցոտած էին իր մանկական սիրտը։ Եվ հիմա՛ այդ րոպեին պահ մը ինքն ալ խրոխտ ակնարկ մը կու տար ամենուն։

Անդին մայրն ալ հանդիսատես էր իր փառքին. «Սանկ» ընտանիք մը օթյակին մեջ իրեն ալ տեղ մը տված էր, ու կը դիտեր աղջկանը փառքը։ Աչքերեն ուրախության արցունքներ կը վազեին. շատ բան քաշած

էր խեղճը աղջկանը ծնելեն մինչև այն օր. այժմ այդ ամեն նեղությունները պիտի մոռնար։ Բոլոր մեծերում, ֆրանսերենում աղջիկները ետ կը մնային իր Հայկանուշեն։

Մայրական փառասիրությունը չէր կրնար ասկե ավելի գոհացում գտնել։

Բայց գո՞հ էր մայրական սիրտը։ Ո՛չ։ Խորին ցավ մը ուներ այդ լվացարարը, աղջիկը թերահավատ էր. չէր համարձակեր դեռ անհավատ ըսելու։ Երկու տարի էր, որ ալ հինգշաբթի օրերը Ղալաթիա ս. Փրկչին չէր գար հետը. ինք մենակ կ'երթար։ Հայկանուշ դասերը պատրվակ կը բռներ. Հռիփսիմե հրաման առած էր ճանրմեներեն, «Նորեն կ'երթամ, կ'առնեմ» կ'ըսեր, բայց աղջիկը սաստկապես զայրացած սպառնալիք վրած էր, թե դպրոցը կը ձգե, կ'ելլե։

Այդ չէր բավեր. ո՛չ կիրակի, ո՛չ տոն օրերը ժամ չէր երթար։ Մայրը խնդրակատարին առջև շատ իրիկուն կ'երթար կու լար, որ աղջկանը շնորհք տա։

Հռիփսիմե մեր տունն ալ կու գար. ես ալ դպրոցեն նոր եկած էի. քանի մը անգամ հանդիպեցա. աղջկանը վրա խոսեցա ու օր մըն ալ մեկտեղ բերավ, որ մեյմը դասերը նայիմ։ 1871-ին էր. քանի մը հարցումներ ըրի, խոսեցա, շատ մտացի գտա պզտիկը։ Այնուհետև, շատ անգամ մայր ու աղջիկ կու գային, մանավանդ կիրակի օրերը. կը խոսեի, հարցումներ կ'ընեի։

Ժամանակը կ'անցներ, Հայկանուշ կը մեծնար. գեղեցիկ չէր, բայց կրնար մինչև աստիճան մը սիրուն ըսվիլ, խոշոր, վառվռուն, պարտիզակցիի աղվոր աչքեր ուներ։ Ընկերակցությունը ախորժելի կը դառնար ինծի։ Այդ միջոցին ես ալ սկսած էի ինծի գրատուն մը շտկել։ Տրջանը ավարտելու վերջին երկու տարիներն ինե կարդալու գրքեր ուզեց. Ֆեո-յե, Մյուսե, Լամարթին տվի իրեն։

Մրցանակաբաշխութենեն քանի մը օր վերջ դարձյալ մեզի եկած էր. գրքերուս մեջ տեսավ Ռընանի Հիսուսի կյանքը. հետաքրքրությամբ ուզեց և առավ։ Ամիս մը վերջը ետ բերավ և ծիծաղելով ըսավ.

— Շա՜տ բարեպաշտական է։

Արդեն զարմացեր էի Ռընանը ուզելուն, իսկ այդ արհամարհական ձևը ինծի ապշություն պատճառեց։ Մինչև այն ատեն միայն գրական նյութերու վրա խոսած էի, հարկ տեսա խոսակցությանս առարկան փոխելու և զարմացական քանի մը հարցումներ ըրի. Հայկանուշ շատ առաջացած էր. իր մորը, իր խնամակալուհիներուն, վերջապես հայ շրջանակներում ունեցած հավատքին մասնակից չէ։։ Քարոզիչ մը ըլլալու հարմարությունը չունեի և ոչ ալ այնքան բարեպաշտ էի, որ ուրիշները հոր-

գործելու համարձակություն ունենամ, բայց հետաքրքիր ըլլալը ներելի էր։

Մեկ-երկու տարիե ի վեր կը տեսնեի, թե աղջիկները մանչերե նվազ հավատացող են․ և հո՛ն, ուր մենք կը մնանք գրեթե անտարբեր, կային կիներ ու աղջիկներ, որ ի ցոյց կը դնեին իրենց չհավատալը։ Առիթն ուրեմն չուզեցի ձեռքե փախցնել և Հայկանույշի հետ սկսա կրոնական վիճաբանություն մը։ Չեմ կարծեր, որ շատ մեղադրելի համարվիմ, եթե աղջկան մը միտքը ու սիրտը լավ ճանչնալու համար բոլորովին ջերմեռանդ կրոնասերի մը համոզումներն հայտնեցի։

Թե՛ այն օրը և թե՛ այնուհետև ալ վիճաբանեցա․ տեսա, թե բնական գիտությունը, որուն սկզբունքները միայն սորված էր, խախտած էր իր միտքը․ ֆրանսիական գրքերու ընթերցումը բոլորովին տակն ու վրա ըրած էր զինքը․ մանկության ու պատանեկության վշտերը շատ դառնացուցած էին ու կարծրացուցած իր սիրտը։ Ինչ որ սորված էր կրոնքեն, անբավական եղած էր ամրապնդելու իր խախտված միտքը․ դասագրքի մը մեջեն քանի մը հարց ու պատասխաններով բերնուց սորված վարդապետությունները անզոր եղած էին մտքին քննությունները դադրեցնելու․ իսկ սրտին հետ բան մը չէին խոսած։

Այս իրողությունները թերևս չհիշատակեի այստեղ, համարելով զայնս իբր բացառություններ, եթե տասնհինգ տարվան մեջ տեսած չըլլայի Հայկանույշի նման շատ աղջիկներ ալ։

Այնուհետև ժամանակ անցավ․ լվացարար կինը մեռավ․ աղջիկը իր բնակությունը փոխադրեց ուրիշ տեղ․ Օրթագյուղի վարժարանին ֆրանսիացի վարժուհին իրեն պաշտոն մը գտած էր օտար դպրոցի մը մեջ։ Օր մըն ալ դիպվածով իմացա, թե Հայկանույշ կարգվեր էր եվրոպացիի մը հետ, որ հափշտակվեր էր անոր աչքերեն ու հավնած էր ֆրանսերենին և ունեցած ուսումին։

* * *

Հայկանույշի գոյությունն իսկ մոռցեր էի տասը տարիե ի վեր, երբ ամիս մը առաջ հինգշաբթի գիշեր մը սեղանին վրա մայրս ըսավ․

— Այսօր Ղալաթիո ժամը գացի։ Գիտե՞ս ո՛վ տեսա։

— Ո՞վ։

— Հայկանույշը։

— Ո՞ր Հայկանույշը։

— Ուր է, Օրթագյուղ, միտքդ չի՞ գար, չամաշըրճի Հոռոփ մը կար,

աղջիկ մըն ալ ուներ, հետը շատ կը տեսնվեր, ետքն ալ Ֆրենկի մը հետ կարգվեցավ։

Միտքս եկավ. անմիջապես հիշեցի տասնյոթը տարի առաջվան Թընանի դեպքը և կրոնական խնդիրներու համար ունեցած վիճաբանություններս։ Զարմացա, թե ինչպես այդ աղջիկը նորեն սկսած է հինգշաբթի օր Փրկչին երթալ, որուն չէր հավատար մոր ողջության։ Միտքս եկավ, թե ինք պատմած էր ատենոք ինծի մորը հետ ունեցած անհամաձայնությունը հինգշաբթի օրերը Ղալաթիա Փրկչին չերթալուն համար։

— Աղվորիկ ալ աղջիկ մը ունի,— ըսավ մայրս,— հետը բերեր էր և տարավ Փրկիչը համբուրել տվավ։ Խոսեցանք, օր մը իրեն պիտի երթամ. ինքն ալ հոս պիտի գա. քեզ հարցուց։

Հոգեբանական ուսումնասիրություն մը կար ընելու. ձգենք, թե հին բարեկամի մըն ալ տարիներե հետո հանդիպելը միշտ հրճվալի բան մըն է։

Մայրս այցելությունը տվավ և ինծի ալ իմացուց, թե ուրբաթ օր պիտի գա մեզի։ Ստիպվեցա երեկ մինչև ուշ ատեն տունը մնալ։

Տիկին Հայկանույշ տասնվեց տարվան մեջ շատ փոխված էր. փառավոր կին մը եղած էր. երեսուն երկու տարվան էր և բոլոր թարմությունը պահած էր։

Զիրար շուտ ճանչցանք, խոսեցանք անցյալին վրա, Օրթագյուղի վրա, հարցուց իր ընկերուհիները, որոնցմե բնավ տեղեկություն չունեի։ Հին հիշատակները նորոգեցինք և քիչ մը ծաղկեցուցինք հիմակվան կյանքերնիս։

Նախկին ընտանություննիս վերսկսված էր. ուստի համարձակեցա խնդալով մը հարցնել ֆրանսերեն.

— Այս հինգշաբթի եկեղեցի՞ եք եղեր։

Քիչ մը շփոթեցավ և խնդալով մը ըսավ.

— Ի՞նչ ընեմ, սիրտս հաղթեց մտքիս։

Ու ըրավ այդ հաղթանակին պատմությունը, զոր շատ համառոտ հոս կ'ամփոփեմ.

— Երկու ամիս առաջ,— ըսավ,— իրիկուն մը մութին մեջ, աղջկանս, Ադելին ձեռքեն բռնած Բերա կը պտտեի. Պոն Մարշե մտա և կերպասներու բաժնին մեջ սկսա բան նայիլ. քիչ մը երկարեցա. երբ գործս լըմնըցուցի ու քովս նայեցա, Ադելը չի կար. ետիս նայեցա, չի կար. դող ելա, բայց ըսի, թե անշուշտ հոս է. մեկ ծայրեն մյուս ծայրը փնտրեցի, չի կար. որին հարցուցի, չէին տեսած։ Ա՛լ լմնցա։ Աշխարհիս վրա ո՛րչափ փորձանք կա, մտքիս առջև եկան։ Ա՜հ, մայր ըլլալու եք, որ գիտնաք։ Ո՞ր դռնեն դուրս ելլեր, ի՞նչ ըներ։ Սրտես ձայն մը եկավ։ Ա՜խ,

սուրբ փրկիչ, ըսի, աղջիկս գտնեմ, ոտքդ գամ, մեծութեամբը մոմ մը վառեմ. ամեն հինգշաբթի ալ ոտքդ բերեմ։ Ա՛ս ըսի ու մեկ դուռնեն դուրս ելա և սկսա դեպ ի վար Ղալաթիո կողմն երթալ. շվարած չորս կողմս կը նայեի, Ադել չի կար. ետ պիտի դառնայի. թերահավատությունս նորեն բռնեց, բայց ձայն մը սրտես գիս առաջ կը մղեր. Պազար Ալմանի առջև հազիվ կրցի ուրախության ճիչ մը բռնել։ Ադել ապակիներուն առջև կայնած կը դիտեր։ Հափշտակեցի աղջիկս, որ խնդալով կ՚սեր. «Մամաս, ես ալ մեծ եմ, ինքնիրենս ելա, ինքնիրենս տուն կը դառնամ»։

Այդ րոպեին մեծ բան մը փոխվեցավ իմ մեջս. կարծես թե մարմնիս մորթը վերքերով ծածկված էր ու մեկեն ի մեկ ամբողջապես վրայես ինկավ։ Այն գիշերը բոլորովին մորս վրա մտածեցի, ըմբռնեցի, թե ի՜նչ մեծ մխիթարանք կը զգար խեղճը ձեռքես բռնած գիս Փրկչին տանելով։ Ինչո՞ւ համար ցավցուցի խեղճին սիրտը, չհավատալով, իսկ պետք չէ՞ր, որ ամեն հինգշաբթի հետը եկեղեցի երթայի այդ մխիթարանքն իրեն տալու համար։ Հիմա խիղճս գիս չարաչար կը տանջեր։

Այն գիշերն ամբողջ հին կյանքս երազեցի։ Մեր դպրոցը, ծառը, որ ամառներն այնքան անուշ շուք մը կը տարածեր սրահին մեջ և իրիկվան դեմ զանգակի ձայնը, թռչուններուն ճռվողումը, այդ ամենն անուշ մեղեդիի մը պես կը հնչեին սրտիս մեջ. կը զգայի, թե հոն կար դատարկություն մը զոր մինչև այսօր բան մը չէ կրցած լեցնել ու կը մտածեի, թե ի՞նչ մխիթարություն պիտի ունենան զավակներս աշխարհիս վրա, եթե զիրենք զրկեմ կրոնքե։ Եթե մայրերնին կրոնք չունենա, ի՞նչ կ՚ըլլան զավակները։ Մայրս խեղճ տգետ կին մըն էր և սակայն սրտիս մեջ այնպիսի տպավորություն մը թողած է իր կրոնասիրությունը, որ երեսուն տարի հետո մեկեն ի մեկ կը հալածե մտքիս մտածությունները, սկզբունքներս։

Ու՛ հետո, շիտակն ըսելով, հրաշքի ալ հավատացի։ Չէ՞ր կրնար փոխանակ վարի դռնեն ելլելու՝ Թեփե-Պաշիի դռնեն դուրս ելլել։ Չէ՞ր կրնար փոխանակ Ղալաթիո կողմե վազելու, հակառակ կողմը երթալ. ո՞վ էր, որ գիս մղեց դեպի այդ դուռը, դեպի այդ կողմը։

Սիրտս շատ հուզվեցավ. հինգշաբթի օր, երբ Ադելիս հետ մտա եկեղեցին, ուր ճիշտ տասնինը տարի է չէի մտած, քիչ մը փոխված էր դուրսը, բայց Փրկչին պատկերն անփոփոխ էր, հին-հին սիրելի մը կը գտնեի, ես ալ զայն համբուրեցի։ Ու շարականներն, աղոթքները զորս չէի լսած այսքան տարիներե ի վեր, անբացատրելի բանաստեղծությամբ կը սարսռացնեին գիս։ Աչքերս արցունքներ եկան։ Աղջիկս, խեղճը չէր գիտեր ի՛նչ է։ Բայց հիմա ալ սորվեցավ, մյուսներն ալ վարժեցան. կը տեսնես, ի՞նչ լավ քրիստոնյաներ պիտի ընեմ։

— Ամուսինն՞ը,— հարցուցի։

— Ահ, շատ լավ մարդ է, կարծեմ ան ալ քիչ մը խիղճ կ՚ըներ, որ թերահավատ եմ, հիմա կը տեսնեմ, որ գոհ է և կ՚ախորժի, որ զավակները հայոց եկեղեցիին մեջ կրթեմ։

Կը տեսնես, բարեկամս, ըսավ, ոտքի ելլելով, որ երթա. մենք կիներս միշտ նույնն ենք, սրտերնիս փափուկ ու դյուրազգած է. ուսումը կեղծ մաշկի պես երբեմն կը պատե զայն ու կը ջանա խեղդել. բայց մեծ բժիշկ մը կա, որ կը պատռե այդ մաշկն ու սրտերնիս կը փրկե, այդ բժիշկը դժբախտությունն է։

«Հայրենիք», 1892, թ. 989.

ԾՈՎՈՒՆ ՀԵՏ

Էքվաթոր, 23 սեպտեմբեր, 1897

Հինգշաբթի, իրիկվան ժամը 5։ Էքվաթոր ծանրադանդաղ հանդարտությամբ կ՚անջատվի Ծոլիեթի քարափեն. վերջին բարև մը Մարսեյլի բարեկամներուս, որոնք ա՛լ կը ստվերանան ու միս մինակ կը մնամ ծովուն հետ, սրտի մեծ զորավիգը, մտքի մեծագույն ներշնչարանը։

Շոգենավին խելքը կանգնած, կը դիտեմ մարը մտնող արևը։ Հմայքը, որ կբխի կրակի, կապույտի, անուշե զուրկ հրաշազան գույներու խառնամառն կիտվածեն, կարծես կամաց-կամաց կը պարպե ուղեղս, կ՚ոչնչացնե միտքս։ Անէության իրականությունն է, որ կը վայելեմ, սիրտըս ողողված անպատում հրճվանքով մը, որուն ի՛նչ ըլլալը չեմ գիտեր, չեմ զգար։ Երջանկությունը ա՞յս է արդյոք։ Թերևս. ու անոր համար է, որ հափրությունը քիչ տևեց։

Զզվանքի զարթում մը մեկեն ի մեկ. ֆես կրողներ եկեր կեցեր են քովս։ Կը սթափիմ, խելքս վրաս կը բերեմ։ Ո՞ւր ենք։ Օ՜հ, Արևելք, կ՚երթանք, զղջումը կը վրդովե հոգիս. որչափ ըղձացի այդ րոպեին ետ դառնալ. բայց Էքվաթոր անխռով անտարբերությամբ կը առաջանա։

«Սովորությունը երկրորդ բնություն է» ըսված է. գուցե փորձառական ճշմարտություն է աս, բայց ապահովաբար արևելքեն արևմուտք փոխադրված ինծի պես հայերուն համար չէ։ Ֆեսով անցընել ամբողջ կյանք մը, ֆեսակիրներու հետ ապրիլ միշտ և ահա մեկուկես տարվան բաժանում մը ո՜րքան անտանելի կ՚ընծայե Արևելքն ալ, իր մարդերն ալ, իր բարքերն ալ։ Ա՞յս է սովորության ուժը։

Գարշա՜նք, գարշա՜նք։ Չորս կողմս բնության վիժումները, որոնց ծովուն մաքուր գեղեցկությունը կ՚արատավորեն։ Արուգ, ծուռումուռ քուներ, որոնց վրա շվայտոտ կյանքի մը խարակովը նշանված դեմքեր ու ասոնց շիլումիլ աչքերը նողկանքի հիվանդությունը կը բերեն հետերնին։ Իշխաններ են, արևելցի բոեմներ, որ Եգիպտոս կը վերադառնան։ Ու կը մտաբերեմ.— Անդին, քիչ մը հեռուն, հարեմներու խորը թաղված՝ այս արարածներն են, որ ազգությունները, ժողովուրդներու կյանքին բացարձակ, միահեծան տերերն են... Բայց հեռո՜ւ ընկերային իմաստասիրությունը, գոնե ծովուն վրա մոռնանք պահ մը իրականությունը։ Զափազա՞նց եսասիրություն է րոպեական մոռացում մը։ Բայց ուրիշ ի՜նչ հաճույք մոռացումեն զատ։

24 սեպտեմբեր

Ուրբաթ իրիկուն. քայլամոլոր կ՚երթամ շոգենավին ծայրը, հոն, ուր բաց օդին մեջ կը գիշերեն աղքատ ճամփորդը, առանց գիտնալու, թե օդը, որ կը շնչե հոն՝ իր բարերարն է։ Ծալապատիկ նստողներու բոլորակ մը հորինած է, գլուխներ կ՚երերան, մեկը բարձրաձայն կ՚երգե, ռնգային հագագով մը ու մյուսները կը կրկնեն վերջին տողերը։ Քանի մը վայրկյան մտիկ ընելե հետո, ետ կը դառնամ սրտաբեկ։ Իսլամական աղոթքներ են։

Խղճի կատարյալ անկախության ջերմ բարեկամ, առանց որևէ թշնամության, բայց և այնպես ի լուր այդ «աղոթք»-ներուն կը զգամ, թե սիրտս խուլ ատելությամբ մը կը սկսի լեցվիլ ընդդեմ այդ ողորմելիներուն, որ անկեղծ հավատացյալներ ալ են։ Օ՜հ, այդ գլխի տատանումներն էին, այդ ռնգանվագ երգերն էին, որ ընկերացան մեր ջարդերուն։ Ցեղային զգացումն է, որ կ՚ընկճե իմաստասիրական մտածությունները։ Ներողամտությունը, որ ընկերային իմաստասիրության ծնունդն է, արդյոք ազգային ոճրագործության հոմանիշ չէ՞ մեզի համար, 1894-են հետո։

26 սեպտեմբեր

Կիրակի առտու։ Չեմ հիշեր ո՞վ գրած է, թե անապատին մեջ երկար ատեն դեգերող քրիստոնյան երբ կորսընցուցած է եղանակի, ամսվան, օրվան ճշգրիտ ծանոթությունը, բնազդով սակայն կը զգա կիրակին. հանկարծական հանդարտություն մը կը պատե զինքը. հիվանդութենե առողջանալ սկսողին կազդուրումովը կը հեշտանա։ Երեկվա պես նույն Էքվաթօրն է, որ կ՚ընթանա. նույն միապաղաղ ծովը, նույն ջինջ երկինքը, նույն դեմքերը շուրջս, բայց հոգիի ի՜նչ խաղաղություն է, որ կը զգամ։

Քրիստոնեությունը կիրակիին զատ միության ուրիշ կապով մը իրարու չպիտի կապեր իր հետևորդները։ Աստվածաբանական ամեն վեճե, ցեղական ամեն մրցումե, դավանանքի ամեն բծախնդրութենե զերծ կը մնա կիրակին։

Ու այդ կիրակի օրը մեզի, հայերուս համար ալ սրտակցության գեղազանց հուշարարն է։ Ծովուն վրա ըլլաս, թե ցամաքին, ազատ թե բանտը, կիրակի օրը հոգուդ թևերովը կ՛երթաս կը միանաս հայրենի երկրիդ, տիեզերքի չորս կողմը թափառած հայուն կյանքին հետ։ Նույն կոչնակն է, որ նույն պահուն կը հրավիրե ամեն հայ հայրենի տաճարը, նույն մրմունջներն են, որ սրտերը կը զգացնեն, նույն մելամաղձությունը, որ ամենքն ալ կը հովանավորե։ Եվ հիշատակը կը տանի քեզի հեռուները, շա՜տ հեռուները։ Նույն կոչնակը ութսուն հազար կիրակի է՝ անփոփոխ հարատևությամբ կը զարնե, նույն մրմունջները ութսուն հազար կիրակի է՝ կը գրավեն ամեն սրտերը. ութսուն հազար կիրակի միօրինակությամբ անցած է այն օրեն, որ քրիստոնեությունը մեր ազգային կրոնքը ըրինք. ու քանի՜ կիրակիներ դեռ արդյոք անայլայլ միօրինակությամբ պիտի սահին հայուն կյանքին վրայեն։ Դարերու վազքին մեջ, տիեզերքի անհունության մեջ, կիրակին ամեն հայու միջև ճշմարիտ հաղորդությունն է։

Ժամը առտվան տասը. շոգենավին կամուրջին վրա անսովոր երթևեկ մը. ֆրանչիսկյան, դոմինիկյան, ճիզվիտ եկեղեցականները կը շրջագային ամեն կողմ. վեր ելլելու հրավեր կը կարդացվի. կը հետևիմ ուրիշներու օրինակին։ Պատարագ մը կը մատուցվի, կիրակի է։ Ծերունի քահանա մը արարողությունը կը կատարե, շարժուն խորանի մը առջև, զոր ֆրանսիական հանրապետության դրոշակները կը զարդարեն. «ժողովուրդը» երկյուղած լռությամբ կ՛ունկնդրե։ Հանդիսականներուն մեջ կը մտնեմ։ Հանդեսը ինծի համար սովորական չ՛երևնար. բազմաթիվ ուղևորություններուս մեջ առաջին անգամն է, որ քրիստոնեության մարմնացում խորհուրդը ծովուն խորհրդավորության վրա սավառնած կը տեսնեմ։ Ու միտքս կը խորասուզվի պատանեկության ընթերցումներու հիշատակին մեջ։ Կը հիշեմ Շաթոպրիանի սրտահույզ նկարագրությունը կիրակնօրյա պատարագի մը՝ Ամերիկա ծովող առագաստանավին վրա։ Խորապես ազդած էր վրաս այդ դրվագը, որուն ներկա գտնվիլ ըղձացած էի. ու հիմա աչքերուս առջև կ՛իրականանար այդ բանաստեղծական երևույթը և սակայն իբր հետաքրքրական տեսարան մը միայն. օ՜հ, երեսուն տարիները, որ անցած են այդ ընթերցումներեն ի վեր, բանը մը լռելու ըրած են հոգիիս մեջ ու մեր սերունդին սրտին մեջ։ Ցավի՞մ։ Բայց ջախջախվածին բացակայությունը զգալի չէ։ Հ. Ալիշանի ներշնչումն էր, որ

Շաթօպրիան մեզի սիրելի ըրավ. վստահ եմ, որ նույն պահուն եթե հոյակապ ծերունին ինքն ալ գտնվեր **Էջմիածնին** վրա, պիտի երկրպագեր սեղանին դողդղահար կրոնավորությամբ. բայց մի՞թե ավելի զվարթամիտ խղճով։

27 սեպտեմբեր

Երկուշաբթի։ Պայծառ արևը ծաթեր է, խաչի մեռելոցին երկուշաբթին է։ Այս միևնույն բարկ արևն էր, որ ուրիշ խաչի մը մեռելոցին, իր լուսովը ողողեց Պոլսո հայությունը։ Ազգային ջերմեռանդ հավատքի, բոցավառ եռանդի երկրորդ տարեդարձն է, հայաստանցի պանդուխտը խմբովին այդ օրը Դուռը կ'երթար Եվրոպայի վերջնական պատասխանը առնելու. պատանիները տարեցներուն, ծերերը երիտասարդներուն հետ, կինն ու էրիկմարդը միևնույն ոգևորությամբ ազգային միության դրոշը կը պանծացնեին։ Շատ բան փոխվեցավ այդ օրեն ի վեր, շատ բան ջնջվեցավ. «ամեն բան կորսվեցավ... հավատքե՛ն զատ». ու երբ ավերակներու մուխեն, տաք-տաք արյունի շոգիեն ազգային հավատքը իր գլուխը վեր կը վերցնե, բան մը չէ կորսված, բավական է, որ միտքը պաղարյուն առաջնորդը ըլլա հավատքին։

Հիշելով այս տարեդարձը, ժամանակագրական սխա՞լ մը արդյոք կ'ընեմ։ Խաչին մեռելոցին օրն է այսօր, բայց սեպտեմբերի ալ 15/27, երեք օրվան տարբերություն սեպտեմբեր 18/30-ին հետ։ Բայց երբ Հայաստանցի հայուն արյունն է, որ կը հոսի, ժամանակը արևով ու լուսինով չէ, որ կը չափվի. անոնք աշխարհաքաղաքացի են. ո՛չ ազգ կը ճանչնան, ո՛չ ցեղ, ո՛չ երկիր։ Հուլի՞ս, հունվա՞ր, օգոստո՞ս, դեկտեմբե՞ր, ի՞նչ կը հիշեցնեն հայուն. անոնք օտար են. իր լեռներուն մեջ քաշված՝ տարրերու դեմ կռվող հայուն սրտին ի՞նչ կը խոսին այդ համամարդկային թվականները։ Հայը իր ազգային կյանքը ունի, իր կրոնական կյանքը ունի. իր թվականները անոնք են, անփոփոխը անոնք են, մշտնջենականը անոնք են, զի անոնց մեջ դարերու հոգին պահված է. ամեն հայ անոնց հետ թափած է իր արցունքները, որոնք եղած են իր ուրախության վկաները։ «Խաչին երկուշաբթին էր, որ Սթամպոլ զավակս մորթեցին», «Աստվածածնա պահքին էր, որ տաճիկները աղբարս Սթամպոլ մեռցուցին», կ'ըսե հայը Հայաստանի մեջ ու պիտի ըսե միշտ. ասանկ սորված է դարերե ի վեր։ Ու անհատական կյանքն ալ իր կրոնական կյանքին հետ կապած է. ա՛ն է իր տարեցույցը, խաչին կարգվեր է, հինակին զավակ ունեցեր է, լուսավորչին՝ մեռել։ Ու պանդխտությանը մեջ այդ հիշատակներն են, որ հայ կնոջ սիրտը կը գալարեն, ամեն օր երկրին հետ կը կապեն։ Այսօր տերնտաս է, տալս սա բանը կ'ը-

նե»․ «Վաղը Վարագա խաչ է, ներըս այս ինչ բանը պիտի ընե»։ Ամեն տոն օր հիշատակ մը կը պահե իրեն համար․ Երկրին ու պանդխտության աշխարհի հուշարարը կրոնական տոնն է և ոչ օրացույցի թվականը։

Որքան հեռուները կը տանին ինծի այս զգացումները․ ու կը սկսիմ փնտրել այն գաղտնիքը, թե ինչո՞ւ ավանդություններու քաղցրությունը պետք է այդքան սիրենք, երբ մեր մտածությունները մեր հայրերու մըտքեն բոլորովին տարբեր ուղղության մեջ են։ Ու այս րոպեին շուրջս շշընջոց մը կը սթափեցնե զիս։ «Պիտի գա, պիտի չգա», կը լսվի ամեն լեզվով։ Իր բունը շղթենավին մեջ դրած պզտիկ թռչուն մը, ծիծեռնա՞կ է, թե ճնճղուկ, չեմ կրնար որոշել, որ իր սահմանը նեղ գտնելով թռիչը առած է դեպի անհունություն։ Ցամաք չի նշմարվիր, շոգենավը կը առաջանա, թռչնիկն ալ հակառակ ուղղությամբ կ՚երթա․ անջրպետը հետզհետե կ՚ընդլայնի․ տարակույս չկա, թե իր անքույթ ապաստարանեն հեռու, տկար թռչնիկը շուտով պիտի հոգնի ու ազատության անսահմանության մեջ պիտի կորսվի։ Փորձառուները սակայն կը պնդեն, թե անոր սիրտը միշտ «իր բունին» հետ է․ կը դառնա, կը դառնա՝ նորեն հոն կուգա․ ու իրավ ալ քանի մը վայրկյանեն եկավ նորեն հանգչեցավ իր բունիկը։— Քիչ մը այս թռչունին չե՞նք նմանիր մենք հայերս ալ։ Մտքերնիս ո՜րքան նեղ կը գտնե ազգային-կրոնական ավանդություններու նավը․ ու կ՚ուզե թռիչ առնել, անհունության մեջ սավառնիլ։ Փորձերը կ՚ընենք և սակայն ետ կը դառնանք նորեն նավը։ Թռչունը բնազդով իր կյանքին վտանգը կը զգա անհուն ազատության մեջ ու կը փնտրե իր անքույթ ապաստարանը․ ու մենք ալ հանուն ազատամտության մեջ ազգայնության կյանքի վտանգը երբ կը զգանք, նորեն ետ կը դառնանք։

Հայ ժողովուրդը հիմա ընդհանրապես անտարբեր չէ անոնց, որ մարմնով տառապած են կամ կը տառապին ազգին սիրուն․ ո՞ր հայը սակայն օր մը հիշած է մտքի մարտիրոսները, որոնց չարչարանքը մարմնի խոշտանգումներեն շատ ավելի է։ Ազատ Եվրոպայի մեջ ազատամիտ հայը կը զոհե իր մտածությունները, համոզումները, վասնզի ժողովուրդը նյութապես շատ քանդված է և մտքի նոր կռիվներու ժամանակը չէ։ Նախ փրկություն, ապա իմաստասիրություն։ Ու ժողովրդին փրկությանը համար՝ պետք է մինչև անոր սիրտը խոնարհիլ և հուշիկ-հուշիկ զայն բարձրացնել։

«Շիրակ», 1909, թիվ 9—10. էջ 221։

ԿՅԱՆՔԻ ՊԱՏԿԵՐՆԵՐ

Հարգելի բարեկամ

Պ. ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Երբ դեռ շա՛տ երիտասարդ էի, բացիք իմ առաջ «Մշակի» էջերն և թո՛ւյլ տվիք ինձ ազատորեն գրել Ձեր թերթին մեջ: Բայց այսքանը բավ չհամարեցիք, այլ դուք և «Մշակի» բարեկամք, հույժ ներողամտությամբ ցույց տվիք ինձ այնքան համակրանք, ում սպասելու իրավունք ունենալ չէի հուսար: Ա՛յդ ներողամտության, այդ համակրանաց շնորհիվ կարող եղա գրել հավասարապես թե՛ Ռուսիո, և թե՛ Թուրքիո հայոց համար: Այժմ եթե կը հրատարակեմ հատոր մը, այդ Ձեզ պարտական եմ. ներեցե՛ք ինձ, ուրեմն, հարգելի բարեկամ, նվիրել առաջին գիրքս Ձեր անվան:

Ձերդ

Ս. Ա.

Կ. Պոլիս

Օրթագյուղ, 3 հունիս, 1885

4*

ԴԱՏԱՊԱՐՏՅԱԼԸ

Ա

Երբ Նոայլի տիկին մարքիզուհին երևցավ յուր օթյակի մեջ, մյուս օթյակներու հանդիսականք ոտքի ելան ամենքը միասին, իբր մեկ զըսպանակե մղյալ։ Պարողք ընդհատեցին պարերն և հարգանոք դարձուցին իրենց երեսները դեպի մեծ օթյակն։ Հանդիսականք և պարողք կ'ողջուներին տիկին մը, որ շնորհած էր իր հովանավորությունը Ազգանվեր հայուհյաց պարահանդեսին։ Նվագածուք խրոխտահնչակ հնչեցուցին Մառսելեզը: *Քաղաքավարական այս պարտավորության կատարումը գրավեց տասը վայրկյաններ։ Որքան ալ կարճ երևի այս ժամանակամիջոցը՝ ի նպաստ առնելով գիշերվան երկայնությունը, բայց և այնպես անախորժ միջադեպ մը համարեցին նոքա, որք խանդ ու ավյուն կտրած, կը սուրային, կը սլանային։ Ամեն թռիչ, որ արգելքի մը կը հանդիպի և կը կասի, դժգոհ կը մնա։ Այդ վայրկյաններու դժգոհաց մեջ անհամբեր կը հանդիսանային մի քանի երիտասարդներ, որք շրջապատած էին սև տոմինո հագած կին մը և կը ջանային լսել նորա իսկական ձայնը։ Երբ վերջացավ ընդունելության արարողությունը, մեր երիտասարդք քաջաբար շարունակեցին իրենց ռազմագիտությունը սև տոմինոյին շուրջը։ Իզուր էին ամեն ջանք. սև տոմինոն, լավ պարածածկյալ, կը պատասխաներ նշանացի կամ թե կեղծ ձայնով։ Կինը, որ զմեզ կը գերազանցե երկու պարագաներու մեջ, կեղծավորության և անկեղծության մեջ, պարահանդեսն սքանչելի առիթ մը կը համարի կատարելապես օգուտ քաղելու յուր սեռին կեղծելու համար ունեցած բնածիր հատկություններեն։*

Հանգստյան միջոց մ'էր, փոքրիկ կեղծ ծխափող մը բերանը. հագված անգլիացի նավաստիի տարազով, պարահանդեսի սրահեն աշխուժով ներս մտավ երիտասարդ մը, արձակ համարձակ։ Օթյակներու հայեկնե-

րեն մի քանին անոր վրա հառեցան։ Նավաստին աչերը ժուռ ածեց չորս կողմը և նշմարելով սև տոմինոն և նորա ասպետն, որ անդիմակ էր, գնաց ուղղակի անոնց մոտ։ Ասպետն սկսավ խնդալ. Նավաստին, առանց խոսելու, բացավ գլուխը, ողջունեց տոմինոն ու ասպետն և հպատակական շարժումներով մատույց յուր բազուկը տոմինոյին։ Ո՛չ ասպետը, ո՛չ տոմինոն դիմադրություն ըրին։ Նավաստին ու տոմինոն թև թևի անցուցած անմիջապես հեռացան։ Նվագածուք վալս մը կը հնչեցնեին։

Բ

Նավաստին, գրկած յուր աճառայինդ բազուկներու մեջ թեթև տոմինոն, կը սուրային ծածկված վալսի փոշիներով։ Եթե կարելի լիներ վայրկյան մը անանց դնել անոնց սրտի բաբախմանց, պիտի համոզվեինք, թե նույնիսկ վալսի չափազանցական հաշիվներուն մեջ սիրտը ժամանակ կը գտնե տրոփելու։ Բայց ամեն հաճույք յուր վախճանն ունի. միայն բարեբաստ են նոքա, որք միևնույն ժամուն մեջ կարող են փոփոխել իրենց հաճույից տեսակները։ Այս բարեբաստությունը վայելեցին տոմինոն և Նավաստին։ Բավական խոնջ, քաշվեցան փոքրիկ սենյակներեն մին, զովացուցիչ ըմպելիք խմելու, վեր առին իրենց դիմակները, կարծես նոր աշխարհ եկան, ժպտելով իրարու երես նայեցան։

— Է՛հ, տիկին, ըսավ Նավաստին, ըմբռնեցի՞ք այժմ, թե ինչո՞ւ այնքան կը փափագեի այդ պարահանդեսի հաջողության և թե ինչո՞ւ այնքան աշխատեցա այդ հաջողության նպաստելու։

Տիկինը ժպտալով պատասխանեց.

— Կը կասկածեի։

Նավաստին առանց երկար ձևակերպության յուր ձեռքերուն մեջ առավ տոմինոյին ձեռքերն և դրոշմեց անոնց վրա ջերմեռանդ համբույր մը։ Տոմինոն թվի թե հեշտություն կ'զգար այդ համբույրներեն, վասնզի թեպետ ետ քաշեց ձեռքը, բայց քիչ մը հանդարտությամբ։

— Արա՛մ, միշտ խնդրած եմ քենե, որ մեր հարաբերություններն անկեղծ բարեկամության սահմանները չանցնին։

— Ի՞նչ մեղք գործեցի, Սաթենի՛կ։

— Շրթունքներդ շատ տաք են, ձեռքերս այրեցին, ահա մեղքդ։

— Սաթենի՛կ, հավատա՛, թե ինչ որ քեզ համար կ'զգամ, զուտ հոգեկան է։ Գորով, խանդաղատանք, սեր, գրաված են քեզ համար սիրտըս։ Այդքան երիտասարդ, այդքան սիրուն և աշխարհս արդեն քեզ համար գերեզմա՞ն մը պիտի նկատես, չէ՛, այդ չըլլար։

Արամ կ'ըսեր այս խոսքերն ու զմայլած կը նայեր Սաթենիկի երեսն։

Մեղմիկ մելամաղձության մը ստվերը կը քողարկեր Սաթենիկի տխրանուշ աչերը։

— Սաթենիկ, գիտես թե մեկ երազ մը միայն ունիմ. զքեզ երջանիկ ընել։ Գաղափարներս քեզ ծանոթ են. քու վիճակդ զիս կը տանջե, չեմ կրնար ըմբռնել, թե ինչու թշվառ պիտի ըլլաս, պետք է որ միատեղ ըլլանք, պետք է զքեզ երջանիկ ընեմ։

— Արա՛մ, վերստին կը կրկնեմ, եթե չես ուզեր, որ մեր բարեկամությունը վերջ գտնե, այդպես մի՛ խոսիր։— Դուն ալ երիտասարդ ես, դուն ալ ապագա ունիս, ընտանիքի տեր ես, դուն ալ ղքեզ պետք է հոգաս։ Մի՞թե կը կարծես, որ քու դժբախտությամբդ կրնաս զիս երջանիկ ընել։ Գիտես թե ես չեմ կարող քու կինդ կոչվիլ, այդ անհնար է։ Դու պիտի շիկնիս մինչև իսկ, երբ քու ներկայությանդ իմ վրաս խոսին. միշտ գլուխդ կախ պիտի լինի։ Զգե՛, արդեն շատ պիտի չապրիմ։ Ի՞նչ հարկ քեզ նեղացնել և զիս ալ կրկին դժբախտ ընել։

Կ'արտասաներ Սաթենիկ այս խոսքերը հուզյալ, ցած ձայնով, շատ ցած ձայնով։ Արամ, որ սուր միտք ուներ և սկսած էր ճանչնալ աշխարհս, հասկցավ, թե ելակն, արդեն հասած, պատրաստ էր իյնալ։ Սաթենիկ կ'ուզեր տրամաբանությամբ խզել յուր սրտին ձայնը. կարելի՞ էր։ Արամ Սաթենիկի վերջին խոսքերեն զգաց, թե ինքն արդեն հմայած էր զնա. ինքն իրմեն դուրս ելած, վերստին ափերուն մեջ առավ Սաթենիկի ձեռքերն. այն գրգանուշ ձեռքերը պինդ սեղմեց յուր ափերուն մեջ։ Կը համբուրեր զմայլմամբ, հեշտությամբ կը համբուրեր։ Սաթենիկի երեսները կարմրցած էին։ Երակներուն մեջ հուր կ'ընթանար, լեզուն բռնված էր, ոչինչ կարող էր արտասանել։ Ելավ կայնեցավ, դիմակը դրավ.

— Երթա՛նք, երթա՛նք,— ըսավ։

Դուրս ելան. Սաթենիկ եղբայրը գտավ։

— Տրդատ, զիս տուն ձգե, ըսավ Սաթենիկ եղբորը։

— Ինչո՞ւ, ի՞նչ կա, անհանգի՞ստ ես։

— Անհանգիստ եմ. չեմ կարող կենալ։

Անհանգիստ էր. գլուխը կրակի մեջ էր, համբույրներն այրած էին զինքը։ Գնացին. Արամին աչքն անոնց ետևեն էր, և սակայն չուզեց ձգել երթալ։ Թե գիտնա՞ր Սաթենիկ։ Եվ ինչո՞ւ երթար։ Կ'զգար թե յուր հաղթանակը վերջապես ապահով էր, ո՞վ կը տրտմի հաղթանակի մը հույսով։ Պարեց, ցատկեց, խաղաց. հագուրդ կուտար քսաներկու տարեկան աշխուժին։

Արշալույսը նոր ծայր կուտար, երբ Նոր Թատրոնի ջահերն սկսան նվաղիլ։ Օթյակներն արդեն վաղուց պարապ էին։ Ամեն ոք դուրս ելավ։

Ձմռան ցուրտ աղվոր առավոտ մ'էր։ Արամ տաքցած, քրտնած, վիզը կրկնոցին օձիքներուն մեջ արագ-արագ կ'ընթանար. հասավ տուն, անկողին մտավ. գոհ էր, ուստի նիրհեց արդարոց քնով։

Գ

Հազիվ տասնմեկ տարեկան, Սաթենիկ կը թողուր դպրոցը, բայց ոչ շատ ուրախությամբ։ Հորմենհետե խելահաս եղած էր, իր օրվան կյանքը երկու մասերու կը բաժնվեր. մին գոհության, մյուսը՝ դժգոհության։ Զվարթ էր դպրոցին երբ ներս մտներ, ձանձրույթ կ'զգար տան մեջ։ Բնութենեն օժտյալ ընտիր ձիրքերով, Սաթենիկի համար դպրոցն այն գեղաժպիտ դաշտն էր, ուր արևը, օդը կը նպաստեին աճիլ և ուռճանալու։ Կը սիրեր գրագիտությունը, կը սիրեր գեղարվեստները, կը սիրեր ընկերները, կը սիրեր ուսուցիչները։

Բայց դպրոցեն երբ տուն կը վերադառնար, դժվարությամբ կը շնչեր, ինչպես դարնան աղվոր օրերը շատ անգամ թեթև մեգ մը կը պատե իրիկունները Վոսփորն և կ'արգելու շնչառությունն ու մենք մեզ կը հարցնենք. «Ի՞նչ, մի՞թե այս իրիկունս շարունակությունն է այս ավուր առավոտուն»։ Նույն տարբերությունը կը գտներ Սաթենիկ յուր առավոտյան և երեկոյան կյանքին միջև։ Գորովը բուն դրած էր այդ աղջկան սրտին մեջ, և սակայն պարտավոր էր շներել, որ յուր սրտեն խանդաղատանաց թռիչք մը ելանա։ Յուր հայր ու մայրը թեպետ երկար ատենե ի վեր ի Պոլիս, այլ սակայն գավառացի էին, և գիտենք թե գավառացիք մինչև մեկ սերունդ որքան սնդությամբ հավատարիմ կը մնան իրենց ընտանեկան ավանդության, սպասելով, որ իրենց որդիքն անխնա ամեն ինչ հեղաշրջեն։ Ընտանեկան կենաց մեջ Սաթենիկի ծնողք հավատարիմ ավանդապահներ էին արևելյան սովորության։ Չենք կարող ըսել թե չունեին սեր իրենց զավակաց համար, բայց մի՞թե խոհեմություն էր գուրգուրալ անոնց վրա գգվանոք, սիրակաթ համբույրներով։ Չէ՛, այդ տունը չէր պարտեզ մը, ուր տղայք ուրախ զվարթ թռչկոտեին, ճռվողեին, զբոսնեին, այդ տունը կորանոց մ'էր, ուր կը տիրեր խիստ կարգապահություն։ Դեմքերն անժպիտ էին։ Եվ սակայն Սաթենիկ անձկակարոտ էր ազատ օդո, սիրո և գգվանաց։

Եվ ի՞նչ խոսեին. այնքան մեծ էր անջրպետը Սաթենիկի ստացած կրթության և յուր ծնողաց մտավոր կազմակերպության։ Այդ ծնողք ոչինչ գիտեին. իրենց համար տառապանաց մեծագույնն էր այն դժընդակ հարկն, որում պարտավորյալ էին արտասանել հայերեն մի քանի բառեր։ Սաթենիկ կարող չէր նաև հրճվանք մը որոնել իրենց այցելու-

ներու ընկերակցության մեջ։ Սաթենիկի ծնողաց սալոնի գոհարները միևնույն տիպարներն էին։ Թե նոքա խոսեին պատրիարքի կամ իրենց գավառի առաջնորդի վերաբերյալ մի քանի խնդրոց մասին, արդեն սավառնած կը համարվեին մտքի ամենաբարձր բնագավառները։

Թեպետև Սաթենիկի ծնողքը բավական առատությամբ զավակներ ունեին, բայց նոքա չէին կարող համապատասխանել Սաթենիկի փափագանաց։ Երկու փոքրիկ եղբայրները գիշերօթիկ կրթարանն էին և արձակուրդի միջոցին կրնային գալ։ Քույր մը ևս կար, շատ պզտիկ, որ յուր խնամոց գլխավոր առարկան էր։ Արդարև մեծ եղբայր մը ուներ՝ Տրդատը, որ չափավոր կրթություն մը ստացած էր և բավական ալ սրամիտ, բայց չարշը կը բուրեր։

Սաթենիկ յուր սերը կեդրոնացուցած էր մյուս եղբորը վրա, իրմեն երկու տարով մեծ, բայց նա հեռու էր, շա՜տ հեռու. Փարիզ բժշկություն կ՚ուսաներ և հազիվ կրնար վերադառնալ չորս տարիներե վերջ։ Չո՜րս տարի, տասնվեց տարեկան աղջկան մը համար արդեն յուր կյանքի պատմության կեսն է։

Եվ սակայն Սաթենիկ շուտ կը մխիթարվեր. նա կ՚զգար թե յուր ճակատագիրը չէր երկար ատեն այդ մթնոլորտին մեջ ապրիլ, մոտ չէ՞ր արդյոք վիճակի փոփոխության օրը։ Իրիկունները, երբ կը վերջացներ դաշնակը, կը խորասուզվեր մրպասանության ընթերցման մեջ։ Շատ կը սիրեր—ինչպես պետք է սիրե նուրբ, ազնիվ զգացում տածող ամեն ոք,— Ֆեոեի վեպերը, կը կարդար ու կ՚երազեր, կը գոցեր ստեպ վեպը, ականջ կը դներ պահ մը Բերայի ժխորին, հետո կը դիտեր երկինքը, Գոլսո այն սիրուն երկինքը, ուր ձմեռ թե գարուն երփներանգ ամպիկները հավետ կը գեղածփին։ Կ՚երազեր ու կը վերանար, սրտի աչքերովը կ՚երևակայեր երիտասարդ մը, մտատիպար մը, կոթնած այդ երիտասարդի բազկին, կը մտներ կյանքի մեջ և կ՚ապրեր, կ՚ապրեր որպես կ՚ախորժեր։ Ա՜հ, ինչպես արդեն կը սիրեր ջերմիկ սիրով այն երիտասարդն, որո դեմքի գծերը կը գծեր իր երևակայության մեջ, և որո հոգվույն պատկերը կը դրոշմեր յուր սրտին մեջ։

Դ

Գիշեր մը, ընթրիքե վերջ, Սաթենիկ այսպես թափառոտ կը հածեր հոգվույն այս անուշ կրկներևույթներու մեջ, երբ մայրն ու մորաքույրը ներս մտան և սկսան խոսակցիլ։ Մայրը իմացուց աղջկանը, թե հայրը կ՚ուզեր զինքը ամուսնացնել, և թե մյուս օրն իրեն աղջիկտեսի պիտի գային։

Հաջորդ օրը, նոյեմբերի վերջերը, կիրակի մ'էր։ Կեսօրեն երկու ժամ հետո երկու կառք կանգ առին Սաթենիկի հոր՝ Հայրապետ էֆենտիի տան դրան առաջ։ Չորս անձինք դուրս ելան։ Տրդատ և Հայրապետ էֆենտի առաջնորդեցին նոցա ընդունելության մեծ սրահը։ Ավելորդ է խոսիլ տեսակցության մասին։ Երբ հասավ ներկայանալու վայրկյանը, կը դողդողային Սաթենիկի ձեռքերը, մինչ ըստ սովորության կուտար անուշին ջուրը։ Հաճոյից դողդղալ չէր, այլ զայրույթի դող։ Ինչպես հայտնի է, իբր պարկեշտ աղջիկ՝ ներելի չէր իրեն վեր առնուլ աչքերն և ակնարկ մը տալ նմա, որ յուր ամուսինը պիտի լիներ։ Այո՛, ամենքն ալ գիտեին թե Սաթենիկ գոհար մ'է, պատվական գոհար մը, բայց կ'աղաչեմ, ո՞ր ժամանակե ի վեր է, որ գոհարներն ու ադամանդները ձայն ունին իրենց գնողը որոշելու համար։

Սակայն կ'ըսեն, թե կինը յուր գլխուն ամեն կողմ աչքեր ունի. հետևաբար չենք զարմանար, եթե Սաթենիկ կարող եղավ որոնել այն դեմքն, որ կոչված էր մագնիսելու յուր սիրտը։ Հարգանաց, մեծարանաց գլխավոր առարկան էր նա, զոր Քերովբե էֆենտի կամ պարզապես «էֆենտի» կը կոչեին. մյուս երեք ընկերները բավական քաշված էին։ Եվ որչա՜փ նազելով կ'ուտեր էֆենտին անուշը։ Այո՛, այդ մեծահատոր կոճղն, այդ խոշոր դեմքով, ռամիկ դիմագծերով, լայն ռունգերով, մոտ քառասուն տարեկան անձն էր, որ պիտի պահպաներ Սաթենիկ յուր սրտին վրա։ Սաթենիկ զզվանք զգաց, նիստը երկարեցավ։ Տարակույս չկար, թե Քերովբե էֆենտին յուր համակրանաց արժանի գտած էր Սաթենիկը։ Եթե փոքրիկ կասկած ևս կար, այդ ալ փարատեցավ, երբ մեկնելու ժամանակ հայտարարեցին խորհրդավոր դեմքով մը, որ առաջիկա շաբթվան մեջ ընտանյոք ևս պիտի գային։ Այդ կը նշանակեր, որ արդեն Քերովբե էֆենտին տված էր յուր հավանությունը։

Ե

Ավանդություն է, որ երբ աշխարհ կուգանք, յուրաքանչյուրն ի մեջ պահապան հրեշտակ մը ունի յուր մոտ, որ կը հսկե յուր վրա։ Թերևս կարենամք ըսել, թե այդ պահապան հրեշտակները երբեմն մարդկային կերպարանք կ'զգենուն և շատ անգամ կը ներկայանան մեր տուները հորաքրոջ մը կամ մորաքրոջ մը դիմագծերուն ներքև։ Արդյոք հորաքույր մը, մորաքույր մը պահապան հրեշտակներ չե՞ն փոքր տղաքներուն համար, երբ սոքա վշտացյալ հորմե կամ մորմե, կ'երթան հանգչեցնել գլուխնին անոնց գոգին մեջ։ Թեպետև Սաթենիկ երեխա չէր համարվեր, սակայն սրտի հուզումը ստեպ մոռցնել կուտա տարիքի խտրու-

թյունը։ Երբ մեկնեցան աղջիկտեսի եկողները, Սաթենիկ գնաց ուղղակի մորաքրոջ սենյակը և առանց երկար բարակ նախաբաններու, պարզապես ըսավ.

— Մորաքույր, քեզ բան մը ըսեմ, ես այդ մարդը չեմ ուզեր. թող պարապ տեղը նորեն գալու նեղություն հանձն չառնեն։

Շիտակն ըսելու համար մորաքույրն հանկարծակիի չեկավ, աղջիկտեսի արարողության միջոցին լավ դիտած էր, որ Սաթենիկ տխուր էր. մորաքույրը չէր կարծեր, որ այդ տխրությունը լոկ պատկառոտ ամոթխածության մը նշանը լինի։ Հասկցած էր, թե Սաթենիկ չէր զգացած մեծ հրապույր մը Քերովբե էֆենտիի տեսութենեն. ինքն ալ արդեն համոզված էր, թե Քերովբե էֆենտի Սաթենիկի համար ամուսին մը չէր, բայց և այնպես մորաքույրը պարտք համարեցավ շոյել, համոզել Սաթենիկն ողոք խոսքերով. որպեսզի հնազանդի յուր հորը. վերջը շատ աղեկ կ՚ըլլար։

Ի՞նչ ըսենք, ի՞նչ դժբախտ կ՚լլար աշխարհս, եթե ամեն ոք՝ խմբագիր, քարոզիչ թե մորաքույր կամ հորաքույր, ո՛վ ալ լինի, առանց որևէ դիվանագիտության, իրենց համոզումը միշտ ամենայն պարզությամբ և անկեղծությամբ հանկարծաթափ հայտնեին։— Բարեբախտաբար մեր բնածին զգացմունքն իսկ կդիմադրեն մեզ՝ հպատակիլ այս տխուր հարկին։ Բայց ինչ որ ալ կ՚ըսեր Սաթենիկի մորաքույրը, Սաթենիկ «չեմ ուզերեն» զատ ուրիշ պատասխան չուներ։

Մորաքույրն, որ պետք եղած հորդորները կարդացած լինելուն պատճառավ յուր խղճի պարտականությունը կատարած կը համարեր, այլևս ազատորեն խոսեցավ։

— Աղե՛կ, աղջի՛կս, հոգդ մի՛ ըներ։ Այս իրիկուն հորդ խոսիմ, ուզածդ ըլլա, թող քեզի պես աննմանին էրիկ պակսի։

Երեկոյան, սեղանեն վերջ, երբ առանձին էին Հայրապետ էֆենտի և տիկինը, մորաքույրը խոսք բացավ։ Սաթենիկի մայրը բան մը չըսավ և շատ զարմանք ալ չհայտնեց։ Վերջապես ինքն ալ կին էր. բայց Հայրապետ էֆենտի այլայլեցավ, կրակ կտրեցավ, երբ յուր ականջներում բախեց Սաթենիկի «ոչ կարեմքը»։

— Ի՞նչ, սա հանըմի՞ն ալ խոսք կ՚իյնա եղեր,— ըսավ հայրը,— որ չէր կարող մտքին մեջ սղմեցնել, թե աղջիկ մը կրնա կամք ունենալ և այնքան աներևս լինիլ, որ ըսե, թե այս մարդը կ՚ուզեմ, այս մարդը չեմ ուզեր։

Մորաքույրը կը ջանար հանդարտեցնել զնա և անուշիկ-անուշիկ խոսքերով համոզել։

— Կնի՛կ, ի՞նչ կ՚ըսես,— կը պատասխաներ մոլեգին հայրը,— այս

աղջիկը խե՞նթ է ի՛նչ է։ Երկինքը փնտրած ատեններս՝ գետինը գտանք, ասանկ մարդ հազարին մեջ մե՛կ հատ չկա, մե՛կ հատ. աղա՛ մարդ է, աղա՜ մարդ։ Վարժապետի կնի՞կ ըլլալ կ՚ուզե, ի՛նչ ըլլալ կ՚ուզե։ — Չէ՛, էֆենտիմ, չէ՛, իրեն հարցնող չկա, թե ո՛վ կ՚ուզես, ո՛վ չես ուզեր։ Մենք իրեն չափ խելք ունինք, մենք գիտենք թե որո՛ւ պիտի տանք, որո՛ւ չպիտի տանք. թող ետքը երթա մեղքի աղոթք ընե։

Որքա՜ն դժբախտություններե զերծ պիտի մնար աշխարհ, եթե մի քիչ սակավաթիվ լինեին մեր «բռնի բարերարները»։ Կը սխալի՞նք արդյոք, եթե ըսենք, թե մարդկությունը պարտական է յուր աղետից մեծագույն մասն անոնց, որք կ՚ուզեն, հակառակ մեր կամաց, մեր բարերարներն հանդիսանալ։ Այսպես էր Սաթենիկի հայրն ալ։

Հարկ չկա պատմել մանրամասնորեն, ինչ որ պատահեցավ Հայրապետ էֆենտիի տան մեջ այդ օրը և անոր հաջորդ օրը։ Սաթենիկի ո՛չ մայրը, ո՜չ մորաքույրը կարող եղան համոզել զինքը։ Աղջիկն այլևս չէր տեսներ հորը երեսը։ Հայրապետ էֆենտի վերջապես պարտավորվեցավ հաղորդել յուր փեսացուին, թե աղջիկն հանկարծ հիվանդացած լինելով կը խնդրեր հաջորդ շաբթվան թողուլ իրենց երկրորդ այցելությունը։ Սաթենիկի հայրն ապահով էր, թե քանի մը օրվան մեջ աղջկան խելքը գլուխը կը բերե։

Ոևէ վտանգ չկար, որ Քերովբե էֆենտի կարենար մտքեն իսկ անցնել, թե այդ հիվանդությունը պատրվակ մը լինի։ Այդ գերախանչ արարածը համոզված էր, լրջաբար և խղճի մտոք համոզված, թե Պոլսո բոլոր աղջիկները, առանց բացառության, յուր տրամադրության ներքև էին։ Ըսենք նաև, թե «երեկվի վաճառականներու» մեջ Քերովբե էֆենտի միայն ինքը չէ, որ այնպես հաստատ համոզում ունի։ Բայց այս խնդիրը մեր աղջիկներուն վերաբերյալ խնդիր մ՚է, հետևաբար մեզ անկ չէ դատավոր կանգնիլ, մենք այս չափը գիտենք, թե Սաթենիկ բոլորովին համակարծիք չէր Քերովբե էֆենտիին հավակնությանց և թե յուր «հիվանդությունը» հաջորդ շաբաթն ալ տևեց. և ո՞վ գիտե երբ պիտի առողջանար, եթե անակնկալ պատահարներ այլ կերպ չտնօրինեին։

Զ

Վերոհիշյալ դեպքերեն երկու երեք օր հետո, երկուշաբթի առավոտ մը, 1880 թվականի դեկտեմբեր 8-ի երկուշաբթի առավոտը, Ղալաթիո և Ստամպոլի կողմը կը փսփսային չարաշուք լուր մը։ Հայրապետ էֆենտի ըստ սովորության, երբ եկավ յուր վաճառատունը, մի քիչ վերջ երկու վաճառականք իրեն եկան գույներնին նետած։

— Ինչ ըլլա, ի՞նչ կա, ի՞նչ ունիք,— հարցուց Հայրապետ էֆենտի,— հետ բարի լույս ասածու բարինեն։

— Հանսոնի վրա բան մը իմացա՞ր,— հարցուցին եկողները։

Դանակի մը պողպատե սուր բերնին պես հատու էր այդ հարցումը։ Հայրապետ էֆենտին ալ գույնը նետեց։

Մեր ընթերցողներեն անոնք, որ տեղյակ չեն Պոլսո դրամական և առևտրական հրապարակաց սովորությանց, իրավունք ունին բացատրություն մը պահանջել մեզմե, թե ինչո՞ւ պարզ հարցումե մը այնքան այլայլեցավ Հայրապետ էֆենտի։ Կը պատասխանենք, թե Պոլսո դրամական և առևտրական հրապարակաց համար սնանկությանց հատկացյալ եթե ոչ բոլորովին պաշտոնական, գեթ կես պաշտոնական օրն երկուշաբթի առավոտն է, իսկ մեծ սնանկություն մը ծանուցանելու համար նվիրագործյալ բանաձևն է. «բան մը լսեցի՞ր այսինչ տան վրա»։ Բայց մի քանի ժամ վերջ, երբ լուրն այլևս կ՚աժաննա, այն ատեն կ՚սկսին ազատորեն ըսել. «այսինչ տունը սնանկացավ»։ Ուրեմն մեր այս բացատրություններեն կարելի է հետևցնել, թե 1880 դեկտեմբերի 8-ի երկուշաբթի առավոտը Հանսոնի տունը սնանկացած էր։ Իսկ երկու վաճառականներու և Հայրապետ էֆենտիի այլայլութենեն կրնաք գուշակել, թե այս սնանկության մեջ վնասուց կարևոր բաժին մը իրենց կը պատկաներ։

Հայրապետ էֆենտի, երբ պատասխանեց յուր այցելուներուն, թե «բան մը չէ լսած» արդեն հուսակորույս էր։

— Գրասենյակը այսօր գոց էր ըսին։

Այո, այդ ավուր առավոտուն նոքա, որ կ՚անցնեին Ղալաթիո Պանք փողոցեն, կը տեսնեին, թե անգլիացի համբավավոր դրամական շենքին մեկ դուռը փակ էր և մյուսը կիսաբաց։ Հայ բեռնակիր մը կայնած էր դրան առաջ. թույլ չէր տար, որ հանդիպողը ներս մտնե։ Իրեն ուղղված հարցումներուն բեռնակիրը մեկ պատասխան ուներ.

— Այսօր տոն է։

Ստույգ է, որ հաջորդ օրը Հղության տոնն էր հայոց, բայց ուղիղն ըսելով ո՛չ ոք կրնար մտածել, թե անգլիացի բողոքական դրամատերները հայոց տոնին նախատոնակը կատարեն։ Խե՜ղճ հայ բեռնակիր, որ հավանորեն առաջին անգամ ըլլալով կյանքին մեջ, սուտ պիտի խոսեր, անկե ավելին չէր կրնար ստեղծել. ուստի մեղադրելի չէր։

Հայրապետ էֆենտի և յուր երկու ընկերակիցքն անմիջապես Ղալաթիա անցան, գնացին հույն վաճառականի մը մոտ. ցավալի լուրն իրականություն էր և տխուր եղ դարձան։ Զգենք մյուսներն և միայն Հայրապետ էֆենտիին համար ըսենք, թե այդ սնանկության մեջ մեծ կո-

բուստ ուներ. հարկ չկա գործողությանց մանրամասնություններուն մեջ մտնել, վասնզի մենք ալ չենք գիտեր. սա չափը մեզ հայտնի է, որ Հանսոնի սնանկությունը մեծ հարված մ'էր Հայրապետ էֆենտիի։

Հայրապետ էֆենտին գավառացի այն հայերեն էր, որք դեռ գրեթե տղա Պոլիս կուգան, առանց մեկ ստակի։ Կը մտնեն իբր սպասավոր վաճառականի մը մոտ և օր մը կը տեսնեն, թե մարդ եղած են, կամ թե ճիշտ ըսելով, առևտուրի մարդ եղած։ Անտարակույս գիտեք, թե փոքր ինչ տարբերություն կա այս երկու բացատրության միջև։ Հայրապետ տոկուն բնավորություն ուներ. աշխատութենե չէր խորշեր. գործ սորվեցավ և դիրք մը ստեղծեց։ Տասը տարիներե ի վեր էր այլևս «երևելի» վաճառականաց դասն անցած էր և «ծո Հայրապետը» եղած էր «Հայրապետ էֆենտի»։ Հայ և հույն վաճառականք իրենց գլուխ ունենալով Քերովբե էֆենտին, շատ կը հարգեին զնա, կը կարծեին, թե բավական հարստության տեր է, սակայն այնպես չէր, վիճակը լավ էր, բայց մեծ հարստություն չուներ. միայն թե վարկը գործածելու եղանակը լավ գիտեր։ Հանսոնի սնանկությունն ամեն ինչ կը խանգարեր։ Հայրապետ էֆենտի ձեռքը շատ ապրանք ուներ, բայց պատրաստ դրամ չկար, փոխանակագրեր ուներ վճարելու քիչ ատենեն և այժմեն շվարած էր։

Նույն իրիկունը տուն վերադարձավ շատ դաժան և հուսահատ։ Սակայն հուսահատությունը լավ խորհրդական մ'է միայն անոնց համար, որք անձնասպանության տրամադրություն ունին։ Հայրապետ էֆենտին շատ հեռի էր «փափուկ» զգացումներ տածելե, հետևաբար հարկ էր մտածել, որ ելից հնարք մը դտնե և կը հուսար, թե շուտով կը գտնե այդ հնարքը։ Յուր հույսը Քերովբե էֆենտին էր։ Նա միայն կարող էր գործին գլուխը անցնիլ, ժողովել ուրիշ վաճառականներ, աշխատիլ, որ Հայրապետ էֆենտիին օգնություն լինի։

Բայց գեղեցի՜կ մտածություն, երթալ ըսել անձի մը. «Ծանր վիճակի մեջ եմ, փրկե զիս, թեպետև մենք զքեզ կ'արհամարհենք ու պիտի արհամարհենք ալ, ինչպես պիտի տեսնես փորձով»։ Հայրապետ էֆենտի չէր կարծեր, թե Քերովբե էֆենտին ընդունակ լինի այդքան առաքինության և չէր ալ մեղադրեր։ Արդարև Հայրապետին վիճակը բավական ծանր էր։ Աղաչե՞լ, պաղատե՞լ աղջկանը, այդ անկարելի էր։

Իհարկե Հայրապետ էֆենտի տան մեջ կը խոսեր այս խնդրոց վրա Տրդատի հետ։ Իբր գործնական մարդ, նա որոշած էր «դուռը պղտիկցնել», այսինքն ծախքերը թեթևցնել։ Տունը իրենց էր, այդ մասին հոգ չկար, ծառաները պետք էր պակսեցնել, դաշնակի ուսուցիչը ճամփել։ Երկու տղոց համար մինչև սեպտեմբեր վարժարանի ծախքերը կանխիկ վճարված էր. այդ մասին ալ հոգ մը չունեին։ Մյուս զավակը, որ Փարիզ էր,

զայն ալ բերել տալու էր։ Հոգ չէ, ինչ որ սորվեցավ՝ կը բավէր. թող գար հորն օգնական լիներ, վաճառատան գրագիրը կը ճամփեին, նա անոր կը հաջորդեր, խնայողությունը կրկին կը լիներ. վերջապես Հայրապետ էֆենտի յուր ծախսերը կես առ կես կ՚իջեցներ։

Այս խոսակցությունը տեղի կ՚ունենար դեկտեմբերի 10-ին, Հանսոնի սնանկութենեն երկու օր վերջ։ Սաթենիկ արդեն գիտեր մեծ պատահարը, և մասամբ մը գոհ էր, որ ամուսնության վրա ատեն մը խոսք չէր բացվեր։ Այդ գիշեր մորաքույրն ըստ սովորության Սաթենիկի սենյակն եկավ և սկսավ տեղեկացնել ամեն ինչ։

— Ա՜խ, աղջիկ, եկուր սա բանը մի՛ ըներ. մեղք է հայրիկդ, Քեռվբե էֆենտին կրնա ամեն բան կարգի բերել։ Բայց անոր ի՞նչ ըսենք։ Թե աղջիկ չիտանք և թե ըսենք, որ մեղի աղեկությո՞ւն ըրեւ Չէ, այդ չըլլար։

Այս խոսքերեն վերջ ավելցուց.

— Իրավ, Նայե, ամենեն պետքինը մոռցա. շատ պիտի ուրախանաս։ Գիտե՞ս, հայրդ այս ուրբաթ պիտի գրե եղբորդ, որ ինչ սորվեցավ՝ ձեռք կուտա, ելլե գա, ի՞նչ ընե մարդը, գրագիրը պիտի ճամփե, տեղը ան պիտի դնե։

Չէ՛, Սաթենիկ չուրախացավ։ Սիրտը կտոր-կտոր եղավ, երբ իմացավ թե եղբայրը ետ պիտի բերվի, այն զոր այնքան կը սիրեր. այն երիտասարդը, զոր մեծ ապագա մը կը խոստանար. պիտի գար ջախջախյալ և հուսաբեկ, պիտի նետվեր խանի մը անկյունը հաշվետետրներու վրա մգլելու։ Թե իրենք փայլուն վիճակ մը պիտի չունենային, այդ բնավ Սաթենիկի փույթը չէր։ Մի՞թե միշտ փարթամ եղած էին։ Ծվ հետո դպրոցեն նոր ելած էր, տակավին անմեղ էր և կը հավատար, որ երջանկության անհրաժեշտ պայմանը հարստությունը չէ։— Ծվ սակայն սկսավ խորհիլ եղբորը վիճակին վրա։

Կնոջ մը սրտին մեջ միշտ մեծ տեղ մը կը գրավե եղբոր սերն։ Այդ սերն բուռն զգացում մը չէ, հանդարտ, անուշ, ջերմիկ զգացում մ՚է. հեռավորությունը, բացակայությունը, կարոտը շատ անձկալի ըրած էին Սաթենիկի համար յուր եղբայրը։ Երբ մեկնեցավ մորաքույրը, Սաթենիկ ինկավ թիկնաթոռի մը մեջ, տխուր-տխուր կը մտածեր։ Մտոքը կը թռչեր Փարիզ, կը տեսներ եղբորը՝ ծռած կմախքներու և դիակներու վրա։ Կ՚աշխատեր լի հույսերով և եռանդյամբ և ահա հանկարծ խեղճ տղան մնաք բարով կ՚ըսեր ամեն հույսի, ամեն ապագայի։ Քրոջ սիրտը լեցված էր։ Ամեն քսան տարիք մարտիրոսության իղձ ունի։ Սաթենիկ, որ այնքան փափուկ զգացումներ ուներ, որոշեց զոհել ինքզինքն, զոհել յուր

եղբորը։ Մտավ անկողին և նրակեց միշտ եղբորը վրա։ Առավոտուն կանուխ ելավ, գնաց մորաքրոջն իմացուց, թե պատրաստ է ամուսնանալու Քերովբե էֆենտիին հետ։ Դյուրին է երևակայել բարի կնոջ խնդությունը, հետո անմիջապես ավետեց մորը և Հայրապետ էֆենտիին. էֆենտին արտաքուստ ոչինչ ցույց տվավ, բայց իհարկե սրտեն գոհ էր։ Յուր գործոց հաջող կարգադրության ամենամեծ արգելքը վերցված էր։

— Աղե՛կ, աղե՛կ,— կ'ըսեր ինքնին,— և տունեն ելավ գնաց գործին։

Ժամփան ինքնին կ'ըսեր.

— Արդեն գիտեի ասանկ պիտի ըլլա։ Երբ աղջիկը կը տեսնե, թե հորը գործը աղեկ չէ, հոտ կ'առնե, թե տունը մնալու վախ կա, ուզածպարոնը պիտի չառնե. տե՛ս, նայե՛ այն ատեն աչքին ինչպես աղվոր կ'երևա հորը ցույց տված մարդը։— Է՛հ, աշխարհս ասանկ է։

Խե՜ղճ Սաթենիկ։

Հարսանյաց հանդեսը կատարվեցավ 1881-ի ս. Սարգսին, փառավոր հարսնիք, որ մի քանի օրեր Բերայի, Դատըգյուղի և Օրթագյուղի ընդհանուր խոսակցության առարկան էր։ Հարսանյաց օրեր ո՜րքան մայրեր նախանձալից էին Սաթենիկի բախտին։ Եվ, սակայն, գացեք վեր առեք անգամ մը ոսկի թելերը, որը կ'սքողեն հարսին երեսը, չե՞ք տեսներ այն արցունքները, որ կը կաթկթին անոր աչքերեն։ Այդ ոսկին դիմակ մ'է սրտի վշտերն ամրածածուկ պահելու, բայց ոչ մեկ դիմակ, որքան ալ անճանաչ ընե դեմքը, կարող է զնա փոխել։

Չենք ուզեր Սաթենիկի հետ մտնել յուր նոր տան մեջ և քայլ առ քայլ հետևիլ յուր ընտանեկան կենաց եղերերգությանց։ Համբերեց խեղճը երկու տարիներ, բայց սակայն եկավ վայրկյան մը, ուր համբերությունն ալ սահման մը ունեցավ. եկավ ժամանակ մը, որ այլևս անհնարին էր իրեն կենակցիլ ամուսնուն հետ։ Օր մը, 1883 հունվարին, եկավ ծնողաց տունը և չվերադարձավ այլևս։

Է

Անցան շաբաթներ և Սաթենիկ օր ըստ օրե կ'ըմբռներ յուր վիճակին ծանրությունը։ Որքան սուր աչքերով ալ նայեր հեռուն, շատ հեռուն, միշտ միևնույն հորիզոնը կը տեսներ պարզված յուր աչքերուն առաջ՝ ձանձրույթ։— Այո՛, հայրը լավ վիճակի մեջ էր. խնայողության ոչ իսկ փորձ մը եղած էր։ Տակավին երկու տարիներ և ահա եղբայրն

ավարտելով ուսման ընթացքը կը վերադառնար Պոլիս։ Գեղածիծաղ ապագա մը կ'սպասեր նմա։ Եվ սակայն ո՛չ ոք յուր շուրջը կ'ուզեր հայտնի ընել, թե այդ ամենն իրեն պարտական են։ Ոչ մեկ դեմքի վրա երախտագիտական թեթև նշույլ մը կ'երևեր իրեն համար։ Երախտապա՞րտ լինիլ իրեն, ծիծաղելի մտածություն։ Ո՛չ, այդ անձնվեր զոհը իբր մեղապարտ, առանձնացյալ կյանքով պետք էր ապրեր, ի՞նչպես չար օրինակ հանդիսանալ այլոց։ Հուսալ, թե սերը նոր կյանք մը տա իրեն, բայց ոչ ապաքեն օրենքներն անողոքելի են, ընկերական սովորույթք՝ աններող։ Ո՛չ, նոր կյանքի հրապույրն իրեն համար չէր, ապա թե ոչ դատապարտյալ մ'էր ընկերութենե, դատապարտյալ եկեղեցիե։

Եվ սակայն հազիվ քսանևինը տարեկան էր։

Տխրությունը, հոգեկան դառնությանց այդ միակ սփոփանքն յուր աչքերուն մեջն էր։ Շատ անգամ իրիկնամուտին կ'երթար յուր եղբոր Տրդատի հետ Բերայի ընդարձակ դաշտը քիչ մը մաքուր օդ շնչելու։ Որչա՜փ կը սիրեր այդ ընդարձակ դաշտը, երբ արևն ալ քրքմագույն կը ներկեր դեմքերն ու բնությունը։ Սաթենիկ կը խորասուզվեր մտահոգության մեջ, կը խորհեր, կը տխրեր ու կը վերանար։

Ը

1883-ի աշնան վերջերը Հայրապետ էֆենտիի դրացի եկավ վերին Վոսփորե ընտանիք մը։ Էրիկմարդ մը, կին մը, աղջիկ մը և երիտասարդ մը կը կազմեին այդ ընտանիքը։ Երիտասարդին հետ ծանոթացանք Ազգանվեր Հայուհյաց պարահանդեսին գիշերը. դա ինքն Արամն էր։ Յուր հայրը մեռած էր մի քանի ամիսներ առաջ, ինքը մնացած էր մորը և քրոջը հետ մինակ։ Հորեղբայրնին արդեն իրենց հետ էր. չորսը միասին հարկ տեսան Բերա հաստատվիլ։ Առևտուրի մեջ Արամի հորեղբայրը ծանոթ էր Հայրապետ էֆենտիի. ընտանեկան հարաբերությունները շուտով սկսան։ Շատ գիշերներ միասին կ'անցնեին, մանավանդ երբ Հայրապետ էֆենտի և Արամի հորեղբայրը տունը չէին մնար։ Արամը քիչ դուրս կ'ելներ։ Քսաներկու տարեկան երիտասարդ մ'էր, որ կ'ուսաներ օրենսգիտություն՝ դիվանագիտական ասպարեզին մեջ մըտնելու համար։ Հորմեն բավական ժառանգություն կար, որով իրենք դրամական նեղության մեջ չէին։ Արամ կորովի, սիրուն երիտասարդ մ'էր, խարտյաշ մազերով, լավ կրթություն առած էր. շուտ ընտանեցավ Սաթենիկի հետ։

Մարդկային բնությունը կը սիրե հակադրությունը. խարտյաշը սևին կը հարի, ջղուտը կ՚ախորժի գիրուկին ու փափուկին, և սակայն բարոյական կյանքին մեջ չենք կարծեր, որ բարիները չար գգվանք զգան չարերու համար, և ոչ ալ կիրթ ճաշակներն փափագին բիրտ անձնավորությանց ընկերակցությունը։ Այդ անկարելի է։ Կրնանք ըսել, թե Սաթենիկ և Արամ իրար քաշելու հատկություններն ունեին, մին խարտյաշ էր, մյուսը սև. մին գորովի, մյուսը փափուկ. իսկ երկուքը միասին իրենց միության կեսը կը գտնեին իրենց ստացած խնամյալ կրթության մեջ. այդ կրթությունը իրենց հոգեկան կապն էր։

Երբ կը միանային երկու ընտանիքները, մանավանդ ի բացակայության Հայրապետ էֆենտիի և Արամի հորեղբորն, Սաթենիկ ու Արամ գրեթե միշտ իրարու մոտ էին և կը խոսակցեին երկար ժամեր։ Կը խոսակցեին գեղարվեստի վրա, մատենագրության վրա, քաղաքական խնդրոց վրա, օրվան լուրերու վրա։ Հորմեհետե Սաթենիկ ունեցած էր յուր ամուսնական դժբախտությունը, շատ կը պարապեր փիլիսոփայական և գիտական գրոց ընթերցմամբ։ Մտքի հոգնության մեջ կ՚ուզեր մոռնալ սրտի վշտերն, ինչպես հիվանդները մարմնո ցավերու մոռացումը կը հայցեն քնե։ Արամ պարտավորվեցավ ինքն ալ կարդալ այդ գրքերեն։ Չէր ուզեր հետամնաց լինիլ, մանավանդ թե պետք էր գտնել Սաթենիկի հետ վիճաբանելու նորանոր առարկաներ։

Արամ շատ կ՚ախորժեր վիճաբանել Սաթենիկի հետ. նույնիսկ երբ համակարծիք էր նմա, յուր համոզման հակառակ կը խոսեր, որպեսզի վիճաբանելու առիթներ գտնե ստեպ։ Կնոջ մը հետ վիճաբանելու մեջ կարելի է սքանչելապես վայելել անոր ամեն հրապուրանաց ամփոփումը։ Կը բարկանա կինը, կը ծիծաղի, սրամիտ կը լինի, լուրջ և թեթև. մեկ ժամու մեջ ամեն գույն կ՚զգենու և կնոջ մը ամեն մեկ գույնը սիրտ կը բանա։ Եվ երբ կինը ունի սիրուն փոքրիկ բերան մը, գեղազարդյալ մանրիկ ու սպիտակ ակռաներով, պետք է խոստովանիլ, որ փորձությունը անդիմադրելի է։ Արամ միշտ այս փորձության ենթակա էր Սաթենիկի հետ տեսակցելու միջոցին և որովհետև խելացի երիտասարդ էր, հետևաբար ամենայն ճարտարությամբ օգուտ կը քաղեր առիթեն։

Այն օրեն ի վեր, երբ Արամ և Սաթենիկ բարեկամացած էին, այս վերջինս ավելի զվարթ էր, երբեմն ուներ սրտի այնպիսի գոհություններ, զորս ինքն ալ չէր կարող բացատրել։ Շատ անգամ անհոգ էր. թեթև թեթև կը դաշնակեր, կ՚երգեր, կը կարդար. փոքրիկ դեպք մը իրեն բացատրեց յուր այս զվարթության գաղտնիքը։

Ձմեռը, հետևելով իրենց ծնողաց, Արամ և Սաթենիկ իրենք ալ ուզեցին թուղթ խաղալ։ Իհարկե պեզիկ պիտի խաղային։ Օր մը Արամ ըսավ.

— Տիկին, այս անգամ բանի մը խաղանք։

— Լա՛վ,— ըսավ Սաթենիկ,— և յուր մասին պայման դրավ սովորական բան մը։

— Ես ալ,— ըսավ Արամ ցած ձայնով և ֆրանսերեն,— եթե հաղթեմ, սիրտդ կ'ուզեմ։

Սաթենիկ կարմրեցավ, ձայն չը հանեց, սիրտ սկսավ ուժով ուժով բաբախել։— Կը խաղար, բայց առանց գիտնալու, թե ինչ կը խաղար, լռությամբ խաղացին, Սաթենիկ հաղթվեցավ։

— Ուրեմն,— ըսավ Արամ,— և ուրիշ բան չավելցուց։

Ելան խառնվեցան իրենց ծնողաց հետ. այն գիշերն ուրիշ բանի վրա չխոսեցան։

Կ'ըսեն թե ոճրագործության համար առաջին քայլն է, որ միշտ դըժվարություն կը հարուցե, հետո ամեն ինչ կը դյուրանա։ Սիրո մեջ ալ գրեթե միշտ այսպես է։ Բաղդատությունը թող անտեղի չթվի, վասնզի փորձառությունը ցույց կուտա, թե շատ անգամ սերն ալ կրնա ապագա ոճիրի մը հառաջաբանը համարվիլ։ Բավական ատենե ի վեր կը ջանար Արամ հայտնել Սաթենիկի, որ իր սիրտը հափշտակված էր, բայց ամեն օր հաջորդ ավուր կը թողուր։ Երբ այդ գիշերը ըրավ յուր հայտարարությունն առ Սաթենիկ, այնուհետև քակվեցան լեզվին կապերը և հանդուգըն եղավ։

Սաթենիկ խելացի, խոհեմ կին մ'էր և գիտեր, թե յուր վիճակին մեջ որքան վտանգալից էր իրեն համար այդպիսի սեր մը. կը ջանար հետևաբար, որ Արամ յուր վրա ոևէ հույս չը դներ և սակայն որքանախորժալուր կը հնչեր յուր ականջներուն Արամի ձայնը. կյանքին մեջ առաջին անգամն էր, որ կ'զմայլեր սիրո անուշ երաժշտությամբ։— «Ա՜խ, եթե ամուսնացած չըլլիներ» կ'ըսեր. կը հիշեր յուր աղջիկնության երազները։ Հազիվ երեք տարիներ կը բաժնեին զինքը այդ օրերեն և սակայն հի՜ն, շատ հին էին։ Այնքան շատ աներևույթ եղած ոսկեզօծիկ անրջոց հիշատակները կ'ընկղմեին զինքն յուր հին տխրության մեջ։ Արամի խոսքերը նորեն կը բանային յուր սրտի խոցերն, և սակայն շատ անգամ զմայլած ունկն կը դներ այդ խոսքերուն։ Տխրանվագ երաժշտություն մը կը հուզե մեր սրտերն ու կը տխրեցնե, մանավանդ երբ հին ցավոց հիշատակները կը զարթուցանեն ի մեզ, բայց և այնպես չենք ուզեր, որ դադարի այդ երաժշտությունը, լի դառն հրապույրներով։ Այսպես ալ Սաթենիկ կը սիրեր Արամի սիրո երաժշտությունը։

Կը ծփար, կը ծփծփար այս հոգեկան վրդովման մեջ, երբ Արամ կարող եղավ փոքր ինչ դժվարությամբ համոզել զինքն, որ ներկա գըտ-

նըվի հունվարի 26-ի գիշերն Ազգանվեր Հայուհյաց պարահանդեսին։ Որբեք վայրկյան մը առանձին չէին կրցած լինել և սերն առանձնության ջերմանոցի կարոտ է։ Այդ գիշերվան համբույրները տակնուվրա ըրած էին խեղճ Սաթենիկը, չէր կրնար բացատրել, թե ինչ կրակ կար այդ համբույրներուն մեջ, որ զինքը կ'այրեր։ Բայց եթե չէր կրնար բացատրել, կ'զգար սակայն։

Թ

Ամեն անոնք, որ երիտասարդական կյանքի քիչ թե շատ փորձառություն ունին, կրնան դյուրավ ենթադրել, թե այդ պարահանդեսի գիշերեն վերջ Սաթենիկ հոգվով սրտով Արամին էր։ Արամ ապահով էր յուր հաղթանակին. այլ ի՞նչ օգուտ. լոկ խոսակցություն. բայց իրեն նման երիտասարդի մը համար բավական չէր այդ, և հետո երիտասարդ Վերթեր մը իրեն մտատիպարը չէր ընտրած։ Իբր ճարտար ռազմագետ, կ'ուզեր օգուտ քաղել յուր հաղթանակեն։

Օր մը պարզապես առաջարկեց Սաթենիկի միասին երթալ։ Ո՞ւր։ Արամ գեղեցիկ հովվերգություն մը երգեց։ Կ'առաջարկեր երթալ առանձնանալ սիրուն գյուղ մը, հեռի ամեն աչքերե. դալարապատ փոքր շալե մը վարձել։ Հոն կը մոռնային աշխարհն ու յուր աղմուկները։ Կյանքն իրենց համար էր։ Արամի հորենական ժառանգությունը կը բավեր, որ երկուքն հանգիստ ու երջանիկ ապրին։ Հակառակ այդ շլացուցիչ դաշտանկարին, Սաթենիկ անդրդվելի կը մնար յուր որոշման մեջ։

Սակայն գարունը հասավ, եկավ ապրիլ ամիսը։ Ջերմիկ օդը, ծաղկանց բուրումը, փափուկ գույնով դալարիք, թռչնոց դայլայլիկ, ամեն ինչ կյանք կը բուրեին, մարդ իր բոլոր զգայարանքներով կյանք կը շնչե կարծես, կ'ուզե պահ մը մոռնալ դառն իրականությունը. ապրիլ կ'ուզե և սիրել։

Այդ օրը Սաթենիկ կ'զգար, թե ավելի ազատորեն կը շնչեր, գրեթե ամեն գիշեր եղբորը հետ կ'երթար Բթի Շանի պարտեզն. հոն ծառերու անուշահոտությանց զմայլմամբ կը խորհեր. կը մտածեր յուր վիճակին վրա և կ'ըսեր, թե ինչո՞ւ պետք է, որ ինքը զոհ մը ըլլա։ Ինչո՞ւ ընկերական օրենքները զինքը շղթայակապիրկ կ'ընեն, ի՞նչ էր յուր մեղքը. մի՞թե աստված իրեն կյանք է տված, որ ուրիշներու հաճոյից, շահուց և հաշվոց զոհը լինի։— Քանի կը խորհեր, այնքան զայրույթ կ'զգար։ Վերջապես ի՞նչ փույթ ինձ ընկերությունը։ Ի՞նչ կ'ընեն ինձ համար։ Ի՞նչ ունեմ կորսնցնելիք։

Եվ մտքին առջև կը բերեր Արամ։— Որչա՜փ վսեմ է նա,— կ՚ըսեր,— միակ անձն է, որու համար կ՚արժե զոհվիլ, վասնզի նա ալ կը զոհե ամեն ինչ՝ ընտանիք, ապագա, անձնական հանգստություն։— Ամեն ինչ նորա տեղ ներքև կը դնե։ Ինչպե՜ս չսիրել զնա սրտին խորեն։

Սաթենիկ կյանքի մեծ ճգնաժամի մեջ էր։

ԺԸ

Անցյալ տարի հունիսի սկիզբները Թիֆլիսեն վերադարձա Պոլիս։

Հաջորդ օրը Ջերազ ինձ այցելության եկավ «Արևելքի» խմբագրատունը։ Իհարկե խոսելու բավական նյութեր ունեինք. կարելի չէր խմբագրատան մեջ տեսակցիլ. հարկ էր մեկուսանալ. գնացինք միասին Ֆոկլի մոտ, ուր գարեջուր խմելով կը խոսակցեինք։ Պատմեցի մանրամասնորեն Ներսես սրբազանի ընտրության վերաբերյալ զանազան պարագաները։ Բացատրեցի այն «գերընտիր» պատճառներ, որով Մելքիսեդեկ սրբազան կրցած էր լինել երկրորդ ընտրելի։ Վերջապես ինչ որ կարելի չէր ըսել անսուրբներուն, ամենը խոսեցա։

Երբ լմնցուցի, ըսի.

— Վերջապես, եղբայր, այս խնդիրներով հագեցած եմ. քիչ մ՚ալ ինձ Պոլսեն լուր տուր։

— Նոր բան մը չկա։ Թիֆլիս «Արևելք» չէ՞ր ստանար։

— Այո, կ՚ստանայի, բայց գիտես թե ի՛նչ որ ընդհանրության համար է, միշտ մասնավորներու համար ամենեն ավելի հետաքրքրականը չէ։— Եթե ունիս ինձ քիչ մը գայթակղական դեպքեր պատմե, շնորհակալ կ՚ըլլամ։

— Միշտ կը չափազանցես,— ըսավ,— «գայթակղական» ըսելով միտքդ «Ֆիգարոյի», «Էվենըմանի» ոճով լուրերու համար է. բայց մենք ոչ դուքսեր, ոչ դքսուհիներ և ոչ ալ խոշոր դրամատերներ ունինք, որոնց կյանքի քրոնիկը մեզ զբոսցնե։ Միտքս եկավ. այդ եղանակով փոքրիկ բան մ՚ալ Բերա պատահեցավ։ Լսեցի՞ք Արամին դեպքը։

— Ի՞նչ դեպք։ Ձէ՛, Եղբայր բան մը չեմ գիտեր, դեռ երեկ գիշեր հասա։ Մեր ...յա՞ն Արամը։

— Այո, նույն ինքն, անցյալ ամիս օրվան դյուցազնը նա էր. գեղեցիկ առևանգություն մը ըրավ։

— Առևանգությո՞ւն. գործը կը ծանրանա։ Հեղինե՞ն։

— Կը ճանչնա՞ս Հայրապետ և Քերովբե էֆենտիները։

— Անտարակույս։

— Առաջնույն աղջիկը և երկրորդին կինը, կամ լավ ես՝ նախկին կինը, տիկին Սաթենիկը։

— Պատմություննին լսած եմ, բայց անձամբ չեմ ճանչնար... ի՞նչպես կին է։

— Մարգարիտ մը,— ըսավ Ջերազ ուժով մը ձեռքիս վրա խփելով։

Գարեջրի գավաթները վերստին լեցուցինք։

— Կ'աղաչեմ քիչ մը տեղեկություն տուր ինձ, ըզբոսնել կ'ուզեմ, որովհետև, ըսի քեզ, գլուխս լեցված է կաթողիկոսական խնդրով. նյութական մարդ մը դարձեր եմ. քիչ մը ցնցվիմ։

— Շիտակն ըսելով ես ալ մանրամասնությունները չեմ գիտեր, և գրեթե խորհրդավոր դեպք մ'է Բերայի համար։ Շատ հետաքրքիրները գիտեին, թե Արամ կ'ախորժեր Սաթենիկի ընկերակցութենեն։ Ախորժիլը սիրելու նախադուռն է։ Մայիսի սկիզբները գիշեր մը Սաթենիկ և Արամ տան դուռն առջև կ'իջնեն քիչ մը պտտելու։ Ժամփանին կ'երկնցնեն, կառք մը պատրաստ է, կը մտնեն մեջը։ Մտրակե՛, կառավար, և շունչերնին Բանկալթի կ'առնեն։ Հաջորդ օրը անտի ալ կը չվեն։

— Աղեկ արագաշարժ են։ Ա՞յժմ...

— Այժմ... այլևս վրանին խոսող չկա, առանձնացած են Ջինճիրլի Գույու, և կ'ըսվի, թե գեղջկական կյանք կը վարեն։ Այն ժամանակեն ի վեր Արամը գրեթե անտեսանելի դարձած է։

— Սիրո գինովություն է, բայց այդ տղան ի՞նչ խելքի կը ծառայե. ըրածը իմաստուն գործ չէ։

— Սիրտը միշտ իմաստություն չի գիտեր։

Վաղուց կը ճանչնայի Արամը. զինքը կը սիրեի առանց հետը շատ ընտանի լինելու. ինքն ալ ինձ հետ աղեկ էր. յուր դյուցազնությունը հետաքրքրությունս շարժեց. փափագեցա, որ զինքը այդ նոր ընտանեկան վիճակին մեջ տեսնեմ։ Ուրիշ պատճառ մ'ալ ունեի այցելելու. Թիֆլիս եղած ժամանակս օր մը տիկին Արծրունի ինծի ըսավ. «Դու կը կարենաս սրտի վեպիկներ գրել, արի, մի անգամ փորձիր»․ խոստացա հնազանդվիլ և փորձել։ Նորավեպ մը պիտի գրեի «Մշակին»։ Ահա նյութ մը, ըսի ինքնին, զոր կրնամ ուսումնասիրել և դիտել, թե հանգույցն ի՛նչպես պիտի քակվի։ Այս մտածությունն ունենալով, առաջարկեցի Ջերազին անմիջապես Ջինճիրլի Գույու երթալ Արամին այցելության։

— Հարսանիքի չհրավիրվեցանք, աչքի լույսի՞ երթանք,— պատասխանեց խնդալով։

— Արարողություններու չենք նայիր։

Ծոկըլեն ելանք։ Նստանք կառք մը և գրեթե մեկուկես ժամու ճանապարհորդութենե վերջ հասանք Ջինճիրլի Գույու։ Կառքեն իջնելով մտանք

այն կարմիր տնակը, որ շրջապատյալ ծառերե, գարնան հովանավոր հանգստավայր մը կ՚ընծայե այցելուներուն: Քիչ մը խոնջյալ էինք: Վերըստին գարեջուր խմեցինք և հարցուցինք Արամի ո՛ւր լինելը: Այդ գյուղակին մեջ ամենքը զիրար կը ճանչեն. մեզ մատնանիշ ըրին քիչ մը հեռու սիրուն փոքրիկ տուն մը՝ կորսված ծառերուն մեջ: Ջերազ այցետոմսին վրա երկու տող գրեց, ես ալ անունս ավելացուցի և մեկուն ձեռքը ղրկեցինք: Տասը վայրկյան չանցած տեսանք, որ Արամ կուգա գլուխը բաց, սպիտակ բաճկոնակ մը հագած, հողաթափերը ոտքին, ուրախ զվարթ:

— Է՛հ, էհ գյուղացի ազնվական մը, ձայնեցինք իրեն:

— Այո, երանի՜ երկրագործաց ըսված է, գոչեց ինքն ալ դեռ մեզ չմոտեցած:

Եկավ. դեմքին վրա մանկական զվարթություն կար. իրարու ձեռք սեղմեցինք և սկսանք խոսակցիլ, ո՛ր ատեն Պոլիս հասնիլս հարցուց և զարմացավ լսելով, թե առջի գիշերն հասեր եմ և նույն օրը զբոսավայր մը կը գտնվիմ:

— Զբոսանքի չեկանք,— ըսի,— քեզ մասնավորապես աչքի լույսի եկանք:

— Սո՞ւյգ, շատ շնորհակալ եմ, երթանք մեզի. կինս իմացավ ձեր գալը և կ՚սպասե:

Գնացինք, աղվորիկ աղախին մը դուռը բացավ վեր ելանք: Ջերազ արդեն ծանոթ էր տիկնոջ, Արամ զիս ալ ներկայացուց և նստեցանք: Շատ գեղեցիկ տպավորություն մը ըրավ տիկին Սաթենիկ: Սիրուն կին մը, բավական գիրուկ, սև խոշոր աչքերով, սքանչելի մազեր օպինիազի գույն. բարեհասակ վայելչություն, դեմքը զվարթ էր, բայց զվարթության մեջ լրջություն մը կար. միայն շատ մանրակրկիտ դիտելով կարելի էր նըշմարել ամենաթեթև մելամաղձության մը հետքերը: Յուր խոսակցությունը հայտնի կ՚ըներ, թե որքան ուսյալ է և բարեկիրթ: Մեր խոսակցությունը ընդհանրապես Ռուսիո հայոց վրա էր, անոնց սովորությանց, բարքերու մասին տեղեկություններ կը հաղորդեի:

Միջոց մը տիկինը սենյակեն դուրս ելավ և պահ մը ետքը. գալով, հրավիրեց զմեզ պարտեզ իջնել և թեթև նախաճաշիկ մը ընել: Իջանք պարտեզ:

Որքան հեռու կրնար դիտել աչքերնիս միայն կանաչ կը տեսնեինք: Մշակված դաշտեր, անմշակ հողեր, բլրակներ, ծառաստանք, ցան և ցիր տուներ, խորին լռություն, մեղմիկ հով, ամեն ինչ բանաստեղծական էր, ամեն ինչ կը զվարթացներ հոգին:

Շատ ախորժելի ժամանակ անցուցինք։ Ջերազ լիահորդ ապացույցներ կուտար իր սրամտության և անդադար կը հնարեր ճաշակավոր բառախաղեր։ Տիկին Սաթենիկ միշտ պատրաստ էր նրբամիտ պատասխաններու։ Ես, գլուխս անոնցմե ավելի տաքցած, նշանավոր կը հանդիսանայի սրտառոց կարծիքներ հայտնելու մեջ։ Արամ սիրուն պատմություններ ուներ։

Իրիկվան մոտ էր, երբ վերջացավ նախաճաշիկնիս, սուրճ մ'ալ խմեցինք և հարկ եղավ բաժնվիլ։ Արամ և տիկինը շատ շնորհակալություններ հայտնեցին և թախանձեցին մեզ կրկին իրենց երթալ։

— Թախանձելու հարկ չկա,— ըսինք,— մանավանդ երբ քիչ մը ախրություն տեսնենք մեր շուրջը, ձեր մոտ վազելու ենք, որպեսզի ձեր զվարթությամբ և ձեր երջանկությամբ սրտերնիս ուրախանա։

Մեր բարեմաղթությունները ըրինք։ Մինչև կարմիր տունը Արամ և Սաթենիկ մեզի ընկերացան, կրկին կրկին մնաք բարովներ ըսինք և կառք նստելով մեկնեցանք։

— Ի՞նչ տպավորություն ունեցար,— հարցուց ինձ Ջերազ։

— Շատ գեղեցիկ. իրավ որ վիճակնին նախանձելի է. կը մաղթեմ որ միշտ այսպես ուրախ մնան, սակայն...

— Ի՞նչ սակայն։

— Սակայն, չեմ գիտեր ի՛նչ ըսեմ ապագային համար։ Արամ շատ ուրախ էր և անհոգ. կը փափագեի զինքն ավելի ծանր տեսնել, հաստատ կամքի և հարատևության անհերքելի նշանները չտեսա իր դեմքին վրա։ Սաթենիկ ավելի ծանր էր և կ'ըմբռներ յուր վիճակին փափկությունը։

— Ի՞նչ, կասկածնե՞ր ունիս ապագային համար։

— Ստույգ ոչինչ կրնամ ըսել, բայց շատ բան կարելի է։ Այս տղան, ինչպես ըսավ, օրենսգիտության ուսումը նոր ավարտած, հետամուտ է դիվանագիտական ասպարեզի մեջ մտնել և իրեն ապագա պատրաստել. ուրեմն հովվական կյանք մը չպիտի անցնե։ Մեր ընկերական օրենքներն և սովորույթք հայտնի են։ Ապահարզանի օրենք չկա. ուստի կարող չպիտի լինի յուր կնոջ հետ ընկերության մեջ մտնել. ամեն հաղորդակցությունը զրկյալ պիտի լինի, ստիպյալ ժամանակին մեծ մասը տունը անցնել, և գիտես թե միշտ միասին ապրիլ կը փթացնե սիրո սլաքները։ Վերջապես քսաներկու, քսաներեք տարեկան երիտասարդ մ'է, մինչև մահ չկրնար փակյալ մնար տան մեջ։ Եթե զավակներ ունենա, դժբախտություն մ'է, և հավանական է, որ չունենա։ Վերջապես, եղբայր, երբ մարդ մը կը ձանձրանա, այն ատեն ամեն ինչ կարելի է սպասել անկե։ Ինչևէ, ամեն ինչ չենք կրնար գուշակել։ Թերևս Արամին սիրտն այնքան փափուկ լինի, որ սիրելու և սիրվելու երջանկությունը ամեն փառքե, ամեն ապա-

զայն գերազանց դասե, մանավանդ, որ բարի երիտասարդ մը կ'երևի և անխիղճ ըլլալու չէ։

— Հաշվու մեջ չե՞ս դներ Քերովբե էֆենտիի մահն։

— Հավանականությանց ամենեն վերջինն է այդ։ Այդ խոշոր, մեծղի, անհոգ արարածը տրամադիր չէ շուտով անդրաշվելու: Մեր մեջ խոսելով, եթե նա քիչ շատ պատվո զգացման տեր մարդ լիներ, մի՞թե անպատիժ կը թողուր Արամը։

— Տեսնենք։ Մեղք է Սաթենիկը։ Ո՞չ թե Արամ չպատրաստե նոր դժբախտություն մը, որ անդարմանելի պիտի լինի։

— Մաղթենք։

Խոսակցություններիս ուրիշ նյութերու վրա դարձուցեցինք, հասանք Թերա և բաժանվեցինք իրարմե։ Ես որոշեցի հաճախ այցելել Արամին։ Օրթագյուղեն մոտ էր, կրնայի քալելով երթալ և վերադառնալ։ Երբ կ'սկսին փչել աշնան առաջին հովերն, անտի մինչև գարնան կեսը Ջինճիրլի-Գույու՝ կը սեպուի Թերայի և Օրթագյուղի դաշտային զբոսանաց կեդրոններեն մին։

ԺԱ

Հարկ չենք տեսներ պատմել աստ, թե որքան դառնացած էին Արամի և Սաթենիկի ընտանիքները։ Իհարկե այլևս ամեն հարաբերություն խզված էր ծնողաց և որդվոց մինչև։ Ո՛չ Սաթենիկի հայրը, ո՛չ ալ նորա ամուսինը հետամուտ եղած էին զնա բռնի բաժանել Արամեն։ Ի՞նչ ընեին այդ աղջիկը. նա այլևս արտաքսյալ էր ընկերութենե. նա մեռած էր իրենց համար։ Նորա անունն իսկ կ'ուզեին մոռնալ։ Արամի մայրն ու քույրն ալ շատ լացեր էին, կորուստնին շատ մեծ համարելով։ Առևանգության առջի օրերն իրենց տունը սգո տուն մ'էր, ուր իրենց ցավակցության կուգային ամեն բարեկամք, ամեն ազգականք։ Անվրդով էր միայն Արամի հորեղբայրը, վասնզի նա կը ճանաչեր յուր եղբորորդին. նա կը հուսար, մանավանդ թե կը հավատար, որ «խելքը շուտով գլուխը կուգա»։

— Հրածը տղայություն մ'է, այս ալ կ'անցնի, կ'ըսեր. վերջապես ոչ պսակված են, ոչ ալ կրնան պսակվիլ։

Յուր հույսերուն մասնակից ըրած էր մինչև աստիճան մը Արամի մայրն ալ։

Խորամանկ մարդ էր այդ հորեղբայրը, բավական փորձառություն ուներ, համոզված էր, թե Արամ օր մը չէ օր մը կը ձգե այդ կինը, մեկ-

դի կ'ելլնէ։ Իրեն անկ էր աշխատիլ, որ այդ օրը շուտ հասնի և լրտեսել հարմար առիթը։

Չեմ կարծեր, որ մեր ընթերցողք սպասեն, որ ըսենք թե հորեղբայրն յուր եղբորորդին փրկելու համար ունեցած վեհանձն խորհրդոց մեջ րոպե մը իսկ մտածած լինի Սաթենիկի վիճակին վրա։ Ի՞նչ պիտի լինի այդ կինն, եթե օր մը Արամ զնա լքանե։ Ա՜հ, երկյուղ չկա թե խղճահարության ամենաթեթև ստվեր մը մեկ երկվայրկյան իսկ մթացներ այդ «գործնական» մարդուն սիրտը։ Յուր խեղճ եղբորորդին բռնված էր ճիվաղի մը ճիրաններուն մեջ, պետք էր փութալ փրկել զնա։ Սաթենիկ իրեն համար «հասարակաց» կին մ'էր, թող ըլլա ինչ որ կ'ուզե. ով գիտե, ուրիշ քանինե՜ր պիտի գտնե։ Այդ հորեղբայրն երանության արժանի այն անձերեն էր, որոնց սիրտն ու միտքը երբեք չեն տանջված մեր ընկերության ըրած զոհերու դժբախտությամբ։ Ոչ մեկը բարձր և ազնվական մտածություն կարող եղած էր մերձենալ յուր սրտի սահմաններուն։ Գեշ մարդ չէր, բայց դրական մարդ էր, ո՞չ ապաքեն՝ բավական են մեր ընտանեկան շրջանակներուն մեջ եղած տառապանք. ի՞նչ հարկ խորհիլ նաև օտարին ցավոց վրա, մանավանդ այդպիսի կանանց վիճակը հոգ ընել։ Հին ամիրայի մը խոսքն իր նշանաբանն էր. «Շատ մեղքնցողը մեղքընալու կ'ըլլա» կ'ըսեր։— Աշխարհս շատ ծանր է։ Կյանքն ահագին բեռ մ'է. փափուկ ու ազնիվ զգացմունք շա՜տ թեթև, շա՜տ խարխուլ ու բարակ հիմունք են այդ ծանր շենքն ապահով և հաստատուն պահելու համար. կոշտ քարեր պետք են և ոչ թե նուրբ մարմար։

Յուր նպատակին ապահովապես հասնելու առաջին միջոցն համարեց հորեղբայրը, երես չդարձնել Արամեն. յուր խորհրդոց ձեռնտու չէր, որ Արամ միայն այդ կնոջմեն սեր տեսնե, սրտանց կը սիրեր յուր եղբորորդին և գիտենք, թե արևելյան բարուց մեջ հորեղբայրն որքան բարոյական մեծ ազդեցություն ունի եղբորորդվո վրա։ Արամ ալ յուր հորեղբայրը շատ կը սիրեր, հետևաբար գոհ մնաց և ուրախ եղավ, երբ յուր առևանգության հաջորդ շաբաթը, հանդիպելով հորեղբորը, տեսավ, թե սա հույժ չափավոր կերպով խոժոռ էր. միայն այնքան, որքան պաշտոնապես պետք էր լինել։ Հորեղբայրն առավ զնա և մտան Բերայի գարեջրատուններեն մին։ «Աստված շնորհք տա» ըսելով խնդիրը փակեց, և Արամ ալ ժպտեցավ։ Խոսեցան գործին վրա։ Հորեղբայրը կը մատակարարեր Արամի և քրոջն հորենական ժառանգությունը, որ անշարժ կալված էր։ Խոստացավ ամբողջապես վճարել ամեն ամիս Արամին յուր բաժինն և այս խոստումը կատարեց, մանավանդ որ երբեմն յուր գրպանեն ալ կուտար։ Արամ գոհ եղավ. անպատեհություն մը պակսած էր, վասնզի յուր վիճակը լավ պիտի չլիներ, եթե դրամական գործոց

համար դժվարության տեսներ յուր ընտանիքին. շնորհակալ էր Հորեղբորմեն և ավելի սկսավ հարգել զինա: Հորեղբայր և եղբարորդի շաբաթը մի անգամ կամ տակին կը տեսնվեին իրարու հետ: Բնականաբար Սաթենիկի վրա խոսք չէին ըներ:

Արամ ու Սաթենիկ հանգիստ կերպով Զինծիրլի Գույու անցուցին ամառը և աշնան մեկ մասը: Հաճախ կ'այցելեի իրենց, երբեմն մենակ, երբեմն բարեկամներով: Արամ նոր գրքեր կը գներ, կարդալու ավելի ժամանակ կը գտներ և որոշած էր մեկնիլ Զինծիրլի Գույուեն: Այնքան կենալը բավական կը համարեր:

Հոկտեմբերի սկիզբը Արամ ուզեց Բանկալթի փոխադրվիլ. գիտեր թե Բերա գալու դեռ ժամանակ կար: Սաթենիկ ալ միայն չէր ուզեր Բերա բնակիլ, այլև կը փափագեր հեռի մնալ Բանկալթիեն ալ. որքան հնար է առանձին ըլլալ, առանձին իր Արամին հետ: Սակայն Արամ սկսած էր զգալ, թե ծանր էր իրեն համար բոլորովին անջատվիլ ընկերութենե, մանավանդ որ բավական ատենե ի վեր հետամուտ լինելով պաշտոն մը ձեռք բերելու, ստիպյալ էր, թե հաջողեր, բնակիլ եթե ոչ Բերա, գեթ Բանկալթի: Արամ կ'ուզեր մտնել դիվանագիտական ասպարեզ մը. յուր փափագն էր դեսպանատան մը մեջ պաշտոնի մտներ: Հորեղբայրը շատ աշխատեցավ այս նպատակին իրագործման և հաջողեցավ: Հոկտեմբերի երկրորդ շաբթուն Արամ և Սաթենիկ փոխադրվեցան Բանկալթի, ուր վարձեցին վերնահարկ մը՝ երեք սենյակով. տանտերն հույն կին մ'էր:

— Զբաղմունք, տեղվույն հեռավորություն ինձ արգելեցին այդ միջոցին ավելի հաճախ այցելել Արամին, բայց իրեն ստեպ Բերա կը հանդիպեի: Շատ գիշերներ մեր բարեկամական խումբը Բերա կը հավաքվի միասին ճաշելու, խոսելու և զբոսնելու: Մեկ երկու անգամ տեսանք, որ Արամ ընթրիքը կ'ըներ Բերայի ճաշարաններեն մին, մեզմե մին դիտել տվավ անգամ մը, թե առաջ Արամ սովորություն չուներ դուրսը ճաշելու:

— Կ'երևի թե,— պատասխանեց Զերապ ինձ նայելով,— ձանձրույթն սկսած է:

ԺԲ

Անցյալ տարի, աշնան, մեր բարեկամաց խումբն վերադարձած էր Շահնազար, փաստաբանական ուսումն ավարտած ի Փարիզ: Շահնազար չոր փաստաբան մը չէ, այլ ընկերության սիրող փայլուն երիտասարդ մը: Այնքան գրագետ է, որքան փաստաբան և սիրահար գեղարվեստից: Աշխույժ, սիրուն, զվարթ, Շահնազար մեր աշխատանաց և մանավանդ զբոսանաց պատրաստական աջակից մը եղավ: Օր մը զինքն ու Արամը իրա-

րու ներկայացուցի։ Երկուքն ալ օրենսգետ, շատ հասկցան իրարու լեզուն։ Արամ օր մը ճաշի հրավիրեց Շահնազարն և ընտանի եղան։ Շահնազար մեծ գովեստներով խոսեցավ ինձ տիկին Սաթենիկին մասին։

Այս տարի հունվարի առջի օրերը գիշեր մը դարձյալ հավաքված էինք Բերա Սբոնեքին. ժամանակը բավական ուշ էր և Շահնազար տակավին չէր երևցած. անհամբեր էինք և կը նեղանայինք։ Մեր անհամբերության հետևանքը չեմ գիտեր ի՛նչ պիտի լիներ, երբ սենյակին դուռը բացվեցավ և Շահնազար եկավ. վրան հարձակվեցանք, բայց մտահոգ կ՚երևեր։

— Ներեցե՛ք,— ըսավ,— արտաքո կարգի գեպք մը պատահեցավ։

Հարցուցինք, պատասխանեց թե չէ կարող անմիջապես ըսել։ Նստանք ճաշի. Շահնազար զվարթ էր, բայց ոչ ըստ սովորականին. խնդալու յուր նշանավոր քրքիջը չէր արձակեր։ Քովեքով նստած էինք։ Կամաց մը ինձ ըսավ, երբ աղմուկը շատցավ։

— Քեզ հաղորդելու կարևոր բան մը ունիմ։

— Ի՞նչ է։

— Արամ կը պատրաստվի Սաթենիկը ձգելու։

— Ի՞նչ կ՚ըսես, խե՞նթ ես։

— Լա՛վ, այդպես է. հիմա իրեն հետ էի. կ՚ուզե վարը խզել ամեն հարաբերություն Սաթենիկի հետ. շատ խոսեցա, շատ աշխատեցա, որ գեթ մի քանի օրերու համար հետաձգե այդ խորհուրդին գործադրությունը։ Միտքս այն էր, որ ժամանակ վաստակեինք և թերևս միանանք և Արամի խելքը կարենանք գլուխը բերել։ Հուսամ, թե հաջողինք։ Առայժմ ճաշենք, վերջը ամեն ինչ կը պատմեմ։

Բավական հուզվեցա, բայց և այնպես ընթրեցինք. սակայն ո՛չ Շահնազար, ո՛չ ես շատ զվարթ էինք։

Գեղեցիկ գիշեր մ՚էր. սեղանեն վերջ մեր ընկերները զբոսնելու գնացին. քիչ վերջ մենք ալ պիտի երթայինք զիրենք գտնել. Ջերազ, Շահնազար և ես մնացինք Սբոնեք։ Ցավալի լուրն հաղորդեցինք Ջերազին ալ, ապշած մնաց։ Շահնազար սկսավ մեզ պատմել յուր տեսակցությունն Արամին հետ։ Սբոնեք եկած ժամանակ նմա հանդիպած էր Լյուքսենբուրգի առջև։ Թուի, թե Արամ խղճի խայթն հանդարտեցնելու համար խոստովանանքի պետքն զգացած էր։

— Արամ սկսած է ձանձրանալ,— ըսավ Շահնազար,— ո՛չ միայն կը ձանձրանա, այլ կզգա, թե Սաթենիկի հետ յուր կենակցությունն ամեն կերպով վնասաբեր պիտի լինի իրեն։

— Խելքն առաջ ո՞ւր էր։

— Ես ալ այդպես ըսի իրեն։— Բան մ՚էր, ըրի,— կը պատասխա-

նե։— Երիտասարդական անխոհեմություն մ'էր,— կ'ըսե,— որ պատիժը չեմ կարող կրել մինչև ցմահ։ Սաթենիկի հետ պատրաստ եմ պսակվիլ,— ավելացուց,— բայց օրենքը չ'ներեր. մեղավորը ե՞ս եմ։

— Արդեն գաղտնապես պսակված չե՞ն։

— Այդ չեմ գիտեր. բայց եթե օտարազգի քահանայի մը ձեռոք առանց պաշտոնական արձանագրության, գաղտնաբար պսակված իսկ լինին, Արամ դարձյալ ամուրի կը նկատվի և պիտի նկատվի միշտ ըստ եկեղեցական օրինաց։ Հետո ինք լավ կը ճանչնաս Սաթենիկը, գիտե, թե այդ ազնիվ և քաղցրաբարո կինն ամենևին չէ կարող աղմուկ հարուցանել, նա գիտե, թե ընկերությունը Սաթենիկի կողմը չպիտի լինի, և այս պարագաներեն ինքն օգուտ կը քաղե։ Ինչևէ, շարունակենք։ Արամ կ'ըսե, թե մայրը շատ վշտացած է և ցավն օրե օր կը սաստկանա. կ'երևնչի, թե հիվանդություն մը գա վրան։

— Շատ ուշ կը մտածե. պատրվակ է։

— Այո՛, այդպես է, բայց ամեն հանցավոր պատրվակներու կարոտ է ինքնզինքն արդարացնելու։ Ինչ որ ամենեն ստույգն է, սա է, թե յուր նոր պաշտոնին բերմամբ Արամ բոլորովին ուրիշ դիրք մ'ունի, քան ինչ որ առաջ ուներ։ Դժվար կացության մեջ կը գտնվի Սաթենիկին պատճառով։ Օտարազգի ամեն կարգի շրջանակաց հետ սկսած է հարաբերություն ունենալ. կը հրավիրվի գրեթե ամեն երեկույթներու, ամեն ընտանեկան պարահանդեսներու։ Հայտնի է, թե այս տեսակ պաշտոններու մեջ գտնվողներեն որքան ավելի հաճախ են բարձր ընկերության մեջ, այնքան ավելի մեծամեծ հույսեր տարածելու իրավունք կ'ունենան։ Այժմ Արամ ոչ կրնա ըսել, թե ամուսնացած է, ո՛չ ալ կրնա ըսել, թե ամուրի է։ Չէ կարող ներկայացնել Սաթենիկը ոչ մեկ ընկերության մեջ. յուր նոր ծանոթներու հետ ընտանեկան հարաբերություններ հաստատելե խույս կուտա։ Անցյալ կիրակի յուր դեսպանատան մի քանի պաշտոնյաներն իրենց կիներով, որք ամազոն եղած էին, Մասլաք գնացեր են։ Արամին առաջարկած են, որ միասին գա ընտանյոք. յուր վիճակը չեն գիտեր։ Արամ ստիպվեր է մերժել, բայց սիրտը շատ նեղացած է։ Վերջապես կ'ըսեր բարկանալով, թե չէ կարող տարին տասներկու ամիս տունը նստել, «իլիկ ոլորել»։— Այս պատմելով Շահնազարը կը խնդար, մենք ալ կարող չեղանք խնդալնիս բռնել։— Եթե շատ հարուստ լինեի,— կ'ըսե,— և ոչ մեկ պաշտոնի մը կը հետամտեի և այն ատեն ամեն զոհողություն հանձն առնեի թերևս, բայց հիմա չեմ կրնար։ Կը հասկնամ, թե ընելու չէի, բայց ըրած գտնվեցա, ի՞նչ ընեմ, կյանքս չեմ կարող զոհել կնոջ մը։— Տարօրինակ տրամաբանություն մը ևս կ'ընե։ Եթե մեկտեղ նստինք,— կ'ըսե,— թույնս իր վրա պիտի թափեմ, շարունակ

պիտի կռւինք. ինք ալ դժբախտ պիտի լինի, ես ալ։ Արդ, փոխանակ երկուքնիս դժբախտ լինելու, միայն ինք թող քիչ մը նեղվի։ Հետո ի՞նչ կը հուսար հորը տունը։

— Անպիտան արարած,— ըսավ Ջերազ։

— Կ՚երևի թե,— շարունակեց,— հույն տանտիրոջը հետ կարգադրություն մը պիտի ընե Սաթենիկի բնակություն և ապրուստ ապահովելու համար։ Եվ այսպես կը կարծե յուր պարտականությունը կատարած լինիլ. իբր թե կին մը, Սաթենիկի պես կին մը, միայն հաց ուտելու համար աշխարհ եկած լինի։ Վերջապես, բարեկամներս, ինչ որ ըսի զինքն համոզելու թե՝ այդպիսի խորհրդե մը ետ կենա, զուր ջանք, անօգուտ վաստակ եղավ, մանավանդ որ ավելին ալ կա, պիտի ամուսնանա։

— Պիտի ամուսնանա՞,— ըսինք երկուքնիս միասին։

— Այնպես խոսք մ՚ալ ըրավ, թվի թե յուր սիրտը բավական օթևաններ ունի, ուր ամեն կարգի սեր կարող է իրեն իջևան գտնել։ Հորեղբայրը ամեն կերպով առաջ կը մղե այս ամուսնությունը։ Այս մասին շատ չբացվեցավ, բայց յուր խոսքերեն կրցի հետևցնել, թե՝ հորեղբայրն հաջողած լինելու է փառավոր օժիտով գեղեցիկ աղջիկ մը ձեռք ձգել։ Է՛հ, Արամ ինքը սիրուն երիտասարդ մ՚է, նյութական վիճակը լավ, ընկերական աղեկ դիրք մը ունի, ապագան ապահով է, բնական է, որ ամեն ոք փափակի իրեն աղջիկ տալ։ Հարստություն, հանգստություն, ընկերական դիրք, ընտանեկան գոհունակություն, այս ամենը Արամի կարծեոք գոհողություն մը կ՚արժեն։

— Բայց ո՛չ խղճի և պատվո զարգացման գոհողություն,— ըսի։— Ինձ համար Արամ ոճրագործ մ՚է։

— Բայց ո՞ր օրինոք պատժել. ոչինչ։

Շահնազար ուրիշ տեղեկություններ ալ հաղորդեց, զորս աստ պատմել ավելորդ է։ Երեքնիս ալ տխրած էինք և զայրացած։ Որոշեցինք այնտեղեն նամակ մը գրել Արամին և վերջին ճիգ մը ընել, որ թերևս հաջողինք զինքն համոզել, որ գթա այդ խեղճ կնկան վիճակին վրա։ Սրտաշարժ նամակ մը գրեցինք։ Բայց երբ շահը բարձրաձայն կը խոսի, միթե բանաստեղծական զգացմունք, փիլիսոփայական մտածությունք, կարո՞ղ են լռեցնել այդ ձայնը։ Նամակն եթե երկար չլիներ, առաջ կը բերեի։ Ջերազ խմբագրեց. ինչ որ կը ներշնչեին մեզ մարդասիրական զգացմունք, ամենը մեջն էր։ Շահնազար նամակն ապահովաբար ձեռքը պիտի հասցներ։

— Կարևոր կետը մոռցանք,— ըսի,— Սաթենիկ տեղեկություն ունի՞։

— Ո՛չ, դեռ չգիտեր խեղճը, և տարօրինակ բանը մը ըսե՞մ ձեզ,—

Հարեց Շահնազար,— Արամ ինձմե խնդրեց, որ ես կամ մեզմե ուրիշ մը հանձնառու լինի Սաթենիկի հաղորդել յուր որոշումը։— Ես թե՛ իմ, և թե՛ ձեր կողմանե մերժեցի այդ հիմար առաջարկը։ Վերջին խոսք մը. հորեղբայրը կը ջանա, որչափ հնար, փութացնել ամուսնությունը, որպեսզի ունէ վտանգի տեղի չմնա։

Ելանք Սբոնեքեն գնացինք, գտանք մեր ընկերները. բայց վշտացած էինք, չկրցինք զվարճանալ և շուտ վերադարձանք տեղերնիս։

ԺԴ

Հունվարի 16-ի չորեքշաբթի առավոտուն, երբ եկա «Արևելքի» խմբագրատուն, ընկերացս և իմ հասցեիս նամակներ կային, ամենն միևնույն ձևով. իմ նամակս բացի և գտա հետևյալ հրավիրագիրն.

«Տիկին Թ... յան կը խնդրե Ձեր ազնվութենեն, որ բարեհաճիք Ձեր ներկայությամբ պատվել յուր որդվույն Արամի ընդ օրիորդ Տ..յանի պսակադրության հանդեսն, որ տեղի պիտի ունենա հունվարի քսանի կիրակի գիշեր ժամը երեքուկեսին, Բերա... թիվ...»։

— Ուրեմն, ամեն ինչ կատարյալ է,— ըսի,— շոգեպինդ կ'ընթանա խե՜ղճ Սաթենիկ։

Հրավիրագիրը մեկ կողմ նետեցի։ Վերջը ընկերներս ալ եկան։ Նոքա ալ ստացան իրենց հրավիրագրերն։

— Պիտի երթա՞ս,— հարցուցին ինձ։

— Ոչ, նախ որ Վասիլյանի հարսնիքն ալ նույն օրն է։

— Բայց ան ցերեկն է, իսկ այս գիշերը. կը պատմվի, թե փառավոր հարսնիք պիտի լինի։

— Գիտեմ, բայց ուրիշ պատճառներ ալ ունիմ, վերջը կը խոսինք։

ԺԴ

Այս տարի ս. Սարգսի կիրակին կարծես կ'ընծայեր գարնան մի զվարթ ավուր լուսանկարը։ Արևը պայծառ էր ու ջինջ և ոչ իսկ մեղմիկ հովի շունչ կը լսվեր։ Կեսօրեն վերջ Օրթագյուղ էինք։

Վասիլյանի հարսանյաց հանդեսին։ Հարկ էր գիշերն ես անդ անցնել։ Երեկոյան դեմ ինքնին կ'ըսեի. «Այս գիշեր կը կարգվի Արամ. Սաթենիկի համար սգո ժամեր են։ Պետք չէ խեղճ կինը բոլորովին մինակ թողուլ. պատշաճ է երթալ զնա մխիթարել»։ Երթալու որոշումը տվի. երեք

ժամ բացակա մնալու արտոնություն ստանալով բարեկամես, գնացի Բանկալթի։

Հորմեհետե տեղյակ էի Արամի խորհրդոցը, չէի ուզած այցելել տիկին Սաթենիկի, մտածելով, թե գուցե վրա հասնիմ այնպիսի պահու մը, որ ընտանեկան տեսարանք անախորժ ընծայեն օտարի մը ներկայությունը։ Ուրեմն առաջին անգամ էր այդ ցավալի դեպքերեն վերջ, որ պիտի տեսնեի տիկին Սաթենիկը։ Երբ հասա տունը, կամաց մը բախեցի դուռն, ինչպես կը բախեն երբ տան մեջ կա սիրելի հիվանդ մը, որո վիճակը ծանր է։ Դուռը բացվեցավ կիսատ, ետին էր հույն տանտերը։ Բարի կինը զիս տեսնելով ուրախացավ, ինչպես կ'ուրախանանք, երբ թախծության մեջ սիրելի անձ մը այցելության կա մեզ։ Բարևեցի անժպիտ դեմքով և հարցուցի, թե կարելի՞ էր արդյոք երթալ տիկնոջ մոտ։ Հույն կինն սկսավ ողբեր կարդալ հունարեն և ողբալով հանդերձ գնաց իմացնել գալուստս։ Քիչ վերջ եկավ և առաջնորդեց ինձ ընդունելության սենյակը, ուր արդեն կրակը կը վառեր։ Քանի մը վայրկյան հետո տիկինն եկավ. գունատ էր, աչքերը կարմիր էին։ Հավանորեն շատ լացած էր և իմ գալուստս իմանալով, գնացած էր աչքերը լվալ։ Ձեռքն ինձ մատույց, կարեկցությամբ սեղմեցի, կրակարանին մոտ երկու թիկնաթոռներու վրա նստանք. ուրիշ աթոռի մը վրա հույն կինը նստավ։ Թե՛ տիկինը, և՛ թե ես լուռ էինք. ի՛նչպես խոսք բանայինք, թեպետ հայտնի էր, թե ի՛նչ պիտի լիներ մեր խոսակցության առարկան։ Վերջապես տիկին Սաթենիկ լռությունը խզեց.

— Այս գիշեր հարսնևոր եք, այնպես չէ՞։

— Մտերիմ բարեկամներես միույն՝ Վասիլյանի, հարսանյաց հանդեսը կիսատ ձգեցի ձեզ այցելության գալու փափագով, և գիշերը պիտի վերադառնամ։

— Շնորհակալ եմ, ուրիշ տե՛ղ։

— Կը կարծե՞ք, տիկին։ Ո՛չ միայն ես, այլև մեր մյուս բարեկամները, որոնք զձեզ ճանչնալով մեծապես կը հարգեն ձեզ, ո՛չ մինը այսօր կ'երթա նորա մոտ։ Մենք զինքը այսուհետև կը ճանչնանք իբր մի վատ։

Այժմ ճանապարհին հանդիպեցա Շահնազարին. կրակ էր կտրած։— Ամեն հարաբերություն խզած եմ այդ վատին հետ,— ըսավ։

— Չէ՛, մի՛ մեղադրեք զինքն ալ,— ըսավ,— մեղավորը ան չէ, ե՛ս եմ։ Կ'զգայի, թե օր մը չէ օր մը այս բանը պիտի ըլլա։ Չէր կրնար ապրել ինձ հետ՝ շարունակ զրկված մնալով ընկերութենե, զվարճութենե, բարեկամներե, ծնողքեն, չէր կրնար խորտակել իր ապարեզը։ Պետք էր, որ ես այդ բաները առջի օրեն մտածեի, երբ ցույց տվավ զիս սի-

ըսելու նշանները։ Բայց խելքս կորսնցուցած էի, այնքան քաղցր կը հընչէր իր ձայնը։ Սիրտը խոսք չհասկանար, ի՛նչ ընեմ, գահավեժ մը զիս իրեն կը քաշեր։ Չեմ կրնար բացատրել, թե ո՛րքան հրապուրիչ էր ինձ համար զոհել անձս իրեն։ Կ'աղաչեմ, ներեցեք,— ավելցուց,— շատ խոսեցա, բայց այն օրեն ի վեր առաջին անգամն է, որ բարեկամ մը կը տեսնեմ։

Տիկին Սաթենիկ շատ հուզյալ էր և ձայնը մարեցավ, անմիջապես ելա քիչ մը ջուր տվի. ձեռքս ձեռքին դիպավ, իրենը կարծես կ'այրեր, հույն կինն անկյուն մը նստած հառաչանքներ կը հաներ, երբ տիկինը կը խոսեր և մերթ ընդ մերթ կը կրկներ «Ի քայմենի իյինեքա, թի թին իեոբէ սաո քեֆայի»։ (Խեղճ կին, ինչ եկավ գլխուն)։

— Այս բարի կինն է,— ըսավ,— որ կը գթա վրաս և զիս կը պահե. չեմ գիտեր իրեն ինչ պիտի ընեմ։ (Անտարակույս չէր գիտեր Արամին ըրած կարգադրությունը. եթե գիտնար, կը մերժեր)։ Ութը տասը օր է խենթի պես եմ, խեղճը քովես չի բաժնվիր։

Ակներև էր ինձ, որ տիկինը քիչ շատ սփոփանք կ'զգար, երբ կը խոսեր, ամենայն հաճությամբ կը լսեի իրեն։ Իմ կողմանե հարցումներ կ'ուղղեի շատ զգույշ կերպով. այդ հարցումները կը վերաբերեին անցյալ դեպքերու։ Տիկին Սաթենիկի անցյալին վրա ունեցած տեղեկություններս շատ անկատար էին։ Այդ երեկոյան խոսակցութենե տեղեկացա շատ բան, զորս արդեն հաղորդեցի առաջին գլուխներուն մեջ։ Շատ մութ կերպով անցավ յուր ամուսնության օրերուն վրա. ունէ ցավ չէր հայտներ նույնիսկ այս պահուն, Քերովբե էֆենտիեն բաժնված լինելուն։ Միայն թե երբ հիշեց, որ ինչպես զոհած էր յուր անձն եղբորը սիրույն, խեղճին աչքերը լեցվեցան։

— Եվ սակայն,— ըսավ,— ամիս մ'է եղբայրս վերադարձած է Փարիզեն և ոչ իսկ մի անգամ զիս տեսնելու եկավ։ Ինքն ալ զիս կ'արհամարհե։— Ինձ համար,— ավելցուց,— դժբախտություն մ'է, որ չեմ կարող անցյալ քաղցր հիշատակներու մեջ իսկ մխիթարանք մը որոնել։ Աղջկության օրերու երազներն են միայն, որ անուշ են ինձ։ Կ'ըսեն, թե կյանքը երազ մ'է. սխալ է, երազները քաղցր են, իսկ կյանքը դառն, գեթ որչափ ես փորձած եմ։

Չէի գիտեր ի՛նչ պատասխանեի, մխիթարանաց բառ մը չէի գտներ. ի՞նչ հույս տալ իրեն. կ'ըսեն, թե հույսը մինչև մահվան մեջ իսկ չի լքաներ զանոնք, որք հազիվ ունին մի քանի րոպեներ ապրելու, և սակայն Սաթենիկի համար չէր նշմարեր հուսո հենարան մը։

— Չեմ գիտեր ի՞նչ ընեմ,— կ'ըսեր։— Մեռնի՞լ, կը փափագիմ, բայց չեմ կարող ինքզինքս սպանել, ձեռքս առաջ չերթար, դեռ շատ երի-

տաասարդ եմ։ Ա՜խ, թե բժիշկ եղբայրս քիչ մը գութ ունենա՜ր։ Կը քաշվեի գյուղակ մը, հոն գրքերու, դաշնակի և պտույտի մեջ կը մոռնայի սիրտս, երիտասարդությունս. հանդարտիկ կ'սպասեի մահվան։ Եղբորս սերը մխիթարանքս կ'ըլլար. բավական էր, որ մերթ ընդ մերթ ինձ այցելության գար և զիս սիրեր։

— Բայց, տիկին, այդ անկարելի չէ,— ըսի, վերջապես գոհ մնալով, որ գտա պատասխանելու կետ մը։— Այդ մասին եթե կը հաճիք, կրնաք վստահ լինել, որ հարկ եղածը կրնամ խոսիլ ձեր եղբորը։

— Ո՛չ, աշխատանքդ անօգուտ կ'ըլլա. նա պետք էր բնազդում ունենար, և գեթ Արամին բաժանումեն վերջ զիս մեղքննար։ Ես աշխարհի համար, առանց բացառության, այլևս արհամարհելի կին մ'եմ։ Քանի որ Արամ ինձ հետ էր, վիճակս այսպես չէր, ամուսինե բաժնված կին մ'էի, և ունեի ուրիշ ամուսին մը. գեթ այսպես նկատվելու իրավունք ունեի։ Իսկ այժմ, ի՞նչ եմ։ Գիտեք, թե ի՞նչ եմ. փոքրիկ դեպք մը պատմեմ։

Երեկվան վիճակս անբացատրելի է։ Տարօրինակ զուգադիպություններ կան մարդուս կյանքին մեջ։ Առաջին դժբախտությունս ս. Սարգիսի օրն էր. այն օրն էր, որ զիս պսակեցին. մի քանի տարի վերջ նույն օրն էր, որ կը պատահեր ամենամեծ վիշտս։ Արամ հաջորդ օրը կը պսակվի ուրիշի մը հետ։ Սիրտս շատ լեցված էր. կ'ուզեի լալ և չէի կարող։ Արևը մտնելու մոտ էր, ա՛լ կարող չէի նստիլ. աղաչեցի այս կնոջ՝ միասին քիչ մը երկննալ. ելանք դեպի Ֆերի Քեոյի ճամփան երթալ։ Աղվոր վերջալույս մը կար, շատ հուզված էի։ Մեզմե մի քիչ վեր տեսա քանի մը սիրուն մանկիկներ, որ կը խաղային. խանդաղատեցա անոնց երջանկության վրա, սկսա զանոնք շոյել, սիրել. իրենց մայրերը դռան առաջ էին. տեսա, որ զավակնին ետ կը կանչեին, իբր թե բորոտ մը լինեի. վըշտացա, քայլերս արագեցի, բայց ոչ այնչափ, որ ետևես չլսեմ՝ գեշն է, գեշը։ Քիչ մը կանգ առավ, կուրծքը կ'ելներ կ'իջներ։— Կը տեսնե՞ք,— շարունակեց,— անմեղ երեխաներուն անգամ կ'ուսուցանեն զիս արհամարհել։ Արդյոք տունն ալ այսպես չէ՞։ Փոքրիկ քրոջս ու եղբայրներուս ալ այսպես չե՞ն սորվեցներ։

Այս խոսքերուն վրա տարաբախտ կինը լռեց։ Ճակատը ձախ ձեռքին մեջ դրավ և գլուխը ծածկեց. արևը մարը մտնելու վրա էր. յուր հետին դեղնած նշույլները կը զարնեին Սաթենիկի տժգույն երեսին, ի՜նչ մելամաղձիկ, ի՜նչ գեղեցիկ էր այդ դեմքն յուր ցավոց մեջ. կարծես Դիցիանոյի Մագդաղինեն էր։ Սենյակին մեջ խոր լռություն կար։ Զգացի, որ այլևս այցելությունս չէի կարող երկարել։ Խեղճ կինը հանգստանալու պետք ուներ թերևս։ Ոտքի ելա մեկնելու։

— Չեմ կարող խնդրել, որ ավելի նստիք,— ըսավ տիկին Սաթենիկ,— վասնզի ուրիշ տեղ պիտի երթաք, շնորհակալ եմ, հուսամ, թե զիս չեք մոռնար։

Խոստացա շուտով երթալ և իրեն լուրեր տանիլ. հուսալիր էի, որ գոհացուցիչ լուրեր տանիմ. խորհած էի երթալ գտնել բժիշկ եղբայրը, ծանոթանալ անոր հետ, բացատրել նմա քրոջ վիճակը։ Երիտասարդ մը, որ երկար ատեն Փարիզ ապրած է և անդ հիմնական ուսում ստացած, այդ երիտասարդն հավանորեն ազնիվ զգացումներ ունի։ Արդյոք կարելի՞ է այնքան անսիրտ լինել մինչև արհամարհելու քույր մը, որ զինքը գորովալիր սիրով սիրած է ու կը սիրե։

Մեկնեցա Բանկալթիեն և Օրթագյուղ վերադարձա բավական գոհ սրտով, վասնզի կը հավատայի, թե կարող պիտի լինիմ բարեփոխել այդ տարաբախտիկ կնոջ ավաղուկ վիճակը։

ԺԱ

Հաջորդ օրը, երկուշաբթի առավոտ, ծանոթներես ոմանք եկած էին Ղալաթիա աչքերնին կես բաց, կես խուփ։— «Ինչո՞ւ չեկար Արամին հարսանյացը,— կ'ըսեին ինձ,— շատ կը զվարճանայիր, սքանչելի հանդես էր. ուրախություն, զվարճություն անպակաս էին. մինչև լույս պատվական ժամանակ անցուցինք»։

Արդարև փառավոր հարսնիք եղած էր, ինչպես նույն օրն ու հաջորդ օրերը պատմեցին։ Թե՛ հայ և թե՛ օտարազգի բարձրագույն դասերու ներկայացուցիչք փայլած էին անդ։ Գրագետք, օրագրապետք, դրամատերք, վաճառականք, դիվանագետք ցույց տված էին, թե որքա՜ն կը պատվեին, որքա՜ն կը մեծարեին Արամն ու ընտանիքը։ Երկու եպիսկոպոս, Պոլսո ամենեն ականավորները, սիրահոժար պատասխանած էին Արամի հորեղբոր մասնավոր հրավիրանացն։ Կնքահայրը նույն ինքն հորեղբայրն եղած էր և այն գիշեր հորեղբայրը հրճվալիր էր արտաքո կարգի եղանակով։ Պսակի արարողութենեն վերջ հակիրճ ատենախոսություն մը ըրած էր սրբազաններեն մին, որ Արամի հորեղբորը շատ սիրելին էր։ Խիստ և անաչառ եկեղեցականի մեծ համբավ կը վայելե նա. պահ մը ներկայք երկյուղ տածած են, թե չլինի որ եպիսկոպոսը անաչառությունը այն աստիճան առաջ տանի, որ Արամի անցյալի մասին անախորժ ակնարկություններ ընե։ Արամ փափագած էր, որ մյուս սրբազանը խոսի, վասնզի նա ավելի կը հասկնա աշխարհի վիճակը. բայց նա ֆրանսերեն պիտի խոսեր օտարազգիներու համար։

Սակայն անաչառ եպիսկոպոսը փարատած էր ամեն երկյուղները և փորձով ցույց տված էր, թե ինքը հմուտ էր պատշաճության օրինաց և գիտեր ճարտարությամբ միմյանց հետ հաշտեցնել «զանազան կարգի նկատողությունք»։ Ակնարկեց, այո՛, Արամի անցյալին, բայց որքա՛ն ներբությամբ, որքա՛ն վարպետությամբ։ Դրվատեց նորա ծնողասեր զգացումները, որոնց ապացույցները տված էր հնազանդվելով ամենն պարագայի մեջ յուր մորն ու հայրախնամ հորեղբորը. մատնանիշ ըրավ Արամը արդի երիտասարդության համար իբր օրինակելի տիպար մը՝ յուր ջերմեռանդությանը և կրոնասիրությանը համար։ Դեռ երկու օր առաջ խոստովանած էր, ինչպես կը վկայեր խոստովանահայրը, երկյուղած հավատով։ Այո՛, խոստովանած էր, ո՛չ թե պարզապես պարտականություն մը կատարելու, առանց որո պսակն անհնարին է, այլ ի սրտե ջերմեռանդաբար խոստովանած էր ապաշավելով, իբր մահկանացու յուր սխալանաց համար,— և ո՛վ չէ սխալական։— Սրբազանն, որ յուր համբավույն նախանձախնդիր է, այս խոսքերովն ուզեց հայտարարել, թե ինքն ներկա կը գտնվի այդ հանդեսին, վասնզի Արամ կատարած է եկեղեցվո բոլոր պահանջումները։ Նա մի արդար է այսօր։

Հանդիսականներեն ոմանք նշմարած են, թե Արամ մի քիչ շատ թեթև կերպով շառագունած է այս միջոցիս և մեծ շունչ մը քաշեր է, երբ սրբազանն յուր օրհնությանց վերջ տվեր է։ Շիտակն ըսելով քան զայս նվազ կարելի չէր պահանջել այսպիսի խստաբարո եկեղեցականե մը։

Հետո պարերն սկսած էին, մինչև առավոտ հրճվանք, զբոսանք, անբիծ անապական ուրախություն։ Վերջապես այն հարսանիքներեն մին էր, որոց հիշատակը մտքե չելլեր և որք ամեն երիտասարդներու և ամեն երիտասարդուհիներու ամուսնության փափագ կուտան։

ԺԶ

Մահվան դագաղի մեջ ոմանք՝ մինչ կարծված են անկենդան դիակներ, բացեր են հանկարծ իրենց աչքերը և մեծ ցնցմամբ մը ապրած են մի քանի րոպեներու համար ևս։ Բժշկությունը ցույց կուտա, թե ջղուտ բնությանց ոմանց համար երբեմն մահն առ երևույթ է և մինչ մեռած կը համարվին, դեռևս կ՚ապրին. ոմանք գերեզմանին մեջ անգամ բացած են իրենց աչքերն, ի հարկե շուտով վերջնապես նիրհելու համար։ Այսպես ալ շատ անգամ մեր մարդկային խեղճ սիրտը մեռած, հավիտենապես մեռած կ՚ենթադրենք, հանկարծ կը զարթնի, կը ցնցվի և կը ցնցե։ Կ՚երևի զերդ ուրվական մը, ապրիլ կ՚ուզե, կյանք կը հայցե, կը փարի անցյալ

սիրո հիշատակներուն, հավանորեն այս ցնցմամբ ցնցված էր Սաթենիկի սիրտն ալ, երբ գիշեր մը ուզեց երթալ Նոր թատրոն։ Երաժշտության սերն այդ կնոջ սրտի մոլությունն էր, ամեն մոլություն անջնջելի հետք մը կը թողու սրտի մեջ։ Սաթենիկ ուզեց արբենալ պահ մը երաժշտությամբ։ Ուզեց տեսնել այն սրահն, ուր առաջին անգամ զգացած էր սիրո համբույրներու հեշտությունը։ Եվ հետո, ո՞վ գիտե, գուցե նշմարեր դեմքեր։

Այդ գիշերն Նոր թատրոնի բեմին ձախակողմյան օթյակներու հանդիսականք հետաքրքրությամբ կը նայեին իրենց դեմն վերի հարկի փոքրիկ օթյակը, ուր գրեթե քողածածուկ նստած էր կին մը և մոտն հույն կին մը և իրենց ետին ոտքի վրա ծանոթ երիտասարդ մը կար։

Երբ վարագույրը վերջին անգամ իջավ ու թատրոնը սկսավ պարպվիլ, Սաթենիկ տակավին չէր ելած, կարծես երազի մեջ ընկղմված էր։

Վերջապես պետք էր մեկնիլ, դուրս ելան, Սաթենիկ հանկարծ սկսավ դողալ և ուժով մը կռթնեցավ հույն կնոջ։ Իրեն այնպես երևցավ, թե Արամն ու իր կինը նշմարած էր։ Ոչինչ կրցավ ստույգ իմանալ, բայց սիրտը կը տրոփեր։ Սաթենիկ ջղային հուզման մեջ էր. չէր կրնար կառք նստիլ հանդարտ, հուզումը շարժման մեջ կարելի էր հանդարտեցնել, խնդրեց մի քիչ քալել, հույն կինը դիտել տվավ, թե ներսը շատ տաք էր, քրտնած ըլլալու էր, գիշերն ալ ցուրտ էր, ձմռան ցուրտ գիշեր մը՝ թեյլետ պայծառ։ Այսուհանդերձ քայլեցին բավական տեղ։ Շատ ատենե ի վեր Սաթենիկ չէր տեսած մեծ փողոցը, կարծես կարոտը կ՚առներ։ Ուր ուրեմն հարկադրեցան կառք մը մտնել. երեքն ալ լուռ, մունջ էին։

Այդ գիշերվան հաջորդ օրն էր, որ տիկին Սաթենիկի այցելության գնացի. գինքը կոտրած տեսա, քիչ մ՚ալ անհանգիստ էր։ Խոսեցանք երկրորդական նյութոց վրա։ Դիտեցի, թե անհամբեր կ՚սպասեր եղբորմեն լուր լսել։ Ոչինչ ըսի. գուշակեց լռութենես, թե ձեռնարկս անհաջող եղած է, բոլորովին լռեց։

Արդարև Սաթենիկի բժիշկ եղբորը հետ ծանոթացած էի, բայց կարող չէինք եղած բարեկամանալ. ցուրտ ընդունելություն գտած էի, կ՚երևի, թե լսած էր յուր քրոջն համար ունեցած բարեկամությունս։ Իհարկե չէի կրնար այլևս խոսիլ ինչպես որ կը փափագեի։ Ուրիշ բարեկամի մը դիմեցի և զնա միջնորդ դրի։ Բժիշկն ամեն ինչ մանրամասնորեն լսած էր և միայն հեգնական ժպիտ մը ունեցած էր։— Կատակերգությունը գեշ չէ, պատասխանած էր, խնդրեմ այլևս մի՛ խոսիք մեզ անոր վրա։ Ան մեռած է մեզ համար։

Ինչպե՞ս այս պատասխանը հաղորդել խեղճ Սաթենիկին, և այնուհետև ի՞նչ ընել։

Այդ իրիկուն բավական կարմրցած էին երեսները։

— Շատ տաքություն ունիմ,— կ՚ըսեր,— վրաս չափեն ավելի նեղություն կուգա։

Քիչ մը դեղեր ըսինք, խոստացավ ընել։

Իմ լռությունս եղբոր մասին թվի թե իրեն զայրույթ ազդեց-չափեն ավելի նեղացած կ՚երևեր։ Այցելությունս չերկարեցի։

ԺԷ

Երեք օր չկրցի Բանկալթի ելնել. չորրորդ օրը պիտի երթայի ցերեկե վերջ և առավոտուն հույն տղա մը եկավ զիս դտավ Սաթենիկի տան տիրոջ կողմանե։ «Քիրիան շատ հիվանդ է,— ըսավ,— և զքեզ կ՚ուզեն»։ Անմիջապես գնացի. այն ինչ ներս մտա, սկսա տեղեկություններ խնդրել։ Հույն կինը պատասխանեց, թե Սաթենիկ երեկ ցերեկե ի վեր անկողինն էր։ Երկու օր ինքզինքը շատ տկար զգացած էր. ցուրտ առած լինելու էր։ Թատրոնեն վերադարձած գիշերը մոտ կես ժամ պատուհանին առաջ կայնած է, բաց պատուհանին առաջ, քրտնած քրտնած. շատ մրսեր է։ Բայց ի՞նչ ըներ խեղճը, գլուխը կրակներու մեջ է եղեր։ Ապա գլխու ցավը սաստկացած է, ախորժակը կորսնցուցած, վրան մեծ սրտնեղություն մը կար, արդեն խեղճն ուրախ չէր։ Այս բաները շուտով պատմեց։

— Ուրեմն, հիմա անկողի՞նն է,— ըսի։

— Այո՛, անկողինն է, եկուր նայե, տես ինչ կ՚ըսե։

Սաթենիկի պառկած սենյա՛կն երթալ, այդ անհնարին էր ինձ, հակառակ էր ամեն պատշաճության, սակայն հույն կինն ըսավ, թե պետք է անպատճառ մտնեմ, վասնզի միայն հայերեն կը խոսի,— ըսավ,— և ինքը բան մը չի հասկնար։— Գնացի դռան առաջ, ականջ դրի, լսեցի Սաթենիկի ձայնը. եղբորը, մորը, Քերովբեի անունները կուտար։ Ինձ այնպես թվեցավ, թե կը զառանցե. կամաց մը դուռը բացի և ներս մտա։ Այո՛, կը զառանցեր. զիս տեսավ և կարծեց թե բժիշկ եղբայրն է. սկսավ կարոտագին խոսքեր ընել։ Հանկարծ նյութը փոխեց. սկսավ երգել. մանկության հիշատակներ կ՚ըսեր, վալսի եղանակ մը երգեց,— հավանորեն Արամի հետ Նոր թատրոնի մեջ վալսած եղանակը։— Այնտեղ ներկայությունս անօգուտ էր, հարկ էր բժիշկ բերել։ Դուրս ելա բժիշկ բերելու. կես ժամ վերջ հույն բժիշկ մը գտա և բերի։ Երկար զննության հարկ չկար։ Բժիշկը հայտարարեց, թե թիֆո էր, սովորական դեղերը տվավ և պատվիրեց լավ նայիլ։ Խնդրեցի երեկոյան դեմ

դարձյալ գալ. եկավ. ես ալ գնացի. բժիշկը ջերմաչափը միասին բերած էր. դրավ ունին տակ, տաքությունը 38½ էր։ Երբ դուրս ելանք ինձ ըսավ, թե շատ թեթև չերևիր. տեսնենք հաջորդ օրը ջերմությունը ի՛նչ կ'ըլլա։ Մյուս օրը ցերեկին գնացինք։ Կ'երևի թե բժիշկին պատվերները լավ չէին կատարված. այդ հույն կինը մինակ ի՞նչ ըներ. որքան ալ սորտացավ էր, բայց և այնպես կարող չէր եղած կատարելապես հոգ տանիլ։ Տաքությունը 39 աստիճան էր. սառույցն ստեպ փոխած էին. բայց հույն կինը կ'իջներ կ'ելներ, վերջապես չէր կրնար խնամել ինչպես որ պետք էր։ Բժիշկն ըսավ, թե ուրիշ մեկը բերելու է քովը։ Երթամ բան մը ճարեմ, ըսի։ Օդը ցուրտ էր, քալելով կ'իջնեի Ղալաթիա։ Երբ Բերա հասա, ինքնիրեն ըսի. «Լա՛վ կ'ըլլա, որ ծնողացն իմաց տամ. անշուշտ այնքան քարսիրտ չեն, որ այս պահուս իսկ լքանեն խեղճ կինը»։ Սակայն ծնողքը չէի ճանչնար։ Հայրապետ էֆենտիի տունը հարցուցի, գտա, բայց երբ դռան պիտի զարնեի, վարանեցա, ետ դարձա։ Կրկին ետ եկա, ավելի քաջությամբ. մտածեցի, թե կիները մինակ լինելու են և զիս ալ չեն ճանչեր, ազատորեն կ'ըսեմ, ինչ որ պետք է։ Արդարև տան մեջ մինակ էին Սաթենիկի մայրը և մորաքույրը, վեր հրավիրեցին զիս, ելա։ Ի՞նչպես հաղորդել, ըսի, թե Բանկալթիեն կուգամ։

Մայրը կարծես թե նախազգացում ունեցավ, և սկսավ երեսս նայիլ. բավական զգուշությամբ հաղորդեցի, թե իրենց աղջիկը ծանր կերպով պառկած է թիֆոյով։ Հազիվ արտասանեցի այս բառը, Սաթենիկի մայրը խենթի պես վեր ցատկեց և սկսավ աղաչել, թե «Զիս տա՛ր, զիս տա՛ր»։— Մորաքույրն ալ ուզեց միասին գալ։ Մայրը հուզված շփոթված էր, ի՛նչ ընելը չէր գիտեր. դուրս ելանք, կառք մը նստանք։ Կը ցավեի այդ խեղճ մորը վրա։ Հայտնի կ'երևեր, թե սրտին մեծ վիշտ եղած էին Սաթենիկի դեպքերը։ Անդադար հարցումներ կ'ըներ. զղջացի, որ հիվանդությունը ծանր է ըսած էի, բայց ի՞նչ ընեի, այդպես կը կարծեի զիրենք հուզել։— Հասանք դուռը, վար իջանք. խեղճ կնկանը թևը մտա. կը դողդողար։ Վեր ելանք, մտավ աղջկանը սենյակը, Սաթենիկ մայրը ճանչնալու վիճակին մեջը չէր։ Ինկավ աղջկանը վրա. կուլար ու կը համբուրեր։ Մորաքույրն ավելի սրտոտ էր. երկուքնիս մասին ետ առինք մայրը, լալու ժամանակ չէր։ «Ա՛խ, տղաս, գնա մեծ բժիշկ մը բեր, աստված քեզ պահե, դրացի ես, այնպես չէ՞։— Այո՛, դրացի եմ պատասխանեցի։

Ուրիշ ի՛նչ ըսեի։

Գնացի մեծ բժիշկ մը գտնել. կրցա ճարել ամենեն անվանիներեն մին. մյուս բժշկին իմաց տվի, երկուքը մեկտեղ գտնվեցան։ Սովորական դեղերը՝ սառույց, աղեկ նայիլ, ահա իրենց տված հրահանգներն և

սպասել։ Մայրը աղաչեց, որ օրը երկու անգամ գան։— Հարկ չկա ըսին, օրը մը անգամ կուգանք, կը բավե։

Հիվանդին վիճակը օր ըստ օրե կը ծանրանար։ Այդ մարմինը այնքան տառապած, այնքան չարչարված սրտի և հոգվո վշտերով, արդեն խոցոտված, կարող պիտի լինե՞ր տոկալ այդ սոսկալի հիվանդության։ Այս հարցումը կ'ընեի ինքնիրեն՝ մտատանջությամբ։

Ամենքս ալ երկյուղի մեջ էինք։ Կ'սպասեինք տասներորդ ավուր։ Իններորդ օրը բժիշկն երկյուղի մեջ էր, ջերմաչափը 41-րդ աստիճանն էր. եթե 42 լիներ, այլևս հույս չկար։

Մայրը յուր հուսահատ վիճակին մեջ իսկ չմոռցավ քահանա խընդրել աղջկան համար։ Քահանան եկավ, բայց Սաթենիկի խելքը վրան չէր։ Ո՛չ խոստովանանք, ո՛չ հաղորդություն, կարելի չեղավ։

Հիվանդության տասնմեկերորդ օրը երեկոյան դեմ գնացի հիվանդին տունը։ Դուռը երբ բացվեցավ, ներսեն կը լսվեին լալու խեղճուկ ձայներ, հույն կինը դեմս ելավ, աչքերը արցունքներով լի. հասկցա, Սաթենիկ մեռած էր։

Ի՞նչ ըսեի մորը, ի՞նչ մխիթարանք տայի։ Մազերը կը փետեր. «Ես մեռցուցի աղջիկս, կ'ըսեր, ես մեռցուցի, սև էր եղեր այն օրը, որ կարգեցի զինքն ան մարդուն հետ»։

Ամեն ինչ լրացյալ էր։ Տակավին բարեկամական մի քանի պարտականություններ կային կատարելու, թաղման պատրաստությունները հարկ էր տեսնել։ Նախ պետք էր սնդուկը պատրաստել, գնացի Վենետիկ փողոց և մահահոտ կրպակին մեջ ընտրեցի գեղեցիկ սնդուկ մը։ Խեղճ Սաթենիկը ամեն բանի մեջ գեղեցիկին, ազնիվին կ'ախորժեր։ Հետո գնացի եկեղեցի, ըսի, թե ննջեցյալ մը կա և գիշերը պետք է եկեղեցի տարվի։ Ժամկոչը գնաց. պանդուխտ քահանան ալ պատրաստվեցավ երթալ. այդ միջոցին ուրիշ քահանա մը եկավ. տեղեկացավ եղելությանը։ «Պետք է խոստովանահայրը գտնել և անոր խոսիլ»,— ըսավ։ Քիչ մը շփոթեցա։ Ո՞վ էր և ո՞ւր գտնել։— Հոգ չէ ,— ըսի,— այս գիշեր տարեք, վաղը կը կարգադրենք։— Չըլլար,— ըսավ քահանան,— շիտակն ըսեմ, առանց կրոնական ժողովո հրամանին չենք կրնար այդ կնիկը այս գիշեր եկեղեցի բերել։

Գործը կը ծանրանար. զգացի, թե դժվարություններ պիտի ծագին։ Ամեն ջանք անօգուտ եղավ. Սաթենիկի մարմինը այն գիշեր հույն կնոջը տունը պիտի մնար։ Աշխատեցանք, որ մայրը յուր տունը ղրկենք, այդ ալ կարելի չեղավ։ Այն գիշերը գրեթե աթոռին անցուցինք։ Կարող եղած էի գտնել Հայրապետ էֆենտիի տան քահանան։ Ազնիվ և բարեսիրտ եկեղեցական մ'էր, որ հաստատեց հատուկ հրամանի մը պետքը եկեղեցա-

կան իշխանութենէն։ Դժվար խնդիրներ կային։ Ո՛չ թուղթ տրվեցավ, ոչ մի պատրաստություն տեսնվեցավ։ Քանի մը բարեկամներու բերանացի հաղորդեցի ցավալի լուրը։ Հայրապետ աղա թեպետ չեկավ աղջիկը տեսնելու, բայց լուր կ՚ստանար, յուր սիրտն ալ քար չէր. մահվան երկյուղը շատ բան մոռցնել կուտար։

Հաջորդ օրը քահանան կանուխ պատրիարքարան իջավ. ո՛չ մեկ վճռական պատասխան տրվեցավ. հավանորեն կրոնական ժողովի ազդեցիկ անդամներեն ոմանք քիչ ատեննեն անդ պիտի գտնվեին։ Դիպվածով արդարև եկած են։ Քահանան սկսած է խոսիլ Սաթենիկի վրա, նկարագրելով զնա լավ կին մը, որ իբր սխալական մարդ թերություն մը գործած էր։ Արդեն շատ զղջացած էր յուր այդ հանցանքին համար։ Յուր վշտերը, տառապանքները բավական պատիժ մը կարելի էր համարել։— Սակայն քահանան ոչ մեկ սիրտ կրցած էր կակղեցնել, երբ վերջացուցած էր խոսքը, եպիսկոպոս մը, դժնիադեմ կերպարանոք, լակոնական հարցում մը ըրած է։

— Տէ՛ր հայր, մորուքդ քեզի բե՞ռ եղած է։

Քահանան լռած էր, զգալով, թե այդ տարաբախտ կնոջ ի նպաստ խոսիլն իսկ ոճիր մը պիտի համարեն. մորուքն ածիլել տալու սպառնալիք կը լսեր։ Պատրիարքարանը թաղման հրաման չէր կրնար տալ։ Քահանան ետ եկավ, տխուր, կորագլուխ։ Ըսավ, թե անհնար է թաղման հանդես կատարել, միայն թե ինքը կրցած է հրաման առնուլ, որ գերեզմանի վրա աղոթք ընէ։— Ի՞նչ կրնայինք ընել։

Ուշ ատեն, իրիկնամուտին, մին այն իրիկնամուտներեն, զորս Սաթենիկ այնքան կը սիրեր, մեռելակառքը դռան առաջ կայնեցավ, քահանան գաղտնի կերպով առանձին պիտի երթար։ Չորս մեռելաթաղներ եկան սնդուկը վար իջեցնելու։ Այդ միջոցին Չերազ ալ եկավ, իմաց տված էի։ Սնդուկը բանալ տվին։ Մահը կարծես ավելի գեղեցիկ ըրած էր Սաթենիկի դեմքը, քանի մը վայրկյան վրան նայեցանք, ինչքա՜ն հիշատակներ, ինչքա՜ն խորհրդածություններ ունեցանք այդ մի քանի վայրկյաններուն մեջ։ Կնոջ կյանքի պատկերներեն մին էր։

Մեռելակառքին ետևեն կ՚ընթանար միայն մեր կառքը։ Չերազ և ես մեջն էինք։ Կ՚անցնեինք այն ճամփաներեն, ուստից ամառն անցած էինք այնքան ուրախ, այնքան զվարթ, երթալու համար դեպի Զինճիրլի Գույու Վերջալույսին հետ հասանք Ֆերի-քեոյ։ Գերեզմանատան առջև իջանք կառքեն վար։ Երկար թափառեցանք այդ մեծ դաշտին մեջ, գերեզմանի տեղը գտնելու համար։ Հեռո՜ւ, շատ հեռո՜ւ կեդրոնեն, աչքե անտես անկյուն մը փորած էին փոսը։

Մթնշաղ իրիկուն մ՚էր։ Կանաչները նոր ծայր կուտային։ Գարնանային առաջին բուրումներն էին, հովը թեթև էր. խոր լռությունը կը տիրեր մահաբեր անհուն դաշտին ցան և ցիր խաչերուն, գերեզմաններուն վրա. գերեզմանափորի բրիչի ձայնը միայն կ՚ընդհատեր այդ լռությունը. ամեն ինչ տխրությամբ կը լեցներ մարդու սիրտը։ Քահանան ցած ձայնով, իբր թե վախենալով, կը մրմնջեր յուր աղոթքները։ Փոսն իջեցուցին Սաթենիկի մարմինը, մեկ-մեկ ափ հող նետեցինք։ Խաչի տեղ պսակ մը դրինք և ետ դարձանք։

Խե՜ղճ Սաթենիկ, կ՚ըսեի. ո՛րքան սիրուն, ո՛րքան ազնիվ, ո՛րքան դժբախտ։ Մի՞թե դիպվածի արդյունք եղան քու վշտերդ։ Ո՛չ, դու զոհ մը եղար մեր ընկերական կազմակերպության։ Որքաննե՜ր քեզ պես արդյոք լացին ու կուլան։

Դու զոհեցիր անձդ եղբորդ, ծնողացդ սիրուն. վսեմ էր քու գործդ և սակայն վսեմ գործ մը միայն վսեմ սրտերը կրնան ըմբռնել։ Այնչափ մեծ է անջրպետը ծնողացդ և քու դաստիարակությանդ միջև։ Ծնողքդ, եղբայրդ արհամարհեցին զքեզ ու դատապարտեցին. և ոչ իսկ գթություն ունեցան քեզ համար։ Երիտասարդ մը հափշտակեց սիրտդ— ո՞վ տերն է յուր սրտի—և սպանեց զքեզ բարոյապես և նյութապես. ընկերությունը դրվատեց զնա, դատապարտեց զքեզ, եկեղեցին օրհնեց զնա և դատապարտեց զքեզ, ո՛չ ուրեք գթության հանդիպեցար։ Եվ, սակայն, Աստված գթություն է։

ԽՐԱՋԻ ՄԸ ԳԻՆԸ

Ա

Ո՜վ Վոսփորդ իմ անուշ,
Վարդենյացդ ի թուփ,
Ի՜նչ ախորժ գեղգեղեն
Սիրողքն ու պլպուլք...

Ամռան աղվոր կիրակի իրիկուն մ՚էր, մին մոգական այն իրիկուններեն, զոր կ՚ընծայե Վոսփոր։ Քանի մը նավակներ մեղմիկ մեղմիկ կը սահեին հեզասահ գետակին վրա, որ ծածկված է Վոսփորի խորշերեն միույն մեջ։

— Յո՜ռկի, կամա՛ց, կամա՛ց,— կ՚ըսեր խարտյաշ պատանի մը յուր նավավարին։

Նավավարը քմծիծաղ մ'ունեցավ, հասկնալով, թե՝ պետք չէր անցնիլ այն մակույկեն, որ կ'ընթանար իրենց առաջեն։

Հարկ չենք տեսներ դիմել մանվածապատ դարձվածքներու, որպեսզի իմացնենք, թե այդ մակույկին մեջ աղջիկ մը կար։ Հրանտ, խարտյաշ պատանին, այն զմայլական դրից մեջ էր, հորում կը գտնվին ծերերն և զարգացեն նոր ելած պատանիք, երբ կը բռնվին սիրահարության տենչե կամ ախտե,— ինչպես որ կ'ուզեք։ Բայց մակույկի աղջիկն, ուրախ զվարթ, մտքեն իսկ չէր անցըներ սրտաշարժ դրից մեջ գտնվիլ. շնորհիվ այս անտարբերության, յուր ազդեցությունը մեծ եղավ Հրանտի վրա։ Անշուշտ դիտած եք, թե աղջիկներն որքան նվազ զգենուն արտասվաթոր ուսեններու կերպարանք, այնքան ավելի կ'ազդեն ակար սեռին—այսինքըն մեր խեղճ սեռին—վրա։

Հրանտ մեղավոր չէր այդքան զգացված լինելուն. բնությունն ալ հրավեր կը կարդար սրտերու՝ մի քիչ բանաստեղծական տրոփյուններ ունենալ։ Գեղազարդյալ էր Կեոք Սույի անուշ մեղմաղձությամբ, մեղամաղձություն վերջալույսի, որ սրտի մինչև խորերը կը ցոլացնե կենաց երազներս և պատրանաց հրապույրները։ Մակույկի մը մեջեն կը լսվեին երգեր։ Քաղցր ու դաշնակավոր ձայն մը կ'երգեր.

Ծթեր անդ կապուտակ,
Եվ ի Վոսփորին,
Մեղմահոս պլպլան
Խոպոպք յուսնեկին.

այն անուշ երաժշտությունն, որ կը բուրե գեղ, սեր, երիտասարդություն։

Օրորվելով ալյաց մրմունջեն, հայ-իտալական նվագեն, թափեցան մակույկներն ու նավակներն ի Վոսփոր, և հերձելով հոսանքները, ցան ու ցիր սփռեցան ամեն կողմ։

Մակույկն, ուր կը գտնվեր աղջիկը, կ'ուղղվեր դեպի Ենի-գյուղ։ Ավելորդ է ըսել, որ Հրանտի նավակն հեռուեն կը հետևեր նմա։ Սակայն աշխարհիս վրա ամեն ինչ սպառված մ'ունի։ Աղջկան մակույկին նավավարները ձգեցին իրենց թիակներն Ենի-գյուղ յալըի մ'առաջ, և նավակին մեջ գտնվողք դուրս ցատկեցին թեթև զվարթ, ինչպես պետք է լինին նոքա, որք կ'զբոսնում Վոսփորի վրա։ Հրանտ կը դիտեր. գիտեր, թե անողորքելի ճակատագիրն որոշված էր իրեն համար «Անդ կացցես և զլույս մի՛ տեսցես»։ Նավակն ետ դարձավ և սլացավ դեպի Ստորին Վոսփոր։ Հրանտի սիրտը գրավված էր այն տխրությամբ, որու վրա այնքան կը գուրգուրան բանաստեղծք։

Ֆրանսերենե թարգմանված վեպերը շատ կանուխեն կ՚ուսուցանեն, դպրոցի մեր տղայոց, կյանքը քաղցր ընծայելու և դառնացնելու միջոցներն։

Այդ վեպերեն ուսած էր Հրանտ, թե երիտասարդության կրնա հաջորդել ծերությունը և թե կենաց,— ինչպես կ՚ըսեն,— «գարնան» օրագիր մը այնքան ախորժելի է այդ ցուրտ օրերն որպես ծաղիկ մը պահպանված ջերմանոցի մեջ։ Երեք տարիներե ի վեր հորմե հետե Հրանտ ելած էր դպրոցեն, օրը օրին թուղթի վրա կը նետեր յուր տպավորություններն։ Իցե՜ թե հայ վիպասան մը որոներ այդ տեսակ օրագիրներ, գրված ուրախության ու պատրանաց արցունքներով, վկայք նոր սերունդի սրտի առաջին բաբախմանց։ Այդ կենդանի հիշատակարաններու բեկորներովը վիպասանը պարգևեր մեզ վեպ մը, որ կենդանություն բուրե և որ ցույց տա մեզ, թե նոր սերունդն ո՛րպիսի եռանդով, ինչքան հավատքով կը թևակոխե կենաց ասպարեզն, հավատալով, թե յուրն է ապագան, և օր մը, որ շատ չուշանար, կը տեսնե, թե մուխն ու ծուխը կը բարձրանան յուր հույսերու փլատակաց վրայեն։

Հրանտի հիշատակարանի մի քանի թերթեր, զոր տեսանք, այս մտածությունն ազդեցին մեզ։ Ահա այժմ այդ հիշատակարանեն քաղենք մի քանի տողեր.

«Հունիս 15.— Երեք տարիներե հետե գործի եմ. առաջին անգամն է, որ երկուշաբթի առավոտ մը աչքերս բացի ուրախ զվարթ։ Օդը զով էր և պայծառ. գեղեցիկ օդ մը միշտ ուրախության տպավորություններ կը թողու. սակայն երկու տարիներ են շատ տեսած էի գարնան առավոտներ, բայց այդ առավոտներու արևը չուներ ինձ համար որևէ քաղցրություն։ Ինչո՞ւ կ՚ապրիմ, կը հարցնեի ինքնիրեն։— Կ՚ապրիմ, որպեսզի նեղ խուցի մը մեջ, աթոռի մը վրա գամված մնամ ամեն օր։— Ինչո՞ւ սիրտ մը ունենալ, ինչո՞ւ երիտասարդ լինել։ Սակայն այս առավոտ մինչև իսկ մեր խանի բեռնակիրը զգաց, թե վրաս փոփոխություն մը կա։ «Աներ ըլլա, մուշու Հրանտ,— կ՚ըսեր,— ի՞նչ ունիս այս առտու»։ Բարի՛ Կարո, ի՞նչպես կրնաս գիտնալ, թե երեկ գիշերե ի վեր կյանքս նպատակ մը ունի։ Երեկ գիշերե ի վեր դեմք մը աչքերուս առաջն է։ Շատ անուշ է հիմա կյանքս, ամեն ոք կարծես սիրել կ՚ուզեմ, նույնիսկ չարպաճիս: Այլևս բեռ մը չէ ինձ օրվան տասը ժամերու աշխատանքն. այդ տասը ժամերն ի՜նչպես շուտ անցան այսօր, պետք է աշխատիմ, անով միայն

պիտի կրնամ նպատակիս հասնիլ, և պիտի հասնիմ։ Բայց հինգ օր կը բաժնեն զիս կիրակիէս։ Հինգ օ՜ր դեռ, որպեսզի հնար լինի ինձ թռիլ Նէի-գյուղ»։

Գ

Սոֆի, առ Երանիկ

Նէի-գյուղ, հուլիս 21

Սիրելի Երանիկս.

Մեկ ու կես ամիս է գրեթե Նէի-գյուղ ենք և քեզմե լուր չունինք։ Չեմ գիտեր, թե ինչպես ժամանակ կ՚անցնես Բռոթիի ձկնորսներուդ հետ։ Մենք բավական կ՚զբոսնունք և դժգոհ չեմ։ Սենյակս պարտեզին վրա է. թռչուններուն դայլայլիկը կ՚արթնցնե զիս առտուները։ Նախաճաշիկ-նիս կ՚ընենք դալարիներու վրա, ծառերու շուքին ներքև։

Սակայն դու ալ ինձ պես գիտես, թե տասն և յոթն տարեկան աղջըկան մը համար միայն արևու ճառագայթները և թռչնոց դայլայլիկները վայելել, սրտնեղություն է։ Մեր սրտին մեջ բան մը կ՚զգանք, զոր բացատրել չենք կարող։

Դրացիներ ունինք, չեմ գիտեր Պոլսո ո՛ր կողմեն եկած են (կ՚ըսեն թե կիները հետաքրքրության անձնավորությունն են, բայց ահա և ոչ իսկ գիտեմ, թե մեր դրացիներն ո՛ր տեղացի են)։ Ուսկից ալ եկած լինին, խանում կը հոտին։ Հորս լավ բարեկամներն են և Թուղթի ընկերակիցներն։ Երեք եղբայրներ են. միջնակն՝ Հակոբիկ աղան, որ միշտ իբր պատվանշանի մը շքազարդը կուրծքին վրա կը կրե ժամացույցին ոսկի շղթան, կը կարծե, թե ո՛չ ոք յուր հրապույրին առաջ կրնա դիմանալ, և առիթ չփախցներ ինձ complimentներ ընելու, որք քիչ շատ պաղուկ են։ Կը հետևցնեմ, թե իմ սիրովս կը տոչորի. հայրս ալ գեշ աչոք չի նայիր։ Երիտասարդ է, կամ որ լավագույն է, հարուստ է, ահա ինչ որ հորս պետք է։ Ստույգ չեմ գիտեր, թե արդյոք մենք ալ այսքանով գոհ չե՞նք լինիր։

Սակայն, Երանիկ, բախտս բաց է, մի խնդար ըսելիքիս վրա։ Սիրահարներ կը տեղան գլխուս. թե կ՚ուզես քեզ ալ ղրկեմ։ Ահա չորս հինգ կիրակի է խարտյաշ երիտասարդ մը անվրեպ ամեն առավոտ առաջին շոգենավով Նէի-գյուղ կուգա։ Շոգենավուն մեջեն փոքրիկ հայեկով մը շարունակ մեր պատուհանը կը նայի, ձևացնելով, թե չորս կողմը կը դիտե։ Շոգենավեն կ՚ելնե և նավամատույցը կը նստի. երբ ցերեկե վերջ

զբոսնելու երթանք, քիչ մը վերջը մեր տունէն է։ Շատ զգույշ է, և հայրս ոչինչ կ՚իմանա. սակայն Հակոբիկ աղան բավական վարպետ է, ամուսինէ ավելի կասկածոտ։ Այդ երիտասարդին Կեռք-Սույի հանդիպեցա եկած կիրակինիս։

Շիտակն ըսեմ, հարյուր Հակոբիկ աղայի չեմ փոխեր։ Աղվորիկ է, սիրուն է, դեղին է, և գիտես, թե սև մազեր ունենալով խարտյաշները կը սիրեմ։ Վրան գլուխը լավ, մաքուր, և վերջին նորաձևությամբ։ Ազնվական կերպարանք ունի։ Յուր շարժմանց մեջ...մի քիչ անվարժ է, բայց մի՞թե այդ ալ չծառայեր անձնասիրությունս գոհացնելու. ո՞չ ապաքեն ճշմարիտ սիրահարները փոքր ինչ ապուշի կը նմանին։ Թե լավ համոզված լինեի անոր վիճակին վրա, արդարև չէի վարաներ, բայց... Պիտի ըսես, թե ո՜րչափ դրական եղած եմ, սակայն զքեզ ալ կը ճանչնամ, զքեզ ալ։ Շրջազգեստի մը հարցը դու ինձմե ավելի գիտես։

Մնաս բարով, սիրելի Երանիկս, նամակս պատռե. եթե տգեղ սեռեն մեկուն ձեռքն իյնա, վա՜յ մեզ. կ՚սպասեմ նամակիդ, համբուրելով զքեզ։

Քույդ

Սոֆի

Դ

Երանիկ, առ Սոֆի

Բոռթի, 4 օգոստոս

Սիրելի Սոֆիս.

Վտանգի մեջ ես, մեր դպրոցի հերետիկոսը պիտի լինես, սրտի որպիսի՜ հուզմամբ կը խոսիս երիտասարդիդ համար. որպիսի՜ հեգնություն ունիս հարուստ սիրահարիդ։ Իմ կարծիքս գիտես, հավատքս գիտես. այն ամուսինն է լավագույնը, որ ամենեն ավելի ճոխ շրջազգեստ մը կարող է տալ. «Գեշ շրջազգեստի մը մեջ երջանիկ կին չկա»։ Այս է և այս պետք է լինի մեր մտատիպարը։ Բայց դու արդեն սկսած ես մոռնալ դպրոցի մեր ավանդությունները։ Այնպես գուրգուրանք կը տածես խարտյաշ երիտասարդիդ համար, իբր թե ծեր աղջիկ մը եղած լինեիր արդեն։ Այո՜, քեզ պետք է քերովբե մը, ինչպես կը նկարեն պատկերահանք, և որս, ինչպես կ՚ըսեն բանաստեղծք, ոսկեթույր մազերը խառնվին խոպոպիկներուդ։ Այո՜, Սոֆիկ, անսա՜ պատկերահաններու և բանաստեղծներու, ու օր մը եկուր բանավե Բոռթի։

Ծիծաղս չկրցի բռնել քու ազնվականիդ վրա, որ միայն կիրակի օրերը կրնա գալ յուր սրտին գանձերը քեզ բանալու։ Ո՞վ գիտե, քանի օր անոթի կը մնա, որպեսզի կարող լինի շոգենավին ստակը պատ-րաստել։ Ի՛նչէ, բարեմաղթությունները կ՚ընեմ։ Մանոն Լեսքոյի՛ հայե-րեն տպագրությունը կը լինի՞։ Ուրիշ անեն երկար կը գրեմ. առայժմ ընդունիր բարևներս և համբույրներս։

Քույդ

Երանիկ

Հ. Գ. —Կը զարմանամ, թե ինչո՞ւ այսքան կը հակառակիմ խարտ-յաշ քերովբեիդ. լավ չը՞լլար, որ զայն քեզ պահես և խանութ նստող Հակոբիկ աղադ ալ բարեկամուհվույդ։

Ե

Խաչեն վերջ, աշնան առջի հովերուն հետ Սոֆիի հայրն ա՛լ չուզեց Ենի-գյուղ նստիլ, գործը չէր ներեր երկար ատեն շոգենավներու մեջ կենալ, ուստի շուտ վերադարձավ Բերա։ Երանիկ ամբողջ ձմեռը Բոռթի պիտի անցըներ, մորն հիվանդության պատճառավ։ Հրանտ կը շարունա-կեր չարաչար աշխատիլ։ Գիշերներու մեծ մասը կը զոհեր մի քանի լե-զուներ ուսանելու. սերն ու հույսը կը դյուրացնեն ամեն աշխատանք։ Հրանտ մեծ հույսեր ուներ, թե՝ շնորհիվ յուր աշխատության, կարող կը լիներ լավագույն գործի մը ձեռնարկել և հասնիլ յուր նպատակին։ Սակայն այս չարաչար աշխատությունը, սրտին հուզումը, դրամական նեղությունը, զանազան հոգեր բավական կը խանգարեին յուր առողջու-թյունը, որ արդեն շատ փափուկ էր։

Այս միջոցին էր, որ սեպտ. 25-ի ուրբաթ գիշերն, Հրանտի չորպա-ճին Գևորգ աղա ըստ սովորության երեկույթ մը կազմակերպեց յուր տոնախմբության առթիվ։ Հրանտ, որ չէր ուզեր գիշեր մը պարապ ան-ցընել, պարտավոր էր ներկա գտնվիլ յուր աղային տոնախմբության տա-րեդարձին, մանավանդ, որ երեկույթին առթիվ հյուրամեծարի պաշտոն տրված էր իրեն։

Երեկույթը, որ եղանակի առաջին երեկույթն էր, շատ գեղեցիկ լի-նիլ կը խոստանար։ Կես գիշերեն երկու ժամ առաջ հոծ բազմություն մը արդեն գրաված էր Գևորգ աղայի սրահներն, որք ի Բերա լավ համբավ կը վայելեն։

Հրանտ սանդուղներեն վար իջած էր, պաշտոնակցաց հետ միասին,

ընդ առաջ գնալ նոր հյուրերու, երբ հանկարծ սկսավ ամբողջ մարմնովը դողալ, գունաթափ եղած կ'ուզեր սյունի մը կռթնիլ։

Մեր կենաց մեջ կան այնպիսի վայրկյաններ, որում կարծես կը մոռնանք ամեն իրականություն։ Արտերնիս լեցված հանկարծական ուրախությամբ, կ'ունենանք այն տպավորությունները, ինչ որ պետք էր ունենայինք, եթե գտնվեինք խորին վշտի մը ազդեցության ներքև։ Երբեմն կարծես թե խտրություն չկա հուզման մեջ, թե նա լինի տրտմության հուզում։ Սոֆի կռթնած յուր հորը թևին, շքեղ հագված, ներս կը մտներ։ Արվեստն ավելի դյութական կ'ընծայեր նորա դեմքն։ Աղջիկն ինքն ալ փոքր ինչ այլագունեցավ, և անդ գտնվող իրեն ծանոթ հյուրամեծարներեն միույն թևը մտնելով, սանդուղների վեր ելավ։ Հրանտ հուշիկհուշիկ ետևեն կ'երթար։ Խեղճ տղուն սիրտը կտոր-կտոր եղավ, երբ տեսավ յուր անծանոթ նախանձորդն, Հակոբիկ աղան, ուրախ զվարթ խոսակցության մեջ Սոֆիի հետ։ Փոխադարձ զգացումներն ինչ ալ լինին, գյուղագնացության մեջ դրացիք ընտանության կապերով կապված կը մնան. Հակոբիկ աղա ընտանեբար կը խոսեր Սոֆիի հետ։ Հրանտ անոնց բոլորը ժուռ կուգար։ Պարերը միմյանց կը հաջորդեին, ամեն շիք երիտասարդները կը պարեին Սոֆիի հետ։ Ամեն մեկ պար երբ կ'սկսեր, Հրանտ միտքը կը դներ հանգստյան միջոցին առիթ մը գտնել Սոֆիի ներկայանալու։ Բայց շարունակ հաջորդին կ'սպասեր։ Երկյուղալից վարանոտ սերը ահ մը կ'ազդեր իրեն։ Հակոբիկ աղան, թեպետ շարշըն մեծցած, բայց և այնպես սիրո խնդիրներու մեջ հոտառություն ուներ. վաղուց զգացած էր, թե Հրանտ յուր մրցակիցն էր։ Խորհեցավ, թե գաոն հեգնություն մը կրնար օգտակար լինիլ։ Սոֆիի հետ վալսե մը վերջ, նկատեց, որ Հրանտ վերստին կը դեգերեր իրենց չորս կողմը, խոսակցության մը բռնված յուր չորպաճիեն քիչ հեռու։ Հակոբիկ աղա, թուրքերեն լեզվով, բան մը խնդրեց Գևորգ էֆենտիեն և նա, «Պարոն Հրանտ» կանչելով, հանձնարարեց հոգալ այդ պետքը։

Պարոն Հրանտ, ածական մը, որ որչափ ալ հայացած լինի, տակավին գեշ կը հնչե մեր ազնվական լսելյաց։ Ո՞վ պիտի կրնա պատմել «պարոն» ածականի ազդած զայրույթներն, պատճառած վշտերն նույնիսկ անոնց, որք կը պանծան ժողովրդական լինիլ։ Ավելորդ է ըսել, որ յուր «քերովբեն» պարոն լսելով, Սոֆի վիրավորյալ էր յուր անձնասիրության մեջ։ Որոշ չենք գիտեր, թե կնոջ մը սերը քանի տեսակ տարրերներե կը բաղկանա, սակայն սրտի տարրալուծները մինչև ցարդ գտած են, թե փառասիրությունը ամենաստվար քանակությամբ խառնված է այն բազմակնճիռն բաղադրության մեջ, զոր կանայք սեր կ'անվանեն։

Երբ Հրանտ իրեն տրված պատվերը կատարելով բարկությամբ վե-

րադարձավ յուր առաջին տեղը, թէպէտ կ՚ուզեր հեռու մնալ, բայց զո-րություն մը զինքը անդ կը մղեր, լսեց, թե խոսքն իր վրա էր։

— Ո՞վ է այս տղան,— կը հարցներ Սոֆի անտարբեր կերպով։

— Գեորգ էֆենտիի գրագիրն է,— պատասխանեց Հակոբիկ աղա։

Իբր մահվան ղողանջ հնչեցին Հրանտի լսելյաց Հակոբիկ աղայի և Սոֆիի խոսքերն, և երբ սկսավ դեգերիլ վերստին պարողաց շուրջը, Սոֆի կ՚ըսեր Հակոբիկ աղայի.

— Քիչ մը ճեմենք։

Եվ առանց ակնարկ մ՚իսկ տալու խեղճ պատանվույն, հեռացան թև թևի մտած։

Հեռացան, և ամեն ոսկեգույն երազներ աներևութացան Հրանտի աչքերեն։

Ծաղրը թրթուր մ՚է, որ սիրո նորածիլ կանաչ տերևները շատ շուտ կը դարձնե աշնան գոս տերևներու. Երանիկի խոսքերը ցուրտ կերպարանոք կը ներկայանային Սոֆիի աչքերուն. պարոնի մը, պարզ, ոչինչ գրագիրի մը կի՞ն լինիլ, այդ յուր երևակայության մեջ չէր կրնար սղմիլ։ «Մանոն Լեսքո», ահա ահռելի բացատրությունը։ Երբ ծաղրը կը հսկե արթուն, առ ի՞նչ օգուտ գեղ, երիտասարդություն, սիրտ։ Սոֆի միշտ Հակոբիկ աղայի թևն էր։

Հրանտը ապշած գամված էր յուր տեղն. ոչինչ կը լսեր. ոչինչ կը տեսներ. մտածել իսկ կարող չէր։ Մնաք բարով հույս, սեր, եռանդ. ածական մը բավական եղավ այդ ամենն սպաննելու։ Հրանտ չէր կրնար այլևս կենալ. հեռացավ։

Լույսը նոր սկսած էր ճեղքվիլ, Բերա դեռ խոր լռության մեջ կը ննջեր։ Հրանտի գլուխը կրակի մեջ էր. կամաց-կամաց քալելով կ՚ուղղեր գնացքն ի Բանկալթի։ Օդը շատ ցուրտ էր, խեղճ տղան կը դողար։ Արդեն արյուն քրտինքի մեջ էր, երբ դուրս ելավ սրահեն. յուր հուզման մեջ մոռցավ կրկնազգեստն իսկ առնել։ Տուն մտավ, ցուրտը մինչև ոսկորները թափանցած. ինկավ անկողին և հազիվ կրցավ մի քիչ մրափել։

Զ

Ո՞վ կը կարծեր, կ՚ըսե բանաստեղծ մը, թե մի քանի ողկույզներ ճզմվելով կրնան արտադրել ջուր մը, որ պահ մը երջանկություն կը պարգևե մարդուս, վայրկյան մը մոռցնել տալով վիշտը։ Այդ գերագույն դարմանին կը դիմեր Հրանտ, երբ հուսաբեկ, գլուխը կախ, սեպտ. 26-ի շաբաթ երեկոյին կը վերադառնար յուր աշխատության տեղեն։ Ամբողջ

օրը շվարած անցուցած էր։ Եթե ուներ սփոփանք մը, այն ալ Գևորգ աղայի բացակայությունն էր։ Մինչև առավոտ անքուն մնացած լինելով, կարող չէր եղած գալ։ Համրաքայլ Հրանտ անցավ Ղալաթիա։ Կամուրջին աջ կողմն առաջին փողոցը շարված կը մնան այն գինետունները, զորս մենք քաղցր հնչելով կը կոչենք սրճարան։ Անդ խռնված են նավաստին, քեֆալոնիացին, նավապետը, քսակահատը, ցորենի վաճառականը, ամենքն օտարազգի։ Սիկարի մուխը պատած է ամեն կողմ։ Պատուհանները ծածկված են գոլորշիներով։ Հրանտ ներս մտավ այդ գինետուններեն մին. ապահով էր, թե ծանոթ դեմք մը պիտի չհանդիպեր. լռության մեջ ինքզինքն յուր խոհերուն կուտար։ Գնաց ինկավ անկյուն մը։ Հույն սպասավորին բարձրագոչ հրամայեց.

— Միա մասթիքա (օղի մը)։

Քանի մը վայրկյան վերջ օղիի սրվակները կը հաջորդեին միմյանց։

Խե՜ղճ Հրանտ, սիրուն հույսերուդ մեջ, երբ կը ժպտեր քեզ գեղածիծաղ ապագան, կրնայի՞ր երկու օր առաջ երևակայել, թե քիչ վերջն այդ հույսերդ պիտի կեդրոնանան սրվակի մը վրա, և թե գեղածիծաղ ապագան միայն անծանոթ դեմքերը պիտի համարիս։ «Զմէ՞ կեանք, զմէ՞ սէր»։

Մթացած էր. կրպակները կը պարպվեին, առկայծ լույսերը կը պլպլային Ղալաթիա. մանրացնցուղ անձրև կ'իջներ։ Հրանտ վճարեց և դուրս ելավ, չէր կարող ոտքի կենալ. տուները կը դառնային շուրջը։ Ստակ չուներ այլևս. կառք մը չէր կրնար վարձել։ Մերթ կանգ առնելով, մերթ գլուխը պատին տալով, երերալով, տատանվելով կ'երթար ու կ'երթար, անհատնում ճանապարհ։ Անձրևը շատցած էր։ Երկու ժամ վերջ տուն հասավ շատ թրջած, խեղճ մայրն ու տնակիցները սրտադողի մեջ էին։ Հանվեցուցին զինքն, մայրը լալով զինքը անկողին դրավ։

Քնացի՛ր, խեղճ Հրանտս, քնացի՛ր երջանկությանդ վերջին րոպեն է. վշտաբեկ ես, բայց դեռ կարող արբենալ ու քնանալ, ի՞նչպես պիտի ծագի վաղն արևը, ի՞նչ վիճակի մեջ պիտի գտնե զքեզ։

Ծագեցավ շատ պայծառ այդ արևն, այլ Հրանտ կարող չէր անկողնեն դուրս ելնել։ Հիվանդ էր, բայց չէր կրնար բժիշկ մը բերել։

Է

Իրիկվան դեմ է. աշունը մի քանի օրեն կը վերջանա. օդը մեղմ է. թեթև հով մը կա։ Կ'իյնան ծառերու դալկահար տերևները. դեղին է ամենուրեք. դեղնած արևմուտքը, դեղնած ծառերը, դեղնած բլուրները. հովը կը տանի կը բերե, պատուհաններու կը զարնե դեղնած տերևներն։

Ամբողջ Պերա գրոսանք կը վայելէ։ Վերմակ մը ոտքերուն վրա, մուշտակ մը հագած, գլուխը բարձի մը հանգչեցուցած, պատուհանէն կը նայի Հրանտ։ Փոս եղած են գանկոսկրները. շա՛տ նրբացած, շա՛տ բարակցած մատները, դէմքը բոլորովին դեղնած, միայն երկու այտերուն վրա կարմրութիւն կա. կը հազա, կը հազայ։ Քովն է մայրը, խեղճ մայրը և դրացի երկու ծերունի կիներ. կը խօսին թաղին լուրերուն վրայ։ Անկարելի էր, որ սիրտ մը կտոր-կտոր չըլլար մօրը նայուածքէն։ Երբեմն զավկին ձեռքերէն կը բռնէր, վերմակին մէկ ծայրը վրան կը ձգէր, հազար գուրգուրանքներու պատասխան, մօրը սիրուն հագիւ ժպիտ մը կը նշմարուի Հրանտի երեսին վրայ։ Կյանքն է՛ն հուսահատ վայրկյանի մեջ մեր սիրտը կարոտ է մխիթարանաց. մօրը սերը գերագույն սփոփանքն էր Հրանտի ցավոց։

Որքա՜ն հիշատակներ կը պաշարեին Հրանտի խեղճ մօրը սիրտը։ Աչքին առաջ կուգար այն կիրակին, հուլիսի այն տաք կիրակին, երբ կը վերադառնար պարգևաբաշխության հանդեսեն, Հրանտը քովիկեն։

Հե՜գ կինը, դեռ երեկվա պես կը հիշեր տասն և ութը տարիներու վշտերն ու ուրախությունները։ Կարծես թե երեկ էր տասն և ութը տարի առաջ խաչվերացի շաբաթ իրիկունը։ Այդ օրը Հրանտ դեռ մեկ տարվան էր. ինքը տունը սրբած, մաքրած կը պատրաստեր նավակատիքի իրիկվան ընթրիքն, երբ դուռը զարկին։ Աչքին առաջն էր այդ վայրկյանը, էրիկը, խեղճ Ստեփանը, արյունաթաթավ պատգարակի մը մեջ. տարաբախտ որմնադիրը բարձր շենքե մը գլորած ինկած էր և գլուխը ջախջախած։ Մարիամ (Հրանտի մայրը) երիտասարդ-երիտասարդ, անոք անօգնական, իր մեկ հատիկ տղովը այրի կը մնար։

Միայն աստված գիտե, թե ի՜նչ նեղություններով տղան մեծցուց, դպրոց տվավ։ Ի՜նչ օր էր այն օրն, երբ տղան, գրքերով բեռնավորված, իրեն հետ կը վերադառնար պարգևաբաշխության հանդեսեն, ուսման ընթացքն ավարտած։ Բարեկամ կիներ, զինքը շրջապատած։

— «Աչքդ լույս, Մարիամ տուտու, աչքդ լույս,— կ'ըսեին,— ալ նեղություն չըմնիս. ամեն բան պիտի մոռնաս, տղադ եկավ քեզ հասավ։ Աստված մարդուս սատնկ բարի զավակ տա»։

Որքա՜ն ուրախ էր, որքա՜ն գոհ այդ օրն։ Իսկ այժմ իր Հրանտիկը, իր հույսն ու սերը ի՜նչ վիճակի մեջ էր։

Դուրս ելավ, արցունքները սրբեց ու ներս մտավ։

Ը

Հրանտ գլուխը բարձին դրած, կարծես վերացած կը մտածէ։ Ի՞նչ եղավ իր երազը։ Մտքովը կը թռչեր Հունիսի կիրակին, Կեօք Սույի էր, կը տեսներ Սոֆին, և հետո ինչե՞ր անցան այդ օրեն ի վեր։ Ա՜հ, աղջկան մը սերն ուզեց վայելել. երազ մ'էր, բայց կյանքն էր ահա, որ այդ երազին գինը կը լիներ։

Հանկարծ կը ջանա ելնել նստիլ, մայրը չորս կողմերեն կը բռնե, տխուր ժպիտ մը կը ծածանի Հրանտի երեսներուն վրա. կ'ուզե պատուհանը բանալ։

— Չէ՛, զավակս, չէ՛, որդիս, մի՛ բանար, ցուրտ է,— կը պաղատի մայրը։

Բա՜ց պատուհանը, խեղճ մայր, բաց պատուհանը, չե՞ս գիտեր, թե վշտաց վայրկյաններու մեջ քաղցր հիշատակներ պահ մը կենդանություն կը շնորհեն ցաված սրտին։ Կիթառի մը ձայնն է, որ կը լսվի. կույր կինն է, որ կ'անցնի։ Աղքատ կինը փողոցները ման գալով իր կիսավեր քնարովը կ'երգե.

Եթեր անդ կապուտակ
Եվ ի Վոսփորին
Մեղմահոս պլպլան
Խոպոպք լուսնեկին։

Հրանտ այլայլած է։ Ո՞վ չէ զգացած այն տրոփյունը, որ ձայնի մը, երգի մը հիշատակը կ'ազդե մեր սրտերուն, երբ մի քանի շեշտեր իրենց թևերուն վրա առած մեր հոգիները՝ կը թռչկոտեցնեն զմեզ մանկության, պատանեկության, սիրո և բերկրանաց օրերու մեջ։ Այդ երգը կը հնչեր սրտին խորը, թունդ կը հաներ հոգին։

— Մայրիկ, քանի մը փարա տուր,— ըսավ։

Կիթառին ձայնն հեռուեն կուգար այլևս, բայց Սոֆիի դեմքն ավելի պայծառ կը պատկերանար Հրանտի աչքերուն։ Ա՜խ, վայրկյան մը թե նշմարեր Սոֆիի երեսն, թե կարենար րոպե մը գրկացը մեջ սեղմել զնա, թե կարենար վայրկյան մը շնչել նորա շունչը, ի՜նչպես շուտ պիտի կենդանանար։

Գնաց կույրը, հեռացավ ձայնը բոլորովին, բայց թողուց յուր հետքը, ինչպես անուշ բույրում մը բյուրեղին մեջ։

Թ,

Հաջորդ օրն ավելի խոնջ էր Հրանտ. գիշերն անուշ երազներ զինքը օրորած էին. միշտ Սոֆիի հետն էր։ Նախորդ օրերեն ավելի տկար վիճակ ուներ։ Բարեկամներեն մին, շաբաթվան թերթերու հավաքածո մը կը ղրկեր իրեն։ Նույն օրն ալ սկսավ քիչ մը թերթերու վրա նայիլ։ Մեկեն ի մեկ ձեռքերը դողացին. գլուխը բարձին մեկ անկյունը դրավ և կը հեծկլտար։ Մայրը աճով դողով ներս եկավ։ Հրանտ միշտ կուլար։ Լրագիրներեն միույն մեջ «Ազգային» բաժնույն ներքև կարդացած էր.

— Երեկ ի Պատրիարքարան շքեղ հանդես մը կատարվեցավ, ի ներկայության բազմաթիվ պատվավոր ազգայնոց։ Մեծահամբավ և ազգասեր վաճառական մեծապատիվ Հակոբիկ էֆենտի ...յանի նշանտվության հանդեսն էր ընդ համեստափայլ օրիորդ Սոֆի ...յանի։

Ժ

1881 տարվո դեկտ. 13-ի կիրակին թեպետ անձրև չկար, բայց տխուր մելամաղձիկ օր մ՚էր։ Բավական է, որ անձրև չըլլա, Բերա չէ կարող հանդարտ կենալ, փողոցները լի են բազմությամբ։ Կես օրեն երկու ժամ վերջ Մասեի կառքերը մեծ փողոցին վրա կարծես կը կազմեին կառախումբ մը։ Կառքերու կանոնավորությունը, կառավարներու մաքուր զգեստներն ու ճերմակ ձեռնոցներն ենթադրել կուտային, թե պատրաստված են մի փառավոր հարսանյաց համար։ Եվ այսպես էր. առանց շատ հետաքրքիր լինելու, կարելի էր նմշարել այդ կառքերեն միույն մեջ գեղեցիկ աղջիկ մը հարսի զգեստներով։ Կառքերը Թագսիմի պողոտայեն կ՚ընթանային Բանկալթի, ուրկե հավանորեն պիտի իջնեին Վոսփորի գյուղերեն մին։ Ավելորդ է ըսել, թե հարսնառներու դեմքերը զվարթ էին. անհամբեր կ՚երևեին հարսն ու փեսան, որք կ՚ուզեին վայրկյան մը առաջ հասնիլ։ Բայց պատշաճության կանոններն եթե գոյություն չունենային, հավանորեն ավելի հանգիստ կը լինեինք։ Հարսնառներու կառքերն հանկարծ կանգ առին։ Բանկալթիի փոքրիկ տունե մը ժամկոչ մը, մի քանի տիրացուներ, երկու տերտեր դուրս կը հանեին դագաղ մը, պետք էր տեղի տալ։ Հարս և փեսա իրենց կառքերու ապակիներեն նայեցան. խեղճուկ ձայն մը կը լսվեր.

— Վա՜խ, Հրանտս, վա՜խ, զավակս։

Հրանտի դագաղը կը տանեին. Սոֆիի հարսանյաց կառքերն էին։

ԿԱՏԱԿ ՄԸ

Ա

1879-ի ձմռան այն ձմեռներեն էր, որ մեր լեզվով «կարեձմեռն» կը կոչվեր։ Մի քանի տարիներե հետե Պոլիս չէր տեսած այսպիսի ձյունազարդ եղանակ մը։

Սակայն ձմռան հովերն որքան ալ դառնաշունչ փչեն, բայց և այնպես ձմեռն ախորժելի եղանակ է անոնց համար, որոնց տուներու մեջ մահ չէ պատահած նույն տարին, և որք կարող են կրակին մոտ անցընել իրենց գիշերվան ժամերն առանց մեծ հոգերու։

Այդ մենաշնորհյալ դասուն պատկանելու բախտն ուներ երբեմն ձկնորս Նիկողոս աղբարը, որ կը բնակեր Սամաթիա, Նարլը-Գաբու։

Ավանդությունը կը պահանջե երանի կարդալ երկրագործներուն, բայց չենք կարծեր, որ հրապույրե զուրկ լինի կենցաղ մը, որ կը սնանի ծովու օդով։ Նիկողոս աղբար շատ տարիներ երջանիկ ապրեցավ—որքան այս բառն իրականության մեջ կրնա գործնական լինիլ։— Մանչ զավակ մը ուներ և աղջիկ մը։ Մեր պատմելիք դեպքին տեղի ունենալեն մի քանի տարի առաջ. ձկնորսին մանչ զավակը, արդեն տասնևինը տարեկան, յուր հոր աջ բազուկը կը համարվեր։ Երբ տղան ամեն գործոց լավ հմուտ եղավ, Նիկողոս աղբար նավակն ու ուռկանը հանձնեց զավկին, և գոհանալով վերին հսկողությամբ, կ'ապրեր ինչպես կ'ապրին գործե քաշված հարուստ վաճառականք։

79-ի ձմեռեն մի քանի տարի առաջ, ձկնորսն ունեցավ յուր առաջին դժբախտությունը։ Կինը մեռավ։ Աղեկ կին մ'էր, ժրաջան և աշխատասեր։ Թեպետ զավակը կը հոգար ամեն պետքերը, բայց և այնպես մորը սիրտն անհանգիստ էր։ Կ'աշխատեր, որպեսզի յուր կողմեն նպաստե զավկին մի քիչ խնայողություն ընելու և այնու կարելի ընծայե յուր մայրենի ըղձից իրագործումը։ Իշխանուհի թե աղքատ, մոր մը իղձը միշտ նույնն է, ամուսնացնել զավակը։ Առ այս կետ նպատակի կը նկրտեր բարի կնոջ բոլոր գործունեությունը։ Բայց բախտ չունեցավ տեսնել յուր փափագին կատարվիլը։ Օր մը աշխատութենե երբ վերադարձավ—կ'երևի թե պաղ առած էր,— անկողին մտավ և ալ չելավ։ Երբ կինը թաղեցին, Նիկողոս աղբար շատ լացավ։ Սակայն մեռնողի մը վրա որքան ալ շատ ցավինք, բայց և այնպես եթե անձնասպանության որոշում չենք տար, իհարկե կը սրբենք մեր արցունքներն և կ'սկսինք մտածել, թե ի՞նչպես ապրինք, որ կյանքը դարձյալ քաղցր լինի մեզ։ Այս բնական օրինաց հետևեցավ Նիկողոս աղբար ևս։

Աղջիկը, Մաքրուհին, հազիվ տասը տարեկան էր և կարող չէր տանտիկին լինիլ. ուրեմն պետք էր, որ ձկնորսը մանչը կարգեր։ Աղեկուկ բարի հարս մ'առավ, մին այն աղջիկներեն, որք կամուրջին Պոլսո կողմը շատ կը գտնվին, մաքուր օդ կը ծծեն, քաջառողջ են և իրենց կարմըրափայլ երեսներն օժտյալ ամոթագեղ գեղեցկությամբ։

Ուրախությունը վերադարձած էր տան մեջ։ Նիկողոս աղբար հինգ տարեկանե ի վեր թոռ մ'ալ ուներ։ Յուր Պետիկին ձեռքեն բռնած, կամ զնա ավջևը ձգած, դուրս կ'ելներ, առտու իրիկուն եկեղեցի կ'երթար, ծովեզերք կ'իջներ յուր հարգելի պաշտոնակցաց հետ նարտ կը խաղար. թոռնիկն ալ յուր հասակակցաց հետ ծովուն խիճերովը կ'զբոսնուր։

Նիկողոս աղբար շատ կը սիրեր Պետիկը և չէր ուզեր զնա դպրոց դնել։— Տասը տարեկան ըլլա, կ'ըսեր, և այնուհետև դպրոց կը դնեմ։— Բայց չեմ կարծեր թե Պետիկը այսօր Նարլը-Գաբուի վարժարանը գտնվի։ 1884 տարվո սեպտեմբերի սկիզբներն, երբ ս. Փրկչի Հիվանդանոցը այցելություն մը տալու առթիվ Նարլը-Գաբուեն անցա, Պետիկին համար հարցուցի. փնտրեցի, բայց պ. Մարգար Լուսաբերյան, դպրոցին ուսուցիչ, պատասխանեց, թե յուր աշակերտաց մեջ այդպիսի տղա չկար։

Ուրեմն շատ հավանական է, որ ձկնորսը երբեք դպրոց ղրկած չըլլա իր թոռն։ Այս պակասության համար չեմ ուզեր ծերունին մեղադրել, վասնզի յուր տեսությունները շատ կը հակառակեին մեր արդի գաղափարաց, բայց անշուշտ ձկնորսն յուր գաղափարաց համեմատ պիտի մեծցներ յուր թոռը և ոչ թե մեր փափագանաց պիտի անսար։

Եվ հետո, կարող չեմ որոշապես ըսել, թե ի՞նքն իրավունք ուներ, թե՞ մենք։

Առանց քաշվելու, ամեն տեղ կ'ըսեր, թե «թոռը կարդալ գրել սորվելով ինչ պիտի ընե»։ Խեղճ մարդը կարող չէր ըմբռնել թե (ըստ իրեն անշուշտ) ինչ հարկ կար յուր թոռը, երբ մեծնար, տանիլ նստեցնել մութ խոնավ սենեկի մը մեջ, որպեսզի հացի մը ստակ հանե։ Մի՞թե այդքան ստակ չէր կրնար վաստկիլ ծովու վրա հանգիստ, ազատ ապրելով, մեծնալով։ «Տեսնենք գործ մ'ալ պիտի կրնա՞ գտնել»։ Շատ պախարակելի չէ տգետ ձկնորսը։ Ամեն օր իր թաղին մեջ կը տեսներ շատ պատանիներ, որք թեպետ դպրոց հաճախած էին, մի քանի լեզուներ գիտեին, բայց և այնպես փողոցները թափառական կը շրջեին, նիհար, տժգույն, խեղճ վիճակի մեջ։

— Փա՜ռք աստծո,— կ'ըսեր,— տղաս ասոնց պես չէ, ողջ առողջ է, յուր հացն ալ կը ճարե, տունն ալ վարդի պես կը պահե. կարգվեցավ, աստված թոռ մ'ալ պարգևեց ինձ։ Տղուս տարիքն ունեցողներեն նայինք

քանինե՞րը կրցած են կարդալ։ Եթե տղաս դպրոց ղրկեի, այսքանն ալ ձեռքս պիտի չանցներ։

Ինչպես կը տեսնվի, այս մարդը շատ համառ էր, գլուխը հաստ, և չէր կրնար ըմբռնել դաստիարակության բարիքները. հետևաբար զարմանալի չթվիր, որ 1879-ին, թոռանը ձեռքեն բռնած, կ'զբոսնուր Սամաթիո ծովեզերքը։

Սակայն ձկնորսին ուրախությունը շատ չտևեց։ Յուր զավակը, Պետիկին հայրը, մի քիչ տաք գլուխ էր. ոչ տաքեն կը վախնար, ոչ ցուրտեն. տաքանալով, քրտնելով, մսելով օր մը հիվանդացավ. երբ կանանց դեղերը օգուտ չըրին ու վիճակը ծանրացավ, բժիշկ մը բերին, որ սաթլիճան է ըսավ, և խեղճ տղան քսանչորս կամ քսանհինգ տարեկան մեռավ։

Եվ օրը այն օրն եղավ Նիկողոս աղբոր համար։ Աղջիկը, հարսը, թոռը, ինքը շատ լացին, շատ պոռացին երբ դագաղը՝ վրան բաց, դռնեն դուրս հանեցին։ Չմեղադրենք խեղճերը այս հին սովորության համար, որ տակավին կենդանի է Սամաթիո և Նարլը Գաբուի կողմերը։ Ով որ այս աշխարհես կը մեկնի, վերջին փառասիրություն մ'ունի. կը փափագի, որ լան, ողբան իրեն վրա։ Այդ ողբը, այդ լացը, մխիթարանք մ'է մեռնողին, մխիթարանք մ'է ապրողին համար։ Կան այնպիսիք, որոնք կրնան լրագիրներու միջոցավ իրենց ողբն աշխարհի իմացնել, բայց ո՞վ պիտի գրե խեղճ ձկնորսի մը համար, և ի՞նչ ըսելով գրել։

Ինչևէ, խեղճ տղան տարին թաղեցին Պալըգլը՝ մորը քով։ Հուղարկավորները ետ դարձան, հորը «գլուխդ ողջ մնա» ըսին. շաբաթ իրիկուն տերտերը եկավ. կիրակմուտքն ըրին։ Կիրակմուտքեն երկու-երեք օր վերջ Նիկողոս աղբար նավամատույցն իջավ. ծախեց նավակը, պարանները, ուռկանները, ալ աստված գիտե ինչ արցունքներ թափելով։ Հոգաց ձմռան պարենը, սոխը առավ, ածուխը առավ, քիչ մ'ալ ստակ ավելցավ, այն ալ պահեց։ Ամառը աստված ողորմած էր։ Նիկողոս աղբար շատ աղեկ գիտեր, որ յուր անմեղ տարաբախտ որբերուն համար նախախնամություն մը կար, և այս մասին ալ իրեն համակարծիք ենք։

Այնուհետև երբեմն-երբեմն Պալըգլը կ'երթար, տերտեր մը կ'առներ հետը, օրհնել կուտար զավակին ու կնոջը գերեզմանները, կուլար-կուլար ու տուն կը դառնար։ Հարսը, աղջիկը, թոռնիկը առած նստած այսպես սուգով անցուց Նիկողոս աղբար 79-ի մեծ ձմեռը։

Բ

Այն ձմեռը այսպես տխրությամբ անցավ և չենք կրնար ըսել, թե ուրախությունը վերստին տիրեց Նիկողոս աղբոր տան մեջ։ 1880-ի գարնան՝ Զատկեն վերջ, արդեն մտատանջությունը մեծ էր այս դժբախտներու համար, երբ չորեքշաբթի ցերեկ մը դուռը զարկին. հարսը պատուհանեն նայեցավ և խնդալով վար վազեց դուռը բանալու։ Մաքրիկն ալ Պետիկն ալ եկավ և սկսան ուրախությամբ հյուրին ձեռքերը պագնել. ան ալ անոնց երեսները կը պագներ։ Կը տիրեր սրտի այն զեղումը, որ միայն այս կարգի շրջանակներու մեջ ի հայտ կուգա այնքան ուժով։ Հյուրը, Թագուհին, իրենց ազգականներեն էր. Գատը-գյուղ կ՚անցուներ ժամանակին մեծ մասը։ Ատենոք այնտեղի երևելիներեն միույն տան մեջ կաթնատու եղած ըլլալով, այժմ որ յուր սնուցած երեխաները մեծցած էին, անոնց գրեթե մոր տեղ էր, ան սրտառուչ ավանդության համեմատ, որով մեր մեջ կաթնտուն երկրորդ մայր կը համարվի։

Ուրեմն շարունակենք մեր պատմությունը։ Հարսը և Մաքրիկ իրենց հյուրին հետ միասին վեր ելան։ Թագուհիի դեմքին վրա բարությունը կը փայլեր։ Կարմիր այտերով, սև մազերով քաղցրահամբույր կին մ՚էր։

— Ի՞նչպես եք, աղե՞կ եք, ի՞նչ կ՚ընեք։

— Ի՞նչ ընենք, մեր վիճակը հայտնի է։

— Աստուծո կամքը այսպես է, զավակներս, ի՞նչ ընենք։ Նիկողոս աղա՞ն ուր է։

— Վար իջավ, քիչ մը ժամանակ անցունե։

Մաքրիկ գնաց սուրճ եփելու, հարսն ալ եկավ Թագուհիի շալը վերցնելու։

— Շիտա՞կ կուգաս Խատիգեղեն։

— Շիտակ կուգամ։

— Այս ծովուն ի՞նչպես եկար։

— Ի՞նչ ընեմ, ամիս մ՚է տունեն լուր մը չունիմ. ձեզի համար ալ սիրտս կը հատներ. աղեկ լուրեր բերի ձեզի։ Մերիններեն ալ լուր մը ունի՞ք։

— Քույրդ երեկ հոս էր, աղեկ են, բան մը չունին։

Սկսան խոսիլ իրենց վիճակին վրա։

— Ա՜խ, քուրիկ, դուն օտարական չես. մեր վիճակը գիտես. չենք գիտեր ի՞նչ ընենք. բերաննիս չի բացվիր։

— Աստված ողորմած է, աստուծո ողորմությունը մեծ է, ի՞նչ ընենք, աղջիկս, ես ալ քանի մը տարի է սևերը չեմ հանած։ Մաքրիկիս համար ձայն մը կա՞։

— Անոր ալ ուզող մը կայ։
— Ո՞վ է։
— Կարապետը։
— Սա, Հաճիի տղա՞ն։
Այս միջոցին Մաքրիկ սուրճը կը բերեր։
— Բան մը ըսե՞մ, ես ատոր հա չեմ ըսեր. ասանկ աննման աղջի՛կ։
Մաքրիկ կարմրեցավ, ամչցավ։ Բայց և այնպես ժպիտ մ'ունեցավ։ Եղբօր մահվընեն իվեր առաջին ժպիտն էր։ Այնքա՜ն հզոր է անձնասիրութեան ուժը, որ կրնա պահ մը մոռցունել տալ է՛ն խորին վիշտն ալ։
— Ես Մաքրիկս Խատիգեղ պիտի կարգեմ։
— Խնդալու բաներ մի՛ ըսեր։ Մենք ո՛վ, Խատիգեղ հարս տվողը ո՛վ։
— Կը տեսնես, կը տեսնես։ Ես ձեզի աղեկ լուր եմ բերեր, ըսի։ Թող քիչ մը մեծնա, քիչ մ'ալ ստակ վաստկի։— Այս վերջին խոսքերուն վրա շեշտեց։
— Ընտո՞ր վաստկի. ամեն բան ձեռքեն կուգա, դուն գիտես. մեր մեղքեն է, որ կար մը, բան մը տվող չկա։
— Նայե, կը վաստկի թե չէ։ Մեր հանըմին խոսեցա. իր կարերը օտարին տալու տեղ, թող հայուն տա։ Աննման սիրտ մը ունի, խոսքես դուրս չելավ։ Մաքրիկս ուզեց իր քով կար կարելու, մեկտեղ նստելու։ Հիմա հասկցա՞ր։ Քանի մը ամիս թող կենա, նայե ինչ կ'ըլլա. բան ալ կը սորվի, ստակ ալ կը վաստկի, ձեզ ալ կը պահե. հանըմս անիկա կը կարգե ալ։
Այս առաջարկությունը կ'երևի, թե շատ անհաճո չեղավ։
— Ի՞նչ կ'ըսես, Մաքրիկ,— հարցուց հարսը։
Բայց Պետիկ պատասխանի ատեն չի թողուց և լալով վազեց.
— Չէ՛, չէ՛, ես հորաքույրս չեմ ձգեր։
Թագուհին Պետիկի ձեռքեն բռնեց, քովը առավ նստեցուց, քիչ մը շաքար տվավ գրպանեն և լռեցուց։ Ինչ հասակի մեջ ալ գտնվին մարդիկ, հինգ տարեկան, թե հիսուն, կան պարագաներ, ուր բնությունը անփոփոխ է։ Ոմանց համար շաքարի մը կտոր, այլոց համար ուրիշ շահադիտական փորձանք, կը լռեցնեն խիղճը և շատ համոզումներ փոխել կուտան։
Այս միջոցին դուռը զարկին, Նիկողոս աղբար եկավ։ Իրենք ալ իրենց վիճակին համեմատ քաղաքավարական փոխանակություններ ընելե վերջ, հարսը ձկնորսին իմացուց Թագուհիի առաջարկությունը։
Նիկողոս աղբար ձայն չհանեց։ Աղջիկեն բաժնվիլ չէր ուզեր, բայց անոթությունը եթե գայլը լեռնեն վար կը բերե, տատրակն ալ բույնեն

դուրս կը հանե. այն հզոր ազդեցությունն է, որու առաջ ամեն ամուր պարիսպ, ինչպես ամեն գոռոզ սիրտ, կը խոնարհի։ Նիկողոս աղբար վրդովյալ էր։ Բայց ի՞նչ ըներ։

— Աղջի՛կս, ըսածդ ըլլա. իմ վիճակս հայտնի է, երկու փարա չեմ կրնար վաստըկիլ, աս խեղճերը ի՞նչ պիտի ըլլան։ Աստված բարին տա։

Ապրիլի 28-ին, երկուշաբթի առավոտ, Նաբլը-Գաքուի համար նշանավոր օր մ'էր, մեծ պատահար կար։ Մաքրիկի երթալուն լուրը ամեն կողմ տարածված էր, ամենքն ալ կը սիրեին այդ աղջիկն, ուստի երկուշաբթի առավոտ բոլոր դրացիները—դրացնության մեջ կրոնքի և սեռի խտրություն չկա կ'ըսեն—ժողված էին Նիկողոս աղբոր տունը։

Մնաք բարովներ սրտաշարժ եղան. կարծես թե հեռավոր քաղաք երթալու համար կը բաժնվեին։ Սակայն այս խեղճերը գրագետ չլինելով, սրտի հուզում կեղծելու տխուր հարկին մեջ չէին գտնվեր. ամեն ինչ բնական էր։ Շատ հիշատակներ կը զարթնեին իրենց մտքին մեջ։ Լացին։

— Ա՛լ ձեռք կուտա, ա՛լ ձեռք կուտա,— ըսավ Թագուհին։— Աղջիկը ծովով տեղ պիտի երթա, ետևեն լալը խեր չէ։

Այս ըսելով Մաքրիկի թևեն բռնեց և դուրս ելան. տնեցիք պագտվեցան անոնց հետ։ Մաքրիկ բոլորովին սևերու մեջ էր։ Պատուհանները լեցուն էին, ամեն ոք խոսք մը ուներ ըսելու։

Հարսը չմոռցավ հանձնարարել, որ Ս. Հովհաննես երթան մոմ մը վառեն։ Այսպիսի հանձնարարության հարկ չկար։ Այս նախազգույշ միջոցը ձեռք պիտի առնեին արդեն։ Գացին, մոմը վառեցին, աղոթքնին ըրին. և նավամատույց երթալով, նստան նավակ մը և անցան գիմաց, այսինքն Գատը-գյուղ։

Գ

Երկու երեք շաբաթներ էին, որ Մաքրիկ Գատը-գյուղ էր, Գրիգոր էֆենտիի տունը։ Գյուղը, բնակարանը, սովորույթներն այնքան տարբեր էին իր տեսածեն, որ խեղճ աղջիկը կարող չէր հավատալ, թե աշխարհիս մեջ կրնա՞ր այդպիսի բան մը լինիլ։ Ծնած օրեն իվեր գրեթե միշտ սուգ տեսած էր. այժմ խաղաղ ու հանդարտ, լռության մեջ, կյանքեն համ կ'առնուր. կ'զգար, թե ապրիլը շատ անուշ է, երբ մարդ բան մը կը վայելե աշխարհի մեջ։

Գրիգոր էֆենտի, ինչպես սովորությունն է ժամանակե մը ի վեր լսել, «ազգային երևելի վաճառական» էր և կը պատկաներ այն կեսարացվոց, որք դրամական հրապարակին վրա թեպետ հաջորդած են ամիրաներու,

սակայն կը ջանան իրենց շենքն հիմնել ավելի հաստատ հիմանց վրա։ Այդ կեսարացիները զգացած են քաղաքակրթության պետքը, բայց անոնց մեկ մասը կ'ուզե, որ այդ քաղաքակրթության մեջ որքան կարելի է առատորեն պահպանվին հայրենական ավանդության նշխարներն։ Մասնավորապես հոգ կը տանին, որ իրենց կարգ մը տնտեսագիտական գաղափարները,— որք շատ անգամ «խնայողություն» բառին քաղցրալուր հնչմանը կ'ապաստանին,— անվտանգ պահպանվին այդ քաղաքակրթության մեջ։ Կեսարացվոց այս հառաջդիմական կուսակցությունը, որ «ոչ պահպանողական է, ոչ ալ արմատական», անհրաժեշտ հարկ տեսած է յուր նպատակին իրագործման համար հեռանալ «ապականյալ» կեդրոններե։ Առանձնացյալ Մարմարայի եզերքները, անդ կ'ուզե հիմնել այդ նոր քաղաքակրթությունը։

Սակայն ինչպես ալ ճարտար միջոցներու դիմենք, որպեսզի շատ չհեռանանք նախնի ավանդություններե, բայց և այնպես պատմությունը յուր անողոքելի օրենքներն ունի։ Կարծես թե հայոց համար պատմական օրենք մ'է կա՛մ պինդ գրկել կուրորեն ամեն ավանդություն, կա՛մ բոլորովին մոռացության տալ զայնս, առանց միջին ճանապարհը փընտրելու։ Ոչ մի ազգի մեջ գուցե այնքան զգալի լինի հոր և զավկի գաղափարաց միջև գոյացած տարբերությունը, որքան մեր մեջ։

Այս ճշմարտության զգալի ապացույցը կուտան Գրիգոր էֆենտիի զավակները։

Վահրամ և Գոհարիկ, երբ կը ճեմեին Մեռհյուրտարի պարտեզներուն մեջ, խոսելով մերթ ամենամաքուր հայերեն մը, մերթ լավ ֆրանսերեն, դժվար պիտի լիներ Կեսարիայեն նոր եկող աղայի մը համար գուշակել, թե նոքա զավակներն էին իր հայրենակցին, Գրիգոր էֆենտիի, որ միշտ միևնույնն էր, և կը խոսեր օտար լեզվով բառազարդյալ հայրենավանդ շեշտերով։ Չեմ ուզեր ուրիշ խնդրոց նկատմամբ երևան եկած տարբերությունները մեջ բերել. կը բավականանամ հիշեցնելով, թե մինչև այսօր խումբ մը կանանց մեջ կը փնտրվի տակավին Գրիգոր էֆենտիի հանգուցյալ կինը։ Յուր պակասը զգալի է, երբ մի քանի պատկառելի տիկնայք մերթ ընդ մերթ ժողովելով կ'անիծեն իրենց մանչ զավակաց դեմ լարված դարաններն պոլսեցի աղջկանց ու կանանց կողմանե, և կը մկրտեն այդ աղջիկներն, այդ կիներն այնպիսի շնորհափայլ ածականներով, զորս անշուշտ ասա առաջ բերելու համար մի քիչ դրական խղճահարություն կ'ունենանք։ Գրիգոր էֆենտիի տիկինն արժանընտիր պետ մ'էր այդ հարգամեծար խումբին, և թեպետ մինչև ցարդ իրեն հաջորդներ ընտրըվեցան, բայց յուր տաղանդին ոչ ոք հավասարած է։ Գոհարիկ իր վրա դրված հույսերն ի դերև հանեց և մորը բարեկամները շատ խոժոռ

աչոք կը նայեին անոր երեսը։ Մենք կրնանք ըսել հին ոճով խոսելով— և եթե այս բացատրությունք նախատինք մը չեն համարիր մեր աղջիկները—որ Գոհարիկ հրեշտակ մ'էր և այնպես է մինչև այժմ յուր ամուսնացած վիճակին մեջ։

Գոհարիկ այնքան ազնիվ էր, որ օր մը իսկ զգալի ընել չտվավ Մաքրիկին, թե նա տան մեջ կար կարող աղջիկ մ'էր. բայց չէր կրնար զսպել թեթև ժպիտ մը Մաքրիկի անմեղ շարժումներու և խոսքերու մասին։ Այլ Մաքրիկ շուտ վարժվեցավ յուր նոր կյանքի բազմակնճիռ դժվարությանց, որոնց մեջ էին դանակ մը, պատառաքաղ մը վայելուչ կերպով գործածելու խնդիրները։ Գոհարիկ գրեթե առանձնացյալ կյանք կ'անցուներ. նշանած էր. նշանածը կը սիրեր. Մաքրիկի նման աղջիկ մ'ալ քովն ունենալն ախորժելի եղավ իրեն։ Ժամանակի մեծ մասը կարի նվիրած էր։ Նշանված աղջիկները շատ գուրգուրանոք կը հսկեն իրենց օժիտի պատրաստության, վասնզի իրենց կանացի փառասիրության պաշտոնական առաջին ցուցահանդեսն է այն։

Վահրամ ևս շատ քաղաքավարությամբ կը վարվեր Սամաթիացի աղջկան հետ և կրնանք ըսել մինչև իսկ ընտանի լինելու չափ հառաջ կ'երթար։ Այս երիտասարդը գրեթե քսան երկու տարեկան էր, բավական սիրուն, երկայնահասակ, խարտյաշ։ Դեմքը ճանչցողները կրնային ըսել, թե մի սկեպտիկյան էր. զբոսանքի մեջ չափազանց խղճի մտոք շարժիլն յուր կենաց կանոնը չէր։ Մենք չենք զարմանար, եթե այդ տասնվեց տարեկան, մեծ աչքերով, սև մազերով, միջահասակ, աղվոր աղջիկը Վահրամի փորձությունը շարժեց։ Հեղինակ կին մը ըսած է, թե սերը կը ծնի, երբ այր մը և կին մը առաջին անգամ իրարու կը հանդիպին։ Եթե այդ վայրկյանն անցնեն առանց վտանգի, կրնան ապահով լինիլ, թե այնուհետև հարկադրյալ չեն զիրար սիրելու։ Ահա կարծիք մը, որո ճշմարտությունը փորձել հանձնարարելով մեր ընթերցողաց, մենք սա չափը կ'ըսենք, թե մեր սեռն ամեն անգամ, որ զգացում մը կ'ունենա կնոջ համար, պետք չէ միշտ սեր անվանել այդ զգացումը։ Արդարև Վահրամ առաջին անգամ, որ Մաքրուհին տեսավ, հաճույք մը զգաց. բայց մի՞թե այդ հաճույքը սեր անվամբ կրնանք մկրտել։ Իսկ անմեղ Մաքրիկը բոլորովին տարբեր դրության մեջ էր։ Ի՞նչ էր սերը. այդ բառը անծանոթ էր այդ աղջկան, որ և ոչ իսկ պարզ ընթերցանություն մը գիտեր։ Բայց սակայն զգացում մը արտահայտող բառը եթե շատ անգամ մեզ անծանոթ է, այդ չի նշանակեր, թե զգացումը գոյություն չունի ի մեզ։ Սիրո զգացումը Մաքրիկի սրտին տիրապետող զգացումն էր։ Այդ սերն առատորեն կը շռայլեր յուր հորը, հարսին, եղբորորդվույն

համար, և այժմ ալ հոգվով և մարմնով նվիրված է Գոհարիկին, այնքան այդ աղջկան ընթացքը խոր տպավորություն ըրած էր յուր պարզ սըրտին վրա։ Անձնվեր լինելու համար ստեղծված էր ձկնորսին աղջիկն, և երբ Վահրամ յուր քաղաքավարական բացատրությունները միացնելով յուր ասպետական շարժմանը, հարձակում կ'ըներ այդ անմեղին վրա, վստահ էր, թե հաղթանակն իրեն պիտի մնար։ Մեր գրության շրջանակը չներեր երկարորեն պատմել այն ամեն ճշմարտությունները, զոր Վահրամ ի գործ կը դներ, անտարբեր եղանակով մը, այնքան անտարբեր, որ կարծես յուր ամեն ըսածը բնական էր։ Մեծարանաց խոսքեր առ մի անփորձ աղջիկ հաղթանակի գրավական կրնան համբավել։ Բայց երբեմն Վահրամի խոսքերը մինչև անխոհեմության սահմանները կը հասնեին։ Օրինակի համար, օր մը կը խոսեին իրենց մերթ ընդ մերթ հյուր եղող մի քանի երիտասարդներու ամուսնությանց վրա։ Մաքրիկ ալ կարծիք կը հայտներ—սկսած էր վարժություն ունենալ կարծիք հայտնելու։

— Բայց,— ըսավ Վահրամ,— բան մը կա, զոր չեմ կրնար ըմբռնել. ի՞նչպես՝ կարելի է, որ երիտասարդ մը օրիորդ Մաքրիկն անգամ մը որ տեսնե, ա՜լ այնուհետև կարող լինի ուրիշ մը սիրել և ուրիշի մը հետ ամուսնանալ։

Եթե այս մեծարանաց տրիտուրն ընծայվեր սրահներու մեջ մեծցած աղջկան մը, սա քամակը մի քիչ խոնարհեցնելով կը գոհանար. բայց Մաքրիկ այս արարողությանց անվարժ էր տակավին, և միայն շառագունեցավ. երեսներուն կարմրությունն այնքան զգալի եղավ, որ Գոհարիկ չդիմացավ եղբոր հանդգնությանը, և ֆրանսերեն հանդիմանեց զինքն ըսելով.

— Հիմա՞ր ես, ի՞նչ ես, ինչո՞ւ համար խեղճ աղջկանը այդպիսի խոսքեր կ'ընես։ Վերջը չե՞ս մտածեր։

Չէ, վերջը շատ լավ կը մտածեր. այսպիսի պարագաներու մեջ ինչ որ երիտասարդ մը կ'ըսե, ամեն անգամ թեթևությամբ չարտասաներ բառերը։ Վահրամի միակ պատասխանը եղավ երթալ դաշնակին առջև և նվագել «Օթելլոյի» մեկ կտորը, մին այն կտորներեն, որք աղջըկան մը սիրտը վեր ի վայր կ'ընեն մինչև անգամ, երբ չգտնվիր երիտասարդի մը հրաբորբոք ալաքներու ազդեցության ներքև։

Մաքրուհի քովի սենյակն անցավ, շատ հուզված էր, բայց գոհունակություն կ'զգար։

Դ

Հունիսի կիրակում մ'էր. Գրիգոր էֆենտի ընթրիքի չէր եկած. սեղանին միայն Գոհարիկ, Վահրամ և Մաքրիկ ներկա էին, շատ զվարճանալով ճաշերնին ըրին և գինին մի քիչ չափն անցավ։ Վահրամ գլանիկ մըն ալ հրամցուց Մաքրիկին, որ իբր զբոսանք բերանը առավ, քիչ մը ծխեց և ետ դարձուց, բայց այդ մեկ վայրկյանը կը բավեր, որ գինվո ազդեցությունը սաստկանար։ Սեղանեն վերջ, Գոհարիկ դաշնակին գնաց, իսկ Մաքրիկ պարտեզ իջավ. գլուխը քիչ մը կը դառնար և նստարանի մը վրա ինկավ։ Հազիվ տասը վայրկյան կար, որ հոն էր և ահա ծառերուն ետևեն ճերմակ շուք մը երևցավ. Մաքրիկին սիրտն ուժով կը բաբախեր։ Վահրամ ամռան ճերմակ զգեստ մը վրան, գլանիկը բերանը, երգ մը մրմնջելով կուգար։

— Ա՛յ, դու հո՞ս ես,— ըսավ Մաքրիկին, իբր թե չէր գիտեր։

Դեմը կանգ առավ։

— Ի՜նչ աղվոր գիշեր է, այնպես չէ՞։

— Շատ աղվոր, մանավանդ լուսնկան։

— Բայց ոչ քեզմե ավելի աղվոր։

— Կ'աղաչեմ, Վահրամ պեյ, ինծի այդպիսի խոսքեր մի՛ ընեք, չե՞ս գիտեր ինչ կ'ըլլամ, մեղքցիր զիս։

Այդ շեշտը, այդ խեղճուկ արտասանությունը պարտության ապացույցներն էին, Վահրամ ըմբռնեց, թե Մաքրուհի յուր անձին տերը չէր այդ վայրկյանին. քովը նստավ և աջ ձեռքն անցուց Մաքրիկի ուսին. աղջիկը դիմադրություն մ'ըրավ շատ տկար, արդեն գլուխը խոնարհած էր Վահրամի շրթանց առաջ։ Կը վայելեր առաջին համբույրներու հեշտությունը, հեշտության քաղցրագույնը, որոց հիշատակը չի ջնջվիր երբեք մեր սրտերեն։

Վահրամ աջ ոտքը ձախին վրա դրած էր. Մաքրիկ անդ կը հանգչեցներ խոնջ գլուխը. Վահրամի և Մաքրիկի երակաց մեջ արյունը կ'ընթանար իբր կրակե հեղուկ մը։

— Մաքրի՛կ, հոգի՛ս, կը խոստանա՞ս իմս ըլլալ, քեզ հետ ապրինք, քեզ հետ մեռնինք։

Գիշերը շատ աղվոր էր. տաքուկ օդ մը կար. աստղերը կը պլպլային. ծաղկանց բուրումը զմայլում կ'ազդեր. ավազանին մեջ գորտերու ոստոստման ճողփյուններն կը լսվեին. Գոհարիկ կը նվագեր դաշնակավ Թրավիաթայի վերջին նվաղումը.

Մնաք բարով դուք անցելուն
Գեղածիծաղ երազներ,

այն նվագներեն, որ մարդուս սիրտն ու հոգին կը փոխադրեն մի ուրիշ աշխարհ և կ'ըսեն «կյանքն եթե տխուր է, բայց և այնպես սիրելու է զայն»:

Ա՜հ, Մաքրուհին հիմա կը սիրեր կյանքը, սիրուն երիտասարդի բազկացը մեջ: Կը սիրեր կյանքը, բայց յուր անձին տերը չէր: Արբշռություն գինվո, արբշռության ծուխի, արբշռություն համբույրներու, արբշռություն աղվոր գիշերվան մը, ո՞վ երբեք կարող է տրամաբանել ձեր ներկայությանը...

Խոր լռության մեջ լսելի էին միայն Մաքրիկի հեծկլտանքները, որք կ'ընկերանային Վերտիի շեշտերուն. էին այն հեծկլտանքները, զոր աղջիկ մը չի փոխանակեր ոչ մեկ ուրախության ձայնի հետ: Եթե տակավին հին գրականության գողտրիկ լեզուն գործածական լիներ արդի սովորության մեջ, պիտի ասեինք «Մաքրիկի անմեղության հակող պահապան հրեշտակն յուր դեմքն սքողած մեկնեցավ այդ պարտեզեն»:

Գոհարիկ կը շարունակեր յուր նվագները. հանկարծ դադրեցուց և պատուհանեն հստակ ձայնովը կանչեց.

— Վահրամ, ո՞ւր ես:

— Ի՞նչ կա, հոս եմ:

— Դուրս կ'ելնե՞ս:

— Ինչո՞ւ չէ:

Ժամանակն էր: Այս տեսակ պարագաներու մեջ ամենադժվարին գործ մ'է ձեռքեն ճողոպրիլը: Վահրամ շատ գոհ եղավ քրոջը հրավերեն, դրոշմեց Մաքրիկի երեսներուն համբույր մը,— շատ տկար համբույր մը— և աներևութացավ:

Ե

Այդ գիշերվան հաջորդ օրը Մաքրիկի վրա անբացատրելի ծանրություն մը կար: Անուշ, մելամաղձություն մը պատած էր դեմքը:

— Ի՞նչ ունիս,— կը հարցներ Գոհարիկ:

— Բան չկա, գլուխս կը ցավի:

Գոհարիկ զորովանոք ձեռքը ճակտին կը դներ:

— Քիչ մը տաքութիւն ունիս, կ՚ըսեր, և ոտըքոլոնի շիշն հանելով կը զովացներ խեղճ աղջկան ճակատը։

Կ՚անցնի ճակտին տաքութիւնը, բայց ո՛վ պիտի զովացնե սիրտը։ Այդ օրն և հաջորդ օրերը կ՚զգուշանար Մաքրիկ Վահրամի երեսը նայելու, բայց և այնպես աչքը դուռն էր. կ՚սպասեր անհամբեր նորա գալստյանը, և երբ ներս կը մտներ նա, յուր սիրտը կը տրոփեր։

Գլուխը կախած, Մաքրիկ կը կարեր ու կը կարեր, լռիկ մնջիկ։ Երբ ծանր մտածութիւններ կ՚ունենանք, այնպիսի մտածութիւններ, որք թեպետ զմեզ տագնապի մեջ չեն պահեր, բայց և այնպես ներքին վրդովում կը պատճառեն, այսպիսի պարագայի մեջ հանդարտութեան մեծ ապաստանն է աշխատութիւն մը, որ մտավոր հոգնութիւն չպահանջեր, և քիչ թե շատ մեքենական լինելով, կը թույլատրե մեզ մեր մտածութեանց մեջ ընկղմիլ։ Կը կարեր Մաքրիկ ու կ՚երազեր։ Երազը կյանքի մեծ մխիթարանքն է, բայց երբ երազն իրականութեան կերպարանք կ՚զգենու, կը կոչվի երջանկութիւն։ Ուրեմն Մաքրիկ երջանիկ էր. մի քանի շաբաթեն Վահրամի կինը պիտի լիներ։ Որչա՜փ կը սիրեր Վահրամը, ինչե՛ր պիտի չըներ զնա երջանիկ ընելու համար։ Կը շիներ, կը պատրաստեր իրենց կենաց հատակագիծը. չէր մոռնար հայրը, հարսը. նոքա այսուհետև հանգիստ պիտի լինեին այլևս։ Ստույգ է, թե ընկերական նկատողութիւնք անհնարին կ՚ընեին միասին բնակութիւնը, և արդեն այնպիսի նոր կյանք մը ախորժելի չէր կրնար ըլլալ ձկնորսին, բայց ինքն անոնց ամեն պետքերը պիտի հոգար։ Պետիկը գիշերոթիկ դպրոց մը կը դներ, ուսկից ելնելե վերջ կը մտներ Վահրամի վաճառատունը և անտարակույս ձկնորսին թոռը օր մը կը լիներ վաճառական մը։

Բայց այս ջինջ ու պայծառ հորիզոնին վրա սև կետ մը միայն կը նշմարվեր։ Մաքրիկ կ՚զգար, թե յուր տգիտութիւնն իրեն համար դժնդակ պարագա մ՚էր։ Ոչ դաշնակ գիտեր, ոչ ֆրանսերեն, ոչ հայերեն. անտարակույս, Վահրամի նման երիտասարդի մը ուսյալ կին պետք էր։ Սակայն Վահրամ արդեն գիտեր Մաքրիկի մտավոր զարգացման աստիճանը, ուստի երբ ուզեց զինքը կնութեան առնուլ, անտարակույս ամեն հաշիվ ըրած էր։ Բայց այն նրբամտութեամբ, որ կանանց հատուկ է, կ՚ըզգար Մաքրիկ, թե ուշ կամ կանուխ Վահրամի և յուր միջև ցրտութեան առիթ կրնար լինիլ յուր տգիտութիւնը։ Բայց ինչո՞ւ երկնչիլ։ Անմիջապես կը ձեռնարկեր աշխատութեան. կ՚զգար, թե մեծ աշխատութեամբ, սիրո մտրակին ներքև, ոչ շատ ուշ, կրնար ձեռք բերել կրթական այնպիսի վիճակ մը, որուն նախանձեին շատ ուրիշ կանայք։

Շաբաթ մ'էր արդեն, որ այս քաղցրիկ մտածմանց մեջ կ'անցներ յուր օրերը։ Թագուհի, բարի կինը, որ բերած էր Մաքրիկը Գրիգոր էֆենտիի տունը, երկու շաբաթե ի վեր Սամաթիա գնացած էր և այն շաբթուն վերջերը վերադարձավ. շատ ալ հարմար ժամանակին եկավ։ Մաքրիկ որչափ ալ երջանիկ էր յուր երազներուն մեջ, բայց և այնպես այդ երջանկությունը կատարյալ ընելու համար հարկ էր, որ սիրտը մեկուն բանար և անոր հետ միասին խորհրդակցեր. այս պարագային մեջ Թագուհին միայն կրնար յուր սրտակիցը լինել, բայց և այնպես կը հետաձգեր յուր խոստովանությունն ընել, տարակույս չկա, թե այդ խոստովանությունն ամբողջ պիտի չլիներ։

Թագուհիին գալեն մի քանի օր վերջ, ալ Մաքրիկ հաստատ որոշեց խոսքը բանալ. ուստի իրիկվան մը դեմ անոր քով գնաց այն պզտիկ խցիկին մեջ, որ հատկացած էր սուրճ խմելու։ Թագուհի և Մաքրիկ Պոլսո ընտանեկան սովորության համեմատ իրիկվան դեմ անպատճառ կ'եփեին սուրճ և հաց թաթխելով կը ճաշակեին։ Այդ իրիկուն ալ Թագուհի և Մաքրիկ սուրճերնին կը խմեին հաց թաթխելով. Մաքրիկ խոսքը պիտի բանար, բայց կ'ուշացներ։ Թագուհի այս կացության վախճան տվավ, երբ պատառը բերանը դնելով խնդաց և ըսավ.

— Մաքրիկ, քեզ բան մը պիտի ըսեմ, բայց մարդու պիտի չըսես։

Մաքրիկ դող մը ունեցավ, այն դողը, որ կը գրավե ամենուս սիրտը, երբ կ'զգանք, թե մեզ պիտի հաղորդվի այն լուրերեն մին, որոց անձկանոք կ'սպասենք։ Մաքրիկ զգաց, թե Վահրամ խոսք բացած է արդեն Թագուհիի և թե նա պիտի խոսի անոր վրա, ուստի ջանաց վարանելու խոստացավ, թե մարդու բան չըսեր և ժպտալով հարցուց.

— Ի՞նչ պիտի ըսես։

Բայց Թագուհի, գաղտնյաց պարկը բանալե առաջ Մաքրիկին մեծ երդում մ'ալ տվավ, այն երդումներեն մին, զոր բարեպաշտ կիները սովոր են գործածել։ Մաքրիկ երդումն ընդունեց։

— Ետքը պիտի իմացվի,— կ'ըսեր Թագուհի.— բայց թող խոսքը մեզմե դուրս չելլա։ Աղջիկ, ոտքդ խատեմ է։— Մաքրիկ ծիծաղեցավ, և Թագուհի շարունակեց.

— Գիտե՞ս, Վահրամ պեյը կը նշանվի։— Մաքրիկ առջևը նայելով խնդաց. ինչ ճարտարությամբ Թագուհի խոսք կը բանար։

— Նայիմ որո՞ւ,— հարցուց միշտ ժպտալով։

— Հարուստը հարուստին կը վայելե. Միսակ էֆենտիին աղջկանը։

Մաքրիկ այս անգամ չխնդաց։— Թագուհի միամտաբար ամեն ինչ կը պատմեր, ամեն ինչ մանրամասնորեն. աղջիկը ոչինչ ըմբռնեց։ Անհելի բառը զինքը գրաված էր—Վահրամ կը նշանվի ուրիշ աղջկան մը, այս

բավ էր։ Թագուհին կրնար ապահով լինիլ, որ Մաքրիկ գաղտնապահ պիտի մնար, առանց ահեղ երդման իսկ։ Թագուհի խոսքը չէր ավարտած և Միսակ էֆենտիի «աննման աղջկան» գովեստը կը շռայլեր, երբ Մաքրիկ գլխու ցավը պատրվակ ընելով քաշվեցավ յուր սենյակը։ Դուռը գոցեց, ինկավ բազմոցին վրա. շվարած կը մտածեր։ Իրիկվան կերակուրի ալ չիջավ. սեղանին վրա Գոհարիկ կ՚ըսեր.

— Չեմ գիտեր ի՞նչ ունի այս աղջիկը, քանի մ՚օր է կարծես հիվանդ է, գլխու ցավը կը բռնե. մի՛ կարեր կ՚ըսեմ, մտիկ չըներ։

Այս միջոցիս Մաքրիկ մտածության մեջ էր։ Աղջիկ մը երբ կը զոհե երիտասարդի մը ինչ որ ամենեն ավելի նվիրական է իրեն համար, կը կարծե, թե յուր սիրույն և անձնվիրության անհերքելի ապացույցները տված է։ Չէր կրնար ըմբռնել, թե Վահրամ, այն վեհանձն երիտասարդը (այս Մաքրիկի կարծիքն էր) կարող լինի այդքան վատությամբ խեղճ աղքատ աղջկան մը կյանքը թունավորել։ Մտածելով, մտածելով գտավ, թե Թագուհին սխալ հասկացած լինելու է կամ յուր բերանը փնտրել ուզած է պատմություն մը ընելով կամ թե Վահրամ, ով գիտե ինչ պատճառով, խաբած է Թագուհին։ Մաքրիկը չենք մեղադրեր. կը ճանչընա՞ր աշխարհս։

Ամառն ամեն իրիկուն դուրս կ՚ելնեին. Գոհարիկ եկավ Մաքրիկի սենյակը, հարցուց, թե ի՞նչ ունի. պատասխան առավ թե բան մը չունի, բայց դուրս չելներ։ Գոհարիկ սենյակեն ելավ, վեր գնաց հագվելու։ Մաքրիկ այս առիթեն օգուտ քաղեց քովի սենյակն երթալու, ուր Վահրամ նստած էր դաշնակին առաջ։ Հուշիկ-հուշիկ ներս մտավ, Վահրամ գլուխը դարձուց և խնդալով ըսավ.— Ա՛, դո՞ւն ես, Մաքրիկ։

Այդ ժպիտին, այդ հարցման վրա Մաքրիկ կարծես թե նոր աշխարհ եկավ. զգաց, թե ըսվածները սուտ էին, հետևաբար առանց վարանելու մոտեցավ Վահրամի և խնդալով ըսավ.

— Բան մը լսեցի, իրա՞վ է։

— Ի՞նչ լսեցիր։

— Կը նշանվի՞ս եղեր։

— Որո՞ւ։

— Միսակ էֆենտիի աղջկանը։ (Մաքրիկ երդումը մոռցած էր)

— Անանկ խոսք մը կա, ինչո՞ւ կը հարցնես։

— Հապա ես ի՞նչ ընեմ։

— Դուն ի՞նչ ընես. եթե կուզես քե՛զ ալ կը սիրեմ։

— Բայց պարտեզը անցուցած գիշերնի՞ս, ինծ տված խոստումներդ, մոռցա՞ր։

— Է՛հ, անոնք կատակ էին, մենք անանկ կատակներ շատ կ՚ընենք, Մաքրիկ։

Վահրամ գլանիկը բերանը դրավ, դաշնակը զարնել կը շարունակեր. Մաքրիկ բերանը չբացավ. դուրս ելավ գնաց ինկավ նստարանին վրա, ճրագը չվառեց. դուռը գոցեց։ Ամբողջ գիշերը լացավ։

Զ

Մաքրիկ առավոտուն կանուխ անկողնեն ելավ. արդեն ամբողջ գիշերը չէր քնացած գրեթե. հագվեցավ և գնաց Գոհարիկին սենյակը։

— Ես այսօր պիտի երթամ,— ըսավ,— քանի եկած եմ, չեմ գացած։

— Այս օդին ի՞նչպես պիտի երթաս. գույնդ ալ նետած է, հիվա՞նդ ես, ի՞նչ ես։

Օդը լավ չէր. երկինքը ամպեր կային և բարակ-բարակ անձրև կուգար, կարծես Մաքրիկի տխրությունն ավելցնելու համար։

— Քանի մը գիշեր է գեշ երազներ կը տեսնեմ, այսօր շատ անհանգիստ եմ։

— Ե՞րբ պիտի գաս։

— Թագուհին այս օրերս պիտի գա, մեկտեղ կուգանք։

Գոհարիկ այլևս չպնդեց. դուրս ելավ և հրամայեց, որ ծառան պատրաստվի միասին երթալու, հետո ելավ յուր սենյակը և վար իջնելով գնաց Մաքրիկին քովը, քսակի մը մեջ դրած հինգ ոսկի տվավ։

Բարի՜ Գոհարիկ, գիտեի՞ր, թե արյան գինն է, որ Մաքրիկի կը վճարես։

— Մաքրիկ, այս քիչ է, բայց մնացածը պահած եմ. գիտեմ, որ եթե տուն երթաս, ամենը ծախս պիտի ընես, անոր համար մնացածը պահեցի, ետքը դուն ալ գոհ կ՚ըլլաս։

Մաքրիկ ժպիտ մ՚ունեցավ, շնորհակալ եղավ, մնաք բարով ըսավ, առանց մոռնալու «Գրիգոր էֆենտիին ալ ձեռքը կը պագնեմ» խոսքը։— Գոհարիկ ուշադրություն չըրավ, որ Վահրամի անունը չէր տար։

Դուրս ելավ, սպասավորը ետևեն. երբ քիչ մը հեռացավ, ետ դարձավ ակնարկ մը նետեց Գոհարիկենց տանը, և թաշկինակն հանելով՝ կամացուկ մը աչքերը սրբեց։ Հույս, սեր, անմեղություն, ամեն ինչ այդ ապարանքին մեջ թաղված կը թողուր։

Իջան նավամատույց, մտան շոգենավ, ելան կամուրջ և անտի շուկան, ուր Մաքրիկ հորը, հարսին, Պետիկի համար մի քիչ բան գնեց։

Չենք ուզեր երկար բարակ պատմել տան իջարանցումը, երբ Պե-

տիկ պատուհանեն նայելով իմաց տվավ, թե հորաքույրն է։ Զիրար գրկեցին, զիրար համբուրեցին։

Այս կարգի ընտանիքներն սրտաճմլիկ տեսարան կ՚ընծայեն, երբ իրենց անդամներեն մին կամ ուրիշ սիրելի մը բացակայութենե վերջ դառնա իրենց մոտ։ Բավական լացին. Նիկողոս աղբոր զավկին մահվան հիշատակները կը նորոգվեին։ Բայց ամեն արցունք վերջ ունի. իրենք ալ սրբեցին իրենց աչքերը. խոսակցությունները սկսան։ Մաքրիկ հետը բերածները տվավ ամենուն։ Քովը գտնված ստակն ամբողջ հանեց հորը ձեռքը դրավ։

Նիկողոս աղբոր վրա լույս իջավ. խեղճերուն քով ստակ մը չէր մնացած, շվարած էին։ Ծերունին գլուխը բացավ և լալով սկսավ օրհնենք կարդալ Գրիգոր էֆենտիին, Գոհարիկին, Վահրամին, որք այսպես իրենց խեղճությունը կը մոռցնեին, և անմեղներուն ապրուստը կը ճարեին։— Դառն հեգնություն, կյանքի դառն հակադրություն։

Հարսն անհամբեր էր, անկյուն մը քաշվեցավ և սկսավ խոսիլ Մաքրիկին հետ. պատմեց, թե քանի հոգիներ հիմա զինքը կ՚ուզեին և թե անպատճառ պիտի նշանվի և այնուհետև Գատը-գյուղ պիտի երթա. թող հարսնիքը ուշ ըլլա։

— Հոգիս, վաղը մեկալ օր կը տեսնվինք, խելքս վրաս չէ. արդեն հիմա պիտի երթամ, այս գիշեր կարելի է չեմ գար, վաղը կը խոսինք։

— Ո՞ւր պիտի երթաս։

— Թագուհին բաներ մը ապսպրեց տունը, այսօր պետք է երթամ խոսիմ, խոսք տվի, որ երթամ, ալ գիշերը չեմ կրնար դառնալ. վաղը ցորեկ կուգամ։

Թագուհիին անունը լսելով հարսը չդիմադրեց. բայց երբ դուրս ելավ Մաքրիկ, չուզեց, որ Պետիկը հետը երթա.— Մոտիկ է, կ՚ըսեր, ծովեզերքեն կ՚երթամ, ժամ պիտի երթամ, անկե կ՚անցնիմ։

Անձրևը դադրած էր. արևը մարը կը մտներ, երեկոյան հեշտ արև մը. շատ աղվոր իրիկուն մ՚էր. ցողաթուրմ ծառերեն անձրևի կաթիլներ կը կաթկթեին։ Ս. Հովհաննես մոտ էր։ Գլուխը յուր քողին մեջ պատած, Մաքրիկ դուրս ելավ, անցավ երկաթե դուռնեն և մտավ եկեղեցի։

Պոլսո մեջ չկա եկեղեցի մը, որ այնքան խորին տպավորություն ընե փափուկ և տխրած հոգիներու վրա, որքան կ՚ընե Նարլը-Գաբուի փոքրիկ եկեղեցին։ Խոր լռության մեջ թաղված կարծես կղզեակ մ՚է ծովուն մեջ։ Մերթ ընդ մերթ ալիքները կուգան ընդհատել աղոթից մրմունջներն և ի հուշ ածել տառապյալ հոգվույն՝ կյանքի տխուր իրականությունները. հուզում, վիշտ, փոթորիկ, հանդարտություն կը հաջորդեն միմյանց. դյուրաբեկ նավակներն օր մը այդ ալեկոծությանց մեջ ան-

հետ կը լինին։ Մաքրիկ կ՚զգար, թե ինք ալ դյուրաբեկ նավակ մ՚է։ Գնաց Մայր Վշտակիր պատկերին առաջ, երկու ձեռքերում մեջ առավ երեսները և լացավ։ Ալիքները կը բախեն. ա՛լ աչքերը սրբեց. մութը սկսած էր տիրել, պատուհանեն անգամ մը նայեցավ։ Գառը-գյուղ աչքին առջև կը պարզվեր վերջալույսի լուսովը դեղնած։ Ակնարկ մը նետեց, դուրս ելավ։ Հանդիպեցավ քարոզիչ վարդապետին, ձեռքը պագավ, երկար չխոսեցավ և սկսավ ծովեզերքեն ընթանալ հուշիկ-հուշիկ։ Կարծես բոլորովին մթնալու կ՚սպասեր։

Է

Այդ գիշերը Նիկողոս աղբար բավական արթուն կեցավ մահճին մեջ, վասնզի մտքովը կը պատրաստեր ինչ որ պիտի գներ հաջորդ օրն։ Առտուն կանուխ արթնցավ. ամռան գեղազվարճ առավոտ մ՚էր, օդը զով, թռչունները կը ճլվլային։ Պատուհանին առաջ նստեցավ, հարսը և թոռը քովը. խմեցին սուրճերնին։ Սպասեցին, որ Մաքրիկը գա, բայց տեսնելով, թե նա կ՚ուշանա, Նիկողոս աղբար ավելի սպասելու համբերությունը չունեցավ, պետք էր որ յուր հարստության ցույցերը շուտով տեսնվեին։ Փոքրիկ բիբան մեկ կողմ նետած էր շատ ժամանակե հետե—զավկին մեռնելեն ի վեր—գտավ, առավ, լեցուց, բերանը դրավ զայն։ Բիբը ձեռքը, Պետիկն ալ առջևեն, դուրս ելավ, երեք անգամ երեսը խաչակնքելով։ Չմոռցավ ս. Հովհաննես երթալ, աղոթել Գրիգոր էֆենտիի և ընտանյացն արևշատության համար. եկեղեցիեն կամաց կամաց շուկա իջավ։ Մեկուն հետ կը խոսեր, մյուսին հետ կատակ կ՚ըներ. յուր ծանոթները զարմացած էին այս հանկարծական փոփոխման վրա։— Ինչ կրնանք ըսել. մարդկային սիրտը առիթ մը կ՚որոնե միշտ, որպեսզի մոռնա ցավերն ու ժպտի. պարարտ քսակ մը, հանդարտ խիղճ մը, հանգիստ ապագայի հույս, մոռցնել կուտան շատ ցավեր, և հնարավոր կ՚ընծայեն կորաքամակ ծերունիներու ճեմել բարձր ի գլուխ։— Նիկողոս աղբար ուղղակի նպարավաճառին գնաց, ուր երկու ոսկի մանր ստակի վերածեց, և պատրաստեց տան համար երկու ամսվան պարեն։ Հույն նպարավաճառը զարմացած էր. դիմացի սրճարանեն տեսնելով Նիկողոս աղբար ահագին առևտուրը, եկան իրենց զարմանքն հայտնելու։ Նիկողոս աղբար փառավորված էր։— Ունայնասիրությունը կարևոր մասը կը կազմե կյանքի հրճվանաց։ Մեծատուն թե ձկնորս, կ՚զգան անհուն գոհունակություն, եթե կարենան իրենց քսակի փայլով շլացնել զիրենք շրջապատողներու աչքերն։ Այդ գոհունակությունը ունեցավ Նիկողոս

աղբար և արժանի էր, հետ այնքան վիշտերու։ Երբ վերջացուց յուր գործը նպարավաճառին խանութը, իջավ դեպի ծովեզերք, ուր կը գտնվին ածուխի խանութներն և փայտի դեզերը։ Բայց անոնց մոտենալե առաջ, մտավ ծովեզրի սրճարանը, հոգնած էր — այնքան շուտ կը հոգնին առատալիր քսակ ունեցողները, — սուրճ մը առավ, Պետիկն ալ շաքար մը. վերջը դարձավ փայտի դեզին քով։ Այցելեց մեկ երկու դեզեր. սակարկություններ կ՚ըներ մին կիսկատար կը թողուր, մյուսին կ՚անցներ. կը փափագեր ամեն ինչ լավ շոշափել։ Կես ժամեն ավելի էր, որ այս աշխատության հետամուտ էր և այնքան զբաղած, որ ուշադրություն չըրավ, թե Պետիկը չկար։ Աչքն ասդին անդին պտըտցուց, սկսավ կանչել, վրդոված էր, մանավանդ, որ ծովուն մոտ բազմություն խռնված էր. սիրտը դող ելավ, շվարեցավ։ «Պետի՜կ, Պետի՜կ, ծո՜, Պետիկ», կը պոռար, և սկսավ, ոտքերը դողդղալով, ծովեզերքը երթալ, բայց հանկարծակի հոգի առավ, Պետիկ վազելով կուգար և հանդիմանություն լսելու ժամանակ չթողուց։

— Տետե՛, տետե՛, եկուր, եկուր, նայե ի՞նչ կա, եկուր նայե, բան կը բերեն ծովեն։

Հոգեբանները տակավին չեն տված իրենց վերջին վճիռը, թե արդյոք կանա՞յք ավելի օժտված են հետաքրքրության հատկություններով, թե՞ ծերունիները։ Կը կարծենք, թե այս վճիռը բավական ուշ պիտի տրվի — եթե երբեք տրվի. — բայց առ այժմ սա ճշմարիտ է, թե հանգիստ վիճակի տեր մարդիկ ընդհանրապես հետաքրքիր են. այսպես էր նաև Նիկողոս աղբար ալ. հետևաբար ամենայն սիրով ընդունեց Պետիկին հրավերն և սկսավ հառաջանալ դեպի այն կողմն, ուր բազմությունը կը խռնվեր։ Բայց չէր քալեր այնքան հապճեպով։ Մանավանդ թե կանգ առնելով հույն քահանայե մը, որ դեմն ելավ և իրեն ծանոթ էր, քթախոտ ուզեց, ումով մը քաշեց, քիչ մը խոսեցավ, հակառակ Պետիկի անհամբերության, և ապա սկսավ ծովեզրն երթալ։

Ճանապարհը հինգ վայրկյան կրնար տևել, բայց և այնպես Նիկողոս աղբար, մեկ երկու անձանց, որոնք կը վերադառնային այն կողմեն, հարցուց, թե ինչու բազմությունը ծովեզրը կը խռնվեր։

— Իրավ որ չենք գիտեր, — կը պատասխանեին, — գործ ալ ունինք չենք կրնար սպասել։ Ձկնորսները դիակի մը հանդիպեր են, ի՛նչ են ըրեր. կը քաշեն կը բերեն, կամ ձի ըլլալու է, կամ կով. գնա, դուն ալ գնա, բան գործ չունեցող մարդու գործ բացված է։

Ծերունին կ՚ուզեր ետ դառնալ, կովու, ձիու դիակ շատ տեսած էր, մեկ քանիներն ալ քաշելու ինքն ալ մասնակցած էր ժամանակավ։ Բայց Պետիկը խոսք չէր հասկնար, սկսավ լալ, մեծ հորը քղանցքներեն կը քաշեր. թոռանը սիրտը չկոտրելու համար ետ չդարձավ։ Բազմությունը

սովորացած էր, շատերն իրարու ուսոց վրա կ՚ելնեին. կերևեր, թե կենդանի դիակը ծովեզրն հանած էին, վասնզի ամեն գլուխներ գետինը կը նայեին ուշադրությամբ։

Նիկողոս աղբար մտքեն կ՚ըսեր. «Ինչպիսի մարդիկ ալ կան, կարծես թե առաջին անգամն է, որ Սամաթիայի ծովեզերքը կենդանիի դիակ կ՚իյնա»։ Բայց այս մտածությունները ունենալով հանդերձ, ինքն ալ կը ճեղքեր բազմությունը. ամբոխին մեջեն մեկ-երկու հոգիներ զինքը նըշմարելով, անմիջապես աղաղակեցին. «Աղեկ եկար, դուն ճանչնալու ես». և այս ըսելով ճամփա բացին, որ ծերունին դիակին մոտենա։

Այս գերագույն վճիռը շատ հաճո եղավ Նիկողոս աղբոր անձնասիրության, ուստի գոռոզաբար կը հառաջանար. բոլոր Սամաթիո չճանչցածը ինքը պիտի ճանչնար. ամենայն վեհությամբ առաջ անցավ, երբ բազմությունը իրեն տեղ տվավ։

— Կնկան մը դիակ է, կնկան մը դիակ է, նայե, կը ճանչնա՞ս, կ՚ըսեին։

Նիկողոս աղբար մոտեցավ դիակին, ուժով բռնած Պետիկին ձեռքեն, որ չկորսվի. ծռեցավ, նայեցավ, շփոթեցավ, կրկին նայեցավ և աղեկ մը. կ՚երևի, թե տարակույսի տեղ չմնաց։ Գլուխը վեր վերցուց. ապուշի պես աչքերը չորս կողմը պտըտցուց և լալով ինկավ դիակին վրա։

Մաքրիկի դիակն էր։

ԱՊՈՒՇԸ

ԱՌ Պ. ԳԱԲՐԻԵԼ ՍՈՒՆԴՈՒԿՅԱՆՑ

Հարգելի բարեկամ

Պ. ԳԱԲՐԻԵԼ ՍՈՒՆԴՈՒԿՅԱՆՑ

1884 թվականին Տփղիսի Ամառային թատրոնին մեջ հանդիսատես էի «Պեպոյին»: Առաջին անգամն էր, որ կը տեսնեի հայ թատերաբեմի մը վրա մեր ընտանեկան կենաց, մեր օրվան վշտերու պատկերներն: Ինձ անծանոթ էր Տփղիսու հայոց ժողովրդային բարբառը, և սակայն հասկցա Պեպոն և հուզվեցա խորապես: Եվ կարելի՞ էր չհասկնալ, երբ այդ շեշտերն՝ բխյալ գթած, մարդասեր սրտե մը, կը թարգմաներ թատերաբեմին վրա մի այնպիսի աննման թարգման, որպես է Պ. Չմըշկյան: Այդ օրն ըմբռնեցի, թե կովկասու հայերն ինչո՞ւ ձեզ այնքան կը սիրեն:

Հանեցաք ինձ ընծայել ձեր գործերն, զորս խորին ուշադրությամբ կարդացի և կը կարդամ ստեպ: Չեմ գիտեր, որպիսի՜ անորոշ տխրություն մը կը պատե զիս, երբ կը բանամ «էլի մեկ զոհ», «Խաթաբալա», «Քանդած օջախ» և «Պեպո»:

Ձեր այդ «կատակերգությունները», ինչպես դուք անվանած եք զայնս, անշուշտ այն համոզմամբ, թե ամեն ծիծաղ կը վարագուրե ցավ մը, ազդեցին իրենք ևս մտքիս ուղղության վրա. քաղցր է ինձ ուրեմն ձեր անվան նվիրել այս փոքրիկ վեպս:

Ձերդ
Ա. Ա.

Կ. Պոլիս, Օրթագյուղ,
1 ապրիլի 1886

Ա

— Իրա՞վ կ՚ըսես։

— Իրավն ալ խո՞սք է։ Ո՞ր աշխարհքին մեջ կ՚ապրիս, Սահա՛կ աղա. մե՛ղք որ Ղալաթիա մեծցեր ես։

— Ի՞նչ գիտնամ, ես իմ գործս կը նայիմ։

Այս վերջին խոսքերուն հետ Սահակ աղա երկու գավաթ գարեջուր ևս ապսպրեց։

Սխախոտի գոլորշիներն ոլորապտույտ բարձրանալով, մառախլապատ երևույթ մը կ՚ընծայեին Մուրատի գարեջրանոցին, որո անկյուններեն մին առանձնացյալ՝ Սահակ աղա և իր բարեկամը՝ Աբրահամ աղան, ծխելով կը խոսակցեին։

— Այդ Տիմիթրին,— կ՚ըսեր Աբրահամ աղա,— հինգ ոսկի ուներ չուներ, չորս տարի չկա, նստած էինք ճիշտ այստեղ, ուր ենք. եկուր քոնսոլիտ խաղա՛, ըսի. ընկ մընկ ըրավ. բայց խոսքի եկավ։ Շիտակն ըսեմ՝ կորսնցուց. դիմացի՛ր, ըսի. դիմացա՛վ. կորուստն հանեց, վաստկեցավ։ Ի՞նչ երկնցնեմ, աղաս, այս օրվան օրս հազար հատիկ ոսկի ունի, հազար հատիկ կլորիկ, դեղին։ Է՛յ աշխարհք։

Ի խորոց սրտի այդ հառաչանքովն Աբրահամ աղա ձեռքը սեղանին զարկավ, գավաթները վերստին լեցվեցան։

— Դուն, աղաս, այդպես կեցիր։ Մա՛րդ սստուծո, պզտիկ գործով մը բախտդ փորձե. աշխարհք չփլչիր։

— Աղեկ կ՚ըսես. բայց վիճակս չե՞ս գիտեր. մերիններն եթե իմանան, զիս կը ճամփեն, ուրիշ բան չեն ըներ։

— Ո՞ւր պիտի իմանան, ինչևէ. քու գիտնալու բանդ է. այդպես մնացիր. վախկոտ մարդուն գործն առաջ չերթար։

— Ա՛լ երթանք. ատենը ուշ է։

Փետրվարի վերջի իրիկուններեն մին էր. ձմռան պարզ, ցուրտ, պայծառ սխորժելի իրիկուն մը։ Երկու բարեկամները համրաքայլ կը բարձրանային ի Բերա, խորասուզյալ, մտածությանց մեջ։

Սահակ աղա մտահույզ էր՝ խորհելով յուր վիճակին վրա։ Քսանևհինգ տարիներ էին, հորմե հետե կը ծառայեր յուր արդի տերերուն,

և ի՛նչ եղած էր։ Տուն մը միայն ուներ, որում կը բնակեր. խնայողություններ ընելով կրցած էր Ռոպերթ դպրոցը դնել յուր Լևոն զավակը, բայց դեռ շատ տարիներ պետք էին, որ նա ուսումնավարտ լիներ։ Աղջիկը կը մեծնար և սակայն չէր կարելի գեղածիծաղ ապագա հուսալ նորա համար. ի՞նչպես ամուսնացնել զնա։ Ինքն ալ կը ծերանար։

Բայց շատ ավելի աղջամղջին էին Աբրահամ աղայի խոհերն։ Անծանոթ ապագայի անծանոթ տառապանքներով չէր տառապեր նորա հոգին։ Նա կը մտածեր, թե շատ է ավուրն չար յուր։ Բայց այդ «օրվան հոգը» անհելի է դատարկ գրպանի մը համար։ Հիսուն տարին հասած էր Աբրահամ աղանիս, առանց գիտնալու, թե ի՛նչպես ապրած էր։ Օրն օրին բան՝ մը ընելով, երեկոները ճերմակ պարկն ի ձեռին տուն կը մըտներ. բայց բավական ժամանակե հետե շատ օրեր ազատ կը մնար այդ պարկը գրպանեն հանելու և ծալքերը բանալու հարկեն։ Այս վերջին օրերը կեդրոնացուցած էր յուր բոլոր հույսերը Սահակ աղայի վրա։ Կը մղեր զնա բախտը շինելու արժեթղթոց վրա խաղալով։ Ինքը պիտի կատարեր միջնորդի դեր։ Եվ ահա այդ փորձն ալ կը մնար ապարդյուն։ Անբնական չէր ուրեմն, որ քիթն ու բերանը ծռմռկելով, ցած ձայնով, գիշեր բարի մրմռաց, երբ մտան Բերայի Թաղլա-Պաշըի փողոցներեն միույն մեջ։ Սահակ աղա հրավիրեց զնա ընթրիքը միասին ընելու. առանց շատ դժվարության Աբրահամ աղա ընդունեց հրավերը, զի աստված միայն գիտեր, թե յուր տունը ինչ կը գտնվեր սեղանին վրա։

Հետ ընթրյաց երկու բարեկամները նարտ խաղացին. երբ խաղը վերջացավ, Աբրահամ աղա դիտելով, որ Սահակ աղա խոժոռ չէ, ուզեց վերջին փորձ մը ընել։

— էյ, ի՞նչ մտածեցիր տեսնենք,— ըսավ։

— Ի՞նչ բանին համար։

— Քոնսոլիտի համար։

— Ի՞նչ մտածեմ. հասկցա, ձեռքեդ չը պիտի ազատիմ. մարդ մարդու քահանա, մարդ մարդու սատանա կ՚ըսեն. բան մը ընենք երթա։

— Փա՜ռք քեզ աստված։ Վաղն սկսինք. ի՛նչ ալ աղեկ օր, հինգշաբթի է։ Առտուն Լուսավորիչ կ՚երթանք, մոմ մը կը վառենք, փրկիչին ալ բան մը խոստանալով՝ ամեն ինչ հաջող կ՚երթա։

— Ի՞նչ կ՚ըսես, տղա՞ ես, ի՞նչ ես։

— Լռե՛, թերահավատ մի ըլլար։ Ամեն հաջողություն հավատքեն կուգա։ Տիմիթրոն ալ խաղալու սկսած առջի օրը հետս Լուսավորիչ եկավ, մոմը վառեց, ուխտը ըրավ։ Հույն էր, բայց մեր փրկիչին զորությունը տեսավ։

— Թող այդ ալ այդպե՛ս ըլլա,— ըսավ Սահակ աղա խնդալով։

Առավոտուն երկու բարեկամներն իջան Ղալաթիա։ Ուխտավորք խուռներամ կը դիմեին ի ս. Լուսավորիչ։ Հավատացելոց քայլերուն առաջնորդն եկեղեցի, հավանորեն աստծո արքայության արժանանալու տենչը չէր միայն։ Այս մասին կարելի էր ճիշտ և որոշ կարծիք մը ունենալ՝ մտնելով այն նեղ, կեղտոտ փողոցն, որ կը տանի ի Լուսավորիչ։ Այդ ամեն հինգշաբթի ցուցահանդես մը կա Պոլսո մուրացիկներու։ Այդ մուրացիկները թե՛ ավանդությամբ և թե՛ իրենց երկար փորձառությամբը լավ գիտեն, որ սրտերն անշարժ են վերացական մաղթանքներու առաջ. ողորմածներու քսակները կը բացվին միայն դրական շահույց ակնկալությամբ։ Աղքատները կը մաղթեն գործերաց հաջողություն, ցավերե, ցեցերե փրկություն, սրտի մուրատ: Հազիվ թե աղքատ մը՝ տեսնելով ծերունի մը, կ'ըսե անուշիկ մեռելներուդ հոգուն: Իսկ հոգվո փրկությո՞ւն։ Աստծո արքայություն, մուրացիկներն, բարեպաշտության այդ հոգեբաններն, բավական խելացի են իրենց շունչը չսպառել ավելորդ մաղթանքներով։

Երկու բարեկամները մտան այդ բարեպաշտներու խումբին մեջ։ Ի դիմաց Սահակ աղայի՝ Աբրահամ աղա մեծ մոմ մը վառելով փրկչին առաջ, կես մեճիտ ալ պնակը ձգեց և անշուշտ աստծո հետ ընկերակցությունը լավ պայմանագրյալ համարվեցավ, երբ տիրացու լուսարար Եփրեմն ի խորոց սրտի «աստված շեն ու պայծառ պահե» նվիրական բանաձևն արտասանեց։

Դեռ շատ կանուխ էր, երբ Քոմիսիոն խան, ուր է արժեթղթոց սակարանը՝ Պորսան: Սակարանի բացման պաշտոնական զանգակը դեռ նոր կը հնչեր։ Սենյակները բացվելու վրա էին։ Սաստիկ ցուրտ կար։ Հայ, հույն, հրեա ճաքոնները թափառական կը շրջեին խանին մեջ։ Ամենքն ունեին իրենց թևերուն ներքև տետրակներ և աջակողմյան ականջներուն վրա մատիտներ։ Շարժման առաջին նշանները կ'երևեին։ Սահակ աղա սարսուռ զգաց, կ'ուզեր ետ դառնալ, բայց արդեն երկաթե սանդուղներուն վրա էր և մտան վալութաճի Թրիանտաֆիլիտիի սենյակն, ուր պետք եղած գրավը տալով՝ 500 հատ ծախեցին, Աբրահամ աղայի անվան։

Երկու շաբաթ վերջ առաջին լիքիտասիոնին փոքրիկ շահ մը կը մնար. Աբրահամ ալ յուր միջնորդագինը կ'առներ։

Անցան քանի մը ամիսներ և գործը շատ հաջող էր. Սահակ աղա սկսած էր բավական քանակությամբ գնել, երբ աշնան վերջի օրերն, ցերեկ ատեն, հույն աղա մը հապճեպով եկավ Սահակ աղայի գրասենյակն և առանց երկար առաջաբանի ըսավ.

— Սինյոր Թրիանտաֆիլիտին կ'ըսե թե քոնսոլիտը կ'իյնա։

Սահակ աղայի գույնը նետեց։ Առաջին անգամ ըլլալով հասկցավ, թե որքան վտանգներե պաշարյալ է։ Ի՞նչ պիտի ըներ, եթե այդ տղան մի քառորդ առաջ գար, մինչ հոն էին յուր տերերն։ Առանց րոպե մը կորսնցնելու, դուրս ելավ, գնաց գտավ Աբրահամ աղան։ Նա պատասխանեց, թե բան մը չկա և գնաց Թրիանտաֆիլլիտիին, բայց շուտ վերադարձավ քիթը բերանը ծռմռկած.— Բան չկա, բանիf *է կ'անցնի. քիչ մը բան տուր թո՛ղ մնա։ Հարյուր ոսկիի պետք կա։*

Սահակ աղա կարծես թե կաթվածահար էր։ Յուր քովն ավանդ գրտնըված ստակեն, որ յուր տերանցն էր, մաս մը խոռած էր, տալով զայն իբր գրավ՝ ավելի մեծաքանակ գնումներ ընելու։ Շվարած էր այժմ Սահակ աղա. բայց յուր բարեկամը, միշտ անհողդողդ, տոկալու հրավեր կը կարդար։ Հակառակ յուր խղճին, Սահակ աղա հարկադրվեցավ 100 ոսկի ևս բերել. վալութանին *հույսեր տվավ և քաջալերություններ։*

Առավոտուն Աբրահամ աղան կանուխ եկավ, միասին իջան Ղալաթիա. երբ Թ'ունելեն ելնելով հասան Քարաքեոյի ծայրը, նշմարեցին Քոմիսիոն խանի առաջ արտասովոր շարժում։ Սահակ աղայի ոտքերը կը կտրտեին. չէր համարձակեր ոևէ հարցում ուղղել։

Բազմությունը գրաված էր Քոմիսիոն խանի մեծ դուռը, փողոցին երկու կողմերը. մինչև կամուրջին մոտ՝ կրպակներուն առաջ կազմված էին զանազան խումբեր, մառախլապատ էին ամեն դեմքեր։

Երկու բարեկամներն ուղղակի Թրիանտաֆիլլիտիին գնացին։ Նստած գրասեղանին առաջ, վալութանին *գլուխը կախ հաշիվները կը նայեր։ Հազիվ թեթև բարև մը տվին. տեղեկացան իրենց վիճակին։ Հաշիվը գլուխ գլխու էր։* Քաբաոո *պետք չէր։ Սահակ աղայի բերանը չէր բացվեր։*

Խորհուրդ ըրին. արդյունքն այն եղավ, որ այդ կոտրած գներով պետք էր քիչ մը ապրանք ևս առնուլ։ Բանիfը *կ'անցներ շուտով, գիները կը բարձրանային, ամեն ինչ կարգի կը մտներ։*

Սահակ աղա, ինչպես ամեն խաղացող, յուր անձին տերը չէր. գնաց բերավ ինչ որ կը գտնվեր սնդուկին մեջ։ Յուր աղաները շաբաթը մի անգամ կ'իջնեին կղզիեն, ուրեմն ապահով էր, թե շաբաթվան մեջ ամեն ինչ կարգի կը մտնե։

Բայց սակարանի այն օրերն էին, որում ամեն իմաստություն կը շվարի. գնոց անկումը կը շարունակեր. մեծ դրամատուները կը վաճառեին երաշխավորություն տրված գրավներն։ Այդ առավոտեն երկու օր վերջ նոր գրավի հարկ կար։ Սահակ աղա այլևս ոչինչ կրնար տալ. վալութանին *չէր սպասեր. հաշիվները փակվեցան. Սահակ աղա նախկին*

յուր բոլոր շահերը կորսնցնելէ վերջ կը կորսնցներ նաև 400 ոսկի, որք յուր տերանցն էին։

Շվարած էր խեղճ մարդն և հուսահատ, բայց հարկ էր սթափիլ և տնօրինել միջոցներ, որպեսզի յուր աղաները չիմանային եղելությունը։ Որոշեց անմիջապես կա՛մ գրավ դնել, կա՛մ ծախել տունը, որ մոտ 500 ոսկի կ'արժեր։

Երկու օրերն ի վեր մեծ փութաջանությամբ հետամուտ էր այդ գործին, երբ երրորդ առավոտուն գրասենյակ գալով, անդ գտավ յուր աղաներուն կրտսեր եղբայրը. Սահակ աղայի գույնը նետեց. հասկացավ, թե բան մը կա։

Արդարև աղային բարեկամներեն մին առջի օրն ըսած էր նմա. «Կերևի թե հրամանքնիդ ալ ֆոնսոլիտ կը խաղաք. ձերինը (ակնարկելով Սահակին) Պորսայեն դուրս չելներ»։ Երբ աղան զայս իմացավ, հաջորդ առավոտն առաջին շոգենավով կղզիեն Ղալաթիա ելավ։

Տեսնելով իրենց գործակատարը, քիչ մը հարցուփորձ ըրավ և ըսավ, թե երկու հարյուր ոսկի տա։— Սահակ աղա չպատասխանեց, անշարժ կեցավ։

— Ի՞նչ կա. ինչո՞ւ չես բերեր։

Ի՞նչ բերեր։ Աչքերը լեցված էին. պատասխանեց, թե փորձանքի հանդիպեցավ, բայց թող անհանգիստ չըլլան. շաբաթվան մը մեջ ամբողջապես կը վճարե։

Աղան ոչինչ չպատասխանեց. անմիջապես մեծ եղբորն հեռագրեց, որ վերջին շոգենավով իջնե։ Կեսօրին մոտ մեծ եղբայրն եկավ, խորհուրդ ըրին և Սահակը ներս կանչելով, ըսին թե էմեֆտառնին ըլլալով, բան մը չէին ըսեր ըրածին համար, բայց կը պահանջեին չորս հարյուր ոսկվո պարտամուրհակ մը, վճարելի իրենց հրամանին, երբ ուզեն։ Սահակ աղա գրեց և ստորագրեց պարտամուրհակը։

Պարտամուրհակը ձեռքերնին ունենալով՝ աղաները վստահ եղան, որ գործակատարն այլևս չէր կրնար պարտքն ուրանալ։

Դեռ չէին ճանչեր այդ դժբախտ, բայց ազնիվ անձը. սպառնացին հանձնել զինքն ոստիկանության՝ իբր «գող», եթե առ ի ապահովություն պարտքին՝ տունը չդարձնե իրենց վրա։ Սահակ դառն ժպիտ մը ունեցավ։

— Ինչպես կ'ուզեք, այնպես ըլլա,— ըսավ։

Նույն օրն անմիջապես վաճառման պայմաններն ի գործ դրվեցան և տունն այլևս աղաներուն սեփականությունն էր. եթե շուտով վճարեր պարտքը խոստում տրվեցավ իրեն՝ վերադարձնել տունը։

Այս գործողությենն վերջ.

— Խըսմեթդ այսչափ էր ըսին, և ճամփեցին։

Երկու ամիս պայմանաժամ որոշվեցավ տունեն ելնելու՝ եթե վարձքը վճարելու անկարող լինի։

Բ

Պեպեքի և Հիսարի միջև՝ բլրակի մը վրա կառուցված է «Ռոպերթ վարժարանը»։ Այդ դպրոցը կ՚աշակերտեր Սահակ աղայի որդին՝ Լևոնը, գեղեցիկ, աշխույժ, սիրուն տղա մը, գրեթե տասնևչորս տարեկան։ Այդ վարժարանի գիշերօթիկ աշակերտք իրավունք ունեին իրենց տուները երթալ ամեն շաբաթ երեկոները։ Լևոն, որպեսզի յուր աշխատությունները չընդհատին, այս իրավունքեն ամիսը մի անգամ օգուտ կը քաղեր։ Դըպրոցը կը գտնվեր, երբ պատահեցան հորը դժբախտությունները։ Տուն գնաց երեք շաբաթ վերջ. ոչինչ գիտեր, բայց նշմարեց ծնողացը տխրությունը և զգաց, թե մեծ վիշտ մը կը տանջեր զանոնք։ Քրոջն հարցուց, նա ևս ոչինչ գիտեր։ Կիրակի երեկոյին, երբ Լևոն մեկնեցավ տունեն, սիրտը կոտրած էր։ Տրտում տխուր անցուց ամբողջ շաբաթն և երբ լրացավ շաբաթն, այլևս չէր կարող համբերել, տուն գնաց. այս անգամ մի քիչ ավելի զվարթ տեսավ ծնողքն։ Արդարև Սահակ աղա կը հուսար մոտավոր ժամանակի մեջ կարգադրություններ ընել։ Լևոն դպրոց վերադարձավ՝ սիրտն ավելի հանգարտած։ Շարունակեց ամիսը մի անգամ տուն գնալ։ Միշտ տունը խաղանակ վիճակին մեջ կը գտներ, և վրդովյալ կը մնար։

Բարեկենդանեն շաբաթ մը առաջ, կիրակի առավոտ մը, օդը գեղեցիկ էր, ձմռան պայծառ կիրակի մը։ Առջի օրը շատ ձյունած էր. ձյունաթաղ էր ամբողջ Պոլիս։ Ամեն ոք հրճվանք կ՚զգար պտտելու այդպիսի եղանակի մը։ Լևոն մի քանի ընկերաց հետ մեկնեցավ դպրոցեն, երեկոյին վերադառնալու որոշմամբ։ Խաղալով ձյունի հետ և զիրար ձյունակոծելով, ցատկռտելով սկյուռի պես, իջան Պեպեք և մտան շոգենավ։ Կամուրջեն Լևոն ուղղակի Բերա գնաց և երբ կը մտներ Թաքսիմ-Պաշի, իրեն տան փողոցն, հանկարծ կանգ առավ ապշած։ Բաց էին իրենց տան դռներն, որոնց առջև կայնած էին կոփու լծված երկու կառքեր, որոնց վրա կը զետեղեին կահկարասիներն։ Շվարած, Լևոն կամաց-կամաց կը քալեր. երբ դռնեն ներս մտավ, մայրը տեսավ, որո աչքերն ուռած էին, այնքան լացած էր՝

— Լևոն, ինչո՞ւ եկար, եղավ մորն առաջին հարցումը, վասնզի հաջորդ շաբաթը կ՚սպասեին նման։

— Աս ի՞նչ է,— հարցուց Լևոն։

— Տղաս, տունեն կ՚ելնենք,— պատասխանեց մայրն, աչքերուն տանելով թաշկինակը։— Քույրն ալ շատ արտասված կը թվեր։ Լևոն գնաց հորը ձեռքը պագնելու. հայրը տրտում տխուր կարգադրություններ կ՚ըներ։ Լևոն շատ ավելի զարմացավ, տեսնելով թաղապետության երկու գավազները, թաղին Ճեճյան և մխքարը:— Լևոնի մայրը քանի մը բառով հասկցուց տղուն, թե հայրը պարտք ուներ աղաներուն և տունը կը գրավեին. հայրն ալ պարապն էր։

Արդարև անցած էին, շա՜տ շուտ անցած մի քանի ամիսներն, զոր Սահակ աղայի նախկին տերերը շնորհած էին նմա՝ տունը կենալու համար։ Այդ միջոցին Սահակ աղա կարող չէր եղած ո՛չ գործ մը գտնել և ո՛չ ալ կարգադրություն մը ընել։ Անունը արատավորյալ էր, վարկը կոտրած։ Աղաները տեսան, թե Սահակ ոչ տունեն կ՚ելնե, ո՛չ վարձք կը վճարե, և որովհետև իրենք ալ գործնական մարդիկ էին, դիմեցին օրինական միջոցներու և Բերայի թաղապետության ձեռօք պարպել կուտային Սահակ աղայի տունը, ձմռան պայծառարև այդ կիրակիին։— Բեռնակիրները կրելու շատ բան չունեին. մի քանի ամիսներե հետե Սահակ աղա կ՚ապրեցներ ընտանիքն և կը վճարեր մանր պարտքերը՝ ծախելով տան կահկարասիները։

Իրիկվան դեմ ամենքը դուրս ելան տունեն։ Ամենեն ավելի դառնացած էր Սահակ աղայի կինը։ Որքա՜ն հիշատակներ կապած էին յուր սիրտն այդ տան հետ։ Հոն հարս գնացած էր, հոն ունեցած էր զավակներն, հոն մեռած էր յուր մեկ տղան, հոն կը ձգեր սրտին բեկորները։

Գացին, մտան Բերայի նեղ, մութ, աղտոտ փողոցներեն միույն մեջ՝ հին տուն մը։ Նույն օրն այդ տան մեջ վարձած էին սենյակ մը։ Միևնույն տան մեջ կը բնակեին նաև ուրիշ երկու ընտանիքներ և տան տերը միանգամայն, յուրաքանչյուրն ունենալով մեկ սենյակ։

Երբ դռնեն ներս մտան՝ առաջին զգացումնին նողկանք եղավ. ծանր հոտ մը կամ չար եւ ծանր հոտեր կային։ Մեկ երկու տեղ կերակուր կ՚եփվեր, հոտն ամեն կողմ բռնած էր։ Հոտ ձեթի, հոտ յուղի, հոտ ձկան, ուրիշ հոտեր, խառն ածուխի մուխի հոտ։ Խեղճերն հասկցան, թե ինչ է աղքատությունը։ Տեղավորեցին կարասիները, քիչ մը կրակ պատրաստեցին, գրին պղնձե փոքր կրակարանին մեջ, բոլորեցան չորս կողմը։ Սահակ աղայի կինը պատառ մը ուտելիք պատրաստեց, կերան։ Գիշերն Աբրահամ աղա եկավ այցելության. մխիթարանաց մի քանի խոսքեր բրավ. նստեցավ մի քիչ. հյուրը գնաց, անկողինները տեղավորեցին և պառկեցան։— Այդ երեկոյին Լևոն չէր վերադարձած դպրոց։

Բարեկենդանն անցավ, բոլորեցան նաև մեծ պահքին առաջին շաբաթներն և Լևոն միշտ տունը կը մնար։ Պատճառը պարզ էր. փետրվար ամսո վերջ պետք էր վճարել վեցամսյա թոշակն, անգլիական քսան ոսկի. ինարկե Սահակ աղա չէր կարող այդ վճարումն ընել և խեղճ տղան տունը կը մնար։

Եթե եսականությունը լիներ մարդկային սրտի միակ բնածին զգացումը, պիտի նմաներ մարդկությունը այն փոքր, վտիտ, արուգ տունկերու, որք կը բուսնին մրրկակոծ ապառաժներու վրա. բայց մարդու սիրտն, օթևան սուրբ զգացմանց, մանավանդ գթության և ներողության ոգվույն, կ՚աճի, կ՚ուռճանա՝ սփռելով յուր շուրջ կենսաբույր դալարություն։ Այդ ազնիվ ոգին ուներ Կարնեցի Սինայան մահտեսի Կարապետ էֆենտին։ Եթե գավառացիք շատ անգամ կ՚ատեն զիրար ի խորոց սրտի, սակայն և հաճախ ցույց կուտան գուրգուրալիր սիրտ մը՝ իրենց հայրենակցաց նկատմամբ։ Այդ կարգի գավառացիներեն էր Սինայան էֆենտին։ Երկար ժամանակե հետե Պոլիս գաղթած և անդ հաստատված վերջապես, բայց չէր մոռցած յուր երկիրն և յուր հայրենակիցներն։ Լսելով Սահակ աղայի դժբախտությունները, շատ ցաված էր։ Սահակ աղա ինքն ալ կարնեցի էր, տղա հասակին մեջ Պոլիս եկած և անդ հաստատված։ Կարապետ էֆենտի նեղացավ, լսելով նաև, որ յուր հայրենակցին զավակը հարկադրված էր դպրոց չգնալ։ Կարապետ էֆենտիի որդին Մկրտիչը շատ անգամ գովեստիվք խոսած էր հորը՝ Լևոնի մասին։ Մկրտիչ նախկին աշակերտ էր Ռոպերտ վարժարանի և հարաբերության մեջ կը գտնվեր դպրոցի ուսուցիչներու հետ, որոնցմե լսած էր Լևոնի գովեստներն։

Սահակ աղա շատ անգամ կ՚այցելեր Կարապետ էֆենտիի, բայց դադարեցուցած էր յուր այցելություններն հորմե հետե դժբախտություններ ունեցավ։ Մեծ պահքի մեջ Կարապետ էֆենտի օր մը ճանապարհին հանդիպեցավ Սահակ աղային և տղուն վրա խոսելով՝ խոստացավ նորա պաշտպան լինիլ և դպրոցի ծախքերն հոգալ։ Նույն երեկոյին Լևոն հորն հետ գնաց Կարապետ էֆենտիի տունը՝ շնորհակալ ըլլալու։ Լևոն թեպետ տղա, բայց Ռոպերթ դպրոցի մեջ յուր անձնասիրական զգացումները զարգացած էին շատ կանուխ։ Բավական վիրավորված էր, որ ուրիշին ողորմությամբը պիտի հառաջանար. բայց ի՞նչ կրնար ընել։ Ուսման անհագ տենչ ուներ և չէր կարող մերժել առաջարկն այն ազնիվ անձին, ում արդեն ի սրտե երախտապարտ էր։ Նույն գիշերը տունն էր նաև Սինայանի որդին՝ Մկրտիչը. երիտասարդ մը՝ առույգ, կորովի, երկայնահասակ, ուրախ զվարթ, բայց ծանր։ Մկրտիչ մի քիչ խոսակցեցավ Լև-

վոնի հետ՝ դպրոցի մասին, ինչպես սովոր են խոսել դպրոցներու նախկին աշակերտք նոր աշակերտաց հետ։

Կարապետ էֆենտին ալ քաջալերականներ կարդաց և ըսավ, թե աստված մեծ է, ողորմությունն անսպառ է։ Լևոնի վերջն ալ լավ պիտի լինի։ Հորը, մորը ծերությանը գավազանը պիտի ըլլա։

Հաջորդ օրը Սինայանի գործակատարը Լևոնը կը տաներ Ռոպերթ դպրոցը, կը վճարեր վեց ամսականը, և Լևոնը կը շարունակեր յուր դասերն։

Այդ օրէն կերպարանափոխ եղած էր Լևոն։ Յուր ուրախ, զվարթ դեմքը ծանրախոհ էր այլևս, զի կյանքի մեջ մտած էր ինքն։ Երբեք չէին լիներ աներևույթ յուր աչքերե հայրն՝ յուղոտած հին զգեստներով, կորաքամակ եղած, անպատիվ և աղքատ։ Խեղճ մայրը, որ օրն ի բուն կ'աշխատեր, կար կը կարեր ապրելու համար, խեղդամահ կը լիներ խոհանոցի մուխի ու հոտերուն մեջ։ Քույրը, տասը տարեկան և արդեն դժբախտ։ Հարկ էր չարաչար աշխատիլ և փրկել ընտանիքն։ Լևոն աշխատեցավ։ Անցան չորս տարիներ։ Ավարտեց նա դպրոցական ընթացքն, լինելով մին առաջին կարգի վկայյալ աշակերտաց։ Բայց այն օրն որում վերջնական կերպով հրաժարական տվավ դպրոցին, շատ տրտում եկավ տուն։

Սակայն նախախնամությունը, որ Սինայանի անձնավորության ներքև կը հսկեր Լևոնի վրա, շուտ օգնության հասավ։ Սինայան վաղուց խորհած էր, թե կարելի չէր այդ տղան պարապ թողուլ, երբ ելնե դըպրոցեն։ Այս նպատակով Կարապետ էֆ. հանձնարարած էր յուր զավկին, որ գործ մը գտնե Լևոնին։ Մկրտիչ Սինայան շատ հետամուտ եղած էր, որ Լևոնը Պանք Օթոմանը մտնե. շնորհիվ յուր հարաբերության՝ Մկրտիչ էֆենտի Սինայան հաջողած էր Լևոնի համար պաշտոն մը գտնել Պանք Օթոմանի մեջ։ Հուլիսի հինգշաբթին, երբ ավարտեցավ Ռոպերթ դպրոցի պարգևաբաշխության հանդեսն, Լևոն վերադառնալով Բերա, յուր առաջին պարտականությունն համարեց երթալ Սինայան էֆենտիի հայտնելու յուր երախտագիտության զգացումներն։ Սինայան բավական քաջալերություններ տալե վերջ ավետեց բարի լուրն և հայտնեց, թե երկուշաբթի օր Մկրտիչին հետ Պանք Օթոման երթալով կը մտնե յուր գործին։

Ո՜հ, այն օրն, այն անմոռանալի օրն, երբ վերջացավ ամիսն, և Լևոն ստացավ յուր առաջին ամսականն, որ ըստ ավանդության վեց օսմանյան ոսկի էր։ Երեկոյին վերադառնալով տուն՝ անմիջապես այդ գումարն հանձնեց հորը։ Ի՞նչ գոհունակություն այդ խեղճ ընտանյաց մեջ։

Թոլորեցան ամենքը միասին. կ՚օրհնեին Սինայանի ընտանիքն։ Մոռցան անցյալն, մոռցան իրենց թշվառությունններն։

Չենք ուզեր մանրամասնորեն պատմել, թե որպիսի՜ տոկուն աշխատությամբ Լևոն հաջողեցավ երկու տարիներու մեջ պատրաստել իրեն լավ վիճակ մը։ Թողած էին այն հին խեղճ տունը. այժմ Լևոն կը բնակեր յուր ծնողաց հետ գեղեցիկ փոքր տուն մը, և հանգիստ կ՚ապրեին։

Անշուշտ ներելի էր երջանիկ համարել Լևոնն, ինքն ալ այնպես կը կարծեր, և սակայն երիտասարդի մը սիրտը կարո՞ղ է հանդարտ կենալ։ Լևոնի սիրտը կարոտ մը ուներ. ի՞նչ բանի, ինքն ալ չէր գիտեր։ Անտարակույս բավական ատեն պիտի անգիտանար այդ կարոտն, եթե Սինայանի տան մեջ յուր սիրտը չտրոփեր տեսնելով աղջիկ մը՝ զոր ճանչըցավ օրիորդ Ցոռթյունե անվամբ։ Օրիորդն ավելի կորովի էր, քան փափուկ, ավելի խրոխտ էր, քան հրեշտակային, խորին տպավորություն մը թողուց նա Լևոնի փափուկ, կույս, դյուրագորով սրտի վրա։ Հավանորեն պատկերահան մը պիտի չընտրեր օրիորդ Ցոռթյունե գեղեցկության կատարյալ օրինակ մը։ Բայց քանի որ մարդկությունն գոյություն ունի, ըսված է, թե սերը կույր է։ Լևոն կը սիրեր Ցոռթյունեն։

Լևոնի սրտին մեծագույն հրճվանքն էր հանդիպել Սինայանի տունը այդ աղջկան։ Բա՜յց շուտով սիրտը դառնացավ. Ցոռթյունե անտարբեր կը թվեր իրեն համար և յուր բոլոր հրապույրները կը պարզեր Սինայան Մկրտիչի հանդեպ։ Մկրտիչ Սինայան կը սիրեր զՑոռթյունե։ Լևոն կասկածոտ, և անփորձ աշխարհքի մեջ, չվարանեցավ հաստատական պատասխան տալ։ Այդ օրեն Լևոն ինքզինքը թշվառ կը համարեր։ Քսան տարեկան երիտասարդ մը միշտ դյուրամետ է թշվառ համարելու զանձն։ Ի՞նչ պիտի ըներ։ Տեղի տա՞լ, թե մարտնչիլ։— Ոչ մին և ոչ մյուսն կարող էր ընել։ Ինչո՞ւ զիրենք ազատեցին Սինայանք թշվառութենե, կը հարցներ ինքնին։ Մարտնչի՞լ. ինք որ կյանքի կռիվներու վարժված էր, չէր վարաներ այդ կռվույն մեջ մտնել։ Ո՞վ գիտե «կինը փոփոխամիտ է», թերևս հաղթանակն իրեն մնար։ Բայց մարտնչի՜լ այն անձանց դեմ, որք առանց որևէ շահու ակնկալության փրկած էին զինքն ու ծնողքն, ահռելի կը թվեր իրեն։ Այդ օրն ըմբռնեց, թե մարդուս համար մեծ դըժբախտություն մը կրնա համարվիլ ուրիշին երախտապարտ մնալու պարտականությունն։ Շղթայապիրկ եղած էր. շղթան թեպետ բարոյական էր, բայց և այնպես շղթա էր։

Սինայանի սերճ ապարանաց մեջ, երբ Լևոն կը լսեր Ցոռթյունե անունը, կրնա՞ր ենթադրել, թե այդ սեգ աղջիկն աղքատ կոշկակարի զավակն էր և թե մեկնելով փարթամության այդ բնակարանեն, նա կ'երթար, հուսահատ և կատաղի, բանտարկվիլ անարև տնակի մը մեջ։

Երբ աշխարհ եկավ այդ աղջիկը, մայրն յուր առաջին օրորովը պահապան հրեշտակ կը հանդիսանար ունայնասիրության այն զգացման, որ կնոջ սրտին մեջ բյուրաբեղուն լինելու համար չկարոտիր մայրենի գգվանաց և խնամոց։ Այդ աղջկան հայրը կոշկակար էր և մայրը լվացարար. թեպետ լվացարար, բայց միշտ կին։ Երբ պիտի մկրտեին աղջիկը, կինը, Շողակաթ տուտուն, կ'ըսեր.

— Աղջկանս ալաֆրանկա *անուն պիտի դնեմ։*

— Անանկ է, անանկ է,— կը պատասխաներ կոշկակարը։— Սա ալաֆրանկան ալ ի՞նչ աղվոր կը վայլե մեզի։

Կոշկակար Ավետիսն առողջ դատողություն ուներ. կարևորություն չընծայեց կնոջ քրթմնջանացն և աղջիկը մկրտել տվավ Պիրիճիկ անվամբ։ Այդ անունը լինելով կոշկակարին մորն անունը, կը զարթուցաներ նորա սրտին մեջ քաղցր հիշատակներ։

Բայց երբ Պիրիճիկ մեծցավ մի քիչ, մայրն հաստատ որոշեց տեղի չտալ այս անգամ յուր ամուսնույն կարծյացը։ Փոքրիկ աղջիկը կնոջ մը տուն «վարպետ կ'երթար» և ուսած էր հասարակ ընթերցում։ Երբ ինն տարեկան եղավ, մայրը հայտարարեց, թե աղջիկը ֆոլեն *պիտի դնե. կոշկակարն համակարծիք չէր յուր կնոջը։ Ավետիս մի պարզ մարդ էր, տգետ, բայց առողջ մտոք ըսինք. նորա կարծյոք կը բավեր որքան կարդալ ուսած էր աղջիկը. լավագույն կը համարեր փոխանակ զնա դպրոց դնելու, ուսուցանել նմա կար, ձեռագործ, որպեսզի օր մը կարող լինի ճարել յուր հացը և ամուսնանալ իրենց աստիճանին համեմատ անձի մը հետ։*

— Ամեն բույս իր հողի վրա աղեկ կը մեծնա,— կ'ըսեր։

Բայց կինը կը մրմռար։

— Ա՛լ աս անգամ խոսքերդ ականջս չեն մտներ. աղջիկս «օրիորդ» պիտի ընեմ. երկու աշխարհք իրարու ալ գան, մտքիս դրածը պիտի ընեմ, աղջկանս արունը հը պիտի մտնես։

Կոշկակարը ձանձրացած էր այդ վեճերեն. Շողակաթ առանց ուշադրություն ընծայելու ամուսնուն խոսքերուն, կը գործեր։ Նա կը մտներ կ'ելներ շատ մեծամեծներու տուներ. կարող եղավ առանց մեծ դժվարության Պիրիճիկը ձրիաբար ընդունել տալ աղջկանց դպրոցին մեջ։

Դպրոցը Պիրճիկի համար նոր աշխարհ մ՚էր. կը տեսներ աղջիկներ, որք լավ զարդարված էին. ճաշի միջոցին կը տեսներ, որ նոքա կ՚ուտեին այնպիսի կերակուրներ, զորս ինքն ոչ տեսած էր և ոչ լսած. աչքերը բացած կը նայեր։ Երբ այդ աղջիկները դպրոց կուգային և կը մեկնեին, անոնց ետևեն ծառաներ կ՚երթային։ Եվ հետո, ի՞նչ խոսակցություններ, Յուր ընկերուհիներեն շատերը գնացած էին ամառը Վոսփորի գյուղերն կամ կղզիները. կը պատմեին միմյանց իրենց զբոսանքներն, իրենց զվարճությունները։ Պիրճիկ ոչինչ կը հասկնար լավ մը. միայն սա կը հասկնար, թե ինք կարող չէր մասնակցիլ այդ խոսակցությանց։

Ձմեռն հասավ, կը կատարվեին տոնախմբությունք և երեկույթք, ու հաջորդ օրերն ատոնց վրա կը խոսեին աշակերտուհիք։ Պիրճիկ աչքերը բացած, ականջները սրած, մտիկ կ՚ըներ ապշած։

Կաղանդին օրն ինքն ալ դպրոց գնաց, պարզ, բայց կոկիկ հագված։ Ուրախ էր։ Իհարկե ինք վարժապետներուն քիչ ստակ պարգև կը տաներ, յուրաքանչյուրին մեկ քառորդ մեճիդ՝ խեղճը կը կարծեր, որ բոլոր աշակերտք այնքան բերած են, որքան ինքն. ավելի մեծ գումարի վրա գաղափար չուներ։ Բայց տեսավ, թե վարժապետները կ՚ընծայեին յուր ընկերուհիներուն գեղեցիկ մեծ պատկերներ, ոսկեզօծ գրքեր, իսկ իրեն երկու հատ պարզ օրացույց տվին. շատ տխրեցավ, քիչ մնաց պիտի լարտրտում տուն դարձավ։

Փոքր առ փոքր ընտանեցած էր ընկերուհիներուն. կիրակի օրերն անոնց կ՚երթար խաղալու. կը ցատկոտեին պարտեզները, սրահներուն մեջ, կ՚զբոսնուին ուրախ զվարթ, բայց երբ կը վերադառնար տուն՝ իրենց բնակարանն աչքին նեղ, մութ, տխուր, անտանելի կ՚երևեր։

Սինայան Կարապետ էֆենտիի մեկ աղջիկն ալ դպրոցն էր. իրիկուն մը միասին տուն տարավ Պիրճիկը։ Կարապետ էֆենտի երեկույթ կուտար. Սինայանի աղջիկը գգվեց յուր ընկերուհին, առատորեն անուշեղեններ կուտար, որոնց վրա կ՚սքանչանար Պիրճիկ։ Գիշերը մյուս ընկերուհիներեն շատերն եկան. իրմեն որքա՜ն տարբեր զարդարված էին, և ինչպես ամեն ոք զանոնք կը սիրեր, կը փայփայեր, իսկ իրեն ոչ ոք կը մոտենար. այսու հանդերձ շատ զվարճացավ։ Եվ երբ վերադարձավ տուն, անդադար յուր ականջներում կը հնչեին պարերու և դաշնակներու ձայներն։ Չէին աներևութանար յուր աչքերուն առաջեն հիանալի սրահները՝ լուսավորված լուսաբորբոք ջահերով։

Օր մը մայրն ուրախությամբ եկավ հաղորդել աղջկանը՝ թե ա՛լ աղեկ աղեկ կերակուրներ պիտի ուտե։ Ազնվական տիկին մը ըսած էր Շողակաթին, թե այնուհետև Պիրճիկ ճաշե յուր աղջկան Հերիգային

հետ, որ կ՚աշակերտեր միևնույն դպրոցն։ Ազնիվ, ջաղաջավարի աղջիկ մ՚էր նա։ Երբ միասին կը ճաշեին, կը վարվեր այնպես Պիրիճիկի հետ, իբր թե նա լիներ մեծարելի մի հյուր։ Եվ սակայն Պիրիճիկ երբեք չուներ ժպիտ, մինչ կը ճաշեին միասին. և հասավ օր մը, որ մինչև իսկ ատելություն զգաց Հերիգայի դեմ։

Ո՞ր մեկն այն դառնության, որք կաթիլ-կաթիլ կ՚իյնային այդ մատաղ սրտին վրա և զայն կը թունավորեին։ Որքան կը մեծնար Պիրիճիկ, այնքան ավելի յուր բնավորությունը կը լիներ անտանելի։ Նեղսիրտ, դժգոհ, դառնացած աղջիկ մ՚էր։ Պատահեցան պարագաներ, որ կոշկակարն այլևս չկարողացավ համբերել և ապտակ խփեց աղջկանը։ Եթե մեկը դիտեր այդ միջոցին Պիրիճիկի աչքերն, որոց բիբերն կը խառնըվեին ճերմակին հետ և կարծես կարմիր կանաչ գույն մը կ՚առնեին, առանց վարանելու կրնար ըսել, թե այդ աղջիկն ընդունակ էր սպաննելու յուր հայրն։

Կ՚անցնեին մանկության օրերն և Պիրիճիկ, որ մինչև ցայնժամ կ՚զգար առանց խորհելու, սկսավ մտածել և խորհիլ։ Նախանձ, ատելություն բույն դրած էին յուր սրտին մեջ և անտարակույս մեղավորն ինք չէր։ Անհանդուրժելի էր իրեն համար ստորին լինել յուր ընկերուհիներե, բայց ի՞նչ կրնար ընել։ Որչափ ավելի ստորին էր ընկերական վիճակին մեջ, այնքան ավելի սիրտը կը տոգորվեր փառասիրությամբ։ Եվ հետո՝ մարմինը կ՚աճեր. ով որ դիտեր մի քիչ այդ աղջկան կարմրալար թանձրաշուրթն բերանը, հրուտ աչքերն, կրնար ըսել, թե կը հուզվեր նա տռփանաց, ցանկության, հեշտասիրության ամեն կրքերով։

Պիրիճիկ յուր դժբախտությանց մին կը համարեր անունը և մականունը։ Իհարկե «Պիրիճիկ Խունտուրաճյան» ներդաշնակության հրաշալիք մը չէր՝ և դժվար էր ենթադրել, թե այդ անվան հովանվույն ներքև նա կարող լիներ յուր ճանապարհն առաջ վարել աշխարհի մեջ։ Այդ մականունը ծաղրու առարկա մ՚էր մանավանդ դպրոցի Մատամին, որ երբ կ՚արտասաներ զայն, յուր դեմքն հտպտանաց հրաշակերտ մը կը լիներ։ Պիրիճիկ կը փափագեր անունը փոխել։ Միտքը բաց աղջիկ մ՚էր և շատ հառաջադիմած էր ֆրանսերենի մեջ։ Մատամը կը սիրեր զնա. միասին խորհրդակցեցան նոր անուն մը գտնելու համար։ Մարի, Վիկթորիա, Ժոժենի սովորական համարվեցան, գրեթե հայացած,— և Պիրիճիկ չէր սիրեր հայերենը. վերջապես գտան «Ֆոռթյունե» անունը, զոր կը համարեին նաև մի բարեգուշակ անուն։ Կը մնար մականունը որոշել. բավական մտածեցին. մտածելու և գտնելու միջև անջրպետը ընդարձակ չէ։ Կոշկակարին անունը Ավետիս էր. իհարկե մականուն մը փոխելն այնքան հեշտ չէ, որքան անուն մը, ուրեմն հարկ էր մոտենալ բուն մականվան։

Պիրիճիկ կրճատեց հորն անունը, Ավետիսն ըրավ Ավետ։ Արդարև շատ գոհացուցիչ չէր այս գյուտը, բայց ֆրանսերենի մեջ անախորժ չէր հնչեր։ Պիրիճիկ, կամ թե նոր անվամբն այսուհետև անվանենք զինքը — Ֆոռթյունե, կրցավ խնայողություն մը ընել տալ մորը մեկ մեճիտի՝ և զայն հանձնեց Մատամին՝ իրեն այցետոմսը շինելու համար։ Կյանքին մեջ առաջին ուրախությունն ունեցավ, երբ տեսավ այդ այցետոմսը։

Mlle Fortunée Avède

Այդ այցետոմսն ի ձեռին՝ կ՚ուրախանար. կարծես հույսը կը ժըպտեր իրեն. որքա՞ն հույսեր այդ այցետոմսի շնորհիվ. բայց տխուր իրականությունը միշտ յուր մոտն էր։ Օր մը օրիորդ Ֆոռթյունե, միասին օր. Հերիգայի և օր. Սինայանի և մի քանի ուրիշ ընկերուհյաց, այցելեց իրենց մի ընկերոջ. լավ ժամանակ անցուցին, գոհ և ուրախ։ Երբ պիտի մեկնեին, տան պառավ կինը, բարեսիրտ կին մը, ըսավ Ֆոռթյունեի, առանց որևէ չարամտության.

— Քա ա՛ղջիկ, սա մորդ ըսե, էրկուշաբթի թող գա։ Աղտոտները լեռան պես դիզվեր են. թող գա չամաշըր մը ընե։ — Ձմոռնա՛ս, հա՛։

Ֆոռթյունեի դեմքը մեռելի գույն առավ։ Ընկերուհիներն այնքան ազնիվ էին, որ չլսել ձևացուցին, բայց Ֆոռթյունե լսած էր։

Այո՛, օգուտ չուներ ֆրանսերեն անունը, ֆրանսերեն այցետոմսը — Յուր աղքատությունը ճակտին վրա դրոշմված էր. ամեն ոք իրավունք ուներ հրապարակավ ըսելու, թե մայրդ մեր աղտոտները թող լվա — և այդ դրոշմը ճակտին վրա կրելով արի՛, մի փառավոր ամուսին գտիր։ — Եվ սակայն պարտական էր կատարել այդ հանձնարարությունը։ Հացի խնդիր էր։

Տասնևյոթ տարեկան էր, երբ դպրոցեն ելավ, փառավոր վկայագիր ստացած։ Երեկոյին կոշկակարը միշտ գլուխն երերցնելով կ՚ըսեր կնոջն.

— Հրամմե նայինք, հիմա ի՞նչ պիտի ընես. ո՞ւր տեղդ պիտի պահես **ճանըմ օրիորդդ**. *նայինք՝ ե՞րբ ֆրենկ մը պիտի գտնես կարգելու։*

Ավա՜ղ, ո՛չ եվրոպացին կը ներկայանար և ո՛չ հարուստ հայը, զոր Ֆոռթյունե հավանորեն զիջաներ ամուսին ընդունելու։ Ձենք ըսեր, թե Ֆոռթյունեի սիրահարվողներ չէին գտնվեր, բայց դոքա դպրոցեն նոր ելած պատանիներ էին՝ առանց բացառության։ Տասնևյոթը, տասնևութը տարեկան այդ պատանիներու աղվամազ երեսները, փոքրիկ մորուքներն, եվրոպական գլխարկներն, սիրուն գավազաններն և մաքուր հայերենը բավական չէին զիրենք Ֆոռթյունեի մտատիպարներն ընելու. եթե հարուստի զավակ լինեին, ինչևէ, բայց իրենց գրպանները դատարկ էին։

Շաբաթները, ամիսները, կ՚անցնէին և Յոռթյունն այնպես կը մնար ու կը տառապեր։ Ճարահատյալ հանձնառու եղավ՝ ուր ուրեմն վարժուհի լինիլ։ Գեթ սենյակ մը կ՚ունենար պառկելու, կրնար լավ ճաշ մը ընել և զգեստներ ունենալ։ Եվ ո՞վ գիտե. տեղափոխությունը կրնար նաև բերել բախտի փոփոխություն մը։ Դժբախտաբար այդ աղջկան համար յուր չարաբաստիկ աստղը կ՚առաջնորդեր վերստին իրեն հայու մը տունը։ Հանրմը մեծ խտրություն մը չէր դներ աղախնո մը և վարժուհվո մը մեջ և երկուքն ալ ամսական կ՚առնեին. այդ կը բավեր։ Այդ հանըմը կը պահանջեր, որ վարժուհին զբաղի ոչ միայն երեխաներու դաստիարակությամբ, այլ նաև իրեն պարտականություն համարի հոգ տանիլ անոնց զգեստներուն և մինչև իսկ ինքը մաքրե, լվա անոնց ձեռքերն ու երեսները։ Յոռթյունն շաբաթ մը միայն կարող եղավ տոկալ այդ ստորնության և կրկին վերադարձավ հայրենի հարկը։

Բայց այս անգամ բախտն իրեն հետ էր. շատ չկեցավ տան մեջ։ Մատամը հաջողած էր գտնել Յոռթյունի համար վարժուհիի պաշտոն՝ հույն տան մը մեջ, ի Յեննե, բոլորովին հեռի հայ ընկերութենե։ Յոռթյունն բավական ֆրանսերեն գիտեր, մաքուր կ՚արտասաներ այդ լեզուն։ Մատամը առանց շատ դժվարության հաջողեցավ հավատացնել, թե Յոռթյունն մի ֆրանսուհի էր։

Որքա՜ն տարբեր կը գտներ այդ տունը հայ տուներեն, ինչքա՜ն կը հարգեին զինքն իբր օտարուհի։ Ինքն ալ լի նորանոր հույսերով, կերպարանափոխ կը լիներ, երջանկության հորիզոն կը պարզվեր յուր աչաց առաջ և բարի կը լիներ։ Եվ ի՞նչ կը հուսար. հարուստ հույն մը յուր ճիրաններուն մեջ առնուլ։

Ուրախ զվարթ կ՚օրորվեր Յոռթյունն երազներով և բավական ամիսներ անցան այսպես, երբ օր մը ծառաներն իմաց տվին իրեն, թե կին մը եկած է և զինքը տեսնել կ՚ուզե, Յոռթյունն կարծեց, թե մատամն է և խնդալով վար իջավ, բայց մայրն էր։ Խեղճ կինը հոգնած, շնչասպառ նստած էր բակը, աթոռի մը վրա, և կը սրբեր թաշկինակով կաս կարմիր երեսներն, որոնց վրա քրտինք կը հոսեր։ Աղջիկը տեսավ ու խնդալով ըսավ։

— Աղջիկ, աս ո՛ւր ես էկեր, հոգիս ելավ փնտրելով, նա՞ւլ ես, աղե՞կ ես. հարիկդ ալ հիվանդ պառկած է.

Յոռթյունի պատասխանն եղավ ծառաներուն ըսել հունարեն, զոր սկսած էր ուսանիլ։

— Ո՞վ է աս կինը. ի՞նչ կուզե. խե՞նթ է։

Ծառաներն հարցուցին, Շողակաթ չէր հասկնար, թե ի՞նչ է։

— Աղջիկս, ի՞նչ կ՚ըսես,— կը պատասխանէր հունարեն չհասկընալով, և տաճկերեն կ՚ըսեր՝ «Մայրն եմ, մայրը»։

— Խենթ է,— կ՚ըսեր Ցոռթյունե,— ես ինչ կը ճանչնամ այս կինը. վռնդեցեք դուրս։

Ծառաները «տուտու տիսարի» ըսելով, բռնեցին Շողակաթի թևերեն և հրելով, հրմշտկելով բռնությամբ տունեն դուրս նետեցին և դուռը փակեցին վրայեն։ Շողակաթ չհասկցավ, թե ի՞նչ էր այս, և լալով հեռացավ։

Երկու օր վերջ Ցոռթյունե տուն գնաց դիվահարի պես, խստիվ հանդիմանեց մայրն և միայն ծեծելը պակաս մնաց։ Ի՞նչ, ինքն իբր ֆրանսուհի ընդունված էր և մայրը կուգար գինքը խայտառակել։

— Ապրիս, ապրիս,— կ՚ըսեր հայրն անկողնույն մեջեն։— Կը հավնիս, անանկ չէ՞, կ՚ըսեր մորը.— հավատքն ալ կ՚ուրանա, հարը մարն ալ կ՚ուրանա. ի՞նչ պիտի ըլլար որ։

— Ձայնդ քեզի քաշե,— ըսավ Ցոռթյունե հորը։ Հանեց երկու ոսկի նետեց վրանին. խստիվ պատվիրեց, որ ալ իրեն չգան և մեկնեցավ։

Ցոռթյունե պաշտոն վարեց այդ տան մեջ մոտ երկու տարի. երբ մեծցան երեխաներն, հրաժարեցավ, յուր հույսերն առանց պսակված տեսնելու։ Իբր վարժուհի այնուհետև շատ տուներ մտավ. ամենուրեք հազիվ կը մնար մի քանի ամիսներ։ Այդ խեղճ աղջիկը կրնար կոչվիլ ընտանեզուրկ։ Այնքան շուտ-շուտ կը փոխադրվեր գյուղե ի գյուղ, տունե ի տուն, որ կարծես ուղևոր մ՚էր Պոլսո մեջ և կը ճաշեր միշտ հյուրասեղաններու վրա։ Եվ սակայն, երբ կը մեկներ ամեն մեկ տունե, անդ թողած էր արդեն զվարթածաղիկ երիտասարդության մեկ բեկորն ևս։ Եվ երբ տարիներն անցան, օր մը, հանկարծ զգաց, թե կը հնչեր այն ժամն, որ կնոջ համար դեռ կենաց արշալույսն է, իսկ աղջկան մը համար արդեն վերջալույսի աղոտ փայլը։

Այլ Ցոռթյունե եթե հուսախաբյալ էր, հուսահատ չէր։ Վշտերն այրեցավեր ըրած էին նորա սիրտը, բայց հույսը, ցաված հոգիներու այդ զովարար ոյուքը, կարծես թե կյանք կը բերեր նմա հեռավոր բախտի մը անուշ բուրումովը։ Ցոռթյունե բնավ տրամադիր չէր ապրիլ և մեռնիլ որպես մի սիրուն պառավուկ աղջիկ, ուստի գոտեպինդ եղավ և ուզեց վերստին մաքառիլ ընդդեմ յուր աննվեր բախտին։

Հեռացավ բոլորովին ուսուցչության ասպարեզեն, շնորհիվ յուր խնայողությանց հարուստ էր փոքրիկ գումարով մը, որ պիտի լիներ յուր մեկ հավատարիմ դաշնակիցն։ Երբ վերադարձավ հորը տունը, ուժգնապես պնդեց, որ տունը փոխվի։ Ա՜հ, անլուսանելի այն գիշերներն, երբ կը փակվեր այդ սենյակին մեջ, ընկած անկողնու մը վրա, մինչ, խանչ ու

վաստակաբեկ, ուր հայրն ու մայրը թաղված խոր քնո մեջ, խորթալով կը խորթային։ Ֆոռթյունե ստիպեց ծնողքը վարձել բավական կանոնավոր տան մը մեջ երկու սենյակ. ինք կը վճարեր վարձքին կեսը։

Մինչ Ֆոռթյունե թափառիկ կը շրջեր, յուր ընկերուհիներեն շատերն ամուսնացած և մինչև իսկ մայր եղած էին. օր. Սինայան և օր. Հերիգա տակավին ամուսին չունեին, բայց նոցա համար երկյուղ չկար տունը մնալու. նոքա կ'ուզեին հանգիլ այնպիսի ընտրության, որ երբեք ստորջանաց առիթ չընծայեր իրենց։ Օր. Ավետ բնավ համակիր զգացումներ չէր տածած յուր ընկերուհյաց, մանավանդ Հերիգայի համար, որո սակառեն ճաշելը, դպրոցին մեջ, մին էր այն դժբախտ պարագաներեն, որք հարկադրեցին զինքը գլուխը կախ պահել. սակայն սիրած էր օր. Սինայանն։ Ինչքան ալ դառնացած լինի և թունալիր մարդկային սիրտը, բայց գորովանաց համար անդ պահված է միշտ ջերմիկ անկյուն մը, որ կը պարգևե կենդանություն սրտին։ Այն միջոցներում, երբ Ֆոռթյունե կը վերադառնար տուն, սիրահոժար կ'այցելեր Սինայաններու։ Նոցա տան մեջ ազատ կը շնչեր, վասնզի մայրն անդ բնավ չէր ծառայած։

Վերջին մի քանի տարիներու մեջ օր. Սինայանի եղբայրը՝ Մկրտիչ, քիչ անգամ Պոլիս գտնված էր, առևտրական գործերը հարկադրած էին զնա Պոլսեն ստեպ բացակա մնալ. իսկ այժմ վերջնական կերպով կը հաստատվեր Պոլիս այն պահուն, երբ Ֆոռթյունե՝ հրաժարելով ուսուցչական պաշտոնե, հաստատ որոշեց ճարել հարուստ ամուսին մը։ Ֆոռթյունե տեսած էր Մկրտիչ Սինայան, երբ, տակավին նորաբողբոջ աղջիկ, ապագան կը նշմարեր այնքա՜ն լուսանշույլ. այն ատեն չէր ընծայած մեծ կարևորություն այդ երիտասարդին. բայց այժմ, երբ կը տեսներ Մկրտիչը, կը հուզվեր խորին կերպով. չէր կարող ըսել, թե ի՛նչ կ'զգար. լոկ փառասիրական հաշիվներ չէին, որ կը տոչորեին յուր արյունը, և ոչ իսկ եթերային նուրբ սերը միայն կը գորովեր յուր սիրտը։ Անընդդիմակ զորություն մը կը մղեր զինքը դեպի Սինայան։ Բարեբաստիկ ապագայի մը հավատքն, անշեջ նորա սրտին մեջ, կը հուսադրեր զնա, թե կարող է հափշտակել Սինայանի սիրտը։ Ո՞չ ապաքեն ֆրանսիական վեպերը կ'ուսուցանեին նմա, թե կինը ամենակարող է և թե ինչ-որ կինը կ'ուզե, աստված ալ զայն կ'ուզե։ «Կամք կնոջ, կամք Տյառն»։— Միայն թե Ֆոռթյունե ուշադրություն չէր ըրած, թե ա՛յլ է կին, ա՛յլ է աղջիկ։

Ֆոռթյունեի հաստատամտությունը թեև արժանի համարվի ամեն գովեստի և քաջալերանց, բայց տխրաբար խոստովանինք, թե վատաբախտիկ աղջիկն ուներ յուր դեմն արական սեռի մի այնպիսի նմուշ, որո սիրտը լավ պատսպարյալ էր ամրակուռ վահանավ ընդդեմ՝ ինչպես կ'ըսեն՝ «սիրո սլաքներուն»։ Այդ վահանը խորհրդածությունն էր։ Ո՛վ

որ կը խորհի և կը տրամաբանէ աղջիկ մը ընտրելու համար, իհարկէ նա չի կարող հափշտակուիլ և սիրել կուրաբար։ Անոր, բանաստեղծական սիրո համար, հյուրամերժ օթևան մ'էր Սինայանի սիրտը։ Կարծրատորը մարմնով, էր կարծրատորը նաև սրտով սիրո համար։ Ամուսնությունը կը նկատեր իբր լուրջ խնդիր մը. կրնար առանց մտատանջության սիրել շատ կիներ, ինչպես ըրած էր, բայց չէր կրնար թեթևամտությամբ ամուսնանալ. կ'ուզեր գեղեցիկ աղջիկ մը, բայց աղջկան մը արտաքին կերպարանքը բավական չէր զինքը ապահովելու համար։ Պետք էր, որ այդ աղջիկն ունենար նաև դրոշմ մը, երաշխավոր նորա բարոյական հատկության։ Այդ դրոշմը կը պարգևէ աղջկան ծնողքը, մանավանդ մայրը։ Մորը վայելած համբավը՝ ջերմաչափ մ'է աղջկան բարոյականին։ Իհարկե այսպիսի գաղափարներով սնած երիտասարդ մը բավական հեռի պետք էր լինէր իրեն մտատիպար ընտրելն օր. Ֆոոթյունենին։

Այդ սրտին, որ կրնար նկատվիլ «դրական սիրտ մը», տիրապետելու փոքր ինչ հույս կրնար տածել Ֆոոթյունեն, եթե սիրո պատերազմներու մեջ փորձառու եղած լինէր և օժտված ռազմագիտական քաջահմար տաղանդով։ Բայց Ֆոոթյունեն անփորձ էր և խակ. թեպետ շատ ապրած էր, բայց միշտ հուզյալ, հուսալիր, հուսախաբ, սրտնեղ, բնավ ժամանակ չէր ունեցած խորհելու և դատելու։ Հետևաբար՝ յուր անցյալը չէր կրնար ծառայել իբրև ուղղյակ ներկային։ Ինքն ալ չէր գիտեր ո՞ր ասպարեն օգնությանը դիմել։ Ամեն ջանք ի գործ կը դնէր, որ սիրուն երևի և հրապուրիչ. կը շեղեր բնականեն, ուստի ավելի անախորժելի կը լինէր, երբեմն այնքան ծանր կը բռներ ինքզինքն, որ դիտողներն կը ծիծաղեին. երբեմն ալ նորածիլ աղջկա մը պես կը խոսեր, կը խաղար, կը խնդար։ Բարեբախտաբար Սինայան բնավ ուշադիր չէր այս հնարքներուն. նա կը շարունակեր միշտ ընտանեբար վարվիլ Ֆոոթյունենի հետ, իբր տան աղջըկան մը։

Ֆոոթյունենի կենաց այս ճգնաժամին էր, որ Լևոն նորա դեմն ելավ։ Ինչպես եղավ, որ Լևոնի սիրտը մեկեն ի մեկ հարեցավ աղջկան, ի՞նչ հատկություններ տեսավ անոր վրա։— Այս հարցումներու պատասխանները կրնան տալ այն երիտասարդները կամ լավ ևս այն պատանիներն, որոնք սիրած են այնպիսի աղջիկներ, զորս ընկերությունն անհարմար, մինչև իսկ հրեշավոր սեպած է։— Ինչո՞ւ սիրած են։— Վասնզի սիրած են։ Լևոն ծանոթացավ Ֆոոթյունենի՝ ձմռան իրիկուն մը։ Սինայաններու տունը։ Կիրակի օր մ'էր, Լևոն այցելության գնաց Սինայաններու, բավական ատենե ի վեր չէր գնացած։ Մի քանի սենյակներու մեջ ըստ սովորության լեցվեր էին թուղթ խաղացողներն, ուրիշ սենյակ մը հավաքվեր էին խոսող-խնդացողները. Լևոն անոնց մոտ գնաց։ Ամենքը կը

ճանչնար, բացի մէկէն։ Օր. Սինայանն անմիջապէս ֆրանսու-ծանօթացուց ըսելով.

— Մյուսյու Լևոն Սարաֆյան,— օր. Ավետ։—

Զմռան վերջին կիրակիներէն մին էր. սենյակը տաքուկ. վառարանի մէջ կը լավեր փայտերու ճարճատյունը. անուշ, նրբին, գրեթէ անզգալի բուրումներ, հեշտություն կուտային զգայարանաց։ Երեկոյան հեշտ արևուն ճառագայթները ներս կ'անցնէին ապակիներէն և բեկբեկելով ճերմակ աթոռներու, կարմիր վարագույրներու վրայէն շառագույն կ'երևցնէին դէմքերն ու սենյակն։ Օրիորդի մը մատները կ'երթևեկէին դաշնամուրի մը վրա, որուն կ'ընկերանար երիտասարդ մը յուր վիոլոնովն և կը նվագէին Այի ճոսրի մոնըի, գորովալի սրտերու համար քաղցրահնչակ նվագն։

Լևոն նստած Ցոլթյունէի քով, երբ երաժշտությունը կը վերջանար, կը խոսակցէին ֆրանսերէն։ Ցոլթյունէի երեսները կարմրորակ էին՝ շնորհիվ հրակայլակ շաորուեզին և ֆիռաասային. ինքն ալ շատ զվարթ էր նույն միջոցին։ Երբ աղջիկ մը, կին մը զվարթ է, միշտ հրապուրիչ հատկություն մը ունի, մանավանդ, երբ այտերն տաքցած են. ուշ ատեն հյուրերը մեկնեցան, Լևոն ալ ուզեց երթալ, բայց օր. Սինայան թող չտըվավ և արդէն ինքն ալ կ'ուզեր մնալ։ Ընթրիքի ժամանակ Ցոլթյունէի քով նստած էր, և Մկրտիչ Սինայանն ալ իրեն դէմն էր։ Ցոլթյունէ այն գիշեր շատ սրախոս էր, շատ ուրախ, հետևաբար նաև շնորհալի։ Այն գիշերն, հետևյալ օրը, Լևոն շարունակ Ցոլթյունէի վրա կը մտածէր և այնուհետև ավելի սաստ առիթ կը գտնէր Սինայաններու տունն երթալու, ուր ընդհանրապէս կը հանդիպէր Ցոլթյունէի։

Շաբաթներ անցան, Լևոն հետզհետե ավելի կը կապվեր սրտովը օր. Ավետի հետ, բայց հետզհետե ավելի երկյուղալից և ավելի վարանոտ էր. այլ բոլորովին տկարացավ և օգնությամբ կասկածանացն ու երկյուղին կարծեց նշմարել, թե Ցոլթյունէի սիրտը նվիրված էր Մկրտիչ Սինայանին, իսկ այս վերջինս կը սիրե՞ր զնա։ Լևոն չվարանեցավ այս հարցման ինքնին հաստատական պատասխան տալ։ Թարմ սրտով նորընծա սիրահար մը միշտ միամիտ է և կը կարծէ, թե յուր սիրած աղջիկն օժտված է ամէն հատկություններով, թե նորա նմանը չկրնար գտնվիլ և բնավ չզարմանար, որ ամէն ոք զնա սիրէ և պաշտէ։ Այս գաղափարն ունէր Լևոն Ցոլթյունէի համար և շատ բնական կը գտնէր, որ Մկրտիչ Սինայան խենթենա այդ աղջկան վրա։ Բայց ընկերական պահանջմունքնե՞րն։— Է՜հ, ատանց դիմելու անգլիական թագավորներու պատմությանց, զորս լավ ուսած էր Ռոպերթ գոլեջի մէջ, ո՜չ ապաքէն լսած էր, թե Պոլիս շատ բարձր գիրք ունեցող հայեր, որք կը պատկանին հին, և

ազնվական տոհմերու, իրենց կիներն ընտրած են խոնարհ վիճակի պատկանող ընտանիքներէ, կնոջ մը համար ազնվականության ամենափառավոր տիտղոսն համարելով նորա գեղեցկությունը։ Սակայն Մկրտիչի ծնողքն իհարկե կը փափագեին, որ իրենց զավակը բարձրաստիճան ընտանիքե աղջիկ առնի և այդ պատճառով էր անշուշտ, որ Լևոն գաղտնի կը պահեր յուր սերը մինչև համար առիթ մը ներկայանալու Այսպիսի միամիտ մտածությունները առաջնորդյալ, Լևոն կատարելապես համոզված էր Ցոռթյունեի և Մկրտիչի փոխադարձ սիրույն։ Երբ ունեցավ այդ համոզումն, այն ատեն սերն ու երախտապարտությունն սկսան մենամարտիլ յուր սրտին մեջ։

Հայտնի է, թե ազնիվ և բարի ծնած սրտերը չեն կարող երբեք ապերախտ գտնվիլ։ Լևոն զոհեց սերն յուր պարտականությանց, կամ լավ ևս, զոհել կարծեց։ Սրտի ամեն ազնիվ բաբախում, խոհական ամեն խորհուրդ կը ջախջախին ընդդեմ այն նուրբ, թեթև զգացման, որ սեր կը կոչվի։ Լևոն կրնար յուր սիրտն զոհել որոշել, Ցոռթյունե կրնար նշանվիլ և ամեն հույս կտրվիլ Լևոնի համար, բայց Լևոնը կը կարոտեր շնչել այն օդը, զոր Ցոռթյունե կը շնչեր, տեսնել նորա դեմքը, լսել նորա ձայնը։— Հմայյալ էր և մագնիսացյալ։

Սրտին խոր ծալքերուն մեջ կ'ուզեր թաղել Լևոն յուր սերը, բայց սերը, նման կայծոռիկին, կը պլպլա, որքան ալ նսեմաստվեր լինի սիրահարին դեմքը։ Ցոռթյունե զգաց, թե Լևոն զինքը կը սիրեր։ Այդ աղջիկն, որո համար ոչ մի սիրտ բաբախած էր մինչև այն ատեն, գոհ մնա՞ց արդյոք. գգվեցա՞վ յուր անձնասիրությունը. ունեցա՞վ սիրտը գորովալիր տրոփում, մտածելով, թե ինքն, որ անկոչ մնացած էր սիրո խնջույքին՝ կրնար այնուհետև հանգիստ մեռնիլ. ո՞չ ապաքեն աղջկան մը համար մեծ վիշտ է հասնիլ ծերության և ակնարկ մը տալով անցյալին, չնշմարել անդ այն լուսաշավիղը, զոր կը թողու սիրով տոգորված սիրտ մը։— Ոչ։

Ամուսնացած կնոջ մը համար միշտ անուշաբույր է այն խունկը, զոր կը ծխեն յուր առաջ, զվարթահայացք ակնարկ մը ունի նա անոնց համար, որք զմայլած կը դիտեն զինքը։ Ամուսնացած կին մը, որ ավելի փափկասիրտ է, քան աղջիկ մը՝ միշտ դյուրագորով է զինքը սիրողին համար, մանավանդ երբ այդ սերն ի հայտ կուգա շրջապատյալ մեծաբանաց արտաքին ամեն նշաններով։ Բայց ամուրի աղջիկներն, որ ավելի հաշվել գիտեն, քան զգալ, կ'ատեն զանոնք, որ իրենց անպատեհ սիրովը կը խանգարեն նոցա հաշիվներն։ Ի՞նչ անտանելի կացություն աղջկան մը համար, երբ յուր չորս կողմը կը դեգերի, դեմքը տխրամած լամարթինյան մելամաղձությամբ, ինքնակոչ սիրահար մը, զոր ինքը ոչ կը սիրե

և ո՛չ ալ կուզե սիրել, և այդ սերը սպառնալից վտանգ մ՚է միշտ յուր ամեն խորհրդոցը։ Խե՜ղճ Ֆոռթյունե, իբր այն, թե բավական չէին յուր այնքան դժբախտությունններն և ահա յուր գլխույն վրա կը տնկվեր սիրահար մը՝ ճիշտ այն պահուն, որուն ոչ միայն պետք չուներ նմա, այլև խոչ և խութ մը կը լիներ յուր ամեն խորհրդոցն։ Հազիվ թե առիթ մը կը ներկայանար իրեն միայնակ մնալու Մկրտիչի հետ, և ահա Լևոն կ՚երևեր՝ սենյակը լիներին թե պարտեզին մեջ, գլուխը բաց, գլխարկը ձեռքը, կոտըրտվելով և յուր մեծարանքները մատուցանելով կ՚ըսեր։

— Արգելք չե՞մ ըլլար։

— Չէ՛, չէ՛, Լևոնիկ,— կը պատասխաներ Սինայան և կը հրավիրեր զնա իրենց մոտ։

Կը նստեին սեղա՞ն. Լևոն միշտ Ֆոռթյունեի մոտն էր և թույլ չէր տար Մկրտիչի փոքրիկ ծառայություն մը մատուցանելու Ֆոռթյունեի, որո փոխարեն նա կրնար զետեղել «միտք բանի ունեցող» շնորհակալություն մը։ Կը ներկայանա՞ր առիթ մը պարելու, միշտ Լևոն կ՚առաջանար նազելաճեմ և յուր բազուկը կ՚ընծայեր Ֆոռթյունեի, ո՛չ Մկրտիչի, ոչ այլոց ժամանակ թողլով։— Լևոն միշտ կը դեգերեր Ֆոռթյունեի չորս կողմն՝ ուշադիր հաճոյակատար լինելու նորա ամենափոքր կամացն։

— Մժեղ մ՚է այդ տղան,— կ՚ըսեր Ֆոռթյունե,— զիս հանգիստ չպիտի ձգե։

Եվ օր մը այդ աղջկան բոլոր տխուր նախազգացումներն իրականություն կը լինեին։ Մկրտիչ յուր քրոջն ըսած էր.

— Կը տեսնե՞ս ինչպես Լևոն Ֆոռթյունեի չորս կողմը կը պտտի. աղեկ չե՞ լլար, որ երկուքն իրարու կարգենք։ Երկուքն ալ ուսումնական են, ուսումնականներն իրարու կը վայելեն։

Այդ առաջարկը կը համապատասխաներ օր. Սինայանի գաղտնի մտածությանց, և զգաց այն ուրախությունը, զոր կ՚զգան միշտ աղջիկներն, երբ կ՚ուզեն նշանել իրենց բարեկամուհիներն— բնականաբար երբ ընտրելուհի իրենք չեն։ Հաջորդ օրը Ֆոռթյունեի լուր կը ղրկեր օր. Սինայան և առանց մանվածապատ դարձվածքներու, կ՚առաջարկեր նմա ամուսնանալ Լևոնի հետ, ավելացնելով, թե այդ գաղափարն եղբորմեն կուգար, և թե նա ալ կնքահայր պիտի լիներ։

Ֆոռթյունեի արյունը երեսը ցատկեց, կարմրեցավ. քիչ մնաց պիտի ըսեր թե «Դու առ Լևոնը, եթե այդքան կը սիրեք». բայց գրեթե բնազդմամբ զսպեց ինքզինքը. չէր ուզեր խզել հարաբերությունները Սինայաններու հետ։

— Ինչ կ՚ընես,— պատասխանեց բռնի ծիծաղով մը,— ես միտքս դրած եմ չկարգվիլ. այսպես շատ հանգիստ եմ։— Օր. Սինայանի բոլոր տարկութիւնները փշրեցան ընդդեմ Ցողթյունի համառութեան։

Ցողթյունե մեկնեցավ Սինայանի տունեն սաստիկ գլխու ցավով մը. մի քանի օրեր անցուց առանց երևնալու. անհուն տխլութեան մը կը տնուցաներ սրտին մեջ թե՛ Մկրտիչի և թե՛ Լևոնի համար։ Այդ առաջարկեն մի քանի շաբաթ հետո, ամռան վերջերը լուր տարածվեցավ, թե Մկրտիչ Սինայան կը նշանվի օր. Հերիգայի հետ։ Երբ Ցողթյունե տեղեկացավ այդ լուրուն, ո՛չ բարկութիւն ունեցավ, ո՛չ կատաղութիւն զգաց։ Նման էր հոր մը, որ հանկարծ մեռած կը տեսնե յուր միակ զավակը։ Լքյալ, հուսահատ էր։ Ամեն ինչ կորսված էր իրեն համար։

Իսկ Լևոն ունեցավ այն ուրախութիւններեն մին, զոր քիչ անգամ տրված է մարդուս վայելել յուր կենաց մեջ։ Սեր ու գթութիւն ի մի կը ձուլվեին յուր սրտին մեջ։ Լևոն ենթադրեց Ցողթյունեն զոհ մը՝ Սինայաններու ընտանեկան նկատմանց։ Կը փութար յուր սերն հայտնել առ Ցողթյունե. մի քանի նամակներ գրեց ֆրանսերեն. ամենն ալ պատռեց, ոչ մին կը բացատրեր յուր զգացմանց սաստկութիւնն։ Որոշեց երեք բառ գրել միայն — երեք բառ, թեպետ կարճ, բայց շատ պերճախոս, ինչպես այն ամեն բացատրութիւններն, որք կենաց հզոր զգացումները կ՚արտահայտեն. միշտ հին են, բայց միշտ նոր։— «Ձեզ կը սիրեմ», գրեց ֆրանսերեն— և այն օրն, երբ վերադառնալով պաշտոնական նշանտվութենե բոլոր բարեկամներն հավաքված էին Սինայանի տունը, Լևոն վայրկյան մը գտավ և աղաչավոր աչքերով սահեցուց թուղթը Ցողթյունեի ափին մեջ։ Ցողթյունե ճմռթկեց թուղթն, ուզեց նետել առանց կարդալու, բայց վերջապես կին էր, չդիմացավ, գնաց անկյուն մը, կարդաց, թուղթը գրպանը դրավ. նողկանք կ՚զգար։ Յուր հույսերու մահվան գագաթին վրա Լևոն կը ժպտեր, յուր թշվառութիւնը նորա ուրախութիւնն էր։

Բայց երբ վերադարձավ տուն, փակվեցավ յուր սենյակին մեջ և սկսավ մտածել։ Փոքրիկ սեղանի մը վրա ճրագը կը վառեր, աթոռ մը առավ և ճակատն, որ կ՚այրեր, ձեռքերուն մեջ առած, կը մտածեր։ Ա՛լ կարող չէր տոկալու. ա՛լ կարող չէր վերստին աշխատանաց ձեռնարկել եա այնքան հուսախաբութեանց։ Ջղերը թուլցած էին, մինչև ցարդ զորավիգ մը ուներ. յուր ընկերուհիներեն երկուքն՝ օր. Սինայան և օր. Հերիգա բախտակից էին իրեն. կը սիրեր կարծել թե միասին տարաբախտ էին. բայց Հերիգա փառավոր բախտ մը կունենար և օր. Սինայան պիտի նշանվեր քիչ ժամանակի մեջ. ինք միայնակ կը մնար։ Ինք միայն գթութեան, ցավակցութեան և ծաղրու առարկա պիտի լիներ։ Գնաց բացավ պա-

տու՞անը. մի քիչ մաքուր օդ շնչեց. երկինքն աստղազարդ էր. օդը ջերմիկ, անուշ հով մը կը փչեր, սիրտը ելավ, խանդաղատեցավ և սկսավ լալ։ Սիրտը փոքր ինչ զովացավ։ Արցունքները երեսին վրա էին. գնաց թաշկինակ մը առավ, և սրբեց երեսն. նայեցավ հայելիին, փոշին, որով շպարած էր երեսները, սրբվեցան. տեսավ յուր դեմքը և վախեցավ, կանաչ ու դեղին գույն ուներ։

Իբր գեշ երազ մը՝ ուզած էր մտքեն միշտ հեռացնել, բայց այդ պահուն կը հիշեր, թե այլևս յուր երեսներն ո՜չ թարմ էին, ոչ փափուկ։ Երկար ատենե ի վեր սկսած էր ճաթռտիլ երեսին մորթը, փոթ փոթ եղած էր։ Երկար ատենե ի վեր բաց չէր պահեր ճակատն, ուր խորշումները կ՚երևեին. երբ թե մազերը ճակտին վրա բերելով, կը շտկեր զայն **ա լանկլեզ, ա լա շինուազ, ա լա սիոզազինեն**, բայց այդ պչրանաց ներքև կը ծածկեր ճակտին հորիզոնական գծերն, պառավության այդ նշաններն։ Եվ այդ նշաններեն ո՛չ մին կ՚երևեին Լևոնի աչքին, անշուշտ տխմար մ՚էր. Ցոաթյունե սիրո վրա գաղափար չուներ, հետևաբար չէր կարող զատել Լևոնը։

Եվ ի՞նչ ըներ. մեռնի՞լ. չէ։— Ի՞նչ կրնար ընել։ Սկսած էր զով ընել, պատուհանը գոցեց, և անկարող մտածելու և խորհելու, ինկավ անկողնույն վրա, ջախջախված էր, կամաց-կամաց մրափեց։ Կես գիշերն անցած էր, երբ արթնցավ, բավական մսած էր, անկողին մտավ, փաթթվեցավ վերմակին մեջ և խոր կերպով նիրհեց։ Առավոտուն ուշ արթնցավ, հոգնած էր։ Օդը գեղեցիկ էր, ինքն ալ քիչ մը կազդուրվեցավ, փոքր ինչ մտածեց և որոշեց հաճություն տալ Լևոնի ձեռքն ընդունելու։ Սկսավ թվել ինքնին այն առավելությունները, զոր այդ ամուսնությամբ ի ձեռս պիտի բերեր։ Ինչ որ ալ լիներ յուր վիճակն, ազատ պիտի լիներ. աղջիկ մը ամուսնությամբ ազատ կը լինի։ Առանց ուրախության, առանց գոհության այդ որոշումը տվավ և Լևոնի հաղորդեց Սինայաններու տունը։ Օր. Սինայան և Մկրտիչ գոհ եղան։ Լևոնի ծնողքը շատ գոհ չէին. նոքա կը փափագեին, որ Լևոն «ունևոր» աղջկան մը հետ ամուսնանա, բայց Աբրահամ աղան, որ միշտ տան բարեկամն էր և կողմնակից նմա, ուսկից շահ մը կար, կը հիշեցներ, թե՝

— Փարան կ՚երթա, քիթը կը մնա։

Սահակ աղա և կինը այնքան պարտականություններ ունեին իրենց զավկին, որ շատ չդիմադրեցին, մանավանդ վստահ էին նորա խոհականությանը։ Լևոնի քույրը ոչինչ կը մտածեր։ Եղբայրը պիտի կարգվեր, այդ կը բավեր իրեն, և արդեն ի բոլոր սրտե կը սիրեր յուր հարսը։

Եթե կար դժգոհ մը, այդ Ցոաթյունեի մայրն էր, ըվացարար Շողա-

կաթը։— Ի՞նչ եղան յուր մայրենի երազները։ Միտքը դրած էր, թե հանըմ պիտի լինի, հարուստ փեսա մը պիտի ունենա, անոնց տան մեջ առաջին տեղը պիտի գրավե իբր զոքանչ, մեծ հանըմներու հետ հավասարակից պիտի լինի։ Եվ շատ անգամ այս իղձերն էրկանն ալ կ՚ըսեր, իսկ կոշկակար Ավետիսը գլուխն երերցնելով կը պատասխաներ. «էշն է դրեր մտքը պարկով գարի, իրիկուն կ՚ըլլա ոչ պարկ կա, ոչ գարի»։

Այո՛, իրենց ալ իրիկունը կը մոտենար, ոչ հարուստ փեսա կար, ոչ հանըմության տիտղոս։— Բայց ամեն թշվառության մեջ մխիթարություն մը գտնելու պետք կա. Շողակաթ տուտուն կը մխիթարվեր, որ եթե հարուստ փեսա չը պիտի ունենա, գեթ եվրոպական գլխարկով փեսա մը ունի։ Բավական փոխարինություն կը համարեր զայս։

Իսկ կոշկակարն, երբ առաջին անգամ տեսավ փեսացուն, մեղքցավ տղան։— Կարծես թե աստուծո շնորհքը վրան է, կ՚ըսեր։

Լեոն ինքն հոգաց Ցոռթյունեի օժիտն, հարսանիքը փութացուց։ Խաչին Սինայան ամուսնացավ։ Ս. Հակոբին որոշվեցավ Լեոնի հարսանիքն։ Իրենց աստիճանին համեմատ բավական լավ հանդես մը պիտի կատարվեր։ Հարսանիքեն քանի մը օր առաջ Լեոն ցավ մը ունեցավ։ Երբ կարգադրություններ կ՚ըներին, Լեոն փափագեցավ, որ Ցոռթյունեի հայրն ու մայրը ներկա գտնվին հարսնիքին։

— Ա՛յդ պակաս էր,— ըսավ Ցոռթյունե, և ամենևին թող չտվավ, որ ծնողքն հարսանյաց գան։ Լեոն վշտացավ, բայց Ցոռթյունե իրեն նախատինք կը համարեր, որ յուր ծնողքը շնորհքով մարդկանց մեջ երեվին։ Ցոռթյունեի խոսքը կատարվեցավ։

Ս. Հակոբի կիրակի առավոտը տխուր օր մ՚էր, երկինքն ամպամած. ցերեկվան դեմ բարակ անձրև մը սկսավ։ Կեսօրեն վերջ երեք կառքեր եկան. հարսնառները ելան Ցոռթյունեի սենյակը։ Կես ժամ վերջ մեկնեցան Ցոռթյունեի հետ միասին։ Մեկնելու պահուն Ցոռթյունե առաջին անգամ ըլլալով, որմեհետև Գիշողությունը կը ներեր, համբուրեց հորն ու մորը ձեռքերը։

— Աստված աղե՛կ ընե,— մրմռաց կոշկակարը։

Մտան կառքերը, կառավարները ձիերը մտրակեցին և մեկնեցան։

Կառքին մեջ Ցոռթյունե թաշկինակն հանեց և աչքերուն տարավ։ Այսպե՞ս հարս լինիլ կ՚երևակայեր ինքն։ Տխուր էր, շա՜տ տխուր. բնության տխրությունը կ՚ավելցներ յուր թախիծը։ Փողոցները տղմոտ էին, երկինքն աղտոտ էր, շառաչուկ անձրևը կ՚իջներ և կառքի ապակիներու վրա գոլորշակները կարծես կը պատկերացնեին յուր երազոց գոլորշիներն։

Դ

Կը կարծվի, թե կանայք երբ չունենան ոևէ վիշտ, անհանգիստ կ՚ըլլան։ Անոնց սրտին համար, որ միշտ հրատոշոր է, վիշտը այն թուխ, փոքր մոլորյալ ամպն է, որ ամռան օրերն հանկարծ ծփալով երկնից երեսն, մի քանի րոպեներ զովություն կը պարգևե արևակեզ հողին։ Ի շնորհս ունայնասիրության ոգվույն, զոր նախախնամությունը պարգևած է կանանց, սոքա կարող են միշտ դարբնել իրենց համար նորանոր վշտեր։

Սակայն ունայնասիրությունը, որ կենաց պարահանդեսի մեջ այնքան սիրուն, այնքան հրապուրիչ կ՚ընծայի կինը, ընտանեկան հարկի ներքև գիշերադեմ չղջիկ մ՚է, չարագուշակ բու մը։ Արևելցիք, որ ջերմապես կը սիրեն ընտանեկան հանգստությունը, վասնզի իրենց քաղաքներու ներքին կազմակերպության պատճառավ կը պարտավորին տան մեջ անցունել ժամանակի մեծ մասը, նվիրած են իրենց հոգածությունը գոհացում տալու կանանց ունայնասիրության ոգվույն։ Արևելցիք, գիտնալով, որ կին մը ունայնասեր չը պիտի լիներ, եթե յուր քով չգտնվեր ուրիշ կին մը, ջանադիր եղած են կանոնավորել միևնույն ընտանյաց մեջ գըտնըվող կանանց հարաբերությունները։ Արևելյան ամեն ընտանիք փոքր արքունիք մ՚է, որտեղ խստապահանջություն կը տիրե հարգամեծար հարաբերության մասին։ Արևելյան ընտանյաց ավանդության մեջ ամենայն խնամոք կենդանի պահված են կեսրոջ և յուր հարսին միջև հարաբերության օրենքները։ Ի՛նչ վիճակի մեջ ալ գտնվի կին մը, միշտ քաղցր է յուր սրտին խոնարհած տեսնել յուր առջև ուրիշ մի կին, մանավանդ, երբ ինքն արդեն կենաց իրիկնամուտին կը մերձենա, իսկ նա խրոխտ է յուր երիտասարդությամբ։ Ընտանեկան ավանդությունք օրինաց ձև տված են այն ամեն արտաքին ցույցերուն, որոց շնորհիվ կեսուր մը կը փառավորվի։ Ուրեմն եթե մտնենք Լևոնի տունը, պիտի տեսնենք, թե Լևոնի մորը, Շարուհի հանըմին դեմքը պայծառափայլ է, վասնզի այլևս հասած էր այն ժամանակն, որում գոհացում պիտի ստանար այն փառասիրական տենչն, որ ամեն կեսուրներու սեփականությունն է. ուներ հարս մը, որ խոնարհաբար պիտի համբուրեր յուր ձեռքերն։ Ինչ պարտականություններ, որ Շարուհի հանըմ կատարած էր յուր կեսրոջն, ինհարկե կ՚սպասեր նոցա անթերի գործադրությունն յուր հարսին կողմանե։

Լևոնի և Ֆոռթյունեի հարսանյաց երկրորդ օրն, երկուշաբթի առավոտ, Լևոնի տան մեջ հյուրընկալության սենյակը նստած էին Սահակ աղա, կինը, մի քանի անխուսափելի ազգականներ ու ազգականուհիներ, որք գիշերն անդ անցուցած էին։ Լևոն արդեն ելած էր և վառարանին

մոտ աթոռի մը վրա նստած ձեռքերը կը տաքցներ։ Կեսօրի մոտ Հարսին ոտքի ձայնը լսվեցավ, սանդուղքներեն կ՚իջներ։ Լևոնի քույրը՝ Աննիկ, անմիջապես դուրս ելավ, Հարսին ընդառաջելու։ Շարուհի Հանըմ ինքզինքը ժողվրտեց, պաշտոնական դիրք մը առավ, ձախ ձեռքովն աջ ձեռք սրբեց։ Սահակ աղա, թեպետ ավելի խոնարհ, բայց նա ևս պատրաստություններ տեսավ։ Այդ արարողության շարժառիթը բնական էր. Հարսը ներս մտնելով ինհարկե կեսրոջն ու պարոնտատին ձեռքերը պիտի համբուրեր։ Եվ արդարև Աննիկ, Ֆոոթյունեի տված թևը, ներս մտան միասին։ Ֆոոթյունե գլուխը ծռեց, և ալաֆրանկա բարև մը տալով, աթոռի մը վրա նստավ քովընտի։ Կարծես թե ամենքը սառեցան նստած տեղերնին։ Ազգականներն իրարու երես նայեցան, ցրտությունը տիրեց այդ րոպեին, խոսակցությունն այլևս պաղած էր։

Այդ օրեն ամբողջ շաբաթ մը տևեց այդ պաղությունը։ Սրտաբեկ էր Սահակ աղայի կինը։ Ֆոոթյունե միշտ ցուրտ էր այն ամեն բարեկամաց, բարեկամուհյաց, ազգականաց, ազգականուհյաց համար, որք կը տեղային Պոլսո ամեն թաղերե։ Երբ պառավ ազգականներ «խերդ տեսնանք, աղջիկս» ըսելով թևերնին բացած կ՚ուզեին համբուրել Ֆոոթյունեի ճակատն ու երեսները, կամ առանց հրավերի, ինքնաբերաբար, կ՚երկնցնեին իրենց ձեռքերն, որպեսզի հարսը համբուրե, Ֆոոթյունե կը գոհանար գլխու բարևով մը։ Դյուրին է երևակայել, թե Սահակ աղայի, Շարուհի Հանըմի ազգականաց շրջանակներուն մեջ նոր հարսին համբավն ի՛նչ գծերով նշանակված էր։ Կը գտնվեին այնքան բարեսիրտ կիներ, որք կը ցավակցեին Շարուհի Հանըմին և կը հազորդեին նմա ինչ որ կը խոսվեր դուրսը, և խեղճ կնոջ ցավոց վրա կը բարդեին նոր ցավեր։

Բայց երբ այցելուները չէին շլխաթներ— ինչպես Ֆոոթյունե կ՚անվաներ իր նոր ազգականներն,— և կը բուրեր իրենց վրա եվրոպական հոտ մը, հոգ չէ որքան ալ թեթև լիներ, այն ատեն Ֆոոթյունե շնորհալի էր և քաղաքավար, մանավանդ երբ այցելուներն այնքան ազնվացած էին, որ փոխանակ ըսելու հանըմ կամ տիկին, ինչպե՞ս եք, կ՚ըսեին։

— Մատամ,— ինչպե՞ս եք։

Հարսանյաց առաջին շաբաթը կը բոլորեր և ըստ հնավանդ սովորության հարկ էր յոթներորդ օրը Եափի, ձեռք պաքի երթալ հարսին ծնողաց։ Այդ այցելությունը կատարել այնքան բնական էր, որ այդ մասին խոսելն իսկ ավելորդ կը համարվեր։ Շաբաթ գիշեր Սահակ աղա խոսք բացավ երթալու ժամը որոշելու համար միայն։ Ֆոոթյունե չոր կերպով մերժեց Եափի մեափի երթալն։ Ինքն այդպիսի հինցած, պառավական սո-

վարություններն ախորժող չէր։ Սահակ աղա և կինը լռեցին, ուրիշ լավագույն ոչինչ կրնային ընել։

Բայց երբ Լևոն առաջարկեց այցելության երթալ կնքահորը՝ Սինայան Մկրտիչի, որքան գոհունակությամբ Ցոռթյունն հանձնառու եղավ կատարել այդ պարտականությունը։ Կիրակի, կեսօրեն մեկ ժամ վերջ, շքեղ լանտո մը—Ցոռթյունն անպատճառ լանտո ուզած էր, կայնեցավ Լևոնի տան առաջ։ Ցոռթյունն ամուսնույն հետ մտավ կառքն և իբր մի իշխանուհի, բազմեցավ։ Նշանված օրեն ի վեր առաջին անգամ գոհ կլիներ — ավա՜ղ շատ կարճ միջոցի մը համար։— Սինայաններու տունը Ցոռթյունն ո՛վ որ տեսներ այն օրը, կը կարծեր, թե աշխարհիս է՛ն երջանիկ կինն է նա։ Կը դիմեր կանացի ամեն նրբամտության, որպեսզի կարեկցության արժանի էակ մը չերևեր հաշս տիկին Հերիգային։ Գոռոզությունը կանանց հատկության, կամ թե թերության, ինչպես որ կուզեք, ամենեն տոկունն է։ Սրտի դժբախտության մեջ գոռոզությունը կանանց փրկարար ապավենն է։ Է՛ն դժբախտ կիներն, է՛ն նվազ հպարտները լինելու են։— Եվ հետո՝ առանց խորհելու, առանց մտածելու, ինքնաբերաբար Ցոռթյունն Մկրտիչ Սինայանի հաճո երևալու պետք մը կ'զգար։ Ամուսնացած երիտասարդի մը հաճո լինելու կենսական պայմանն է ունենալ ուրախ զվարթ դեմք մը և Ցոռթյունի դեմքը բնազդմամբ զվարթ էր այն օրն։

Այդ ուրախության հետքերը մնացին Ցոռթյունի այտերու վրա, նըշմարեց զայն Լևոնի մայրն և լավագույն օրերու բարեգուշակ հույսը վերստին ժպտեցավ իրեն։ Որքան ալ վշտացած էր այդ կինը, բայց և այնպես խոհեմություն համարած էր չհանդիմանել հարսը, զավկին սիրտը չկոտրելու համար։ Այդ այցելության շաբաթը միտքը դրավ, որ առաջիկա կիրակի օրն հարսն առնե և եկեղեցի երթա։ Կեսուր մը միայն գիտե, թե որքա՜ն բերկրությամբ կը զեղու յուր սիրտն, երբ կիրակի առավոտ մը եկեղեցի կ'երթա նոր հարսն առջևը ձգած։ Երբ կը մտնեն վերնատուն, կարծես թե դյութական ազդեցությամբ մը բոլոր աղոթող կանայք կը մոռնան, որ բարեպաշտներ են, այլ միայն կը հիշեն, թե կին են։ Ամենքըն հետաքրքիր իրենց երեսները կը դարձնեն, որպեսզի նային նոր եկողին։ Մոմ վառող կինն արդեն մեկուն ըսած է և այդ փոքրիկ անգաղտնապահությունը կը բավե, որ նոր հարսին ու կեսրոջ գալստյան համբավը վերնատան չորս կողմը թռչտի։ Ամենքըն իրարու ականջե կը փըսփըսան. «Ա՛ն է, ա՛ն է»։ Մոմ վառող կինն սովորականեն ավելի փութաջան է։ **նաֆեսին** առջևը նստողները տեղ կը բանան հարսին։ Հարսը ամչկոտ է, բայց կեսուրը կը փառավորվի, անուշ երաժշտության մը պես կը հնչեն այդ փսփսուքներն յուր ականջին։

Եվ երբ կ'ավարտի ժամերգությունը, այն ամեն կանայք, որք թեև ընտանեկան հարաբերություններ չունին, բայց վերնատան դրացիներ են, կը պաշարեն կեսուրն ու հարսը, «Խերը տեսնես, հանըմ, քուրուկ» ըստ աստիճանին։— Աղնվական կիները այն օրը մի քիչ ուշ կ'իջնեն, որպեսզի հարցնեն մոմ վառող կնկան, թե ո՞վ էր այդ նոր հարսը։— Եվ այդքանով չբավեր. թաղին մեջ նույն օրը միշտ կը խոսվի կեսրոջն ու հարսին վրա։ Եվ ո՞ր կինը չի ցանկար սրտին խորեն գեթ օր մը ընդհանուր խոսակցության առարկա լինիլ։ Լևոնի խեղճ մայրն այդ փառքեն զուրկ մնաց։ Ֆոռթյունե մերժեց կեսրոջն առջևն ինկած եկեղեցի երթալ։ Արդեն ինքն եկեղեցի գացող չէր. և եթե եկեղեցի երթալ ուզեր ինքն, էրիկ ուներ, կրնար երթալ։

Հուսահատվեցավ Շարուհի հանըմը։ Կանայք, որքան փափուկ ու տկար արարածներ համարվին, բայց համառ ու հաստատամիտ են, երբ իրենց սերը կամ փառասիրությունը խնդրո առարկա է։ Շարուհի հանըմ անպատճառ յուր կեսուրական իրավունքներն ի գործ պիտի դներ։ Հարսը կարող էր յուր ամուսնույն հետ եկեղեցի երթալ, կարող էր նորա հետ հատուցանել փոխադարձ այցելությունները, բայց կարող չէր ամուսնույն հետ կատարել մի մեծ արարողություն, այն է բաղնիք երթալ։ Իհարկե՝ բաղնիք գնալու արարողությունն այնքան վսեմ չէ, որքան եկեղեցի երթալը։ Բայց, վերջապես, ըստ բավականին փոխարինություն մը կրնա համարվիլ։ Բավական է, որ օր առաջ մի քանի տուներու մեջ իմացվի, թե նոր հարսն այն ինչ օրը բաղնիք պիտի երթա, այդ օրն արդեն կանանց պատկառելի բազմություն մը կը գրավե բաղնիքն։ Եվ ի՞նչ հրճվանք կեսրոջ մը համար, երբ հարսն ամենայն խոնարհությամբ և գորովանոք կը սրբե, կը շորցնե իրեն կռնակը, կուրծքը և կը համբուրե ձեռքը։ Բայց Ֆոռթյունե կը սոսկար այդ ստորնութենե և բացարձակ կերպով կեսրոջն հայտարարեց մի անգամ ընդ միշտ, թե ինքը տեղ պիտի երթա նե թող երթա, բայց այլևս իր ետևեն չիյնա, ինքն ալաֆռանկա մեծցած աղջիկ է, անանկ հին կնկան բաներ չի գիտեր։

Այդ օրեն արդարև Շարուհի հանըմ հուսահատեցավ։ Տեսակ մը դժգոհություն, տեսակ մը տխրություն տիրեց տան մեջ։ Ֆոռթյունե շատ անգամ կը քաշվեր յուր սենյակը, ոչ մի ընտանեկան հոգ կը կրեր, կարծես թե օտարական մ'էր այդ տան մեջ։ Եվ Լևոն, որ այնքան կը սիրեր ընտանեկան կյանքն ու հանգստությունն, սկսավ ընկղմիլ մտատանջության մեջ։

Միայն հինգշաբթի օրերը կը փարատեր Ֆոռթյունեի թախիծն։ Ամեն հինգշաբթի գիշեր կ'այցելեին Սինայաններու։ Որմե հետե ամուսնացած էր Միրտիչ Սինայան, ինքն ևս յուր օրն ուներ, որ էր հինգշաբթի։ Ամեն

հինգշաբթի գիշեր կը հավաքվեին նորա տան մեջ մի քանի հայ վաճառականներ, երկու երեք փաստաբաններ, նույն թվով բժիշկներ, և այոնց մեծ մասն կուգային, ըստ պոլսական սովորության, առանց ընտանյաց։ Այդ ընդունելության մեջ ժամանակ անցնելու գլխավոր միջոցը թուղթի խաղն էր։ Տիկին Հերիգա կը սիրեր երաժշտությունը, կը սիրեր գրականությունը և կը փափագեր տեսնել իրենց ընդունելության գիշերներն երիտասարդ դեմքեր, երիտասարդ տաղանդներ և մտավոր զբոսանաց նվիրել ժամանակին մեկ մասը, բայց տան մեծն ինք չէր։ Ինքն անկարող էր ըստ յուր հաճույս տնօրինել. կը գոհանար ուրեմն եղածովն։ Օր. Սինայան ամուսնացած էր, նա ևս անդ կուգար։ Սենյակներե մին հատկացված էր երիտասարդներու, անդ կը գտնվեր դաշնամուրն, և տիկին Հերիգա կ՚ախորժեր այդ սենյակը մնալ յուր բարեկամուհյաց հետ. բայց Ֆոռթյունե խույս կուտար և միշտ թուղթ խաղացողներու մոտն էր. ինքն ալ կը սիրեր խաղալ և կը խաղար։ Լևոն ստիպվեցավ շաբաթական գումար մը հատկացնել կնոջը, բավական ծանր էր այդ բեռը իրեն համար, բայց ի՞նչ ըներ, կինը ամեն բանե զրկված չէր կրնար մնալ, և հետո մի քիչ կ՚ապահովեր ընտանեկան հանգստությունը։ Ֆոռթյունե կատաղի կերպով պեզիկ կր խաղար, և մեծ գոհունակություն կ՚զգար, երբ վաճառականի մը, բժիշկի մը դեմ կ՚ելներ. գեթ այդ միջոցով «բան մը կ՚երեվեր»։— Նա չէր կրցած ուշադրություն հրավիրել յուր վրա, ի՞նչ դիրք ուներ, որ ուշադրության արժանի լիներ. շնորհիվ թուղթի, կարևորություն կ՚ստանար Սինայաններու տան մեջ և կը պատահեր շատ անգամ, որ հինգշաբթի օրերե զատ ուրիշ օրեր ևս թուղթի պատրվակով կը գտնըվեր այդ տան մեջ։

Ֆոռթյունեի սիրտն հանդարտ չէր. իբր աղջիկ ի՛նչ զգացումներ որ ուներ Սինայան Մկրտիչի համար, այդ զգացումները կենդանի էին սրրտին մեջ և անհանդարտ էր։— Ի՞նչ նրբության չէր դիմեր՝ Մկրտիչը գրավելու համար։ Սինայան Մկրտիչ այն անձերեն էր, որք կրնան «լավ մարդ» համարվիլ, բայց շատ դյուրասահիկ են կանանց վերաբերյալ խնդրոց մասին։ Կը սիրեն իրենց կիները, նախանձոտ են չափազանց, բայց խղճահար չեն ուրիշի կինը սիրելու մասին։— Ո՛չ մեկ ազգականություն նվիրական է իրենց համար. միայն քույրերնին գիտեն հարգել։ Կը սիրեն ուրիշ կիներ ո՛չ թե սրտի անդիմադրելի զգացումներե հարկադրյալ. ա՛յլ… այլ իրենք ալ չեն գիտեր ինչո՛ւ համար։ Սխալ է ըսել, թե կը սիրեն, այլ պետք է ըսել կը վայելեն։ Եթե հանդիպին կանանց, եթե առիթ գտնեն, կը վայելեն, եթե չհանդիպին, չգտնեն, անհանգիստ չեն ըլլար։ Իրենց վայելած կիներն ընդհանրապես անհամեմատ ստորին են իրենց կիներեն։— Այդպիսի անձանց սերը ոչինչ ունի բանաստեղծա-

կան, ոչինչ ունի գաղանային։ Անհամ, թույլ, անհրապույր իրողություն մ՚է, անկարևոր ալ պիտի ըսեինք, եթե ծնունդ չտար ընտանեկան մեծամեծ դժբախտության։

Այդ ձմեռը Մկրտիչ Սինայան հասկցավ, թե Ցոռթյունե իրեն հետամուտ է։ Անտարբեր եղավ. եթե առիթ մը ներկայանար, դժգոհ չէր մնար, բայց պետք չուներ այդ առիթն որոնելու համար ինքզինքը նեղելու Երբ Ցոռթյունե կը մեկներ իրենց տունեն, ինքն ալ կը մոռնար ամեն բան։ Լևոն ոչինչ կը կասկածեր, մտքեն իսկ չէր կարող անցունել, թե յուր կինը հին սերը չէ մոռցած։ Տիկին Հերիքա ևս կատարյալ անդորր վիճակի մեջ էր։ Բայց մինչ այս, մինչ այն ձմեռը կ՚անցներ, ոչինչ պատահած էր։ Ցոռթյունե բավական առաջադիմություններ ըրած էր Սինայանը գրավելու մասին, ավելի ոչինչ։ Շիտակն ըսելով նոր հարսի մը համար բավական գործ մ՚էր այսքանն ալ։ Գարունն եկավ, գիշերները կարճեցան, գիշերային այցելությունները նվազեցան։

Շուտ հասան մայիսի վերջին օրերը։ Կը խանձեին Բերայի սալահատակները բարկ արևեն. փոշին կը բարձրանար երկնապող. կը պարտավորեին տանց պատուհանները փակել այդ տաք եղանակին մեջ։ Հայ-լայֆը լքած էր ձմռան յուր սիրելի արվարձանը և կ՚զբոսնուր հովասուն ու ծովասուն գյուղերն հափունս Վոսփորի և Մարմարայի, իսկ Ցոռթյունե և Լևոն գամված կը մնային իրենց տեղն. այդ անտանելի էր Ցոռթյունեի համար։ Ամեն օր մտքը կը թռչեր Գեոյուք-Տերե, Կղզին, զոր չէր տեսած. կը տառապեր, կը չարչարվեր ո՛չ միայն այնու, զի չէր կարող վայելել ամռան հրապույրներն, այլ զի կը խորհեր նաև, թե ի՞նչ պիտի ըներ ձմեռն, երբ յուր բարեկամուհիներն խոսակցեին ամռան իրենց զբոսնաց վրա և ինքն անմասն և անբաժին այդ զբոսնաց մեջ, լուռ մունջ ամոթով մնար։ Ձէ՛, անհնարին էր այդ, անհրաժեշտ էր, որ իրենք ևս օդափոխության երթային։

— Լևոն,— կ՚ըսեր իրիկունները, շոյելով ամուսնույն ճակատը, ի՞նչ պիտի ըլլաս այսպես։ Առավոտեն մինչև իրիկուն կը մգլիս Պանքային մեջ, գամված կը մնաս, ոսկորներդ կը տեսնվին։ Ո՛չ կ՚զբոսնուս, ո՛չ մաքուր օդ մը կը շնչես, ո՛չ այլ ինչ կ՚ընես։ Ա՛խ, քունս քեզի համար չի տանիր։ Ես Բերան շատ կը սիրեմ թեպետ, բայց քեզի համար աչքես ելած է։

Եվ Լևոն, որ անձկակարոտ էր այդ գորովանաց, կը հուզվեր, կը սեղմեր կնոջը ձեռքերը, սրտին վրա կը դներ զայնս։

— Ի՞նչ կրնամ ընել Ցոռթյունես,— կ՚ըսեր,— գալ տարի բան մը կ՚ընենք։

— Գալ տարի ըլլար,— կը պատասխաներ Ֆոռթյունե, ի՜նչ ընեմ չընեմ քեզ գեղ մը պիտի տանիմ. կախեմ պիտի, ծախեմ պիտի, քեզ պիտի տանիմ։

Ո՜չ ծախելու, ո՜չ կախելու չէր ներեր Լևոն և այդ խնամոտ, այդ հոգած կնոջ սիրույն ամեն զոհողություն հանձն կ՚առնուր։ Ի՜նչպես շուտ կը մոռնար ձմռան տխրությունները։ Այո՜, ինչպես որ երևակայած էր Ֆոռթյունեն, երբ սի՛րեց զնա, նույնը կը գտներ այժմ։— Ո՞չ ապաքեն ինքն ալ արդեն կ՚զգար օդափոխության մը պետքն։ Երբ ցերեկներն առիթ կ՚ունենար Ղալաթիայեն Պոլիս անցնելու, քիչ մը ատեն կանգ կ՚առնուր կամուրջին վրա, լիաթոք կը շնչեր այն քաղցրասիք հովերը, զորս Սև ծովն ու Մարմարան կը ղրկեն Պոլսո։ Եվ հետո քույրը, հայրը, մայրը, ինչքան ժամանակե ի վեր բանտարկված կը մնային իրենց տան մեջ. նոցա համար ևս օդափոխությունն անհրաժեշտ էր։

— Կ՚երթա՜նք, կ՚երթա՜նք, Ֆոռթյունես,— ըսավ շաբաթ երեկո՜ մը. և Ֆոռթյունե մանկական ուրախությամբ ձեռքերն իրարու կը զարներ։

— Մոտ գեղ մը, Պոյաճի գեղ, կամ Գնալը,— կ՚ըսեր Լևոն։— Ծախսն ալ քիչ կ՚ըլլար, երթևեկությունն ալ դյուրին, և ծնողքն ազատորեն ըստ հաճույս կրնային զբոսնուլ։

— Պոյաճի գյո՞ւղ, Գնալը՞։— Է՜հ, ինչ ըներ Ֆոռթյունե այդ որբևայրիներու տեղերն. ձմեռն ինչ հպարտություն է ըսել «Մենք Գնալը էինք», երբ Սինայանք և ուրիշներ պիտի պարծենային Վոսփորով և Բրինքիբոյով։— Եվ ինքն, որ Մեծ կղզի կ՚երևակայեր, իրավ է, որ Սինայանները հեռու կը մնար, բայց Մեծ կղզի արիստոկրատիկ է և անշուշտ անոր փայլը պիտի ցոլանար յուր վրա ևս։— Եվ աս կեսուրն ալ, աս պարոնտատն ալ միշտ իրեն փակա՞ծ պիտի մնային։ Ի՞նչ գիտնամ, դեռ ի՜նչ ազգականներ, ի՜նչ կնիկներ պիտի գային լեցվեին։ Այս ամենը կը մտածեր նույն վայրկյանին և առանց բացորոշապես Լևոնին հայտնելու յուր միտքը կ՚ըսեր.

— Չէ՜, Լևոն, չէ՜, փոխանակ այդպես երթալու ամենևին չերթանք, ավելի լավ է։ Հոգիդ բերանդ պիտի գա. աշխարհքին ծախքին ներքև պիտի ընկճվիս. եկող գացողնիս անպակաս պիտի ըլլա, ամեն բան քիթերնուս, բերներնուս պիտի գա։— Թե որ կ՚ուզես անոնք տեղ մը ղրկե, ես քեզ պիտի առնեմ երկու շաբաթ, ամիս մը, գեղ մը պիտի տանիմ, որ հանգիստ, անհոգ անցնես ժամանակդ, ետքը կ՚իջնենք անոնց քով։

Եվ Լևոն կը վարաներ, կը շփոթվեր. մեկ կողմեն չէր ախորժեր ծնողքը ձգել երթալ, մյուս կողմանե կը սոսկար այդ հյուրերու բազմութենեն, ծանր բեռներե։

Հաջորդ օրը կիրակի առավոտ կանուխ Ֆոռթյունե կ՚ըսեր Լևոնի.

— Ա՜խ, Լևոն, ի՞նչ պիտի ընենք այսօր. մինչև իրիկուն պիտի ճաթի՞նք նորեն։ Բան մը ընենք։

— Ի՞նչ ընենք, ո՞ւր մը երթանք։

— Մեծ կղզի երթանք։

Արեգնաշեր առավոտ մ'էր, կ'երևեր, թե օդը շատ տաք պիտի ըներ. Լևոն ինքն ալ պետք կ'զգար ծովաշու երթևեկության մը։ Խոստացավ կնոջն երթալ։ Շուտով հագվեցան, արդուզարդերնին ըրին և մեկնեցան։ Լևոն կ'ուզեր քույրն ալ միասին առնուլ, բայց խոսքն ընել անգամ չհամարձակեցավ առ ահի կնոջն։ Այլ երբ դուրս ելան տունեն, Լևոն մի քանի անգամ դարձավ և նայեցավ. խեղճ աղջիկը սիրտը կոտրած, պատուհանեն անոնց կը նայեր։ Տարաբախտիկ վիճակ այն աղջկան վիճակն, երբ եղբայրն ամուսնանալով՝ ինքն անոք անօգնական կը մնա։ Ո՛չ ամառն իրեն համար է, ո՛չ աշունը, ո՛չ գարունը. անմեղ դատապարտյալ մ'է,— արդյոք մարդասիրական չէ՞ր ավանդությունն, որո համեմատ չէին ամուսնացներ երիտասարդ մը մինչև որ յուր տարեկից քույրն ամուսին մը չունենար։

Թող Աննիկ պատուհանեն վշտահար նայի, թող նորա մայրը ցաված լինի աղջիկը միայնակ տունը տեսնելով, Լևոն և Ցոռթյունե շտապաքայլ կ'ընթանան, կառք մը կը գտնեն և անմիջապես կամուրջ են։

Կղզիներու շոգենավը դեռ նոր կը մոտենար կամուրջին և մեկնելու մի քիչ ժամանակ պետք էր. ճամփորդք հարկադրված էին կամուրջին վրա սպասել։ Կ'սպասեին առանց ձանձրանալու։ Նոր տեսարան Ցոռթյունեի համար. նորանոր ուղևորներ կը հասնեին. ոմանք հանդարտաքայլ, այլք շնչասպառ, ամենքը վայելուչ հագված, ամեն դեմքերու վրա ուրախություն մը։ Շշուկ, աղմուկ, խոսակցությունք։ Ծանոթներ կուգային,— ո՞ւր բարովն իրարու կը հարցնեին։ Եվ ի՞նչ սեգ շեշտով Ցոռթյունե կ'ըսեր.

— Բրինքիբո։

— Օդափոխությա՞ն։

— Տեսնենք։

Եվ հետո, շոգենավը կարծես ընդարձակ սրահ մ'էր, ընտանեկան սրահ մը. ոմանք նստած էին, ոմանք կը ճեմեին, կը խոսակցեին, հաստ շվոց մը կը լսվի, ծովը կ'սկսի փրփրիլ, շոգենավը կը մեկնի։ Ցոռթյունե աչքերը կամուրջեն կը հեռացնե և կը դիտե ծովը, հեռավոր հորիզոնը, ուր կղզիներն կարծես ամպերու մեջ փաթաթված են։— Լուսանցկ օդ, մեղմաշունչ հյուսիսակ, ծաղկաձև կապույտ ալիքներ կը հրապուրեն բոլոր զգայարանքները։ Կ'անցնին Գատը-Գյուղեն, զոր լավ կը ճանաչե Ցոռթյունե, զի անդ բավական ատեն վարժուհի եղած է։ Գնալը, Անթի-

կոնի հրապուրիչ չեն իրեն համար, բայց երբ կը հասնի Հալքիի առջեւ, սքանչացած կը մնայ։

Կը մեկնին Հալքիէն, կարծես շոգենավն ավելի ծանրաքայլիկ կ'ընթանա, որպեսզի ուղևորք սրտալիր զմայլին Ծիաքոմոյի տեսարանովն։ Ֆոռթյունե կը կարծե, թե կը նշմարե հրաշատունկ դրախտ մը։ Դալարյա պատնեշ մը, լուսաճեմ բլուրներ, փափկանյութ կանաչներով մշտաչփթիթք, խատուտիկ երփներանգ ապարանքներն կը դյութեն, կը հմայեն զինքն։ Լևոն մատնանիշ ցույց կուտա շենքերը, պարտեզներն և ինքն ալ կը խանդաղատի կնոջն ուրախությամբ։

Կը հասնին Նավամատույցը, նոր տեսարան, նոր վայելում։ Նավամատույցը փոքրիկ թերակղզի մ'է, ուղևորք անհամբեր են, այծերու նման կը ցատկեն դուրս։ Բազմությունը գրաված է ամբողջ նավամատույցն, ամռան թեթև զգեստներով արք և կանայք ուրախ զվարթ խռնված են. ոչ մեկ դեմքի վրա տխրության հետք մը, ամեն ոք ուրախ զվարթ է։ Ինչ խնդությամբ կ'ընդունվին հյուրերն, և հյուրընկալք ու հյուրերը թև թևի կը մեկնին։ Ծանոթներ ունին Լևոն և Ֆոռթյունե, հրավերներ կ'ընդունին, բայց Ֆոռթյունե կ'ուզե օրել մը երթալ, երբեք չէ տեսած հյուրանոց մը, ինհարկե այդ գաղտնիքը ոչ մեկուն կը հայտնե։ Ծանոթները կ'ըսեն իրենց. «Ամառը հոս անցուցեք, շատ կը զվարճանաք»։ Ֆոռթյունեի սրտեն կը խոսին։— Կը նստին զբոսարանը, մեկ երկու ժամ կ'զբոսնուն. երաժշտությո՛ւն, բազմություն, խոսակցություն այնքան շուտ կը սահեցնեն ժամերը։

Ճաշի ժամ է, կը մտնեն օբել տն զէրանձե: Ֆոռթյունե ոչ հյուրանոցի վրա գաղափար ունի, ո՛չ հյուրասեղանի. Նորությունը զինքը կը շլացնե։ Սեղանին վրա ամեն լեզու կը խոսվի։— Եթե մի քանի շաբաթներ այնտեղ անցունե. ի՜նչպես պիտի փայլի, ի՜նչ նոր ծանոթներ պիտի ունենա, որչափ պիտի զբոսնու։ Սեղանեն վերջ մի քանի այցելություններ կուտան։ Վերջը, երեկոյան դեմ, ֆայթոնով պտույտ։ Առջի օրերն անձրև եկած էր, փոշի չկար։ Կը հիանար Ֆոռթյունե անցնելով այն ճանապարհեն, որ կը տանի Ծիաքոմո։ Փողո՞ց էր, թե՞ անտառ մը։

Վերջին շոգենավի մեկնելու ժամը հասած էր, վերադարձան Նավամատույց։ Ֆոռթյունեի անհնարին կը թվեր թողուլ այդ հիանալի վայրերը։

— Ի՞նչ կ'ըլլա, Լևոն, այս գիշեր հոս կենանք, աղեկ ատեն մը կ'անցունենք։— Եվ Լևոն ի՛նքն ալ հրապուրված կը մնար. հեռագիր մը ղրկեց տունը և հանգստացավ։

Գիշերն աննկարագրելի տեսարան։ Լուսինը լիալիր ծաթած էր հանդարտիկ ծովուն վրա։ Քաղցրանվագ երաժշտությունը վերստին կը հըն-

չեր. զբոսարան, նավամատույց, ճեմելավայր ամենուրեք հոծ բազմություն։ Մինչև կես գիշեր զվարճացավ Ֆոռթյունե, այնպիսի զվարճություն բնավ չէր վայելած։ Այդ դյութական տպավորության ներքև սկսավ աղաչել, պաղատիլ ամուսնույն, որ գեթ ամիս մը անդ անցնեն։ Ի՞նչ կ՚ըլլա, քա՞նի ոսկիի խնդիր էր։ Լևոն, որ այսքան զոհողությունները կ՚ըներ ընտանյացն համար, արդյոք շա՞տ բան էր, որ քիչ մըն ալ իրեն անձին խնամք տաներ։

Եվ Լևոն շատ պատրաստ էր համոզվելու. ամուսնանալէն ի վեր հանգիստ, գոհ օր մը չէր անցուցած. և անձկակարոտ էր այդ գոհունակության։ Օդափոխություն, զբոսանք թե՛ իրեն և թե՛ Ֆոռթյունեին համար օգտակար էին։ Կը մտածեր նաև, թե այդ գոհունակությամբ տալով Ֆոռթյունեի, կրնար նորա բնավորությունը փոխել. կը կարծեր, թե խեղճ կինն ամուսնանալէն ի վեր ոչ մեկ զվարճություն ունեցած էր։ Կարելի էր ընտանիքեն մի քիչ ատեն հեռի մնալն ալ նպաստեր հարաբերությանց բարվոքման։

Առավոտը Լևոն խոսեցավ պանդոկապետին հետ. ամսվան մը համար սակարկությունն ըրավ։ Երկրորդ շոգենավով իջան Պոլիս։ Լևոն Ֆոռթյունեն տուն ձգեց, ինք Պանքան գնաց, երեկոյին եկավ, պատրաստությունները տեսած էր Ֆոռթյունե և մեկնեցան։ Սակայն Լևոնի սիրտը անհանգիստ էր։ Մայրը, հայրը, քույրը կը թողուր այդ տաք Բերայի մեջ, մինչ հյուրանոցի ծախքովը կարող էր տուն մը վարձել, որով ամենքը միասին օդափոխության մը կրնային երթալ։

Այդ առաջին շաբաթն, որ Կղզին էին, Ֆոռթյունե կը կարծեր, թե տեղափոխված էր Ֆրանսայի ծովային վայրերեն մին, ուր կը գնան ֆրանսացի դյուրակեցիկ ընտանիքներն և որոց նկարագրությունները կը կարդար վեպերու մեջ։ Ուղիղն ըսելով՝ Ֆոռթյունե բավական կերպարանափոխ եղած էր։ Քանի որ գոհ էր, ինքզինքը դժբախտ չէր կարծեր։ Հյուրասեղանը մանավանդ յուր մեծագույն հրճվանքն էր։ Այժմ հայ լինելը գաղտնի չէր պահեր. մանավանդ կը պարծենար։ Ամեն առիթ կ՚որոներ ֆրանսերեն խոսելու։ Հայ մը այսպես ֆրանսերե՞ն խոսի, կ՚ըսեին օտարներն ու կը զարմանային, և Ֆոռթյունեի անձնասիրությունը գգվյալ էր։ Անշուշտ եթե ֆրանսուհի մը լիներ, ինքն այդքան զարմացում չպիտի պատճառեր։ Գոհ էր ամուսինեն. վերջապես եթե հարուստ ամուսին մը առներ, ասկե ավելի վայելում կարելի չէր հուսալ։ Եթե տիկին Հեբիգա Սինայան հոն գտնվեր, որչա՞փ պիտի նախանձեր յուր վիճակին։ Այդ շաբաթներուն մեջ միայն Ֆոռթյունե կը գերազանցեր զնա։ Հերիգա կեսրոջ մը, պարոնտատի մը ճնշման ներքև քաշված Ենի-քեոյ, իսկ

ինքն, արձակ, համարձակ, ազատ։ Բայց ձմեռն այդ ամենը կը պատմեր և վրեժը կը լուծեր։

Սակայն «անցանե և այս»։ Շուտ լրացավ ամիսն, հուլիսն եկավ, հարկ էր իջնել Բերա։ Հուլիսի մեջ իջնել Բերա, այդ անհնարին էր։— Անկարելի բան է, կ՚ըսեր Լևոնին։ Ճիշտ ժամանակն էր Կղզիի հրճվանաց և վա՞ր իջնենք։— Ծովու ժամանակն է. դեռ նոր կուգան ուրիշներ օդափոխության և մեկ ամսվան մեջ Լևոնն ալ չէ՞ր գիրցած, կերպարանափոխ չէ՞ր եղած։— Բայց Լևոն կ՚առարկեր, թե ծախք շատ կ՚ըլլա, թե՛ տունը նայի, թե՛ Կղզիի ծախքերն հոգա, որ յուր հաշվածեն շատ ավելի եղած էին, իրեն համար դժվար էր։ Ֆոռթյունե նեղացավ, ծախքն ես կ՚ընեմ, ըսավ։ Հարսանյաց նվերներն ուներ, կնքահորը տված ադամանդը կար։— Կը ծախեմ և ծախսը կը հոգամ։ Ինծի համար չէ, որ մնալ կ՚ուզեմ, քեզի համար է։ Ի՞նչ պիտի ընեմ ադամանդը։

Լևոն կարո՞ղ էր ներել, որ կինն ադամանդը ծախե ու ինքն զբոսնու. բայց խանդաղատեցավ, տեսնելով կնոջը պատրաստակամությունը այսպիսի զոհողության մը։ Մերժեց կնոջն առաջարկն և խոստացավ ամիս մը, ի հարկին ավելի ևս մնալ։ Բայց հաջորդ օրը մտատանջության մեջ էր։ Յուր ամսականը չէր բավեր այս կրկին ծախքերուն։ Եթե ժամանակավ խնայողություն ըրած էր, ավելցուցած գումարն արդեն սպառած էր, որմե հետե ամուսնացած էր, և այժմ մանր մունր պարտքեր ուներ, փոխառություն մը ընելու հարկը կը ներկայանար։ Շնորհիվ այն վարկին, զոր կը վայելեր իբր գրագիր Պանք Օթոմանի մեջ, կարող եղավ այդ փոխառությունը դյուրությամբ ընել։ Բեռը թեթևցավ, կարևոր ծախսերն հոգալու գումարը պատրաստ ուներ, սակայն մտատանջությունը միշտ մտատանջություն կը մնար։

Տասնևհինգ օրեր անցան այսպես, Ֆոռթյունե օր ըստ օրե ավելի գոհ կը մնար, իսկ Լևոն սկսավ նեղվիլ։ Սաստիկ շոգ կ՚ըներ, անձրևի պակասությամբ փոշին այնքան կը բարձրանար, որ առանց կառքի պտույտի երթալն անտանելի էր։ Թողունք որ նույնիսկ երբ կառքով երթային, ալյուրի պարկ դարձած կը վերադառնային։ Շոգենավեն կը նեղվեր. այդ ամսուն փոքր դանդաղընթաց շոգենավ մը հատկացված էր առաջին և վերջին երթևեկության համար։ Թեև փոխառություն մը ըրած էր, բայց և այնպես զայն մոտավոր ժամանակի մեջ վճարելու հարկն մտահոգություն կը պատճառեր իրեն։ Խիղճն ալ կը տանջեր զինքն, որ ծնողքն ու քույրը Բերա թողած ինքն իշխանավայել կյանք կը վարեր։ Իզուր կ՚ուզեր գիշերները մի քանի ժամ հանգիստ նիրհել. կնոջը սիրույն պարտավոր էր ընկերանալ նմա և ուշ ատեն անկողին մտնել։ Բայց նիրհել անհնարին էր, մժեղները, կղզիներու համրավավոր այդ հյուրամեծարքը, թույլ

չէին տար, որ մի ժամ հանդարտ ննջեն։ Լևոնի վիճակն անտանելի եղած էր. ցերեկները գործին մեջ կը մրափեր, բայց իրենց պետին աչքերը յուր վրա էին։ Պաշտոնակցաց խորհրդով սկսավ ափիոն գործածել, այն ատեն գիշերներն հանգստություն գտավ, այլ ծախս մ'ալ ավելցավ։

Բայց լրացավ հուլիս ամիսը։ Լևոն պնդեց անպատճառ տեղափոխվիլ Բերա, իսկ Ցոռթյունե այս անգամ կատաղած էր, տեսնելով, որ ամուսինն, այդ տկար երիտասարդը, համառ կերպով կը պնդե տեղափոխության մասին։ Դժգոհ, վայրագ դեմք մը ուներ։ Օգոստոս ամսո մեջ Բերա վերադառնալ, ծաղրուծանակ լինել։ Լևոն խոսք չէր հասկնար. սակայն մյուս կողմանե կը մտածեր, թե ինչ դժնդակ կացության պիտի ենթարկվի, եթե բռնի կերպիվ կինը քաշե տանի։ Իրավախոհության մը հանգելու պետքն զգալի էր երկու կողմաց համար։ Որոշեցին միահաղաղ հավանությամբ, որ օգոստոսի առաջին շաբաթն ալ կղզին անցունեն։ Լուսնկայի տասնեհինգը կը լրանար այդ շաբաթը և կը խոսվեր, թե Վոսփորեն գիշերային զոգենավ մը պիտի գար. լավ զբոսանք մը կ'սպասվեր. ուրեմն թե՛ լուսնկան պիտի վայելեին և թե՛ վոսփորյան հյուրերն։

Այդ կիրակին, որուն գիշերային շոգենավը պիտի գար, Լևոն ստիպյալ էր Վոսփոր երթալ, յուր եվրոպացի պաշտոնակիցներեն միույն հարսանյաց հանդեսին ներկա լինելու։ Առավոտյան շոգենավով գնաց, երեկոյին գիշերային շոգենավով վերադառնալու պայմանով։ Ցոռթյունեի շատ հոգը չէր ամուսնույն բացակայությունը, թե՛ հյուրանոցին մեջ և թե՛ դուրսը բազմաթիվ ծանոթներ ուներ, որոնց հետ կրնար զբոսնուլ։

Երեկոյան դեմ հեռվեն նշմարվեցավ Վոսփորի շոգենավը։ Ցոռթյունե հյուրանոցի պատշգամն ելավ և հայակ մը ի ձեռին, կը դիտեր հյուրերն։ Շոգենավը կը դատարկանար, բայց ամուսինը չերևցավ։ Մեկեն ի մեկ Ցոռթյունեի սիրտն սկսավ արագ-արագ բաբախել, երեսները կարմրրեցան, ծունկերը կը կտրտեին։ Տափատենչիկ անձի մը հանկարծահաս հուզման ամեն հայտնի նշաններն էին։ Ցոռթյունե նշմարած էր Սինայան Մկրտիչը, որ միայնակ կ'ելներ շոգենավեն և կը հառաջանար դեպի հյուրանոցը։ Շատ լավ դիտեց. շոգենավը պարպվեցավ, ամուսինը չէր երևցած։

Ցոռթյունե փութաց դուռն իջնել և կնքահորն ընդառաջ երթալ։—Մոտ երեք ամիսներ էին զիրար չէին տեսած, որպիսի՜ խնդությամբ տեսակցեցան։ Սինայյան հարցուց Լևոնի ուր լինելն. այդ միջոցին Լևոնի կողմանե հեռագիր մը հասավ հաղորդելով, թե անհնարին եղած էր իրեն հարսանյաց տունեն մեկնիլը, ուստի Ցոռթյունե անհանգիստ թող չլիներ։

Անհանգիստ չլիներ. եթե հեռագիրը չհասներ, իսկ այն պահուն Ցոռթյունե մոռցած էր անգամ, թե ինքն ամուսին մը ուներ։ Ցոռթյունե հրա-

վիրեց Մկրտիչն հյուրանոց. թեպետ նա հայտարարեց, թե մի քանի պարտավորիչ այցելություններ ունի, բայց Ցոռթյունե պնդեց, թե այսօր իրենց հյուրն է. եթե կ'ուզե ուրիշ անգամ այցելե այլոց։— Մկրտիչ մի քիչ հանգիստ առավ. այդ միջոցին Ցոռթյունե զգեստները փոխեց։ Սան ու կնքահայր մեկնեցան հյուրանոցեն պտույտ ընելու։ Վերադարձան, երբ ճաշի ժամանակ էր, բավական խոնջ էին, լավ կերան։ Սինայան գոհ չմնաց սեղանի ըմպելիքով և ընտիր գինի բանալ տվավ։ Ցոռթյունե սովորականեն ավելի խմեց. երբ սեղանեն ելան, Ցոռթյունեի գլուխը ծանրացած էր, այտերը կարմրած, աչերը հրացայտ. քիչ մը հանգստանալու պետք կ'զգար։ Սինայան թույլ չտվավ, որ միայնակ երթա յուր սենյակն, այլ յուր բազուկը տվավ նմա. Ցոռթյունե ուժով կռթնեցավ Սինայանի չլապինդ բազկին։ Երբ մտան Ցոռթյունեի սենյակն, ճրագը վառեցին. աղոտափայլ լույս մը։ Ցոռթյունե թիկնաթոռի մը վրա ինկավ. Մկրտիչ ձեռքը նորա ճակտին տարավ՝ տեսնելու, թե տաքություն կա՞։ Կայրեր ճակատը։ Ցոռթյունե սեղմեց Մկրտիչի ձեռքը դողդողալով։

Շոգենավի մեկնելու շվոցը կը լսվեր, Սինայան Ցոռթյունեի սենյակն էր տակավին. աճապարեց մեկնելու և մեկնեցավ, կրկին ուժով սեղմելով Ցոռթյունեի ձեռքը։ Ցոռթյունե միայնակ մնաց, բայց ավելի հանգիստ էր և գոհ սրտով։ Պատուհանի վարագույրը բացավ, պատուհանն ալ բացավ և քրտնաթոր կանգնեցավ պատուհանին առաջ։ Գիշերվան զով օդը ծծեց։— Ունե՞ր խղճի խայթ մը։— Ո՛չ։— Կարծես վրեժ մը լուծած էր, այնքան գոհ էր։ Այն գիշերն հանգիստ նիրհեց, երբեք այդքան անվրդով և խաղաղ չէր նիրհած։

Ե

Երկուշաբթի երեկո Լևոն վերադարձավ Կղզի, սովորական ժամանակեն կանուխ, վասնզի անհանգիստ էր առջի օրը կինը մինակ ձգելու համար։ Գոհ եղավ տեղեկանալով, որ յուր բացակայության կինն առանձին չէր մնացած։ Հաջորդ առավոտ վերջնական կերպով թողուցին հյուրանոցը և վերադարձան Բերա։ Լևոն ազատելով այդ տաղտկալի կյանքեն, կը խորհեր գործերն այնպես կարգադրել, որ կարողանար ընել հարկ եղած խնայողությունները, վճարել պարտքերն, ամեն ինչ կանոնավորել և հանգստանալ։ Արտաքին երևույթները ցույց կուտային, թե Լևոն ընտանեկան կյանքն անվրդով և խաղաղ պիտի անցներ այդ ձմեռ։ Ցոռթյունե կը վերադառնար Կղզիեն հանդարտորեն. տան մեջ դեմքը զվարթ էր. շատ հավանական կը թվեր, որ այդ ձմեռը նա մայր լինի. այդ պարագա-

գայի մեջ ինչպես կեսրոջն և հարսին միջև հարաբերությունք ավելի բարվոք կը լինեին։

Սակայն կարծես թե այդ խեղճ երիտասարդին ճակատը գրված էր բնավ հանգստություն չվայելել։ Հազիվ վերադարձան Բերա, կը հարկադրվեր փոխել տունը, վասնզի ծախված էր այդ տունը և նոր տան տերը չէր ուզած վարձու տալ։ Կը հատկացներ յուր բնակությանը։ Լևոն կը վարձեր նոր տուն մը. հարկ էր կանխիկ վճարել առաջին եռամսյան։ Պատրաստ դրամ չուներ, ամսականն ամբողջապես տվավ, որով խանգարեցան յուր տնտեսական ծրագրերն։ Հետո մայրը հիվանդացավ. բավական ատեն անկողնո ծառայեց. շարունակ բժիշկ կուգար, դեղերը սուղ էին։ Տան կառավարությունը տակն ու վրա եղած էր։ Սահակ աղա կը խմեր. Լևոնի համար ոչ միայն ծախուց դուռ մ՚էր հայրն, այլ նորա արբեցությունը գինքն անհանգիստ կ՚ըներ։ Անհնարին եղավ Լևոնի՝ կանոնավորություն ներմուծել յուր հասութից ու ծախուց միջև։ Մեկ կողմե կը վճարեր այն փոխառությունը, զոր ամառն ըրած էր, մյուս կողմե նորանոր պարտքեր կ՚ըներ հացավաճառին, մսավաճառին, ամենուրեք։ Այս անկարգության, այս հիվանդության մեջ Ցոռթյունե մեծ ձանձրույթ կ՚զգար, և որ ավելի դժվարին էր Լևոնի համար, կինը ոչ մեկ խոսք կը հասկնար։ Ցոռթյունե կ՚ուզեր, որ ձմռան ամեն հագուստները կատարյալ կերպով ունենա, ոչ մեկ նորաձևություն անծանոթ մնա իրեն։ Գրեթե ամեն օր այր և կին կը կռվեին։ Երբեմն հաղթանակը կը մնար Ցոռթյունեի, և մի նոր պարտք կը բարդվեր Լևոնի հին պարտուց վրա։

Ցոռթյունե իրավունք ուներ խստապահանջ լինելու արդուզարդի, հագուստներու և նորաձևության մասին։ Նոր հորիզոն մը պարզված էր յուր աչքերուն առաջ այն գիշերեն ի վեր, որում հյուրընկալեց Սինայան Մկրտիչը։ Ինքն յուր անձին վրա այժմ բարձր գաղափար ուներ։ Որքան ալ նախանձոտ էր, բայց և այնպես կը ճանաչեր տիկին Հերիգա Սինայանի արժանիքն, և սակայն Մկրտիչ Սինայան կարող չէր եղած դիմադրել յուր հրապույրանաց։ Ամուսնական հավատարմություն, բարեկամական կապեր, եկեղեցական օրհնությամբ աղգականություն, ամեն ինչ առ ոտն կոխած էր Մկրտիչ, որպեսզի զինքը վայելե։ Ցոռթյունե կը կարծեր, թե իրական աշխարհակալություն մը ըրած էր։ Եվ է՞ր չհուսալ նորանոր աշխարհակալություններ. անգամ մը, որ ճանապարհ ելած էր, ո՞չ ապաքեն կրնար դիմել հաղթանակե ի հաղթանակ և համարվել առավան կինը»։— Ա՜հ, տիկին Հերիգա, դու կը խլե՞ս ինձմե այն անձը, զոր կը սիրեի, և ահա ես կուգամ հափշտակել ամուսինդ։ Կը խրոխտայիր, թե գեղեցիկ ես. բայց ամուսինդ զքեզ անհամ կը գտնե, բաղդատելով ինձ հետ։— Եվ ո՞վ գիտե. նորանոր հաղթանակներն որպիսի՜ փոփոխություն

ներ պիտի բերեին յուր վիճակին։ Եվ այդ ամեն երազներն իրականություն տեսնելու համար, միթե հարկ չէ՞ր զոհողություններ ընել։ Իսկ տխմար, Լևոնը խնայողության վրա կը խոսեր. իբր թե առանց արդուզարդի հնարավոր լիներ Ցոոթյունեի գրավել յուր արժանավոր տեղն ընկերության մեջ, և կորզել ամուսիններն։

Եվ Լևոն օր ըստ օրե շվարած կը մնար։ Այնքան դժնդակ տառապանքներ, այնքան հոգեր, մտատանջություններ կը մաշեցնեին զինքն, հիմաբած էր։ Գիշերները քունն աչքերեն փախած էր և շարունակ ափիոնի կուտար ուժն, որով միայն կը հանգստանար փոքր ինչ։ Իսկ Ցոոթյունե կը կատղեր։ Ձմեռը կ՚անցներ, ոչ մին յուր հույսերեն իրականություն կը լիներ։ Լևոն այնքան հոգնած ու խոնջ էր, որ շատ քիչ անգամ գիշերներն այցելության երթալու հաճություն կուտար։ Եվ առանց ամուսնույն ո՞ւր երթալ։ Այն տարին Բերայի տարին էր։ Ջբոսանք, երեկույթք, պարահանդեսք զիրար կը մղեին, և Լևոն ափիոնը կ՚առնուր ու կը պառկեր, և Ցոոթյունե կը մնար բանտարկված։ Ամբողջ այդ եղանակին Ցոոթյունե մի անգամ եեթ միջոց գտած էր առանձին մնալ Սինայանի հետ և այդ ալ անուղղակի կերպով.— Աբրահամ աղայի շնորհիվ։ Այո՛, Աբրահամ աղա այժմ Ցոոթյունեի սիրելի անձն էր, որու պետքերն ալ ըստ բավականին կը հոգար։ Ցոոթյունե տակավին չէր բացված Աբրահամ աղայի, միայն կը հուսար, թե օր մը նորա աջակցությունն իրեն օգտակար պիտի լինի։ Ձմռան վերջերն այնպիսի վիճակի մեջ էր Ցոոթյունե, որ այցելություններ տալն անպատեհ կը թվեր և գարնան առաջին օրերը զավակն ունեցավ, աղջիկ մը։ Հարկ եղավ կաթնտու կին մը վարձել, բայց մանկիկին ժպիտը կը մխիթարեր Լևոնը և կ՚ուրախացներ ընտանիքն։ Կարծես թե նորածնին ժպիտներուն հետ նախախնամության գութը վերադարձավ այս տան մեջ։

Ապրիլի վերջերն, օր մը Լևոն հրավեր ստացավ Մկրտիչ Սինայանե ներկայանալ նոցա գրասենյակն։ Սինայան սիրալիր ընդունելության ընելով հայտնեց նմա, թե կը լսե, որ բավական ծանր վիճակի մը մեջ կը գտնվի դրամական տեսակետով։ Եվ թե պարտուց ներքև ընկճյալ է։— Ինչո՞ւ ինծի չես դիմեր այսպիսի պարագաներու մեջ, ըսավ։

— Արդեն ձեզ բավական ձանձրույթ պատճառած ենք, այժմ ի՞նչպես կրնայի համարձակիլ նորանոր ձանձրույթներ ևս տալ։

— Այդ ի՞նչ խոսք է, Լևոն,— ըսավ Սինայան,— դուն մերն ես։

Եվ Սինայան Մկրտիչի առաջարկությամբ Լևոն հաշիվ մը պատրաստեց, թե ի՛նչ գումարի կը կարոտեր յուր բոլոր պարտքերը վճարելու, ինքզինքը կանոնավորելու, ինչպես նաև օդափոխության մը երթալու համար։— Վասնզի,— կ՚ըսեր Սինայան,— թե՛ քու առողջությանդ,— ար-

դարև Լևոն շատ նիհարցած էր,— թե՛ կնոջ առողջությունը, թե՛ մորը վիճակը կը պահանջեն, որ օդափոխություն մը ընեք։— Լևոն պետք եղած գումարն հայտնեց, Մկրտիչ էֆենտի սնդուկը բացավ, վճարեց գումարն և Լևոն պարտամուրհակ մը ստորագրեց առաջիկա հոկտեմբերեն սկսյալ ամսե ամիս վճարելու պայմանով։

Լևոն մոռցավ ամեն վիշտ և արդարև այլևս ի՞նչ վիշտ ուներ։ Նույն շաբթու մեջ վճարեց պարտքերն, հոգաց ամենայն պետքերն։ Ֆոռթյունե գոհ և ուրախ էր, և օդափոխության վրա խոսեցան։— Ֆոռթյունե Մաքրի-գյուղ կ՚ուզեր. Լևոն հարմար կը գտներ այս տեղն թե՛ ծովու և թե՛ ցամաքի ճանապարհ ունենալուն պատճառով. կիրակի օր մը գնացին տուն մը գտան և փոխադրվեցան։

Կարելի է գուշակել թե ինչո՞ւ Սինայան այդքան օգտակար ուզեց ըլլալ Լևոնին։ Նախ իրապես կը համակրեր այդ երիտասարդին։ Հետո քանի որ հարաբերություններ հաստատած էր նորա կնոջը հետ, կ՚ուզեր փոխարինություն մը ընել ուղղակի կերպով։ Բաց աստի կը փափագեր Ֆոռթյունեի հետ հաճախ առանձին մնալ. տեղափոխություն մը կը նպաստեր այդ փափագը գոհացնելու։ Ֆոռթյունեի անուղղակի առաջարկներու վրա այդ փոխատվությունն ըրած էր. Ֆոռթյունե և Մկրտիչ համաձայնած էին կանխավ Մաքրի-գյուղի համար։

Կ՚ըսեն, թե թշվառություն մը սովոր չէ միայնակ մտնել տան մը մեջ, այլ միշտ կ՚ընկերանան նմա խումբ մը ուրիշ աղետներ։ Սակայն նույնը ըսված է նաև լավությանց համար ևս, թեպետ քիչ կը պատահի. այդ բախտին արժանացավ Լևոն։ Ահա ամիս մ՚է, որ Մաքրի-գյուղ է, ընտանիքը առողջ, հանգիստ է, սիրուն մանկիկը կը մեծնա։ Ֆոռթյունե այլևս «ջղացավ» չունի. յուր գործերը կոկած է, բայց այդ ամենը չըավեր և նոր բախտ մը կը բացվի իրեն։

Պանք Օթոմանի մեջ կարևոր պաշտոն մը բաց կը մնար։ Տնօրեններն մին Լևոնը առաջարկած էր այդ պաշտոնին համար, վասնզի նա ոչ միայն թուրքերենի և ֆրանսերենի հմուտ էր, այլ նաև գիտեր անգլիերեն։ Մեկ դժվարություն միայն կը ներկայանար։ Օտարազգի երիտասարդ մը մըրցակից էր Լևոնի. այդ երիտասարդը ավելի շատ ժամանակե ի վեր կը ծառայեր Պանք Օթոմանի մեջ, քան Լևոն, հետևաբար կը կռթներ յուր հնության վրա, բայց հնությունը հմտություն չէ, և հաղթանակը Լևոնին մնաց. իսկ օտարականը կը լիներ Լևոնի կատաղի թշնամին։

Կարելի էր ըսել, թե Լևոնի ճակատագիրը փոխված էր։ Ուրախությունը վերադարձած էր տան մեջ, Ֆոռթյունե մանավանդ գոհունակության ամեն նշանները ցույց կուտար։ Յուր հարաբերություններն ավելի մտերմական էին տալոջը վերաբերմամբ, որուն հետ կը պտտեր ամեն օր։ Շա-

բայց մի քանի անգամներ միայն դուրս կ'ելներ, կեսօրի մոտ, և մի քանի ժամ վերջ կը վերադառնար։ Իհարկե տունեն կը կարծեին, թե այցելություններ կուտար, սակայն եթե մեկը հետամուտ լիներ Ցողթյունեի, կը տեսներ, թե կ'ընթանա համրաքայլ դեպի կայարանը։ Միջօրեի շոգեկառքը կուգա, առաջին վակոնի մը մեջեն դեմք մը կը ժպտի և նշան մը կ'ընե, իբր թե բարև կուտա. այդ դեմքը անծանոթ չէ, Մկրտիչ Սինայանն է։ Ցողթյունե կը մտնե այդ վակոնին մեջ։ Կը հասնին Սան-Ստեֆանո, կ'իջնեն վակոնեն և դաշտերու միջեն ընթանալով, կը հասնին պարտեզ մը, որու մեջ փոքրիկ հյուրանոց մը կա։ Պանդոկապետը կը հանձնե նոցա 6 թիվ սենյակի բանալին։ Սենյակին դուռը կը բացվի։ Մեկ ժամ վերջ Ցողթյունե և Մկրտիչ կ'ընթանան կայարանը, ճիշտ ժամանակին, երբ պիտի մեկնի շոգեկառքը, առանձին-առանձին վակոններ կը նստին։ Ցողթյունե կ'իջնե Մաքրի-գյուղ և անդ կայարանին մոտերը կ'սպասե, կը պտտի։ Ահա կուգա Պոլսո երեկոյան կառատորմը։ Լևոն կ'իջնե վակոնեն, կը գտնե կինն հոն. ուրախ զվարթ և միասին կ'ընթանան տուն, և հրճվալից ժամեր կ'անցունեն։

Շաբաթը երկու անգամ Ցողթյունե ուխտի կը գնա Սան-Ստեֆանոյի հյուրանոցն, բայց երկու սիրահարներն այնքան արբշիռ են, մինչ իրենց ականջները խուլ են այն խշրտոցին, որ դալարիններուն մեջեն կը լսվի։ Չեն տեսներ գլխարկավոր երիտասարդ մը, որ զիրենք կը դիտե, և միշտ կը դեգերի հյուրանոցի շուրջը, երբ իրենք անդ կը մտնեն կամ անտի դուրս կ'ելնեն։

Եվ եթե դիտեին իսկ, կրնայի՞ն կասկածիլ։ Բայց եթե անդ գտնվեր Պանք Օթոմանի մեջ աշխատողներեն մին, պիտի ճանաչեր, թե նույն ինքն այն երիտասարդն էր, որ Լևոնի մրցակիցն հանդիսանալով, պարտված կը մնար։ Այդ օտարազգի մրցակիցն, հավանորեն յուր դժբախտությանն ի մխիթարություն. մի ամսվան արձակուրդ առած էր և կ'զբոսնուր Սան-Ստեֆանո։ Մի օր կը նշմարե Ցողթյունեն, բայց ուշադիր չի լիներ, ուրիշ օր դարձյալ կը դիտե և հետաքրքրությունը կը շարժի։ Արդեն Բերա մի քանի անգամներ տեսած էր Ցողթյունեն, երբ նա կը ճեմեր Լևոնի հետ, հետևաբար գիտեր, թե որո՛ւ կինն է։ Այլևս իրեն բան գործ ըրավ դիտել, լրտեսել հոմանիները, մանավանդ թե այդ գրեթե ամայի գյուղն ոչինչ զբոսանք կար։ Լավ տեղեկացավ, թե ո՞ր օրերը, ո՞ր ժամուն կը լինեին նոքա ժամադիր։

Երկու շաբաթներ կ'անցնին. մի օր Լևոն ցորեկեն առաջ գրասեղանին վրա կը տեսնե ֆրանսերեն թերթ մը, ուր հատված մը կարմիր կապարով նշանակված է. թերթը կ'առնե և կը կարդա. վերնագիրն էր ՀՈՎՎԵՐԳՈՒԹՅՈՒՆ ՄԸ և կը շարունակեր.

«Վերջի շաբաթներս Բերա թաղական խորհեցաւ մեծ դրամատան մը մէջ Հայ երիտասարդի մը շուտափոյթ առաջացման մասին։ Ուրիշ երիտասարդ մը յուր բազմամյա ծառայությամբ, յուր փորձառությամբ և յուր հմտությամբ այդ պաշտոնին պիտի կոչվեր, բայց հաղթանակը կը մնար դեռատի գրագրին, որուն իշխանական Լ. անունը անշուշտ չէր բավեր այս անհուսալի հաջողության համար։ Բայց մի անգամ ևս կ'ապացուցվի, թե ոչինչ է ծածուկ որ ոչ հայտնեսցի։ Օրինակի համար եթե վաղը գրոսանաց համար հետաքրքիր մեկը դեպի Սան-Ստեֆանո ուղեւորություն մը ընելով մտնե պուրակի մը մեջ, դեգերի օթել Պ-ի դաշն առաջ, գաղտնիքը կը պարզվի, պիտի տեսնե կին մը, որ այնքան բախտավոր է (Ֆոռթյունե— ֆրանսերեն) մինչ կարող կը լինի Հայոց մեծ դրամատերներեն միույն շնորհացն արժանի ընել յուր ամուսինը։ Է՛հ, երբ այդպիսի պաշտպանություն մը վայելել կարելի է, ամեն ինչ հուսալի է։ Միայն թե զարմանալու չէ, որ երբ Պ. Լ. որսի կ'ելնե ուրիշներու պաշտոնին, ուրիշներն ալ որսի կ'ելնեն յուր կնոջն»։

Լևոն կարդաց. լավ չհասկցավ, կրկին կարդաց. գույնը նետեց և ընկերակիցներեն միույն նայելով կ'ըսեր. «Ի՞նչ է այս»։ Ընկերակիցն երկու ցուցամատներն գլխուն վրա դնելով կ'երերցներ զայս ու կ'ըսեր. «Այսպես ըրե, հայլիին մեջ նայե և պատասխանը կը գտնես»։

Լևոն արհամարհական նայվածք մը ունեցավ. հասկցավ, թե ո՛վ էր այդ պժգալի դավաճանության հեղինակն. առավոտուն նշմարած էր այդ օտարազգին Պանքային մեջ։ Ելավ տեղեն, սկսավ զնա փնտրել. չգտավ։ Գլխարկը դրավ և մեկնեցավ առանց հրաման իսկ առնելու։ Նստավ նավակ մը, անցավ Սիրքեճի-Իսկելեսի, ուր կը հուսար գտնել յուր թշնամին, վասնզի հավանորեն ցերեկի կառատորմով կը մեկներ նա Ս. Ստեֆանո, բայց չգտավ։ Շոգեկառքը մեկնելու վրա էր. Լևոն տոմսակ մը առավ Մաքրի-գյուղի համար, և հասնելով անդ, շնչասպառ տուն գնաց։ Տնեցիք ապշեցան տեսնելով զնա այլայլած։

— Ո՞ւր է Ֆոռթյունեն,— հարցուց։

— Դուրս ելած է։

— Ո՞ւր գնաց։

— Բան մը չըսավ։

— Մինա՞կ։

— Մինակ։

Լևոն դռնեն դուրս ցատկեց և անհապաղաբար կայարան գնաց. հարկ էր քիչ մը սպասել միւս կառատորմին։ Քիչ վերջն եկավ։ Լևոն մտավ մեջն և իջավ Ս. Ստեֆանո։ Հարցուց այն հյուրանոցն, որուն անունը առ-

նարկված էր և առանց շատ դժվարության գտավ։ Մոտենալով հյուրանոցին, հանդարտ կերպարանք մը առավ, անտարբեր կերպով մը հարցուց պանդոկապետին, թե այր և կին մը, որ միշտ կուգան արդյոք դեռ հո՞ն են։ Կարևոր հեռագիր մը ուներ հանձնելու։ Միամիտ պանդոկապետը պատասխանեց, թե կրնա վեր ելնել և թիվ 6 սենյակին դուռը զարնել։

Լևոն վեր ելավ հուշիկաքայլ և հասավ սենյակին դուռը, ոտքերը կը դողային, ձեռքը սրտին տարավ, բաբախումները կարծես արգիլելու համար։ Գլուխը ծռեց, ականջը դրավ դռան։ Ցողթյունեի ձայնն էր, այո անոր խնդալը։ Եվ ինչ խոսքեր, զորս չլսելու համար կ'ուզեր ականջները խցել. բայց պարտական էր լսել։ Իսկ մյո՞ւսը, ա՜հ, նա միայն կը խընդար, նորա ձայնը չէր լսեր։ Լևոն այդպես քառորդ մը կեցավ։ Ռևոլվեր մը չուներ քովը, կը ցավեր, բայց ձեռքի գավազանը կը բավեր։ Ներսեն դուռը սկսան բանալ, Լևոն դրան առջև կայնեցավ։ Դուռը Ցողթյունե բացավ, և երես առ երես եկավ ամուսնույն հետ։

— Ա՜հ,— սուր ճիչ մը արձակեց կինը և ետ մղվեցավ սենյակեն։ Լևոն ներս մտավ և դուռը փակեց, բայց կարծես թե այդ րոպեին յուր գլուխը ջախջախված էր երկաթե թակով մը, այլայլած ինկավ աթոռի մը վրա։ Այո՛, նույն ինքն Մկրտիչ Սինայանն էր։ Ցողթյունե և Մկրտիչ աճապարանոք բացին դուռը և դուրս ցատկեցին, վազեցին կայարանը, անկյուն մը պահվտեցան, դիտելով, թե Լևոն կուգա։ Լևոն չէր երևեր։ Պոլիս երթալու կառատորմը եկավ տարավ վայրկյան վերջ, նստան և մեկնեցան։

Լևոն այնպես թմրած մնաց. չէր հասկնար, թե ինչ էր տեսածն, այնքան հեռու էր մտքեն ենթադրել, թե յուր կինը Մկրտիչ Սինայանի տարփուհին կրնար լինիլ։ — Բայց չէր կրնար անդ մնալ, ելավ դուրս։ Կարող չէր տեղ մը նստիլ, պետք էր քալել՝ ինքզինքը ժողվելու համար և մտածելու։ Ոտով սկսավ առաջանալ դեպի Մաքրի-գյուղ։ Օդը զով էր, թեթև հով մ'ալ կար. Լևոն քիչ մը բացվեցավ, կը մտածեր ինչ ընել։ Ի՞նչ ըներ։ Պարզ էր, ինչ որ պարտավոր էր ընել. գտնել Սինայան Մկրտիչն և մեկ հարվածով սպանել զնա։— Դյուրին էր մտածել, բայց Լևոնի սիրտը անընդունակ էր չարության։ Սպանել Մկրտիչը, լավ, բայց նորա ծերունի հայրն։ Երախտապարտությունը մեռելական ծանրությամբ կ'իյնար Լևոնի սրտին վրա։ Կարապետ Սինայան յուր ընտանյաց բարերարը կը հանդիսանար առանց որևէ շահու ակնկալության, կը փրկեր յուր ընտանիքը թշվառութենեն, և զինքը կը վերադարձներ դպրոց. ո՞չ տպաքեն այդքան բարիք զիրենք կարծես թե նոցա ճորտերն ըրած են։ Կ'զգար այգ վայրկյանին Լևոն, թե ազնիվ սրտի մը համար մեծ դժբախտության

մէ՛ երախտապարտ մնալու հարկին մեջ գտնվիլ։ Ա՜հ, եթե Կարապետ էֆենտի շահու ակնկալությամբ շարժած լիներ։ Ոչ այդ չէր բավեր։ Ահա գումար մ'ալ պարտական էր Մկրտիչ Սինայանի։ Կ'ըմբռներ այժմ, թե Մկրտիչ որպիսի՜ ստորին մտածություններե առաջնորդյալ այդ գումարը փոխ տված էր իրեն, բայց և այնպես պարտական էր վճարելու, ապա թե ո՛չ այդ գումարն պիտի համարվեր յուր պատվո գինը։ Այո՛, վճարելու էր անմիջապես, բայց ի՞նչպես։ Որ կողմ դառնար Լևոն, չէր կրնար միտքն ամփոփել, որոշում մը տալ. կը քալեր արագաքայլ, ինքնիրեն խոսելով և շարժումներ ընելով։ Անցորդները երբեմն կանգ կ'առնեին և կը դիտեին զինքը։ Միտքը կը թռչեր Սինայանեն դեպի Ցոռթյունեն, Ցոռթյունեեն դեպի Սինայան.— Այո՛, նախքան Մկրտիչն սպանել, յուր դաշույնը պետք էր մխել կնոջը սիրտն։ Այդ մասին մտածել իսկ պետք չէր։ Ոչ սակայն այդ րոպեին աչքին առջևը կուգար մանկիկն, շարժելով յուր թաթիկները։ Խե՛ղճ մանկիկ, ո՞րբ թողուլ զնա։ Ոչ այդ չէ՛ր բավեր, սպաննել անոր ապագան։ Տակավին օրորոցին մեջ ճակտին դրոշմել մորը վատահամբավության դրո՞շմը։ Ի՞նչպես այդ մանկիկն օր մը ճակատը վեր պիտի բարձրացնե, ի՞նչպես պիտի կրնա ամուսնացնել զնա։

Շվարում, շվարում, շվարում։— Քիչ մը նստեցավ քարի մը վրա, հոգնություն առավ։ Սիրտը ելած էր, թաշկինակն հանեց, աչքերը սրբեց և վերստին ճանապարհ ընկավ։ Փոքր ինչ հանդարտած էր, սկսավ խորհիլ։ Նախ կարևոր էր կարգադրել Ցոռթյունեի գործն։ Իհարկե այլևս անհնարին էր որևէ հարաբերություն յուր և կնոջը միջև։ Սակայն իրենց աղջկան ապագան կը պարտավորեր զիրենք ոչինչ հայտնի ընել հրապարակավ։ Ոչ ոչ իսկ տնեցիք պետք է իմանային այդ գաղտնիքն։ Առանձնության մեջ Լևոն այլևս չպիտի նայեր Ցոռթյունեի երեսն, իսկ հաչս օտարաց՝ միշտ ուրախ պիտի երևեին։ Թող մեծանար աղջիկն, ամուսնանար, և հետո կը մտածեին։ Իսկ Ցոռթյունե պիտի դատապարտվեր ճգնավորական կյանք վարել։ Այլևս թող մոռնար նա Բերա բնակիլ, ընկերության մեջ մտնել։

Խորասուզյալ այս մտածությանց մեջ, Լևոն կը մոռնար թե ի՛նչ պիտի ըներ Մկրտիչ Սինայանի, բայց հասած էր արդեն տուն։ Ներս մտնելով հարցուց անտարբեր եղանակով մը.

— Եկա՞վ Ցոռթյունեն։— Դեռ չէր եկած։ Լևոն վեր ելավ, անգամ մը զավակն համբուրեց և դարձյալ գնաց կայարանին շուրջը։ Իրիկուն եղավ, մութը կոխեց, Լևոն եկավ, քույրը կ'սպասեր.

— Միասին չէ՞ Ցոռթյունեն,— հարցուց։ Լևոն պատասխան չտվավ։

ուղղակի սենյակը գնաց և ինկավ անկողնույն վրա։ Կինը չէր երևեր. այո՛, կը լքաներ ընտանեկան հարկը։ Անմեղ Նվարդիկ, ի՞նչ ապագա կը պատրաստվեր նմա։

Մայրն ու քույրն եկան յուր քով, գրեթե կիսամեռ ինկած էր։ Այդ երկու տարաբախտներն ալ լուռ էին։ Արդարև ոչինչ գիտեին։ Բայց զգացին, թե մեծ դժբախտություն մը կը ջախջախեր Լևոնը, թե այդ դժբախտությունը Ցոռթյունեն կը պատճառեր։ Նորա չերևնալն ամեն ինչ կը պարզեր։ Մայրն ու քույրը կը շփեին Լևոնի ճակատն ու բազկերակները։ Մի քանի ժամեր այսպես անցան։ Ո՛չ ո՛չ սեղան գնացին, ո՛չ մի բան քրին, հուսահատ տխուր նստած էին։ Սահակ աղա դուրս ելած էր, շատ մը խմած և եկած էր, քիչ մը բան կերած և պառկած։ Լևոն բավական ժամանակ այնպես թմրած մնալեն վերջ աչիոնը ուզեց, քիչ մը առավ և մտավ անկողին։ Մայրն ու քույրը կը հսկեին յուր քով։

Ի՞նչ կ'ըներ այդ միջոցին Ցոռթյունն։ Ինքն ևս նվազ դժբախտ չէր։ Փախչելով Սան-Ստեֆանոյի հյուրանոցեն, մտած էին վակոնը, առաջին կառքն, և ինքն ու Սինայան միասին նստած էին լուռ կեցան մինչև Մաքրի-գյուղ։ Երբ հասան Մաքրի-գյուղի կայարանը, Մկրտիչ փութաց բանալ վակոնի դուռը, բայց Ցոռթյունն անշարժ նստած էր։

— Ջե՞ս ելներ,— հարցուց Մկրտիչ։

— Ելնեմ ի՞նչ ընեմ, այլևս կարելի՞ է անոր քով երթամ։

Մեկնեցավ շոգեկառքը։— Ի՞նչ փորձանքի հանդիպեցանք,— կ'ըսեր ինքնիրեն Մկրտիչ։— Ի՞նչ ըներ հիմա այդ կինը։ Նաև, Սինայան այդ վայրկյանին խղճահարություն ուներ, ամոթահար էր Լևոնի քով։ Ի՞նչ կ'ուզեր այդ խեղճ տղայեն, որ դժբախտ ըրավ զնա։— Այդ վայրկյանին կ'ամչնար այն բարություններեն, զոր հայրն ու ինք ըրած էին Լևոնի և նրա ընտանյաց։ Իսկ եթե Լևոն հանկարծ ուզեր վրեժխնդիր ըլլալ, որպիսի՜ խայտառակություն։ Բայց այդ ետքը մտածելու խնդիր էր, առայժմ պետք էր բեռը թեթևցներ, բան մը ընել Ցոռթյուներին։ Միասին պտըտեցնել՝ անկարելի. տուն տանել՝ անկարելի. խոսք հասկցնել՝ անկարելի։ Ի՞նչ ըներ, ի՞նչ ըներ։— Այս միջոցին շոգեկառքը հասած էր Գում—գաբու. այն րոպեին, ուր պիտի մեկներ, Մկրտիչ բացավ վակոնի դուռն և դուրս ցատկեց։

— Ջուր մը խմեմ գամ,— ըսավ։ Եվ դուռը փակեց դրսեն։

Շոգեկառքը մեկնեցավ. Ցոռթյունն անհաքեկ էր։ Տասը վայրկյան ետք կ'իջներ Ցոռթյունն Սիրքեճիի կայարանը։ Իբր թե յուր հոգերը չէին բավեր, տոմսակի խնդիր ծագեցավ. տուգանքը տալով ազատեցավ։ Կայարանին մեջ նայեցավ չորս կողմն, իզուր կ'որոներ, չէր կարող նշմարել

Սինայան դեմքը. կամաց-կամաց հեռացավ, գնաց մինչև կամուրջ, կը նայեր չորս կողմը. ոչի՛նչ։ Եթե համարձակեր պրպտել աչքերով անցնող կառքերը, պիտի տեսներ միույն մեջ կծկված Մկրտիչ Սինայան. կուգա կամուրջ, շոգենավին մոտ կ'իջնե կառքեն, կը մտնե շոգենավն և մինչ Յոռթյունեն զնա կ'որոնե, նա արդեն Վոսփորի հովերը կը վայելե։ Յոռթյունեն թեպետ սրտատանջ կասկածներով կը տառապեր, բայց տակավին չէր համարձակեր համոզվիլ, թե Սինայան լքած էր զինքը։ Կամուրջին վրա բավական ժամանակ կայնեցավ դեպի Ոսկեղջյուրի կողմն, ուր հոծ բազմություն չկար։ Կ'սպասեր ու կ'սպասեր, կը դիտեր ու կը դիտեր, ո՛չ ոք կ'երևեր։ Վոսփորի շոգենավերը կը մեկնեին մի առ մի ուրախ զվարթ բազմությամբ լեցուն։ Անտարակույս այդ շոգենավերուն մեջն էր նաև Մկրտիչն։ Իսկ ի՞նքն. անհուն տխրություն մը գրաված էր յուր սիրտը։ Ի՞նչ ըրած էր, որ աստված զինքն այսքան դժբախտ կ'ըներ։ Վայրկյան մը ուզեց ծովն իյնալ և ազատիլ, բայց ան հեշտաբույր երեկոներեն մին էր, ուր ամենեն թշվառ մարդն իսկ ապրիլ կը սիրե։ Արեգակն Ոսկեղջյուրեն մտնելով, յուր վերջին ճառագայթները կը ցոլանային Սկյուտարի վրա, ուր տուներու պատուհաններն ոսկեգույն ներկված աննման փայլով կը փայլեին։ Ոսկեղջյուրի կողմեն արևմուտքն խանդաղատիչ էր. երկինքն մութ կանաչ ու կարմիր կը ներկվեր։ Գորովալիր, հրապուրիչ բնությունը կյանք կը սփռեր։ Երբ այլևս շոգենավ չմնաց, Յոռթյունեն կորույս հետին նշույլն իսկ հուսո, և գլուխը կախ կ'առաջանար։— Ո՞ւր կ'երթար։ Գիտե՞ր արդյոք ինքն։— Վայրկյան մը մտածեց երթալ ուղղակի Սինայաններու տունը։ Բայց ի՞նչ ընելու, և ի՞նչ ըսելու։ Խոնարհաբար յուր անպատվությունը տիկին Հերիգայի աչաց առաջ պարզելո՞ւ համար։ Բայց խելքը ո՞ւր էր։ Հերիգա մի՞թե Բերա էր, նա այժմ Ենի-գյուղ ծովեզրյա ապարանաց պատշգամին ամուսնույն հետ նստած՝ կ'զբոսնուր։— Ետ դառնալ ամուսնույն տո՞ւնը։— Ինչո՞ւ համար. շան պես վռնդվելո՞ւ, կամ թե սպանվելո՞ւ։ Եվ եթե ներողության իսկ արժանանար, ինչ որ հուսալի չէր, ինչպիսի՛ խոնարհ, ինչպես ստրուկ պիտի լիներ կեսրոջը քով։— Կրնա՞ր ծնողացը տունն երթալ. ի՛նչ ըսելով։ Ի՞նչպես կոշկակարին խիստ դեմքը նայիլ։— Ո՞ւր նստիլ, ո՞ւր պառկիլ, ի՞նչ ուտել։— Իր ամուսնանալեն ի վեր ծնողքը դարձած էին իրենց հին խըրճիթը, կը սոսկար Յոռթյունեն միտքը բերելով աղքատության նսեմ օրերն։— Եվ ի՞նչպես ապրիլ։ Ո՞ր ընտանյաց մեջ մուտ կարող էր գտնել վստահամբավյալ կին մը. բայց ահա հանկարծ յուր շատ մոտեն ձայն մը կը լսեր, ծանոթ ձայն մը։ Չորս կողմը կը նայի։ Այո՛, նույն ինքն է, կոչնած նպարավաճառի մը կրպակին առջև բարձրաձայն կը վիճի սակար-

կութեան ընելով, ճերմակ պարկը բացած։ Ազատ շունչ մը քաշեց Յոռթյունն. ի՞նչպես չէր մտածած։ Շատ կ'երթա անոր քով։

— Բարի իրիկուն, Աբրահամ աղա։

— Օ՜, դո՞ւն ես, աստծու բարին, խեր ըլլա, այս ատեն այս տեղվանքը։

— Կը պատմեմ, այս գիշեր քեզ հյուր պիտի ըլլամ։

— Բարո՜վ. հազար բարով։

Աբրահամ աղա շատ վերջացուց կախվը և գնացին. անհամբեր էր իմանալու։ Յոռթյունն ճիշտը չըսավ։ Ըսավ, թե կեսրոջն հետ կռիվ ըրած էր. ամուսինն ալ մորը կողմնակցութեան ըրած լինելով, ինքն ալ ձգած փախած էր։ Իհարկե Աբրահամ աղա Յոռթյունենի իրավունք կուտար։ Այն գիշերը Յոռթյունն անցուց Աբրահամ աղայի տունը։ Այնքան անհանգիստ եղավ, որ հաջորդ օրը այլևս չէր կրնար անոր կենալ։ Յուր քովն ուներ ժամացույց և մատանի մը, զորս ծախել ավավ Աբրահամ աղայի ձեռքը. մեծ գումար մը չըրանեց, բայց իրեն կը բավեր մեկ ամսու չափ։ Շնորհիվ Աբրահամ աղայի, կրցավ գտնել այնպիսի տուն մը, ուր բավական բարեկամուհիներ կային, որք կ'ապրեին առանց բոլորովին վատահամբավյալ լինելու։ Այն օրն, ուր մտավ այդ տունը, կատարյալ անդունդը չէր ինկած, բայց կը դեգերեր անդունդին եզերքը։— Չհետևինք այլևս իրեն, թողունք զինքն այդ տանը, հետամուտ նոր Սինոյաններ ձգելու յուր ճանկերուն մեջ և վերադառնանք Մաքրի-գյուղի Լևոնի անկողնուն քով։

Առավոտուն, երբ արթնցավ Լևոն, այն վիճակին մեջն էր, որ անկողնեն չէր կարող ելնել։ Քիչ մը նստեցավ, բայց շատ ինկավ, գլուխը կը դառնար։ Մայրն ու քույրն եկան, Նվարդն ալ բերին։ Լևոն նայեցավ մանկիկին վրա, բայց ոչ գգվեց, ոչ սիրեց։ Անհեյլի տարակույս մը ծնունդ առած էր յուր մտաց մեջ։ Յուր զավա՞կն էր արդյոք։ Այդ տարակույսը բոլորովին շլացեց Լևոնը. հուսահատ և տրտմած անկողին մտավ վերստին։ Հարկ եղավ բժիշկ բերել. բժիշկը ոչինչ կրցավ ըսել ստույգ, կարծեց թե ջերմ լինելու է։

Սահակ աղա գնաց Բանք Օթոման՝ իմաց տալու, թե Լևոն հիվանդ է, մի քանի օր չպիտի կրնա երթալ։ Շաբաթ մը այդպես անցավ, Լևոն քիչ կը խոսեր, միշտ տխուր էր, միայն անդադար ափիոն կը գործածեր։ Հարկ եղավ ուրիշ բժիշկ բերել Բերայե. խորհուրդ ըրին, երկար բարակ քննեցին, և երբ իմացան, թե մեծ ցնցում ունեցած էր, կարծիք հայտնեցին, թե ուղեղի հիվանդություն մը կը տեսնվի։ Ամբողջ ամիս մը Լևոն տունը կեցավ. քիչ անգամ դուրս կ'ելներ, որչափ հնար է քիչ կը խոսեր։ Երբ ամիսը լրացավ, ուզեց գործի երթալ։ Գնաց գործին և շարու-

նակեց, բայց կը տեսնեին, թե շատ սխալներ կ'ընե, խելքը վրան չէ։ Հարկ եղավ ըսել իրեն, որ քիչ մը ատեն ևս հանգիստը նայի, մինչև լավ մը առողջանա։ Քանի մը ամսվան համար արձակուրդ տվին։

Արձակուրդի ատենը լրացավ, բայց Լևոնը կարող չեղավ վերադառնալ։ Միտքը շփոթ էր, կարծես մշուշով պատած։ Պանքային կողմանե մեծ բժիշկ մը եկավ, քննեց, զննեց և տեղեկագիր տվավ, թե այդ երիտասարդին վրա մտավոր խանգարման մը նշանները կը տեսնվեին։ Հոգեկան տառապանքներ, հանկարծական ցնցումներ խանգարած էին նորա միտքն։ Այլևս պետք չէ հուսալ, թե նա կրնար գործին օգտակար լինել։ Այդ տեղեկագրին վրա Լևոնի նախկին մրցակիցն նորա պաշտոնին կոչվեցավ, իսկ Լևոնի փոքր գումար մը ամսական հատկացվեցավ, մինչև որ առողջանար և գործի սկսեր։ Ժամանակը կ'անցներ և օր ըստ օրե Լևոն կ'իյնար։ Ոչ մեկ բանի ուշադիր էր. ժամերով կը նստեր պատուհանը և անթարթափ աչքերով կը նայեր հեռուն, անհուն ծովը։ Երբ դուրս ելներ, մայրը կամ քույրը միշտ հետն էին։ Գլուխը կախ էր. աչքերը փոս եղած, դեմքը դեղնած։ Կը քալեր դողդոջուն քայլերով։

Երբ Լևոն այսպես կը պտտեր փողոցները, տղաքները կը վախնային։ Դպրոցին աշակերտները կը տեսնեին զնա շատ անգամ, երբ երեկոները կ'ազատվեին դպրոցեն։ Ապո՜ւշն է, ապո՜ւշը կ'ըսեին և կը փախչեին։

Այլևս բոլորովին հաստատվեցան Մաքրի-գյուղ։

Ծախեցին ինչ որ ունեին Բերայի տան մեջ, քիչ մը բան պահեցին իրենց։ Քանի մը ամիսներ վերջ Պանքայե այլևս ամսական կտրվեցավ Լևոնի։ Մերթ ընդ մերթ Սինայան Մկրտիչ բան մը կը ղրկեր։ Լևոն հետըզհետե անճանաչ կը լիներ։ Տան մեջ ևս երկյուղ կ'ազդեր, կ'երկնչեին, որ աղջկանը օր մը վնաս չհասցնե, վասնզի միշտ կը նայեր նմա սարսափ ազդելու նայվածքներով։ Արդեն Սահակ աղա բանի մը օգտակար չէր։ Լևոնի մայրը հիվանդոտ տկար կին մը եղած էր, ո՛վ կրնար այդքան տառապանաց տոկալ։ Լևոնի քույրն տան աղախինն էր։ Ո՞ր մեկուն հասներ։ Տունը կը նայեր. կերակուր կ'եփեր, մանկիկը կը խնամեր, հիվանդները կը նայեր։ Դրացիները միջամտեցին, խորհուրդ տվին, որ Լևոնը հիվանդանոց դնեն։ Լևոնի քույրն աղաչանաց նամակ մը գրեց Սինայան Մկրտիչի՝ խնդրելով նորա պաշտպանությունը։ Սինայան նվեր մը ղրկեց, և միջնորդեց Հիվանդանոցի հոգաբարձության՝ Լևոնն հիվանդանոց ընդունելու։

Ստեպ ստեպ Լևոնի ընտանիքը կ'երթային զնա տեսնելու։ Նստած էր ապաուշարանը, ճերմակ զգեստներ հագած, գլուխը միշտ կախ։ Ակռաները թափած էին, մազերը ճերմկցած։

Իսկ Ցոռթյունե ինչ կ'ըներ։ Լավ է նորա ետևեն չերթալ, չփնտրել։

Ա

«...Ո՜հ, հառաջադիմությո՜ւն, հառաջադիմությո՜ւն, որ լուսածղի թևերդ պարզած սավառնյալ գաս մեր տխրամած հորիզոնին վրա հույս և լույս սփռելու, ո՜հ հառաջադիմությո՜ւն, հառաջադիմությո՜ւն...»։

Կես ժամ էր, որմե հետե այսպես կ՚ատենաբաներ Երմոզինե էֆենտին, հնչուն ձայնով, ոլորուն շեշտերով։ Հուլիսի այդ տաք կիրակին այրերու և կիներու հոծ բազմությունը գրաված էր Գում Գաբուի Մայր եկեղեցվո միջին տաճարն, ուր կը կատարվեր հանդեսն Պեզչյան և Լուսավորչյան վարժարաններու պարգևաբաշխության։ Ճերմակ թաշկինակներն ամեն ձեռքերու մեջ էին, ամեն ճակտե քրտինք կը հոսեր, և սակայն միշտ կ՚ատենաբաներ Երմոզինե էֆենտին։

Խոսած էր Կյութենպերկի վրա և Քրիստոսի յոթը նկարակներուն վրա, Շոպենհաուերի վրա և Ռոսսինիի ու Պիզմարկի վրա, առանց մոռնալու — և երբ մոռցած է — «գեղեցիկը, ճշմարիտն ու բարին»։ Բերած էր, Ոսկեղջյուրի ափերեն բերած, Խասգյուղի ողջույնը ու համբույրները և հետո, պահ մը, երիտասարդ տրիբունը տարածելով բազուկն ի հյուսիս, և աչքերը հերկինս սևեռած, անեծք կը կարդա Օրթագյուղի, «ուստի կը փչեր խորշակն, որ չորցնե սրտերու մեջ հույսն ու սերը»։

Բայց դյուրին էր նշմարել, որ ատենաբան էֆենտին յուր ճառը կ՚երկարեր ոչ միայն այնու, զի զմայլած էր, ինչպես միշտ, յուր հեշտախոսիկ ձայնին, այլ նաև ակնդետ կը մնար մեծ պատահարի մը։ Հանկարծ լսվեցավ կառախումբի մը շվոցն. հեռուեն՝ շատ նրբին կը հասներ այդ ձայնը, բայց ատենաբան էֆենտին լսեց զայն և սթափեցավ։ Կանգ առավ, մի քանի րոպե ընդհատեց յուր խոսքերն, դարձուց ականջներն այն կողմն, ուստի սուլած էր կառախումբը.

— Կը լսե՞ք, առնո՞ւք զձայն, հառաջադիմությո՜ւնն է, որ անցանե աստի։ Լո՛ւր, Օրթագյո՛ւղ, և սարսե՛»։

Ծափերու պայթյունն ողջունեց այդ գերիմաստ գյուտն, ատենաբան էֆենտին խոնարհեցուց գլուխն, հետո երկու ձեռքերը սլացան հերկինս, վեր առավ գլուխն և արձակեց.

«Ո՜հ, հառաջադիմությո՜ւն, հառաջադիմությո՜ւն, որ լուսաձղի թևերդ պարզած...»։

Բայց դեռ չէր հասած ճառին վախճանը. խոսեցավ մանկավարժական խնդիրներու և գերմանական կրթության վրա, պահանջեց, որ շուտ դրվին հաջորդներ, առույգ, կորովի հաջորդներ այն վարժարաններու

որոնց կուրծքերը մաշած էին կրթության պատերազմի դաշտին վրա։ Ուժգին շեշտեց այս կենսական բարենորոգման համար։

Հետո հայտարարեց, թե պարգևաբաշխության հանդեսները վեհաժողովներ են, ուր հայ տրիբունները կը հնչեցնեն ճշմարտության ձայնն ի լուր աշխարհի։ Ուր ուրեմն իջավ բեմեն։ Հանդիսականները մխիթարված ողջունեցին զնա որոտընդոստ ծափերով և նա գնաց տեղ մը ճարելու՝ մոտ պատրիարքական աթոռին։

Բ

Այդ տարին ամառն կիրակի երեկոները կարելի էր նշմարել Գում Գափուի ծովափին վրա զբոսնող բազմության մեջ ծերունի մը և աղջիկ մը, որք համաքայլ կ'երթևեկեին լռիկ ու տխուր։

Ծերունին կը թվեր մոտ յոթանասուն տարեկան, աղջիկն՝ հազիվ տասնվեց։ Ուրիշ տարիներ ալ պատվելին—որպես դեռ կ'անվանեին հայերեն լեզվի բազմամյա ուսուցիչն—և նորա թոռը սովոր էին ճեմել Գում Գափուի ծովափին վրա, բայց այն ատեն զվարթերես էին, իսկ այժմ տխրամած դեմքով։

Անդ էր պատվելին, պարգևաբաշխության հանդեսին, երբ Երմոգինե Էֆենտին արձակեց յուր մահաշշուկ սլաքներն ընդդեմ խոնջ և վաստակաբեկ վարժապետներու կուրծքին. խոր խոցվեցավ պատվելիին սիրտը։ Հիսուն տարիներե հետե հայկաբանություն կ'ուսուցաներ ազգային վարժարաններու մեջ։ Արվեստին սիրահար և խղճմտանքով աշխատող վարժապետ մ'էր։

Հետո հրատարակեց «Մասիս» այդ ճառն, որ արձագանքն եղավ լսելի ամենուրեք, մանավանդ ի Գում Գափու։ Նոր հոգաբարձություն ընտրված էր Գեղճյան վարժարանին և կը խոսվեր կրթական նոր ծրագիրներու վրա։ Երմոգինե Էֆենտին—նա ևս ուսուցիչ, ի մեջի այլոց և հայերեն լեզվի,—երևցած էր մի քանի անգամ ի Գում Գափու. պատվելին լսած էր անախորժ շշնկոցներ. սիրտն անհանգիստ էր։

Մեռած էին պատվելիին կինն, աղջիկն ու փեսան, միակ մխիթարանք թողլով նմա Արեգնազը, որո վրա կը գուրգուրար։ Սիրուն աղջիկ մ'էր Արեգնազը, խարտյաշ մազերով, ծովի աչերով։ Մի տարի առաջ ուսումնավարտ եղած էր։

Արեգնազ ինքն ալ ներկա գտնվեցավ այդ պարգևաբաշխության հանդեսին, բայց կարող չէր ըսել, թե ինչ տպավորված էր Երմոգինե Էֆենտին։ Նորա ճարտարաբան ճառին վերջ հոգեզմայլ ձայնը հնչած էր յուր սրտին։

Զմայլած այդ երևակայական երաժշտությամբ, ոչ այլ ինչ հասկնալու կարող եղած էր։ Սրտաթունդ բաբախումներով դիմած էր ի հանդիսավայրն։ Ուր ուրեմն՝ յուր մտատիպարը պիտի տեսներ։

Կարդացած էր Արեգնազ ճառերուն հատվածները, զորս ամենուն հետ ինքն ալ կը համարեր հեղինակությանն։ Էր այն աղջիկներեն, որոնց աչքերուն առաջ կը պատկերանա գրագետ մը՝ լուսանցույթ պսակով։

Արեգնազ չէր տեսած Երվանդիկներն, այլ սակայն խանդավառ երևակայությամբն յուր սրտին մեջ տպավորած նորա պատկերը։

Տեսավ զնա պարգևաբաշխության օրը։ Ատենաբանին կայծակնացոլ շարժումները, բարձրահասակ հաստանքները, փոխանակ դրգռելու յուր ծիծաղը, խորին տպավորություններ թողին ի նմա։ Ատենաբանը կը ներկայանար յուր աչքերուն իբր հրաշքերգյան մի տեսիլ։ Այդ օրեն խեղճ աղջիկը հոգվովն ու սրտովը հարած էր Երվանդիկին և սակայն ո՛չ այլևս տեսած էր զնա։ Կորանցուց յուր զվարթությունը։

Օգոստոսի վերջերը, կիրակի իրիկուն մը, պատվելին ու թոռը կը վերադառնային իրենց սովորական պտույտեն. մինչև Սամաթիա գնացեր էին։ Կախարդիչ իրիկուն մ'էր։ Ոսկեհատ արևն մարը կը մտներ և յուր բոցանշույլ ճառագայթները ծիրանազարդ կը ներկեին Մարմարան, որ թվեր անծայրածիր։ Պատվելին ու թոռը շատ զգացված էին։ Կ'երթային լուռ, խորասուզյալ, տխրեցնող մտահոգություններու մեջ։

Երբ հասան Գում Գափու և մտան եկեղեցվո նեղ փողոցն, իրենց դեմն ելավ ժամկոչն, որ կը դեգերեր այն կողմերը։ Տեսնելով պատվելին, ժամկոչը ձեռքը գրպանը խոթեց ու նամակ մը հանելով տվավ պատվելիին։ «Աղաները տվեցին» ըսավ։

Թաղականական կնիք կը կրեր նամակը։ Պատվելին անմիջապես չբացավ զայն. երբ տուն մտավ, ղանդը վառել տվավ և կարդաց։ Դպրոցի հոգաբարձության ատենապետին և ատենադպրին ստորագրությունները կը կրեր։ Նոր հոգաբարձությունը կը հաղորդեր պատվելիին, թե այլևս հրաժարած է պաշտոնեն։

Երեսուն տարի էր, Պողոսասեր պատվելին կը դասախոսեր Մայր վարժարանին մեջ։ Պարզապես կը ճանչեին զինքը։ Սիրտն ելավ, աչքերը լցվեցան։ Այն իրիկունը ճաշի սեղանը չնստավ։

Գ

Երվանդիկին ճառն արդարև ազդեցություն բրած էր, հավանորեն շատ կ'անհետանար այդ ճառի տպավորությունն առանց ատենապետին էֆենդիին պաշտոնական օժանդակությանը։ Արդարև կարգի պարծանքությամբ Եր-

մոզինե էֆենտի հետամուտ եղած էր, որ յուր գաղափարները մարմին զգենուն, ոգի առնուն։ Երանության գերաժպիտ հորիզոնը կը պարզվեր յուր աչքերուն առաջ, երբ կ'երևակայեր, թե յուր ճառը պիտի կրնար շնորհել իրեն օթևան մը Պեզճյան վարժարանին մեջ։ Մայր եկեղեցվո եկամուտներն ամեն ուսուցչի համար ակնախտեղ են։

Յուր գործունեության մեջ պահ մը Երմոզինե էֆենտին հուսահատեցավ։ Նոր հոգաբարձության մը ընտրությունը տրտաղող պատճառեց նմա. նախորդ հոգաբարձության անդամներեն շատերն յուր սերտ բարեկամներն էին։ Բայց բարեբախտիկ աստղի մը ներքև ծնած էր նա։ Նորընտիր հոգեբարձության ամենեն ազդեցիկ անդամն իրեն հարյալ էր սքանչացման և երախտագիտության զգացումներով։ Մի քանի ամիս առաջ այդ հոգաբարձուին եղբայրը մեռած էր և Երմոզինե էֆենտին նորա գերեզմանին վրա շնորհած էր նմա անցագիր մը առաքինության և անմահության։ Ոմանք կ'ըսեին, թե հանգուցյալը դժոխքին մեջ իսկ տեղ մը գտնելու համար կը կարոտեր բարեխոսի մը։

Նորընտիր հոգաբարձության ուրիշ մի անդամն, որ կը փայլեր արտաքո կարգի գործունեությամբ ազգային գործերու ասպարեզի վրա, յուր ընտրության օրը բարեկամե մը իբր կատակ հետևյալ խոսքը լսած էր.— Բախտդ բանուկ է։

Կատակը ճշմարտություն մը լինելե հեռի չէր։ Պատրիարքարանն և Մայր եկեղեցին սակարաններ էին իրեն համար։ Երմոզինե էֆենտի կարող եղավ ճարտարությամբ օգուտ քաղել հոգաբարձու էֆենտիին այս բարի տրամադրութենեն։

Պաղտասար պատվելին հրաժարեցնելու շշնկոցը տարածված էր թաղին մեջ, թաղական խորհրդո տարիքոտ անդամներեն մի քանին այս մասին բերանացի դիտողություններ ըրած էին հոգաբարձության անդամներեն ոմանց։ Ըսած էին, թե ապերախտություն է դպրոցե հանել բազմերախտ վարժապետ մը։ Բայց Երմոզինե էֆենտիի պաշտպանները տարօրինակ կը գտնեին այս առաջարկությունը, որուն դեմ հաղթական պատասխան առած էին նույն ինքն Երմոզինե էֆենտիեն։ Օրինակի համար, կ'ըսեին, թե ի՞նչպես կարելի է զոհել անմեղ մանուկներու ապագան այնպիսի զգացումներու, որք թեպետ շատ հարգելի լինին, բայց և այնպես գործնական աշխատանքի մեջ պետք է նկատվին լոկ զգացում և իրենց դերը լինի երկրորդական։ Դարձյալ նույն Երմոզինե էֆենտին էր, որ ըսած էր.

— Դպրոցի մը կառավարությունը կը նմանի երկրի մը կառավարության։ Զգացումները պետք է տեղի տան իրական շահերու։ Ա՛յլ է երախտապարտություն անցյալին համար, ա՛յլ է աշակերտաց ներկա

օգուտը։ Եթե հարկ լինի զոհողության, հարկ է ամեն ինչ, նույնիսկ ամենէն նվիրական զգացումները նվիրել իրական օգուտներու։

Ի՛հարկե Երմոգինե Էֆենտին չէր ուզած ըսել, թե նպատակն ալ միջոցը կ'արդարացնէ, այդպիսի դավանություն մը, ո՜հ, յուր սկզբունքներուն հակառակ էր։

Զրահավորյալ այսպիսի մտածություններով, Երմոգինե Էֆենտին ընդունեց խղճի կատարյալ հանդարտությամբ Պաղտասար պատվելիին ժառանգությունը։

Հարվածը դառն եղավ ծերունի վարժապետին։ Նվաստացած էր բարոյապես, կարևեր խոցվեցավ սիրտը, նյութական հարվածն անմեկին էր բարոյական հարվածէն։ Կը զրկվեր ապրուստի միջոցէ։ Երեսուն տարիէն ավելի էր, պատվելին վարժապետություն կ'ըներ Պեզճյան և Լուսավորչյան դպրոցներուն մէջ։ Ամեն ինչ կարգի կանոնի դրած էր։

Վարձած էր ի Գում Գաբու փոքրիկ տուն մը, ուր կը բնակեր քսան տարիե ի վեր։ Էֆտիկ անունով կին մը կար յուր քովն։ Այդ կինը քառասուն տարի էր կը ծառայեր իրեն. այլևս աղախին մը չէր նկատվեր։ Պատվելիին կնոջն ու աղջկան և փեսին մահեն հետո՝ մայր ու խնամակալ էր Արեգնազին։ Այդ կինը կ'եփեր կերակուրը, կը հոգար տան ամեն պետքերը և լավ կերպով կը տնտեսեր։

Պատվելին երկու դպրոցներեն առած ամսականովը հանգիստ կ'ապրեր։ Թեպետ ոչինչ ավելցնելու կարող եղած էր, բայց պարտք ընելու հարկին մեջ նաև չէր գտնված։ Պատվելիին վիճակն եթե փայլուն չէր, ապահովյալ էր։

Յուր սովորություններն ալ կարգի դրած էր։ Առավոտը դպրոց կ'երթար, ցերեկին տուն կուգար ճաշելու, վերջը դարձյալ դպրոց կ'երթար մինչև իրիկուն։ Երեկոները կ'երկննար մինչև Ենի Գաբու, ուր կը նստեր ծովեզրյա սրճարաններն և լրագիր կը կարդար, կը խոսակցեր բարեկամներու հետ։ Բանաստեղծական սիրտ մը կը կրեր պատվելին։ Անհուն ծովը կը հուզեր զինքը։ Շատ անգամ երկար ատեն խորասուզյալ կը մնար մտածություններու մեջ, աչքերն հառած Մարմարայի վրա։ Այդ երեկոները տխուր կը դառնար տուն։

Թեպետ ծեր էր, բայց չէր կորուսած կորովն և կը դասախոսեր երիտասարդական եռանդով։ Կ'ավանդեր ազգային պատմություն և հայկաբանություն։ Ուսուցանելու նոր եղանակներն անծանոթ էին նմա, բայց կ'ըսեր.

— Նայիմ այդ նոր մեթոդով սովորողներեն ո՞րն իմ աշակերտներուս պես լուծում կրնա ընել և գրաբար գրել։

Ու արդարև ամեն տարի քննիչները կը զարմանային պատվելիին աշակերտաց վրա, որք կը հասկնային խրթին գրաբարները և քերականության ամեն կանոնները գիտեին։ Կային քննիչներ, որք կը վարանեին քննել բարձրագույն դասը։

Քննիչները կ՛ըսեին նաև, թե չէր գտնվեր Պոլսո մեջ դպրոց մը, ուր աշակերտք այնքան լավ սորված լինեին Հայոց պատմությունը։

Հավատքով, ոգևորությամբ կը սորվեցներ պատվելին ազգային պատմությունը։ Շատ անգամ սրտեն «ա՜խ» մը քաշելով կը նկարագրեր ազգային պատմության արյունընծա էջերն։ Յուր աշակերտները կրակոտ հայրենասերներ կը լինեին։

Այժմ կը վռնդեին զինքը դպրոցեն։ Երբ լմնցավ արձակուրդի ժամանակն, խեղճ մարդը քանի մը օր տունեն դուրս չելավ։ Սիրտը չէր դիմանար՝ տեսնել յուր աշակերտներն, որք դպրոց կ՛երթևեկեին և ինք տունը կը մնար։ Բոլոր աշակերտները կուգային զինքը մխիթարելու, վասնզի կը սիրեին հայրագութ ծերունին։

Դ

Սեպտեմբեր ամսո վերջը տակավին չէր կրցած պատվելին գործ մը գտնել։ Դիմած էր մի քանի դպրոցներու, բայց ամեն կողմե պատասխանը մերժողական եղած էր։ Վերջապես իրեն ըսին դիմել Ուսումնական խորհրդին, որ նա գործ մը գտնե։ Այն ատեն Ուսումնական խորհրդո նիստերը տեղի կ՛ունենային երեքշաբթի օրերը։ Պատվելին ելավ Գում Գաբուեն և ոտքով գնաց մինչև Ղալաթիա. պետք էր խնայողություն ընել։ Մեկ ու կես ժամ քալելե վերջ հասավ Ղալաթիա՝ բոլորովին հոգնած։ Լուսավորիչ եկեղեցվո շրջակաները փոխված գտավ։ Շատ տարի էր անդ չէր եղած։ Հին քարանձավի նման գետնահարկի մը տեղը կը բարձրանար հոյակապ շենք մը։ Այն շենքին սենյակներեն միույն մեջ յուր նիստը կ՛ըներ Ուսումնական խորհուրդը։ Մարմարինե սանդուղի մը աստիճաններեն վեր ելավ պատվելին. սանդուղին գլուխը կայնած էր բարապան մը, որ թույլ չտվավ պատվելիին մտնել ժողովատեղվույն սենյակին դռնեն։

— Չըլլար, չըլլար, մարդ չի մտներ, ժողովք կա,— պահակ ըսավ։ Հարկ էր սպասել։ Նստելու աթոռ մը չկար, ոտքերը կը դողդողային. օդը քիչ մը ցուրտ էր և ծերունին կը մրսեր։ Ներսեն տաքուկ սենյակին մեջեն կը լսվեին էֆենտիներուն վիճաբանությունները։

Հետզհետե եկան ուրիշ մի քանի վարժապետներ ալ։ Երկուքը միայն երիտասարդ էին, մյուսները ծեր։ Ամենն ալ հին զգեստներ հագած էին, շապիկնին սեցած, ֆեսերնին յուզոտ, կոշիկնին մաշած, ոմանք երկու, ոմանք երեք շաբաթ էր ածիլված չէին. նիհարությոմնին մերկ էր, տըխրատեսակ հանդիսարան՝ հայության խնամակալներուն։

Կ'սպասեին, օրը կը տարաժամեր։ Անոթի, ծարավ, հոգնած խեղճերը կ'սպասեին, ծխախոտ անգամ չունեին։ Միջոց մը սենյակեն դուրս ելավ երիտասարդ մը, Ուսումնական խորհրդո քարտուղարն էր, վարժապետներեն ոմանք գիտեին, թե ազնիվ երիտասարդ մ'է. երբ զնա տեսան, վրան գացին։

— Ամա՜ն, էֆենտի, կ'աղաչենք, խոսեցեք ներսը քիչ մ'ալ մեզի մտիկ ընեն, երթալով գալով հոգինիս ելավ, մեղք ենք. եթե գործ մը պիտի ճարեն, թող ճարեն, ընտանյաց տեր մարդ ենք։

Քարտուղարը ներս մտավ. ժողովականներն արդեն ոտքի վրա էին։ Վարժապետներու խնդիրը ներկայացուց.

— Էֆենտիմ, ինչ է այս,— գոչեց երիտասարդ ժողովականներեն մին, որ միանգամայն ուսուցիչ մ'էր,— դպրոցները հիվանդանո՞ց են, էֆենտիմ, ազգն հիվանդանոց ունի, մեջը ծերանոց ալ կա, թո՛ղ հոն հրամմեն, թող հոն հրամմեն։

— Այնպե՛ս է, ճի՛շտ է,— կրկնեց ուրիշ մը, որ մասնավոր դպրոցի մը տնօրենն էր։

Եվ այս խոսքերուն հետ միասին բացվեցավ սենյակին դուռը. բաբապանը փութաց կոշիկները շտկելու։ Դուրս ելան հինգ անձեր։ Պաղտասար պատվելին դողաց. մին այդ հինգ անձերեն, շրջապատյալ ամենեն, Երմոգինե էֆենտին էր։ Դուրս կ'ելլեր նա կոկոզավիզ, ամբարտավան դիմոք. կարծես թե ինքն էր, նույն ինքն, փոքրիկ լեռներու արարիչն։ Անոր հետ դուրս ելած էր, անոր քովեն կ'ընթանար — չուզելով քայլ մը իսկ ետ մնալ— ուրիշ նկնահասակ անձ մը, որուն դեմքն այնքան հեղակրություն կ'ազդեր, որքան կ'ազդեր Երմոգինեի դեմքը։ Այդ նկնահասակն ալ կ'ուզեր ամբարտավան լինել և մեծ մարդ երևնալու համար ուռեցնել կոկորդն՝ երբ կը խոսեր, նմանելով հնդկահավի մը, որուն կլլեցնել կուտան փոքրիկ ընկույզներ։

Ամենեն վերջը դուրս ելան երկու անձինք. մին երիտասարդ, որուն տեսքն ազնիվ էր, կերպարանքը շնորհալի, մյուսը սպիտակախառն մորուքով, պայծառ դեմքով, շողշող աչքերով։ Երբ ասոնք տեսան Պաղտասար պատվելին, անմիջապես մոտեցան անոր և սիրալիր հարցուցին, թե ի՛նչ կ'ուզեր, ինչո՞ւ եկած էր անդ. պատվելին պատմեց իր պատմությունը. շատ ցավ հայտնեցին այդ ազնիվ անձինք, բայց ըսին, թե ան-

օգուտ է գալ և դեգերիլ։ Ուսումնական խորհրդո մեջ կան, ըսին, երկու երեք անձեր, որք ամենուն բերնին հացը խլել կ՛ուզեն և իրենց պաշտոնը շահու աղբյուր մը ընել։ Նայե որ լրագիրներու մեջ ազդ մը գրել տաս, թերևս անկե օգուտ մը լինի։

Կամուրջին վրա բաժնվեցան իրարմե։ Պատվելին հարցնելով, փընտըռելով գնաց գտավ լրագրի մը սենյակն, ամենեն կարևոր լրագիրն է, կ՚ըսեին։ Ահիվ և դողով վեր ելավ խարխուլ սանդուղներեն։ Փոքրիկ խուցե մը ներս մտավ։ Սեղանի նման փայտի մը առաջ նստած էր մարդ մը, որուն համար դուրսը ըսած էին, թե խմբագրապետ էֆենտին է։ Զնա բարևելե վերջ՝ պատվելին ըսավ.

— Էֆենտի, կը խնդրեմ մեզի համար ազդ մը դնեք ձեր լրագրին մեջ։

— Ի՞նչ բանի համար։

— Հայկաբանության և ազգային պատմության վարժապետ ենք։ Հիսուն տարի է կ՚աշխատինք, հիմա զմեզ հանեցին, պարապ ենք։ Խընդրեմ ազդ մը դրեք, որ եթե ուզող մը լինի մայրաքաղաքիս մեջ, երթանք։

— Շատ աղեկ, մեճիտիե մը պիտի տաս։— Եվ այս ըսելով էֆենտին գլուխը կախեց և շարունակեց փորձերը սրբագրել։

— Կ՚աղաչեմ, էֆենտի,— ըսավ պատվելին,— հիմա մի՛ ուզեք, գործի մտնեմ այն ատեն մեկի տեղ երկու տամ։

— Անանկ բան չըլլար։

— Բայց, էֆենտի...

— Բայց մայց չկա, լրագրական սկզբունքի դեմ է առանց մեճիտի ազդ հրատարակել։

Մեճի՞տ մը, ուսկի՞ց գտնար։ Խեղճ մարդը մի քանի օրե ի վեր և ոչ իսկ ծխախոտ առած էր։

Խմբագրատունեն դուրս ելավ գլխիկոր և շուկայեն անցնելով՝ կամաց-կամաց քալելով, տուն կ՚երթար։ Հուզված էր։ Ի՞նչ էր, ի՞նչ եղավ։ Կը հիշեր հիսուն տարիներու աշխատությունները։ Ի՞նչ հավատքով մտած էր վարժապետության և մինչև ամիս մը առաջ հավատքեն չէր թերացած։ Հիսուն տարի՜, քանի սերունդներ կրթած էր, որքա՜ն ամիրաներու, որքան հարուստներու տղաներ ազգային հոգվով վառած էր։ Քանի՞ հազար աղքատներու զավակներ կրթած էր, վրանին գուրգուրալով։ Ջերմ սիրով սիրած էր ազգը ու կը սիրեր։ Կյանքն ազգին նվիրած էր և այսօր՝ կարոտ պատառ մը հացի, իբր մուրացկան կը շրջեր Ղալաթիայեն ի Պոլիս և կը վռնտվեր։

Տխուր, հուսահատ տուն մտավ։ Արեգնազ դեմն ելավ, ձեռքը պա-

— Ապրի՛ս աղջիկս,— ըսավ ու աչքերը լեցվեցան։

Սեղանի նստած, պատառ մը հաց կերավ և պառկեցավ խոնջ, վստակարեկ և վշտալիր։

Ե

Առավոտուն կանուխ արթնցավ։ Չէր ուզեր ելլել անկողնեն, բայց հարկ էր մեճիտը գտնել լրագրին տալու համար. հարկ էր ճարել մի քանի մեճիտ ևս։ Ածուխ չունեին, հացավաճառը առջի օրը դադրեցուցած էր հաց տալ և ինք ծխախոտի կարիք կը քաշեր։

Պատվելին գլուխը շատ մտածած էր. ստակ հայթայթելու ուրիշ միջոց չէր գտած, բայց եթե ծախել մի քանի գիրք։ Երկուհարյուր հատորե ավելի գիրք ուներ։ Գնաց բացավ գրատունը, որպեսզի ընտրություն մը ընե, շվարած կեցավ։ Ո՞րը ձգեր, ո՞րն առնուլ, ո՞րը զոհել։

Խե՜ղճ գրքեր, վկաներ յուր պատանեկության և երիտասարդության ամեն հիշատակներուն, մխիթարա՜նք յուր ծերության։ Քանի՜ հիշատակներ ամեն մեկ գրքին, ամեն մեկ էջին վրա, ուր կը տեսնվեին յուր մատներուն հետքերն։ Այդ գրքերուն վրա կարդացած էին աղջիկն ու թոռը։ Հարկ էր ուրեմն բաժանվել անոնցմե։ Կարծես յուր կյանքին ամենեն դառն րոպեն էր։

Մեկ ժամեն ավելի էր, որ կեցած էր և կարող չէր որոշում տալու...

Հարկն անողոքելի էր. պետք էր ընտրություն մը ընել. ըրավ, առանց գիտնալու, թե ի՛նչ կ՚ըներ։ Չորս հատոր գիրք առավ, դրավ կարմիր թաշկինակին մեջ և տունեն դուրս ելավ. գնաց ուղղակի Մերճան—Չարշը, այդ կեղտոտ, թխոտ փողոցն, հայոց մտավոր կյանքի գործունյա կեդրոնը։ Կը ճանաչեր այդտեղի գրավաճառներն, որոնցմե շատ առևտուր ըրած էր։ Մտավ խանութներեն մին, քիչ մը հոգնություն առավ, հետո ըսավ, թե մի քանի անպետք գրքեր ունի, կ՚ուզե ծախել։ Զարմացավ, տեսնելով, որ այդ չորս գրքերուն հազիվ մեճիտ մը կուտար գրավաճառը։ Ի՞նչ ըներ, տվավ գրքերը, առավ մեճիտն և գնաց ուղղակի լրագրին սենյակը, դրամը վճարեց, ազդը գրել տվավ։

Այդ օրեն վերջն այլևս ամեն օր տաժանելի ուղևորություն մը կ՚ըներ տունեն Մերճան, կարմիր թաշկինակը ձեռքը, բայց երբեք գոհությամբ տուն չէր վերադառնար. կարծես խղճահարություն մ՚ուներ։

Քանի մը անգամ գնաց լրագրին սենյակը։

— Բան մը չկա, բան մը չկա,— պատասխանած էին։

Նոյեմբեր ամսո վերջը հասավ։

Զ

Արեգնազ դժբախտ էր. մեծ հօրը գլուխն եկածներն, իրենց ընտանեկան խղճության կը վշտացնեին զնա։ Յուր տխրությունը կ՚ավելնար, մտածելով, թե առանց Երմոգինեի միջամտության՝ զրկված պիտի չըլլային իրենց խաղաղիկ կյանքեն։ Եվ սակայն անջինջ էր յուր սրտեն Երմոգինեի հիշատակը։ Չէր գիտեր թե ի՛նչ կ՚զգար, բայց կ՚ուզեր մտքն արդարացնել Երմոգինեն։ Փաստերն զնա արդարացնելու ինքնին կը ներկանային. բավական էր, որ տրամադրություն ունենար զնա արդարացնելու։ Վերջապես կ՚ըսեր ինքնիրեն, Երմոգինե կատարած է յուր պարտականությունը, խոսելով ազգային կրթության անհրաժեշտ բարենորոգումներու մասին։ Եթե մեծ հայրս ծեր է և ծերությունը կը վնասե դպրոցի մը հառաջադիմության, հանցավորն անշուշտ Երմոգինեն չէ։ Այսպիսի տրամադրությամբ մը կը հանդարտեցներ յուր սիրտը, բայց տրամաբանությունն ինչպես կարող չէ սառեցնել սիրահարյալ սիրտ մը, նույնպես կարող չէ լռեցնել խղճի ձայնը։ Արեգնազ ամեն անգամ, որ կը նայեր ծերունիին երեսը, դառնություն մը կ՚զգար ընդդեմ Երմոգինեի։

Արեգնազ այսպես կը տարուբերեր միմյանց հակառակ զգացումներու և մտածություններու միջև։ Դեմքին վրա այլևս չկար խնդության նշան մը. աղքատության հետևանքներն օր ըստ օրե կը տառապեցնեին զինքը։ Սկսավ մտածել, թե հարկ էր զոհել իրենց հանգիստն ու աշխատիլ, որպեսզի թե՛ ինքն և թե՛ մեծ հայրն ապրին։

Կ՚ուզեր աշխատիլ, բայց ի՞նչ աշխատություն ընտրել։ Վարժուհի լինելու բնավ հակամետ չէր։ Համբերություն ունենալ և ուսուցանել, այդ իր կարողութենեն վեր էր։ Այո՛, ինքն այժմ հանդարտ կ՚երևեր։ Վշտերն այսպես տնօրինած էին, բայց սրտին հուրը չէր մարած. բորբոքելու համար առիթի մը կ՚սպասեր։ Եվ հետո գիտեր, թե ինչքան դառնություններ պահված են նմա, որ կ՚ուզե վարժուհի լինել։

Ի՞նչ ըներ։ Դերձակությո՞ւն, բայց գիտե՞ր։ Հազիվ թե կարող էր քիչ մը կար կարել։ Ոչ մայր ճանչցած էր, ոչ մեծ մայր, որ ուսուցանեին իրեն կարել, ձևել։ Այդ պահուն կ՚զգար, թե ինչ աստիճան հոռի ուղղություն մը ունեցած էր իրենց վարժարանը։ Գիտեր հայերեն, ֆրանսերեն, թվաբանություն, պատմություն և այլն և այլն։ Գիտեր գծագրել, և սակայն այդ ամենն ուրիշ բանի չէին ծառայեր, բայց եթե ինքն անոթի պահելու կամ վարժուհի ընելու,— ենթադրելով, թե դպրոցի մը կամ տան մը մեջ գտնվեր համար պաշտոն մը։ Ա՜հ, եթե լավ ձևել և կարել գիտնար։

Երբ կը դեգերէր այս անել ճանապարհին մեջ, օր մը յուր ընկերներեն միույն տունը տեսավ լրագիր մը, որում հոդված մը կար Օրթագյուղի Բարեսեր ընկերության թատրոնի մասին։ Հոդվածագիրը կը դրվատեր թատերական խումբին հաջողությունը, բայց ցավ կը հայտներ, որ երկու դերասանուհի և մի դերասան այդ խումբին փառքն ու զորավիգը իրենց ընկերներեն կը բաժնվեին։ Թիֆլիս կ՚երթային դոքա. արդեն կնքած էին պայմանագիրը։ Կը ցավեր հոդվածագիրն, որ այդ պատճառով կարելի կը լիներ թերևս արժանավոր կերպով ներկայացնել այն «հոյակապ ողբերգությունը», ծնունդ հանճարույն Երմոզինե էֆենտիի, երկ մը, որո կոչումն էր անմահացնել ԺԹ դարու հայ գրականության փառքը։ Այսուհանդերձ, կը հավելուր հոդվածագիրն, հաստատամիտ տնօրենն որոշած է անպատճառ թատերաբեմին վրա հանել այդ սքանչելի գործը, բայց կը կարոտեր դերասաններու, մանավանդ դերասանուհիներու։

Լույս մը ծագեցավ Արեգնազի մտքին մեջ. չէ՞ր կրնար արդյոք ինքն լիներ այդ դերասանուհիներեն մին. ահա աշխատություն մը, որ ոչ միայն հաց պիտի տար իրենց, այլ՝ որ լավագույնն էր, փառք, և հետո սրտին մեջ տրոփյուն մը կ՚զգար։ Այլևս յուր վառ երևակայությամբ օդասլաց թռավ հրաշալյաց աշխարհին մեջ։

Դերասանուհի ծնած էր այդ աղջիկն. ա՛յդ էր յուր կոչումն։ Դեռ մանուկ, շատ անգամ մեծ հորն հետ կ՚երթար Կետիկ փաշայի թատրոնը, լույսերը, փայլուն զգեստները, թատերաբեմն և դերասանները կը պատճառեին նմա արտաքո կարգի ցնծություն։ Եվ տունը թատրոն կը խաղար. կը ժողվեր թաղին յուր հասակակից մանչերն և աղջիկները, կը ճարեր զգեստներ, սավանով վարագույր կը շիներ, փայտի կտորներ սուրի տեղ կը գործածեր, եթե սեղանի դանակները ձեռք չձգեին։ Ինք կը թագավորեր, կը հրամայեր, իրեն կը պահեր մեծ դերերը։

Մեծ հայրն ալ նպաստած էր զարգացնելու յուր թոռան թատերական կոչումը. գիրքերն անոր ձեռքը կը դներ և կարդացնել կուտար առույգ շեշտերով։ Հայոց պատմություն էին, և շատ անգամ կ՚ըսեր. «Գիտես, քանի տարի առաջ, որ Վարդանը ներկայացուցին, Արշակը խաղացին. ասոնք են»։

Եվ եթե կոչումն իսկ չունենար, Երմոզինեի անունը կը բավեր այդ կոչումն ստեղծելու։ և նույնիսկ յուր սրտին տրոփումները Երմոզինեի համար ծնունդ առած էին իր թատերական կոչումեն։ Նորա դերասանական ձևերը, շինծու ձայնը, լրագրական փառքն, այդ կեղծ տարերքներն էին, որ գրավեցին այդ անմեղ աղջկան սիրտը։

Հանդուգն էր Արեգնազ, մտածելով, թե կարող էր համոզել մեծ հայրը և երթալ մտնել դերասաններու խումբի մը մեջ։ Հին մարդ էր Պապ-

տասար պալատներին։ Կ՚անտեսեր թատրոնեն, կը սիրեր խաղերն, բայց չէր հարգեր դերասաններն, ուներ նախապաշարումներ, որք ներելի էին նմա. ուրի՜շ դարու մարդ էր։

Բայց ինչո՞ւ խոսք բանալ մեծ հորն, առանց նախապես թատրոնի տնօրենի հավանությունն առնելու։ Պատրվակ մը գտավ կիրակի օրը և միասին առած իրենց էֆտիկն, ելավ Օրթագյուղ գնաց։ Կեսօրեն վերջն էր, որ մտավ թատրոն։ Նույն գիշերը ներկայացում կար, մեծ շարժում, մեծ ոգևորություն թատրոնին մեջ. կենդանություն առավ Արեգնազ. անշարժությունը կը թոթափեր, նոր մթնոլորտի մը մեջ կ՚ապրեր. նոր դեմքեր, նոր երիտասարդներ տեսավ, և ամեն աչքեր յուր վրա էին, սիրուն դեմքն, անմեղ աչքերն, թարմ երիտասարդությունը կը գրավեին զամենքն։ Հարցուց տնօրեն էֆենտին, գնաց գտավ զայն և առանց երկար պարբերության հայտնեց յուր այցելության պատճառը։

Անվարժ էր, նորեկ էր նա, զայդ կ՚զգար տնօրենը, բայց կ՚զգար նաև, թե անուշիկ աղվոր աղջիկ մը հրապույր մ՚է միջտ ժողովրդյան, մանավանդ այնպիսի ժողովրդի մը, որ դերասանական նրբության շատ ընտել չէ։ Աղջկան մը աղվոր դեմքը ավելի կ՚ազդեն յուր վրա, քան թե նորա դիմաց վրայի հոգեկան արտահայտությունները։ Ցուր դիտողությունններն ըրավ տնօրենը, բայց հայտնեց, թե սիրով կ՚ընդունի զնա իր խումբին մեջ, վասնզի որևէ դերասանուհի վերջապես սկզբնավորություն պետք էր ըներ. երկինքեն դերասանուհի չէր իյնար։

— Հարմար եկավ,— ըսավ,— մեծ հեղինակություն մը պիտի ներկայացնենք, Նրմոգինե էֆենտիինն է, անշուշտ անունը լսած եք։ Ձեզ գեր մը կուտանք, կարճ, բայց աղվոր, եթե հաջողիք ասպարեզնիդ բաց է։

Պայմաններու մասին խոսիլ հարկ չէր։ Ինչ պայման կրնար դնել այդ խեղճ տնօրենը, որ յուր երեսուն օթյակներու քառորդն իսկ լցնելու դժվարություն կը կրեր։— Ի՞նչ պայման կրնար առաջարկել այդ դերասանուհին, որ կուգար անվարժ, և իբր բարիք մը պիտի ընդուներ նույնիսկ այդ խումբի մեջ մտնելը։ Ամեն ինչ կը մոռնար հրապուրված այն դերեն, զոր պիտի կատարեր Նրմոգինեի խաղին մեջ։

Մեկնեցավ ուրախությամբ տնօրենի քովեն։ Աշնան վերջին օրերն էին, պարզ, գեղեցիկ օդ մը և Արեգնազ թեթև սրտով հոգեզվարճ զմայլմամբ կը քայլեր, չէր ուզեր թրամվեյ նստիլ և մտքովը կը թռչտեր ապագային մեջ, արդեն շլացուցիչ կը գտներ այդ ապագան. ուրախություն մը ուներ սրտին մեջ, որուն պատճառը չէր կրնար հասկնալ։

Շատ դժվար էր համոզել ծերունին, որ թույլ տա Արեգնազին երթալ դերասանուհի լինիլ. ինչպես բաժանվիլ այդ աղջիկեն, որուն երեսը նա-

ցնելով կը մոռնար յուր ցավերը։ Արեգնազն էր յուր ընկերը, ծերության ցուպն և հետո սոսկում կ'զգար թողուլ այդ դեռատի աղջիկը անօգ, անպաշտպան խումբի մը մեջ, զոր ինքն յուր բարկության միջոցին կ'անվաներ ոհմակ։

Բայց հարկն օրենքը կը լուծեր։ Աղքատությունը իրենց դուռը ափ էր առած, ձմեռը կը հառաջանար։ Ո՛չ մի հույս նշույլ. պետք էր զոհվել։ Եվ տակավին յուր հավանությունը, միայն մի քանի ամիսներու համար, այդ պետք էր ևս որոշել։ Եվ առավոտ մը համբուրեց աղջկան ճակատը և լալով տարավ զնա շոգեկառք դրավ էֆտիկի հետ միասին։

Եվ Արեգնազ ուրախությամբ կը մեկներ անտի, ուր օր մը պիտի վերադառնար արցունքներով։

Է

Օրթագյուղ, զառիվերի մը կատարին վրա էր այն տունը, ուր կը բնակեր դերասանական խումբը։ Զմայլեցավ Արեգնազ, երբ անդ մտավ. փոխադրված էր նոր աշխարհ մը. կը պարզվեր հանդեպ յուր աչքերուն Վոսփորի գեղազվարճ տեսարաններեն մին, որքա՜ն տարբեր Գում Գաբուի այն նեղ փողոցեն, ուր կարծես թե բանտարկված էր բերդի մը մեջ։ Կը դիտեր ու կը դիտեր, հափշտակված էր այնքան, մինչ չկրցավ նշմարել, թե սենյակն, հորում կը գտնվեր դերասանուհիներուն հետ, գրեթե մերկ էր, ոչ գորգ կար և ոչ փսիաթ. չէր այն տաքուկ սենյակն, ուր լույսն եթե չէր թափանցեր շռայլորեն, գեթ ցուրտ հովերն ալ չունեին լայնարձակ ասպարեզ, ինչպես աստ։

Շատ քալած էր Արեգնազ և տաքցած, բայց երբ անցավ տաքությունն, սկսավ մրսիլ. այն ատեն դիտեց շուրջը, փոքրիկ վառարանի մը մեջ կը նշմարվեին երկու-երեք նշխարքներ՝ նախկին կրակներու։ Դերասանները կը կարգադրեին մեջերնին, թե ով այն երեկոյին պիտի երթար թե՛ ածուխը առնելու և թե՛ ուրիշ պիտույքներ հայթայթելու։

Խումբը վարձած էր այդ տունը, թեպետ ոչ մի վճարում ըրած չէին մինչ այն ատեն. կ'ապրեին օրն օրին, կես կուշտ, կես անոթի։ Դերասաններեն մին կ'իջներ ամեն օր վար, շուկան, կը գներ քաշ մը ածուխ, զոր կը դներ թաշկինակին մեջ և կը բերեր տուն, կը հոգար նաև խումբին նույն ավուր ուտեստի պաշարը։ Մեծ բան մը չէր այդ պաշարը, մի քանի հաց, մի քիչ պանիր երբեմն ձիթապտուղ կամ թահին հելվա:

Եվ սակայն այդ աղքատության մեջ ուրախ և զվարթ էին դերասանները։ Երբ մութը կոխեց, թև ի թև ցատկելով, խոսելով և խնդալով իջան զառիվայրն, գնացին թատրոն, ուր պիտի ներկայացնեին Հյուգոյի «Մարի Թյուդորը»։

Դատարկ էր թատրոնը. հազիվ մի քանի օթյակների մեջ և գետնահարկը կը տեսնվեին մի քանի դեմքեր. տարաբախտ վիճակին մեջ էր Թարճաեր ընկերության այդ թատրոնը, որ տակավին նոր շինված, մի տարի առաջ կեդրոն մ՚էր մտավոր զբոսանաց և հրճվանաց։ Բայց մահն ու դժբախտությունները անցել էին Օրթագյուղի վրայեն։ Մեկնած էր ազնիվ հոգի մը, գեղեցիկ տաղանդ մը, որ կյանք կը ներշնչեր ոչ միայն Օրթագյուղի, այլև ամբողջ հայ գրականության և գեղարվեստից։ Յուր շուրջը բոլորած դերասան ու դերասանուհի, բանաստեղծ և գրագիր, կը կենդանացներ ամեն ինչ, և այդ թատրոնն, յուր ձեռնակերտը փոքրիկ Ակադեմիա մը կը համարվեր։ Հետո ուրիշ աղետներ ծանրացած էին գյուղին վրա և ամեն ոք մոռցած էր թատրոնը, բայց թատրոնական խումբը տակավին քաջությամբ կը հարատևեր ներկայացումներ տալու

Տխուր անցավ այդ գիշերվա ներկայացումը։ Արեգնազ օթյակի մը մեջ նստած կը դիտեր զարմացած, երբ բացվեցավ յուր դիմացի օթյակը և երկու անձինք մտան. մին Երմոգինեն էր։ Շահապունեցան երեսները, չէր կրնար ուշադրությունը տեսարանին նվիրել, կ՚ամաչեր դիմացը նայելու, բայց մերթ ընդ մերթ ակնարկ մը կուտար։ Այդ ակնարկներու միջոցին տեսավ, թե Երմոգինե էֆենտի ակնոց մը հանեց դրավ և կը նայեր իրեն ու կը խոսեր ընկերոջն հետ. տարակույս չկար, թե խոսքն յուր վրա էր։

Երբ խաղը վերջացավ, այն ատեն միայն Արեգնազ ելավ յուր օթյակեն և գնաց պյուֆեն, ուր համախմբված էին դերասանք ու դերասանուհիք և երկու երեք երիտասարդներ, որոնց մեջ էր Երմոգինեն։

— Ի՛նչ է այս,— կ՚ըսեր դերասանաց Երմոգինե էֆենտին,— ձայներնիդ չելներ, հոգնած կը խոսիք, խաղը շլատեցիք, արդյոք իմ խա՞ղս ալ այսպես պիտի ընեք։

— Ի՞նչ ընենք,— պատասխանեց դերասաններեն մին։— Շաբաթ մ՚է, էֆենտի, որ պատառ մը տաք կերակուր չէ մտած մեր կոկորդեն վար, շաբաթ մ՚է պանիր հաց կ՚ուտենք, որ առողջ ու դիմացկուն կուրծքո՞վ տեսարանին վրա ելնենք։ Փոքր ինչ անհաճո թվեցան այս խոսքերը, և մի քանի վայրկյան լռություն տիրեց։ Երիտասարդներեն մին հեռացավ և թեյ ապսպրեց ամենուն համար։ Դերասան ու դերասանուհի լափեցին թեյը, նման այն ճանապարհորդներու, որք կորսված ավազուտ անապատի մեջ, կիսամեռ՝ ծարավէ, կը գտնեն ջրի աղբյուրը։

Արեգնազ ալ առավ յուր գավաթը, բայց շատ ամչկոտ, շատ շնորհալի կերպով։ Տեսնելով զինք դերասաններու մեջ, Երմոգինե զարմացած մոտեցավ ընկերներին և հարցուց, թե ով էր այդ աղջիկը։

— Ա՜հ, ձեզ իրարու ներկայացնելու մոռցա,— ըսավ տնօրենը և հետը առնելով Երմոգինեն, մոտեցավ Արեգնազին, ներկայացուց երկուքն ալ իրարու, հայտնելով, թե օրիորդ Արեգնազ դեր մը պիտի ունենա Երմոգինե էֆենտիի մեծ ողբերգության մեջ։

Տնօրենը մեկնեցավ և Երմոգինե գամված տեղը մնաց։ Իբր գրագետ, իբր բանաստեղծ պարտավոր էր ցույց տալ, թե գեղեցիկ աղջիկ մը, որ երիտասարդ էր, խորին տպավորություն կը թողուր յուր վրա։ Խոսեցավ Երմոգինե, երկար խոսեցավ։ Բառերը կարգավ, իբր թե շարադրված լինեին, կուգային իրարու ետևե. ոչինչ կար նոր, բայց ամեն ինչ նոր կը թվեր Արեգնազին. կենացը մեջ առաջին անգամ էր, որ կը խոսակցեր վկայյալ գրագետի մը հետ։

Ետ չմնաց Արեգնազ, հայտնեց, ինչպես աղջիկներն և կիներն գիտեն միայն հայտնել, յուր սքանչացումն Երմոգինեի գրության մասին. խոսեցավ, թե մեծ ուրախություն էր իրեն համար, որ դեր մը պիտի ունենա, և Երմոգինե ավելի ուռած, ավելի փքացած խոստացավ, թե պիտի պահանջե, որ կարևոր դերն իրեն տրվի։

Գիշերը կը հառաջանար, պետք էր բաժանվիլ։ Արեգնազ յուր խումբին հետ գնաց իրենց բնակարանը. անկողին մ'ալ, կրնանք ըսել անկողին մ'ալ իրեն պատրաստված էր։

Չէր նմաներ յուր տան փափուկ անկողնույն, բայց Արեգնազ և ոչ իսկ ուշադրություն ըրավ, սիրտը գոհ, չի արտաքս կարգի ուրախությամբ և ոչ իսկ կրնար ննջել։

Ը

Հաջորդ օրն, առավոտուն, Երմոգինե էֆենտի այցելեց դերասաններու տունը։ Արեգնազ մասնավոր բարեկամությամբ գնաց նորա մոտ։ Խոսակցությանց առարկան էր Երմոգինեի ողբերգության ներկայացումը։ Կարգադրեցին, թե երբ տեղի պիտի ունենա ներկայացումը, առ առավելն մի ամիս վերջ։ Հեղինակն ու տնօրենը դերերը բաշխեցին, Արեգնազ ունեցավ գեղեցիկ դեր մը. դեմքն ու ձայնը կը բարեխոսեին նորա համար։

Երանության օրեր էին Արեգնազի համար փորձի օրերը։ Կ'իջնեին թատրոն, ուր շատ անգամ ներկա էր հեղինակը։ Երմոգինե կ'սքանչանար Արեգնազի մասին։ Միակ անձն էր ամբողջ խումբին մեջ, որ գիտեր ըստ բավականին հայերեն լեզուն և կը հասկնար այն դերերն, զոր կ'ուսաներ արտասանելու եղանակն, առույգ շեշտերն ակներև կ'ընեին, թե նորեկ դերասանուհին գրական կրթություն ստացած է։

Արտաքո կարգի շքեղ կերպով կատարվեցավ առաջին ներկայացումը։ Օթյակներեն ոչ մին պարապ էր։ Օրթագյուղի երիտասարդությունը մասնախումբ մը կազմած էր օժանդակելու այդ ներկայացման հաջողությանը։ Այլևս ձանձրացած էր այդ երիտասարդությունը թարգմանություններու հանդիսատես լինելե. իրեն համար հարգելի էր հեղինակություն մը, որքան ալ տկար լիներ։

Երիտասարդներու եռանդը բորբոքելու մեջ բավական մեծ բաժին ունեցած էր Արեգնազ։ Տեսած էին թատրոնին մեջ այդ դեմքն, համբավը տարածված էր, համակրություն կ՚ազդեր երիտասարդներու։

Արեգնազ ոչ մի հույս ի դերև հանեց։ Կարծես թե փորձառու վաղեմի արվեստագետ մ՚էր։ Աներկյուղ կը կատարեր յուր դերը, շարժումները, ձայնը, ամեն ինչ բնական կը թվեր։ Հանդիսականներն հափշտակված էին այդ թարմ և առույգ ձայնեն, այդ մանկունակ ժպտուն երեսեն։ Մափահարությունները որոտընդոստ էին, ամենքը սրտե բխած։ Հաղթանակը կատարյալ եղավ։

Մոռցվեցան ողբերգության բոլոր թերությունները. հանդիսատեսները՝ լի եռանդմամբ, «հեղինակ, հեղինակ» կը կոչեին և հեղինակն, որ արդեն կ՚սպասեր, ներկայացավ բեմին վրա. և լսեց կեցցեներն։

Արեգնազ անպատում ուրախություն ուներ ոչ այնքան յուր հաղթանակին համար, որքան Երմոգինեի փառացը մասին։

Կ՚ըմբռներ Երմոգինե, թե ինչքան պարտական էր Արեգնազին, մոտեցավ նորա և սրտագին շնորհակալություններ հայտնեց։ Արեգնազ առիթը գտավ հայտնելու նմա յուր բոլոր սքանչացումը։

Այդ օրեն ի վեր ներկայացումները կը կրկնվեին. դերասանական խումբը գումար մը կրցավ ձեռք ձգել։ Արեգնազ ունեցավ յուր բաժինը, նամանավանդ փունջերն ու ընծաները։

Գրպանը դրավ ստակներն Արեգնազ և օր մը գնաց Գում Գաբու։ Հորմե հետե մեկնած էր յուր տունեն, մի քանի անգամ նամակ գրած էր մեծ հորը, պատասխան ընդունած էր. բայց բնավ չէր գնացած նորա մոտ։ Ի՞նչ օգուտ երթալ դատարկ ձեռքերով։ Այլ այժմ կ՚երթար վստահորեն։

Ինչպե՜ս գրկախառնվեցավ Էֆտիկ, ինչպե՜ս համբուրեցին զիրար։ Մեծ հայրը վերն էր, մի քիչ տկար, կարող չէր վար իջնել, այսպես ըսավ Էֆտիկ։ Վազեց վեր ելավ Արեգնազ, մտավ սենյակը, անկյունը նստած էր ծերունին, վերմակ մը ոտքերուն վրա։ Արեգնազ րոպե մը կանգ առավ, շատ փոխված տեսավ մեծ հայրը, նիհար, վատույժ, կարծես հող կը հոտեր։ Գաղած մնաց Արեգնազ, բայց ~~ծնկաչոք-պագավ մեծ~~ հորը ձեռքերը։ Նա ալ ուժով-ուժով համբուրեց թոռնիկը։

Շատ ծանր եկած էր իրեն Թոռանը մեկնիլը. վերանորոգված էին յուր բոլոր հին ցավերը, նորերն ալ վրան բարդված։ Այդ օրեն ի վեր հետզհետե կ՚ավելնար. ցորեկներն ինչպէ՝ ժամանակ կ՚անցուներ. գիշերնե՞րը, ձմռան այդ երկա՞ր գիշերները, ո՛չ ոք կար, բացի էֆտիկեն, որ իրեն հետ խոսեր, որ գիրք մը կարդար և ինք մտիկ ըներ։ Քիչ մը կըրնար կարդալ, բայց աչքերը շուտ կը հոգնեին։

Եվ հետո կը տարածվեին չարաշշուկ լուրեր, որոնց չէր ուզեր հավատալ, բայց սրտադողի մեջ էր։ Երմոգինե խոսած էր Գում Գաբուի մեջ Արեգնազի վրա։ Թվի թե գովեստներ շռայլած էր և հարկ եղած խոհեմությունը չէր ունեցած։ Այդ խոսակցությունները տարածված էին տուներու և սրճարաններու մեջ։ Պառավները դրամագլուխ ըրած էին զայն իրենց։ Խեղճ աղջկան պատիվն ոչնչացած էր։ «Աստված հեռու ընե, կ՚ըսեին դրացիները, այդ գեշը ոտք չպիտի կոխե ալ աստեղ»։ Պատրիարքարան պիտի դիմեին, եթե Արեգնազ վերադառնար այնտեղ։

Մաս մը այն լուրերեն կը հասներ պատվելիին ականջը, և ծերունվույն սիրտը տակն ու վրա կ՚ըլլար։ Անեծքներ կուտար Երմոգինեին, զոր կը համարեր իրենց թշվառության սկզբնապատճառը։

Մոռցավ պատվելին ամեն ինչ, ի ներկայության յուր Թոռանը, խոսելու կուտար, մտիկ կ՚ըներ, կարոտը կ՚առներ։ Էֆտիկ ճարեց, ճարճըրկեց, լավ կերակուրներ պատրաստեց, ուրախությամբ սեղանը կը դնեին նստած սենյակնին, որ շատ տաքուկ էր։ Ամեն բանի վրա խոսեցան։ Արեգնազ հանեց մեծ հորը տված մի քանի ոսկի, ունեցածին կեսեն ավելին։ Պատվելին դժկամակեցավ ընդունել, արդյոք արյան գի՞ն էր, բայց Արեգնազ տխրեցավ, պատվելին առավ ստակները Թոռանը սիրտը չկոտրելու համար։ Բաց աստի, որքա՛ն ժամանակ էր ոսկիին երեսը տեսած չէր։ Սրտանց գոհունակություն ունեցավ։

Գիշերը մեկ սենյակ պառկեցան. Արեգնազ և էֆտիկ շատ խոսեցան։ Էֆտիկ կատիկ կարող չէր բերանը բռնել, խել մը բաներ ուզեց հասկցնել։ Արեգնազ, այնքան անմեղ, այնքան միամիտ, չէր թափանցեր էֆտիկի խոսքերու հոգվույն, բայց կը հասկնար, թե բանի մը վըշտացած էր մեծ հայրը։

Հոգնած էր, չկրցավ դիմանալ և քնացավ։

Հաջորդ օրը պետք էր անպատճառ մեկնիլ. ինչ որ ըրին մյուս գիշերը չկեցավ. կարգադրություններ կային, յուր ներկայությունն անհրաժեշտ էր, բայց խոստացավ շուտ վերադառնալ։ Ո՛չ ապաքեն արդեն քիչ ատենեն այլևս կը վերջանար ներկայացման եղանակը ու ինքն բոլորովին պիտի գար։

Բ

Ի Պոլիս այդ ձմռան ամենուրեք օրվան նորությունն էր Երմոգինեի ողբերգությունը։ «Մասիսի» երիտասարդ քրոնիկագրերը ներկայացուցին գեղանկար պատկերներով հիշատակաց արժանի այն գիշերն, «որում Հայկական Մուսայն յուր հոգետավիղ քնարն ի ձեռին, մեզ այցելեց Մասյաց դագաթնեն»։

Հրապուրեցավ նախ Բերայի հայ ժողովուրդը։ Նա հիշեց, թե մի քանի տարի առաջ Նաումի թատերաբեմն կը գրավեին յուր հոգին հայ բանաստեղծները, և այժմ «Տիկին Անգոյի աղջիկն» էր, որ կը քաշեր զինքըն ի Բալե Քրիստալ։ Բերայի հայ երիտասարդությունը պահ մը զայրույթ զգաց. է՞ր չվերանորոգել այդ գեղեցիկ անցյալն. առիթն ինքնին կը ներկայանար. ի նպաստ Բերայի հայ վարժարանաց պիտի տրվեր ներկայացում մը. սկսած էին արդեն բանակցությունք ֆրանսական խումբին հետ, սակայն Բերայի հայ երիտասարդությունը բողոքեց ընդդեմ այդ բանակցությանց։ Զայրույթը մեծ էր, «Անհագնամոռնչ որոտմամբ», ինչպես կ՚ըսեր հետո Երմոգինե էֆենտին։ Դպրոցաց խնամակալությունն հարկադրեցավ խոնարհել հասարակաց կարծյաց առաջ և Օրթագյուղի խումբն հրավիրվեցավ ներկայացնել Երմոգինե էֆենտիի ողբերգությունը։

Երեկույթը փառավոր եղավ։ Ինչ որ Բերա կը պարունակեր նշանավոր հայ ընտանիք, այն գիշեր ժամադիր եղած էին Էլդորադոն։ Ծափերը սրտաբուխ էին, պսակները տեղատարափ։ Խելահեղ էին ամեն երիտասարդ՝ ի տես Արեգնազին։ Երմոգինե խանդաղատեցավ, թերևս առաջին անգամ լինելով կենացը մեջ։ Երբ ավարտվեցավ ողբերգության ներկայացումն «հեղինա՛կ, հեղինա՛կ» գոչեցին ամեն կողմե, և օծեցին զինքը կեցցեներով։

Հետ ողբերգության պիտի ներկայացնեին կատակերգություն մը, որում Արեգնազ չուներ բաժին։ Ինքն առանձնացավ և զգեստները փոխեց։ Երմոգինե կ՚սպասեր նմա, գնաց գտավ զնա և յուր համակրալից շնորհակալությունները հայտնելե հետո՝ հրավիրեց Արեգնազը ընթրիքի։ Հարկ չէր դուրս ելլել թատրոնեն այդ ցուրտ գիշերը. Էլդորադոն և Լյուքսեմբուրգի հյուրանոցը կցված են միմյանց, հեղինակն ու գերասանուհին մտան հյուրանոցին ճաշելու խուցերեն մին, նստան փոքրիկ սեղանի մը առաջ, փակեցին դուռն և սպասավորը ծառայեց։

Աննկարագրելի ուրախության մեջ էր Երմոգինեն, բայց այն ուրախությամբ, զոր հպարտությունը կը պատճառե և ո՛չ գորովը։ Այո՛, ինքն ալ կը նմաներ այժմ Սարտուի մը, Օժիեի մը, Դյումա Որդվո մը, վերջապես եվրոպացի թատերգակ հեղինակի մը, համատանելով մանրամա-

կան հարաբերություններ յուր ողբերգության գլխավոր դերասանուհիին հետ։

Կը ճաշեին, կը խոսեին, կը խմեին, ուրախ էին, երիտասարդության և փառաց հրճվանոք զվարթ։ Ակնարկություններ կ՚ըներ Արեգնազ այն տպավորության մասին, զոր առաջին անգամ թողած էր յուր վրա Երմոգինե։ Եվ Երմոգինե կը բերեր խոստովանությունն յուր հոդվածներուն, յուր գրքերուն վրա։ Կը տեսներ, թե ինչպես Արեգնազ բերան գիտեր շատ տողեր։

Պարզեց Երմոգինե յուր տեսությունները եվրոպական մատենագրության մասին, բայց խոստովանեցավ, թե սիրող չէր ֆրանսական արդի գրականության, յուր մտատիպարը Ֆրանսիայի տասնյոթերորդ դարի մատենագրությունն էր, բայց և այնպես կը հասկցվեր, թե Ֆրանսիայի արդի գրականությունն ու գեղարվեստք անծանոթ չէին իրեն։

Արվեստներեն անցավ արվեստագետներուն. տեղեկություններ հաղորդեց Ֆրանսայի դերասաններուն և դերասանուհիներուն վրա։ Օգտըվեցավ առիթեն, որպեսզի շանթակոծե արևելյան նախապաշարումները, որոնցով տոգորված պոլսեցին կը նկատե դերասանն ու դերասանուհին իբր արարածներ, որք վաճառականներու հավասար լինելու իրավունքեն զուրկ են։ Ո՞չ ապաքեն դեռ երեկ Եվրոպիո մեջ վարձակ մը— այսպես կ՚անվաներ երգչուհին, գրաբար խոսելով նույնիսկ սրտի տրոփմանց վայրկյաններուն մեջ— Ադելինա Բադդի մը կին կը լիներ ֆրանսացի ազնվականի մը. և մի՞թե արևելքցիները ավելի նախապաշարյալ պետք է լինին ընկերական դրից մասին, քան ազնվապետական ժողովուրդները։

Եվ Արեգնազ կը կարծեր լսել սիրո նվագ մը։ Սերն ու գինին խառնված էին խեղճ աղջկան սրտին ու մտքին։ Աչերուն մեջ կը փայլեր այն փայլն, զոր սերն ու բոցակեզ հուր մը միայն կը պատկերացնեն և կը պատկերացնեն միայն աղջկանց աչքերուն մեջ։

Կ՚ընթանար այդ բոցակեզ հուրն Երմոգինեի աչերուն մեջ. նա չէր կարող դիմանալ, խոնարհեց գլուխն Արեգնազին մազերուն վրա, ափերուն մեջ առավ այդ ոսկեգիսակ մազերը և մեղմիկ համբույրներ դրոշմեց. Թուլակի էր դիմադրությունն Արեգնազի կողմանե...

Ծո՜ւրտ էր, շա՜տ ձյուն կուգար, ի՞նչպես կարելի էր երթալ այդ գիշեր մինչև Օրթագյուղ։ Հյուրանոց մ՚էր Լյուքսեմբուրգ, ուր կանայք կարող էին հանգիստ ու ազատ սենյակ գտնել և հետո հաջորդ օրը, կիրակի մը, հրճվալից ժամեր կ՚անցնեին միասին։ Այսպես կ՚ըսեր Երմոգինեն, գլուխն հենած Արեգնազի մազերուն։

Չէ, այդ անհնարին էր, ինչ կ՚ըսեին յուր ընկերներն։

Ծիլ արդեն կը լսվեին դուրսեն նոցա ձայները. վերջացած էր կատակերգությունը, մեկնած էին հանդիսականները։ Մի քանի անձինք կը հրավիրեին դերասանական խումբը գիշերային ընթրիքի մը Լյուքսեմբուրգի մեջ և ամենքը կը դիմեին հյուրանոցի սենյակները։ Արեգնազ չէր գիտեր այս ամենը, բայց կը լսեր ձայներեն. անմիջապես ոտքի ելավ, չէր կարելի թույլ տալ, որ նոքա ներս մտնելով՝ հանկարծ զինքը միայնակ գտնեն Երմոգինեի հետ։ Գնաց խառնվեցավ խումբին մեջ, ո՛չ ոք դիտած էր նորա բացակայությունը։ Երևցավ հետո Երմոգինե, մասնակից էր ընթրյաց, թեպետ ոչ ինք, ոչ Արեգնազ ճաշելու ախորժակ գտնեին այլևս։

Առավոտյան դեմ էր, երբ դերասանական խումբը մեկնեցավ Թատրոնեն Օրթագյուղ։

Ժ

Կեսօրին գրեթե մոտ՝ Արեգնազ անկողինն էր դեռ։ Աչքերը կը բանար, պատուհանները ձյունապատ էին։ Կը ձյուներ դուրսը։ Չէր ուզեր ելնել անկողնեն։ Փաթթված վերմակին մեջ, կ'երազեր յուր սիրույն վրա։ Բացվեցավ յուր սենյակին դուռը։ Դերասանուհի մ'էր, որ ներս մտավ և հաղորդեց, թե ծեր մարդ մը, ձկնորսի պես մեկն եկած զինքը կ'ուզեր, Գում Գարուեն կուգար, նամակ մը բերած՝ կ'ուզեր տալ Արեգնազի ձեռքը։ Դող ելավ աղջիկը, ցատկեց անկողնեն, վրան բան մը առավ և գնաց քովի սենյակն, ուր կը գտնվեր ծերուկը։

Քալելով եկած էր Գում Գարուեն, ո՛չ շոգեկառք, ո՛չ տրամվայ, ոչ շոգենավ կը բանար և ճանապարհորդությունը պատմելով՝ կը փնտրեր գրպանին մեջ նամակը։ Գտավ. հանեց տվավ։ Գունաթափ եղավ Արեգնազ։ Պատվելին շատ հիվանդ էր։ Դրացի մը երկու տողով այդ կ'իմացներ։

Ժամանակ չկար սպասելու։ Անմիջապես հագվեցավ, իմաց տվավ ընկերներուն, թե չպիտի գար այն գիշերը։ Վար իջավ, շուկան վարձեց կառք մը՝ ուղղակի Գում Գարու երթալու։ Փողոցը նեղ էր, կառք չէր մտներ, իջավ կառքեն փողոցին ծայրը։ Կը մոտենար Արեգնազ իրենց տան, կը տեսներ, թե դուռը բաց էր, դրացիները կը մտնեին կ'ելլեին, անխախտելի նշան վտանգավոր պարագայի։ Ներս մտավ. դեմն ելնողին կը հարցներ, թե ի՛նչ կար։

— Բան մը չկա, բան մը չկա, մի՛ վախնար,— կ'ըսեին։

Սանդուղին գլուխը Ջֆտիկ դեմն ելավ լալով, գրկեց Արեգնազն, համբուրեց և միասին մտան պատվելիին սենյակը։

Պառկած էր անկողնույն մեջ, գունատ, գրեթե կիսամեռ, դժվարավ շունչ կ'առներ։ Մոտեցավ Արեգնազ, ձեռքը բռնեց, համբուրեց։ Բացավ աչքերը ծերունին, ապրիս մը ըսավ կես ժպիտով մը։

Քիչ մը նստելե վերջ դուրս ելավ Արեգնազ, պետք էր բժիշկ մը բերել. մարդ մը ճարեց, ղրկեց բժշկին, ըսավ բժիշկն, ինչ որ սովոր են միշտ ըսել ծերերու համար։

— Կանթեղին յուղն հատե՞ր է։

Չէր բաժնվեր Արեգնազ հորն անկողնույն քովեն։ Տխուր, պարտասյալ կը հսկեր ծերունվույն։ Կ'ուզեր վանել յուր մտքեն վշտալիր հիշատակներ, բայց Երմոգինեի պատկերը կուգար կը ներկայանար յուր մտքին առաջ։ Բայց ոչ առջի գիշերվան թատրոնի պատկերն, այլ ամռան այն գիշերներուն պատկերն, որում պատվելին անոթի, խեղճ, հառաչելով կ'ըսեր.

— Աստուծմե՞ գտնե այդ մարդը։

Եվ հետո միջոց մը իրեն այնպես թվեցավ, թե լսեց մեծ հայրը, որ կը մրմնջեր.

— Ա՜խ այն մարդն, այն մա՜րդն։

Գիշերը կը հառաջանար։ Քանի մը դրացի կիներ եկած էին. էֆտիկի հետ բոլորած էին անկողնույն շուրջը։ Արեգնազ նստարանին վրա կը հանգչեր մի քիչ, կը մրափեր։ Էֆտիկ, որ անկողնույն շատ մոտ էր, տեսավ, թե հոգեվարքին հանդյունն ա՛լ չէր լսվեր, շոշափեց, մարմինը պաղ էր։ Լմնցած էր։ Երկու կնոջ հետ արթնցուցին Արեգնազը, կամացուկ մը դուրս հանեցին։

— Աստված քեզի օրեր տա, յավրում,— կ'ըսեին։

Թաղման հանդեսը կատարվեցավ հաջորդ օրն։ Աշակերտներեն շատերը ներկա էին. ոչ ազդարարություն տըված էր, ո՛չ լրագիրներուն մեջ բան մը գրված։ Քրոնիկագրերն և ոչ իսկ հիշատակություն մը ըրին այդ մարդուն համար, որ ավելի քան կես դար իր ազդեցությունը ներգործած էր ազգային հոգվույն վրա։

Արեգնազը անմխիթար էր. սևեր հագած նստած էր. կ'ընդունեք «գլուխդ ողջ կենայի» եկողները։ Ազգականնե՞ր, ազգականնե՞ր ամեն անկյուններե կը վխտային։ Այն շաբթուն լուր ղրկեց դերասանական խումբին, թե այլևս ներկա եղանակին մեջ կարող չէ մասնակցիլ իրենց խաղերուն, իր սուգն անհնարին կ'ըներ այն։

Այս լուրն անախորժ եղավ խումբին։ Սկյուտար Կետիկ փաշա պիտի ներկայացնեին Երմոգինեի ողբերգությունը։ Բերայեն վերստին ուզած էին զայն։ Արեգնազի բացակայությունը կը խանգարեր այդ ձեռնարկը։

Նորա դերն ե՞րբ ուսուցանել ուրիշի մը և ո՞վ կարող էր հաջորդել արժանավորապես Արեգնազին։ Երմոգինեն կատղած էր, յուր փառքը կը բեկաներ, կարող չէր այլես լիովին վայելել յուր հաղթանակները։

•

ԺԱ

Զմռան վերջին օրերն անցան շատ տխուր Արեգնազի համար. գրեթե միայնակ էր, ժամանակը կ'անցուներ պարզ կարեր կարելով։ Կը կարեր ու կը մտածեր։ Կ'սպասեր, որ Երմոգինե այցելություն մը տա իրեն։ Բայց չէր երևցած։ Գում Գաբուի մեջ խոսված էր բավականեն ավելի նորա հարաբերության մասին Արեգնազի հետ։ Այցելել Արեգնազի՝ տեղի պիտի տար չարախոսության, և որ ավելին է՝ կը կասկածեր, թե գուցե թաղեցիք անպատշաճ համարեին, որ դպրոցի գլխավոր ուսուցիչն դայթակղական ընթացքի մը մեջ կը գտնվի. յուր շահը կը պահանջեր հեռու մնալ Արեգնազեն։ Բայց և ոչ իսկ երկու տող գրեց։ Եվ Արեգնազ կ'սպասեր։

Օր մը Էֆտիկ ըսավ։

— Իմացա՞ր, գետնին տակն անցնելուն նշանվեր է։

— Ո՞վ։

— Սա ի՞նչ կ'ըսեն, վարժապետ մը կա, տեղեդ գործե հանեց քե, տեղն անցավ։

Արեգնազ հասկցավ, գունաթափ եղավ։

— Որո՞ւ։

— Ջիյանեմ, խատիգեղեն աղջկան մը, երեք հարյուր ոսկի ալ թրախումա։

Այդ օրեն ի վեր Արեգնազ ինկավ խոր տխրության մեջ։ Դեռ հազիվ տասն և յոթն տարեկան և արդեն հմայաթափ եղած էր կյանքեն։ Առաջին սերն էր և վերջինը եղավ։ Վայրկենական տպավորության մը ծնունդ չէր այդ սերը։ Կը շարունակեր կարել, բայց ո՛չ այլևս գեղաժպիտ երազներ կը կարճեին օրվան ժամերը։

Սպառեցավ նաև այն փոքրիկ գումարը, զոր կրցած էր ձեռք բերել Օրթագյուղի և Բեբայի ներկայացումներեն։ Պետք էր ապրիլ, երիտասարդությունը թույլ չէր տար նմա անձնասպան ,լինել։ Եվ չէր կարող ապրիլ Գում Գաբուի մեջ, ուր արդեն «երես ինկած էր»։

Յուր հավատարիմ Էֆտիկի հետ մտածեցին ելնել Գում Գաբուեն երթալ հեռավոր գյուղ մը, ուր ոչ ոք լսած լինի իրենց անունը և անդ աշխատել ու ապրել։

Հետաքրքիրները կարող են այսօր գտնել Արեգնազն Ոսկեղջյուրին գրեթե մոռացված անկյուններեն մին, Այվասար, ուր չված էր Էֆտիկի հետ։ Անդ հաջողած էր գտնել մարդ մը, որ իրեն բերեր զինվորական զգեստներ՝ կարելու համար։ Կ'ապրին աղքատիկ, բայց հանդիստ։ Էֆտիկ բավական ծերացած է, բայց Արեգնազ ուսած է աշխատիլ։ Էֆտիկի վերջին փափագն է շնորհքով մեկը գտնել և ամուսնացնել Արեգնազին։ Նախկին գերասանուհին բավական մոռցած է անցյալը, թեպետ ուշադիր մեկը կրնա դիտել, որ տխրության նշանները բոլորովին չեն փարատած դեմքեն։ Էֆտիկ գրեթե հաջողած է յուր ձեռնարկներուն մեջ։ Ոսկերիչ մը, որ լավ գործավոր մ'էր և բավական ուսյալ, եկած տեսած էր Արեգնազը, հավանած և այս շաբթու նշանատուք ալ կը կատարվի։

ՀՈԳՈՒ ՋԱՎԱԿԸ

Ա.

Անդարձ երթաս-բարովի վերջին հրաժեշտին, այն սիրտ ծակծկող «Հավատ ունելովի» մրմունջներուն հետ Գևորգ աղա ինքն ալ նետեց ափ մը հող զավակին գերեզմանին վրա։ Հինգ վեց նավավար ու ձկնորս, որոնք քովն էին՝ ըսին իրեն ալ մեկտեղ վերադառնալ։ Խեղճ մարդը բացավ գլուխը, համբուրեց տերտերին ձեռքի խաչը, ու խոշոր թաշկինակով աչքերը սրբելեն ետքը հեռացավ բարեկամներուն հետ, որոնք կ'ըսեին իրեն.

— Էյ, դուն ողջ կենաս, Գևորգ աղա, ի՞նչ կրնանք ընել. աստուծու կամքն է. ամենուս ալ գլխուն եկածն է. կենդանություն ունիս, աստված նորեն կուտա։

Այս մխիթարականները բան մը չէին կրնար պակսեցնել նավավարին սրտին վրա ծանրացած բեռնեն։

Ամենքը մեկտեղ գացին մեռել-տունը, ուր նավավարին կնոջը քովն էին ժողվված թաղին դրացի կիները։

Ծովը կապար կտրած էր. ինք որ քանի տարիե ի վեր շլապինգ բազուկներով թեթև-թեթև առաջ կը մղեր նավակը, ա՛լ իրեն այնպես կուգար, թե թիերը գամված կը մնային ափերուն մեջ։

Քանի տարիե ի վեր նավավար Գևորգ առտուն կանուխ արշալույսին հետ կ'ելլեր ու գիշերը ճրագին լույսովը տուն կը մտներ, սակայն երբեք օր մը դժգոհության տրտունջ մը բերնեն չէր թռած... օր մը ինքնիրենը

հարցուցած չունէր «զմե՞ կյանք, զմե՞ սեր»։ Ո՛չ կարդալ գիտեր, ոչ ալ գրել. իրեն անծանոթ էին հոռետես փիլիսոփաներուն անունները և ոչ ա՛լ լավատեսներուն ինչ ըլլալը գիտեր. կյանքը, սերը զավկներն էին, կնիկն էր, կարմրուկ, անուշիկ Բուբուլ տուտուն։ Ու հիմա երկու իրիկուն է, երբ դարձյալ արևուն մարը մտնելեն ետքը **Ամիշեն** կ'առներ ուշ մնացողները, որքան մոտենար **Հալաճր-օղլուին** այնքան ավելի կը դանդաղեր հառաչանալու։ Հիմա ձայն մը սրտեն կ'ըսեր. «Զմե՞ կյանք, զմե՞ սեր»։ Ուսում չուներ, որ իր զգացումները հայտներ այդ գրական բացատրություններով, բայց պարզ հառաչանք մը կը թարգմաներ մտածությունը, զգացումները. «Պո՜չ աշխարհք, պո՜չ աշխարհք» կը մրմռար ինքնիրենը։

Պո՜չ աշխարհք. ա՜լ անդարձ գացին այն երջանիկ իրիկունները, երբ ուշ ատեն պարկը հաց, պտուղ, բանջարեղեն լեցուցած տուն կը մտներ՝ հոգին զվարթ։ Կինը խնդումերես առջին վազելով կ'առներ պարկը ձեռքեն.

— Քա կնիկ, **շոնուխները** ո՞ւր են,— կը հարցներ եթե անոնք դեմը չելլեին։

— **Է՜յ խյանեթ**, աս **խըտար** ուշ կալ կ'ըլլա՞ **fի. մազլըմները պեֆլեյեցին, պեֆլեյեցին, լոխմա** մը բան տվի, քուներնին տարավ։

Կը քնանային. կ'երթար, կը նայեր անոնց վրա, կամացուկ մը կը պագներ երեսնին, ու այդ պաչիկին մեջ կը մոռնար օրվան հոգնությունը, կը գտներ վաղվան աշխատանքի ուժը։

Շատ գիշեր ալ արթուն էին **շոնուխները**: Կը վազեին առջևը, կ'առնեին պարկը հորերնուն ձեռքեն ու քաշելով ներս կը տանեին։

— Ծո՛, քա՛, այսօր ի՞նչ բրիք նայիմ, կը հարցներ Նավավարը։

Կը գրկեր զավկըները, կը պագներ. տնակը կը լցվեր ճըվլտուքով. այդ ճըվլտուքն էր իր ուրախությունը, երջանկությունը։

Հիմա ալ ոչ ճըվլտուք կար, ոչ առջև վազել, ոչ անկողնի մեջ համբույր։ Գոցվեր էր տանը դուռը. վերջին զավակն էր, զոր Նավավարը այն օրը հողին կուտար։

Քսան տարեկան կարգված էր Նավավար Գևորգ. երկու զավակ արդեն թաղած էր շատ երիտասարդությանը։ Հիմա յոթ տարվան աղջիկ մը, հինգ տարվան մանչ մը, ու դեռ նոր, նոր, երկու ամսվան մանչ մը իր երջանկությունն էին։ Միտքը դրած էր հատ մըն ալ որչափ կարելի է շուտ հասցնել։ Տասնհինգ օր առաջ աղջիկը մեռած կեղծմաշկե, մեծ մանչն ալ փոխված ու ետևեն գացած էր։ Մորը տագնապին մեջ պաղ առած էր փոքրիկը ու անոր թաղումեն էր, որ կը վերադառնային երկու օր առաջ։

Երբ արհեստակիցներ կը մխիթարեին զինքը, ըսելով, թե «երիտասարդություն ունի, աստված նորեն կուտա», ինքը հաստատ կ'որոշեր. ա՛լ հայր չըլլալ։ Անիծված էր, զավակները «օղմիշ» չէին ըլլար։ Կը հավատար ասոր։

Զավակ չունենա՛լ, ճըվլտուք չլսե՛լ. ինչո՞ւ ուրեմն աշխատիլ, ինչո՞ւ ուրեմն ապրիլ։ Չէր կրնար շատ բարակը մտածել, բայց սրտեն ձայն մը կը հասկցներ այս ամենը իրեն։— «Պոշ աշխարհք» հառաչանքին մեջ կ'ամփոփեր իր հոռետես իմաստասիրությունը։

Բ

Խասգեղի ս. Ստեփաննոս ժամուն ավագերեցը կիրակի առտու պատարագի ավետարանը կարդացվելեն առաջ հետևյալ ծանուցումը ըրավ.

— Օրհնյալ ժողովուրդ, այս առավոտ սուրբ եկեղեցվույս դրան վրա զամբյուղի մը մեջ կախված գտնվեցավ անմեղ երեխա մը, որու հայրն ու մայրը անգթորեն չեն ուզած իրենց զավակը պահել. ով որ կամենա որդեգրել այս թշվառ մանուկը, մանկացյալն տեր Հիսուս, որ մսուրի մը մեջ ծնավ, հազարապատիկ ու բյուրապատիկ վարձահատույց արասցե, որպես փարավոնի աղջկանը, որ Մովսեսը Նեղոսի ջուրերեն ազատեց։ Այս անմեղ երեխան որդեգրել հանձն առնել ուզող բարեսիրտը դիմելու է թաղական խորհրդարանը։

Ժամավորներուն մեջ էր նավավար Գևորգ ալ, որուն արցունքները կը վազեին պատարագին սկսելեն ի վեր. ծանուցումեն հետո խորասուզված էր մտածության մեջ։ Սպասեց պատարագին ամբողջ ավարտմանը։ «Օրհնյալ եղերուքեն» վերջ ինքն ամենեն ետքը դուրս ելլողն եղավ. կամաց-կամաց գնաց շիտակ թաղական խորհրդարանին առջև, բայց ներս չնայելով հեռացավ, քովնտի սանդուղեն վար իջավ ու դուրս ելավ և քիչ մը ետքը մյուս դռնեն նորեն ներս մտավ. գնաց խորհրդարանին առջև. քիչ մը դեգերեցավ, ետ դարձավ, նորեն գնաց, վերջապես վարանումին հաղթեց, ներս մտավ ու բարև մը տալով կայնեցավ։

— Ի՞նչ կուզես,— հարցուց թաղական խորհրդին ատենապետ Ագրիպպասյան Օհաննես էֆենտի։

— Ծառա եմ,— ըսավ խեղդուկ ձայնով մը, պատարագին ատեն տեր հայրը ժամուն դուռը կախված տղու մը համար ծանուցում ըրավ։— Ի՞նչ ընեմ, ես ա՛լ, աղաներ, անզավակ մնացի, խիղճիս զարկավ. էյեր կամք կ'ընեք նե ինծի տվեք, աղքատ ենք ամա, բեք աղեկ կը նայինք աստծու տվածովը։

— Ինչո՞ւ չէ, ինչո՞ւ չէ, բեք աղեկ, բեք աղեկ, հրամմե նստե։

— Նայէ՛, սա ունեցածներէն մէկը կը մտնէ՞,— ըսաւ քթին տակէն թաղականներէն մէկը։

— Նորէն սոնք, նորէն սոնք,— պատասխանեց Ագրիպպասյան էֆենտի։

Մինչ խեղճ նավավար Գէորգը իր կողմէն մեծ հանգստութիւն համարած էր տղան խնդրելը, թաղական էֆենտիները մեծ ուրախութեան մէջ էին, որ գիրենք փորձանքէ մը կ՚ազատէր. կը վախնային, որ ընկեցիկը վրանին կը մնա ատեն մը և եկեղեցիին համար ծախքի մը դուռ կը բացվի։

Թաղական էֆենտիները խահվէ մըն ալ ապսպրելու պատիվն ըրին նավավարին, ու ժամկոչին ալ հրամայեցին, որ կախվածը երթա բերե. մոտը տուն մը զրկած էին։

Մաքուր, նուրբ, անուշահոտ շորերը, որոնց մէջ փաթթված էր ընկեցիկը, հավաստեցին, թե սիրային գաղտնի հարաբերութեանց ծնունդ էր խեղճը։ Հավանորեն ատտուն շատ կանուխ Բերայէն բերված կախված էր։

Մկրտութիւնը կատարվեցաւ հաջորդ կիրակին, ս. Ստեփաննոսի ավազանին մէջ, Նավավարին տղաքներուն կնքահօրը ձեռքովը. թաղականները ներկա էին «առ ի քաջալերութիւն». ծանուցում ըրող ավագերեցը ուզեց ինք մկրտել, այդ պատիվը նավավարին ընելը իրեն պարտականութիւն սեպելով։ Միայն ըսավ, որ երեխային անունը Մովսես դրվի, նվիրագործելու համար ծանուցումին մէջ ըրած գրական զյուտը։

Եկեղեցիին ֆյուրյուկին մէջ ընկեցիկը արձանագրվեցաւ Մովսես անունով ու քովն ալ «եկեղեցւո զավակ»՝ հօրն ու մօրը անունին տեղը։

Գ

— Պապա՛, բիճը ի՞նչ է։

— Ծօ՛ տղա, ատ ի՞նչ բիս խոսքեր է զի կ՚ընես... ինչո՞ւ կը հարցնես։

— Պապա, գպրատունը տղաքները ինծի բիճ կը կանչեն կոր. ինծի կ՚ըսեն ֆի, դուն բիճ ես, ժամուն դռնեն գտնվեր ես, հա՞, պա՛պա, իրա՞վ է. բիճը ի՞նչ է. ինչո՞ւ մեկալ տղաքներուն չեն ըսեր ան մինակ ինծի կ՚ըսեն։

Այս հարցումները կ՚ընէր Մովսես իրիկուն մը իր հօրը, նավավար Գէորգին։

Հիմա ծովը դարձյալ կարծես կապար կտրած էր, դարձյալ խեղճ նավավարին այնպես կուգար, թե թիերը գամված կը մնան ափերուն մէջ։

Յոթը տարի անցած էր այն օրեն ի վեր, երբ Նավավար Գևորգ Հոգու զավակ ըրած էր ս. Ստեփաննոս ժամուն դուռը կախված երեխան։ Հոգու զավակը եղած էր և սրտի զավակ։

Իր կաթովը մեծցուցած էր Բուրօվ տուտուն այդ տղան, երկու ամսվան մեռնող զավկին կաթերը դեռ չէին քաշված, երբ որդեգրեցին Մովսեսը. ու արևելյան ժողովուրդներու մեջ կաթ տվող մայրն ալ ծնող մոր մը սիրտը կը կրեր։ Ան ծնող մորմեն ալ ավելի եղած էր։ Քանի որ միտքը կը բերեր խրյաճեք մոր աս աղվորիկ տղան դուրս նետած ըլլալը, խեղճ կնկան խելքին կուգար, չէր կրնար աս «անօրենությունը» մտքին մեջ սեղմեցնել։ Բոլորովին գուրգուրանք, գորով, սեր կտրած էր։

Նավավարն ալ հոր պես կը սիրեր տղան ու իբր խնամակալ կը հսկեր վրան. ոչ միայն սրտի զգացում ուներ, այլև կը մտածեր, թե աստված ղրկած էր անիկա իրենց մխիթարության համար։ Ինչ որ չէր ըրած մեկալ «զավակներուն» ասոր համար կ'ըներ։ Խաղալիքներ կ'առներ սուղ գնով իսկ, բարակ անուշեղեններ կը բերեր և աղեկ կը հագվեցներ։

Էրիկ կնիկ իրենց մեռածներուն կարոտը Մովսեսեն կ'առնեին։

Ու մանուկը կը մեծնար, աղվոր, սիրուն և առույգ տղա մը. իր խոշոր ճակատը ցույց կուտար, թե խելացի բան մը պիտի ըլլա։ Այն կորովի նմուշներեն էր, զոր ընդհանրապես կ'արտադրեն ընկերության կողմե ապօրեն ձայնված հարաբերությունները. հզոր սիրո ծնունդ։

Նորեն ճըվլտուքը սկսած էր Նավավարին տան մեջ, նորեն աշխատավորը հենարան մը գտած էր ապրելու համար. կը թխավարեր եռանդով ու իրիկունները, երբ գինետուն մտներ, գարձյալ զվարթությամբ կը ճնկեր։

Եվ ահա հանկարծ փոքրիկին մեկ հարցումը կը վրդովեր իրենց կյանքի խաղաղությունը։

Յոթը տարվան մեջ Մովսես երբեք օր մը չէր կասկածած, թե իր «պապան ու մամուն» իրենք չէին։ Արդարև մանուկը տակավին չէր կրնար գաղափար մը կազմել թե ի՞նչ է զավակն ու որդեգիրը. սակայն Նավավարն ու կինը չէին ուզեր, որ երբեք օր մը ակնարկություն կասկած տա, թե արյունի կապը կը պակսի տղուն և իրենց միջև։ Իրենք ալ կ'ուզեին վայելել պատրանքի երջանկությունը։

Սարսափով կ'զգային, որ եթե տարակույսը մտներ փոքրիկին միտքին մեջ, տարիքին հետ պիտի աճեր, ու օր մը խելահաս պատանին պիտի ուզեր գիտնալ զինքը չարչրկող գաղտնիքին պատճառը։ Պիտի իմանար, թե հայրն ու մայրը օտարականներ էին իրեն համար։ Այս մտածությունը սոսկում կը պատճառեր խեղճերուն։

Խասգեղ իրենց սեփական տուն չունենալով, յոթ տարվան մեջ շատ անգամ բնակարան փոխած էին. կը կարծեին, թե տեղափոխությունը կորսնցնել կուտա անցյալ կյանքին հետքը։ Ա՛լ մոռցված կը համարեին այդ անցյալը. ոչ ոք աղքատիկ դասակարգին մեջ ակնարկություն մը ըրած էր օր մը։

Սակայն Նավավարը միշտ կը վախնար, թե օր մը, երբ Մովսես ավելի խելահաս ըլլա, պարագա մը կրնար հանկարծ Խասգեղի մեջ հիշեցնել իրեն անցյալը։ Շատոնց է միտքը դրած էր երթալ ուրիշ գեղ մը հաստատվիլ, բոլորովին անծանոթ։ Բայց հիշատակները կը պրկեին ոտքը Խասգեղի հողին։ Հոն մեռած ու թաղված էին հայրն ու մայրը, հոն ծնած էին իր կինն ու ինքը։ Եվ ամեն մեռելոցի կ'երթային օրհնել տալ գերեզմանները ու աչքերնին սրբել հինգ զավկի հողին վրա։ Քառասունչորս տարվան կյանք մը կը կապեր զիրենք հայրենի հողին։ Ուստի Նավավարը օր օրվան կը ձգեր տեղափոխության խորհրդին իրագործումը- վտանգը մոտալուտ չկարծելով։ Բայց ահա հանկարծ պարագաները կը խաբեին իր իմաստությունը, վտանգ մը որոշյալ ժամանակ չունի հասնելու համար։

Դ

Դպրոցը փոքրիկ տղա մը օրին մեկը զայրույթի միջոցին Մովսեսի երեսին նետեց դառն ճշմարտությունը, ինչպես պիտի զարներ քար մը, դանակ մը անոր գլխուն, առանց որոշ գաղափար ունենալու մահվան վրա. բնազդը չարիք մը հասցնելու գիտակցությունը կուտար իրեն։

Երբ Մովսես յոթը տարեկան եղավ, Նավավարը ձեռքեն բռնեց տարավ Ներսիսյան դպրոցը, խնդրեց ծաղկոցի վարժապետեն, որ աղեկ նային չոճուխին. ձեռքը մեճիտ մըն ալ դրավ, երբեմն նվերը կրկնելու խոստումով։

Մինչև Մովսեսին ծաղկոց մտնելը ամենեն ուշադրավ աշակերտն էր Թաղական խորհրդի ատենապետին զավակը, Պետրոս Ագրիպպասյանը. իսկ հիմա քանի մը ամիս է ամենուն աչքը նորեկին վրա էր. դասին մեջ գրեթե եկած հասած էր իրմե շատ առաջ դպրոց հաճախողներուն. տղաքները ամենեն ավելի կը սիրեին այդ ժպտուն, քաղցրանուշ տղեկը, զբոսանքի ատեն ամենքն ալ անոր հետ կ'ուզեին խաղալ։ Ու Ագրիպպասյան, որ ատենապետին զավակն ըլլալուն ազդեցությամբը կ'իշխեր, հիմա կը մթագներ Նավավարին զավկին առջև։ Տղաքներու բնածին սոսկալի նախանձը կը վառեր ներսիդին։

Այդ համակրանքը շատ սուղի կը նստեր Մովսեսին։ Փոքրիկ Ագրիպպասյանը անոր գլխուն փորձանք մը բերելու առիթը բնավ ձեռքե չէր փախցներ։ Օր մը կը պատռեր ընթերցարանին մեկ երեսը, ուրիշ օր մը վրան մելան կը նետեր, երբեմն ալ կոմիթ մը կամ մուշտա մը։ Մովսեսի աչքերը կը լցվեին, բայց առանց վրիժառության. այնքան ազնիվ էր նաև, որ խամազությւն ընելու գաղափարը չէր կրնար հղանալ. ոչ վարժապետին բան մը կ՚ըսեր, ոչ ալ տունը։ Ինքն ալ թերևս կ՚զգար, թե ատենապետի մը տղուն ամեն բան ներելի է։ Բայց օր մըն ալ դիմանալու կարողությունը չմնաց։ Հագած էր նոր զգեստ մը, զոր մաքուր պահելու համար պատվերներ տված էին. Նույն օրն իսկ Ագրիպպասյան մելանոտ գրիչ մը վրան նետեց ու աղտոտեց. Մովսես, մոլեգին, ակնթարթի մը մեջ ծռեցավ, գրիչը վեր առավ ու նետեց Ագրիպպասյանի երեսին, ծայրը գնաց դպավ այտին, ու շապիկին վրա իյնալով բիծ մը ձգեց։ Մովսես նույն րոպեին իսկ խիստ պատիժը կրեց, երկու ապտակ ալ միասին ուտելով։

Ագրիպպասյան իրիկունը լալով վազեց հորը վրա, ցույց տվավ երեսին նշանը ու շապկին սև բիծը։

— Ծո՛, աս ի՞նչ է,— հարցուց հայրը բարկությամբ։

— Այսօր դպրատունը Մովսեսը ըրավ, գրիչը երեսիս նետեց, քիչ մնաց աչքս պիտի հաներ։

— Ծո՛, աս Մովսեսը ո՞վ է,— հարցուցին հայրը, մայրը դող ելած։

— Խայրխնթիին տղան։

— Ո՞ր խայրխնիին:

— Ո՛ւր է, սա մեր եաևի սոխախը չէ, մեկալ սոխախը կը նստի։

— Հա՛, հա՛, հա՛, կնիկն ալ յալվար յախար եղավ, երկու անգամ է մեզի չամաշուրի կուգա, սա բինը:

— Քա ո՞ր բինը,— հարցուց հայրը։

— Մեղա՜ քի միտքդ չի՞ գար,— ըսավ Ագրիպպասյանի կնիկը։— Սա ո՞ւր է օխտը ութ տարի առաջ ժամուն դուռը կախված տղա մը կար ան խայրխնիի մը տվիր, իշտե ան է։

— Հա՛, հա՛, կեցի՛ր, կեցիր միտքս եկավ։ Վա՜յ շուն շան որդի։ Սըվոր նայե, վա՜յ կիտի տունյա վա՜յ. ժամուն դուռը կախված բինը գա ան մեր տղուն աչքը հանելու ելլա։ Եկու տե աս աշխարհքին մեջ մարդու աղեկություն ըրե։ Ձգելու էի քի գեմպիլին մեջ շան սատակ ըլլար բինը:

Մյուս առտու ատենապետ էֆենտին եկեղեցին կանչեց վարժապետը, վրան գլուխը աղվոր մը լվաց, դպրոցեն վռնտելու սպառնալիքով։ Սարսափահար, վարժապետը վազեց դպրոց, Մովսեսին ականջեն կառա-

գործին քաշելով և գրատախտակին վրա քաշկռտելով դուրս հանեց, երկու հնչուն ապտակ իջեցուց երեսներուն, և հետո պոռալով, կանչելով իմացուց հանցանքը.— փոքրիկ Ագրիպպասյանը իմանալու էր ծեծին շարժառիթը, որ հորը հաղորդեր։ Մինչև իրիկուն Մովսեսը ոտքի կայնեցուց ու անոթի պահեց։

Ու Ագրիպպասյան պոռալով կ'ըսեր գրասանդքին սաները, մինչ խեղճ Մովսեսը ուռած աչքերով կեցած էր ոտքի վրա.

— Ծո՛, աղա՛ք, գիտե՞ք, Մովսեսը բիճ է, հոր մար չունի եղեր. ժամուն դռնեն գտնվեր է զեմպիլի մեջ։

Մովսես բան մը չէր հասկնար այս ամենեն, միայն կ'զգար, թե ինքը աղքատի զավակ է, անոր համար պատժվեր է։

Հաջորդ օրը, մյուս օրն ալ Ագրիպպասյան Մովսեսի երեսն ի վեր կը կանչեր «Ծո, բիճ, ծո, բի՛ճ, զեմպիլով գտնված բիճ». քանի մը չարեր ալ իրեն կը ձայնակցեին։ Այս տպավորության ներքև էր, որ Մովսես պատժվելեն երկու օր վերջ կը հարցներ հորը, թե ի՛նչ է բիճը, ինչու իրեն բիճ կը կանչեն։

Մյուս օրը Նավավարը այլևս տղան դպրոց չղրկեց։ Կիրակի ժամեն ելլելուն վարժապետը գտավ և տխրությամբ հարցուց, թե ինչ է տա եղածը։ Վարժապետը, որ կը դեգերեր խորհրդարանի դրանը առջև և գիտեր, թե Ագրիպպասյան էֆենտին ներսն է, առիթեն օգուտ քաղեց հաճոյական ցույց մը ընելու, ուր բարձրագոչ ձայնով Նավավարը վերեն վար շտկեց։ Ձայնը ներս հասավ, քանի մը թաղականներ, որոնց հետ ատենապետ էֆենտին, դուրս ցատկեցին։

— Ատ ի՞նչ է, ատ ի՞նչ է,— գոչելով։

— Էֆենտի,— ըսավ վարժապետը դառնալով Ագրիպպասյան էֆենտիին, սա ճերիֆին խոսք հասկցուցեք, վրաս եկեր է ան բիճը ըստ արժանվույն պատժելուս համար։

Ագրիպպասյան էֆենտի աչքերը ժամկոչներուն վրա դարձնելե հետո հառաջացավ դեպի Նավավարը.

— Ինծի նայէ, ինծի նայէ, գիտես թե ես ան քո բիճդ շան սատակ կը հանեմ, էյեր մեյ մըն ալ ան իր չարճալու ծառքերը զավկիս դպչելու ըլլան։ Հատար թող գիտնա, մեր տղոցը հետ անիկա դպրոց ալ գալու չէ ամմա, նորեն մենք ինչ է նե բարեկիրթ ենք, կը մեղքնանք։

Նավավարը կրակ կտրեցավ, ձեռքը վեր կը վերցներ, բայց շուտ վար իջեցուց։ Նույն րոպեին միտքը բերավ, թե ինչ խայտառակության առաջ պիտի գար. զինքը պահականոց պիտի դրկեին. եղելությունը պիտի իմացվեր, և Մովսեսին գաղտնիքը, որ մեռցված կը կարծեր, ամենուն բերանը

պիտի իյնար։ Գլուխը կախ դուրս ելաւ. Ագրիպպասյան էֆենտի ետեւէն կանչեց.

— Հէ՛յ, ինծի նայէ, ան կնիկանդ ալ ըսէ Քի մէյ մը տանիս մեր տանը չամաշըրի չգայ, ատքը կը կտրեմ։

Նաւավարը ալ ազան դուրս չհանեց։ Ինչ որ երկար ատենէ ի վեր միտքը դրած էր օր մը ընել, որոշեց անմիջապէս գործադրել։ Առանց ձանձրանալու կատարեց էնսաֆական ձեւակերպութիւնները և օր մը կինը, զաւակը, կարասիները, նաւակը, ամենքը առնելով փոխադրվեցաւ Օրթագեղ։ «Օրթա տեղ մըն է, ըսած էր ինքնիրենը, ամեն կողմէ հեռու ցայտող կ'ըլլա. Նեմաէ Քիայարի գեղ, ոչ ալ ճանչցող չկա»։

Ե

Ստորին Վոսփորի, մասնաւորապէս Օրթագեղի բնակիչները Թերեա Հիշեն ծովային արկած մը, որ կիրակի ցերեկ մը պատահեցաւ Օրթագեղի և Գուզկունճուքի միջև։

Օրթագեղի հանրածանօթ ընտանիքներէն մեկուն հույն սպասուհին Գուզկունճուք պիտի երթար. Նաւակ մը նստեցաւ դիմաց անցնելու համար։ Ծովեզերքը բավական բացված էր Նաւակը երբ հանկարծ սաստիկ հով մը փչեց, ակնթարթի մեջ ծովը տակնուվրա եղաւ. Նաւակին մեջ կինը սարսափեն ոտքի ելաւ, Նաւակը շրջեցաւ, կինն ու Նաւավարը ջուրին մեջ աներեւութացան։ Սպասուհիին տիրոջը բարձրահայաց տունեն, ինչպես ծովեզերքի մեկ երկու բնակարաններեն այդ պահուն դիտողով ծովը կը դիտեին. արկածը աչքովնին տեսած եղան։

Այդ կիրակի իրիկունը Բուբուլ տուտուն շատ սպասեց էրկանը. եկող չեղաւ. Մտավախը նաւամատույց դրկեց, փնտրեց հայրը, չգտաւ. բան մը ըսող չեղաւ։

— Կիրակի է, Թերեա հեռու տեղ գացած է, չէ կրցած եա գալու,— ըսին։

Բուբուլ տուտուն ժամ վազեց մամ վառելու. երբ դուրս կ'ելլեր բազմութիւն մը խմբված էր. ըսին, թե երեկ ծովը խեղդվողի մը դիակը բերած են։ Սրտադողով ինքն ալ մոտեցաւ, բազմութիւնը ճեղքեց։ Ճանաչեցաւ էրկանը մարմինը։

Զ

Զատկէն ետք, գարնան առաջին զվարթ արևին հետ կը փութան Հալքի ապաստանիլ հանդարտ ու ժպտուն բնության հետ քիչ մը ատեն մենակյաց ապրելու կարոտը քաշող սրտերը, որոնք ջատ բազմաթիվ չեն ըլլար։

Այդ տարին մայիսի սկիզբը, ամեն օր իրիկվան դեմ Ցամ-Իլիմանիի ծովախորշը կուգային քառասունհինգէն հիսունի մոտ մարդ մը և դեռատի աղջիկ մը։ Կը նստեին ծովեզրը, փոքրիկ թևերով ու չորցած տերևներով հորինված հովանոցակին ներքև։ Քիչ մը կը խոսեին, և սուրճը խմելե հետո մեյ մեկ գիրք կը հանեին ու կը կարդային։ Անդիեն զանոնք դիտող մը պիտի նշմարեր, թե երբեմն աչքերնին գրքեն վեր վերցնելով կը հառեին մեծատարած ծովուն վրա, խորասուզված խոր մտածության մեջ։ Ու այդ րոպեներուն թեթև տխրություն մը կը պատեր երեսնին։ Աղջիկը, կես սուգի զգեստներով, հազիվ տասնութ տարեկան կ'երևեր։ Հավանորեն ընկճված չէր վրդովյալ անցյալի մը ծանր հիշատակներուն ներքև. ատիկա դեռ շատ կանուխ էր իրեն համար։ Անշուշտ ապագան էր, որ ծիծաղկոտ չէր երևնար։ Իսկ մյուսին համակրելի դեմքը, իր ծանրախոհ նրբին տրտմության մեջ մեծ հոգնության, շատ հուսախաբության նշանները ցույց կուտար։

Երկու շաբաթ հետո Ցամ-Իլիմանի սկսավ երևիլ երիտասարդ մը, որ թե՛ առտուն շատ կանուխ կուգար, և թե՛ իրիկունները։ Շատ վայելուչ ու լրջադեմ էր. կը նստեր մեր ծանոթ զույգեն բավական հեռու. հետը միշտ քանի մը օրաթերթ ու գիրք մը կ'ունենար։ Երբեմն-երբեմն աչքերը կը հառեր այդ զույգին վրա, բայց իր ուշադրությունը ավելի էրիկ մարդուն համար էր, քան թե աղջկանը։

Աղջիկն ալ քանի մը օրեն ի վեր միայն ծովը չէր դիտեր ու ետ դառնալով կ'ուզեր զմայլիլ եղևնիներու տեսարաններով. այդ դարձին մեջ երբեմն աչքերը կը հանդիպեին երիտասարդին աչքերուն։

Չորս-հինգ օր հետո աղջկան ընկերը, երբ սովորությանը համեմատ քիչ մը կը պտտեր դաշտին մեջ, նշմարեց, թե երիտասարդը հայ է. հայերեն թերթ մը կը բանար այդ րոպեին։ Շրջան մը ընելե հետո, երբ նորեն առջևեն անցավ, կանգ առավ ու հանդարտ, անուշ ձայնով մը բսավ.

— Կը ներեք...

Երիտասարդը անմիջապես վեր ելավ խորին հարգանքի մը ակներև նշաններով։

— Կը ներեք,— շարունակեց մյուսը,— թեև անծանոթ եմ ձեզ, բայց գիտեք, թե գյուղերու մեջ բարեկամանալու համար արարողության պետք չկա։

— Ես անծանոթ, բայց ոչ հրամանքնիդ։ Գիտեմ, թե պատիվ ունիմ Տիրան էֆենտիի ներկայությանը գտնվելու, և քանի մը օր կը փափագեի հարգանքներս գալ մատուցանել ձեզ, բայց զձեզ առանձին չէի տեսներ։

Տիրան էֆենտի ակներև գոհունակությամբ թեթև մը գլուխը խոնարհեցուց ու հարցուց.

— Ու ես որո՞ւ հետ խոսելու պատիվը ունիմ արդյոք։

— Ձեզ հետ խոսելու պատիվն ունի Նավարյան։

— Դո՞ւք եք, դո՞ւք եք, ի՞նչ գեղեցիկ հանդիպում։

Ու ձեռքը երկնցուց անոր իբր մտերիմ բարեկամի մը.

— Երկու տարի է,— շարունակեց,— շատ ուշադրությամբ կը հետեվիմ ձեզ և կրնաք հավատալ, որ ինծի համար մեծ հաճույք մը եղած է կարդալ ձեր գրածները. երբ շաբաթ մը չեք գրեր, կ՚զգամ, թե բան մը կը պակսի ինծի։

Նավարյան ակներև կը շփոթեր Տիրան էֆենտիի կողմեն իրեն շռայլված փայփայանքին համար։

— Ձեր քաջալերական խոսքերովը զիս երախտապարտ կ՚ընեք,— ըսավ։— Շատ հավակնություն պիտի ըլլար իմ կողմես հայտարարել, թե ինչ սքանչացում ունեցած եմ միշտ ձեր անբաղդատելի տաղանդին և անձին համար. հին ու նոր սերունդին ձեզ համար ունեցած սքանչացմանը մասնակից եմ։

Տիրան էֆենտի գլուխը խոնարհեց, երիտասարդին դողդոջուն ջերմերեն զգացված, լավ հասկանալով, որ հասարակ շողոքորթություն մը չէր ըրածը, այլ խորին համոզումի մը և սրտաբուխ խանդի մը արտահայտությունը։

— Որչա՜փ գոհ պիտի ըլլա քեռորդիս, եթե ձեզի հետ ծանոթանա։ Թեև ընդհանրապես ֆրանսերեն կը կարդա, բայց ձեր դպրոցին շնորհիվ հիմա կը սիրե հայ գրականությունն ալ, և շատ համակրանքով կը կարդա միշտ ձեր գրածները։ Եթե կը հաճիք իր մոտը երթանք։

Նավարյան այս հրավերեն ինքն ալ չէր գիտեր ինչու այնքան գոհ մնաց և անմիջապես գլխարկը ձեռքը՝ հառաջացավ Տիրան էֆենտիի հետ։ Մոտեցան աղջկանը նստած տեղը։

— Արուսյակ,— ըսավ,— կարծեմ շատ գոհ պիտի մնաս, եթե քեզի ներկայացնեմ Նավարյան էֆենտին։— Քրոջս որդին՝ Արուսյակ Սարաթյան։

Գոհունակությունը հայտնի եղավ աղջկանը դեմքին վրա. ինքն ալ

ռանց վարանելու ձեռքը մեկնեց երիտասարդին և ժպտալով ըսավ Տիրան էֆենտիի.

— Անշուշտ, մորեղբայր, Նավարյան էֆենտիի տաղանդին համար մեր սքանչացումը հայտնած ենք, ուստի ինծի շատ բան մը թողած չես ըսելու։

— Մի վախնար, սքանչացում հայտնելու անսպառ նյութ ունիս, և վստահ եմ, թե պահեստդ միշտ պիտի ավելանա։

Մեկ ժամ միասին անցուցին իրիկվան հեշտ արևովը. երեքին գեմ-քին վրա ալ կը փայլեր այն զվարթառատ գոհունակությունը, զոր կ'ըզ-գան զարգացած ազնվահոգի մարդերը, երբ իրար կը գտնեն ու իրենց խոսակցության մեջ կը գտնեն կյանքի հյուսվածքին ամեն թելերը։

Մեկնելու ժամանակը երբ հասավ, Տիրան էֆենտի հրավիրեց Նա-վարյանը վերադառնալ իրենց նավակովը։ Ճամփան խոսեցան իրենց կենցաղավարության վրա։ Տիրան էֆենտի քանի տարի է քրոջը հետ Բերայեն գարնան Հալքի կուգան և մինչև աշուն կը կենան։ Նավարյան, որ Գատըգյուղ կը բնակեր, ամսվան մը արձակուրդով եկած հաստատ-ված էր Պել-վյու պանդոկը. բայց կը հուսար, թե արձակուրդին լրանա-լեն հետո ալ մինչև աշուն կղզին կ'անցըներ, առտու իրիկուն երթալ գա-լով։

Երբ նավամատույց ելան ու իրարմե պիտի բաժնվեին, թե՛ Տիրան էֆենտի և թե՛ օր. Արուսյակ հրավիրեցին Նավարյանը իր այցելու-թյունը պատվել զիրենք իրենց տանը։ Ու միանգամայն հայտարարեցին, թե որչափ գոհ կը մնան միշտ իր ընկերակցությունը վայելելով։

Նավարյան այն գիշեր չէր կրնար պանդոկը մնալ. երազելու տենչը ուներ, նավակ մը վարձեց և ժամերով անլուսնակ գիշերին թափառե-ցավ ծովուն վրա։

է

Նավարյան երեք օր ոչ Զամ-Էյլիման գնաց և ոչ ալ կղզիին այն կող-մերը, ուր կրնար Տիրան էֆենտիին և օր. Սարաթյանի հանդիպելու առիթն ունենալ։ Առավոտեն մինչև իրիկուն սենյակին մեջ փակված կը գրեր. գի-շերները միայն նավակով շրջագայություն կ'ըներ։ Կիրակի օրը սակայն, կես օրեն ետքը գնաց այցելություն մը տալու իր նոր բարեկամներուն։

Երբ սենյակեն ներս մտավ, օր. Արուսյակ շատ զվարթությամբ ընդ-առաջ եկավ.

— Օ՜հ, կարծեցինք, թե կը փախչեիք մենե, երեք օր է զձեզ տես-նելու բարեբախտությունը չունեցանք։

Եվ շիտակ երիտասարդը մորը տանելով.

— Մա՛յր, Նավարյան էֆենտի,— մայրս։

Մայրը, Սրբուհի հանըմ, մարմնեղ ծանրաշուք կին մը— որդեն առ-ջի վրա էր սենյակին մեջ գտնվողներուն հետ,— բարի եկաք, ըսավ։

Նավարյան գնաց Տիրան էֆենտիի ձեռքը սեղմելու։ Ուրիշ հյուր մըն ալ կար, օր. Արուսյակը ներկայացուց իրարու։

— Ազրիկ էֆենտի— Նավարյան էֆենտի։

Գլխով իրար բարևեցին։ Երբ ամենքն ալ նստան, Տիրան էֆենտի ժպտալով ըսավ.

— Ազրիկ էֆենտի, անշուշտ Նավարյան էֆենտիին ձեզի շատ ծանոթ ըլլալու է անունով. դուք որ այնքան հանրային գործերու մեջ եք, կար-ծեմ թե իրեն գրիչը գնահատելու պատեհութենեն չեք զրկված։

Ընտանեկան, անմեղ հեգնության մը շեշտովը կ'արտասաներ ամեն մեկ բառը։

— Ի՞նչ ըսել է, ի՞նչ ըսել է,— հայտարարեց Ազրիկ էֆենտի հա-վակնոտ ձայնով մը,— իր գրածները միշտ կը կարդամ, բայց շիտակն ըսելով առանց հավանությունս տալու։

— Անշուշտ կարծիքի տարբերություն,— ըսավ Տիրան էֆենտի միշտ ժպտուն.— կ'երևեր հանդիպումեն ախորժած էր։

— Ո՛չ, ո՛չ,— ըսավ Ազրիկ,— որուն երեսները կարմրցած էին հան-կարծ, և ձայնը զայրույթի շեշտով կը դողար, ու դառնալով Նավարյանի.

— Էֆենտի՛մ, դուք շատ առաջ կ'երթաք, ես պահպանողական եմ, ես չեմ ներեր, որ ազգին աշխատավորները անխիղճ քննադատությամբ հուսահատին. ես չեմ ուզեր, որ հեգնությամբ ամենքը ջլատեք. ի՞նչ ըսել է, էֆենտիմ, մեր ազգին մեջ էսբրի ընել. չեմ գիտեր, թե ինչ գաղտնի պատճառ կա, որ այսքան թշնամություն կ'ընեք մեզի. բայց մենք գի-տենք քննելիքնիս։

— Կարծես թե,— ըսավ Նավարյան հեգնոտ ծիծաղով և մեղմ ար-համարհանքով,— եթե բարեբախտություն ունիմ, որ էֆենտին անունս լսած է, բայց ես դժբախտաբար առաջին անգամն է, որ իր անունը լսե-լու պատեհությունը կ'ունենամ. ուստի չեմ հասկնար, թե ինչպես կա-րելի է, որ իրեն նկատմամբ թշնամական բան մը գրած ըլլամ։

— Էֆենտին,— հարեց Տիրան էֆենտի,— կարծեմ իր անձին համար չէ որ կը խոսի։

— Անտարակույս, անտարակույս։

— Այլ ի դիմաց բոլոր ազնվաշուքներուն, զոր այնքան անգթորեն կը հարվածեք...

— Անտարակույս, անտարակույս։

— ...և իրավամբ ալ,— Գարեց մեծ ծիծաղով մը Տիրան էֆենտի։ Բայց տեսավ թե կատակաբանությունը, որ ճշմարտության շատ մոտեցած էր, կրնար անախորժ հետևանքներ ունենալ, ուստի ըսավ.

— Արուսյակ, սա սեղանը բեր պոքեր մը դարձնենք։ Նավարյան էֆենտի, կը մասնակցի՞ք։

— Ինծի ներողություն, չեմ գիտեր։

Ագրիպ էֆենտի գոհունակությամբ արհամարհական ակնարկ մը նետեց երիտասարդ գրագետին վրա, հասկցնելով, թե «ընկերային դիրք» չունենալուն ապացույցը տված է։

Նույն միջոցին ուրիշ հյուր մը եկավ։ Սրբուհի հանըմ, Տիրան էֆենտի, Ագրիպ էֆենտի և հյուրը սեղանին շուրջը նստան։

— Հոս հրամմեցեք,— ըսավ Արուսյակ Նավարյանի, որ միայն իր հյուրը կը մնար։ Եվ բաց պատուհանին առջև շուքին մեջ սկսան խոսիլ. Նավարյան երկու անգամ ուզեց մեկնիլ, բայց թույլ չտվին։

— Երիկունը ճաշը մեկտեղ ընել կը հաճի՞ք,— հարցուց Տիրան էֆենտի։

Մերժումը դժվար էր։

Ագրիպ էֆենտի այդ օրը շատ սխալներ ըրավ, և ընկերը միշտ կը գանգատեր։ Զայրույթը աչքերուն մեջ էր, և խելքը Արուսյակի ու Նավարյանի խոսակցությանց կուտար, քան թե թղթին։ Տիրան էֆենտի ալ անդրադարձած էր Ագրիպ էֆենտիի այդ օրվան վերացականությանը։

Ազնվաշուք երիտասարդը անբացատրելի հակակրություն մը կ՚զգար գրագետին դեմ։ Միտքն ալ տագնապի մը մեջ էր. իրեն այնպես կուգար, թե այդ աչքերուն օր մը հանդիպած ըլլալու էր. բայց չէր կրնար գտնել թե ո՞ւր, ե՞րբ։

Նավարյան շատ բարձր էր և չէր կրնար այդ անձին դեմ թշնամական զգացում ունենալ, բայց ինքն ալ միտքը կը չարչրկեր. այդ աչքերն կյանքին մեջ օր մը իրեն դեմ ելած էին. բայց ո՞ւր, ե՞րբ։

Երկուքն ալ զուր տեղը մտքերնին չարչրկեցին։

Ցրտությամբ մը զիրար բարևեցին մեկնելու ատեններնին։ Ագրիպ էֆենտի Մեծ կղզին կը բնակեր, նավակով հոն անցավ։ Իսկ ճաշեն վերջ Տիրան էֆենտի, օր. Արուսյակ, Նավարյան պտույտի ելան. սեղանին վրա Սրբուհի հանըմի ներկայությանը բնավ չխոսեցան Ագրիպ էֆենտիի մասին։ Բայց դուրսը, խոսակցությունը քիչ մը երիտասարդին շուրջը դարձավ։

— Շիտակը երկուքնիդ ալ,— ըսավ Արուսյակ խնդալով,— շատ անգութ եղաք։

Ջ

Բերայի Հայ ընկերության մեջ երեք տարիե հետե կարևոր դիրք մը կը գրավեր Ագրիպ էֆենտի։ Խասգեղեն գաղթած էր Պետրոս Ագրիպպասյան անունով. օր մը ավելորդաբանություն համարելով մականունին «յան»-ը, այցեքարտերուն վրա փորագրել կուտար միայն Պ. Ագրիպպաս. ու նոր բարեկամները ավելի շիք կը գտնեին պարզապես Ագրիպ էֆենտի անվանել զինքը։ Հիմա Բերա այդ անունովը միայն ծանոթ. կամ հանրածանոթ էր։

Իսկ հայրը, Հովհաննես Ագրիպպասյան, տարիներու երկարատև շարքի մը մեջ ծալապատիկ նստած խանութի մը փեղկին ետև, երանության սահմանագլուխ գծած էր ավանդական պասմաճիությամբ քիչ շատ ստակ շահիլ ու ավելցնել և ընտանիքը երջանիկ ընել առատ-առատ ուտելիք տանելով։ Փառասիրության հորիզոնն ալ կ՚երկարաձգվեր մինչև Խասգեղի Թաղական խորհրդարանին դուռը. ու երբ ատենապետության կոչվեցավ, ա՛լ անկե ետքը մինչև մահվան օրը, ոևէ իղձ չկրցավ սպրդիլ սրտին մեջ։ Երջանկության իդեալի մը ծրագիրը ամբողջապես գործադրված էր. ալ ընելու ուրիշ բան չուներ, բայց եթե մեռնիլ, ու մեռավ։

Զավակը արդեն շատ նեղ գտնելով խանութին շրջանակը, հորը կենդանությանն իսկ լավագույն ասպարեզ համարած էր հանձնակատարի մը հետ ընկերակցություն ընել։ Երբ մեռավ հայրը, Պետրոս չափավոր գումար մը ժառանգեց և առանձին շարունակեց հանձնակատարությունը։ Քիչ մը բախտը դեպի իրեն առաջացավ, շատ մըն ալ ինք բախտին ոտքը գնաց «կաթին մեջ ջուրը առատ խառնելով»։ Խղճահարությունը իր զգացումներուն տկարագույնն էր։

Կորովի, եռանդուն, գործունյա, ալ իրեն անտանելի կը թվեր Խասգեղի խանութավայել կենցաղավարությունը։ Հաջողության հետ տենչերն ալ շատ առաջ գացած էին, ու կը տառապեր վայելումի ըղձանքներով, որոնք կը մնային անհագուրդ. երևակայության մեջ շատ ընդարձակած էր փառասիրության սահմանագլուխները։ Ու Բերայի մեջ էր, որ պիտի գտներ երևնալու, հաղթանակելու, վայելելու և առաջ վազելու ամեն դյուրություն։ Իրավ է, որ հոն մրցումը սաստիկ է. ամեն հաջողություն, ամեն տենչանք, հասնելու ամեն երազ հոն ժամադիր կ՚ըլլան ու կը ճակատամարտին։ Եվ սակայն հասնելու համար ինքն իր մեջը ուժ մը զգացողը եռանդագին կը դիմե վայելումներու կռվի այդ դաշտը։ Փոքր քաղքին մեջ մեծ երևնալու իմաստասիրությունը միայն շատ խեղճուկ ծույլ ուղեղներու համար հրապուրիչ երջանկություն է։ Ամեն լավ առարկա, կը մտածեր Ագրիպպասյան, ավելի ուշագրավ է մեծ ցուցահանդեսի մը մեջ։

ընկերակցությամբ մրցակիցներու, քան եթե մնար գյուղի մը կամ պզտիկ քաղաքի մը ցուցափեղկին ներքև։ Փայլերը փոխանցիկ են. իրարմե բան կ'առնեն, իրարու բան կուտան։ Ուրեմն երթանք Բերայի փայլերուն քով, ըսավ։ Ու ահա երեք տարի է, որ ինքն ալ փայլ մը եղած էր և ուրիշներուն փայլը կ'ավելցներ։

Ծրագները շուտ-շուտ իրականություն կ'ըլլային։

Հինավուրց ազնվապետականության բազմադարյան դղյակի մը մեծաշուք պատկառանքը տարածված կ'երևեր աչքերուն՝ Միսք փողոցի իր բնակարանին վրա, որուն տարեկան վարձքը սակայն միայն հարյուրքսան ոսկի էր։ Ու ձմռան գիշերները, երբ իր սալոնին մեջ աչքերը ժուռ կ'ածեր թղթախաղի շուրջը բոլորված բարձր անձնավորությանց, Մեհմետ-Ալի փաշա խանի պանքերներուն և անդրկամուրջյան ազնվապետական վաճառականներուն վրա, այդ ժամերուն զգացած հպարտությունը հավանորեն կը գերազանցեր Առաջին Նափոլեոնի գոհունակությունը, երբ իր թատրոնին մեջ հավաքված թագապսակ գլուխներուն ակնարկ մը կը նետեր։ Ընդունված էր Քլուպ Կոմերսիալ և կը հուսար ոչ շատ ուշ ներս մտնել Քլուպ Օրիանթալի դռներեն ու շրջագայիլ այն գորգերուն վրա, ուր կը կոխեին բարձրաստիճան անձերու ոտքերը։ Նոր թատրոնին մեջ իր օթյակն ուներ, ուր կը մտներ երկրորդ արարածի կեսին, հանրային ուշադրությունը րոպե մը դերասաններեն իր վրա փոխադրել տալով։ Իրիկուններ Բըթի-Շանի պարտեզին մեջ իր բացակայությունը շատ աչքի կը զարներ։ Իր այցելությունները պատվաբեր կը համարվեին. հաջորդ օրը տանտիրուհիները առիթ կը փնտրեին ուրիշներուն հասկցնելու, թե Աղրիպ էֆենտին առջի գիշեր իրենց էր։ Իրենց թերթին մեջ, իր անունին քով փոխանակ հինավուրց աստիճանազուրկ «Մեծ.» տիտղոսին՝ արդեն «Ազն.» հաջորդած էր, երբ հրահանգ ղրկած էր իր թերթերը այնուհետև Միսք փողոց՝ իր բնակարանը հանձնելու։ Ու երբ Բերայի խնամակալությունը, զինքը, վարչության հավանությամբ, իրեն անդամ կարգեց, այդ լուրը հաղորդված ատեն, «Ազն.»-ն ալ ամբողջացավ և դարձավ «ազնվաշուք»։ տիտղոսը մնաց, անկասկածելի, ազնվականության վավերական մագաղաթի արժեքն ուներ անոր համար, որուն հայրը կես դարե ավելի առաջ պարկերը Եմիշէն լեցուցած Հալըճը օղլու եղած էր։ Ալ ծայրահեղ պահպանողական էր։ Հովանին կը տարածեր հիվանդանոցի խնամակալության վրա։ Ամուսնալուծության սաստիկ հակառակորդ, կը հաշվեր, թե բարոյականությունը առաքինություն է. «ամեն ազգին համար բարոյականություն պետք է» կ'ըսեր միշտ։ Բարոյախոս թերթերը կը քաջալերեր մեկ երկու օրինակ դպրոցներու նվիրելով։

Ու բարթի՞ մըն էր։ Երբ մայրերն ու աղջիկները թեթև հառաչանքով մը բարթի մըն է կ'ըսեն անձի մը համար, ֆրանսերեն այդ միակ բառին մեջ կ'ամփոփեն փեսի, ամուսնի իդեալը։ Ագրիպ էֆենտի բարթի-ին մարմնացումն էր։ Իր կինը կյանքի վայելումներու ամեն միջոց իր տրամադրության ներքև պիտի ունենար։

Բայց Ագրիպ էֆենտի դժվարահաճ էր ամուսնական պայմաններու համար, ինքն ալ իր իդեալը ուներ։ Կառուցած շենքին ամբողջացումն ու պսակումը կինը պիտի ըլլար։ Տանը դուռը մեծ բացած էր իդեալ կինը դյուրությամբ առնելու համար։ Խնամի ազնվականին ելմտացույցը միշտ հավասարակշռության մեջ չէր. Ագրիպ էֆենտիի իրական աներևույթ հարստության մեջ կար բավական մեծկակ տարբերություն մը, զոր պիտի լեցներ կին-դրամագլուխը. Հարստությունը գեղեցկագույն հատկությունը պիտի ըլլար ապագա տիկին Ագրիպի։ Իսկ երկրորդ հատկությունը ազնվականությունը։ Նոր-ազնվականը երբեմն կը տառապեր իր ծագումին սկզբնական մեղքեն ամբողջապես մաքրված չըլլալուն կասկածովը։ Դաշնակցում մը հինավուրց ազնվականներու հետ, որոնց ծագումը կորսված է անհիշատակ ժամանակներու, քսան երեսուն տարիներու մառայլին մեջ, պիտի ըլլար մկրտությունը, որ զինքը պիտի մաքրեր ծննդական ամեն մեղքե։ Գոհունակությունը անթերի պիտի ըլլար այն օրը, երբ մահազդի մը վրա «Յավերժ սրտի զմահն» ծանուցանող մեծանուն գերդաստաններու շարքին մեջ իր անունն ալ առաջին տեղ մը փայլեր։ Այս տեղը պիտի շնորհեր իրեն ազնվականության շառավիղ կին մը։ Տարիքն ալ կենսական պայմաններուն մեջ էր, իր կնատենչ բնավորությունը գաղտնիք մը չէր, տարեց հարուստ-ազնվականի մը հետ ամուսնությունը պիտի նկատվեր աշխարհի աչքին իբր «հարկեցուցիչ պարագա» մը, ուստի և իր դրամական համբավը պիտի կրնար վնասվիլ։ Գեղեցկությունը ճաշակի խնդիր է, կ'ըսեր, ուրիշները դատաստանի մեջ չեն կրնար համաձայնվիլ։ Ուսումը արհամարհելի չէ. բայց ֆրանսերեն լեզվի ծանոթություն և դաշնակահարություն անոր տեղը կը բռնեն։ Հարուստ-ազնվական-մանկամարդ աղջիկը բնականաբար դաշնակահար ու լեզվագետ է։

Օր. Արուսյակ Սարաթյան իր շուրջն ու անձին վրա կը միացներ ոչ միայն Ագրիպ էֆենտիի բղձացած ամեն հատկությունները, այլ և կը գերազանցեր անոր մտատիպարը։

Թ

Պոլսո սակավաթիվ ընտանիքներեն էին Սարաթյանները, որոնց անունը փնտրելու է ոչ թե «նոր հարուստ»-ներու, այլ հիներու ցուցակա-

րին մէջ։ Սարաթոֆէն գաղթած էր ընտանիքին հիմնադիրը. վաճառականութիւնը զաւկէ զաւակ շարունակելով բաւական հարստացած էին։ Օրիորդ Սարաթեանի հայրը, վախճանած տարի մը առաջ, կը թողուր զաւկին ժառանգութիւն մը, որ առանց ամենափայլուն կոչուելու կրնար դասուիլ առաջնակարգ դրամ օժիտներու շարքին մէջ։ Փեսացու-ընտրելիները սկսած էին դարպասնին ընել օր. Սարաթեանի, որ բոլորովին իր սուգին անձնատուր, դեռ մինչեւ քանի մը օր առաջ եւ ոչ իսկ ուշադիր կ՚ըլլար իր շուրջը մղուած մրցումին։

Բայց, ուշադիր էր Սրբուհի Հանըմ՝ մայրը, որ բոլոր մայրերուն պէս, հարուստ թէ աղքատ, ամենէն սուրբ մտածութիւնը աղջկանը ամուսնութիւնը կը համարէ։ Հօր ու մօր կողմէ ամիրայի զաւակ, ամուսնացած պատուական մարդու մը հետ, այրի տիկին Սարաթեան կատարյալ տիպար մըն էր այն հին հայ կիներուն, որոնք իրենց վեհաշուք ծանրութեամբն ու գորովալիր սրտովը ընտանիքին ու ժողովուրդին պահպանման անխախտելի սիւնը եղան։ Բայց ինքն ալ իր նմաններուն պէս անկարող էր ըմբռնել հոգեկան նոր վիճակ մը։ Ինչ որ գոհացուցիչ եղած էր իրեն, մօրը, մեծ մօրը, կը կարծէր, թէ բաւական պէտք է համարուի զաւակին համար ալ։ Աղքատ կամ միջակ դասակարգի հայ մօրը համար մտատիպար ամուսինն այն է, որուն կնոջը «կռնակը տաք, փորը կուշտ» կը մնայ։ Ընդարձակելով տաքութեան եւ կշտութեան սահմանները, կ՚ունենանք հարուստ մօր իդեալ փեսացուն։ Այսպէս էր նաեւ Սրբուհի Հանըմ, որ համոզուած էր, թէ հարուստ աղջկան մը երջանիկ ըլլալու առաջին պայմանը հարուստ ամուսին մը ունենալն է։ Բայց խոստովանելու ենք, որ իր գաղափարները սովորականէն քիչ մը աւելի լայն էին։ Հարստութեան հետ ամուսնի մը երիտասարդութիւնը, ընկերային դիրքը, համբաւը, բարոյականը կարեւոր պայմաններ կը համարէր ընտանեկան երջանկութեան համար։

Սրբուհի Հանըմին Ագրիպ էֆենտիի նկատմամբ ցոյց տուած մասնաւոր հարգանքէն ակներեւ էր, թէ ամենէն աւելի անոր վրա համադրամարուած կը գտնէր մտատիպար փեսայուցի այդ բոլոր հատկութիւնները։ Պարզապէս «էֆէնտի» կ՚անուանէր զայն, առանց անունը տալու. հարգանք մը, զոր միայն եղբօրը, Տիրան էֆէնտիին կ՚ընծայէր։ Հյուրերէն ոչ մէկուն—բացի եպիսկոպոսէ— այնքան ընդառաջ կ՚երթար սենյակ մտած ատեն, որքան Ագրիպ էֆէնտիի, որուն մեկնած պահուն մինչեւ սենյակին դուռը անոր ընկերանալը իրեն պարտավորութիւնը կը համարէր։ Ու սիրահոժար, ժամերով պեզիկ կը խաղային միասին։ Թէ՛ Սրբուհի Հանըմ եւ թէ՛ Ագրիպ էֆէնտի առանց խօսք բացած ըլլալու հասկցած էին իրարու միտք ինչպէս երկու սիրահարներ։ Տարակոյս չկար, թէ երբ

Արուսյակին հորը սուգը վերջանար, առաջարկները պաշտոնապես պիտի ներկայանային։

Հալքի Սարաթյանի տունը երբ պՐինԳի սեղանին շուրջը բոլորվեցան շորսը, և Արուսյակ ու Նավարյան անդին կը խոսակցեին միայնակ, Ագրիպ էֆենտի անախորժ տպավորություն մը կ՛զգար, Արուսյակը արդեն իր նշանածը համարելով։ Իր անձին վրա ունեցած մեծ համարումին շնորհիվ, չէր ներեր ինքզինքին մտքեն իսկ անցնել, թե գրող մը որ և ոչ իսկ «ընկերային դիրք» ուներ, կրնար ուէ նշանակություն մը ունենալ։ «Նշանածը քիչ մը պատշաճության հսկառակ կը շարժեր» այսքան միայն։

Ոչ, միայն այսքան չէր։ Զամ-Իլիման երբ Արուսյակ աչքերը մեծատարած ծովուն վրա հառած կը խորասուզվեր մտածմանց մեջ, այդ րոպեներուն անոր սիրտը քննող մը պիտի զգար, թե այդ աղջիկը «փորը կուշտ, կռնակը տաք» պահելու իդեալեն շատ վեր կը բարձրանար։

Այդ սիրտը քննող մը կար, մերեղբայրը՝ Տիրան էֆենտի։

Արուսյակի սրտին ու մտքին վրա ո՛չ հայրը, ոչ մայրը, ո՛չ ոք եղած էր այնքան ազդեցիկ, որքան Տիրան էֆենտի։

Հիմա Գիսումի մոտ էր Տիրան էֆենտի. իր առանձին ամբողջ կարովին մեջ թեև, բայց կ՛ապրեր գրեթե առանձնացած կյանքով մը, բնության, գիրքերուն ու քրոջն և աղջկանը հետ միայն։ Խորտակված կյանք մըն էր, և արդեն խորտակվելու համար ստեղծված էր։ Իր ազնիվ հոգին, մեծ սիրտը, պատվաճանաչության հզոր զգացումը, շատ հաջողակ աշակիցներ չէին հանդիսացած իր բարձր տաղանդին՝ կյանքի մեջ հաջողելու համար։ Երբեմն կը նայեր իր երիտասարդության ընկերակիցներուն վրա ու կը ժպտար։ Շատ չափավոր անոնց տաղանդը, բայց շատ ավելի չափավոր պատվաճանաչության զգացումնին, ուստի որչափ ետ թողած էին զինքը հաջողության կրկեսին մեջ հեւհեւ արշավանքի առեն։

Քսան տարի առաջ կարեեր խոցված էր ու ալ չէր բուժված։ Արտակարգ պարագաներ չէին թույլատրած իրեն ամուսնանալ այն աղջկան հետ, որուն ծնունդը հայ ընկերության մեջ եղեռնական երևույթ մը կը համարվեր։

Շատ կանուխեն, դեռ դպրոցական տղա, սիրած էր բանաստեղծները, որոնց ձայնը հզոր արձագանք կը գտներ սրտին խորը։ Կյանքի մեջ միշտ երազուն մնաց. շատ անգամ վարագույր մը իր աչքերեն կը քողարկեր իրականությունը։ Կարելի է ըսել, թե այդ վերացական րոպեներուն մեջ միայն իր երջանկությունը կը գտներ մորֆինահարի մը պես մոռանալով ինչ որ շուրջն է, և անուրջներու աշխարհն ապրելով։

Իմաստասիրությունը ընդլայնած էր իր միտքը. ընդհանուր մարդկային մտքի հառաջադիմության հետևող, միշտ կը խորհեր, կը բաղդա-

տեր, կը քններ, կ'ընտրեր։ Որքան որ իր հոգին կը վսեմանար մարդասիրությամբ, այնքան ավելի համոզված ամեն ընկերային փտած նախապաշարումներուն, ամեն հնամոլ ավանդության, որոնք անհատին երջանկությունը կը զոհեն շինծու, եսական, շահախնդիր հաշիվներու, ոսկեզօծելով զանոնք «բարոյականի», պատվի», «ընկերական պահպանության» խարդախյալ նյութերով։

Քիչ էին իր բարեկամները, որոնք սրտին սրտակից, հոգիին հոգեկից, մեկտեղ կ'իմաստասիրեին, կը գրեին, կը քաշքշվեին։ Մահը զանոնք առած տարած էր, ու ինք տարիներե ի վեր միայն հիշատակներն ու գրքերը բարեկամ ուներ։

Բայց հասավ օր մը, որ ցնցվեցավ. կը տեսներ ծագումն երիտասարդության մը, որուն կազմությանը վրա իր միտքը հզորապես ներգործած էր։ Ինք քիչ մը ցանած էր հոս հոն խորհածները, զգացածները, և ահա վկա կ'ըլլար գրական իմաստասիրական նոր դպրոցի մը ծնունդին. անոր առաջին թոթովումներուն մեջ կը գուշակեր ապագան։ Ու երբ տեսավ, թե այդ երիտասարդությունը խորին ակնածանքով կը դավանի զինքն իր մեծ վարպետը, սփոփվեցավ։ Իր տրտմությունը չփարատեցավ, բայց զգաց, թե աշխարհիս վրա ամեն բան ունայնություն չէ։

Ու շատ տարիներե ի վեր ա՛լ իր բազմազեղուն սրտին սերը ամփոփված էր Արուսյակին վրա։ Կյանքին ամենեն տխուր ժամերուն մեջ այդ անմեղունակ ժպիտը րոպե մը կը փարատեր իր թախծությունը. կամաց-կամաց վարժած էր զրոսնուլ այդ փոքրիկին հետ, որուն շուրջը չարությունը դեռ չէր եկած իր ստվերը ձգելու։ Ինք սորվեցուց անոր թոթովել իր առաջին խոսքերը. ան ժամանցն էր։ Աղջիկը կը մեծնար, մորեղբորը զգացումներն ալ մեկտեղ. քերականը ինք տված անոր ձեռքը և հսկեց կրթությանը սկզբնավորությանը ու շարունակությանը։

Այդ ընտանիքին անդամները կապված էին իրարու հետ հարգանքով, սրտակցությամբ։ Սրբուհի հանըմ պարզապես կը պաշտեր իր «էֆենտի եղբայրը», որուն ամեն մեկ խոսքը պատգամներ էին իրեն համար։ Քեռայրը, Սարաթյան էֆենտին, խորին ակնածանք կը տածեր այդ բարձր ու քաղցրաբարո անձնավորության համար, որուն հետ կենակցիլը պատիվ մը կը համարեր իրեն։ Հայր ու մայր շատ ուրախ էին, որ իրենց միակ զավկին կրթությունը Տիրան էֆենտիի խնամքովը կը տրվեր։ Ինք որոշեց ուսուցիչները, ինք պատրաստեց կրթական ծրագիրը, որուն գործադրությանը կը հսկեր հոգածությամբ։ Ու աղջիկը երբ խելահաս եղավ, մորեղբայրը իր բոլոր փորձառությամբը կյանքին բանաստեղծությունը և իմաստասիրությունը իրենց խոսակցությանը նյութ կ'ըներ։ Տարիքին համեմատ ընտրելով կուտար կարդալու գիրքերը, որոնց մեջ բանաստեղծներ-

ըր առաջնակարգ տեղ մը կը գրավեին։ Իր համոզումն էր, թե սիրտ մը որչափ ավելի փափկանա, միտք մը որչափ ավելի նրբանա, հոգի մը որքան վեր բարձրանա գետնաքարշ իրականություններեն, այնքան ավելի կը մոտենա երազված երջանկության։ Ու այդ մթնոլորտին մեջ կ'ուզեր ապրեցնել քնարերգին։

Ու հիմա, երբ այդ գեղեցիկ աղջկանը հմայիչ դաշնակովը կը զմայլեր, երբ անոր հետ կը հրճվեր մեծ բանաստեղները կարդալով ու անոնց վրա խոսելով, երբ միասին կը քննեին կյանքի խնդիրները, Տիրան էֆենտի ինքնիրեն կ'ըսեր, թե աշխարհիս վրա բան մը ըրած է։ Ու իր սրտակիցը, իր մտերիմը, այն, որ բոլոր իր խեղճ բարեկամներուն տեղը կը բռներ, Արուսյակն էր։

Ցավ մը միայն ունեցած էր, Արուսյակը շատ սիրող չէր հայ գրականության, որուն մեջ, կ'ըսեր, հրաշք է, եթե պատահի սրտին զարնող բանի մը, մտքին խոսող նոր գաղափարի մը։ Մորեղբորը գրածներուն հավաքածոն զինքը միայն կը կապեր հայ գրականության հետ։ Բայց այդ ցավը ա՛լ չուներ։ Երկու տարիե ի վեր է Արուսյակ շատ ախորժակով կը կարդար հայ գրականության նոր արտադրությունները, որոնք իր «սրտին զարնող բան մը, մտքին խոսող նոր գաղափար մը ունեին»։

Նոր գրողներուն մեջ մորեղբորն ու իրեն համար ամենեն սիրելի անունը Նավարյանն էր։ Անոր բանաստեղծության մեջ նրբին տրտմություն մը կար, որ սրտի ալուցքներեն բխած կուգար, կը զարներ սրտերու։ Արձակ գրության մեջ խոհունությունը կը միացներ հեզնության, ու մինչև անգթության սահմանները կրնար հասնիլ։ Իսկ ընկերային իմաստասիրության գաղափարները իրենց ծայրահեղ հառաջադիմությամբ մինչև իսկ մտածել կուտային Տիրան էֆենտիին։

Այս տպավորության ներքև էր, որ հանդիպեցան Նավարյանին։

Ժ

Երկուքն ալ կը սիրեին իրար․ սրտով կապված էին, առանց դիմելու ավանդական հայտարարության։

Տարիներե ի վեր Արուսյակ կը գծեր մտքին մեջ պատկերն այն երիտասարդին, որուն պետքը սկսած էր զգալ։ Դաշնակին առջև, ընթերցումներուն ատեն, մտածությանցը մեջ անոր կը մնար երազում։ Իրեն համար կարծես ճշմարտություն մըն էր, թե իրավ ապրած է արդեն ուրիշ կյանքով մը, հոն, այդ աշխարհին մեջ, կենսակից եղած է երիտասարդի մը, որուն կարոտը կը քաշեր հիմա։ Եվ իր այդ իդեալն էր, որ աչքերուն առջև կը տեսներ։

Որքան կորովի, կռվող միտք ուներ Նավարյան, սիրտն ալ այնքան սիրող էր ու զգայուն։ Բարեկամական փոքր շրջանակի մը մեջ կ'անցներ կյանքը, անունը երկու տարվա մեջ թեև ամեն կողմ տարածված, բայց իր մղած մարտերու պահուն, իր հոգնությանց մեջ կ'զգար, թե իր սրտին համար մեծ բան մը կը պակսի։ Արուսյակն էր, որ հիմա կը լրացներ այդ պակասը։

Երկու ամիս է, որ զիրար գտած էին ու հիմա անհնարին էր իրենց օր մը անցընել առանց տեսնվելու։ Նավարյանի արձակուրդը լրացած էր, բայց ամեն իրիկուն կը վերադառնար Հալքի։ Առտուները կանուխ, դեռ արևը չբարձրացած, պտույտի կ'ելլեր եղևնիներու անտառը. հոն ծառի մը շուքին տակ նստած պիտի գտներ Արուսյակը գիրք մը քովը ու աչքերը ան ճամփուն վրա, ուսկից կուգար Նավարյան։ Քովե քով նստած, իրենց տեսակցությունը որքան սրտանց մտերմական, դրսեն ալ այնքան հարգական էր։ Հոն ժամ մը մեկտեղ կ'անցընեին, մինչև որ հասներ առաջին շոգենավին մեկնելու ատենը։ Նավարյան կ'իջներ Պոլիս, ու Արուսյակ, որուն տունը քիչ մը անդին էր, կ'երթար իր դաշնակին։

Տրտմության հետք մը չէր տեսնվեր այլևս երկուքին դեմքին վրա ալ։ Իրիկունները միշտ իրար Զամ-Իլիմանի *կը գտնեին, Տիրան էֆենտի միասին։ Ու լուսնյակ գիշերները նավակով շրջագայության մեջ կ'զգային անճառելի հաճույքը։*

Ագրիպ էֆենտիի քիչ մը անհաճո կը թվեր Նավարյանի կղզին համելը։ Շոգենավին մեջ, երբ իրարու հանդիպեին՝ բարևնին շատ պաշտոնական էր։ Նավարյան գլխարկը գրեթե աննշմարելի բարձրությամբ վեր կ'առներ, ու Ագրիպ էֆենտի ալ հազիվ թե մատները կը մոտեցներ քթին ծայրը։

Ամեն կիրակի Ագրիպ էֆենտի անվրեպ Հալքի կուգար. ալ ինքզինքը արդեն Սարաթյաններու տունեն կը համարեր։ Ընտանությունը շատցած էր, Տիրան էֆենտի և Արուսյակ չէին կարող ամեն կիրակի մինչև մութը առնել նստիլ զանիկա. մանավանդ որ կը տեսնեին, թե Սրբուհի հանըմի շատ հաճելի էր միայնակ պեզիկ *խաղալ էֆենտիին հետ։ Թեև այդ գլուխ գլխի մնալը Ագրիպ էֆենտիի համար ալ անախորժ չէր, բայց քիչ մը կը նեղանար զգալով թե Տիրան էֆենտիի և Արուսյակի մեկնումը հարգանքի պակաս մըն էր իրեն համար։*

Երբ կը մեկներ, ամեն ատեն դեմը կ'ելլեին Տիրան էֆենտի, Արուսյակ և Նավարյան։ Այս վերջինին անբաժանելի ընկերակցությունը ջղերուն կը դպչեր։ Քանի մը անգամ ալ լուր օրերը իրիկվան դեմ Հալքի ելլելով Զամ-Իլիմանն *եկած էր, երրորդությունը անվրեպ հոն կը գտներ։*

Չէ, համր կը փախցնեին. կարելի չէր, որ իր նշանածին անվանը վրա արատի մը ամենաթեթև բիծն իսկ մնար, ինք ծաղրելի չէր կրնար ըլլալ։ Բայց կ'զգար, թե դիտողություն մը ընելու պաշտոնական իրավունքը չուներ։ Ինչո՞ւ այլեւս սպասել։ Սարաթյանի մահվան տարին արդեն երեք ամիս էր որ լրացած էր, ուստի սուգի արգելքը վերցված։ Ու ըսենք նաև, որ միայն հաշիվները չէին մղեր զինքը դեպի Արուսյակը։ Հիմա սկսած էր բուռն իղձով փափաքիլ անոր համար։ Տենչանք, սեր, իրար խառնըված կը փրփուեին զենքը։ Ուզելու ժամը հասած էր, մանավանդ կը նշմարեր, թե Բերայի իր մրցակիցները սկսած էին հաճախ այցելել Սարաթյաններուն, ոմանք կիրակի, ոմանք լուր օրեր։

Կովանը գիտեր, թե պատրաստ էր, միայն պաշտոնական ձևակերպությունները կը մնային։ Շատ բնական էր, որ Արուսյակը մորմեն խընդրելու համար Տիրան էֆենտիի միջնորդությանը դիմելու էր։ Արուսյակի մորեղբայրը որքան ալ մեծ համակրություն չէր տածեր Ագրիպ էֆենտիի համար և գիտեր, թե չէր կրնար ըլլալ Արուսյակի արժանավոր ամուսինը, բայց և այնպես կ'զգար թե մորեղբոր մը իրավունքները սահմանափակ են. մերժողական կամ հաստատական պատասխան մը տալը մորն ու աղջկանը կը պատկաներ։ Հավատարմաբար քրոջը հաղորդեց Ագրիպ էֆենտիի առաջարկը։ Սրբուհի հանըմ կ'սպասեր այս ավետիսին, զայն լսելուն ուրախությունը շատ ակներև եղավ։ Տարակույս չուներ, թե եղբայրը իր հավանությունը արդեն տված էր այդ առաջարկին, որով կուգար զայն իրեն ներկայացնել։ Բայց և այնպես ներելի չէր համարեր իր «այոն» ըսել առանց նախապես «էֆենտի եղբորը» հավանությունն ստանալու։

— Հրամանքդ ի՞նչ կ'ըսես, էֆենտի։

— Շիտակը, Սրբուհի հանըմ, գիտես թե Արուսյակ տասնութ-տասնինը տարեկան է. խելքը գլուխը ծանր աղջիկ մըն է, իր դատողությանը վստահիլ կարելի է. պետք է իր կամքը հարցնել. ինք Ագրիպ էֆենտին շատ լավ կը ճանչնա, եթե հավանություն տա, չեմ կարծեր, որ հրամանքդ արգելք մը ունենաս։

— Ամենևին, ամենևին։

— Ես ալ ան ատեն ոևէ արգելքի պատճառ մը չեմ տեսներ։ Անոր համար դուն Արուսյակին խոսք բաց, նայե ինչ կ'ըսե, և անոր համեմատ պատասխանը կը հաղորդենք Ագրիպ էֆենտիին։

Մյուս օր ցորեկը, երբ մայր ու աղջիկ մինակ մնացին, Սրբուհի հանըմ բսավ աղջկանը.

— Արուսյակ, քեզի շատ աղեկ լուր մը ունիմ։

— Ի՞նչ, մամա։

— Ագրիպ էֆենտին քեզ կ՚ուզէ։

Արուսյակ դող ելավ, տժգունեցավ։

— Մամա,— ըսավ,— հորս տարին նոր լմնցավ. պիտի ելլեն ըսեն, թե անհամբերությամբ մահվանը կ՚սպասեի, որ կարգվիմ. շիտակը դեռ սիրտ չունիմ ուրախանալու, սա երկու ամիսը առանց հոգի անցնենք հոս, ձմեռը երբ վար իջնենք, կը մտածենք. անանկ չէ՞, մամա։

Մայր ու աղջիկ քիչ մըն ալ կարծիք փոխանակեցին անուշությամբ. մայրը համոզիչ գտավ աղջկանը պատասխանները, զոր հաղորդեց եղբորն ու անոր ալ կարծիքը հարցուց։ Տիրան էֆենտի գոհությամբ լսեց Արուսյակի պատասխանը, զոր մերժողական կը համարեր — ինչպես որ ալ արդեն կը հուսար — իրավունք տվավ աղջկանը։ Քանի մը օր ետքը Ագրիպ էֆենտիի հաղորդեց իրեն ըսվածը, որ էր ձմռան ձգել վերջնական կարգադրությունը։

— Շատ աղեկ, շատ աղեկ,— պատասխանեց Ագրիպ էֆենտի։ Բայց մեծ տարբերություն մը կար ներքին զգացումներուն և արտաքին արտահայտության միջև։ Իրեն այնպես երևցավ, թե աղջըկանը կողմե մերժողական մըն էր։ Առաջին անգամ ըլլալով կասկած ունեցավ, թե ան տղան գլխե կը հանե իր սիրածը, և Տիրան էֆենտի ալ դավակից է։

Ջայրույթը ծայրահեղ էր, բայց հաղթանակը տանելու համար ա՛լ հաստատ որոշումը տվավ։

ԺԱ

Այդ տարի խաչին Արմաշ գնաց Հաճի Քաճըմ — այս անունով կը հորջորջվեր Բերայի մեջ Ագրիպ էֆենտիի մայրը։ Երկանք օրով Երուսաղեմ ալ գացած էր, քանի մը անգամ ալ Արմաշ։ Ջավիթին փառքի օրերուն մեջ ուխտի մը երթալու տենչը ունէր։ Օրագիրները գրեցին, թե այդ տարին խաչը արտակարգ հանդիսավորությամբ պիտի տոնվի, մեծ բազմություն պիտի երթա. օդն ալ շատ զով ու գեղեցիկ էր։

Հոս շատ չենք ծանրանար այն ընդունելության վրա, որ եղավ Ագրիպ էֆենտիի մորը։ Բայց ըսե՞նք թե շատ գոհ չմնաց։ Իրմեն օր մը ետքը ուրիշ կին մըն ալ եկավ. կ՚երևար, թե կ՚սպասեին անոր գալուն, վասնզի լավագույն սենյակ մը հատկացվեցավ անոր։ Դիտեց նաև, որ այդ կինը գալուն պես սրբազանը անոր այցելության գնաց անմիջապես, ու իրեն ետքը եկավ. առջի օրը իրեն այդպիսի պատիվ մը չէր եղած։ Դիտեց նաև, որ բոլոր վարդապետները, ընծայացուները այդ կնոջ կ՚այցելեին. իրեն միայն մեկ, երկու ծանոթ վարդապետներ եկած էին։ Շատ

հետաքրքիր էր. Բերա անոր չէր հանդիպած, բայց իրեն այնպէս կու գար, թէ բոլորովին ալ իրեն անծանօթ չէր։ Տեղ մը տեսած ըլլալու էր։ Սակայն, ի՞նչպէս կ՚ըլլայ, որ ատանկ երեւելի կնիկ մը իրեն եկած չըլլայ։ Միայն թէ վրան գլուխը թէեւ շատ շնորհքով, թէեւ անոր շատ պատիվ կ՚ընէին, բայց այնքան քիպար չէր երեւնար։

Երբ սենյակը ելավ, քովը եկավ իր հին ծանօթ վարդապետ մը, բավական տարեց։

— Ճանըմ, հայր սուրբ, սա մեծ օտային հանըմը ո՞վ է։

— Իրավ որ, Հաճի հանըմ, ես ալ աղեկ մը չիդեմ. երկու օր է անոր համար իրարանցում կ՚ընէին. Գատըգեղցի է. Հարցուցի նէ ղազէթա գրողի մար է ըսին։

— Տէր ողորմյա ինձ աստված, սա ղազէթա գրողներն ո՞վ են քի անոնց մորը ատանկ բաներ կ՚ընեն։ Աս ալ լսված բան չէր։

— Ի՞նչ գիտնամ, Հաճի հանըմ, մեր նոր սրբազանը շատ ուսումնական է, հայ սուրբնիս ալ շատ կարդացող է. հիներուն չեն, իրենք ալ շատ կը գրեն, հելպեթ տէ քի գրողներուն ալ շատ պատիվ պիտի ընեն։ «Նման ղնմանք յուր սիրե» կ՚ըսեն սուրբ ավետարանը։

— Էնֆիե մը կ՚առնե՞ս։

— Է, տո՛ւր նայիմ։

— Է, մնաս բարով Հաճի հանըմ։

— Երթաս բարով, հայր սուրբ։

— Նորեն կուգամ։

— Հրամմեցեք։

«Ղազեթաճիին» մորն ալ կը թվեր, թէ այդ կինը, որ ուշադիր իրեն կը նայեր, տեսած ըլլալու էր, բայց միտքը չէր իգար։ Ան օրը շատ մտածեց։

— Քա հա՛, ա՛ն ըլլալու է, մեղա՜ ըսավ ինքնիրեն։ Միտքըս չի գար մեյեր, ալ լմնցեր եմ. ցնդեր եմ։ Ի՞նչ ընեմ. քանի տարի կա քի չեմ տեսեր։

Ու միտքը բերավ այն լացի օրերը, երբ զինքը վռնտած էին իրենց տունեն։

— Աստծու գործը նայե. հիմա ինծի անկե ավելի պատիվ կ՚ընեն. աստված ըրավ քի ես եկա։

Ամբողջ ատ գիշերը դրավ վերցուց, թէ ինքզինքը մեկ մը ցույց տա՞, թէ ոչ։ Հաստատ որոշում մը չէր տված, բայց այնքան պատիվ վայելելե հետո անգամ մը անոր աչքին երեւնալու տենչը անզուսպ էր։ Դեմ առ դեմ եկան եկեղեցիեն ելած ժամանակնին։ Մոտեցավ Հաճի հանըմին, որ իրեն կը նայեր.

— Բարև, Հաճի տուտու։

Այդ «տուտուն» անախորժ եկավ, շատ անախորժ Հաճի Հանըմին. ու ակներև սրտնեղությամբ մը ըսավ.

— Աստծու բարին. ափ կ'ընես, քեզ չճանչցա։

— Էյ, գիյաճ չունի, ես ալ քեզի մեկեն ի մեկ միտքս չբերի. շատ տարի է իրար չենք տեսած։ Ատենոք շատ կուգայի կ'երթայի ձեզի։

— Կայնե նայիմ...

— Միտքդ չի՞ գար... ըսեմ... Բուբուլ կ'ըսվիմ, Գևորգ աղային կնիկն եմ, Խասգեղ...

— Քա, դո՞ւն ես, աս շա՜տ փոխվեր ես, ամա տաճա կենճցեր ես, ո՞ւր ես հիմա, ի՞նչ կ'ընես, ալ չե՞ս բանիր։

— Չէ, աստված չընե, գլուխս շատ պաներ եկավ, ամա հիմակ բեէֆ ռաճաք եմ. տղաս ինծի վարդի պես կը պահե. աստված մեկ օրը հազար ընե։

— Ո՞ր տղադ, աս հոգեզավակ մը ունեիր նե ա՞ն...

— Ի՞նչ հոգեզավակ, աստված ամենուն ալ անանկ բարի զավակ տա։ Մենք հիմա Խասգեղ ենք, բեէֆ աղվոր ֆիպարի տեղ է. տահա Խասգե՞ղ եք, էրիկդ ո՞ղջ է, տղադ ի՞նչ կ'ընե, խանումը կերթա՞... կար-գեցի՞ր... փարալը աղջիկ առի՞ր։

Ամեն մեկ հարցում զամի պես կը մխվեր Հաճի Հանըմի սիրտը։

— Մենք հիմա Խասգեղ չենք,— ըսավ գոռոզությամբ,— մեզի ալ չի վայելեր հոն նստիլ։ Էֆենտիին մեռնելեն ի վեր Պեյօղլու ենք. Պետրոս էնֆենտին շատ մեծ է։ Էրիկդ ի՞նչ կընե, ո՞ղջ է, խայխնություն կընե՞ տահա։

— Քա, մեղա՜, մեղա՜, ան պաները կլխնուս ֆի եկավ ճե Օրթագեղ կացինք. զավալլը մարդ խեղդվեցավ... ա՜խ, ա՜խ... ի՜նչ է նե, ասծու կամքն է, ասված հիմա անանկ տվավ ֆի լայըխ չէի...

Այդ միջոցին երկու վարդապետ եկան ու մեր հին ծանոթ Բուբուլ տուտուին.

— Խաթուն մարիկ, խաթուն մարիկ, եկուր հրամանքդ պտտցընենք ամեն տեղ, ըսելով հրավիրեցին։

— Է, ա՜ֆ կ'ընես, Հաճի տուտու, մնաս բարով, հայր սուրբները շատ պատիվներ կ'ընեն, նորեն ինշալլաճ կը տեսնվինք։

Ու գնաց։ Չէ՜, ալ նորեն տեսնվելու պետք չկար։ Քանի տարվան դառնությունը այդ օրը դուրս տված էր։ Ջինքը տունեն վռնտող կնոջ աչ-քին այնքան մեծ երևցած էր, ու ինք, նախկին ճանըմը, այնքան աննշան իր քով։ Այսքանը կը բավեր։

ԺԹ

Արմաշեն վերադարձեն ետքը իրիկուն մը սեղանին վրա մայր ու տղա երբ մինակ էին, Հաճի հանըմ ըսավ.

— Պետրոս էֆենտի, գիտե՞ս Արմաշ որու հանդիպեցա։

— Որո՞ւ

— Սա ո՞ւր է, չիտեմ, միտքդ կուգա՞, պզտիկ էիր նէ խասգեղ խայբխճի մը կար, հոգեզավակ մը ուներ, մարն ալ մեր չամաշրճին էր։

— Միտքս չի գար։

— Տէր ողորմյա ֆի միտդ չի գար. ինը տասը տարու էիր. ճանըմ ո՛ւր է, օր մը աս բինը գրիչը աչքդ նետեց ու քիչ մնաց պիտի հաներ. լուսահոգի հարդ ալ անխտար բաքքըրտը ըրավ, նշանն ալ տարիներով մնաց. բինին անունն ալ Մովսես էր. զեմպիլով ժամուն դուռը կախած էին ու լուսահոգի հարդ ազատեց, ապրեցուց,— բարով խերով չընեն— վարրժապետնիդ ալ Պաղտասարն էր. ան ինչ օր էր լալով պոռալով վրանիս եկար նէ։

— Էյ ի՞նչ է եղեր։

— Իշտե ան բինին մորը՝ տահա ողջ է եղեր, Արմաշ հանդիպեցա, չը խպնեցավ ու ելավ քովս եկավ, քիթեն մեկը իյնա նե տասը փարշա կ՚ըլլա։

— Ինչո՞ւ

— Ի՞նչ գիտնամ. սրբազաննիդ ալ բէֆ երես տվավ. սեպե ֆի ինծի մարդու տեղ չդրին, պատիվը ատանկներուն է։

— Էյ սեպե՞պը:

— Բինը ղազեթաճի է եղեր, խաբր ունի եղեր։

— Ղազեթաճի՞:

— Հա՛, ճանըմ:

— Ի՞նչ ղազեթաճի;

— Ի՞նչ գիտնամ. Ղատիգեզ կը կենան եղեր. ալ երկան-բարակ հարցուփորձ չպիտի ընեի յա: Ամա տեսնելու բան չէր. շալըմ մը, թավուր մը ֆի: Իմ չըրածս ինք ըրավ։ «Ետքեն տեսնող» պիտի չպիտի ըսեի խնդայի պիտի ամա, ան ալ չէ. ինչ է տեսեր ֆի. վելճասըլ ղազեթաճիի մը բարշա է տղան։

Մայրը պատմությունը վերջացնելե ի վեր Ագրիպ էֆենտի արմունկները սեղանին կռթնցուցած, ճակատը երկու ափերուն մեջ կը մտածեր։ Ինչպես տեսակ մը մտակորույս, որուն կը ներկայացնեն իր սիրելին, կը շարշրվի գտնելու համար իր հիշողությունը, այնպես ալ Ագրիպ էֆենտի իր հիշողությունը կ՚ամփոփեր։ Մայրը սեղանեն ելած էր ու ինք նստած

սուրճին կ'սպասեր։ Կտոր-կտոր այդ հին անցյալը կը ջանար քովեքով բերել։ Այն աչքերը, որուն հետքերը չորս ամիսե ի վեր կը փնտրեր, իրեն այնպես կուգար, թե սխալած էր գտնելու։ Մտածելով, մտածելով վերակազմեց այն օրվան հիշատակը։ Այո՛, գրիչը չար տղա մը երեսին նետած էր, տուն վազելը, վարժապետին մյուս օրը այդ տղան գրասեղանին վրայեն քաշկռտելով հանելը, ականջներեն բռնելը, իր ու ընկերներուն առաջ «գիծ, բիծ» կանչելը, այդ ամենը սկսավ կամաց-կամաց հիշել, տասը տարվան տղու մը հիշողության բոլոր ուժովը։ Ու այդ աչքերուն և Հալքի տեսած աչքերուն մեջ նույնություն մը կը գտներ, կը խաբվե՞ր արդյոք։ Ա՜խ թե ճիշտ ըլլար։

Մյուս օրը կանուխ Աքրիմ էֆենդիի գրագիրը Գատըգյուղ երթալով Մխիթարին բարևներ կը տաներ ու մանրամասն տեղեկություններ կը հաղորդեր Նավարյանի մասին։ Գատըգեղցի՞ էր, դրսե՞ն եկած էր, ի՞նչ էր։ Հայրը ո՞վ էր։ Մխիթարը քիթին տակեն կը խնդար, աղջիկ տալու խնդիր կա՞ր, բայց գոհացուցիչ պատասխան մը չառներ։ Նավարյան քանի մը տարի է Գատըգեղ եկած էր Օրթագեղեն. վրան բան մը չէր լսված. լրագիրներուն մեջ անունը ծանոթ է. եվրոպական ընկերության մեջ ալ պաշտոն ուներ. գիտցածը այսքան էր։

Գատըգեղեն վերադարձին գրագիրը էֆենդիին հրամանով կառք մը կը նստեր և շունչը Օրթագեղ կ'առներ, շիտակ դպրոցը։ Գտավ դպրոցին կառավարիչը, որ շատ տարիներե ի վեր պաշտոն կը վարեր, իրեն ալ ծանոթ էր։ Առանց երկարաբանելու, ու հարցափորձներ ընելով, թե արդյոք Գատըգեղ նստող Նավարյանը, որ լրագիրներուն մեջ ալ կը գրեր, Օրթագեղ եղա՞ծ է, դպրոց եկա՞ծ է։

— Տեր ողորմյա քեզ, Օրթագեղ եկած է, հոս մեծցած է նե, շիտակը աղեկ ալ տղա, երախտապարտ, մեզի չի մոռնար։ Հոստեղ եկավ նե Խայըրխճյան կը կոչվեր. խեղճին հորը անունն ալ Գևորգ էր, տասնյոթը-տասնութը տարի առաջ, աղեկ մը չեմ հիշեր, ծովը խեղդվեցավ ...յանց ողորմածիկը գիտցած տեղնուցած տանեն։ Խեղճին մայրը ինչե՞ր քաշեց. բեն-ճիին տակը, ամբողջ որբերով մեծցուց տղան, բայց հիմա ալ շատ աղեկ է, վարձատրված է։ Այստեղ Խայըրխճյան չէր ըլլար, բանեցի Նավարկյան ըրի, գաղղիացի վարժապետն ալ օր մը լեզուն չէր դարձներ Նավարյան կարդացեր է անունը։ Անկե վերջը մնաց Նավարյան։

Ով այս ամենը կը պատմեր խնդալով, իբր հին բարեկամի մը հիշատակը։

— Կարգվելու խնդիր կա, անանկ չէ՞։ Աղջիկ տալու շիտակը մի՛ վարանիք, աղեկ տղա է։

— Ո՞ւր մնացի ենք։

— Շիտակը չգիտեմ. Պալատի՞նն է, Տեններե՞ն է. Հակոբ աղան գիտնալու է։

Տեսակցությունը կը կատարվեր Մխիթար Հակոբ աղային գինետունը, ինքն ալ հոն էր։ Կառավարիչը Ագրիպ էֆենտիին գրագրին հետ գնաց՝ քովը, ծանոթացուց։

— Հա՛, սա Մովսեսը, աղեկ գիտեմ, Խասգեղցին եկած էր խնդիրին համար։

Գրագիրը շնորհակալ ալ ըլլալով մեկնեցավ։

Դեռ ատեն կար. Խասգեղ ալ կրնար երթալ։ Էֆենտին զինքը դրկեց շիտակ ավագերեցին, որ իրենց ալ տան տերտերն էր դեռ։

Տերունի ավագերեցին հիշողությունը տեղն էր։ Այո, ժամուն դռնեն կախված տղան. ծանուցումը ինք ըրած էր. Նավավար մը որդեգրած էր. անունը միտքը չէր գար։

— Գևորգ։

— Աստանկ ըլլալու է։ Տղուն անունն ալ Մովսես դրի, Մովսեսի Փարավոնի աղջկան ձեռքովը Նեղոսի ջրերեն ազատված ըլլալուն ի հիշատակ։ Քյուրքճյին մեջ ալ ըստ օրենի արձանագրեցինք «Որդի եկեղեցվո», ինչ ընենք, գտնված տղա է, ուրիշ կերպ չըլլար։ Ետքը երան գացին. ո՞ւր գացին չիյտեմ։— Էյ էֆենտին նայինք, ինչպե՞ս է, աղե՞կ է. Հանքի հանը՞մս։ Ես Զատկի, Ծնունդի երբեք չեմ մոռնար, բայց իրենք օր մը բենեզզուր չեն ըներ իրենց գեղը գալու։ Ինչ է նե թող ողջություն ըլլատե։— Հատուկ ողջույններ կ՚ընեմ։

Ագրիպ էֆենտի անձկությամբ կ՚սպասեր. ժամը տասներկուքն էր, երբ գրագիրը եկավ։ Խասգեղ լսածները ալ պատմեց։

— Չէ՛, ալ տարակույս չկար։ Նավարյան ու Խասգեղի եկեղեցիին դուռը կախված բերքը միևնույնն էին։

— Ձեռքես ազատելիք չունիս անդարձելական շուն,— ըսավ ինքիրեն. ու գոհ, ուրախ սրտով տուն գնաց։

Երբ Ագրիպ էֆենտի կատարելապես համոզվեցավ Նավարյանի ծագման մասին ստացած տեղեկությանց ստուգությանը, իր քովը հրավիրեց խմբագիր մը, որուն Նավարյանի և անոր գաղափարակից ընկերներու խմբին դեմ ունեցած ատելության չափը քաջածանոթ էր իրեն։ Ամեն բան պատմեց, խնդրելով միայն, որ հոդվածը հրատարակե այն օրը, երբ ինք իմաց տա effect-ն ավելի ազդու ընելու համար։

Այդ հոդվածը չենք արտատպեր, կարճ գաղափար մը տանք։ Հոդվածագիրը գետնե գետին կը զարներ «Նորելուկ ակնարկային գրիչները, որոնց մասին մինչև հիմա ամենայն միամտությամբ կը կարծվեր, թե

միայն թեթևամիտ զոլայականներ են, սակայն անժխտելի ապացույցներ այժմս կը հաստատեն, թե հանդուգն շահախնդիրներ են, որք մեր տոհմային ավանդական պարկեշտության և ընտանեկան սրբության ձեռնամուխ լինել կը ժպրհին, որպեսզի յուրյանց արատավոր կյանքը վավերացնելու հաջողին, վասնզի ամենայն իրավամբ և արդարությամբ պարտին ցմիշտ զրկյալ մնալ մարդկային պարկեշտ ընկերության մեջ երևալու իրավունքեն»։ Հետո կը հարցներ, թե ուսկի՞ց կուգան այդ ինքնակոչ մարդասերները. հա՞յ են, հո՞ւյն, թե՞ հրեա։ Հանելուկը ոչ ոք կրնար լուծել և ոչ իսկ իրենք, ու քիչ մը քողարկյալ, բայց բավական թափանցիկ բացատրություններով կը ներկայացներ Նավարյանի կենսագրությունը, սև գույներով, հետամուտ ըլլալով անոր խաղաղ եկեղեցիին դռնեն մինչև Գատըգյուղ։ Հոդվածը կը վերջանար բացականչությամբ. «Երբ այդ լրբենիները խառնեն իրենց հիշողությունը, հոն պիտի գտնեն անջնջելի տպավորություն մը։ Օր մը Ներսիսյան վարժարանին մեջ ազնըվականության շառավիղ մը, որ ի տղա տիոց անտի պատվո սուրբ զգացմամբ վառված էր, կը վռնտեր զիրենք ընկերակցութենեն «կորիր ապօրեն» գոչելով. հիմա ամբողջ ազգը պիտի գոչե՝ կորե՛ք, կորե՛ք ու ձեր անպատիվ կյանքը մի՛ պարզեք մեր քույրերուն և աղջիկներուն անարատ աչքերուն առջև իբր քաջալերիչ օրինակ մը»։

ԺԳ

Հոկտեմբերի մեջ Սարաթյանները վերադարձած էին Բերա։ Հո՛ն Նավարյան ալ վարձած էր սենյակ մը՝ «ծովը գեշ եղած օրերը» Գատըգյուղ չկրնալ երթալուն պատահականության համար։ Բերայի ընկերությունը սկսած էր իր սովորական կյանքը.— Սրբուհի հանըմ ընդունելության օր որոշած էր առջի տարիներուն պես երկուշաբթին։ Նավարյան հրավիրվեցավ Տիրան էֆենտիեն ամեն երկուշաբթի գիշեր այցելել։

Կղզիեն իջնելեն ի վեր երկու սիրահարները իրար չէին տեսած։ Առաջին հանդիպումնին հոկտեմբերի ընդունելության առաջին գիշերը տեղի պիտի ունենար։ Ամբողջ այդ օրը Նավարյան տենդոտ էր, արտակարգ սրտնեղությամբ կ՚սպասեր գիշերվան, որ չէր հասներ։ Տագնապալից վիճակին մեջ չբացավ իսկ այն օրվան թերթերը։ Իրիկունը Բերա ելավ, քիչ մը ճաշեց, արդուզարդն ըրավ և գնաց Սարաթյաններու տունը, ուր առաջին անգամ առիթ պիտի ունենար ներկայանալու ճայ-լայֆին, որոնք իր հեգնությանց ու մտրակումներուն գլխավոր թիրախներն էին։

Երբ ընդունելության սրահը պիտի մտներ, դռան առջև հանդիպեցավ Արուսյակի, որ գունատ, զայրույթի գունատությամբ, դողդողացող ձեռ-

քով սեղմեց Նավարյանի ձեռքը։ Երիտասարդը, որ քիչ մը ավելի խանգի կ'սպասեր, երկարատև բացակայությունե մը հետո, կոտրված մնաց։

— Անհանգի՞ստ եք,— հարցուց ցած ձայնով։

— Ոչի՛նչ բան։

Աչքերը սակայն կ'ըսեին, թե բան մը կար, ակներև նեղությամբ մըն էր, որ հյուրին հետ սրահը մտավ։ Սրբուհի հանըմ, որուն մոտեցավ Նավարյան, հայտնի ցրտությամբ սեղմեց ձեռքը. Տիրան էֆենտի անխռով հարգանքով ընդունելություն ըրավ. ներկա եղողները իրարու ակնարկներ կուտային և մինչև իսկ Նավարյան լսեց, որ կիներեն ոմանք կ'ըսեին արհամարհական շեշտով մը.

— Ա՞ս է։

Միայն Ագրիպ էֆենտի, անսովոր զվարթությամբ մը իրեն մոտեցած էր, որպիսությունը հարցուցած էր.

— Ա՛լ իրար կորսնցուցինք, Նավարյան էֆենտի,— ըսավ բարեկամական շեշտով մը։

Եվ հինգ վայրկյանի չափ ոտքի վրա իրարու հետ խոսեցան։ Տիրան էֆենտիի աչքին զարկավ այս նոր սիրալիր վարմունքը, ու մտքեն ըսավ, թե այդ աղտոտ գործը անորն էր։ Նույն կասկածն ունեցավ նաև Արուսյակ։

Ագրիպ էֆենտի, երբ բաժնեցավ Նավարյանեն, իր բարեկամներեն ոմանց ըսավ, թե «չէ տեսած, չէ նե չէր գար—բայց հիմա աղվոր խաղ մը կ'ընենք»։

Կես ժամ ետքը թղթախաղի սեղանները սկսան պատրաստվիլ։ Նավարյան, որ չէր խաղար, առանձին պիտի մնար սակավաթիվ ընկերներու հետ։ Սրահին մեջեն դուռ մը կը տաներ դաշնակին սենյակը, ուր կը հավաքվեին առանց թուղթի զբոսնող երիտասարդներն ու երիտասարդուհիները, որոնք սակայն բազմաթիվ չէին։ Քիչ մը առաջ հոն մտած էր Ագրիպ էֆենտի, երբ թղթախաղի պատրաստությունք կը տեսնվեին։ Գըրպանեն լրագիր մը առած կը կարդար, իբր թե սպասելով մեկուն գալուն։ Սպասածը ներս մտավ, Նավարյանը, որուն ետևեն անմիջապես Ագրիպ էֆենտիի թղթի ընկերը ներս մտնելով հրավիրեց զինքը չսպասեցնել զիրենք։ Ագրիպ էֆենտի սրահը մտավ, բայց անճարաբար լրագիրը դաշնակին վրա մոռցավ։

Նավարյան մինակ էր. անձկությամբ կը սպասեր, որ Արուսյակ կարգադրությունները լմնցնելով գա։ Մեքենաբար ձեռքը երկնցուց ձգված օրագրին և լուրերուն վրա աչք մը նետելե հետո սկսավ կարդալ խմբագրականը։ Քանի կը կարդար, կ'այլափոխվեր։ Կարդացածը կրկին-կրկին կը՝կարդար. երկրաշարժի առհելի ցնցումը զգացողի ու փլուզումի ներքև

մնացողի մը տպավորություն ունեցած էր։ Թերթը վար ձգեց, չորս կողմը նայեցավ. մարդ չկար։ Սենյակը երկրորդ դուռ մըն ալ ուներ, ինքզինքը անկե դուրս նետեց։ Այդ րոպեին Արուսյակ սրահեն դուրս կ'ելլեր. տեսնելով Նավարյանին գույնը, սարսափահար մնաց, բայց չկրցավ բերանը բանալ բառ մը արտասանել. այր և կին մը սանդուղեն վեր ելած իր առջին էին, զանոնք ընդունեց ու երբ սրահը կ'առաջնորդեր զանոնք, լսեց Նավարյանի սանդուղներեն վար իջնելը։ Զգաց, թե իր սրտին վրա կը կոխկռտեր։

ԺԴ

Հիմա ա՛լ Միջերկրականին բացերն էր **Թաոռմինան**:

Լայնարձակ ծովուն վրա, աշնանային մեղմաշունչ հովին փայփայանքներեն հրճվալիր, Նավարյան երազուն ու խոհուն կ'զգար, թե ժամե ժամ սիրտը կը լայննար, կը լայննար ծովուն անհունության հետ ու միտքը կը սավառներ գետնամած պզտիկություններեն շատ վեր։

Դեռ չորս օր միայն կը բաժնեին զինքը ցավերու այն գիշերեն, ուր ամոթահար փախած էր Սարաթյաններու տունեն, և այդ ժամերը կը ներկայանային աչքին առջև աղոտ հիշատակի մը երևույթովը։ Այնքան ճշմարիտ է, թե անցյալն ու ներկան իրարմե բաժնող մեծ անջրպետը ժամանակեն ավելի միտքն է։

Ինքզինքը գտած կը խոհեր։ Մի՞թե մտնելու չէր հեգնական ժպիտը շրթներուն վրա այն սրահը, ուր կը ներկայանար հասարակ մարդկության մանրանկարը, և անխռով պաղարյունությամբը ցույց տալու. չէ՞ր իր խորին արհամարհանքը ընկերային կեղծավորության դեմ։ Ինչ փույթ մարդու մը, որ իր ծնելեն առաջ տերտեր մը էրիկ մարդու մը ու կնոջ մը վրա քանի մը աղոթք ըրած ըլլա կամ ոչ։

Չէ՛, ամոթահար կը մնար ինքը իր առջևը։ Հուշակել սկզբունքներ ու օր մը երբ առիթը կը ներկայանա գործնապես ցույց տալ համոզումներու ուժը. սարսափահար ձգել փախչիլ նախապաշարյալ ողորմելիի մը պես, մի՞թե հաստատել չէր պաշտպանած դատին տկարությունը։ Չէ՛, դավաճանած էր ընկերային խնդիրներու մեջ իր ունեցած դավանանքներուն դեմ։

Ծովուն ու երկինքին հետ մինակ մնացած, հետզհետե կը վերլուծեր փախուստի րոպեին բնազդական զգացումները։ Այնքա՜ն պետք ուներ ինքն իր էությունը լավ ճանչնալու։ Կյանքին մեջ դառնապես վշտացած էր կամ հրճված միայն և միմիայն ինքն իր անձին համար տված վկայություններովը։ Համոզված էր, իբր հրապարակագիր, թե ուրիշներու ապ-

դեցիկ առաջնորդ կրնա ըլլալ միայն ան, որ խիստ ինքնադատ մըն է և իր խղճին վկայութենեն զատ ուրիշ ոևէ ջատագովության կամ պարտավանքի հանդեպ կը մնա անտարբեր։ Հիմա ամեն ատենե ավելի պետք կ'զգար ինքն իր աչքին առջև արդարանալու, եթե կրնար։

Իր զգացումներուն քննութենեն համոզված, թե սերը մեծ տկարություն է կամքի ու համոզումի տեր երիտասարդին համար, երբ սիրուհին իրեն չափ զորեղ, հաստատամիտ չէ, տոգորված միևնույն գաղափարներով։ Արուսյակի սերն էր, որ այդ հոգեկան տագնապի րոպեին զինքը տկարացուցած էր։ Երբ դաշնակին առջև կը կարդար այդ հոդվածը, բնազդը, արյունի հետ բերված զգացումը իրեն կը՛սեին, թե Արուսյակ իրեն համար ամոթահար էր. հարվածը անդարմանելի էր, ուստի պետք էր հաղթվիլ։ Կրնար այնքան լավատես ըլլալ՝ հուսալու չափ, որ այդ անմեղունակ աղջիկը զոհե իր ընկերային կրոնքը երիտասարդի մը համար, որուն հետ ոչ մեկ անքակտելի կապ մը կը միացներ զինքը։ Այո՛, գիտեր թե Արուսյակ կը սիրեր զինքը, վասնզի անոր աչքին գեղեցիկ երևցած էր ու մեծ, բայց ա՛լ հիմա ճակտին վրա երևան եկած արատ մը զինքը պզտիկ ու տգեղ կ'երևցներ։ Այդ տգեղությունը իր հանցանքովը չէր անշուշտ, բայց մի՞թե հանցավոր պիտի ըլլար, եթե բնությունը զինքը ժառանգական ախտով մը աշխարհ նետած ըլլար։ Մարմնական ախտե շատ ավելի զզվելի չէ՞ ընկերային կեղծուպատիր ավանդության դեմ մեղանչում մը՝ իր գոյությունը կեղծիքի վրա հիմնած ընկերության մը համար։ Իր հանցանքն էր ուրեմն ոչ-գաղափարակից աղջիկ մը սիրած ըլլալը։

Այս մտածությունները հետզհետե կը ներկայանային իր մտքին, երբ կը վերլուծեր րոպեական բնազդը ու անկե ետքը ունեցած զգացումները։ Քաջ կը համոզվեր, թե սերը զինքը տկարցուցած էր։ Անձնատուր եղած էր բնության, բայց և այնպես դավանանքներու դեմ ուրացումը կը մնար միշտ ուրացումն։ Շատ լավատես եղած էր կամքի ու մտքի զորության վրա, և ահա բնությունը պատժած էր զինքը։

Եվ սակայն այդ պատժի մեջ իսկ կը գտներ համոզումի և կամքի տեր անձի մը գերազանցության ապացույցը։ Ոչ ապաքեն ա՛լ հուսահատ փախստական մը չէր, այլ կռվելու համար ամեն ժամանակե ավելի տրամադիր։ Նախապաշարման դեմ մղած պատերազմի մեջ կորսնցուցած էր ճակատամարտ մը. պատահար մըն էր, զոր պիտի դարմաներ, կորովամտությամբ առաջ մղելով մարտը, հաղթանակելու հաստատ որոշմամբ։

Բայց և այնպես մտքեն չէր անցներ ետ դառնալ։ Մեկ գիշերը ավելի փորձառու ըրած էր զինքը, քան թե ամբողջ կյանքը։ Կ'զգար, թե խոհեմ ըլլալն ալ քաջություն մըն է, շատ անգամ վատությունը կը կայանա

անխոհեմ ըլլալու մեջ։ Կը կասկածեր իր խեղճ սրտին վրա, որուն բաբախումներն մինչև այն ատեն մարդասիրական եղած էին միայն։ Ուր երբ առաջին անգամ տրոփեց կնոջ մը համար ալ, ինքն ալ նմանեցավ փոթորկին բռնված լողալ չգիտցող անճրկածի մը։ Կը վախնար այդ սրտեն, ու իրիկունները, երբ մթնշաղին մեջ աննկարագրելի տրտմություն մը կը պատեր հոգին, այդ րոպեներուն կ՚զգար, թե ժամանակն ու հեռավորությունը պետք էր մտքին ու համոզումին աջակցելը հանդիսանային սրտամարտին մեջ։

ԺԵ

Առտու մը Տիրան էֆենտի ինքն ալ կանուխ ելած էր, գնաց եղևնիներու անտառը, ուր ծառի մը շուքին տակ Արուսյակ ամեն առտու նստած կը կարդար։ Ձեռքը կար փոքրիկ սիրուն գիրք մը, զոր ինք երբեք չէր տեսած։

— Ի՞նչ է սա, նայիմ,— ըսավ։

Ու նայելեն հետո ժպտալով վերադարձուց։

— Հովվերգական բանաստեղծություն կ՚ընես։

Արուսյակ ինք ալ թեթև մը խնդաց, ինչ որ քիչ անգամ կը պատահեր։

Բայց այդ օրը Տիրան էֆենտի սկսավ մտածել, թե ինչո՞ւ այդ մանկունակ գիրքը, Պոլ և Վիրգինե, զոր տղայությանը կարդացած էր Արուսյակ, հիմա նորեն անոր ձեռքն էր և առտուն կը կարդար անտառին մեջ։ Երբոր կադացված վեպի մը, բանաստեղծության մը կարոտը կը քաշենք, հանկարծ ո՞չ ապաքեն հոգեկան տրամադրություննիս է, որ կը վարե զմեզ անոր մեջ փնտրել սրտի սրտակից մը, վշտի սփոփիչ բարեկամ մը։ Արուսյակ ու Նավարյան այս տեղերն էին, որ իրարու կը հանդիպեին, կ՚ըսեր ինքնիրեն Տիրան էֆենտի, ու այդ գրքին մեջ այնքա՜ն սրտաշարժ նկարագրված է սիրո ժամադրությունը, ծառերուն խոր ազդեցությունը սիրող սրտին վրա, երբ կարոտակեզ կը տառապի մյուսին համար։ Արուսյակի սիրտը միշտ Նավարյանի հետ էր։ Երբ սիրտը բացակային հիշատակներուն մեջ կը փնտրե իր կյանքը, երբ անոնք են միայն իր հաճույքը, հրճվանքը, ըսել է, թե սերը շատ խորը մտած է, բուժումն անհնարին։

Ու Տիրան էֆենտի հիմա շատ կը խորհեր, ինք որ ամբողջ ձմեռը անձկությամբ կը հետևեր Արուսյակի առանձնակ կյանքին, և հույսը դրած էր գարնանային զվարթության վրա՝ փարատելու համար խեղճ աղջկան տրամադրությունը։

Նավարյանի հանկարծական աներևութանալեն հետո ո՛չ Տիրան էֆենտի, ո՛չ Արուսյակ, ո՛չ Սրբուհի հանըմ խոսք մը փոխանակած էին անոր վրա։ Ամենքն ալ միևնույն զգացումը ունեին։ Սրբուհի հանըմ չէր կասկածեր, թե ի՛նչ զգացումով կապված էին աղջիկն ու այդ երիտասարդը. միայն կը կարծեր, որ եղբայրը կը ցավի այդպիսի անպատիվ երիտասարդ մը տուներնին մտցուցած ըլլալուն, ուստի ձայն չէր հաներ փափկանկատությամբ։ Զմոռնանք ըսելու, թե Ագրիպ էֆենտի հասկցուցած էր Սրբուհի հանըմին հոդվածին հոգին։ Տիրան էֆենտի և Արուսյակ ըմբռնած էին, թե Նավարյան ընկերային արդի պայմաններուն մեջ ուրիշ բան չուներ ընելիք, բայց եթե ամեն կապ խզել իրենց հետ, չունենալով ապագայի ոևէ հույս։ Երկուքն ալ ջերմապես կը համակրեին դժբախտ երիտասարդին, բայց ինչ կրնային ընել։

Զմեռը ամբողջ՝ Արուսյակը ա՛լ առաջինը չէր։ Դաշնակի վրա միայն տխուր եղանակներ կը նվագեր։ Հայերեն ոևէ թերթ կամ գիրք չէր ուզեր ձեռքն իսկ առնել։ Բայց Տիրան էֆենտի դիտեց, թե սենյակին մեջ կը պահեր հին հավաքածոներ, որոնք անշուշտ կը պարունակեին Նավարյանի գրածները։ Ընկերութենե ընդհանրապես կը փախչեր։ Միայն երկուշաբթի գիշերները ընդունելությանց ներկա էր և կը հսկեր ամեն բանի, համեստ համակերպությամբ, բայց միշտ տխուր։ Ամեն անգամ, որ Ագրիպ էֆենտիի հանդիպեր, գույնը կը նետեր. Տիրան էֆենտի շատ դիտած էր Արուսյակի ատելությունը Ագրիպ էֆենտիին դեմ։ Օր մը խնդալով անոր համար ըսած էր մորեղբորը.

— Աս Ագռեպը:

Տիրան էֆենտի ալ խնդացած էր այդ բառախաղին, զոր շատ ճիշտ կը գտներ։ Չէր սիրեր Ագրիպ էֆենտին և այդ դեպքեն քանի մը օր ետքն ալ ըսած էր.

— Շատ indigne գործ մը ըրիք։

Ան ինքզինքը արդարացնել ուզած էր։

Արուսյակին բան մը ունենալը մորն ալ աչքին կը զարներ.

— Ա՛լ առաջինը չէ, ի՞նչ եղավ աս աղջկանը,— կը հարցներ եղբորը։

— Երիտասարդ աղջիկ է, այս տարիքին մեջ շուտով կը տխրին, կ'ուրախանան, բան մը չէ, գեղ կ'երթանք կը զվարճանա։

Ագրիպ էֆենտի կը շարունակեր դարպաս ընել Սրբուհի հանըմին, հաղթանակին պտուղը ե՞րբ պիտի քաղեր։

Մայրը օր մը հարցուցած էր աղջկանը, թե ա՛լ ատենը չեկա՞վ, որ սուգը վերջացած համարվի, և Ագրիպ էֆենտիի խոսք տան։ Արուսյակ, որ Նավարյանի հեռանալուն պատճառով այլևս երկյուղի տեղի չուներ,

— Մամա՛ս,— ըսավ,— ինծի կը սիրես նե, ատ բիռ մարդուն խոսքը ինծի մ՛ընեո։

Սրբուհի հանըմ, որ արդեն սուտադողի մեջ էր, աղջկանը օրե-օր տկարանալուն պատճառով, ալ ձայն չհանեց։

Ագրիպ էֆենտի երբ իր առաջարկը կրկնեց, Տիրան էֆենտիեն պատասխան ստացավ, թե Արուսյակ հիմա շատ տկար էր, ուէ խոսք ընել կարելի չէր. սպասելու էր գարնան։

Շատ տխուր եղավ այդ գարունը, Արուսյակ օրերով սենյակեն դուրս չէր ելլեր. պտտած օրերն ալ բերանը չէր բացվեր. ալ մորեղբորը հետ կարծիքի փոխանակություն, հրճվալի ընթերցումներ վերջացած էին։ Արուսյակ միշտ կը սիրեր մորեղբայրը, բայց լռիկ։ Տիրան էֆենտի կը դիտեր, որ պտույտի ելած ատեններին Արուսյակ միշտ անտեղվանքը կ՚ախորժեր, ուր ստեպ գտնված էին Նավարյանի հետ։ Տիրան էֆենտի ինքն ալ սկսած էր տանջվիլ, կը ցավեր իր անխոհեմության վրա։ Բայց կանցնե՞ր մտքեն այդպիսի դեպք մը։ Իր սկզբունքն եղած էր թե խելացի, աշխատասեր, պարտաճանաչ երիտասարդ մը միշտ պատվական ամուսին մըն է, եթե կը սիրվի իրեն արժանավոր աղջիկե մը։ Արուսյակին վրա մեծ վստահություն ուներ. կ՚ուզեր, որ իր սրտին ու կամքին տերը ըլլա։ Սիրահոժար պիտի տեսներ անոր ամուսնությունը Նավարյանի հետ։ Բայց այդ ծնունդի հանկարծական խնդիրը իրավ իրեն համար նշանակություն չուներ, անշուշտ աղջկանը համար ալ, քանի որ այնքան տխուր էր հիմա Նավարյանի բացակայությամբը, բայց մա՞յրը, Սրբուհի հանը՞մը։

Արուսյակը զգալի կերպով տկարացած էր։ Մայրը շատ ուզեց, որ քանի մը բժիշկ բերվի. բայց Արուսյակ միշտ մորը կ՚ըսեր, թե բան մը չունի, մեկ տեղը չի ցավիր. իր բնությամբն է, որ քիչ մը ասանկ եղած է. բայց կը շտկվի. ձմեռը ասանկ թե որ մնա, այն ատեն թող բժիշկը նայի։

Բայց սեպտեմբերի սկիզբները Արուսյակի տկարությունը բավական վրդովիչ հանգամանք մը առավ, և Տիրան էֆենտի ինքն ալ պետք տեսավ բժիշկներու։ Զափազանց նիհարցած էր։

ԺԶ

Այն գիշերը, ուր Նավարյան խելակորույս ինքզինքը դուրս նետեց Սարաթյաններուն տունեն, գլուխը կրակներու մեջ թափառեցավ փողոցները, անկարող ըլլալով գաղափարները իրար կապել։ Ի՞նչ էր, ի՞նչ եղավ։ Առաջին անգամն էր, որ դեմ առ դեմ եկած էր այն բարձր ընկերության

հետ, զոր անխնա կը հարվածեր իբր եսականության, շահամոլության, նախապաշարման ամբարտակը. բախումը շատ զորեղ եղած էր, առաջին հարվածեն ինքը տապալած գետին կ'իյնար։ Կարծես կը լսեր, ականջներուն մեջ կը շառաչեին ծիծաղներու, հեգնություններու, արհամարհանքի շեշտերը, որք հիմա իր անունին շուրջը կը դառնային։ Այդ նենգավոր հոդվածը ներկայացուցած էր զինքը իբր ստորին շահախնդիր մը, իբր իր ծննդյան գաղտնիքին գիտակ մեկը, որ կեղծավորաբար կը պաշտպաներ (իբր թե) «մարդասիրական գաղափարներ» ջատագով մը հանդիսանալու համար իր անձնական դատին, եթե երբեք օր մը երևան գար իր գաղտնիքը։ Հիմա ինք ապահով էր, թե օր. Սարաթյանի համոզումն այն ըլլալու էր, որ Նավարյան գիտեր իր ծննդին գաղտնիքը, կը ջանար զայն ծածուկ պահել, անգամ մը գրավել իր սիրտը, տիրանալ իրեն և վայելել հաղթանակը, վայելելով Սարաթյաններու հարստությունը։ Նավարյանի սիրտը ամենեն ավելի խոցոտողը այն մտածությունն էր, թե Արուսյակ այդպիսի կասկածներով ամենաստորին գաղափար մը պիտի կազմեր իր վրա։

Մեկ երկու գավաթ գարեջուր խմելե հետո գնաց իր վարձած սենյակը և հոգնած երկնցավ անկողնի վրա։ Ինքն ալ հիմա, ինչպես քանի մը օր առաջ Ագրիպ, հիշատակին մեջ կը գտներ հիշատակն այն աչքերուն, որոնց երբ առաջին անգամ հանդիպեցավ Հալքի, զգաց, թե տեղ մը զանոնք տեսած ըլլալու է։ Հոդվածին օգնությամբը կամաց-կամաց ինքն ալ վերակազմեց Ներսիսյան վարժարանին մեջ իր պզտիկության պատահած տեսարանները, իր հիշատակը ավելի կենդանի էր, ու հիմա կը բացատրեր, թե ինչու համար այդ բիճ բառն ամեն անգամ որ լսեր, սարսուռ մը կ'զգար. հին վերքի մը վերանորոգման զգացողությամբ։ Շատ հստակ կը հնչեր հիմա իր ականջին քսան տարի առաջվան լսած բիճ ածականը, որ անգութ, անդադար զինքը վարած էր հալածական։

Ու սկսավ քննել մորը իր հետ ունեցած հարաբերություններն ալ։ Բուլբուլ տուտու զինքը շատ սիրած էր, վրան անդադար կը գուրգուրար, և սակայն միշտ զավկին համար տեսակ մը հարգանք, ակնածանք, որոնք գոյություն չեն կրնար ունենալ մոր մը ու տղուն միջև, մանավանդ հասարակ դասակարգին մեջ. միտքը չէր գար, օր մը մայրը զինքը հանդիմանած ըլլա թեթև մը իսկ. ու որչափ որ ինքը կը մեծնար, մայրն ալ այնքան ավելի հարգալիր կը վարվեր հետը, իբր թե ամենապատվական հյուրը ըլլար։ Ու չէր զգացած երեսներուն վրա համբույրի այն տաքությունը, զոր հայր մը և մայր մը կուտան իրենց զավակներուն։ Ու այս ամենուն հետ մեկտեղ, չէր հիշեր, թե մայրը օր մը երբեք իրեն խոսած ըլլա կամ ակնարկություն մը ըրած ըլլա իր ծնունդին պարագաներուն

վրա։ Ու լավ մը հիշելով տղայությանը, պատանեկությանը և երիտասարդությանը մեջ մորն իրեն հետ ունեցած ամեն մեկ վարմունքը, գրեթե ալ տարակույս չուներ, որ իր ծնունդին մեջ կար այն գաղտնիքը, զոր թերթը մատնանիշ կ՚ըներ։ Եվ հետո, այդ նենգամիտ հոդվածը, որ թվանշաններով ու եղելություններով կը խոսեր, միայն ճիշտ քննության մը արդյունք եղած կրնար ըլլալ. Ազրիպ էֆենտի իրեն մրցակից մըն էր և ստույգ, մանրազնին քննություններով միայն կրնար հարձակիլ իր դեմ, ապա թե ոչ շատ դյուրին կ՚ըլլար իր խայտառակվիլը։ Ու եթե դեռ տարակուսանքներ ունենար, որո՞ւն կրնար դիմել լուսաբանվելու համար, Բուբո՞ւ տուտուին. չէ՛. այդ չարչարանքը չէր կրնար պատճառել այդ խեղճ կնոջ, զոր հիմա ավելի հզորապես սկսած էր սիրել, վասնզի անոր սերն իրեն համար ավելի գերագույն կը համարեր, քան թե բնական մոր մը զգացումները. ու այդ կինը մարդասիրական մեծ սկզբունքներուն գործադիրներեն եղած էր առանց ոչ իրեն և ոչ ուրիշներուն հոդվածները կարդացած ըլլալու։

Ժամերը կ՚առաջանային, ալ խոնջ, վաստակաբեկ՝ Նավարյան քնացավ անկողնին վրա, գրեթե չհանված, վրան վերմակ մը քաշելով։

Աշնանային գեղեցիկ առավոտ մը ծագեցավ։ Նավարյան հեղձուցիչ տպավորությանց ներքև արթնցավ, ու լվացվելեն հետո, պատուհանը բացավ, սուրճ մը սկսավ խմել և մտածել։ Որոշում մը այդ պահուն իսկ տալու էր։ Պոլսեն ձգել հեռանալու գաղափարը ներկայացավ իր մտքին՝ ամենեն գործնական միջոցը հուսահատութենե փրկվելու։ Ի՞նչ պիտի ըներ. ամեն մեկ քայլին պիտի հանդիպեր ծանոթներու, որոնց պարտավոր պիտի ըլլար պատասխան մը տալու։ Սարաթյաններու տունը իր առջև փակված էր։ Ի՞նչ գրեր, ի՞նչ պաշտպաներ, երբ երկու կնոջ պատկերները աչքին առջև պիտի ըլլային միշտ. իր մայրն ու Արուսյակը զինքը կը ջլատեին։ Ու ասոնց հետ մեկտեղ մարդկային արիության այնքան հզոր ապացույց մը, որքան եղած էր այն կեղտոտ հոդվածը, ազդած էր իրեն անդիմադրելի զզվանք մը։ Պոլսեն հեռանալ, երթալ թափառիլ, իր սիրտը թեթևցնող մտածությունը եղավ։

Պատանեկության օրերուն մեջ սիրած էր Իտալիան, որուն լեզուն իրեն բավական ծանոթ էր։ Իտալիո գեղեցկության ու գեղարվեստներու նկարագրությունն ու պատմությունը ընող գլխավոր գործերու հավաքածո մը ուներ։ Տեսականորեն գրեթե կը ճանչնար այդ երկրին ամեն մեկ մասը, իր իղձերեն մին էր օր մը երթալ այցելել իր այնքան սիրած երկիրը ու ատեն մը հոն ապրիլ։ Հիմա փորձությունը ալ անդիմադրելի եղավ։ Ու իր ջախջախված սիրույն, խորտակված հույսերուն մեջ, առաջին քաղաքը, որուն պատկերն իր մտքին ներկայացավ՝ Վենետիկն էր։ Տրի-

րության, հանդարտության, փշրված փառքի այդ քաղաքը իր ազավոր սրտին միակ ապաստանարանը կրնար ըլլալ։ Հոն մենության ու լռության մեջ պիտի ապրեր ատեն մը, հոն նաև կրնար դյուրություններ ունենալ իր աշխատությունները շարունակելու, և երբ պետք ունենար։

Իր աշխատությամբ շահած դրամեն կրցած էր ավելցնել գումար մը, որուն համար որոշած էր օր մը իր սիրած նպատակներեն մեկուն հատկացնել. այժմ կրնար ինքն ինքնիրմեն փոխառություն մը ընել։ Այդ խնայողությունները պիտի կրնային իրեն ապահովել բավական ատենի համար համեստ կյանք մը Իտալիո մեջ։

Ալ երկար ատեն չէր կրնար Պոլիս մնալ. իրեն համար անտանելի էր ուէ դեմք տեսնել. Բերայեն կառք մը նստելով իջավ Ղալաթիա, իր դրամը Իտալիա փոխադրելու կարգադրություններ ըրավ։ Նամակով մը իր հրաժարականը ղրկեց եվրոպական այն հաստատության, որուն մեջ պաշտոն ուներ. ուղևորական քանի մը պատրաստություններ տեսավ, հետո տուն գնաց, մորը ըսավ, թե գործով հաջորդ օրը պիտի մեկնի։

Մորը ապրուստին համար ալ ամեն կարգադրություն ըրած էր։ Այս ամենը կը վերջացներ տխուր գիշերվան հաջորդ օրը՝ երեքշաբթի։ Չորեքշաբթի առտու իր մտերիմ գաղափարակից և սրտակից բարեկամներուն մեկ մեկ նամակ կը գրեր, հանձնելով զանոնք մորը՝ իրենց տեղվանքը հասցնելու համար։ Ճվ կեսօրին հուզված պագտվելով մորը հետ, Գատըգյուղեն նավակ մը նստած կ՚երթար ուղղակի Թառոմինան, որուն վրա զինքը տեսանք՝ նավելով դեպի Վենետիկ։

ԺԷ

Խաղաղության տենչացող սրտին, անդորրության կարոտ մտքին օթևանը գտած էր Նավարյան այն քաղաքին մեջ, որուն միակ աղմուկն է անդադրում հրավեր մը հոգիներու՝ խնդրել իրենց զվարթությունը երազական պատրանքներեն։ Այդ զանգակներու մեղեդիները զինքն ալ կ՚առնեին կը տանեին ցնորքներու, երազներու, պատրանքներու, հիշատակներու, հույսերու աշխարհ մը, երբ իրիկնամուտին կոնտոլային մեջ թաղված կը սահեր անծուփ ջրերուն վրայեն, սիրահարված այն թախծության ստվերներուն, զոր կ՚արձակեին, փառքի ջախջախված կոթողների պես, շիջելափառ, այլ միշտ վսեմափայլ պալատներ։ Հոն՝ ի Վենետիկ էր, որ Նավարյան տրտմության հաճույքն ու հրապույրը իր բոլոր ուժգնությամբը կ՚զգար։

Հիմա ալ պաղարյուն փիլիսոփայի պես կը մտածեր, գտած ըլլալով եթե ոչ սրտի, բայց մտքի կատարյալ հանդարտությունը, ինչ որ առաջա-

դրած էր Թաոռմինայի մեջ, առաջադրություն, որ իր հրապարակային կյանքին շարունակությունն ու կատարելագործությունը պիտի ըլլար, կը գործադրեր կետ առ կետ։ Ամենածանր աշխատության անձնատուր եղած, մեկ կողմեն կ՚ուսումնասիրեր գեղարվեստը Վենետիկյան հրաշալիքներուն մեջ, կը զբաղեր տոհմային հնագիտությամբ, որուն մեջ տկար էր։

Իր ծրագիրն էր սկսել այն աշխատությունը, որուն մասին կը խորհեր բավական ժամանակե ի վեր, և կ՚զգար, թե պարագաները զինքը հասունցածեն ավելի կանուխ պատրաստած էին ձեռնարկելու այդ գործին։ Վեպի մը մեջ, որ գրեթե կենսագրության շարք մը պիտի ըլլար, պիտի ամփոփեր Պոլսո հայոց ընկերային կյանքի պատկերները, զոր շատ աղեկ ճանչցած էր։ Մերկապարանոց պիտի պարզեր խստմոլության, շահախնդրության, անայնամտության բոլոր անտեսանելի ոճիրները, որոնք կեղծավորության ու նախապաշարման մեծ հենարաններու կռթնած՝ կը տիրապետեն ամենուն կյանքին վրա։ Այդ վիրաբուժական գիրքը իրեն պես ամեն զոհերուն ալ վրեժխնդրության հաղթանակը պիտի ըլլար ու զայն իբր անվտանգ վահան ձեռքը բռնած պիտի մտներ այն ընկերության մեջ, ուրկե փախստական եղած էր արյունի հետ բերված զգացումներու բնազդին ազդեցության ներքև. ու մարտը պիտի մղեր կորովալիր, գաղափարակիցներու խմբի մը աջակցությամբ։

Իր ոգևորության մեջ ինքն իրեն կը հարցներ սակայն.— Բայց միթե մեր ընկերությունը միայն ապականության կոյանո՞ց մըն է. ո՞չ ապաքեն այն ատեն պետք է որ ամեն անոր մոտեցող ինքն ալ նեխյալ ըլլա, որպեսզի անտանելի չըլլան իր ռունգներուն միջավայրին գարշահոտությունը և կարենա շնչել ու ապրիլ։ Եվ ի՞նչպես հուսար ազնվացման մը, մանավանդ նոր հասնելիք սերունդին համար, երբ անոր աչքերը գրեթե կուրացած ըլլան հոգեկան թանձր խավարը միայն տեսնելու վարժությամբ։

Ու կ՚սկսեր իր հիշողությամբ մտքին առջև բերել այն բոլոր դեպքերը, որոնք սրտին մեջ քաղցր հիշատակներ թողած էին ու զինքը կապած կյանքին։ Նենգավոր հոդվածագրին զազրելի դեմքին քով կը բերեր, կը դներ անոր հակապատկերն եղող իր մտերիմ բարեկամ գրողները։ Ագրիպի և ընկերներուն դեմ կը հաներ նույնիսկ առևտրական դասակարգին մեջ ճանչցած ազնիվ, բարի, պատվաճանաչ, սրտի տեր խումբ մը անձնավորություններ, որք եթե իբր գերազանց իդեալ մը չէին կրնար ներկայացվիլ, բայց և այնպես կյանքի տաժանելի ուղևորության մեջ ախորժելի, ծիծաղկոտ դեմքեր էին։ Ու իր հա՜յրն ու մա՜յրը, որ հիմա գիտե, թե օտարականներ էին։ Ո՞չ ապաքեն այդ խեղճուկ տգետները բարության, ազնվության, գթության, փափկանկատության մարմնացումներ էին։ Դիպ-

վածի՞ միայն արդյունք ըսել։ Ինչո՞ւ այս հոռետեսությունը։ Ո՞չ ապաքեն հողի մը հատկությունը իր բերքերեն կը դատվի. վտիտ արտադրության մեջ տեսնված պարարտ հասկերը նշանակ մը չե՞ն, թե հողը կենսատու հատկությունները բոլորովին չէ սպառած։

Ու Տիրան էֆենտի՞ն։— Հոս շվարած կը մնար, և, օրերով, իր միտքը կը դեգերեր անդադար այդ մեծ դեմքին շուրջը, որուն ամեն մեկ գիծը վերլուծել կը ջանար և թափանցել սրտին ու հոգիին բոլոր գաղտնիքներուն։

Այո, այդ անձը կրնար ներկայացվիլ իբր կարելի եղած կատարելության տիպար մը։ Միտքը մեծ զարգացում ուներ, կյանքի փորձառությունը շատ զորացուցած էր իր տեսական իմաստասիրությունը, հիմա մարդասեր փիլիսոփա մըն էր, սրտին տրոփումները բանաստեղծական էին, հոգին միշտ կը սավառներ բարձր, ջինջ մթնոլորտներու մեջ, բարի էր, գթառատ, մարդասեր և սակայն այդ մտատիպարը արդյոք ընկերային ամեն նախապաշարումները արհամարհելու չափ զորավո՞ր էր։ Եթե ինք՝ Նավարյան, այդ երկուշաբթի գիշերը փոխանակ մեղապարտի մը պես Սարաթյաններու տունեն փախչելու, ուղղակի առանձնանար Տիրան էֆենտիի հետ և անոր ըսեր. «—Ես կը սիրեմ օրիորդ Սարաթյանը, գիտեմ, թե ան ալ զիս կը սիրե, դուք ձեր համակրանքովը զիս պատվեցիք, և միանգամայն, մարդկային սիրտը լավ ճանչնալովնիդ հանդերձ արգելք չեղաք այն հարաբերության, որոնք մեր սիրույն ծնունդ տվին ու զորացուցին զայն։ Ծնունդին գաղտնիքը հիմա ինծի հետ դուք ալ իմացաք, ընկերությունը հորն ու մորն ոճիրին պատասխանատու կը բռնե զավակն ալ։ Սարաթյանները մաս կը կազմեն ազնվական համարվող ընկերության, բնական է ուրեմն, որ ամեն նախապաշարման ենթարկված ըլլան։ Դուք կը ներե՞ք, որ օրիորդ Սարաթյանը ինծի կնության խնդրեմ. ի՞նչ խորհուրդ պիտի տաք ինծի, օր. Սարաթյանի և տիկին Սարաթյանի»։

Ա՜հ, եթե այս հարցումն ըրած ըլլար, պատասխանը հիմա փարատած պիտի ըլլար իր բոլոր տարակուսանքները։ Առանց երկբայության պիտի կրնար գիտնալ, թե մտքի մը մեծությունը, հոգիի մը ազնվությունը կազատագրե՞ն մարդ մը ընկերային նախապաշարումներեն, որոնց աղբյուրը շահամոլությունն է և ունայնամտությունը։ Եթե նախապաշարումներու հոսանքը կը վարե և Տիրան էֆենտին ալ, այն ատեն պետք է պարզապես ուտոպի մը համարել իր տոհմը ազնվացնելու հավատքը։ Սակայն ի՜նչ հզոր զորավիգ, եթե ստուգապես գիտնար, որ Տիրան էֆենտի հոսանքին դեմ կանգուն թումբ մըն է։

Նավարյան միտքը կը հոգնեցներ այս խնդիրը լուծելու։ Կը խորհեր, կը բաղդատեր, կը քններ։ Իր բոլոր խորհրդածությունները կը հանգեին

այն եզրակացության, թե Տիրան էֆենտիի միտքը չէր կրնար գերի ըլլալ նախապաշարումներու, վասնզի սիրտը մեծ էր։ Չէ՛, անհնարին էր, որ հիվանդոտ սրտի մը արտաշնչությունը եղած ըլլար այն քաջառույգ ու զովարար շունչը, որ Տիրան էֆենտիի գրածներեն բխելով այնքան կազդուրած էր զիրենք և սփոփած։

Եվ սակայն եթե կը խաբվեր, եթե Տիրան էֆենտիի նկատմամբ իր տածած զգացումները կը մոլորեցնեին միտքը, փորձառությունը միայն կրնա հայթայթել իրականության պատկերահանին վրձինին ճշմարտության մութ ու փայլուն գույները։

Անդադար հիշողությանը առջև կը բերեր Տիրան էֆենտիի երկուշաբթի գիշերվան աչքերուն գաղտնիքը, երբ ինք ներս մտավ սրահեն, ուր արդեն հոշոտված էր իր կյանքը։ Տխուր էին այդ աչքերը, բայց իր հոշոտիչներուն դեմ զայրույթի հուրին ցոլքը չէր փայլեր անոնց մեջ. սակայն պլպլուք մը միայն, գթության տժգույն լույսը նեթ։

— Ա՜հ, անգութ ճանելուկ, անգութ ճանելուկ,— կը գոչեր ինքն ալ չարչարվելով տարակուսանքի ցլատման ճիրաններուն մեջ։

Նավարյան կ'զգար, թե հավատքը միայն զինքը կանգուն պիտի պահեր և զորացներ. հոռետեսության խավարին մեջ թուլցած, տկարացած հոգվով անդնդասույզ չըլլալու համար։ Տիրան էֆենտիի դեմքը իբր լուսատու պայծառ փարոս կը խնդրեր։ Եվ սակայն իզուր այդ լույսը կը փնտրեր։

ԺԸ

Երբ միտքը շատ կը հոգներ, Նավարյան կ'երթար վանքը, ցնցելու համար սևեռյալ գաղափարները։ Վանականները կը ճանչնային զինքը Գևորգ Գևորգյան անունին ներքև, առանց կասկածելու, թե ան կովասեր, հանդգնամիտ Նավարյանն է։

Վանքին գրադարանին մեջ մեկ քանի ժամ տոհմային հնագիտության աշխատություններով կը պարապեր Նավարյան ու ընդհանրապես իրիկնադեմին, երբ պիտի մեկներ, խոսակցության առիթ կ'ունենար։ Այդ ժամերուն էր, որ կը սիրեր իջնել պարտեզը, ուր ծաղիկներուն բույրը, կովերուն բառաչը, նոճիներու ստվերը կը կարծեր, թե զինքը պահ մը կը փոխադրեին գյուղական ագարակ մը, անջատված աշխարհե, մտածության ամեն հոգնութենե ազատ։ Հոն էր, որ կատարելապես կը հանգչեր քիչ մը։

Աշունը վերադարձավ. կիրակի իրիկուն մը, հոկտեմբերի վերջերը, Նավարյան գացած էր վանք ու միայնակ պարտեզը մտն գալով հասած

էր իր սիրական ոսթոնտան։ Այդ օրը բոլորած էր Վենետիկ հասուծ ըլլալուն տարին, և տխուր տարեդարձներու սրտի վրա ունեցած խորհրդավոր ազդեցության տպավորության ներքև էր։

Այն իրիկնամուտներեն մին էր, որոնք Վենետիկն այնքան դյութիչ կ՚ընեն ու հիշատակը անմոռաց կը թողուն։ Կարմիր, կանաչ, դեղին ամեն գույն միլիոնավոր հրթիռներ կարծես նետված էին երկինքը, հոն կը մնային անշարժ և ցոլալով անշարժ ջրերուն վրա, հիանալի, աննման պատկեր մը կը հորինեին։ Աշնանային գաղջ, թեթև հովը հեռվեն կ՚առներ կը բերեր, մեղմացնելով, Սան-Բիեթրոյի զանգակներուն հեշտօրոր ներդաշնակությունները, որոնք կուգան կը գտնեն սրտին ու հոգիին մեջ այն նրբին ծակոտիկները, ու սպրդելով և պահվտելով կը խռովեն ամբողջ էությունը։ Արմունկները ոսթոնտային կարմիր պատերուն կռթնցուցած, այտերը ափերուն մեջ՝ հմայված, հիացած, Նավարյան երազանքներու մթնոլորտը կը վերանար։

Օրթագեղի թթաստաններուն մեջ էր, հովվական մեղմասույլ սրինգը, որ իր առաջին հուզումներուն ընկերն եղած էր կյանքի արշալույսին՝ կը լսեր հիմա, իր սենյակին թիկնաթոռին մեջ ընկողմած. Մոտայի արևին վեհաշուք մայրամուտը առջևն էր, խմբագրատունը թաց-թաց թերթերուն մոգիչ հոտը կ՚առներ, բարի մորը դեմքը կը տեսներ, գաղափարակից մտերիմներուն, զոր հոգիեն ավելի կը սիրեր, ձեռքերը կը սեղմեր, ու այդ անուշ դեմքը, Զամ-Իլիմանի խորշին մեջ... ամենքը կուգային, կ՚անցնեին, կ՚երթային, կը վերադառնային աչքերուն առջևեն։ Կը թուլնար, կարոտն ու հիշատակը կը տկարացնեին իր հոգեկան ուժը. մեկնելու էր, բայց տրտմելու հրճվագին երջանկությունը քիչ մը, քիչ մըն ալ պետք էր վայելել։ Ու լսեց ձայնը, որ կ՚ըսեր.

— Ազգային մըն է, պոլսեցի, ազնիվ երիտասարդ մը, որ շատ ուրախ պիտի ըլլա անշուշտ, երբ հայրենակիցներ տեսնե։

Եվ քիչ մը հառաջանալով ոսթոնտան՝ ուր կը տաներ հյուրերը.

— Գևորգյան էֆենտի, հաճեցեք այս կողմ նայիլ, դժգոհ պիտի չմընաք։

Նավարյան սթափեցավ ձայնեն, արթնցավ, ինքզինքը գտավ և գլուխը ետ դարձուց։

— Օ՜հ, դուք հո՞ս, ըսելով լայն գիրուկ ձեռք մը իրեն կարկառեցավ։

— Ա՜հ...

— Վախցա՞ք, կ՚ըսեր թրթռուն ձայն մը։— Ու մանրիկ նրբին մատները Նավարյանի մեկնվեցան. երբեք իրենց սեղմումը այդքան դողդողացող հրճվանքով չէր եղած։

— Այսպես ուրեմն, դիպվածին պարտական պետք է ըլլանք,— կ'ըսեր Տիրան էֆենտի գոհ զվարթությամբ։

— Ի՞նչ բարեբախտություն, որ իրարու ծանոթ եք,— ըսավ վարդապետը։

— Պոլիս բարեկամներ էինք Գևորգյան էֆենտիի հետ,— ըսավ Տիրան էֆենտի, որ հասկցած էր, թե Նավարյան անծանոթ պահած էր ինքզինքը։

Երիտասարդ վարդապետը, որ միայն էրիկ-մարդերու հետ կը խոսեր, անպատշաճ համարելով աչքերը աղջկան մը երեսին վրա հառել, չէր կրնար դիտել, թե Արուսյակի հանկարծական կարմրությունը շատ հայտնի կ'ըներ, թե պարզ ծանոթներ ըլլալու չէին։ Բայց այդ գունափոխությունը ոչ Տիրան էֆենտիի, ոչ Նավարյանի աչքերեն վրիպեցավ։

Տառապանքները, հարատև մտածությունը, վիշտը, ու այդ իրիկվան երազանքը տպավորած էին Նավարյանի քաղցր ու առնական դեմքին այնպիսի վեհություն մը, որուն հանդեպ իր կնոջական բոլոր տկարությամբ Արուսյակ կը տագնապեր։

Տիրան էֆենտի, Արուսյակ, Նավարյան լռիկ, անխոսուկ, միայն վարդապետին ունկնդրելով, առանց բառ մը արտասանելու ելան վանքին դուռը, ուր իրենց կոնտոլյաները նստան, և վարդապետին մնաս բարով ըսելե հետո Տիրան էֆենտի գլուխը հառաջացնելով Նավարյանի կոնտոլային.

— Ուրեմն այս իրիկուն միասին կը ճաշենք,— ըսավ Նավարյանի։

— Մեծ ուրախությամբ։ Ո՞ր պանդոկն իջած եք։

— Դավերին։

Կոնտոլաները բաժնված էին իրարմե փոքրիկ անջրպետով մը, որ սակայն անհուն կ'երևեր Արուսյակի և Նավարյանի։

Նավարյանի կոնտոլան քիչ մը առաջ անցավ, և երիտասարդը բխացիթթան կանգնած ձեռքը կարկառեց Արուսյակին դուրս ելլելու պահուն։

ԺԹ

Դավերի պանդոկին գրեթե ծովին մաս կազմող ճաշարանը նստած, ուրախ զվարթ կը ճաշեին երեքն ալ։ Խոսակցություննին Վենետիկի շուրջը միայն կը դառնար։ Մեկ տարվան դեպքերուն ոևէ ակնարկություն չէին ըներ։ Նավարյան բավական նիհարած ու տժգույն գտավ Արուսյակը, բայց ամենևին բան մը չըսավ։ Տիրան էֆենտի խոսելով իրեն ուղևորության նպատակին վրա, ըսավ, թե Նիս կ'երթային, ձմեռն հոն անցնելու։ Արուսյակի այն ձմեռն ու գարունը քիչ մը անհանգիստ ըլլալուն, բժիշկ-

ները այդ օդափոխության հարկը տեսած էին։ Ինքն ալ շատոնց է Պոլսեն հեռացած չէր, ուղևորություն մը ընել կը բաղձար, քեռորդին չէր կրնար ուրիշին վստահիլ, ուստի ընկերացած էր անոր։ Աթենք օգտված էին քանի մը շաբաթ ալ Իտալիա պտույտ մը ընելու։

Հաջորդ երկու-երեք օրն ալ մեկտեղ անցուցին. Նավարյան, որ հիմնապես կը ճանչնար Վենետիկը, պատվական առաջնորդ մը եղավ բարեկամներուն։ Արուսյակ և Նավարյան միասին պտույտներ կ'ընեին։ Զվարթությունը վերադարձած էր Արուսյակի դեմքին վրա. Նավարյանի գոհունակությունն ալ ակներև էր, բայց երիտասարդը ոչ հուզյալ, ոչ խանդավառ կ'երևեր. Հալքիի Նավարյանը չէր։ Արդարև հրճվանք կ'զգար Արուսյակի հետ գտնվելուն, բայց կամքին տիրապետող, սիրտը մտքին զոհող, նպատակի մը հասնելու հաստատ առաջադրությամբ ոգևորված անձի մը անխռովությունը կը պահեր։

Առաջին անգամն էր, որ Արուսյակ կը գտնվեր գեղարվեստի միջավայրի մը մեջ, և իր միտքն ու հոգին զմայլած կը մնային։ Ի՜նչպես հանգիստ կը շնչեր այդ ջինջ մթնոլորտին մեջ. նուրբ միտքը որքա՜ն կ'ոգևորվեր գեղեցկության հանդարտ հրաշալիքներու վայելումովը։ Ու իր խոկումներուն մեջ պահ մը կը փոխադրվեր Բերա, աչքին առջև կը բերեր դեմքերը, կը հիշեր ռամիկ խոսակցությունները, տգեղության կյանքը, ու զզվանքը կը պատեր զինքը։ Իրեն այնպես կը թվեր թե ո՜վ պիտի չկրնար դառնալ հոն և ապրել Ագրիպներու և Հաճի հանըմներու հետ։ Մորեղբորը և Նավարյանի կենակցությունը գեղարվեստներու աշխարհի մը մեջ, պիտի բավեին իրեն։ Եվ սակայն հարկ էր ուշ կամ կանուխ վերադառնալ, մտնել տաղտուկի կյանքին մեջ.— ընկերային պարտականություն։ Բայց ի՜նչ տխմարություն է, կը մտածեր, այն քիչ մը կյանքը, զոր ունինք, ենթարկել ուրիշ անոր քեֆին, մեկուն մեկալին «ի՜նչ պիտի ըսեին», իբր թե մենք ուրիշին համար ծնած ըլլայինք և ոչ մենք մեզի։ Երբ բան մը կ'ուտենք, կ'ըսեր ինքնիրեն, ախորժակնիս կը նայինք և անոր համեմատ կը կարգադրենք. ուրիշին հաճույքը կամ տհաճությունը չազդեր ստույգ մը ուտելու համար մեր տված որոշման վրա, և սակայն մեր հոգեկան կյանքին, մեր ամեն վայելումներուն համար պետք է հաշվի առնենք ուրիշին հաճույքը, ուրիշին շահը։

Ձէ՜, այդ գերության չէր կրնար հանձնառու ըլլալ։ Վերջապես կ'զգար, թե աղջիկ մը, որ խնամյալ կրթություն մը ստացած է, մեծ հեղինակներու շունչովը ոգևորված, հասարակ մակարդակեն վեր բարձրանալու միջոց հակամետ չէ, այդ աղջիկը չի կրնար խոնարհիլ նախապաշարումներու առջև, և իր երջանկությունը զոհել խումբ մը ոչնչության գնահատմանը։

Այս մտածությանց մեջ էր, երբ իրիկուն մը մինչ ինք ու մորեղբայրը մինակ էին, Տիրան էֆենտի ըսավ.

— Է՛յ, Արուսյակ, ե՞րբ պիտի մեկնինք, հոս չորս-հինգ օր անցնելու համար եկանք և ահա տասներկու օր եղավ. դեռ քանի մը շաբաթ ալ ուրիշ քաղաքներ պիտի անցնենք. ցուրտի չբռնված Նիս երթանք ու հանգըստանանք։

— Բայց անհրաժե՞շտ է Նիս երթալ,— ըսավ Արուսյակ խնդալով,— Վենետիկի օդն ալ շատ աղեկ եկավ ինծի. ի՞նչպես կ'ըլլա, եթե ձմեռը հոս անցնենք։

— Աղջի՛կս, հոս խոնավ է, կծու ցուրտ ալ կ'ըլլա ըսին վարդապետները, մենք ցուրտեն ու խոնավութենեն կը փախչինք արդեն։

— Բայց ես շատ լավ կ'զգամ հոս ինքզինքս։

Տիրան էֆենտի բան մը չըսավ, Արուսյակի աչքերեն կը գուշակեր, թե անոր սրտին մեջ հուզում մը կար և թե կարևոր ըսելիք մը ուներ։

— Եվ հետո,— ըսավ Արուսյակ,— օդեն ավելի արդյոք առողջության վրա չա՞զդեր սրտի գոհունակությունը։

Տիրան էֆենտի իր խոշոր ու գթափայլ աչքերը հառեց Արուսյակին երեսը։ Աղջիկը ինքն իր վրա ճիգ մը կ'ըներ. դեմքին հանկարծական կարմրութենեն հայտնի կ'ըլլար ներքին տագնապը։

— Մորեղբայր,— ըսավ տխուր շեշտով մը և հատիկ-հատիկ շեշտելով բառերը,— Նավարյանի բացակայությունը շատ զգալի եղած էր ինծի համար։

Արուսյակ, որ շատ կը սիրեր մորեղբայրը, իրեն այնքա՜ն մտերիմ, առաջին անգամն էր, որ սրտի տեսակցություն մը պիտի ունենար անոր հետ։

— Կ'զգայի,— ըսավ Տիրան էֆենտի հանդարտությամբ։

— Ուրե՞մն։

— Ուրե՞մն...— ըսավ Տիրան էֆենտի ժպտալով։

— Ձեր կարծի՞քը, կամ լավ ևս ձեր հրամա՞նը։

— Նավարյանը կ'ուզես ամուսի՞ն ընտրել։

— Կ'զգամ, թե անոր հետ կրնամ միայն երջանիկ ըլլալ, և սակայն ամեն բան գիտեք, զոհվի՞մ։ Դուք գիտեք։

Արուսյակ շատ լուրջ էր ու մորեղբայրը կ'զգար, թե իր դեմը չէր տեսներ եռանդուն, առաջին տպավորության ներքև գտնվող աղջիկ մը։ Արուսյակ խորհելով կը խոսեր։

— Կը ցավիմ, աղջիկս, որ աղեկ խորհրդական մը չես ընտրած,— ըսավ շատ հուզված ձայնով,— բայց գիտեմ, որ ինձ զատ ուրիշն ալ չունիս։ Բայց ես քեզի կրնա՞մ վստահելի ուղեցույց մը ըլլալ։ Ես ալ շատ

նեղված եմ, շատ տառապած, և գիտես թե կյանքս ջախջախված է, անոր համար ալ շատ ներողամիտ եմ, շատ կարեկից, ամենուն երջանկությունը կ'ուզեմ, մեծ ոճիր մը կը համարեմ ուէ նկատումով ուրիշին անմեղ երջանկությանը արգելք ըլլալ։ Գիտեմ, խե՜ղճ աղջիկս, թե ի՜նչ պարագաներ կրնան արգելք ըլլալ քու երջանկությանդ։ Միտքս այդ ամենը կ'ընդունի, բայց սիրտս անոնց դեմ կ'ըմբոստանա. ի՞նչ ըսեմ քեզի, որ վերջը դուն ալ չզղջաս, ե՜ս ալ չվշտանամ։ Դուն խելահաս ես, ընտրությունը որչափ որ մտքիդ առաջնորդությամբը կ'ընես, ավելի ալ սրտեդ կը մղվիս։ Եվ քեզի բան մը ըսե՞մ, ոչ միայն սիրո, այլև կյանքի ամեն պարագաներուն, նույնիսկ գործի մեջ, սիրտը, խանդավառությունը մտքեն նվազ սխալական են։ Գիտեմ, թե չես սխալիր Նավարյանը ընտրելովդ։ Այդ երիտասարդը ես շատ կը սիրեմ ու կը հարգեմ և անոր ծայրահեղ փափկանկատությունը ազնվությանը ապացույց է։ Նայե՜, ի՜նչպես ան երկուշաբթի գիշերը լրիվ մը աշխարհքեն հեռացավ։ Հասկցավ, թե այդ գարշելի հոդվածին մեջտեղ հանած գաղտնիքը, զոր ինքն ալ չէր գիտեր, ընկերային տեսակետով անջրպետ մը կը բանար քու և իրեն միջև։ Թերևս դու բանի տեղ չդնեիր այդ արգելքը, սակայն մա՞յրդ. ուստի փոխանակ կենալու, քեզի հետամտելու, քու միջոցավդ այդ անպիտանեն վրեժ լուծելու, ձգեց գնաց, որպեսզի ընտանեկան հանգստությունդ վրդովելու փորձ մը իսկ չընե։ Այդ գաղտնիքը փնտրել, դուրս հանելը վատություն մըն էր. ընողը իր նպատակին հասավ, գեթ մինչև աստիճան մը։ Եվ սակայն այդ խեղճ տղուն ծնունդը պետք է որ նշանակություն մը ունենա։ Ամեն մարդու պատասխանատվությունը իր ազատ կամքովը ըրած գործերուն մեջ է. արժանավորություն կամ անարժանավորություն հոն փնտրելու է։ Եթե մարդասպանի, ավազակներու զավակ իսկ եղած ըլլար, բնավ իրեն ամոթ մը չէր ատիկա, բավական է, որ ոճիրեն օգտված չըլլար։ Օր մը Ֆրանսացի իշխանի մի նկատողություն ըրին, թե մեծ պաշտոնի մը կոչած էր ազնվական մը, որուն հայրը մասնակցած էր ամենամեծ ոճրագործության մը։— Օ՜հ,— ըսավ սրամիտ իշխանը,— եթե պզտիկ ոճրագործի մը իսկ փեսան եղած ըլլար, պիտի չներեի իրեն, բայց զավակը ըլլալը իր հանցանքը չէ։

— Ա՜խ, մորեղբա՜յրս, գիս երջանիկ կ'ընես, մորեղբա՜յրս... Բայց մա՞յրս, մա՞յրս։

— Ատ է, որ ինծի մտածել կուտա. այդ բարի կնոջմեն կրնա՞նք պահանջել, որ մեզի չափ փիլիսոփա ըլլա և սակա՞յն...

— Եվ սակա՞յն...— հարցուց անձկությամբ Արուսյակ։

— Եվ սակայն պետք է որ ըլլա, եթե բարի է։ Ծնողք մը իր զավակ-

ներուն համար ցույց տված բարեսրտությանը և անշահախնդրությանը չափին համեմատ անոնցմե հարգվելու է, և գոհողություն հուսալու։ Աղջիկ մը մեծ հանցանք կը գործե վշտացնելով իր մայրը. բայց մի՞թե նվազ հանցավոր է, մինչև իսկ ոճրագործ մը չէ՞ մայրը, երբ իր աղջիկը դըժբախտ կ'ընե, մինչև իսկ կը մեռցնե իր անձասիրությունը գոհացնելու համար։ Մայր մը, երբ աղջկանը ամուսնության մեջ անոր ապագա դըժբախտությունը կը գուշակե, մեղադրելի չէ, եթե հզոր դիմադրություն կ'ընե։

Մայրը կրնա սխալիլ, և ընդհանրապես ալ կը սխալի, բայց անձնական տեսակետը չէ՛, որ կը մոլորեցնե զինքը, ուստի արդարանալի է. բանի բարերարներուն դասակարգեն է։ Բայց երբ մայր մը իր անձնասիրությունը գգվելու համար, ընկերության մեջ մեծարանք ու հարգանք վայելելու տենչով, ընտանեկան փառքը անարատ պահելու փափագով աղջկանը երջանկությունը կ'ուզե զոհել, պարզապես շահախնդրական գործ մը ըրած կ'ըլլա. և ի՞նչ իրավունքով պահանջել դեռատի աղջիկե մը իր կյանքը զոհել պառավի մը անձուկ շահախնդրությանը։ Միթե անիկա (խնդալով ըսավ) իր ամուսնությունը, իր երջանկությունը ենթարկա՞ծ էր իր աղջկանը հավանության։ Իր հաճույքին համար արարած մը հրապարակ նետած է, և պե՞տք է, որ իր գերին ըլլա անի։

Հիմա, աղջիկս, ես ինչ կրնամ ըսել քեզի։ Դուն տասնևինն տարեկան, նոր կը ծնիս կյանքին, ոչ ոք իրավունք ունի զրկել քեզ քու հուսացած երջանկութենեդ։ Այդ իրավունքը կը ճանչնամ, և սակայն պետք է դուն քեզի հարցնես, սիրտդ քննես։ Կան պարագաներ, որոնց մեջ միտքը, սիրտը իրարու հետ կը կռվին, և հաղթանակը կը մնա հզորագույնին։ Եթե միտքդ կ'ըսե քեզի, որ երջանկությունդ զոհելու չես մորդ նախապաշարումներուն, ու սիրտդ ալ կը մնա մորդ հետ, ի՞նչ վճիռ կրնամ տալ։ Ես մտքիդ հետ եմ, բայց զավակը դո՛ւն ես։ Ասով մեկտեղ քրոջս կը գրեմ. պատասխանը ցույց պիտի տա, որ զավակին սե՞րը, թե փառասիրությունը նախապատիվ կը դասե։ Քեզի կը մնա այն ատեն որոշել, թե պարտականությունդ ի՛նչ է։ Ու կարծեմ թե մայրդ թեև մեծ կարևորություն կուտա ընկերային նկատումներուն, բայց իր արտաքին ծանրությանը հակառակ շատ զգայուն սիրտ ունի, քեզ ալ շատ կը սիրե. տեսնենք— մանավանդ երբ գովենք Եվրոպան, ըսենք թե ալ հոս պիտի ապրինք— վասընզի գիտես, թե ալ աղեկ չըլլար Պոլիս դառնալնիդ, միշտ նեղվելու առիթ պիտի ներկայանա։

— Օ՜հ, շատ, շատ աղեկ է, կը կենանք, մայրս ալ կը բերենք. Ե՛ս ալ ադ կ'երազեմ։

— Նայինք. այն ատեն մայրդ դժվարություն չեմ կարծեր, որ հանե։ Բայց կարևորը. Նավարյա՞ն...

— Բնավ ակնարկություն մը չէ եղած մեր միջև, սակայն կարծեմ թե գոհ կը մնա։

Ի

Տենդոտ, չղային էր Արուսյակ մորը պատասխանին սպասած քանի մը օրերը։ Իրիկուն մը եկավ այդ պատասխանը, երբ մեկտեղ էին երեքը։ Արուսյակ տեսավ զայն. իր կյանքի վճիռը պարունակող փակ պահարանն էր, երեսին գույնը այլափոխվեցավ։ Տիրան էֆենտի առանց բան մը ըսելու նամակը գրպանը դրավ ու քիչ մը ետքը մեկնեցավ անոնց քովեն։ Վերադարձը երկար չտևեց. երբ ներս մտավ, Արուսյակի աչքերը անոր դեմքի վրա էին՝ գուշակություն մը ընելու անձկությամբ։ Նավարյան այդ մեկ քառորդին մեջ զգաց, թե բան մը կը դառնա, և իր ներկայությունը կը նեղե զիրենք, ուստի մնաք բարով ըսելով մեկնեցավ։ Երբ մինակ մնացին, Տիրան էֆենտի առած նամակը տվավ Արուսյակին։

Շատ տակնուվրա եղած էր խեղճ կինը եղբոր գրածներեն։ Տարի մըն էր, որ ինքն ալ վախի մեջ էր... աղջկանը վրա բան մը չէր դներ, բայց երիտասարդ էր, արյունին տաք ատենն էր, ու միշտ միտքը բերած էր այդ վիճակին մեջ գտնվող մեկ ուրիշ մեկ քանի երիտասարդ աղջիկներու գժբախտությունը։ Սրտադողով կ՝սպասեր արդեն նամակներուն։ Տան բժիշկը իրենց երթալեն հետո ըսած էր, թե որչափ կարելի է շուտ կարգե աղջիկը։ Հիմա ի՛նչ ըսեր. «զավակը հրամանքնիդ է». ինչ որ օգտակար կը տեսներ անոր դեմ ինք ըսելիք մը չուներ. ամեն բանե առաջ աղջկանը կյանքը իրեն պետք էր։— Աստծո կամքն այսպես է եղեր։— Այս հինգ բառին մեջ կ՝ամփոփեր, առանց զգալու սրտին բոլոր դառնությունը և համակերպության ստտիճանը։— Ինքն աս ձմեռ Եվրոպա չէր կըրնար գալ. թող իրենք հանգիստ ըլլան, գարնան կը մտածեր։

— Չըսի՞ քեզի, թե քույրս բարի սիրտ ունի և խեղճ կինը քեզ չի զոհեր ընտանեկան նկատումներու։ Ա՛լ ուրեմն կյանքիդ տերն ես, առանց որևէ խղճահարության։

Այդ րոպեին Արուսյակի մորը համար զգացած սերն այնքան ուժգին էր, որ կրնար մրցումի մեջ մտնել Նավարյանի համար տածած զգացումներուն հետ։

Շատ քիչ քնացավ Արուսյակը նույն գիշեր։ Մյուս օրը Տիրան էֆենտի վանք գնաց և Արուսյակ ու Նավարյան ալ Լիդո, ուրկե երեքը ետքը միանալով, մեկտեղ պիտի վերադառնային։

Արուսյակ ու Նավարյան կը քալեն Կիտոյի գեղեցիկ ծառուղիներուն մեջ, լուռ, անձայն, երկուքն ալ իրենց մտածումներուն անձնատուր։ Հասան ծովեզրը, հոն, ուրկե Ադրիականը լայնարձակ կը պարզվեր իրենց առջև. ավազներու վրա երկու մեծ քար իրենց հանգստարան եղան։

Արուսյակ պտույտեն, հուզմունքեն շատ ոգևորված էր, ու երբեք այնքան սիրուն չէր երևցած Նավարյանի աչքերուն։ Կը նշմարեր երիտասարդը, թե այդ աղջիկը երբեք այդքան լուռ չէր եղած— և ոչ ալ այդքան մտազբաղ։ Օ՜հ, անոր սրտին մեջ չէր, որ տեսներ ի՜նչ պայքար կը մղվեր հոն։ Արուսյակ գիտեր, թե Նավարյան իր սերը պիտի չհայտներ իրեն, անոր դիրքը չէր ներեր փափկանկատության՝ կատարել առաջնության պարտականությունը։ Ուրեմն իրեն կը մնար պարզապես Նավարյանը ամուսնության խնդրել։ Այդ գաղափարը զինքը կը ծիծաղեցներ. կարելի՞ բան էր. բայց ինչո՞ւ չէ, եթե պիտի հաղթենք ամեն նախապաշարումի, ուրեմն և չենք կրնար ընդունիլ, թե միայն էրիկ մարդը իրավունք ունի աղջկան մը իր սերը հայտնելու։

Այս մտածումը որչափ որ շատ ուղիղ կ՚երևվեր Արուսյակի, բայց և այնպես բնածին զգացում մը կը տառապեցներ զինքը։

Երկուքն ալ կը մտածեին աչքերնին հառած ծովուն վրա, երբ Արուսյակ խզելով լռությունը, ըսավ.

— Ինչպե՞ս, քիչ մը Հալքիի հիշատակները միտքդ չի՞ բերեր այս ծովը, տեսարանը։

Նավարյան մեկեն ի մեկ ցնցվեցավ. քսան օր է այս առաջին անգամն էր, որ Արուսյակ ակնարկություն մը կ՚ըներ իրենց առաջին կյանքին։ Աղջիկը շարունակեց։

— Ի՜նչ երջանիկ օրեր էին, ինծի համար գեթ։

— Եվ ինծի համար։

— Բարեկամս, կուզե՞ս, որ այդ երջանկությունը միշտ պահենք։

Նավարյան տրտում ժպիտով մը.

— Անցյալը անցյալ է,— ըսավ,— ես անոր հիշատակներովը միայն կրնամ ա՛լ ասկե ետքը ապրիլ. աշխատության և պարտականության մեջ փնտրելով մոռացում, եթե երբեք կարելի է, և զորություն, որ միշտ կարելի է։

— Մորեղբայրս, մայրս չափազանց գոհ պիտի մնան, եթե դուն ու ես երջանիկ ըլլանք մեկտեղ։

Արուսյակ ասկե ավելի փափկությամբ չէր կրնար հասկցնել, թե ընտանիքը ոևէ արգելք չունեին ընկերային նախապաշարումներե զրկված։

— Հեռու Պոլսեն, միշտ օտար երկրի մեջ ի՜նչ խաղաղավետ ու երջանիկ կ՚ըլլանք։

— Հեռու Պոլսէ՞ն. խաղաղավետ կյա՞նք։ Օ՜հ, չէ՛, ե՛ս կ՚զգամ թե հանգիստ, հանդարտ ապրելու համար չեմ ստեղծված, ու պարտականությունս զիս Պոլիս կը կանչե։

Այդ պատասխանին չէր սպասեր Արուսյակ, զարմացումով և միանգամայն հիացումով հարցուց.

— Անդրդվելի՞ է որոշումդ։

— Անդրդվելի։ Մեծ վատություն մըն է ինծի համար փախչիլ այն դաշտեն, ուր սկսած էի կռվիլ եսականության, շահամոլության նախապաշարումներու դեմ։ Չէ՛, անկարելի է, որ բարեկամներս միայնակ ձգեմ ստորաքարշ լրբեններու դեմ, ու ես հանգստավետ կյանք մը վարեմ, ո՞չ ապաքեն վիճակակից կ՚ըլլամ անոնց. զոր այնքան կ՚արհամարհեմ։ Տարի մըն է, Արուսյակ, (առաջին անգամն էր, որ այդ անունը այսքան պարզորեն կը թոթովեր), որ մեծ մտատանջություն մը զիս կը տառապեցներ. կը պատրաստեմ գործ մը, որ եթե գրական մեծ արժանիք ալ չունենա, գեթ պիտի կրնա սփոփանք մը ըլլալ վիրավորված սրտերու, զայրացած հոգիներու, և աջակցություն մը՝ գաղափարի մարտը մղողներուն։ Սակայն տարակույսը միտքս կը պաշարեր. արդյոք իդեալական ուտոպի մըն է հուսալ, թե մարդիկ կրնան կատարելապես ազնիվ ըլլալ, վեր բարձրանալ այն ամեն եսական նկատումներեն, որոնց հիմնարանը նախապաշարումն է ու շահամոլությունը։ Դո՛ւն, մորեղբա՛յր, մա՛յրդ փարատեցիք այդ տարակույսներս։ Հիմա պիտի կրնամ ավելի զորացած հավատքով աշխատիլ, գիտեմ թե ուտոպիի մը ձգտող չենք։ Շատ բան ըրած եղաք դուք ինծի, շնորհակալ եմ, ալ ավելի չեմ պահանջեր։

— Պահանջո՞ւմ։ Օ՜հ, չէ՛, հիմա քու կարճ խոսքերեդ կը տեսնեմ, որ ես պիտի ըլլամ պահանջողը։ Անձնվիրությունդ պիտի պահանջեմ կյանքիս համար։ Վրադ բռնանալու իրավունք մը չես տված ինծի, միայն կ՚ըսեմ. քեզ երջանիկ պիտի ընեմ, ձեռքս ձեռքիդ մեջ, ուր որ կ՚ուզես միասին հոն կ՚երթանք։

Նավարյան ձեռքը երկնցուց և Արուսյակի ձեռքն առնելով առաջին համբույրն դրավ։

ԻԱ

Ամիս մը վերջը Փարիզի Հայոց հոգևոր հովիվը կը պսակեր նույն քաղաքին մատռան մեջ Նավարյանն ու Արուսյակը, կնքահայրությամբ Տիրան էֆենտիի։ Արարողութենեն հետո սեղանե մը կը հրավիրվեին հայ գաղթականության ծանոթները։ Ել նույն գիշերն իսկ տեր և տիկին Նա-

վարյան Նիս մեկնեցան, ձմեռը հոն անցնելու։ Տիրան էֆենտի քանի մը շաբաթ ալ Փարիզ մնալէն հետո վերադարձավ Պոլիս։

Ձմեռը Նավարյան ձեռնարկեց իր մտադրած վեպը, բայց շատ աշխատություն կը պահանջեր. մեկ ու կես տարի այդ գործին նվիրեց իր բոլոր ժամանակը, կ'զգար, թե կատարյալ հանդարտության պետք ուներ իր փափագած աշխատությունը կատարյալ ընելու համար։ Արուսյակ իր անձնվեր աջակիցն էր ու վեպին համար գրեթե աշխատակիցը. արդեն ներշնչարանն էր եղած։

Ամառը Իտալիո զանազան կողմերը գացին, ձմեռը Նիս վերադառնալով։ Գարնան ձեռագիրն արդեն ամբողջացած էր, և հեղինակն ու կինը վերադարձան Վենետիկ, հոն տպելու համար այդ գործը։

Երբ վերջանա տպագրությունը, տեր և տիկին Նավարյան կը վերադառնան Պոլիս։ Իրենց բնակարանը գարնան համար արդեն պատրաստ է Հալքի։

ՀԱՃՈՒՅՔԻ ՀԱՄԱՐ

Ա

Երկու ժամ կար, որ Գևորգ էֆենտի Գույումճյան մորը հետ մեկնած էր տիկին Զարուհի Ստեփանյանի տունեն, ուր եկած էին նշան տալու օր. Մարի Ստեփանյանի։ Ուրիշ այցելությունները ալ վերջացած կը համարվեին, իրիկվան տասնմեկուկեսն էր։ Այդ օրվան հուզումեն հոգնած, տիկին Զարուհի ընկողմանեցավ քանաբեին վրա քիչ մը հանգչելու համար։ Մարի, որ գացած էր զգեստները փոխելու, եկավ նստավ մորը քով, ինքն ալ շատ խոնջ, սիրազեղ սրտով հանգչեցուց գլուխը մամային ծունկին վրա, ինչպես մանկության օրերուն։ Եվ պայծառ կիրակի իրիկվան մթնշաղին մեջ մայր ու աղջիկ կ'երազեին լռությամբ։ Թեթևացած հոգով՝ Մարի կը թռչտեր ապագա երջանկության երկինքը. աղջկանը ճակատն ու մազերը փայփայելով՝ մայրն այդ րոպեին քաղցրանուշ հուզմամբ առջևեն կ'անցներ իր տասնևութը տարվան կյանքը։

Կյանք մը ամբողջապես նվիրված զոհողությանց, որոնք, սակայն րոպե մը իսկ տրտմության ստվերը չէին ձգած մայրենի սրտին վրա։ Մեկուկես տարվան ամուսնացած, տասնութ տարեկան այրի կը մնար մեկ հատիկ զավկովը։ Դեմքին հետ սև շղարշով մը ծածկեց սիրտն ալ, որուն ամեն մեկ տրոփումը հիմա միայն աղջկանը համար էր։

Այլ կրնա՞ր չսիրել։ Կամքին տերն էր, բայց սրտի՞ն։ Տարիներե ի վեր շատ օր երազում կը մնար, երբ աչքին առջևեն կը սահեր Գարեգին Սարենյանի դեմքը։

Օր մը տխուր ժպիտով պատասխանած էր անոր խնդիրքին։

— Բարեկա՛մս, անկեղծորեն կ՚ըսեմ, թե ինքզինքս երջանիկ պիտի համարեի, եթե ամուսինս ըլլայիր, բայց միայն բարեկամ մնանք։ Կյանքըս զավկինս է, մինչև ամուսնացած օրը, համոզված եմ, թե կրկին ամուսնությունս զրկանք մը պիտի ըլլա զավկիս. սրտես տեղ մը պիտի խորվի աղջկանս համար։ Ու հետո, ես ինծի երբեք պիտի չներեմ, եթե օր մը որբ աղջիկս ամուսնական երջանկության մեջ արգելքներու հանդիպի մորը պատճառավ։

Վերջին խոսքերուն հետ արցունքի կաթիլ մը դողդողաց երիտասարդուհիին աչքերուն մեջ։ Գարեգին հուզված, դողդողջուն համբույր մը դրոշմեց հրաժեշտի համար իրեն մեկնած ձեռքին վրա, ու— պիտի համբերեմ ըսելով մեկնեցավ։

Առանձնակ կյանքին մեջ զավակը կրթելով սփոփվեցավ մայրը։ Ինքն իր ուսումը կը կատարելագործեր, որպեսզի աղջկանը վարժապետը ըլլա։ Տասը տարեկան էր Մարի, երբ մարը ա՛լ բավական սեպելով տանը կրթությունը, դրավ զանիկա Բերայի ցերեկօթիկ լավագույն վարժարանը, իր սերը միշտ արթուն հսկող անոր վրա։ Ու հինգ տարի ետքը կը պատրաստեր աղջիկը կնոջ կյանքին, անծանոթին համար միշտ սրտատրոփ։

Տասնյոթը տարի ապրեցավ ճշմարիտ մայրապետի մը կյանքովը։ Ջվայելեց երբեք կայթառոնին հաճույքը, ու իրեն անծանոթ մնացին երեկույթի մը հրճվանքները։ Ու հիմա այդ մթնշաղին մեջ գերագույն հեշտանք կ՚ազդեին զոհողության այդ կյանքին բոլոր հիշատակները։ Շատ ու շատ վարձատրված էր։ Գևորգ էֆենտի Գույումճյան այն երիտասարդն էր, որուն հարստության համար եթե ամեն աղջիկ կրնար տենչող կին ըլլալ, կրնար նաև իդեալի երազողն ալ տեսնել այդ քսանյոթ տարեկան երիտասարդին մեջ ազնվության մարմնացումը։

Տարի մը կար, որ Գևորգ էֆենտին Պոլսո մեկ արվարձանեն փոխադրված էր Բերա։ Բարեկամ տան մը մեջ ներկայացած էր տիկին և օր. Ստեփանյանի, և այդ հանդիպումները կրկնված էին պատահմամբ։ Երիտասարդը, օր մը հաղորդեց մորը օր. Ստեփանյանի հետ ամուսնանալու փափագը։ «Հին օրինաց» կին մըն էր Թագուհի հանըմ. գաղտնապես նախ տեղեկություններ ստացավ ապագա հարսնցուին մորը վրա։ Հավատարիմ էր «մորը նայե, աղջիկը առ» սկզբունքին։ Դիմադրելու պատճառ մը չգըտավ։

Երբ տիկին Ստեփանյան իր քրոջը միջոցավ տեղեկացավ Գեորգ Էֆենտիի փափագին, պահ մը վարանեցավ երջանկությանը հավատալու։

— Ա՜խ, մամաս, ըսելով, մորը կուրծքին վրա ինկավ Մարի, երբ անիկա աղջկանը կամքը հարցուց եղած առաջարկին վրա։

Առջի օրեն սիրած էր Գեորգը, անխոսուկ։

Բ

Հոծ բազմությունը լեցված էր այդ կիրակի իրիկուն Բըքի-Շանի պարտեզին մեջ։ Մուտքի դռան մոտերը սեղանի մը շուրջ նստած երեք երիտասարդներեն մեկը ըսավ ընկերներուն.

— Էտուարտ տուտուն եկավ։

— Հա՛, ինքն է, նայինք ի՞նչ պիտի ըսե, ձայն չհանենք։

Ու ժպտուն դեմքով երիտասարդ մը, որ աչքերը չորս կողմը ժուռ կ'ածեր հաղթական, դանդաղաքայլ դեպի երիտասարդները առաջացավ, գլխարկը հանելով բարևեց ու կանգ առավ։

— Նստե, Էտուարտ։

— Չէ՛, պըտըտիլ կ'ուզեմ։

Ու ոտքի վրա սկսավ խոսիլ.

— Ի՞նչ նոր լուր նայինք,— հարցուց այն երիտասարդը, որ կնոջական ածականը կցած էր Էտուարտի անունին։

— Հը՜, մե՛ծ լուր...

— Ի՞նչ, նայինք։

Ու Էտուարտ ամեն մեկ գրին վրա կանգ առնելով.

— Հիմա Գույումճյան Գեորգ նշանվ...

— Էսկիլեր ալայըմ,— ըսավ հեգնող երիտասարդը ոխակալ շեշտով մը։

Ու ընկերներեն մեկը, ինքն ալ ամեն մեկ գրին վրա շեշտելով ու հեգնությամբ.

— Ընդ օրիորդ Մարի Ստեփանյանի։

Հավեն խաբված աղվեսին պես Էտուարտ սմքած մնաց։

— Է՜, մնաք բարով,— ըսավ շվարած ու մեկնեցավ։

Շրջան մը միայն ընելով, քանի մը վայրկյան հետո դուրս կ'ելլեր մտազբաղ դեմքով։

— Առաջին անգամն է, որ խեղճին սաստիկ դժբախտություն մը կը պատահի,— ըսավ սեղանին շուրջը նստող երիտասարդներեն մին։

— Վարքը շատ պիտի կոտրի,— ըսավ մյուսը։

— Ինչ կ'ըլլար, թող այս շարունակը շընեիր,— վրա բերավ երրորդ երիտասարդը, որ բերանը դեռ բացած չէր։

— Ինչո՞ւ. քիչ մըն ալ մենք զվարճանանք տուտուին հետ։

Նվագարանը ընդհատեց խոսակցությանները։

Բերայի ընտանեկան կյանքին աղն է Էտուարտ։ Երբ իր գալուստը կ'իմացվի տան մը մեջ, տանտիկինը կ'ոգևորվի անպատում բերկրանքով. մինչև դուռը ընդառաջ կ'երթա, մտերմական ձեռք կը մեկնե, ամենեն շնորհալի ժպիտովը կ'ողջունե զանիկա. որչափ ալ տխուր ըլլա տիկինը ծիծաղը անմիջապես կը փայլի դեմքին վրա։

— Աղեկ որ եկար, մուսյու Էտուարտ, շատ կը նեղանայի, իրավ որ դուն ալ չըլլայիր նե ձանձրույթես պիտի ճաթեի։

Ու սիկարը հրամցնելով խոսակցությունը կ'սկսի։

Բերայի մեջ ծնած ու մեծցած Էտուարտ մատներուն վրա կը ճանչնա բնիկն ու եկվորը։ Ամենուն ալ մանրամասն կենսագրությունները գլխուն մեջ լեցված է։ Ամեն բան գիտե։ Առջի գիշերը որո՞ւն տունը թղթախաղի մեջ ազնվաշուք տիկինները և այրերը ի՜նչ կռիվ ըրած են, անպատճառ իմացած է և քսանչորս ժամը չբոլորած, ամբողջ Բերայի մեջ տարածեր է։ Նախ և առաջ իր ականջը կը հասնին ամեն ընտանիքի մեջ պատահած քիչ շատ գայթակղական դեպքերը. իրմեն ծածուկ չմնար էրիկ կնկան ռևէ կռիվ. իր առջև մերկապարանոց են ամեն կնոջ, աղջկան, երիտասարդի ու ծերունիի սրտի պատմությունները, սիրային վեպերը։ Ահագին քանակությամբ վեպ կարդացած է ու կը կարդա, որպեսզի կատարելագործե սիրահարություն մը գուշակելու մասնագիտական արվեստը։

Ընտանեկան լրագիտության մեջ ոչ ոք կրնա գերազանցել Էտուարտը. բնական կոչումը ու անխոնջ աշխատությունը միանալով՝ հրաշքներ կը գործեն։ Իմանալու և իմացնելու գերագույն հաճույքին համար ի՜նչ զոհողություններ, ի՜նչ տառապանքներ։ Առտուն գրասենյակը երթալու համար որչափ կարելի է կամաց-կամաց կը քալե, ամեն ծանոթ հանդիպողի հետ կը տեսնվի, բան մը կրնա քաղել։ Ցերեկները ժամանակ կը գտնե քանի մը գրասենյակ այցելելու, ու Բերա ելլելով՝ այն օրը ընդունելություն ունեցող տիկնոջ երթալու. հոն առատ հունձք կա։ Իրիկունները իր կեդրոնավայրը Բըթի Շանի պարտեզն է, ուր քանի մը անգամ կը մտնե կ'ելլե։ Մեծ դյուրություններ կուտա տանը խոհարարին ու սպասավորին, ծառաներուն՝ սրճարանները երթալու. գիշերը ճաշեն հետո, դուրս ելլելեն առաջ, գիտե ճարտարորեն խոսեցնել տալ զանոնք. շատ բան քաղած է ուրիշներու ծառաներե՝ տուներու ներքին գաղտնիքներուն վրա։ Գիշերներն ընտանեկան այցելություններ տալե առաջ անպատճառ

պիտի այցելել Լյուքսեմպուրգ, Սանդրալ, Ցանիրին։ Այցելություններեն հետո պիտի հանդիպի Ասլանիտեսին։ Նոր Թատրոնին այրելը դառն հարված մը եղավ Էտուարտին համար։ Շատ թախծություններ փարատած է ու կը փարատե։ Ու քանի դժբախտներ չեն գիտեր, թե իրենց արցունքները որու կը պարտին։

Գույումճյան էֆենտի ամեն միջոց ձեռք առած էր գաղտնի պահելու համար նշանտուքին նախապատրաստությունները։ Եթե երբեք ոևէ արգելքի հանդիպեր այդ խորհուրդին իրագործումը, փափկանկատ երիտասարդը չէր ուզեր, որ աղջկան մը անունը հրապարակ նետվի ու հարված կրե։ Գաղտնապահությունը կատարելապես հաջողած էր։ Ու կիրակի օրը, նշանտուքեն ետքը, լուրը հրապարակ ելավ։

Իր ասպարեզին մեջ Էտուարտ երբեք այսպիսի խաղի մը չէր հանդիպած։ Երբ պարտեզին մեջ բարեկամները զինքը հեգնեցին, զգաց, թե իր վարկը մեծ հարված կրած է առաջնություն չունենալով իմանալու և հռչակելու Բերայի հայոց կյանքին վերջին տարվան ամենեն մեծ պատահարը։ Ոչ Գույումճյանի և ոչ Ստեփանյանի ներեց։ Եվ հույսը բախտին վրա էր՝ վերահաստատելու համար իր սասանած համբավը։

Գ

Էտուարտ հաջորդ կիրակին աչքի լույսի գնաց Գույումճյանի. իսկ Ստեփանյաններուն համար լուր օր մը լավագույն համարեց. հավանորեն մինակ կ՚ըլլային մայր ու աղջիկ, խոսակցություններեն կրնար օգտվիլ։ Անախորժ տպավորություն մը զգաց սակայն, երբ հոն գտավ Սարենյան Գարեգին էֆենտին, որ քիչ մը ծանոթ էր իրեն։ Շատ երևցող մը չէր Բերայի ընտանեկան շրջանակներուն մեջ. ինչ հատուկ պատճառ ուներ լուր օր մը այցելելու այդ քաշված ընտանիքին։ Էտուարտի հետաքրքրությունը արթնցած էր. ռունգները հոտ կ՚առնեին։ Այցելությունը բավական երկարեց. օրիորդ Ստեփանյանի հետ բռնվեցավ այնպիսի խոսակցություն մը, որ շուտ չէր վերջանար։ Ոչ Ստեփանյանները, ոչ Գարեգին ճիշտ գաղափար մը չունեին Էտուարտի մասնագիտական հատկության մասին։

Ժամ մը ետքը Էտուարտ, երբ ելավ մեկնելու համար, դիտեց, որ Գարեգին այցելությունը երկարելու տրամադիր է. բան մը կար։ Կասկածը ստուգության փոխվեցավ, երբ ակնթարթի մը մեջ նշմարեց տիկին Ստեփանյանի ակնարկը. խնդրանք մըն էր Գարեգինի որ մեկնի։ Այդ րոպեին Էտուարտ շատ բան հասկցավ։ Գարեգին մնալ ուզած էր և տիկին

Ստեփանյան, զգալով, թե անհարմար էր աչքի լույսի այցելություն մը այսքան երկարելը ուրիշի մը քով, նշանացի մեկնելու հրահանգ տված էր։ Անշուշտ չէր ուզեր, որ կասկած մը արթննա։ Ուրեմն բան մը կար մեջերնին։ Ու երբ դուրս ելան Գարեգինի հետ, անոր ակներև սրտնեղությունը իր կասկածները ամրապնդելու կը ծառայեր։

Էտուարտ մտազբաղ թափառեցավ։ Սկսավ հիշել տիկին Ստեփանյանի կյանքին վերաբերյալ ամեն դեպքերը։ Ապշեցավ միայն, որ այդ կինը և իր աղջիկը մինչև հիմա չէին գրաված ո՛չ իրեն, ո՛չ ուրիշին ուշադրությունը։ Երբեք ամենաթեթև բամբասանք մը չէր ծանրացած անոնց վրա։ Ինչո՞ւ։ Կարելի՞ էր, որ այդքան երիտասարդ այրի մը, որ հիմա իսկ հազիվ քսանյոթ-քսանութ տարեկան կ՚երևար, տասնյոթը տարի ապրած ըլլար առանց սիրային վեպի մը։ Չէ՛, բնականին դեմ էր այդպիսի ենթադրություն մը։ Անոր կյանքին մեջ անշուշտ գաղտնիք մը կար։ Կը զարմանար, թե ինչպես մինչև հիմա իր խորաթափանց աչքերուն անթափանցելի մնացած էր այդ կյանքը։

Ու Գարեգին Սարենյա՛նը։ Միտքը բերավ, թե անոր վրա ալ բան մը չէր խոսված։ Նյութական կարողության տեր, համակրելի, տաղանդավոր այդ ամուրի փաստաբանը չէր ապրած սիրային կյանքով մը։ Անոր վրա ալ բան մը չէր խոսված, մոռցված մնացած էր։ Ու հիմա մտերմական ակնարկներ կը փոխանակեին կյանքե այդ երկու զրկվածները։ Բան մը կար։ Նոր հանքի մը երակը գտած էր, կրնար շահագործել։ Մոռցավ կիրակի օրվան դառնությունը։

Հիմա ա՛լ բանը գործը Սարենյանի և տիկին Ստեփանյանի հետամուտ ըլլալն էր։ Չէր ուզեր փախցնել ամենափոքրիկ հետք մը. ամեն նշանները հետևանք հանելով, պիտի վերակազմեր ամբողջ գաղտնի կյանքի մը պատմությունը, որ կը հուսար, թե իր գլուխգործոցը ըլլա, սակայն շատ զգույշ շարժելու հարկ կը տեսներ։ Չափազանց վարպետորդի կը համարեր երկու սիրահարները. ա՛լ տարակույս չուներ տիկին Ստեփանյանի և Գարեգին Սարենյանի հարաբերությանց մասին. միայն անհերքելի ապացույցներ կը փնտրեր ուրիշներուն համար—փոքրիկ կասկած մը կրնար զանոնք արթնցնել։ Էտուարտ կը նմաներ ոստիկանի մը, որ կը կարծե գտած ըլլալ փնտրված մեծ ոճրագործի մը հետքը, բայց հետազոտությունները շատ գաղտնապահությամբ առաջ կը տանի՝ որսը չփախցնելու, և օր մը, երբ ոչ ոք կ՚սպասեր, ձեռքը օձիքին վրա դնելու համար։

Դ

Տիկին Ստեփանյան ամեն տարի ամիս մը օդափոխության կ'երթար մեծ Կղզի՝ ծովի ատեն։ Այս տարի ալ չհրաժարեցավ այդ սովորութենեն. առողջական անհրաժեշտ պետք մըն էր։ Հարսնիքը աշնան վերջերն էր ու պատրաստությունները կամաց-կամաց կը տեսներին։ Հուլիսի սկիզբները տեղավորվեցավ Կալիբսոյի հյուրանոցը։

Էտուարտ ալ ամեն տարի գյուղագնացության կ'երթար ընտանիքով։ Այս տարի տունեն Կղզի երթալ ուզեր էին. դիպվածի արդյունք, որ սակայն շատ բարեպատեհ էր «ամեն բան իմացող» երիտասարդի համար։

Շատ չուշացավ տեսնելու համար, թե տիկին Ստեփանյանի կղզի գալեն շաբաթ մը ետք Գարեգին Սարենյանն ալ կը տեղավորվեր Ծիաքոմոյի պանդոկը։ Դրացի եղած էր տիկին Ստեփանյանի։

Ա՛լ հիմա պարագաներեն օգտվելու էր. բոլոր հավաքածոները իրարու միացնելով, ամբողջություն մը կազմելու կապը պիտի գտներ։

Ութ օր էր, որ Գարեգին կղզին էր ու կանոնավորապես ամեն օր Պոլիս կ'իջներ ու կ'ելլեր։ Տիկին Ստեփանյանին հետ հանդիպումները ճամփուն վրա էին միայն։ Վարպետություն, կ'ըսեր Էտուարտ, բայց աչքես պիտի չփախչի։

Հաջորդ ուրբաթը Էտուարտ նավամատույցի սրճարանն էր. հոն էր նաև Գարեգին, որ երբ վերջին շոգենավը եկավ, վար չիջավ։ Էտուարտ ինքն ալ տոմսակ չառավ։ Ու ցորեկվան ճաշեն ետքը արդուզարդ ընելով՝ գնաց Ծիաքոմոյի շրջակաները դեգերելու անտեսանելի։ Ութին մոտ էր՝ Գարեգին դուրս ելավ ու շիտակ գնաց Կալիբսո։ Կես ժամ ետքը Էտուարտ ալ հոն կը մտներ։

Հեռվեն ծակե մը տեսավ, որ Մարի ծովեզերքի պատշգամբին վրա աթոռի մը մեջ ընկողմանած կը կարդա։ Մայրը մինակ ձգած է, ըսավ։ Դռնապանեն տեղեկանալով, կամացուկ-կամացուկ ոտքի ծայրերովը տիկին Ստեփանյանի սենյակին դռան առջև շունչը բռնելով՝ կանգ առավ. ականջ դրավ. բան մը չէր կրնար տեսնել բանալիին ծակեն, բան մը չէր կրնար լսել, միայն տիկին Ստեփանյանի մեղմ հծծյունը լսեց՝ «ա՜խ» ու այսքան միայն։

Դեռատի այրիին ձեռքին վրա տասներկու տարի առաջ դրոշմած մեղմիկ համբույրեն հետո Գարեգին Սարենյան տիկին Ստեփանյանի բարեկամը միայն մնացած էր։ Իրենց հանդիպումները, որք երբեք առանձինն, հազվադեպ եղած էին։ Բայց ամեն անգամ տիկին Զարուհի կը նշմարեր Գարեգինի աչքերուն մեջ չմեռած սիրո ցոլքերը, ու կը զգար հուզումը։ Նշանտուքեն հետո էր, որ ունեցան միակ երկարատև տեսակ-

ցությունը, զոր խանգարեց Էտուարտ։ Ու հիմա այս առաջին անգամն էր, որ Զարուհի և Գարեգին միայնակ կը մնային իրարու հետ։ Առանձնությունը զուտ դիպվածական էր. Գարեգինին անսպասելի այցելությունեն քառորդ մը առաջ Մարի ամեն օրվան սովորության համեմատ գացած էր ծովեզերքի սրահը կարդալու, խորհելու։ Երկուքին խոսակցությունն ալ քիչ մը վարանոտ էր։ Գարեգին տիկին Ստեփանյանի իր սրտագին շնորհավորությունները ըրավ այդպիսի երիտասարդ մը փեսա ունենալուն, և հանկարծական համարձակությամբ մը ըսավ.

— Կը հիշե՞ք տասներկու տարի առաջվան խոստումնիդ։

— Ո՛չ,— ըսավ կմկմալով Զարուհի, որ հայտնի կ'ըներ, թե կը ստեր,— և առաջին անգամն էր, որ կը ստեր։

— Աղջիկս կարգեմ, այնուհետև, ըսիք։

Տիկին Ստեփանյան տխուր ժպիտով մը.

— Բարեկամս, դեռ չե՞ք մոռցած։

— Կը կարծե՞ք։

— Ա՛լ մեծ մայր պիտի ըլլամ, ասկե վերջն ալ թոռներուս համար եմ։ Կրնաք շատ դյուրավ մտածել, թե փեսիս ու աղջկանս համար ինչ մեծ դժբախտություն պիտի ըլլա իմ կրկնամուսնությունս— եթե երբեք այդպիսի խորհուրդ մը ունենամ։ Պիտի կարծեն, թե արատավոր անցյալի մը նվիրագործումն է։ Ամբողջ երիտասարդությունս, ինչպես որ մայրական պարտքս էր, զավկիս նվիրելե հետո պառավությա՞նս դժբախտ պիտի ընեմ զինքը։

Ու բնական բերմամբ մը մազերը ցույց տալով,

— Ա՜խ, բարեկամս, ա՛լ ճերմկնալ սկսեր են։

Գարեգին համբույր մըն ալ այդ մազերուն ուզեց դրոշմել։ Այդ «ախ»-ն էր, զոր Էտուարտ դռնեն լսած էր, ու հոգեբանական վայրկյանը հասած համարելով, դուռը զարկած։

Ներս մտնելու հրավերը րոպեի մը չափ ուշացավ. ամփոփման հարկ կար, այդ րոպեն այնքան երկարատև երևցավ Էտուարտի. որքան երկրաշարժի ցնցման մը րոպեն։ Երբ ներս մտավ, հուզյալ դեմքերը տեսնելով տարակույս մը իսկ չունեցավ։

Զարուհի և Գարեգին այս անգամ երազի մեջ օձ տեսած ըլլալու զգացումը ունեցան։

Ժպտուն դեմքով Էտուարտ հայտնեց, թե այցելության մը պարտականությունը թեև ուշ կը կատարե, բայց ներողություն կը խնդրե։ Ընտանիքով պիտի գային, բայց մայրը միշտ անհանգիստ է։ Ու քանի մը այսպիսի սովորական խոսքերե հետո մեկնեցավ, առանց մոռնալու հարգանքները օրիորդին ալ մատուցանելու։ Վերջին խոսքերը շեշտեց։

Ե

Էտուարտի այս հանդիպումեն քանի մը օր վերջ կղզիի ազնվաշուք ընտանիքները հեգնական ժպիտ մը չէին կրնար զսպել, երբ կը հանդիպեին մորն ու աղջկանը։ Երիտասարդները Գարեգինի հետ թեև մտերիմ չէին, բայց գյուղի մը բարեկամության մեջ շատ բան ներելի է. կ՚ընեին կատակներ, որոնց իմաստը չէր կրնար հասկանալ փաստաբանը։

Էտուարտ քանի մը գիշեր Բերա մնաց. այցելեց նաև Պեյուքտերե ալ, ուր օդափոխության կը գտնվեր Գույումճյան։ Տասնհինգ օրվան մեջ Բերայի ցանուցիր ընկերությունը միացած էր մեկ լուրով. տիկին Ստեփանյանի և Գարեգինի հարաբերությունները ընդհանուր խոսակցության կապ էին։ Էտուարտ ամեն տան մեջ զգալի անձնավորություն մը եղած էր։ Չկար մայր մը, որ օրիորդ Ստեփանյանի նշանտուքը Գույումճյանի հետ չհամարեր իրեն զրկանք։ Հանրային ոխակալությունը կը հաղթանակեր։

Ջայներ հասան Թագուհիի ականջին։ Աչքերը բացավ. բան մը ըլլալու էր. սկսավ զգալ, որ աճապարած էր. քննությունները գաղտնի ըրած էր։ Իր բարեկամներեն ու բարեկամուհիներեն ոմանց հանձնարարեց այս խոսվածներուն վրա լուրեր հավաքել։ Տեղեկագիրները միաձայն էին։ Տիկին Ստեփանյանի անբարոյական կյանքը ապացուցված էր կղզիին մեջ։ Ու զարհուրելի գաղտնիքներ դուրս երևան կուգային։ Բամբասանքն ու զրպարտությունը իրարու միացած բարձրացուցած էին շենք մը, զոր ոչ ոք կրնար քանդել։ Թագուհի հանըմ նորեն հիշեց իր սկզբունքը, «մորը նայե, աղջիկը առ»։ Օր մը հրավիրեց տղան աչքերը բանալ. եղած տարաձայնությունները ամենքն ալ իմացուց։ Գևորգ էֆենտի ալ բաներ մը լսած էր, բայց շատ կարևորություն չէր ընծայած. մորը թախանձանքները վշտացուցին զինքը. ուզեց անոր տարակույսներն ալ փարատել. բայց որու որ դիմեց, երբեք նպաստավոր տեղեկություն մը չկրցավ առնել։ Ահարեկ մնաց հանրային գայթակղության առջև։ Մայրը մոլեգնած էր իրենց եղած խաղին համար։

Կիրակի առտու մը տիկին Ստեփանյան և աղջիկը շատ զարմացան, որ Գևորգ էֆենտի սովորությանը համեմատ չէր եկած այցելության։ Տարակույս չկար, թե վերջին շոգենավին չէր հասած։ Մինչև իրիկուն հեռագիր մը սպասեցին՝ պարապ տեղը։

Ամիսնին լրացած էր ու նույն շաբթուն իջան։ Զարմացած մնացին Գևորգ էֆենտիի չերևալուն։ Կիրակի օր կ՚սպասեին. կեսօրեն հետո ուրիշ այցելու մը ընդունեցին. տաներեց քահանան էր։ Բնական այցելություն մը, որ քիչ մը անախորժ եղավ։

Կես ժամեն ավելի քահանան ասկե անկե խոսեցավ. անուշեն հետո խնդրեց, որ օրիորդը իր ձեռքովը իրեն օշարակ մը պատրաստե, բայց կամաց-կամաց։ Երբ Մարի մեկնեցավ սենյակեն, քահանան տխրությամբ մը ըսավ տիկին Զարուհիի, թե ի՛նչ ծանր պարտականություն մը ունի կատարելու։ Գևորգ էֆենտիի առողջությունը խանգարված է. բժիշկները խորհուրդ տված են, որ չկարգվի. ուստի կը խնդրե, որ նշանը իրենք իրենց կողմե ետ ընեն, որպեսզի աղջկան վնաս մը չհասնի։

Երբ տունեն դուրս ելավ — ա՜խ կ՚ըսեր ինքնիրենը, երանի թե քահանա եղած չըլլայի, այս օրը չտեսնելու համար։ Զավալլը կնիկ, ան ի՞նչ մեռելի ռենկ առավ։

Ճամփան դեմը ելավ Էտուարտ, որ կղզի կը վերադառնար. ժամանակ ուներ, ուստի տերտերին հետ, զոր շատոնց է չէր տեսած, խոսքի բռնվեցավ։ Անկե իմացավ, որ տիկին Ստեփանյան նշանը ետ կը ղըրկեր։ Քթին տակեն խնդաց. մենք գիտենք յա՜, ըսավ մտքեն։

Ճամփան փոխեց, կղզի չէր կրնար երթալ այն իրիկունը. հոն վաղը ժամանակ ուներ։

Զ

Այդ կիրակի իրիկունը Բըթի-Շանի պարտեզը հոծ բազմություն կար։ Երեք երիտասարդները նստած էին այն սեղանի շուրջը, ուր էին գարնան կիրակին, երբ օրիորդ Ստեփանյան նշանվեցավ։

— Էտուարտ տուտուն եկավ,— ըսին։

Էտուարտ շատ հաղթական ներս մտավ. այս անգամ նստավ քովերնին։

— Ի՞նչ լուր,— հարցուցին։

— Նորե՞ն էսկիլեր ալայըմ պիտի կանչեք,— ըսավ հեգնությամբ։

— Բան մը չենք գիտեր, ըսե նայինք։

— Օրիորդ Մարի Ստեփանյանի նշանը ետ եղավ հիմա։

— Վա՜յ,— գոչեցին երեքը մեկեն ապշած։

Էտուարտի հաղթանակը փառավոր էր։ Այդպիսի հաճույք երբեք չէր զգացած։

ՎԻՊԱԿՆԵՐ ԵՎ ՎԵՊԵՐ

ՄԻՆՉԵՎ Ե՞ՐԲ

Ա

Ձմռան վերջին շաբաթները, արև արեգակ կիրակի օրով մը, հազարեն ավելի Բալուցի հայ բանվոր Ջուխուր Չեշմեի խանին բակը՝ բարեկենդանք կ'ըներին։ Ներսը, խանին խորը, կես լուս կես մութ քաշուկ օտային մեջ, Թորոս աղբարը խշտյակ անկողնին վրա ընկողմանի, հաստ սիկարեթը կը քաշե՜ր ու կը քաշե՜ր, տկար կուրծքեն երբեմն-երբեմն մարմըրկած «օ՜ֆ, օ՜ֆ»-եր դուրս սպրդեցնելով։ Իրեն ալ օղի մը բերին հրամցուցին. ելավ նստավ, շտկվեցավ, գավաթիկը անխոսուկ պարպեց, ու քիչ մը ետքը նորեն երկնցավ. աջ բազուկին վրա կռթնած կը հանգըստանար։

Անդին, բակը, տավուլը կը զարնեին. ու հիվանդը հիմակ մտքը ա՜լ իր գեղն էր. սիրտը թմբուկին թափյունին վրա հոն իրեններուն քով կը թռչեր. հո՜ն ալ բարեկենդանք կ'ըներին։ Պառավ մարը, զավակը, կնիկը. բայց անոնցը ուրախության բարեկենդանք էր։ Անանկ գիտեին, թե զարիպնին մինչև համբարձում իրենց քովը պիտի վերադառնար։

Օ՜ֆ, օ՜ֆ։

Հա՜, զատկեն ետքը պիտի երթա՜ր. իր Մելքոնը, մեկ հատիկ զավակը, հիմակ աղվոր կտրիճ մը, պիտի կարգեր։ Ինչո՞վը պիտի երթար։ Ստա՜կ պետք էր ճամփու ծախքի համար, ստա՜կ պետք էր արտը ազատելու համար։ Արտը, մենծ մտմտուքը։ Երսուներկու տարի առաջ երկրեն հինգ հարյուր ղուրուշ պարտքով ելած էր, արտը գրավ դնելով. երսուներկու տարի ի վեր կը դառներ ու կը դառներ, պարտքը կուտա՜ր ու կուտա՜ր. ինքը ծերացավ, պարտքը չլմնցավ։ Ոչ միայն լմնցած չէր,

այլ ավելցած ալ։ Գո՛նե կեսը վճարելու էր, չենե արտը ձեռքեն կ՚երթար։ Արտը՝ ծերության հույսը, զավկին ապավենը, թոռներուն ապագան։ Կ՚ըսեն, թե «թող ողջություն ըլլա, ամեն բանին տեղը կուգա, մեռնողին տեղը չի գար մինակ»․ գացած արտին տեղը կուգա՞։ Քովի տասը ոսկին ո՞ր մեկուն օգտեցներ պիտի։ Օ՜ֆ, օ՜ֆ։

Հիմակ հիսունը անցուկ, Թորոս աղբարը Բալուեն տասնութ տարու Պոլիս գալով՝ հյուսն եղած էր, իր բոլոր երկրացիներուն պես։ Առջի քսան տարին չորս անգամ սիլան ըրած էր․ բայց, տասը տասներկու տարի է Պոլսեն չէր կրնար հեռանալ, վասնզի գործերը գեշ կ՚երթային։ Սակայն եռքեն ուրիշ ճարտարապետի մը քով աղեկ բանած էր ու կրցած էր թե՛ տուն ստակ ղրկել, թե՛ պարտքին ի հաշիվ բան մը վճարել, և թե՛ քսան ոսկի մըն ալ ավելցնել։ Ակռան եթե քիչ մըն ալ սղմելու ըլլար, պիտի կրնար շենք շնորհք երկիր դառնալ, հոն պարտքը վճարել, տղան կարգել ու Պոլիս ճամփել․ ինքն ալ հանգստանար պիտի այլևս։ Բայց այդ ամառը, գործին է՛ն բանուկ օրերը, լաստակերտե մը վար ինկավ, վիրավորվեցավ․ Ազգային Հիվանդանոցը երթալ չուզեց․ «հոնկե․ ղարիբին ճա՛ղը դուրս կ՚ելլա» ըսելով։ Ամբողջ ամառը և աշունը անկողինը անցուց․ ունեցած քսան ոսկիին տասը ծախսեց․ ձմեռը աղեկցավ։ Ա՛լ երկու շաբաթե ի վեր խանին մեջ կը պտըտեր․ բայց կ՚զգար, թե ամառը պիտի չկարենար աշխատիլ, ուստի ավելի խերով սեպեց գարնան երկիր երթալը։ Բայց ինչո՞վ։ Օ՜ֆ, օ՜ֆ։

Երկու-երեք օրե ի վեր, ուղեղին բոլորտիքը խենդուկ մտածմունք մը կ՚ոլրտկեր․ քանի մը անգամ զայն վռնտել փորձեց, բայց անիկա «արսըզ ճանճի պես նորեն իր տեղը կը դառնար»— ինքն էր, որ եռքեն սանկ կը պատմեր։

Ինչպես ուրիշ շատ գործավորներ, Թորոս աղբարն ալ առնելիքվոր մըն էր, բայց պարտապանը շատ հարուստ մեկը ըլլալով, առնելիքը փրցնելու հույսը հիմարամիտ փորձություն մը կրնար համարվիլ, ուրիշ ոչինչ։ Սակայն, հուսահատական վիճակի մը մեջ փրկությունը կրնա խնդրվիլ հիմարական համարված ձեռնարկե մըն ալ։

Այդ ցերեկը, Թորոս աղբարը, անկողնին վրա պառկուկ, օ՜ֆ, օ՜ֆ-ներով շատ մտմտալե հետո, լրջորեն որոշեց ելլել մեյ մը «ատ անօրենին» երթալ․ բան մը վրա չէր ի տար։ «Ծո՛վը իյնողը օձուն կը փաթթվի», ըսավ ինքնիրենը։

Դիմումին վերջնական որոշումը տալեն եռքը, ելավ բակը գնաց, բարեկենդանքը ընողներուն քովը։ Գաղջ օդը լիաթոք ծծեց, ինքզինքը

ավելի կազդուրված զգաց։ Հույսը սրտին ստորմիքը կ՚արծարծեր. «ամառեն մնացած օրվան մը» պայծառ արեգակեն հրահրվելով։

— Էհ,— ըսավ մտովի,— աշխարքիս երեսը չըլլալիք բան չկա, մինակ մեռնողը չողջնար։ Պելքիմ աստված անոր ալ սրտին մերճամեք կուտա։

Բ

Թորոս աղբարը առտուն կանուխ արթնցավ, քեռորդին՝ անգործ պատանի մը՝ քովը կանչեց, որպեսզի իրեն օգնե և ընկերանա։ Ցուպը առավ, երեսը խաչակնքեց և ճամփա ինկավ, նիհարցած սրունքները կը դողդողային։

— Խե՛ր ըլլա, վարպետ,— հարցուցին խանը մնացող բանվորները,— մեծ պահքի երկուշաբթի առտվանցով ասանկ կանուխ կանուխ ո՞ւր բարով։

— Աստված օգնե՝ ըսեք աղբորտանք,— պատասխանեց։

— Է՜յ, աստված օգնե, աստված օգնե, մաղթեցին ամենքը միաբերան,— կարեկցությամբ ետևեն նայելով։

Օդը թեև պայծառ, բայց հյուսիսային սուր հովը փչել կ՚սկսեր։ Տկար բանվորը կամաց-կամաց քալելով, հոգնություն առնելու համար հոս ու հոն մեյմեկ քիչ նստելով, հազիվ երկու-երեք ժամեն Ղալաթիա հասավ, Պահթիար խանը, ճարտարապետ Գասպար էֆենտիին գրասենյակը։

Բանվորները արտոնված էին ազատորեն աղային քովը մտնել նլլելու. ամենքն ալ հետը միշտ գործ կ՚ունենային։ Մարդը դեռ եկած չէր. առջի գիշերը բարեկենդանը ըրած ըլլալով, քիչ մը ուշ պիտի իջնար։ Հիվանդ ծերուկը վերը, սանդուղին գլուխը անկյուն մը կուկուզ նստավ, օդի հոսանքին մեջ։ Քանի մը ժամվան քալելեն տաքցած էր, հիմակ ալ կը մրսեր։ Շատ չանցած աղան եկավ. մինակ չէր։ Հետի մարդը ժամե մը ձգեց գնաց. օտա ուշաղին ալ ան ատենը եկավ ու Թորոս աղբորը «նե՛րս մտիր» ըսավ։

Մարդուկը ցուպը դռանը դրսիդին զետեղեց. տրեխները հանեց ու աչքե հեռու անկյուն մը տեղավորեց և գուլպաներովը կամացուկ մը ներս սպրդեցավ։ Յաղմայապատ ֆեսը վար առավ ու ձեռքը բռնեց, և կայնուկ մնաց իբր թե տիրամոր պատկերին առջևը «անկանիմք առաջի քո» աղերսարկող մը։ Կեցավ։ Սենյակին բարեխառն ջերմությունը իր պաղած մարմինը տաքուկ հեշտությամբ կը գգվեր, կը փայփայեր։ Օ՜խ, ինչ անո՜ւշ էր։ Աղան գլուխը կախ թուղթերը կը խառներ. տասը վայրկյան մը ետքը

աչքերը վեր վերցուց. Թորոսը շատոնց էր տեսած չուներ, բայց մեկեն ճանչցավ։

— Ի՞նչ կ'ուզես,— հարցուց անանկ խռպոտ ձայնով մը, որ աղերսարկուին լեզուն բռնվեցավ, մարդը բերանը չկրցավ բանալ։

— Ի՞նչ պիտի ըսես նե, թե՛զ ըսե,— հրամայեց աղան անհամբերությամբ։

— Աղա,— սկսավ գերընկալ բանվորը, ծուխ ոտվիդ պագնեմ, զավակներուդ արևուն ըլլա, գլուխդ մատաղ ըլլա, համարե, թե սատաղա կուտաս...

— Պո՛շ լաֆ մտիկ ընելու վախիթ չունիմ,— հանդիմանեց աղան,— գործի համար ըսելիք մը ունիս նե, թեզ ըսե տե դո՛ւրս ելիր։

— Աղա, մեմլեքեթ պիտի երթամ. մեղք եմ, հալս նայե։

— Է՛յ, երթաս բարով, ասված հետդ ըլլա, ե՞ս ինչ ընեմ։

— Աղա՛, սա իմ հիսապիս բան մը տայիր. զավակներուդ խերուն ըլլա. սեպե քի ողորմություն կուտաս։

— Կորսվե՛, նամքյոռ հերիֆ,— պոռաց աղան,— անխտար ատեն հացս կերար, էվել էվելոքը քեզի վաստկցուցի, հիմակ ալ ելեր հիսա՞պ կը փնտրես։ Ամենքդ ալ ասանկ եք, մյուսյուպեթնե՛ր։ Ձեռքերնուդ ե՞րբ պիտի խալսիմ։ Հա՛յտե, կորսվե՛։

— Ամա՜ն, աղա, հա՛լս նայե, մերհամեթ ունեցիր. քսան ոսկի տուր տե մեկալ քսանն ալ հելալ ըլլա, կողկողեց ծերուկը։

— Ծո՛, շո՛ւն, ծո, դուն ո՞վ ես քի, ինծի փարա հելալ պիտի ընես,— գոռաց աղան մոլեգնոտ.— կորսվե՛, տե՛ֆ եղիր, չխպնած, չամչցած նամքյո՛ռ շուն։

— Աղա, արդար հախս է, արևուն ու հոգուն դեմը քրտինք թափեր եմ. ամենքս ալ քեզի փարա ենք վաստկցուցեր. մեր սայայեն մարդ եղար տե, հիմա ալ ելեր տե ասանկ կ'ըսես։ Ա՛լ բերնին տվավ հուսահատության մղված բանվորը, զայրույթեն դողդըղալով։

— Ծո՛, Կարապետ,— կանչեց աղան։

Մանչը ներս մտավ ու,

— Սա շունը դուրս նետե, հրամանը առավ։

Թորոսը անշարժ կը մնար։ Օտա ուշաղին թևեն քաշեց, սենյակին դռնեն դուրս հանեց։ Մարդը շվարած տրեխը կը փնտրեր. մանչը զանոնք ոտքովը քաշկռտեց և սանդուղներեն վար գլտորցուց։ Ցուպն ալ տեսավ, զայն ալ անոնց ետևեն նետեց. մարդուն կռնակին ալ բռունցքի քանի մը հարված իջեցնելով, հրեց, սանդուղեն վար ըրավ։

— Տե՛ֆ, եղիր, կորսվե՛։ Էտեպսիզ, ամենքդ ալ ասանկ շա՛ն սուրաթ եք, պոռալով։

Աղային ձայնը նորէն լսվեցավ, մանչը ներս մտավ։

— Կարապե՛տ,— հրամայեց աղան,— ատ շունը մեյ մըն ալ գալու ըլլա նե ներս չմտցնես. թեքմեն տուր, վա՛ր նետե։

Ձե՛, ա՛լ չի գար։

Բանվորը ինքզինքը սանդուղին տակը գտավ, ինչ եղած ըլլալը առանց գիտնալու։ Յազմալը ֆեսը դեռ ձեռքն էր, չարոխին մեկ թեքը հոս, մեկալը հոն, ցուպն ալ վարը՝ գետինը։

Քեռորդին խանին դուռը աթոռակի մը վրան նստած էր և օտապաշի Սիմոնին հետ կը խոսակցեին. աղմուկը լսելով՝ ներս վազեցին ու ծեռուկին հալը տեսնելով, հասկցան, թե վերը ծանր բաներ պատահած ըլլալու էին։ Ցուպը, տրեխները վերցուցին. օտապաշին խեղճը առավ հետը տարավ խահվե օճախիին առջև նստեցուց, քեռորդին ալ քովը տարավ։ Մեյ մեկ սուրճ եփեց ու տաքուկ-տաքուկ հրամցուց. Թորոսին սիկարեթ մըն ալ տվավ։ Մարդը եղածը պատմեց համառոտաբար, հեծկլտանքով։ Օտապաշին ակռաները կը կրճտեր «վահշի՛ներուն» դեմ, զանոնք աղեկ կը ճանչնար։ Թորոս աղբարը ինքզինքը կես ժամեն հազիվ գտավ։ Մեկնելու ատեն սուրճին ստակը ուզեց տալ, բայց օտապաշին չառա՛վ, ինքն ալ օրհնենք տվավ ու ճամփա ինկավ։

— Վահշինե՛րը, յապանինե՛րը,— կը մռլտար Սիմոն։

Հյուսիսային հովն ա՛լ կծու կը փչեր։ Թորոս աղբարը քրտինքի մեջ դուրս ելած էր. խստաշունչ հովը կռնակեն կը զարներ, ա՛խ ու վա՛խ ընելով սկսավ քալել։ Բարեկենդանը կը շարունակվեր, բայց հիվանդին աչքերը բան մը չէին տեսներ, մթագնած էին, մարդը մտմտալու կարողություն իսկ չուներ։

Գ

«Աղա»-ն՝ Ճամառյան ճարտարապետ Գասպար էֆենտին, դեռ քանի տարի առաջ, շալվար հագած բանվոր մըն էր, տյուրկեր Գասպարը։ Թորոսին և ուրիշ քանի մը արհեստակիցներու հետ, ամենքն ալ հյուսն, այդ միևնույն Ջուխուր-Ջեշմեին խանը կը պառկեին կ՚ելլեին, մեկ օտայի մեջ. մեկտեղ կ՚եփեին, մեկտեղ կ՚ուտեին, մեկտեղ կը թափեին։ Իսկ հիմակ, «տյուրկեր Գասպարը» ալ պարզապես «Ճամառյան էֆենտի» էր, բանվորներուն համար՝ «աղա», օրագրության մեջ տիտղոսը՝ «վսեմ.», Թաղական՝ Ղատի գեղի ժամուն, Երեսփոխան՝ Ազգային ժողովին, անդամ «Ազգային կեդրոնական վարչության քաղաքական ժողովո», կառավարության առջև՝ հայ ազգին երևելիներեն— մյութեպերանը միլլեթը էրմենիան»-ին պատկանող։

Երկրէն Բալվա Հավավ գեղեն տասնյոթ տարեկան եկած էր։ Երկիրը «ոտքը չէր կապած», այսինքն, առանց կարգվելու մեկնած էր, ով գիտեր Սթամպոլ ինչ կ՚ըլլա ինչ չըլլար մտածելով։ Արքունի ճարտարապետ Պալյաններուն շինությանցը մեջ հող կրելու գործ մը ճարեց։ Բայց պապուն կողմեն հեռավոր ազգական մը, որ Պալյաններուն գործին մեջ էր, իրեն պաշտպանություն ըրավ։

Առաջին վաստակեն քերական մը գնեց ու կարդալ գրել գիտցող բանվորե մը ընթերցման դասեր առավ խանին մեջ։ Ետքեն հետզհետե Հեգարան մը, Սաղմոս մըն ալ առավ. ասոնք դեռ մինչև հիմակ կը պահեր։ Երբեմն-երբեմն հայատառ թրքաբարբառ թերթ մը կը գներ, զոր կարդալով բերնուց կը սորվեր, տաճկերեն խոսելու վարժության համար։ Ետքեն, Քրիստոստուր Ղազարոսյանին կիրակնօրյա դասախոսությանց հետևեցավ, Ղալաթիո լուսավորիչ եկեղեցիին կից դպրոցը։ Կիրակի մը բացակա չգտնվեցավ։ Քիչ մը գրաբառ քերականություն սորվեցավ։ Ականջները տնկած, «Թեսավրոս»-ին իմաստասիրության մեկնությունը մտիկ կ՚ըներ, ջանալով բան մը հասկնալ, միտքը բան մը պահել, թիվ գրել, կարդալ և չորս գործողություններն ալ սորվեցավ։ Կիրակնօրյա դըպրոցը այցելող երիտասարդե մը քիչ մըն ալ տաճկեվար գրել կարդալու դասեր առավ։

Ինքնամփոփ, լռակյաց երիտասարդ մըն էր. խանը հայրենակիցներուն հետ շա՜տ չէր խոսեր, անոնց երես չէր ի տար։ Կիրակի օրերը դըպրոց հաճախելուն պատճառավ, մյուս բանվորներուն հետ տեսնվելու, մեկտեղ պտըտել երթալու, ախպապություն ընելու նյութապես ժամանակ չէր ունենար։ Երբեք տոնի մը, բանայիրի մը, հագված սգված զբոսանքի չգնաց։ Արվեստակիցներուն վրա իր գերազանցության գիտակցությամբը անզգալաբար հպարտ էր։

Չափազանցորեն խնայող, ժամ չէր երթար, որպեսզի ոչ մոմ վառեր, ոչ ալ թասախները ստակ ձգեր. սիրտը սաստկապես կը նեղանար ամեն անգամ, որ երկիրը մորը քիչ մը ստակ ղրկելու հարկադրվեր։ Հայրը արդեն մեռած էր, օր մըն ալ մորը մահվանը լուրը առավ. քիչ մը տխրեցավ, աչքերը սրբեց, մխիթարվեցավ, տարին քանի մի հարյուր ղուրուշ ավելի մեկղի պիտի դներ։ Երկու կարգուկ քույր ուներ. քեռայրները եկան, երես չտվավ։ Քանի մը ղուրուշ փոխ ուզեցին, «չունիմ» պատասխանեց կտրուկ մը։ «Աշան կեչեր յոլ օլուր— մուկը կ՚անցնի, ճամփա կը բացվի— մտածեց. այսօր չեյրեկ մը կ՚առնեն, վաղն ալ մեճիտիե մը, մյուս օրն ալ ոսկի մը, ետքեն ալ թեքմիլ վաստակդ»։

Մորը մահվամբը խնայած ստակին մեկ մասը վարժապետի հատկացուց, գծագրության դասեր սկսավ առնել։ Կիրակի օրերը ա՛լ Ղա-

զարոսյանին դասերուն չէր երթար, սորվելիք բան մը չէր մնացած։ Ժամանակը թվաբանության և գծագրության նվիրեց, քիչ մըն ալ երկրաչափություն սորվեցավ։ Մեյմեկ շաբաթ փոխ ընդ փոխ Մասիս և Մանզումե կ'առներ, թե՛ հայերենի, թե՛ տաճկերենի մեջ զարգացման համար։ Երբեմն գիրք ալ կը գներ։

Ա՛լ րենչպերությունը շատոնց թողած, հյուսն եղած էր։ Անխոնջ, ճարպիկ աշխատող մը, ազգական պաշտպանին միջնորդությամբը Պալյաններուն գծագրության սենյակը՝ րեսիմի օտան մտավ, այսինքն ճարտարապետության սպայակույտին մեջ։ Աչքը բանալով, գծագրության ճարտարապետական ճյուղերուն աղեկ մը հետամտեցավ, ու միանգամայն հյուսնություն ալ կ'ըներ, բայց քարուկիր շենքերու վրա, ուր արհեստավորը արվեստագետ երևան կուգար։

Հաջողեցավ Պալյան Հակոբ պեյին ուշադրությունը գրավել։ Գեղարվեստասեր ճարտարապետը, ընդունակություն ցույց տվող երիտասարդներուն պաշտպան, ձեռք դրավ հայաստանցի բանվորին վրա, որ «մարդ ըլլալու» հույս կուտար. տեղ-տեղ շենքերու վրա վերակացու ըրավ իր հսկողության ներքև։ Գոհ մնալով, մանր մունր շինությունները անոր հանձնեց։ «Գասպարը» «Գասպար աղբար» եղած էր. ետքեն, «ուստա Գասպար» եղավ։ Օր մըն ալ խանեն ձգեց ելավ. բնակությունը Պեշիկթաշ հաստատեց, գործին մոտ ըլլալու համար։ Քիչ մը սուղկեկ կ'ապրեր, բայց օրը քանի մը ժամ կը վաստկեր երթևեկեն, ու մանավանդ, երկրացիներեն հեռո՛ւ, հեռո՛ւ կը մնար։ Ամենուն հետ ավրված էր, ոչ մեկուն փարա մը փոխ տված էր, ինքը պարտք չուներ ու առնելիքվոր ալ ըլլալու փափագող չէր։ Պեշիկթաշ շալվարը հանեց և ալաթուրքա երկայն սեթիրի հագավ, ֆեսին բոլորտիքեն յազման ալ քակեց, և ուստա Գասպարն ալ եղավ «խալֆա Գասպար»։

Արքունական ու պետական շինությանց աշխատելով հանդերձ, ի հաշիվ անհատներու ալ տուն և խանութ կը շիներ։ Երբ դժբախտ պարագաները Հայոց մենաշնորհ արքունի ճարտարապետությունը կործանեցին, խալֆա Գասպարն ալ կապուտ կողոպուտեն հաջողեցավ իրեն բաժին մը շոպել. սպարապետության շենքերուն կառուցումը իրեն հանձնըվեցավ։ Պալյաններուն ձեռքին տակը բանած ատենը տաճիկ պաշտոնակիցներ ուներ, «խաբու յոլտաշիներ», որոնց հետ մեղսակցությամբ «բացառիկ շահերու» գործը շատ դյուրացուցած էին իրարու, ինքը խալֆա եղավ, անոնք ալ պայ, փաշա, իրար բռնեցին, իրարու արհեստակցական լեզվե աղեկ հասկնալով։

Խալֆան բավական հարստանալով, Հայոց ընկերության մեջ «Ճարտարապետ Գասպար էֆենտի» ճանչցվեցավ։ Ալ «մարդ եղած», ուզեց

կարգվիլ, տուն տեղ ըլլալ, դիրք մը գրավելու Ղատիգեղ անցավ. հոն, «դրամի ազնվականությունը» նոր ծլիլ սկսած էր, և շատ բարակ կրթության պետք մը չկար փայլելու համար։ Կեսարացի հարուստ ընտանիքե աղջիկ առավ, Թաղեցիները զինքը Թաղական խորհրդին անդամակցության կոչեցին։ Հետո, Ղատիգեղեն Ազգային երեսփոխան ընտրվեցավ, ու Ազգային ժողովն ալ զինքը Քաղաքական ժողովին տասնչորս անդամներեն մին ըրավ։

Ղատիգեղ փոխադրվելեն հետո ճարտարապետ Գասպար էֆենտին կամաց-կամաց «Գասպար էֆենտիի» վերածվեցավ։ Ուրիշ նշանավոր անձնավորությանց անունները իրենց արհեստին հայտարարությամբը չէ, որ կը ծանուցվին։ Բայց պարզ «Գասպար էֆենտի»-ն ալ շատ անգլուխ, անպոչ երևույթ մը ուներ։ Մարդը իր պապենական մականունը փնտրեց. «Ջամուսյան» էր, «Ճամուսյան» ընելով վերանորոգեց. օր մը լրագիրներեն մեկը տառասխալով «Ճամառյան» գրեց։ Սխալը շիտակ հոչակվեցավ։ Ու թեև «վսեմի» իրավունքը չուներ, բայց «մեծապատիվն» ալ քիչ էր։ Դեռ այն ատեն փոխանցումի միջնորդը ստեղծված չէր. «ազնվաշուքը» հղացվելու վրա էր, բայց ծնունդի ժամանակը հասած չէր։ Աներոջը միջամտությամբը լրագիրները «վսեմ. Գասպար էֆենտի Ճամառյանը» տեղը կար չկար, քշեցին։ Մարդը եղավ վսեմաշուք կամ վսեմափայլ։

Այսպես, «աղան» ըստ ընթացիկ բացատրության, իր գործերուն զավակն էր։ Սակայն պերճանքին ու փառքին մեջ իր նկարագիրը չթուլցավ, չտկարացավ։ Այդ բիրտ դեմքին վրա ժպիտ մը չէր սահեր։ Միշտ ծանր էր. ոչ ոքի երես կուտար, կնոջմեն ու զավակներեն սկսյալ։ Վախ ազդող չեչոտ դեմքը ամենքը իրմեն հեռու կը պահեր։ Երկայն ծնոտին վրա խոշորկեկ քիթ մը կը հանգչեր. քիչ մը շեղ զետեղված երկու փոքր, բայց սուր ականջողիքը միշտ կը պլպլային, ինչպես մթության մեջ կատվին աչքերը։ Չոր, երկայն իրանը միշտ կանգուն կը մնար. ու տարիքը առած ատենը իսկ մազերը սեփ սև կը փայլեին. հատ մը ինկած չէր։ Ժուժկալ կյանքը զինքը քաջառողջ կը պահեր, գլխեն սկսած։

Ճամառյան էֆենտին կրնար Պոլսո մեջ «հարուստ» համարվիլ։ Բայց ոչ աշխատություն, ոչ կառուցումներու անպակասություն պիտի կրնային տասնհինգ տարվան ժամանակամիջոցի մը մեջ իրեն պարգևել այն գումարը, որ Թուրքիացիներուն համար «պատկառելի» կը համարվի։ Ճարտարապետը կը հարստանար այն միջոցներովը, որոնք «բացեն վաստակ» կը կոչվին։ Սակայն իրովի միշտ կը գանգատեր, թե «միսը շուները կ'ուտեն, ոսկորները իրեն կը թողուն»։ Շուները իր ընկերակից պաշտպաններն էին. «միսը» հանրային շինություններեն գողցված դրամին է՛ն պարարտ մասը. «ոսկորները», բնականաբար, թափթփուկները։

«Հարկը մարդս հնարիմաց կ՚ընե», ըսած են։ Ճարտարապետն ալ խելք բանեցուց և հասույթի աղբյուր մը ստեղծեց, որմեն հոսումը ամբողջապես ինքը պիտի վայելեր, իբրև իր արդար, անարատ վաստակը։

Շարունակաբար հինգ-վեց հարյուր հայ գործավոր կը բանեցներ. որոշեց ասոնցմե յուրաքանչյուրին երկուքեն հինգ ոսկի պարտական մնալ ամեն տարի, որով, բացեն, տարեկան 2,000—2,500 ոսկիի եկամուտ մը կ՚ապահովեր։ Հղացած խորհուրդը գործադրեց, ամեն մեկ բանվորի վար գրած ստակի մեկ մասը հաջորդ տարվան սկիզբը կը վճարեր. պարտքը ամենավերջին կ՚ավելնար։ Եվ այսպես անընդհատաբար, բարդում բարդումի վրա։ Գործավորները կը տխրեին, կը նեղանային, իրենք իրենց մեջ կը բարկանային, բայց առանց ընբոստացման։ Ճարտարապետը միշտ գործ ուներ, անոր ձեռքին տակ բանողին վախ չկար, թե պարապ կը մնար։ Գործավորին պահանջը տարվե տարի կ՚աճեր անզգալաբար։ Երբ մարդը երկիր պիտի երթար, առնելիքը կա՛մ ի հաշիվ կ՚անցըներ, կա՛մ իր տեղը անցնողին կը փոխանցեր, որ ընդհանրապես կա՛մ զավակ մըն էր, կա՛մ եղբայր մը, կա՛մ մոտավոր ազգական մը. յուրաքանչյուր գործավոր «աղային» հետ երսունեն մինչև հիսուն ոսկի «առկախ հաշիվ» մը ուներ։ Այսպես կտրված օրականներու համագումարը իբր «հավայեն վաստակ» 30,000 ոսկիի կը հանգեր ճարտարապետին հաշվետետրերուն մեջ, ուր Թորոս աղբարն ալ քառսուն ոսկիի առնելիքվոր կը ներկայանար. բայց մարդը, ձգելով, անցած էր ուրիշ ճարտարապետի մը քով։

Հիմակ, տագնապի մեջ, հիվանդ ծերուկը փրկության ուրիշ հույս չունենալով, այդ առնելիքը հիշած էր։ Զայն պահանջելու փորձությունն էր, որ «արսըզ ճանճի պես» ուղեղին շուրջը ոլրտկած էր բարեկենդանին կիրակի օրը, երբ անկողնին վրա երկնցած կը հեծեր։ Ինքզինքին սիրտ տված էր, հիշելով, թե «ծովը իյնողը օձուն կը փաթթվի»։ Իրավ է, թե օձը երբեմն կը կարեկցի պաղատող աչքերու, գոնե, առասպելապատում մասալներու մեջ,— բայց խեղճ հայաստանցին մտքեն չանցուց, թե ոևէ առասպելաբանություն իսկ երբեք երևակայած չէ ստեղծել մասալ մը, որուն մեջ Գասպար էֆենտի մը, օր մը օրանց գեթ օձին չափ գթասիրտ երևնար։

Դ

Պահթիար խանեն վերադարձին, Թորոս աղբար ոտքի վրա կենալու կարողություն չունենալով, տաքուկ բան մը խմեց և անկողին մտավ։ Երեքշաբթի առտու ինքզինքը աղեկ չզգաց, բայց ջանք մը ըրավ, ելավ, գնաց բակը անգործ բանվորներուն քովը նստավ։ Քեռորդին պատահած

դեպքը արդեն առջի իրիկունը ձանձած էր, ինքն ալ ամբողջացուց՝ գըլխուն եկածը։ Չորեքշաբթի առտու ա՛լ կրցավ ելլել, բայց հինգշաբթի տեղեն շարժելու անկարող գտնվեցավ։ Երկրացիները զինքը տեսնելու եկան։

— Վարպետ, ինչո՞ւ պառկեր ես, ի՞նչ ունիս,— հարցուցին։

— Ա՜խ, չիյտիմ, չիյտիմ, գեշ իմ, գեշ,— ճըվաց։

— Երթանք հեքիմ մը բերե՞նք,— առաջարկեցին։

— Դուք գիտիք,— պատասխանեց։

Գացին դեղարանեն տոքթ. Գարեգինը բերին։ Բժիշկը հանձնարարեց հիվանդը անմիջապես Ազգային Հիվանդանոցը փոխադրել։ Ծերուկը «Փրկիչ» անունը լսածին պես, սկսավ աղաղակել, թե՝

— Աղեկ իմ, աղեկ, բանի՜կ մը չունիմ։

— Աղեկ ես, աղեկ, բան մը չունիս, ե՛ս ալ կը տեսնեմ,— հայտարարեց բժիշկը մեղմաձայն քաղցրությամբ, բայց քանի մը օր Հիվանդանոցը մնալու ես, որպեսզի շուտով ոտքի ելլաս։

— Ա՜խ, էֆենտի,— ըսավ հիվանդը հեծկլտալով,— Հիվանդանոց գացող ղարիպը հոնկե ոտքով դուրս չելլար. ճաղը դուրս կը հանեն։

Երիտասարդ տոքթորը մորուքը ձեռքը առած, մտմտալ սկսավ։ Պոլսո բժշկական վարժարանեն, այն տարին իսկ շրջանավարտ, այս երկրորդ անգամն էր, որ պանդուխտի մը Ազգային Հիվանդանոցը փոխադրում կը պատվիրեր. բայց թե՛ մին և թե՛ մյուսը ի լուր «Փրկիչ»-ի անուն դող ելած էին։ Եվ սակայն, Ազգային Հիվանդանոցը հատկապես պանդուխտներուն համար հիմնված է։ Այդ սարսափին պատճառը ետքեն պիտի փնտրեր. առ այժմ, ինչ ալ ըլլար, այս խեղճ մարդը հոս պահել ներելի չէր։

Չէ՛, չէր կրնար հոն մնալ։ Գետնին վրա նեղկուկ սենյակ մը, երկու հարկի բաժնված, մեկը վերև, մյուսը ստորև։ Յուրաքանչյուրին վրա վեց անկողին քով քովի։ «Մեսաժըրիի» շոգենավերուն երրորդ կարգի քապինները, ըսավ մտովի, ասոնցմե ավելի ընդարձակ ու հանգիստ են, թեև անգամ մը այդ շոգենավներեն մեկուն մեջ ճամփորդած ատեն, չափազանցորեն նեղված էր, վեց անկողին մեկ խցիկի մեջ, երեքը աջ, երեքը ձախ կողմը, գրեթե իրարու վրա դիզված։

Հոս բժիշկը դժվարությամբ շունչ կ՚առներ. քի՛չ մը անդին, օճախի մը վրա լուբիան եփող դրված էր. գործավոր մը նստեր սոխ կը ջարդեր, ածուխին հոտը չէր անցած. ու պեքյարներու, լվացվո՜ղ պեքյարներու արտաշնչումը այդ բոլոր հոտերը մի հալեցնելով, կ՚ստեղծեր ապականյալ մթնոլորտ մը, որ լեզվին մեջ անուն չունի։

— Աղբա՛ր,— ըսավ քաղցրաձայն,— հիվանդանոցը քեզի աղեկ կը նային, հոգ մի ըներ, Փրկիչը ձեր վախցած տեղը չէ. ես ալ հոն կուգամ քեզի կը նայիմ։

Ու մյուսներուն դառնալով,

— Ասոր դեղերը դուք չեք կրնար ընել. շա՛տ ալ սուղ են. հատուկ հիվանդապահ պետք է։ Ձէ նե ես չեմ խառնվիր։

Բժիշկը դուրս ելավ, որ երթա, ձեռքը իբր այցելագին կես մեճիտիե դնել ուզեցին. չառավ. «տանելու ծախք ըրեք» ըսավ. ու, անմիջական փոխադրումի պատվերին վրա պնդելով, մեկնեցավ։

Երբ գործավորները հիվանդին քով վերադարձան, մարդը անկողնին մեջ կուլար։

— Մի լար, Թորոս էմմի, մի լար. չոճո՞ւխ ես, ինչ ես,— ըսին մարդիկը հեղձամղձուկ ձայնով,— քանի մը օրեն ոտքի կ՚ելլաս։

Հիվանդին արցունքը Փրկիչ երթալու հանձնառությանը հավանություն էր։

Երկու բանվոր անմիջապես Մեծ Նոր Խանը Հիվանդանոցին գրասենյակը երթալով, մուտքի մեճիտիեն տվին, թեզքերեն առին և պատգարակ մըն ալ մեկտեղ, խան եկան։ Հիվանդը անկողինը նստեցուցին, զգեստները հագցուցին, մարդը ձեռքը մեջքը տարավ, ապահով ըլլալու, թե տասը ոսկին պարունակող քսակը հոն էր, իր տեղը, ամուր մը կապված։ Թևերը մտնելով պատգարակը տարին։ Վեց հոգի միասին ճամփա ինկան, պատգարակը փոխ ընդ փոխ կրելով, ինչպես դագաղ մը։ Քալեցին ու քալեցին, մինչև տեղ հասան։ Հիվանդը տնօրենին հանձնվեցավ, խեղճին խոսք տրվեցավ զինքը գալ շուտ մը առնելու։

Երբ Թորոս աղբոր զգեստները փոխեցին, մարդը աղաղակ մըն է բրցուց, լալ մըն է սկսավ։ Տասը ոսկին քովը չէին թողուր։ Կանոնի հակառակ էր, որ հիվանդին քով ստակ մնար։ Ելած օրը, հանդերձներուն հետ մեկտեղ պիտի առներ։

Ե

Մեծ-պահքի կիսուն ա՛լ դաշտի կյանքը Բալվա հայ գեղացիին համար սկսած է։ Բայց գարունը իր հետ տրտմություն կը բերե. պանդխտության գացողները, ընդհանրապես այդ եղանակին ճամփա կ՚իյնան, մինչ վերադարձներն ալ սովորաբար աշնան տեղի կ՚ունենան։ Ձմեռը Պոլիս հյուսնության գործ շատ քիչ ըլլալով, երկիր երթալ ուզողները խանը պարապ ժամանակ չեն անցըներ. զատկեն ետքը շատ քիչերը կը վերադառնան, ուժաթափները, հիվանդները, ամառը բանելու անկարողները։

Թորոսին տունը թե՛ ուրախ էին, թե՛ տրտում։ Թորոսը պիտի գար, բայց Մելքոնն ալ՝ տղան, պիտի մեկներ։ Սակայն, սկսած էին անհանգիստ ըլլալ։ Երկու բոսթա էր գիր չէր եկեր, մարը գեշ երազներ կը տեսնար. գիշեր մը լուր առին, թե ցորեկը Սթամպոլեն բոսթան հասած էր. իրենց նորեն գիր չելավ, բայց իմացել էին, թե «անաճ» եկած է։ «Անաճ»-ը տեսակ մը տեղեկագիր է, զոր երկրի վաշխառուներուն Պոլսո ներկայացուցիչները— բոլիցաճիները— պարբերաբար իրենց տիրվտանցը կը ղրկեն ամիսը մեկ երկու անգամ պարտատեր գեղացիներուն վերաբերմամբ մանրամասն լուրեր հաղորդելով։ Ինչ կ՚ընեն անոնք, աղե՞կ են, հիվա՞նդ են, ո՞ղջ են, մեռա՞ծ են, պարտքերնուն ի հաշիվ ի՞նչ վճարած են, նոր պարտք կ՚ընե՞ն, գործ ունի՞ն, թե պարապ կը պտըտին։

Մելքոնը առտուն ելավ իրենց պարտապահանջին երթալու։ Անշուշտ անոր ալ «անաճ» եկած էր. հորմեն թերևս լուր մը ունենար։ Գացած ատենը կես ճամփան դեմը քանի մը հոգի ելան. իրենց կուգային. «գլուխըդ ողջ մնա» ըսին։ Հարը հիվանդանոցը մեռեր էր «անաճեն» հիմակ իմացեր էին։ Մեկտեղ տուն գացին։ Հետզհետե ուրիշներ ալ եկան մխիթարանքի։ Մեկու մըն ալ նամակ եկած էր. «տղան թող թեզով գա, հորը գործերը նայի» կը գրեին։ Մեռած ատենը վրան ստակ կա եղեր, բայց հիվանդանոցեն չեն ի տար։ Ժառանգը ով էր նե, ան գալու էր։

Զ

Հորը մահվան լուրը առածին պես՝ Մելքոն ելավ Պոլիս եկավ, մայրն ու պառավ մամը իրենց սուգին հետ միս մինակ ձգելով։ Հայ գյուղացին պարապ ատեն չունի, որ նստի իր մեռելը լա։ Սուգը ունևորին կը վայելե, պերճանք է։ Իրենց պապենական վաշխառուն երեք ոսկի ևս տվավ, ճամփու ծախքի համար. «Ա՛ս սո՛ն բարերարությունն է, որ կ՚ընեմ», հայտարարելով։ Մելքոնն ալ օրինավոր պայմանագրությամբ հանձն առավ, որ երբ Պոլիս հասներ, մինչև ամիս մը կա՛մ ամբողջ պարտքը պիտի հատուցաներ, հինն ու նորը մեջը ըլլալով, կա՛մ թերհաշիվ մեծկակ վճարում մը պիտի ըներ։ «Հորդ քովեն շատ փարա ելեր է, ըսավ վաշխառուն, պարտքերնիդ ա՛լ տալու եք»։ Արտը առնելիքվորին պիտի մնար, եթե վճարումը որոշյալ պայմանաժամին տեղի չունենար։

Պոլիս հասնելուն երկրացիները գացին զինքը շոգենավեն առին ու Ջուխուր Ջեշմեին խանը տարին։ Հորը օտան ու անկողինը դեռ անանկ կը մնային, տղին ավին։

Երբ լացը լմնցավ, անցած դարձածները իրեն պատմեցին. Գասպար էֆենտիին անօրենությունները, հորը հիվանդությունը, Փրկիչ փոխադրումը։ Թորոս էմմուն Փրկիչ տարվեն քանի մը օր ետքը իրենք գացեր, հիվանդին փնտրեր, տեսնել ուզեր էին։ Երկու օր առաջ մեռեր է եղեր։ Վրան տասը ոսկի գտնվիլը գիտեին, ուզեր էին։

— Դուք անոր ի՞նչն եք,— հարցուցեր էին։

— Երկրացիները,— պատասխաներ էին։

— Զավակը, աղբարը, մեկ խըսը՞մն եք։

— Չէ՛։

— Է՛յ, անանկ է նե, ձեզի ի՞նչ, քի եկեր մալ փնտրելու ելեր եք։ Հայտե՛, յալլա՜, գործերնուդ գացե՛ք։

Իրենք ալ կարծելով, թե տասը ոսկիին իրենց հանձնումը կը մերժվեր, որովհետև օրինապես ժառանգորդ մը չէր ներկայանար, ուստի երկիր գրած էին, որ զավակը ելլե գա։

Այս ամենը Մելքոնին պատմվելե հետո, մյուս օրը, երկու բանվոր, երիտասարդը իրենց հետ առնելով, ելան Մեծ Նոր խան գացին, հիվանդանոցին գրասենյակը, որպեսզի հասկնան, թե օրինական ի՛նչ գործողություններ կատարելու է, ժառանգությունը ձեռք անցնելու համար։

— Ընելիք բան մը չկա,— հայտարարեց քարտուղար էֆենտին, հրամայական կտրուկ ձայնով։— Հիվանդանոցը ձրիաբար դարմանվող ղարիպին վրայեն ի՛նչ ելլա նե հիվանդանոցին կը մնա։ Նայվելուն, թաղվելուն ծախքերու փոխարենն է։

Գեղացիները բերաննին բաց մնացին։ Իրենց հիվանդը երկու օր պառկեր ու մեռեր էր. ծախսը ի՛նչ էր նե, թո՛ղ առնեին, մնացածը տային։

— Փարա մարա չկա՛, օրենքն ա՛ս է,— ըսելով, քարտուղարը մարդիկը ճամփել ուզեց։

— Ի՞նչ կ'ըսես, էֆենտի, դո՞ւք ալ մի ղարիպին հախը կ'ուտեք,— պատասխանեց Մելքոն։

— Ծո՛, խըմպըլ,— պոռաց քարտուղար էֆենտին,— գալդ տահա քանի՞ օր եղավ քի, պոյեդ վեր խոսքեր կ'ընես։

— Քանի օր եղավ նե եղավ։ Հարս քանի՞ օր պառկեցավ քի, ատ խըտար փարա վար կը դնեք։

— Քանի օր պառկեցավ նե պառկեցավ, օրենքն ա՛ս է. մեռնող ղարիպին վրայեն ի՛նչ ելլա նե Հիվանդանոցին կը մնա. հասկցա՞ք։ Հիվանդանոցը ղարիպներուն համար է, ղարիպներն ալ Հիվանդանոցի համար են։ Հա՛յտե նայինք, կորսվեցե՛ք, դո՛ւրս ելեք։ Յալլա՜հ. ի՛նչ չան սուրաթ հերիֆներ եք, սահաթ մըն է գլուխ կը տանիք կոր։ Ազգին հացը

կ՚ուտեք, հիվանդանոցը ձեզի համար է, ամենքս ձեզի համար կը հոգնինք, կ՚աշխատինք, արյուն քրտինքները կը մտնանք, անկե ետքն ալ ելեր քանի մը ղուրուշը կը փնտրեք կոր։ Վա՜յ նամքյոռ հերիֆներ, վա՜յ։ Ձեր հախեն քուրտերը կուգան, քուրտե՜րը։ Սո՜ խը՛մպըլ, հայրդ տարիներով պառկեր նե, օր մը պիտի գայիր հարցնեի՞ր, փնտրեի՞ր, քյոռ մանղր մը պիտի բերեի՞ր։

Մելքոնը, անտաշ գեղացիի պնդահամառ մտքովը, ուր պոլսեցիին նրբաբանությունները սպրդման ծակուկ մը չեն կրնար գտնել, Փրկիչի պաշտոնեին բոլոր զայրալից գոռում գոչումներուն մեկ պատասխան մը միայն կուտար, որ հարցում մըն էր.

— Հարս քանի՞ օր պառկեցավ քի ատ խըտար փարա վար կը դնես։

Իրեն ընկերացող բանվորները, որոնք երկար ատեն Պոլիս կեցած էին, ավելի բարկացած ըլլալով, կը ջանային ողոքել և համոզել, առանց ծանր խոսքեր ըսելու, իսկ Մելքոն հստակ իրողությունը միայն կը տեսնար, հարը քանի՞ օր պառկած էր։ Հայաստանեն եկած գեղացիին համար տասը ոսկին հարստություն մըն էր։

— Էֆենտի, աղքատին հախը պիտի ուտե՞ք, աստուծո արդար դատաստանեն չե՞ք վախնար։

— Սո՜, էշե՛կ, ծո, ավանա՛կ, տա՛ղ այուսի, տահա կը խոսի՞ս կոր,— որոտաց քարտուղար էֆենտին.— «Սա հյոտուկը դուրս հանեցեք» հրամայեց։

Սպասավոր մը, որ դուռը դռանը առջևը կը կենար, ներս մտավ, Մելքոնին թևեն քաշկռտելով, հրեց հրմշտկեց, դուրս հանեց. «Հիմակ զապթիե կը կանչեմ» սպառնալիքով։ Մյուսներուն ալ՝ «յալլա՜, դուրս նայիմ, տեֆ եղիք» պոռաց։

Ազգային Հիվանդանոցին գրասենյակեն վռնտված հայ բանվորները շիտակ Ազգ. Պատրիարքարան իջան, գործը հասկցնելու համար, հոնկե ալ ճամփու դրվեցան «Պատրիարքարանը Հիվանդանոցին գործերուն չի խառնվիր» պատասխանը ստանալով։

Է

Ատ իրիկունը Մելքոն բերանը բան չդրավ։ Խանին բակը, օտային դռանը առջև, աթոռակի մը վրա նստած, կը մտմտար։ Գնա՜ց, արտը գնա՜ց։ Հիմակ անդին, երկիրը, զավալը մարն ու մամը, ո՞րը լային պիտի, մեռելնի՞ն մի, ղարիպնի՞ն մի, չէ՞ նե արտերնին մի։ Ու ի՞նչ պիտի ուտեին, վերկիները ուրկե՞ պիտի տային։

Ճաշերնին ընելե հետո, շատ մը բանվորներ ձեռքերնին մեյմեկ աթոռակ՝ եկան Թորոս աղբոր օտային առջևը բոլորեցան, նստան։ Պատահածը իմացեր էին. խոսակցությունները, գանգատները օրվան դեպքին շուրջը կը դառնային։ «Ջավալլը մարդը հախ չունե՞ր քի Հիվանդանոց երթալ չէր ուզեր, կը խորհեին. իշտե հեմ կյանքեն եղավ, հեմ փարայեն. աս ինչ անօրեն անաստվածի գործ է»։

— Ա՜խ, աստված, ա՜խ,— կ՚աղաղակեին, վեր երկինքը պսպղուն աստղերուն նայելով,— աս մինչև ե՞րբ պիտի քաշենք։ Մեր Հայուն մեզի բրածները ա՛լ Տաճկին բրածները մոռցնել կուտան։ Երկիրը՝ մեր ազգեն հայ քրիստոնյան է, որ օձի պես վզերնիս կը փաթթվի, հողերնիս, տուներնիս, ունեցածնիս չունեցածնիս ձեռքերնուս կ՚առնե. նորե՜ն չի կըշտանար նորե՜ն չի կշտանար։ Հոս՝ Սթամպոլ, մեր ազգեն հայ քրիստոնյան է, որ հախերնիս կ՚ուտե, մեր փարայովը մարդ կ՚ըլլա, ու մեզի ղարիպության մեջ չյուրութտյուրմյուշ կ՚ընե մեզի Հիվանդանոցները կը մեռցնե։ Մեր ազգն է, որ մեզի համար հիվանդանոց կը շինե ու զավալլը բնչպերին երկու փարային աչք կը տնկե, ճեպեն կը գողնա, ավուր հացի կարոտ կը թողու։ Ա՜խ, աստված, ա՜խ, աս մինչև ե՞րբ, մինչև ե՞րբ։

Ը

Երկու բանվորները, որոնք Մելքոնը Հիվանդանոցին գրասենյակը տարած էին, առտու մը նոր լաթերնին հագած և նորեկ ղարիպը իրենց ետևը ձգած, Ղալաթիա գացին, Պահթիար խանը։ Օտա ուշաղի Կարապետը զիրենք աղեկ կը ճանչնար, խնտումերես բարևեց։ Աղան ներսն էր, մենակը, իրենք երկուքը մտան, Մելքոնը դռանը ետևը կայնեցուցին։ Ճարտարապետը այցելուներուն հարգական ընդունելություն ըրավ, աթոռին վրա սանկ մը շարժելով, և ձեռքին երկու իրեք մատերն ալ քթին մոտեցնելով, իբրև բարև։ Ասոնք պիտանացու, առաջնակարգ գործավորներն էին, պատվել պետք էր։ «Ընտոր եք» մըն ալ հարցուց։ «Ողջ ըլլաս, աղա, աղոթող ենք», պատասխանեցին։ Սուրճ ալ հրամայեց, ու մեյմեկ ալ սիկարեթ հրամցուց, զոր մարդիկը ի հարգանս, թեմեննաճով առին, բայց ձեռքերնուն մեջ պահեցին, առանց ծխելու։ Աղային առջևը սիկարա՞ պիտի քաշեին։ Ան իր աղայությունն էր ըրած, հրամցնելով։

Բանվորները սակայն լուռ կը մնային, կ՚երևար, թե շատ ծանր թեքլիֆ մը ունեին ընելիք, ուստի վարանոտ կը մնային։ Վերջապես, «ինչ ունիքը» աղան ինք հարցուց։ Երկուքը իրարու երես նայեցան, ավելի տարիքոտը համարձակեցավ բերանը բանալ։ Ճարտարապետը քիթը բե-

բանը ծոմոկեց, հերստած, Թորոսին անունը լսելուն պես, ու տղուն գալն ալ իմանալով։ Առաջարկնին լսեց, դժկամություն հայտնեց, բայց վերջապես զիջում ըրավ, «խաթերնուն համար»։ Նվազ տարիքոտ վարպետը ուրախությամբ ելավ դուռը բացավ. Մելքոնը ետին կայնուկ էր, ներս մտցուց։

— Հայտե, աղային փեշը պագ տե, աղոթք ըրե, քեզի ընչպերության գործ պիտի տա, հինգ ղուրուշ օրինակով։

— Շա՜տ է, շատ,— գոչեց աղան։

— Աման աղա,— պաղատեցան,— պարտք ունի՜, անդին պիտի ղրկե, ասդին պիտի ուտե, վերկի պիտի տա. սեպե քի սատախա կուտաս։

— Է՛յ, բեք աղեկ,— ըսավ աղան վեհաշեշտ ձայնով։

Մելքոնը բարձր հասակը խոնարհեցուց, աղային «էթեկը առավ» ու նորեն կանգնեցավ և խաչ-բարև առջևը կեցավ։

— Ամա, հորդ պես նամքյոռ պիտի չըլլաս,— մրմռաց աղան,— մեռե՞ր է, հա՞։

— Հրամմեր ես, աղա,— պատասխանեց տղան։

— Էյ հայտե, վարպետներուն խաթերն համար աֆ ըրի։

— Ողջ ըլլաս, աղա, ասիկ անանկ տղա չէ,— հայտարարեցին երկու վարպետները միաբերան,— քեֆիլը մենք ենք։

Ու տղային արևշատության համար օրհնենք տալով, մեկնեցավ, Մելքոնը՝ իրեն եղած աչքով նշանին վրա անգամ մը նորեն ծռելե ու աղային քղանցքը կրկին պագնելե հետո։

ՈՍԿԻ ԱՊԱՐԱՆՋԱՆ

(ՎԷՊ ԳՈՐԾԱՎՈՐԻ ԿՅԱՆՔԷ)

Ա

Արմիկը ա՛լ հասուկ աղջիկ էր, տասնիննին մատ մը կար, հորեղբայրը՝ Ղուկաս աղան և ԷՆԿԷՆ՝ Վարդենի տուտուն, հորե մորե որբը ժամ առաջ կարգել կ՚ուզեին։ «Շատ նազիկ» էր, այսինքն՝ առողջությունը իրենց մտմտուք կուտար։ Բայց, դեմը խըսմէթ մը չէր ըլլար։ Ղուկաս աղան սկսավ ալ չորս դին իյնալ։ Տնտնալու չէր ի գար։

— Ետքեն երկու քար ալ առնենք տե, գլխնուս զարնենք նե, ֆայտա չունենար,— կ՚ըսեր կինը։

Մարդը բրավ չըրավ աղեկ տղա մը ձեռք ձգեց. Սամաթիացի Արթաքի աղան։ Մանչը մեծպահքի կիրակի մը հորեղբորը հետ խասգեղ աղջիկտեսի գնաց և Արմիկին հավնելով, դիմացի կիրակին ալ խոսք կապը տարին՝ հետևյալ համաձայնությամբ։ Աղջկանը հորենական ժառանգությունը՝ Րումելիի տասներկու Երկաթուղի՝ փեսին պիտի հանձնվեր Պատրիարքարանով նշանտուքին օրը. օժիտը Ղուկաս աղային վրա։ Առջի պսակին ալ հարսնիք։

Տղուն սիրտը շատ նեղցավ, որ երկու ամիս մը համբերել պիտի պարտավորվեր. «գործերը երեսի վրա պիտի մնային»։ Բայց ձեռքեն ի՞նչ կուգար։ Մինչ առջի պսակ հարսնիք չէր ըլլար։ Օրացույցը ասանկ կը գրեր։ Ու, ձեռքեն բան մը չգալուն, քթին տակեն կը մրմռար։

— Պե՛, աս մենծ պաքը ի՞նչ է նե. Քրիստոս խաչվեր է, մեռեր է, հայտե սուգ պահենք, չկարգվինք, ուրախություն չընենք։ Բեք աղեկ, ըսելիք չունիմ։ Է՜յ, զատիկին ինչո՞ւ չկարգվինք, ուրախություն չընենք։ Քրիստոս հարություն առեր, գերեզմանեն ելեր է, աղեկ ա՞. մենք ալ

խնդանք, մենք ալ ուրախանանք։ Չէ՛, չըլլար եղեր։ Չէ՛. աս մեռեր է տեյի, մի՛ կարգվիր, ուրախութիւն մի՛ ըներ. աս հարութիւն առեր է տեյի մի՛ կարգվիր, ուրախութիւն մի՛ ըներ։ Ինչո՞ւ։ Չէ՛, ասիկա խելքիս բանը չէ։

Ու, «խելքին բանը» չըլլալուն, վարդապետներուն մորուքին կը հայհոյեր։ Օրացույց շինողները անոնք էին։

— Հե՜յ, վա՜խ,— կը մըլտար,— Օգսենը ողջ ըլլալու չէ՞ր fի, ձեռքը մեճիտիե մը կոխեի տէ, Օրագիրին մեջ սանկ աղվոր մը գրել տայի, հախերնուն գայի, սիրտս աղեկ մը պաղշտկեր։

Իսկ անդին Ղուկաս աղան ալ, «երանելի Նախահարց» իմաստուն հեռատեսութեամբ սահմանած կարգ կանոններուն վրա կը սքանչանար։ Այդ բարեխնամ օրենքներուն շնորհիվ էր, որ առջևը երկու ամիսեն ավելի ատեն պիտի ունենար ու գործերը պիտի կրնար կարգադրել։ Արմիկին օժիտը խոսքով չէր շինվեր. և ո՛չ ալ հարսնիքին ծախքերը լաֆով կը վճարվեին։ Քիչեն քիչը քսան ոսկիի պետք ուներ. մեկ օրեն մյուսը ո՞ւրկե պիտի ճարեր։

Շահերու մշտնջենական հակադրութիւնը։ Բրուտը՝ որ բարկ արևը կ՚ըղձա, որպեսզի իր անոթները չորնան, ու երկրագործը՝ միևնույն պահուն առատահոս անձրևի համար կ՚աղոթե։

Հիմակ վաթսունը անցուկ, քառասունհինգ տարիե ի վեր աշխատող գրաշար Ղուկաս աղան դեռ երկու մեճիտիե քով քովի չէր կրցած դնել նեղ օրվան համար։ Եվ ընտո՞ր ալ խնայողութիւն ըներ։ Քանի մը մեճիտիե շաբաթականը ո՞ր մեկ ծախքին ձեռք պիտի տար. տանը վարձքի՞ն, ուտելիքնո՞ւն, վրագլուխի՞, ծխախոտի՞ն, երթալ գալո՞ւն։ Հապա ան պարապ մնալները, ապա ան հիվանդանալները, որ գրաշարին օջախին մուխը կը մարեն։

Սակայն, «փառք Տեառն» ահա տասը տարի էր, որ միևնույն տպարանը կը բաներ, առանց օր մը բացակայութեան. շաբաթականն ալ վեց մեճիտիե. հրապարակին վրա գրաշարի է՛ն բարձր բանողչեքը։ Բայց, ասոր հետ մեկտեղ, երկու ծարերը պիտի չկրնար իրարու բերել, առանց պեյլիկի կարերուն օգնականութեանը։ Խասգեղցի ուրիշ կնիկներու պես, Վարդենի տուտուն ալ Արմիկին հետ, բանակին ճերմակեղենները կարելով, տարին մինչև քսան ոսկի մը կը հանեին։

Խոսք կապը տրվելեն հետո, գրաշարը իր ելմտացույցը պատրաստելու ետևե եղավ։ Ելքին սյունակը շուտ լեցվեցավ անխուսափելի ծախքերու թվանշաններով, զորս դիմավորելու համար, «մուտք»-ին կողմը հուսադրական ենթադրութիւններ կը շարվեին միայն։ «Գլուխգործոց հույսը», ինչպես ժպտելով կ՚ըսեր, պեյլիկեն գանձումի ակնկալութիւնն էր։

Ինը ամիս կար փարա մը առած չունէին, սակայն «տաճիկը» խոսք տուած էր, ամենուն առնելիքները ռամազանին վճարել։ Ռամազանն ալ աս տարի զատկեն երկու շաբաթ ետքը կուգար։ Ուրեմն, ձեռքը տասնհինգ ոսկի մը պիտի անցնէր, կնոջը հաշիվներուն նայելով։ Աս, աղեկ։ Ակռան կը սղմեր, տանը ծախքեն ալ շաբաթը մեճիտիե մը խնայողություն կ՚ըներ. քիչ մըն ալ պախալ չախալի պարտք կը թողուր։ Ձեղավ նե, տանը վարձքն ալ ամիս մը ետ կը ձգեր։ Տպարանեն ալ ան օրերը անշուշտ իրեն կանխավճար մը կ՚ընեին։ Սանկ նանկ, մինչև տոչի պսակ ձեռքը քսան-քսաներկու ոսկի մը կ՚անցներ։ Բայց այգ ստակը հարսնիքի մոտերը պիտի ունենար։ Հո՛գ չէ. ծախքերն ալ ան օրերը պիտի ըներ, ա՛ս Պատրիարքարան է, ա՛ս տերտեր՝ է, ա՛ս ժամ է, ա՛ս ձեռք պագի երթալ է, ա՛ս իրենց քիչ մը վրա գլուխ շինել է, ա՛ս սա՛ է, ա՛ս նա՛ է։ Աղեկ ագ կողմեն սիրտը հանգիստ կը մնար, բայց, օժիտը ընտո՞ր պիտի ըներ։

— Աղջկան ճեճեզը մանչու լաթ չէ քի, երթաս առ, Մայերեն կես ժամվան մեջ առնես,— կ՚ըսեր ինքնիրենը։

Շաբխան, սճարբինը ետքի օրերն ալ կրնային գնել, սակայն, ֆիստանները, ճերմակները, է՛ն ո՛չը, Նոր կիրակիին երկուշաբթիեն կարել պետք էր սկսեին։ Բայց, սկսելու համար տասը ոսկի կ՚ուզեր։ Ատ ալ Հանայեն պիտի ճարեր. Նեղ օրերու մեջ, գրաշարներուն «աչք ամենեցուն ի քեզ հուսանը»։ Եկու տես որ ատ սղերդցի վաշխառուն ալ, գրաշարի մը իրեք ոսկիեն ավելի վարկ չէր բանար, առանց շատ ամուրք կապելու Երբ Ղուկաս աղան դիմումը ըրավ, մարդը հավաստեց, թե տասը ոսկի չէ. քսան ալ կուտար, եթե «էֆենտի»-ն երաշխավոր ըլլար։

Մտմտալիք բան։ Գրաշարները «էֆենտիին» համար կ՚ըսեին, թե «ապառաժեն ջուր կը բխի նե, անոր ալ սրտեն գութ կը բխի»։ Բայց, ինչ գիտես, մարդուս սիրտը աստված կը ճանչնա միայն։ «Երիկամանց քըննող փաղտնյացը» ա՛ն է։ Տպարանին մեջ ինքը տասը տարվան աշխատավոր մըն էր, ու հայ տպագրության համար ալ քառասուն տարվան էմեկտար մը. օր մը օրանց մեկուն գլխու ցավ մը տված չուներ, ինչ ըլլար, ըլլար դիմում մը կ՚ըներ։

— Ջամուռ մըն է պատը կը զարնեմ,— ըսավ,— բռնեց նե, բռնեց, չբռնեց նե, ան ատեն կը նայիմ, թե գլուխս ո՞ր քարին զարնեմ։

Սիրտ ըրավ, շաբաթ իրիկուն մը գնաց առաջարկը ներկայացուց։ Մարդը բեղերը ոլորեց, կմկմաց, ո՛չ «հա՛» ըսավ, ո՛չ «չէ՛», առարկություններ հարույց։ Ծերուկն ալ աղաչեց, պաղատեցավ. տասը տարվան ծառայությունը հիշեցուց. օր մը օրանց թանիզություն մը տված չուներ։ Ըսավ, թե ինքը—էֆենտին—որբ աղջկան մը կարգվելուն սեպեպ պիտի ըլլար. մեծ բարիք մը պիտի ըներ. աղքատ աղջիկ մը կարգելը մեծ

խեր էր։ Աստված կը հատուցաներ։ «Մեկ սատախան հազար սյելա տեֆ կ'ընե»։ Ուզածը շատ բան չէր։ Շաբաթական մեյմեկ մեճիտիե վճարմամբ, տարին չանցած պարտքը կը լմնցներ։ Ինքը մեռնելու ալ ըլլար նե, կնիկը ասեղ ծեծելով պարտքը կուտար։ Էրիկը հողերը պարտական չէր պառկեցներ։

Էֆենտին մարդուն ողորմուկ թախանձանքներեն կակուղցած երևցավ։ Հարցուց, թե ե՞րբ կ'ուզեր։

— Նոր կիրակիին,— պատասխանեց գրաշարը։

— Է՛յ, հա՛յդե, հիմակ գնա՛ տե, բան մը կ'ընենք,— ըսավ ժպտելով։

Ղուկաս աղան ալ, շատ-շատ շնորհակալություններ հայտնեց ու դուրս ելավ։ Իրեն համար՝ դրական խոստումի մը համարժեք էր «հիմակ գնա՛ տե, բան մը կ'ընենք» հուսադրանքը, որուն քմծիծաղ մը կ'ընկերանար։

Իրիկունը ճալըճը օղլուն երկու հատ էվել ճնկեց, և գնաց ուրախ լուրը կնկանն ալ ավետել։ Ա՛ն ալ, էֆենտիին օրհնե՜նք տվավ, օրհնե՜նք տվավ որ։

— Իշտե, կնիկ, աս աշխարքս ասանկ է,— ըսավ էրիկը,— մենք աս մարդը անողորմին մեկը գիտեինք, սիրտը ապառաժ է, կ'ըսեինք. Մեյերիսե, Ահարոնին ապառաժն է եղեր, դպչելու տեղը գիտնալու ես քի ջուրը բխի, ընդոր անցածներս շարեցի. «էօֆսո՛ւզ աղջիկ պիտի կարգես» ըսածի՛ս պես, գութը պոռթկաց։ Աստված գործին հաջողություն տա, զավակներուն խերը տեսնա»։

Բ

Փեսացուն՝ Արթաքի աղան՝ քանի մը ամսե ի վեր պարապ պարապ կը պտըտեր։ Ու շիտակն ալ, երբեք չենք շնորհք գործի մը եղած չուներ, «խույսուզ բապիաթին սեպեպովը», ըստ վկայման սամաթիացիներուն։

— Գոյան— հավաստողները միշտ սամաթիացիներն— պզտիկուց դուրս տված էր։ Տասվիրեքը չլմնցուցած, օր մը Սահակյան վարժարանեն առնել քալելով, գացեր «Հայկականը» մանչ եղած էր։ Հոն վարպետեն շարունակ հայհոյություն լսելն և ապտակվելն հետո, օրին մեկն ալ դուրս նետվեցավ, հետույքեն երկու կիցով։ Իրիկունը սրճարանապետը տղուն հորեղբորը կ'ըսեր.

— Բինին պոյը խարըշ մը, լեզուն էնտազե մը։

Մարդը սրճարանեն շիտակ հարսին տունը գնաց և «շան ծնունդին» աղեկ տփոց մըն ալ ինքը քաշեց, մորը աչքին առջևը։

Լակոտը, ալ անկե ետքը սրճարանե սրճարան դեգերեցավ, առանց տեղ մը չորս հինգ ամիս կայանքի։

Հորմեն արդեն որբ, մայրն ալ մեռավ։

— Վո՜ւյ, զավալլը կենճը, խալսեցավ, խալսեցավ, վայեցին դրացի կիները, երբ «կենճին» ճաղը տունեն դուրս կը հանեին։

Խալսած էր զավկին ձեռքեն, բայց անառակը շատ լացավ. հոգի մը ուներ, մորկանը վրան կուտար։

Հորեղբայրը որբը առավ իր տունը տարավ, ուրկե խույսուզը օր մը պոխճան թեյին տակը, արցունքը աչքերուն մեջ, ելավ մորեղբորը գնաց.

— Էէնկե, ես ալ հոս պտոր կենամ,— ըսավ հեծկլտալեն։

— Բարով եկար, հազար բարով, տղաս,— պատասխանեց բարի կինը խնդալով։

Պոխճան թեյին տակը, նորեն հորեղբորը վերադարձավ։ «Անդին» սըրզողած էր։

Մեկ տունեն մյուսը երթևեկը շարունակեց, մինչև որ ծեծ ուտելու տարիքը անցնելով, վերջապես հորեղբորը տունը մնաց։ Սրճարանի սպասավորությունն ալ թողուց ու ֆեսճիի քով մտավ, միտքը հաստատ դրած, որ օրին մեկը ինքն իր գլխուն խանութ բանա, տուն տեղ ըլլա։

Գործը փոխեց, բայց բնավորությունը՝ ո՜չ։ «Օձը շապիկը կը փոխե, բնույթը չի փոխեր», կ'ըսեր հորեղբայրը։ Ջեղավ, որ լման տարի մը մեկուն քովը մնար։ Աշխատող տղա, աչքը բաց, ձեռքեն գործ կ'ելլար, բայց ան չըլլալիք լեզուն, ան չորնալիք մսին կտորը. ամեն բան ավրողը ա՜ն էր, ա՜ն։

— Պե՜, ա՜յ օղլուլ, քիչ մը անուշ լեզու եղիր,— կ'ըսեր նոր վարպետը, երբ հաճախորդ մը բարկացած կը թողուր կ'երթար։— Սա մարդը հիմաճուկս քեզի ինչ ըրավ քի, ելար տե երեսն ի վեր ատանկ պետ պետ խոսքեր ըսիր։

— Տահա ինչ պտոր ըներ քի, սա կը տեսնա քի, երկու ձեռքս կրակն է տե, հինգ տաքիքա սպր չըներ։

— Պե՜, ա՜յ օղուլ, ճախ ունիս ամա, ըսելուն ալ յոլը կա։ Ելար մարդուն երեսն ի վեր «փաքլամիշ չէս ըլլար կոր յա» պոռացիր։ Անա՞նկ կ'ըսեն. «Հիմա՛կ, էֆենտիս, հի՛մակ պերս» կը զրուցես, ավճտրմիշ կ'ըներ, ու դուն կենե քու գիտցածդ կ'ընես։

— Ես ատանկ կեղծավորճա բաներ չիդեմ,— կը մռլտար։

— Է՜յ, չիտես ամա, իշտե մարդն ալ ձգեց գնաց, մեյ մը տաճա հոս ոտք չի կոխեր։ Հոս գալեդ ի վեր հինգ մուշտարի փախցուցիր։ Ասանկ երթալու ըլլա նե, մենք աս խանութը բեզով կը գոցենք։

— Է՜յ, իշտե ես ալ կ'երթամ։ Ես ասանկ գործին մեջն եմ...

Ու ապարահեսական հայհոյությամբ մը, ձեռքին գործը ձգելով, ֆեսը կը դներ, կ'առներ կը քալեր։

Բոլոր վարպետները, որոնց քով մտած ելած էր, աչքի զարնող դիտողություն մըն ալ ըրած էին։ Տելի օղլանը օր մը օրանց տաճկի մը էյվալլահ ըրած չուներ. բերեն երբեք փաշամ, պեյիմ, էֆենտիմ մը փախցուցած չուներ։

Սամաթիա ու շրջակաները ա՛լ խանութպան մը չկար, որ Արթաքին քովը առնել ուզեր. մինչև շուկան անցավ, Նորե՛ն չեղավ, Նորե՛ն չեղավ։

— Սամաթիացի է, թապի քիչ մը սերտ կ'ըլլա, ամա աս խտարը չէ կ'ըսեին Նոր վարպետները ու աշկերտը կը ճամփեին։

Խեղճը չէր կրնար հասկնալ իրեն դեմ հիմակ հայտնված դժգոհության պատճառը։ Առաջվանը չէր մնացած նե։ Ինքզինքը վար դրած էր, լեզուն կը բռներ, ծարը եկած խոսքերը կը կլլեր։

— Պե, տանա ի՞նչ ըլլամ ֆի,— կ'ըսեր,— սլալմոմի եմ դարձեր, պալմոմի, ո՞ւր է ան առջի տելիֆիշենգ Արթաքին։

Դյուրահալ մեղրամոմի պես կակուղցած էր. ու լեզվեն ըսես, հալած մեղր կը ծորեր, վասնզի հաճախորդին երեսն ի վեր «բաքլամիշ չես ըլլար կոր յա» պոռալու տեղ, քթին տակեն՝ «Քիչ մը սապր չունի՞ս» կը մոլտար։

Չեղավ, չեղավ։ Անունը ալ «Նամ տված էր», ինչպես ինքը կ'ըսեր։ Չորս ամիսե ի վեր ամեն անգամ, որ խանութ մը կը ներկայանար, «գործ չկա» պատասխանով ճամփու կը դրվեր։

Կը մտմտար, կը մտմտար։ Ա՛ս ալ կյանք էր, աս ալ ապրա՞նք էր։ Տարիքը կուգար, կը լեներ. դեպի քսանհինգը ճամփա բռնած էր ու դեռ անգործ, անտուն, անտեղ բարբրական մը, տասը փարային «ախը» քաշելով։ Ամուճային դուռը ինկած շուն մը, կերած հացը, խմած ջուրը կրունակեն վար կ'երթային։ Ի՞նչ ըներ, ի՞նչ։

Պզտիկուց մեկտեղ մեծցած ընկեր մը ուներ, արխատաշ մը, սիրտը անոր կը բանար մինակ։

— Տո՛, Արթաքի,— ըսավ օր մը ատ ընկերը,— թրախումայով աղջիկ մը առնես տե, գործ բռնես նե ընտո՞ր կ'ըլլա։

— Չեֆքլենմիշ կ'ըլլաս,— քրթմնջեց,— ինծի պես պոճ պոշ պատողին բարայով աղջիկ ո՞վ կուտա։

— Ինչո՞ւղ պետք. դուն «հա՛» ըսե՛։

— Է՜յ, հա՛։

— Անանկ է նե, գործդ եղավ,— պատասխանեց արխատաշը և Արմիկին խոսքը բացավ։

Ինքն ալ դրաշար էր։ Երկու օր առաջ ճամփան Ղուկաս աղան դիմը ելնելով, իրեն ալ ապսպրած էր, որ «եթե խելքը գլուխը, բարոյականը տեղը շնորհքով տղա մը գիտեն նե, Արմիկին ըներ. աղջիկը տասը շըմենտըֆեր ուներ»։ Իրեն ալ մտքեն Արթաքին անցած էր։

«Կ՚ըլլա մի, չըլլար մի» սկսան խորհիլ. ծովեզերքի խարխուլ սըրճարան մը, օղիին շիշը առջևնին դրին վերուցին։ Ինչո՞ւ չէր ըլլար։ Տասը շըմենտըֆերը երեսուն ոսկի կը բռներ։ Կլորիկ դրամագլուխ մը, որով Արթաքին խանութ մը կը բանար և գործ կը տեսներ։

Մյուս օրը Արթաքիին ընկերը Ղուկաս աղան գտնելով, գործը լմընցուց։

Խոսք կապը տալեն ետքը, Արթաքին սկսավ ապագային ծրագիրները պատրաստել։ Շըմենտըֆերները պիտի չծախեր, բախտը կրնար բանիլ ու իրեն ալ զարներ։ Արդեն գիներն ալ երթալով վրա կը դնեին։ Թուղթերը սյանճա մը կը ձգեր, փոխ ստակ կ՚առներ, գործը կը տեսնար։ Ետքեն պարտքն ալ քիչ քիչ կուտար, ու շըմենտըֆերներն ալ օրին մեկը բոլորովին իրեն կը մնային։ Բանուկ տեղ մը խանութ պիտի բռներ. ֆես, քանի մը խալիպ պիտի դներ, ու ֆեսճիություն պիտի ըներ։

Առաջադիմական գաղափար մըն ալ հղացավ։ Խանութը քիչ մըն ալ սանկ նանկ բաներ կը դներ՝ բռավաթ, լաստիկ, օյունճախ, պզտիկ Պոն-Մարշե մը, հե՜։ Է՛յ, պզտիկը օր մըն ալ չէ՞ր կրնար մեծնալ։ Ամեն մարդուն գիտցածն էր, որ Ստեփանյանները պասմաճիի ծակուկ մը ունեին, հիմակ մյութեպեր թյուկճար են։

Դրավ վերցուց, չափեց չափչփեց, հաշիվ ըրավ, որ առջի տարին ամիսը վեց-յոթ ոսկի կրնար հանել։ Ձեռք կուտար։ Էրիկ կնիկ պեյի պես կ՚ապրեին։ Է՜ օֆ, մեյ մը պիտի խալըսե՜ր քի, սար անոր խաճըր քաշելեն։ Ու ամուճային տունէն ալ պիտի ելլա՜ր, պիտի ելլա՜ր։

Խորհուրդէ խորհուրդ, քիչ մըն ալ իր բնավորության վրա մտածեց։ «Աս տասնեհինգ տարի է քի ամենքն ալ իրեն բան կ՚ըսեն նե, ամենքն ալ ճախսը՞զ են»։ Ալ «պահպանողական» պիտի ըլլար։ Կ՚ըսեր։

— Իշտե աս տարիքս եկա, օր մը օրանց տաճկի մը առջև քուշուկլանմիշ չեմ եղած, սա մեկը ելավ տե, ինծի աֆերիմ մը ըսա՞վ։ Աֆերիմեն վա՛զ անցանք, մեյ մըն ալ ելեր չամչնալով երեսս վար կ՚առնեն քի, «Դուն տաճիկներուն էյվալլահ չես ըներ»։ Հարցերնիս անոնցմե է եղե՞ր. անոնք չըլլա՞ն եղեր նե, մենք անոթի պըտոր սատկինք եղեր։ Ծո՛, Մոսկոֆին Հայերը անոթի՞ կը մնան։ Յա՛, աս իմին թափած քրտի՞նքս, յա՛ աս իմին կրած չան տանջա՞նքս։ Թո՛ւ երեսնուդ, սուրաթնուդ։ Խերն

եմ անիծեր, պե՛. ինչուս է պետք։ Աս միլլերը մարդ ընողը ե՞ս մնացի մի։ Ա՛լ գործըս պտոր նայիմ։ Իշտե երեսունս կ'երթամ կոր, տաճա հինգ փարայի տեր չեղա, պոճ պոշ կը պտըտիմ, շան պես ամուսնային դուռը ինկեր եմ։

Նարլը-Խափուին կողմը Եդի-Խուլեի կայարանին մոտերը, կոկիկ խանութ մը գտավ, վրան սենյակ մը և խոհանոց մը. գերմանացի մը շինել տված էր, հորեղբորմեն քանի մը ոսկի փոխ առնելով, գնաց վարձեց։ Ձեռքե փախցնելու չէր իգար։

Այս կողմեն սիրտը հանգստացած, ա՛լ առտվնե մինչև իրիկուն Սթամպոլ, Ղալաթիա, Բերա խանութները կը դեգերեր։ Մեծ շուկային Պոն-Մարշե կ'անցներ, Պոն-Մարշեեն՝ Պազար Ալման: Ամեն տեղ կը կայներ, կը նայեր, կը զններ, կը քններ, գիները կը հասկնար, աժանը սուղը կ'իմանար։ Ղալաթիայեն Բերա ելած իջած ատենը անպատճառ հեղ մը Պորսան պիտի մտներ երկաթուղիներուն գիները պիտի իմանար։ Գործի մարդ պիտի ըլլար։

Ու օրացույցը միշտ ձեռքը, մինչև առջի պսակ՝ օրերը, շաբաթները կը համրեր, լմննալիք չունենին։

Ահա՛ թե ինչու օրացույցը շինող վարդապետներուն մորուքին կը հայհոյեր, ու Օգսենը կը փնտրեր։

Գ

Ծաղկազարդին շաբաթ իրիկունը, երբ Ղուկաս աղան շաբաթականն առնելու գնաց, վճարող պաշտոնյան թրքեվար ըսավ.

— Ղուկաս աղա, երկուշաբթի ա՛լ մի գար։

Մարդը պաղեցավ մնաց։

— Իրա՞վ կ'ըսես,— հարցուց շվարած։

— Է՛յ, Ղուկաս աղա, ասանկ պաղ շախա կ'ըլլա՞։— պատասխանեց պաշտոնյան։

— Է՛յ, ինչո՞ւ։

— Ինչո՛ւն չգիտեմ, էֆենտին աս հրամանը տվավ մինակ։

Գլուխը կախ դուրս ելավ ավելի երկարաբանությունն անպետ, անօգուտ համարելով։ Քառասուն տարվան փորձառությամբը գիտեր, թե դյուրավ չի բեկանիր, եթե երբեք բեկաներ շաբաթ իրիկուն արձակված ան «ա՛լ երկուշաբթի մի գար» անողորմ դատակնիքը, որ գրաշարը մեկ պահեն մյուսը հանկարծ անոթության կը դատապարտե։

Տունը կնկանը բան մը չիմացուց։

— Ասանկ օրերով ան զավալլըին ալ սիրտը կոտրելու ինչ տեղը կա,— մտածեց։

Կոտրածությունը սակայն իր աչքերուն մեջ կծկոտած կը պլպլար։ Վարդենի տուտուն էրկանը երեսը նայելուն պես.

— Ի՞նչ ունիս քի,— հարցուց։

Մարդը բան մը ըսած ըլլալու համար.

— Քիչ մը պաղ առեր եմ,— պատասխանեց։

Կերակուրեն ետքը կնիկը բխլամուր մը եփեց, տաքուկ տաքուկ խըմ-ցուց, ծերուկը անկողինը դրավ, թող չտվավ, որ գուլպաները հանե, վրան ալ աղեկ մը ծածկեց, որ քրտնի.

— Առտուն բիրիբակ կ'ելլաս,— ըսավ։

Ակամա հիվանդը կնոջը բռնադատանքին անտրտունջ հպատակե-ցավ, ժպտուն կարեկցությամբ։

Կիրակի ժամով անցավ. առտուն՝ բաց պատարագ, իրիկունը՝ դըռ-նըբացուկ. ետքն ալ սրճարանը քիչ մը ախշամճիություն. բայց գիշերը չէր լուսնար։ Տունեն առտուն կանուխկեկ ելավ, սովորական ժամուն։ Սթամպոլ աղդին անդին դեգերումներե հետո, կես օրեն ետքը տպարան գնաց և շիտակ էֆենտիին սենյակը մտնելով անխոսուկ՝ դեմը խոնարհ կայնեցավ։

Մարդը զբաղած էր. երբ գլուխը վեր վերցուց, նեղություն մը զգաց Ղուկաս աղան դեմը տեսնելուն. մեկեն ակնոցը վար առավ, շունչը բե-թև մը վրան փչեց, թաշկինակը հանեց ու ապակիները սրբեց, հետո սյա-տուհանին մոտեցուց, ուշադիր զննեց, նորեն ձեռք առավ, անգամ մըն ալ մաքրեց և երբ քթին վրա կը զետեղեր.

— Ի՞նչ խաբար,— հարցուց անհոգությամբ։

— Էֆենտի, ճանըմ աս մեզի շաբաթ իրիկուն ճամփա տվին, հրա-մանքնի՞դ եք ըսեր, մրթմրթաց ողորմուկ ձայնով։

— Ի՛նչ ընեմ, Ղուկաս աղա, գիտես օրերը երկնցան. գործերն ալ իրար չեն ուտեր կոր յա,— պատասխանեց տպարանատերը։

— Բայց, քուզում էֆենտի, սրան ինծի՞ եկավ. տասը տարի է հրա-մանքիդ քովն եմ. աս ընտո՞ր աշխատելս ալ աղե՛կ գիտես...

— Հա՛, թամամ, կեցիր, իշտե աղեկ որ դուն կ'ըսես,— ընդմիջեց էֆենտին։— Կը տեսնաս քի, տասը տարի է ամենքն ալ եկեր գացեր են, մինակ դուն եղար տեղդ անշարժ մնացողը։ Է՛յ, հիմակ ալ սռան քիչ մը քուկդ է. մեկալներն ալ մեղք են։ Գործ ըլլալու ըլլա նե քեզի նորեն կը կանչեմ։

— Շնորհակալ եմ, աստված պակաս չ՛ընե,— կողկողեց խեղճը,— բայց հիմակ, ասանկ օրերով. ու մեյ մըն ալ սա մեկալ գործը կա, ան զավալլը էօքսուզը պիտի կարգեմ։

— Անոր համար ալ աստված ողորմած է, քիչ մը կը համբերեք, խաչը ուր է նե կուգա, գործերը կը բացվին. մինչև ան ատենը ուրիշ տեղ մը մտած չըլլաս նե, քեզ նորեն կը կանչեմ։

— Աման, էֆենտի, ոտքդ պագնեմ, կ՛ուզես նե մինչև խաչ շաբաթականես մեճիտիե մը պակսեցուր, հա՛յտե, եկո՛ւ պակսեցուր տե, էկո՛ւր ա՛ս բանը մի՛ ըներ. հիչ չէ նե սա էօքսուզը մեղքցիր, պաղատեցավ խեղճը։

— Ղուկաս աղա, շատ մեղքնանք նե, ետքեն մենք ալ մեղքընալու կ՛ըլլանք։ Ա՛լ եղածը եղած է։ Հիմակ ասանկ թող մնա տե, ետքեն պելքիմ բան մը կ՛ընենք,— ըսավ մարդը, քիթը բերանը ծռմռկելով, երեսը թթվեցուցած։ Ու զանգակը զարկավ, մեկը կանչեց և անոր հետը զբաղեցավ։

Ծերուկը վիզը ծուռ դուրս ելավ, ճամփվող անտեր, անտիրական գրաշարներուն կղպուկ բերան համակերպությամբը տրտմակոծ։

Գարնան, երբ օրերը երկննալ կ՛սկսին, ավուրչեքով բանող գրաշարին սիրտը կ՛առնե կուտա. պիտի մնա՞, պիտի ճամփվի՞։ Ամեն տպարան մեկ երկու բանվոր կը պակսեցնե, աշխատանքը մնացողներուն վրա բեռցընելով, առանց վարձքի հավելման։ Գանգատ, «վեց գիրը» էֆենտիին պռկունքներուն վրա կը թռչտի արդեն «ոտքերը պագնողը» թող գա։

Քանի մը ժամ ավելի աշխատանքի դատապարտմանը դեմ, անզոր ըմբոստացմամբ լեզվին տվող գրաշարին Ղուկաս աղան հեգնաժպիտ զայրույթով կ՛ըսեր.

— Տո՛, ինչ կայներ տե, էվել պակաս խոսքեր կ՛ընես։ Էֆենտին ինչ հանցանք ունի քի. ըսելիք բան մը ունիս նե, գնա աստծու բողոքե, որ քեզի մարդ է ստեղծեր։ Ես էյեր մեյ մըն ալ աշխարհք գալու ըլլամ նե, աստծու պիտի աղաչեմ, որ եթե հոս նորեն ասանկ բանվոր պիտի ըլլամ նե, թո՛ղ աս անգամ վրաս գթա և գիս էշ ստեղծե։ Էշը շա՛տ բեռցնելու ըլլաս նե, խաֆան կը տնկե կը կենա, տերը բան չունի նե թող վրան փատ կոտրտե։ Ետքը, ետքը, կը պարտավորվի իշուկը փայփայել, ախոռը տանիլ, ջուրը խմցնել, սամանը տալ, աղվորիկ մըն ալ կը հանգչեցնե, սիրտը կ՛առնե, մյուս օրն ալ բեռը կը թեթևցնե, որ չըլլա թե նորեն ինատը բռնե։ Իր իրավունքը պաշտպանող էշը անոթի չեն սատկեցներ։ Մարդ չէ քի կռնակին բեհմեն տան դուրս նետեն։

***

Երբ Ղուկաս աղա էֆենտիին սենյակեն դուրս ելավ, տպարանատան սեմին վրա շվարած մնաց։ Բանտեն փախստականի մը կը նմաներ, որ չգիտեր, թե ո՞ւր երթա, ի՞նչ ընե։ Քանի մի վայրկյան հետո կամաց-կամաց հեռացավ։ Մա՞հը ի՞նչ անուշ պիտի գար այդ պահուն։ Քալեց, քալեց։ Տաճկի սրճարանի մը առջևեն կ'անցներ. աթոռակները շարված էին կանանչները նոր բացվող ծառի մը շուքին տակ, գնաց անոնցմե մեկուն վրա նստավ. ֆեսը վար առավ, թաշկինակը հանեց, ճակատը սրբեց, սուրճ մը բերել տվավ և սիկարը ծխելով «օ՜ֆը» քաշեց։

— Հե՜յ, վա՜խ իմ աշխատանքիս,— կ'ըսեր մտքեն,— հե՜յ վա՜խ իմ տված էմեկիս, հե՜յ վա՜խ իմ թափած քրտինքիս։ Թը՜, թը, թը։ Վա՜յ գիտի տունյա, վա՜յ. է՜հ աշխարք։

Այո՜, հեյ վա՜խ իր աշխատանքին, հեյ վա՜խ իր տված էմեկին, հեյ վա՜խ իր թափած քրտինքին։ Վա՜խ, վա՜խ իր սրտցավությանը։ Տասը տարի շարունակ առտուները է՜ն առաջ տպարան եկողը միշտ ինքն էր եղած և իրիկուններն ալ է՜ն ուշ դուրս ելլողը դարձյալ ինքը։ Պատառը բերանը կ'աշխատեր երիտասարդներուն բարի օրինակ ըլլալով։ Ձեռքը կամաց բռնողին կը մռլտար, թե «հաց մըն է կ'ուտենք կոր, խըյանեթ չըլլանք»։ Գործ մը վեր ի վերո չէր տեսնար։ Կը ջանար է՜ն չկարդացվելիք գիրն ալ քակել և շիտակ շարել, որպեսզի փորձերը ծանր չըլլային։ Սրբագրողներն ալ կը մտմտար. «ինչու պարապ տեղը աչքի լույս թափեն և ժամանակ կորսվի»։ Ա՜լ աչքերը հոգնած էին, լուսերնին վատացած։ Իրիկունները, երբ գործավորները կը հագնվեին, որ մեկնին, ինքը, ակնոցը դրած, գետինը կը ծռեր, փնտրտուքներ կ'ըներ։ Թափած տառերը, կետերը, ստորները, ժողվտելով քասաները կը դներ։ Հետո՝ ավել մըն ալ առած, տախտակամածը աղեկ մը կը սրբեր, որպեսզի բան մը զայ չըլլա։ Ազգային տպարաններուն հաջողմանը նպաստած էր և շատ մը լրագիրներու գործը դյուրացուցած, մասնավորապես նոր հիմնվածներուն։ Պատահած էր, օ՜հ, շա՜տ պատահած, որ գործավորները շաբաթներով կանոնավորապես բանողչեք չառնեին, ձայն չէր հանած. ինքը համբերած էր և ուրիշներն ալ համբերության հորդորած.

— Աս ալ ազգային գործ է, տե՜ր ողորմյա, անոթի չենք մեռնիր կոր յա՜. թող քանի մը շաբաթ ետքը տան,— կը հորդորեր։

Մե՜ղք հազա՜ր իր աշխատանքին, մե՜ղք հազա՜ր իր սրտացավությանը։

Ու ահա Արմիկը աչքերուն առջևը եկավ միամիտ, անմեղ խնդումը երեսին։

— Էյ, ես ան զավալլը որբը ի՞նչ պիտի ընեմ. հիմակ,— մտմտաց.— կանչես նե աոջի պսակը ո՛ւր է նե կուգա։ Ընտո՞ր, ուրկե՞ պատրաստություն պիտի տեսնամ։ Հապա մեկա՞լը։

«Մեկալ»-ը Արթաքին էր։ Փեսացունին դեռ երկու-երեք անգամ տեսած էր, ու թեև հավնած, բայց իրեն այնպես երևցած էր, որ քիչ մը «սա խոսք չհասկցողներուն սոյեն» ըլլալու էր։

— Գրագետները,— ըսավ ինքնիրեն,— ասոնց հիմակ ելեր «նկարագրի տեր մարդ» անունը կուտան. ասանկներուն մենք ատենոք «պեյնամազ» կ՚ըսեինք։ «Աոջի պսակին հարսնիք կ՚ուզեմ» ըսա՞վ մի, երկու աշխարհք իրարու գա, ատ օրը հարսնիք ըլլալու է։ Անոր ընտո՞ր խոսք հասկցնեմ պիտի։

Խելքին պիտի գար։ Սուրճին ստակը տվավ ու տեղեն ելավ։

Քալեց, քալեց, իրիկվան դեմ ինքզինքը Էմին–էոնու գտավ, տասը փարան մեքենաբար երկնցուց, կամուրջեն Ղալաթիա անցավ ու Ազապ խափուի ճամփան ձեռք առավ։

Ծխելով, հառաչելով, մենախոսելով Թերսհանեին առջևը հասած էր. պետական նավարանին բանվորները խումբ-խումբ դուրս կ՚ելլեին. ի՞նչ երջանիկ էին. վաղվան հացերնին ապահովյալ էր։ Անոնց մեջ իրեն ծանոթ խասգեղացիներ կային. «Բարի կո՛ւն», «ագշամլար հայրր»-ներով իրարու մոտեցան և ճամփանին ընկերակցությամբ շարունակեցին։ Երբ Հալըճը օղլու հասան, բարեկամներուն հետ ըստ սովորության օղին խմելե հետո, տուն դարձավ։ Կինը անհամբեր կ՚սպասեր։ Էրիկը տեսավ չտեսավ.

— Ընտո՞ր եղար,— հարցուց։

— Ի՞նչը ընտոր եղա,— ըսավ մարդը զարմացած։

— Էյ, էրեկ գիշեր հիվանդ չէի՞ր։

— Հա՛, սա՛, է՛յ անցա՛վ, բան մը չունիմ,— պատասխանեց ժըպտալով։

Ատ սո՞ւտը միտքը պիտի պահեր։

Դ

Երեքշաբթի առտու արևը շատոնց ծագած էր, ու Ղուկաս աղան դեռ անկողինը կը մնար։ Բարձին վրա ինկած գլուխը՝ մտմտուքը մեջը կապարի պես թխմված գլո՛ւխը վեր չէր կրնար վերցնել։ Ինչևէ — ըրավ չըրավ ելավ, երեսը լվաց, հագվեցավ, սուրճը խմեց ու,—

— Իրիկվան բան մը պե՞տք է,— հարցնելով, դուռը գոցեց գնաց։

Մինչև իրիկուն հոս հոն սլքտաց.

— Ա՜խ, աս ի՜նչ դժվար բան է եղեր պարապ պտըտիլը,— կ՚ըսեր մտովի,— աստված թշնամիս առանց բանի գործի չթողու։

Աստանդական թափառումը մյուս օրն ալ շարունակեց։ Հինգշաբթի՝ «երանելի նախահարց իմաստուն և հեռատես կարգադրությանց» բարիքները անգամ մը ևս վայելեց։ Առտըվնե մինչև կես գիշեր ժամը անցնելով, սիրտը չնեղացավ։ Ուրբաթ, թերսհանեին ճամփեն նորեն երկնցավ։

Կամաց-կամաց կ՚երթար, մենախոսելով, մերթ կանգ առնելով ու մատվներուն վրա համրանքներ ընելով։ Հառաջիկա շաբթվան ելմտացույցը կը քններ։

Զատկի շաբթվան անխուսափելի ծախքերուն մեկ մասը ըրած լմընցուցած էր։ «Ըստ վաղեմի սովորության», ութ հարյուր օխա յուղագին գրվելով, մեճիտիեն Ծաղկազարդի առտուն ցնծացեր էր։ Ա՜ս գնաց։ Հավկիթը դուռնեն առեր էին, հարյուրը երսունի. աս ալ լմնցած էր։ Երսուն ղուրուշ ալ խթումի իրիկվան և զատկի կիրակիին ուտելիքին համար տված էր, չնորեկը մեջը չըլլալով։ Մեճիտիե մը ա՜ն շաբթու ժամը թապախները ձգած էին, քանի մը ղուրուշ ալ ինքը ծախսած էր. համագումարը հարյուր տասը ղուրուշ։ Հոս կանգ առավ, ձեռքը գրպանը խոթեց, պատրաստի դրամը հանեց համրեց։ Քովը տասնհինգ ղուրուշ քանի մը փարա կը մնար։ Ու նորեն ճամփան շարունակելով, «թվումն մասանց»-ը կ՚ըներ այն ծախքերունն ալ, որոնց դեմ գրպանին երեք քառորդը բարեխոս ուներ միայն։

— Էյ խելքի՜ գալիք բան։ Երկու ոսկին պիտի չօգտե՜ր։ Մեճիտիե մը չնորեկին, մեճիտիե մը՝ շաբաթ իրիկվան և կիրակի առտվան թապախներուն: Տերտերը տուն օրհնենքի պիտի գար, մեճիտիե մըն ալ անոր։ Ետևեն՝ ժամկոչ, պեճճի, չոփճի, ո՜ր մեկը, տասը ղուրուշ մըն ալ ասոնց։ Շիշե մը իքսիր ու օխա մը անպատեմ չառնե՞ր։ Շնորհավորի եկողները նաև Արմիկին նշանտուքն ալ պիտի աչքիլուսեին. անշուշտ Արթաքիին ամուճան ալ պիտի գար. առջևնին անուշ մը, խանմլե մը քշելով ճամփու պիտի չղնեին յա՜։ Տասը-քսան ղուրուշ մըն ալ իր զատկական այցելության ճանապարհածախս։ «Ավստոսի շուներուն պես լեզուս դուրս ինկած, Խասգեղեն Պեյօղլու, Պեյօղլուեն Սամաթիա պիտի չվազեմ յա՜, Սկյուտար, Ղադիգեղ լողալո՞վ պիտի անցնեմ» կ՚ըսեր։

Ու հետո, չորեքշաբթի առտո՞ւ ինչ պիտի ընեին, մինչև գործ մը գտնա՞լը ինչ պիտի ուտեին։ Պախալ, խասսապ, էֆմեճճի քիչ մը մաքրելու չէ՞ր, որ անոնք ալ շարունակեին նորեն ապառիկ տալ։

Երկո՞ւ ոսկիեն ավել պետք էր. ի՞նչ ըներ, ո՞րու երթար։ Գործ ունեցող բանվորին անգամ, առանց գրավի ոչ ոք փոխատվություն կ'ըներ. ու բան մըն ալ չուներ, որ տեղ մը ձգեր և տոկոսով երկու երեք ոսկի վերցներ։

«Գրավ» բառը այն ինչ շրթունքներուն վրա եկավ, մեկեն կանգ առավ կայնեցավ. մտքին ստորմիտը հանկարծածին լույսի մը պլպլուկը կ'զգար։ Ձեռքովը ճակատը արագ-արագ շփել սկսավ, հավանորեն՝ պլպլուկը մոռնալու ջանք մը։ Ջուր ջանք։ Ճամփան շարունակեց. կարծես քիչ մը թեթևցած կը քալեր։ Հույս մը զինքը առաջ կը մղեր։ Երբ Ղալաթիա հասավ, պզտիկ սրճարան մը մտավ, մութ անկյուն մը առանձնացած, ֆեսը հանեց, թաշկինակովը ճակատը սրբեց ու սուրճին հետ սիկարեթը քաշելով, տխուր-տխուր կը խորհեր։ Պլպլուկը, հիմակ ա՛լ արծարծուն իբր լույս, կը փայլեր, և հուրքեն կարծես քիչ մը պիտի թուլնար մտմտուքներուն կապարը, ուղեղին վրա ծանրանի՛ստ։

Արմիկին Երկաթուղիններեն մեկը սարաֆի մը գրավ դնելով երկու ոսկի փոխառություն մը ընելու գյուտն էր, որ երկու ժամե ի վեր շըրջմոլիկ-հուրի պես մտքին բոլորը կ'ոլրտկեր. դիմադրեց, շա՛տ դիմադրեց չար սատանային թելադրած այդ փորձության, որուն սակայն վերջըվերջը անձնատուր ըլլալու պարտավորվեցավ։

Ի՞նչ ըներ, ի՞նչ։

Երբ սրճարանեն մեկնեցավ, սիրտը հանդարտած էր այն խաղաղությամբ, զոր ծանր հանգամանքներու մեջ վճռական որոշում մը կը պարգևե։

Խոլե-խափուեն վեր Բերա ելավ։ Գարնանային արևը կ'աղվորցներ Բերան, որուն մեծ պողոտան կը վխտար հայերու, հույներու, եվրոպացիներու բազմությամբ, ամենքն ալ տոնական ուրախության մեջ։ Նորեն «ա՛խ» մը ըրավ։ Իրեն սև զատիկ կուգար։ Մինչև Շիշլի գնաց, պտըտեցավ։ Ետդարձին Երրորդությունը մտավ ու անկյուն մը քաշված, վերացյալ հոգով երկյուղածորեն և զգացյալ, «Խաչի քո Քրիստոսը» մտիկ ըրավ։ Հետո կարճ ճամփով մը Խասգեղ իջավ, ու շիտակ տուն գնաց։ Մեղք կը սեպեր Ավագ ուրբաթ իրիկուն սրճարան հանդիպիլ։

Գիշերը սակայն վրդոված անցուց. խղճի խայթեն կը տանջվեր, որ խեղճ աղջկանը ունեցածին ձեռք պիտի դպցներ։ Անկողնին մեջ մեկ կողմեն մյուսը կը դառնար, մինչ կինը անդին, ուրիշ անկողին, անխռով կը նիրհեր։

Առտուն դժկամակությամբ ելավ, սիրտը տակն ու վրա։ Գնաց պատուհանը բացավ, ու ծաթած արևուն դեմը կեցած, քիչ մը անուշ օդ ծծեց։ Շուտ հագվեցավ ու խոհանոց իջավ։ Կնիկը և Արմիկը թևերնին սոթտած,

խթումի և Զատկի կերակուրներուն պատրաստությունները կը տեսնեին, ուրախ-ուրախ Վարդենի տուտուն պարծենկոտությամբ միտիաները ցույց տալով. «Հելե՛ տե՛ս, ինչ խոշոր են»,— կ՚ըսեր։— Ինքը կը բանար, Արմիկն ալ կը լեցներ։ Կաթնապուրը եփված լմնցած էր, վար առեր էին։ Հավկիթներն ալ ջուրը պիտի ձգեին, կալիպարտիով պիտի կարմրցնեին։

Պառավին ու մատղաշ աղջկանը դեմքերուն վրա այն հոգեկան զվարթությունը կը փայլեր, որ Զատկին ու Ծնունդին ամեն տան մթությունը պահ մը կը փարատե։

Արմիկը ձեռքին գործը ձգեց ու հորեղբորը սուրճը եփեց բերավ։ Ղուկաս աղան «ապրի՛ս աղջիկս» մը ըսելով, ֆինճանը առավ քովը դրավ, ծխախոտն ու թուղթը հանեց, վարպետ ձեռքերով սիկարեթ մը շինեց և սկսավ ծխել, բայց սուրճն ալ կամաց կը քաշեր, սիկարեթն ալ։

Երբ լմնցուց, դուրս ելավ, վեր գնաց, նորեն եկավ, ու քանի մը րոպե լուռ մնալե հետո, վարանումով մը կնկանը հարցուց, թե՝

— Մեծ սնդուկին բանալին ո՞ւր է։

— Վերը, սև ֆիստանիս ճեպն է, յուքին մեջ,— պատասխանեց։

Վեր ելավ, հոն յուքը կախված ֆիստանին գրպանեն բանալին առավ, սենյակին դուռը գոցեց, գիտնալով հանդերձ թե վեր ելլող մը պիտի չգտնվեր, սնդուկին առջև ծնրադրեց, զայն բացավ, պոխճաներուն տակեն գտավ աթլաս ծրարը, որուն մեջ փաթթված էին Երկաթուղիները։ Զայն քակեց, ճերմակ թուղթերեն հատ մը քաշեց հանեց և աճապարանոք բալթոյին գրպանը խոթեց, քիչ մը մտմտաց, հատ մըն ալ քաշեց հանեց։ «Անանկ ալ աս բանս ըրի, ասանկ ալ, ըսավ, պարեմ գլուխս երկու երեք շաբաթ մը տիճճ մնա տե, ընելիքս գիտնամ»։ Հետո պոխճաները շտկեց, սնդուկին դուռը աղեկ մը կղպեց և բանալին նորեն տեղը դնելով, խոհանոց իջավ.

— Էյ, իրիկվան ի՞նչ պետք է,— հարցուց։

— Բան մը պետք չէ, ամեն բան թեքմիլ է,— պատասխանեց կնիկը.— մինակ ժամու քիչ մը մանրուք տուր։

— Նա՛,— ըսավ,— և գրպանեն տաս դրուշի չափ մեթալիք հանելով, սեղանի մը ծայրը դրավ։

Երբ մնաք բարով ըսավ ու դուրս կ՚ելլար, Արմիկը առջևը եկավ ձեռքը քաշեց՝ պագնելու։

— Ի՞նչ կա քի, աղջիկս,— հարցուց։

— Աղա ամուճա,— պատասխանեց աղջիկը խպնելով,— ծոմ պիտի բռնեմ, իրիկունը ճաշակ պիտի առնեմ։

— Է՛յ, հայտե նայինք, ապրի՛ս աղջիկս, շնորհավո՛ր ըլլա,— մաղթեց խնդալով։

Վարդենի տուտուն ալ եկավ, ու «ես քեզ մեղա», ըսավ։

— Դո՞ւն ալ աս իրիկուն պիտի առնես,— հարցուց։

— Հելպետտե fի:

— Է՛յ, կրնա՞ս դիմանալ։

— Մեղա՛, ա՞տ ինչ խոսք է քի, ամեն տարի ընտո՞ր կը դիմանամ։

— էյ ամենքս աստծու մեղա։

— Դուն ալ վաղն առտու պիտի առնես, անանկ չէ՞, ճելպետ խոստովանեցար,— հարցուց կինը։

Այս հետաքրքրությունը շա՛տ հաճելի չեղավ մարդուն. «նայինք» մը կմկմաց։

— Նայի՛նքը ինչ է քի,— վրա բերավ կինը քիչ մը բարկությամբ.— անապա սոն տարիքիդ դո՞ւն ալ մի ֆարմասոն եղար։

— Ճանըմ ձգե,— պատասխանեց քմծիծաղով,— սա օրերս շանը մեկուն հետ բռնվեցանք, fյուֆուր կյունահ ըրինք, մեղքի մեջ մտա. հիմակ ան ալ հոս չէ քի պարշիմ։

— էյ, ինշալլահ աստված Նոր կիրակիին խսմեթ կ'ընե։

— Ինշալլահ:

Դուռը գոցեց գնաց, արդեն ծանր վիրավորված։ Հիսուն տարի էր Զատկի կիրակի մը, Ծնունդ մը առանց հաղորդվելու անցուցած չէր, օր առաջ խոստովանելով շաբաթ մը Նարեկ կը քաղեր ու անկե ետքը կը հաղորդվեր։ Հիմակ, ան շան սուրաթին սեպեպեն մեղքի մեջ թաթխված էր։ Չըֆըտ օղլու չըֆըտին օրը հազար fյուֆուր կ'ըներ. չըներ նե պիտի ճաթեր։ Մեյ մըն ալ ան գավալլը որբին մալին ձեռք դպցուցած էր։ էմանեթին խյանեթությունը գողության պես բան մըն է։ Շըմենտըֆեր- ները մինչև տեղը չդարձներ, խիղճը պիտի չհանդարտեր։ Չէ՛, ատ սեցած հոգիով չէր կրնար «սուրբ սեղանին» մերձենալ։ Հաղորդությունը իրեն խռով պիտի կենար, զինքը չարըմիշ պիտի ըներ։

— Ինշալլա՜հ,— հառաչեց սրտին խորեն,— ինշալլա՜հ, ա՛ն խային խըյանեթը չարըմիշ կ'ընե։ Ամա ան չըֆըտը հաղորդության ինչ ըլլալը գիտե՞ քի։ Իշտե ասըլ ֆարմասոնը ան է։ Հեմ մո՛ւբլախ անանկ է. չըլլար նե, ասանկ օրերով աս անօրենությունը կ'ընե՞ր։

Ե

Գուրգուրանքով կը դողային այդ ծրարին վրա, կյանքին մինավորիկության մեջ որբին միակ ապավենը։

Երբ Արմիկին հայրն ու մայրը իրարու ետևե մեռան, իրենց զավկին հարյուր ոսկի ժառանգություն մնաց։ Ղուկաս աղան այդ գումարին փա-

րա մը անգամ չխոռեց, թեև զայն կրնար ամբողջովին յուրացնել, իբր որբին պարենգինւ Եվ ոչ ալ օգտվիլ ուզեց մահմետական օրենքեն, որ արվի մասնակցությունը պարտավորիչ ըրած է ժառանգության բաժանումի մեջ։ «Փառք աստծու, իր ճակտին քրտինքովը պատառ մը հաց կը ճարեր, ինչո՞ւ եթիմին հախը *պիտի ուտեր։ Ան զավալլը* էօքսուզն *ալ իր զավակն էր»։*

Եղբորը թողած պարտքերը մաքրելե հետո, հարյուր ոսկի գումարին մնացորդը օսմանյան Քոնսոլիտեի *պահեցուց։ Ժամանակ մը վերջը զանոնք ալ ծախեց և տեղը Ռումելիի երկաթուղիներու տասներկու արժեթուղթ գնեց. թերևս որբին բախտը բանելով, երկամսյա մինչև վեց հարյուր հազար ֆրանքի պարգևներեն բան մըն ալ անոր կը զարներ։*

Ալ անկե ետքը ամեն երկու ամիսը անգամ մը, անձկությամբ կ'սպասեր վիճակահանության քաշվելուն օրվան։ Ելած չորս հարյուր թիվերը անմիջապես ծանուցանող ցուցակներուն անվստահ, համբերությամբ մինչև մյուս օրը կ'սպասեր, Պանք Օթոմանին հրատարակության երևմանը։ Առտուն կանուխ, կամուրջին վրա, «իր» լրագրավաճառին քսան փարա երկնցնելով.

— Մարտիրոս,— «պապական մը» կը հրամայեր։

Ան ալ այս շուկայախոս «սրամտության» տարիներե ի վեր ընտելացած, դեղնաթույր թուղթեն հատ մը կը հաներ կուտար։ «Պապականը» Պանք Օթոմանին *պաշտոնական հրատարակությունն էր. անսխալը, անսխալականը։*

Վրան առանց ակնարկ մը նետելու, քառածալ կը կոտրեր ու բաճկոնակին վերի գրպանը կը խոթեր այդ թուղթին կտորը, որ կրնար իրենց կյանքը հեղաշրջել։

Իրիկունը ճաշեն ետքը, մեծ սնդուկին բանալին կնոջմեն առնելով, պոխճաներուն տակը «սըխը-սըխը» պահված ծրարը դուրս կը հաներ, հանգույցները երկյուղածորեն կը քակեր ու տասներկու բախտակիր ճերմակ թուղթերը առջևը դրած, անոնց թվանշանները մեկիկ մեկիկ անսխալականին արձանագրության հետ կրկին-կրկին կը բաղդատեր։

Այդ գործողության ամբողջ տևումին, Վարդենի տուտուն, էրկանը դեմը նստած, աչքերը անոր երեսը, ձախ արմունկը սեղանին վրա, աջ ձեռքը սեղանին տակ, համրիչը բռնած, կամացուկ կամացուկ «Տեր ողորմյա» կը քաշեր։ Աստված պելֆիմ *կ'ողորմեր ու բան մը կը զարներ։ Երբ մարդը թուղթերը, ծիծաղով մը, նորեն պոխճային մեջ կը տեղավորեր, կնիկն ալ կոտրուկ մը կը հարցներ.*

— Նորեն բան մը չկա՞։

Ինշալլահ գալ անգամ, կը պատասխաներ էրիկը, և ծրարը կնկանը կուտար, որ տանի տեղը դնէ. ու ինք սիկարեթը շինելով, սուրճին կ'ըսպասէր։

Ընտանեկան այս արարողությանց Արմիկն ալ մասնակից ըրին, երբ քիչ մը մեծցավ։ Պատրանք կրելու թող կանուխեն վարժվեր։ Ղուկաս աղան թուղթերը ամբողջովին պստիկին թաթիվը կուտար ու մեյմեկ մեյմեկ անկե կ'առներ բաղդատման համար։ «Արդար գառնուկ էր, պեյլիմ ուղուր կուգար»։ Պզտիկը սկսավ դպրոց երթալ, ընթերցանության մեջ առաջադեմ, սակայն թիվ կարդալ չէր սորվեր. հորեղբայրը հանդիսավորապես հայտարարեց, որ «թվաբանություն չսորվիս նե, քեզի շըմենտըֆեր պիտի չզարնե». շոնուխիկն ալ հավեսով թվաբանության ետևե ինկավ. ու երբ ամիսներ ետքը, ճերմակ թուղթը ձեռքը առած, վրայի խոշոր սև թվերը ջանաց հեգել, մտքին ուժ տալով, լեզուն բերնին մեջ դարձնելով, շրջելով շրջշրջելով «ի..նը» ու քանի մը վայրկյան հոգնություն առնելե հետո «ու...թը» կարդաց, Ղուկաս աղան խնդալեն կը մարեր, և «աֆերիմ աղջիկս, ապրիս աղջիկս, քեզ նայիմ հա» քաջալերանքներով պզտիկին ջանքերը կը դյուրացներ, ինչպես ոտքի ելած ատեն ձեռքեն բռնած, «տատիս, տատիս» ըսելով քալեցուցած էր։ Այդ գիշերը այնքան ուրախացավ, որքան եթե վիճակահանությունը գոնե պզտիկ բան մը զարկած ըլլար։ Մինակ Վարդենի տուտուն կամացուկ մը հծծեց.

— Ա՜խ, հարիկն ու մարիկը ողջ ըլլալու էին քի, վրան նայէին տե խնդային։

Բաղդատման գործողությունը այդ իրիկունը քիչ մը երկար տևեց, ու երբ նորեն՝ «ինշալլահ գալ անգամով» լմնցավ, Ղուկաս աղան Արմիկը իրեն քաշեց, տաքուկ մը պագավ, ու գրպանեն զարդարուն թուղթի մը մեջ շաքար հանելով, թվաբանուհիին ընծայեց։

— Նայէ,— ըսավ,— թիվերը կարդացիր նե, շըմենտըֆերն ալ քեզի ինչ զարկավ։ Լմանը կարդաս նե, տահա ինչե՞ր պիտի զարնե քի։

Ու վիճակահանությունը շարունակեց երկու ամիսը անգամ մը շաքար զարնել, մինչև որ իրիկուն մը Արմիկ կամաց-կամաց կարդաց՝ «հինգ, հարյուր, վաթսուն» հինգ, հազար, երկու հարյուր չորս, հինգ հարյուր վաթսուն, հինգ հազար երկու հարյուր չորս»։ Էրիկ կնիկ պզտիկ խարտյաշը գրկեցին, կարմրուկ այտերեն պաչիկնե՞ր առին։ Մարդուն ակնարկին վրա, Վարդենի տուտուն տեղեն ելավ, ներս գնաց, ու վերադարձավ, ձեռքը կանաչ թանձրաքարտե մեծ տուփ մը, զոր էրկանը հանձնեց։ Ղուկաս աղան ալ զայն Արմիկին տվավ։

— Նայե թիվերը լման կարդացիր նե շըմենտըֆերն ալ քեզի ինչ զարկավ. դեռ ինչեր ալ պիտի զարնե։

Արմիկը տուփը բացավ, մեջը նայեցավ և լեզուն հանած, պոկունքները լզեց խեղպնալով։ Խամաճիկ մըն էր, պուպրիկ մը, ինչպես Ղուկաս աղան գրականորեն կ'անվաներ, «տիկին» մը, ըստ Վարդենի տոտոյին, որ Հայաստանի կնոջ մը զավակ, լեզուն մորը բերնեն սորված էր։ Իսկ Արմիկին համար՝ պեպեկ մը։ Գիշերը ծոցը առած քնացավ։ Ղուկաս աղան անկողնին վրա ծռելով.

— Թա՛մ Վիքթոր Հյուկոյի գրածը,— ըսավ խնդալեն,— իշտե Քոզեթն է։

Եվ հիմակ, Արմիկ շատոնց ի վեր ալ գիտեր թե շըմենտըֆերը ի՞նչ կը զարնե. ի՞նչ չի զարներ։ Շատոնց է, որ բաղդատման իրիկունները, երեքը մեկտեղ. սեղանին շուրջը բոլորած, հորեղբայր ու աղբորորդի ճերմակ թուղթերուն վրա մանրազնին ուշադրությամբ փնտրտուքներ կ'ընեին, մինչ Վարդենի տոտոն իր «Տէր ողորմյա»-ն կը շարունակեր հաստատապինդ հավատքով. «պելքիմ աստված կ'ողորմեր»։ Բա՞ն մը չէր զարկած, բա՞ն մը չէր ելած, իրենց կյանքին մեջ բա՞ն մը չէր փոխված։ Միայն, Վարդենի տոտոյին տեղ, հիմակ Արմիկն էր, որ Երկաթուղիները պոխճային մեջ պահարանելե ետքը, կ'երթար սուրճը կ'եփեր, կը բերեր։

Բան մը չէր ելած, և սակայն այդ ծրարին— ինչպես սրբության մը խաչ-վառին— ծալքերուն մեջ պարագրված թուղթերեն, տասնվեց տարիե ի վեր մեղմալույս հրատու մը բանվորին մթնշաղ կյանքին վրա կը ցաթեր, վաղվան համար՝ պայծառ արևի մը ծագման հուսաբեր։

Տասնվեց տարվան մեջ, բանվորը նեղության օրեր շա՜տ անցուցած էր, բայց օր մը օրանց մտքեն չէր անցած, խաչ-վառին հանգույցները քակել, որոշյալ երկամսյա ժամերեն դուրս։

Ու հիմակ, այդ խթման օրը, առտուն կանուխ փախստականի մը պես տունեն դուրս կ'ելլար, սիրտը տակն ու վրա։

— Ա՜խ, անօրեն անաստվածը, փարավոնը, ֆարմասոնը. ինշալլահ ինծի ըրածը աստուծմե կը գտնե,— կը հեծեր ինքնիրենը, լեզվին տալով էֆենտիին համար։

Զ

Երկու թուղթը Սթամպոլ Պաճճե Խարու իրեն ծանոթ սառաֆի մը գրավ դնելով, Ղուկաս աղան երեք ոսկի փոխ առավ, ամիսե մը վճարելու պայմանավ։ Մարդը տված ստակեն տասնհինգ ղուրուշ տոկոս զեղչեց։ Հարյուրին վաթսուն վաշխառություն մը ձև, բայց Ղուկաս աղան փո-

խառությունը իբրև իրեն մատուցված մեծկակ ծառայություն մը սեպեց, ուստի և շնորհակալություններ հայտնեց։ Ոսկիները **Ֆեռշե-սարաֆեն** *մանրունք ընելեն հետո,* Հանի Պեքիրին *մալով,* օխա *մը* անիպատեմ *և կես* օխա խառշտին ռանարթի *շտկեց,* իքսիրին *համար ալ Ղալաթիա անցավ։ Ամեն գործ կարգադրած լմնցուցած, կես օրեն ետքը շոգենավ կը մտներ։*

Շոգենավին մեկ ծայրը քաշված, սիկարնըը *վառած, երեսը հովուն, կը խորհեր քիչ մը հանդարտած սրտով։*

Ա՛լ եղածը եղած էր, այսպես թե այնպես մեջեն ելլալ պետք էր։ Ամեն բան կրնար իր տեղը գալ, եթե քիչ մը ժամանակ վաստկելու ըլլար։ Արդեն երկու երեք շաբաթ, իրիկվան ուտելիքը առտուն պիտի չմտմտար։ Շատ կը հուսար, որ այդ միջոցին Պեյլիկին *կարևորուն ստակը վճարվեր։ Ականջին լուր մը հասած էր. թե* Սերասկերը *փոխառություն մը ընելով բոլոր պարտքերը պիտի սրբեր։ Ատ ստակը առած չառած, մեյ մը սա* շըմենտըֆերները *կ՚ազատեր ու ճերմակեղենները կարել կ՚սկսեին։ Քիչ մը ատեն սանկով նանկով կրնար ապրիլ. անշուշտ աստինեն անդիեն ավուրչեքով գործեր ալ կրնար ունենալ։ Փեսացուն կիրակի մը գալուն, կարդին կը բերեին և կարերը մեյ մը ցույց կուտային.* Շըմենտըֆերներն *ալ ամբողջ իրենց տեղը, վախենալիք ալ ի՛նչ ուներ։ Գործը Արթաքիին խոսք հասկցնելու մեջ կը մնար։ Բան մը կ՚ընեին։ Ձեղա՞վ. ընտոր է նե քիչ մը կը խաղցնեին։ Ասոր՝ ճերմակեղեններուն մեջ պակաս բան մը կար. վաղը՝* մոտիստրան ֆիստանը *չհասցուց։ Սուտ, շիտակ մինչև խաչ կը քաշկռտեին։ Խաչին գործերը կը բացվեին։ Անշուշտ ատ քանի մը ամսվան մեջ* Պեյլիկեն *տասը տասներկու ոսկիի գործ մը կ՚ըլլար։ Կարճ երկան հարսնիքը կ՚ընեին։ Ա՜խ, մեյ մը աս աղջիկը տեղավորվեր, ալ անկե ետքը չոր հաց մըն ալ ունենային, իրենց կ՚օգտեր։*

Այս կարգադրությունները երբ մտովի լմնցուց, շոգենավն ալ արդեն Հալըճը-օղլու *հասավ։ Ղուկաս աղան նախ գնաց* չեօրեկները *առավ տուն դրկեց, հետո սափրիչին խանութը մազը մորուքը շտկել տվավ, վրան գլուխն ալ աղեկ մը վրձինեցին։ Քառորդ մը ձգեց, ինչպես ամեն Զատկի, Ծնունդի առատաձեռնության սովորություն ուներ։ Հոնկե սրճարան գնաց լրագիր կարդալու, ժամանակ անցնելու, մինչև ժամուն ատենը գար։ Ազնվապետականության երբեմնի կեդրոնավայր Խասգյուղը, հիմակ բանվորաբնակ թաղ մը դարձած ըլլալով, տոնական օրերը արարողությանց ուշ կ՚սկսեին, որպեսզի ժողովուրդը՝ բանվոր ու մանրավաճառ, կարենար հասնիլ։*

Պզտիկուց ի վեր Ղուկաս աղան, ո՛չ Զատկի, ո՛չ Ծնունդի խթման մը «ընթերցվածներու» միջոցին եկեղեցիեն բացակա գտնված էր։ Ատ

խրիկունն ալ գնաց քաշվեցավ իր անկյունը, իր մինտերին վրա նստավ, ու երկյուղածորեն գիրքերուն ընթերցմանը ունկնդրեց։ Սակայն, իր հոգեկան վերացման մեջ մեկեն ի մեկ ցնցվեցավ, սթափեցավ հանկարծածին հուզմամբ, երբ պատանի մը, ուժեղ ձայնով՝ «Ընթերցվա՜ծս ի Դանիելե Մարգարեե՜։ Համի՜ն ութնևտասներորդի թագավորության Նաբուգոդոնոսորա արքայի...» որոտաց։ Ո՛ւռա՞վ գնաց։ Մեկ րոպեի մեջ, քսաուն տարիներե ավելի անցյալի մը հողվրտիքը նետված էր։ Ա՜խ, տարի մը «Դանիելինը» ինքն ալ էր կարդացած։ Ամիրաններըը ամենքն ալ ժամն էին. շատ շատ հավներ էին իր ընթերցմանը։ Կիրակի առտու Կելկել ամիրան զինքը տունը կանչելով, «աֆերիմ օղլում, դյուն վարպետ տըլլիս, լայուխ ես» ըսած էր ու տասը մահմուտիե տված էր իրեն, և «ենշիշե» մը ընծայած, զոր մինչև հիմակ մասունքի պես կը պահեր։ «Հե՜յ կիտի մարդեր, հեյ կիտի վախիտներ» հեծեց ու նորեն, հանդարտած ունկնդրեց։

Մութը ա՛լ կը կոխեր, երբ ժամավորները տաճարին բակը իրարու «Քրիստոս հարյավ» շնորհավորելով, էրիկ մարդիկ խումբ-խումբ շուկա իջան, կես մը «մեկ երկուք նստելու» մինչև կնիկներն ալ տուն դառնային և ինչ որ պետք էր պատրաստեին։

Երբ Ղուկաս աղան տանը դուռը զարկավ, Արմիկը վազեց բանալու Հորեղբորը ձեռքը ուրախ ուրախ քաշեց պագավ. ան ալ աղջկանը ճակատը տաքուկ մը համբուրեց «ապրիս աղջիկս, Քրիստոս հարյավ ի մեռելոց, շատ տարիներու» շնորհավորելով։ Ետքն ալ Վարդենի տուտուն եկավ, էրիկ կնիկ իրար ողջագուրեցին. «Քրիստոս հարյավ ի մեռելոց», «օրհնյալ է Հարություն Քրիստոսի» շնորհավորական սրտաբուխ մաղթանքներով։

Սեղանը շտկված էր, վրան երկու մոմ կը վառեին, անոնց մեջտեղ պղնձե փայլուն խնկամանը, որմեն անուշաբույր ծուխը կ՚ոլորտկեր։ Նախ Ղուկաս աղան, հետո Վարդենի տուտուն ու Արմիկը կիսախուփ աչով երեքական անգամ ջերմեռանդաբար խունկ առին դեպի երեսնին. ծերունին «Հոգոցն հանգուցելոց» մը մրմնջեց, խորապես հուզված։ Այս, վերջին Զատիկն է, որ կ՚ընեին. գալ տարի աս օրս Արմիկը զատ տուն եղած, իրենցմե բաժնված պիտի ըլլար։ Ու իրենք, երկու պառավ, գլուխ գլխի պիտի մնային մինակուկ։

Անցան սեղանը նստան, երեսնին խաչակնքելով. Ղուկաս աղան ալ «Քրիստոս հարյավով» ճաշը օրհնեց։

Շտկվածը այն զատկական սեղանն էր, զոր հայ կինը խանդակաթ գուրգուրանոք կը պատրաստե. կարծես գերեզմանեն դեռ նոր ելած

Քրիստոսը այդ իրիկունը անտեսլաբար իրենց սեղանակից հյուր ունենալու հավատքէ մը ներշնչված։

Անբիծ, անարատ սփռոցը կլորած սեղանը ծածկած էր. «ձյուներու պես» երեք անձեռոց դրված էին տրնթեր մաքրամաքուր պնակներու, որոնց մեջ մեյմեկ պատառաքաղ, գդալ ու դանակ զերդ արծաթ կը փայփլային։ Մեկ անկյունը խմբակ մը կը կազմեին կանաչ պնակով կարմիր հավկիթը, որուն մեկ քովը ճեպ ճերմակ կաթնապուրը՝ վրան մատ մը սեր կապած, մեկալ քովը, դեղնորակ չեօրեկը, մոտիկը կանաչ սալաթան ու դեղին խաշեր պանիր։ Իսկ սեղանին մեջտեղը սեփ սև միտիան: Վարդենի տուտուն ու Արմիկը ջանացեր էին, որ բերանները համ առնելե առաջ, աչքերը հաճույք զգային գույներու խատուտիկ, ներդաշնակ տեսքեն։

— Աս ի՛նչ ալ աղվոր շտկեր եք,— ըսելով կը հիանար Ղուկաս աղան։

— Արմիկիս մարիֆեթներն են,— սրբագրեց Վարդենի տուտուն մայրագորով պարծենկոտությամբ, զարդարման ամբողջ փառքը Արմիկին հատկացնելով։

— Գիտե՛մ, գիտե՛մ,— պատասխանեց մարդը, ու Արմիկին հետ հավկիթ մը զարկավ. իրենը կոտրեցավ։ Աղջիկը ենկեին հետ ալ զարկավ. անորն ալ կոտրեց։ Կրկնեց, նորեն հաղթեց։ Տղու պես կը խնդար, կ'ուրախանար կողոպուտը պնակը հավաքելով։ Բայց ամենալեն կարմըրեցավ, երբ հորեղբայրը.

— Արմի՛կ, գալ Զատկին հավկիթները էրկանդ հետ պիտի կոտրես,— կատակաբանեց։

Սուրճեն վերջը կանուխկեկ մը պառկեցան. մութուն պիտի ելլեին, «Առավոտ լուսոյին» հասնելու համար։

«Է՛յ կենճություն, է՛յ, ո՞ւր ես» հառաչեց ծերուկը անկողինը մտած ատեն, հիշելով, որ ատենոք ինքն ալ Զատկին առտուն շապիկ կը հագներ ու դասը դպիրներուն հետ կը բարբառեր։

Կիրակի առտու, արարողության ավարտումեն ետքը Ղուկաս աղան բարեկամներուն հետ սրճարան իջավ, ուր օղիով իրարու դարձյալ կենդանություն և շատ տարիներ մաղթեցին։

Կանուխկեկ տուն վերադարձին, սեղանը արդեն պատրաստ գտավ, հավու ջրով տաքուկ ապուրը խեղճ մարդը հոգնություններեն լավ մը կազդուրեց։ Հետո դուրս ելավ, Բարի-տարիին այցելությունները նախ

հեռավոր գեղերէն սկսավ։ Զմոռցավ «փարավոնին» ալ երթալ, որ Թեբա կը բնակեր, «շունը կոտրել չըլլար ըսավ, օր մը նորեն պետքություն մը կ'ունենամ իրեն»։

Զատկին երեք օրերը այսպես անզգալաբար անցան։

Է

Անգործ բանվորը չորեքշաբթի առտու տունեն սովորական ժամուն դուրս ելավ։ Երբ դուռը քաշեց գոցեց, մեկ երկու քայլ առնելե առաջ, երեսը երեք անգամ խաչ հանեց. զարթո՞ւմ տղայության հիշատակներուն։ Աչքերը վեր՝ երկի՛նք բարձրացնելով, «Յա՛, տեր աստված, դո՞ւն օգնես» պաղատեցավ ողորմագին։ Աղաչանքեն զորացած, ճամփան շարունակեց աշխատություն մը գտնելու հաստատամիտ առաջադրությամբ։ Մյուս օրն ալ առտուները տունեն դուրս ելավ, հավատքով սրտապինդ։ Ու առտուն կ'երթար, ու իրիկունը կը վերադառնար և բան մը, բանիկ մը չէր հաջողցուցած։ Շաբաթը գլորեցավ, գործը չերևցավ։

Ղուկաս աղան գրաշար արհեստավորներուն երիցագույն անդամն էր, բարեխիղճ ու վարպետ բանվորի համբավով։ Իր հանկարծական հրաժարումը, մանավանդ Զատկի շաբթվան հանդիպմամբը, տպարանական հրապարակին վրա ուշագրավ դեպք մը համարվեցավ, տեսակ մը պաշտոնանկություն։ Մեկ-երկու տպագրիչ այս շնորհազրկման շարժառիթը նույն ինքն էֆենտիին բերնեն լսել ուզեցին։

«Բայց կ'աղաչեմ, խոսքը մեջերնիս, մարդը մեղք է» պայմանադրությամբ պատասխան ստացան, թե՝ «Ղուկաս աղան ա՛լ ծերացած էր. ձեռքեն գործ չէր ելլար. ուրիշներուն մեկ ժամվան մեջ շարելիքը ինքը երեք ժամեն չէր լմնցներ։ Ու ասոր հետ մեկտեղ, չափազանցորեն ալ պահանջկոտ. շաբաթը վե՞ց մեճիտիե։ Ու մեյ մըն ալ, շարունակ պարտք ընելով առնելիքվորները վրան կը ղրկեր։ Աս անգամ նորեն տասը ոսկի խնդիր մը ունենալուն, փորձանքի չհանդիպած, ճամփու դրած էր»։

Ու վերջաբանը.

— Պեյա մարդ, հա՛, վեսսելամ: Բայց ըսի յա՛, խոսքը մեջերնիս մնա, մեղք է, հացին պատճառ ըլլալ չեմ ուզեր։

Եվ հիմակ, երբ մարդը տպարան մը կը ներկայանար գործ ուզելու, անվրեպ պատասխան կ'ստանար, թե՝

— Ինչո՞ւ չէ, Ղուկաս աղա, քեզի պես գրաշարը գլխուս վրա, գործ մը եղածին պես, քեզի խապար կը ղրկեմ։

Ու խեղճը «կանխավ շնորհակալությունները» մատուցանելով, հուսալիր կը մեկներ։

Ով կը պատահեր, որ տպարանը առժամյա բանվորի մը պետք կ'ունենար, մեկ կամ քանի մը օրվան համար. գրաշարապետը էֆենտիին կ'առաջարկեր երթալ Ղուկասը կանչել.

— Սնու պրագ,— կը հրամայեր էֆենտին։— Գլխուն պելա՞ պիտի բանար։

Մինչ այս, մինչ այն, Առջի Պսակը կը մոտենար. Արմիկին ընկերուհիները խեղճ աղջիկը նեղը կը դնեին ճերմակեղեններուն պատրաստության համար, վասնզի մեկտեղ պիտի կարեին։

— Արմի՛կ, քա աս ա՛լ օր չմնաց նե, կարերը ե՞րբ պիտի սկըսինք,— կը հարցնեին։

Վարդենի տուտուն ալ քանի մը անգամ էրկանը միտքը ձգեց, թե՝

— Հիչ չէ նե, երկու թոփ խասա առնեիր տե, մեյ մը աս ճերմակները պաշլեեին, ճահիլն ալ ռաճաքճար, սիրտը փորը կը հատնի կոր։ Ամեն օր կը հարցնե քի՝ «եէնկե, ի՛նչ եղավ»։ Ալ դուս դրացնե կը խըպնիմ կոր։

Խեղճ պառավին մտքեն կ'անցնե՞ր, որ իր ամեն մեկ դիտողությունը էրկանը արդեն ծակծկված սիրտը մեյ մըն ալ կ'ասղնտեր։ Մարդը մեկ պատասխան մը ուներ միայն «սարաֆը տասը ոսկին տահա չտվավ»։ Ու իր կարգին, ինքն ալ Պեյլիկի մարդեն լուր կը հարցներ անհամբերությամբ. ի՞նչ եղավ, չի՞ գար, կարերուն ստակը ո՞ւր մնաց։

Բայց Վարդենի տուտուն ուրիշ մտմտուք մըն ալ ուներ. տանը տնտեսական կարգ ու կանոնները ինչո՞ւ կը խանգարվեին։ Ամեն առտու, որ էրիկը տունեն դուրս պիտի ելլար, անոր՝ ըսելիք բան մը կ'ունենար։ Օր մը «էմեՃճիին» չեքելեն ալ լեցվեր էր. մարդը շատ յալվարմիշ կը'ըլլա քի, քիչ մը սրբեն». ուրիշ օր մը «տան տերը նորեն եկած էր ու խնդալով բարև ձգած էր». ինչ որ քաղաքավարի կը նշանակեր, տան վարձքը կ'ուզե։

— Է՛յ, դուն ասանկ բան չէիր ըներ նե. աս ի՞նչ եղավ քի,— կը մրմռար կնիկը։

Մարդուն տերտը կարծես իրեն չէր բավեր, մեյ մըն ալ կնկանը խոսք հասկցնելու էր։ Քանի մը անգամ քիչ մնաց, որ ա՛լ չդիմանար և գլուխն եկածը իմացնելով, ձեռքեն ազատեր։ Բայց, նորեն համբերեց, խոհեմությունը կը պահանջեր լռություն պահել։ Վարդենին որքան որ ալ բարի ու սրտցավ, բայց վերջապես կնիկն էր։ «Լեզուն բռնես նե, հիդեմ որտեղը կը խոսի», ըսավ ինքնիրենը։ Պիտի ելլա Արմիկին պիտի իմացնե, «սախըն ա մարդու բան չըսես» պատվիրելով։ Ան միամիտն ալ

եղածը չեղածը պիտի երթա ընկերներուն պատմե, «մարդու բան մի քսեք» հանձնարարելով։ Մեյ մըն ալ նայիս, որ հավատիսը շըմենտըֆեր նստեր Սամաթիա կը վազե, մինչև տղուն ականջը։ Ալ ան ատենը գործ ունի՛նք, հա՞։

Ել ճար մը մտմտալու էր։ Երեք ոսկիեն գրպանը քառորդ մեճիտիե մը մնացած էր։ Առտու մը «մենծ սնդուկին» բանալին դարձյալ առավ, տեղը ալ մեկու մը չհարցուց, չորս թուղԹ հանեց ու շիտակ Պաճճե-խաբուն սարաֆին գնաց։ Մարդը չորս թուղթին չորս ոսկի տվավ միայն։ Յոնտոները կ'իյնան կոր, առարկելով։ Ղուկաս աղան գործը տեսնելու համար անպատճառ վեց ոսկիի պետք ուներ. շատ թախանձանքներով շաբաթվան մեջ թուղթ մը ևս բերելու պայմանով, ոսկի մըն ալ փրցուց։

Պաճճե-խաբուճե Չախմախճիներր ելավ, երկու թոփ աղեկ խասա գնեց, վեց մեճիտիենոցեն, ու Եմիշեն շոգենավ մտավ։

Իրիկվան մթնշաղին, Արմիկը ծնոտը ափը, պատուհանին առջևը տրտում տխուր նստած, փողոցը կը նայեր, մեյ մըն ալ տեսնա՛ որ ամուճան վարեն կը փրթի, առջևեն յահուդիի բիճ մը, անութներուն տակ մեյմեկ ծրարով։

— Ենկե՛, ենկե՛, կը բերե կոր, կը բերե կոր,— աղաղակելով վար վազեց.— Վարդենի տուտուն ալ խոհանոցեն դուրս ցատկեց, դուռը ինք բացավ, ծրարները յահուդիին մանչուն ձեռքեն առավ։ Անոր ալ պաղ ջուր մը խմցուց ու գավաթն ալ անդին մեկ կողմ դրավ. «մեռոնազին բերանինը իրենցիններուն հետ խառնել չէր ըլլար»։ Ջայն ետքեն տաք-տաք ջուրերով զատ կը լվար։

Ծրարները առին վեր տարին. Ղուկաս աղան ալ ետ դարձավ սըր-ճարան գնաց։ Գիշերը տան մեջ ուրախությունը կը տիրեր։

Մյուս առտուն մարդը պարտքերը քիչ մը մաքրեց. հինգ ոսկիեն քովը երկու մեճիտիե մնաց։

Ը

Արթաքին կիրակնօրյա այցելությունները կանոնավորաբար կը շա-րունակեր. սակայն, վերջին անգամ գալուն, սիրտը նեղացած մեկնած էր։ Հարսնիքի պատրաստության ո՛չ նշան մը կը տեսնար, և ո՛չ ալ իրեն խոսք մը ընող կար, որպեսզի բան մը հասկնար. շաբաթվան մեջ երկու հեղ տպարանեն անցավ և Ղուկաս աղան փնտրեց. «դուրս ելած է» ըսին։ Շաբաթ իրիկուն վերստին հանդիպեցավ. դեմը ակնոցավոր, շնորհքով հագված մեկը ելավ, իմացուց, թե փնտրած մարդը ալ հոն չէր բաներ։

— Ո՞ւր կը բանի,— հարցուց։

— Չիդեմ, պարապ ըլլալու է,— պատասխանն առավ։

«Ասոր տակը բան մը ըլլալու է» մրմռալով, բարկությամբ ձգեց գնաց։

Կիրակի կեսօրեն ետքը, Արմիկին աչքը մինչև իրիկուն դուռը մնաց։ Նշանածը չէր իգար։ Կոտրուկ, տրտում կը սպասեր, երբ հորեղբայրը սրճարանեն տուն դառնալով իմացուց, թե Արթաքիին նամակ մը առած էր. մեկեն ի մեկ գործ մը պատահած ըլլալուն, պիտի չգար։

Ղուկաս աղան թեև նամակ մը ընդունած էր, բայց պարզապես, հաջորդ օրվան ժամադրության զեկույց մը։ Իրեն ալ մտքեն «ասոր տակը բան մը ըլլալու է» անցած էր։

Երկուշաբթի ցորեկը Սթամպոլ սրճարան մը իրար գտան։ Արթաքին առաջ եկած էր. Ղուկաս աղան խնդումերես ներս մտավ, թեև վիզը քիչ մը ծուռ։ Փեսացուն մարդուն բարևը պաղությամբ առավ, ու սուրճեն հետո.

— Աս գործը նայինք ի՞նչ պըտոր ընենք,— ըսավ։

— Ո՞ր գործը,— հարցուց Ղուկաս աղան։

— Չիդե՞ս, չիդե՞ս, հարսնիքը։

— Է՛յ, պիտի ընենք յա,— կմկմաց խեղճը։

— Պըտոր ընե՛նք ամա՛, ես տանա նազրության նշան մը չեմ տեսնար կոր. նեմ տե, դուն տպարանեն ելեր տե, պոմպոշ կը պտտիս կոր եղեր։

Մարդը քար կտրեցավ։ Ուզեց իմանալ, թե աս լուրը որմե՞ն կըրնար դուրս ելած ըլլար, արհեստակիցներուն լռությանը վստահ էր։ Արթաքին պատմեց, թե երկու հեղ տպարան գացած էր ու վերջին անգամն ալ կեոզլուկլի մարդու մը հանդիպած. անոր հետ խոսակցությունը պատմեց։ «Վա՜յ անօրեն, ա՛ս ալ մի», ըսավ գրաշարը մտքեն, կռահելով, թե ակնոցավոր մարդը էֆենտին ըլլալու էր։

Թեթևակի վարանումեն ետքը, Ղուկաս աղան գործը անմիջապես ուրիշ կաղապարի թափեց։

Տպարանեն իր հոժար կամոք ելած էր, ուրիշ տեղ ավելի նպաստավոր պայմաններով բանելու կարգադրությամբ։ Ջատկին պատճառով գործը քիչ մը կ'ուշանար կոր, բայց հաջողությունը ապահովյալ էր։

— Խըյանեթ,— ըսավ,— երեկ եկած ըլլայիր նե, հարսնիքի պատրաստություններն ալ աչքովդ կրնայիր տեսնալ, թե որ ուզեիր։ Ճերմակեղենները աճելե աճելե կը կարեն կոր. մինչև առջի պսակ կը հասնին, չհասան նե — կը հասնի՛ն յա, ամեն բանին թերսն ալ քիչ մը

մտածելու չենք մի — չհասան նե, շաբաթ մը, բեք-բեք երկու շաբաթ եւ կը մնա։

— Ատ է նե բան մը չէ,— ըսավ անհամբեր նշանածը, սիրտը հանդըրտացած, բայց հապաղումի մը հավանականության համար մտքեն քիչ մը զայրացած։

Իրարու հետ նորեն առաջինը եղան։ Սուրճերը Ղուկաս աղան վճարեց և կիրակի խասգեղ տեսնվելու խոստումով իրարմե բաժնվեցան։

Թ

«Էյ նայինք, հիմակ ինչ դալր *պիտի* ընենf*», կը մտմտար խեղճ մարդը, մինչ կամաց-կամաց դեպի այն սրճարանը կ'առաջանար, ուր պարապ գրաշարները օրը քանի մը անգամ կը հանդիպեին, հուսալով, թե կարելի է գործ մը կ'ըլլար, զիրենք փնտրող մը կը գտնվեր։*

«Անգործության սակարանը» կ'անվանեին այդ հավաքավայրը, որպես հեգնական հակադրություն «աշխատանքի սակարանին»՝ Պոլսային: *Երբ ներս մտավ, հոն գտնվող երկու արհեստակից.*

— Հա՛ թամամ, *աղեկ եկար, մենք ալ քեզի կը փնտրեինք կոր,— ըսին։*

— Խե՛ր է, ի՞նչ կա,— հարցուց։

Խեր էր։ Անգործ երեք բանվոր միանալով, որոշած էին «Գրաշարաց ընկերություն» մը կազմել, աս տպարանապետներուն, լրագրապետներուն ձեռքեն խալսելու *համար. իրենք դատին, իրենք վաստակին, իրենք կորսնցնեն, իրենք տեր ըլլան։ Ռափայելյանը իրենց հետ ընկերակցությամբ տառերը պիտի ձուլեր ու այլևայլ պետքերու համար ալ քիչ մը դրամ պիտի տար։* Պալը-Ալի ճամտեսին *թիվ հիսունհրկու սենյակն ալ նստած ու խոսքը վերջացուցած էին։ Մամուլի համար ալ տպարանի մը հետ կրնային համարրել։ Հիմակ կը փափագեին Ղուկաս աղան ալ մեկտեղ առնել. իրեն պես խելքը գլուխը, փորձ, վարպետ ընկերոջ մը շատ պետք ունենալով։*

Հավանությունը մեծ գոհունակությամբ տվավ։ Սրճարանեն կազդուրված դուրս կ'ելլար. Ծաղկազարդին այն մահաբեր շաբաթ իրիկունեն ի վեր, առաջին անգամն էր ուրախ սրտով խասգեղ կը մտներ։ Սըրճարանը սովորականին եռապատիկը ճնկեց և քիչ մը քեֆ *տուն դարձավ։*

Դուռը Վարդենի տուտուն բացավ, Ղուկաս աղան կնոջը դեմքին վրան խորհրդավոր խնդվածք մը նշմարեց։ Սենյակ մտան, ուր սեղանը

պատրաստ էր. շուտ մը Արմիկն ալ եկաւ. անոր ալ երեսները անսովոր զուարթութեամբ կը փայլէին։ Անպատճառ բան մը ըլլալու էր։

— Աս ինչ ունինք նայիմ,— հարցուց խնդալով։

— Հիչ, ճանըմ. բան մը չիկա,— քրթմնջեց կնիկը ժպտուն բարկութեամբ մը, որ սակայն շատ բաներ կրնար ենթադրել տալ։

Նոյն պահուն Արմիկը աներևութացաւ. ու քիչ մը ետքը թևերուն տակ երկու մեծ կտոր կերպաս, ներս վազեց և բեռը սէտիրին վրա հորեղբորը առջևը դնելով.

— Աղա ամուճա, նայէ՛, նայէ՛,— կ'աղաղակեր ինքնիրմեն դուրս ելած։

— Քա աղջիկ, աս ի՞նչ է, ուրկէ՞ է,— հարցուց միամիտին ուրախութեանը զգացյալ սրտակից մը։

Վարդենի տուտուն եղածն ալ տեղն ու տեղովը պատմեց։

Առտուն իր երթալէն ետքը, Պեյլիկին մարդը եկեր ու վեց հարյուր ղուրուշ տված էր. մնացած հազար ղուրուշն ալ մինչև ութը ինը օր բերելու խոստումով։ Անանկ խնդացեր, անանկ խնդացեր էին որ։ Թաղին մեջ ամեն տուն առած էր. մոտերս ալ նորեն շատ-շատ կար պիտի բերեր։ Տաճկին երթալեն ետքը, դրացի աղջիկները վազեր եկեր էին, անանկ ալ աղվոր ճավա մը հա՛յտե յալլա մը ըրեր Պեյօղլու ելեր էին. Արմիկին երկու ֆիստանցու, մեկ սէֆարքին, մեկ ալ բօթին մը առեր էին։

— Լուի-ֆենգ, աղա ամուճա,— ընդմիջեց Արմիկը ինքնիրմեն ելածի պես։ Իրավ օրն բարի էր. առտուն երազահանն ալ նայած էր, չարխերնին դառնալ կ'սկսեր։

— Փա՛ռք քեզ, տե՛ր, փա՛ռք մեծի ողորմութեանդ,— աղաղակեց ծերունին, սիրտը ելած, երբ կինն ու Արմիկը գացին կերակուր բերելու։

Այս անգամ ձեռքը և ոչ իսկ թեթև մը դողաց, երբ ուրբաթ առտու, մեծ սնդուկին բանալին նորեն առավ ու երկու թուղթ ևս գրպանը խոթեց։ Ինչ կար որ, է՛ն ուշը տասնհինգ օրեն ամենքն ալ պիտի ազատեր։

Ճամփան հաշվեց, թե շըմենտըֆերը քաշված օրը, թուղթերը արդեն իրեն տեղը վերադարձված պիտի ըլլային։ Հաստատ առաջադրեց, որ մինչև իսկ վեց հարյուր հազար ֆրանկն ալ զարնելու ըլլար, Արմիկը նորեն Արթաքիին պիտի տար. բախտը անորն էր։ Եվ արդեն իսկ, խոսք կապը տված օրեն, աս թուղթերը տղուն ստացվածքը համարած էր, ինքը պարզապես ավանդապահ մը մնալով։

Երբ սարաֆին խանութին առջևը հասավ, հոն իրարանցում մը կար։ Մանչերը աստին անդին կը վազվտեին. «չորսը կոտրեց», ըսավ տղա մը, Ղալաթիայէն հեւհեւ վազելով՝ քրտնաթոր։ Սարաֆը այս լուրեն

տակնուվրա եղած երևցավ. կը պոռար, կը կանչեր, մանչերը աստին անդին կը վազցներ։ Աս միջոցին Ղուկաս աղան ալ աչքին զարկավ։

— Հա՛, դուն ալ **թամամ** *ատենին եկար,— ըսավ,— ե՛ս ալ հիմակ ծախել պիտի տայի.*

— Հե՞, ի՞նչ պիտի ընեիր,— հարցուց մարդը, դող ելած։

— Ծախել պիտի տայի, ես ան օրը քեզի չըսի՞ **fի ֆոնտոնները** *կ'իյնան կոր.* **fրիզի** *վախ կա։ Ի՞նչ բերիք նայիմ, չափուխ:*

Ղուկաս աղան հանեց **շըմենտըֆեր** *մը ևս տվավ, իբր պարզ* **խաբառ:** *Սարաֆը երեք հատ ուզեց, գրաշարը հատ մըն ալ տվավ, հաջորդ օրը մեկ մը ևս բերելու խոստմամբ։*

«Նայե, **իշտե** *աս չեղավ» կ'ըսեր ետ դարձած ատենը։ Հուսացած էր գոնե երկու ոսկի ևս առնել ու գործերը տեսնալ, մինչև որ ամեն բան կարգադրվեր։*

Մյուս օրը շաբաթ, ծոցը թուղթ մը ևս դրած, է՛ն առաջ Ղալաթիա անցնելով, **Պորսայեն շըմենտըֆերներուն** *գինը հասկցավ։ Հեռագիրները, «վեր» եկած էին։ Առջի օրը Եվրոպայեն սխալ լուր մը* **բանիքի** *պես բան մը առաջ բերած էր,* **fրիզի** *ալ վախ կար։ Հիմակ մասնավորապես* **շըմենտըֆերները** *վրա կը դնեին։*

Այս տեղեկություններեն քաջալերված, ուզածը առնելու հույսով, **սարաֆին** *խանութը գնաց։ Վաշխառուն թեև առջի օրվան տագնապովը տակնուվրա չէր, բայց, ձեռքը շատ գործ ունենալուն, իրեն հետը չկըրցավ անմիջապես տեսնվիլ, ուստի դուրս ելլելով, անտեղվանքը դեգերեցավ. երկու անգամ եկավ, միշտ մեկ-երկու հոգի կը գտնվեին. ետ դարձավ, նորեն գալու համար։*

Այդ միջոցին էր, որ երկայնահասակ. չոփ չոր, խոժոռերես ու թխադեմ մարդ մը դիմացի մայթեն անցած ատեն, մեկեն ի մեկ կանգ առավ կայնեցավ, երբ տեսավ, որ գրաշարը **սարաֆին** *խանութը կը մտնար։ «Աս մարդը աստեղվանքը ի՞նչ բան ունի» մտածեց, ու դիտելու համար ինքն ալ ան կողմերը մնաց։ Տեսավ, որ գրաշարը հոնկե չէր հեռանար. դեպի* **Սուրճի** *Պողոս աղան կ'երթար կուգար, կը տնտնար, ջուր կը խմեր, լրագիրները աչքե կ'անցներ. ինքն ալ տեղ մը քաշված, սկսավ աղեկ մը դիտել։ Արթաքիին հորեղբայրն էր։*

Երբ Ղուկաս աղան վերջին անգամ խանութը մտնելուն ա՛լ դուրս չելավ, իրեն հետամտողն ալ գնաց դռանը մոտերը կայնեցավ։ Աչքովը տեսավ, որ սարաֆը սնդուկեն ծրար մը հանեց, Ղուկաս աղան ալ գըրպանեն թուղթ մը, որ ծրարին մեջ դրվեցավ, վրան բան մը գրվելով։ Սարաֆը ետքեն Ղուկաս աղային ստակ տալով, ծրարն ալ նորեն սնդուկը զետեղեց. **շըմենտըֆեր** *կ'երևային։*

Գրաշարը գործը լմնցուցած՝ երբ մեկնեցավ, մյուսն ալ հեռվեն անոր ետևեն գնաց, տեսավ, որ սրճարան մը մտավ. քիչ մի սպասեց, դուրս չէր ելլար։ Ինքն ալ ճամփան շարունակեց, ինքնիրենը մռլտալով.

— Թոհա՜ֆ բան, աս մարդը ի՞նչ կ՚ընե, շաբաթ օրով բան գործ չըմնի՞ քի խաճվեները կը պտտի։ Հեմ տե, սարաֆին հետ ըրած գործը ի՞նչ է։ Ան թուղթերը շըմենտըֆեր երևցան։ Ասոր տակը բան մը ըլլալու է։ Իրիկունը Արթաքիին հարցնեմ, նայիմ բան մը գիտե՞։

Ժ

Իրիկվան դեմ, Ղուկաս աղան Հաճի Պեքիրին առջևեն անցած ատեն, հարյուր տիրեմ իչի խալուրմիշ պատեմ շեքերի գնեց։ Արթաքին նախորդ կիրակին այցելած չըլլալով, անոր իքրամ մը ավելի ընել կ՚ուզեր։

Հաջորդ օրը, կիրակի, ճաշեն քիչ ետքը դուռը զարկին. Արմիկ պատուհանեն նայեցավ. «Ան էր»։ Դուռը վարեն Վարդենի տուտուն բացավ.

— Աս ո՞ւր մնացիր, աֆերիմ,— փաղաքշական հանդիմանությամբ մը։

Ղուկաս աղան ալ սանդուղին գլխեն դիմավորեց.

— Ես ալ հիմակ վար կ՚իջնայի կոր, քեզի սպասելու,— ըսավ. չիտեի որ աօր ասանկ կանուխ պիտի գաս։

Բայց տղան աչքերուն բյուրլի մը երևաց։ Էրիկ կնիկ գողընցի իրարու երես նայեցան։

Երբ սենյակը մտան, Արթաքին կիսովի նստավ, էյրեթի մը, ժանիքները կախ։ «Է՛յ, բարի եկարին» պատասխան հազիվ թե «բարի տեսանք» մը մրթմրթաց։ «Ընտո՞ր ես, աղեկ եսին» ալ գրեթե անտարբեր մնաց, առանց փոխադարձաբար հարցում մը ուղղելու տնեցիներուն առողջական վիճակին վրա։

Քիչ մը օդին վրա խոսելե հետո, փեսացուն թաշկինակը հանեց, ֆեսը ետևոք նետեց, ճակատը սրբեց, ու թեթև իմն դողդողացող ձայնով մը.

— Է՜յ նայինք, հարսնիքը առջի պսակին կ՚ընենք յա,— հարցուց։

Արտասանության հեգնոտ շեշտը ո՛չ Վարդենի տուտուին, ոչ Արմիկին ուշադրությունը գրավեց։ Ղուկաս աղան փոքր ինչ կասկածոտ, փութաց, «ինշալլա՜հ, ինշալլա՜հ» պատասխանել։

— Է՛յ, չէ՛,— վրա բերավ անդիեն Վարդենի տատուն,— խըյանեթ, կարերը տանա թեմիլ չեն, բեք առջի պսակին չեն հասնիր։

— Ես ատանկ բաներ չիյտեմ, առջի պսակին հարսնիք կ՛ուզեմ,— պահանջեց Արթաքին։

Արմիկին սիրտը թըփ թըփ կը նետեր, երբ նշանածը այնքան տաք կը տեսներ։

— Է՛յ, գիտե՞ս յա,— դիտել տվավ Ղուկաս աղան,— քեզի հետ համաձայնեցանք, որ չըլլա նե երկու շաբաթ ետ ձգենք։

— Անանկ է, բեֆ աղեկ, խոսքս՝ խոսք, ամա խավլով մը։

— Հրամմե։

— Այս շաբթու Պատրիարքարանով նշանտուք կ՛ուզեմ, Քեսե պիշեն աս ուրբաթ ընելու ենք։

Ու պայմանները առաջարկած պահուն, շեշտակի Ղուկաս աղայի երեսը նայեցավ։ Մարդը աչքերը բնազդաբար խոնարհեցուց։ Քեսե պիշեին օրը Երկաթուղիները հանձնելու էր։ Լուռ մնաց։

— Է՛յ, նայինք, ասոր ի՛նչ պատր քսես,— պնդեց փեսացուն։

— Ի՞նչ պիտի ըսեմ որ,— պատասխանեց Ղուկաս աղան,— օրենքը ինչ է նե, ա՛ն պիտի ըլլա։ Քեսե պիշեն հարսնիքի շաբթու կ՛ընենք։ Հիմակ վար իջնանք նե մենք մեզի խոսինք, Արթաքի աղա։

Ու աչքովը Արմիկին նշան ըրավ երթալ շաքարը և սուրճը բերել։ Կ՛ուզեր տղան ժամ առաջ հեռը ռանել դուրս ելլել։ Ջևին ու խառվածքին շատ չէր հավներ։

Երբ աղջիկը դուրս ելավ, նշանածը ա՛լ ավելի զայրացկոտ ձայնով մը ըսավ.

— Ղուկաս աղա, ինծի նայե, խանութին, օտային քիրաները անդին կը բանին կոր, իշտե երեք ոսկին գնաց, նոր ամսականը պիտի բանի հիմակ, ես...

— Գուզում Արթաքի աղա, աս տեղը մունաքաշեթ ընելու եկեր ես,— աղաչեց Ղուկաս աղան,— գործի խոսքերը հիմակ վար իջնանք նե հոն կ՛ընենք։

Արմիկ ափսեն ձեռքը ներս մտավ և անուշ ու շեքեր հրամցնելե հետո, Արթաքին շարունակեց։

— Բեք աղեկ, ա՛ս ալ թող ձեր խոսքը ըլլա...

Ղուկաս աղան հանգստացած սրտով շունչ մը քաշեց, բայց ան խոսքը դեռ չէր լմնցուցած,

—..., ամա՛ աս, շըմենտըֆերները ասոր մեկ մը աչքովս պտոր տեսնամ։

Մեկտալը շլմորած մնաց. աստնկ պահանջում մը մտքեն չէր անցուցած ու մինչ հանկարծակիի եկած, բոպեաբար սուտ մը ստեղծելու կը տքներ, անդիեն կնիկը անհամբեր մեջ նետվեցավ։

— Է՜յ, վա՜յ, մեղա՜, Արթաքի աղա, տունք կը վայլե՞ն, խոսքե՞ր են ֆի կ'ընես,— հանդիմանելով։

— Կը վայլենը չեն վայլերը ան իմ գիտնալիք բանս է,— հայտարարեց Արթաքին բարձրաձայն։— Ես ճելպեր շյուփէ մը ունիմ ֆի, կ'ըսեմ կոր։ Ես ան ձեր գիտցածներեն չեմ, անանկ լախլուխներու չեմ իգար։

— Էյ իշտե, սիրտդ թող ռահաթնա,— գոչեց Վարդենի տուտուն կրակ կտրած։ Ու ցատկելով, գնաց քովի սենյակը պատին կախված սև շրջազգեստին գրպանեն մենծ սնդուկին բանալին առավ բերավ։

Ղուկաս աղան լեզուն բռնված կը մնար. ձեռացի նշանը օգուտ մը չունեցավ։

— Ձգե, ճանըմ, ձգե,— հրամայեց կնոջը,— մենք հիմակ վար պիտի իջնանք, հոն կը խոսինք։

— Ինչո՞ւ պիտի ձգեմ ֆի,— պոռթկաց կինը, ընտանեկան արժանապատվության զգացմանը մեջ չարաչար վիրավորված.— թող աչքովը տեսնա ֆի, սիրտը ռահաթնա։

Երբ Արմիկը սուրճը բերավ, Վարդենի տուտուն սնդուկը բացած, մեկ ձեռքովը խուփը բռնած, մյուսովը ծրարը կը փնտրեր. անդիեն էրիկը, լեզուն կապված տեղը կը մնար, ինչպես հանցավոր մը, որ իր տան մեջ ոստիկանական խուզարկության պահուն, ալ ապահով ըլլալով, թե իր մեղապարտության ապացույցները հեռք սլիտի անցնին, լուռ մունջ կը համակերպի ճակատագրին։

— Քա աս խարախատան, որ ծակերն է մտեր քի.— կը մրլտար կինը, ձեռքին չհանդիպելով երբեմնի լեցունկեկ ծրարը, զոր գտնելու վարժ էր։

— Հա՛, հա՛, փնտրե ֆի գտնաս,— հեգնեց փեսացուն։

Արմիկը աս իրարանցումեն, անցած դարձածներեն բան մը չհասկնալով, հորեղբորը մեկ նշանացի հրավերին վրա, ֆինճանները ժողվեց դուրս ելավ, բայց զանոնք տեղը դնելե հետո, եկավ դռան ետին պահվտեցավ. այդ միջոցին էր, որ Վարդենի տուտուն՝

— Իշտե գոռ, նա՛, թող սիրտդ ռահաթնա,— աղաղակելով, ղոխշային մեջեն ձեռքը անցած երեք թուղթը հաղթական Արթաքին աչքեր նետեց։ Երիտասարդը քիչ մը զարմացած մնաց, ըրածին ամչնալով. բայց, չկրակն ալ, սրտին ուրախ, որ վախերը զուր տեղն էին։ Իր երազ-

նե՛րը։ Բայց և այնպես, քիչ մը տարակուսանքով, շատ մըն ալ հուսալից,

— Է՜յ նայինք, մեկալնե՞րը,— հարցուց։

Պառավին ձեռքերը նորեն մխրճեցան սնդուկին խորը. խեղճը կը կարծեր թե ծրարը քակված էր ու թուղթերը թափեր էին։ Մեկալները ո՛ր սատանին ծակը ինկեր էին։ Կը փնտրեր։

— Է՜յ, գտա՞ր մի,— հարցուց Արթաքին, հուսախաբությամբը առաջվընե ավելի դառնացած։— Հելպեք ես բան մը գիտեի ֆի, թուղթերը մեյ մը աչքովս տեսնալ ուզեցի։

Ու հերստտած պառավը պոխճաները մեկիկ մեկիկ դուրս կը հաներ, կորուստը անոնց ներքևեն գտնելու հավատքով։

— Մի՛ փնտրեր, մի՛ փնտրեր,— ըսավ էրիկը,— ես մեկալները տարեր եմ։

Վարդենի տուտուն սնդուկը գլխիկոր գոցեց, ու դարձավ խեղճուկ մը էրկանը երեսը նայեցավ։ Մարդը այս պահուն արդեն պատրվակ մը հայթայթած էր Երկաթուղիներուն աներևութացումը բացատրող.

— Պանճայեն,— շարունակեց,— մեծ գիրք մը հանեցին, մինչև հիմակ ելած ամեն թիվերը մեջը գրված են. ամեն մարդ կը նայի, կը փընտրե կոր, քի անապա մոռցված աչքե փախած բան մը կա՞ մի։ Գիրքը մենծ է, իմինս ալ չէ՛, չեմ կրնար տուն բերել. թուղթերը տպարան տարի, մեկիկ-մեկիկ կը նայիմ կոր. իշտե ատ իրեքը լմնցան, մեկալ ինն հատն ալ վաղը մեկալն օր կը բերեմ։

Վրան շատ բաց գյուտ մը, որուն Արթաքին բարկությամբ պատասխանեց։

— Հա՛, պիտի բերես, հա՜, պիտի բերես։

Ինքնիրմե ելած, բանականությունը կորուսած, մոլեգնոտ մըն էր այդ րոպեին։ Ֆեսճիի խանութ, պզտի՜կ Պոճ Մարշե, ամենքը փլատակնե՜ր աչքերուն առջև։ Նորեն շան պես ամուճային դուռը պիտի իյնար, նորեն ասոր անոր պիտի աղաչեր իրեն մանչության գործ մը գտնել, ո՜հ, Նաոլը-խափուին աղվորիկ տունը, կոկիկ խանութը, որոնց առջևեն կ՚անցներ առտու իրիկուն ու գուրգուրանքով վրանին կը նայեր, հիմակ անոնք ավեր ավերակ։ Ու այդ վայրկենական տեսարանեն աչքերը մթագնած, իրեն գարշելի ճիվաղի մը պես կ՚երևնար դեմի ծերուկը, ամեն չարիքին պատճառը։

— Դուն երեկ Պախճե-խափուն սարաֆ Օհանին խանութը ի՞նչ բան ունեիր քի,— հարցուց ամբաստանիչ շեշտով։

Ղուկաս աղան Պախճե-խափուն լսածին պես, արդեն լմնցավ. ու մեկալը ջախջախիչ հարվածները անխղճորեն իջեցուց, իջեցուց։

— Ծրեկ ամուճաս հոնկե անցած ատենը ամեն բան աչքովը տեսեր է,— հայտնեց։

Ու Վարդենի տուտուին դառնալով.

-- Ա՛ս մարդը շատոնց է պոշճ է, քեզի ինչո՞վ կը նայի կոր քի, հե՞. ան զավալլը էոխսուզին շըմենտըֆերճերը մեկիկ-մեկիկ կը ծախե, մեկտեղ կ՚ուտեք։

Վարդենի տուտուն աս անլուր, անհավատալի ամբաստանության դեմ կ՚ըմբոստանար.

— Վա՜յ գլխուդ, բռնվիս, աս ի՞նչ անօրեն անաստվածի խոսքեր են քի կ՚ընես կոր,— աղաղակեց։ Միևնույն ժամանակն ալ կասկածոտ խոհեմությամբ, երեք թուղթը մեկեն սռնելով սնդուկը դրավ, զոր կըղպեց։

— Ես ըստծս գիտեմ,— պոռաց տղան,— հեմ տե աս առտու շիտակ Գեյօղլու իր էֆենտիին գացի։ Աս մարդը ալ գործի պտոր չմտնա եղեր, բխտիարցեր է. ձեռքեն բան մը չի գար կոր եղեր։ Ալ շըմենտըֆեր, մըմենտֆեր չկա։ Ասոնք ալ ծախեցեք, մեկալներուն պես կերեք։

Ու ոտքի ելլելով.

— Ա՛լ ինծի համար չէ, բերածներս տվեք երթամ պըտոր,— հայտարարեց հանդիսավորապես։

Գրաշարը ապուշ-ապուշ կը նայեր, ոճիրը գործադրած պահուն իսկ տեղն ու տեղը բռնվող եղեռնագործի մը զարհուրանքովը։ Բայց կինը՝ արթուն, խելքը վրան, կռվի կազմ ու պատրաստ.

— Ի՞նչ ետ պիտի տանք, ֆի,— պոռաց,— ճեմեճ արուններրը փըսխես, զավալլը չոճուխին արո՜ւնը պիտի մտնաս։

— Օղերս կ՚ուզեմ, անանկ բաներ չիտեմ,— կը պոռար փեսացուն. Սամաթիացի «աղբարըմը» հանկարծ երևան եկած էր։

— Վա՜յ գլխուդ, ճայտե ճեճեյլեմ եղիր տե գնա,— կը գոչեր պառավը, ճարը կտրած,— օղ մող չիկա, մենք ետ չենք ըներ կոր ֆի, խոսք-կապը ձեռքդ տանք տե քեզի ճամփենք։ Յա մեր աճխտար մասրաֆճերը, յա մեր անխտար եփածները, թափածները, յա մեր աճխըտար անուշները, շեքերճերը: Ջեճիր զըխը՜մ ըլլա. արուններ փսխե՜ս, վա՜խ զավալլը Արմիկս, իմանա նե…

Այս րոպեին Արմիկը, դռան ետը ամեն բան լսած, ներս մտավ, օղերը իր ձեռքովը ականջեն քաշեց և արհամարհանքով նշանածին առջևը նետեց ու դուրս ելավ։ Մարդը տեղը պահ մը պաղած մնաց, ամըչկոտ, վեր առնելու չծռեցավ. բայց Վարդենի տուտուն որսի շան պես ցատկեց, ավարը հափշտակելով գրպանը նետեց.

— *Ինչու պիտի տանք* ֆի. *մենք խո չենք ըներ կոր յա՞։*

Այդ բորբոքյալ կնոջ դեմ իր անզորությունը զգալով, Արթաքին ճակատամարտին դաշտը թողուց ու բերնին տալով «էյ նայեցեք ես Պատրիարքարանով կ՛առնեմ մի, չե՛մ առներ. վաղը ղազնքանէրը *անցընել պիտի տամ» սպառնալիքներ տեղալով, առավ քալեց։*

Ղուկաս աղան ետևեն աճապարեց, ետ դարձնելու դիտմամբ, «Արթաքի աղա, ամոթ է, ճանիլություն *մի ըներ, ինծի նայե» աղաղակելով. բայց Արթաքին դուռը աղմկալից փակեց գնաց։ Ղուկաս աղան ետ դարձավ, ֆեսը դնելու և շուտ մը շուկան իջնելով փեսացուն գտնելու, ամեն բան հասկցնելու և կարգադրելու համար։ Բայց կինն ու Արմիկը, իրենց անձնասիրության մեջ վիրավորված, թող չտվին, որ տեղեն շարժի։*

— Ուղուրսուզը,— *կ՛ըսեր Վարդենի տուտուն,— ուրկե՞ ալ դեմերնիս ելավ։ Է՛յ* մէյէր *Արմիկս բախտ ունի եղեր* ֆի, *ատ* նումէրոնէրուն յաղըլըշը *եղավ տե, ան ալ իր* պօյան *դուրս տվավ.* Յումուրճա՛խը *տանի. աս սիրտս չէր փակչեր կոր նե, ան էր. երեսեն* զէճիր *կը վազեր. օր մը խնդալը չտեսա...։*

ԺԱ

Խնդումերես աղջիկ մըն էր Արմիկը. թաղին կնիկները անոր անունը «խնդամոլիկ»-ը դրած էին։ Երկու տարվան կար չկար, հայրը մեռավ. քիչ ետքն ալ մայրը՝ բարակ ցավե։ Ղուկաս աղան եղբորը թողած որբը առավ իր տունը տարավ։ Աստված իրեն զավակ չէր տված, «փիշտե *զավակ» ըսին։ Ու այդ պատիկը եղավ այն տրտմահալած* էլպօրան *ծաղիկը, որուն համար կ՛ավանդվի, թե երբ վշտահարներու սենյակը դրվեր, ամենուն տխրությունը կը փարատեր։*

Արմիկը տակավին չորդեգրած, գրաշարը շատ անգամ մոայլ մտածությունններով կը սևամաղձոտեր։ Ա՛լ քառսունը անցուկ, ծերության կ՛երթար առանց կյանքին համը առած ըլլալու։ Երբեմն-երբեմն ինքնիրենը կը հարցներ, թե «շան պես դատիլ» կ՛ըսեն նե ի՞նչ է։

«Եթե ատ շուները, սա մեր փողոցի շուներն են, կը խորհեր կեր, արբ և ուրախ լերը անոնց համար է։ Չէ թե որ տան շուներուն համար է նե, անոնք մեյ մեկ պէյզատէ *են։ Նայե, գրաշարի պես դատիլ որ ըսեն նե, ան ատեն բան մը կը հասկնամ։ Աս քսանհինգ տարիեն ավելի է քաշածս, ի՛նչ է։ Գնա՛ց երիտասարդությունս, գնա՛ց.* կիթտի, կիտէր, *մեյ մը* տաճա *չի գար։ Գոնե զավակ մը ունեցած ըլլայի»։*

Բանե մը չէր խնդացած ու զավկի մը «ա՜խը» կը քաշեր։ Սակայն

ո՛չ բժշկական դարմանումները կը փարատեին կնոջը ամլությունը, ո՛չ ալ ընտանեկան դեղերը։ Պոլիս ու շրջականները ա՛լ սուրբ չմնաց, որուն ոտքը գացած չըլլար Վարդենի տուտուն։ Բայց Ղալաթիո Փրկիչն ալ, Օրթագյուղի Խնդրակատարն ալ, Մենծ Արմաշն ալ, Պզտիկ Արմաշն ալ, ամենքն ալ անկարեկիր ունկնդրած էին իր պաղատանքներուն։ Էրիկը, ձեռքեն թե որ գար, կինը մինչև Հինդիստանները պիտի ղրկեր. ան տեղվանքը քարեն անգամ զավակ բերել տվող բույսեր կը գտնվին եղեր. «բայց, ա՜խ, փարա, աչքդ ճյոռնա» կը հեծեր։

Օր մը տպարանը ձեռագիր մը շարած ատենը, մեջը խառնված, ոտանավորի մը առաջին քանի մը տողերը սիրտը մեկեն ի մեկ թունդ հանեցին։ Թուղթին շարունակությունը ուրիշ գրաշարի մը ձեռքը կը գտնվեր։ Ղուկաս աղան չհամբերեց, գնաց առավ կարդաց։ Երբ ընթերցումը ավարտեց, «աս գրողը ով է նե, ըսավ, Աղեքսանդր Տյումայեն ալ, Վիքթոր Հյուկոյեն ալ խըյախ մեկը ըլլալու էր. մեզիպեսներուն ճալեն հասկցող մը կ'երևա կոր»։

Առաջին տուներն էին այն ցայգերգին, զոր Լեոպարտի ասիացի հովիվի մը բերանը կը դնե, ճամփորդի մը պատմածներեն ներշնչյալ, թե Պուխարայի անդեորդները, գիշերները վեմերու վրա նստած, թախծուկ եղանակներով, ափհափո տրտում տխուր երգեր կ'ուղերձեն առ լուսին, որուն հետ հովիվ մը կը խոսի ու կը հարցնե.

Ի՞նչ կ'ընես երկինքը լուսնակ, ըսե ինծի, ի՞նչ կ'ընես,
Լուռ ու մունջ լուսնակ։
Կ'ելլես իրիկունն, ու կը պտտիս,
Անապատներուն պիշ-պիշ նայելով, ետքեն կը հանգչիս։
Դեռ չկշտացա՞ր
Հավիտենապես նույն ճամփաներեն երթալ ու գալէ։
Դեռ չձանձրացա՞ր, դեռ կը փափագիս
Նայիլ ու նայիլ այս հովիտներուն։
Կյանքիդ նման է,
Կյանքն ալ հովիվին.
Արշալույսին բացմանը կ'ելլէ,
Հոտը կը քշէ արոտավայրերը և կը տեսնէ
Հոտեր, աղբյուրներ ու դալարներ.
Հոգնած ու դադրած կը պառկի ետքեն, իրիկնադեմին
Ա՛լ ուրիշ բան մը չի հուսար բնավ։
Լուսնակս, ինձ ըսե, ի՞նչ օգուտ ունի
Իր կյանքն հովիվին,
Քու կյանքդ ալ քեզի. ըսե՛, ո՞ւր կ'երթա
Իմ աս թափառումս անձուկ կարճատև,
Քու երթևեկդ ա՛լ մշտնջենական։

Ճերմըկուկ հալվոր, անկար՝, անկարող,
Կիսամերկ բոպիկ,
Ուսերուն վրա շատ ծանր բեռով.
Լեռնեն ու ձորեն,
Սուր քարվընտանքե, խոր ավազներե և մացառներե,
Ծովուն, փըշմըրկին, և կրակ թափած,
Ժամուն ու ետքեն, երբ պաղ կը կապե.
Կ՝առնե կը վազե, շունչը կը կտրի,
Հեղեղն ու ճահիճը կը կոխկռտե.
Կ՝իյնա, կը կայնի և կ՝աճապարե ավելի շուտ-շուտ,
Ջունենալով դուլ և ոչ ալ դադար,
Պատռած, պատռտկած, արուններ մտած, մինչև ա՛լ հասնի
Այն տեղ, ուր ճամփան
Եվ դատանքն այնքան գլխիվար կուգան.
Խորխորատ ահեղ, անտակ, անհատակ,
Ուր գըլտորվելով, կը մոռնա ասոնք,
Կույս լուսնակ, այսպես
Ա՛լ է նաև կյանքը մահկանացու։

Գրագետ մը այս բանաստեղծությունը հոռետեսության ներբող բանասիրականի մը մեջ խառնած էր։

Այն օրը մինչև իրիկուն գրաշարը գլուխը վեր չառած, անխոսուկ շարեց, սիրտը ելած։

«Ա՜խ, կ՚ըսեր ինքնիրենը, ասիկա գրողին գրիչը պագնեմ ես։ Նայե ասանկ բաները հայերեն չեն թարգմաներ, որ մենք ալ կարդանք, մխիթարվինք. իշտե թամ իմ կյանքս։ Ջմեռ է, առտուն մութն ու լուսուն ելիր վաբոռ վազե. պատառ մը բան ճտկե, շնթռկե։ Առտուն, զնկռտա՛, զնկռտա՛։ Ոտքերդ գլուխդ ջուրերը թաթխված տպարան եկուր, մինչև իրիկուն ոտքի վրա դատի՛ր ու դատի՛ր, բերանդ քիչ մը պանիր հաց նետե, բանե՛ թե բանե՛, մինչև մութը կոխե. ու նորեն բեՃՆեֆես վաբոռ վազե, պատառ մը բան ճտկե շնթռկե։ Առտուն, նորեն վազե։ Ամա՞ռ է, վերեն կրակնե՞րը կը թափին, վազե վաբոռին, վազե՛ տե, վազե՛։ Արուն քըրտինքը մտած մինչև իրիկուն խավուռմիշ եղիր, մութուն, ճեյլաֆ տուն ինկիր։ Ա՛լ աս քսանհինգ տարի է ֆի կը քաշեմ կոր, ասոր վե՞րջը։ Գոնե զավակ մը ունեցած ըլլայի՞, ա՛ն ալ իմ ոսկի թոփիկս կ՚ըլլար. իրիկունները ճավեսով մը տուն կ՚իյնայի, անոր հետ կը խաղայի, օրվան քաշածներս կը մոռնայի։ Է՛յ, աս ապրա՞նք է»։

Հոգեկան այս տագնապի ճգնաժամերուն էր, որ եղբայրը հանկարծ մեռավ. այս դժբախտությունը մարդը իր սևամաղձոտ մտածմունքներեն սթափեց։ «Գամը գամ կը հանե» կ'ըսեն, նորագույն ցավ մըն ալ սրտին մեջեն կը քաշե, դուրս կը հանե հոն արդեն խորամուխ հին ցավ մը։ Եղբայրը, մեռնելու պահուն, Ղուկաս աղային ձեռքեն բռնելով.

— Ա՛ղբար, զավակս ու մարս առաջ սատծու, ետքեն քեզի բեսլիմ,— կտակած էր։

Մարը շատ չապրեցավ, բարակ ցավե բռնված, արդեն վերջ չուներ. գիշեր մը մարեցավ լմնցավ. Վարդենի տուտուն ալ Արմիկը գրկեց, իրենց տունը տարավ։

Ա՛լ անկե ետքը Ղուկաս աղան իրիկունները շարշըենճ վերադարձին, սրճարան հանդիպելուն, շատ անգամ ոտքի վրա օղի մը նետելով «զայս խմյաց և չվյաց» կ'ըսեր։ Երբ բարեկամները քիչ մը ավելի կենալ կը թախանձեին։

— Չէ՛, ըլլար, կանուխ երթամ քի ոսկի Թոփիկիս հետ խաղամ,— կը պատասխաներ ծանրաբար։

— Վա՜յ, Ղուկաս աղա՛, ոսկի Թոփի՞կ, հե՞, սա քեզի բիաճոռ մի զարկավ. սատված տա, սատված տա,— կը կատակաբանեին բարեկամները։

Ու իրիկուն մը, երբ ա՛լ շատ ետևեն ինկան, որ շուտ կը մեկնի, մարդը վար նստավ, ու «կենաց ջուր մը տաճա» ապսպրելով, իր «ոսկի Թոփիկ»-ին զրույցը պատմեց։

— Հարուստին մեկը,— ըսավ,— ամեն գիշեր կերակուրեն ետքը, կնկանը հետ դեմ դեմի նստած ո՜ֆ, բյուֆ կ'ընեին։ Ատ բազում գանձս ունեցող մարդը իրիկուն մը էսկիճիի մը քլյուպեիճ առջևեն անցած ատենը, ներսեն «քա՛հ-քա՛հ»-ներ կը լսե։ «Աճայիպ,— կ'ըսե ինքնիրենը,— ասոնք ուտելու հաց չունին, խնդալնուն կը ճաթին»։ Ուրիշ գիշեր մը նորեն այդ «քահ-քահները» կը լսե։ Մարդուն հետաքրքրությունը կը շարժե և քանի մը գիշեր իրարու վրա խրճիթին առջևեն կ'անցնի. ամեն գիշեր ալ կը լսե, որ ներսեն խնդալնուն կը ճաթին. ինքն ալ խռսեճ: Ա՛լ չի դիմանար և էսկիճիճ իր տունը կը կանչե. «Պե՛ մարդ սատծու, կըսե, աշխարհքիս երեսը դուն տերտ, խասեֆեր ըսված բանը չունի՞ս. ճե՛մ օրվան հացդ կը մտմտաս, ճե՛մ տե աշխարհք ճիվերդ չէ։ Աս ի՞նչ խընդալ, ցնծալ է ամեն գիշեր, ես ոսկիի հետ կը խաղամ, օր մը օրանց խնդացած չունիմ. աս ինչ ճիքմեթ բան է»։

— Աղա,— կը պատասխանե մարդը խեղճուկ մը, գլուխը ծռած,— աստված ծառայիդ ալ պըլտիկ ոսկի Թոփիկ մը պարգևեր է, իշտե մեր էյլենճեն ալ ան է։ Գիշերները խանութս գոցելեն ետքը, մերինին հետ դեմդեմի կը նստինք, ոսկի Թոփիկը ան ծառայիդ կը նետե, ծառադ ալ անոր կը նետեմ, կը խնդանք, կ՚ուրախանանք, մինչև քուներնիս գա պառկինք։

Աղան մարդը կը ճամփե, մեկալ առտուն ալ շի՛փ շիտակ խույումճիներուն շուկան կ՚իջնե ու մեծկակ ոսկի Թոփիկ մը կ՚ապսպրե։ Քանի մը օրեն, երբ կը լմննա, կ՚առնե տուն կը բերե քեֆով մը։ Հանըմին հետ դեմ դեմի կը նստին. սետիրին մեկ գլուխը էրիկը, մեկալ գլուխը կնիկը, և ոսկի Թոփիկը իրարու կը նետեն։ Քիչ կը մնա խաֆաներնին փարա փարչա ըլլար։ Աղան կրակ կը կտրի. առտուն լուսցած չլուսցած էսկիճիին վրա կը վազե։

— Աղա,— կը պատասխանե աղքատ արհեստավորը,— ես հրամանքիդ ոսկի Թոփիկ ըսի նե, մեկտեղ ա՛լ «աստված պարգևեց» ըսի. աս հրամանքիդ գիտցած ոսկին աստված չի տար, սատանան կուտա։ Աստծու մեզի պարգևած ոսկի Թոփիկը, աղվորիկ, Թոմպառլախ մանչուկ մըն է. ան է ի՛ր իրարու կընետենք ու կը խնդանք, էյլենմիշ կ՚ըլլանք։

— Ցուցանե Առակս,— շարունակեց Ղուկաս աղան կոնծելով,— լուսահոգի աղբորմես ալ աղվորիկ աղջիկ մը մեռաս մնաց. մերին ոսկի Թոփիկն ալ ան է։ Քիչ մը կանուխկեկ դարձած իրիկուններս, կ՚ուզեմ շուտ տուն երթալ, որ ոսկի Թոփիկին քունը չտարած հետը քիչ մը խաղամ. հիմակ հասկցա՞ք մի։

Ա՛լ անկե ետքը ամեն անգամ, որ Ղուկաս աղան շուտ մը տուն երթալ ուզեր, բարեկամները զինքը կենալու չէին ստիպեր։

Էրիկ կնիկ խելքերնին մտքերնին Արմիկին տվին. աղվոր աղվոր նայեցան, մեծցուցին, բերնեն կտրեցին անոր ըրին, մինչև որ հարսնացու աղջիկ եղավ ու նշանեցին։

Ղուկաս աղան ալ Լեռբարտին ալ մոռցած էր, պուխարացի անդեորդներն ալ, անոնց լուսնկան ալ, անոնց Թախծուկ երգերն ալ։

Ու երբ օր մը ձեռքը ինկած հատորի մը մեջ Գրիգոր Օտյանին մեկ նամակը կարդաց, ուր «զմե՞ կյանք, զմե՞ սեր» հոռետես գանգատը կը լսեր՝

— Ծրանելի,— ըսավ,— եթե դուն ալ Արմիկ մը ունենայիր նե, ան ատեն կը հասկնայիր, թե ինչո՞ւ է կյանքը, ինչո՞ւ է սերը։

Երբ Արթաքին դուռը մեծաշուինդ փակեց ու Հայհոյանքը բերանը արագաքայլ հեռացավ, Ղուկաս աղայենց դրացիները ա՛լ տարակույս չունեցան, թե արդարև ասոր տակը բան մը կար։ Քանի մը կնիկ մեկ-տեղելով, իրենց սրատեսության վրա կը պարծենային։

— Է՛յ մեղա, աս մենք չէի՞նք ըսեր ֆի ասոր տակը մութլախա բան մը ըլլալու է։

Արդարև նախորդ կիրակին տղուն պաշտոնական այցելության զան-ցառումը արդեն թաղին հանրային հետաքրքրությունը գրգռած էր. այսօր ալ նշանածը շատ կանուխ կը հասներ, և ժամանումեն քիչ վերջը, վըլ-վլուկ մըն էր տանը մեջ կը փրթի, որուն շարժառիթը իրենց անհնարին եղած էր հասկնալ, թեև մեկ երկու տուն ամբողջ աչք ու ականջ կըտ-րած էին։ Եվ ահա հիմակ ալ, մանչը դուռը շռա՜խ կը գոցեր ու բերնին տալով կ'առներ կը քալեր։ Կարծես թե լալու ձայնի պես բան մըն ալ կ'առնեին։ Այս ծանրածանր դեպքերեն հուզված, տարեց կիները միջեր-նին որոշեցին, թե «է՜յ, կը վայելե, որ մեյ մը երթանք տեսնանք ֆի աս զավալլըներուն ի՞նչ եղած է»։ Ու այս որոշումին գործադրությանը համար, տարիքոտ երկու կին, իբրև պատգամավորուհի, ելան դժբախ-տության բնակարանը գացին, կես սգավորի տրտում դեմքով։

Երբ տանը դուռը զարկին, Վարդենի տուտուն պատուհանեն նայե-լով, շուտ մը վար գնաց բանալու. վրան լույս իջած էր։

— Է՛յ, մեյեր աստված ղրկեց ձեզի,— աղաղակեց սիրտը ելած։

— Քա, քուրուկ, ի՞նչ կա քի, քա, աս ինչե՞ր են ֆի կ'ըլլան կոր,— հարցուցին երկու կիները, միաբան, անկեղծ սրտացավությամբ։

— Ա՜խ, մի՛ հարցնեք, մի՛ հարցնեք, զավալլը Արմիկս, վո՜ւյ, կը խենդենամ կոր. ուղուրսուզը, ճեյլատը. հեմեն արուննե՜ր փսխե, վայեց Վարդենի տուտուն, մինչև մխիթարիչ այցելուհիներուն հետ սանդուղեն վեր կ'ելլեր։

Վերը՝ մեռելի տուն։ Ղուկաս աղան պատուհանին առջևը աթոռի մը վրա նստած, անթարթ աչքերով փողոցը կը նայեր ու մտախոհ կը ծխեր։ Անդին անկյուն մը Արմիկ, թաշկինակը բերանը կը հեծկլտար։ Խնդա-մոլիկին արցունքը դեռ տեսնող մը չէր եղած։ Վեր ելլողները պահ մը լուռ մնացին։ Ետքեն պատուհանեն քովի տունը իմաց տվին, ու երկու էրիկ մարդ ու երկուք ալ աղջիկ եկան, Ղուկաս աղային և Արմիկին ըն-կերակցության համար։

— Ճանըմ, ի՞նչ կա,— հարցուցին էրիկ մարդերը Ղուկաս աղային թրքեվար, վշտակցության ու ապշության շեշտով մը։

Եղեյությունը Վարդենի տուտուն ինք պատմեց, ալ ինչպես որ իր քաղաքականությանը ձեռք կուտար։

Ուրեմն, ըստ իրեն, մանչը երկու շաբաթե ի վեր Ղուկաս աղային ետևեն ինկած էր, որպեսզի չըմենտըֆէրները իրենց թեսլիմ ընեն։

— Է՛յ, աս կ'ըլլա բա՞ն է քի. ատվածնիդ սիրեք նե, դուք ըսեք,— կը հարցներ պաղատագին, պատմությունը ընդմիջելով։

— Մեղա՜, մեղա՜, հիչ կ'ըլլա բան է քի. էօլյումլու աշխարհք է նե,— պատասխանեցին միաբերան երկու դրացուհիները ու Վարդենի տուտուն հանրային կարծիքը իրեն զորավիգ զգալով, ավելի քաջալերված շարունակեց.

— Անանկ չէ մի յա, էօլյումլու աշխարհք է, գիշերը պառկողը առտուն չարթննար, զավալլը աղջիկը ի՞նչ պիտի ընե ետքեն։ Հեմտե ես ինչ գիտնամ, թուղթերը առավ մեյ մըն ալ չերևա՞ց նե։

— Յա՜, յա՜։

— Սվոր ստեղը առջի պսակին ի՞նչ մնաց fի: Ինչո՞ւ պիտի չհամբերե։ Խոսքերնիս անանկ էր fի ուրբաթ fեսե պիչեն պիտի ըլլար, կիրակի ալ հարսնիքը։ Ամա կ'երևա fի միտքը փոխեր է. էվել դրախումայով աղջիկ գտեր է, յոլով մը տված բոզաfը ետ առնել կ'ուզեր։

— Քա, տվի՞ր fի:

— Ինչո՞ւ պիտի տայի։

— Ա'ֆերիմ, ետ ընողը ինքն է, ինչո՞ւ պիտի տաս fի:

Արմիկին ընկերուհիները այդ միջոցին խեղճուկը առին քովի պզտիկ սենյակը տարին։ Պագին, սիրեցին, շոյեցին, մխիթարեցին։

— Քա՛, Արմիկ, քեզի բան չէինք ըսեր ամա, քեզի կը մեղքանայինք. քա ան ինչ թեrս մարդ էր քի. կրո՜ղ։

Էրիկ մարդիկն ալ Ղուկաս աղան առին վար սրճարան իջան։

Իրիկվան դեմ տնակին մեջ տխուր հանդարտությունը կը տիրեր։ Էրիկ մարդ մը և աղջիկ մը ճաշին Ղուկաս աղային մնացին։

Գիշերը ուրիշ դրացիներ ալ եկան։

Երկու ժամեն ամենը մեկնեցան, Արմիկ խոնջ, հոգնած անկողին ինկավ, քունը շուտ մը տարավ։ Ղուկաս աղան ալ, երբ կնկանը հետ մինակ մնացին, եղելությունը պատմեց, բայց բավական բարեփոխմամբ։ Ինչ պարագաներու մեջ գործեն ելած ըլլալը իմացուց, ինչպես նաև գրաշարաց ընկերության մը կազմությունը և շաբաթը ութը տասը մեճիտիե շահելու ապահովությունը։ Միայն թե, գործի սկսելու համար քանի մը ոսկիի պետք ունեին, ուստի չըմենտըֆէրներու թիվերը մեծ գրքին մեջ նայելե հետո, թուղթերը քանի մը օրվան համար սարաֆի մը քով ձգած

էր և պետք եղածը առած էր. ընկերները ան շաբթու իսկ այդ ստակը պիտի ճարեին և շըմենտըֆէրները պիտի ազատեին։ Եղածը չեղածը աս էր։

— Աման, ինշալլահ տահա աղեկ խումբ մը կ՚ելլա,— ըսավ կինը ինքնամխիթարության համար.— սիրտս հիչ չէր փակչեր կոր նե՝ ան էր։ Երեսներեն զեհիր կը վազեր։

Հոգնած, խոնջ երեքն ալ պառկեցան։

ԺԳ

Արմիկ առտուները կանուխ կ՚ելլար և ենկեին հետ դեմ դեմի նստած նախաճաշնին ընելով գիշերը տեսած երազներնին իրարու կը պատմեին։ Ետ ավարտման այս արարողության, Վարդենի տուտուն խոհանոց կ՚իջնար և աղջիկն ալ պարտեզ, ուր «փիլիկներուն» ջուրը, կուտը կուտար, և եթե ածեր էին, հավկիթները առած, ուրախ զվարթ ենկեին վրա կը վազեր։ Ու ալ անկե ետքը մինչև կեսօր անդուլ, անդադար կը կարեին։

Աս սև կիրակիին երկուշաբթի առտուն, աղջիկը սովորական ժամուն վար չիջավ, Վարդենի տուտուն բավական ատեն սպասելե հետո ֆեսֆեսե ընելով, վեր ելավ։ Արմիկը անկողնին մեջ արթուն երկնցած էր։

— Քա, Արմի՛կս, քա, սա թեմպել թեմպել ինչո՞ւ ես պառկեր,— հարցուց սրտին խռովքը գուրգուրական կատակաբանությամբ պարտկել ջանալով։

— Հայտե՛ ելիր, աղջիկս, հայտե՛ ելիր,— վրա տվավ,— աս առտու ամուճադ ալ քեզի համար ուշ պիտի երթա։ Խաճվե ալթընիս ալ պախճան պիտի ընենք։ Անանկ ալ աղվոր հավա մը կա ֆի՞:

— Ենկե, հիմակ կ՚ելլամ,— հծծեց աղջիկը ողորմուկ ձայնով մը, որ պառավին սիրտը խշխշեցուց։

— Հա՛, աղջիկս, հա՛, քեզ նայիմ,— ըսելով խեղճ կինը աճապարեց դուրս ելավ, որպեսզի լացը հոն չբռներ։

Առջի գիշեր Արմիկ ուժասպառ անկողին իյնալով, մինչև առտու խորունկ մը քնացած էր. բայց երբ աչքերը բացավ, գլուխը չկրցավ բարձեն վեր առնել։ Սիրտը ճելլաֆ կը զգար։ Առջի օրվան տեսարաններ ը խառն խուռն աչքին առջևը եկան։ Աս ի՞նչ էր քի եղավ։ Ա՛լ նշանած չուներ, ա՛լ Սամաթիա հարս պիտի չերթար, ա՛լ իրեն բիանճօ պիտի չզարներ։

— Ենկե,— հարցուցած էր նշանվելեն հետո,— աս Փարիզ Փարիզ կ'ըսեն նե, անապ Սամաթիային կ'լմանի՞։

— Քա՛, աղջիկս, ես Փարիզները տեսած ունի՞մ քի գիտնամ, ամուճայիդ հարցուր,— կը պատասխաներ շվարած կինը։

— Ան տեսե՞ր է քի։

— Չէ տեսեր, ամմա՛, ան շատ բա՛ն գիտե, չունքիմ շատ բան կարդացեր է։

Ու ամուճան աղջկանը միամիտ հարցումներուն ծիծաղելով կը պատասխաներ.

— Է՛յ, իշտե, Փարիզը պզտիկ Սամաթիա մը ըլլալու է։

Արմիկը Ստամպոլին կողմերը դեռ խալբախճիներեն անդին անցած չուներ. երկաթուղիներուն ի՛նչ ըլլալը տակավին չէր գիտեր, երևակայութիւնը բորբոքած էր լսելով, որ Սամաթիայեն շըմենտըֆեր կ'անցներ։

— Սա մեր շըմենտըֆերնե՞րը, աղա ամուճա,— հարցուցած էր։

— Հա՛, աղջիկս, մեր շըմենտըֆերները, բայց մերինը ոսկի պիտի զարնե, ան երկաթ է,— պատասխանած էր մարդը, բան մը ըսած ըլլալու համար։

Անապա ի՞նչ ըլլալու էր աս Սամաթիան, ուրկե շըմենտըֆեր կ'անցներ։ Պեյօղլուի վրա աշխարհք կարմընձար, ու Պեյօղլու շըմենտըֆեր չէր բաներ։— «Բերան» իրեն համար միշտ «Պեյօղլու» էր։

— Սամաթիա ծով կա՞, աղա ամուճա,— հարցուցած էր օր մըն ալ։

— Ի՞նչ կ'ըսես, հոն մեծ ծով կա։

— Մերինի՞ն խըտար, աղա ամուճա։

— Մերինը, աղջիկս, Սամաթիայի ծովուն քովը ճավուզ մը պիլե չէ։

Ով դեռ ինչե՛ր պատմած էին Սամաթիայի համար. հիվանդանոցին առջևը մեծ պարտեզ մը կար.

— Մեր Պատեմըլըխեն ալ մե՞ծ, աղա ամուճա:

— Աղջիկս, հիվանդանոցին պարտեզը քառասուն հազար մարդ ալ լեցվի նե, դեռ պարապ կ'երևա։

— Աղա ամուճա, Ստամպոլ քառասուն հազար մարդ կա՞ քի՞:

Հորեղբայրը կ'սկսեր խնդալ։

— Աղջիկս,— կ'ըսեր,— տասնըինդ ես...

— Չէ՛, աղա ամուճա, տասնըութը...

— Բեք աղեկ, թող տասնըութը ըլլա. տասնըութդ ես ու տաճա հինգ տարու չոճուխի խոսքեր կ'ընես։

— Է՛յ, ձգե՛,— վրա կը բերեր անդիեն Վարդենի տուտուն,— իմ աղջիկս թեեֆելլի է, անանկ պաշխասիներուն պես աստնի բաներ չիտե։

Ատ թևեճելլի աղջիկը նշանածը տեսած օրեն, անոր կապված էր. սեփ սև, քիչ մը դաժանկեկ դեմքով, Թոփուզի պես «աղբարըմ»-ը, ատ բարակուկ, խարտիշակ, կարմրոտի խնդամոլիկին սիրտը գրաված էր։

Գացի՜ն, գացի՜ն, ամենքն ալ գացին. Սամաթիա՜ն ալ, շըմենտը-ֆերն ալ, բիանքոն ալ, նշանածն ալ, գացի՜ն, գացի՜ն։

Երբ ենկեն սենյակեն դուրս ելավ, Արմիկ գլուխը վերմակին տակը խոթեց և սկսավ լալ։

Քիչ մը հանդստանալով, անկողնեն ելավ, լվացվեցավ, հագվեցավ ու վար իջավ։

Պարտեզը խնձորի երկու ծառ կային, նոր ծաղկեր էին, անոնց միջև պզտիկ սեղան մը դրված էր, վրան պնակ մը պանիր, պնակ մը հաց, սրվակ մը կաթ։ Վարդենի տուտուն ալ խոհանոցը սուրճը կ՚եփեր։ Ղուկաս աղան ալ սեղանին առջևը նստած էր։

— Եկուր նայի՛նք, Արմիկ,— ըսավ Ղուկաս աղան խանդաղատ ձայնով մը։

Արմիկ նստեցավ. Վարդենի տուտուն ալ սուրճը բերավ. Նախաճաշիկը լռությամբ կ՚ըներին։ Էրիկ կնիկ երբեմն իրարու երես կը նայեին, կոտրած կ՚երևնային։ Աղջիկը չէր խնդար։ Մեծնալեն ի վեր առաջին անգամն էր, որ տխուր կ՚երևար։

Ակրատը լմննալուն, էրիկ կնիկ սպասեցին, որ Արմիկը ելլե հավերուն նայի. բայց աղջիկը անտարբեր նստուկ կը մնար, մտածկոտ, վերաչու։

— Փիլիկներուդ եմք չե՞ս ի տար,— հարցուց Վարդենի տուտուն վարանոտ։

— Ենկե, դուն տուր,— աղաչեց Արմիկ խղճուկ ձայնով։

— Տեր ողորմյա, ատ ի՞նչ է, չոճո՞ւխ ես, ի՞նչ ես,— ըսավ անդիեն հորեղբայրը։— Հայտե, աղջիկս, ճայտե, ելիր գործիդ նայե։ Տես քեզի տաճա ինչ աղեկ նշանած մը պիտի գտնամ, ճեմ տե աս անգամ Պեյօղլուեն:

Արմիկին աչքերը լեցվեցան, ալ չդիմացավ, Թաշկինակը հանեց և հեծկլտալով «փլավ»։ Ենկեն քովը անցավ, իր Թաշկինակը հանեց, Արմիկին աչքերը անով սրբեց, ու ձեռքեն բռնած առավ վեր տարավ։

Ղուկաս աղան ալ դառնությամբ դուրը գոցեց գնաց, լեզվին տալով՝ Փարավո՛նը, Ներո՛նը, անօրե՛ն անաստվածը, ֆարմասո՛նը, աս ամենու սեպեպը ֆի ինծի ասանկ սեֆիլ ըրավ. ինշալլաճ քի աստուծմե կը գտնա։

ԺԴ

Ղուկաս աղան օրը շատ վրդովյալ սրտով անցուց։ Հավերուն համար Արմիկին անհոգությունը աղեկ նշան մը չէր սեպեր։

Իրավ ալ, Արմիկ խելքը միտքը հավերուն տված էր։ Նշանվելեն առաջ ալ, նշանվելեն ետքն ալ իր մեծ զբաղումը փիլիկները էին։ Առտուն աչքը պարտեզը կը բանար, ինք նախաճաշիկը չըրած, հավերուն կուտն ու ջուրը կուտար։ Կը շոյեր, կը փայփայեր զանոնք, վառյակները ափերուն մեջ առած, կը պագներ, երեսներուն կը փակցներ, թոռներուն պես։ Իրիկունները հավնոցին դուռը ձեռքով կը գոցեր, ապահով կ'ըլլար, թե սամսառի վտանգ մը չկար, անկե ետքը Ենկեին քովը կուգար։

Ամեն իրիկուն սեղանին վրա, ճաշի ատեն, փիլիկներուն խոսքը պիտի բացվեր։ «Փաշան, պեյը աղվոր մը ծեծեր էր. օրիորդին քիթը ասօր քիչ մը կախ էր. մեծ հանըմը նորեն կ'ածեր»։ Փաշան, պեյը, աքաղաղներն էին. մեծ հանըմը, օրիորդը հավերը։ Ամենուն ալ օրվան կյանքը աղեկ մը միտքը կը պահեր։ Սուգի, տրտմության էր օրը, երբ ծերացած աքաղաղ մը, պառաված հավ մը մորթել հարկ ըլլար։ Ան օրը Արմիկ տունեն կը ձգեր կ'երթար։ Զատկին օրը շատ վշտացած էր, որ երկու աքաղաղ ու հավ մը կը կտրեին։

— Իղայիմ աղջիկ,— ըսավ Ենկեն,— հավերը, խորոզները ճինճիղ սնդուկը պիտի դնես տե, հե՞տդ պիտի տանիս։ Քու երթալեդ ետքը ա՛լ ո՞վ պիտի նայի անոնց։

Ղուկաս աղան ուրեմն, իրավամբ կը վախնար, թե, զավալլըն սրտեն խորունկ զարնված ըլլալու է ֆի, փիլիկներուն վրան անգամ չնայեցավ։ Ու եթե տերտը ան նազի՜կ աղջկան սիրտը բանե՞ր։

Կեսօրեն ետքը Արմիկին ընկերուհիները եկան. մեկտեղ ժամանակ անցուցին ու իրիկվան դեմ պտտելու ելան։

Տան մեջ սովորական կյանքը երեքշաբթի վերսկսավ, բայց Արմիկ ա՛լ չէր խնդար, հավերուն համար անհոգ կը մնար, ու կարերը տենդոտ արագությամբ կը կարեր, առանց բերանը բանալու։

ԺԵ

Հիմակ Ղուկաս աղան իրիկունները ուշ կը վերադառնար. սովորականեն մեկ-երկու հատ ավելի նետած։ Ոտքը առաջ չէր երթար տանը սեմեն ներս անցնելու։ Ուրախ զվարթ կյանքը ներսը մարած էր։ Արմիկը ա՛լ անմեղ միամտությամբ, խնդումերես առջևը չէր վազեր։ Ձեռքը լըրջորեն կը պագներ, տոպրակը առած ատեն։

Առտու մը գրպանը նորէն շրմենտըֆեր մը դրած դուրս ելաւ։ Գրաշարաց ընկերութիւնը թեև կազմված էր ու տպարանական ամեն պատրաստությունները ալ տեսնված էին, բայց հարկ էր քիչ մը ատեն ևս սպասել գործի սկսելու համար։ Տպագրվելիք գրքերուն ձեռագիրները հանրային կրթության պաշտոնատունը գրաքննիչներուն քովն էին, տպագրումի արտոնման համար։

— Ա՜խ, աս ի՛նչ ալ սև Զատիկ էր ֆի վրանիս եկավ,— կը հառաչեր Վարդենի տուտուն։

— Պե՛ կնիկ, մի՛ դշգոհար,— կը հանդիմաներ էրիկը փիլիսոփայամիտ համակերպությամբ։— Աշխարհքիս հալը աս է։ Օր մը արև կը ցաթե, օր մը անձրև կուգա, օր մը կուլանք, օր մըն ալ կը խնդանք։ Ըսեր են ֆի լալն ու խնդալը աղբար են. շատ խնդացինք, քիչ մըն ալ կուլանք, ինշալլահ ֆի վաղը նորեն կը խնդանք։ Ողջություն թող ըլլա, ամեն բան իր տեղը կուգա։ Ու իրավ ալ, կամաց-կամաց ամեն բան իր տեղը գալ սկսավ։ Նախ Պեյլիկին մարդը եկավ ու թաղին հաշիվները մաքրեց լմնցուց, փարա մը պարտք չթողուց և հաջորդ շաբթվան համար ալ շատ կար բերել խոստացավ։ Եվ ետքեն ալ, այնքան բերավ, որ թաղին կնիկներն ու աղջիկները գլուխնին քերելու ժամանակ չունեին։

Ղուկաս աղան Պեյլիկին ստակը առածին պես, շիտակ Պախճեխաբուն սարաֆին գնաց ու երկաթուղիները ազատեց և բերավ Արմիկին հանձնեց։ Աղջկանը երեսը նորեն քիչ մը ժպտիլ սկսավ ու էրիկ կնիկ, ինչպես ծանր հիվանդի մը վրա առողջացման նշանե մը, սիրտ առին և իրենք ալ ուրախանալ սկսան։

Հանրային կրթության պաշտոնատունն ալ ձեռագիրներուն տպագրությունը արտոնեց։ Ու Ղուկաս աղան, հիմակ նորեն առտուները կանուխ կ'երթար, իրիկունները ուշ կը վերադառնար, հավեսով կ'աշխատեր ինչպես աշխույժ, եռանդոտ պատանի մը, որ ապագա մը պատրաստելու համար նոր գործի կը ձեռնարկե, հավատալիր վստահությամբ։

ԺՋ

Ամառն ալ անցավ. Արմիկին վրա կոտրածություն մը կ'երևնար. Վարդենի տուտուն մտերիմ դրացուհիներու մտահոգությամբ կ'ըսեր, թե «զավալլը աղջիկը թյուրլու մըն է»։ Երբեմն-երբեմն չոր չոր կը հազար, գիշերները կը քրտներ. ու աչքին ալ անանկ կուգար, որ կը զայիֆնար։ Օր մը Ղուկաս աղան աղջիկը առավ Բերա տարավ, Փարիզեն նոր եկած տոքթորի մը, որ շաբաթը երկու անգամ աղքատ հիվանդները ձրիին

դեղարանը ծրի կը նայէր։ Լրագիրներուն մէջ վրան շատ գովասանք կարդացած էին։ Բժիշկը, հետ զննութեան «բան մը չունի» մրթմրթաց քթին տակէն։ Դեղագիր մը գրելով, «Թող շատ չհոգնի» հանձնարարեց։

Շաբթվան մէջ Ղուկաս աղան անգամ մը մինակը բժշկին գնաց, որ ինչ ինչ տեղեկութիւններ հարցնելով, «անմիջապէս վախ մը չկայ» հայտարարեց, եթէ աղեկ նայվի, բայց...

Ու «բայց»-ը չշարունակեց։

— Բայց ի՞նչ, տոքթոր,— հարցուց մարդը սրտադողի մէջ։

Կը թվէր, թե բժիշկն ալ կ'ամչնար ըսելիքէն։ Սակայն, քիչ շատ վարանումէ հետո կմկմաց.

— Բայց, պէտք է, որ աղեկ կերցնեք, աղեկ խմցնեք, ու եթէ ձմեռն ալ Ղատիգեղ տանելու ըլլաք նե, կ'անցնի։

Ղուկաս աղան դեղարանէն դուրս ելավ, սրտէն զարնվածի պես։ Գլուխը կախ, կամաց-կամաց քալելով, յուրովի կը մենախօսէր.

— Ես ալ գիտեմ քի Ղատիգեղը պզտիկ Մըսըր մըն է, բայց Քրիստոսնիս ըսավ, որ աստված իր արևը արդարներուն վրան ալ, մեղավորներուն վրան ալ, հավասարապէս կը ցաթեցնէ, սակայն աս խօսքը Ղատիգեղին արևի համար չէ. ան տեղին արևը փարայով է. աստված ան արևը Ղայսերցիներուն համար ստեղծեր է։ Հոն բանվորի բնակելու տե՞ղ է մի. ես հոն արժան տուն ո՞ւր պիտի գտնամ. հոն պէյլիկի կար կը բերե՞ն։ Ու մէյ մըն ալ ես ձո՞ւկ եմ, որ լողալով Ղատիգեղ երթամ գամ։ Օրը երկու ղրուշ վարձովի. տասը փարա ալ կամուրջի, օ՜խ, խասգեղ երթալ գալու համար ուզեմ նե շոգենավ կը նստիմ, չէ նե տապանակ ուխտի։ Աղեկ ուտելու խմցնելու է եղեր. աս պապաս ալ գիտե, արդեն ինքն ալ, շիտակը, քաշվելով կ'ըսեր կոր յա՜։ Մեր մահալլեին կասաները մենե շատ միս կուտեն։ Ա՜խ, անօրեն անաստվա՜ծը, Փարավո՞նը, ֆարմասո՞նը. ինչալլահ քի սատուծմե կը գտնա։

Մեկ երկու օր ետքը ա՛լ չդիմացավ, տերտը գիշեր մը կնկանն ալ բացավ, ջանալով սակայն, որ խեղճը դող չհանե. «ան զավալլըն ալ ոսկի-ոսկի կծիկները պիտի քակե, հոգի մը ունի ան ալ վրանիս կուտա» մտածմամբ։

Արդեն ատենե մը ի վեր մտմտուքը Վարդենի տուտուն ալ առած էր. հիմակ, էրկանը խօսքերը լսելուն, միտքը դրածը ըրավ, առանց այլեւս երկարատև սպասումի։ Ցորեկ մը Արմիկը աղջկը ձգեց, վար իջեցուց, Սրմաքեշխանին համբավավոր կելինճիկճիին տարավ։ Մարդը հիվանդը հազալ տվավ, բազկերակը զննեց և աչքերուն թարթիչները վեր վերցնելով ուշադիր մեջը զննեց։ Կելինճիկ էր. նշանները պեռ՞ կ'ըներին.

իշտե չոր-չոր կը հազար, աչքերը փառըլ փառըլ փաղամիշ կ'ըլլային, երեսներուն վրան «կալ կալ ալեր»։

— Իշտե *ամենքդ ալ ասանկ եք,— հայտարարեց մեծալուրջ սըրտնեղությամբ,— կ'առնեք* Պեյօղլու *կը տանիք.* շաքխալը *հեքիմները* կելինճիկեն *ի՞նչ կը հասկնան քի։* Զաթը *ինչեն ալ կը հասկնան յա՜, ատենին ինծի չեք բերեր* բի: *Աս ալ հինցեր է, ամա ատենը* տաճա *անցած չէ.* սալթ *մեկին տեղ իրեք* շիշե *պիտի առնե։*

Ու կարմիր ջուրեն շիշ մը տվավ. միճազսըզը *ինքզինքը ասով պիտի գտնար, երկրորդ շիշեն խմելուն բավական պիտի աղեկնար. երրորդին* բիրի բաf:

Վարդենի տուտուն թաշկինակը ֆիստանին *ներքևի գրպանեն հանեց. ծրարը քակեց, մեջը կապած մեճիտիեն առավ և մարդուն ձեռքը դրավ։ Մեկալ երկու շիշերուն համար ալ խասգեղցիի մը հետ տասնական ղուրուշ պիտի ղրկեր և պիտի առներ։*

Երկրորդ շիշը չըմնցուցած Արմիկ ավելի ինկած կ'երևնար. Ղուկաս աղան ըրավ չըրավ մեճիտիե մը մեկդի դրավ և օր մը հիվանդը Խորասանճիին տարավ։ Հուշակավոր բժիշկը հիվանդը թեթև մը զննելե հետո դեղագիր մը տվավ ու հայտարարեց, թե «ալ մի բերեր. միշտ ասիկա շինել տուր»։

Երբ դուրս պիտի ելլեին, Ղուկաս աղան աղջիկը առաջ անցուց, դըռնեն հանեց, և ինքը ետ դառնալով բժշկին աղաչեց, որ «վախենալու բան մը կար նե իրեն իմացըներ»։ Խորասանճին սովորություն ունենալով հիվանդներուն տերվտանքին ստուգությունը շիտկե շիտակ ըսել, որպեսզի հարկավոր զգուշավորության մեջ չթերանան, Ղուկաս աղային ալ իմացուց, թե երիտասարդությունը օգնե նե, ատեն մը կը դիմանա։ «Բայց աղեկ նայելու է, աղեկ կերցնելու, խմցնելու է. ու ձմեռն ալ Ղադիգեղ տանելու ըլլաս նե, աղեկ կ'ըներ»։ Ու վերջացնելուն.

— Քու ի՞նչդ է,— հարցուց.

— Լուսահոգի եղբորս աղջիկը։

— Ընտանիքին մեջ հիվանդություն մը կա՞ր։

— Հարը ինծի պես առողջ էր. բայց մայրը աղեկ հիվանդութենե մը չմեռավ... աս խեղճն ալ քանի մը ամիս առաջ շատ մեծ դող մը քաշեց. անոր վրա ալ կըխ կըխ կ'երթա։

Աշնան վերջերը Արմիկը զգալապես ինկած էր. ձմռան մեջ այլևս խուցեն դուրս չէր ելլար. քիչ ետքը անկողնեն ալ չիջավ։ Ընկերուհիները զինքը տեսնալու քիչ անգամ կուգային, միշտ անկողնեն մեյ մեկ պատըրվակով հեռու մնալով։

Վարդենի տուտուն ինչ ընելիքը չէր գիտեր. մեյ մը վեր կը վազեր, մեյ մը վար. Հիվա՞նդը նայեր, թե՞ տան գործերը։ Պեյլիկին կարերն ալ քիչցուց. միս մինակը ընտո՞ր հասներ, և այնքան հոգերու տակ ալ ճնշված։

Ասդին, գրաշարաց ընկերության գործերն ալ դեռ դանդաղ առաջ կ'երթային. Ղուկաս աղան շաբաթը իրարու վրա տակավին հազիվ երեք մեճիտիե կը հաներ։ Երկաթուղիները մեկիկ-մեկիկ Պախճե խաբուճ իրենց ընտանի սարաֆ Օհանին խանութին ճամփան բռնեցին։ Ալ մեյ մըն ալ ետ պիտի չդառնային։ Արթաքիին բերած խոսք-կապի օղն Ոսկերիչներուն շուկան տարվեցավ։

Ղուկաս աղան ա՛լ իրիկունները սրճարանեն շատ ուշ կը դառնար։ Ա՛լ ոսկի թոփիկ չկար. որո՞ւ հետ պիտի խաղար։

ԺԷ

Կիրակի իրիկուն մը Եղիա Տեմիրճիպաշյանը ճամփան Ղուկաս աղային դեմը ելավ։ Տրտմաթաթավ գրագետը, Պոլսո ուրախ զվարթ արվարձանները տարիներու դեգերումներեն հոգնած, յուր տխրանույշ խառնագեղը վերադարձած էր։

— Եղիա էֆենտի,— ըսավ գրաշարը ողորմուկ ձայնով,— սա մեյ մը չե՞ս իջնար Արմիկդ տեսնալու։

— Ի՞նչ ունի որ,— հարցուց զարմացած։

— Հիչ մի հարցներ. հիվանդ է, հիվանդ։

— Ի՞նչ կ'ըսես. չէի գիտեր,— պատասխանեց հուզված,— եթե գործ մի չունիս, հիմակ երթանք։ Արդեն մոտերս օր մը պիտի գայի։ Ես ալ դեռ այս շաբթու փոխադրվեցա։

Համբավավոր գրագետը մորենական արենակցություն ուներ Արմիկին հետ։ Սրտցավ գուրգուրանքով կը խանդաղատեր այդ անմեղուկ աղջըկանը, որուն խարտյաշ մազերը, կարմրոտի այտերը, խնդամոլիկի մշտաժպիտ զվարթությունը իր տրտմությունը շատ անգամ փարատած էին։

Հիվանդին քովեն կոտրուկ սրտով դուրս ելավ։ Ղուկաս աղային հետ, երբ դեպի Խարա-Աղաճ կ'երկննային, գրաշարը գլխուն եկածները պատմեց. ու վերջացմանը.

— Ա՛խ, Եղիա էֆենտիս,— ըսավ,— հուսա սրտիս վրա —աջ ձեռքը կուրծքին տանելով, շատոնց է քար մը նստեր է, դուրս պիտի նետեմ, բայց կյուճենմիշ չըլլաս։

— Ի՞նչ ունիս նե ըսե, բան մը մի ծածկեր, սիրտդ թող քիչ մը պաղշտկի, թեթևնա,— հայտարարեց գրագետը։

— Ըսելիքս երկան չէ։ Ճանըմ Եղիա էֆենտիս, հրամանքդ ալ, ուրիշներն ալ ամեն օր վարժապետներուն խեղճ վիճակին վրա կը խոսիք, գրագետներուն ու խմբագիրներուն ցավերը ազգին աչքերուն առջևը կը դնեք, որպեսզի բան մը մտմտան, ճար մը ընեն։ Աղեկ կ՚ընեք, շատ աղեկ կ՚ընեք, օրհնյալ ըլլաք․ ազգին երախտավորումներն են անոնք։ Բայց գուզում Եղիա էֆենտիս, գրաշարներն ալ ազգին աշխատավորները չե՞ն, գրաշարներն ալ էմեկտարներ չե՞ն, անոնք ալ հայ քրիստոնյա չե՞ն։ Ըսածիս կյունենմիշ չըլլաս, էֆենտիս, բայց ինչո՞ւ օր մը օրանց մեկերնիդ մեզի ալ մտքերնիդ չբերիք, մենք ազգին խորթ զավակնե՞րն ենք, է՛յ մենք չըլլանք նե, վարժապետը ինչո՞վ պիտի սորվեցնե, հեղինակը ի՞նչ պիտի հրատարակե, լրագրապետները ընտո՞ր թերթ պիտի հանեն։

Գրագետը բերանը չբացավ։ Ինք որ այնքան ցավածներու վրա լացած էր, օր մը գրաշարը մտքեն անցուցած չուներ։ Բայց ո՛վ ալ օր մը օրանց միտքը բերած էր անխոսուկ, գլուխը կախ բանվորները։

Ու Ղուկաս աղան էրած սրտով խոսքը շարունակեց։

— Բան մըն ալ ըսեմ, կուզես նե գնա մեյ մը Պատրիարք Սըրբազանին, երեսփոխան էֆենտիներուն հարցուր, նայե ի՞նչ կ՚ըսեն։

— Ի՞նչ է որ։

— Ելան մինչև Բեռլինները մարդ ղրկեցին Հայաստանի Հայերը Քյուրդերուն հարստահարութեններեն, վալիներուն կեղեքումներեն ազատելու համար։ Աղեկ ըրին․ պարտքերնին կատարեցին։ Ինշալլահ օր մը բան մըն ալ կ՚ըլլա։ Բայց, ճանըմ, Եղիա էֆենտիս, աս Սթամպոլի մեր չօրպաճի էֆենտիները Քյուրդերեն ալ ավելի զալըմ չե՞ն, վալիներեն ալ պեթեր կեղեքիչ չե՞ն։ Քյուրտը, վալին գոնե ժողովրդին բերանը պատառ մը չոր հաց կը թողուն, որպեսզի մարդիկը անոթի չսատկին․ նորեն դատին, նորեն իրենց կերցնեն։ Մենք, փառք աստծու, հոս Սթամպոլ ո՛չ տուրքին ինչ ըլլալը գիտենք, ոչ ալ ձեռքերնուս բան մը քաշող առնող կա, բայց մեր վիճակին նայելով հազար էրնեկ կուտամ Հայաստանի ան հարստահարյալ Հայոց։ Հոս, մեր չօրպաճիները, էֆենտիները բերաննիս չոր հացի մը պատառ ալ չեն թողուր․ ա՛ն ալ խափմիշ կ՚ընեն, իրենք կ՚ուտեն։ Քառասունհինգ տարի դատեցա, աշխատեցա, օրին մեկն ալ կոնակիս բեֆմե մը, ճայ՚տե դուրս։ Մարդս տունը շուն մըն ալ պիլե ունենալու ըլլա նե, բիտիարցեր է ըսելով, պոչեն չի բռներ տե փողոց նետեր։ Մեր խեղճ գրաշար էսնաֆը շան չափ ալ հարգ չունի։ Աղեկ որ մեր էսնաֆին

մեջ ծերացողը քիչ է։ Պատրիարք սրբազանը, երեսփոխան էֆենտիները ասիկա չե՞ն մի տեսնար։

Արեը մարը մտնելուն վրա էր, երբ գրագետն ու գրաշարը իրարմե բաժնվեցան։ Տեմիրճիպաշյան տունը մտնելուն, Արմիկին հյուծյալ, երիթացյալ երեսները դեռ աչքերուն առջև, սրտին հուզումն ու խռովքը թուղթին վրա նետեց, ընդարձակ բանաստեղծությամբ մը, որ հաջորդ շաբթուն հրատարակվեցավ և որուն մեջ կ'ըսեր.

Հեզ գեղեցիկ աղջիկ... տերևվք անկանին,
Երիկամունսդ հածին ստվերք դամբանին։
Նիրհդ է խռով հույժ, և իբր երազ մարդկությունդ,
Մեն մի ճաճանչ արփվույն, ըմպե վարդ արյունդ։

Ղուկաս աղան ալ աս բանաստեղծությունը կարդաց։ Սիրտը շատ ելավ, «բայց ուզածս աս չէր, ըսավ. ինծի՛ ալ, ան սեֆիլին ալ, եղածը ա՛լ եղած է, բայց սա մեր զավալլը *գրաշարներուն համար բան մը մտածեին, որ ամենքն ալ մեզի պես չըլլան։ Իշտե Ջամաշրճին քառասունհինգ տարի աշխատելեն ետքը անոթի անոթի մեռավ գնաց, պատառ մը հաց տվող չեղավ։ Հովհաննեսն ալ* կենճ-կենճ *գնաց. մեճիտիե մը չուներ, որ ինքզինքը նայեր, հիվանդ էր, քանի մը օր չկրցավ երթալ նե ավուպչեքներն ալ կտրեցին, զինքն ալ ճամփեցին։ Ասլանի պես մարդը գըլտորեցավ։ Ասոնք, նորեն ոտանավոր կը գրեն, նորեն վաթսունմեկերորդ հոդված կը պոռան, մինչև որ ամենքս ալ ճաթինք։*

ԺԸ

Արև արեգակ օրով մը, իրիկվան դեմ Արմիկը տարին թաղեցին։

Գերեզմանատունեն երբ կը վերադառնային, խասգեղցի երկու երեք հուղարկավոր Ղուկաս աղան առին ու մոտ տեղվանքը պզտիկ սրճարան մը մտան, մարդուն ցավը մեկ երկու օղիով քիչ մը թմրեցնելու համար։ Սեղանի մի շուրջը բոլորեցան, փոքրիկ պարտեզի մը ծառերուն տակը։ Արհեստակիցներեն սրտցավ մխիթարանքները կը տրվեին սգավորին։

— Ա՛խ, ա՛խ,— հառաչեց մարդը,— ան ի՛նչ ալ սև օր, սև սահաթ է եղեր քի հարս ձեռքես բռնեց տե, Մյուհենտիսին տարավ, «պիլեկդ ոսկի պիլեզիկ մը անցընեմ» ըսելով։ Պիլեզի՞կ մի, հը՞ քելեփչե՛քելեփչե՛. ձեռքերս կոտրտեց։ Ջավալլըն ինչ ալ գիտնար. ան ատենները տպարանները նոր կը ծաղկեին կոր, հույս կար, որ մենծ բաներ պիտի ըլլային։*

** Հայտնի գրածուլող և տպարանատեր։*

— Ամենուս համար ալ սև օր, սև սահաթ է եղեր քի, ոտվնիս տպարանե մը ներս դրեր ենք,— ըսավ ուրիշ մը։

— Անա՛նկ է, անա՛նկ է,— կրկնեցին մյուսները։

Մինակ պատանի մը լուռ մնաց. Ղուկաս աղան տրտմագին անոր հարցուց.

— Արտա՛շ, օ՛ղլում, ես քեզի կը սիրեմ, ամա դուն ինչո՞ւ աս նալլեթ արհեստին հավես տվիր, մեղք չէ՞ս։

Արտաշը տպարանը Ղուկաս աղային աշկերտը եղած էր, արհեստը անկե սորվիլ սկսելով. Թեթև մը ժպտեցավ ու վարպետին հարցմանը պատասխանեց ոգևորյալ։

— Ղուկա՛ս աղա, եղածը ա՛լ մեյ մը եղած է. բայց ի՛նչ արհեստի ալ մտնաս նե, ա՛ս ա՛ս է. պո՛ւ պո՛ւ տըր. կ'ըսեն քի օխան ամեն տեղ չորս հարյուր տիրեմ է։ Կ'ուզես Շիրքեթին վաբռները մաքինիսթ եղիր, կ'ուզես Թերսահանեն մտիր, կ'ուզես տպարան մտիր, բանվոր չե՞ս մի, իշտե ա՛ս ա՛ս է. պո՛ւ պո՛ւ տըր. պատառ մը հաց, շան տանջանք, օրին մեկն ալ կռնակիդ Թեքմե մը, հա՛յտե դուրս։ Ա՜խ, Ղուկաս աղա, արհեստը ի՞նքը ի՛նչ հանցանք ունի, ամեն արհեստ իրավ ոսկի պիլեզիկ է. ձեռքերնիս կոտրտողը կապիտալն է, արհեստավորին օճախին մուխը մարողը կապիտալիստն է, անոնց հախեն գալու ենք քի՜, ազատինք...

Պատանի գրաշարը «կապիտալ», «կապիտալիստ» բառերը ուժգնակ հնչմամբ և ռուսահայ արտասանությամբ պռկունքներեն դուրս կը ցատկեցներ, ակռաները կճրտելով։

— Տո՛, Արտաշ, ատ ի՞նչեր են քի կ'ըսեն կոր,— հարցուց Ղուկաս աղան,— ես ատ ըսածներեդ հի՛չ բան մը չհասկցա նե ան է։

— Շիտակը, մենք ալ բան մը չհասկցանք,— կրկնեցին մյուս գրաշարները։— Ատ կապիտալը ո՞վ է, կապիտալիստը ի՞նչ է քի ամեն հանցանքը անոնցն է եղեր։ Լսած անուններնիս չէր։

— Կապիտալիստը, Ղուկաս աղա, իշտե ան քու էֆենտիդ է քի, զատկի օրերուն քեզի աանկ դուրս նետեց տե, ան անմեղ աղջկանն ալ արունը մտավ։

— Է՜յ, սըվոր շտկե շիտակ չորպաճի չըսե՞ս քի, մենք ալ հասկընանք։ Ա՜խ, անօրեն անաստվա՜ծը, Փարավո՜նը, ինշալլահ աստուծմե կը գտնա։

— Չէ՛, Ղուկաս աղա, չէ՛, աստուծմե բան մը չի գտնար, բան մը,— պատասխանեց պատանին հրացայտ աչքերով,— աստված մարդուս խելք է տվեր. ամեն բան խելքն է. ան անօրենը ի՛նչ գտնա նե, մեր խելքին պիտի գտնա։

— Խելք տվեր է, ամա փարա՞ չէ տվեր, օ՜ղլում, ա՜խ, ա՜խ, փարան էֆենտիին տվեր է. ով փարա ունի, խելքն ալ ան ունի։

— Է՜յ, մենք ալ փարաները ամենքը անո՞նց պիտի ձգենք։

— Ի՞նչ, գողությո՞ւն մի. խելքիդ եկուր, ծո՜. աստված ատ օրը չցուցընե մեզ։

— Գողը կապիտալի՛ստն է,— աղաղակեց պատանին,— մենք մեր արդար իրավո՛ւնքը պիտի պահանջենք. ա՛լ թող պիտի չտանք, որ մեզի ընտոր ուզեն նե, առնեն ծախեն, տանջեն, չարչրկեն, ու մենք ալ մունչ համր նստինք։ Գերիները ազատվեցան, մե՛նք ալ պիտի ազատինք։

— Է՛յ, տղաս, ընտո՞ր,— հարցուց Ղուկաս աղան սկեպտիկ ժպիտով։— Եվրոպա, Ամերիկա գերիներուն պաշտպանը ո՛վ է, մեզի ազատողը ո՛վ։

— Աս,— ըսավ Արտաշ ու աչքը բնազդմամբ մը պարտեզին դուռը դարձնելե հետո, ապահով ըլլալու համար, թե մեկը ներս չէր մտներ։

— Ա՛ս,— կրկնեց, գրպանեն հանելով չորս-հինգ ծալված տպագրյալ թուղթ մը...

— Ատ ի՞նչ է որ։

Արտաշես թուղթը Ղուկաս աղային ձեռքը դնելով՝

— Կարդա՛, ամենքդ ալ կարդացեք, ետքեն կը խոսինք։

ԿԱՐՄԻՐ ԺԱՄՈՒՑ

Ա

Թաղին մեջ Քյուրքճյան հայրապետ էֆենտիին վրա խոսված ատեն, «էֆենտին» հորջորջումը բավական կըհամարվեր։ Ո՛չ անուն, ո՛չ մականուն։ Պարզին վսեմությունը։

Էֆենտին Խասգեղեն Օրթագեղ փոխադրված էր երեսուն տարի առաջ։ Այդ երկար ժամանակամիջոցին, կիրակի մը ժամեն բացակայած չէր։ Ու ա՛լ հիմակ իր սովորությունները բնազդի մը ճնշումովը կը վարեին տերունական օրերու իր կենցաղը։ Պատարագը չսկսած ժամ կ՚երթար. խորհրդարանը քիչ մը կը հանգչեր, և թաղին շաբթվան մը գործերուն վրա ընդհանուր տեղեկություններ կտրվեին։ «Խորհուրդ Խորին»-ին տաճարը մտնելով շիտակ պահարան կ՚անցներ։ Նորին վսեմության հետ թաղին ազնվաշուքներն ալ հոն հյուրընկալվելու առանձնաշնորհը կվայելեին։ «Կեցո»-ին դասը կը հառաչանար, «որորհնես»-ին ատյանը, մանրաքայլ, մանրաքայլ, գլուխը բաց. «ի սկզբանե»-ին ավարտմանը պատարագվորին ավետարանը համբուրելու կ՚երթար, ոսկի մը ժամուց նվիրատվությամբ, աջհամբույրը հինգի կը բարձրանար, երբ եպիսկոպոսը կպատարագեր։ Մենծ-Աղա բարեպաշտի այս պարտականությունը կատարած ըլլալու գոհունակությամբը սիրտը զեղուն, կվերադառնար պահարան, հոնկե խնդրակատար Աստվածամոր պատկերին առջև երեսը խաչակնքելե հետո կը սկսեր դուռը երթալ, պատին փոքր- ինչ շեղած քայլափոխելով։ Վեզիրի մը սենյակեն մեկնած ատենը, Պալա էֆենտին կը զգուշանար քամակը ամբողջակի անոր աչքին պարզելու անբարեկիրթ վարմունքեն. իր քրիստոնեի խղճմտանքը իրեն չէր թույլատրեր նվազ պատկառոտ երևիլ Աստվածածնին դիմաց։ Դուրսը՝ մուրացիկները կըսպասեին, երբ պատրանք չկրած ակնկալությամբ։ Թաղին նորափթիթ

երիտասարդները կիրակնօրյա զգեստով սիգապանծ, ձեռքերնին գանձանակ ու պնակ «կուգա կոր» կմրմնջեին։ Էֆենտին ասոնցմե յուրաքանչյուրին առջևը կանգ կ՚առներ, ձևացյալ կծծիության զվարճաբան սակարկությամբ։ Ու լիաբուռն նպաստով հանդերձ. «ապրիք զավակներս» վարձատրությամբ մըն ալ կփոխարիներ քնատությունը այդ երիտասարդներուն, զորս բարեգործական տենչանքը վաղահարույց ըրած էր։ Խորհրդարանը սուրճե մը ետք, տուն կը վերադառնար հետը տանելով նարտի խաղակիցներ։

Երեսուն տարիներու կիրակնօրյա այս հանգստավետ կենցաղավարությունը խանգարեցավ 1890 օգոստոս 19-ին։ Այդ օրը ժամուն տոնախմբությունը ըլլալով, շքադիր հանդիսավորությամբ կը պատարագեր Թաղին քարոզիչ եպիսկոպոսը։ Սպասավորելու պատվին ալ նոր «դպիրը» արժանացած էր, շնորհիվ իր ձայնին։ Արարողության պահուն, երբ «ազատություն եղբարց մերոց գերելոց» աղաչանքին երկինք առաքման կարգը եկավ, հայաստանցի տերտերը՝ աչքերը բացաբորբ՝ բուրվառը ժողովրդին արձակեց երկնազդեցիկ զայրույթե մղյալ ուժգնությամբ ահեղագոռ «ա՜» մը սլացուց։ Հայ հոգիները մեկենիմեկ այդ «ա՜»-ին վրա ամբարձիկ շնչասպառ հոն մնացին քարացած մեծ պատահարներու սպասող անբարբառ անձկության մեջ։ «Ջա՜տ-ը» պայթեցավ, նրբահծծյուն մեղեդիի մը պես թրթռաց «ո՜ւ-ն» երկնասլաց «թյունը» ու ամպոռոտ «ամմենը» փոթորկեց տաճարին մեջ։ Երեկ՝ Հուլիս-տասնհինգ էր։

Արփաթե քահանան հիմակ ուժաթափ վար կ՚իջներ իր սավառնած բարձունքեն։ Ա՜լ սրտմտության մարմրող հառաչ մըն էր իր հոխորտ կանչյունը։ Անձկակարոտ անուշության անլուր փղձկյունով մըն էր, որ հեծեծեց «եղբա՜րց մերո՜ց գերելո՜ց», հազար տարիներու ողորմաղերս պաղատանքը առ Աստվածն հայոց։ Ու հայոց հազար տարիներու հուսարծարծ «տե՛ր ողորմեա՜ն» անգամ մը նորեն փոխասեց գթության խնդրարկու այդ հայցվածքին։ Բայց այս անգամ մռնչյունով։ Երեկ, Պոլսեն Աքեա ճամփու դրված էր հայ խումբ մը։ Շղթաներով։ Իսլամին դեմ պարտոխաթափ վրեժխնդիրներու ջոկատը։ Առաջինը։

Երբ նոր պանդուխտը «ազատություն եղբարց մերոց» նորալուր եղանակով մը գեղգեղեց, ու ժողովուրդն ալ, անսովոր նորությամբ սլացուց աղերս մը, որ սրտին ծալքերեն ժայթքած թնդյուն մըն էր. Էֆենտին այս բոլոր նորություններեն հանկարծակիի եկավ։ Շվարուն մնաց, երազին մեջ ծանր վտանգի ենթարկվողի շնչարգելությամբը։ Մեկենիմեկ սթափեցավ սակայն, աթոռը թողուց և դուրս ելավ։ Խնդրակատարեն

հապշտապ անցնելով Աստվածածնին ներկայությունն իսկ մոռցած՝ շիտակ խորհրդարանը գնաց։

Անդին պահարանը ազնվաշուքները համաշարժ դրդմամբ իրարու երես նայեցան, դեմքերնուն բոլոր շարժուն մասերը ծռմռկելով։ Այդ նշանացի ազդարարությամբ, ամենքը միասին դուրս ելան։ Բակը տանող դռան առջև տեսան ժամկոչը, որ՝ վիզը ծուռ, տեղը կը մնար, էֆենտիին հովանոցը դեռ ձեռքը։ Մարդ ու կին ու աղաներուն միջև րոպեական մտերմություն մը հաստատվեցավ։

— Ժամկոչ աղբար, էֆենտին ո՞ւր գնաց,— հարցուցին։

— Խորհրդարանը,— պատասխանեց ողորմուկ ձայնով մը։

— Բան մը ըսա՞վ։

— Չէ, երեսը մեռելի երես էր։

Ծանրաքայլ, ինչպես հուղարկավորութենե մը ննջեցյալին տունը վերադարձողներ, ինքն ալ խորհրդարանը առաջացան, «աճայիպ» մը մըռմըռալով քթերնուն տակեն։

Էֆենտին կանաչ կերպասապատ սեղանին գլուխը նստած, ֆեսը աթոռին վրա, ուժգին-ուժգին սիկար կքաշեր։ Եկվորները ոտքի վրա շարված մնացին, ամենուն բերանը գոց։ Ոչ ոք սիրտ կ՚ըներ լռությունը խզելու։ Հետաքրքիր ժամկոչը եկավ դռան առջև բարև բռնած կայնեցավ, իբր թե հրամանի մը սպասելու համար։ Կացության փրկությունը հետը կը բերեր։ Իր ներկայությունը առիթ հայթայթեց բերաններու կապանքին քակմանը։ Ազնվաշուքներուն մեջ տարիքովն ու դիրքովը էն հեղինակավորը, մեղմաձայն հարցուց.

— Էֆենտի, սուրճ մը կ՚ուզե՞ք։

Հավանության նշան տրվեցավ, «հըմ»-ով մը։

Ժամկոչին հրամայեցին էֆենտիին սուրճ մը բերել։

— Դուք ալ առեք,— ավելցուց էֆենտին։

— Ամենուս ալ, ժամկոչ աղբար,— երկրորդեց հեղինակավոր ազնվաշուքը։

Ու այս առաջին հաջողումեն քաջալերված, շարունակեց։

— Ի՜նչ աղվոր օր, էֆենտի, մայի՜ս։ Էֆենտի, այսօր վեր պիտի ելլե՞ք։

— Իրավ որ չիյտեմ,— եղավ կտրուկ պատասխանը։ Գեղջաբարբառ արտահայտություն թե՝ էֆենտիին զայրույթը տակավին երկուքի մեջ էր։ Անխոսուկ ալ սուրճերնին խմեցին։

Երբ ժամկոչը ֆինճանները ժողված դուրս ելլելու վրա էր.

— Ինծի նայե,— ըսավ էֆենտին,— սրբազանին ըսե, որ կարճ կապե ու գա։

Արարողությանց հապճեպ վերջացումի այս հրամանը՝ անլուր մինչև այդ օրը՝ ազնվաշուքներուն արդեն սարսած իմացականությունը ա՛լ բոլորովին հիմնիվեր շրջեց։ Էֆենտին միշտ խստիվ կշտամբած էր դպիր կամ քահանա, որ ժամասացությունը թաշելով, կարճ կապելու սրբապղծության կասկածը տար։

Պատարագն արդեն ավարտած ըլլալով, եպիսկոպոսը ընկերակցությամբ ավագերեցին ու աթոռակալին խորհրդարան եկավ, առանց ժամկոչին հրավիրմանը։

Երեքն ալ ի տես այլայլված դեմքերու և բերանսյալ շրթունքներու, արտակարգ դեպքի մը պատահումը կռահեցին։ «Ողջույնեն» ետքը, զոր էֆենտին ոտքի ելլելով ընդունեց, ու այս առթիվ ֆեսը դրավ, ամենքն ալ բազմեցան։ Ժամվորներուն «աղվոր» բազմությունը, օդին մայիսյան զովաշունչ անուշությունը խոսակցության նախնական նյութերը հայթայթեցին։ Եպիսկոպոսը փափկանկատությամբ զգուշացավ որևէ հարցում ընելե, թե ինչո՞ւ էֆենտին «Օրհնեալք եղերուքին» ատյանը չէր տեսած։ Հետաքրքրությունը գուցե ժամուցին համար ակնարկություն համարվեր։ Ժամկոչը երեք սուրճ ևս բերավ։ Երբ ֆինճանները վերցուց ու գնաց, էֆենտին, որուն լռությունը անխռով կը մնար՝ եպիսկոպոսին ծանր-ծանր հարցուց, վսեմի մոտեցող լրջությամբ։

— Սրբազան, աս լեռան արջը ե՞րբ եկավ։

— Լեռան արջը ո՞վ է, էֆենտի,— հարցուց քմծիծաղով մը եպիսկոպոսը, որ բան մը չէր հասկցած։

— Ա՛յ հեռու կարգեն, սա ասօրվան ղարիպը։

— Տեր Հուսիկ հա՞յրը կհարցնեք, էֆենտի,— ընդիմաբանեց եպիսկոպոսը, շեշտին մեջ արտահայտելով դժգոհությունը, զոր կզգար Աստուծո պաշտոնեին նկատմամբ անհարկի լեզվի մը դեմ։ Ու շարունակեց· Երեք օր է։

— Ո՞վ խրկեց։

— Ո՞վ պիտի խրկեր որ։ Պատրիարքարանեն հանձնարարագրով եկավ, մյուս պանդուխտը արդեն գացած ըլլալուն։

— Էհ, ալ ասանկ ատեն հոս խրկելիք ուրիշ մարդ չգտա՞ն։

— Ի՞նչ կա, էֆենտի, ի՞նչ եղավ, ի՞նչ ըրավ,— հարցապնդեց եպիսկոպոսը ակներև սրտնեղությամբ։

— Ի՞նչ կա մի, ի՞նչ եղավ մի, ի՞նչ ըրավ մի։ Ինծի՞ կհարցնեք, սրբազան։ «Ականջս ունին և ոչ լսեն. աչս ունին ոչ տեսանեն»։

— Ինչ որ կա, կ'աղաչեմ պարզորեն ըսեիք, էֆենտի,— խնդրեց եպիսկոպոսը։— Այս քահանային նկատմամբ եթե առաջուց բան մը գիտեք, այդ ուրիշ խնդիր է։

Պզտիկ ազնվաշուք մը, որուն աչքը պատուհանն էր, այդ րոպեին նշմարելով պանդուխտը, որ խնդրակատարեն կ՚ելլեր, էֆենտիին իմացուց։

— Ներս կանչեցեք,— հրամայեց էֆենտին։

Հայաստանցի տերտերը եպիսկոպոսին առջևը խոնարհությամբ ըրավ, ու ներկաները համահավասար «ողջույնով» մը բարևելե հետո, ոտքի վրա մնաց։ էֆենտին նստել հրամայեց։ Տերտերը չլսելու զարկավ։ Ոտքի վրա կեցած էր ի հարգանս եպիսկոպոսին և ոչ թե աշխարհականի մը։ Դիրքի փոփոխության հրամանը նվիրապետական բարձունքեն կսպասեր։ Պարտաճանաչ մեծարանքի այս համարձակ արտահայտությունը ղարիպին վրա հրավիրեց եպիսկոպոսի բարյացակամ տրամադրությունը։

— Նստե, տեր հայր, նստե,— հրամայեց դաշն ձայնով։

Տերտերը սրբազանին առջև խոնարհելով նստավ։ Քանի մը վայրկենի լռութենե հետո, էֆենտին.

— Հրամանքդ ո՞ր տեղեն ես, տերտեր,— հարցուց հատիկ-հատիկ արտասանելով յուրաքանչյուր վանկ։

— Տոմուզ գեղեն,— պատասխանեց տեր Հուսիկ, առանց «ծառա եմ էֆենտի» նախաբանին, որ պանդուխտներուն բերանը պարտավորիչ էր։

— Տոմուզ գեղե՜ն, հըմ,— մրթմրթաց էֆենտին քթին տակեն։ Ու բարձրաձայն.— է, հոս ալ գիտե՞ս ուր է.

— Սթանպոլ չէ՞։

— Հա՛, ատ ալ գիտես եղեր։ Աղե՛կ, աղեկ։ է, Հասան փաշան ալ գիտե՞ս ով է։

Ուսերը վեր թոթվելով, երեսը պատին դարձուցած, պանդուխտը արհամարհանքով մը մրմռաց.

— է, ես ի՞նչ գիտնամ, ով է։ Ո՛վ կ՚ուզե թող ըլլա։ Աշխարհիս երեսը շունեն շատ Հասան փաշա կա։

Եկեղեցականները սկսան մորուքնին շոյել։ էֆենտին պարտավորվեցավ լայնկեկ թաշկինակի մը օժանդակությանը դիմել, արքայապիղծ հանգգնաբանությունը չլսած ըլլալու համար։ Ազնվաշուքները քթերնուն տակեն ամմա ճեռտիվկ ա փսփսացին իրարու։ էֆենտին իր թաշկինակը ծալելով, շարունակեց ծանրությամբ.

— Աս Հասան փաշան քու գիտցածներեդ չէ՛, տերտեր։ Պեշի՛կթաշի Հասան փաշան է։

Սպառնացայտ շեշտը զոր էֆենտին «Պեշի՛կթաշին» զարկավ, թեև ժողովականներուն երեսները մթագնեց, բայց բնավ ներգործել չթվեցավ հայաստանցի տերտերոջ վրա, որ ա՛լ աս անգամ պոռթկաց։

— Է, ես ի՞նչ ընեմ, որ տեղինը կ'ուզե թող ըլլա։ Հասան փաշա մըն ալ մեր խապաղան կա։ Ով ամիրա, ես քեզի բան մը ըսեմ. ասանկ սուրբ օրով մեծ մեղք է, պատարագեն հետո անհավատ շուներուն անունները բերաննիս առնելով ծոմերնիս ավրելը։

Ու հավատացյալ քրիստոնեի խղճմտանքի խայթեն տանջված, ոտքի ելավ և եպիսկոպոսեն մեկնելու հրաման խնդրեց։ Սրբազանը խորհրրդավոր հարցումներուն շարժառիթն իմանալու ինքն ալ հետաքրքիր, խնդրված թույլտվությունը զլացավ։

Էֆենտին հարցումներն ու վճիռները անայլայլակ շարունակեց, առանց շուտափույթ գոհացում շնորհելու իր շուրջը գտնված հետաքըրքիրներուն անհամբերությանը։

— Աս Հասան փաշան ան քու մեմլեքեթիդ Հասան փաշաներեն չէ,— պոռաց գրեթե։ Ու ձայնը ցածցնելով, ցածցնելով.

— Աս Հասան փաշան, նորին վեհափառության աչքն ու ականջն է. սորվե՛։

— Է, ինծի՞ ինչ, ամիրա, ինչ կ'ուզե թող ըլլա,— դիմադրեց տեր Հուսիկ, իր անհոգ արհամարհանքի շեշտով։— Կ'ուզե աչքն ըլլա, կ'ուզե ականջը. որ ծակը կ'ուզե թող ըլլա։

Եպիսկոպոսը այս մենամարտական պատասխաններուն ա՛լ վերջ մը դնելու ժամանակը հասած համարելով, էֆենտիեն խնդրեց տեր Հուսիկ հոր պարզորեն հայտնել, ինչ որ իմացնել կ'ուզեր։

Էֆենտին անդրադարձավ, որ եպիսկոպոսը այս անգամ կզգուշանար «Ձեր վսեմության հրամաններ հաղորդել» նվիրագործյալ բանաձևին կիրառումեն։ «Խըմպըլ» տերտերի մը կոպտությունը նույնիսկ քարոզիչին վրա կ'ազդեր։ Մտքին մեջ իր հեղինակության ըմբոստացման կասկածը ծնավ։ Բայց կզգար, թե կացության տերը ինքն էր։ Նախ՝ ձեռքին հինգ մատերը շրթունքեն օդը, օդեն շրթունքը տարուբերելով. գոչեց.

— Ժողովուրդը գրգռող այն ի՞նչ եղանակներ էին։ Լուրը հիմակ գնա՛ց Հասան փաշային։ Ճուռնալ եղա՛նք, ճուռնա՛լ։

Ու հազիվ լսելի մրմունջով մը.

— Ան ի՛նչ «ազատություն» էր, որ պոռացիր, տերտեր։

Եպիսկոպոսը, ավագերեցը, աթոռակալը հոնքերնին պռստեցին։ Տեր Հուսիկ առանց վարանումի պատասխանեց.

— Մեր հազարավոր տարիներու աղոթքներն են, մեր սուրբ հայրապետներուն գրած ճառերն են։ Ի՞նչ, աս ժամը հայ քրիստոնեի ժամ չէ՞։

Ու Հայաստանցին աչքերը խոլոր-մոլոր ժուռ եկան եպիսկոպոսին երեսը, քահանաներուն երեսը։ Րոպե մը ամենքն ալ հիազարհուր ցնցվեցան։ Այդ հրոտ նայվածքին մեջ Հայաստանի սպառնական ցասումը կը ցոլար։ Քամենեցավ էֆենտին ինքն ալ։ Մեղմաձայն հազազով մըն էր, որ պատասխանեց։

— Ան երանելիները ուրի՞շ տանն կ'ապրեին։ Հիմակ դարը ուրիշ դար է։ Սուրբ հայրապետները, մեռնինք նե, անդին հոգիներուս փրկությանը կ'օգնեն. ամա աստեղ մեզի չեն ազատեր։

Ու ինքզինքը գտնելով՝ հարցուց.

— Դուն հոս մնալո՞ւ եկար։

— Այնպես է, ատեն մը մնալու եկեր եմ։

— Է, մնալու եկեր ես նե, ան քու Տոմուզ գեղդ մոռցիր տե, հոս խուզի գեղցի եղիր։ Աստուծով նորեն գեղդ երթաս նե, հոն ինչ կ'ուզես նե ան եղիր։ Հոս հե՛մ քեզի կ'ընես, հեմ մեզի։ Հոս քաղաքագետ ըլլալու է։ Ականջիդ օղ ըրե աս պատվիրանը.— Օրթագեղ՝ սկիզբն իմաստության, երկյուղ Հասան փաշայի։

— Անանկ է, էֆենտի, անանկ է. շա՛տ պատվական խրատներ,— աղաղակեց ազնվաշուքներու խմբերգը միանվագ։

Եպիսկոպոսը միջամտության հարկ զգաց։

— Բայց, էֆենտի, ի՞նչ ընելու է,— հարցուց դեմքը խաժոռած։— Աս Հասան փաշա է, աս Հուսեին փաշա է ըսելով մեր եկեղեցական արարողությունները փոխելո՞ւ ենք, ջնջելո՞ւ ենք։ Եթե հինգ հարյուր տարիէ ի վեր աս քաղաքագետ իմաստության դպրոցին աշակերտած ըլլայինք՝ այսօրվան օրը Հայաստանյաց եկեղեցի մնացած չէր ըլլար։ Գացող պանդուխտն ալ «ազատություն» կ'ըսեր, եկողն ալ կ'ըսե, ավագերեց հայրն ալ երբ սպասավորե՝ կ'ըսե, ես ալ եթե սպասավորեմ, պիտի ըսեմ։

— Սրբազա՛ն, սրբազա՛ն, խելքդ կանչե, որ տուն գա,— աղաղակեց էֆենտին,— ըսել ալ կա՛, ըսել ալ կա՛։ Երեսուն տարի է ես աս ժամն եմ. օր մը օրանց մեկերնիդ լսեցի՞ք, որ ազատութենեն ետքը ժողովուրդը «ամեն» պոռա, տեր ողորմյա գոչե։ Հե՞։

Այս ուշագրավ գիտողության վրա մտածելու համար քանի մը րոպե շնորհելե հետո, տրտմաձայն մրմնջեց.

— Աս մեկ ամիս է ինչ կը դառնա, չիտե՞ք։

Հայկիս տասնհինգի ակնարկությունը հուշարար ազդարարություն մըն էր. ազգին համար նոր ստեղծված կացության ծանրությունը չմոռնալու զեկուցում մը։ Լրջացան երեսները, կարեկցան բերանները։

էֆենտին շուրջը աչք մը նետեց. դեմքերը այլափոխյալ տեսավ։ Հոգ չէ, թո՛ղ իրանք ալ քաշեին։ Կես ժամե ի վեր ինքն ալ կտառապեր իր իշխանության դեմ ընդվզումի նշաններեն։ Կը զգար թե իր ազդեցության տկարացումը Օրթագեղին աղետաբեր պիտի ըլլար։ Անզլուխ մնալով իր թաղն ալ անխոհեմության պիտի մղվեր։ Ինքն իր մեջը փրկչի կոչում զգացողի գիտակցությամբն էր, որ ուզած էր Օրթագեղը փորձանքի դեմ ապահովել։ Հիմակ որ ա՛լ նպատակին հասած ըլլալ կը կարծեր, հարկ տեսավ մեղմանալ։ Կապը կտրելու չէր. ուստի խոսքն անուշությամբ պանդուխտին ուղղեց։

— Հիմա, տեր հայր, ինծի մտիկ ըրե, որ ըսեմ,— հայտարարեց։— Ես ամենեն նախանձախնդիրն եմ եկեղեցական արարողություններու, բայց «հարկը օրենքը կլուծե» ըսեր են։ Ու դառնալով մյուս եկեղեցականներուն, ավելցուց.

— Ես քիչը կ՚ըսեմ, դուք շատը հասկցեք։

— Բայց ինչպե՞ս ընելու է. էֆենտի,— հարցուց ավագերեցն անուշությամբ։

— Ինչպես ընելու է հիմակ, ըսեմ,— պատասխանեց էֆենտին, ու տեր Հուսիկին դառնալով, իր հրահանգները տվավ.

— Սա «ան» բերնեդ կամացուկ մը կհանես, հազալով մը։ Մարդ ենք, հազերնիս կը բռնե, ան ալ մեղք չէ՞ յա։ «Ջատը» կ՚ուտես։ Կ՚ուտե՛ս տերտեր, կ՚ուտե՛ս, չէ նե, ա՛ն մեզի կ՚ուտե։ «Եղբարց մերոցին» հազը քիչ մը կ՚անցնի։ «Գերելոցին» վրայեն, լփոտելո՛վ։ Էֆենտիմ, գերելոց ըլլալ չեն ուզեր նե, թո՛ղ խելքերնին գլուխնին կենան։ Փառք Աստուծո, մենք ալ հայ քրիստոնյա ենք, մեզի՞ ինչու գերելոց չեն ըներ։ Էֆե՞մ։

— Անանկ է յա՛, անանկ է յա՛,— ձայնեց նորեն աշխարհականներու խմբերգը միանվագ ու բարեխրատն ալ շարունակեց։

— «Եվ շնորհ առաջիկայ»-ին եկա՞ր մի, քեզի խուլա՜ճ-խուլա՜ճ իգին, պոռա ու պոռա, կ՚ուզես նե թող ձանդ մինչև Շնորհք էֆենտիին տունը հասնի։

Ընդհանուր քրքիջ մը պատասխանեց այս կատակաբանության, որ էֆենտիին հանդարտացմանը բարեգուշակ նշանն էր։

— Հիմակ «ինտոր ընելու էն» սորվեցա՛ր յա, տեր հայր, ա՛լ երթաս բարով։ Տեր ընդ քեզ ըսելով հրահանգիչ էֆենտին, պանդուխտ քահանան արձակեց։

— Էֆենտի,— հայտարարեց տերտերը ոտքի ելլելով,— ատանկ խոսքերեն ես բան չեմ հասկնար։ Սրբազանը եթե կհաճի՝ թող հրաման տա, ու ա՛լ կիրակի օրերը ես սպասավորություն չընեմ։

— Է, էն աղեկն ալ ատ կ՚ըլլա,— քրթմնջեց էֆենտին սրտնեղությամբ։

Գանդուխտը եպիսկոպոսին առջևը խոնարհություն ըրավ, երկու քահանաներ առանձին ողջունեց և աշխարհականներուն ալ ընդհանուր մեկ բարև մը տալով դուրս ելավ։

— Ձայն բարբառո անապատի անոր համար կքաշեն յա,— ըսավ հեղինակավոր ազնվաշուքը իր քովիններուն։

Էֆենտին ա՛լ խոնջ ու վաստակաբեկ, ժամացույցը հանեց, նայեցավ և «Օ՜» մը թռցուց, իբր զարմանքին արտահայտությունը ժամանակին առաջացմանը համար։ Անմիջապես ոտքի ելլելով «Հրամեցե՛ք, սրբազան հայր» հրավերը կարդաց եպիսկոպոսին։ Քանի մը «հրամեցեք» ալ բոլոր ներկա գտնվողներուն ուղղեց։

Ի վաղուց անտի, Հայրապետ էֆենտին ժամուն տոնախմբության օրը իր բնակարանը կոչունքի մեծահաց սեղանի շուրջը կը համախմբեր պատարագավոր սրբազանը, քահանայից դասը, խորհուրդը ու երևելիները։

Օրվանը միջադեպն այս հնավանդ սովորություն չխանգարեց։ Էֆենտին իր առաջին ցնցումեն ուշաբերելե հետո, ինքն իր վրա ջանք ըրած էր ծանր խնդիրը անուշ տեղ կապելու, գոնե առժամաբար, որպեսզի հանդիսավոր ուրախությունը չհարամնա։

Ամենքը դուրս ելան խմբովին։ Բակը դեռ երիտասարդները կսպասեին, գանձանակը ձեռքերնին։ Էֆենտին գոհացուց անոնք, բայց մունջ բերան։ Կը սպասեին և մուրացիկներն ալ, անոնք ալ ուրախացուց։

Թաղին մյուս երկու քահանաներն ևս եկան միացան խումբին, որուն կցվեցան՝ քանի մը քայլ անջրպետով՝ լուսարարը, դպրապետը, դպիրները, ժամկոչ մը։ Խորհրդարանեն քիչ մը առաջ բացակա գտնվող քահանաներեն մին՝ բոլորտիքը դիտեց և տեր Հուսիկը իրենց մեջը չտեսնելուն, մյուս քահանային ըսավ։

— Նոր պանդուխտը չիյտե, իմաց տանք։

— Ձգե՜, ձգե՛,— հարեց ազնվաշուք մը,— ամեն մարդ իր ըրածը կը քաշե։

Բ

— Ա՜տ անունն ալ ո՛ւրկե միտքն է ինկեր,— հարցուց եպիսկոպոսը ժպտելով,— երբ տիրացու Գաբրիելը քահանա ձեռնադրված օրը փափաք հայտնեց Հուսիկ անունով վերածնիլ։ Գեղացի տիրացուն, ազգային բոլոր սուրբերուն մեջեն Հուսիկ հայրապետին համար մասնավոր հակում

մը ուներ բնազդումով։ Ձեռնադրվելեն քանի մը տարի ետքը, երբ օր մը Պոլսո թերթերեն տեղեկացավ, թե սուլթանը իր **թուրան** Պատրիարքարան ղրկած էր ու պատրիարքն ալ զայն խունկով ու մոմով ընդունած էր, սրբության պատկերի մը պես, «Ա՜խ, Հուսի՜կ մը, Հուսիկ մը, Պոլիս Հուսիկ մը «չկար» աղաղակեց։ Լուսավորչին Թոռը Դիոկղետիանոս կայսեր պատկերը ոտքերուն տակ առնելով ջարդուփշուր ըրած էր։ Տեր Հուսիկին ալ սրտեն ձայն մը կ'ըսեր, որ՝ **թուրան** Պատրիարքարան հասած օրը եթե ինք Պոլիս գտնված ըլլար, անգամ մը ևս պիտի հաստատվեր «անունին տերն է եղեր» ժողովրդական առածին ճշմարտությունը։

Երբ տեր Թադևոս վախճանվեցավ, փեսան՝ տիրացու Գաբրիելը, անոր հաջորդեց։ Այդ թվականեն տասը տարի ետքը, մեծ-կոտորածին, դուրսեն խուժանը Տոմուզ գեղին վրա ալ հարձակելու փորձ մը ըրավ։ Տերտերը հոն չէր. տարագրյալը Պոլիս կը գտնվեր. բայց գեղին երիտասարդները հոն էին։ Այցելուներուն ընդառաջ գացին, օդին մեջ «ապաշխարության աղոթքներ» հնչեցնելով։ Ի լուր այդ ձայներուն, անկոչ հյուրերը լեղապատառ փախան։ Ու անկե ետքը կինները «ապաշխարության գանձանակին» առջև երեսնին կը խաչակնքեին, և «զորության մեռնիմ» ըսելով զայն ջերմեռանդաբար կը համբուրեին։

Ապաշխարության գանձանակին, ապաշխարության աղոթքներու մասին, ահա ինչ որ պատմած են տոմուզգեղցի երիտասարդները։

Տեր Հուսիկ նորընծա քահանան «մեղաց ք.•վությանն» սահմանված ապաշխարանքները բավական չհամարելով, անոնց վրա հատ մըն ալ ինք ավելցուց։ Ժամուն դուռը ապաշխարանքի գանձանակ մը դրավ։ Խոստովանանքի եկող ծերերը, կիները, աղջիկները կդատապարտվեին մեջը հինգեն մինչև քսան փարա ձգելու. «ըստ չափու և մեծության մեղաց»։ Տարի մը ետքը, կիրակի առտու մը տերտերը գեղին երիտասարդությունը հավաքեց ու գանձանակը ի ներկայության ամենուն բացավ։ Երիտասարդներեն երկուքը հետն առնելով քաղաք գնաց։ Քանի մը օրեն վերադարձան։ Հաջորդ կիրակին տեր Հուսիկը հետևյալ ծանուցումը ըրավ.

«Ապաշխարանքի գանձանակի արդյունքովը սուրբ եկեղեցւոյս նվեր մը պիտի ընենք. ոսկի և արծաթ ոչ ունիմք. ըստ առաքելույն, բայց զոր ինչ ունիմք ի սրտե տամք. աստված ընդունելի արասցե»։

Ժողովուրդը «ամեն» գոչեց։ Երկու երիտասարդները խորանին առջև բերին հրացան մը դրին։ Տերտերը զայն օրհնեց և պատեն կախեց. փայտե խաչ մըն ալ քովիկը։ Գանձանակն ալ նորեն տեղը դրվեցավ։

Տեր Հուսիկը հրացանը օրհնելեն հետո, նոր ապաշխարանք մըն ալ երիտասարդներուն սահմանեց։ Խոստովանող այր մարդիկը կը պարտավորեր «օրհնյալ հրացանով» թռչուն զարնել ու մատաղ ընել. «Աբելի

պատարագն Աստուծոյ» կ'ըսեր։ Ինքն իր ձեռքովը հրացանը պատեն վար առավ, վրան խաչակնքեց ու աչքին առջևը մեղավորները պատժին գործադրության հրահանգեց։

Երբ երկրորդ տարին ալ բոլորեցավ, ապաշխարանքի գանձանակն նորեն բացին։ Այս անգամ արդյունքը երկու հրացան գնելու կբավեր։ Ապաշխարագիրը կռահեց, որ երբեմն-երբեմն երիտասարդներն ալ ինքնաբերաբար՝ գանձանակին բարեխոսության դիմած էին։

Տերտերը գեղի տղոց կարդալ կսորվեցներ։ Ձեռքերնին Ռոպենսոն Քրուզո տված էր, որպեսզի ինքնօգնության գաղափարը անոնց մտքին մեջ մխե։ «Տեսե՛ք,— կըսեր,— Ռոպենսոն իր կղզիին մեջ քսան փարանոց երկաթի մը կտոր՝ ոսկիի մեծ կտորե ավելի օգտակար կը սեպեր։ Մենք ալ Ռոպենսոնին պես մեր գեղը կղզիացած ենք, չորս կողմերնիս անհավատներու ծովն է։ Մեր ժամն ալ ոսկին ի՞նչ ընե. երկաթի կտոր մը մեր գործը ավելի լավ կտեսնե»։

Գեղացիները երկաթասիրության մեջ օրե օր կը հառաջադիմեին։ Իրենցմե Պոլիս գացողները հոն իրենց երկրացիներուն պանծացուցին նորահաստատ ապաշխարանքը, երկաթասիրական գաղափարներն ալ տարածելով։ Օր մըն ալ Տոմուզ գեղի Պոլսո պանդուխտները ընկերություն մը կազմեցին, ապաշխարանքի գանձանակը շեն ու պայծառ մնալու նպատակավ։ Երկիր վերադարձողներն ալ հետերնին շրջահար մը ժամուն նվեր կը բերեին։

Տիրացու Գաբրիելը քահանա ձեռնադրվելեն տասը տարի ետքը, գեղին ժամը քսան հրացան և երեսունի չափ շրջահար ուներ, «ի քավության և ի թողության մեղաց» ու քաջավարժ նշանառու երիտասարդություն մը։ Գնդակին սուլումը «ապաշխարության աղոթք» կը կոչվեր ժողովուրդին մեջ։ Այդ աղոթքը իր զորությունը կոտորածին օրը ցույց տվավ։

Ապաշխարանքի գանձանակին հաստատությունը դիպվածական գաղափարի մը ծնունդ չէր, ծրագրի մասն էր։ Տեր Հուսիկ իր գեղը բարեկարգելու խորհուրդը շատոնց հղացած էր, տակավին տիրացու եղած ատենը։ «Թո՛ղ տերությունները 61-րդ հոդվածը գործադրել տալու ետեվե ըլլան, կը խորհեր ինքն իրենը։ Այդ օրվան սպասելով հանդերձ, եթե առայժմ քիչ մը մենք մեզի բարեկարգելու ըլլանք, գեշ պիտի չըլլա։ Ավելի բարին աչք չի հաներ»։ Ու կուզեր, որ իր գեղը օրին մեկը ամբողջ Հայաստանին կենդանի օրինակ մը հանդիսանա, և գործնականապես ցույց տա ինքնապաշտպանության է՛ն կտրուկ միջոցը, որ ինքնօգնության մեջ կը կայանա։

Տեղ մը կարդացած էր, թե անգլիացիները իրենց տղոցը լողալ սորվեցնելու համար, զանոնք կբռնեն ջուրը կնետեն առանց օգնության: Կը թողուն, որ տապլտկվելով, տակ երթալով, վեր ելլելով ինքզինքնին ազատեն ու իրենք իրենց ընտելանան ջուրին մեջ ապրիլ կարենալու դյուրությանը: «Մենք ալ,— կ՚ըսեր,— ուզենք, չուզենք ատ տղոցը կը նմանինք: Ծովն ենք ընկեր, մեր գլխուն ճարը մենք պետք է տեսնենք: Եթե սպասենք, որ մեր ձայնը Պատրիարքարան լսվի ու մեզ ազատելու գանեթե երբեք գալու ալ ըլլան— կը խեղդվինք կը լըմննանք»:

Նորընծան շուտով գործի ձեռք զարկավ, բարեկարգման հաջողությունը նախ և առաջ կրոնքեն ակնկալելով: Գիտեր, որ քահանան կրնա ժողովուրդը իր ուզած ճամփեն քալեցնել շնորհիվ այն ազդեցության, զոր խղճմտանքներուն վրա ունի: Այս մտածությամբն էր, որ ապաշխարանքի զանձանակն ու աղոթքը հաստատեց:

Ջենքով ինքնապաշտպանությունը իր «ներքին քաղաքականությանը» հիմն էր. իսկ «արտաքին քաղաքականության», այսինքն՝ Թուրք իշխանության հետ հարաբերությանցը մեջ «պատեհականության», որ է վեր վար հարմարելու վարդապետությանը կհետևեր: Որոշեց գանգատի համար առաջնորդարան չդիմել:

«Տերտերը՝ առաջնորդին կ՚աղերսե. կ՚ըսեր. առաջնորդը՝ Պատրիարքին, Պատրիարքը՝ սատրազամին: Մի՛ մեռնի իշուկս. գարուն պիտի գա՝ առվույտ պիտի ուտես»: Ու Հայոց պաշտպանությանը համար սատրազամին դիմումը կը նմանցներ «տանձին պահպանությունը արջեն խընդրելու» միամտության: Կը ջանար ամեն գործ կարճ երկայն իր ձեռքովը կտրել, լմնցնել: Մերթ կծու լեզու, երբեմն աղաչանք, այսօր սպառնալիք, վաղը քանի մը դահեկան, ու ծանր պարագաներու մեջ քանի մը մեճիտ մեծապես նպաստեցին գեղին կրած տառապանքներուն թեթևացմանը:

Կ՚անդրադառնար, թե տգիտությունը, աղտոտությունը, ստեստի անհոգությունը ժողովուրդին շատ ավելի աղետաբեր են, քան թե կառավարական հարստահարությունները: Հայ գյուղացին այդ չարիքներուն դեմ մինչև աստիճան մը ապահովելու համար ո՛չ Պերլինի դաշնագրին, ո՛չ պատրիարքարանին, ո՛չ Դռան միջամտությանը ակնդետ սպասելու պետք կար: Ինքը Պոլսեն մեկ քանի թերթ կը ստանար, ու գրքեր ալ կ՚ընդուներ: Մասնավորապես առողջաբանական հրատարակություններ էին իր հետաքրքրությունը գրավողները: Կը ցավեր սակայն, որ Պոլսո մամուլին մեջ քաղաքական անպետ տեղեկության և խորհրդածությանց շատ լայնկեկ բաժին մը հատկացնելով, անդին կմոռցվին այն նյութերը, որոնց ընթերցումեն ժողովուրդը՝ մանավանդ երկրին ժողովուրդը, կրնար

սքանչելապես օգտվիլ իր բարոյական ու նյութական բարվոքմանը համար։ Կարդացածներեն սորվածները կը ջանար հնարավոր եղածին չափ գործադրել տալ։ Օրինակի համար, գեղը առատ ջուր ուներ, ու տերտերը ծայրահեղ խստությամբ հսկեց ժողովուրդին մաքրությանը։ Աղեկ չըլվացվողներուն հաղորդություն չէր տար. «Աստված ո՛չ միայն մաքուր հոգվով, այլև մաքուր մարմնով ալ պետք է ընդունիլ» կը խրատեր։ Պոլիս գացող իր աշակերտներուն հանձնարարեց կարգ մը ընթացիկ դեղեր ղրկել, ի միջի այլոց՝ քինին։ Հիվանդները կը դարմաներ առողջապահական և բժշկական հրատարակության օգնությամբ։

Լրագիրներուն մեջ խոզին օգտակարության վրա տեղեկություններ կարդալով, որոշեց մահմեդականներուն ատելի կենդանիներեն գեղը քանի մը հատ մտցնել։ Բրավ շըրավ մինչև Էրզրումեն խոզ ճարեց ու գեղը բերել տվավ և արտերը սայպեց։ Բազմածինը կ՚աճեր ու կը շատնար առանց ժողովրդյան բեռ մը ըլլալու, վեց ամիսը անգամ մը տասնհինգքսան ձագ ցընկնելով։ Տարին հազիվ մեկ երկու անգամ միսի երես տեսնող գյուղացին, հիմակ հաճախակի խորոված համ կառներ։

Այս խոզաբուծությունը գեղի ապագային վրա օգտակարապես ազդելու առիթ մը եղավ։ Օրին մեկը, Թուրք զինվորները այդ գեղը իջան, ուր շատոնց էր այցելած չէին։ Ուզեցին, ըստ սովորության, կերակրվիլ, բայց խոզեն զատ ուրիշ անասուն չտեսան։ Հարյուրապետը սաստիկ բարկանալով ռեսը ծեծեց։ Տերտերը վրա հասավ. ողբաց խաչնամահին ըրած կոտորածներուն վրա, ըսավ, թե իրենք ալ աղքատութենե ստիպյալ այդ աղտոտ կենդանին կպահեին։ Գանգատեցավ երաշտության մասին, ու խոսելով, խոսելով, հարյուրապետը մինչև իր տնակը տարավ։ Հոն քանի մը հավկիթ ճարեց, ճուտ մը մորթեց և մարդուն հրամցուց։ Հասկցուց, թե «ունեցածնին, չունեցածնին ան էր»։ Ետքեն ալ Թուրքին ափը ատամնավարձք մը դրավ։ Զինվորականը կշտացած՝ զորքերը վերցուց «տոմուզներուն գյուղը ուտելիք չկա» ըսելով։ Անցան գացին մեկ երկու ժամ անդին գտնվող Քուրդ մեծ գեղ մը։ Հոնտեղի քուրդերը գիտեին, թե իրենց դրացի հայոց գեղը խոզ կար։ Արդեն տոմուզլարըն Քեոյի— խոզերուն գեղը— կ՚անվանեին զայն. զորքերն ալ գործ մեծցուցին. ամբողջ գեղը իրենց աչքին խոզով ծածկված երևցեր էր։ Այդ այցեն հետո, «տոմուզլարըն Քեոյին» ժողովուրդին բերանը «Տոմուզ Քեոյի» փոխվեցավ ու մինչև իսկ կես պաշտոնական հորջորջման պես բան մը եղավ։ Շնորհիվ խոզերու համբավին, ա՛լ այդ կողմեն անցնող դարձող անոթի զորքերը գեղը կանգ չէին առներ։

Հարկահավաքներն ալ, նախապես կշտանալե հետո հոն գալու խոհեմությունը կ՚ունենային։ Այս ամեն առավելությանց վրա կը բարդվեր

տուրքե ազատագրումը։ Խոզը անտեր կենդանի մը կը սեպվեր, արտերը ինկած, ինչպես Թռչունը օդին մեջ, ու ոք անոր համար տուրք վճարելու պարտական էր։ Ու կառավարական պաշտոնյաներն ալ մտքերնին բնավ չէին անցըներ խոզին ձեռք դպցնել։ Զգվանքն ալ սրբության պես տարսափազդեցիկ է։

— Ա՜խ,— կ'ըսեր տեր Հուսիկ,— եթե Հայաստանի ամեն գեղերն ու քաղաքները խոզով լեցվին, հարստահարության խնդիրը արդեն մասամբ լուծված կ'ըլլա։

***

Գարոն դեռ պզտիկ տղա եղած ատենը «անհավատներուն» դեմ ատելությամբ արդեն ապագա մը կը խոստանար։ Ամեն անգամ, որ մոտակա գեղ մը երթար, ետ չէր դառնար, առանց ճամփան Թուրքի ու քուրդի լակոտներու հետ կռվի բռնված ըլլալու։ Նախահարձակը միշտ ինքը։

— Քեզի ի՞նչ ըրին, որ անոնց զարկիր,— կը հարցնեին։

— Բան մը չըրին։

— Է, ինչո՞ւ զարկիր։

— Անհավատ են։

Գեղին տերտերը մորուքին տակեն խնդալով կմռմռթար։

— Սրիկ փչիկ պզտիկուց հայտնի է։

Հայրը գեղին հարուստը, հետևաբար և խոհեմության մարմնացումը, քանի մը ապտակով կը վարձատրեր տղուն կրոնամոլությունը։

«Ասանկ մեծնա նե, օր մը ամբողջ գեղին գլխուն փորձանք պիտի բերե» կ'ըսեր։ Ու տերտերոջը վրա վազելով կը պահանջեր զավակին խիստ ապաշխարանք դնել։ Տեր Թադեոս սակայն Գարոյին կը խնայեր, միտքը զայն իրեն փեսայացնել ըլլալու էր։ Տղուն հայրը հարուստ էր, այսինքն՝ գեղին երկու մեծագույն արտերուն տերը, ու զավակն ալ մեկ հատիկը։ Քահանան ալ աղջիկ մըն ուներ միայն։ Օրին մեկն ալ երկու կողմեն հավանեցան խնամիանալու։

Գաբրիելը ապագային իր աներոջը պիտի հաջորդեր։ Տերտերը սկըսավ իր փեսացուին կարդալ գրել սորվեցնել։ Աշակերտը քիչ ատենեն վարժապետին բոլոր գիտցածը ինքն ալ սորվեցավ։ Կարդալու արդեն ուրիշ բան չկար, բայց եթե ժամական մեկ երկու գիրք։ Սակայն տեր Թադեոս ուրիշ հատոր մըն ալ ուներ, կլորիկ, գունդիկ, սևուկ կողքով. զոր երբեք տղուն ձեռք տալ ուզած չէր։ Գարոն քանի մը անգամ զայն ընդնշմարած էր ու օր մըն ալ համարձակած էր խնդրել։ Իբր պատաս-

խան՝ ապաշխարանքի ենթարկվեցավ։ Տերտերը ինքն իսկ ամեն անգամ, որ այդ գիրքը բանար «մեղա՜յ, մեղա՜յ» կը գոչեր։ Ո՛չ ժամարար եղած օրերը, ո՛չ տոն օրերը զայն սնտուկեն դուրս կը հաներ։ Բայց Գաբոն այդ խորհրդավոր հատորը օր մը ձեռքն ունեցավ։ Տերտերը զինքը գործի մը համար քաղաք ղրկած էր. բան մը մոռցած ըլլալուն՝ ճամփեն ետ դարձավ ու շիտակ տերտիրոջը տունը գնաց։ Մարդը դուրս ելած էր, գիրքը բաց թողած, ակնոցն ալ վրան։ Որմե՞ն գաղտնի պահեր, ուրիշ կարդալ գրել գիտցող չկար։ Գաբոն գիրքին վրա ինկավ. նախ կողքը կարդաց ոսկեզօծ, խոշոր տառերը՝ «Աստվածաշունչ»։ Սկսավ թղթատել։ Դյուրությամբ կը հասկնար. ուստի և համ կ՚առներ։ Ինքզինքն ընթերցումին տված՝ կը մոռնար, որ տերտերը կրնար հանկարծ գալ, երբ մեկենիմեկ «վա՜յ անիծյալ» բացականչություն մի լսեց, ու երեսին ապտակ մը շառաչեց։ Տերտերը գիրքը տղուն ձեռքեն հափշտակեց, ու նույնհետայն իր արտը երթալով կրակ վառեց և Աստվածաշունչը խարուկեց, հիշելով «վա՜յ մարդոյն այնմիկ, ույր ձեռն գայցե գայթակղություն»։ Երբ գիրքը կը վառեր տերտիրոջը աչքերն ալ լեցվան։

Աշխարհաբար Աստվածաշունչն էր։ Օրին մեկը անծանոթ մը գեղն եկած էր, իշու վրա հեծած, հետն ալ պայուսակ մը։ Տերտերը փնտրելով, մեկ տեղ նստեր խոսեր էին։ Այցելուն աստվածավախ մեկը կ՚երևնար. անուշ լեզու։ Երբ պիտի մեկներ, պայուսակը բացավ, մեջեն գիրք մը հանեց և տերտերին նվիրեց։ Վրան «Աստվածաշունչ» գրված էր. քահանան գիրքը պագավ ու ճակտին դրավ։ Աստվածաշունչ անունը լսած էր, երեսը տեսած չէր։ Մարդը քանի մը հատ ալ ձգել ուզեց, բայց տերտերը անօգուտ համարեց զանոնք ընդունիլ. կարդալ գիտցող ուրիշ ոչ ոք կար։ Մարդը մեկնելու ելավ. տերտերն ալ հյուրին կ՚ընկերանար։ Ճանապարհին հանդիպեցան խումբ մը գեղացիներու, որոնք տերտերին «Օրհնեա՜» ըսին ու քովինն ալ բարևեցին։ Անիկա, օտարական ըլլալով, իրենց ուշադրությունը գրավեց։ Խումբին մեջեն մեկը մարդուն դեմքը հիշել կը թվեր, ուշի ուշով երեսը նայեցավ, ու մեկենիմեկ գոչեց։

— Պատվելի, դուն հոս ի՞նչ բան ունիս։

Քանի մը շաբաթ առաջ քաղաքը անոր հանդիպած էր կովի մը ատեն, որուն ինքն ալ միջամտելով՝ մեկ երկու բռունցք ալ պատվելիին գլխուն ինք իջեցուցած էր։

— Հո՞ս ալ տիրոջը խոսքին համար եկեր ես, հա՞,— շարունակեց։ Ու տերտերին դառնալով պոռաց։

— Տերտեր, աս մարդը բողոք է, դուն ասոր հետ ի՞նչ բան ունիս։

Տերտերը շվարած, սկսավ խաչակնքել, «հալին մեղք, հալածին դեղք»,— աղաղակելով։ Ամբողջ մարմնովը կը դողար։ Գեղացիները պատ-

վելիի վրա թափեցան և սկսան տփել։ Մարդուկը հազիվ թե կրցավ խշուն վրա նետվիլ ու փախչիլ, պայուսակը հոն թողլով։ Քիչ վերջ բոլոր գեղը հավաքվելով՝ կրակ վառեցին ու գրքերը այրեցին։ Տեր Թադևոս տուն վազեց։ Մեկունի չէր ըսած, թե ողջակիզյալներեն հատ մը փրկված էր։ Ինքն ալ զայն անմիջապես պիտի զոհեր։ Կրակին տալեն առաջ, մեկ մը աչքե անցընելու փորձություն ունեցավ։ Բռնվեցավ. Ադամ, Եվա, Կայեն, Աբել, Նոյ Նահապետ, Հովսեփ գեղեցիկ անունները լսած էր, բայց ինչ ըլլալնին մանրամասնորեն չէր գիտեր։ Խարույկը մյուս օրվան պահեց։ Մյուս օրն ալ ձեռքն առաջ չգնաց։ Կը նզովեր բռո՞թը և կը լա-փեր գիրքը։

— Գիտության ծառն ալ ասանկ ըլլալու է,— կ'ըսեր ինքն իրեն։— Ան Եվան ալ ինծի պես մեկ մը բռնվեցավ։ Վաղը աս գիրքը էրեմ ազա-տիմ. ես ալ չպատժվիմ։

Մյուս օրը՝ «Աստծու ողորմությունը» մեծ է ըսելով, այրումը հա-ջորդ օրվան կը ձգեր։ Զգձգումը հասավ մինչև այն օրը, որ ուրիշին ալ մեղքի պատճառ եղավ։ Առաջին թափով այրեց լմնցուց, խղճմտանքի խայթեն ազատեցավ։ Խղճի թեթևացում մը, որ սրտին շատ ծանր եկավ։

* * *

Գաբրիելը միտքը դրավ այդ Աստվածաշունչեն քաղաքը փնտրել, բայց խուզարկությունները զգուշավորությամբ ընելու հարկը զգալով։ Տերտերին ընթացքը իրեն ենթադրել կուտար, թե «տակը բան մը ըլլա-լու է»։ Սակայն ի՞նչ։ Ո՛րևէ ենթադրություն չէր կրնար ընել։ Գարնան հաճախ քաղաք կ'երթար։ Տերտերներն ու վարդապետները իրեն ծանոթ էին, ինչպես և դպրոցին վարժապետները, որոնցմեն լրագիր կառներ կկարդար։ Անոնց ճարպիկորեն հարցումներ ըրավ Աստվածաշունչին վրա։ «Հոս չկա կըսեին, շատ սուղ է։ Վանքը հատ մը ըլլալու է, բայց ձեռագիր է, դուրս չեն հաներ, մարդու ցույց չեն տար»։ Աստվածաշունչ ըսելով ամենքն ալ գրաբար կը հասկնային։

Վարժապետներուն մեկուն՝ Արշամին՝ մասնավոր համակրանքը կը զգար։ Օր մը երբ մեկտեղ կ'երթային, անիկա արմունկովը Գաբրիելը մշտեց, քովերնուն ճյուպպելի մարդ մը անցած ատեն։

— Ձեր գեղը ծեծ կերած մարդը աս է,— ըսավ։

— Բռո՞թը,— հարցուց դողալով։

— Նույն ինքն,— պատասխանեց վարժապետը ծիծաղելով։ Արշամ պոլսեցի էր ու ազատամիտ, բայց պաշտոնը զինք խոհեմության կը պար-տավորեր։ Գաբրիելը քաղքեն չըլլալուն՝ վարժապետը կը համար-

ձակեր իր ժպիտը բոլորովին չզսպել, ու նաև քանի մը ալ խոսք ըսել։

— Մարդուն գրքերն ալ այրեր են եղեր,— ավելցուց հեգնորեն։

— Այո՛, բոռթի գրքեր են, էրեր են։

— Է, բոռթի գիրքը ի՞նչ է, գիտե՞ս։

— Բոռթի գիրքը բոռթի գիրք է, ինչ պիտի ըլլա որ։ Կարդացողը դժոխք կ'երթա։

Այս գեղջկական պարզամտությունը շատ զվարճացուց պոլսեցի «մյուսյուն», որ բոռթի գրքերեն այլապես տարբեր ընթերցանություն-ներով պարապած էր. առանց դեպի դժոխք ուղևորության մը երկյու-ղին։

— Ատ բոռթի գիրք ըսածնին «Աստվածաշունչ» է,— ըսավ ընկերոջ։

Տղուն շունչը բռնվեցավ «Աստվածաշունչ» անունը լսելուն։ Անհույս կորսված սիրելիի մը հետքը կարծես մեկենիմեկ գտած ըլլար։ Բայց միտքը կմթագներ, երբ վարժապետը «Աստվածաշունչ» ու «բոռթ» բա-ռերը իրարու կը կցեր։ Հրեշտակն ու սատանան մեկ կրնա՞ն ըլլալ։

— Բոռթները «Աստվածաշունչ» կ'ունենա՞ն,— հարցուց շվարած։

Վարժապետը խնդաց։

— Ինչո՞ւ չունենան։ Անոնք ալ քրիստոնյա չե՞ն մի,— ըսավ։

— Քրիստոնյա՞ մի։ Վարժապետ, վրաս կը խնդա՞ս։ Պահք ու ծոմ չբռնողը ընտո՞ր քրիստոնյա կ'ըլլա,— ընդդիմաբանեց Գաբոն։

Արշամ չուզեց ավելի առաջ երթալով խեղճ տղան բոլորովին գայ-թակղեցնել։ Գիտեր, որ գեղացի միամիտը մեկենիմեկ իր գաղափարներեն բան չի հասկնար, առանց նախապատրաստության։

Ու գուցե դուրսը շատախոսությամբը իր գլխուն փորձանք մըն ալ բերեր։ Խոսակցության նյութը փոխել ուզեց, բայց Գաբրիելին միտքն ա՛լ խռովյալ էր։ Անշուշտ վարժապետը վրան կխնդար «բոռթները «Աստվածաշունչ» ունին» ըսելով։ Բայց տերտե՞րն ինչու զինքը պատժած էր։ Այո՛, անոր ձեռքին «Աստվածաշունչն» էր. զայն քիչ մը կարդալուն համար էր, որ ապտակ կերած էր։ Ինչո՞ւ։ Եվ ինչո՞ւ տեր Թադեոս այդ «Աստվածաշունչը» երբեք իր ձեռքը տալ չէր ուզած։ Ինչո՞ւ։ Ի՞նչ կար։ Խեղճ տղուն ուղեղը խժլտուքով լեցված էր, պիտի ճաթեր։ Ա՛լ չդի-մացավ։

— Արշամ էֆենտի, ատ «Աստվածաշունչեն» հատ մը ինծի կրնա՞ս ճարել,— խնդրեց։

Վարժապետը տղուն երեսը նայեցավ ուշադիր։ Չէ, անիկա իրեն խաղ մը պիտի չխաղար։

— Ինծի երթանք,— ըսավ։

Անխոսուկ քալելով մինչև վարժապետին տունը գացին։

Սենյակին դուռը կղպելէ հետո, վարժապետը սնտուկը բացավ, ճերմակեղենները դուրս հանեց. անոնց տակեն թուղթերն ու գրքերը։ Խորը, լաթերու մեջ պլլված, կլորիկ գունտիկ գիրքը, որուն սեփ ու սև կողքին վրա ոսկեշող տառերը կփայլեին։ Գաբրիել դողդողալով ձեռք առավ ատ գիրքը։ Բացավ նայեցավ։ Նույն էր, ինչ որ տերտերին քով տեսած էր։

— Թե որ կ'ուզես հետդ ա՛ռ տար, քեզի ըլլա, բայց մարդ չտեսնե,— ըսավ վարժապետը։

Գաբրիել ուրախութենեն ինքն իրմեն դուրս ելավ։

Բայց ինչո՞ւ «մարդ չտեսնե»։ «Աստվածաշունչը» ինչո՞ւ գաղտնի պահվի։ Ի՞նչ կար, որ վարժապետը զայն սնտուկին խորը պահվտցուցած էր։ Ա՛լ Արշամը բացվեցավ «քովդ խոստովանանք մնա» ըսելով, պատմեց ինչ որ տերտերին տունը գլխուն եկած էր։ Վարժապետը ա՛լ չխնդաց։ Դեմը անմեղ ու լուրջ տղա մը կար, որուն հետ հոգեբանորեն պետք էր վարվիլ։

— Բարեկամս,— ըսավ,— հիմակ դուն սա գիրքը կարդա՛, միտքդ թող բացվի։ Տերտերը բարի տգետ մ'է ժողովրդին պես։ Դուն շատ բան կարդա՛, շատ մտածե, անկե ետքը կխոսինք։ Նա՛, քեզի ուրիշ գրքեր ալ տամ։

Ու սնտուկին մեջեն հանեց փոքր Հայոց պատմություն մը, Ռոպինսոն մը, Հուշիկները։ Գաբրիել ամենքը ծրարեց, տուրիկի մը մեջ նետեց զայն ուսեն կախեց, ու թեթևցած ուրախ, զվարթ ճամփա ինկավ իր գեղը։

Տարի մը վերջ գեղացիները իրենց Գարոն փոխված կտեսնեին։ Թուրքերուն ու քուրտերուն հետ կռիվ ընելե կը զգուշանար, գյուղին մեջ ամենուն հետ անուշ վարվողությամբ կջանար վեճերն ու կռիվները կարգադրել։ Ձմեռը պզտիկ տղաքը գլուխը ժողված, անոնց գրել կարդալ կը սորվեցներ։

Արշամին քովեն մեկնած օրը շիտակ իր գեղին մոտակա մեկ լեռը երթալով, գրքերուն տուրիկը հոն քարանձավի մը մեջ, խոշոր քարերե ծածկույթի ներքև ապահոված էր։ Շաբաթը քանի մը անգամ այդ սարը կվազեր, անհամբեր, սիրտը տրոփուն, իբր սիրուհիի մը հետ ժամադրավայր մը, բաց օդին խորհրդավոր լռությանը մեջ, կը կարդար ու կը կարդար։ Ընթերցումները դեռ մտքեն ներս չեն թափանցեր, բայց կը թողվին աղոտ իմն պատկերներ, որոնք նման անտեսանելի մելանով գրված էջերու, օրին մեկը պայծառափայլ պիտի շողային ուրիշ ներգործություններու ազդեցությամբ։ Ձմեռները քանի մը ամիս քաղաքը կ'անցըներ։ Գրաբարին մարմաջեն բռնված, Արշամեն քերականության դասեր առավ։ Վարժապետը իր գրքերը կարգավ փոխ կուտար։ Թեև ճոխ

գրատուն մը չուներ, երեսուն-քառասուն գիրք միայն, բայց անոնց մեջ՝ Եղիշե, Լաստիվերտցի, Հայրունի։ Գրքերուն չափ նաև Պոլսեցի ուսուցչին խոսակցությունները, պարզած տեսությունները այդ խոպան միտքը հերկելու օժանդակեցին։ Գաբրիել սկսավ կարծիքներ ունենալ, համոզումներու տեր ըլլալ, և իրեն սեփական գաղափարներ ստեղծել։

Ապագա տերտերը Քրիստոսը սկսավ ճանչնալ ու սիրել։ Բայց Պողոսն էր զենքը քաշողը։ Քրիստոս երկինքը ցաթած տրտմանույշ լուսընկային պես կը խանդաղատեր իր սիրտը։ Առաքյալեն հեղափոխի շունչ մը իր հոգին կը խըռովեր։ Ավետարանը կը կարդար ինքնամփոփ մըտքով. ետ ընթերցման թուլցած կը մնար, գրեթե երազուն։ Գործք Առաքելոցին էջերը բացած ատենը չէր կրնար նստուկ մնալ. մերթ ապառաժի մը կռթնած, մերթ քալելով կը կարդար բարձրաձայն ներքին անբացատրելի վրդովումե տագնապած։

Կամաց-կամաց Աստվածաշունչն ու Հայոց Պատմությունը իրարմե զանազանել սորվեցավ։ Ըմբռնեց, թե Հին ու Նոր կտակարանները ամեն ժողովուրդներու համար էին, Եղիշեն՝ Հայո՛ւն միայն։ Առաջ բառթն ու մահմեդականը միևնույն սևադեմները կ՚երևեին իր աչքերուն։ Գեղացիին համար ան ա՛լ անհավատ, ա՜ն ալ։ Հիմակ այլևս բողոքականը չէր ատեր, բայց պիտի ատեր թուրքը, եթե անիկա նույնիսկ իր հայադավան քրիստոնեությունը ընդուներ։ Ազգության գիտակցությունն էր, որ կվերածներ։ Ինչպես մեռյալը պատանքը փաթթված կը մնա ի գերեզմանի, սպասելով փողհարությանը, որ հարություն պիտի տա իրեն և պիտի միացնե հոգիին, այնպես և ազգության գաղափարը կը ննջեր գեղացի պատանիին սրտին խորը, կրոնքին պատանքներուն մեջ պըլլըված։ Հայոց պատմությունը եղավ փողը Գաբրիելյան, որ մահաքունը արթնցուց և հայության հոգին միատարրեց։

Իր հողը հիմակ այլևս պարզ նյութ մը չէր իրեն համար. անիկա պատմություն ուներ. կյանք կբխեր անկե։ Հոն Հայկն ու Վարդանը, Հուսիկը ու Ներսեսը ապրած էին. և ինքն այդ հողին զավակն էր, անոնց զավակն էր։ Լեռներն ու ձորերը լեզու ելած իրեն հետ կը խոսեին։ Երբ քարայրեն կմեկներ, ընթերցումներեն սարսուռն, իրեն կը թվեր, իբր թե այն դյուցազանց ստվերները կը հածեին իր շուրջը։ Երկյուղածությամբ կանգ կ՚առներ, ու սրտեն Արտաշեսին և Տրդատին պաշտոն կը մատուցաներ։

Անցյալին խանդավառ սիրտը կ՚արյուներ օրվան Հայաստանին համար։ Ու բան մը ընելու անկարողությունը զգալով, երբեմն փորձությունը կ՚ունենար անիծելու այն օրը, երբ Աստվածաշունչը ձեռքը ան-

ցած էր, և իրեն՝ քիչ մը ինքնազարգացման պատճառ եղած։ «Միա՛յն գիշերը ցույց տալու համար ինչո՞ւ կույրին աչքը բանալ» կողբար։

Արշամը այլևս Գաբրիելին ազգասիրության խոստովանահայրն էր, վշտերուն ցավակիցը ու նաև սփոփիչը։ Եռանդուն երիտասարդ մը այդ վարժապետը։ Պոլսո Թաղային դպրոցե մը շրջանավարտ, Թուրքիո մայրաքաղաքեն մեկնած էր Ներսես Պատրիարքին իշխանության է՛ն հուսատու օրերը, երբ հայ ժողովուրդը ամեն գիշեր կը պառկեր անուշ երազովը թե առտուն ինքնավար Հայաստանի մը մեջ պիտի արթնանար։ Հետը կը կրեր իր հավատքը, զոր կը ջանար տերտերցուին ալ փոխանցել։

— Վեց պետությունները ինչե՞ր պիտի ընեն, սպասե, սպասե,— կ'ըսեր բորբոքած։

— Թե որ ընելու չըլլա՞ն նե,— կհարցներ գեղացին,— որ թեև քիչ շատ ուսում ստացած, բայց միշտ կմնար գեղացի-կասկածոտ դժվարահավան։

— Հեչ անանկ բան կ'ըլլա՞,— կ'առարկեր վարժապետը, պոլսեցիի մը դյուրահավան հոսոսությամբը։

Երկու տարի ևս անցավ ու Հայաստանի վիճակը որևէ նոր փոփոխություն մը չկրեց։ Վարժապետը քիչ մը թուլնալ սկսած էր, երբ Րաֆֆիին «Խենթը» ձեռքը անցավ։ Ինքը կարդալեն հետո գիրքը Գաբրիելին տվավ։ Անիկա տասնհինգ օր վերջը քաղաք կը վերադառնար, «փրկության ճամփան հիմա՛կ գտանք» ըսելով։ Վարժապետին հետ խորհրդակցեցան։ Րաֆֆիին գրքերը պետք էր բերել տալ և ժողովրդին մեջ տարածել։

Ժողովուրդը պետք է կռվի պատրաստենք,— կ'ըսեր տերտերացուն։ Մենք մահմեդականներուն կոնակեն հայհոյելով չէ որ պիտի փրկվինք։ Գայլը պառավին թոռը տարեր է, ան ալ մխիթարվեր է, որ գայլին ետեվեն հինգ մատովը մուր է տվեր։ Գայլին բերնեն հայրենիքնիս պիտի ազատենք կրակին լուսեն անիկա ահաբեկելով։

Անկե ետքը սկսան խորհուրդներ հղանալ, ծրագիրներ պատրաստել։

Մինչ այս, մինչ այն, Գաբրիել քսանը կ'անցներ. տերտերին աղջիկն ալ տասնհինգը մտած էր։ Ամուսնացումը որոշվեցավ ու կատարվեցավ։ Քանի մը ամիս ետքը Գաբրիելին հայրը կը մեռներ, երկու երեք տարի ետքն ալ տեր Թադեոսը։ Տիրացու Գաբրիելը՝ մանչ զավկի մըն ալ հայր՝ աներոջը հաջորդեց։

Հայոց հայրապետներեն Հուսիկը իր սրտին տիրած էր։ Անոր մեջ կը տեսներ իր նյութական ուժին վրա գաղափարին հաղթանակը։ Սերուկ եպիսկոպոս մը, ըստ իր երևակայածին միամինակ, առանց զենքի

գիմադրած էր կայսրերու և թագավորներու։ Տիրացուին համար Պոլսո սուլթանը Դիոկղետիանոսին կը նմաներ, ու ամեն եկեղեցական ալ Հուսիկ մը կրնար հանդիսանալ։ Այդ սերեն ու գաղափարեն մղված, Հուսիկ անունով քահանայանալ փափագեցավ։

***

Նորընծային քարոզներուն համբավը տարածվեցավ շրջակաները։ Աղեկ եղանակին թե՛ մոտիկ գեղերեն, թե՛ քաղաքեն ժողովուրդը տեր Հուսիկը լսելու կուգար։ Բազմությունը կը հավաքվեր գերեզմանատունը երկյուղած լռությամբ մտիկ ընելով իր սրտին խոսող պարզուկ լեզուն։ Արշամ միշտ ունկնդիրներուն մեջ էր, կը սիրեր ու կը հարգեր տեր Հուսիկը, որուն ինքզինքը հոգևոր ու մտավոր ծնողքը համարելու իրավունքը ուներ։ Մտերիմներ էին։ Օր մը վարժապետը տերտիրոջ դիտողություն ըրավ, թե քարոզներուն Ավետարանեն բնաբան չէր դներ։ Միշտ Հին Կտակարանը Գործ Առաքելոցը կամ ազգային սուրբերը կը ներշընչեին զինքը։

— Հին Կտակարանն ալ Սուրբ գիրք չէ՞,— հարցուց տերտերը ժըպտելով։

— Անանկ է, Սուրբ գիրք է, բայց Ավետարան ալ շատ անուշ է,— պատասխանեց վարժապետը։

Տեր Հուսիկ քանի մը րոպե վարանումե հետո, ըսավ.

— Ձե՞ս վախնար որ շատ անուշությունը մեր ժողովուրդը մեղկացնե։

Դիտողությունը նոր էր։ Արշամ սկսավ մտածել։

— Կը տեսնես, եղբայրս,— շարունակեց տերտերը,— որ մեր արորները վարողները եզներ են։ Մեզի կյանք տվող ցորենին ան պտըտիկ հատիկները ունենալու համար խոշոր-խոշոր, ուժով եզներ պետք են։ Գառնուկով արտ կրնա՞նք հերկել։

— Անշուշտ ոչ։

— Մեր ազգին բարոյական կյանքն ալատ դաշտերուն կը նմանի. մանավանդ որ խոպանացյալ անմշակ է.— ու հիմակ տրամ հող դարձած է։

— Գառնուկին քաշած արորովը չենք կրնար հոն ակոս բանալ և սերմնացանք ընել։

Արշամ ձախ ձեռքին մատներովը իր պզտիկ մորուքը սկսավ արագ-

արագ քաշկռտել։ Տէրտէրը վերջն ո՞ւր պիտի բերէր։ Սա կոշտ գեղացիին մէջ նոր մարդ մը երևան կուգար, իր մտքէն չանցած։

Տէր Հուսիկ հանձնապաստան մը շըլլալուն, մեծ զոհունակութիւն պիտի զգար, եթէ մտածութիւններուն վաւերացումը իր վարժապետէն լսէր։ Միտքը ամփոփելով, դավանանքը կարճառօտ բանաձևեց։

— Քրիստոսը,— ըսավ,— իբր զաւն Աստծո կը ներկայացնենք։ Գառնուկը կը սիրենք, կը փայփայենք, բայց առանց իրեն ալ կրնանք ապրիլ։ Իսկ կյանքերնիս եզեն է, վասնզի ուժովն ա՛ն է։

Ու երկինք նայելով, հարեց։

— Ուժովը մեկալն է։

Արշամ ալ ինքնաշարժմամբ վեր նայեցավ, իբր թե ինքն ալ բան մը տեսնել հավտար. ու բան մը չգտնելով հարցուց.

— Մեկա՞լը ո՞վ է։

— Եհովան,— եղավ պատասխանը։

Տէրտէրը իր գաղափարը պարզեց։

— Ես շատ մտածելով՝ համոզվեր եմ, որ,— ըսավ,— մեր ազգին համար տեր Եհովայեն հովանավորութիւնը պետք է։ Եգիպտացիներուն ձեռքեն իր ժողովուրդը փրկողն ան եղավ։ Մենք ալ Փարավոն ունինք մեր գլխուն վրա, մենք ալ անհավատներուն գերին ենք։ Եհովային խրատներուն մտիկ ընելով պիտի ազատինք։

Արշամին երեսը կ՚այլակերպեր, աչքերուն մեջ փայլ մը կը շողար, որմեն տերտերը ազդվեցավ. ու քաջալերված՝ իր տեսութիւնները ավելի պարզեց։ Տէր Եհովան իր ժողովուրդը տանջողին գլխուն ամեն փորձանք կը բերեր։ Եգիպտացիներուն զավակներն ալ սպաննել տվավ, անոնց ոսկեղեններն ու արծաթեղեններն ալ իսրայելացիներուն հալալ ընել տվավ։

Այս հիշատակներեն բորբոքված, տերտերը զայրույթի թեթև շեշտով մը աղաղակեց։

— Հիմակ, օրհնած, դո՛ւն ըսե, ես ժողովրդիս ինտո՞ր խրատ տամ, որ բաճկոնակդ առնողին, հանե շապիկդ ալ տուր։ Ատ նզովյալ անհավատները շապիկնիս իրենք ձեռքովնին կը քաշեն կը հանեն, մեր հանել տալուն չեն սպասեր։ Ելլեմ ժողովրդին՝ «մո՛րթդ ալ տուր» պատվիրե՞մ։ Արդեն ա՛ն ալ կ՚առնեն։ Շիտակը, աստված թող մեղք չհամարի, իմ բերանս առաջ չ՚երթար ժամ եկողին խրատ տալ, որ մեկ երեսիդ զարնողին, մյուսդ ալ դարձուր։ Ատ շուները մեր քեֆին չեն սպասեր, որ աջ կամ ձախ երեսնուս զարնեն։ Աջի՛ն ալ կը զարնեն, ձախի՛ն ալ կը զարնեն, քիթերնո՛ւս ալ կը զարնեն, կռնակնո՛ւս ալ կը զարնեն,

սրտներո՛ւս ալ կը զարնեն։ Կը զարնե՛ն, կը զարնե՛ն, կը զարնե՛ն։ Ա՛լ տեղ մնա՞ց, որ դարձնենք, եղբայր, դո՛ւն ըսե։

Պոլսեցի վարժապետը զգացյալ լուռ կը մնար։ Աշակերտը հիմակ ինքն էր։ Տերտերը մահմեդականին ձեռքեն ոսկրոտի դարձած հայ գլուցին կը խորհրդանշեր։

— Ակն ընդ ակա՛ն, ատամն ընդ ատաման, ա՛ս է տեր Եհովային կամքը. և ես ալ ժողովրդիս ասանկ կը պատվիրեմ։ Ի՞նչ կ'ըսես, գեշ կ'ընեմ նե՝ շիտակը զրուցե,— հարցուց քահանան։

Վարժապետը՝ հուզված, երկու ձեռքովը տերտիրոջ աջը քաշեց համբուրեց։

✽✽✽

Աշնան երկուշաբթի առտու մը Արշամ հանկարծ գեղը եկավ։ Առջի օրը քարոզ լսելու համար հոն գտնված ըլլալուն, տերտերը զարմացավ այս հանկարծական վերադարձին։

— Խեր ըլլա,— հարցուց։

— Սարը երթանք,— պատասխանեց վարժապետը խորհրդավոր։

Մեկտեղ ճամփա ինկան։

Ա՛լ շատոնց ի վեր էր, որ տերտերը իր գրատունը Թաքստոցի մեջ ծածկելու պետք չուներ. մանավանդ որ գրաբար «Աստվածաշունչ» մըն ալ աշխարհաբարը փոխանակած էր։ Բայց սարը խորհրդավոր Քորեբն էր, ուր պատանի Գաբրիելը երազած, խորհած, ու մարդ և հայ եղած էր։ Հոն կ'երթար, մենակ կամ իրեններովը, ամեն անգամ, որ Եհովայեն ներշնչվելու պետքը կը զգացվեր։ Ատ օրն ալ գացին սարի կատարը հանգչեցան, աշնանային հեշտ արևով արբշիռ։

— Երեսեդ կը տեսնվի, որ հրճվանքի մեջ ես։ Ուրախ լուրեր ունենալու ես,— հարցուց տերտերը։

Վարժապետը ծոցեն ծրար մը հանեց, թուղթի մը մեջ փաթթված, ու խնդալով երկնցուց տերտերին, որ

— Ի՞նչ է,— հարցուց։

— Բա՛ց, տե՛ս,— ըսավ։

Բացավ։ Լրագիրներ էին, մեջեն ծալլված։ Պոլսո թերթերը կճանչնար. ասո՛նց ձևն ու տառերը իրեն անծանոթ էին։

— Դարձո՛ւր, մեջը դարձո՛ւր,— ըսավ վարժապետը անհամբեր։

Դարձուց կարդաց, ու զարմանքով դիմացինին երեսը նայեցավ։

— Պոլիս ասանկ բանե՞ր կը հրատարակվին,— հարցուց ապշած։

— Պոլիս չեն հրատարակվիր. Եվրոպա։ Ուշադիր նայե։

«Արմենիա»-ին առաջին թիվերն էին։

Տերտերը սկսավ բարձրաձայն կարդալ, արագ-արագ լափելով։ Ու վարժապետը, որ զանոնք քանի մը անգամ կարդացած էր, հիմակ նորեն հափշտակված մտիկ կ'ըներ բարձրաձայն ընթերցումը։ «Պատերազմի շեփո՜ր. մարտորոտ գոռո՜ւմ» գոչելով ընթերցումը հաճախ կ'ընդհատեր։

Տեր Հուսիկ թեև ինքզինքը կը զսպեր, բայց վարժապետեն ոչ նվազ հափշտակված կ'երևնար։ Այդ րոպեին իր աչքերուն առջևեն կ'անցնեին ուրվականներն հայ հերոսներու, Եղիշեեն մինչև Րաֆֆի։

— Ուրեմն, ա՜լ գործի ժամը հնչած է,— հարցուց։

— Հնչած է, հնչած է,— պոռաց վարժապետը, խանդավառ հոսհասությամբ։ Ու «Արմենիա» մը առնելով համբուրեց զայն, տերտերին ալ համբուրել տվավ։ Եվ օդին մեջ բարձրացնելով.

— Ահա՜ դրոշնիս,— գոչեց։

— Ու զինվո՞րը, ու զե՞նքը, ո՞ւր են,— հարցուց տերտերը զգացյալ ձայնով։

Վարժապետը պաղած մնաց։

Տեր Հուսիկ ժայռի մը կռթնած կեցավ, համրիչը հանեց, կը քաշեր ու կը մտածեր, մերթ երկինքը, մերթ շուրջը դիտելով։ Արշամ ճակատը շփշփելով կ'երթար կուգար։ Քառորդ ժամու մը մտածկոտ լռութենե հետո.

— Բարեկա՜մս,— ըսավ տերտերը մեղմաձայն,— ժողովուրդը պատրաստենք։ Դրոշին տակ՝ բանակ, շեփորի գոռումին՝ զենք պետք է։

Ու պարզեց երկար ատենե ի վեր հղացած խորհուրդները. «ապաշխարանքի ցանձանակի մը»։ «Ապաշխարանքի աղոթքներու» հաստատման ծրագիրները վարժապետին հավանությանը ենթարկեց։ Երիտասարդին պատասխանը տերտերոջ ճակտին տաք համբույր մը եղավ։ Քանի մը շաբաթ ետքը Արշամ իր ամբողջ մեկ ամսականը ու տեր Հուսիկ հունձքին վրայեն ինչ որ կը մնար «Արմենիայի» կը հասցնեին խանդավառ նամակով մը։

Տարի մը հետո, երբ ապաշխարանքի ցանձանակին արդյունքովը առաջին հրացանը գնվեցավ, տերտերը այս անգամ վարժապետը սարը հրավիրեց, թերթերն ալ մեկտեղ բերել խնդրելով։

— Դրոշդ պարզե՜ նայիմ,— ըսավ։

«Արմենիան» օդին մեջ սավառնեցավ գավազանի մը ծայրեն։ Տերտերը հրացանը վեր առավ ու

— Այս լեռները,— աղաղակեց,— շա՜տ լսեցին հայ մայրերու լացերը...

Արշամ մեկէնիմէկ տրտմաթախիծ ձայնով սկսավ գեղգեղել.

Դու զո՞վ խնդրես, մայր իմ անուշ—
Ու տերտերը՝
Ե՜կ, մի՛ գողար, մոտեցիր հոս—

շարունակեց։ Եվ ա՜յսպես լալագին մեյմեկ տող փսփսացին։ Եվ հանկարծ երկուքը միասին որոտացին.

Թրքաց մայրեր թող լան ու դուն—
Ուրախ լուրեր տար ի Ջեյթուն։

Եվ առաջին գնդակը սուրաց.

— Թո՜ղ գնդակը սակե ետքը Թրքաց մայրերը լացնե։

Վարժապետը հրացանը առավ և երկրորդ գնդակն ինքը թողուց։

Տերտերը՝ հրացանը ուսը, վարժապետը՝ «Արմենիա»-ն ձեռքը— մըտքին ու բազուկին միության խորհրդանշանը— սարեն վար կ՚իջնեին հոգվով ցլապինդ, մարմնով ցլապինդ։ Ծամփան տեր Հուսիկ հիշեցուց այն օրը ուր գող կատվի մը պես վախկոտ այդ միևնույն սարն ելած էր, հոն իր գրքերը թաքցնելու համար։ Եվ հիմա՞կ

— Ա՜խ, ես քեզի մատաղ սո՜ւրբ Մեսրոպս,— կ՚ըսեր,— եթե աս գրքերը դուն մեզի պարգևած չըլլայիր, մենք ի՞նչ պիտի ըլլայինք։

Կը հավատար գրքին հրաշագործությանը։ Անիկա իր զորությունը ցույց տված էր։ Պահ մը առաջ ո՞վ էր գնդակ արձակողը։ Գիրքն էր, որ հրացանը իր ձեռքն էր դրած։ Գեղին. գզրոցեն զորանոցը։

Տեր Հուսիկ, որ դեռ տիրացու եղածատենը արդեն տղաքը գլուխը ժողված, անոնց կարդալ կը սորվեցներ, հիմակ ուզեց դպրոց ալ հիմնել։ Շնորհիվ, մինչև այն ատեն տված դասերուն, գեղին մեջ պատրաստված էր նախնական կրթություն ստացած նոր սերունդ մը։ Դպրոցի շինության համար իր հույսը նախևառաջ աշակերտներուն վրա դրավ։ Նաև կը հուսար, թե իր վայելած վարկը ամեն դժվարություն պիտի հարթեր։ Օր մը ժողովուրդը հավաքեց հորդորներ կարդաց, որպեսզի ամենուն աշխատությամբը դպրոցը ձրիաբար շինվի։ Ամենքն ալ ոգևորվեցան։ Տերտերը նույն րոպեին իսկ ձեռք զարկավ։ Բազմությունը ետին ձգած լեռը ելավ։ Առաջին մեծ քարը, որուն հանդիպեցավ, ուսը նետեց։

— Ձեզ տեսնեմ,— ըսավ ժողովրդին,— Տրդատ թագավորնիս ալ մեր սուրբ Էջմիածնի հիմնարկության քարերը ուսը շալկած տարավ։ Սուրբ Թագավորին ըրածը մենք ինչո՞ւ չընենք։

Գեղը քանի մը ամիս իրարանցումի մեջ էր։ Վարպետ մը ու քանի

մը բանվոր, որոնք Պոլիս շենքերու շինության աշխատած էին, քաղքեն եկան ու հոգիներուն համար գործին գլուխը անցան։ Երկու երեք ամսվան մեջ երկու փոքր, բայց գեղեցիկ տեսքով դպրոց բարձրացան։ Մեկը՝ սուրբ Մեսրոպի, մյուսը՝ սրբուհի Հռիփսիմեի անուններուն նվիրված։ Տերտերը ինքը կը դասախոսեր, նախկին աշակերտներուն աջակցությամբը։ Երեցկինն ալ, ամուսինեն բավական բան սորված ըլլալով, աղջիկներուն դպրոցը կը հոգար։

1889 թվականը հասավ։ Տոմուզ գյուղը կրնար բարեբաստիկ համարվիլ։ Նախակրթությունը տարածված, հանրային առողջությունը զգալապես հառաջացած, կառավարական հարստահարությունները չափավորված, ժողովուրդը զինված, ահա ինչ որ հողին զավակը ըրած էր։ Հին գեղացիներեն մեկը՝ բարի մարդ մը՝ օր մը ըսավ։

— Կ՚ըսեն, թե բույն բռնող թռչունն ալ կինն է, բույն ավրողն ալ, բայց մեր գեղին բույնը շինողը մեր տերտերն է։ Աստված չընե, եթե վախճանի, ան ատեն բունավեր պիտի մնանք։

Գ

Մուսա Պեյին դատապարտությունը ամբողջ Հայաստանի հետ ցնցեց տեր Հուսիկի գեղն ալ։ Արշամ կը կարծեր որ Թուրքիո կառավարությունը այս առիթեն օգուտ կքաղեր իր վարկը աշխարհի աչքին բարձրացնելու համար։ Քյուրտը օրինավորապես պիտի պատժվեր, և Թուրքիա քաղաքակրթության ճամփուն մեջ մտնելով՝ բարեկարգության թվականը պիտի ողջուներ։ Տերտերը վարժապետին կատարելապես համամիտ չէր։ Խելքը տեղ չէր բներ, որ մահմեդական կառավարությունը ինչպես կրնար մահմեդական մը պատժել, անիկա քրիստոնյա մը սպաննած ըլլալուն համար։ «Աշխարքին վերջը եկած ըլլալու է»,— կ՚ըսեր։

Բայց մյուս կողմեն ալ չէր կարող ըմբռնել, թե թուրք կառավարությունը կրնար համարձակիլ Եվրոպայի վրա խնդալ հրապարակային դատաստանի մը մեջ անպատիժ արձակելով մեծ ոճրագործ մը։ Անշուշտ պատրիարքարանը Մուսային հանցապարտության ապացույցները ունենալով էր, որ հրապարակային դատաստանի պահանջումը ըրած էր։ «Դանակ զարնված սրտին արյունը չ՚եըլլեր» վիճակին մեջ ինկավ այն իրիկունը, որ Արշամը Պոլսո վերջին թերթերը իրեն բերելով, Մուսա Պեյին անպարտ արձակումը հաղորդեց։

— Ասոր տաճիկները աչըգ ֆերման կ՚ըսեն,— մրմռաց տերտերը, որուն երեսը սև ու կանաչ դարձեր էր։

— Բաց ֆերմա՜ն,— պոռաց ակռաները սեղմելով։ Սուլթանը աշխարհքի առջև տաճիկներուն ու քուրտերուն արտոնություն կուտա, որ քրիստոնյաները ուզածնուն պես ջարդեն, կոտրեն, թալլեն։ Հոտը պիտի ելլե, կ՚ըսեմ քեզ։

Արշամ, որ դեմ դեղին կտրած էր, բան մը չկրցավ պատասխանել։

Քանի մը ամիս ետքը. 1891-ի հունիսին Կարնո 1895-ի կոտորածներուն նախատոնակը կը կատարվեր։

— Սկսավ, պարոն Արշամ, սկսավ,— աղաղակեց տերտերը։

Վարժապետը գլուխը երկու ձեռքերուն մեջ առած, նստած կը մրտմրտար։

— Սիբելիս, մոմտալով հիվանդ չենք կրնար աղեկցնել,— ըսավ տերտերը։

— Ի՜նչ ընենք, ի՜նչ ընենք,— կը հեծեր վարժապետը։

«Յաստուծո ոչ երկնչիմ և ի մարդկանե ոչ ամաչեմը» ասոնց համար ըսված է, հայտարարեց տերտերը։ Աստուծմե չեն վախնար, ան գիտենք. անհավատ են, բայց Եվրոպայե՜ն ալ չեն ամչնար եղեր։ Կը տեսնե՞ս, պարոն Արշամ, ո՞ւր մնաց ան քու Պեռլինիդ դաշնագիրը, ո՞ւր է 61-րդ հոդվածդ, ո՞ւր է պետություններուդ միջամտությունը։ Ուր է, ո՞ւր է։

— Ի՞նչ ընենք, տերտեր, ի՞նչ ընենք։

— Առսզնանք։ Դատավորը անհրես կնոջ ձեռքեն օձիքը թոթվեց, «աման» ըսավ ու անոր ուզածը ըրավ։ Պարոն Արշամ, դուն մեյ մը Պոլիս երթալու ես։ Գնա՜ նայե կարասին մեջ բան մը կա՞։

Հինգ տարվան մեջ արտասահմանեն նորանոր թերթեր եկած էին։ Գյուղացի տերտերը, երբ թերթի մը մեջ կարդաց ո՜չ միայն Թուրքիան, այլև ուրիշ պետություններ ալ Հայոց ձեռքով կործանելու ծրագիրը, վարժապետին խոստովանեցավ, որ մտմտուքը գինքը աանել կը սկսի։

— Պարոն Արշամ,— ըսավ,— շատ կը վախնամ, որ գուցե այս ամենուն վրան կա, տակը չկա։ Խե՞նթ են, ի՞նչ են ասոնք։ Մեծ քար վերցնողը չի կրնար նետել։ Աս մեր աղբրտանքը շատ-շատ կը պոռան և ումո՜վ, վախնամ թե «դատարկ կարասը զորավոր ձայն կը հանե» ըսվածը ըլլա։

Վարժապետը աշխատած էր տերտերոջ վախը փարատել քաղաքագիտական տեսություններով։ Կասկածոտ քահանան ալ հիմակ կ՚ուզեր, որ Արշամը անձամբ Պոլիս երթալով իրական կացության վրա ճշգրիտ գաղափար կազմեր։

Արձակուրդի ատենն էր. վարժապետը անմիջապես ճամփա ելավ։ Պոլիս հասած չհասած՝ հոնկե կրակոտ նամակ մը հասցուց Տոմուզ գեղ։ Ընկերություններ կազմված էին, Կովկասեն կտրիճ երիտասարդներ

եկած, Ռուսիո հայերը. ոտքի վրա, Տաճկաստանի հայոց համար Եվրոպայի հայերը կը գործեին։ Եվ վարժապետը տերտերը կը ստիպեր անմիջապես Պոլիս գալ։ «Բանե՞ր պիտի ըլլային, բանե՞ր»։

Տեր Հուսիկ ինքն ալ արդեն այս տեսակ լուրեր ուներ Պոլիս գտնըվող իր աշակերտներեն։ Անոնք հոն «ընկերություն» կազմած էին. և ինքը Արշամն անոնց հանձնարարած էր։ Վարժապետին նամակեն մակաբերեց, թե ամենքը մեկտեղ կը գործեին։ Պոլիս երթալու հարկը ստիպողական երևցավ։ «Ժամուն պարտքը վճարելու հանգանակության մը» համար առաջնորդարանեն հանձնարարագիր առնելով անմիջապես մեկնեցավ։

Սև ծովուն վրա հյուսիսային քամին այդ շաբաթ օրը ահեղորեն կը փչեր։ Շոգենավը չկրցավ կեսօրին նեղուց հասնիլ, իրիկուն արևը մտած պահուն— ըստ Թրքաց՝ 12-ին Վոսփոր մտավ։ Տեր Հուսիկ գիշերը շոգենավն անցուց։ Առտուն նավակ մը նստելով մաքսատուն ելավ։ Մեկ երկու բեռնակիր եկան ձեռքը պագեն։ Խնդրեց Պատրիարքարանին ճամփան իրեն ցույց տալ։ Նախ ազգին պաշտոնատունը պիտի ներկայանար։

— Նա՛, կ՚երթան, անոնց հետ գնա՛,— ըսավ բեռնակիր մը։

Հայաստանցի բեռնակիրներ խումբ-խումբ եղած Մայր եկեղեցին կ՚երթային։ Տերտերն մահիճն ու ղուրճը մաքսատան հայերուն քով թողուց ու գացողներուն ընկերացավ. չորս կողմը դիտելով կը քալեր ապշած, կսուրային բաց կառքեր, որոնց մեջ բազմեր էին ոսկեճամուկ զգեստով Թուրքեր։ Ազգային նախանձը սրտեն «ա՛խ» մը խլեց։ Իր հետաքըրքիր հարցումներուն պատասխանեցին, թե Պոլիս ամեն ատեն այսպես իրարանցումի մեջ չէր, և ոչ ալ տաճիկները միշտ այսպես փառահեղ։ Այդ օրը Ղուրպան պայրամը ըլլալուն, մայրաքաղաքը բացառիկ հանդիսավորությամբ կը հրճվեր։

— Նա՛, Մայր եկեղեցին ու Պատրիարքարանը,— ըսին բեռնակիրները, երբ նեղ փողոցի մը բերանը հասան։

Փողոցն ու շրջակաները լեցուն էին հայերով։ Ժամ ու Պատրիարքարան մտնող ելլող խիստ շատ։ Հայաստանի տերտերը հիացած կը մնար։ Խորունկ ուրախություն զգաց։ Եթե տաճիկները փառահեղ կը թվեին, հայերն ալ կյանք մը կը ներկայացնեին։ Քիչ մը առաջվան կսկիծը փարատեցավ։

— Օ՜խ, օխ, աս ի՞նչ աղվոր բան է,— կ՚ըսեր ինքնիրենը։ Չորս կողմը կը նայեր՝ Արշամը կամ ուրիշ ծանոթ մը տեսնելու։ Ոչ ոք։ Խուռներամ ժողովուրդն, որ տաճարը կը մտներ, զինքն ալ քշեց ներս տարավ։ Խորանին վարագույրը փակ էր. սեղանին վրա շատ մը աշխարականներ կային։ Տերտերը բան մը չէր հասկնար։ Միթե Պոլսո եկեղեցի-

ներուն կարգ կանոններն ասո՞նք էին։ Մեկենիմեկ քար կտրած մնաց։ Սեղանին վրա գտնվողներեն մեկն ալ Արշամն էր։ Վարժապետը ֆեսը հանեց նետեց, ու բազուկները խաչաձև, սկսավ խոսիլ։ Տերտերը որոշակի չէր կրնար լսել անոր բոլոր ասածները, բայց ի միջի այլոց իմացավ.— Այսօր՝ Էրզրում, վաղը՝ Մուշ, հաջորդ օրը՝ Վան, ու ամբողջ Հայաստան։ Պիտի ջարդե՛ն, եղբա՛րք, պիտի ջարդե՛ն։ Հիմի՞ էլ լռենք։

«Հիմի՞ էլ լռենք»-ը ժայթքեցավ ժողովուրդին բերնեն, միաձույլ զանգվածի մը նման, մեկ թափով, ինչպես թնդանոթի բերնեն արձակված ռումբը։ Ու ռմբյունը ռմբյունին ետևեն։ Տաճարեն բակը, բակեն տաճարը կպայթեին շրջահարները. ու «Օն ի «Նըլտըզ» գոռումը կը թընդացներ եկեղեցին ու շրջափակը։ Դասեն մեծափառ մորուքով եկեղեցական մը դողդողալով առաջ կուգար խումբ մը երիտասարդներե պաշարված։ Ժողովուրդը ճամփա կը բանար։

— Աս ո՞վ է,— հարցուց տեր Հուսիկ քովինին։

— Պատրիարքն է, Պատրիարքն է,— պատասխանեց մարդը։

Ու տերտերը մեկ մըն ալ ի՞նչ տեսնե։ Արշամը Պատրիարքին ետևեն ընկերներով, որոնցմե երկուքն իր աշակերտներն։ Ձեռքերնին մեկ-մեկ շրջահար, մեկենիմեկ իրարու զարնվեցան վարժապետին, տերտերին, աշակերտներուն նայվածքները։ Աչքերնուն մեջ սեգ հրճվանքը փայլեցավ։ Տեր Հուսիկ ինքն ալ դուրս մղվեցավ ու իրեններուն ետևեն Պատրիարքարան ելավ։ Մտավ մեծ սրահը, աչքերը չորս կողմը ժուռ կ՚ածեր. տաճկական բան մը տեսավ։

— Աս ի՞նչ է,— հարցուց մոտը եղողներուն։

— Սուլթանին խրկած **քուրան** է,— ըսին։

Տերտիրոջ երեսը փայլեցավ։ Իր հին հառաչանքը կրկնեց. ընտո՞ր Հուսիկ հայրապետ մը չէր գտնված, որ զայն կտոր-կտոր ըներ։ Քիչ մնաց պիտի ցատկեր, զայն պատառ-պատառ պիտի բզկտեր։ Հայաստանցի տառապյալին արյունը կը բորբոքեր ի տես— Հայության տանը մեջ-նշանի մը, որ դարերե ի վեր հայ ցեղին մարտիրոսության արյունռուշտ վկան եղած էր։ Այս խոհերուն մեջ խորասուզյալ, քանի մը վայրկյան չկրցավ դիտել, թե չորսդին ինչ կը դառնար։ Հանկարծ սթափեցավ.

— **Քուրա՛ն, քուրա՛ն**,— կը գոռար ժողովուրդը, **քուրան** պատռեցին։

Տեր Հուսիկ աչքերը պատը տարավ. **քուրան** իր տեղը չէր։ Հայ ժողովրդին ոտքերուն տակ ճղակոտոր կը տապլտկեր մահմեդականության խորհրդանիշը։

— Ա՜խ, Հուսիկ, հայրապետ, հոգուտ մատաղ,— աղաղակեց տեր Հուսիկ, ինքն իրմեն ելած։

Ա՛լ կրնար մեռնիլ։ Փրկության օրը իր աչքերը տեսած էին։

Անկե ետքը ինչ եղավը չգիտցավ։ Արդեն երկու ժամե ի վեր չէր գիտեր՝ թե ուր էր, ինչ կ՚ըներ, ի՛նչ կ՚ըլլա՛ր։ Ինքզինքը դուրսը՝ փողոցը գտավ։ Ամենքը աներևույթացեր էին. Պատրիարք, Արշամ, աշակերտ, ո՛չ ոք կ՚երևնար, մոլեգնոտ, խռովախուժ բազմամբոխի մը մեջ կորսված էր։ Թուրք զորքերը վազնիվազ կուգային։ Երկու հայ, գլուխնին սվիններով չախչախված, աչքերուն առջև ինկան։ Ոստիկանները չորս կողմեն հայերը կը բռնեին և կը կապկպեին։ Մեկենիմեկ իր թևերեն ալ քաշքշեցին, կռնակին քանի մը բռունցք իջեցուցին, ու առանց բերանը բանալու ատեն ձգելու՝ առին տարան։ Մութ խուցի մեջ նետվեցավ, ո՞ւր էր, ի՞նչ եղավ, ի՞նչ պիտի ըլլար։ Իրիկունը դուռը բացվեցավ, հաց և ջուր տվին իրեն։ Անանկ մնաց։ Դուռը ոստիկան մը կայնած, ի հարկին զինքը դուրս կը հաներ ու ներս կը մտցներ։ Բերանը բացավ հարցումներ ընելու.

— Սուս օլ կյավուր *մը լսեց։ Լռեց։*

Երեք օր ետքը՝ ցորեկ մը զինքն առին տարան։ Մեծ սրահ մը մտավ։ Համազգեստով թուրքերը նստած էին. սպարապետության դատը, զինվորական ատյանին առջև էր։ Անունը, մականունը ու որտեղացի ըլլալը հարցուցին։ Երբ «Տօմուզ քեօյլյու» պատասխանեց, դատավորներեն մեկը տեղեն քիչ մը վեր բարձրացավ, ուշադիր դիտեց, խնդաց և նախագահին ըսավ.

— Աս անոնցմեն ըլլալու չէ. ես կը ճանչնամ։

Այն հայրուրապետն էր, որ օր մը զինվորներով տեր Հուսիկին գեղեն անցնելուն, իրենց խոզ հրամցնող ռեսը տփած էր. ու տերտերին տունը երթալով ճաշած էր հանդերձ «ատամնավարձքով»։ Մարդը պաշտոնին մեջ բարձրանալով Պոլիս եկած էր. ու հիմա ալ կ՚անդամակցեր հայերը դատող զինվորական ատյանին։ Հիշեց անցյալը, և ուզեց իր հին ծանոթին համար բարեխոսել։ Տերտերն ալ զայն ճանչցավ և կահեց, որ ի նպաստ իրեն բան մը կ՚ըներ։ Նախագահը տոմուզգեղցիին խոժոռ դեմքով հարցուց, թե որքան ատենե ի վեր Պոլիս կը գտնվեր։ Երբ գեղացին Նեմուճուղ կելտում պատասխանեց, դատավորները սկսան խնդալ։ Թեզքերեն ուզեցին։ Տեսան, թե արդարև հուլիս 15-ի կիրակի առտուն Պոլիս մտած էր. Հետևաբար չէր կրնար նույն օրվան շարժումը կազմակերպողներեն ըլլալ։ Պատրիարքարան գտնված ըլլալուն պարագային վրա տեղեկություն առնելե հետո, տեր Հուսիկը անպարտ արձակեցին։

Տերտերը Պատրիարքարան գնաց։ Գտավ իր մեկ քանի աշակերտներն ու Արշամը, որոնք կարող եղած էին ճողոպրիլ։ Խորհրդակցություններ ըրին։ Համաձայնեցան, որ տեր Հուսիկ ատեն մը Պոլիս մնա, կազմակերպության գործին համար, իսկ վարժապետը երկիր վերադառնա, հոն գործելու ծրագրով։

Օրթագեղի եկեղեցիին պանդուխտ քահանան մեկնած էր այդ օրերը։ Տեր Հուսիկ պատրիարքարանեն հանձնարարագրով մը այդ ժամը խրկվեցավ։ Իր բախտեն, առաջին սպասավորությունը եկեղեցիին տոնախմբության օրը ըրավ։ Հուլիս 15-ի օրվան տպավորության ներքև միամիտ պարզությամբ որոտաց «ազատություն եղբարց մերոցը», որով թաղին միահեծան իշխան Հայրապետ էֆենտիին հետ օգոստոս՝ 19-ի կիրակի օրվան ընդհարումը ունեցավ։

Դ

Եկեղեցվույն տոնախմբության հաջորդ շաբաթը ժամարարության տասնհինգօրյա շրջանը տեր Հուսիկինն էր։ Կիրակի առտու էֆենտի ու ազնվաշուք ամենքն ալ պահարանը իրենց տեղվանքը ըստ սովորականին բռնած էին։ Պատարագը առանց միջադեպի կը վերջանար։ «Ազատություն եղբարց մերոցը» անլսելի անցած էր սպասավորող քահանային հազալը բռնած ըլլալով ճիշտ այն րոպեին, երբ գերեվարյալ եղբայրներու համար առ Աստված պաղատանք պիտի ուղարկեր։ «Կեցուին»՝ երբ տաճարը գրեթե պարպվեցավ, էֆենտին դասը գնաց, պատարագավորին համար բարյացակամ տրամադրություններով։ Կոչունքին օրը սեղանին վրա անդրադարձած էր ղարիպին բացակայությունը։ Անմիջապես ժամը մարդ խրկած էր զանիկա բերել տալու համար, բայց չէին գտած։ Խիղճ ըրավ աղքատ քահանայի մը եղած այս զրկանքին համար։ Նախորդ կիրակին, բարկությունը իջնելե հետո մտածած էր, թե գեղացի տերտերը չարակամ մեկը ըլլալու չէր. երկրեն նոր եկած միամիտ մը. Պոլսո, մանավանդ Օրթագեղի քաղաքականության անտեղյակ։ Անցյալ շաբթվան չարիքը այս կիրակի դարմանել կ՚ուզեր. ուստի, փոխանակ ամեն կիրակի օրվան սովորական մեկ ոսկիին, գրպանեն երկու ոսկի ժամուց հանեց և ափը պահեց։

Ժամարարը ձախակողմյան խորանին առջևը ատրճաններեն համբաքայլ վար կ՚իջներ «Որ օրհնես զայնոսիկը» արտասանելով հատիկ-հատիկ, ձայնը, հոգնած։ Բայց այդ գրեթե մարմրկող ձայնը մեկենիմեկ հոգի առավ։ Էֆենտիին ականջներուն գնդակի սուլումի պես բան մը զարկավ. «Թագավորաց քրիստոնեի՛ց և զինվորյա՛լ մանկանց նոցա»։

Մեծ աղան շլմորեցավ, գավթին դուռնեն արագաքայլ դուրս ելավ, խռովյալ, երկու ոսկին ափը, և շունչը խորհրդարանը առավ, գոչելով.

— Աս ի՞նչ փորձանք էր, որ գլխուս եկավ։

Գանձապետ, հաշվակալ, ատենադպիր, որոնք ստակ համրելու, հաշիվ նայելու, գիր գրելու վրա էին, հանկարծակիի եկած գործերնին վար ձգեցին։

— Ի՞նչ կա, էֆենտի, ան ճերիֆը նորեն խա՞լք մը ըրավ,— կը հարցնեին։

— Թո՛ղ տվեք, հոգինիդ սիրեք։ Ժամկո՛չ։

Ժամկոչը եկավ, բարև ընկած կայնեցավ։

Սա ղարիպը ելածին պես, յախայեն բռնե հոս բեր, եղավ էֆենտիական հրամանը։

Ու մինչև տերտերին գալը, կրակ կտրած էֆենտին խորհրդարանը վեր վար պտտելով, կը պոռար.

— Փորձա՞նք, փորձա՞նք. վա՛յ, ճեռտյո՞ւկ, վա՛յ։ Ամենքս ալ պելայի պիտի հանդիպինք։ Հիմա ճուռճալ եղանք։ Ան շունը հոն էր։

«Ան շունը» ակնարկություն մըն էր անձի մը, որուն վրա լրտեսության կասկածը կը ծանրանար։

Տերտերը եկավ։ Անցյալ շաբթվան միևնույն խումբը, բայց ոչ այն պատկառազդեցիկ հանդիսավոր զումարումը։ Ո՛րը ոտքի վրա, ո՛րը նստած, էֆենտին շրջուն։ Տերտերը եպիսկոպոսին առջև իր խոնարհությունը ըրավ, բայց ժամանակ չտրվեցավ իրեն, որ նստելու հրաման տանի։

— Տերտե՛ր, հիմակ հիմակ յաքաղդ պիտի առնես, հոսկե տեֆ պիտի ըլլաս, իմացա՞ր,— հրամայեց էֆենտին։

Եպիսկոպոսն, որ «կեցո»-ին դուրս ելած էր, դարձյալ ինչ պատահած ըլլալը չհասկցավ ու տեր Հուսիկ արհամարհական շեշտով մը հարցուց.

— Նորեն ի՞նչ կա, նայիմ։

— Ի՞նչ կա մի, ի՞նչ կա մի։ Ան ինչ «որ օրհնես» էր, հե՞։

— Մեր «որ օրհնես»-ն է,— պատասխանեց տերտերը անհամբեր հանդարտությամբ։

— Ան քո՛ւ «որ օրհնես»-ն է, ատեղինը չէ՛,— աղաղակեց էֆենտին։ Հոս Օրթագեղի «որ օրհնես»-ը կա, ան չըսողը «որ անիծես» կ'ըլլա։ Հասկցա՞ր։

— Չէ՛, չհասկցա,— վրա բերավ տեր Հուսիկ նույն հանդարտությամբ։ Ձեր «որ օրհնե՞սը» որն է։ Իմ գիտցածս Հայաստանյաց եկեղեցվո «որ օրհնեսը» մեկ հատ է և ոչ թե երկուք։

— Տերտե՛ր, տերտե՛ր,— գոչեց էֆենտին,— խոսք մը կա, կ'ըսեն,— «Հինտիստանը ասղան ծակովը սեյիր կ'ընեն»։ Ասեղին ան պզտիկ ծակվեն Հնդկաստանը կը նային։ Հիմակ ալ մեզի անանկ բարակեն կը նային կոր։ Ան Վարդանանց տոնը չէ. ան տոնն նայո՞ղը ով էր, փընտըռո՞ղը ով։

— Ա՛յլ դարք, ա՛յլ բարք,— ձայնեց անդիէն՝ Հատիկ-Հատիկ, ցուցամատը վերամբարձ. Օգսենտիոս էֆենտին՝ Հայկաբանության-ոսկեդարյանին պաշտոնական ներկայացուցիչը։

— Աֆերի՛մ, Օգսենտիոս էֆենտի,— գոչեց Հայրապետ էֆենտին fեֆով մը։ Անանկ է յա՛, անանկ է յա՛. այլ դարք, այլ բարք։ Սողոմոն իմաստունը աղե՛կ մարգարեացեր է։

— Բայց, էֆենտի, ներեցեք. «որ օրհնեսը» ընտո՞ր կ'ըսեն,— Հարցուց եպիսկոպոսը։ Երկու «որ օրհնես» չկա, մեկը՝ Օրթագեղի Համար, մյուսը ամբողջ Հայաստանյայց եկեղեցվո Համար։ Մեր «որ օրհնեսը» մե՛կ է։

— Մեկ է, երկուք չէ, ես ալ ատ գիտեմ, սրբազան,— պատասխանեց էֆենտին,— բայց երկուք ընելու է, չէ նե մենք երկու կտոր կ'ըլլանք։

— Անանկ է յա՛, անանկ է յա՛,— կրկնեցին աշխարհականները միաձայն։

— Ամեն կիրակի «որ օրհնեսը» կ'ըսեին,— շարունակեց էֆենտին,— բայց մեկը ես չե՞մ, և ոչ իսկ ուշադիր էի, թե տակը ի՞նչ միտք բանի կա։ Աղոթք մըն էր, կամացուկ մը կ'ըսվեր և կը լըմըննար։ «Ասիկա՛ դուն անցյալ կիրակիին «ազատությունը» դարձուցիր։ «Որ օրհնես»-ը կամացուկ սկսելուդ. ես ալ քեզ կմեղքնայի կոր, որ շատ հոգներ ես, ձայնդ չ'ելլար։ Մեյ մըն ալ «թագավորաց քրիստոնեիցին» վրա անանկ մը զարկիր, որ մեկենիմեկ ցնցվեցա։ Ու ասիկա բավական չէր. «զինվորյալ մանկանցին» ձայն մը ձգեցիր, որ մի՛նչև Պեշիկթաշ հասավ։ Ա՛լ ասկե ետքը աս ժամուն մեջ «որ օրհնեսը» առաջինին պես պիտի չըսվի։ Եվ աս հրամանս ամենուն համար է։

— Է, ընտո՛ր պիտի ըսվի,— Հարցուց տեր Հուսիկ։

Հրահանգիչը անոր դառնալով, Հայտարարեց։

— «Որ օրհնես զայնոսիկը» ուզածիդ պես ըսե։ Աստվածն է հրեիցըն ալ, հեթանոսացն ալ։ Առաքյալը ասանկ կ'ըսե։ Բայց «Թագավորացը» եկա՞վ մի՝ քիչ մը հոգնություն կ'առնես։ Շունչ առ, ա՛ռ մեղք ես։ Մեյ մը հազա՛. ու կամացուկ մը «քրիստոնեիցը» կը զատես, «թագավորացեն»։ Կը հասկնա՞ս. ընտոր երկուք կ'ընեն։

— Ճիշտ է, էֆենտի, ճիշտ է, այդպես ընելու է,— պատգամեց անդիեն Օգսենտիոս էֆենտին, ցուցամատը միշտ վերամբարձ։ Վիեննայի

մեր վերապատվելի հարք ճիշտ այդպես են ըսած բազմալեզվյան «որ օրհնես զայնոսիկ»-ին մեջ. ստորակետ մը զետեղած են ընդ մեջ «Թագավորաց»-ին և «քրիստոնեիցին»։

— Ապրիս, Օգսենտիոս էֆենտի, ապրիս,— աղաղակեց սրբագրիչը։— Նայե՛, անոնք ընտոր խելացի են, ընտոր քաղաքագետ են։ Անոր համար է, որ գիրենք հանգիստ կը թողուն։

— Կեցցե՛ս, Օգսենտիոս էֆենտի, կեցցես,— ձայնեց աշխարհականներու ակումբը, ինքն իրմեն դուրս ելած։

Եպիսկոպոսը լուռ կը մնար։ Էֆենտին քաջալերված շարունակեց.

— «Զինվորյալ մանկանցին» հասա՞ր մի...

— Է, հասա,— ըսավ տերտերը հեգնորեն։

— Հոն հոռմըներուն խաչ հանելը կը դարձնես։

— Ես հոռոմ տեսած չունիմ, և ոչ ալ անոնց խաչ հանելնին գիտեմ,— պատասխանեց տերտերը ուսերը վեր թոթվելով։

Պզտիկ ազնվաշուք մը աթոռեն ելավ ու սկսավ աջեն ձախ երեսն ետևե ետև խաչակնքել չընդնշմարվելու չափ արագորեն։ Ժողովը կը խնդար։

— Իշտե հոռմըները ասանկ խաչ կհանեն,— կը ըսեր։

— Լփուտե՛, տերտեր, լփուտե՛,— շարունակեց էֆենտին։ «Զինվորյալ մանկանցը» լսվելու չէ։ Հայոց մեջ «զինվորյալ մանկունք» չկա՛, չ՚ըլլա՞ր։ «Ասոնց մանուկը որ զինվորյալ ըլլա, հապա մեծը ի՛նչ պիտի ըլլա» կ՚ըսեն ետքեն։ «Որ սուր առցե սրով անկցի» բերաններս ամուր-ամուր ձայնով «զինվորյալ» առնինք նե, ետքեն բերաննիս ալ «զինվորյալ»-ով կը գոցեն, հա՞։ Չլսվի, չլսվի։

— Անանկ է յա՛, անանկ է յա՛,— կրկնեց խմբերգը։

— Հայաստանցին ա՛լ չդիմացավ, ոտքի ելավ ու էֆենտիին երեսն ի վեր պոռաց.

— Էֆենտի, էֆենտի, ա՛լ չափը անցուցիր։ Կրոնականին մեջ եթե փոխելիք բան մը կա, հրահանգը Սրբազանեն գալու է և ոչ թե քենե, հասկցա՞ր։

Դիմադարձական այսպիսի դիտողություն մը՝ երսուն տարիե ի վեր բնավ չլսված՝ և որ բուռն հարված կուտար՝ էֆենտիին գերիշխանությանը, շվարեցուց ամենքը, նույնիսկ եպիսկոպոսը։ Ամեն աչք սրբազանին դարձան բոպեաբար։ Անիկա պատուհանեն դուրս կը նայեր, չլսելու զարնելով, բայց սրտեն զգացած գոհունակությունը դեմքին վրա կը ցոլար։

— Սրբազանը ե՞ս եմ, ե՛ս,— գոռաց էֆենտին։— Նորին վեհափառությունը նվաստս կը ճանչնա այս գեղին պատասխանատու։

— Հրամանքդ,— ըսավ տերտերը,— ձեռքը պնակներուն երկնցնելով,— մինակ ասոնց կը խառնվիս տաճարին մեջն ալ, շա՛տ-շա՛տ խսիրին մինտերներուն։ Լուսարարը քենե վեր է։ Անիկա աստիճան ունի։ Քահանաներուն հրահանգը տալը քու կարողութենեդ դուրս է...

Դեռ պիտի շարունակեր... բայց էֆենտին, բռունցքը սեղմած, վրան վազեց, մոլեգին պոռալով.

— Տո՛, տերտեր, ես քու մորուքդ թրա՛շ ընել կուտամ։

— Տո՛, Հայրապետ, ես ալ քու պեխերդ կը....

Էֆենտին պարզապես խենթացած էր։ Ազնվաշուքները հազիվ թե կրնային զինքը զսպել, թևերեն մտած։

— Վա՜յ, դուն ինծի «ծո՛» մի՞ ըսես։ Ես, նորին վեհափառության պաշտոնյան, ե՛ս պալայով պատված, դուն ինծի «ծո՛» մի՞։ Բերանդ պիտի չորցնեմ, լեզուդ կտրել տամ պիտի։

— Ու ե՜ս, պաշտոնյա բարձրելույն, ճակատս սուրբ մյուռոնով օծված, դուն ինծի «ծո՛» ըսես,— պատասխանեց Հայաստանցի տերտերը ծանր-ծանր, աջ բազուկը երկինք բարձրացնելով։

Խոր լռություն։

Ղարիպը, սրբազանին առջև խոնարհություն ընելով, խորխտաքայլ դուրս ելավ։

— Ժամկոչ,— կանչեց էֆենտին։

Ժամկոչը եկավ բարև բռնած կայնեցավ։

— Հիմա՛կ, հիմա՛կ,— հրամայեց էֆենտին,— արապա մը պիտ բռնես, ասոր յաթաղը մեջը դնես, ինքն ալ մեկտեղ, շիտակ Պատրիարքարան կը տանիս։ Ես վաղը կերթամ կը խոսեմ։

Ու ժամկոչին երկու մեճիտե տվավ։

* * *

Հինգշաբթի օրվան Պոլսո թերթերը «Ազգային լուրերու» մեջ հետևյալ տեղեկությունը կը հաղորդեին.

«Հուսիկ անուն քահանա մը, Տոմուզ գեղեն, որ առժամաբար Օրթագեղի եկեղեցին խրկված էր, հոն՝ իր գեղին անունը արդարացնող բնավորությամբը՝ թաղը տակնուվրա կ՚ըներ։ Վսեմ. Հայրապետ էֆենտին պետք եղած դիտողությունները Պատրիարքարանին հաղորդած ըլլալով, այն խառնակիչը, ըսենք չքահանան, երեկ բարսպաններու հըսկողությամբը Մախսուսեի շոգենավը դրվելով, իր երկիրը խրկվեցավ Սամսոնի ճամփով»։

Ե

Տեր Հուսիկ Ճամփվելեն շաբաթ մը ետքը, օր մը երբ Հայրապետ էֆենտին Գեշիկթաշի պահականոցին առջևեն կ'անցներ, Հասան փաշան զինքը ներս հրավիրեց։ Ըլլալով բերդաքաղաքին շրջապատը համարվող Գեշիկթաշ և Օրթագեղ թաղերուն միահեծան տեր և իշխանը, Օրթագեղին Մեծ աղային մտերիմ բարեկամն էր։ Սուրճ ու սիկար հրամցնելե հետո, փաշան խոսակցության միջոցին, իր գոհունակությունը Հայրապետ էֆենտիին հայտնեց, կասկածելի փափազ մը Ճամփած ըլլալուն համար։

— Ամա՞ն, փաշա էֆենտի, Ձեր վսեմության սխալ տեղեկություն հաղորդված ըլլալու է,— պատասխանեց Հայրապետ էֆենտին, դող ելլելու ձև առնելով։ Բան մը չկա։ Ատ փափազին ձայնը շատ հաստ էր, մենք ալ անուշ ձայն սիրելնուս, Պատրիարքարանեն ուրիշ քահանա մը խնդրեցինք։ Ամենը աս է։

— Աղե՜կ, աղե՜կ, ատանկ թող ըլլա,— պատասխանեց, քթին տակեն ժպտելով։ Դեմինը կը Ճանչնար։

Այս մանրադեպը ամբողջ մարդը կը պատկերացնե։ Այդ «հին հայու» տիպարը, ամեն անգամ թուրք փաշաներուն հետ հայոց «շարժումներու» մասին խոսած ատենը, կը ջանար հայ ազգը օսմանյան գահուն հավատարիմ և անձնվեր ցույց տալ։ Օր մը երբ ներքին գործերու նախարարը իր առջևը դրավ Եվրոպա հրատարակված հայերեն քանի մը թերթեր, որոնք Թուրքիո դեմ սպառնալիքներ կ'որոտային. հայ էֆենտին արհամարհական խնդրվածքով մը զանոնք պուտալայի գրածներ որակեց։ Եվ այս հավաստումին իբր ապացույց ավելցուց, որ, երբ ավազակները տուն մը պիտի մտնեն կողոպտելու, առաջուց սրճարանները չեն նստիր և ընելիքնին ամենուն առջև չեն պատմիր։— Ատ ալ ատանկ է,— պատասխանեց Թուլամորդ փաշան, որ հանգիստ մնալ կ'ուզեր։ Ու հրամայեց, որ ատանկ պոշ լրագիրները ա՛լ չթարգմանեն ու իրեն չբերեն։

Ակռաները կրճտելով Հուդա, Վասակ, Մեհրուժան՝ կ'անվաներ այն սարձրաստիճան հայերը, որոնք ազգին մեջ եղած չեղածը կը վազեն թուրք փաշաներուն ականջը հասցնելու, իբր թե իրենց հավատարմությունը ապացուցանելոու համար։ Երբ տան մը մեջ կրակ կը սկսի, կ'ըսեր, զայն մարել ուզողները վրան ջուր կը թափեն և ոչ թե յուղ։ Մեր լրատու էֆենտիներն ալ կրակին վրա եղ լեցնող են, վասնզի ազգին տունը յա[illegible]յի տալ կ'ուզեն։

Թուրքերուն հետ իր վարմունքին մեջ հավատարիմ ավանդապահն էր ազգային հին քաղաքականության։ «Կտրել չկրցած ձեռքդ պա՛գ ու Ճակտիդ դիր» կը քարոզեր։ Իսկ մտերիմներուն կամացուկ մը կ'ըսեր։

թե տասոնց ձեռքը կանկրենա պիտի ըլլա, ինքնիրենը պիտի իյնա, կըտրելու պէտք չկա։ Սպասենք համբերելով»։

Ներսես Պատրիարքը շատ անհամբեր կը գտներ։ Երբ անիկա եկավ Օրթագեղ բնակիլ, էֆենտին քիթը բերանը ծռմռկեց։ Իրավ է, որ Պատրիարքին Օրթագեղ մեծ տուն մը նվիրողը սուլթանը ինքն էր. «բայց, ըսավ էֆենտին իրեններուն, Նորին վեհափառությունը Օրթագեղցիներս անհունապես երախտապարտ պիտի ըներ, եթե սրբազան Պատրիարքնուս տուն մը Պեշիկթաշի մեջ նվիրած ըլլար»։ Նրբաբար հասկցնել կ՚ուզեր որ, սուլթանը Հայոց Պատրիարքն թեև անմիջապես հսկողության ներքև կ՚առներ, բայց կը զգուշանար իրեն շատ մոտերը բնակեցնելե։

Սան-Ստեֆանո ու Պերլին եղած դիմումներուն համար շա՜տ նեղացած էր։ «Կամուրջը չանցած, սատանային աչքը կը բանանք կոր» կը մռմռար։ Թուրքերուն հետ վարվողության համար իր մեկ սիրական առածն ալ այն էր թե «սատանային հետ եղբայր եղիր, մինչև կամուրջն անցնիլդ»։ Կամուրջն դեռ չէինք անցած լմնցած։

Զ

Պերլին գացող «պատգամավորներուն» վերադարձին ա՛լ չէր կրցած դիմանալ. Ներսես Պատրիարքին գնաց, «խելքը գլուխը բերել տալու համար»։ Երբ Հայկական խնդրին հայրը Եվրոպայի վրա լի հավատքով, խանդավառ կխոսեր, պահպանողական մարդն ալ սիկառը կամաց-կամաց քաշելով և աչքերը ծուխին թափառայած ելևէջներուն հառած, հեգնածպիտ ըսավ.

— Սրբազան, երբ սուլթան Մեճիտին օրովը խաթթը Շերիֆը կարդացվեցավ, Հակոբոս Պատրիարքնիս Մայր եկեղեցիին մեջ շատ մը բարեմաղթություններ ընելե և ժողովրդին մեծամեծ հույսեր տալե հետո աթոռեն ելավ ու քիչ մը ցած, բայց խորհրդավոր ձայնով մը ըսավ. «Ի վերայ այսր ամենայնի, օրհնեալ ժողովուրդ, թագաւորնիս, տ-ա-ճ-ի-կ է»։ Որ ունիցի ականջս լսելոյ լուիցե։ Թագավորնիս հիմակ ալ տաճիկ է, սրբազան, ատիկա մի՛ մոռնաք, և ըստ այնմ ազգը կառավարեցեք։

Ա՛լ անկե ետքը Պատրիարքարան չգնաց, և ժողովրդականության որևէ պաշտոն չընդունեց։ Զատկի և ծնունդի պաշտոնական այցելությունները կուտար միայն։ Երբ Ներսես Պատրիարք իր բնակությունը Օրթագեղ փոխադրեց, Հայրապետ էֆենտին քաղաքավարության համար «բարով ես եկեր» ի այցելության գնաց։ Պատրիարքը ցավահար սիրտով կը խոսեր։ Ազգին վիճակը առաջվընե ավելի ծանրացած էր, ու Եվրոպան ալ բան մը չէր ըներ։ Հայրապետ էֆենտին աչրիշ քանի մը այցելումն-

քու հետ ինքն ալ մտիկ ըրավ Պատրիարքին զանգատները։ Ներկաներեն յուրաքանչյուրը կարծիք մը կը հայտներ. ինքը դառնությամբ այնքան մի հիշեցուց.

— Ի վերա այսր ամենայնի, օրհնյալ ժողովուրդ, թագավորնիս... Մնացածը միտքերնիդ բերելու եք, սրբազան։

Թուրքերուն հետ ազգային ընդհանուր քաղաքական ուղղության մասին ինչ որ կը գործադրեր, նույնը և կը հանձնարարեր ամեն մեկ հայ անհատի, ամեն հայ հաստատության Թուրքերու հետ առանձին վարմունքի համար ալ։ Կրակ կտրեցավ, երբ իրիկուն մը «Արևելքի» մեջ կարդաց Պոլսո հայ եկեղեցիներեն յուրաքանչյուրին կալվածական սեփականություններուն առանձին-առանձին ցուցակները։ Անմիջապես գիշերով սպառավորը խրկեց և «Արևելք»-ի արտոնատերը, որ Օրթագեղ կը բնակեր, կանչեց։ «Ջորս զու պատվիրեցեր»-ը տվավ։ Մեծ Օրացքին տերը զարմացած կը մնար, թե ատանկ հրատարակութենե մը ազգին ի՛նչ վնաս կրնար ըլլալ։

— Ն, այ օղուլ, շուները. հոտ առնելու չեն,— ըսավ հին պահպանողականը։— Տաճիկները գիտնալու չեն, թե մենք ինչ ունինք, ինչ չունինք։ Աչք կը տնկեն, չեն քաշեր։ Մենք կյավուր ենք, հասկցա՞ր. աղեկ բաներ իրենց կը վայելե։ Մեր կնիկներուն երեսները ծածկելու ենք Անատոլի մեջ, չէ նե կ՚առնեն կը տանին. մեր տուները աչքե հեռու պահելու ենք. չէ նե կը քանդեն. վրանիս գլխնիս աղքատ երևնալու է, չէ նե կը կողոպտեն։ Մենք մինչև հիմա ատանկով ապրեր ենք. ու պետք է որ համբերենք, մինչև որ շան սատակը վերնա։ Հիմակ տաճիկներն ալ ձեր գրածները կարդալու ըլլան նե ի՞նչ պիտի ըսեն։ Մենք անոնց միշտ մեր աղքատ ժամերուն վրա կը խոսինք, դուք ելեր հարստության ցույց կուտաք։ Ջավակս,— ըսավ վերջացնելով,— ձեր մեջ խելքը գլուխը փորձառու մեկը չկա՞, որ այս բաները գիտնա։ «Մենծ չեղած տեղը կ՚երթան մենծ կարասին խորհուրդ կը հարցնեն», կ՚ըսեն։ Մեջերնիդ սանկ փորձառու մեկը առեք. հին խաֆա բռվածներեն։ Հին գինիին պես ասոնք ալ մախաղալ են։

✻✻✻

Այս տեսակցութենեն քանի մը ամիս վերջը Էվգաֆի պաշտոնատունը իրր մաճլյուլ գրավեց և վաճառեց Ղալաթիո Լուսավորիչ եկեղեցիին 1500 ոսկի արժողությամբ մեկ կալվածը, որ արձանագրված էր Լուսավորչի անվան, «Գրիգոր որդի Անակայ»։

— Սա Գրիգոր վելեալի Անակը քանի՞ հարյուր տարի կ՚ապրի,— հարցուցին էմվաֆեն, որուն մասնութիւն եղած էր։

Էֆենտին շոգենավին մեջ «Արևելք»-ի արտոնատիրոջը Հանդիպեկյան, զայրույթով ըսավ.

— Հիմակ տեսա՞ք, թե ինչ կ՚ըլլա եղեր։ Ասանկ մեր եկեղեցիներուն բոլոր կալվածները պիտի առնեն։ Վա՜յ քեզ քաղաք, որո գազեբանիդ մանուկ է։ Մենծ կարաս մը գտեք, մենծ կարաս մը։

Շոգենավը Գեշիկթաշեն դեպի Օրթագեղ եկած ատեն, երբեմն կը պատահեր, որ բարձրաստիճան թուրքեր իրեն հարցնեին, թե որո՞նց կպատկանեին այն գեղեցիկ տուները, որոնք Չրաղանի սուլթանական պալատին ետևը գտնվող բլրան վրա սկսած էին շինվիլ։ Հայրապետ Էֆենտին չգիտնալ ձևացնելով, տարակուսական պատասխաններ կուտար. «Պանքային մարդոցն են, կարծեմ Ֆրենկներու են» կ՚ըսեր, կը կմկմար «Ֆրենկներու են» արտասանած ատենը։ Սեփականատերերը թեև Պանք Օթոմանի պաշտոնյաներ կամ վաճառականներ, բայց հայեր էին։

Ինքն ալ իր բնակարանը շատ մեկուսացյալ տեղ մը՝ Տերե կոչված ձորին մեջ շինել տված էր։ Դրսեն երկայն որմ մը կը շրջապատեր պարտեզ մը, ուր կգտնվեր տունը։ Առանց արտաքին ուշադրավ երևույթի շենք մը երկու մասի բաժնված՝ հարեմլըք և սելամլըք։ Այս վերջինը՝ հատկապես թուրք այցելուներու ընդունելության սահմանված՝ պարզունակ և կահավորյալ էր։ Էֆենտին շատ անգամ կը հիշեցներ սուլթան Մահմուտի այցելությունը Ղալեզ Արթինին։ Համբավավոր ամիրան ծանր հիվանդ պառկած. Սուլթանը ծպտյալ, Օրթագեղ հիվանդատեսի կուգա անոր տունը։ Սանդուխներեն վեր ելած ատենը կը մտնե սենյակները, որոնց անշուք կահավորումը իր ուշադրությունը կը գրավե։ Այս քննական այցելութենեն հետո Սուլթանին համարումն ու վստահությունը Ղալեզին վրա ևս առավել կ՚ավելնա։

Էֆենտին վաթսունը անցուկ էր։ Տղայությանը կարդալ գրել մը սորված էր, բայց ընթերցասեր ըլլալուն շատ բան կը կարդար։ Ամեն հին հայու պես ինքն ալ գրաբարին իմաստը քիչ շատ կը հասկնար, ականջը պզտիկուց ի վեր եկեղեցական գրաբարով լեցված ըլլալուն։ Չամչյանը մաշեցուցած էր, ինչպես և Եղիշեն, Թոմա Արծրունին, Աստվածաշունչը և ուրիշ պատմական գրքեր։ Տեղյակ էր և ժամանակակից թարգմանություններ։ Իզմիրի ու Պոլսո վիպական բոլոր թարգմանությունները իրեն ընտանի էին։ Պոլսո բոլոր թերթերուն բաժանորդ էր, և միանգամայն ընթերցող։

Հայաստանեն եկած մուշտակագործի մը այդ տղան, իր բախտը Ղրիմի պատերազմին սկսած էր շինել։ Ետքեն Սեբաստոփոլի, Թոփհանեի,

Թերսանեի գլխավոր հայթայթիչներեն մեկն էր եղած։ Ավելի ճիշտ պիտի ըլլար «առաջինը» ըսել։ Փաշաներու և պաշտոնատարներու գողակից ըլլալու հնարամտության մեջ անբաղդատելի ճարպիկ մըն էր։ Շնորհիվ այդ անբարեխղճության, որ Թուրքիո վարչական բարքերուն մեջ գերագույն առաքինությունն կը համարվի, Հայրապետը ո՛չ միայն մեծկակ հարստություն դիզած էր, այլև աստիճանե աստիճան բարձրանալով հասած էր պալատի և ականակառույց կը մնար փաշայության։

Թեև Թուրքերուն երախտապարտ ըլլալու և զանոնք սիրելու պարտականությունը ուներ, բայց սրտին խորը անոնց ատելություն կը խտանար։ Ներսիդիեն բան մը կ'ըմբոստանար ամենօրյա ստրկացման դեմ։ Ամեն օր, ամեն ժամ արթուն հոգեբան մը պիտի ըլլար, որպեսզի որևէ Թուրք չվիրավորե, մեկուն նախանձը չշարժե։ Պեշիկթաշի Հասան փաշային վաղընչուց բարեկամն ըլլալով հանդերձ, կը ջանար, որ փաշան զինքը հասարակ վիճակի մեջ տեսնե։ Ընդհանրապես քարշակով կ'երթար կուգար միշտ Պեշիկթաշի պահականոցին մոտ նստելով, որպեսզի տեսնվի, թե հասարակ մարդու նման կ'երթևեկե։ Ու երբ կառքով անցնելու պարտավորվեր, վարագույրը ձգել կուտար։ Փաշաներու և մինչևիսկ անոնց սպաներուն առջև քառսուն տարիներու զգուշավոր և կորաքամակ կյանքը իր սրտին մեջ դառնության թույնը ամբարած էր։ Ու այդ թույնեն լեղիացած սրտովը կը կարդար Հայոց պատմությունը և ատելով կ'ատեր «անհավատը»։

Գում-Գաբուի ցույցին օրը սիրտը հույսի ու վախի զգացումներով ցնծաց ու տագնապեցավ։ «Դանակը ա՛լ ոսկորին հասած կ'երևնար», փսփսաց քանի մը մտերիմներու. կարծեց, թե «Գործին մեջը ռուսին մատը կա»։ Իր այս կարծիքը սկսավ համոզումի փոխվիլ, երբ հուլիս 15-ին հաջորդ օրը փաշաներուն մռայլ ու մտահոգ դեմքերը տեսավ։ Սիրտը պաղշըտկեցավ, ու «Օ՛խ» մը քաշեց։ Հազար տարվան ցեղային վրիժառության սկզբնավորությունը կը տեսներ։ Սմքած ինկավ, երբ բանտերը հայերով լեցվեցան, ու դեպի արևակեզ Աֆրիկե շղթայակապ հայեր ճամփա դրվեցան և «ռուսին մատը» չերևցավ։ Իրիկուն մը օղիի միջոցին, մտերիմներուն ըսավ։

— Մեր հիներուն խոսքն էր, թե «Աստված տաճկին **թոփուզը** հայուն գլխեն պակաս չընե, բայց՝ Մոսկովին **թոփուզն** ալ տաճկին գըլխեն պակաս չընե»։ Ասկե ետքը տաճկին **թոփուզը** առաջվընե ավելի ուժով գլխնուս պիտի զարնվի, վասնզի Մոսկովին **թոփուզը** տաճկին գլխուն վրա չի տեսնվիր կոր։

Հին մարդը նորեն երևան եկավ. տաճկին առջև ծպիտը, երեսին վրա ցավը հոգուն մեջ հայը՝ որ ապրիլ կ'ուզեր։ Նորեն իր վզին վրա

ծանրացած զգաց «խոհեմ-զգուշավոր վարմունքի» բազմադարյան անուրը, զոր խորտակելու հույսը ունեցավ րոպե մը։ Եվ այն օրը, որ Հայաստանցի տերտեր մը հայության ա՛լ անզուսպ պահանջումը «ազատություն եղբարց մերոցին» մեջ գոռացուց «անխոհեմաբար» ու՝ «որ օրհնես զայնոսիկին» մեջ դառնության շեշտով մը ցեղին անեծքը արձակեց «անզգուշաբար», ռայան վախցավ։ Ժառանգական ստրկացյալ արյունը նորեն իր հանդարտիկ ընթացքը շարունակեց։

Է

Տեր Հուսիկ, որ Պոլսեն Սամսոնի ճամփով մեկնած էր, նույն ճամփով նորեն Պոլիս վերադարձավ երկու տարի ետքը։ Այս անգամ շիտակ Պատրիարքարան չգնաց, ո՛չ ալ զինք թաղի մը եկեղեցի խրկեցին։ Միս մինակ չէր գար, ուրիշներ ալ կ'ընկերանային իրեն։ Կուգային խմբովին, առանց իրենց ազատ շարժման տերն ըլլալու։ Ոտքերնին շղթա անցուցած էր։ Շոգենավեն շիտակ Պապը Ջապթիե տարվեցան։ Շղթայալներեն մեկ մասը Պոլսո բանտերը զետեղեցին, ուրիշներ Աքեա աքսորվեցան։ Տեր Հուսիկ այս վերջիններուն մեջ էր։

Հայաստանցի տերտերը Պոլսեն ո՛չ զզված, ո՛չ սմքած, ոչ ալ բարկացած մեկնած էր։ Քրիստոսի սիրույն իր արյունը առանց տրտունջի թափելու պատրաստ քահանան բանի տեղ չէր կրնար դնել եկեղեցիին ու ժողովրդին սիրույն համար կրած չնչին տառապանքները։ Իր սրտին մեջ քրիստոնեությունը ու ազգությունն ի մի ձուլված էին. զանոնք իրարմե անջատելու անկարող էր, ինչպես անկարող էր իրարմե զատել Քրիստոսի աստվածային ու մարդկային բնությունները։ Մեկուն համար ուրախությամբ նահատակվողը, ուրախությամբ պիտի մարտիրոսանար և մյուսին համար։

Ու հետո, Հուլիս 15-ի պայծառ արևը զինքը այլակերպած էր։ Դարերե ի վեր աղվեսը կյանքի մտատիպար ընտրող հայ գեղացին, Հուլիս 15-ին առյուծի կորյունը ցեղային զինանշանը ընդունեց։ Տեր Հուսիկ Պոլսեն կազդուրյալ կը մեկներ։ Ինքն ու Արշամը միասին ճամփա ելան։ Արձակուրդին օրերը վերջանալու վրա ըլլալով ուսուցիչը արդեն երկիր պիտի վերադառնար, ուր կատարելիք նոր պաշտոն մըն ալ ուներ իբր ներկայացուցիչ։ Ըստ նախորդ որոշման մը, տերտերը Պոլիս պիտի մնար այնտեղի «ընկերության» հետ երկրին հարաբերությունները ամրապնդելու և զորեղ կազմակերպություն մը հիմնելու նպատակավ։ Հայրապետ էֆենտիին միջամտությունը այս ծրագիրը քանդեց։ Տերտերը

«խորհուրդ մարդկան, կամք Աստուծոյ» ըսելով մեկնեցւ Սամսոնին վարչական մարմնին հետ խորհրդակցություններեն հետո, հարկ տեսնվեցավ, որ տեր Հուսիկ Փոքր Հայք այցելություն մը ընե և ձմեռը դառնա իր տեղըւ Վարժապետը իր ճամփան շարունակեց. քահանան Մարզվան, Սեբաստիա, Եկդոկիա այցելեց, ու ձմեռը Տոմուղ գեղ գնացւ Գարնան նորեն ճամփա ինկավւ Իր գեղին երիտասարդությունը, որ այժմ կազմակերպության մեջն էր, տերտիրոջ բացակայության պատճառը գիտերւ Ուղևոր կազմակերպիչը կը շրջագայեր ամբողջ Փոքր Հայք. ամեն կողմ քարոզելով, խրախուսելով, կազմակերպելովւ Արմուտան անցավ և Արխանյանին ու ընկերներուն հետ երկար տեսնվեցավ. Մարզվան՝ Աստմ Ասլանյանին ու խումբին հրացանները ինքն օրհնեց. ու ատեն մը հրոսակ ալ եղավւ Երկարորեն տեսակցեցավ Զաքարյանին ու Շմավոնին հետ, զանոնք միացնելու աշխատելովւ Եվ այս առթիվ բարեբար դեր մըն ալ կատարեցւ Աստվածամարտության կռիվը սպառնալիք մըն էր ազգային դատին հաջողությանը դեմւ Ժողովուրդը սկսած էր խրտչիլ Եվրոպայեն եկող երիտասարդներենւ Գեղացի տերտերը խոսեցավ հանուն հայ ժողովրդինւ Ինքն էր, որ ըսավւ

— Օրհնածներ, մենք անհավատ Թուրքին Թշնամի ենք ի միջի այլոց և այն պատճառավ ալ, որ մեր եկեղեցիները կը կողոպտեն, մեր ժամերը կը պղծեն ու ձեռքերնես կ'առնենւ Դուք եկեր Աստվածածնիս ալ մենե կը հափշտակեքւ Թե որ Աստված չկա, անդիի աշխարհ չկա, արքայություն չկա, դժոխք չկաւ Ամենուն ըրածը իր քովը պիտի մնա, ու մենք շան պես պիտի սատկինք, լմննանք, ան ատեն հա՞յը ինչ է, տաճի՞կը ինչ էւ Մեկը «հաց» կ'ըսե, մյուսը՝ «էքմեկ», տարբերությունը սա՞ էւ

Տեր Հուսիկ նախնական ուսում ստացած մարդ չհետամտեցավ Եվրոպայեն եկող «գիտունները» համոզելու, այլ պարզապես անոնց սպառնալիք ըրավ ժողովրդին բիրտ ուժին կռթնելովւ

— Ես ձեզի հոսկե ժողովրդին ձեռքովը տեղերնիդ կճամփեմ, թե որ մեյ մը ալ կրոնքին դեմ խոսիք,— սպառնացւ— Մեր գործը,— կպոռար,— անհավատ Թուրքին հետ էւ Ամեն մեկերնիս մեր արյունը թափելու պատրաստ ենքւ Միթե այնքան ապուշ ենք, որ կրոնքը ջնջելու համար նահատակվինքւ Հե՞ւ

Տեր Հուսիկ օր մը Թումանյանի խումբին հետ գտնված պահուն, ճյուղպելի մեկը տեսավւ Անժպիտ մարդ մը, քաղցրախոսիկ, հեզ ու խոնարհ, երևույթը՝ աստվածավախւ Այդ դեմքը իրեն անծանոթ չթվեցավւ Բայց ո՞ւր տեսած էրւ Հիշողությունը պրպտեց, երկա՜ր պրպտեցւ Սրտեն ուժ մը զինքը դեպի այդ անծանոթը կը մղերւ Մեկենիմեկ հրճվանքի սարսուռով մը գլխեն մինչև ոտքը ցնցվեցավւ Տարակույս չուներ.

ա՛ն էր, պատվելին, որ օրին մեկը խշուկովը իրենց գյուղը եկած էր․ լուսահոգի տեր Թադեոսին ատենը․ ծեծ կերած էր և աշխարհաբար Աստվածաշունչ մը ձգելով փախած էր։ Ու այդ հալածյալ «բոռթը», այդ հալածյալ Աստվածաշունչն էին, որ զինքը ու ամբողջ գեղը փոխած էին։ Տերտերը կամաց-կամաց միտքը բերավ պարագաները ուր պատվելիին հանդիպած էր։ Տարինե՜ր անցեր էին։ Օր մը քաղաքը Արշամին հետ պտտած, վարժապետը զինքը արմունկովը մշտած, ու «բոռթ»-ը ցույց տված էր։ Արյունը գլուխը ցատկեր էր։ Անկե ետքը քանի մը անգամ ալ հանդիպած էր պատվելիին, միշտ խոռ-խոռ նայելով անոր։ Ալ ետքեն զայն չէր տեսած, ու մոռցած իսկ էր։ Հիմակ այդ մարդը տեսիլքի մը պես կ՚երևնար իր աչքերուն։ Երկյուղածորեն անոր մոտեցավ ու ինքզինքը ճանչցուց։ Պատվելիին շատ ծանոթ էր տեր Հուսիկ անունը։ Անոր աչքերուն մեջ ալ ուրախությունը փայլեցավ ի տես այդ բիրտ քահանային, որ հայ ժողովուրդը իր իսկությանը մեջ կը մարմնացներ։

Երբ կարգը եկավ, տերտերը պատմեց, թե ինքը անուղղակի աշակերտն էր իրեն՝ պատվելիին։ Այս վերջինս զարմանք հայտնելուն, տեր Հուսիկ պատմեց շատ տարիներ առաջ իր գեղը պատահած դեպքը։ Պատվելին ալ քիչ մը մըտմտալեն հետո, անանկ բան մը հիշեց։ Իր Առաքյալի պաշտոնին մեջ այնքան քաղաքներե ու գեղերե հալածված ու ծեծ ուտելով վռնդված էր, որ ամեն մեկ դեպքը նույնհետայն ճըշգըրտորեն հիշելու անկարող կը գտնվեր։

Պատվելին ալ գեղե գեղ պտըտելով կազմակերպություններ կը պատրաստեր ու հրոսակներուն կ՚այցելեր։ Եվ ասկե ետքը տերտեր ու պատվելի մեկտեղ պիտի հալածվեին։ Իրենց անձին մեջ հայությունը կը միանար ընդդեմ հայության ու քրիստոնեության թշնամիին։

Ու մեկտեղ բանտը նետվեցան պատվելի տերտեր, ամերիկյան քոլեճի պրոֆեսոր, պատանի, երիտասարդ, ուսանող, փերեզակ, ջորեպան։ Ամենքն ալ հայ, ամենքն ալ քրիստոնյա։

Տեր Հուսիկ Մարզվան կը գտնվեր այն աղետավոր օրեր, երբ առտու մը պատերը փակցված գտնվեցան Հնտստան Մանուկի հայտարարությունները։ Աթենքեն մասնավոր հրահանգներով Փոքր Հայք խըրկված այդ թուղթերը՝ Պոլիս գահընկեցության մը պատրաստությունները կը ծանուցանեին։ Անդին Եըլտըզ հուզումը տիրեց և ամենախիստ միջոցներ ձեռք առնվեցան ամբողջ Փոքր Հայքի մեջ։ Տեր Հուսիկ ընդհանուր ձերբակալություններուն ինքն ալ բռնվեցավ։ Ո՛չ Մարզվանեն էր, ո՛չ շրջականերեն, այդ կողմերը ի՞նչ գործ ուներ։ Ամենախիստ հարցաքննությունները շատ բան հայտնեցին։ Տեր Հուսիկին դերը հաստատվեցավ։

Ընդհանուր ամբաստանյալներուն դատը Էնկյուրիի դատարանին առջև սկսավ տեսնվիլ։ Տերտերը որոշեց ինքզինքը արդարացնելու չաշխատիլ։ Կ'ըմբռներ, թե ինքնարդարացումն՝ ուրացումն էր։ Ուրացումը՝ գաղափարին պարտությունը։ Հայ ժողովրդին աչքերը Էնկյուրի հառած էին, նոր հայության Գողգոթան։ Պիտի ջանա՞ր ինքզինքը արդարացնել, եթե իր քրիստոնեությունը հանցանք համարելով՝ ամբաստանվեր։ Ու հայության դատն ալ հիմակ իր կրոնքը չէ՞ր։

Ը

Ընելիքին վրա բանտին մեջ երկարորեն խորհեցավ։ Թրքերեն լեզվին թեև անընտել, բայց իր հայտարարությունները կարող էր պարզորեն բացատրել։ Սակայն դատաստանին օրը երկարաբանելու պետք չունեցավ։ Իրմե առաջ Ուշտունին խոսեցավ։ Դատավոր, ժողովուրդ, ամբաստանյալ, ամբաստանող, ամենքն ալ սարսեցան այդ վրիժառու ձայնեն։ Երբ ինքնապաշտպանության կարգը տեր Հուսիկին եկավ, անիկա պարզապես պատասխանեց։

— Ուշտունի էֆենտին պետք եղածը ըսավ։ Իրեն ձայնակից եմ։ Ավելցնելիք ուրիշ բան մը չունիմ։

Երբ բանտ վերադարձան, տեր Հուսիկ Ուշտունիին ճակատը պագավ ուրախության արցունքներով։

Ամենքն ալ մահվան դատապարտվեցան։ Բայց նահատակության՝ հինգ կտրիճներ միայն արժանացան։ Անոնք իրենց ձեռքովը մահմեդականին արյունը թափած էին։ Մյուսներուն պատիժը մշտնջենական բանտարկության փոխվեցավ։ Խմբովին Պոլիս բերվելով, ոմանք հոն բանտերը զետեղվեցան, ոմանք ալ բերդաքաղաքները խրկվեցան։ Այս վերջիններուն մեջ էր տեր Հուսիկ։

Թ

Հուլիս 15-ին Կ. Պոլսո վարչական դրության մեջ մեծ փոփոխություն կը մտներ։ Կեդրոնական ոստիկանությունը, որ մինչև այդ առեն երկրորդական դիրք ուներ, հանկարծ ամենամեծ կարևորությունը կը ստանար հայկական վտանգին ազդած սարսափեն։ Աննշան պաշտոնյա երիտասարդ մը, մեկենիմեկ ոստիկանական նախարարության կոչվելով, պիտի նկրտեր հետզհետե իր գերիշխանությանը ներքև առնել մինչև

իսկ սատրազամն ու ներքին գործերու նախարարը, որոնց ստորադաս-
յալ պաշտոնյան կմնար ըստ վարչական կարգ ու կանոնի։ Հինավուրց
փաշաներուն անհանդուրժելի էր իրենց վրա ծանրացած այդ հսկողու-
թյունը։ Այդ նախարարները միանգամայն կը վախնային, թե ոստիկա-
նության նոր պետը, փառատենչիկ զգացումներե մղված, հայկական
խնդիրը կրնար բորբոքել, ստեղծելու համար կնճռոտ կացություն մը,
որուն բոլոր հանգույցները յուր ափերուն մեջ առնելով, հաջողեր մինչև
վեզիրության բարձրանալ։ Ուրիշներ ալ կը կարծեին թե, այդ նոր նա-
խարարը՝ իբր ազատամիտ հոր մը որդին և իբր մտերիմ երիտասարդ
թուրքերուն, սրտանց կը համակրեր երկրին մեջ ծաղած ամեն շարժումի։
Դիվական քաղաքականությամբ մը իր պաշտոնեն պիտի օգտվեր հայ-
կական վրդովումները բորբոքյալ պահելու համար, որպեսզի անխուսա-
փելի դառնա եվրոպական միջամտություն մը, որմեն միայն կարելի է
հուսալ՝ Թուրքիո բարեկարգումը, ուստի և փրկությունը։ Փառասիրու-
թյուն և հայրենասիրություն կրնային իրենց փոխադարձ շահերը հա-
մերաշխել։ Բ. Դռան մեքենայությունները սկսան, տապալելու համար
ոստիկանության երիտասարդ նախարարը։ Բայց անիկա՝ շնորհիվ իր
բազմաբեղուն մտքին ու Երլտըզը ունեցած պաշտպաններուն, իր ազ-
դեցությունը օրեօր ավելի կ'ընդարձակեր ու կ'ամրապնդեր։ Փաշաներեն
ոմանք մտաբերեցին Հայոց Պատրիարքարանը ևս գործիք ընել, իրենց
հակառակորդին տապալումին դյուրացմանը համար։ Այս նպատակավ
ձեռք առին Հայրապետ էֆենտին։

Թուրքերուն հետ հայուն հնավանդ վարվողության այս մարմնացու-
մը, կը շարունակեր նաև այն հին քաղաքականությունը, որով հայերը
կը մասնակցեին երկրին բարձրագույն վարչության մեջ կազմված շա-
հախնդրական կամ քաղաքական թուրք կուսակցություններու։ Այդ հա-
յերը իրենց հնարամիտ խելքովը, դրամական ուժովը և նպաստավոր
ուրիշ պարագաներու ազդեցությամբը կը դյուրացնեին բարձրաստիճան
պաշտոնատարներու բարձրացումները և անկումները։ Օրթագեղարնակ
էֆենտին ալ՝ որ հակոստիկանական փաշաներուն գաղափարակից մըն
էր, ինչպես և շահակից մը, օգտվեցավ Պատրիարքարանին վրա իր
ունեցած ազդեցութենեն՝ նոր դեպքերուն պատճառավ այլևս անսահ-
ման, որպեսզի դյուրացնե սատրազամին ու ներքին գործերու նախա-
րարին խորհուրդներուն հաջողությունը։ Եվ ահա պատրիարքարանեն
գանգատ Դուռը և Երլտըզը, ընդդեմ ոստիկանության նախարարին։ Ու
եկավ օր մը, որ Աշըգյան Պատրիարքը կառավարության վերջնագիր մը
տվավ կամ ինքը պիտի հրաժարի, կա՛մ ոստիկանության նախարարը։
Բայց սուլթանը երկուքն ալ իրենց պաշտոնին վրա պահեց։ Զաքքին

Մյուշյուրին քաջատեղյակ էր իր դեմ լարված մեքենայության գլխավոր դավադիրին անձնավորության. անոր ջախջախումը ծրագրեց, բայց սպասելով բարեպատեհ առիթի մը, որ կրնար ներկայանալ ուշ կամ կանուխ։ Շատ չանցավ, նախարարական փոփոխություններ տեղի ունեցան, նոր դահլիճ մը կազմվեցավ, աս ալ հաշտ աչքով չէր դիտեր ոստիկանության ամենաազդեցիկ պետը, բայց կը զգուշանար անոր դեմ կռվելէ։ Հայ էֆենտին ալ համակերպեցավ Դռան նոր քաղաքականության։

Ու հայկական դեպքերը իրարու կը հաջորդեին երևակայության սարսող արագությամբ։ Պատրիարք ու վարչապետ շրջահարներու զոհ կերթային, երկրեն՝ պայթումներու որոտներ, Սասունը հայկական խնդիրը կվերաբանար ու Պերլինեն տասնութ տարի ետքը պետությունները հայոց դատին տեր կկանգնեին։ Այս բոլոր նորատեսի երևույթները պահպանողական հայը կշվարացնեին։ Այլևս նավապետն էր, որ կողմնացույցը կորսնցուցած է. մերթ կտաքնար. կոգևորվեր, կհուսար մերթ՝ կսմքեր, տարակուսանքներեն ջլատված։ Թուրքերը աղեկ ճանչնալուն ա՜խ, կըսեր, Թուրքը նապաստակը կառքով կորսա վախնամ թե հախերնուս գան»։ Սեպտեմբեր 18-ին ցնծաց. սխալած ըլլալուն ուրախությունը ունեցա պահ մը։ Տրապիզոնի կոտորածին լուրը առած օրը, երկու ձեռքը գլխուն զարկավ։ Զարդերուն գուժերը, իրարու ետևե արագավազ. իր բոլոր վախերը կիրականացնեին։ Ու փրկության աղոտ նշույլ մը չէր ընդնշմարեր։

Ա՜խ, ճանիլներ, ճանիլներ, կկողկողեր, մտերիմներուն հետ հեղափոխականներուն վրա խոսած ատեն։

* * *

Իրիկուն մը, 1895-ի վերջին օրերը, Հայրապետ էֆենտին շոգենավեն ելլելուն երբ Օրթագեղի շուկայեն կ՚անցներ, մուխթարը իր գինետունեն դուրս ցատկելով, ընդառաջ եկավ, դեմքը այլայլած։ Բարևը խոնարհաբար տալե հետո, ըսավ.

— Էֆենտի, ծառանիդ ալ հիմակ ձեզի պիտի գար։ Նոր բան գա։

Ու կամացուկ մը փսփսաց, թե ոստիկանությունը ցորեկը տուն մը խուզարկություն ընելու եկած էր։

— Ի՞նչ կ՚ըսես,— գոչեց էֆենտին, դեպի դեղին կտրած։

Մուխթարը եղելությունը պատմեց։ Նույն օրը Սթամպոլ օրթագեղցի մը ձերբակալված էր։ Զեյթունի համար հանգանակություն ըրած ըլլա-

լու ամբաստանությամբ։ Երիտասարդը գանահարումին շդիմանալով, իմացուցած էր հանգանակած դրամը ու նվիրատվությանց թուղթը Օրթագեղ վարժուհի երկու քույրերու տուն պահած ըլլալը։ Ոստիկանները երիտասարդը կառքով գեղ բերած էին։ Օրիորդներն թեպետև ամեն ինչ ուրացեր էին, բայց ի լուր երիտասարդին աղաղակներուն՝ թե զինքը ծեծի տակ պիտի սպանեն, հարկադրվեր էին ձեղունեն թուղթն ու դրամը հանել և ոստիկաններուն հանձնել։

Դեպքը շատ ծանր համարվեցավ։ Հայրապետ էֆենտին տուն չգնաց և կառք մը նստելով շիտակ Պեշիկթաշ վազեց։ Հասան փաշան ալ արդեն իրեն մարդ խրկած էր ու կը սպասեր։

Գործին ծանրությունը հո՛ն էր, որ Պոլսո կեդրոնական ոստիկանությունը հանդգնած էր ոտք կոխել Հասան փաշային իշխանության սահմանները։ Պեշիկթաշ ու Օրթագեղ՝ իբր Եըլտըզի շրջափակին մաս՝ Հասան փաշային բացարձակ պատասխանատվության ներքև էին։ Սուլթանը իր արթուն և հավատարիմ պաշտոնեեն գոհ էր։ Քրիստոնյաններն ալ ոստիկանական խստություններեն ազատ կը մնային, հանդարտ կենալու պայմանավ։ Օրթագեղի մեջ հայոց երաշխավորը Հայրապետ էֆենտին էր։ Այդ թաղը երբեք ուղղակի ձերբակալություն կատարված չէր։ Օրթագեղցիները Սթամպոլ, Ղալաթիա կը բռնվեին, բայց ոչ Օրթագեղ։ Ի փոխարեն այս հանդարտության, Հասան փաշան ալ իր պաշտպանողական հովանին այդ թաղերուն վրա կը տարածեր։ Ետքեն, օգոստոս 26-ին Պեշիկթաշ և Օրթագեղ, ուր մահմեդականները բազմաթիվ են ու զորավոր ոչ մեկ հայու «քիթն արյունեցավ» շնորհիվ Հասան փաշային և Հայրապետ էֆենտիին։

Էֆենտին երբ Պեշիկթաշի պահականոցը հասավ, փաշան մոլեգնոտ էր։ Ծանր դեպքը, սարսափը, Օրթագեղեն հանգանակության թուղթ մը գտնված ըլլալը չէր, այլ Օրթագեղ խուզարկություններ ընելու հանդգնությունը։ Այսօրինակ համարձակություն մը կասկած կուտար, թե Եըլտըզի մեջ դավեր կը յարվեին։ Իսկ Օրթագեղ գտնված թուղթը ո՛չ Հայրապետ էֆենտիին, ո՛չ Հասան փաշային աչալրջությունը կը վարկաբեկեր։ Ի նպաստ Զեյթունի, հանգանակությունը Օրթագեղ չէր կատարված և նվիրատուներեն ոչ ոք օրթագեղցի էր։ Ուրեմն Օրթագեղի «պատիվը անաղարտ կը մնար»։ Հայրապետ էֆենտին երաշխավոր չէր շուկան պատահած դեպքերու համար. և ոչ ալ՝ «գրպան մոռցված» թուղթի կտորի մը համար պատասխանատու։ Փաշան իր բարեկամը բնավ չմեղադրեց, բայց նույնհետայն երկու օրիորդներ կանչել տվավ և զանոնք Օրթագեղեն աքսորման դատապարտեց իրենց «անզգուշության» համար։

Կրնային Պոլսո ուրիշ ո՛րևէ մեկ թաղը երթալ նստիլ, և հոն ուզածնին ընել։ Փաշայի՞ն ինչ, թե Սամաթիա կամ Իսկյուտար ի՞նչ կը պատահեր։

Խնդիրը թեև Հասան փաշային ու Հայրապետ էֆենտիին միջև կարգադրվեցավ, բայց ոստիկանության ձեռքը զենք մըն էր, մասնավորապես հայ էֆենտիին դեմ։ Ջափթիեին պետը իր երբեմնի հակառակորդին չախչախումը օրին մեկը դյուրացնելու համար, արդեն 1890-են ի վեր անոր մասին Երլտըզ աննպաստ տեղեկություններ կուտար։ Օրթագեղի դեպքը ընդարձակ ճուռնալի մը նյութ հայթայթեց։ Իբր թե Հայրապետ էֆենտին օգտվելով Օրթագեղի բացառիկ դիրքեն, հոն հեղափոխական գաղտնի կեդրոն մը հաստատած էր, ինչպես Ջեյթունի հանգանակության պարագաները կը հաստատեին։ Եվ Հասան փաշան ալ անգիտակից գործիք մըն էր հայ դավադրին ձեռքը։ Այսպես կեդրոնական ոստիկանությունը մեկ կողմեն Պեշիկթաշի պաշտպանին սրատեսությունը կասկածելի ընելով՝ մյուս կողմեն ալ հայ էֆենտիին վերջնականապես միմլեմիշ կ'ըներ. այսինքն կասկածելի ցույց կուտար Երլտըզին։

Ժ

Պոլսո 1896-ի Մեծ կոտորածեն մեկ քանի օր ետքը, ոստիկանական պաշտոնյա մը Հայրապետ էֆենտիին գրասենյակը ներկայանալով, քաղաքավարորեն խնդրեց Պապը Ջապթիեն հրամմել, փաշային հետ տեսակցության մը համար։ Էֆենտին առանց որևէ տարակուսանքի կարծեց, թե այդ տագնապի ժամանակները իրեն հետ հայոց գործերուն վերաբերմամբ խորհրդակցության մը պետքը տեսնված էր։ Երբ պաշտոնյան մեկնեցավ, ինքն ալ կառք մը կանչելով, Պա՛պը Ջապթիե հրամայեց։ Այդ պահուն եթե կասկածե մը դրդված չորս կողմը դիտելու հետաքրքրությունը ունենար, պիտի նշմարեր հրավիրակը՝ խանին բոլորտիքը դեգերուն։ Ու երբ իր կառքը հառաջանալ սկսավ՝ ուրիշ մըն ալ անոր ետևեն կերթար. մեջը միևնույն պաշտոնյան։

Էֆենտին, ոստիկանատան մեծ սրահը ելլելուն, իր հրավիրակն ալ ետևեն հասնելով, զինքը պույուրունով մը տնօրենին՝ և ոչ թե նախարարին սենյակը մտցուց։ Տնօրենը իր այցելուն ոտքի ելլելով ընդունեց. ինչպես պատշաճ էր վարվիլ պետական բարձր աստիճանավորի մը հետ. բայց այնպիսի դիրք մը բռնեց, որ անոր նստելու ժամանակ չթողուց։ Ծամծմելով մը ըսավ, թե օրվան կացության վերաբերյալ ինչ ինչ գործերու համար իրմեն քանի մը տեղեկություն պիտի խնդրեր։ Էֆենտին

պաշ յուսբյունե— գլխուս վրայով մը։ Իր ծառայութ-յունները մատուցանելու պատրաստակամությունը հայտնեց։

— Բայց այսօր շատ զբաղված եմ։ Ձեր վսեմության հետ երկարորեն տեսակցիլ կարող չեմ,— իմացուց մյուտյուր պեյը։

— Ո՛ր օրվան համար որ կ'ուզեք, վերստին կուգամ,— պատասխանեց էֆենտին։

— Իրավ որ չեմ գիտեր, թե երբ հարմար ժամանակ կրնամ գտնել,— ծամծմեց Թուրքը։ Ու իր շնագայլի դեմքի վրա հրճվանքի ժպիտով, շարունակեց.

— Ի՞նչ հարկ, որ երթալով գալով հոգնիք։ Լավագույն կ'ըլլա, որ քանի մը օր մեզի հյուր մնաք ու ո՛ր օրը հարմարի՝ տեսակցինք։

Եվ առանց դիտողության մը սպասելու, դռնեն դուրս ելավ։ Վսեմափայլ էֆենտին կայնած տեղը պաղած մնաց։ Երկու ոստիկան ներս մտան, և սովորական պոլյուրունով զինքը տարին սենյակ մը, որուն դուռը վրայեն կղպեցին, մենը իխթիղար, հարաբերութենե զրկված հայտարարությամբ։

Բակին վրա նայող մեծ սենեկին մեջ, պատուհանին առջևը ոտքի վրա, կալանավորյալը կծիկեր, կծիկեր, մտածկոտ, երազուն, աշնան գաղջ իրիկուն մը մար մտնող արևուն անուշեթենեն թմրած։

Կործանած էր։ Ժամվան մը իսկ բանտարկությունը կը բավեր, ինչպես բռպե մը տևող երկրաշարժը, իր տանը փլզումին։ Թուրք միջավայրը կը ճանչնար։ Հայկական խնդրին ծագումեն ի վեր մահմեդականներուն հանրային կարծիքին ուշադիր հետևած ըլլալով, անոնց դրդյալ զայրույթին կատաղությունը իրեն քաջածանոթ էր։ Ինքը արդար կամ անարդար՝ կորսված էր։ Այլևս ամենուն աչքին պիտի ներկայանար իբր օսմանյան տերության խային մը։ Ու իր պարագան կը ծանրանար մանավանդ այն նկատումով, որ տերությունը զինքը փառքերով ու պատիվներով հղփացուցած էր, իր ամբողջ հարստությունը, ինչպես և դիրքը Թուրք կառավարության պարտական էր։ Փճացած էր իր վարկը այլևս։ Փաշաները պիտի զգուշանային հետը ո՛րևէ հարաբերություն ունենալե։ Կառավարական պաշտոնատուները առիթեն օգուտ պիտի քաղեին իր մեծաքանակ պահանջները չվճարելու համար։ Մեծ գործեր ընելու անկարողության պիտի դատապարտվեր։ Ու այս ամեն աղետները կրնային ոչինչ համարվիլ, եթե երբեք կարենար ազատիլ։ Կը զգար, թե դավի մը զոհ էր։ Հայ մեծամեծները խորտակելու թրքական քաղաքականության մը կասկածը շատոնց ուներ։ Ինքն ալ զոհ պիտի երթար։ Երկարատև բանտարկության մը երկյուղը սկսավ հոգին տիրել։

Ու պատուհանեն մեյ մըն ալ նշմարեց իր գրագիրը, որ առջևը բեռնակիր մը ձգած, և անոր կռնակը անկողին մը՝ կը մտներ բակը։ Կարծեց իր դագաղը տեսնել։ Գրասենյակեն հեռացած պահուն, ըստ սովորության իմացուցած էր ո՛ւր երթալը, և միանգամայն շուտ վերադարձը։ Ուշանալուն վրա, գրագիրը խելք ընելով՝ զինքը փնտրելու եկած էր։ «Եթե կ՚ուզեք անկողին մը բերեք. ա՛ն հոս պիտի մնա» պատասխանը ստացած էր։

ԺԱ

Ամեն անգամ, որ Հայրապետ էֆենտին ճամփան պանդուխտ հայերու հանդիպեր, որոնք անկողիններ շալկած Պապը Զապթիեի կամ կեդրոնական բանտին ճամփան կը բռնեին, իրենցներուն գիշերվան հանգիստը դյուրացնելու համար, «վա՜խ, վա՜խ, խեղճ ճանիլներ կը՛սեր ցավելով. ի՞նչ երազներու անխոհեմ զոհեր կ՚ըլլան»։

Ալ մթնցավ։ Ոստիկան մը լամպա մը առած ներս մտավ։ Արհամարհական բարև մը քրթմնջելե հետո, դուռը կղպեց, բանալին գրպանը դրավ և կոշիկները հանելով քանաբեի մը վրա երկնցավ։ Գիշերը իր վրա հսկողն էր։

* * *

Հաջորդ օրը քոմիսեր մը բանտարկյալը նախարարին սենյակը տարավ։ Փաշան կես ժպտուն, կես տխուր պույուրունով մը քաղաքավար ընդունելություն ըրավ, սիկար ու սուրճ ալ հրամցուց։ Քիչ վերջ ոստիկանության խորհուրդին նախագահն ալ քարտուղարի մը հետ եկավ, թուղթերով, գրիչներով, կաղամարով։ Կանոնավոր հարցաքննություն մը սկսավ, որ քանի մը ժամ տևեց։ Ամբաստանյալին աչքին առաջ դրըվեցան երգարան մը, արտասահմանյան թերթեր, «Սուրբ գործ»-ին նվիրատվության ստացագրեր, Պապը-Ալիի ցույցին մեկ պահանջագիրը։ Այս ամենը իր տունեն գտնված էին։ Առջի օր յուր Ջապթիեն տարվելե առաջ, անդին Օրթագեղ իր բնակարանն ալ մուխթարին առաջնորդությամբ խուզարկություններ կատարելով, լքված սնտուկե մը այդ մյուզյուր գրքերն ու թուղթերը գտնված էին։ Հիմակ իրմեն բացատրություն կը պահանջվեր։ Ամբաստանյալը կռահեց, թե ասոնք իր սպասավորներունը ըլլալու էին. այդ խեղճ մարդիկը օգոստոս 2-են քանի մը օր ետքը բռնվելով, երկիր խրկված էին ընդհանուր տարագրյալներուն մեջ։ Էֆենտին, այդ հին հայը, և ո՛չ իսկ րոպե մը անցուց ինքնարդարաց-

մանը համար ճիշտ իրողությունը ըսել։ Իր ամբաստանությամբը, այդ խեղճ հայերը կրնային երկրեն բերվիլ ու փործանքի հանդիպել, ուստի բավական համարեց պարզապես պատասխանել, թե ինքը բանե մը տեղեկություն չուներ։ Ինքը երբեք ատանկ թուղթեր, ատանկ գրքեր ո՛չ տեսած էր, ո՛չ ալ քովը պահած։ Այս հերքումին վրա ներս մտցուցին Մուխթարը, որ առտուն բերված էր։ Թաղային այդ պաշտոնյան վկայեց թե արդարև այդ ամենը ինքն իր ձեռքովը Հայրապետ էֆենտիին տանը մեջ սնտուկե մը հանած էր։ Այս հավաստումը ճշմարտությունն էր, և Մուխթարը զայն խոստովանելու պարտական։ Բայց գիտեր նաև, որ այդ սնտուկը գացող սպասավորներուն էր, անկյուն մը նետված, սակայն այս հայտարարությունն ընել չուզեց։ Իր սովորությունն էր, և զայն իբրև օրենք կը նկատեր, իրեն եղած հարցումներուն միայն պատասխանել, որչափ հնար է զգուշանալով ավելորդ խոսքեր ընելե։ Ու քանի որ և ոչ իսկ ամբաստանյալը իրեն դիմում կ'ըներ, այդ սնտուկին, որու պատկանիլն իմացնելու համար, ա՛լ իրեն չ'իյնար չհարցված տեղեկություններ հաղորդել։

Հետո երկար բարակ հարցումներ եղան կեդրոնական վարժարանեն գտնված ռումբերուն համար, ինչպես և վարժապետներու և ուսանողներու մասին ալ։ Հայրապետ էֆենտին այդ հաստատության խնամակալներեն ըլլալով, ոստիկանությունը կը ջանար զինքը հոն պատահած դեպքերուն պատասխանատուներեն համարիլ։ Հարցաքննության թուղթը կարդացվեցավ, ստորագրվեցավ, ու բանտարկյալը իր սենյակը տարին։

ԺԲ

Քանի մը օր վերջը գործը հարցաքննիչ դատավորին հանձնվեցավ, և անկե Ամբաստանիչ ատենին։ Բանտարկվելեն ամիս մը վերջը, Հայրապետ էֆենտին կը ստանար իր ամբաստանագիրը, որ շատ ծանր երևցավ։ Պիտի ներկայանար դատարանին։

Կը զգար թե ա՛լ ջախջախված, կործանված մարդն էր։ Թեև երկու փաստաբան նշանակեց, բայց անպարտ արձակման հույսը չուներ։ Երբեմն լսած էր, թե քաղաքական դատերու մեջ արդարություն չի փընտըրվիր։ Անշուշտ հայկական տագնապի միջոցին այդ ճշմարտությունը, ինչպես ուրիշներուն՝ նույն և իրեն համար անգամ մը ևս պիտի հաստատվեր։

Սրտաբեկ և հուսահատ, միայնությանը մեջ ինքնիրենը կը հարցներ, թե՝ «ես ի՞նչ մեծ մեղք գործած եմ, որ Աստված ինծի այս պատիժը կուտա»։ Կը պրպտեր իր կյանքը ու չէր գտներ իր խիղճը վրդովող

մեծ հանցանք մը։ Անցյալի այդ խուզարկումին մեջ, օրին մեկը, մշուշապատ քողի մը տակեն աչքին դեմք մը երևցավ, զոր հիշել թվեցավ։ Այդ հիշատակը վանելու փորձ մը ըրավ։ Բայց դեմքը չէր աներևույթանար։ Հետզհետե որոշ կերպարանք մը կ'առներ։ Այդ մեծ քիթը, երկայն ծնոտը, անժպիտ դեմքը, սեփ սև մորուքը կուգային իր աչքերուն առջև կը տնկվեին։ Ու հակառակ իր ընդդիմադրական ջանքերուն, միտքը կը թռչեր անդին՝ իր թաղը։ Ամռան զով կիրակի մըն է, թաղական խորհրդարանին մեջ կը գտնվի. Հայաստանեն եկած պանդուխտ տերտեր մը իր առջևն է։ Ահա ինքը ձեռքը վերցուցած կը վազե Աստծո սպասարանին վրա։ «Ծո՜» կ'անվանե օծյալը, առանց ուրիշներուն միջամտությանը պիտի ծեծե, պիտի բզկտե Քրիստոսի պաշտոնյան։ Եվ ահա՜ տրտմաթախիծ դեմքը կը սկսի աչքեն աներևույթանալ. ա՛լ զանիկա չի տեսներ։ Ի՞նչ եղավ։ Օ՜հ, Նորեն կը հիշե։ Կրակ կտրած. Պատրիարքարանը կը գտնվի։ Հալածել կուտա անոր, անօգնական թշվառ ղարիպը։ Ու կը հիշե, կը հիշե։ Օրագիրները կը կարդա ահա. Էնկյուրիի դատաստանին արձանագրությունները կը կարդա։ Դատապարտյալներուն մեջ տերտերի մը անունին կը հանդիպի և այդ պահուն քովը դըտնըվող Օգսենտիոս էֆենտին կը հարցնե. «սա հոս մեկ էտեպսիզ տերտեր մը եկավ նե, ա՞ն է աս հերիֆը»:

— Հրամմեր եք, էֆենտի,— պատասխանը կը ստանա։

— Իշտե վերջը սաանկ փորձանքը կը գտնե, խոսք մտիկ չընելուն։

Այս հիշատակները կը ցնցեն, կը խռովեն հոգին։ Ա՛լ չի տարակուսիր։ Մահմեդականներե ունեցած վախուն՝ Նախատած՝ հալածած էր Քրիստոսի հավատարիմ ծառան, և անոր ցկյանս աքսորմանը պատճառ եղած։ Եվ Աստված ալ իր պատիժը կուտար։ Ա՛լ հուզված, թուլցած, տկարացած «մեղա՜, Տեր, մեղա՜» կը գոչե սրտին խորեն։ Զղջումը իր սիրտը կը հանդարտեցնե։ Կը սկսի ուխտեր ընել. բանտեն ազատվելուն՝ իր մեղքը պիտի քավե տերտերը փրկել տալով։

Ու վստահորեն Աստծո գթությանը ապավինեցավ։

* * *

Դատարանին առջև վսեմափայլ էֆենտին իրավցնե վսեմ հանդիսացավ, կ'ըմբռներ, թե իր անձին մեջ իր ցեղն է, որ քրիստոնյա և իսլամ աշխարհներուն դեմը կը դատվեր։ Զարնված էր աղքատ հայը, զարնըված էր մտավորական հայը, պիտի զարնվեր և հարուստ հայը։ Ներկայացավ խրոխտաբար։ Մերժեց նախագահական հրամանին հնազանդելով՝ ոճրագործներու աթոռին վրա տեղավորվիլ։

— Այս աթոռը ինծի համար չէ,— ըսավ արհամարհական շեշտով մը։

Թուրքերը մռմռալ սկսան։ Իրենց համար տարակույս չկար, որ այս հայը տերության դեմ դավաճան մըն էր. բայց դավաճանությունը ոճիր մը չէր համարեր, այլ իրավունք մը, ուստի և կը մերժեր ոճրագործներու աթոռը նստիլ։

Երբ նախագահն ուզեց զինքը պատասխանատու բռնել Կեդրոնական վարժարանին ուսուցիչներուն ընթացքին համար, խնամակալ էֆենտին հեգնորեն հարցուց.

— Ու Մուրատ պե՞յը։

Կարճառոտ, բայց հստակ լեզվով բացատրեց, թե այդ Տաղստանցի խլամը սուլթանեն մեծ պաշտոններու կոչվելով հանդերձ, այժմ Եվրոպայի մեջ տերության դեմ կը գործեր։ Մի՞թե Մուրատ պեյին այս ընթացքին պատասխանատուն իր պետե՞րը կը բռնվեին։

Եվ ունկնդիրները ըմբռնեցին, որ ամբաստանյալը Մուրադ պեյին պարագան հիշեցնելով ո՛չ միայն ինքնարդարացման փաստ մը կը ներկայացներ, այլ դիտել տված կ'ըլլար, որ երկրին վարչական դրության դեմ ըմբոստացողները քրիստոնյա հայերը չէին միայն։

Նախագահն ըմբռնեց, թե այս ամբաստանյալին հետ երկարատև դատավարություն մը շատ անպատեհություններ առաջ պիտի բերեր. կարճ կապելու խոհեմությունը ունեցավ։ Օրինական անհրաժեշտ ձևակերպություններեն հետո, դատավորները խորհրդի սենյակը առանձնացան։ Կես ժամ ետքը վերադարձան։ Նախագահը դատարանին միաձայն վճիռը ամբաստանյալին հաղորդեց։ Երեք տարվան բանտարկություն։

ԺԳ

Դատավճիռը հինգշաբթի օր մը տրվեցավ. իրիկվան դեմ։ Դատապարտյալը հանկարծակիի չէր գար՝ այս ելքին արդեն սպասելուն։ Զինքը վերադարձուցին Պապը Զապթիե, հոնկե կեդրոնական բանտը փոխադրումի համար։ Հաջորդ օրը այցելուներ եկան։ Իր գործը վերջացած ըլլալով, այլևս «հարաբերութենե կտրված» չէր մնար։ Եկողները հաստատեցին, թե զորավոր բարեխոսության շնորհիվ շուտով ներման պիտի արժանանար։ Եվ իրավ հաջորդ օրն իսկ, Դատական պաշտոնատունը ոստիկանության կը հաղորդեր «ներում շնորհող» կայսերական իրադեն:

էֆենտին, առանց ժամանակ կորսնցնելու, կառք մը նստավ և ու-

ղակի Ելտըզ գնաց, ու սենեկապետի մը միջոցավ «իր երախտագիտական զգացումները հոտս կայսերական գահոյից» դրավ։

Սուլթանին պալատեն ուղղակի Օրթագեղ անցավ։ Նախորդ օրն ու նույն առտուն շատ անձրևած ըլլալուն՝ կառքը չէր կրնար մինչև Տերեն հառաջանալ։ Էֆենտին, ըստ սովորության, Թաշներտիվենը վար իջավ։ Կանգ առավ, աչքերը չորս կողմը ժուռ ածեց կարոտագին։ Սիրտը անհուն տխրությամբ լեցվեցավ։ Առտու մը ի՜նչ վիճակի մեջ մեկնած էր հոնկե, և հիմակ ինչ վիճակի մեջ կը վերադառնար։ Եվ ահա զինք նշմարելուն՝ խանութեն կամացուկ մը դուրս ելավ Փեսճին, որուն միշտ խալըպի կը խրկեր ֆեսը։ Քանի մը քայլ անդիեն շաքարաչուր վաճառողն ալ եկավ։ Ամեն առտու էֆենտին անոր խանութը կը սպասեր քարշակին, լոխում մը ուտելով և ջուր մը խմելով։ Դիմացեն Բէրուխէրն ալ՝ իր բազմամյա սափրիչը՝ ցատկեց։ Երեքն ալ շուրջը եկան։ Դեմքերնուն վրա կը նշմարվեր ուրախություն մը, որ սրտաբուխ էր։ Բարևեցին հարգանքով, բայց մտերմական ընտանությամբ մը, որուն սովոր չէին։ Իրենց խնդակցությունները և բարեմաղթությունները թոթվեցին. այնքան հուզված էին, որ չէին կրնար առատ-առատ խոսիլ։ Էֆենտիին սիրտն ալ ելավ։

Չկրցավ շատ բան ըսել, ամենուն հավասարաբար հարցուց. ընտո՞ր եք։ Աստուծով ամենքդ ալ ողջ առողջ, հանգիստ եք։ «Ամենքդ» խորհրդավոր, ցած ձայնով մը արտասանեց։ Ակնարկություն էր կոտորածին։

— Փառք Աստուծո, էֆենտի, ողջ առողջ ենք, վիճակնիս հայտնի է,— ըսին։

— Ողջություն ըլլա, Աստուծո ողորմությունը մեծ է,— պատասխանեց։

Հո՜ն, փողոցը դասակարգերը իրարու կ'եղբայրակցեին տառապանքներուն մեջ իրենց հավասարությամբը։ Էֆենտին ու աղբարը միևնույն տանջանքներով կը խոշտանգվեին, առանց խտրանքի, իբրև միևնույն ազգին զավակները։ Վսեմաշուք հայը այն պահուն, որ կը կործաներ այն փաշաներուն ձեռքերեն, որոնց առջևը խոնարհ երկրպագու եղած էր, իրեն հենարան ու զորավիգ կը գտներ ժողովրդին սիրտը, որ կը ցոլար աղքատ աշխատավորներու երեսը, աշխատավորնե՜ր, որոնց վրա միշտ վերևեն նայած էր։ Օտարեն հալածվող ժողովրդի մը համար եղբայրակցության զգացումին ամբողջ անուշությունը հիմակ կը զգար։ Ու կը զգար նաև, թե շատ խորունկ իմաստ մը ուներ, ցեղին՝ «սրտե ի սիրտ ճամփա կար» քաղցրախոսիկ առածը։

Մնաք բարով ըսելով, էֆենտին ճամփան շարունակեց տրտում ու խոհուն։ Իր աչքերը իզուր չորս կողմերը կը փնտրեին այն դեմքերը, զորս պզտիկուց ի վ՛եր տեսնելու վարժ էր։ Ո՞ւր էին հայ համալները, որոնք իր անցած ատենը բարևի կը կայնեին։ Անոնց հետ ալ կ՛ուզեր երկու խոսք փոխանակել։ Անոնք ալ կը կարոտնար այդ րոպեին։ Եվ տեսավ կոշտ ու կոպիտ, ժահադեմ Թուրքեր, այն բարի ու համեստ մշեցիներուն տեղը անցած։

***

Կիրակի առտու կանուխ արթնցավ։ Արև արեգակ օր մը կը ծագեր։ Պատուհանը բացավ ու լիաթոք շնչեց օդին քաղցրությունը։ Հոն անուշը կերավ, սուրճը խմեց, և նստած մնաց։ Բանտարկության օրերուն ամբողջ խոնջությունը հիմակ այդ հանգստյան պահուն կը զգար։ Երկար ատեն հոն մնաց, միշտ մտածկոտ, մերթ ընդ մերթ «վա՜խ, վա՜խ» մը հառաչելով։ Ինչե՞ր չէր ըրած, որպեսզի հայ ազգը օսմանցիներուն հավատարիմ ու անձնվեր մնա։ Ներսես Պատրիարքեն մինչև գեղացի տերտերը, ամենուն թշնամացած էր, ամենուն դեմ կռված էր հակաթրքական ձգտումներուն համար։ Եվ ի վարձատրություն իր այս ծառայությանցը, տաճիկը զինքը կործանած էր։ «Վա՜խ, վա՜խ, վա՜խ»։ Ու հագնըվելու համար տեղեն ելլելով, ինքնիրենը բարձրաձայն ըսավ. «եթե արդարն հազիվ կեցցե, մեղավո՞րն ուր երևեսցի»։ Եթե իրեն, որ հավատարիմներուն հավատարիմն էր, այսպես կ՛ընեին, հապա ուրիշներո՞ւ ինչեր չէին ըներ։ Եվ հիմակ ա՛լ աղեկ կ՛ըմբռներ Ներսես Պատրիարքին, հեղափոխականներուն «անխոհեմության» պատճառը։ Մորթելու համար գանակը վզին դրված մարդեն, իր շարժումներուն մեջ զգուշավոր խոհեմություն կրնա՞ր պահանջվիլ։

Հագվեցավ. եկեղեցիին ատենն էր. ելավ գնաց։ Խորհրդարանին աչք մը նետելով, շիտակ խնդրակատար անցավ, ուրկե մտած ատենը ոտքերը թեթև մը դողդողալ սկսան։ Ժամկոչը ուրախությամբ ընդառաջ եկավ։ Ան ալ իր բարևը մտերմորեն տվավ։ Էֆենտին մեծկակ գոհունակություն մը զգաց, այն հինավուրց վանցին տեսնալուն։ Հայաստանցի պանդուխտներեն ան կմնար միայն։ Եկեղեցին անբռնաբարելի էր. հոն ոչ ոք կրնար Թուրք մը Աստուծո սպասավոր դնել։

Պահարանը՝ իր աթոռը տեղն էր. հոն գնաց։

«Հավատամքին» ավետարանը կը կարդային։ Գլուխը բացավ, երկյուղածությամբ ունկնդրեց։ Մտախոհ և զգացյալ կը հետևեր արարողու-

թյանց։ Հանկարծ ցնցվեցավ։ Սպասավորող քահանան «Եւ շնորհ հառաջիկա ժողովրդյանս» կ'աղաղակեր բարձրաձայն։ Ո՞ւր մնաց «ազատություն եղբարց մերոց գերելոցը» որուն կարոտը կը քաշեր։ Հիշեց ու գլուխը վայրահակեց։ Վեց տարի էր, որ Օրթագեղի ժամը կը լփռտվեր հայ ժողովուրդը կազդուրող հավատարծարծ «ազատությունը»։ Օր մը ինքն ալ գերելոց եղած էր, ու ժողովուրդը իրեն համար ալ վախցած էր ձայնը երկինք բարձրացնել, առ Աստված աղերսել։ Սրտաբեկ մնաց։ «Կեցուին» հառաչացավ դասը, պատարագավորին ժամուցը պատրաստած։ Ու լսեց «Որ օրհնես»-ը, ինչպես ինքը սրբագրած էր։ Վեց տարի է, որ բերանները ալ վարժված էին ամեն թագավորներու համար հավասարապես աղոթել, սուլթանն ալ քրիստոնյա թագավորներուն հետ խառնել։ Ստորակետ մը բավական եղած է քրիստոնեության ոգին փոխելու։ Ու չլսվեցավ «զինվորյալ մանկանց»-ն ալ։ Նորեն էֆենտին գավիթեն դուրս ելավ, բայց այս անգամ ինքն իր անձին դեմ զայրացած։

Իր հանցանքին մեծությունը կ'ըմբռներ։ Հայ ժողովուրդը ինքզինքը իր տաճարին մեջ ամփոփած իր այրած սիրտը դարերե ի վեր կմխիթարե՝ մահմեդականության դեմ Քրիստոսին դիմելով, և անոր վրա հուսադիր՝ ապագայի մը ակնկալու մնալով։ Ինքը՝ խոհեմ ու զգուշավոր մարդ, ժողովուրդն այդ հավատքեն, որ զորություն մըն է, զրկել ուզած էր։ Միևնույն ժամանակ չէր ուզած, որ ժողովրդին ձեռքը նյութական ուժ մըն ալ դրվի, վասնզի միշտ խոհեմ և զգուշավոր մարդն էր ինք։ Եվ ինչ կ'ըներ ինքը, երբ տաճիկ մահմեդականը իր գլուխն ալ ճզմեց։ Իր խոհեմությունը, զգուշավորությունը փրկե՞ց զինքը։ Այս մտածություններով մտավ խորհրդարանը, ուր վեց տարի հետո, իր աչքերուն առջև կը վերանորոգվեին տեր Հուսիկին հետ պայքարմանը տեսարանները։ Գեղացի արտերն անշուշտ իր տառապանքներուն մեջ կը զորանար այն զգացումեն, թե իբր Քրիստոսի և ազգին զինվորը կը կռվեր։ Քաջ մըն էր, եթե մեռներ, բայց կը մեռցներ ալ։

Խորհրդարանը քիչ մը նստավ, սուրճը խմեց, հարցումներ ըրավ ու մեկնեցավ։

Կեսօրեն առաջ աչքի լուսի սկսան գալ շատ ընտանիքներե միայն երեք չորս հոգի, որոնց մեջ էր Օգսենտիոս էֆենտին։ Էֆենտին զանոնք ճաշի վրա դրավ։ Սեղանեն առաջ օղիի նստան։ Գլուխները երբ քիչ մը տաքցան, Օգսենտիոս էֆենտին կրակոտ խոսքեր արտասանեց։ Էֆենտիին հայտարարեց, թե իր մարտիրոսությամբը ա՛լ այսուհետև ժողովրդին պաշտելին էր։

«Աչք ամենեցուն ի քեզ հուսան»,— ըսավ։

Կամաց-կամաց լեզուները բացվեցան, և հյուրերը փափագեցան գի-

նալ, թե ի՞նքը ինչ ըրած էր, որ զինքը ձերբակալեր, բանտարկեր ու դատապարտեր էին։

— Մեծ ի՞նչը փնտրենք,— հարցուց խնդալով ոսկեդարյան գրաբարին ներկայացուցիչը։

— Մեծ «Հ» փնտրեցեք, Օգսենտիո՛ս էֆենտի,— պատասխանեց տանտերը։

Այս խորհրդավոր հարցուպատասխանին բացատրության մը պետք ունի։

Հայրապետ էֆենտին կարդացեր էր ֆրանսերենե թարգմանված բոլոր վեպերը։

Մանավորապես մտքը պահած էր ֆրանսացի ոստիկանապետի մը այն համոզումը, թե ամեն ծանր դեպքի մեջ փնտրելու է կինը։ «Փընտրեցեք կինը»։ Երբ հայերը ձերբակալելու, բանտարկելու թվականը բացվեցավ, որ հայն ալ բռնվեր ու զնդանը նետվեր, և ինչ բանի պատճառավ որ ըլլար, էֆենտին ուրիշ բան չէր ըսեր, բայց եթե՝ «փնտրեցեք մեծ Յ»։ Մեծ Յ ըսելով կհասկնար հեղափոխությունը, բառ մը, զոր ամբողջությամբ բերանը առնելու չէր համարձակեր։ Ամեն չարիքի պատճառ մեծ Յ էր։ Հիմակ Օգսենտիոս էֆենտին քարը տեղը կդներ։ Իրեն բանտարկության համա՞ր ալ մեծ Յ մը փնտրելու էր։ Էֆենտին ճիշտ պատասխանը տվավ «փնտրեցեք մեծ Հ» ըսելով։ «Մեծ Հ»՝ հայն էր. փնտրեցեք, հայը փնտրեցեք, հայությունը ամեն ձերբակալման մեջ։ Էֆենտիին դիտողությունը հյուրերուն շատ հաճելի անցավ, ճիշտ կացությունը կը պատկերացներ։ Ամեն հայ կը բռնվեր, կը բանտարկվեր, կը սպանվեր, վասնզի հայ էր։ «Փնտրեցեք մեծ Հ-ն», ա՛լ անկե ետքն ալ կարգախոս մը եղավ։

Ու էֆենտին իր կարգին ինքն ալ քարը տեղը դնել ուզելով, խոսքը հայկաբան էֆենտիին ուղղեց ու ըսավ.

— Օգսենտիոս էֆենտի, Սողոմոն իմաստունը սխալեր է։ Այլ դարք, նո՛ւյն բարք։ Կը հասկնա՞ս յա։

Ակնարկություն էր, վեց տարի առաջ տեր Հուսիկին վրա հարձակման միջոցին, Օգսենտիոսի այն պատգամ խոսքերուն, թե «ա՛յլ դարք, ա՛յլ բարք», զոր ո՛չ ըսողը գիտեր թե որմեն էր և ո՛չ լսողը։

— Ա՛յլ դարք, նո՛ւյն բարք, կը հասկնա՞ս, Օգսենտիոս էֆենտի,— կը կրկներ տանտերը։ Եվ հասկցուց, թե դարերը փոխված էին, բայց բարքերը՝ ո՛չ։ Տաճիկները մնացած էին այնպես տաճիկ, ինչպես քանի մը դար առաջ։

Ոսկի ելած տեղանուտուն երթալու համար՝ էֆենտին կարծես հարցնելու բան մը ուներ ու կը վարաներ։ Վերջապես, հայկաքանին դառնալով ըսավ.

— Խոսքը խոսք կբանա։ Ճանըմ, Օգսենտիոս էֆենտի, տարենաք հոս ղարիպ տերտեր մը եկավ, տաք գլուխ մեկը, Թոռափ անունով գեղե մըն էր, իր անունն ալ չի գար...

— Հա՛, աս տամուզգեցի տեր Հուսիկը,— պատասխանեց Օգսենտիոս էֆենտին։

— Ծի՛շա անի։ Աս խեղճ մարդը ետքեն էնկլուզի բանվեր և բանտարկվեր է եղեր։

— Այո՛, շատ բան քաշեց։ Աքսոր աքսորվեցավ։

— Ետքե՞ն։

— Ետքեն, 1895-ի ներյալներուն մեջ չմտավ։

— Խե՛ղճ մարդ։ Դեռ Աքսո՞ր է։

— Ոչ։ Տեզապահ սրբազանը իր պաշտոնավարության առաջին օրերը անոր և ուրիշներուն համար բարեխոսեց։ Ազատվեցան։

— Աղե՜կ, աղե՜կ։ Հիմակ ո՞ւր է, երկի՞րն է։

— Ո՛չ, հոս կսպասե երկիր երթալու համար։ Գարակեսմրյուկի ժամը խրկված է։ Անգամ մը գացի տեսնվեցա հետը։

Խոսելով սեղանատուն գացեր էին. էֆենտին ավելի զվարթ կ'երևար։ Ուրախ ճաշ մը ըրավ, կատակաբանելով։ Օգսենտիոս էֆենտիի տված լուրը իրեն շատ հաճելի եղած էր։

ԺԴ

Ա՛լ իրիկուն եղած էր։ Տեր Հուսիկ հանգստանալու պատրաստություններ տեսնել սկսավ։ Պանդուխտ տերտերոջ խուցին մեջ, որ ժամուն բակին վրա կը նայեր, իբր կարասիք մեծկակ մինտեր մը կար, երկայն բարձով մը, ու փայտե ճերմակ սեղան մը և երկու պարզ աթոռ։

Ամեն օրվան սովորությանը համեմատ, ղարիպն իր անկողինը, որ անկյուն մը դեզ կը մնար՝ բացավ, երկնցուց, թոթվեց, շտկեց։ Հետո պզտիկ մանղալին մեջ քանի մը ածուխ ալ ավելցուց, և կրակին վրա զետեղեց պտուկը, որ սոխով լոբիա կը պարունակեր, օրը պահք ըլլալուն։ Սեղանին վրա կարգադրեց պնակը, դգալը, պատառաքաղը, հացը, ջրի սրվակը և գավաթը։ Քարյուղի լամպան ալ մաքրեց պատրաստեց, լուցկիին տուփն ալ քովը դրավ, աթոռը պատուհանին առջև քաշելով, ժամագիրքը առավ՝ իրիկվան աղոթքները կարդալու։ Քիչ մը ետքը խուցին

դուռը բացվեցավ։ Ժամկոչն էր, որ ետ դառնալով գնաց սանդուղին գլուխը սպասողի մը ըսավ.

— Հրամմեցեք, հոս է։

Տերտերը աթոռեն ելավ։ Դրսեն մեկը կուգար. քանի մը քայլ անոր ընդառաջեց։ Եկողը ներս մտավ, դուռը գոցեց. քահանան, վախնալով ետ-ետ գնաց, պատին կռթնեցավ։ Այցելուն իր առջևն էր ֆեսը հանած, և ծռած՝ ձեռքը կը քաշեր համբուրելու։

— Ես քեզի մեղա՛, տե՛ր հայր,— ես քեզ մեղա մրմնջելով։

— Ամենքս Աստուծո մեղա, օրհնած, ամենքս Աստուծո մեղա,— աղաղակեց տերտերը այլայլած ձայնով։ Ու հանկարծածին հուզմամբ այցելուին ճակատը քաշեց պագավ։

Երկուքն ալ թաշկինակնին հանեցին, աչքերնին սրբեցին, ու րոպե մը իրարու դեմ կեցան մեծ խոնջությենե մը թեթևցած սրտով։ Տերտերը աթոռին մեկը բերավ Հայրապետ էֆենտիին հրամցուց, մյուս աթոռն ալ ինքը առավ։ Ու դեմ առ դեմ նստան։

— Է նայինք ընտո՞ր եք,— հարցուց էֆենտին խանդաղատանքով։

— Փա՛ռք Աստուծո, ողջ առողջ ենք, ինչ բլլալնիս հայտնի է։ Ազգին վիճակին ամենքս ալ բախտակից ենք։

— Գիտեմ, տեր հայր, գիտեմ, ազգին համար շատ բան քաշեցիք։ Աստված վարձահատույց ըլլա։ Չարչարանքը, նեղությունը ամենուս համար ալ է։ Աստուծով ամեն բան կշտկվի։

Էֆենտին «ամենուս համար է»-ին վրա թեթև մը շեշտեց։ Անդրադարձավ, որ քահանան կը զգուշանար իրեն բանտարկմանը ո՛րևէ ակնարկություն ընելե։ Անշուշտ չէր ուզեր զինքը պզտիկ ձգել իր անցյալ ամբարտավանությանը համար։ Բայց ինքը, վիրավոր էֆենտին, սփոփանքի կարոտ էր, ուստի խոսքը ինքը բացավ։

— Այնպես է, տեր հայր, այնպես է. ամենքս ալ ազգին բախտակից ենք։ Մեր գլխուն ալ շատ բան եկավ։

— Լսեցի, էֆենտիս, լսեցի,— պատասխանեց տերտերը անկեղծ վշտակցությամբ։— Ի՞նչ ընենք, ամենքս ալ հայ ենք։ Մեր պատմությունը ցույց կուտա, որ այս անօրեն մահմեդականները միշտ մեր մեծերուն գլուխը կ'ուզեն ուտել։ Անշուշտ Հուշիկներուն մեջ կրակի տարվան աղետը կարդացեր եք։

— Կարդացեր եմ, տեր հայր։

— Են առաջ մեր քաջ նախարարները այրեցին, որպեսզի անտեր, անտիրական ժողովուրդը դյուրությամբ կոտորեն։ Միշտ միևնույն քաղաքականության հետևած են։

Այս միջոցին տեր Հուսիկ տեղեն ելավ, սուրճ պատրաստելու.

էֆենտին թող չէր տար, որ նեղություն քաշե։ Բայց դուռը բացվեցավ. ժամկոչը երկու սուրճ կը բերեր։ Տեր Հուսիկ ներողություն խնդրեց, որ սիկար մը չի կրնար հրամցնել, վասնզի ինքը ծխող չէր։ էֆենտին հատ մը գրպանեն հանեց, ու սուրճը խմելով, խոսակցությունը շարունակեց։

— Է, նայինք, տեր հայր, ե՞րբ կը մեկնիք,— հարցուց։

— Շիտակը, էֆենտի, որոշ բան մը չեմ գիտեր։ Մոտերս նոր Պատրիարք պիտի ընտրվի, կ'ըսեն։ Կը հուսամ, որ սրբազանը ամեն դյուրություն կ'ընծայե։ Բացակայությունս շատ տարի տևեց. ժողովուրդը կը սպասե։ Ընելիք շատ բան կա։

— Ինչպե՜ս, իմացա՞ք բան մը. ձեր գեղն ալ դեպք պատահե՞ր է, շատ դժբախտություններ տեղի ունեցե՞ր են։

— Ատ մասին փառք նախախնամության, էֆենտիս, լսեցի, որ մեր գեղը անփորձ մնացեր է։

— Ի՜նչ կ'ըսեք, ատ ի՜նչ հրաշք է։

— Էֆենտիս, մինակ պարզ հրաշք մը չէ։

— Հապա՞։

— Մեր տղաքը ժամանակին խելք ըրած են ու քանի մը հրացան առեր պահեր են, քիչ մըն ալ զինվարժություն սորվելով։ Խուժանը դըրսեն մեր գեղին վրա հարձակում ըրած ատենը, տղաքն ալ անոնց վրա, և թշվառականները լեղապատառ կը փախչին։ Երիտասարդները անոնց ետևեն կը վազեն և ուրիշ հայ գեղերու ալ օգնության հասնելով՝ զանոնք ալ փրկեր են։ Ա՜խ, էֆենտիս, եթե ամեն քաղաք ու գյուղ ալ սանկ նախատեսություն ունեցած ըլլար, բանիկ մը չէր պատահեր։

Այս տեղեկությունը լսելուն՝ էֆենտին պահ մը մտախոհ լուռ մնաց։ Կը հասկնար, թե «ժողովուրդի խոհեմությունը» զենք ունենալու և զինվարժության մեջ կը կայանա։ Հետաքրքրությունը արթնցավ. և տեր Հուսիկեն քանի մը տեղեկություններ ուզեց. կը զարմանար, թե անծանոթ գեղի մը մարդիկ ինչպես եղեր է, որ կրցած են հեռավոր ապագան նախատեսել։

Քահանան համառոտակի մը պատմեց տարիներե ի վեր տեսնված պատրաստությունները, բայց առանց ինքզինքը մեջ խառնելու, ամեն ինչ երիտասարդներուն կազմած ընկերության վերագրելով։

— Հե՜յ, հե՜յ,— ըսավ էֆենտին։ Մենք ալ հա՞յ ենք եղեր. մենք ալ բա՞ն գիտենք եղեր. իբր թե ազգին մեջ ալ կարևոր դեր մը ունեինք։ Ժողովուրդը ինքն իր գլխուն, մենե ավելի աղեկ գիտեր, թե խոհեմությունը ինչ ընել կը պահանջե։

Ազդեցիկ այդ հայը իրեն պատահած դեպքեն ի վեր, ջղային գրգռման մեջ էր։ Իր դառնացած սիրտը բանալու և խոստովանելու անդիմադրելի

պետք մը կը զգար։ Հոգին տանջող ցաւը դուրս տվավ։ Տեր Հուսիկ ըմբռնելով ջախջախված մեծատունին հոգեբանական վիճակը, չուզեց զանիկա ձլատել։ Ընդհակառակը ջանաց զորացնել այդ հոգին, կազդուրել, վհատումե փրկել։ Հայրապետ էֆենտին ուժ մըն էր, զոր չեզոքացման վտանգեն հարկ էր փրկել։ Ապագային պիտի կրնար իրենց օգտակար ըլլալ։ Տերտերը իր նախկին հակառակորդը իր խուցը, այսինքն՝ իր ոտքը տեսնելե ի վեր այս մտածությունը ունեցած էր և ըստ այնմ կը խոսեր։ Ուստի անոր հուսահատական վերջին հայտարարություններուն պատասխանեց.

— Էֆենտի, այդպես մի՛ ըսեք։ Այն բոլոր հայերը, որ իրենց ազգը կը սիրեն ու անոր օգուտը կը փափագին, անոնք ամենքն ալ միևնույն կերպով չեն կրնար մտածել։ Ո՞վ կրնա ապագան ճիշտ նախատեսել։ Ու հետո, հիմակ ազգերնիս անանկ վիճակի մեջ է, որ տեղ մը օգտակար սեպված գործը, ուրիշ տեղի համար կրնա վնասակար ըլլալ։ Ու ինչ որ քաղքի մը կործանման պատճառը կը դառնա՝ ուրիշ քաղքի մըն ալ փրկությունը կ՚ըլլա։ Իրավ է, որ մեր գեղը ո՛րևէ աղետ չպատահեցավ, շնորհիվ ժողովրդին զենքերուն, բայց լսեցինք, որ հոս Օրթագեղ ալ բան մը չէ պատահած։

— Չէ՛, փառք Աստուծո, հոս ալ մեկուն քիթը չարունեցավ,— պատասխանեց Օրթագեղի խնամակալը զգացյալ համեստությամբ։

— Բայց Օրթագեղ ալ զենք չի գործածեցիք,— շարունակեց տերտերը։ Այդ թաղն ալ հրամանքներուդ զգուշավոր հեռատեսությամբը փրկվեցավ։ Կը տեսնենք, թե տեղ մը քաղաքագիտական վարմունքը կրնա օգտակար ըլլալ, ուրիշ տեղ մըն ալ զենքի վարմունքը։ Ամեն միջավայրի հայերը իրենք իրենց կացությանը համեմատ հոգալու են ինքզինքնին։

Հայրապետ էֆենտին որքան ավելի մտիկ ըներ տեր Հուսիկը՝ այնքան ավելի կը սիրեր զանիկա։ Կը հասկնար, թե հայաստանցին ոչ միայն զորավոր նկարագրի տեր խելացի մեկն էր, այլև շա՜տ փափկանկատ։ Անոր խոսքերը թեթևցուցին սրտին վրա ծանրացած բեռը։ «Ա՜խ, կը մտածեր ինքնիրեն, եթե սանկ շատ տերտեր ունենայինք, ազգը ո՜ւր ինչ կ՚ուզեր»։ Ու նույն րոպեին, տերտիրոջ խոսքերուն տպավորության ներքև որոշեց ազգին՝ տեր Հուսիկին պես քահանաներ պատրաստելու համար ամեն ջանք ընել։ Այս որոշումը նոր հոգի տվավ իրեն, մեկենիմեկ զինքը նոր մարդ ըրավ։ Իր կյանքը մեծ նպատակ մը ուներ։ Անցյալը անցած էր. նայելու էր ապագային։ Իր խորհուրդները բոլեաբար ցոլացեր էին՝ տերտերին խոսքերուն իր մտքին տված զարկերեն։

Մութը կը կոխեր։ Հյուրը ոտքի ելավ մեկնելու։

— Տեր հայր,— ըսավ,— թերևս երկար ատեն ա՛լ չտեսնվինք։ Աստված բարի ճամփորդություն տա։ Երկիրդ եթե բանի պետք ունենա՝ Պատրիարքարանի միջոցավ ինծի հաղորդե, պետք եղածը ընեմ։

— Աստված պակաս չընե, էֆենտի։

Ու էֆենտին հառաջացավ դեպի տերտերը, և անոր ձեռքը համբուրելու համար քաշած ատենը, իր գրպանեն պզտիկ քսակ մը հանեց՝ մեջը լեցուն ոսկի, և քահանային ձեռքը դնել ուզեց։ Անիկա ետ-ետ գնաց։

— Կ'աղաչեմ, էֆենտի, նեղություն մի՛ կրեք։ Ես բանի մը պետք չունիմ։ Ուրիշ ավելի նեղություն ունեցողներ կան։

— Չէ՛, տեր հայր, չէ՛. ա՛ռ. սա քեզի համար չէ։

Ու ծանր, խորհրդավոր ձայնով մը ցածկեկ, ավելցուց.

— Ժողովրդիդ համար վառոդ, հրացան գնե։ Խոհեմությունը զենքին մեջն է։ «Որ ո՛չ սուր առցե, սրով անկցի»։

Տերտերը նվերն ընդունեց և էֆենտիին երեսը նայելով, ժպտաց.

— Աս կարմիր ժամուց է,— ըսավ։

Ու երկուքին աչքերն իրարու հանդիպեցան։ Անոնց մեջ կը վառեր հայ աղքատին ու հայ հարուստին հազար տարվան ատելությունը մահմեդական թշնամիին դեմ։

Վերջ

ԳՐԱԿԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԺԹ ԴԱՐՈՒ ԹՈՒՐՔԻՈ ՀԱՅՈՑ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ

Ա

Թուրքիո հայոց արդի գրականությունը հայրենի երկրեն հեռու, օտար հողի վրա աշխարհ եկավ. ու դեռ հոնկե կը հետամտի իր բարգավաճմանը։ Պարզենք այն պատճառները, որոնք մեզի վտարանդի գրականություն մը տվին։

* * *

Վերջին չորս դարերուն մեջ թրքահպատակ Հայաստանի քաղաքական, տնտեսական ու մտավորական կյանքին կեդրոնը գաղթավայր մը եղած է Կ. Պոլիս։ Օսմանցիները Հայաստան և Անատոլու իրենց տիրապետությունը որքան ավելի տարածեցին, իրենց մայրաքաղաքն ալ այնքան ավելի գերակշիռ ազդեցությամբ մը իշխեց Թուրքիո ընդհանուր հայոց վրա։

Կ. Պոլիս Թուրքիո մայրաքաղաքը հռչակվելուն պես սկսավ հայերը իրեն քաշել բազմադիմի առավելության հրապույրովը։ Երբ Ֆաթիհ Բյուզանդիոնին տիրեց, հոն շատ քիչ հայ գտավ. չորս դար ետքը Կ. Պոլիս 125,000 բնակիչ ուներ։ Նույն ատենը հույներուն թիվը 124,000-ի կը հասներ. և անոնք երկրին բնիկներն էին։

Թուրքիո հայերը օսմանցիներուն մայրաքաղաքը իրենց ալ ազգային մայրաքաղաքը համարեցան հետևյալ պատճառներով։

Կ. Պոլսո առումեն հետո, Ֆաթիհ հոն հայոց համար կրոնական նոր իշխանություն մը ստեղծեց՝ Պատրիարքությունը։ Հայ ազգը իր եկեղեցական կազմակերպությանը մեջ չէր ունեցած իշխանություն մը Կ. Պոլսո հիմակվան Պատրիարքության նմանող։ Երեք կաթողիկոսություն, որոնց գերագույնը Էջմիածնի Մայր Աթոռը, կը ներկայացնեին հայոց եկեղեցական նվիրապետությունը։ Մինչև Հովակիմին պատրիարքացումը, հայոց եկեղեցիին կրոնական ու վարչական իշխանությունները ի մի ձուլված էին. հայկական պատրիարքություն մը՝ սկզբնավորությունը եղավ այդ կեդրոնացման քայքայումին։

Նորահաստատ Պատրիարքարանը, իբր վարչական իշխանություն, հետզհետե իր իրավասության ենթարկեց երեք կաթողիկոսությունները, ինքը զուտ կրոնականին մեջ էջմիածնի ենթարկվելով։ Ու երբ հայոց հոգևոր կեդրոնավայրը ուրիշ պետություններու իշխանության ներքև անցավ, այն ատեն Թուրքիո հայոց հետ էջմիածնի հարաբերությունները շատ սահմանափակվեցան։ Առաքում մյուռոնի, եպիսկոպոսական ձեռնադրություն պատրիարքարանեն վկայեալ վարդապետներու, ահա գլխավորապես ինչ որ կաթողիկոսին իրավունքը մնաց։ Իսկ Պատրիարքը մեծամեծ առավելություններ վայելեց իբր սուլթանին հպատակ հայոց պետն ու գլուխը։ Իրեն տրված իրավունքներուն ընդարձակությամբը, կառավարության հանդեպ ստանձնած պարտականություններուն մեծությամբը, Պատրիարքարանը Հայաստանի ու ամեն հայաբնակ նահանգներուն վրա հզորապես ներգործող իշխանություն մը հանդիսացավ հետզհետե։ Ու օրին մեկն ալ մինչևիսկ Եվրոպայի առջև հանուն Հայաստանի խոսելու ձեռնահասությունը պիտի ունենար։

Պատրիարքարանին քով կը սկսեր բարձրանալ ազդեցիկ դասակարգ մըն ալ, որուն զորությունը նահանգները պիտի զգային։

Այդ դասակարգին ծագումը Հայաստանի քաղաքներեն ու գյուղերեն էր։

Կ. Պոլիս գաղթող հայերը հոն պիտի կրնային հարստանալու շատ նպաստավոր պայմաններ գտնել։ Հայաստան ծովեզերքեն հեռու է. իր առևտրական մթերանոցը, ինչպես և ներածության ու արտածության մեծ պողոտան, Պոլիսը եղած է։ Պոլիսը առևտրական կեդրոն, հայը՝ վաճառական ժողովուրդ՝ բնականաբար այնտեղ պիտի վազեր։

Իսլամադեն պատերազմիկ ցեղն ալ պետք ուներ, իր հիմնած նոր կայսրության բարգավաճումին համար, հայուն պես ժողովուրդի մը. ուստի շատ դյուրություններ ընծայեց մայրաքաղաքին մեջ հայոց թիվը ստվարացնելու համար։ Պրուսայեն՝ Թուրքիո նախորդ մայրաքաղաքը՝ հայ գաղթականություն մը 1461-ին Պոլիս տեղափոխվեցավ Ֆաթիհ Մեհմետին հրամանովը։ Նույն աշխարհակալը 1475-ին Խրիմեն և 1479-ին Գարամանիայեն բազմաթիվ հայեր Պոլիս փոխադրել տվավ։ Ֆաթիհին հաջորդները շարունակեցին անոր հայասեր քաղաքականությունը։ Երբ Յավուզ սուլթան Սելիմ Դավրեժը 1513-ին առավ, հոնկե շատ մը հայ արվեստագետներ Պոլիս ղրկեց։ Պարսիկներու և Թուրքերու պատերազմները, 1554—1577, հայ նորանոր գաղութներու Կ. Պոլիս հաստատման պատճառ եղան։ Այսպես, հայերը մերթ իրենց սիրահոժար հավանությամբը, մերթ դժբախտ հանգամանքներե բռնադատյալ, կ'եր-

թային սուլթաններուն մայրաքաղաքը, շենցնելու, և իրենք ալ շեննալու։

Հայերը իրենց խելքովը, ճարտարությամբը, աշխատասիրությամբը հաջողեցան երկրին վարչության մեջ մեծկակ տեղ մը գրավել։ Ու օր մը իրենց սեփականությունը եղան փողերանոցը, վառոդարանը, արքունական ու պետական ճարտարապետությունը։ Լեցվեցան Դուռը, դատարանները, վարչական ամեն պաշտոնատուները, դեսպանատուները։ Եկան տիրապետող ցեղին բարձակից եղան կայսրության գերագույն խորհուրդին մեջ, իբր վարիչ նախարարներ։ Իրենց հանձնվեցավ նույնիսկ սուլթանական գանձարանին մատակարարությունը։ Միևնույն ատեն հայերը Կ. Պոլիս ամենահզոր դիրք մը գրավեցին անկախ ասպարեզներու մեջ, որպիսիք են՝ բժշկություն, փաստաբանություն, ճարտարապետություն, սեղանավորություն և այլն։

Հայերը Կ. Պոլիս զորանալով ու Թուրք նախարարներուն, ինչպես և պալատին հետ ալ սերտ հարաբերություններ հաստատելով, հզորապես կ՚ազդեին թե՛ նահանգային գործերուն, և թե՛ ազգին ընդհանուր վիճակին վրա։ Կ. Պոլսո այս զորությունը բնականաբար մայրաքաղաքին ամենամեծ տեղ մը պիտի տար հայոց կյանքին մեջ։ Պոլիսը, իբր վարչական կեդրոն, մահմեդականներուն համար որքան կարևորություն որ ուներ, այնքան ալ— և շատ մը պատճառներով թերևս ավելին ալ— ուներ հայոց համար. ուստի և հայերն ալ գործնականին մեջ զայն իրենց մայրաքաղաքը նկատեցին։

Կ. Պոլիս Հայաստանի կյանքին մեջ իր ստացած գերակշիռ ազդեցությամբը դարձավ եղավ նաև ցեղային միության կեդրոն մը հայ ազգին համար։ Հայկական ամեն նահանգ իր առանձին կյանքովը կ՚ապրեր, առանց ընդարձակ հարաբերության մեջ գտնվելու ուրիշ նահանգի հետ։ Ակնը Վանեն, Մուշը Սիսեն, Խարբերդը Բաղեշեն շատ հեռու էին։ Ո՛չ առևտրական, ո՛չ քաղաքական, ո՛չ մտավորական հարկ մը իրարու կը մոտեցներ իրարմե լեռներով ու ձորերով անջրպետյալ ճանապարհազուրկ քաղաքները։ Պատմությունն ու եկեղեցին հայ կը պահեին յուրաքանչյուր քաղաքը, յուրաքանչյուր գեղը, առանց սակայն ընդհանուր հաղորդակցություն մը հաստատելու ամենուն միջև։ Ծայրահեղ ապակեդրոնացում, ուր հոգեկան անտեսանելի կապ մը միայն մեզ իրարու կը զոդեր։ Բայց երբ Հայաստան ու Անատոլու հետզհետե Օսմանյան կայսրության մաս կազմեցին ու անոր կեդրոնին հետ սերտ հարաբերության մեջ մտան, հայերն ալ իրենց քաղաքներեն ու գեղերեն հոն գալով սկսան իրար գտնել, իրարու միանալ։ Ա՛լ Սեբաստիա, Կարին, Մարզվան, Ատանա չկային։ Հայերը այլևայլ թաղեր բնակելով իրարու կը

խառնվեին «ընդ հովանեաւ (այսինչ) սուրբ եկեղեցւոյն»։ Այդ բոլոր սրբահպատակ թաղերը Պատրիարքարանի մը շուրջը կը բոլորվեին։ Պատրիարքարանը կ'ըլլար կեդրոնաձիգ զորություն մը, որ, ինչպես Պոլսո թաղերը, նույն և նահանգներն ալ իրեն կը քաշեր։ Ազգային Միությունն էր, որ կը պատրաստվեր։ Սահմանադրությունը Միության պսակումն եղավ։ Յուրաքանչյուր նահանգի հայությունը — նույնիսկ Հայաստանեն դուրս նահանգներունն ալ — ազգային կյանքի իր տեղական ինքնուրույնությունը պահելով հանդերձ, անդին Պոլիս ալ իր երեսփոխանը ղրկելով կը միանար Հայ-Ազգայնության մարմնին։

Առանց վարանումի կ'ընդունինք, որ եթե Հայաստանի որևէ մեկ քաղաքը կեդրոնավայր հանդիսացած ըլլար մեր միության, տարակույս չկա թե բարիքը շատ ավելի մեծ պիտի ըլլար։ Պիտի հառաջադիմեինք ավելի ազգային զարգացմամբ։ Բայց երբ աչքի առջև կ'ունենանք Թուրքիո վարչական կազմակերպությունը, կը զգանք թե անհնարին էր, որ Հայաստանի որևէ քաղաք մը կարենար Պոլսո մենաշնորհը իրեն սեփականել։

* * *

Երբ Պոլիս, այդ օտար գաղթավայրը, պարագաներու անդիմադրելի բերմամբը Թուրքիո հայոց քաղաքական և տնտեսական կյանքին, ինչպես և ազգային միության ալ կեդրոնը կը հանդիսանար, բնական էր, որ մեր մտավոր զարգացմանն ալ կեդրոնավայրը դառնար, ու հոն ծներ մեր Նոր գրականությունը։

Տպագրության գյուտը մեր ալ մտավորական զարգացումը պիտի արագեր։ Դժբախտությունը այն եղավ, որ քաղաքական հանգամանքները մեր գրականությունը, ինչպես և մեր մտավորական հառաջադիմությունը, խոտորեցուցին կանոնավոր բնաշրջումի ընթացքեն։

Հայոց մեջ տպագրության ծավալումեն առաջ, Հայաստան իր վանքերովը մեր մտավորական պետքերը կը հոգար։ Իսկ երբ հայկական տառեր ձուլվեցան ու հայկական գրքեր տպագրվիլ սկսան, վանքերուն մատենագրական պաշտոնը այլևս պիտի վերջանար, եթե իրենք ալ տպարան չունենային։ Չունեցան. հետևանքը հայտնի է։ Բայց աշխարհականներն ալ տպարան չունեցան Հայաստան։

Ի սկզբան շատ դժվարություններ կային Հայաստան տպարան մը հաստատելու համար։ Շոգենավին գյուտեն հետո մամուլի փոխադրության ավելի դյուրություն կար, բայց Թուրք իշխանությունը չթույլատրեց

Հայաստան տպարանի հաստատությամբ։ Գիրք կամ թերթ Հայաստանեն դուրս կարելի էր տպագրել։ Ուրեմն և մեր գրականությունն ալ հո՛ն պիտի հիմնվեր, ուր մամուլ կար։

Պոլսո հետ Իզմիր ալ տպարան կրցավ ունենալ, ուստի և Իզմիրի հայերն ալ մասնակցեցան նոր գրականության մը ստեղծումին։

Իսկ Մխիթար Աբբան ալ հարկադրված էր իր հիմնած Միաբանությունը Հայաստանեն, մինչևիսկ Թուրքիայեն ալ դուրս տեղավորել։

Այսպես ահա, օտար հողի վրա մեր հին գրականությունը կը փընտրեր իր ապաստարանը, և օտար հողի վրա կծներ մեր նոր գրականությունը։

Բ

Մխիթարյան Միաբանության երկասիրությունները երեք ճյուղի կը բաժնվին,— պատմական, լեզվական, մատենագրական։ Մեր նոր գրականության վրա առանցմե յուրաքանչյուրին ներգործությունը համառոտ մը հիշեցնենք։

Մխիթարյանց առաջին գործը եղած է հայոց պատմության տարածումովը ապահովել մեր ազգայնության պահպանումը։ Իրենց պատմական հրատարակությունները հզորապես նպաստեցին մեր անցյալին հարությանը։ Մեր ժամանակակից կյանքը նախ և առաջ մեր հին պատմության ստեղծագործություն է։ Երբ Կ. Պոլսո հայոց մտավորական շարժումին վրա խոսինք, հոն պիտի տեսնենք պատմության ազդեցությունը նոր սերունդներուն մտքին վրա։

Մխիթարյանները եղան նաև մեր լեզվին ավանդապահները, ու զայն զարգացուցին։ Լեզունիս երկրին մեջ կենդանի կը մնար, բայց իր ույժը կը սպառեր։ Երբ լեզու մը չի հառաջադիմեր, ա՛լ կը սկսի հյուծիլ։ Մեր լեզուն չէր կրնար հառաջադիմել, վասնզի մտքերնիս ալ չէր հառաջադիմեր։ Քաղաքական աղետները դարերու մեջ հայ ցեղը հետզհետե տկարացնելով, տկարացուցած էին և անոր լեզուն ալ։ Իսկ օտար աշխարհներ՝ հայ լեզուն հայ ժողովուրդին բոլորովին անպետ ըլլալու վտանգին կ՚ենթարկվեր։ Մխիթարյանները ի մի համբարեցին լեզվին բառերը, ոճերը, ու զանոնք միանգամայն գործածության մեջ դրին նորանոր հրատարակություններով։ Բառարաններ ու բազմատեսակ գրքեր հայ լեզվի ընտելացումը և անոր գործածությունը դյուրացուցին, մանավորապես անոնց՝ որոնք լեզուն սորվելու համար դյուրություն չունեին նախնյաց բոլոր գիրքերը համբերատար աշխատությամբ ուսումնասիրելու։

Մխիթարյանները թարգմանեցին հելլեն և լատին մատենագրության գլուխգործոցները։ Եվրոպան ալ գրելու արվեստը անոնցմե սորված է, և կշարունակե սորվիլ։ Թուրքիո հայոց գրականության մեջ կտեսնվի հելլենլատին դպրության ազդեցությունը։

Որքան ավելի խորապես քննենք Մխիթարյան հրատարակություններուն հատկությունները, այնքան ավելի խորապես պիտի համոզվինք անոնց դերին բարերար ներգործությանը մեր մտքին վրա, մեր լեզվին վրա, մեր ոճին վրա։

* * *

Նոր գրականության մյուս կեդրոնը Իզմիր եղավ։ Իզմիրի հայոց գրականության պատմությունը կնճռոտ չէ։ Քիչ շատ եվրոպականացյալ համարվող հելլեն քաղաքի մը մեջ, որ հարուստ էր, հայ գաղթականություն մը, նյութապես բարգավաճ՝ կ'ունենա իր տպարանը, տեղական մամուլը և գրականություն մը, որ գլխավորապես թարգմանական է։

Իզմիրի հայերը ազգային ընդհանուր կյանքին անմիջական, ընդարձակ մասնակցություն մը չէին կրնար ունենալ. իրենց տեղական կյանքն ալ նեղ շրջանակի մը մեջ կը սահմանափակվեր։ Հեռու կը մնային Հայաստանեն. մայր հայրենիքի հետ իրենց հարաբերությունները ո՛չ բազմատարած էին, ոչ ալ հաճախակի։ Այս բոլոր հանգամանքները աննպաստ էին տոհմային դրոշմ կրող գրականության մը ստեղծած ձգտումներուն։ Իզմիր առաջին անգամ տպարան ունեցավ 1759-ին։ Այդ թվականեն ի վեր իր հրատարակությունները գլխավորապես օրագրական ու թարգմանական եղած էին։ Արշալույս Արարատյան, Արփի Արարատյան, Տաղիկ, Մեռեօրա, Արևելյան Մամուլ կես դարու մեջ միմյանց հաջորդեցին կամ միասին ապրեցան։ Հեղինակությունները սակավաթիվ են. դարագլուխ կազմող, անմոռացության սահմանված գիրք մը չկա։

Իզմիր տպագրված թարգմանություններն են, որ իրենց տեսակին մեջ նորություններ եղան և ազդեցին մտքերու ընթացքին վրա։

Այդ թարգմանությունները գլխավոր երկու բաժանումի կը վերածվին,— զվարճացողներ, հրահանգողներ։

Առաջին բաժանումին կը պատկանին Մոնթե-Քրիսթոյի պես գրքերը։ Ասոնք հայ ժողովուրդին ընթերցանության ախորժակ բերին։ Հետաքրքրություն արթնցնող, երևակայություն գրգռող, հրապույր պարգևող գրքեր, որոնք լափվեցան։ Իզմիրյան թարգմանությունները մեծ զարկ տվին ընթերցասիրության. ով որ գիրք մը կարդալ կը սկսեր, ա՛լ չէր կրնար զայն ձեռքեն ձգել մինչև ավարտումը։ Այդ գիրքեր

քերը հափշտակեցին ժողովուրդին միտքը, հզոր ու տևական ազդեցություն մը ունեցան։ Կ. Պոլսո օրագրական մամուլն ալ օրինակ առավ Իզմիրեն։ Այսօր այդ մամուլը իր հաջողության համար շատ բան պարտական է զվարճացնող վեպերու թարգմանության։

Իզմիրյան այդ կարգի թարգմանությունները նույնիսկ իրենց տեսակին մեջ, եվրոպական գրականության վրա գաղափար մը տվին, մանավորապես անոնց՝ որոնք անընդունակ էին մեծ գրականության արտադրությունները հաճույքով կարդալու։ Ինչ որ ըլլա, այդպիսի գիրքերը ժողովուրդին իմացուցին թե իրենց գիտցածեն տարբեր ոճով գրականություն մը կա Եվրոպայի մեջ։ Այդ թարգմանությանց միջոցով ազգին մեջ տարածվեցան եվրոպական պատմության վրա գաղափարներ, գիտական տեղեկություններ, բարոյականի գործնական դասեր։

Երկրորդ բաժանումը բնորոշող գիրքը Հյուկոյի Թշվառները են։ Այդ մեծ գլուխգործոցը իր մանրամասնություններուն մեջ անշուշտ շատ հասկանալի չէր հայ ժողովուրդին։ Նույնիսկ քիչ շատ կանոնավոր կրթություն մը ստացողները շատ դժվարություններ պիտի քաշեին Թշվառները ինչպես որ պետք է հասկնալու համար։ Բայց Հյուկոյի շունչը կը սարսռեցնե, կը հովհարե ամբոխն ալ։ Թշվառները անեղծակայելի նորաւթյուններով հմայեց հայ ժողովուրդը։

Այս երկրորդ շարքին մեջ են այն փոքրիկ հատորներն ալ, որոնք պարունակությամբ Թշվառներեն թեև հիմնովին կը տարբերին, բայց մեծ գրականության կը պատկանին. օրինակ՝ Կյոթեյի Վերթերը, Մյուսեի Դարուս մեկ զավկին խոստովանանքը:

Այսպես ահա Մխիթարյանները մեր հին պատմությունը, մեր հին լեզուն, հելլեն-լատին դասական հին գրականությունը մեր մեջ ծավալելով կը ջանային մեզի մեր հայրենիքին հարազատ զավակը պահել և աշակերտել տիեզերական վսեմ արվեստին։ Իզմիրի գրագետները կուգային ծերոն կաղնիին վրա պատվաստել ժամանակակից լեզուն, ժամանակակից գրականության գեղեցկությունը։

Գ

Մեր գրականության պատմությունը ըրած ատենիս երբ «Թուրքիա Հայեր» բացատրությունը կը գործածենք, անով պետք է պարզապես «Կ. Պոլսո Հայեր» հասկնալ։ Հայաստան գիրք ու թերթ ունեցած չէ։

Իսկ Կ. Պոլսո գրականության հատկանիշը հրապարակագրությունը եղավ. վանքի պոլսեցիները կուլի կյանքով մը ապրեցան։ Քանդումի և

կառուցման կռիվներու կյանքը։ «Հառաջադիմությունը շինելու մեջ չի կայանար միշտ, այլ նաև՝ քանդումի մեջ ալ», դիտել տված է Պըքլ։

Քանդումի այդ ձեռնարկը հայտնապես երևան գալ սկսավ 1850-ին բոլորտիքը. ուստի՝ երբ հիմակ Պոլսո գրականության վրա հետադարձ ակնարկ մը տալ կ'ուզենք, չուկետը այդ 1850 թվականը կը դնենք։ Մեր ավանդական գաղափարները այդ ատենները սկսան իրենց դեմը նոր գաղափարներ գտնել։ Այդ թվականներեն կը սկսի բացվիլ թողարանը նոր մտքի մը, որուն վազքը 1895-ին դադար կ'առնե, առժամապես։ Պահպանողականության ու հառաջադիմության կռիվներու ծագումը։

Այդ ծագումը ծայր կուտա ԺԶ դարուն վերջերը, Կ. Պոլիս առաջին հայ տպարանին հաստատությամբ 1567-ին։ Նոր հիմնարկությունը սկիզբները ուրիշ բան չեղավ, բայց եթե Հայաստանի վանքերուն ձեռագրական աշխատությունները դյուրացնող գործիք մը։ Բայց պիտի դյուրացներ նաև նախնական կրթության տարածումը։ Տպարանեն դպրոցը կը ծներ. երկուքեն՝ վերածնունդը հայ մտքին։

Դանդաղկոտ հառաջխաղացություն, բայց հետևնիս հազարավոր տարիներու կոշկոռ մը կար. երկաթի մը պտըտիկ կտորը զայն պիտի ծակեր ու հոնկե նոր մտքին համար անցք մը պիտի պատրաստեր դեպի ապագան։ Ռահվիրան պետք ուներ ժամանակի օժանդակությանը։

Կ. Պոլիս առաջին տպարանին հաստատութենեն դարուկես ետքն է, որ առաջին դպրոցն ալ կը բացվի ԺԸ դարուն առաջին քառորդին. Տեր Թոդիկյան դպրատուն մը անշուշտ. բայց վերջապես հարյուրավոր տղոց ա, բ, գ, կը սորվեցներ։ Հինգերորդ դարու ոսկեդարյան գրականությաննիս ալ այբբենեն ծնավ։

Տպարանին ու դպրոցին հզոր աջակիցը հանդիսացավ շոգենավը։ Մեր մտքին առջև Եվրոպայի ճամփան կը բացվեր։

Շնորհիվ շոգենավին, Կ. Պոլսո հայերը սկսան Եվրոպայի հետ առևտրական ընդարձակ հարաբերություններ հաստատել։ Վաճառականության պահանջումովը օտար լեզուներու ուսումը Պոլսո դպրոցներուն մեջ ներմուծվեցավ։ Օտար լեզուները բնականաբար իրենց հետ օտար, այսինքն՝ նոր գաղափարներ ալ պիտի մտցնեին նոր սերունդին մտքին մեջ։

Այդ նոր սերունդը, դարձյալ շոգենավերուն ընծայած դյուրությանց շնորհիվ, պատեհություն կ'ունենար նույնիսկ Եվրոպայի մեջ ընտելանալ եվրոպական մտքին։

Մինչ մեկ կողմեն նոր վաճառականությունը Անգլիա կը դիմեր, մյուս կողմեն ալ հայ տղաքը կրթվելու համար Ֆրանսա ու Իտալիա կը մեկ-

նե՛րն։ Պոլսո քաղքենի դասակարգին պատկանողներեն ոմանք իրենց զաւակները Փարիզ կը ղրկեին մասնագիտութիւն մը սորվելու համար։ Գացողներու խումբին մեջ կային նաև անանկներ ալ, որոնք ունեւորներու զաւակ չէին, բայց կը հաջողեին երթալ։ Ասոնք ամենքը գրեթե երիտասարդ եղած կ'երթային։ Իսկ միևնույն ատենը՝ Վենետիկ ու Բաւտուա բացված Ռափայելյան և Մուրատյան վարժարանները կ'երթային պատանիներ, գրեթե մանուկներ, որոնց ուղեղները պիտի զարգանային Մխիթարյանց ձեռքովն եսկ։

* * *

Ֆրանսայեն և Իտալիայեն վերադարձող աշակերտները Պոլսո հայոց կյանքին վրա շատ հզոր և վճռական ազդեցություն ունեցան։ Կուգային իրարմե տարբեր գաղափարներով սնած։ Այդ տարբերությունները սակայն իրարու հետ կը ներդաշնակվեին ազգային կյանքին բարգավաճմանը համար։ Փարիզ զարգացած երիտասարդությունը ավելի ընդհանուր, համամարդկային գաղափարներով տոգորված էր, քան թե զուտ հայկականներով։ Իսկ Մխիթարյանց աշակերտներուն հատկանիշն էր— ինչպես հիմակվան ընթացիկ բացատրությամբ մը պիտի ըսվեր— ազգայնամոլությունը, նասիոնալիզմ:

Ֆրանսա գացող երիտասարդությունը Պոլսեն խելահաս կը մեկներ, բարոյապես ճնշող մթնոլորտի մը ազդեցությանը ներքև։ Հասնելով Փարիզ, հայ երիտասարդները անհագորեն կը լափեին Քինեի, Միշլեի, Հյուկոյի, Լամարթինի խոսքերն ու գրքերը։ Ու ժամանակը ընդհանուր մարդասիրության, տիեզերական եղբայրակցության դարն էր. 1848։ Երիտասարդները զուտ կ'երթային Փարիզ, ու հոնկե՝ եվրոպականացյալհայ կը վերադառնային։

Փարիզեն հիմնովին տարբեր միջավայրեր էին Վենետիկ ու Բատուա։ Արտաքին աշխարհեն անջատված վարժարաններ՝ գրգանուշ պարտեզներ՝ անոնց մեջ մտերմական կյանքով կը մեծնային հայ տղաքը։ Իրենց լեզվին դայակը մեր դյուցազանց լեզուն էր՝ գրաբարը. իրենց սրտին դաստիարակը՝ մեր պատմությունն էր։ Ու Սուրբ-Ղազարը՝ բացակա հայրենիքին հիշատակարանը։ Տիեզերական մարդասիրության բազմաշառաչ գոռումներուն տեղ, զուտ-իտալական հայրենասիրության ցավի մրմունջը իրենց սրտերը կը կեղեքեր, անոր զայրույթին զոռը իրենց հոգիները սրտմտությամբ կը լեցներ։ Ալֆիերի, Ֆոսքոլո, Բերտեմոնթե, Բելլիքո, Մանձոնի գաղափարի իրենց կրթիչները եղան։ Վե-

նետիկյան լակոնային թխորակ կանաչ ջրերը կարմրերփին տեսան. Սան-Ճիորճոյեն հոսած իտալական արյուններն կարմրցած։ Թետեսքոն իրենք ալ ատեցին։

Գաղափարական տարբեր-տարբեր կրթությունով Պոլիս վերադարձող երկու երիտասարդությունները մտավորական միևնույն ըմբոստացման սպայակույտը պիտի կազմեին։

Այդ միջոցին Պոլիս տոհմային կյանքի մեջ բռնապետությունը մարմնացնող երկու իշխանություն կար. Գում-Քաբուի՝ վաղնջուց, և Սագըզ-Աղաճիի՝ նորահաստատ պատրիարքարանները։

Երկու իշխանությունները թեև հավասարապես կը բռնապետեին, սակայն իրենց նպատակները համանման չէին։ Գում-Քաբու հառաջադիմությունը կը շփոթեր անհավատության հետ։ Կը վախնար որ նոր գաղափարները, նույնիսկ լեզվականները, հայ ժողովուրդը իր հայրենի ավանդություններեն կ՚օտարեն, և հետևաբար իրեն մոռցնել կուտան իր ազգությունը, երկիրն ալ մեկտեղ։ Գում-Քաբուի բռնապետության նպատակը ազգայնության պահպանումն էր, ուստի և իր ձգտումը ազգասիրական։ Կը կարծեր պատերազմիլ ընդդեմ համամարդկային գաղափարին, որուն է՛ն աչքի զարնող ներկայացուցիչը Ռուսինյանը կը համարեր։

Իսկ Սագըզ-Աղաճիի պատրիարքարանը կը փափաքեր համամարդկային գաղափարներու տարածման. ուստի և կը ջանար ամեն միջոցով մահացնել ազգայնական զգացումը, որ կը մարմնանար հանձին Պեշիկթաշլյանի,— Մխիթարյանց աշակերտ մը։

Այս քանի մը նկատողությունները պետք է աչքի առջև ունենալ, որպեսզի կարելի ըլլա Կ. Պոլսո գրական ձգտումին և ուղղության ամբողջությունը ըմբռնել։ Այդ գրականությունը տեսակ մը վերացական, անհամ, անհոտ տաղաչափություն չեղավ։ Ոմանք, և մասնավորապես ռուսահայ քննադատներ, այնպես կարծեր են թե, Վոսփորի ափերեն գրող հայերը երգած են միայն ծաղիկը, լուսինը, զեփյուռը։ Ու արձակ գրողներն ալ պարզապես քեֆի տեսակ մը գրականություն ըրած են, առանց գաղափարական որևէ ձգտումի։ Այս սխալ դատողությունը հետևանք է հարևանցի տեսության, երբեմն և ոչ թե քիչ մը խոր փորված քննության։

Առայժմ հոս կը թողունք Եվրոպայեն վերադարձողները, որոնք Պոլիս ըմբոստացման կռիվը պիտի մղեն։ Նկատողության առնենք 19-րդ դարուն մեջ տեղվանքը Կ. Պոլսո և Հայաստանի հարաբերությանց վիճակը։

Դ

Հետզհետե Բյուզանդիոն հոսող հայերը հոն ի մի ձուլվելով ստեղծեցին նոր տիպար հայ մը՝ պոլսեցի հայը։ Ընդարձակածավալ տարածությունը որ Հայաստանը Պոլսեն կ՚անջրպետե, մայրաքաղաքին հայն ալ բարոյապես կամաց-կամաց կը զատուցանե երկրին հայեն։ Բյուզանդիոն կ՚այլափոխին հայրենի վարք ու բարք, կը դեղնաշորթին կրոնական ավանդություններ, կը ծնի նոր լեզու մը։ Հայաստանե պոլսեցիին այս օտարացումը մեր տոհմային գրականության զարգացման վրա անբարի ազդեցություն մը պիտի ունենար։

Պոլսեցի հայուն մեծ տկարությունը լեզվի մը պակասությունը եղավ։ Հայաստանի յուրաքանչյուր նահանգը թեև իրեն հատուկ գավառաբարբառ մը կը խոսի, բայց ժողովուրդը ընդհանուր լեզու մը ունի, որուն նախատիպը գրաբարն է։ Թրքահպատակ Հայաստանեն մինչև Արարատյան նահանգը այդ լեզուն իր բառերովը, բացատրություններովը, առածներովը կը ներկայացնե կազմակերպյալ միակ լեզու մը։ Հայաստանի որևէ քաղաք մը եթե Պոլսո առավելությունները վայելած ըլլար, պիտի ունենայինք ավելի բնական աշխարհաբար մը, ավելի կարճ ժամանակամիջոցի մեջ։ Մեր գրականության զարգացումն ալ ավելի արագ պիտի հառաջանար և ավելի ուժգնապես պիտի կրեր տոհմային դրոշմը։

Հայաստանի և Անատոլուի զանազան քաղաքներե Պոլիս եկող հայերը իրենց հետ կը բերեին իրենց գավառաբարբառները, իրենց գրաբառնակը։ Միացեղ, բայց բազմաճետ լեզուն Պոլիս Թուրքերենի հալոցին մեջ հալելով Թրքական կաղապարի վրա պիտի Թափվեր։ Մեր աշխարհաբարը Թուրքերենի քերականության, Թուրքերենի կազմակերպության վրա սկսավ հորինվիլ, ինքնաբերաբար, պարզապես մտովի Թարգմանությամբ։ Տարիներու ընԹացքին մեջ օտար լեզուներ ևս պիտի գային նորաԹեք բարբառին զարգացմանը աջակցելու։ Ու գրաբարն ալ հրապուրիչ բռնապետությամբ և հայրենատուր իրավունքով պիտի ուզեր ինքը կերտել նոր գրականության մը ստեղծումին նախասահմանյալ նորալուր բարբառը։ Եվրոպական կրթություն ստացող երիտասարդներեն ոմանք այս խառնակությունը տեսնելով, ուզեցին տիրող շփոթութենեն օգտվիլ և լեզվին տրամաբանական ընթացք մը տալ ընտրողականությամբ։ Կը Թվի Թե իրենք ալ կը կրեին ընտրողական փիլիսոփայության

ազդեցությունը։ Քուզենի* դպրոցը այն ժամանակները դեռ կը ծաղկեր ու ապագա ալ կը խոստանար։ Տրամաբանական լեզվի մը ստեղծման հետամտողները կարող չեղան ըմբռնել, որ պոլսական լեզուն որքան ալ այլայլուկ խառնուրդ մը կը թվեր, բայց և այնպես պիտի ըմբոստանար ընդդեմ տրամաբանական որևէ լուծի։ Պոլսեցի հայուն բերնին պահանջումներն էին որ պիտի սահմանադրեին ներդաշնակության օրինագիրքը։ Մեր նոր բառարանը, մեր նոր քերականությունը այդ օրինագրքին պիտի հպատակեին։ Ռուսինյան, Օտյան, խանդավառությամբ արբշիռ երիտասարդներ, չուզեցին ուսումնասիրել լեզուներու բնաշրջման ընթացքները։ Պոլսեցիին հայերենը ուզեցին հնազանդեցնել իրենցմե արձակված հրամաններու՝ ասկե՝ **Ուղղախոսությունը**:

Պատրիարքարանի իշխանությունը այս **նորելուկ կանոնագրեն** վախցավ։ Լեզվի մը բնաշրջման խորհրդավոր պայմանները ինքն ալ կ՚անգիտանար։ «Ուսումնական» երիտասարդները անսխալական համարեցավ։ **Ուղղախոսությունին** մեջ նորալուր լեզվի մը անկրոնությունը կարծեց տեսնել։ Պահպանողական իշխանությունն էր, ուստի ուզեց Եկեղեցին ու ազգը պաշտպանել վտանգին դեմ։ Հալածանք ընդդեմ նոր երիտասարդության։ Հալածյալներուն ինքնապաշտպանության էն ապահով միջոցը թշնամիին վրա հարձակումն է։ Ռուսինյան, Օտյան, իրենց համախոհները հարձակողականի դիմեցին։

Այդ նոր երիտասարդները, բազմադիմի հատկություններով օժտըված, իրենց ույժն ու կորովը հանրային կյանքի վերանորոգման կռիվներուն նվիրեցին ու հրապարակագիրներ եղան։ Իրավ է, որ վերջը վերջը Սահմանադրության հաստատությամբ հաղթանակը տարին ընդդեմ անսահման իշխանության, բայց ուղղախոսության դրոշակը ծալված տեղը մնաց։

Երբ ուղղախոսները արձակ համարձակ գրեցին իրենց ուզած քերականությամբը, անդրադարձան թե առաջվընե շատ ավելի տկար վիճակի մեջ էին։ Հետևողներ չունեցան, դպրոց չհիմնեցին, զիրենք հասկըցող չկար։ Կրոնական իշխանությունն ալ քիչ չզարմացավ ձերբազատներուն անկարողությունը տեսնելով։ Ինչ որ բռնապետական հալածանքներու միջոցավ խափանել կ՚ուզվեր, ահա ինքնին կը խափանվեր սահմանադրական թույլտվությամբ։ Լեզուներու կազմության կնախագահե

* Ծ. Հ.— Վիքթոր Քուզեն, փիլիսոփա և ֆրանսացի պետական դեմք, ծնած Փարիզ, 1792-ին— պետ. ընտրողական հոգեպաշտության (Spiritualisme èclectigue) դպրոցին։ Գրած է «Ճշմարիտին, Գեղեցիկին և Բարիին մասին» անուն գիրք մը։ Մեռած է 1867-ին։

բռնավոր մը, որ շատ ավելի երկաթե կամք ունի, քան պատրիարքական իշխանությունը։ Անոր զորության առջև ուսումը իր անզորությունը կը զգա, և տրամաբանությունը հալածական կը փախչի։ Այդ բռնադատը՝ պառավին բերանն է։ Չորս դարեր Պոլիս հասցուցած էին պառավներու նոր սերունդ մը։ Պառավներու դպրոցն էր, որ լեզվին ուղղություն պիտի տար։

***

Կրոնական ավանդություններն ալ հետզհետե կը սկսին տկարանալ։ Հայաստանեն գաղթական հայը ջերմեռանդ հավատացյալ մըն էր, հայրենի ավանդությունները երկյուղածությամբ պահպանող մը։ Երկրին հիշատակները սակայն հետզհետե կը տկարանան։ Անոր զավկին սրտին այլևս չեն խոսիր, ու անհասկանալի կը դառնան անոր թոռանը։ Նոր երիտասարդությունը զերծ ու ազատ մնալով այն բոլոր կարիքներեն, որոնք հայրենի երկրին մեջ հայուն միտքը կը կապեն, կը կապկըպեն, Պոլիս կ'ուզեր ազատ թռիչ մը առնել։ Բայց իրեն դեմ կը կանգնեին հին սերունդը, պատրիարքական իշխանությունը։

Նոր սերունդը կը զգա որ Պատրիարքարանը իր ազդեցության տակ ունենալու է, որպեսզի կարողանա Պոլիսն ու Հայաստանը եվրոպական կրթությամբ, եվրոպական գաղափարներով վերանորոգել։ Բայց պատրիարքական իշխանությունը պարզապես եկեղեցականներուն ձեռքին մեջ չէ, այլ՝ աշխարհականներուն ալ։ Ավելի ճիշտ պիտի ըլլա ըսել՝ մանավանդ աշխարհականներուն ձեռքին մեջ։

Անշուշտ զուտ լեզվական խնդրե մը պիտի չծներ 1850—60-ի հուզումը։ Պատրիարքական իշխանությունը կանոնավորելու և սահմանափակելու ձգտումը կրոնական պատերազմի մը համեմատությունները սկսավ առնել։ Այդ պատերազմն էր, որ մտքերը կը հուզեր, օրագրությունը կ'ուժովցներ, և հրապարակագրությունը իշխանության մը աստիճանին կը բարձրացներ։

Կռիվները վերջացան սահմանադրության հաստատությամբ։ Բայց ա՛լ շարժումը սկսած էր. ընդհանրությունը հանրային կյանքի խնդիրներով կը զբաղեր շատ ընդարձակածավալ սահմաններու մեջ։ Օրագրությունը հաստատապես հիմնված էր. ու հայ տաղանդները զանազան ձևերու ներքև կը նվիրվեին հրապարակագրության։

Հրապարակագրությունը ավելի լայն առումով մը հասկնալու ենք։ Պարզ հոդվածին հետ թատերգությունն ալ, ոտանավորն ալ անմիջա-

կան նպատակի մը կը ծառայեն։ Տակավին ոչ ոք մտքեն կ'անցընե «ար-վեստը արվեստին համար» գրականություն մը։

Եթե քննելու ըլլանք այն հարաբերությունները, զոր 1850-են առաջ ու անկե ետքը Հայաստան և Կ. Պոլիս ունեցած են իրարու հետ, պիտի անդրադառնանք թե հիմնական փոփոխություն մը տեղի ունեցած է։ Մինչև ԺԹ դարուն առաջին կեսը Պոլիսը Հայաստանի ազգային կյանքին վրա հզոր ազդեցություն մը չէ բանեցուցած։ Մայր հայրենիքեն շարունակ եկողներն էին, որ իրենց հետ բերած ավանդություններովը կ'արգիլեին Կ. Պոլսո նախորդ գաղթականներուն ազգային հյուծումը։ Իսկ Կ. Պոլսո հայն ալ կը ջանար դրամի միջոցով նպաստել Հայաստանի հաստատություններուն. վանքերը չեն, եկեղեցիները պայծառ կը պահեր։ Բայց 1850-են ետքը Պոլսո հայերը Հայաստանի քաղաքական և մտավորական առաջնորդության կը կոչվեին պարագաներուն բերմամբը։ Հիմակ Պոլիսն էր, որ Հայաստանի գաղափար կը ղրկեր իր օրագիրներով ու գրքերովը։ Պոլիսն էր, որ Հայաստանի կանոնավոր կազմակերպություն մը պիտի տար, Պոլիսն էր, որ Հայաստանի ապրած կյանքը իր մտատանջությանը առարկա պիտի ըներ։ Պոլսական գրականությունը թեև նորածիլ, բայց կոչումի մը ծառայեց։

Ե

Պոլսո այդ գրականությունը, որ 1850-են կը թվագրենք, հանգրվանի մը կը հասնի 1880-ին։ Այդ թվականին Արևելքի մեջ կարևոր դեպքեր պատահած են, ու հայոց կյանքի պայմաններն ալ փոփոխված։ Ու 1850-ի սերունդին պատկանող գրագետներն ու հրապարակագիրները մեծ մասամբ աներևույթացեր են։ Ոմանք մեռած, ոմանք հոգնած, ոմանք փճացած։ Նոր սերունդ մը արդեն պատրաստվելու վրա է։ Գիրքը ավելի և ավելի կը զորանա, օրագրությունը ավելի և ավելի կը զորանա։ Ռուսիո և Թուրքիո հայերը գրական փոխադարձ սերտ հարաբերության մեջ կը մտնեն։ Երկրորդ հանգրվանը 1895-ին է։ Այժմ դառնանք 1850—1880-ի գրականության բնորոշ գիծերուն։

* * *

Գեղարվեստական, կամ ինչպես կրնանք ըսել՝ «գեղագրական»—էսթեթիք-գրականությունը այդ երեսուն տարվան ժամանակամիջոցին մեջ գրեթե գոյություն չէ ունեցած։ Գեղակրի հատկություններով օժտված են Պեշիկթաշլյան, Ռուսինյան, Օտյան։ Հատուկտոր գրվածները

զոր մեզի թողած են այդ տաղանդավոր գրագետները, կը հավաստեն, թե ատոնք ոչ միայն գեղեցկին ճաշակը ունեին, այլ նաև՝ գեղեցկորեն գրելու հատկությունը. սակայն իրենցմե և ոչ մեկը մեծկակ բան մը թողուց։ Հյուկոյի Ուրվականի թարգմանությունը հմայիչ է։ Թերևս մինչևիսկ բնագիրը գերազանցող գեղեցկություն մը։ Օտյանին թախանձագին և քիչ մըն ալ բռնադատ պահանջումովն է, որ Պեշիկթաշլյան այդ թարգմանությունը ըրած է։ Գրաբարագետ հայ մը գեղագրական արվեստին հմայքովը կը դյութի այդ հայացումին մեջ։ Օտյանին հոգեկան տենչանքն ալ կը հայտնվի մեզի։ Իր խոնջենքի ժամերուն մեջ գեղեցիկ գրականության կարոտը կը քաշեր։ Պեշիկթաշլյանի ուրիշ թարգմանությունններն ալ, նմանողությամբ գրած բանաստեղծություններն ալ, ցույց կուտան, թե այդ սիրված հեղինակը գեղարվեստական գրականություն մը պիտի կրնար թողուլ մեզի, եթե կյանքի տարբեր պայմաններու մեջ գտնված ըլլար։ Իսկ Օտյանին նամակները, հոդվածները կ՚ապացուցանեն թե մեծ հեղինակություն մը ըլլալու նախասահմանյալ էր։ Ռուսինյան արվեստագետ մը եղավ, բառին շատ լայն նշանակությամբը։ Եվ այս երեք գրագետներեն ոչ մեկը մեծ երկասիրություն մը թողած է։

Այս հիշատակությունը անցողաբար կ՚ընենք հավաստելու համար, որ Թուրքիո հայոց պակսած չեն մեծ կարողություններով օժտված գրագետներ։ Այս հոդվածին ամբողջության մեջ ընդհանուր կերպով մը կը պարզվին բոլոր այն պատճառները, որոնք Օտյան—Պեշիկթաշլյան սերունդին տաղանդը չեզոքացուցին մեծ գրականության մը համար։ Ու այդ պատճառները կը շարունակվին մինչև հիմակ ալ։

* * *

Վերածնունդի սկզբնավորության այդ 1850—1880 թվականին ծնավ ու մեծցավ գրականություն մը, որուն նպատակն է ժողովուրդին վրա անմիջական ներգործություն։ Մաքառումի տարիներ էին, նոր զգացումներու փթթումի եղանակն էր։ Պետք էր շուտ գրել, շուտ երգել, և շատ։ Հապճեպեն չէր կրնար ծնիլ գործ մը, որ գեղեցիկ ըլլար ու տևականության սահմանված։

Այդ երեսուն տարվան ժամանակամիջոցին «ծաղկեցան» թատերգությունը, երգը— որ բանաստեղծություն կը կոչվեր— օրագրությունը, ճառախոսությունը, ու ետքեն ալ վիպասանությունը։

Թատերգությունը առաջնակարգ տեղ մը կը գրավե այն տենին

գրական արտադրությանցը մեջ։ Իր նյութերը ամենքն ալ մեր ազգային հին կյանքեն առնված են։

Հայրենասիրությունը սկսած էր հայ սրտերուն մեջ զուտ կրոնասիրության միանալ։ Դպրոցները օրեօր կը շատնային ու քիչ շատ կը կանոնավորվեին թե Պոլիս, և թե՛ Հայաստան. ընթերցանությունը կը տարածվեր։ Հայոց պատմությունը դուրս կելլեր նախնյաց մատենագրության կամ եսքի գրաբար բազմահատոր հրատարակության շարքեն ու կը ժողովրդականանար դասագրքերու միջոցավ։ «Հուշիկներ»-ը Բազմավեպին մեջ սկսան հրատարակվիլ. ժողովուրդը իր նախահայրերը աչքերուն առջևը տեսնելու ըղձանքովը բորբոքված էր։ Մխիթարյանց աշակերտները Վենետիկեն կը վերադառնային թատրոնասեր։ Թատրոնը կը սկսեր Պոլսո մեկ թաղը, Օրթագեղ, տան մը մեջ։ Հոնկե կը փոխադրվեր դպրոցներու սրահները, մինչև որ իրեն հատուկ բեմը ունենար։ Եվ ունեցավ։ Պոլսո զանազան թաղերը թատրոններ շինեցին։ Խասգեղ, Օրթագեղ, Կետիկ Փաշա սիրուն շենքեր կառուցվեցան։ Եվրոպացիներու կեդրոնավայրը՝ Բերա, իր մեծ թատրոններուն մեջ հայ դերասանական խումբեր տեսավ։ Պոլսո գրեթե ամեն թաղ՝ դպրոցները, սրճարանները ժողովրդական թատերաբեմի կը փոխվեին, մանավորապես բարեկենդանին։ «Վարդանանց» ներկայացումը ազգային պարտականություն էր ամեն բարեկենդանի հինգշաբթին։

Այսօր կրնանք այդ ատենին ողբերգությունները այն պատճառավ միայն հաճույքով կարդալ, որ ժամանակին ոգին ցույց կուտան։ Ժողովուրդը թատերգություն մը պարզապես իր ազգային զգացումովը կը դատեր։ «Վարդանի» ներկայացման մը մեջ Վասակի դերը ստանձնողը եթե Ադամյան մը իսկ եղած ըլլար ու այդ իր դերը արվեստին գերագույն կատարելագործությամբը ներկայացներ, ծափերը իրեն համար չէին։ Իրեն՝ մռլտուք և հայհոյություն։ Ծափերը կը վտառեին դեպի Վարդան, հոգ չէր, թե մեր հերոսը մարմնացնողը ամենախղճուկ բացականչող մը եղած ըլլար։ Ժողովուրդը իր աչքին առջև գաղափար մը կ՚ուզեր տեսնել, իր սրտին խոսող գաղափար մը։ Անոր կը ծափեր։

Հեղինակները բնականաբար ժողովուրդին մակարդակեն շատ վեր չէին կրնար թռչիլ,— ենթադրելով իսկ թե առաջնակարգ թատերգակներ ըլլալու կարողությունը ունեցած ըլլային։

Պեշիկթաշլյան առաջին տեղը կը գրավե այդ հին թատերգակ բանաստեղծներուն մեջ։ Իր ոճը պարզ է, նույնիսկ երբ վսեմին շեշտերովը կը մոնչե։ Լեզուն դյուրահասկանալի։ Այդ ողբերգություններուն մեջ, որոնք մեր արդի դատումովը շատ պակասավոր են, երևան կուգա եվրոպական մատենագրության ընտելացած միտք մը։

Թովմաս Թերզյանի ողբերգությունները Պեշիկթաշլյանի հեղինակություններեն վեր էին արվեստի տեսակետով։ Սակայն անոնք եվրոպական գործերու հայացումն էին, մարդու և տեղի անուններու փոփոխությամբ։

Նարպեյի տաղաչափյալ «Արշակը» միշտ եվրոպական հետևողությամբ, կը մնա դեռ մինչև այսօր ռուսահայոց թատերաբեմին վրա։

Դուրյանի տրամներն-ալ միևնույն շարքին մեջ են։ Մեր պատմական կյանքեն անարվեստ գրվածներ։

Կ. Պոլսո հայոց թատերգակ հեղինակները բազմաթիվ եղած են։ Ամեն անուններու հիշատակությանը պետք չենք տեսներ։ Ամենքն ալ մոռացության դատապարտված են անոնց համար, որոնք մեծ գեղարվեստին զգացումն ու գաղափարը ունին։ Բայց անոնք իրենց ժամանակին մեջ շատ մեծ արդյունք ունեցան։ Մեր հին կյանքին համար որմե

...Իսկ մեզ հաղիվ հեռուեն

Նըվաղ արձագանք մ'եկած հասած է գործին։

Այդ արձագանքը սկսավ շեփորի մը պես գոռալ, «Թունդ-Թունդ հանեց հայոց սրտերը»։

«Անարվեստ» ողբերգությունները մինչ մեկ կողմեն սրտերու վրա կ'ազդեին, միևնույն ատեն հայ լեզուն կը զորացնեին ժողովուրդին մեջ։ Գրական բարբառի մը կը ընտելացնեին Պոլսո հայոց ականջները, մանավանդ անոնց ականջները, որոնք շուկայական խոսակցության վարժված էին։

Եթե հիմակ Հայաստան ու Պոլիս ազգային թատերգության ներկայացումի թույլտվություն եղած ըլլար, տարակույս չունինք, որ Պեշիկթաշլյանի, Դուրյանի, Նարպեյի և ուրիշներու ողբերգությունները դարձյալ ժողովուրդեն խանդավառ ցնծությամբ պիտի ծափահարվեին։

Այդ թատերգության 1850-են հետո գտած ընդունելությունը վիճակացույց մըն է. Կ. Պոլսո հայոց կարճ ժամանակի մեջ ըրած հառաջադիմությանը։ Ու Կ. Պոլսո նորաթեք հայերենն ալ հետզհետե գրական ձև ու կերպարանք առած է, մինչև ընդհանրության հասկնալի ըլլալու աստիճան։

Ուշագրավ երևույթ մը սակայն ան է, որ եվրոպական լեզուներե թարգմանված, օտար բարքեր ներկայացնող տրամներ ալ մեկեն ի մեկ շատ ընդունելություն գտան հայոցմե։ Թողունք Նելլի Աշտարակը *և նման խաղեր, որ ամեն տեղ ժողովրդական են, ինչպես վիպասանության մեջ* Մոնթե Քրիսթոն, *բայց Հյուկոյի մեծ տրամներն ալ ներկայացվեցան հայեվար և զգլխեցին ունկնդիր ժողովուրդը։ Ֆելիքս Բիայի գլուխգործոցն ալ տենդոտ սարսուռով ողջունվեցավ։*

Այս թարգմանությունները կը հավաստեն, թե 1870-են 1875 Պոլսո ժողովուրդին մեջ գրական ճաշակը բավական զարգացած էր. գեղարվեստական հայեվար հեղինակություն մը պիտի կրնար գտնել զինքը հասկընալու և ծափելու համար պատրաստված գոնե խումբ մը։ Բայց մեծ հեղինակությունները չեն կրնար ուսման ու կրթության տարածումին շնորհիվ կարճ ժամանակամիջոցի մը մեջ առաջ գալ։ Ջերմանոցի մեջ կարելի է շուտով պտուղ ու ծաղիկ հասցնել,.բայց ոչ կաղնի՝ ոչ։

* * *

Կ. Պոլսո բանաստեղծությունն, ա՛լ թատրոնին ճամփեն կը հառաջանա։ Խանդավառության ժայթքումն է։ Սահմանադրությունը ամեն մտքեր հափշտակած է։ Հայուն արևելյան երևակայությունը թռիչ առած՝ երանության աշխարհ մը կ՚երազե։ Դարերե ի վեր հանգչած մտքերը կը ցնցվին։ Կը խոյանան դեպի երկինք, բայց ոչ թե հոնկե բալադեմ լուսնին հետ մելամաղձորեն լալու։ Ո՛չ, մինչև Մասիս պիտի սլանան։

Այդ երգերը հիմակ ա՛լ մոռցված են։ Կը պահվին հավաքածուներու մեջ, ու երբ կը կարդանք զանոնք, իրենց անմեղունակ գրականությունը կը ժպտեցնեն մեզ։ Բայց անոնք գարնանային զարթումի օրվան մը ծլումն են, Նոր դրախտալեզվի մը թոթովումները, ապագային մատենագրության առաջին քարը։

* * *

Ծառական սեռը անհամեմատ կերպով կը գերազանցե թե՛ թատերգական, թե՛ տաղաչափական գրականությունը։ Միջակ ատենաբանությունները, որոնք ահեղ թիվ մը կը կազմեն, իրենց տեսակին մեջ շատ վեր են միջակ ողբերգություններեն և միջակ տաղերեն։

Ու քիչ չեն այն ճառերը, որոնք առատորեն հյութեղ գաղափարներ կը պարունակեն ու միանգամայն ամպիոնական գեղարվեստին շնորհովը կը պերճանան։ Տիրմանյանին, Ռուսինյանին, Պեշիկթաշլյանին, Օտյանին, Ասլանյանին և դեռ ուրիշներու ատենաբանությունները այսօր իսկ շատ մեծ հաճույքով կը կարդացվին։

Թեմասացական գրականությունը 1850-են ետքը առանց դժվարության բացառիկ զարգացում ունեցավ, վասնզի այդ սեռը դարերե ի վեր կը մշակվի մեր մեջ, մասնավորապես քարոզին ձևին տակ։ Գրականու-

թյուն մը կը կատարելագործվի դարավոր ժառանգությամբ։ Մեր քրիստոնացման թվականեն մինչև ԺԹ դարը, անընդմեջ հարատևությամբ եղած ենք ժողովուրդ մը, որ քարոզ կու տա, քարոզ կը լսե։ Անցյալեն հարուստ ժառանգություն մը ունինք։

Մեր արդի աշխարհական ատենաբաններուն ունեցած մեկ առավելությունն ալ այն եղավ, որ ուղղակի ամբոխին հետ խոսելու հարկադրըյալ չէին։ Կը ճառեին ժողովներու մեջ, որոնք ընդհանրապես բաղկացած են ավելի կամ նվազ աստիճանով զարգացյալ հայերե։ Այսպիսի ունկնդիրներու առջև հայ ատենաբանները իրենց տաղանդին բոլոր զորությունը երևան կրնային բերել։

Սահմանադրական ժամանակին հոգին հրապարակագրությունը եղավ։ Գրողներուն թիվը անհուն է, բայց շատ քիչեր կը գտնվին, որոնք հրապարակագրության մեջ գրական տաղանդ փայլեցնեն։ Մատթեոս Մամուրյան գրական օրագրողի մը տիպարը եղավ իր Վրոյրի, և մասամբ ալ Շահնուրի, նամակներուն մեջ։ Օրագրությունք իրեն քաշեց գրողներու խումբեր, վասնզի մաքառումի տարիներ էին։ Ու հետո, օրագրությունը մարզարան մըն է և նախադուռ մը գրականության։

✿✿✿

էն քիչ մշակված ճյուղը վիպականը եղավ։ Թեև 1850-են հետո քանի մը վեպ հրատարակված են, բայց պետք է 1876 թվականեն ասդին անցնիլ, տեսնելու համար Թուրքիո հայոց վիպական գրականության լուրջ սկզբնավորությունը։ Ծերենցն է (բժիշկ Հովսեփ Շիշմանյան), որ մեր հին կյանքեն գրած վեպերովը ճամփա կը բանա մեր ապագա վիպասանության։

Նորածիլ գրականություն մը, որ դեռ շատ տկար է, կարող չէ վիպասանություն արտադրել։ Շատ հնարավոր է աշխատությամբ մտքի կարողություններ զարգացնել. բայց վիպասանը, որ միանգամայն բանաստեղծ մըն է, լոկ աշխատությամբ չէ, որ երևան կու գա։ Հարկ է վիպասան ծնած ըլլալ և մշակել բնատուր հատկությունները՝ անոնց զարգացմանը նպաստող միջավայրի մեջ։ Վիպասան ըլլալ ցանկացողները չեն, որ կը պակսին մեզի։ Այս փափաքը ստեղծողներեն շատերուն կը պակսի կարողություն. ոմանց ալ՝ կյանքի դյուրություններ միայնս

* * *

Գրականության այս ստորաբաժանումեն դուրս կը մնան պատմական ու հայրենագիտական երկերը։ Ասոնք կը մշակվին մասնագետներու միջոցով, առանց մեր նոր կյանքին հետ սերտ կապի։

Արևելյան վերջին պատերազմեն ետքը, Պոլսո հանրային կյանքին մեջ նոր սերունդ մը երևան եկավ։ Անոր գրականության պատմությունը կը գրենք ուրիշ առթիվ։ Այսօր հառաջապահ մը հանգչինք նախորդ սերունդեն քանի մը դեմքերու առջև։

Զ

ՊԱԼՅԱՆՆԵՐԸ

Այդ անցյալին մեջ չորս անուն իրարմե անբաժան կը պահվին. Նիկողոս Պալյան, Հարություն Պալյան, Գրիգոր Օտյան, Նահապետ Ռուսինյան։ Մահը տարտղնեց զիրենք։ Հայրենի մեկ հողվրտիք մը անոնց ոսկորներուն դամբարանը չէ։ Նիկողոս Պալյան՝ Պոլիս Օրթագեղ կամ Պեշիկթաշ. եղբայրը՝ Փարիզ. Փարիզ և՛ Օտյան. Ռուսինյան՝ Պոլսո Շիշլին։ Այս էջերուն մեջ միացնենք զիրենք։

Զորսն ալ 1850-ի թարմ սերունդին առաջնորդներն։ Իրենց հայրերը հին հայ-քրիստոնյաներ էին. իրենք՝ մեկեն ի մեկ եվրոպականացած հայեր։

Պալյանները Թուրքիո հայոց է՛ն ժողովրդական մեկ ընտանիքը եղած են։ Արքունի ճարտարապետությունը իրենց ընտանեկան ժառանգությունն էր։ Հարյուրներով կը համրվին այն հայերը, որոնք Պալյաններուն շնորհիվ աշխատած են արքունական ու կառավարական շենքերու կառուցմանը. միշտ գոհ մնացած են. ու շատերը հարստության տեր եղած։

Պալյան եղբայրներու հայրը՝ Կարապետ ամիրան,— կամ ինչպես ան ատենը կ՛ըսեին՝ «խալֆա ամիրան» սուլթան Մեճիտին շատ սիրելի էր։ Իր վայելած համակրանքեն, ինչպես և իր ունեցած դիրքեն միշտ կ՚օգտվեր՝ հայ ժողովրդին ծառայություններ մատուցանելու համար։ Դեռ քառասուն տարի առաջ օսմանյան սուլթաններուն վարմունքը իրենց ծառայող հայոց հետ, քիչ մը արևելյան վեպերը կը հիշեցնե։ Պատմելով մին այն կատակներեն, զոր սուլթան Մեճիտ Պալյաններուն հետ կ՚ըներ, գաղափար մը կու տանք այն ատենվան բարքերուն վրա։

Սուլթան Մեճիտը օր մը Նիկողոս Պալյանը կը կանչե ու իր դիմացը աթոռի մը վրա նստեցնելով ձեռքը չպուխ մը կու տա, որ ծխե։ Նույն միջոցին Կարապետ ամիրային ալ իր քովը գալու հրաման կը ղրկե։ Ճարտարապետը սուլթանին սենյակը մտած րոպեին երբ զավակը այդ անհարկի դիրքին մեջ կը տեսնե, անմիջապես կը հասկնա թե սուլթանը զինքը հանկարծակիի բերելով զբոսնուլ կ'ուզե։ Առանց րոպեական վարանումի, հաճոյակատար դերասանությամբ կ'այլայլվի, կը շփոթի, կը խռովի ու դողդղալով «Ծո՛ Նիկողոս, ծո՛, Նիկողոս, կը թոթվե հայեվար, ծո՛, ատ ի՞նչ խալթ է կ'ընես. ծո՛, տղա, խելքի՞դ է եկեր. ծո՛, ի՞նչ փորձանք պիտի բերես գլխուս»։

Ու սուլթանն է, ահագնաքրքիջ խնդումով կը զվարճանա։

Արքունիքին այդքան սիրելի անձնավորություններ բնականաբար շատ ազդեցություն կ'ունենային հանրային կյանքին վրա։ Բայց որդիները գաղափարով հակառակ էին իրենց հորը։ Կարապետ ամիրան՝ չափազանցորէն պահպանողական հայ մը, թունդ կրոնամոլ, որևէ վերանորոգումի թշնամի։ Կատարյալ տիպարը խավարյալին։ Զավակները՝ կատարյալ տիպարը լուսավորյալին։ Հակոբ պեյ՝ կրտսեր եղբայրը՝ գեղարվեստասեր ու գրասեր ճարտարապետ։ Անդրանիկը՝ Նիկողոս պեյ, նույնպես արվեստագետ մեծ տաղանդ մը, բայց սահմանադրության ալ հիմնադիրը։

Վերև հիշեցինք Պատրիարքարանի կողմե Ռուսինյանի դեմ հարուցված հալածանքը աշխարհաբարի բարեկարգման խորհուրդներու առթիվ։ Եկեղեցական ու ամիրայական ճնշումը խեղդամահ կ'ըներ մանավանդ անոնք, որ 1848-ի Փարիզեն Պոլիս կը վերադառնային։ Սահմանադրության գաղափարը Նիկողոս Պալյանի գրասենյակին մեջ հղացված է։ Ռուսինյան այս իրողությունը սրտահույզ ատենաբանությամբ մը 1870-ին հայտնեց Ազգային Ժողովին մեջ, սուրբ Նիկողայոսի նախատոնակին։

Նիկողոս Պալյան երիտասարդ մեռավ, դեռ երեսունը չմտած։ Բայց իր մտերիմները՝ Ռուսինյան և Օտյան, Սահմանադրությանը հիմնադրողներեն եղան, ու զայն իրենց ձեռքովը գործադրեցին։

Հակոբ պեյն ալ ֆրանսական կրթություն ստացած էր։ Իր բնատուր ձիրքերուն զարգացումը կը պարտեր Ֆրանսայի, զոր կը սիրեր խանդակաթ սիրով։ Գրականության ու գեղարվեստի սիրահար մը. կը հիշեցներ իտալացի ու գերմանացի այն իշխանները, որոնք իրենց շուրջը գրագետներն ու արվեստագետներն արքունիք մը կստեղծեն և անոնց բարեկամն ու զորավիգը կը հանդիսանան։

Կ. Պոլսո Օրթագեղ թաղը, որ երկար ատեն հայ մտավորականու-

թյան կեդրոնավայր մը եղավ, տեսակ մը հայ ակադեմիա իր մեջ համատատված տեսավ։ Հակոբ պեյ Օրթագեղ կը բնակեր։ Արքունի ճարտարապետը իր ծովեզրյա բնակարանին մեջ իր շուրջը կը հավաքեր հայ գրագետներն ու արվեստագետները, և միասին կ'աշխատեին հայ լեզվին, հայ թատրոնին զարգացմանը։ Մեծ սրահ մը հատկացված էր գումարումներուն։ Կանաչ կապերտով ծածկված սեղանի մը շուրջ «ակադեմականներ»-ուն աթոռները կարգավ դրված էին։ Այդ սրահին մեջ պատմաբանները ամենալուրջ ուսումնասիրություններու կը հետամտեին, լեզվագետները հայ լեզվին ճոխացմանը կ'աշխատեին, բանաստեղծները խանդավառ կը երգեին։ Ու անոնց՝ որոնք պետք ունեին՝ ասպնջականը իր պարգևները լիաբուռն կը շռայլեր։

Հակոբ պեյ պզտիկ թատրոն մը կառույց Օրթագեղ, դպրոցին շրջափակին մեջ։ Այնքան սիրուն ու գեղեցիկ շենք մը, որ «ոսկի տուփիկ» կը կոչվեր։ Ջայն Բարեսեր ընկերության նվիրեց։ Իրենց տաղանդը նախ հոն երևան հանեցին Ադամյան և տիկին Հրաչյա։ Պեյը իրենց զորավիգն էր, քաջալերիչը, բարեկամը, պաշտպանը։ Այդ թատրոնին մեջ ներկայացվեցան Շեքսպիրի ու Շիլլերի թատերգությունները, որոնց հերոսները Թերզյան հայ կը մկրտեր։ Հոն ի հանդես բերվեցան Հյուկո, Տյումա Հայր և Որդի, Ֆելիքս Բիա, Մոլիեռ։

Օր մըն ալ մահը հանկարծակիի բերավ այդ տունը։ Հակոբ Պեյին կինը մեռավ։ Ամուսինը մեկնեցավ Փարիզ, իր ցավը ուղևորությամբ քիչ մը ամոքելու համար։ Շատ չանցած իրեն մահվան գուժն ալ կը հասներ Պոլիս։

ԳՐԻԳՈՐ ՕՏՅԱՆ

Օտյան 1850—1880-ի սերունդին է՛ն սիրված ու հարգված դեմքերեն մեկն է։ Հայ ազգը անոր մահվանը չսպասեց իր համակրանքին արտահայտությանը համար։ Սիրո և մեծարանքի փայփայանքներ գգվեցին Օտյանը, անոր հանրային կյանքին սկզբնավորության թվականեն մինչև մահը։ Ու հիմակ ալ իր անունը գուրգուրալիր երկյուղածությամբ մը կը հիշատակվի։ Ու պիտի հիշատակվի միշտ ալ։ Ժողովրդական է ու ժողովրդական կը մնա Օտյան, վասնզի մտատիպար մը եղավ։ Մտատիպար մը հայ պաշտոնեի, մտատիպար մը հայ քաղաքագետի, մտատիպար մը հայ ազգասերի, մտատիպար մը հայ կրոնասերի, մտատիպար մը հայ գրագետի։ Մտատիպար մը, զոր ինքը իրեն համար ստեղծած էր ժողովուրդ մը, դարերու ճնշումին տակ հոգնած։

Օր մը Ազգային Ժողովին մեջ իր ատենապետական աթոռեն հայտարարեց տրտմության զգացյալ շեշտով մը. «Ան հայը, որ իր պետական պաշտոնին ընծայած դյուրություններեն օգտվելով իր շահերուն կը զոհե այս խեղճ ու տարաբախտ ազգը, անիծյա՜լ ըլլա, երի՜ցս անիծյալ»։ Ժողովուրդն ու երեսփոխանությունը «ամե՜ն» որոտացին սարսռագին։

Օտյան այս նզովքը հանդարտ խղճմտանքով կ՚արձակեր։ Իր դիրքին մեջ միշտ պատվո զգացումեն առաջնորդվեցավ։ Հավասար հավատարմությամբ ծառայեց թե Դրան՝ որուն պաշտոնյան էր, թե Ազգին՝ որուն զավակն էր։

Շատ դժվար է Օտյանին գրականությունը համառոտաբար ներկայացնել։ Օրագիրներու մեջ, Ազգային Ժողովի ատենագրության մեջ, գրքերու մեջ՝ իբր հոդված, իբր ատենաբանություն, իբր հառաչաբան ցրված են, ու մանավանդ՝ իբր նամակ գրված։ Այդ բազմաքանակ հրատարակությունները կամ ձեռագիրները ի մի հավաքելով, անոնցմե քաղված հավաքածո մը պիտի կրնար հայ ազգին աչքերուն առջև ցուցադրել մարդն ու իր ատենը, երեսունըհինգ տարվան ժամանակամիջոցի մը մեջ։

Օտյանին գրությունները երեք մասի կը բաժնվին։ Ինչ որ թարմ երիտասարդության գրած է, ինչ որ չափահաս երիտասարդությանը, ինչ որ հոգնության տարիքին մեջ։ Ամենքն ալ միշտ միևնույն գրական պերճությամբը կը փայլին։

Բայց չափահասությանը՝ արդեն իր գրականությունը հիվանդոտ է։ Ազնվապետական հիվանդություն մը լամարթինական, շաթոպրիանական։ Մտրակող, հալածող, հալածված գրագետը չեղավ։ Անմեղ աղջկան մը պես գորովասիրտ մնաց, պատրանքներով միշտ առլի։

Երիտասարդությանը արդեն հուսահատության աղաղակ մը կ՚արձակե «զմե՞ կյանք, զմե՞ սիրտ»։ Ու կյանքին վերջին օրերուն մեջ, մինչ պետք էր տակավին կորովի ըլլալ, կ՚աղաղակե.

«Պետք է երթամ. այս վերջին տարիներուս ուրվականը և ապագային ցուցանքը. այս երկու բաներուն մեջ կ՚ապրիմ, և ա՜լ չեմ կրնար։

Մարդուն ճակատագիրը հոս կը սկսի, բայց հոս չի լմննար. ուրիշ տեսակ մեկնություն չէ կարելի տալ կենաց առեղծվածին։ Հորս, մորս, սիրելյացս, բոլոր ոչ ևս են աշխարհի աստ, կարոտն ունիմ։ Աստուծո իղձն ու անձուկն ունիմ»։

Կը մեռներ ինքն իրմե դժգոհ։ «Ոչ ոք ինծի չափ իրավունք ունի երթալու, կը գրե. ոչ թե անոր համար թե ինչ գործ որ կրնայի գործել, ինչ դեր որ կրնայի կատարել, զայն գործեցի, կատարեցի. չէ՜, այլ միայն ուրվագրեցի»։

Հասավ ժամանակ մը, որ Օտյանի առջև բացվեցավ լայնարձակ ասպարեզ մը, ուր իր մտավոր կարողությունը ցույց պիտի տար։ Ու նույնհետայն ահռելի աղետները ծանրացան իր վրա։ Փարիզ քաշվեցավ, ու «մեծ վտարանդի» տիտղոսը ստանալով, դժբախտ մեռավ։

Ի՞նչ եղավ, ո՞ւր մնաց ինչ որ Օտյան «ուրվագրեց»։

ՆԱՀԱՊԵՏ ՌՈՒՍԻՆՅԱՆ

Հակոբ պեյին ակադեմական գումարումներուն հոգին Նահապետ Ռուսինյանն էր։ Բժիշկ, քաջ ֆրանսագետ, քաջագույն հայագետ, գեղասեր մատենագիր, պերճախոս ատենաբան, գաղափարի նվիրված հայակապ անձնավորություն մը։

Պալյանը ինքզինքը անհարմար կը զգար հանրային գործոն կյանքի։ Ամեն անգամ, որ երեսփոխան կ'ընտրվեր, հրաժարականն ալ կուտար։ Իր ազգին կծառայեր իր չորս կողմը բարիք սփռելով, ընտանիքները երջանիկ ընելով ու զորավիգ հանդիսանալով հայ բանվորին, հայ գեղարվեստասերին։ Իսկ Ռուսինյան, թեև ինքն ալ գեղարվեստին ու գրականության սիրովը խանդավառ, բայց խելահեղորեն հարած էր ազգային գործունյա կյանքին։

Նիկողոս Պալյանի մահեն հետո, Օտյան և Ռուսինյան մնացին գործոն դեր մը կատարող։ Երկուքն ալ միևնույն բարձր գաղափարներով տոգորված, իրարու սրտակից մտերիմներ, բայց մտքի տրամաբանությամբ իրարու ներհակ։ Օտյան հառաջադիմությունը բնաշրջումով կ'ուզեր կատարել տալ, Ռուսինյան՝ հեղաշրջումով։

Ռուսինյան կեսարացի էր։ Իր երկրացիներուն հատկանիշը գրականություն և ուժեղություն է։ Ինքն ալ օժտված էր այդ ժառանգական հատկություններով։ Ազգային կյանքին ամեն երևույթներուն մեջ կը ներկայանա զորավոր կամքի և կորովալիր մտքի տիպար մը։

Փարիզ մինչ մեկ կողմեն բժշկություն կը սորվեր, մյուս կողմեն իր միտքը կը կրթեր գրականության և պատմության ուսումնասիրությամբ։ Ֆրանսայի 1789-են 1848-ի մտավորական ու քաղաքական պատմությունը զինքը ամբողջապես կը գրավե։ Պոլիս վերադարձին, կ'ուզե իր ցեղն ալ կերպով մը Ֆրանսացիներուն ուղղությամբը հառաջադիմել տալ

Նոր գաղափարներու տարածման, վարչական նոր կազմակերպության մը հիմնարկեքին համար պետք կը զգա աշխարհաբարին տրամաբանական զարգացմանը։ Կը ստեղծե ուղղախոսությունը, որ քերականությունն է նոր աշխարհաբարին։ Օտյան՝ թարմ երիտասարդ՝ կը հարի

Ռուսինյանի։ Ուղղախոսությունը իր էության մեջ ուրիշ բան չէ, բայց եթե գրաբարի ու աշխարհաբարի ձուլում մը, ղեկավարությամբ տրամաբանական մտացածին օրենքներու։ Ռուսինյան կը սխալեր։ Բայց սխալողը ինք չեղավ միայն։ Իրմե ետքը շատցան, և մինչև այսօր ալ մեծկակ թիվ մը կը կազմեն Ռուսինյանի մտածումեն առաջնորդվողները։ Ասոնք կը կարծեն, թե տրամաբանելով կրնան այծյամը, որ լեզու կը կոչվի, օրինապահական ճամփե մը շիփշիտակ քալեցնել տալ, առանց ոստոստումի, առանց ցատկոտուքի։

Ռուսինյանի աշխարհաբարը դպրոցի մը հիմնադրությունը չեղավ։ Իր լեզուն իրենը կը մնա։ Սակայն հետաքրքիր ընթերցող մը երբ կը կարդա արձակ ու ոտանավոր գրվածները, երբեք չի խրտչիր։ Կը զգա թե այդ բառերը, այդ դարձվածները անշուշտ մտքեն ինքնաբուխ չեն ժայթքած։ Ռուսինյան իր գրականության մեջ նմանած է չինացի արվեստագետին, որ կյանք մը կը սպառե դրվագելու համար փոքրիկ տուփ մը։ Տառապագի՜ն աշխատանք, որ անճառելի հեշտանքով կպարարե ստեղծագործ արվեստագետին ամբողջ էությունը։ Այդ հեշտությամբը կ'ողողեր Ռուսինյանի հոգին, ամեն անգամ որ դժվարահաճ գրագետը գեղապանծ բանաստեղծություն մը կամ մինչև իսկ բառ մը կ'երկներ։

Իբրև նմուշ Ռուսինյանի ոճին, այստեղ դնենք իրմեն երկու հատված։

Ահա բանաստեղծություն մը, որ չորս տողի մեջ մեր աչքերուն առջև կ'երգունե մեկուսացման, մոռացման համար երազուն հոգի մը։ Իր ու իր սերունդին ըղձանքներուն հոգեբանությունը գուցե։

Մին եզվար հող ունենայի, դյուր ըլլար դար կամ թե ձորձոր,
Վազուկ ջըրով, թեև քըշիկ, վըտակ ըլլար ակ կամ թե հեղեղ,
Մեջը մին ծառ կը տընկեի, ծիրանի ծոր կամ թե խնձոր,
Մեջը մին հյուղ կը շինեի, աղյուս, եղեգ և կամ բաղեղ։

Ոչ միայն գեղոն մը, այլև գեղերգ մըն ալ է փափկության արվեստին այս գլուխգործոցը։

Հետևյալ բանաստեղծությունն ալ ֆրանսերեն երգի մը հայացումն է։ Նորմանտիան Կիլիկիա եղած է։ Կարդալով զայն, կը տեսնենք թե մեր աշխարհաբարին հիմնովին կը հակառակի. բայց կը զգանք նաև, որ Ռուսինյան իրեն հատուկ արվեստ մը ուներ։ Ինչ որ ուրիշի մը գրչին տակ անբնական պիտի թվեր, շատ բնական կը թվի երբ Ռուսինյանեն կու գա։

Երբոր բացվին դռներն հուսո.
Եվ մեր երկրեն փախ տա ձմեռ,
Չքնաղ երկիրս մերս Արմենիո,
Երբ փայլե յուր քաղցրիկ օրեր։

Երբոր ծիծառն ի բույն դառնա,
Երբոր ծառերն հագնին տերև,
Ցանկամ տեսնել զիմ Կիլիկիա,
Աշխարհ, որ ինձ ետուր արև։

Տեսի դաշտերըն Սուրիո,
Լյառն Լիբանան և յուր մայրեր,
Տեսի զերկիրն Իտալիո,
Վենետիկ և յուր կոնտոլներ։
Կղզի նման չիք մեր Կիպրա,
Եվ ոչ մեկ վայր է արդարև
Գեղեցիկ քան զիմ Կիլիկիա,
Աշխարհ, որ ինձ ետուր արև։

Հասակ մը կա մեր կենաց մեջ,
Ուր ամենայն իղձ կ'ավարտի,
Հասակ մը ուր հոգին ի տենչ
Հիշատակաց յուր կարոտի.
Հորժամ քնարս իմ ցրտանա,
Սիրույն տալով վերջին բարև
Երթամ ննջել զիմ Կիլիկիա,
Աշխարհ, որ ինձ ետուր արև։

Վիկտոր Հյուկոյի Ռյու Պլասին ոտանավոր թարգմանության մեջ է, որ Ռուսինյան իր եզական հայերենը ամբողջովին ցուցադրեց։

Օտյան և Ռուսինյան հավասարապես տիրած էին հայերեն լեզվին։ Օտյան չէր ուզեր նոր բառեր կերտել։ Ընդհանրապես կը ջանար գոյություն ունեցող բառերը գործածել ավելի ընդարձակված կամ բարեփոխված նշանակությամբ։ Ռուսինյան նորեր կը ստեղծեր միշտ, կը կոտրտեր եղածները ու անոնց բեկորներեն կը դարբներ նորանոր բառեր։ Ռյու Պլասի թարգմանիչը հեղափոխյալ հայերենով մը կը գրեր։ Իր համոզումն էր թե ժողովուրդ մը հեղաշրջելու համար անոր կյանքին ամեն պայմանները միանգամեն հեղաշրջելու է։ Իսկ իր բարեկամը իր բոլոր գրությանցը մեջ գրաբարին հոգիին ու դարձվածներուն պաշտոն կը մատուցաներ։

Մեր հիմիկվան ընթացիկ լեզվին մեջ շատ բառեր կան, որոնց կի-րառությունը կամ ստեղծումը կը պարտինք այս երկու քաջ հայագետ-ներուն։

Իսկ խորհրդարանական բառերն ու բացատրությունները գրեթե ամեն-քըն ալ Ռուսինյան ինքն հայացուցած է։ Ազգային Երեսփոխանական ժողովին Ներքին Կանոնագիրը ինքը հորինեց, եվրոպական խորհրդա-րաններու կանոնագրության հետևողությամբ։ Անոր մեջ ամփոփեց ատենական գրեթե բոլոր բառերը։ Հայացուց նաև անունները, որոնցմով Ֆրանսայի մեծ հեղափոխությունը մկրտած էր հին ամիսները։

Ժերմինալը՝ Ծլոն (9/21 մարտ—7/19 ապրիլ).

Ֆլորիալը՝ Ծաղկոն (8/20 ապրիլ—7/19 մայիս).

Ֆրյուքթիտորը՝ Մրգոն (6/18 օգոստոս—4/16 սեպտեմբեր)։

Ռուսինյանի հավատքը Ֆրանսայի 1789-ն էր։ Անոր սկզբունքները կ'ուզե ծավալել հայոց մեջ, անոր տոնացույցը մերը կ'ուզե ընել և անոր մտքովը կազմակերպել հայոց վարչությունը։

Սահմանադրությունը իր բոլոր ըղձանքներուն իրականացումը եղավ։

Ռուսինյան հայ եկեղեցականության բարյացակամ չէր։ Նոր սերուն-դին ծրագիրն էր հայ ազգին վերանորոգումը իր ներքին կյանքին մեջ։ Վերանորոգումը կատարելու համար պետք է կռվիլ ազգային իշխանու-թյան դեմ։ Այդ իշխանությունը պաշտոնապես եկեղեցականներուն սե-փականությունն է, ուստի բնականաբար կռիվը ասոնց դեմ պիտի մղվի։ Ու կռվելու համար պետք է ատել։ Ընդունելու ենք նաև, որ Ֆրանսայի հակակղերական գաղափարներն ալ տպավորություն թողած էին հայոց մտքերուն վրա։ Աշխարհիս բոլոր եկեղեցականները համերաշխ կը հա-մարեին, և իրարու համար փոխադարձաբար պատասխանատու կը բռ-նեին։ Երբ Սահմանադրությունը հաստատվեցավ, նոր սերունդին ալ ատելությունը կամաց-կամաց մեղմացավ, մինչև որ օր մը անհետանար։ Օտյան, որ իր երիտասարդությանը կը գրեր «ով որ գլուխը վեղար մ'ունի, սիրտը՝ սատանա մ'ունի», ալ ժամանակին հետ հաշտված էր վարդապետներուն հետ, վասնզի անոնք այլևս իշխանություն չունեին հայ մտքին վրա։ Բայց Ռուսինյան անողոքելի մնաց։ Սահմանադրության թվականեն շատ տարիներ հետո միշտ նույն զգացումները կը տածեր վեղարավորներուն նկատմամբ։ Դիվանի բեմն էր, որ Ռուսինյան Ամ-բրոսիոս վարդապետին երեսին և անոր հետ ամբողջ հայ եկեղեցակա-նության երեսին— կը պոռար. «Դո՛ւք, դո՛ւք, դո՛ւք, դուք եք հայ ժողո-վըրդին ամեն աղետներուն պատճառը»։ Ամեն անգամ, որ Ռուսինյան «ժողովուրդ» բառը արտասաներ, ցոլք մըն ալ աչքերուն մեջ կը փայ-լեր։ Ինքնիրմեն դուրս ելած հավատացյալի մը ջերմեռանդությամբը կը

խոսեր ժողովուրդին վրա։ «Ժողովուրդին» կը հավատար, ինչպես հավատացած էին Տանթոն, Պոտեն։

Ժողովրդին տրիբունը եղավ Ազգային ժողովին մեջ. միշտ հառաջադիմության և լայն գաղափարներու ախոյանը։ Խորհրդարանը արտասանած իր ատենաբանությունները կատարելագործյալ մեկ մեկ օրինակ են կորովի պերճախոսության։

Ռուսինյանը՝ իբրև հեղինակ՝ իր ատենաբանություններուն մեջ պետք է փնտրել։ Ինչպես ըսվեցավ այս հոդվածին սկիզբը, 1850-են հետո հանրային կյանքի մաքառումներն էին, որ կը գրավեին ու կը սպառեին տաղանդավոր երիտասարդության մտավորական ուժերը։ Այդ հոյակապ անձնավորությունն ալ իր բոլոր ժամանակը Ազգային ժողովին առաջնորդության նվիրեց։ Եվ ի՜նչ աննման խղճահար առաջնորդ մը։ Երբեք չեղավ այն երեսփոխանը, որ ափյափո հապճեպով, րոպեին տպավորության ներքև խոսեր։ Ամեն խնդիր երկար ու բարակ կ'ուսումնասիրեր մանրակրկիտ քննությամբ, բազմակողմանի տեսություններով։ Իր բոլոր մտածությունները հանդարտորեն գրի կ'առներ, լեզվական ու գրական խնամոտ հոգածությամբ։ Եվ այսպես իր ատենաբանությունները լրջորեն պատրաստելե հետո, զանոնք Ազգային ժողովին մեջ կ'արտասաներ հեղինակավոր շեշտով մը։ Ամեն ոք մտիկ կ'ըներ այդ պզտիկ մարդը երկյուղած լռությամբ։ Երեսփոխան և ունկնդիր գիտեին, թե այդ ատենաբանը ազգին բարիքը իրեն միայն և միմիայն կետ նպատակի ունի. ու դեպի հոն կը դիմե ոչ լոկ բարի զգացումներով տոգորված, այլև՝ բազմահամբար հմտությամբ, լեփլեցուն գլխով մը, ու գրավոր համոզումներով, անդրդվելի սկզբունքներով։

Ռուսինյան իր իշխանության մեծությունը միշտ բարձր կը պահեր երբեք չխոտորելով իր ճամփեն։ Նույնիսկ իր գրական դավանանքներուն, իր լեզվական օրենքներուն հավատարիմ կը մնար այն ատենաբանություանց մեջ, որոնցմով պիտի քններ, պիտի պարզեր, պիտի լուսաբաներ տնտեսական, պատմական, օրենսդրական կնճռոտ, դժվարալույծ խնդիրներ։ Օր մը գրավոր պատրաստած էր ազգային տուրքերու վրա երեսփոխանական ժողովին արտասանելիք ճառը. զայն Օտյանին ցույց կուտա։ Ետ ընթերցման, Օտյան կարծիք կը հայտնե, թե այդ հայեվարը աղեկ հասկցող երեսփոխանները բազմաթիվ պիտի չըլլան, ուստի և հավանական չէ, որ ճառին մեջ հայտնված գաղափարները հաղթանակ տանին։

— Ի՜նչ փույթ, որ չհասկնան,— կը պատասխանե Ռուսինյան— նթե հասկնալ կ'ուզեն, թո՛ղ լեզուս սորվին։

Այս խրոխտ հայտարարության մեջեն չե՞նք նշմարեր հարազատ աշկերտ մը «Թո՛ղ գաղթականությունները կորսվին, քան թե սկզբունքները» երբեմնի վարդապետության։

Սահմանադրության մը խմբագրությունը շատ ծանր գործ էր։ Ֆրանսական ազդեցությունը ակներև է այդ օրինագրքին մեջ։ Ռուսինյան կ՚առաջնորդվեր Միության գաղափարեն։ Նահանգային բաժանումները ի մի ձուլելով մեծ զանգված մը կազմել, այս եղած էր 1789-են հետո Ֆրանսայի օրենսդիրներուն կետ նպատակին։ Նույն մտածությունը կ՚ունենա և Ռուսինյան։ Ու նոր կազմակերպության օրինակն ալ Ամերիկայի սահմանադրութենեն կ՚առնե։ Կեդրոնացման և ապակեդրոնացման ներդաշնակությունը։ Յուրաքանչյուր նահանգ իր շրջանակին մեջ ինքնավար է իր ազգային գործերուն համար։ Այդ ինքնավարության օրենքները միօրինակ են ամեն մեկ նահանգի համար։ Ամենքը իրենց պատգամավորներուն միջոցավ կը կեդրոնանան Պոլսո Ազգային Ժողովի մը մեջ, որուն գլուխը Պատրիարք մըն է, երկու ժողովի հետ միասին. մեկը Կրոնական, մյուսը՝ Քաղաքական։ Կեդրոնը սակայն իր համատարածությանը մեջ միևնույն կազմակերպությունն է, ինչ որ նահանգայինը։ Պոլսո Ազգային Ժողովը և Պատրիարքարանը վերհսկող մարմինն են Թուրքիո ընդհանուր հայոց վրա։ Համբավավոր բանաձևը, որ օր մը Կիլիկիո կաթողիկոսին ընտրության առթիվ պիտի հռչակվեր և օրենքի մը զորությունը պիտի առներ, այդ բանաձևը արդեն 1850-ին բողբոջած էր Ռուսինյանի ուղեղին մեջ, ազգային ամբողջ կազմակերպության մը համար։ Այդ բանաձևն էր՝ «ընտրությունը՝ նահանգին, վավերացումը՝ կեդրոնին». այսինքն՝ կիլիկիացիները պիտի ընտրեին իրենց կաթողիկոսը, ու կեդրոնն էր՝ Պոլսո Ազգային Ժողովը՝ որ այդ ընտրությունը պիտի վավերացներ կամ բեկաներ։ Այսպես ալ, սահմանադրությամբ ամեն մեկ նահանգ ինքը կը կատարե իր ընտրությունները, բայց վերջին խոսքը կը մնա վերին խնամակալին, որ է Կ. Պոլսո Պատրիարքարանը։

Սահմանադրության շնորհիվ Թուրքիո հայերը մեկ ազգության մը, մեկ հայրենիքի մը շոշափելի գաղափարը ունեցան։ Եվ այդ գաղափարը դեռ շատ ուրիշ ծնունդներ պիտի ունենար։

Այս կարգ մը տեղեկությունները կրնան գրական կյանքի շրջանակեն դուրս համարվիլ։ Բայց առանց անոնց օժանդակությանը պիտի չկրնայինք ըմբռնել Ռուսինյանի մը, Օտյանի մը գրական առերևույթ ամլության պատճառները։ Հանրային կյանքը իրենց ամբողջ ժամանակը գրաված էր։ Հանրային կյանքն էր իրենց հոգն ու մտմտուքը։ Իրենց հաջորդող երկու սերունդներն ալ այդ ծանր մտատանջությանց հարկեն ազատ

չեղան։ Անոնք ալ իրենց կարողութիւնները հրապարակագրութեան մի֊ջոցով նվիրեցին ազգային-ընկերական խնդիրներու։ Անոնք ալ կռվող֊ներ եղան իրենց նախորդներուն պես, և իրենց նախորդներուն պես ժա֊մանակ ու դյուրություն չունեցան գեղարվեստական գրականության գրաղելու։ Մեղադրելի՞ են։ Մտավորականները չափազանցորեն եսամոլ֊ներ պիտի համարվեին, երբ իրենց ցեղին օրվան տենչանքներուն ան֊տարբեր հանդիսատեսներ մնալով, իրենց մտքի ուժը նվիրեին պարզա֊պես գրասիրական հաճույքներու։ Եվ ի՞նչ շունչ պիտի փչեր գրքե մը, որ ոչ վշտակից է իր ցեղին ցավերուն, ո՛չ ուրախակից անոր խնդու֊թյանցը։

Ռուսինյան իր այս բոլոր մտահոգություններովը մեկտեղ կրցավ գրական ժառանգություն մը թողուլ։ Իր ատենաբանությանցը, իր բա֊նաստեղծությանցը, իր թարգմանությանցը հավաքածուն մեծ հաճույ֊քով պիտի կարդացվի անոնցմե, որ արվեստը կը սիրեն, ու կը ցնծան, երբ գրական գեղեցկության հանդիպին. նույնիսկ ազգային տուրքերու վրա ատենաբանության մը մեջ։

***

Նոյեմբերի իրիկուն մը, 1876-ին, երբ Օտյան տուն մտավ, եղբոր֊որդին, պզտիկ Երվանդը— հիմակ ինքը գրական Օտյան— առջևը վա֊զեց աղաղակելով— Հորքար, Ռուսինյանը մեռեր է։

Օտյան բառ մը չգտավ ըսելու։ Լալ սկսավ։

Պոլիս ամենքն ալ լացին։

ՀՈՎՍԵՓ ՇԻՇՄԱՆՅԱՆ
(ԾԵՐԵՆՑ)

Կ. Պոլսեցի հանրային մարդ, Կ. Պոլսեցի հրապարակագիր, Կ. Պոլ֊սեցի վիպասան, և սակայն իր համբավը ավելի Ռուսիո հայոց մեջ տա֊րածված քան թե աղդին՝ Թուրքիո հայոց մեջ։ «Թորոս Լևոնի» կիլիկ֊յան կյանքեն վերը 1879-ին Պոլիս կը տպվի։ Լրատու մը Թիֆլիսի ռու֊սերեն թերթի մը մեջ կը ծանուցանե, թե արդեն Պոլիս այդ վեպեն 30,000 օրինակ լափած է։ Եվ որովհետև հաջողությունը միշտ հաջողու֊թյուն կը բերե ըսած են, ահա հրաշապատում զրույցն ալ իր հրաշքը ցույց կուտա։ Ծերենց օրվան նորությունը կը հռչակվի Թիֆլիս։ Հիշենք, որ այդ թվականին Պոլսո վարկը Կովկասի հրապարակին վրա բարձր

կը բռնվեր, շնորհիվ ժամանակակից դեպքերուն։ Շիշմանյանի գրական համբավն ա՛լ տարածվեցավ ու տարածվեցավ։ «Թորոս Լևոնին» երկ-րորդ տպագրություն կ'ունենա։ Անոր կը հաջորդեն մեր հին պատմական կյանքեն ուրիշ վեպեր, որոնք ջերմագին ընդունելություն կը գտնեն։

Որքան որ ալ Ծերենց իր վերջին վեպերը Թիֆլիս գրած է, բայց իր տեղը միշտ Թուրքիո հայոց գրականության մեջ է։ Իր ամբողջ հան-րային կյանքը Պոլիս անցուցած է. իր բոլոր գրածները պոլսական բար-բառով են։

Շիշմանյան վիպասան մը ըլլալե առաջ հանրային կյանքի մարդ մը եղավ ու մարտնչող հրապարակագիր մը։

Մխիթարյանց նախկին աշակերտը, Փարիզի համալսարանեն վկա-յեալ բժիշկը Պոլսո մեջ գործունյա անձնավորություն մը եղավ։ Սագզ-Աղաճիի պատրիարքարանին շուրջը տեղի ունեցած պայքարներուն մեջ Շիշմանյան մեծ դեր մը կատարեց, մասնավորապես իր ատենապետի պաշտոնովը՝ Ինքն ալ հայ ազգին մեկ հատվածին մեջ կը մաքառեր այնպես, ինչպես Գում-Գաբու կը մաքառեին Օտյան, Ռուսինյան։ Ու երբը-երբը ինքն ալ եկավ Գում-Գաբուի խորհրդարանին մեջ իր բա-րեկամներեն թափուր աթոռներուն վրա բազմիլ։

Հայոց մեջ ամեն անոնք, որ մարտնչողներու սպայակույտին կը պատկանին, պետք է որ գրիչը ձեռքերնին ունենան։ Շիշմանյան շատ վարպետ էր այդ զենքին գործունեությանը մեջ։ Իր հոդվածները հրա-տարակող թերթերը եղան գլխավորապես Միածան, Մասիս, Արևելյան Մամուլ: Կը գրեր բազմակողմանի հմտությամբ։ Ուներ իրեն սեփական ոճ մը բավական պարզ, բայց բավականեն շատ ավելի գրավիչ։

Մինչ ո՛չ Օտյան, ո՛չ Ռուսինյան, ո՛չ Պեշիկթաշլյան, ո՛չ ալ ուրիշ համբավավոր գրողներ Հայաստանը տեսած էին. Ծերենց բախտ ունեցավ երթալ իր աչքերովը տեսնել հայրենի երկիրը ու հայ ժողովուրդը։ Ինք հայրենիքի շունչը շնչեց, ու հայրենիքն ալ իրեն ներշնչեց վեպերը, որոնք իր անունն ու հիշատակը կը պահեն, կը պահպանեն։ Եվ երբ գրեթե մոռ-ցըված կը համարվին իրմեն շատ ավելի բարձր ու ավելի գեղեցիկ ոճով գրողները, վասնզի ցիրուցան են իրենց գործերը, ու ժողովուրդին ալ դյուրամատչելի, Ծերենց միշտ կը մնա։ Ու դեռ շատ երկար ատեն ալ պիտի մնա, վասնզի զուտ տոհմային գրագետ է։ Իր վեպերը պիտի շա-րունակեն ազգային պատմության ուսուցիչներ ըլլալ հայոց որդին։

ՏԵՐՈՅԵՆՑ ՊԱՏՎԵԼԻ

Կրոնասիրությունը կրոնամոլության տարած հռչականուն աստվածաբան մը։ Պրուսացի Տերոյենց պատվելին, ավելի ճանչցված՝ «Զամուրճի» մականունովը, կես դար առաջ եզական դեմք մը կը ներկայանար։ Մեր օրերն ալ ապրելով պիտի չկորսվեր խռանին մեջ։ Ընդհակառակը։ Հիմակ փակված ըլլալով մաքառումի շրջանը, պահպանողականության պետը իր տաղանդին արժանավոր հարգանքը պիտի գտներ նույնիսկ հակառակորդներեն ալ։

Տերոյենց լեզվագետ ու բազմագետ միտք մըն էր։ Կրոնագիտական հմտությունը հավասարող չկար։ Հրատարակած է շատ գրքեր. խմբագրած է ի միջի այլոց՝ Հայաստանը, Երևակը:

Սահմանադրության հաստատման կռվին ատեն մեծ դեր կատարեց։ Պահպանողականներուն մտավորական էն կարևոր ուժն էր, և անոնց պատգամատուն։

Երբ տեսնվեցավ թե ա՛լ չարիքը անխուսափելի էր, այսինքն թե՝ վարչական դրությունը հիմնովին պիտի փոխվեր Սահմանադրության մը հաստատությամբը, Զամուրճին ան ատեն ջանաց կանոնագրքին մեջ կղերամտություն ներմուծել։ Իր թելադրությամբն ու ազդեցությամբը եկեղեցականները մինչև աստիճան մը իրենց հատուկ իրավունքները ունեցան, իբր աշխարհականներեն անջատ, որոշ դասակարգ մը։ Այսպես՝ Պոլսո եկեղեցականները Ազգային երեսփոխանության քսան պատգամավոր կը ղրկեն, եկեղեցականներու համագումար ժողովե մը ընտրված։ Սահմանադրության առաջին ծրագիրը աշխարհականը եկեղեցականեն անջատող տրամադրություններ չէր պարունակեր։ Տերոյենց ուզեց կրոնամոլության ապագա մը երաշխավորել։ Ազդեցիկ ամիրաները իր կռնակն էին։ Լուսավորյալները, Խավարյալներուն ահեղ ընդդիմադրության շարունակությունը վերջացնելու համար, տեղի տվին անոնց կարգ մը պահանջումներուն, որով Սահմանադրությունը թեթև իմն կղերական կը թվի։

Սահմանադրության ատենն ալ Տերոյենց միշտ ծայրահեղորեն կրոնասեր մնաց։ Ազգային Ժողովը օր մը կսկսի խորհիլ իր նիստերը կիրակիները ընելու։ Հաջորդ նիստին դիվանեն նամակ մը կը կարդացվի։ Բողոքարկություն մըն է։ Կը պահանջվի Տերունական օրը աշխատության չհատկացնել։ Ատենապետը դեռ ստորագրությանը չհասած, երեսփոխանները կ՝աղաղակեն, «Զամուրճինն է»։

Տերոյենցի կրոնամոլ գաղափարներուն դեմ երեսփոխանները միաձայն բողոքեցին։ Նույն միաձայնությամբ ալ որոշեցին նիստ չընել կի-

րակի օրերը։ Ծայրահեղորէն միմյանց հակառակող գաղափարները երբեմն ինչքա՜ն շուտով կը հաշտվին, ընդ հովանավորությամբ հանդըստասիրության։

Պատվելին ծեր մեռավ, միշտ պահելով իր մտավոր կարողությունները, բայց այլևս մեկուսացած։

ՄԿՐՏԻՉ ՊԵՇԻԿԹԱՇԼՅԱՆ

Հիշատակը դեռ երեկվան պես դալար է մեր գրականության մեջ, զի հայրենիքի սերն ալ միշտ կը դալարի հայ սրտերուն մեջ։ «Ջգայուն հայրենասիրության» ոտանավորները կը վխտան ժամանակին երգարաններուն մեջ, բայց հազվագյուտ բացառություններ են բանաստեղծությունները, որոնք խանդավառ զգացումը կը գեղազարդեն և պերճ գրականությամբ ալ։ Պեշիկթաշլյան բացառիկներուն բացառիկն է։ Հեզինակող կամ նմանող, միշտ կը մնա մտքերու դյութիչ, սրտերու հմայիչ։

ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ

Եզական՝ որովհետև էջմիածնի միաբան թեև, բայց եվրոպականացյալ միտք եղավ։ Ուսում ստացավ, լեզու սորվեցավ, ու հրատարակեց **Նար հայ Պատմագրացը**: *Եզական՝ որովհետև Մանչեսթր իր առաջնորդությանը չուզեց հօրանալ, պարարտանալ։ Հանդես մը հրատարակեց,* **Երկրագունտը**: *Եզական՝ որովհետև դրամը դրամին համար չսիրեց, այլ՝ իր քերնեն կտրեց, ստակ ավելցուց և գումարը դպրոցի մը հիմնարկությանը հատկացուց։ Եզական՝ որովհետև ինք եկեղեցական, ուզեց եկեղեցին մաքրել գոնե բրածո քանի մը ավանդություններեն, որոնք մըտքերը պետք եղածեն ավելի կը խաթարեն։ Եզական նաև ուրիշ նկատումներով ալ, որոնց վրա չենք ուզեր ծանրանալ։*

Ու սրտի գելումով պետք է հիշատակենք, որ իր հրատարակած գըրքերը հիմակ մոռցված են, **Երկրագունտը** *աներևութացած։ Շահնազարյան վարժարանը քար քարի վրա չմնացած։ Ու ծանրապես վտանգված, ինչ որ հիշելու հարկ չենք տեսներ։*

ՊԵՏՐՈՍ ԴՈՒՐՅԱՆ

Ի՞նչ պիտի ըլլար։ Գաղտնիքը հետը գերեզման տարավ։ Բանաստեղծ ծնած, իր բնածին կարողության զարգացումովը մեծկակ տեղ մը պիտի բռներ մեր նոր գրականության մեջ։ Հիմակ սրտերու մեջ է իր տեղը։ Քսանամենի վաղամահիկը երեսուն տարիե ի վեր է նորածիլ երիտասարդներուն գրավիչն է։ Տրտմաթախիծ սրտերու ալ սփոփանքն է։ Ահա ինչո՛ւ շատ ժողովրդական անուն մը, քանի մը բանաստեղծություններով։

ՄԱՏԹԵՈՍ ՄԱՄՈՒՐՅԱՆ

Նախորդ սերունդեն մինչև մեր օրերը անընդհատ շարունակությամբ առաջ գացող տաղանդալից հրապարակագրին անունը հանրածանոթ է։ Արևելյան Մամուլի խմբագիրը օժտված էր մեծ կարողություններով, բայց իր ետին մեծ բան մը չի թողուր։ Վրույր ու Շահնուր քրոնիկներեն քաղված հատընտիր մը միշտ հաճույքի ընթերցում մը պիտի ըլլա, հատկապես պատմասերներուն համար։ Անով պիտի պահպանվի կայծակնացայտ հրապարակագրին հիշատակը։ Մամուրյան հանրային կյանքի մեջ գործոն դեր չկատարեց։ Գուցե այն պատճառով, որ խոսելու դյուրություն չուներ։ Կրակոտ պայքարներու մարդը չէր այդ դիտող, խայթող նրբին հեգնության սիրահար միտքը։ Կանուխեն քաշվեցավ Իզմիր, ուր գործունեության լայն ասպարեզ չկար։ Կ'ապրեր իբրև ուսուցիչ ու խմբագիր։

Հայերեն լեզվին տիրացած էր, ինչպես նաև մեկ երկու եվրոպական լեզուներու։ Քառասուն տարվան արտադրություններով հզորապես աջակցեցավ մեր նոր աշխարհաբարին բարգավաճմանը։

Իր հեղինակություններեն ակներև կը տեսնվի, որ շատ կարդացած, շատ բան յուրացուցած էր։ Իր ամեն մեկ էջին մեջ գրական մարդը երևան կու գա։ Օրագրողի իր ոճը գրավիչ նորություն մը եղավ մեր հրապարակագրության մեջ։ Կարճ, կտրուկ, պատկերալից պարբերությունները տողերուն վրայեն, մեջեն կարծես կը ցատկոտեին։ Իր այդ ոճովը Մամուրյան շատ օժանդակեց հայ գրականությունը եվրոպականացման ճամփու մեջ դնելու։

Իր թարգմանությունները ընդհանրապես այնպիսի գրքեր եղան, որոնք ժողովուրդին ամեն դասակարգեն ախորժով կրնային կարդացվիլ։ Այդ ախորժակի ընթերցումները շատ ու շատ նպաստեցին ազգին ամեն

խավերուն մեջ աշխարհաբարի, հետևաբար և հայ լեզվին տարածմանը։

Մամուրյան երեսուն տարիեն ավելի Իզմիր հանդարտ ու խաղաղ կյանքով ապրեցավ։ Մեծ հեղինակություն մը պատրաստելու ժամանակ ու դյուրություն ուներ, սակայն ակնկալությունները պատրեցան։ Կը թվի, թե հուշականում հրապարակագրին տաղանդական հատկությունները աննպաստ էին երկասիրության, որոնք երկարատև, համբերող աշխատություններն և ճիգերն կը ծնին։

ԳՐԻԳՈՐ ՉԻԼԻՆԿԻՐՅԱՆ

Թարգմանիչ մը, որ ներգործեց նոր սերունդին վրա։ Հյուկոյի «Թըշվառները» թարգմանեց։ Անոնք, որ մոտեն դիտած են 1860-են ի վեր մեր հանրային կյանքին փոփոխությունները, անոնք աղեկ հասկցած են թե «Թշվառները» կարևոր դեր մը կատարած են մեր մեջ։ Այդ հոյակապ գործին թարգմանությունը պիտի բավեր Չիլինկիրյանին մեր արդի գրականության մեջ կարևոր տեղ մը տալու համար, սակայն համբավավոր թարգմանիչը ուրիշ շատ գործեր ալ տված է։

Դիտելի է, որ Չիլինկիրյան չի հետամտիր ախորժալուր վեպերու թարգմանության. իր ձգտումը ավելի գրական է, ավելի գաղափարական։ Ընդհանրապես մեզի հեղինակավոր անունները կը ծանոթացնե։

Մամուրյանի չափ ժողովրդական եղած չէ, վասնզի իբր թարգմանիչ՝ իր ընտրությունները ամենուն դյուրամատչելի չեն։ Իբր հեղինակ՝ շատ պարզ ոճ մը չունի։ Չիլինկիրյանի գրությունները համ առնելու համար պետք է գոնե մինչև աստիճան մը գրական զարգացում ունենալ և եվրոպական մատենագրության ընտելացած ըլլալ։

Չիլինկիրյան Իզմիր Ծաղիկը հրատարակած է։ Այդ հանդեսը հիմակ կարդացողներն իսկ անոր մեջ պիտի կրնային գտնել գրական ու քաղաքական հառաջադիմության մղող այնպիսի հոդվածներ, որոնք այսօր ալ այժմեական պիտի համարվեին։

Իր Կ. Պոլիս ուղևորության նամակները, որոնք առանձին հատորով ալ հրատարակված են, պատմական հմտությամբ լեցուն են։ Հեղինակին ոճը տափակ, ընթացիկ ոճ մը չէ։ Գրագետ մարդու դրոշմը կը կրե այդ հատորիկը։ Բայց այցելուն Պոլիս անտեսուրած է հայ ժողովուրդին ահագին զանգվածը։ Թուրքիո մայրաքաղաքին 120,000 հայոցմեն քանի մը առաջնակարգ կամ երկրորդական կարևորություն ունեցող դեմքեր գրաված են իր ուշադրությունը։ Բայց այն ահագնաթև պանդուխտնե՞րը, բայց այն բազմաթիվ ժողովո՞ւրդը։ Ամենքն ալ անտես եղած են։

Ու այս մոռացությունը ա՛լ հիմակ մեզի տարօրինակ չի թվիր։ Թուրքիո հայոց գրականության համար 1850-էն մինչև մոտավոր շրջան մը, ժողովուրդը և իր կյանքը գրեթե գոյություն չունեին։ Չիլինկիրյան ալ իր ժամանակին մարդն էր։

Բայց «Թշվառներ» շատ թերությանց արձակում կու տան։

ՄԱՏԱԹՅԱ ԳԱՐԱԳԱՇՅԱՆ

Մխիթարյան նախկին վարդապետ մը, որ իբր աշխարհական Պոլիս մեծ ուսումնականի համբավ վայելեց։ Իր քննադատական պատմության արժանիքը մասնագետները կրնան գնահատել։ Քառասուն տարի մը առաջ Սերը *կը խմբագրեր։ Ջերմեռանդ գրաբարյան մըն էր։ Գրաբարի ուսուցումը դյուրացուց՝ հորինած դասագրքերովը։ Աշխարհաբարը խըժ-դըժալուր էր։ Ամերիկյան միսիոնարները Գարագաշյանի թարգմանել տվին* Աստվածաշունչը, *զոր կես դար մը առաջ արդեն աշխարհաբարի վերածած էր ամերիկացի մը։ Ժողովուրդը նոր թարգմանութենեն պարզապես սոսկաց։ Պայքըլ— Հաուզ պարտավորվեցավ հրապարակեն ժողվել Գարագաշյանի թարգմանությունը, ու անոր տեղը շարունակել հինին տարածումը։*

*Այս երկու թարգմանությունները բաղդատողները կը համոզվին «բնական» աշխարհաբարին գերազանցությանը «տրամաբանականին» վրա։ Ժողովուրդը, որուն համար կը տպագրվի աշխարհաբար «*Աստվածաշունչը*», իր վճիռը տվավ։*

* * *

Թուրքիո հայոց գրականության պատմությունը կ՚ուրվագծենք մինչև 1880 թվականը։ Այս տեսության գլխավոր նպատակը եղավ ամփոփ կերպով մը հիշեցնել այն պատճառները, որոնք մեր գրականության այս ընթացքը տվին։ Կը հուսանք թե 1880-էն մինչև մեր օրերու գրականության վրա ալ տեսություն մը ընելու առիթը կ՚ունենանք։ Ու թերևս այս առթիվ վերադառնանք 1850—1880-ի գրականության, որ հանրային կյանքին հետ ունեցած անմիջական հարաբերություններովը ու իր բաղմատեսակ արտադրություններովը բազմահարուստ պատմություն մը ունի։

Է

Ռուսիո հայոց գրականությունը մերինեն հիմնովին տարբեր ընթացքով հառաջացավ, վասնզի Արարատ-Կովկասյան հայերը մերիններեն տարբեր հանգամանքներու մեջ ապրիլ սկսան։ Անոնց գրականության էական հատկանիշը հրապարակագրական չեղավ։ Մաքառումի պետքը անոնց համար շատ ավելի նվազ էր քան թե աստին՝ Թուրքիո հայոց համար։ Հոն գրականությունը կամաց-կամաց կը բարձրանար, հիմնվելով արաստո վեմերու վրա։ Հապճեպի պետք չկար։ Հինեն դեպի նոր բնաշրջումը բնական ճամփով մը կը կատարվի։

Երբ Ռուսիա Արարատյան նահանգին ալ տիրեց, հայոց համար նոր թվական մը բացվեցավ։ Բարեկարգող վարչություն մը հաջորդելով նախորդ դրության, հայերը այլևս հանգիստ պիտի ապրեին։ Նոր կյանքը բարեհաջող սկզբնավորությամբ կը բարգավաճեր։ Նյութականին ապահովությունը հայոց ամեն դյուրություն կը հայթայթեր մտավորականին զարգացմանը համար։

Այս հոդվածին սկիզբը դրված քանի մը տեղեկություններ հիշեցուցին, թե Կ. Պոլիսը զանազան պատճառներով Թուրքիո հայոց կեդրոնավայրը հանդիսացավ։ Ռուսիո հայոց կյանքին կեդրոնը Բեթերսպուրկ չփոխադրվեցավ, այլ՝ Թիֆլիս։ Վրաստանի այս մայրաքաղաքը շարունակությունն էր Արարատյան նահանգին։

Ռուսիո վարչական կազմակերպությունը նահանգային կառավարություններու դրության վրա հիմնված է։ Կովկասը իբր առանձին փոխարքայություն մը կազմակերպվեցավ, երկրին պետքերուն համապատասխանող կարգադրություններով։ Տեղացի ժողովուրդները ազատ էին Բեթերսպուրկի հետ անմիջական և հաճախակի հարաբերությանց հարկեն։ Սև ու Կասպից ծովերն ալ կը բացվեին վաճառականության, Թիֆլիսը կեդրոն ունենալով։

Ամբողջ Ռուսական Հայաստանը ինքնամփոփ կը մնար։ Հայերը օտար երկիր գաղթելու դժբախտությունը չկրեցին։ Էջմիածինը պահեց իր կրոնական կեդրոնի կոչումը։ Իրմեն քիչ մը աստին գտնվող Թիֆլիսը դարձավ եղավ մտավորական շարժումին կեդրոնը։ Գրականությունը ցեղին բազմադարյան արմատին վրա բնականորեն պիտի ծլեր, ծաղկեր, ուռճանար, իր հյութը հայրենի հողեն ծծելով։ Աբովյանեն մինչև այսօր կովկասյան հայոց գրականությունը տոհմային զարգացմամբ կը մեծնա։

Ռուսական տիրապետության ներքև երբ հայերը աղեկ մը հանգստանալով, նախնական ուսում ստացան, չեզու սորվեցան, իրենց զավակներն

ալ Ռուսիո մեծ քաղաքները կամ արտասահման կը ղրկվէին, հիմնավոր կրթությամբ օժտված վերադառնալու համար։ Իրենց դարձին, այդ կրթվածները միանալով երկրին մեջ ինքնաբերաբար պատրաստվածներուն, գրականությունը պիտի դնեին կռվանի մը վրա։

Միևնույն ատեններն Թուրքիո Հայոց տղոցմէն ալ Եվրոպա կը ղրկվէին, բայց ասոնք կամ մասնագիտություն մը սորվելու կ'երթային, կամ երկրորդական կրթություն ստանալու, որուն հիմը դասական գրականությունն էր։ Ռուսահայ ուսանողներուն մեջ գտնվեցան շատեր, որոնք իմաստասիրության դասընթացքներու հետևեցան և հետամտեցան մանկավարժության, հրապարակագրության պատրաստող ուսումներու։ Այդ երիտասարդներեն եղան Ստեփանոս Նազարյանցը, Միքայէլ Նալբանդյանցը, Գրիգոր Արծրունին, Ալեքսանդր Քալանթարը, Ավետիք Արասխանյանցը և ուրիշ հրապարակագիրներ։

Վիպական ու հրապարակագրական դրականությունները Կովկաս զուգընթաց քալեցին։ Առաջնությունը սակայն գեղարվեստականինն էր Անցյալին մեջ՝ Աբովյան, Պռոշյան, Սունդուկյան, Աղայան, Գամառ-Քաթիպա և Րաֆֆի։ Ներկային մեջ Կովկաս ունի առաջնակարգ գրագետներ, որոնք հետզհետե ավելի կատարելագործյալ կ'արվեստեն։

Թիֆլիսյան հրապարակագրությունը պոլսականեն կը տարբերի այնու, զի նվազ գործնական եղավ։ Կ. Պոլսո մամուլը խորհրդարանական կյանքի մը պահանջումները պիտի գոհացներ։ Օրագրական պայքարները դրական արդյունքներու պիտի հանգեին։ Տապալում և ընտրության պատրիարքներու, առաջնորդներու, հոգաբարձության և այլն, և այլն։ Ռուսահայոց հանրային կյանքը հոգևոր ու կրթական շրջանակի մը մեջ պարփակված է ավելի բարոյական, քան թե գործնական ազդեցությամբ։ Կովկասի հայերը տեսակ մը հայեցողական հրապարակագրություն ունեցան, ուստի և գրեթե իմաստասիրական։ Ասկե՝ «սկզբունք», «ուղղություն» բացատրությանց հաճախակի կիրառությունը կովկասյան մամուլին մեջ։ Պոլիս՝ «պատեհականության» միջավայր մըն էր, հանրային բազմակնճիռ կյանքի մը պահանջմամբը. ուստի և «գործնական» օրագրություն մը ստեղծվեցավ։

* * *

Վերջացած դարուն գրեթե մինչև կեսը Կովկասի հայերը գրականության հատուկ լեզու չունեին։ Գրաբարը բարձր գրականության մը պահանջումներուն թեև կրնար գոհացում տալ, բայց ժողովուրդին անպետ էր։ Հայոց մեծամասնությունը իր հին լեզուն թեև բոլորովին չէր մոռ-

ցած, բայց իրեն քիչ շատ հասկանալի կը մնային կրոնական բացատրությունները միայն։ Ժողովուրդը անոնց կ՚ընտելանար եկեղեցիին մեջ։ Մինչև աստիճան մը ուսում ստացողներն ալ կրնային կրոնական գրքերը օգտակարապես կարդալ։ Այդ նեղ սահմանեն դուրս գրաբարը հասկնալ կարենալու համար պետք էր մասնավոր կրթություն ստանալ։ Իսկ գրաբար գրելու համար անհրաժեշտ էր այդ հին լեզուն իբր խորին գիտություն մը սորվիլ։

Անդին կը մնար ժողովուրդին բարբառը։ Անոր հատակը թեև հայկական, բայց հետզհետե մեր երկիրը արշավող ցեղերը այդ լեզուն սիկախառն, տղմուտ ըրած էին։ Պետք էր հետզհետե զտել ու մաքրել Արարատյան բարբառը։ Ահա ինչ որ սկսան ընել և կը շարունակեն ընել ռուսահայ գրագետները։

Նոր գրողները գրաբար գրեթե չսորվեցան, վասնզի դպրոցներու մեջ մեր հին լեզվին դասավանդությունը նվազեցավ։ Գրաբարի տգիտությունը օգուտներ ալ ունեցավ, վնասներ ալ։

Օգուտը այն եղավ, որ գրողները չկաշկանդվեցան «նախնյաց քերականության» կանոններով։

Կ. Պոլսո հայերը պզտիկուց գրաբար սորվելով, ականջնին կը լեցվի հոլովումներով, խոնարհումներով, դարձվածներով, որոնք բնական չեն երևիր ընթացիկ լեզվի մեջ, իսկ գրության մեջ ալ կարծես անբնական չեն երևիր։ Պոլսեցիներուն գրաբարի այս հակումը, որուն վրա ուրիշ առթիվ կրնանք խոսիլ, գլխավոր պատճառներեն մեկը եղավ Կ. Պոլսո աշխարհաբարին պաշըպոզուքությանը: Որքան գրող՝ գուցե այնքան ալ լեզու Պոլիս։ Կանոնավորությունը նոր սկսած է մտնել, տասնյակ տարիե ի վեր. Հայրենիքի հրատարակությամբը սկզբնավորություն եղավ միօրինակ աշխարհաբարի մը հետևելու գաղափարին։ Իսկ Կովկասի հայերը միօրինակ քերականություն մը ունին արդեն։ Թիֆլիսի ո՛ր թերթն ալ առնեք, կովկասյան ո՛ր հեղինակությունն ալ առնեք, ամենուն ալ քերականությունը միևնույնն է։

Իսկ վնասը։ Կովկասի գրագետները մեր հին մատենագրության լեզվին քաջ ընտելանալով, խորապես պիտի թափանցեին հայեվարին էությանը։ Լեզվի մը ոգին գրքերու մեջ կը պահպանվի։ Ինչ որ անգամ մը գրված է, անիկա այլևս մշտատիպ կը մնա առանց ենթարկվելու բարեշրջական փոփոխությանց։ Գրագետը լեզվին ոգին գրքերու մեջ կը գտնե։ Նոր հույները իրենց նախնյաց մատենագրությանը մեջ կը փնտռեն արդի լեզվին ղեկավարությունը։ Նույնը եվրոպական ազգերն ալ։ Եթե վաղնջական ժամանակներու դիմումի պետքը անհրաժեշտ պայման չըլ-

լար լեզվէ մը բարգավաճմանը, այն ատեն ո՛չ բառգրքերու հարկ պիտի տեսնվեր, ո՛չ հին հեղինակության տպագրության։

Կ. Պոլսո գրողները իրենց նոր լեզվին կազմակերպությանը մեջ գրաբարի աջակցությանը շատ դիմեցին, բայց ուղղակի Հայաստանի ժողովուրդին բարբառը չգիտցան։ Կովկասցի գրագետը ուղղակի Հայաստանի բարբառը սորվեցավ, բայց գրաբարեն հեռու մնաց։

Հարկ չէ հիշեցնել, որ այս տեսությունը ընդհանրական հանգամանք մը ունի։ Ռուսահայ գրագետներուն մեջ գրաբար գիտցողներ կան։ Րաֆֆի մը չէր կարող Րաֆֆի ըլլար, առանց մեր հին մատենագրության ողնուծուծը հանած ըլլալու։ Բայց միջին հաշվով մըն է, որ գրաբարագետ չեն։ Ու շատերն ալ նախնյաց մատենագրությունը կարդալով հանդերձ լեզվական հատուկ ուսումնասիրություններ չեն ըրած։

Այս ամենուն հետ մեկտեղ, Կովկասի գրական բարբառը կես դարու մեջ շատ մեծ առաջադիմություն ըրավ. ու իր մեծագույն առավելությունն է քերական միօրինակությունը։

⁂

Ռուսիո հայոց գրականությունը հայերենի հողին վրա ծնելով ու աճելով, զուտ տոհմային եղավ։ Հայրենիքն է, որ իր ավանդություններովը, հիշատակներովը, բնությամբը, իր ամբողջ կենդանության կյանքովը գրականությունը կը գեղազարդե ու կը գեղաշնորհե։

Այսօր ավելի երկար չենք կրնար խոսիլ ռուսահայոց կես դարու մատենագրության վրա։ Ընդարձակ տեսության մը պատեհությունը հավանորեն կը ներկայանա։

«Բեղունի»
1 հունիս 1902

ՀՐԱՆՏ
(Արփիար Արփիարյան)

ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅՈՑ ԱՐԴԻ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Արեմտյան մեր արդի գրականությունը ռուս և թուրք վերջին պատերազմեն կը թվագրի։ Տաճկահպատակ հայուն ժամանակակից հանրային կյանքը ուսումնասիրողը կը տեսնե անոր քաղաքականության ու մտավորականության պատմությունները իրարու ընդելուզյալ ամբողջություն մը կը ներկայացնեն։ Հայ մատենագրության ոգին ընկերային եղած

է. գրական մարդը իր ցեղին օգուտ մը պարգևելու առաջադրությամբ երկասիրելով, բարոյացուցման նպատակի մը կը հետամտի, գիտակցաբար կամ բնազդմամբ։ Մեր ժամանակակից գրականության ձգտումը ուսումնասիրելու համար պետք է վերջին քառորդ դարում մեր քաղաքական կյանքին փոփոխումները հիշել։

Մինչև 1879 թվականը Թուրքիո հայը իր վիճակին բարեփոխումը երբեք հանկարծահաս դեպքերեն ակնկալած չէր։ Ի նպաստ իրեն եվրոպական միջամտության մը վրա հուսադիր չըլլալուն, իսլամին հետ կը վարվեր «մեր ազգային քաղաքականությունը» կոչված դարավոր ավանդության շարունակությամբ, ջանալով տնտեսապես ու մտավորապես բարգավաճել, միջավայրին թույլատրած սահմաններուն մեջ։ Ու համրընթաց կը առաջանար դեպի իտեական մը, զոր դարերե ի վեր հեռուն, շա՜տ հեռուն աղոտալույս իմն կ'ընդնշմարեր։ Քառորդ դար մը առաջ պատահած Արևելյան ցնցումը այս «ազգային քաղաքականությունը» սաստկահար հարվածեց և հայ ժողովուրդը դեմ հանդիման անծանոթին նետեց։ Այդ օրեն բացվեցավ նոր թվական մը, որ երկու շրջանի կը բաժնըվի։ Առաջին կը սկսի 1879-ին ու կը վերջանա 1895-ին։ Երկրորդը՝ 1896-են մեկնելով կը շարունակվի։ Թե՛ մեկ և թե՛ մյուս շրջանին մեջ, գրականությունը ցեղին վերածնունդի երկունքին սատարեց, մտքերու և սրտերու վրա գերազդեցիկ իշխողությամբ։

Ա

Գիրք ու թերթ: Գրաքննության դերը, Գաղթային գրականության տկարություններն ու առավելությունները

Երբ «արևմտյան հայոց նորագույն գրականության» կ'ըսենք, պետք չէ, որ ընթերցողներուն մտքին առջև անմիջապես «գիրքը» գա ներկայանա։ Քառորդ դարու մը ժամանակամիջոցին, գիրքը Պոլսո մտավորական հրապարակեն հետզհետե նահանջելով, հիմա գրեթե աներևութացյալ մըն է։ Գրողները իրենց ապաստարանը օրաթերթին և պարբերականին մեջ փնտրեցին։ Ասոնք ալ թեև բազմակաշկանդ պրկյալներ են, բայց աճպարար հնարամտությամբ կը հաջողին շարժման քիչ թե շատ դյուրություններ ձեռք բերել, վասն զի Թուրք կառավարության պաշտոնյաները կարող չեն չափազանցորեն ուշադիր ըլլալ հրատարակությանց, որոնք որոշյալ օրեր և ժամեր պետք է, որ կանոնավորապես երևին։ Սակայն գիրքը ամբաստանյալ մըն է, որ հարցաքննիչ դատավորը կրնա ինչքան ատեն ուզե վար դնել ու երկար բարակ պրպտել։

Մինչև 1880 թվականը ո՛չ հատորին, ո՛չ օրագրին համար կանխարգել գրաքննություն օրենսդրված էր։ Մերթ ընդ մերթ հեղինակ մը կամ տպագրիչ մը ձերբակալվելով կը բանտարկվեր, բացորոշ օրենքի մը դեմ առանց մեղանչած ըլլալու։ Մարդը զնդանին մեջ կրնար մեռնիլ ալ, ինչպես Եղիա Տնտեսյան երաժիշտ-տպագրիչը, որ Պոլիս բանտը եղեռական մահվամբ վախճանեցավ, վասն զի հրատարակած էր հավաքածու մը երգերու, որոնք՝ արդեն հարյուրներով, հազարներով թռուցիկ տպագրյալ՝ ամեն հայու բերան կը պտտեին։ Բայց ընդհանրապես, քիչ մը խոհեմությամբ, քիչ մըն ալ բախտի օգնությամբը, հնարավորություն կար շատ հանդգնամիտ գրքեր անվտանգ հրապարակ հանելու Պեշիկթաշլյանին համբավավոր «Դու զո՞վ խնդրես, մայր իմ անուշիկ», «Թրքաց մայրեր թող լան» վրիժագոչ աղաղակը՝ «Խուժիջ մայրերու այլափոխյալ, և՝ «Ու դուն ուրախ լուրեր տար ի Զեյթունը»՝ «Ի մեր տունիս», ահա հրացայտ բանաստեղծությունները և անոնց հետ՝ հայպատմական ողբերգությունները կրնային Պոլիս տպագրվիլ։

Իսկ ամբողջ մամուլն ալ, առանց այլևայլ ցեղերու և կրոնքներու խտրանքի՝ թեև ընդարձակ ազատություն կը վայելեր, բայց ծանր վտանգներու ներքև ալ միշտ կը դողդղար, վասն զի իր ապահովությունը երաշխավորող տպագրական օրենքը «առժամաբար» դադարումի ենթարկված էր 1866-ին, կրետական ապստամբության առթիվ։ Այդ «առժամաբարը» տևեց մինչև 1880, երբ կանխարգել գրաքննության հաստատմամբ, վարչական քմահաճույքը բացարձակորեն բռնապետել սկսավ, գրաքննության համար որևէ որոշ կարգ կանոն մը սահմանված չըլլալով։

Բայց— և ահա ինչ որ անհավատալի պիտի թվի անոնց, որ թուրքերը չեն ճանչնար— հանապազօրյա հայ մամուլին վրա անմիջապես կանխարգել գրաքննություն չծանրացավ։ Թուրք իշխանության աչքին հայը դեռ քաղաքական մեծկակ կարևորություն ստացած ըլլալուն, անոր թերթն ալ տարապայման աշալուրջ հսկողության տակ պահելու հարկ չէր տեսնված։ Գրողներն ալ, բնականաբար, պիտի ուզեին անկախորեն հրատարակվող թերթին դիմել քան թե հատորին, որ կը գրաքննվեր։ Սակայն 1888-ին հայ մամուլին վրա ալ գրաքննություն հաստատվեցավ։ Փոթորկի առաջին նշանները երևան եկած էին։

Օրաթերթը իր անկախությունը թեև կորսնցուց, բայց և այնպես կը վայելեր առանձնաշնորհումներ, որոնցմե գիրքը զրկված կը մնար։ Տպագրական տեսչությունը օրագրության թույլատրեց մեր նոր և հին կյանքերուն ուսումնասիրությունը և քննադատությունը, միանգամայն Հայաստանի անվան հիշատակությունն ալ։ Դեռ 1890-ի առաջին կեսուն կարելի կ՚ըլլար Ալիշանին ու Արծրունիին հոբելյանները լրագրության

մեջ առնել և «Մշակին» խմբագրին կենսագրությունը ընդարձակորեն հրատարակել։ Հետ ժամանակի՝ օրագիրը թեև ավելի և ավելի պըրկվեցավ, բայց գրքեն նվազ կաշկանդյալ մնալով, գրողները բոլորովին հոն ապաստանեցան։

Գրողները թեև կը փափագեին օրագրին մեջ գրաքննյալ ու վավերացյալ հոդվածները և վեպերը առանձին հատորով ալ հրապարակ հանել, բայց ամենամեծ դժվարություն մը կը զարնվեին։ Պետք էր երկրորդ գրաքննության մըն ալ դիմել, վասն զի գիրքն ու թերթը միևնույն պաշտոնատան հսկողությանը հանձնված չէին։ Թերթը ներքին գործերու նախարարին իրավասությանը կը պատկաներ, իսկ գրքին խառնվողը կըրթական նախարարությունն էր։ Երկու պաշտոնատունները իրարմե տարբեր հայացքներով կը դատեն իրենց հավանությանը հանձնված գրությունները։ Օրագրեն մաքսանենգությամբ ինչ որ անցնել կարելի եղած է, այն կրթական պաշտոնատան սահմանագլխեն ալ փախցնելու հնարավորությունը գիրքը չգոյության դատապարտված է։ Եվ ահա արևմըտյան ժամանակակից գրականությունը գրեթե ամբողջովին ցիրուցան տարտղնյալ կը հանգչի մամուլին հազարավոր, բյուրավոր էջերուն մեջ, ուր շատ քիչերը անոնք փնտռելու կ'ելլեն։

Շատ ճշգրիտ բացատրությամբ չէ, որ Թուրքիա հրատարակված գըրքերու և թերթերու ամբողջությունը «Արևմտյան հայոց գրականություն» կ'անվանենք ընդհանուր առմամբ։ Հայաստանեն գրողները մեր ժամանակակից գրական կյանքին շատ չափավորապես մասնակցեցան։ Հայկական նոր գրականությունը երկու գաղթավայրի մեջ ծնավ ու կը բարգավաճի՝ Պոլիս և Իզմիր, զորս օտարահող լայնածավալ անջրպետ մը մեր բնակավայրեն կը բաժնե։

Թրքահպատակ Հայաստանին մտավորական կյանքը Կ. Պոլսո հայոց գերիշխան ազդեցությանը ենթարկվեցավ, վասնզի հայոց կեդրոնավայրը կը հանդիսանար իր ընծայած բազմադիմի առավելություններուն շնորհիվ. մյուս կողմեն ալ Դուռը տպարանի հաստատման և մամուլի արտոնությունը Հայաստանին կը զլանար, որով մեր գրականությունն ալ կը պարտավորվեր հայրենի հողեն դուրս տարագրյալ ապրիլ ու մեծնալ։ Այս տարագրությամբ, գրականությունը ինքնազարգացումի բնական ճամփեն մոլորեցավ։ Այդ մոլորման գլխավոր հետևանքները լեզվական, գեղեցկագիտական և ընկերաբանական տկարություններ եղան։

Հայրենիքի ու գաղթավայրի բարբառներուն միջև բաղդատություն մը ցույց կուտա, թե Հայաստանի լեզուն թեև անմշակ կը մնա, բայց

բարեշրջումի օրենքներուն համաձայն կերպարանափոխվելով, ազգային ոգին ավելի ամրապինդ կը պահե։ Բաղեշցիին, մշեցիին, վանեցիին խոսվածքն իսկ գրաբարին քերականության, շարադասության ոճը կը հիշեցնե, նույնն և կամ աղավաղյալ, այսինքն՝ բարեշրջումի ճամփուն մեջ։ Իսկ գաղթական հայերը կը գրեն թրքաբանության հետևողությամբ, իրենց խոսած լեզուն ալ թրքականին բառացի թարգմանությունը ըլլալով։ Այսպես, երկրին ու գաղթավայրին նորածին աշխարհաբարները իրարմե կ՚անջատվին։ Եվ որովհետև գաղթավայրն է, որ տպարանի արտոնությունը կը վայելե, ուստի և անոր լեզուն ալ հայրենի բարբառին վրա կը հաղթանակե։

Անխնամ, երեսի վրա թողված լքյա՜լ մը այդ հայրենի բարբառը, բարգավաճման որևէ հոգածութենե զրկված. իսկ գաղթածինը կ՚աճի, կը զարգանա գուրգուրական խնամատարությամբ։ Սակայն, լեզվաբանության ընդհանուր օրենքները ուսումնասիրող հայը կ՚անդրադառնա, թե Հայաստանի աշխարհաբարին մշակումը մեզի պիտի տար գրական լեզու մը ավելի կորովալիր, ավելի ճկուն նվազ միտք հոգնեցնող ու պերճ մատենագրության մը ստեղծումին ավելի հանկագույն։

Գաղթածին աշխարհաբարնիս՝ Հայաստանի լեզվին տգիտությամբը, անկարող եղած է շահագործել բազմահարուստ մթերքն այն բառերու և բացատրությանց, զորս կյանքի պետքերը դարերու ընթացքին մեջ ստեղծած են մեր երկիրը։ Գրողները այդ բառերը մեծ մասամբ չեն գիտեր. ու գիտնային իսկ, անոնց կիրառումը անպետ պիտի ըլլար, պոլսեցին զանոնք չհասկնալուն։ Հայկական նահանգներեն վռափորյան թերթերուն գրողները կը պարտավորվին ծանոթագրել իմաստներն այնպիսի բառերու, որոնք հայրենիքի ամեն գավառները դյուրահասկանալի են ամենօրյա գործածությամբ։ Ու նաև, Հայաստանի հայուն բերանը դեռ մինչև հիմա ընթացիկ շատ մը բառեր գաղթային գրականության մեջ անգործածելի կը մնան իբր զուտ գրաբարապատկաններ։ Եվ պոլսեցի, իզմիրցի գրագետներ, նույնիսկ բառգիրք հորինողներ, հաճախ կը կերտեն բառեր, որոնց ավելի ճիշտ և ավելի գեղեցիկ համիմաստները հայրենական հողի վրա կ՚ապրին։

Կ. Պոլսո և Իզմիրի հեղինակության է՛ն մեծ պակասություններեն մեկն է՝ ազգային կյանքեն «պատկերին» ընդհանրապես բացակայությունը կամ տկարությունը։ Պատկերը միջակ վիպասանության, բանաստեղծության հմայիչ հրապույրը չէ, այլև փիլիսոփայական խորհրդամաստ համարվող գրություններուն իսկ լույսը։ Բայց որպեսզի պատկեր մը ընթերցողին մտքին մեջ կայծակե, անոր երևակայությունը ցնցե, սիրտը հուզե, հարկ է, որ անիկա անսպառելի, բայց հատակափայլ նա-

րությամբ մը շլացնե և սրտին մեջ հիշատակներ արթնցնե մեկեն ի մեկ։ Թուրքիո Հայոց նման ժողովուրդ մը, որ գրական, պատմական, ուսումնական դեռ շատ նախնական կրթություն ստացած է, չի կրնար համ առնել, ազդվիլ պատկերներե, որոնք հեռավոր երկիրներե կուգան, կամ մեզ գիտության անծանոթ աշխարհներ կը նկարեն։ Երբ թերթին մը ազգային ուղղությունը պարզելու համար Բաշալյան խմբագրական հոդված մը կը վերջացնե, ըսելով— «Մեր երկրին մեջ, Բութկի Սուրբ Գևորգ ուխտատեղի մը ունինք Մոկաց լեռներուն վրա։ Ժողովրդական ավանդությունք կ'ըսե, թե վանքին աքլորները կը ձայնեն ճամփորդներուն, թե կարելի՞ է կամ ոչ՝ անվտանգ անցնիլ ձյունին մեջեն։ Այդ ձայնին ամեն ժամանակե ավելի հիմակ պետք ունինք»— տարակույս չկա, թե ընթերցող Հայը՝ շատ կամ քիչ զարգացած ըլլա, ավելի ազդու և ավելի հաճելի տպավորության ներքև կը թողու, քան թե դիմաց ըրած ըլլար Սուրբ Պեռնարտոսի լեռներուն կամ Ուեստմինսթրի, Աբբայարանին։ Ծառ ու ծաղիկ, կենդանի, բնության տեսարաններ, հիշատակ, ավանդություն, ո՛ր մեկը թվել, բազմաթիվ դարերե ի վեր մեր երկրին մեջ ամբարված են պատկերներու գաղափարներ, որոնք մեր մատենագրության մշտանորոգ գեղազարդումին երկար ատեն պիտի բավեին։ Բայց այդ անհագնակույտ հարստությունը որպեսզի հեղինակին օգտակարապես սատարե, պետք է որ գրագետն ալ հայրենի կյանքին վաղուց ընտելացյալ մը եղած ըլլա. ու ան ատենն է, որ գրիչը ձեռքն առած պահուն՝ ազգային կյանքե պատկերն ալ հիշողության բջիջներեն դուրս կը ցատկե, սրտին ալիքներեն վեր կը սուրա։ Պոլսեցի, իզմիրցի գրողը իր «կապույտ երկինքն ու ծովը» գիտե, «բուրումնավետ վարդը, քաղցրախոսիկ սոխակը, մեղմաշունչ զեփյուռը», հայրենի ավանդություններեն իրեն հասած ժառանգության բաժինը կտոր բրդուճ լաթներն են միայն. ուստի և իրեն համար ալ հազվադեպ բարեբախտություն մըն է, եթե հայրենավանդ ուժեղ կամ գրգանուշ պատկերի նորությամբ հաջողի ընթերցող հմայել։ Արևմտյան գրագետներեն ոմանք՝ անոնք որ ինքզինքնին կը հարկեն՝ երբ կը տեսնեն թե պատկեր մը ներկայացնելու համար պարտավոր են օտարեն փոխառության դիմել, և այնպիսի պայմաններու մեջ, որ ընթերցողներուն դյուրըմբռնելի պիտի չըլլան, ան ատեն լավագույն կը համարին իրենց գաղափարները չոր ու ցամաք հայտնել, օրինագրքի մը հոդվածներուն պես, քան թե անհասկնալի ըլլալ, կամ հասարակ տեղիքներու դիմել։ Բայց չեն պակսիր «մատենագիրներ», որոնց ձեռքերը տակավին առաջ կ'երթան գրելու «ամպոց շփումեն, լո՛ւյս կը ծագի», կամ «ո՜հ, իմ վարժարանս, մեղվա՜ց փեթակ»։ Բարեբախտաբար հայրենագիտական, ազգագրական նորանոր հրատարակությունները Արև-

մըտյան գրագետներուն դյուրություն պիտի ընծայեն գրքեն ըստ բավականին իմանալ և սորվիլ, ինչ որ աչքով չեն տեսած, ականջով չեն լսած։

Գաղթական հեղինակները՝ շնորհիվ օժանդակության, դյուրության ունին իրենց գրածներուն մեջ զուտ հայկական համ հոտ ալ դնել, բայց չեն կրնար ազգին սիրտը իր հայրենիքը փոխադրել, հո՛ն բաբախել տալ անոր։ Պատմությունը սրբագնացուցած չէ հողը, ուր գրագետները իրենց բանաստեղծական ստեղծագործությունները ի հանդես կը բերեն, որոն վրա կ'ուսումնասիրեն ապրված իրական կյանք մը։ Պոլիսը, Իզմիրը մերինը եղած չեն ու պիտի չըլլան։ Բաշալյան մը, Զոհրապ մը, Կամսարական մը, Միր-Երո մը, Օտյան մը հայ սրտերը այլապես պիտի գրավեին ու խռովեին, հայ մտքերը այլապես պիտի հուզեին և ուղղեին, եթե անոնց հնարավոր եղած ըլլար Մուշ, Վան, Երիզա փոխադրել իրենց արվեստն ու ընկերաբանական իմաստասիրությունը։

Ահա այն տկարությունները, որոնք անխուսափելի չարիքներ են, երբ գրականություն մը կը պարտավորվի սնանիլ և ապրիլ հողի մը վրա, ուր ցեղը ո՛չ ապրած է, և ո՛չ ալ կ'ապրի պատմության ստեղծած բարոյական և տնտեսական կյանքովը։ Բայց Պոլիսն ու Իզմիրը մեզի ընձեռեցին օգուտներ, որ պետք է հիշատակել։ Եվ արդեն, առանց այդ հիշատակության, անկարելի է Արևմտյան ժամանակակից մտավորականությունն ու գրականությունը հասկնալ և բացատրել։

* * *

Եվրոպայի սահմանակից քաղաքներու մեջ մամուլի հաստատությունը, Եվրոպայի մտքին հետ մոտեն հաղորդակցումի դյուրությունները մեր ասիացի միտքն ու դիրքը եվրոպականացման ճանփուն մեջ դրին։

Պոլսո և Իզմիրի հայերը սորվելով Ֆրանսայի լեզուն և ընտելանալով անոր գրականությանը, ֆրանսական ոճն ալ Արևմտյան նոր հեղինակներուն նմանողության օրինակ մը պիտի ներկայանար բնականաբար։ Այդ հետևողությունը մեր մտավորականության վրա ունեցավ ազդեցություն մը գերազանցորեն բարերար ու սքանչելապես փրկագործ։ Մեր գրության մեջ տիրապետող հռետորական ոճը սկսավ կամացկամաց տեղի տալ վճիտ, դյուրըմբռնելի ոճի մը առջև, որ գրողին համար ինչքան հրապուրիչ էր, ընթերցողին համար ալ նույնքան սխորժելի։ Գրագետները ֆրանսերենն ու գրաբարը ներդաշնակելով, Պոլիս և Իզմիր խոսված բարբառները բարեխառնեցին ու հիմը դրին աշխարհաբարի մը, որուն երբ բնորոշ հատկությունները կը փայլին՝ հաստ-

կություն, պարզություն։ Բայց շատ դժվարին էր, ու դժվարին կը մնա, շուտափույթ արագությամբ թոթափել լուծն այն թրքաբանության, որ Պոլսո և ուրիշ քաղաքներու հայոց մտքին ու ականջին մինչև ստորմիքները թափանցած է։

Եվրոպական գրքին անմիջական ազդեցությունը զգալի եղավ հայոց այն դասակարգին վրա, որուն ստացած կրթությունը շատ նախնական էր։ Այդ դասակարգը աստիճանաբար զարգանալով, հետզհետե պիտի կազմեր ընթերցողներու այն ստվար կույտը, որ իր նորարծարծ ընթերցասիրությամբը պիտի կրնար բարգավաճ մամուլի մը գոյությունը ապահովել ու մատենագրության զարգացումին օժանդակել։ Ֆրանսերենե թարգմանությունները, գլխավորապես՝ վեպերը, ժողովրդին միտքը սկըսան մարզել, թեքել, ու անոր ճաշակը կամաց-կամաց քիչ մը եվրոպականացնել։

Հայացած գրքերը երկու դասի կը բաժնվին. մեծ մատենագրության պատկանյալները՝ ինչպես Հյուգոյի, Սքոթի, Շեքսպիրի գործերը, և՝ «ժողովրդական վեպ» կոչվածները։ Դյումայեն մինչև Պուակոպե։ Այս թերթոն վիպագրությունները թեև գրական բարձր արժանիք մը չներկայացնեն, բայց և այնպես ֆրանսական կնիքը անոնց զարնված էր։ Պարզ, հստակ, մարդկորեն գրվածներ, որոնցմե համ առավ՝ խրթնիմաստ ճոռոմաբանություն կամ արևելյան մասալներ կարդալու դատապարտյալ ժողովուրդ մը։ Թուրքիո հայը այդ եվրոպական ոճին ընտելությամբը, հռետորական լեզուեն այլևս խրտչիլ սկսավ, ու իր ազգային հեղինակներն ալ բնական, մարդկային, հասկնալի ըլլալու պարտավորեց։ Գրողները՝ եվրոպական ազդեցությամբ իրենք իսկ նոր-ոճ գրականություն մը ստեղծելու արդեն տրամադիր, սիրտ առին ու զորություն զգացին, ժողովուրդը իրենք ըմբռնելու ըստ բավականին պատրաստված գտնելով։

Մեծ մատենագրության թարգմանությունն ալ թերթոն-վիպագրականին զուգընթաց առաջացավ։ Հյուգոյեն մինչև Դանթե ունեցանք։ Իմաստասիրական, գիտական, պատմական մեծ հեղինակություններե թարգմանություններ հատուկտոր եղան։ Ժողովրդին զարգացման աստիճանը, կրոնական և քաղաքական նկատառումներն ու արգելքները ավելի ընդարձակորեն հայացումներ չթույլատրեցին։

Գաղթածին աշխարհաբարին արագորեն զարգացմանը շատ օգնեց օրագրությունը։ Բազմադիմի ու այլազան նյութերու վրա օրը օրին գրելու հարկեն, խմբագիրները և հոդվածագիրները ստիպվեցան քաղաքական, տնտեսագիտական, խորհրդարանական, ուսումնական, գեղարվեստական և այլ ուրիշ գաղափարներ արտահայտող բառեր կերտել հետըզ-

հետե։ Պոլսո հայը կես դար ժամանակամիջոցի մը անհագնաքայլ առաջ դիմեց աշխարհաբարին մեջ։ Դեռ 1852-ին «Մասիս» երբ Վոսփորը հիշատակեր, «նեղուցին» քով փակագծի մեջ ալ «պողազ իչի» դնելու պետք կը զգար։ Եվ այժմ, Պոլիս իզմիրյան լեզուն, հանդերձ այն բոլոր անպատեհություններովը զորս հիշատակեցինք, աշխարհաբար մըն է նազուկ, շնորհազարդ, կորովի, ու Եվրոպայի ուսումնական և գեղարվեստական գործերը ըստ բավականին հաջողությամբ հայացնելու ընդունակ։ Եվ, ապահովաբար, ասկե ետքը ավելի ճեպընթաց առաջ պիտի խաղա։

Իզմիր ու Պոլիս Եվրոպայի հետ իրենց դրացնությանը պատճառավ ինչպես ոճեն ու լեզուեն, նույնպես և մտքեն ալ շուտով ու դյուրությամբ օգտվելու առավելությունը վայելեցին։ Այդ քաղաքներեն երիտասարդություն մը շարունակ Ֆրանսա, Իտալիա, Անգլիա կ՚երթար ու հետը նոր գաղափարներու պաշար առած կը վերադառնար երկիրը, հոնկե ամբողջ Թրքահպատակ հայ աշխարհին վրա ներգործելու։ Այլևայլ լեզուներով գիրք ու թերթ ազատորեն կը մտնեին այդ երկու քաղաքները, ուր եվրոպական լեզու սորվողներուն թիվը հետզհետե կ՚ավելնար։ Օսմանյան ոստանը ու ասիական վաճառաշահ մեծ քաղաքը։ Եվրոպայեն դեպի ամբողջ արևմտյան հայությունը իբր գաղափարանցքներ ծառայեցին և կը ծառայեն։ Ու Եվրոպայեն մեզի հասած գաղափարներուն ազդեցությունը ինչպես մեր ամբողջ կյանքին վրա, նույնպես և մեր գրականության մեջ ակներև կը տեսնվի այլևայլ երևույթներով։

Արևմտյան հայոց գրականությունը դյուրությամբ ըմբռնել տալու համար այս քանի մը ընդհանուր նկատողությունները ներկայացնելե հետո, կ՚անցնինք 1850—80 վերանորոգման թվականին գլխավոր գծերը աչքի առջև դնելու։

Բ

Հայ գրականության զանազան ճյուղերը տասնիններորդ դարուն երկրորդ կեսին

Տասնևիններորդ դարուն առաջին կեսը երբ կը լրանար, Թուրքիո հայոց համար գրական շարժումի մը կովանը արդեն բավականին պատրաստված էր, տպարանի ու դպրոցի միջոցավ։ Երկուք ու կես դար առաջ Պոլիս հաստատված հայկական մամուլը հետզհետե կը կատարելագործվեր գեղասեր հայ արվեստագետներու տաղանդին շնորհիվ։ Կրթական գործն ալ կարճ ժամանակամիջոցի մեջ զգալապես առաջա-

գիմած էր։ Կ. Պոլիս առաջին վարժարանը դարուն սկիզբները բացվելէ հետո, դեռ և ոչ իսկ հիսուն տարի անցած, ամեն թաղ իր դպրոցը կ'ունենա, ինչպես կ'ունենան Հայաստանի և Թուրքիո հայաբնակ նահանգներու շատ մը քաղաքներ ալ։ Կրթական այս հաստատություններեն հասած սերունդները ընթերցողներու առձեռն դասակարգ մը կը ներկայացնեին։ Եվրոպայեն վերադարձած կամ հետզհետե վերադառնալու վրա եղող երիտասարդություն մըն ալ իր գրական ու գիտական զարգացմամբը պիտի սատարեր ազգին մտավորական վերածննդյանը նվիրված աշխատության։

Հայ օրագրությունը կը հիմնվի Իզմիր, «Արշալույս Արարատյանով». քիչ ետքը Պոլիս կը հրատարակվի «Հայաստանը», որուն կը հաջորդե «Մասիսը»։ Երևան կուգան ուրիշ թերթեր ալ, ինչպես՝ «Նոյյան Աղավնի», «Արփի Արարատյան», «Երևակ», «Մեղու», ու նաև՝ հայատառ և թրքաբարբառ օրագիրներ ալ։ Պարբերական հրատարակությունները թեև հետզհետե կը շատնան, բայց չի տեսնվիր հաստատ համոզումներով սպառազինյալ խմբագիր մը, որ ազգային առաջադիմության գլուխը անցնի և նոր թվականի մը իբր մարմնացումը հանդիսանա։

Բնական էր, որ մեր գրական վերածնունդին նախապատրաստությունը լրագրով տեսնվեր, վասն զի թերթ՝ թեթև ու հետաքրքրական՝ պիտի կրնար առանց մեծ դժվարության հասկցվիլ տակավին սկսնակ-ընթերցասեր ժողովրդե մը։ Իսկ օրագրեն ետքը, դյուրամատչելի և դյուրահասկանալի ըլլալու առավելությունը վայելող գրական սեռը՝ թատերագրությունը կը ներկայանար։ Ողբերգություն մը, տռամ մը ուղղակի զգացումի հետ գործ ունենալով, մտավորական լայն բարգավաճումի պետքը զգալի ընել չէր տար։ Թատերգությունները՝ որքան որ ալ անարվեստ գրված, բայց և այնպես աչքերու վրա իրենց ներգործությամբը, դյուրավ կը գրավեին ժողովուրդ մը, որ գրական ու գեղարվեստական դաստիարակությամբ նրբացած չէր։

Թատրոնով, հայ գրականության մեջ կը մտներ պարզ լեզուն։ Հեղինակները պարտավորվեցան հռետորական շարադասութենե զգուշանալ նույնիսկ դյուցազներ հանդես բերող խաղերու մեջ, վասնզի կը գտնվեին դեմ հանդիման հասարակության մը, որուն սրտին պետք էր խոսիլ անմիջապես. ունկնդիր հանդիսականը լսածը հասկնալու համար երկար բարակ մտածելու ատեն չուներ։

Թատերգական գրականությունը մինչ մեկ կողմեն կ'արագեր մեր առաջադիմությանը անհրաժեշտ պայման եղող դյուրահասկանալի լեզվի մը կազմությունը, մյուս կողմեն ալ՝ հայ հայրենիքի մը գիտակցությունը կու տար, մանավորապես գաղթական հայոց։ Ներկայացված տե-

սարանները մեր պատմական կյանքեն առնվեցան, ուստի և Հայոց պատմությունը մտքերու և սրտերու մեջ քանի մը մեծ պատկերներով տպավորեցին, երևակայության օժանդակությամբը։ Մնաց Հայաստանի գաղափար մը, որ շատ չանցած՝ իբր կենտրոնաձիգ զորություն մը, իրեն պիտի քաշեր ամբողջ հայությունը, ստեղծելու համար ազգային նոր կյանք մը։

Պատմական ներկայացումները կամաց-կամաց տեղի տվին եվրոպական կյանքե առնված գրական և գեղարվեստական արժանիք ունեցող խաղերու, որոնք նաև իմաստասիրական, ընկերական, բարոյական մեծամեծ խնդիրներ հուզելով, հայ ժողովրդին միտքը կը մղեին նոր գաղափարներու։ Այսպես, թարգմանվեցան ու ներկայացվեցան Հյուգո, Դյումա հայր և որդի, Սիլվիո Բելիքո, Ֆելիքս Բեա, և շատ ուրիշներ։ Բայց թատրոնը մեծ ապագայի սահմանված չէր։

Բանաստեղծությունը՝ օրագրին ու թատրոնին հետ ծնած՝ գրեթե ամբողջապես հայրենասիրական երգի մեջ կաշկանդյալ մնաց։ Հայաստանը սգեց, Սահմանադրությունը ողջունեց, ու ազգային սիրո ու միության քարոզիչը եղավ։ Այդ ազգային երգերեն անոնք որ ուշադրության կը գրավեն գաղափարի նորությամբ, պատկերներու ուժգնությամբ, զգացումներու արտահայտության հափշտակիչ ոճով, անոնք եվրոպական բանաստեղծությանց հետևողություններ են կամ բառացի թարգմանություններ՝ հատուկ անուններու փոփոխությամբ։ Բայց այլևս հայացած են. մեր ազգային դրոշմը անոնց զարնված է անջնջելի, մեր գրականության հրճվանքն են ու փառքը, այսպես՝ Պեշիկթաշլյանին «Մահ քաջորդվույնը» կամ Ռուսինյանին «Երբոր բացվին դռներն հուսո»։

Երգերը՝ հայկական մտքի զուտ ծնունդ, թե փոխառությամբ հայացյալ՝ իրենց մեջ կը պարագրեն 1850-են ասդին ազգային հոգեբանությունը։ Հայը ուրիշ զգացում չի տածեր, բայց եթե հայրենասիրականը։ Քիչ տաղերու կը հանդիպինք, որոնք սերը, ցավը, ուրախությունը, տխրությունը տավղեն։ Բորբոքման տարիներ են, և սրտի բաբախումներու ականջ դնող չի գտնվիր։ Տաղաչափներու խռանին մեջ թեև գեղեցիկ, մինչև իսկ սքանչելապես գրողներ կան, բայց ստեղծելու կարողությամբ ծնած տաղանդը հազվագյուտ բացառություն մըն է, ու նույնիսկ այդ բացառությունն ալ հստակափայլ չի պայծառանար։ Դուրյանին քանի մը ոտանավորները կը հավաստեն, որ այդ վաղամեռիկ երիտասարդը, ապրելով ու զարգանալով՝ պիտի կրնար սքանչելի ստեղծագործություններով մեր մատենագրությունը ճոխացնել։ Ստեփան Ոսկանեն ինչ որ հասած է, ցույց կուտա թե իզմիրցի հրապարակագիրն ալ բացառիկ մըտքերու մեջ դասվելու բնատուր իրավունք մը կը վայելե։

Այս վերապահումները ընելով հանդերձ, կ'ընդունինք թե Պեշիկթաշլյան, Հակոբ Ոսկան, Թերզյան, Ռուսինյան, Աճեմյան, և դեռ ուրիշներ թարգմանորեն կամ նմանողությամբ գրած են ոտանավորներ, որոնցմե եթե էսթետիկի սիրահարությամբ կազմվի հավաքածո մը, մեր արդի գրականության մնայուն գործը պիտի ըլլա, և շատ դժվարահաճ գեղասեր մտքերու իսկ ախորժելի ընթերցանություն մը։

Նոր կյանքը ստեղծեց նաև աշխարհական պերճախոսությունը։ Մինչև Սահմանադրության թվականը հայ բեմը ժամուն մեջ զետեղված էր, կրոնական նյութերու քարոզմանը նվիրյալ։ Երբ խորհրդաբանական կազմակերպությամբ Ազգային ժողով մը հաստատվեցավ, այն ատեն հոն բարձրագույն ուսում իսկ ստացած աշխարհականներ պերճաբանորեն խոսեցան կրոնական, պատմական, կրթական, տնտեսական, քաղաքական, խորհրդաբանական բազմաթիվ խնդիրներու վրա։ Այդ խոսվածները տպագրյալ կը մնան Ազգային ժողովին ատենագրությանց մեջ։ Անոնցմե ևս հավաքածո քաղված մը պիտի կրնար Արևմտյան հայոց ժամանակակից մատենագրության մեջ մտնել, և հայ պերճախոսության իբր օրինակը ներկայանալ։ Ատենաբանները պետք չեն տեսած վարպետաբանություններ ընել առժամյա պարագաներու համար. շարժումի, ձևերու, բացականչությանց մեծ կարևորություն չեն ընծայած։ Ընդհանրապես լավ մտածեր, հանդարտորեն գրեր կամ խոսեր են։ Կարևոր ատենաբանությունները տպագրումի առթիվ, իրենց հեղինակներեն հատուկ խնամատարությամբ սրբագրվեր են։

Ազգային ժողովը մեզի աշխարհական բեմբասացության հետ տվավ նաև խորհրդաբանական բառգրքույկ մըն ալ, որ մասնավորապես Ռուսինյանին պարտինք։ Այսօր Թուրքիո հայերը խորհրդաբանական ու քաղաքական ամեն բացատրություն կը գործածեն ու կը հասկնան, առանց օտարազգի բառերու միջնորդությանը։

Պատմությունը շատ ետ մնաց Թուրքիո հայոց մտավորական առաջխաղացումի գնացքին մեջ։ Շարունակեց Մխիթարյանց առանձնաշնորհյալ մասնագիտությունը մնալ, բայց լոկ իբրև հնագիտություն մը, որուն հարություն կուտա Ալիշանի մը բանաստեղծական թռիչը։ Բայց ո՛չ աշխարհականները, և ո՛չ ալ լուսավորչական եկեղեցականները չմշակեցին պատմությունը։ Երկրին պայմանները ո՛չ պատմաբանի պատրաստություն թույլատրեցին, և ոչ ալ երկասիրության դյուրություն ընծայեցին անոնց, որ միջավայրին ներած սահմաններուն մեջ աշխատեր ու բան սորվեր էին։ Ուսանելու համար Եվրոպա գացող երիտասարդները կը վերադառնային կամ երկրորդական կրթություն մը ստացած, կա՛մ շահաբեր մասնագիտություն մը սորված։ Իսկ ընկերաբանական,

իմաստասիրական, պատմաբանական ուսումներով բեռնավորվելու համար ոչ ոք երկրեն կը հեռանար։ Չկար մենաստան մը, նման Մխիթարյանցին, ուր գոնե եկեղեցականները հանդարտորեն աշխատելու դյուրություն վայելեին։ Չունեցանք Գեորգյան ճեմարան մը, կամ Ներսիսյան վարժարան մը, որ պատմագետներուն միջոց տար մեկ կողմեն իրենց մանաճյուղը դասախոսելով՝ կարենային աղեկ թե գեշ ապրիլ, ու մյուս կողմեն ալ պատմագրության նվիրել պարապ ժամանակնին։ Մարկոս Աղաբեկյան մը, որ հայոց պատմությունը խորապես ուսումնասիրած է, և նոր հայոց պատմություն մը գրելու ձեռնարկած, բազմատանջ կյանքին մեջ ոչ ինքնամփոփ մտքով խորհելու և ոչ ալ սկսած լուրջ գործը գլուխ հանելու կարող է։ Նորայր Բյուզանդացի մը իր քննասիրական երկերեն բան մը հրատարակելու համար, տաժանակիր աշխատության դատապարտյալի մը տանջանքները կը կրե։ Մատթյա Գարագաշյան իր **«Քննական պատմությունը»** Թիֆլիս կրնա ամբողջապես տպագրել տալ։ Նորերուն մեջ ունինք Դուրյան Եղիշե եպիսկոպոս, բազմահմուտ գլուխ մը։ Արմաշու դպրեվանքը, որ ժամանակակից հաստատություն մը կը համարվի, հանգստորեն պարապման առավելությունը ընծայեց այդ միակ եկեղեցականին։ Բայց քաղաքական պայմանները եթե նպաստավոր իսկ ըլլային պատմական հրատարակության, սակայն Դուրյան եպիսկոպոս, վարդապետ մըն է Հայաստանյաց եկեղեցու, ու իբր այն պետք է «ավանդություններու սրբությունը» հարգե։ Կրոնավորին պարտականությունը ու քննաբանին գիտությունը կը մաքառին։ Կամ վեղարեն հրաժարում, կա՛մ գաղափարեն։ Վեղարը իր հովանավորությունը կը պահպանե ու պիտի պահպանե։

Հայրենագիտությունը հայաստանցի եկեղեցականի մը ձեռքով մտավ մեր մատենագրության մեջ։ Վանեցի Գարեգին վարդապետ Սրվանձտյանց հետզհետե հրատարակեց «Գրոց ու բրոցը», «Հնոց ու Նորոցը», «Մանանան», «Համով հոտովը», «Թորոս աղբարը»։ Այս հրատարակությունները խանդավառ ոգևորությամբ ընդունվեցան։ Սրվանձտյանցին հետևեցան ուրիշներ ալ, ինչպես՝ Նաթանյան Պողոս վարդապետ իր «Արտոսր Հայաստանիով», պարտիզակցի Վահան վարդապետ «Անգիր դպրությունով»։ Այս գրքերը, որոնք Հայաստանի ապրված կյանքը կը պատկերացնեին, մեր հեղինակներուն այն մեծ ծառայությունը կը մատուցանեին, որ անոնց հնարավոր կ՚ընեին իրենց գրածներուն մեջ հայրենիքի համը հոտը դնել։

Կրոնական առատ հրատարակություններ ունեցանք, վիճաբանական, վարդապետական, խրատական, որոնք գրական պատմության մեջ տեղ մը չեն գրավեր թեև, բայց օր մը մեր ժամանակակից պատմու-

թյունը գրողներուն թանկագին նյութեր պիտի մատակարարեն, արդի Հայոց Հոգեբանությանը թափանցելու Համար։ Բայց այդ գրքերուն մեջ կան, որ կրոնական գրականության սեփական գեղեցկությունը ունին, ուստի և իբր այն, մեր մատենագրական պատմությանը մեջ անցնելու իրավունքը կը վայելեն։ Խրիմյան Հայրիկին Հրատարակած «Մարգարիտ արքայության երկնիցը»՝ ինչպես և անոր Հաջորդող ուրիշ Հատորները, կը ներկայացնեն վճիտ, պարզ, սրտաբուխ ու բարձրիմաստ գրականությունը գորովալիր քրիստոնեության մը։

Վիպասանությունը մեր մատենագրության մյուս բոլոր ճյուղերը գերազանցեց թե՛ արտադրության Հորդառատությամբ, թե՛ բազմադիմի լուրջ Հատկություններովը։ Ուրիշ որևէ սեռ ավելի բախտավորություն ունեցավ լավագույն ապագայի մը։ Բայց մինչ թատերագրությունը մեր մեջ ազգային կյանքե Հեղինակությամբ սկսավ ու դեպի թարգմանություն Հետզհետե մղվեցավ, վիպագրությունն ալ, ընդՀակառակը, թարգմանությամբ երևան գալով բարեշրջեցավ Հեղինակության։

***

Ինչպես այս Համառոտ տեսությունը ցույց կուտա Արևմտյան Հայոց նոր գրականությունը ո՛չ օրագրության մեջ սաՀմանափակված մնաց, ո՛չ ալ մատենագրական մեկ կամ երկու ճյուղի մեջ։ Սկսավ զարգանալ՝ առաջնորդ ունենալով տաղանդավոր Հեղինակություններ, որոնցմե քանի մը անուններ Հիշեցնել Հարկ կը Համարինք։

Նոր մտավորականության մը թվականը բացված պաՀուն, Հին մտավորականությունն ալ կը մարմնանար Հանձին Տերոյենց-Ջամուռճի պատվելիին։ ԲազմաՀմուտ գլուխ մը, տեսակին մեջ եզական. աստվածաբանական գիտությամբը կրնար նույնիսկ եվրոպական որևէ ազգի պատիվ բերել։ Հիմնեց «Հայաստանը» և ուրիշ թերթեր, Հրատարակեց տետրակներ ու գրքեր, ամենքն ալ կրոնական դատին ի պաշտպանություն։ Պարզ ու Հստակ աշխարՀաբարով մը դյուրըմբռնելի կ՚ընծայեր դժվարիմաց նյութերը։ Անշուշտ առաջադիմության ռաՀվիրա մը չի ներկայանար, բայց ժողովրդի մը մտքին պատմությունը միայն նորության նվիրված տարեգիրք մը չէ։ Կ. Պոլիս Հին դպրոցը նոր գաղափարներու առջև չվերջոտնեց, չաներևութացավ։ Թուրքիո Հայոց քաղաքական կացությունը տասնևիններորդ դարուն առաջին կեսեն ետքն ալ մնալով նույնը, ինչ որ դարուն սկիզբն էր, նոր Հասնող երիտասարդությունները ալ չկտափաքեցան, և կարող ալ չէին, խորտակել ուժ մը, որ ազգին

ոգին մահմեդականության դեմ պաշտպանելու իր զորությունը գործնականապես հաստատած էր։ Թեև նոր գրականությունը լեզվովն ու ոճովը հինեն շատ պիտի տարբերի, թեև նորամուտ գաղափարներ պիտի գան հայ միտքը ճոխացնել, բայց նախնի կրոնապաշտպան ոգին պիտի շարունակե միտքն ալ, սիրտն ալ, գրականությունն ալ ամպհովանել։

«Մասիսը», որ 1852-ին հիմնվեցավ, գաղափարներու վերանորոգչի մը կոչումովը հանդես չէր գար, Պատրիարքարանին պաշտոնաթերթն էր։ Մեծապես օգտակար եղավ այն ծառայություններովը, որ աշխարհաբարին բարեկարգմանն ու ճոխացմանը մատույց։ Խմբագիրը՝ Կարապետ Յություճյան՝ հայագետ մը առանց բազմալեզու հմտության, դյուրությամբ ու ճաշակով հետզհետե կերտեց բառեր, որոնց պետքը օրագրության մեջ օրը օրին կը զգացվեր. միանգամայն վերակենդանացուց հին բառեր, մերթ անոնց իսկական նշանակությամբը. մերթ՝ հինին մոտավոր իմաստի մը փոխատվությամբը։ Ֆրանսերենե բազմաթիվ վեպերու թարգմանություններովն ալ շատ մը նոր կամ նորիմաստ բառեր ներմուծեց մեր աշխարհաբարին մեջ։ «Մասիսը» մեշտ գրական շնորհով մը փայլեցավ, ամեն ատեն գրագետներեն հարգված թերթը ըլլալով։ Ու մինչև այսօր կը մնա Թուրքիո հայոց էն գրական թերթը։

Մատթեոս Մամուրյան բազմադիմի հատկություններով հանրածանոթ է, բայց գլխավորաբար իբր հրապարակագիր և խմբագիր ճանչցված է։ Վաթսունական թվականներուն Պոլսո մամուլին մեջ Վրույր ծածկանունին ներքև սկսավ շարք մը քրոնիկներ հրատարակել, որոնք հետո ի մի հավաքվելով «Հայկական նամականին» կազմեցին։ Կ. Պոլսո ազգային օրվան խնդիրները և գործիչները այդ քրոնիկներուն նյութերը հայթայթած են։ Խնդիրները վարդապետորեն չեն ուսումնասիրված, այլ՝ թեթևին լրջությամբը. քիչ մը սկեպտիկ, քիչ մը փիլիսոփա, քիչ մը բանաստեղծ գրչով։ Ու մարդիկը կը պատկերանան արագասահ, բայց հաստատիպ գծերու ներքև։ Այդ հատորը իբր իր ժամանակին լավագույն գործերեն մեկը մնացած է և պիտի շարունակե մնալ։ Անոնց մանավանդ հաճելի պիտի ըլլա՝ որ ատենին խնդիրներուն պատմությունները կրնան գիտնալ և ծածկանուններու տակ քողարկված դեմքերը ճանչնալ։

Մամուրյան 1870 հունվարին՝ Իզմիր «Արևելյան մամուլը» հիմնեց։ Այսպես կ'ուզենայինք քաջ հայագետ, եվրոպական լեզուներու և գրականության հմուտ, գրելու ձիրքերով օժտված հայ խմբագիր մը։ Թերթը՝ իբր ամսահանդես՝ հանրային միտքը պիտի առաջնորդեր, ազդելով անոնց վրա, որ քիչ շատ զարգացում ստացած էին։ Այդքան ծանր հանդես մը ժողովրդական խավերուն համար չէր, որ հրապարակ կ'ելլեր։ Մա-

նոթ գրողներ «Արևելյան մամուլին» աշխատակցիլ սկսան։ Խմբագիրը հոս կը հրատարակեր «Սև լեռան մարդը», ազգային կյանքե վեպ մը, որ իր նորությամբը շատ հաճելի եղավ։ Մամուրյան շարունակեց նաև իր Հայկական նամականին, Պոլսեն Թղթակցության ձևով ու Շահնուր ծածկանունով։ Ասոնք ալ կայծակնացայտ քրոնիկներ էին, որ մեծ հաճույքով կը լափվեին, բայց ոճի, ձևի, գաղափարներու միօրինակությամբը ա՛լ հետզհետե ձանձրալի դարձան։ Մամուրյան թե խմբագրական հոդվածներուն և թե իր քրոնիկներուն մեջ կը քններ, կը նկարագրեր, կը դատեր գլխավորապես Պոլսո գործերն ու մարդերը, առանց ինքը Պոլիս գտնվելու, այլ՝ կողմնակի տեղեկություններով։ Ինք Պոլսեն մեկնելեն հետո հոն երևան եկած էին, ու միշտ երևան կուգային, նորանոր դեմքեր զորս կը նկարեր չտեսնելով։ Այս անպատեհությունը շատ կը տկարացներ քրոնիկներուն արժեքը։

Եվ ամսաթերթը արդեն երկար չկրցավ պահել իր գրաված դիրքը։ Երևումեն քանի մը տարի ետքը սկսավ ինալ ու դադրիլ, մինչև որ 1870—80 թվականին Պոլսեն երիտասարդներ ձեռք կարկառելով՝ այն փոքր ինչ վերականգնեցին։ Սակայն ա՛լ կաղն ի կաղը ընթացավ, չունենալով ոևէ որոշ ուղղություն մը, զրկված մնալով աշխատակիցներե։ Հանրային մտքին վրա ազդեցություն մը չուներ։ «Արևելյան մամուլը» գրեթե օրաթերթ մը եղավ, որ ամիսը անգամ մը կը հրատարակվեր։ Մամուրյան երեք տարի առաջ մեռնելով, իր որդին այժմ հորը հանդեսը լավագույն խմբագրությամբ իբր շաբաթաթերթ կը շարունակե Իզմիրի մեջ, որ հայոց անդրանիկ թերթը ունեցավ՝ «Արշալույս Արարատյանը» որուն հաջորդեցին «Արփի Արարատյան», «Ծաղիկ», «Մետեոր», ամենքն ալ ջնջված։

Այս առթիվ հիշատակենք, որ Մամուրյան ինչքան խմբագիր ու հրապարակագիր է, այնքան և ավելին ալ հեղինակ ու թարգմանիչ է։ «Հայկական նամականիեն» ու «Սև լեռան մարդեն» զատ, ունի «Անգլիական նամականին», որ հարևանցիկ իմաստասիրություն մըն է հայոց պատմության, անգլիացի պատմաբաններե ոմանց վարդապետություններուն հետևողությամբ։ Բազում թարգմանություններով շատ օգնած է աշխարհաբարին բարգավաճմանը։ Մեր նոր գրական լեզվին գլխավոր վարպետներեն մեկն է։

Գրիգոր Չիլինկիրյան, որ Իզմիրի դպրոցին գլխավոր մեկ ներկայացուցիչն է իբր խմբագիր, հեղինակ և թարգմանիչ, մեր արդի գրական շարժումին մեջ առաջնակարգ տեղ մը գրավելու իրավունք կը վայելե։ Իր գրչեն ելած բոլոր հոդվածները ֆրանսական դրոշմ կը կրեն. զանոնք լավ հասկնալու համար պետք է ֆրանսական լեզվին, գրա-

կանությանն ու պատմությանը բավական ընտելացած ըլլալ։ Իզմիր հիմնած «Ծաղիկ» հանդեսովը առաջադիմական գրագետի մը հիշատակ թողած է։ Շատ վեպեր թարգմանած է, նախապատվություն տալով այն գրքերուն, որոնք ժողովուրդը նվազ կը զբոսցնեն, բայց ավելի կը հրահանգեն։ Հյուգոյի «Թշվառներուն» հայացումը, թարգմանական ինչ թերություններ ալ որ ունենա, բայց և այնպես այն կրնանք հրաշագործություն մը նկատել։ Եվրոպական լեզուներե ի հայ փոխված գիրք մը չկա, որ այդ գաղափարական վիպասանության չափ հզորապես բարեբար ազդեցություն ունեցած ըլլա Թուրքիո հայոց մտքին ու հոգիին վրա։

Խմբագիրներն ու հրապարակագիրները այն թերթերուն, որոնք 1842-են հետո հրատարակվեցան, հոգնահույլ են։ Այստեղ բավական կը համարինք հիշատակել մասնավոր հատկություններ ունեցող քանի մը տաղանդներ։ Ամենուն պատմությունը օրագրական ընդհանուր պատմության մեջ է։ Հայ մամուլը՝ իր ամբողջության մեջ առնելով՝ ժողովուրդին առաջադիմության շատ նպաստեց, ու մասնավորապես ազգայնության ոգին պահպանելու նվիրվեցավ, Թուրքիո հայահալած քաղաքականության դեմ իր խուլ մարտնչումովը։ Այն ատենը իսկ, կամ մանավանդ այն ատենը, երբ մամուլը ազատություն կը վայելեր, հայ խմբագիրները կ՚աքսորվեին, կը բանտարկվեին, նույնիսկ Պոլիս փաշաներու ձեռքեն ծեծ կ՚ուտեին, ինչպես՝ «Հայրենիքի», «Արարատի», «Մեճմուաի» հրատարակիչները։ Հայ թերթը հաճախ դադարման կը դատապարտվեր, ու քանիներ ջնջվեցան, անհետացան պարզապես այն պատճառավ, որ Հայաստանի թշվառ վիճակին հոգածու կ՚երևնային ու ազգային իրավունքները կը պաշտպանեին։ Հայ օրագրությունը բազմաչարչար մարտիրոսութենե անմըպատմությունը ունի, արյունոտ էջերով լեցուն։ Պետք է 1896 թվականեն ասդին անցնիլ գտնելու համար Պոլիս հայ մամուլ մը, որ հանգստություն ու ապահովություն, վայելե, հրաժարվելով սակայն գաղափարական ոևէ ձգտումե։

* * *

Իսկական մատենագրությունը օրագրության պես արագորեն չհիմնըվեցավ։ «Իսկական մատենագրության» մեջ կը հասկնանք ոչ միայն վիպասանություն, թատերագրություն, բանաստեղծություն, այլ նաև պատմությունն ալ, իմաստասիրությունն ալ իրենց զանազան ճյուղերովը։ Պոլիս ժողովրդական օրագրող մը հանդիսանալու համար սկիզբները, ու ետքն ալ, բավեց ու մինչև այսօր իսկ դեռ կը բավե, փոքր ինչ երկրորդական ուսում ստացած ըլլալ, նույնիսկ նախնական կրթության

մըն ալ կ՚օգտե. ձեռք կու տա, որ գրողը վիճելու և ծուռ ու շիտակ տրամաբանելու տեսակ մը կարողություն ունենա։ Օգսեն Խռճասարյան մը, որ քանի մը թերթ հրատարակեց՝ «Օրագիր», «Նորագիր», «Նոր Դար», և՝ Կարապետ Փանոսյան, որ քառասուն տարիեն ավելի հայատառ թրքաբանությամբ օրագրեց, երկուքն ալ մեծ հրապարակագիրներ համարվեցան, հազիվ թե շատ չափավոր ուսում մը ստացած ըլլալով։ Բայց ազգային շահերը հաճախ թուրք իշխանության դեմ հզորապես պաշտպանեցին, վտանգներու և զոհողություններու հանձնարարությամբ։ Առաջ ժողովուրդը գրեթե իր ամբողջությամբը, և հիմակ ալ ստվար մեծամասնությամբ, գրական զարգացում ստացած չըլլալուն՝ ո՛չ շատ փափկամիտ է, ո՛չ ալ շատ դժվարահաճ արվեստասեր։ Մյուս կողմեն, օրվան հրատապ խնդիրները իրենք իրենց մեջ բավական շահեկանություն ունեին հանրությունը հետաքրքիր պահելու։ Հիմակ թեև մեռելատիպ հանդարտությունը ազգային կյանքը կը պատանե, բայց ժողովուրդը, որ ընթերցասեր եղած է ու նոր գիրք չի գտներ, կը կարդա ինչ որ կը գտնե, անոնք գիտական թե անգրական ոճով իրեն հրամցվին։ Բայց ինքզինքը գոնե ամբողջովին օրվան խնդիրներուն չնվիրվող գրագետը կ՚ուզե հրատարակել այնպիսի երկասիրություններ, որոնց ստեղծմանը համար ոչ միայն երկարատև աշխատության կարոտ է, այլ նաև պետք է բարձրագույն կրթությամբ նախապատրաստված միտք մըն ալ ունենա։ Պեշիկթաշլյան որպեսզի պզտիկ բանաստեղծություն մը՝ Հյուգոյին «Ուրվականները»՝ զարմանահրաշ գեղեցկությամբ հայացներ, հարկ էր, որ հայ լեզուն արդեն երկարամյա աշխատություններով խորապես և հիմնովին սորված ըլլար։

Մխիթարյանց դպրոցներուն կամ ուրիշ ուսումնարաններու մեջ, կամ թե ինքնաշխատությամբ զարգացած երիտասարդներ չէին կրնար մեկ օրեն մյուսը գրական գործեր արտադրել։ Բայց հետզհետե ունեցանք մեծ արժանիքներով օժտված թարգմանիչներ ու հեղինակներ, որոնցմե ոմանք մինչև իսկ հոյակապ կրնան համարվիլ։ Արևմտյան հայոց նոր գրականության հիմնադիրներն են՝ Պեշիկթաշլյան, Օտյան, Ռուսինյան, Դուրյան, Շիշմանյան, Թերզյան, Գարագաշյան, Նար-Պեյ, Հիսարյան, Աճեմյան, Աղաբեգյան, Ստեփան Ոսկան, Հակոբ Ոսկան, Զորայյան, Մամուրյան, Չիլինկիրյան և դեռ ուրիշներ։ Ասոնցմե ոմանց անունները հանրածանոթ են, և միասին ալ իրենց գրվածները. ուրիշներ նեղ շրջանի մը մեջ ճանչցված կը մնան։ Կան ալ, որ բազմահռչակ համբավ կը վայելեն, բայց իրենց գործերը հիմակ հանրության անծանոթ են, որովհետև անոնք օրագիրներու մեջ ցիրուցան մոլորված են, այսպես՝ Գրիգոր Օտյան։

Եթե նախորդ քսանեն երեսուն տարվան շրջանի մը գրական գործերը այսօր մեծ մասամբ անմատչելի կամ անծանոթ կը մնան, բայց անոնք օրը օրին իրենց ազդեցությունը ունեցած են պատրաստելու համար ապագա մը, որ 1880-են մինչև մեր օրերը կը հանդի։ Լեզվական ու գաղափարական շատ մը դժվարություններ հարթած վերջացուցած են, ու իրենց հաջորդներուն ժառանգություն թողած են հոգով ու տարազով ըստ բավականին եվրոպականացյալ թարմ գրականություն մը։

Ռուս և Թուրք պատերազմեն հետո թեև նոր կյանք մը կ՚այգորենք, բայց տարակույս չկա թե ո՛չ մեկ օրեն մյուսը նոր մարդերու երևումը հնարավոր էր, ո՛չ ալ հողեն նոր գրականության մը հանկարծուստ ժայթքումը։ Նախորդ սերունդեն մնացած ժառանգությունն էր, որ բարեշրջական բարգավաճմամբ պիտի ստեղծեր նորագույն գրականությունը, ձեռամբ նոր հասնող երիտասարդության։ Պատկերացնելու համար այդ նոր թվականը, որ 1880-են հետո կը բացվի, պետք է փնտրենք միջին կետ մը, որմեն երբեմն քանի մը տարի ետ ետ երթալով, երբեմն ալ քանի մը տարի առաջանալով, հետզհետե իրարու շաղկապենք անցյալն ու ներկա մը, որ մինչև մեր օրերը պիտի հասնի։ Այդ կետը «Արևելքի» հիմնադրության տարվանը մեջ կը գտնենք, 1884-ին։

Գ

«Արևելքին» հիմնադրությունը: Ծրագիրը: Խմբագրական տկարությունները: Զգտումը: Ռուսահայոց հետ հարաբերությունները

Երբ 1884 թվականը կը մտնենք, գրական նորությունը և ազգային կարևոր դեպքը՝ «Արևելք» թերթին երևումն է հունվարի 1-ին։

Կ. Պոլիս 1876-ին Հայաստանի կրթությանը համար ընկերություններ կազմող երիտասարդության պարագլուխներեն ոմանք հիմակ ալ իրենց սեփական մեծ օրաթերթի մը հրապարակմանը կը ձեռնարկեին, հանրային ընդհանուր կյանքին մասնակցելու խորհրդով։ Նոր թերթին առաջին թիվը ծրագրի նմանող հայտարարություն մը կը հրատարակե, որուն մեջ ուշագրավ է Ռուսիո հայոց մամուլին ակնարկությունը։ «Հայոց մամուլը, կ՚ըսէ «Արևելք», երկուքի կը բաժնվի. թրքահայոց մամուլ, ռուսահայոց մամուլ. բայց տարբերություն մը կա այս երկու պաշտոնակից մարմիններու միջև։ Ստեփանոս Նազարյանց գծեց ռուսահայոց մամուլին համար միանգամ ընդ միշտ մի այնպիսի ուղղություն, որուն սթափիչ ազդեցության ներքև հասարակաց գիտակցությունը զարգանա-

լով, պարբերական մամուլը դարձավ անհրաժեշտ պիտույք մը ռուսահայ ժողովրդի մտավորական պահանջներուն համար»։

Այս տողերը գրողները անշուշտ յուրովի հարցուցած ըլլալու չեն, թե պատրաստված Ստեփանոս Նազարյանց մը ունի՞ն կամ ոչ. սակայն հայտարարության կարևորությունը այն է, որ Թուրքիո հայերը քառասուն տարի՝ շարունակ ճոխ օրագրություն մը ունենալե հետո, նոր երիտասարդությունը իրեն համար հրապարակագրության մտատիպար օրինակը կ'երթա Ռուսիո հայոց դպրոցին մեջ կը փնտրե։ Այս հայտարարությունը միանգամայն նշան մըն է Ռուսիո և Թուրքիո՝ հայոց միջև մտավորական ավելի սերտ հարաբերությանց ստեղծման փափագներու։

Նորածին թերթը շատ փափկանկատ վարմունքով չի վերաբերիր Պոլսո և Իզմիրի մամուլին համար։ Հիշատակելով իր պաշտոնակիցները, կարեկցության, արհամարհանքի շեշտով մը կ'աղաղակե անոնց համար. «Այո, դեռ կապրին, այլ որքա՜ն շիջելափառ։ Եվ ինչո՞ւ։ Ահա այդ «ինչո՞ւն» է, որ ուսումնասիրել ուզեցինք։ Կարոտ չէինք դժբախտաբար երկար հետազոտություններ ընելու։ Խնդիրը պարզ էր։ Ժողովրդի մտավոր և բարոյական պահանջը շատ ավելի է, քան մամուլե ստացած գոհացումը»։

Բայց «Արևե՞լք» ինչ պիտի ընե այդ գոհացումը տալու համար։ «Արևելք» իր պարտականությանց առաջինը պիտի համարի լավ ուսումնասիրել հայ ժողովրդին ժամանակակից կյանքը, իր ամեն երևույթներուն ներքև, հետամուտ ըլլա ըստ կարելույն գոհացում տալ նորա բարոյական և մտավոր պահանջներուն։ Պիտի իրագործվի՞ն այս խորհուրդները։ Պատասխանը ապագան պիտի տա։ Բայց մինչ այս մինչ այն, նորեկ թերթը խեղճուկ զգեստավորմամբ կը ներկայանա հասարակության։ «Արևելքի» առաջին տարվան հավաքածոն հիմակ աչքե անցնող մը կ'ապշի տեսնելով նյութերուն խառնակ դասավորությունը, հոդվածներուն անխնամ լեզուն ու կիսատ ոճով խմբագրությունը և տառասխալներու շատությունը։ Բայց ուշադիր դիտող խորհող մը իր ընթերցումը երբ առաջ կը տանի, կը զգա թե նորության մը հանդեպ կը գտնվի։ Գրականությունը որոշ նպատակի մը կը ծառայե։ Ապագայի մը պատրաստությունները կը տեսնվին։ Մասնավորապես ջանք մը կա Ռուսիո հայերը սիրել և հարգել տալ, ու անոնց սրտին զուգատրոփ բաբախել տալ Թուրքիո հայոց սիրտը։ Քրոնիկին անմեղունակ երևույթովը կը պատմվին դեպքեր, որոնք կրնան մտքերու զարկ տալ և զանոնք արթընցնել։ Ահա կովկասյան կյանքեն լուր մը, տեղեկություն մը, որ հասկցողին համար ազգային-քաղաքական դավանանք մըն ալ է։

«Եվ կովկասցիներն ալ, կ'ըսե «Արևելք», ունին առաքինություն-

ներ, որոնք մեզի համար անհավատալի են։ Օր մը, երբ մեզի կը նկարագրեին Կովկասի նոր երիտասարդության սիրտն ու հոգին, մենք թերահավատ էինք, բայց այսօր աչքիս առջև ունիմ նամակ մը Թիֆլիսեն, որ շատ տարակույսներ կը փարատե։ Ի՜նչ նոր ոգի կը տիրե։ Պատանի մըն է, որ կաներևութանա. ոչինչ տարօրինակ. բայց աներևութանալու պատճառները գուցե զարմանալի թվին։ Պատանին՝ Ալեքսանդր Գրիգորյան Գոլոշյանց՝ ուսանող է Լազարյան ճեմարանին և մեծապես առաջադիմած է. կը մեկնի հոնկե, կը մտնե Թիֆլիս արքունի բարձրագույն վարժարանը, ուր լավ կը գնահատեն զինքը։ Ոտանավորներ կը գրե և բառարան կը շինե. հոգին կը սլացնե, հիշողությունը կը սրե և իր միակ տենչն է, իր երազն է երթալ թափառիլ նախնի ավերակներուն մեջ։ Ընկերները կը ծափահարեն և արդեն կ'ողջունեն ապագա Աբովյան մը։ Խեղճ հայրը այժմ կը գրե. «պարծենում էր թե՝ պետք է գնա ավերակները հետազոտելու և իրա բանաստեղծությունները ճոխացնելու։ Ես նորա բոլոր խոսակցությունները երախայական ցնորք էի համարում, և հորդորում էի նորան ավարտել ուսման ընթացքը, որի հետ սաստիկ սեր ուներ։ Բայց տարաբախտաբար իմ բոլոր աշխատությունները իզուր անցան»։ Իզուր այդ խրատները և ահա օր մը կաներևութանա մեր Ալեքսանդրը։ Գողթնացիի մը սիրահար, ինքն ալ կ'ըսե՝ «արձակեցեք, որ տեսանեմ զորչափություն ավերածո տան իմո հայրենի». ու կ'երթա այդ ավերակներուն մեջ, նախնյաց հիշատակներով պարարել իր սիրտն ու միտքը։ «Նա առանց ինձ իմաց տալու, կը գրե հայրը, անհայտացավ և յուր կիսահիվանդ և կիսամեռ մայրը թողեց թշվառ դրության մեջ»։ Այսպես, ո՛չ հայրական գորով, ո՛չ մայրենի խանդակաթ սեր ու արցունքներ չեն սանձեր անզուսպ ոգին։ Հայրը այսօր ամեն ազգասերներու բարեխոսությանը կը հանձնե յուր անառակ որդին։ Կովկաս միայն կ'ընծայե այսպիսի օրինակներ։ Երանի՜ անոնց, որոնք դեռ պատանի և արդեն իրականություն կ'ընեն երկրի երազները։ Շատերն ալ երազեցին այդ երազները, երբ իտալական դրոշներու շուքին ներքև Մանինի դագաղին կ'ընկերանային, և այսօր՝ իրենց սրտին գերեզմանացյալ փլատակներու սուգը միայն կը պահեն»։

«Արևելքի» առաջին թիվերուն մեջ Րաֆֆիին «Խաչագողը» իբր թերթոն երևնալ սկսավ։ Կառավարական տրամադրությունը զննելու նախափորձ մըն էր. «Խենթին» հետ կապված անունի մը հանապազօրյա հիշատակությունը ուշադրություն պիտի գրավե՞ր, թե ոչ։ Փորձը առանց ո՛և է դիտողության անցնելով, խմբագրությունն ալ համարձակեցավ իր ընթերցողներուն ծանոթացնել նույն հեղինակին ուրիշ գործը, որ ազդեցիկ տպավորություն առաջ բերելու կոչված էր։ «Խամսայի մելիքու-

թյունները» թեթև իմն փոփոխությամբ եկան հանրային միտքը գրավել և հուզել։ Դեռ մեզի շատ մոտ ժամանակի մը մեջ գոյություն ունեցող այդ տեսակ մը հայկական անկախության պատմությունը իբր դաստիարակություն կը հաղորդվեր այն ժողովրդին, որուն դպրոցներուն մեջ ազգային հին անցյալի մը ուսուցումն իսկ գրեթե արգիլված կը մնար։

Միևնույն ժամանակ, Պոլիս տաքությամբ կը հուզեին Ռուսիո Հայոց օրվան խնդիրները։ Մասնավորապես կաթողիկոսական նոր ընտրության մը այժմեությունը հանրային հետաքրքրությունը կը հրահրեր։ Բայց հայտնի կ՚երևնար, թե նոր օրագրությունը իրեն կոչումը էջմիածնի շուրջը դեգերման մեջ չէր փնտրեր միայն։ Ամեն ատեն հայը իր կաթողիկոսական խնդիրներովը շահագրգռված էր. նոր օրագրությունը նորություն մը պիտի չստեղծեր, ունէ հարց այս կամ այն կերպ ուսումնասիրությամբ։ Այլ էր երիտասարդ գրագետներուն մտահոգությունը։ Հայոց արդի կյանքին փոփոխությանց ուշադիր հետամուտը կ՚անդրադառնար, որ Ռուսիո և Թուրքիո հայոց զարգացման պայմանները ու հանրային կյանքի կազմակերպությունները հետզհետե տարբերելով, իրենք հայերն ալ կամաց կամաց իրարու կրնային օտարանալ լեզվով, գաղափարով, զգացումով. և օր մը զիրար բոլորովին մոռնալ։ Հայության երկու մեծ զանգվածները՝ ռուսահպատակն ու թրքահպատակը, անշուշտ էջմիածինով իրարու կապված կը մնային, բայց պաշտոնապես միայն, առանց հոգեկան ու մտական հաղորդակցությանց։ Օրին մեկը գրականությունը պիտի ջանար բարեհաջող հանգամանքներեն օգտվելով, Արևելյան և Արևմտյան հայոց մտքերը և սրտերը իրարու կապել միացնել։

Կ. Պոլիս 1876-ին կազմված Արարատյան ընկերությունը Ռուսիո և Թուրքիո հայոց ուշադրությունը դեպի Հայաստան սևեռեց։ Պոլսեցի մը՝ Մկրտիչ Փորթուգալյան՝ Հայաստան կ՚երթար իբր Պոլսո կրթական և գաղափարական պատգամավորը։ Թիֆլիսցի մը՝ Գրիգոր Արծրունի՝ կովկասյան ձեռքը անոր կ՚երկնցներ։ Վասպուրականը հայ հայրենիքը անձնավորեց. Թիֆլիսն ու Պոլիսը անոր շուրջը բոլորեցան, և իրենց հետ, ամբողջ Թուրքիո և Ռուսիո հայերը։ Հայաստանի մտավորական վերածննդյան գաղափարն էր, որ Արևելյան և Արևմտյան հայերը կը միացներ։ Միևնույն ժամանակ կը ծագեր ռուս և թուրք պատերազմը։ Ռուսական զենքով ձեռք բերված հաղթանակ մը բնականաբար հզորապես պիտի ազդեր Թուրքիո հայոց վրա և զանոնք ուժգնորեն դեպի ռուսահայերը պիտի մղեր։ Պատերազմին հաջորդեց Հայաստանի մեծ սովը։ Ռուսիո հայերը փութացին իրենց թրքահպատակ եղբայրները անոթութենե փրկել։ Սրտակցության թվականը ողջունվեցավ։ Այդ քանի մը տար-

վան ժամանակամիջոցին, Ռուսիո հայերը Թուրքիո հայոց ամենամեծ ծառայություններ կը մատուցանեին, առանց փոխադարձ ակնկալության մը, վասնզի անոնցմե ոևէ կերպով օգտվելու հարկին մեջ չէին բարեբախտաբար։ Այս անշահախնդիր բարեացակամությունը մեծ ուժ մըն էր համերաշխության գաղափարին համար։

Հարաբերություններու սկզբնավորության բարեհաջող տարիները, Թուրքիո հայերը ոևէ որոշ գաղափար մը չունեին Արևելյան հայոց մտավորականության վրա։ Դեռ 1876-ին՝ Արարատյան հիմնարկության թվականը՝ «Մշակը» անծանոթ էր։ Նույնիսկ այն Արարատյանները, որոնք քիչ հետո այնքան սերտ հարաբերություններ պիտի ունենային Կովկասու առաջադիմական թերթին հետ, անոր երևումեն չորս հինգ տարի ետքը անունն իսկ լսած չէին։ Պոլսեցիներեն ոմանք գիտեին թե «Մեղու Հայաստանի» մը կա, այսքան։ «Մայր Արաքսը» ամենուն բերանն էր, առանց հեղինակին անվանը։ Միակ հանրահռչակ գրագետը Նալբանդյանցն էր, իր «Ազատն աստվածովը» ու զինքը կենսագրող վիպագրույց հիշատակարաններովը։ «Մշակեն» հետո եկավ «Փորձը», որ կովկասյան պարբերականի մը՝ Պոլսո և Իզմիրի նմանօրինակ հրատարակությանց վրա ունեցած անբաղդատելի գերազանցությամբը զարմացում պատճառեց. ու զարմացումեն՝ հիացում կը ծներ Ռուսիո հայոց համար։

Հետզհետե ծանոթացան Պռոշյանցին, Աղայանցին վեպերը։ Իսկ Րաֆֆին նորերևույթ մատենագիրը եղավ։ Սակայն «Կայծերը», «Խենթը», «Դավիթ Բեկը» խանդավառությամբ լափողները Հայաստանի հայերը եղան ու Պոլիս գտնվող հայաստանցիները։ Եվրոպայի բարձրագույն վիպասանության ընտելացած պոլսեցի սակավաթիվ երիտասարդները, և՛ ասոնց մեջ անոնք ալ նոր գրականություն ու նոր օրագրություն հիմնեցին, Րաֆֆիի մեկ կամ երկու վեպը ամբողջապես հազիվ թե կարդացած են, ընդհանրապես «Շեյխ Ջելալետտինը», որ փոքրիկ է. իսկ ամբողջությունը գիտցող մը եզական բացառություն մը պիտի համարվի։ Րաֆֆի գաղափարական հզոր ազդեցություն մը ունեցավ, ինչպես գործնականապես ալ տեսնվեցավ. բայց մատենագրության վրա չներգործեց[1]։

[1] Փոխադարձ մտերմության տաք միջոցին, երիտասարդ սպա մը, Գրիգոր Նիկողոսյան, Պետերբուրգեն Պոլիս հասավ 1881 հունվարի 1-ին «Մշակին» աշխատակցի տիտղոսով։ Իր անունը «Մշակին» Պոլսո ընթերցողներուն ծանոթ էր, 1877—78-ին Էրզրումի պատերազմի դաշտեն թղթակցություններովը։ Հայ զորավարներու պատմությունները հրատարակեց. Լազարեֆը, Արղությանցը, Մատաթյանցը և ուրիշներ ծանոթացուց։ Այդ աճեղադեմ տիպարները, գրված հեղինակին անտաշ, վայրագ ու զորեղ ոճովը, որ հակադրություն մըն էր Պոլսո նրբացած հայ-ֆրանսաբանության, կը գրավեին մտքերը։

Երբ 1876-էն սկսյալ Ռուսիո Հայերը հետզհետե կը գրավեին Թուրքիո հայոց սիրտն ու միտքը, Թիֆլիսի մամուլն ալ հոգածու ուշադրությամբ կը հետևեր Պոլիս, Հայաստան, Կիլիկիա պատահած ամեն դեպքերու, խոշոր ըլլան անոնք թե մանր, սակայն զմեր գրականությունը իրենց շատ հետաքրքրական չէր երևնար։ Այդ մամուլին Պոլսեն ստացած և հրատարակած աննշանաքանակ թղթակցությունները, հոդվածները հիմակ աչքե անցընող մը պիտի տեսնե, թե հոն գրական կյանքին շատ քիչ տեղ տրվեր է։ Գաղափարական գրականությունը անցյալը կը ցոլացնե ու հեռավոր ապագան պատրաստելու կը նկրտի. իր զարգացմանը համար մտավորական հանդարտության կարոտ է։ Մենք 1884-են առջն էր, որ գաղափարական նոր գրականություն մը սկսանք պատրաստել։ Ու այդ թվականին ալ Ներսես Պատրիարքը կը վախճաներ, և անմիջական վերածնունդի լույսը շատ տկարացած էր. ուստի երիտասարդության մեկ մասն ալ իր գործունեությունը գրականության նվիրեց, որպեսզի մտքերը ուղղության մեջ դնե ապագային համար։ Բայց 1884-են առջն ալ դիրքը հազվադեպ երևույթ մը եղած է. մտավորական կյանքը մամուլին մեջ կը խտանար առաջվնե ավելի։ Դյուրին չէր անոր վրա խոսիլ, մանավանդ որ չափազանցորեն անխոհեմություն պիտի համարվեր գրականության հոգին ու ձգտումը ամենուն հստակափայլ պարզել։

Այսպես ահա, ռուսահպատակ և թրքահպատակ հայերը, որ տակավին ութ տարի առաջ իրարու գրեթե անծանոթ կը մնային, հիմակ գաղափարական կուսակցության մը կապովը միացած են։ Այդ կապը օրե օր կ՚ամրապնդի Պոլսո մեջ իսկ, թուրք կառավարության աչքին առջև իսկ, և անոր խիստ հսկողությանը հակառակ։

Դ

«Արևելքին» առաջին շրջանը: Հին սերունդեն մնացողները: Երկրորդ սերունդին ներկայացուցիչները: «Մասիսի» և «Արևելքի» միացումը:

«Արևելքի» առաջին շրջանին ուղղությունը իր մեծ գիծերուն մեջ համառոտ մը պարզելու համար, խոսքը կը փոխանցենք Գրիգոր Զոհրապի։ Հանրածանոթ փաստաբան գրագետը 1892 օգոստոսին, «Մասիս» հանդեսին մեջ, որուն խմբագիրն էր «Արևելքին» պատմությունը կ՚ամփոփեր հետևյալ գնահատումով, որ ճշմարտություն մըն է այդ թերթին սկզբնավորության առաջին տարիներուն համար։

«Պոլսո նոր լրագրությունը, կ'ըսե Զոհրապ, «Արևելքով» կը սկսի. ավելի շատ իմաստասիրություն հանրային խնդիրներու, ավելի մատ տեղեկություն եվրոպական ազգերու վրա, անհատական գծուծ խնդիրներն ու վեճերը տեղի տալով ընդհանուր տեսություններու. հայ լեզուն այս կամ այն խմբագրապետի գծած անձուկ սահմանները կոխոտելով, վերստացած իր ժողովրդյան բարբառի անկախությունը, խմբագրությունը՝ դադրելով արհեստ մը լինելե, արվեստ դառնալու համար. գրական նոր սեռեր, գրական նոր մարդերու ձեռքով, ամենքը միևնույն անփոփոխ նպատակին կապված՝ հասարակության պետքերուն ըմբռնումը: Ահավասիկ նոր լրագրությունը»:

Այս ընդհանուր տեսության մեջ մենք մասնավոր ուշադրություն կը դարձնենք գրականությունը շոշափող ակնարկության միայն, որուն նկատմամբ վերապահում ունինք: Նոր լրագրությունը հանրության աչքերուն մեկեն ի մեկ նոր գրականություն մը չցուցադրեց, և ոչ ալ պատրաստված նոր գրագետներու ստվար կամ նոսր խումբով մը ներկայացավ ժողովրդին առջև: Նորությունը ժամանակին գործը պիտի ըլլար, թեև կարճ ժամանակի մը: Գրական այն բոլոր անունները, որոնք մեկ երկու տարվան մեջ հետզհետե հայտնվելով, Արևմտյան հայոց ժամանակակից մատենագրությունը պիտի ներկայացնեն ու մտքերու վրա պիտի գերիշխեն, այդ անունները դեռ անծանոթ են: Ոմանք Պոլսո թաղային վարժարաններե տակավին նոր շրջանավարտ եղած են. իրենց մտքերուն մեջ տեսակ մը գաղափարներ աղոտափայլ ուրվագծիլ կը սկսին. սրտերնին կը խռովի զգացումներե, որոնց որոշ գիտակցությունը չունին. օրվան գրական միջավայրը զիրենք կ'ահաբեկե և կը խրտչեցնե իր գերմարդկային ձգտումներովը ընդ հովանավորությամբ ամեն անուններու: Ո՞ւր երթան այդ պատանիները, որոնք սրբազան կոչումը կը զգան իրենց անձին մեջ. ի՞նչպես քայլափոխեն: Ուրիշներ, թեև քիչ մը ավելի տարիքոտ, բայց իրենք ևս շվարյալներ կը թվին: Խանդավառ պատանիներ էին 1878—79-ին, ու հիմակ արդեն ինքնամփոփումի պետքը կը զգան: Իրենց հավատքին մեջ տկարացածներ են: Ո՞ւր երթան, ի՞նչ ընեն ասոնք ալ: Ու ամենքը սակայն իրարու պիտի հանդիպին «Արևելքի» խմբագրատան մեջ, իրարու պիտի կապվին գրական եղբայրակցության սուրբ սիրով մը, որուն նմանը հետո այլևս պիտի չըլլա մեր գրականության մեջ: Պիտի առաջանան ամբակուռ վաշտ կազմած, ըմբոստանալով հիներուն դեմ, և հիմը դնելով ընկերաբան.—գեղարվեստ. գրականության մը: Սպասելով այդ օրվան, որ շատ պիտի չուշանա, առայժմ մենք հիշեցնենք այն ժառանգությունը, որ 1850-ի շարժումեն 1880—84 թվականին մնացած էր:

***

Մնացած էին ոմանք այն գեղեցկասեր գրագետներեն, որոնք 1850-ին և անկե նոքը երևցեր էին. ոմանք ալ դեռ ողջ էին, առանց գրականությամբ պարապելու։ Նախորդ երկու սերունդներու մեծ տաղանդներեն շատերը սակայն դեռ երևան կուգային։ Ասոնց մեջ առաջին տեղը կը գրավեր Գրիգոր Օտյան, ոչ թե հորդառատությամբը՝ այլ մատենագրական պերճափայլ հատկություններովը։ Քաղաքական հոյակապ անձնավորությունը, որ 1876-ի օսմանյան հեղափոխությամբը Թուրքիո կայսրության մեջ ամենազդեցիկ դեր մը ստանձնած էր, որմեն իր ազգն ալ սքանչելապես պիտի օգտվեր, այդ անձնավորությունը 1881-են ետքը, խորտակված, ջախջախված տարագրյալ մըն էր Փարիզ, ուրկե՝ «Վահրամ» ծածկանունով՝ «Մասիսին» կը ղրկեր հոդվածներ, որոնք 1882—83-ի մեր գրականության է՛ն պերճ էջերը կը մնան։ Բայց Օտյանին գաղափարները, գոնե իրենց ամբողջությամբը, պիտի չկրնային հրապուրել նոր հասնող երիտասարդությունը, որուն մտքին ու սրտին վրա, թաբեքախտաբար, պիտի չկրնային հզորապես ազդել։ «Մեծ վտարանդին» իր հոգեկան վշտերուն ու մարմնական տառապանքներուն մեջ մխիթարանքի պետք ուներ. հանդարտության ըղձացող մը, անուշ լեզվի կարոտը քաշող մը։ Անիկա ա՛լ մեղմափայլ վերջալույսը սիրող միսթիքն էր, ու երիտասարդությունը միջօրեին կիզիչ արեգակովն է որ կը տաքնա, կը վառի, կը բեղմնավորի ու կը բեղմնավորե։ Դառնացած ծերը Հալևիի «Աբբա Կոնստանդեն» խնկաբույր վեպը կը սիրե և զայն իր քրոջը թարգմանել կու տա, հրաշալի հայաբանությամբ։ Ալպեր Տելբիի մը «Մարքիզին» վրա կը սքանչանա, և իր խնդրանքովը «Մասիս» խմբագիր Կարապետ Յություճյան զայն կը հայացնե։ Զոլային և անոր դպրոցին ամենաչերմ թշնամին է։

Մամուրյան շատցուցած է իր թարգմանությունները, ու իբրև հրապարակագիր կը շարունակե գրել, սակայն առանց ո՛և է հրապուրիչ և ուշագրավ նորության։ Գրիգոր Չիլինկիրյան միշտ կը մնա ֆրանսաբան հայերեն գրող մը։ Նամակի ձևով կը հրատարակե 1882—83-ին Կ. Պոլիս ըրած ուղևորությունը։ Ոճը ծայրահեղորեն սեղմված է. գրական ինչ ինչ հաճելի գյուտերու խառնված են՝ «և սակայն կը շարժի»-ն, «ամպոց շփումեն լույս կը ծագի»-ն և ուրիշ հասարակ տեղիք, որոնք մեզ հեգնորեն կը ժպտեցնեն։ Պոլսո հայկական կյանքը հարևանցիկ ակնարկ մը միայն կը գրավե։ Մասնավորապես անուշադիր անցած են քանի մը բյուր պանդուխտները։ «Հոթենթա նստած, այդ հատորը գրել կարելի էր», կը դիտվի։

Բժիշկ Հովսեփ Շիշմանյան իբր հրապարակագիր և վիպասան երևան կուգա, Ծերենց ծածկանունով։ Իր հոդվածները ախորժանքով կը կարդացվին. պատմական հմտությամբ լեցուն են։ Իր վիպասանությունները՝ մեր անցյալի կյանքեն առնված՝ դյուրընթեռնելի են։ «Թորոս Լևոնին» Պոլիս կը հրատարակվի, բայց երկրորդ տպագրությունը այլևս չի թույլատրվիր, ու Ծերենցի բոլոր գործերը Թիֆլիսեն հրապարակ կ՚ելլեն, որով անոնց վրա Պոլիս քիչ կը խոսվի։

Մատաթյա Գարագաշյան, նախկին վիեննացի Մխիթարյան մը, երկասիրեց «Քննական Հայոց Պատմություն» մը, շատ հմտությամբ գրված։ Առաջին հատորը Պոլիս տպվեցավ, իսկ երկրորդը Թիֆլիս։ Քիչ կարդացված է իր հայեվարին համար, որ գրաբարի և աշխարհաբարի այլանդակ խառնուրդ մըն է, ընթերցման համար անտանելի։

Հայտնվեցան կին գրողներ ալ։ Տիկին Թագուհի Մելիք Ազարյանց (օրիորդ Շիշմանյան) իր հոդվածներեն զատ, գրականության մասնակցեցավ «Գարնան մի ասուպ» վիպակով մը, որ փափուկ զգացումներով գրված, բարոյական գաղափարներու կը ծառայե։

Իբր վիպասանուհի մը ճանչցվեցավ տիկին Սրբուհի Տյուսաբ։ Իր գործերը՝ «Մայտա», «Արաքսիա», «Սիրանույշ» ավելի բարոյապես քարոզներ են քան թե վեպեր։ Անոնց շատ մը էջերը պիտի կրնային իբր առաջնորդող հոդվածներ ընդունելություն գտնել, բայց անհնարին էր, որ իբր վիպասանություն հաճելի դառնային։ Վեպերուն անձնավորությունները ճառախոսներ են, ու ոմանք՝ գերաբուն արարածներ։ Իրար սիրող երիտասարդ մը ու երիտասարդուհի մը, երբ սենեկի մը մեջ միս մինակ են, սիրահարը իր խոսքը սիրուհիին կ՚ուղղե, զայն «ո՜, կույս» անվանելով, ինչպես Գաբրիել հրեշտակը իր խոսքը կ՚ուղերձեր Մարիամին։ «Մայտան» քիչ շատ ընթերցող ունեցավ, իբր երախայրիք մը, բայց մյուս հատորները աննշմարելի անցան։

Ուրիշ գրողներու ընդհանուր խումբին մեջեն երեք անուն մասնավոր հիշատակության արժանի են, վասնզի 1870-ի գրական սերունդը կը ներկայացնեն ու շարունակողները եղան՝ թեև ոչ մեծ հաջողությամբ՝ հայ գրականությունը մտքով ու ձևով եվրոպականացնել փափագողներուն։ Ու ատոնցմե երկուքը դեռ մինչև հիմակ Պոլսո օրագրության մեջ կ՚երևին։ Այդ երեք գրողներն են՝ Մինաս Չերազ, Ռեթեոս Պերպերյան, Եղիա Տեմիրճիպաշյան։

* * *

Մինաս Չերազ, որ 1890-են ի վեր ֆրանսերեն թերթ մը կը հրատարակե, արդեն 1879-են հետո հայ գրականության համար կամաց կամաց կ'աներևութանար։ Բեռլինի վեհաժողովեն հետո հրատարակեց քաղաքական երկու տետրակ,— և ասոնց հետ՝ օրագիրներու մեջ քանի մը հոդված, Եվրոպայեն «Արաքսի» ղրկված մեկ երկու գրություն, կը ներկայացնեն 1879-են ի վեր Չերազին գրական գործունեության հաշվեկշիռը։ Կրնանք ըսել թե, շատ հավանորեն, Մինաս Չերազ մեր գրական շարժումին վարիչներեն մեկը պիտի ըլլար, առանց Բեռլինի ուղևորությանը, որուն հետևանքովը քաղաքական գործերու խառնվեցավ և չկրցավ շարունակել գրականության համար աշխատությունները։

«Երկրագունդ» հանդեսը, որ Շահնազարյան Կարապետ վարդապետ վաթսունական թվականներուն Մանչեսթր հիմնած էր, 1869—70 թվականին շարունակվեցավ Պոլսո Նուպար-Շահնազարյան վարժարանին աշակերտներուն խմբագրությամբը։ Մինաս Չերազ, այդ դպրոցը ուսանող, իր առաջին հոդվածները տպագրեց այս հանդեսին մեջ։ Անոնք ետքեն «Գրական փորձեր» անունով հատորը եղան։ Ասկե զատ հրատարակած է «Ազգային դաստիարակություն», «Գրիչ և սուր», «Դամբանականներ»։ Այս գործերը իրենք իրենց մեջ նշանավոր հատկություններ չունին, բայց ենթադրել կուտան թե հեղինակը աշխատությամբ պիտի կրնար առաջնակարգ հայ գրագետ մը ըլլալ։ Բավական բան գիտե. իր նյութերուն տերն է, մասնավորապես լեզվականին։ Տարտղնած, թույլ ու արձակ ոճով չի գրեր, այլ՝ զուսպ և կտրուկ։ Պարբերություն մը շինելու ընդունակ է, ինչ որ կարծվածին չափ դյուրին արվեստ մը չէ։ Կորով ունեցող կ'երևի։ Դյուրազգաց, գորովալիր, փափկամիտ գրագետը պիտի ըլլա։ Դեռ պատանի և արդեն իր «Ես»-ը ծայրահեղորեն պաշտող։ Մինչև 1879 Մինաս Չերազ մեծ գրականության համար կրնա սկսնակ մը համարվիլ. ցույց տված հատկությունները ապագային համար գրավական են. բայց երբ Բեռլինեն կը վերադառնա, ա՛լ այնուհետև ինչ որ կը հրատարակե, և հատկապես իր ուղևորական նկարագրությունները «Արևելքի» մեջ 1885-ին, ամենքն ալ տկար են։ Ո՛չ գաղափար կը տեսնըվի անոնց մեջ, ոչ ալ գրական տաղանդ մը կը հայտնվի։ Իրավ է, թե քանի մը գեղեցիկ հատվածներ «Արևելքի» ներքին գրաքննության կողմեն ջնջվեցան, վասնզի կառավարության ուշադրությունը արթնցնելու կասկածը կուտային. բայց հրատարակվածներն ալ գրական համբավի մը արժանավոր չեն։ Ալ այնուհետև Մինաս Չերազ ատեն մը Կեդրոնական վարժարանին մեջ կրթական պաշտոնյա, ետքեն ալ ֆրանսերեն

թերթի մը խմբագիր, հայ մատենագրության համար հիշատակ մը միայն կը մնա, որ հետզհետե պիտի աղոտանա և պիտի մարի, եթե մատենագրական կարևոր աշխատասիրություն մը զինքը չվերակենդանացնե։

Ռեթեոս Պերպերյան խասգեղ Թաղին վարժարանին աշակերտներեն է և մոտավորապես երսունհինգ տարի ի վեր ծանոթ է իբր ուսուցիչ և գրող մարդ։ Արձակ և ոտանավոր բազմաթիվ գրածներ ունի՝ հեղինակություն և թարգմանություն, ու կը շարունակե գրել։ Իր արժանիքներուն առաջինը ատենաբանելու ձիրքն է։ Հորդահոս կը խոսի, ընդհանրապես դատարկաբան մը չէ, բայց երկարաճառ է-ու կրկնությանները չի խորշիր։ Ծանր լրջություն մը կը հատկանշե իր ատենաբանությունները, որոնց մեջ սակայն հազվադեպ է նորության մը հանդիպիլ։ Գրավոր գործերն ալ ճառախոսությանցը հանգունատիպ են։ Գլխավոր հեղինակությունն է 1883—84-ին հրատարակած կարգ մը քրոնիկները, որոնք իբր հատոր ալ երևցան «Մարդիկ և իրք» վերնագրով։ Օրը օրին ապրըված կյանքի այդ պատկերներն ալ տարապայման լրջությամբ ծանրաբեռն են։ Անոնք ալ ճառախոսություններ են կամ առաջնորդող հոդվածներ, և հաճախ՝ հավիտենական բարոյականի մը դասախոսությունները, որոնք երբ փրփրերախ զայրույթի մը բորբոքմամբը հրապարակը կը նետվին, ժպտիլ կուտան, վասնզի բռնազբոսիկ բան մը կը մատնեն։

Պերպերյան քանի մը օտար լեզվի հմուտ է, իսկ հայերենի՝ քաջատեղյակ. գրաբար հրատարակություններ ալ ունի։ Իր սիրած լեզուն այն գրաբարախառն աշխարհաբարը եղավ, որ խժդժալուր կը հնչե ու անհասկնալի է, բայց երեսուն տարիներու համառ դիմադրումե հետո, վերջապես հպատակեցավ ժամանակակից հայեվարին։ Միտք մը պետք է, որ արտակարգ նախապաշարմամբ ճնշված ըլլա, որպեսզի ավելի քան քառորդ դար անկարող գտնվի ըմբռնել լեզվական բնաշրջումի անդիմադրելի օրենքները, որոնց կը հպատակին ժամանակակից գրագետները կես դարե ի վեր։ «Առաջին տերևքին» հեղինակը, «Հերման և Տորոթեին» թարգմանիչը, հակառակ իր լեզվագիտական տաղանդին, չկրցավ մեր աշխարհաբարին զարգացմանը սատարել, վասնզի անբնական, ուստի և անմատչելի լեզվով մը գրեց։ Ու պետք մը չենք տեսներ երկարորեն փաստաբանելու, թե անհնարին է ժողովուրդի մը մտավորական զարգացումին նպաստել, անոր գաղափարներուն վրա պահպանողական կամ առաջադիմական ազդեցությամբ ներգործել, երբ այդ ժողովուրդին կը խոսվի չհասկցվելիք բարբառով մը։

Եղիա Տեմիրճիպաշյան, քսկականեն զատ ուրիշ շատ մը անուններով ալ ճանչված է, որոնց մեջ էն ծանոթը՝ «Գրասեր Ատոմը»։ Չերազի ու Պերպերյանի պես ինք ալ խասգեղ Թաղեն է և աշակերտած է

Նուպար-Շահնազարյան վարժարանին։ Երեսունհինգ տարին ի վեր անգադրում շարունակությամբ կը գրե։ Հրատարակած էջերը բյուրերով կը համրվին։ Եթե անոնց մեջեն ընտրանոք փոքր հավաքածու մը ընել կարելի ըլլար, այդ հատորիկը պիտի կրնար իբր մեր ժամանակակից մատենագրության լավագույն գործերեն մեկը մնալ և միշտ կարդացվիլ։

Շատ դժվարին է այս հեղինակը դատել։ Իրմեն էջ մը ընթերցողին համակրանք կը ներշնչե, և ուրիշ էջ մը հակակրանք կ'ազդե։ Ու նույնիսկ միևնույն հոդվածին շարունակության մեջ շուարված կը մնաս որոշելու համար, որ դիմախուկի՞ մը թե առողջ մտքի մը հանդեպ կը գտնըվիս։ Հարյուրներով օրինակներ այս հավաստումս կրնան ապացուցանել անոնցմե հատ մը միայն պիտի հիշատակեմ, գաղափար մը տալու համար այս հանրածանոթ գրագետին մտավորական կազմվածքին վրա։

Պոլիս 1887—88 թվականին օրագրության մեջ վիճաբանություն բացվեցավ մեր տառերուն պոլսական ու արարատյան հնչումներու տարբերության մասին։ Այս առթիվ Տեմիրճիպաշյան «Արևելքի» խմբագրության կը տանի լրջորեն ուսումնասիրված հոդված մը, որ իբր զուտ մասնագիտական խնդիր մը, տպարանին կը հանձնվի առանց ներքին գրաքննության կողմեն նախապես ամբողջակի ընթերցման։ Թերթը մամուլին տակ դրվելու միջոցին է, որ խմբագրությունը պատրաստված էջերը կարդալու ատեն կը տեսնե, թե հոդվածագիրը բ, պ, գ, կ, դ, տ տառերուն արտասանական խնդիրները քննելե հետո, անմիջապես հառաչաձայն ոգում մը կ'ուղերձե առ Նիրվանան հնդկային, անոր ծոցը անեացյալ հանգչելու՝ պաղատագին աղերսանքներով։ Հոդվածագիրը վերջին տողերուն ջնջումը չի թույլատրեր, իսկ ամբողջին ալ հետաձգումը անհնարին ըլլալով, գրությունը անփոփոխ հրապարակ կ'ելլե։

Տեմիրճիպաշյան միշտ փոփոխական մը եղած է, իր մեկ օրը մյուսին չէ նմանած։ Որոշ գաղափարներու մարդը չէ, ոևէ հաստատ կամ անհաստատ համոզում չունի, իմաստասիրական դպրոցի մը չ'աշակերտիր։ Անշուշտ կընդունինք, թե խորհող միտք մը միշտ միևնույն համոզումներով կաշկանդված մնալու պարտավոր չէ։ Շարունակ սորվելու և մտածելու աշխատության պետք պիտի չմնար, առանց ինքզինքը սրբագրելու ցանկության։ Տարրական ճշմարտություն մըն է, թե «անո՛նք չեն փոխվիր, որ չեն մտածեր», բայց գրագետ մը երբ երկուշաբթի առտու իբր հավատացյալ մը կը ներկայա ժողովրդին ու երեքշաբթի՝ անհավատ մը, երբ չորեքշաբթի հոգեպաշտություն կը քարոզե և ուրբաթ՝ նյութապաշտություն, և շաբաթ օր՝ հոդվածի մը սկիզբը ինքզինքը Օգյուստ Քոնթի, Սբենսըրի և Լիթրեի աշակերտ դավանելե հետո, հոդվածին կիսուն անհա խաչին կը փարի և իր «արյունոտ սիրտը» Քրիստոսի ոտքե-

րուն տակը կը դնե, հաջորդ շաբթուն Քրիստոսի դեմ մարտնչելու պայմանավ, այն ատեն կը հասկնանք, թե շատ խորհելով փոփոխություն կրող լուրջ մտքի մը հետ չէ, որ գործ ունինք։

Բայց Տեմիրճիպաշյան կը նմանի Վենետկյան այն նեղլիկ ջրանցքներուն, որոնք մեկ արևածագեն մինչև մյուսը այլագույն կ՚երփերանգին մերթ զվարթատես, մերթ մելամաղձիկ, մերթ պայծառափայլ, մերթ նսեմաստվեր՝ ըստ օրվան պահուն, և ա՛լ ինչպես որ իրարու քով վազեն, իրար ետ մղեն, իրար համբուրեն, իրար բզկտեն, իրարու աղապատին ու իրարմե փախչին ճառագայթներն արևուն, բազմերփին գույները վարագույրներու՝ կարմիր, շափյուղյա, կանաչ, դեղին, կապույտ, ու՝ ցոլացումներն հանդիպակաց տաճարներու, պալատներու, տնակներու։ Գրական այդ հարափոփոխ մարդը զգայնիկ մըն է. հրճվանք մը, մահ մը, փայփայանք մը, թշնամանք մը, օդին փոփոխությունը, իրիկնամուտ մը, օրվան ոևէ մեկ ժամը, ընթերցումի մը տպավորությունը, հիշատակի մը զարթնումը, մարդկային չարության մը, առաքինության մը լուրը, վերջապես՝ կյանքի այն բոլոր դիպվածները, որոնք կու գան, կ՚անցնին, կ՚երթան, կը վերադառնան, անոնք ամենը Տեմիրճիպաշյանը գրչին ու թուղթին կը վազցնեն։ Սրտագրավ էջեր շատ գրած է։ Դագաղներու շուրջը թափած արցունքները հոգիե բխած են ու դեռ մինչ այսօր անոնք կը նամետեն հոգիներն անոնց, որ աներևութացյալներ ճանչցեր են։ Տրտմաթախիծ կը մեղկացնե հոգիդ, երբ հյուծախտավորներու մահճի շուրջը կը հեծկլտա։ Ժամանակը մաշեցուցած չէ Մելանիայի քրոնիկները, վասնզի խանդավառությունն է եղած անոնց ներշնչարանը։

Տեմիրճիպաշյան ուրիշները շատ սիրած է. միշտ գուրգուրական խանդաղատանքով իր թևերուն ներքև համապարփակած է ամեն նոր գրողներ, ու անոնց հետ՝ հիները կամ հինցողներն ալ։ Երբեք նորածիլ խոտի մը վրա կոխել ուզած չէ, խորհելով, որ «թերևս անոր ներքև կյանք մը պահված կա ու օր մը կրնա բացվիլ ու ուռճանալ»։ Իր գգվանքները հաճախ մահաբեր եղան սկսնակներու, որոնք երես առին, շփացան։

Տեմիրճիպաշյան եթե ուրիշները գգվեց, իր անձին համար ավելի սիրավառ եղավ, ինչ որ աններելի հանցանք մը չէ. բայց դժբախտությունը այն եղավ, որ իր անձը, իր ընտանիքը, իր ազգականները, ներքին կյանքի բոլոր մանրամասներովը շարունակ բազմաթիվ տարիներ գրական հանդիսաբեմին վրա ցուցադրեց. գրական ամոթխածությունը չհարգեց։ Պիտի կրնար լավ վիպասան մը ըլլալ, եթե իր և իրեններուն ցավերը փոխանակ մերկապարանոց հրապարակ դնելու, զանոնք մարդ-

նացնել՝ մտացածին անձնավորություններու մեջ, որոնց կյանք ու հոգի պիտի ներշնչեր իր զգայնություններովը։

Տեմիրճիպաշյան գեղոն գրագետ մըն է։ Բառերուն բանաստեղծել կու տա. անոնցմե լույս ցատկեցնելու, զանոնք գունագեղ ընծայելու գաղտնիքը ունի։ Գեղարվեստական պարբերություններ շինելու տաղանդին տիրացած է։ Ոչ ոքին աշակերտն է, ոչ ոքին ալ վարպետն է եղած։ Օտյանին, Ռուսինյանին նման ինքն ալ կը գրե աշխարհաբարով մը, որ մեր ընթացիկ ու օրե օր կատարելագործվելու վրա եղող լեզուն չէ։ Այդ մինչև աստիճան մը նորալուր աշխարհաբարները տհաճելի չեն հնչեր; բայց ոչ ոք կարող է նմանողը ըլլալ, ոչ ոք ալ կ'ուզե հետևիլ։

Այս հանրածանոթ գրագետը շատ բան կարդացած է, բայց շատ բան յուրացուցած չէ։ Ամեն տեսակ նյութերու վրա գրելու մոլութենեն բռնվեցավ, առանց մեկ նյութ մը խորապես ուսումնասիրած ըլլալու, ուստի և գեղեցիկ ոճով մը գրված բազմակույտ հոդվածներ մեր գրականության տալեն հետո, չի կրնար մտավորական կյանքին մեջ ժողովուրդին վրա տիրապետող առաջնորդ մը համարվիլ։ Եվ անձնամոլ գրականության ճյուղին մեջ ցավագար հետևողներ ունեցավ։

* * *

Թեև 1850-են ի վեր Իզմիր ու Պոլիս բազմաթիվ թերթեր հրատարակված էին, բայց անոնցմե շատերը այլևայլ պատճառներով աներևութացեր էին։ Թուրքիո հայոց անդրանիկ օրագիրը, «Արշալույս Արարատյան», դեռ 1884-ին իբր շաբաթաթերթ կը հրատարակվեր Իզմիր. բայց շատ չանցած, դավի մը զոհ երթալով պիտի խափանվեր։ Պոլիս հայատառ թրքաբարբառ երեք թերթ կը հրատարակվեր, մինչ հայերեն լեզվով՝ «Մասիսը» միայն։ Կային ուրիշ մեկ երկու օրագիր ալ, բայց մերթ ընդ մերթ երևան կու գային։ Երիտասարդ հրապարակագիր մը, Բյուզանդ Քեչյան՝ որ 1879-ին հայտնված էր, իբր աշխատակից մը «Մասիսին» մեջ մտնելով, կարող եղավ, իր օրագրողի առաջնակարգ հատկություններովը, հինավուրց թերթը երիտասարդացնել, զայն հեղաշրջել ու գրականության հանդիսարան մը և վիճաբանության մարզարան մը ընել։ Բայց գանգատ մը կը տիրեր. թե Թուրքիո ամբողջ հայությունը հայերեն միակ թերթի մը ձեռք մնացեր է։ «Արևելքին» հրատարակությունը հանրային պահանջ մը կը գոհացներ։ Սակայն նոր թերթին երևումեն քանի մը ամիս ետքը տեսնվեցավ, թե ո՛չ «Մասիսը», ոչ «Արևելքը» պիտի կրնային դիմանալ. երկուքեն մեկուն անհետացումը անխուսափելի չարիք մը կը թվեր։ Գլխավոր պատճառը, որով

երկու թերթ միաժամանակ չէին կրնար ապրիլ, այն էր, որ գիները սուղ էին։ Օրագիր մը հատով կը ծախվեր 40 փարայի (մոտավորապես 6—10 կոպեկ). տարեկան բաժնեգինը. նույն համեմատությամբ. ուստի երբ «Մասիսեն» երկու երեք հարյուր բաժանորդ «Արևելքին» անցան, հինավուրց թերթը սարսեցավ։ Այդ գումարը իր բոլոր շահը կը ներկայացներ, խմբագրական ծախքերը մեջ ըլլալով։ Իսկ «Արևելք», որ դրամագլուխ մը դրած էր, զայն սպառած տեսնելե հետո, իրեն անհնարին էր «Մասիսեն» առած կամ նոր ստացած քանի մը հարյուր բաժանորդներովը ապրիլ։ Գիներու զեղչում մը երկու թերթերն ալ պիտի փրկեր։ Փորձը ետքեն ցույց տվավ, որ աժանագին լրագրություն մը իր առջևը ծավալման մեծ ասպարեզ բաց ունի։ Բայց այդ միջոցին «Արևելքի» վարիչներեն ոմանք կ'ընդդիմանային գինը աժանցնելու որևէ առաջարկի, իսկ «Մասիս» նորության փորձը ընելու համարձակություն չէր ունենար։ Չմոռնանք նաև, որ օրագիրները այն ատեն հիմակվան պես ծանուցումներով առատորեն օժտված չէին։ Այս դժվարին կացության մեջ, «Մասիսի» տերը՝ Կարապետ Յություճյան, և «Արևելքի» վարչությունը համաձայնեցան երկու թերթերուն միացմանը։ Միացում բառը ճիշտ չէ. «Մասիսը» կ'աններևութանար, անոր տերը «Արևելքեն» ամսական որոշ գումար մը ստանալով։

Այս միացումը հայ մամուլին համար, ազգային կյանքին համար դժբախտություն մըն էր, որուն դառն հետևանքները շուտով զգալի պիտի ըլլային, ինչպես կը տեսնենք հաջորդ էջերուն մեջ։

«ԲԱՆԲԵՐ» *(ստորագրված)*
Ա գիրք, 1903

Ե

Հետ միացման: Նոր գրականության ձգտումը: Պանդուխտին կյանքին: Վեպին կոչումը նորերուն համար: Վիպագիրները: Այլևայլ նյութեր մշակողներ: Ռուս և ռուսահայ գրականություններուն վրա: Ակնարկ մը օրագրության: Շրջանի մը փակումը

«Մասիս» և «Արևելք»՝ 1884 հուլիսի 1-ին միացան։ «Արևելք» իրեն վերապահելով ամեն օր ելնելու իրավունքը, երսուներկու տարվան մյուս թերթը շաբաթականի կը վերածեր 1884 սեպտեմբերին։ «Մասիսին» իբրև օրագիր աններևութացմամբը, հանրային կյանքի վրա հսկողությունը և հանրային կարծիքին ղեկավարությունը նորեն միակ թերթի

մը մենաշնորհը կը մնային։ Օրագրական բռնակալ միապետության Թվականը վեցամսյա փակումե մը ետքը վերստին կը բացվեր։ Բայց ի մի ձուլումը մեծկակ օգտակարություն մըն ալ ունեցավ. նոր զարթնող գրական ուժերուն համախմբումը դյուրացուց։ Մեկ խմբագրատան մը մեջ 1884-են հետո իրարու հանդիպող երիտասարդները, «Արևելքի» և «Մասիսի» միջև երկու ջոկատի բաժնված մնալով, հավասարապես տկարության պիտի դատապարտվեին և պիտի չկարենային արտադրել գրական այն ամբողջակի գործը, որ ներդաշնակ ստեղծագործությունն է միմյանց վրա փոխադարձաբար ազդող, իրար ներշնչող մտքերու և սրտերու։

Արևմտյան հայոց գրական պատմության գլխավոր էջերը ասկե ետքը և մինչև 1891, պիտի փնտրենք միացյալ երկու թերթերուն մեջ, ուր վիպակները, հոդվածները, քրոնիկները, երգիծաբանականները իրարմե որքան որ ալ անջատ ըլլան, բայց և այնպես ընկերական, գրական, լեզվական համանման գաղափարներով զանգված ամբողջություն մը կը պատկերացնեն։

Սակայն, միացման առաջին շրջանը նյութական ձգտում մը եղավ միայն և ոչ թե մտավորական ուժերու համախառնում։ «Մասիս» նոր բան մը չէր տաներ «Արևելքին», իր գլխավոր խմբագիրը Բյուզանդ Քեչյան նոր թերթին հիմնադրության օրեն, անոր արտաքին քաղաքականության վարիչն էր եղած, միևնույն պաշտոնը շարունակելով «Մասիսի» մեջ, որուն ազգային տեսությունններն ալ կը գրեր, բայց ինքը նորություն մը չէր։ Հրապարակագրի և օրագրողի համբավը վայելելով հանդերձ, գրականության օտարոտի կը մնար։ «Արևելք» ևս ժողովուրդին չէր ներկայացներ պատրաստված գրագետներու խումբ մը։ Նոր թերթին մեջ նոր երկու անուն միայն երևցած էին՝ ուսումնական հոդվածագիր մը և քրոնիկագիր մը։ Առաջինը՝ Հովսեփ Յուսուֆյան՝ գիտությանց հետամուտ երիտասարդ մըն էր, որ չոր ու ցամաք տեղեկությունները սրամտությամբ համեմելով զանոնք ախորժելի կ'ըներ։ Իսկ քրոնիկագիրը, որ «Արևելքին» ազգային հոդվածներն ալ կը գրեր, բազմաթիվ հակառակորդներ ու նաև բարեկամներ ալ ունեցավ։ Տարիներ ետքը Գրիգոր Զոհրապ՝ խոսելով այդ քրոնիկագրին վրա, կ'ըսեր. «Իր մշտնջենական պատիվը պիտի ըլլա մեր մեջ, առաջին անգամ ինք տանիլը, մոտեցնելը գրականությունը ժողովրդին՝ փոխանակ ժողովուրդը բերելու անխախտ գրականության մը անմատչելի բարձունքին։ Իրմով սկսած ու քաջալերված է միշտ այն երիտասարդ գրողներու շարքը, որ մեր հրապարակագրության այժմու ռամիկ, թե որ կուզեք, բայց հաճելի և սրտի մոտիկ հանգամանքը տված է»։

Երբ Զոհրապ այս նկարագրությունը կ'ըներ, միևնույն ատենը, 1892, Արշակ Չոպանյան հետևյալ տողերը կը գրեր.

«Մեր գրականությունը ոչ միայն իր գոյության իրավունքն ունի այսօր, այլև ամբողջ պատմություն մը արդեն։ Անիկա կը սկսի լեզվին համար՝ Մամուրյանեն, որ առաջին անգամ ճշմարիտ աշխարհաբար մը գրած է, կից մը տալով գրաբար ասությանց ու ռամկական բառերու ջիղն ավելցնելով իր ոճին մեջ, և բուն գրականության համար՝ Օտյանեն արձակի մեջ և Դուրյանեն ոտանավորքի մեջ, երկուքն ալ մեծ անկեղծներ, մին՝ իր գաղափարներու ճոխ պաշարով ակաղձելով հասուն ու ճարտար ոճ մը, աշխարհաբարը ճկելով ֆրանսական գրականության նրբությանց. մյուսը՝ միամիտ տաղերու մեջ երգելով իր ցավն ու իր վերքերը, իր կյանքեն հանելով իր ներշնչումն, իր լեզուն, իր բացատրությունները. ճշմարտապես աշխարհաբար ոտանավորներ գրելով առաջին անգամ։ Պարոնյան դասական հեղինակաց նմանող ըլլալով հանդերձ, կը սկսի դիտել, կյանքի պատկերներ գծել, առտնին ու հանրային աննման ծաղրանկարներ, պարզ, ճաշակավոր ու կանոնավոր աշխարհաբարով մը։ Հետո «Արևելքի» քրոնիկագիրը կու գա և կը ծնի բնապաշտ դպրոցը. խմբագրական, քրոնիկ, նորավեպ, վիպակ ամեն բան կը գրե, ընկերական խնդիրներ ձեռք կառնե, դատեր կը պաշտպանե, գրականությունը ատյան մը կ'ընե, կը խորհրդակցի, կը խոսի, կը վիճաբանի, կը խածնե, կը կսմթե, կը խնդա, կը բռնե հրապարակը։ Բայց ինչ որ կը պակսի իրեն. գեղեցկագիտական զգացումը, արվեստագետին հոգին է»։

Ինչպես այս վկայություններեն ալ կը տեսնվի, «Արևելքին» և «Մասիսին» գրագետները ժողովուրդին սրտին մոտիկ պիտի խոսին և գրականության միջոցավ ընկերական խնդիրներ պիտի հուզեն։ Բայց այդ «ընկերական խնդիր» բացատրությունը պետք չէ այդ բառերուն կատարելապես եվրոպական իմաստովը հասկնալ։ Հայը՝ երկրին պետական վարչության վրա ազդեցություն մը չունի, որպեսզի իր մամուլն ալ եվրոպականին պես ընդհանրական ձգտում ունեցող նպատակներ առաջադրե իր գործունեությանը։ Ու արդեն իսլամին համար ընկերական խնդիր չկա։ Բայց հայ ցեղը Թուրքիո մեջ կ'ապրի նաև իրեն սեփական կյանքով մըն ալ, որ իր «ընկերական խնդիրները» ունի։ Հայը՝ առանձին ինքնավար մարմին մը կը կազմե իր կրթական առանձնաշնորհումներովը, իր բարեգործական հիմնարկություններովը, իր եկեղեցիովը, որմեն կը բխին անհատական կյանքին վրա իշխող օրենքները։ Հայը կրնա ներքնապես մեծ բարեկարգություններ իրականացնել, առանց Օսմանյան կառավարության կողմեն ոևէ արգելքի հանդիպելու։ Իսկ այդ

զուտ հայկական անկախ կյանքեն զատ կան նաև թուրք իշխանության և մահմեդական ցեղերու հետ հարաբերությանց խնդիրները, որոնք կենսական կարևորություն ունին հայ ցեղին ընդհանուր կյանքին համար։ Ժողովուրդը պետք է պատրաստվի հետզհետե լուծել և այդ խնդիրներն ալ, որոնք սակայն քաղաքական հանգամանքներու մեջ ներկայանալով, գրողները զգուշավորության կը պարտավորեն։

Նոր դպրոցին գրողները ոևէ որոշ կարգով մը չենք ներկայացներ. ոչ ալ ոքին ժամանակի առաջնություն կրնանք տալ։ Ամենքն ալ գրեթե միևնույն միջոցները երևցան. իրենց զանազան հոդվածներուն հրատարակությամբը օրե-օր ավելի ու ավելի ճանչցվեցան ու հրապարակը բռնեցին։ Նաև՝ յուրաքանչյուրին աշխատությունները ամբողջովին մեկանց չենք ծանոթացներ։ Ինչպես որ այս տեսության առաջին տողերուն մեջ ըսինք, մեր գրականությունը և մեր հանրային ազգային կյանքը իրարմե չեն կրնար անջատվիլ։ Մենք 1884-են 1890, 1890-են 1896, 1896-են 1902 տարբեր տարբեր կյանքերով ապրած ենք. գրագետներն ալ ազգային սրտին ու մտքին օտարախորթ չեն եղած։ Իրենց ժամանակին մարդերն են մշտանորոգ մտքով։

* * *

Նոր գրականության առաջին շրջանին մեջ, շատ համակրանք գրավող հեղինակներեն մեկը եղավ Մելքոն Կյուրճյան՝ Հրանդ ծածկանունով ճանչցված։ Երիտասարդ գրողը քանի մը տարիե ի վեր ծանոթանալ սկսած էր, երբ 1888—89-ին «Պանդուխտի կյանքեն» նկարագրություններովը մեկենիմեկ նշանավոր հանդիսացավ։ Հայերեն լեզվի այդ ուսուցիչը թեև ֆրանսերենի քիչ շատ հմուտ, բայց եվրոպական ազդեցության չենթարկվեցավ, գործնականապես ցույց տվավ, թե հնարավոր է հայկական անարատ ոճով ալ գեղեցիկորեն գրել։

Քանի մը տարիե ի վեր նոր երիտասարդությունը կը մտածեր, թե Հայաստանի վիճակին բարվոքմանը համար Արևմտյան Եվրոպայի վրա մեր չափազանցորեն հուսադրությունը, հայ ժողովուրդին մեջ օրեօր կը տկարացներ ինքնօգնության գաղափարը։ Ըղձացյալ նպատակի մը հասնելու ապահովագույն ճամփեն հետզհետե նը խոտորեինք։ Ժողովուրդը՝ աչքերը Լոնդոն ու Պոլիս հառած՝ օտարին գթությանը կը սպասեր, առանց ինքը իր վրա գթալու։ Մեղքությամբ կը թրծվեինք։ Հարկ էր ժողովուրդը ցնցել, անոր իմացնել՝ թե թուրքեն բարեկարգություն պահանջված պահուն, մենք ալ մեր ձեռքով գործադրելիք շատ մը բարեկարգություններ կրնայինք ունենալ։ Պետք էր հանրային սիրտը թունդ հանել, հոգի-

ները խառովել ու մեր ներքին վիճակը մեր ձեռքով բարելավելու մտածությունը զորացնելը։ Նաև տարակույս չկար, որ շարունակ ներքին վիճակի բարեկարգության խնդիրը վառ պահելով, արդեն անուղղակի միջոցավ մշտարծարծ պահված կ՚ըլլար ընդհանուր բարեկարգության խնդիրը, որուն վրա բառ մը գրելու արտոնություն չէր տրված։ Օրվան մտատանջությունը «Ներքին բարեկարգության» խնդիրը պետք էր ըլլար։ Հայաստան թշվառ էր, բայց երջանի՞կ էին Պոլիս ապրող հայաստանցիները. ու միթե պոլսեցիները անոնց ցավերը չէի՞ն կրնար ամոքել։ «Մասիս» այս մտածություններովը տոգորված, ուզեց որ Պոլիս ապրող հայաստանցի պանդուխտին՝ ղարիբին, կյանքը իր ամբողջ իրականությանը մեջ ցույց տրվի արյունոտ հայ աշխարհին։ Մելքոն Կյուրճյան Հայաստանեն եկած էր տղայությանը, միշտ հարաբերության մեջ կը մնար պանդուխտներուն հետ, ուստի և քաջատեղյակ էր անոնց կյանքին. զանազան նյութերու վրա հրատարակած հոդվածներով ալ կրակոտ միտք մը փայլեցուցած ըլլալովը՝ «Մասիսի» խմբագրությունը զանիկա էն ձեռնհաս գրագետը համարեց, հայ ժողովուրդը ղարիբին թշվառության պատմություններովը տակն ու վրա ընելու համար, հետևաբար իրմեն խնդրեց՝ աղետավոր կյանքի մը պատկերացումը մեծ գծերով։ Կյուրճյան Հրանդ «Մասիս» շաբաթաթերթին 1888 նոյեմբեր 28-ի թիվին մեջ երևցուց իր առաջին հոդվածը, խոսքը ուղղելով, «Մասիսի» խմբագիրներեն մեկուն, որ այդ հոդվածներուն շարքը թելադրած էր իրեն։

Խոսքը հեղինակին կը փոխանցենք, որպեսզի գործնական գաղափար մը տանք անոր ոճին, լեզվին ու արվեստին վրա։ Ահա առաջաբանին քանի մը տողերը.

«Մտերմական սիրով կ՚առաջարկես, սիրելի՛դ իմ... որ նոր «Մասիսի» համար Պանդուխտներու կյանքեն գրեմ։ Ի՞նչ գրեմ։— Երեկ գ. Տաքարյան արտամետցի մեկ խնձոր տվավ ինձ։ Ի՞նչ երկյուղածությամբ ձեռս երկարեցի. և որչափ խնամքով փույթ ունեցա, որ գրպանիս մեջ չվնասվի։ Նկարագրեմ զայն։ Նախ պետք է դիտել թե անհամեմատ է այն, երբ կը խորհիս որ երեսնօրյա ճամփորդությամբ անցած է սարեր, տիրած վայրերեն և Սև ծովու անդունդներեն, և տակավին իր բույրն անկորուստ կը պահե։ Իր գո՞ւյնը, մո՞րթը,— Մարած կարմրություն մը ունի խնձորն իր այտերուն վրա, տեսակ մը գծեր, որ դժգույն դեղնության մեջ կանհետին կամ անորոշ կերպով կը խառնվին։ Մորթը քաշված է, և ծերունու մը խորշոմյալ ու երթթացյալ կերպարանքն ունի։ Կը ցավիս իր վրա։

Առաջարկությունդ, բառ պատշաճի կը հիշեցնե ինձ այդ խնձորին նկարագիրն, և խորհրդավոր պատկերն զոր իր վրա ունի պանդուխտ-

թյունն։ Դեղնություն, թարշամություն, առույգ կենաց մեջ երիթացյալ ծերությունն։ Ի՞նչ բուրումն ունի այդ հիվանդ պանդխտությունն. ի՞նչ գրեմ»։

Արտամետի խնձորը, որ պանդուխտին «խորհրդավոր պատկերը» կը նկարագրե, մեր ժամանակակից մատենագրության էն սրտահույզ և էն սքանչելագույն պատկերներեն մեկը պիտի մնա։ Ընկերաբան իմաստասիրության խորհրդանշան մըն է։ Այդ խնձորին նկարագրությանը մեջ Կյուրճյան արվեստագետ բանաստեղծ մը կը ներկայանա։ Խնձորին ու պանդուխտին գույները երփներանգ նկարված են. աչքիդ ստորմիջներեն ներս կը թափանցեն ու հոնկե մաքիդ մեջ կ՚անցնին և կ՚երթան կը դրոշմվին սրտիդ մեջ։ Պատկերահան գրագետը քանի մը տողով, ուր անպետ բառի մը չես հանդիպիր, սիրտդ Պոլսեն Հայաստան, Հայաստանեն Պոլիս աստանդական կը թափառայածե, լեռներ, ծովեր կտրել տալով անոր։

Ու ետքեն Հրանդ, այդ սիրտդ կը բերե խաներուն մեջ, ղարիպներու մահվան անկողնին շուրջը. հոնկե, անոնց դագաղին ետևեն կը տանի մինչև Պալգլը, մեծ Մահաստա՜նը, ուր փոսին մեջ կը տանին կը նետեն անտեր անտիրական պանդուխտը։ Ուր երբ սակավին հուզյալ, մտածկոտ կը մնաս տեսածիդ առջև, ահա հանկարծալուր ճիչ մը կը սթափեցնե քեզի և կեցած տեղդ քար կը կտրեցնե։ Պոլսեցի մոր մը ճիչն է, որ իր վայրագ իրականությանը մեջ, ժողովրդի մը զգացումները աչքիդ առջև կը մերկացնե։ Այդ կնոջ զավակը մեռա՜ծ է. դագաղը տանը դռնեն դուրս հանելու վրա են. մայրը՝ ըստ կարգ մը հայացի բարքերու, որոնք Պոլիս այլևայլ թաղերու մեջ դեռ կը մնան՝ մազերը փեթթելով, մեռելին ետևեն կուլա, կը պոռա — Բայց խոսքը թողունք Հրանդին.

«Պանդուխտները կը պատմեն, թե մեկ օր, չգիտեմ Պոլսո որ թաղին մեջ, հայ տունե դագաղ մը դուրս կը հանեն. կին մը,— հավանաբար մեռելին մայրը,— պատուհանեն դուրս ծռած կը ճչե ողորմագին.

— Ախ, որդի՜ս, խաներուն մեջ պեքյա՞ր կը պակսեր։

— Կը տեսնե՞ս, սիրելիս. գավառացին ոչ թե հայ, այլ մարդ իսկ չէ եղեր. նա քարեն ծնած է. լեռնեն բուսած է. որպես թե մոր ստինք ծծած չէ՛. որպես թե մայր մը անոր օրրանի երգ ըսած չէ՛, գիշերն անոր սնարին վերև արթնած չէ՛. նա ծնողք չունի, զավակ չունի, տուն տեղ չունի»։

Ահաբեկիչ է այս ճիչը, որ սրտաբուխ է, անկեղծիկ է։ Մայր մը— ու հա՜յ մայր մը— կը զարմանա թե քանի որ անդին խաները պանդուխտներ կան, Աստված ինչո՞ւ հայր մայր ունեցող պոլսեցիի մը հոգին կ՚առնե։ Պոլսո համար «պեքյարը» մարդ չէր։ Ինչպես «թնդանոթի միս»

կա, նույնպես մահվան միս կա, որ ղարիպն է։ Ու այդ կնոջ մտածությունը ամենուն մտածությունն էր։ Շատ անգամ դիտված է, որ Պոլսո ռևէ մեկ թաղի մը մեջ ննջեցյալ պատահած ատեն, նույնիսկ ժամկոչն ալ— որ ընդհանրապես հայաստանցի մըն է— իրեն եղած հարցմանը թե մեռնողը ո՞վ է, անտարբեր կը պատասխանե,— մարդ չէ, պեքյար է։

Թեև այս առաջին պատկերին հրատարակման թվականեն ի վեր տասնհինգ տարիներ անցան ու մեր գլխեն ալ շատ փորձանքներ— բայց տակավին երեկվան պես կը զգամ սարսուռը, որ Պոլսո հայոց ոսկորներուն մեջեն սողոսկեցավ այն շաբաթ օրը, որ այս առաջին Հրանդը պայթեցավ։ Պոլսո հայոց հոգին կը վրդովվեր, ու քառասուն հազար պոլսաբնակ պանդուխտները իմացան, թե իրենց համար խորհող մըտքեր կան, իրենց համար բաբախող սրտեր կան։ Ղարիպն ու պոլսեցին պիտի միանային։

Բայց Հրանդը պիտի չթուլնար. պիտի շարունակեր առնակորով ու զգայնիկ գրականությամբ մը պոլսեցիները ամոթահար ընել պանդուխտներուն նկատմամբ իրենց վարմունքին համար, պիտի շարունակեր սրտերը խոցոտել, արյունել, պիտի շարունակեր հայ հոգիները խաներուն վրա սևեռուն պահել, մինչև որ գրական պայթումին արձագանքեր ժողովրդին պայթումը։

Քանի մը արտադրություններով ավելի որոշ գաղափար մը տանք այդ նորօրինակ գրականության վրա, որ անծանոթ կը մնա։

Պոլսեցիները 1888-ին վերջին ամիսները մեծ հացկերույթ մը կը սարքեն, Ղալաթիո Լուսավորիչ եկեղեցիին մեջ կառուցված մեծ շենքի մը՝ որ Կեդրոնական վարժարան եղավ՝ չեմ գիտեր ինչ տարեդարձը տոնելու համար։ Շատ մը բաժակաճառեր կ՚արտասանվին «բարերարներու համար», որոնց մեջ քանի մը ոսկի նվիրողներն ալ կը գտնվին։ Բայց ոչ ոք կը հիշե պանդուխտը, որ իր տված տասնոցներովը (2—3 կոպեկ) եկեղեցիները կը հարստացնե, այն պանդուխտը, որ ամեն եկեղեցապատկան շենքի համար իր աշխատանքին վարձը կը զեղչե և շատ անգամ բնավ վարձք չ՚առներ։ Ու Հրանդը կը գոչե.

«Նախորդ շաբթու չմոռցվեցա՞վ պանդուխտն. ո՞վ բաժակ առաջարկեց ի կենդանություն այն աղքատ բեռնակրին՝ որ չէ թե միայն Լուսավորիչ եկեղեցվո քարերն արցունքով թրջած է և շնչովը տաքցուցած, այլև տաճարին կանթեղներուն մեջ յուղն անպակաս ըրած է իր տասնոցովը»։

Նորեն կը դեգերի գերեզմանատունները. Պալըգլըի սև հողը ղարիպները իրեն կը քաշե, ուստի պետք է իրեն քաշե և սրտերն ալ։ Հիմակ արդեն 1889-ին մեջ ենք. Ճրագալույցը մեծ տագնապին։ Արդեն

բանտերու մեջ տանջանքի տակ նահատակվողներ ունենք։ Նախավկաներու մարմինները կը սկսեն Պալըգլը տարվիլ։ Հայրիկ Պոլիս է, և հայությունը, այդ՝ «պանդուխտներու մեծին» հովանավորության տակ սարսռուն, կը պատրաստվի, «ա՛լ կը բավե» աղաղակելու։ Ազգին սիրտը վշտով այնքան լեցված է, որ ալ չի կրնար դիմանալ, պիտի պայթի։ Հրանդ այդ դառնացած սրտին բանաստեղծն է ու պատմաբանը. անոր բոլոր ցավերն ու տրտմությունները կը քամե իր գրածներուն մեջ։ Օրվան ապրված կյանքը, թաղումի մը քանի մը տող նկարագրության մեջ կը խտացնե։ Լսենք։ Խոսքը մերթ կ'ուղղե «Մասիսի» խմբագրին։

«Պալըգլի հո՜ղ... շաբաթ չ'անցնիր, որ չմարսիր շատ անգամ, ուր հողին մեջ փոս մը չբացվի և երիտասարդ մը չդնեն հոն. «պանդխտության մեջ հիվանդանալն ու մեռնիլը գաղտնի կը լինի», անոնք ո՛չ թերթ ունին և ո՛չ հայտարարություն։ Իմացա՞ր մեր Գարեգինի մահը։ Այս ամսու մեջ ուրբաթ օր մըն էր, ըստ մեր Շաքարյանի՝ արցունքի և մահու նախասահմանյալ օր. Կետիկ փաշայի եկեղեցին լցված էին վասպուրականցի երիտասարդներ. Գարեգին սև ծածկույթին տակ կ'երկարեր. քսան և հինգ տարեկան հասակ և ծաղկած տիոց հույսեր կը սառեին հոն։ Ներս մտավ հանկարծ պանդուխտներու Մեծը։ Քուզկունճուգի հեղձուցիկ օդին ճնշումն ու վշտի ծանրությունը թերևս ոչ մեկ անգամ այնչափ զգալի եղած էր ծերացյալ Հայրիկի վրա. պաղ, քրտինքն ալ կ'ողողեր իր դեմքն։ Եկած էր Գարեգինի ողջերթն ըսելու։ Ո՛չ փիլոն ուզեց, ո՛չ վեղար. գավազանն ալ չշողաց իր ձեռքին մեջ։ Իր իսկական ձևովը դարձավ մեզ... Եվ Հայրիկ կուլար»։

Այս կուռ նկարագրության գեղեցկությունը վերլուծումով մը ավելի լավ պիտի բացատրվեր. բայց անոր հոգին ուժգնապես զգալու համար պետք է Պոլիս այդ օրերու կյանքովը ապրած ըլլա, հուզված երիտասարդության մեջ։

Հրանդ տարի մը ամբողջ կը թափառի պանդուխտներուն աշխարհը։ Կը մտնե հիվանդանոցը, որ պանդուխտներուն համար կառուցված է, ու հոն պանդուխտը անգթորեն կը սպանվի։ Կ'երթա Պատրիարքարան, որ պանդուխտին բնական պաշտպանն է և պանդուխտը կը թալլե։ Կը շրջի Պոլսո փողոցները և կը տեսնե պանդուխտը քանի մը փարայի համար օտարազգիներե գանահարված։ Ավագ հինգշաբթի, ճրագալույցի գիշերը ընտանեզուրկ պանդխտին քովիկը կ'երթա ու անոր հեծյուններուն ականջ կը դնե։ Ամբողջ տարի մը Թուրքիո հայությունը կը դողդղահարե։ Կը զգա, թե նոր կյանքի մը համար իր ազգին նախապատրաստություններուն մեջ ինքն ալ բաժին մը ունի, և սատանձնած պաշտոնին

համարը կուտա «Մասիսին» միջոցավ, խոսքը անոր խմբագրին ուղղելով.

«Սիրելի՛ս, հերու ճիշտ այս ամսուն էր, որ խնդրեցիր ինծմե բաներ գրել մեր պանդուխտներու կյանքեն։ Անկե ի վեր տարի մըն է, և պարբերաբար գրեցի խաներեն, գերեզմաններեն, տուներեն։ Ամեն անգամ վարանմամբ գրիչս թղթի վրա կը դնեի. և սակայն գրեթե ամեն «Մասիսի» քաջալերականն ընդունեցա։ Համոզումս այս եղավ, որ, եթե պանդուխտը չսիրվի այսուհետև ալ իր խանին, գերեզմանին և փոսերուն մեջ, «Մասիս» իր վրա բավական համակրողներ պիտի ունենա։ Բարեգուշակ է մեզ այս պարագան, մենք պիտի կրնանք վար իջնել մեր ընթերցողներովը, մտնել ներքին խավերու մեջ, ուր կյանքը կը հյուծի, շունչը կը խեղդվի։

«Եվ սակայն չմոռնամ ըսել, որ տակավին ոչինչ միայն գրած եմ այդ սարսափելի կյանքեն. շա՜տ բաներ ալ կան, որոնց հեռուեն խելք հասցնել կարելի չէ. բաներ ալ կան, որոնց գրչի ծայր չպիտի մերձեցնենք բնավ, բաներ ալ կան, զորս հարկ է տեսնել պանդուխտին տանը մեջ, կենակից ըլլալով անոր զավակներուն, անոնց չոր ու սև հացն ուտելով և տառապանքն ալ հագնելով։ Իսկ ինչ որ ամեն բանե ավելի ակներև եղավ, ա՛յն է, թե այդ կյանքի գոյությունն ինչպես երկարած է մինչև այսօր, ինչպես կյանքի տարերք կրցած են մնալ այդ փտության մեջ։

Անմվազն այսօր հարյուր հազար հոգի իրենց տուներեն դուրս նետված են. և գիտե՞ք թե որոնք են. գործող, վարող, ցանող ու հնձող ձեռքեր, համեմատաբար առույգ ու կորովին։ Տարին, ամեն զեղչեր ընելե ետքը, գեթ 50—60,000 անծին զավկի կորուստ կա. ասոր վրա ավելցուր օտարության մեջ շարունակված չարաչար զոհերն ալ, հովեն զարնված, ձողերու տակ ջարդված, և ահա խոշո՜ր գումար մը մեռելոց, զորս կը թաղենք առանց քահանայի և արցունքի։ Դարեր այսպես շարունակված են, այսօր ալ կը շարունակվի այդ աղետքը, հիվանդի մը թոքերը կրծող որդերու պես։

Առանց ինչ ժամանակ անցընելու, պետք է այս բանին ուշադրություն դարձնել. բավական չէ մեզի հիվանդանոցին դռները բանալ պանդուխտին օրհասականներուն առջև. պետք է քանի մը քայլ անդին անցնինք.— քահանան իր բաժինը ունի, գրողն ալ իր մասն ունի, ունևորն իր պարտավորությունը պատրիարք, վարչություն, երեսփոխանություն, առաջնորդք իրենց պարտքն ունին։ Պանդխտությունն, եթե այսպես շարունակվի, մեր գավառներն անմարդի կ՛ընե այսօր կամ վաղը. այս համոզումն ունեցեք, ահավոր ճշմարտություն է»։

Հրանդին վերջաբանը ամբողջովին արտագրեցի, ոչ իբր գրական շատ ուշագրավ հատված մը, այլ՝ 1884—1890 թվականին Պոլիս խորհողներու և գրողներու մտատանջությանց իբր ամփոփումը։ Այդ մտահոգություններուն մեջ «բաներ ալ կան, որոնց գրչի ծայրը չպիտի մերձեցնենք», այսինքն՝ ինչ որ ուղղակի կառավարական է, այն՝ չի կրնար քննվիլ։ Բայց ազգը ինք շատ մը բաներ կրնա ընել։ Նոր գրականությունը կը ձգտի՝ այդ բաները ընելու մղել և պարտավորել։

Ու վերջին խոսքը՝ մարգարեություն մըն է. մաղթանք մը, որ շատ չանցած պիտի իրականանա։ Ահա ինչ որ դառնությամբ կը մաղթե։

«Իրավ կ'ըսեմ, թեև աշխարհական, կ'աղոթեմ, որ մեր պանդուխտներու առջև Տրապիզոնի ճամփան փակվի. կյանք չէ՞ այս, որ կը վարեն այս մարդիկ փողոցներու անկյունը, պանդոկներու խորշերը, և ընդհանուր արհամարհանաց ծանրության ներքև»։

Մաղթանքը լսվեցավ։ Այս տողերը «Մասիսի» մեջ հրատարակվելեն քանի մը տարի ետքը, հայաստանցիներուն առջև կը փակվեին ոչ միայն Տրապիզոնի դռները, այլև՝ Կիրասոնի, Սամսոնի, Մերսինի, Իսկենտերունի դռներն ալ։ Բայց, մեր ուզած բանալիովը չէր, որ կը կողպվեին։

Հրանդին գրականության ձգտումին վրա երբ գաղափար մը տվինք, միևնույն ժամանակ անոր ոճն ալ ծանոթացուցինք քանի մը հատվածներու արտագրությամբ։ Իր աշխարհաբարը այն է, որ հիմակ կը տիրապետե իբր Պոլսո, ուստի և, Թուրքիո հայոց մատենագրական լեզու։ Տառական քանի մը փոփոխություններ պիտի բավեն, զայն հիմակվան էն հեղինակավոր գրողներու աշխարհաբարին հետ նույնացնելու համար։ «Պանդուխտներու կյանքեն» հոդվածներու շարքը, անշուշտ, լավագույն օրերու մեջ, հատոր մը պիտի կազմեն, իբրև Արևմտյան հայոց տասնեիններորդ դարու վերջին քառորդին գրական ու պատմական կյանքին հիշատակարաններեն մին։ Այդ հատորը պիտի մնա դասական գործ մը, և իր գեղարվեստական հատկություններովը միշտ պիտի կարդացվի։

* * *

Վիպագրությունը նոր գրողներուն գրականության մեջ լայնեկ տեղ մը բռնեց. կրնանք ըսել՝ առաջին տեղը. իրենցմե մնալիք լավագույն գործերը վիպակները պիտի ըլլան։ Նախորդ սերունդը մատենագրության այդ ճյուղը լրջորեն մշակած էր։ Հիսարյան գրած էր. «Խոսրով և Մաքրուհին»,— Մամուրյան՝ «Սև լեռան մարդը», Տեվկանց՝ Հայաստանի կյանքեն «Շահենը», Ծերենց՝ պատմական վեպեր, տիկին Սրբուհի Տյուս

սար՝ կնոջական դատին պաշտպանողական վեպերը։ Ասոնք ընդարձակ հեղինակություններ էին, մեծ աշխատությամբ պատրաստված։ Բայց ընդարձակությունը տկարության պատճառ իսկ էր։ Վեպը թե՛ ստվարահատոր գրելու և թե՛ զայն շահագրգռական ընելու կարողությունը կը պակսեր հայ մտքերուն, որոնք մեծ գործեր ստեղծել կ'ուզեին, առանց սակայն առատաբար օժտված ըլլալու վառ երևակայության տուրքով ու բազմակողմանի զարգացման ձիրքերով։ Նոր գրողները, քիչ բացառությամբ, իրենց նախորդներուն չհետևեցան։ Նախապատվություն ընծայեցին վիպակին, որուն մեջ պիտի կրնային մեծապես հաջողիլ, մինչև իսկ գլուխգործոցներ ալ ստեղծել երբեմն։

«Արևելք» և «Մասիս» իրենց էջերը լայնորեն բացին նոր վիպագիրներու առջև, սակայն անոնց հանձնարարելով ժամանակակից ընկերական խնդիրներ ուսումնասիրել, փոխանակ պատմական կյանքով զբաղելու։ Ահավասիկ, երիտասարդ գրողներու ուղղված հրավեր-ծրագրի մը մեկ գլխավոր հատվածը.

«...Եվ արդարև, եթե պատմական վիպասանությունը իր դերը ըստ բավականին կատարեց, արդի վիպասանությունը շատ առատ հունձք ունի իրեն համար։ Երիտասարդ տաղանդները համարձակ այդ ասպարեզը կրնան կոխել, այն վստահությամբ, որ կյանքի իրական պատկերներ ներկայացնելով կարող են մեր ընկերական բազմադիմի խնդրոց լուծումը հրապարակ հանել։ «Մասիս» և «Արևելք» իրենց աջակցությունը հոժարակամ պիտի նվիրեն այն ամեն երիտասարդներու, որոնք մեր ընկերական կյանքին ուսումնասիրությունը իրենց աշխատանքին առարկա կ'ընեն»։

Ինչպես այս հայտարարութենեն կը տեսնվի, «Արևելք-Մասիս» խմբագիրները վիպասանության ալ առաջնորդող-խմբագրականի մը դերը տալ կ'ուզեն։ «Օգտակարություն» վարդապետությունը իրենց մտքին վրա բացարձակորեն կ'իշխե, և գրող երիտասարդությունն ալ այդ իշխանության հպատակեցնել կը միտին։ Ազգային գաղափարական նպատակի մը դիմողները, զբոսնելու ատեն չեն ունենար։ «Արևելք» արդեն իր գոյության երկրորդ շրջանին մեջ, 1885-ին, կը համարձակի ըմբոստանալ Թուրքիո հայոց էն մեծ գրական և մտավորական հեղինակության դեմ։ Գրիգոր Օտյան Պոլսեն Փարիզ վտարանդի մը, իր քրոջը թարգմանել կու տար Հալևիի «Աբբա Կոնստանթեն» վեպը, որուն գրքին առաջաբան մըն ալ գրելով կը դրվատեր «խնկաբույր վեպը», և կը դավաներ «թե վիպասանությունը մարդս իրականութենեն մխիթարելու կոչումը ունի»։ «Արևելք» այդ հոյակապ հայուն վիպասանական դավանանքը ամբողջովին արտաքսելե հետո, իր քրոնիկագրին բերնովն ալ վերջ

ավելի բարձրագույն կոչումի մը սահմանված կը կարծեր։ Նոր Թերթին հայտնած կարծիքները իր գրական և ազգային ծրագրին մաս կը կազմեն, ուստի և զայն կը հիշեցնենք։ Ահա ինչ որ կը գրեր «Արևելք» 1885 մարտ 7-ին։

«Երբ Օտյան էֆենդի կը հայտարարե թե «վեպն ինչո՞ւ է. որպեսզի մարդը մխիթարվի իրականութենե», այս վճիռը կրնա՞նք իբր անհերքելի ճշմարտություն ընդունիլ։ Մխիթարությունը՝ վերջին ապավենն է անոնց, որոնք իրենց ցավերուն այլևս դարման չեն կրնար հուսալ. իսկ արդի վիպասանությունը չուզեր վշտերու սփոփանք հայթայթելով միայն շատանալ, այլ նաև՝ կետ նպատակին է աջակցիլ անոնց, որ ընկերական թշվառության դարմաններ որոնելու հետամուտ են։ Վեպը՝ իրական կյանքի պատկերը կը պարզե և մեզի կը մղե ընկերական վիճակին վրա խորհրդածելու։ Եթե արդի երիտասարդությունը օր մը իր վիպասանները ունենա, որոնք ուսումնասիրեն մեր ամեն խավերու ցավերն ու վշտերը, տխրերանդ վրձինով մեր աչքերուն առաջ պատկերացնեն տարաբախտության նկարները, մեզի վկա ընեն մինչև իսկ ժանտատեսիլ տեսարաններու և մեզի ըսեն՝

«— Ահա՛ չարիքը, մենք քննեցինք հիվանդությունը. ըրինք հայ ընկերության սրտին ախտաճանաչությունը, առա՛չ թող գան անոնք, որ հիվանդության դարմաններուն վրա պիտի խորհին,

— Պիտի կրնա՞նք անոնց ըսել՝

— Է՞ր զմեզ ի ճեմ կը հանեք ցավոց և տառապանաց հանդիսավայրերը։ Մեզի ծաղկանց բուրաստաննե՛րը միայն առաջնորդեցեք. երթա՛նք Վոսփորի պուրակները, թռչուններու դայլայլիկները լսենք, ծաղիկներու բուրումներովը զմայլինք։ Մենք ի՞նչ գործ ունինք այն մութ ու խոնավ հարկերը, ուր խշտիններու վրա ղարիպն է հոգեվարք։ Գարշահոտություն կա հոն, և մեր բյուզանդական ռունգները շա՛տ փափկասուն են։

«Դասական և վիպական դպրոցներու սիրահարնե՛րը միայն պիտի կրնան այսպես խոսիլ։ Բայց եթե հրճվանք մըն է, անմեղ զբոսանք մըն է այդ դպրոցներու պատկանիլ, սակայն սուրբ պարտականություն է աջակերտիլ իրականության: Պետք է, որ հայ երիտասարդությունը այդ պարտականությունը կատարե»։

Ազգային վիպասանության համար 1885-ին գծված այս ծրագրին մեջ արդեն կը տեսնվի պանդուխտներու համար այն մտահոգությունը, որ մտքերու վրա կը տիրե և քանի մը տարի ետքը, 1888-ին, պիտի ունենա, ինչպես վերև ցույց տվինք, մասնագետ գրող մը, որուն իրական կյանքի պատմվածքները վիպակի տեղ պիտի բռնեն։ Սակայն անոնք,

որ ընկերասեր գրականություն կ՚ընեն, չեն կրնար միակողմանի ըլլալ և իրենց հոգածու ուշադրությունը կյանքի մեկ կամ երկու երևույթի վրա կեդրոնացնել միայն։ Նոր գրողները ազգային կյանքը իր ամբողջության մեջ պիտի քննեն, պիտի ուսումնասիրեն, մեջերնին տեսակ մը աշխատության բաժանում ընելով բնական բերմամբ մը, ըստ յուրաքանչյուր գրողի մտավորական կազմության և հոգեկան տրամադրություններու։

Ի՞նչ էր սակայն այն ընկերական նոր կյանքի ամբողջությունը։

Արդեն հիշեցուցինք, թե մեր ազգային գործունյա կյանքը Պոլիս կը կեդրոնանար. ու այդ նոր գրողներն ալ ազգային ընդհանուր կյանքեն պոլսական բաժինն՛ վը միայն կը զբաղեին, թեև մտքերնին ու սրտերնին դեպի այն հայրենիքը հառած զոր իրենցմե ոչ ոք տեսած էր, բացի Հրանդեն, և ա՛ն ալ ութ տարեկան Պոլիս եկած էր։ Ու ոչ մեկն ալ կրնար Հայաստան երթալ։ Գրողները հարուստներ չէին, այլ իրենց դիրք մը ստեղծելով ապրելու պարտավորյալներ։ Գրագետ, բայց միանգամայն դասատու եղողները կրնային երկիր երթալու դյուրությունը ունենալ։ Դիտելի է, որ նոր գրագետներեն միա՛յն մեկը ուսուցիչ էր՝ Հրանդը. մյուսները իրենց ապրուստին համար ազգային իշխանության հետ գործ մը չունեին, մինչ նախորդ սերունդին գրագետներուն մեջ ուսուցիչներուն տեղը մեծկակ էր։ Ըմբոստացման գրականությունը ազգային վարչական մարմիններու ձեռքին և հսկողության տակ պիտի չմնար։

Կեդրոն Պոլսո հայ կյանքը երեսուն տարվան մեջ բավական փոխված էր, բայց փոփոխությունը ազգային կյանքը ներքին բռնապետական ճնշումե բոլորովին չէր ազատած։ Սահմանադրությունը պատրիարքական իշխանությունը չափավորած էր, բայց Ներսես պատրիարք, ու Ազգային ժողովի ատենապետ Արթին Տատյան, ջնջել տված են իրենց ընդդիմադիր օրագիր մը՝ Փորթուգալյանին «Ասիան»։ Դրան հետ լավ հարաբերության մեջ գտնվող պատրիարք մը, իրեն հետ կամ իրեն դեմ գործ ունեցող հայերու վրա կարող էր բռնանալ։ Ջնջված էր ամիրայությունը, այսինքն՝ այն դասակարգը, որ թե հարուստ ըլլալով և թե Թուրք փաշաներուն հետ սերտ հարաբերության մեջ գտնվելով, պատրիարքարանն ու ժողովուրդը կը ճնշեր։ Բայց այդ դասակարգին տեղ բարձրացած էր էֆենդիությունը, Դռան ծառայող հայ պաշտոնատարներու մարմինը։ Էֆենդիներեն ոմանք ազնվամիտ հայեր էին, բայց հանրային ամեն գործի վրա իրենց ազդեցությունը զգալի էր։ Հայությունը բռնապես անոնց իշխանության ներքև կը մնար։ Ուրիշ էֆենդիներ ալ ազգը չարաչար կը շահագործեին։ Հասած էր նաև ուրիշ դասակարգ մը ալ՝ հարուստներունը։ Այս առթականով պետք չէ երևակայել ենվրոպակ

կամ ամերիկացի վիճխարի դրամատերներու հետ բաղդատվողներ։ Քանի մը հարյուր հազար ֆրանկի ընչավետությունը կը բավեր արժանանալու համար «հարուստի» տիտղոսակրության։ Տգետ ու հավակնոտ մարդեր էին այս «մեծատուն» կոչվողները. ազգային ամեն գործերուն միջամտելու, ամեն գործերուն վրա տիրաբար իշխելու հավակնոտներ, որոնք կ'ուզեին հայ ցեղը կառավարել, անոր նվիրելով «խելքերնին», որմով բազմափարթամ չէին, և՝ անոր խնայելով ինչ որ կը սպասվեր իրենցմե՝ դրամ։

Գրականությունը էֆենդիին դեմ անուղղակի պիտի կռվեր։ Թմբագրական, հրգիծաբանություն, քրոնիկ օրվան խնդիրներու աղմուկին ու շփոթին մեջ օրագրության սյունակները սպրդելով, հարված հարվածի վրա պիտի տեղացնեին. սակայն Պոլիս անհնարին էր էֆենդին տեսաբանի վրա հանել ազգային գործերու շրջանակով մը։ Վիպագիրները իրենց ուժը հարուստին դեմ հանեցին։ Այդ հակահարուստ վիպագրությունը իր մտածությունը օրին մեկը պիտի պարզեր պանդուխտներու կյանքեն վիպակի մը վերջաբանին մեջ, որ հետևյալն է.

«Այդ իրիկունը Մելքոն հաց չկերավ. ձեռքերը ծալլած, աթոռակի մը վրա օտային դռան առջև նստուկ կը մտմտար։ Գնա՞ց, արտը գնա՞ց։ Ծվ խեղճ մայրն ու մեծ մայրը մեռելնի՞ն մտմտային, ղարիպնի՞ն թե արտերնին։

Մելքոն դաստակովը աչքերը սրբեց։ Ճաշերնին լմնցուցած, մյուս գործավորներն ալ հետզհետե իրեն քով եկան։ Օրվան դեպքերը լսած էին։

Ա՜խ, Աստված, կ'ըսեին աստղերուն նայելով, ա՜խ, Աստված, աս մինչև ե՞րբ հարուստը մեր տունը քամե։ Երկիրը՝ մեր ազգին հարուստն է, որ մեզի կը խեղտե, փարանիս կ'առնե, արտերնիս կ'առնե, մեզի մորե մերկ կը թողու։ Ստամբոլ՝ մեր ազգեն հարուստն է, որ մեր հախը կ'ուտե, մարդ կ'ըլլա մեր փարայով, մեզի հիվանդանոցներուն մեջ կը մեռցնե։ Մեր ազգն է, որ մեզի համար հիվանդանոց կը շինե ու մեր փարաները մեր գրպանեն կը խլե, ու մեզի ավուր հացի կարոտ կ'ընե։ Ա՜խ, Աստված, աս մինչև ե՞րբ»։

Մինչև ե՞րբ։

Մյուս առտուն Մելքոն սկսավ ռանչպերության գործ մը փնտրել, որպեսզի ինքն ալ լեցնե հարուստին քսակն, որպեսզի ինքն ալ օր մը կարգվի ու զավակ մը պատրաստե հարուստին համար մաշվելու։

Կ. Պոլիս 1884-են 1890 ունեցավ նոր չորս վիպագիր, որոնք հանրային ու անհատական կյանքի խնդիրները հուզեցին, ոմանք նվազ հաջող գրականությամբ, բայց միշտ ընթերցողը ցնցելով։ Այդ հեղինակ-

նւրուն վրա կը խոսինք, առանց ժամանակագրության կամ նախապատվության կարգի։

Գրիգոր Զոհրապ իր վիպակներուն մեջ առաջնակարգ հատկություններով օժտված գրագետ հանդիսացավ։ Մինչև այսօր Պոլիս կը մնա, կը շարունակե վիպագրել, արժանավորապես հռչակավոր համբավի մը վայելմամբ։ «Մասիսի» ու «Հայրենիքի» մեջ իր ցիրուցան գործերը հավանորեն մոտերս հատորով մը երևան կու գան, և հեղինակին տաղանդին վրա հստակ գաղափար մը կուտան։

Գրիգոր Զոհրապ երբ տակավին դեռ շատ երիտասարդ էր, «Մասիսի» մեջ հրատարակեց վիպակ մը՝ գրեթե վեպ մը, որ թեև նախափորձ, սակայն երևան կը հանե վիպագրողի հատկություններ, որոնք հետզհետե պիտի բարգավաճին և պիտի զորանան։ Զենք ուզեր այդ նախափորձը, այսօր, երբ քսան տարի անցած է, մեր արդի գաղափարներովը դատել, մանավանդ որ դեմերնիս հասունացած վիպասան մը ունինք։ Բայց այդ գիրքը իր ժամանակին իբր իսկական նորություն մը ջերմ ընդունելություն գտավ, ու զարգանալու նախասահմանյալ տաղանդի մը հայտնությունը եղավ։ Իբրև դատաստան առաջ կը բերենք գնահատում մը, զոր 1885-ի «Մասիսին» մեջ հրատարակեց ուրիշ երիտասարդ մը, Լևոն Բաշալյան։ Այդ դատաստանը իր արժեքը մինչև հիմակ կը պահե, և գրքին ընթերցումը հետաքրքրական կ'ընե գրականության պատմություն սիրողներուն։

Ահա ինչ որ կը գրե Բաշալյան.

«Մասիսի» հարատև ընթերցողաց մտքին մեջ խորաքանդակ դրոշմված է անշուշտ «Անհետացած սերունդ մը» վեպն, որ մաս առ մաս հրատարակվելե հետո այժմ գրքի ձևով ի լույս կ'ընծայվի։ Գրիգոր Էֆենդի Զոհրապ թեև առաջին անգամ կ'իջնե հայ գրական ասպարեզի մեջ, այլ նույնհետայն կը գրավե անդ կարևոր տեղ մը։ Ի վաղուց հետե հրատարակված չէր գիրք մը այսքան «նոր» ու այսքան «գրական»։ այդ վեպ մոռցնել պիտի տա բազմաց շատ կսկիծներ զորս ունեցած են հայ գրականության աղքատության վրա։ Գրքին մեկ ծայրեն մյուս ծայրը հեղինակը կ'երևա մեզ առաջնակարգ վարպետ մը, որ կը ներկայացնե մեզ կյանքն յուր մանրակրկիտ ճշտությամբ, և ամեն երևույթներուն ներքև։

«Ֆրանսացի նշանավոր գրագետ մը ըսած է, թե լավագույն վեպերն անոնք են, որոնց նյութը կրնա ամփոփվիլ երկու տողի մեջ։ «Անհետացած սերունդին» հիմն ալ պարզ է։ Երիտասարդ մը կը սիրահարի ամուսնացյալ կնոջ մը, զոր ուխտած էր ատել հավետ,— ըստ որում [illegible]

գալով գտնվելով երիտասարդին ամենասիրելի բարեկամին՝ Նորա խելագարման ու մահվան պատճառ եղած էր— ու ամուսնու մահվանեն հետո կ'ամուսնանա Նորա հետ և կ'ապրի մենության մեջ։ Այս կմախքին վրա հեղինակը ի՜նչ սրտագրավ ու սրտահույզ դրվագներ հորինած է, ի՜նչ այլազան ու հրաշալի պատկերներ ավելցուցած է»։

Այս դրվատիքը արտահայտությունն է «Նորին» առջև տասնութ-տասնինն տարեկան պատանիներու խանդավառությանը։ Ու Զոհրապ անոնց գրեթե տարեկից մըն էր։

«Անհետացած սերունդին» հեղինակը 1884—1890-ին բավական բան գրած է. մասնավոր ուշադրություն կը գրավեն՝ «Ներսես», «Այրին», «Փոթորիկը», «Մեղա Տե՜ր» վիպակները։

«Ներսեսը» Ազգային հիվանդանոցին վարչության դեմ ճակատամարտներու առաջին հրացանաձգություններեն է։ Ներսես որբևայրիի մը մեկ հատիկ զավակն է. մայրը տղան Ս. Փրկչի հիվանդանոցին որբանոցը կը դնե։ Օր մը զայն տեսնելու կերթա, և մեռած կը գտնե վարժարանին բանտին մեջ, ուր նետած էին պատիժի համար և անոթի թողած։

Հիվանդանոցին այն ատենի հոգաբարձության դեմ նոր գրողներուն մարտնչումը, ներքին բարեկարգման համար մղված կռիվն է։ Հայաստանի համար Թուրքեն վերանորոգումներ պահանջող հայը, կ'ըմբոստանար՝ իր բարեգործական հաստատությունները լավագույն հոգածությամբ խնամելու գաղափարին դեմ, վասնզի անոնց վերին հսկողները հարուստներն էին։ Վաճառականներե կազմված հոգաբարձություն մը շատ տարիներե ի վեր Ազգային հիվանդանոցը կը խնամեր. ամբողջ հայ ժողովուրդը՝ առաջնորդությամբ լրագիրներուն՝ փառաբանանքներ կը տեղար այդ բարեսեր հայոց գլխուն։ Պատրիարքները կուգային կ'երթային, ժողովականները իրարու կը հաջորդեին, ազգին մեջ կռիվներ կը մղվեին, բայց հիվանդանոցին հոգաբարձությունը կը մնար անքննադատելի։ Տարակույս չկար, թե այդ հարուստ վաճառականները բարեխիղճ մարդեր էին ազգային հաստատության մը դրամին մատակարարման մեջ, և ի հարկին իրենց գրպանեն ալ նվիրատվություն ընելու չէին վարաներ։ Սակայն դրամին բարեխղճորեն գործածությունը, դրամական առատ նվիրատվություն արդյոք բավական երաշխավորություննե՞ր են, թե ազգային հաստատությունները օգտակարապես իրենց նպատակին կը ծառայեն։ Խնդիրը ազգային կյանքին վրա դրամատերներուն գերիշխան կամ չափավոր տիրապետության շուրջը կը դառնար։ Հարուստներուն և մտավորականներուն միջև կռիվ կը բացվեր։ «Մասիս» սկսավ հիվանդանոցին վիճակը քննել, և օրին մեկն ալ ցույց տվավ, թե այդ բարեգործա-

կան հիմնարկություն բարեխիղճ դրամատերներուն վարչությանը ներքև՝ սպանդանոց մըն էր պարզապես։ Հոն շարաշար կը տառապեին հիվանդները, ծերերը, որբերը. կը մեռնեին՝ անհոգ անխնամ մնալով։ Ու զոհեր ամենամեծ մասամբ պանդուխտներն էին, որոնք հիվանդանոցին անունեն իրավամբ կը սոսկային։

«Մասիսին» բացած պայքարը ծայրահեղ հանդգնություն մը համարվեցավ։ Դրամին փայլեն շլացած և ստորնացած ժողովուրդ մը, հիվանդանոցին մատակարարության քննադատները հիվանդանոցին թշնամին կը համարվեր, ճիշտ ինչպես Թուրք իշխանությունը իր հոռի վարչությանը դեմ բողոքող հայերը իրեն ոխերիմները կը կարծե։ Կացությունները համանման էին։ «Մասիսի» խմբագիրները չվախցան և չվերջնոտեցին. սկսած կռիվնին շարունակեցին մինչև ի հաղթանակ։ Հիվանդանոցին բարեկարգման խնդիրը ազգը կամաց-կամաց ցնցել սկսավ, ժողովուրդը, որ առաջ միաբան էր ի պաշտպանություն հոգաբարձության, ա՛լ երկուսի բաժանվեցավ։ Հուզումը տիրեց և այս խնդիրը ուրիշ բազմաթիվ հարցերու վրա ալ խորհիլ տալու առիթ մը պիտի ըլլար։ Զոհրապ իր վրա առավ հիվանդանոցին որբերու բաժնին դառտխուր իրականությունը ներկայացնող պատկերով մը ազգին հոգին խռովեց։ «Ներսեսը» ա՛յս էր։

«Այրին», որ պատմությունն է այն աղվոր, կորիճ հայաստանցիներու, որոնք Պոլսո մեջ կ՚ապականին, կը փչանան, և իրենց կիները, զավակները անդին անխնամ կը կորսվին։ Այս վիպակն ալ ընդհանուր նպատակին կը ծառայե, այն է՝ Հայաստանի համար պոլսական պանդխտության աղետաբերությունը հաստատել, սարսռազդեցիկ նկարագրություններով։ «Փոթորիկը» քաղքենի հայ կնոջ մը իր տան նավավար երիտասարդի մը հետ, ծովին վրա փոթորկի մը պահուն, ինքնամոռացության մեկ դրվագն է։ «Մեղա՛ Տերը» կը ներկայացնե հանրային դրամը յուրացնելով հարստացող հայը, որ առ Աստված ուղերձած անդադրում «Մեղա՛ Տերներով» կը սրբանա ժողովրդյան աչքին։

Զոհրապին վիպակները, ինչպես ուրիշներուններն ալ, թեև «նորավեպ» կը կոչվին, բայց անսպասելի գյուտերով չեն վերջանար։ Պարզ պատմություններ են, կյանքի սովորական դրվագներ։ Կը հիշեցնեն Զոլային այն կարծիքը, թե վեպը կրնա ուրիշ բան չըլլալ, բայց եթե սովորաբար պատահած անցքի մը նկարագրությունը։ Այս կարծիքին հիմնավորությունը ինչ որ ալ ըլլա, բայց տարակույս չկա, թե շատ սովորական դեպքի մը պատմությունը իբր վիպասանություն հաճելի ընծայելու համար, պետք է որ գրողը արվեստագետ մը ըլլա։ Զոհրապ պարզ նյութերու վիպագրությամբը արվեստագետի մը ձիրքերովը կը հ[illegible]

ընթերցողը գրաւելու Զօհրապի մը, Բաշալեանի մը, Կամսարականի մը գրականութիւնը. համակափայլ պարզելու համար, հարկ է իրենց վիպագրութիւնները մէկիկ մէկիկ վերլուծել, որպէսզի անոնց ընկերաբանական գաղափարներուն հետ նաև երևան հանենք յուրաքանչյուրին սեփական էսթետիկի գաղտնիքներն ալ, բայց այսպիսի աշխատութիւն մը պարզ ուրուագծի մը սահմանին մէջ չի մտներ։

Զօհրապին առաջնակարգ հատկութիւններէն մէկը՝ հեգնաբանութիւնն է։ Իր ներկայացուցած տիպարներուն ծիծաղելի կողմերը շատ որոշապէս դուրս կը ցատկեցնէ անոնց բերանը դրած խոսքերովը, անոնց դեմքերուն, զգեստներուն, բնակարաններուն նկարագրութեամբը։ Կը թուի հատկապէս նոր հարուստ դասակարգին վրայ իր մասնագիտութիւնն է՝ այդ դասակարգին հավակնոտութեան, ամբարտավանութեան, կեղծավորութեան ու այլանդակօրէն եվրոպականացման ուսումնասիրութիւնը։ Ու այդ ամէնը մերթ կարավալիր, մերթ նրբին դարձվածքներով նկարագրելու մէջ եզական է։ Բայց այդ խեղճ արարածները ատելու փորձութիւնը չես ունենար։ Հեղինակը իր բոլոր զգայնութեան և ցասման մէջ միշտ սկեպտիկ մը կը մնայ։ Ավելի կարեկցող մըն է քան թէ ատող մը։ Արդէն մեր նոր գրողներուն բնորոշ մէկ հատկանիշը՝ ատելութեան տկարութիւնն է և գթութեան ուժգնութիւնը։

Գթութիւնը սակայն լալկանութիւն չէ։ Զօհրապ նկարագրող մըն է, զգացյալ նկարագրող մը, բայց ո՛չ ողբացող մը։ «Այրիին» վերջաբանեն քանի մը տող առաջ բերենք։ Մարտիրոս՝ հայաստանցի կարիճ երիտասարդը ինչպէս քիչ մը առաջ հիշեցինք՝ Պոլսո կյանքին մէջ ապականված, փչացած է։ Գլորումէ գլորում վերջապէս ապօրէն պսակով մը կը կարգվի, իսկ անդին կինը կը սպասէ ու կը սպասէ։ Էրիկը ողջ է, բայց ինք այրի կը համարվի։ Գիտէ որ անիկա պիտի չգայ, բայց նորէն միշտ անոր ընդառաջ կ'երթայ։

«Գիտեր, սակայն գիտեր ալ, որ ամուսինը պիտի չգար. բայց իրիկունը, տանից ուզելու, քայլերը կ'առաջնորդեին զինքը այն արտը ուրկէ վերջին անգամ տեսած ու Պոլիս ճամփած էր իր երիտասարդ էրիկը։ Հոն, կանգուն և տատանելին, հեռուն տարածվող ընդարձակ ու հարթ դաշտին վրա պտտցնելով իր հետախույզ նայվածքը, Այրին դեռ կը սպասեր»։

— Այսպէս չէ՞ն սպասեր գարերէ ի վեր Հայաստանի հայ կիները։ Սպասումի այս նկարագիրը կը հիշեցնէ Լոթիին Pêcheur d'Islande-ի սիրտ կտրտող համբերավանդր սպասումը։ Բայց հայ հեղինակը «Այրին» գրած ատենը այդ գիրքը տակավին չէր տեսած։ Քանի մը տարի ետքը

էր, որ այս տողերը գրողը Լոթիին գլուխգործոցը Զոհրապին կուտար կարդալու համար։

«Փոթորիկը» ոչ միայն խորապես հոգեբանական է՝ այլև բանաստեղծական։ Անոր մեջ վայրագ, վսեմ, կենդանի, հուզող, տխրեցնող բան մը կա։ Եվրոպական մատենագրության մեջ իսկ պզտիկ գլուխգործոց մը պիտի կրնար սեպվիլ։

Զոհրապին ոճը ախորժելի է։ Խրթին չի գրեր. պարզ է, առանց ռամկացման, փոխաբերությունները, պատկերացումները կը սիրե, բայց ուշագրավ նորություններու հաճախ չենք հանդիպիր։ Իր հայերենը պերճ չէ, բայց հստակ ու ճշգրիտ է։

«Փոթորիկին» հեղինակը Պոլսո առաջնակարգ փաստաբաններեն մեկն է, և առաջին հայ փաստաբանը։ Պոլսո Թաղային վարժարանի մը աշակերտ, ամենուն պես ինքն ալ գրական թեթևակի կրթություն ստացած էր, բայց ինքնազարգացմամբ ու բնատուր կարողություններու աջակցությամբ, ինքնատիպ գրող մը եղավ ու կը մնա։ Իր վիպակները ապագային համար ալ պիտի ապրին։ Մոռացման դատապարտյալներ չեն, վասնզի սրտի հետ կը խոսին գեղեցիկ արվեստով մը, ու եղանակի մը բարքերը կը նկարագրեն։

Կ. Պոլսո մամուլին մեջ Լևոն Բաշալյանին անունը ճանչցվեցավ 1885-ին, Թուրքիո հայոց նույն տարվան գրականությանը վրա իր մեկ տեսությամբը։ Այս առթիվ Եղիա Տեմիրճիպաշյան «Երկրագունդին» մեջ կը գրեր. «Եվ խսկույն ավելցնեմ, թե՝ հույժ սիրեցի «Մասիսի» սույն տեսությունն անցյալ ամի գրականության վրա։ Քաջ հայագետի մը գրվածն էր. հասուն մտքի ծնունդ և վարժ գրչի արդյունք։ Անտարակույս, ավելի պիտի սիրեի սույն հոդվածն, եթե գտնեի հոն ինչ որ ամեն բանե վեր կը սիրեմ գրականության մեջ— երա՞զ։ Այլ պ. Լևոն Բաշալյան կարող քան երազող միտք մը կ՚երևի։ Զի հեռանար նյութեն. չի մոլորիր անձնական դժվար անել-այլև հեշտագին— ճամփուն մեջ։ Կարգավորություն իր նախադասությանց մեջ, կարգապահություն իր բոլոր հոդվածոց մեջ կը տիրե»։

Այս գովեստը, որ տասնութ տարեկան պատանիի մը կը տրվեր, պարզապես բարեկամական քաջալերանքի նպատակավ չէր այլ՝ հոդվածին թողած տպավորության ճշմարիտ գնահատումը։ Բաշալյան իր թարմ հասակին մեջ իսկ ուշադրություն կը գրավեր մտքին հասունությամբը։ Ու միշտ մնաց լավ խորհող, լավ դատող, լավ կշռող գրագետը։ Այնինչ դպրոցեն շրջանավարտ ելած, կը մտնե «Մասիսի» խմբագրության մեջ 1884 հունվար 1-ին։ Վեց ամիս ետքը, երբ երկու թերթերը կը միանան,

Բաշալյան կ'անցնի «Արևելքին» իր հետ տանելով խմբագրական վեցամյա վարժություն մը, որով «Արևելքին» մեծ ծառայություն կը մատուցանե։ Հայերենի հմուտ, գրասեր ճաշակով օժտված, գրելու կոչում ունեցող, ու միանգամայն շատ համակրելի երիտասարդ, շուտով իր շուրջը կը հավաքե իրեն տարեկիցները, և իրմե տարեցները, և ամենքը միասին մեր գրականության նոր զարկ մը կուտան։ Բաշալյան այլևայլ նյութերու վրա գրած է, բայց առայժմ իր վիպակներուն վրա միայն պիտի խոսինք։

Թիֆլիսի «Մուրճ» հանդեսը 1901—1902-ին հրատարակել սկսավ, «Պատմվածք» վերնագրով ու Լևոն Բաշալյան ստորագրությամբ, շարք մը վիպակներ, որոնց առաջինը «Ղալաթիո րէսթը» եղավ։ Այդ վիպակները առենոք Պոլսո «Մասիս» ու «Հայրենիք» թերթերուն մեջ երևցած էին. առանձին հատորով ալ պիտի տպագրվեին Կովկաս, հանգամանքները այդ խորհրդին իրականացումը արգելեցին։ «Մուրճ» կանգ չառավ «արդեն հրատարակված են» նկատողության առջև, և իր ընթերցողներուն հրամցուց վիպակներ, որոնք 1888-են կը թվագրին, ինչպես «Րեսթը»։ Այս հյուրասիրությամբ շատ պատվաբեր է երիտասարդ հեղինակին համար։ Անտարակույս այս վիպակները պետք է ներքին անժխտելի արժանիք մը ունեցած ըլլան, որպեսզի ծանր ամսաթերթի մը խմբագրությունն ալ արտատպումի բացառիկ պատիվը անոնց ընծայե։ Բաշալյան նորավեպեր գրել սկսած է, երբ հազիվ տասնութը տասնինը տարեկան էր, ու անշուշտ անոնք գեղարվեստական կատարելագործյալ էջեր չեն ներկայացներ։ «Կաղանդը», «Ցեղին ձայնը», որոնք 1898-ին հրատարակվեցան, երբ Բաշալյանին 1888—92-ի գործերուն հետ բաղդատվին, արվեստագետին առաջադիմությունը անմիջապես աչքի կը զարնե։ Եվ սակայն, այդ նորավեպերը իրենց երևման թվականեն տասնչորս տարի ետքն ալ թարմություննին տակավին կը պահեն և ախորժանքով կը կարդացվին իբրև նորություններ, վասնզի անոնց մեջ գաղափար մը կը տիրե, սիրտ մը կը բաբախե, ու արվեստը կ'իշխե։ Կյանքի պատկերներն են կենսաբուխ գեղեցկությամբ։ Զոհրապին առթիվ ինչ որ ըսինք, նույնը կը կրկնենք. այդ վիպակներուն գաղափարական և գեղարվեստական աղվորություններն աղեկ մը հասկցնելու համար, զանոնք հարկ պիտի ըլլար մեկիկ-մեկիկ վերլուծել։ Ուրեմն քանի մը դիտողություններով բավականանք։

Բաշալյան իր վիպակներուն մեջ միշտ եղբայրական գուրգուրանքով քնքուն սիրտ մը ունի երիտասարդներուն համար. ա՛յն երիտասարդներուն, որոնք դեռ պատանի կրնան սեպվիլ։ Սրտեն խանդակաթ սեր կը ծորի անոնց համար։ Կյանքի մեջ անոնց կրած հուսախաբությանցը

վրա կը գթա, ու երիտասարդները երազանքներու վտանգին դեմ պաշտպանել կ՚ուզե։ «Հմայաթափը» երազել տվող բանաստեղծություն մըն է, որ սակայն երիտասարդը երազանքեն չհաղթվելու, չընկճվելու նախատեսությամբ կը սպառազինե։ «Ա՞յս է եղերը»՝ բնապաշտական մերկությամբ գրված՝ երիտասարդներուն աչքին առջև կը դնե կնոջ մը համար իր կյանքը ջախջախելու, խորտակելու հիմարությունը, որ «ա՞յս է եղեր» զարմացական հարցումով կը վերջանա, ու կը վերջացնե կյանքը շատ անգամ ալ։

«Ղալաթիո ռեսթը» իմաստասիրական վիպակ մըն է։ Հեղինակը, հայ ցեղին ինքնապաշտպանությունը ապահովող մեծկակ մեկ ուժը զորեղ նկարագրի տեր երիտասարդի մը մեջ կը մարմնացնե։ Դարերը թե՛ղ հոլովին, հայը երբ իր հայրենի հավատքին վրա հաստատուն մնալու համար ամեն զոհողություն հանձն կ՚առնե, ժամանակեն չի վախնար, կը դիմանա և կը շարունակե իբր ցեղ ապրիլ։

«Ռեսթին» նյութը կնճռոտ չէ։ Լուսավորչական որբ տղա մը կ՚որդեգրվի իր հորեղբորմեն, որ բողոքականացած հարուստ մըն է։ Կը ղրկվի Պոլսո ամերիկյան Րոպերթ քոլեճը, ուր քանի մը լեզու սորվելե և բավական ուսում ստանալե հետո, շրջանավարտ դուրս կ՚ելլե։ Իր բողոքական հորեղբայրը կ՚ուզե, որ եղբորորդին դավանափոխ ըլլա, որպեսզի ինքն ալ անոր գործ տա, զայն իր տունը ընդունի. բայց շրջանավարտը այս առաջարկը կը մերժե. անգործ, անոթի, թշվառ կը մնա, բայց հավատքին վրան ալ հաստատուն։

Այդ երիտասարդին հոգեբանությունը զուտ հայազգասիրական է։ Այո՛, ուսում առած է, և հավանորեն շատ ջերմեռանդ երիտասարդ մըն ալ ըլլալու չէ. կրոնափոխությամբը իր ընտանիքեն գլխացավանք ալ պիտի չունենա, բայց և այնպես ռևէ փորձության կը դիմադրե և խեղճության մեջ կ՚ապրի, վասնզի ցեղին ձայնն է, որ իր սրտին մեջ կը խոսի։ Հավատքը, զոր պիտի ուրանա, իր սեփականությունը չէ, իր համոզումին ծնունդը չէ, այլ՝ իրեն ավանդ ձգված ժառանգություն մըն է, զայն ինքն ալ հավատարմաբար իր զավկին փոխանցելու համար։ Իր հայրերուն հավատքն է։ Հայրը մեռած ատենը իրեն կտակ մը ըրեր է. թե հայ հավատքին վրա հաստատուն պիտի մնա։ Ողջությանն ալ միշտ երկու խոսքին մեկը կ՚ըսե եղեր «պապերուդ հավատքին վրա խավի կեցիր, օղլո՛ւմ»։ Ընկերաբանական իմաստասիրության «մեռածները մեզի ըրած են ա՛յն, ինչ որ ենք» սկզբունքի հավաստումը։

Այս պատմվածքին նյութը ինչպես որ կնճռոտ չէ, նաև նորություն մըն ալ չէ, բայց վիպագրի մը տաղանդը զորավոր կ՚երևի, երբ անիկա

կը հաջողի, պարզ նյութ մը պատմելով, ընթերցողին սիրտը գրավել ու մտքին ցնցողական զարկ մը տալ։

Այս վիպակը 1889 սեպտեմբերին կը հրատարակվեր, այն թվականին, երբ կրակը ա՛լ հոգիները կ'առներ, ու մեծ դեպքերու նախընթաց օրերն էին։ Ցեղին ինքնապահպանության ամեն միջոցներուն վրա կը խորհվեր։ Հիները, ծերացածներն ալ թունդ ելան, կազդուրվեցան ու նորերը սիրեցին, երբ տեսան թե այդ նոր պատանեկությունը թեև ուսում առացած, թեև Եվրոպան սիրող, բայց ա՛ն ալ կը զգար, որ ցեղ մը իր հավատքովը կը պահպանվի։ Մինչև այդ օրը ոչ մեկ գրագետ ազգային կրոնքին դատը այնքան հուժկու պերճախոսությամբ պաշտպանած էր, որքան երիտասարդ Բաշալյանը։ Իր գործը սովոր բան մը չէր. հազիվ քանի մը հարյուր տող. բայց ո՛չ քարոզ էր, ո՛չ խմբագրական առաջնորդող։ Սերը վիճաբանություն չի վերցներ։ Եվ «Բէխթը» գնաց, սփռվեցավ Հայաստան. խանդաղատեց, գորովեց, գրավեց, սրտապնդե՛ց երիտասարդն ու ծերը։ Եվ ամոթահար սարսնցուց ամեն անոնք որ «հանուն ճշմարտության» մը կը հետամտեին տկարացնել ազգ մը, երբ անիկա իր գոյության համար գերագույն կռիվը կը մղեր ու պետք ուներ ազգային հավատքովը զորանալու։

Բաշալյան երբ հայոց հին հավատքին իբր ախոյան մը հրապարակ նետվելով, բարոյական պատերազմի մեջ անոր հաղթանակին համար կը գրեր, միևնույն ատեն, ուրիշ պատերազմներու նախազգացությամբն ալ մտահոգ, իր պատմվածքներովը ազգին մարմնական կորովը կը պանծացներ ու կը սիրցներ։ «Խաչախճին» ու «Տերտերին ուխտը» եռանդ եռևեկան ու փառաբանեցին զենք գործածել գիտցողները, տգետ երիտասարդը, որ կռվիլ գիտե, ու հայ տերտերը, որ իր հրացանը չի մոռնար։ Ասոնք վաղվան հայերը պիտի ըլլային, և գրականությունը զիրենք ժողովուրդին ներկայացուց, երբ դեռ չէին երևցած։ «Տերտերին ուխտը» կրնար և ավելի ճշգրտորեն՝ հրացանամոլ տերտերը կոչվիլ։ Անոր մեջեն ցցնցվեցավ տող մը, որ արգարություն մըն էր, «տերտեր, քու հրացանդ մեջի պե՛տք է»։ Դեռ քանի մը օր ալ, ու այդ հրացանը պիտի պայթեր. առաջնուց ազդարարություն մը վտանգավոր էր։

Ինչ որ ալ ըլլան իր գրչեն ելած նյութերը, Բաշալյան միշտ ազնըվական ոճով կը գրե, կրնամ ըսել՝ նաև ազնվապետական։ Ոճը իր արժանապատվությունը կը պահե նույնիսկ էն խեղճուկ կնոջ նկարագրության մեջ։ Ու միթե ազքատները, թշվառները չունի՞ն իրենց հատուկ արժանապատվությունը, որ զիրենք ակնածելի կ'ընծայե։

* * *

Տիգրան Կամսարական միակ նոր գրագետն է, որ մեծկակ վեպով մը ներկայացավ։ Իր «Վարժապետին աղջիկը» 1887-ին «Արևելքի» մեջ իբր թերթոն երևնալե հետո, առանձին հատորով ալ հրատարակված է։ Այդ գիրքը հիմակ կարդացող քննադատ մը, գրական ինչքան թերությանց ալ հանդիպի, բայց պիտի չկարենա մտքեն անցընել, թե տասնութ-տասնինը տարեկան պատանիի մը հեղինակությունը եղած ըլլա։

Ամեն անոնք, որ գրականության մեջ թևակոխեցին, երբ դեռ այնքան թարմ էր իրենց տարիքը, ու հաջողած գրվածներով ուշադրության գրավեցին, տարակույս չկա, թե անոնք օժտված էին բնատուր ձիրքերով, զոր կրթությամբ պիտի կատարելագործեին, ժամանակին հետ։ Կամսարական հոգեբան ծնած է. մեծ վեպին մեջ, իր հոգեբան դիտողի հատկությունը ակներև կը տեսնվի, թեև բարգավաճման համար տակավին ատեն ունեցած չըլլա։ Նաև տարտղնած միտք մը չէ, այլ՝ ինքնամփոփ։ Խորհելու և իմաստասիրելու ընդունակությունը ցույց կու տա, ու եթե վիպասանության մեջ մեկէնիմեկ մեծ դռնեն մտնելու անհամբերությունը ունեցած է, պատճառն այն է, որ երևակայությունը զինքը անհանգիստ ըրած է, զայն գոհացնել ուզած է։ Բուխ, դյուրազգաց սիրտ մըն է, ու Տոտե և Լոթի դյութիչ հմայքով մը զինքը իրենցը ըրած են։ Բայց, իբր արվեստագետ, իր նուրբ և սրբատաշ ոճը Կոնքուռներու աշակերտող մը կը հիշեցնե։ Պարբերություններ կան, զոր հասկնալու համար պետք է կանգ առնել և մտածել։

Երիտասարդ հեղինակը հետո տվավ վիպակներ ու գրական էջեր, որոնք զինքը մեր գեղարվեստական առաջնակարգ գրողներեն մեկը ըրին, և սակայն «Վարժապետին աղջիկը» ոչ միայն նոր երիտասարդներուն համակրալիր գնահատմանը արժանացավ, այլև՝ հին գրողներն ալ գոհացուց։ Մարկոս Աղաբեկյանց՝ պատմագետ ու ժողովրդական գրականության սիրող մը, տեսակ մը արհամարհանքով կը վերաբերվեր դեպի նոր գրականությունը. ուստի և «Վարժապետին աղջիկն» ալ կարդալ չէր ուզած. բարեկամներու թախանձանքով կը սկսի կարդալ, ու անհատ ոքանչացած կը հայտարարե, «թե Թուրքիո հայերը իրենց Աբովյանը պիտի ունենան»։ Բաղդատությունը շատ ճիշտ չէր. հեղինակը իր ներկայացուցած տիպարները իրենց միջավայրին բարբառովը խոսեցնել կու տար, ինչ որ «ժողովուրդի լեզու» կը կոչվի. ասկե՝ Աբովյանի հետ շփոթություն մը։ Ու հետո, արևմտյան բարքերուն մեջ նոր սովորություն մը սկսած էր մտնել. Թուրքիացի գրող մը գովելու համար զայն Ռուսիո հայու մը հետ կը բաղդատեին։ Առաջ, Թուրքիացի հայ գրագետի մը

համար կ՚ըսվեր՝ «մեր Վիկտոր Հյուգո՜ն է, մեր Լամարթինն է»․ ետքէն կ՚ըսվեր՝ «մեր Աբովյա՜նն է, մեր Արծրունի՜ն է, մեր Րաֆֆի՜ն է»։

«Վարժապետին աղջիկը» սովոր հատորեն նկարագրական գեղեցիկ էջերու հավաքածու մը կարելի է հանել։ Այդ հատորը միշտ հաճույքով պիտի կարդացվի, իբրև մեր նրբին գրականության ծագման օրերուն կորիզը։

* * *

«Արևելքին» ու «Մասիսին» քրոնիկագիրը այդ թերթերուն մեջ հրատարակեց շարք մը վիպակներ, որոնք ընկերական զանազան խնդիրներ կը հուզեին՝ ամուսնական, բանվորական, կրթական և այլն։ Այդ նորավեպերը ընդհանրապես թույլ ոճով գրված են, գրեթե ամենուն ալ սկզբնավորությունները ըստ բավականին խնամյալ կ՚երևին, բայց աճապարանքին խթանը շուտով կը տեսնվի։ Ասոնք իբր գրական գործ թեև շատ պակասավոր են, սակայն իրենց հարձակողական առաջադրությամբը աղմուկ հարուցին, իրենց կարգին իրենք ալ ծանր հարձակում կրելով։

* * *

Վիպագրությունը, տիկին Տյուսաբեն զատ, 1884—1890-ի շրջանին համար այս չորս անունները կը հիշատակե միայն, իբր հանրության ուշադրությունը իրենց վրա կեդրոնացնողներ։

Հիմակ, այդ ժամանակվան վեպերը կամ վիպակները քննած ատեններս, անոնց ոճն ու գեղարվեստն խստապահանջությամբ նկատողության կ՚առնենք. բայց տասնհինգ քսան տարի առաջ, երբ վեպը կովազան էր, քննադատները ավելի անոր գաղափարներով, բարոյականությամբը կամ անբարոյականությամբը կը զբաղեին քան թե գրականությամբը։ Ժողովուրդն ալ, որ արվեստագետ մը չէ, իր ուշադրությունը նյութին կը նվիրեր։ Հազիվ թե Եղիա Տեմիրճիպաշյան մը, իբր քննադատ, գրվածքի մը մեջ արվեստին կատարելագործությունը կամ տկարությունը մատնանիշ կ՚ըներ, երբեմն երբեմն։ Գրականության մեջ արվեստի նախանձախնդիր երիտասարդները հազիվ թե պատրաստվիլ կը սկսեին։ Դեռ քանի մը տարի սպասելու է մինչև որ «նորագույններեն» Արշակ Չոպանյան էսթետիկը հայ քննադատության համար նոր փորձաքար մը համարի։ Բայց այդ 1884—1890-են ամեն գաղափար, որ էսթետիկ գրականությամբ հայտնված է, անիկա ժամանակին դիմագրաված է ու պիտի դիմագրավե։

Նաև դիտելի է, որ վիպասանները, ընդհանրապէս, տկար արարածներու համար հակում ունին, և վէպերը մեծ մասամբ դժբախտութիւններով կը վերջանան, ընթերցողը տրտմութեան մէջ թաղելով։ Այս դիտողութիւնը բրած են կովկասցի քննադատներն ալ, այն հազվադեպ պարագաներուն մէջ, երբ Արևմտեան հայ գրականութեան վրայ խօսելու առիթը ունեցեր են։ Մենք, նոր գրագէտներուն գրչին ներքև կեանքի այս հոռետեսութիւնը պարզ մեկնութեամբ մը կը բացատրենք։ Անոնց վիպասանութիւնը քանդումի և վերաշինութեան նպատակ մը առաջադրած է. և որպէսզի այդ նպատակին հասնին, հարկ է որ սրտերը հուզէն և անոր խռովութիւնովը իշխեն մտքերու վրայ։ Եթե իրականութիւնը հրճվանքի տեսարաններ պարզեր միայն, արդարը՝ հաղթական, անիրավը՝ կործանած, բարին՝ բարձրագլուխ, չարը՝ գետնամած, ո՛չ հարստահարող, ո՛չ հարստահարեալ, այն ատեն ոչ ոք պիտի ըմբոստանար սրտեն ու մտքեն, ու անբնական երևույթ մը պիտի թվիր հոռետես գրականութիւնը, որ կը հուզէ, կը գրգռէ, կը զայրացնէ։

Սակայն որքան ավելի կը մոտենանք դէպի 1890, գրականութիւնն ալ իր ամբողջութեանը մէջ և հատկապէս վիպասանութեամբը, հետզհետէ կը խորխտանա և լավատես կը դառնայ։ Կռիվներու նախընթաց օրերը, ժողովուրդը պէտք է, որ ինքն իր մէջ վստահութիւն զգայ։ «Տերտերին ուխտը» արդեն գետին ինկած հրացանը նորեն վեր կը վերցվի, նորեն ձեռք կ՚առնվի։

Թատերգութիւնը նոր գրականութեան մէջ ուէ բաժին մը չունի։ Թատրոնները փակված են. երբեմն երբեմն եվրոպական լեզուէ դաշույնի և թույնի դրամ մը թարգմանվելով, կը ներկայացվի ի նպաստ բարեգործական հաստատութեան մը, բայց ազգային միտքը բան մը չի ծներ։

Պատմագրութիւնն ալ փառավոր մասնակցութեամբ մը չի ներկայանար. կառավարական խստութիւնները արգելք են անկախորեն ուէ լուրջ ուսումնասիրութեան։ Գարագաշեան իր քննական հայոց պատմութեան երկրորդ հատորը կը հարկադրվի Թիֆլիս տպագրել տալ։

Սակայն կարևոր և հիշատակութեան շատ արժանիքի գործ մըն է Ազգային հիվանդանոցին կես դարու երկհատոր պատմութիւնը, զոր Բյուզանդ Քեչյան գրեց։ Ս. Փրկչին հաստատութիւնը, Ղազեզ ամիրային օրով հիմնված, անխափան կը շարունակվի մինչև մեր օրերը, ժամանակին հետ բարեփոխվելով։ Քեչյան, հիվանդանոցին հոգաբարձութեան հանձնարարութեամբը և ընձեռած դյուրութիւններովը, ամբողջական պատմութիւն մը գրեց մանրակրկիտ քննութեամբ և բազմակողմանի ուսումնասիրութեամբ։ Այդ գործը պատմական նյութերու բազմ-

հարուստ հավաքածու մըն է, կանոնավոր դասակարգությամբ, դյուրահասկանալի լեզվով գրված։ Սակայն զարգացած մտքով ընթերցող մը, որ մեծ պատմագրության ընտելացած է, Քեչյանին երկասիրությունը ավարտելե հետո կը զգա թե իր կարդացածը տեղեկություններու ընդարձակ օրագրություն մըն է, բայց ո՛չ այն պատմությունը, որ մտածել կուտա և կը հուզե։ Հեղինակը ո՛չ իմաստասիրող է, ո՛չ բանաստեղծ։

Ազգային հիվանդանոցին պատմությունը Պոլսո հայոց ազգային կյանքին ամբողջությանը էական մասն է։ Ամիրա, էֆենդի, խմբագիր, վաճառական, էրիկ մարդ ու կին հետզհետե՝ այդ հաստատության վարիչները եղած են։ Անոր որբանոցին մեջ մեծցած ու կրթված են շատ մը հայեր, մասնավորապես հայաստանցիներ, որոնց մեկ մասը ազգային կյանքին մեջ կարևոր դիրքեր գրաված են։ Քեչյանին գրքին մեջ որքան անուններ կը բախին ականջիդ. կ՚ըղձայիր ճանչնալ անոնց դեմքերը, շոշափել հոգիները, աչքերուդ առջև տեսնել սրտերը։ Հայաստանեն եկած կամ Պոլսեն եղող հայեր, Եվրոպա կրթվածներ, այլազան գործ ու պաշտոն ունեցողներ, հավաքվեր են այդ շենքին շուրջը քանի մը սերունդով։ Հոն հայը առաջադիմական երևցեր է ու նախապաշարյալ, համեստ ու վախկոտ, կռվող ու ստորնացող, բարի ու չար, դրական ու վերացական։ Հո՛ն է ցեղը իր առաքինություններովը, իր տկարություններովը, և սակայն բան մը չես տեսներ. պատմաբանը քեզի բան մը չ՚իմացներ, եթե դուն արդեն տեղյակ չես։ Ու արցունք մը չկա։ Պատմաբանը քաղաքական խմբագիր կը մնա։

Կենսագրական գրականությունն ալ կրնանք պատմականին մեկ ճյուղը համարել։ Այս սեռը եթե ոչ առատորեն, բայց բավական հաջողությամբ ու նորությամբ մշակվեցավ, ընդհանրապես քրոնիկին հետ խառնված։ Ավելի կամ նվազ ծանոթ մեկը երբ պաշտոնի կը կոչվեր, նոր գործով մը իր վրա ուշադրություն կը հրավիրեր, կամ մանավանդ երբ մեկը կը մեռներ, քրոնիկն ալ կը սկսեր անոր անցյալը պրպտել, քննություններ կատարել, ապրած ժամանակը ուսումնասիրել ու հակիրճ և ամփոփ ուրվագծերով հանրության առջև դնել ամբողջ կյանք մը։ Կենսագրական քրոնիկն ալ իր ժպտուն, սգավոր, հեգնող, զգայնիկ, բանաստեղծ և իմաստասեր խառնվածքովը, նոր գրականության մեկ առանձնահատկությունը կը համարվի։ Հրանդ գրեց ջղուտ ոճով, բայց ո՛չ «Պանդուխտի կյանքին» պես զգացյալ. Տեմիրճիպաշյան սքանչելի էջեր ունի, Պերպերյան՝ հորդահոս վարդապետական մը, Հրանդ Ասատուր՝ դասական, և Օտյանի նվիրած կենսագրական-քրոնիկին մեջ վսեմ ու զգայնիկ. Բաշալյանին շատ մը էջերը կրնան ազվոր քրոնիկներ համարվիլ. «Արևելք» ու «Մասիս» իրենց հատուկ քրոնիկագիրը ունեցան։

իսկ Մամուրյան թեև նոր չէր, բայց գերազանց տաղանդ երևցուց մերթ ընդ մերթ։

Երգիծաբանությունն ալ քրոնիկին ու վեպին մեջ խառնվեցավ, իրեն սեփական կռվանը ունենալով հանդերձ։ Պաշտոնական երգիծաբանը Պարոնյանն էր, որ թեև երիտասարդ, բայց «հիներեն» կը սեպվեր, վաղուց գրող մը ըլլալուն։ Երգիծաբանությունը նոր թվականի մը մեջ՝ այլևս իր գրչին տակ զենք մը չեղավ։ Նպատակի մը նկրտող, գաղափարի մը ծառայող, սիրո և ատելության կրքերով բորբոքված գրագետը չէր, կամ չէր մնացած։ «Մեղուին» և «Թատրոնին» ազգային-քաղաքական խմբագիրը՝ «Լույսին» ու «Խիկարին» մեջ շա՛տ սրամիտ, բայց անմեղ կատակաբան մըն էր։ Ամենքը զինքը կը սիրեին, ուստի և վախցնող, ահաբեկող ուժ մը չէր կրնար համարվիլ։

Պոլիս ունեցանք նաև «Հնչակը» խմբագրությամբ Տիրան Փափազյանի։ Զվարճացնող, խնդացնող զավեշտաթերթ մը։

Ազգային-քաղաքական երգիծաբանականը մթագնած էր։ Ատենոք զանազան թերթեր գրական այդ սեռը սքանչելապես մշակած էին։ Այսպես՝ Սվաճյանին ու Պարոնյանին «Մեղուները», Պարոնյանին՝ «Թատրոնը», Այվազյանին՝ «Մամուլը», Հաճյանին՝ «Միմոսը», սակայն 1876-են հետո թուրք կառավարությունը երգիծաբանության վրա հաշտ աչքերով չնայեցավ. զայն հետզհետե տկարացուց, մինչև որ ռևէ լեզվով երգիծաբանական թերթի հրատարակությունը արգիլվեցավ։ «Խիկար», «Հնչակ» զոհվածներուն մեջ էին։ Կառավարությունը օրագիրներուն ալ չթույլատրեց հեգնական հոդվածներու սպրդումը։ Սակայն հայ ժողովուրդը առանց երգիծականի չէր կրնար մնալ, վասնզի իր ազգային եռուն զեռուն կյանքը կը շարունակեր, մինչ թուրքերը այլևս կը դադրեին հանրային կյանքով մը ապրելե։ Հայ երգիծաբանությունը իրեն համար նոր ապաստանարան մը ստեղծեց, և իր հնարամտությամբը ինքզինքը կառավարության աչքեն ծածկեց։ Վիպասանությունը հեգնաբան եղավ. ծաղրեց անձերը, դրությունները, հաստատությունները։ «Ներսեսը», «Մեծղա Տերը», «Ղալաթիո բեսթը» շատ պիտի տկարանային առանց անոնց մեջ տիրապետող դառնահոգի ու վրիժառու երգիծականին։ Գրագետները ուր, որ կրցին սպրդեցնել, սպրդեցուցին հեգնությունը։ Բաշալյան՝ «Թափառիկ» կեղծ անունով՝ գրեց «Վանդակեն դուրս» քրոնիկները, որոնք Ազգային ժողովին ծաղրանկարները եղան, և ծռմռկելով դիմքերը, շարժումները, խոսքերը, հաջողեցան իրենց ներքին էությանը մեջ ցույց տալ պատրիարք, եպիսկոպոս, բեյ, էֆենդի, ժողովական։ «Արևելքի» ու «Մասիսի» երգիծաբանական քրոնիկներն ալ շատ աղմուկ հարուցին, շատ թշնամություններ առաջ բերին։

Կառավարական արգելքներուն շնորհիվ ստեղծվեցավ նաև նոր երգիծականը, որուն գլխավոր հատկանիշն է հայտնի չընել, թե երգիծական է։ Օրվան դեպքերուն առթիվ պարզ պատմություն մը կը հրատարակվի, որ անմեղ սուտ մըն է։ Ընթերցողները զայն կը սկսին կարդալ ու իբր ճշմարտություն մը «կլլել». բայց ինչ-ինչ ակնարկություններ կասկած կ'արթնցնեն. կարդացողը կը շփոթի, սուտը իրավը իրարմե չի կրնար որոշել. հոդվածը կամ «պատմվածքը» խոսակցության, մեկնության տեղի կու տա, ու վերջապես ամեն ինչ կը հասկցվի։ Թուրքիո հայերը կամաց կամաց այս «նենգամտության» վարժվեցան ու անկե ախորժեցան։ Գրաքննությունը կարող չեղավ «պլակը» արգիլել, վասնզի անոնք իբր իրական դեպքեր կը պատմվեին, որոնք գուցե սխալ ըլլային, բայց օրագիր մը միշտ անսխալ տեղեկություններ չէ, որ կը հաղորդե։ «Խմբագրություն մը, կը հայտարարեին թերթերը իրենց գրաքննիչին, իր սխալ լուրերուն համար ոևէ պատասխանատվության ներքև չէ, եթե անոնք կառավարական նկատառումներու չեն հակառակիր, ու ոչ ոքի ալ չեն վնասեր»։ «Արևելք» ու «Մասիս» շատ զգուշավոր եղան, որպեսզի չըլլա թե երգիծականի համար հիմնական ու անհաղթելի արգելքներու հանդիպին։ Շատ չանցած երևան պիտի գար մեր արդի էն նշանավոր հեգնաբանը՝ Երվանդ Օտյան, որ այդ միջոցին դեռ պատանյակ, գրչի առաջին փորձեր կ'ըներ։

Բանաստեղծությունը փառքի տիտղոսներով չի հիշատակվիր։ Ազգային երգը, որ սրտերու թռիչ տված էր ու երևակայությունները բորբոքած, առանց նշանավոր գործ մը արտադրելու, նոր գրականության մեջ անշուշտ ուրիշ սեռերու համահավասար պիտի զարգանար, եթե տարապայման խստությունները չծանրանային իր վրա։ «Մասիս» 1887-ին, երբ դեռ հայ օրագրության վրա նախարգել գրաքննություն չէր հաստատված, կ'ողբար երգին մահը. «Խեղճ երգեր, կ'աղաղակեր, այժմ հալածական ու վտարանդի, ո՞վ պիտի պատմե այն ամեն ներշնչումները, զոր դուք ազդած եք հայ ժողովուրդին, ո՞վ պիտի պրպտե հայրենյաց ամեն անկյունները, ինչպես դուք կը հսկեք հայության պահպանումին»։

Հայրենասիրական բանաստեղծությունը թևակոտր կը մնար. և ժողովուրդը անոր կարոտը կը քաշեր. սիրայիններն ու հովվերգականները իր սիրտը չէին կրնար հագեցնել։ Ազգային երգին տեղ գոնե ժողովրդական երգը բռնել տալու փորձը եղավ։ Հայաստանի ժողովրդական բանաստեղծությունները հետզհետե «Մասիսի» մեջ հրատարակվեցան ու այս սեռին մոտեցող նոր տաղեր ալ հետևողականությամբ կամ

ստեղծմամբ գրվեցան։ Միհրան Հովհաննիսյան 1888-ին հրատարակեց «Թամկին սփոփանքը», որոնք պարզ ու ժողովրդական լեզվով Հայաստանի զանազան նահանգներու տեղական բարբառներով խառն ոտանավորներ էին և հաճությամբ կարդացվեցան։ Այդ «նորության» վրան ալ գաղափար մը տալու համար առաջ կը բերենք Եղիա Տեմիրճիպաշյանին գրադատականեն քանի մը տող։ Այս արտագրությունները միանգամայն առիթ մըն է նաև գործնական գաղափար մը տալու Տեմիրճիպաշյանին «պերճ գրական» ոճին վրա, որմե հիմնովին կը տարբերի նորերուն գրելու եղանակը։

«Միհրան Հովհաննեսյան, կը գրե Տեմիրճիպաշյան, կ'երևի 1888-ին, նոր հայ գրականությունն նոր հոսանքե մը կը մղվի, վերջնադարյան։ Ինչ կ'ըսեմ, դարավերջյան հոսանքն այն հորդահոս, որ կը սպառնա պեղել ու պղծել դասականության ալ, վիպականության ալ ավազանն, ու գորշ կմախն այլանդակ փոխանցել բարեձև վարդագույն մարմնեկին, կամ տափակ տրմուղ տրտմատեսիլ իրականությունն ի դահ բարձրացնել փոխանակ երևակայության, որ իր անսահման լուսափետուր թևոց մեջ կը պարփակե երկիր և երկին, արտն ու անդն, և մանավանդ Անդրագույնն»։

Մկրտիչ Աճեմյան, երկար ատենե ի վեր գրող բանաստեղծ մը, շարունակեց իր սրտի երգերը, որոնք «Լույս և Ստվեր» անուն հատորով մը հրատարակվեցան։

Սակայն բանաստեղծությունն ալ իր բոլոր կաշկանդումներուն մեջ ճիգ մը ըրավ նորություն մը առաջ բերելու, և ունեցանք Ալեքսանդր Փանոսյանը։ Այս երիտասարդ գրողը ո՛չ սրտի քնարերգակն է, ոչ ալ հայրենասիրության երգիչը, այլ պարզապես տաղաչափ երգիծաբան է։ Արվեստի գաղտնիք մը ունի, որուն շնորհիվ իր ճյուղին մեջ եզական գրող մըն է։ Երկու նույնահանգ բառեր իրարու զարնել տալով՝ անոնց բախումեն դիմագիծ մը, շարժում մը, պատկեր մը, նկարագիր մը, գաղափար մը դուրս կը ցատկեցնե։ Կը զարմացնե, կը գրավե, կը հրճվեցնե։ Աչքեդ արցունք մը կը բերե, բայց միշտ ծիծաղի արցունք մը։ Իր հանգերը, որ հասարակ ու սովորական չեն, անլուր ու խրթին բառերու հանդիպումներե չեն ծներ։ Ոճին ու լեզվին պես հանգերն ալ այնքան նոր են, որքան բնական։

Այս շրջանին մեջ հայրենագիտությունն ալ բավական մշակվեցավ, մասնավորապես Գարեգին եպիսկոպոս Սրվանձտյանցին աշխատասիրություններովը, որոնք քիչ շատ փոփոխությամբ հրատարակվելու բախտավորությունը ունեցան, երբ դեռ կանխարգել գրաքննությունը տարա-

պայման խստությամբ ճղակտոր չէր ըներ հայերեն գիրքը։ Սրվանձտյանցին մեկ հրատարակությանը՝ «Համով հոտովին» առթիվ, Գրիգոր Օտյան հեղինակին նամակ մը գրելով կ՚ըսեր. «Ձեր ոճին մեջ՝ հայոց կռապաշտական դարերուն մոգությունն ու դյութությունը կա. ձեր զգացումներն ու մտածությունները՝ քրիստոնեական դարերուն սրբությունն ու կուսությունը ունին... դուք ոչ իբրև բնագետ ու բնալույծ կը պտտիք ու կը դատեք ծառն ու քարը, հողն ու ջուրը. դուք հոգի կը տեսնեք ամեն բանի մեջ, և եթե բան մը հոգի չունի՝ դուք հոգի կուտաք անոր»։ Այս գնահատումը ճիշտ է։ Սրվանձտյանցին գրքերը մեր բանաստեղծական հրատարակությանց շարքը կարելի է դասել։

Հայաստանցի ուրիշ գրող մը՝ Տուտուխյան՝ երկրին տնտեսական, ընկերական, մտավորական կյանքը բազմակողմանի քննությամբ ուսումնասիրեց «Հայաստանի կյանքեն» իր հոդվածներովը, որոնք «Արևելքի» մեջ հրատարակվեցան։ Այդ բաղեշցի երիտասարդը լավ գերմաներեն գիտեր ու զարգացած էր։ Իր բոլոր տեսությունները կարգավոր, կանոնավոր, դրական մտքով կը պատրաստեր։ Դժբախտություն է, որ այդ գեղեցիկ, պարզ, հստակ ոճով գրված շահեկան հոդվածները մոռցված կը մնան թերթերու մեջ։

Հայաստանեն ուրիշ երիտասարդներ ալ սկսան գրել։ Ղազարոս Նահապետյան «Բնության սոխակները» հրատարակեց։ Այդ գրվածքին արժանիքը ինչ որ ալ ըլլար, բայց Հայաստանի կյանքեն պատկերներ կը ներկայացներ, ահա ինչ որ պետք էր մեզի։ Տարոնցի Գեղամ իր համբավավոր տեղագրությունները սկսավ։ Հարությունյան՝ որ տարիներ ետքը հոյակապ գրող մը պիտի ըլլար և զուտ հայաստանցի գրագետ մը, իր նախափորձերը տվավ։ Այս անունները պիտի լսենք հաջորդ շրջանին, որ 1891-են կը սկսի և կը շարունակվի մինչև հիմակ։ Հայաստանցի գրողները մասամբ պիտի դարմանեին այն դժբախտությունը, զոր վերև հիշեցինք, այն է՝ օտար հողի վրա ազգային գրականության օտար սննդառությամբ աճումն ու զարգացումը։

* * *

Թուրքիո հայոց մամուլը 1884—1890-ին միայն «Արևելքի» ու «Մասիսի» մեջ չէր պարփակվեր. ուրիշ թերթեր ու պարբերականներ ալ կը հրատարակվեին։ Թերթերուն մեկ մասը, և բազմաթիվը՝ հայատառ թուրքերեններն էին, երեք հատ, որոնց մեջ հայերեն հոդվածներ ալ կը հրատարակվեին, բայց առանց դրական ուղղության մը հետևելու, առանց

մասնավոր նշանակություն մը ունենալու կամ նորություն մը ցուցաբերելու։ Իբրև պարբերական՝ «Արևելյան մամուլը», «Երկրագունդը», «Գրական և իմաստասիրական շարժումը» ունեցանք։ Առաջինը Իզմիր կը տպագրվեր, անխնամ խմբագրությամբ. վիճաբանությանց, անձնական կռիվներու հավաքածու մըն էր. գրական ուղղության վարիչ մը չէր։ Ամեն անոնք, որ Թուրքիո հայոց վերջին քսան տարիներու մտավորական շարժումին վրա կը խոսին, «Արևելյան մամուլին», դիմում չեն ըներ։

«Երկրագունդը»՝ հրատարակություն Ասիական ընկերության՝ ամսաթերթ մըն էր, որուն առաջին թիվերը վաթսունական թվականին Մանչեսթր երևցած էին Շահնազարյան վարդապետեն. Հետո դեպի 1870 Պոլիս Շահնազարյան վարժարանին աշակերտներուն խմբագրությամբը շարունակվեցավ։ Իսկ 1883-ին Խասգեղ թաղին Ասիական ընկերության անցավ։ Տարի մը Պարոնյան եղավ անոր խմբագիրը, բայց ուշագրավ բան մը երևան չհանեց. 1884-ին Տեմիրճիպաշյան Պարոնյանին հաջորդեց. ամսաթերթերը ավելի գրականացավ, բայց լոկ խմբագրին հոդվածներովը։ Հավաքածուին մեջ մեկ քանի շահեկան նյութերու կարելի է հանդիպիլ, սակայն թվականի մը բացումը ազդարարող լույս մը չ՚ընդնշմարվիր անոր մեջ։

«Գրական և իմաստասիրական շարժումն» ալ ամսաթերթ մըն էր Տեմիրճիպաշյանին խմբագրությամբը, և անոր գրականություններովը լեցված։ Բայց այդ գրագետը հրապարակն այնքան ողողած էր, որ իրմեն հատկապես թերթ մը նորություն մը չէր և կարևորություն չէր կրնար ստանալ։ Իրավ է, որ «Շարժումը» աղվոր հատվածներ կը պարունակե, բայց հանդեսի մը մեջ, որ նոր թվականի մը կը հրատարակվի, մեր փնտրածը քանի մը ավելի կամ նվազ գեղեցիկ հոդվածներ չեն, այլ՝ ոգի մը, գաղափար մը, ուղղություն մը, ըլլա՛ պահպանողական, ըլլա առաջադիմական։ Ու Տեմիրճիպաշյան ո՛չ մեկն էր, ո՛չ մյուսը։ Ու հետո, երբեք կարելի չէր, որ այդ հասունացած երիտասարդին ազդեցությունը տարածվեր նորերուն վրա, որոնք գրական, իմաստասիրական, ազգային-քաղաքական հավատքով լեցված էին։ «Ո՜հ, կ՚աղաղակեր, մի՛ խոսքերս ի համար առնուք, մի՛ կարդաք զիս։ Մտացս ոսկրազոդք կը քայքայվին, հիմարության սահմանաց վրա կը գտնվիմ... Եվ միթե չե՞մ մանրանկարն իննետասներորդ դարու մարդկության...»։ Պետք չուներ հանձնարարելու, որ իր խոսքերը նկատողության չառնեն։ Երբ ասիացի խեղճուկ հայ մը ինքզինքը տասնևիններորդ դարու մարդկության իբր

մեկ մանրանկարը կը ներկայացնե, ալ ո՛չ ոք իրեն կարևորություն կու տա, վասնզի ինքն իր վրա կը խնդացնե։

«Երկրագունդն» ու «Շարժումը» հատուկ արտոնագրով հրատարակվող թերթեր չէին, այլ իբր տետրակ հրապարակ կ'ելլեին, հանրային կրթության պաշտոնատան գրաքննությամբը։ Օրին մեկն ալ կառավարությունը ռևէ լեզվով այդ տեսակ տետրակներու տպագրությունը արգիլեց, ու վերոհիշյալ երկու ամսաթերթերն ալ դադրեցան։ Կը վերադառնանք ուրեմն «Արևելքի» և «Մասիսի»։

Ռուսահայոց մտավորականության հետ սերտ հարաբերություններ հաստատելու ձգտումը հիշեցինք, բայց մեր տեղեկությունները առկախ թողուցինք. շարունակենք։

Արևմտյան գրականության նոր վարիչները մտածեցին, թե լուրջ բան մը ըրած պիտի չըլլան, եթե Արևելյան հայոց քանի մը անունները, քանի մը նմուշները երբեմն Թուրքիո հայոց ծանոթացնեն. ավելի՛ բազմակողմանի ծրագրով մը աշխատիլ կ'ուզեին, որպեսզի Թուրքիո հայերը հիմնական տեղեկություններ ստանալով, կարողանային Ռուսիո հայոց մտավորական ու բարոյական կյանքին գիտակցորեն հետամտիլ։ Եվ բավական չէին համարեր ռուսահայերը ճանչցնել միայն։ Ո՞չ ապաքեն անոնք ռուսական գրականության, ռուսական մտքին, ռուսական բարքերուն ազդեցությունը կը կրեին։ Թուրքիո հայերը, որպեսզի Ռուսիո հայերը կարենան ուսումնասիրել, պետք էր, որ նույնիսկ ռուսներուն վրա որոշ գաղափար մը կազմեին։ «Արևելք» ու «Մասիս» իրենց այս մտածությունները, 1884-են սկսյալ, աստիճանաբար գործադրեցին։ Ետքեն, երբ մտքերը ա՛լ բավական ընտելացած էին Արևելյան հայոց կյանքին, այդ գործադրության դրված ծրագիրն ալ «Մասիսի» մեջ հրատարակվեցավ ամփոփ համառոտությամբ, որպեսզի գործին ամբողջությունը ընթերցողներուն հստակորեն ըմբռնել տա։ Ահավասիկ այդ հայտարարությունը.

«Մասիսի» ծրագրին մեջ է գծագրել Արարատ-կովկասյան կյանքի ամբողջ պատկերն։ Առ այդ անհրաժեշտ է մեկ կողմեն ուսումնասիրել ռուսական ոգին, ռուսական գրականությունը, օրենքները և կառավարական ուղղությունը, որպեսզի կարելի ըլլա գիտնալ, թե ինչ ազդեցության ներքև կը զարգանան Արարատ-կովկասյան հայերը։ Մյուս կողմեն պետք է գիտնալ այդ հայերուն մոտավոր անցյալը, հիշատակները ու

ավանդությունները, ճանչնալ անոնց գրականությունը, հմտանալ այն ամեն ընկերական խնդիրներուն, որոնց հոգածությունը ունին։

«Մասիսի» խմբագիրները սկսած են կատարել այս աշխատություն-ները։ Արդեն հրատարակվեցավ Արարատ-կովկասյան գրականության մասին առաջին հոդված մը. սկսան հրատարակվիլ ժողովրդական հի-շատակներ և պիտի շարունակվին։ Այսօր ալ կը սկսվի նոր շարք մը հոդվածներու՝ ռուսական կյանքի և գրականության վրա»։

Հոդվածներու այդ շարքը կը գրեր Լևոն Բաշալյան, ամփոփելով Վոկյուեի «Ռուսական վեպը», որ այդ միջոցին նոր հրատարակված էր ու մեծ համբավ կը վայելեր, նույնիսկ ֆրանսացիներուն իբր նորու-թյուն մը ճանչցնելով ռուսական ոգին ու գրականությունը։ Ասկե զատ, նաև ռուսագետ երիտասարդ մըն ալ՝ Գևորգյան ճեմարանին աշակերտ՝ իբր մշտական աշխատակից մը, «Արևելքի» ու «Մասիսի» մեջ ռուս թեր-թերե, հանդեսներե, գրքերե թարգմանություններ և ուսումնասիրու-թյուններ կը հրատարակեր։ Ուրիշներ ալ ֆրանսերենին օգնությամբ Տուրգենևը, Դոստոևսկին, Պուշկինը, Լերմոնտովը կը ծանոթացնեին։ Խմբագիրները ուսումնասիրություններ կը կատարեին եկեղեցական օրի-նական խնդիրներու վրա ու ժողովուրդը կը լուսաբանեին հարցերու շուրջ, որոնց մասին երկար ատենե ի վեր շարունակ խոսված էր, առանց անոնց էությունը գիտնալու։ Շատ թղթակցություններ կ՚ընդունվեին Պե-տերբուրգեն, Մոսկվայեն, Թիֆլիսեն։

Ռուսահայոց անցյալ ու ժամանակակից կյանքը իր բազմազան երե-վույթներուն մեջ կ՚ուսումնասիրվի։ Չկա ռուսահայոց մեջ կարևոր խնդիր մը, որ ընդարձակորեն չքննվի նույնիսկ թրքահայ գրողներեն ու հաճախ Արևմտյան հայերը իրենք իրենց մեջ վեճի կը բռնվին ռուսահայոց այն-պիսի գործերու մասին, որոնք անդին կարևորություն չեն ստացած։ Հրա-տարակվելու կոչված «Աշխատանք» թերթի մը խմբագրին հիվանդու-թյունը, այս առթիվ հիվանդանոցեն հայտարարությունները, Թիֆլիսեն Պոլիս։ «Արևելքի» մեջ Ծերենցի հետ բուռն վիճաբանություններու տեղի կու տա։ Զորավարներ, եկեղեցականներ, գործիչներ հետզհետե կը ծա-նոթացվին։ Րաֆֆիի վերաբերմամբ շահագրգռական տեղեկություններ կը հաղորդվին, Սունդուկյանցը կը ծանոթացվի, Չմշկյանը կը նկարագրվի, Լեո՝ դեռ նոր մը՝ և արդեն իր ապագան կը գուշակվի և իր վրա ընդար-ձակորեն կը խոսվի։

Ռուսահայ գրագետներուն գրքերուն, հոդվածներուն վրա քաղաքար-ներ կը տրվին, արտատպումներով հանդերձ։ «Մասիս» կը հրատարակե Գամառ Քաթիպայի անտիպ բանաստեղծությունները։ Գրիգոր Նիկողոս-յան կ՚աշխատակցի երկու թերթերուն։ Վրթանես Փափազյան իր «Գնանք

ընթրել» վեպը «Մասիսին» կու տա։ Լեռենց «Մասիսի» մեջ երևան կու գա, և անոր խմբագիրներուն սիրտը կը գրավե։ Ու դեռ 1890-ի ժամը չզարկած, 1885 դեկտեմբերին Լեռենց «Մասիսի» մեջ կը զարնե.

Զարկ... արդարության զոչյունը խլացուր,
Անմեղներու ողբն ձայնովդ մեռցուր,
Կռի՞ր երկաթը, է՞հ, ամո՛փ կռիր,
Սուտ գլխիդ համար կացին պատրաստիր։

Ապագային գաղափարակցությունը արդեն կը սկսի գրականությամբ։ Իսկ Գրիգոր Արծրունի Զվիցերիայեն ուղղակի «Արևելքին» ու «Մասիսին» կը գրե։

Կը մտնենք 1890 թվականը. արդեն երկու տարիե ի վեր «Արևելք» ու «Մասիս» իրարմե անջատված էին, միևնույն խմբագրատան մեջ, միևնույն վարչությամբ հրատարակվելով հանդերձ։ Գրական խումբը ամբողջովին «Մասիսի» հետ էր, և անոր մեջ կը գրեր։ Իր խմբագիրներեն երեքը իրենց գրական շրջանակեն դուրս ելլելով հանրային գործունյա կյանքի մըն ալ մասնակիցներ էին, թերթն ալ այդ կյանքին ազդարարը ընելով։ Մուսա բեյին դատաստանեն հետո, արդեն ազգային մեծ տագնապ մը կը գուշակվեր. Էրզրումի ջարդը, որ 1890 հունիսին տեղի ունեցավ, փութացուց պայթումը և պատահեցավ 1890 հուլիս 15-ը։ Պոլիս խռովահույզ կյանքով մը կ'ապրեր։ Ձերբակալություն, բանտարկություն, աքսոր, կախաղան ժողովուրդը սարսափի մեջ կը պահեին։ Հուլիս 15-են մինչև հոկտեմբերի 15, ճիշտ երեք ամիս, «Մասիս» անվրդով կը շարունակե իր դերը, հուսադրելով, խրախուսելով, ներշնչելով, գրգռելով ժողովուրդը։ Առանց երկյուղի կը հրատարակե «Մշեցի բանվորին արցունքը» Հակոբ Պատրիկյան ստորագրությամբ։ Այդ անունը քանի մը օրեն նշանակություն մը պիտի ունենա։ Հոկտեմբեր 1-ին կը ձերբակալվին «Մասիսի» երեք խմբագիրներուն հետ մոտեն հարաբերություն ունեցող անձեր. շաբաթաթերթին վերջին թիվը, որ հոկտեմբեր 15 թվականը կը կրե, հոկտեմբեր 20-ին հրապարակ կ'ելլե. խմբագիրներեն մին առջի օրը բանտարկված է. մյուսն ալ երկու օր վերջը կը մեկնի, ու «Մասիս» կը դադրի։ Իր գրական խումբը այլևս չի գրեր։ «Արևելք», որ 1890 փետրվարեն ի վեր զուտ պահպանողական և ռեէ գաղափարև զուրկ վարչության մը ձեռքով կը հրատարակվեր ու Քեչյանին խմբագրությամբ, պարզապես գործի թերթի մը կը վերածվի։

Ազգային կյանքի նոր շրջանը, որ 1879-ին սկսած էր, կը հանգեր 1890 հուլիս 15-ին։ Գում-Գաբուի ցույցը անցյալի մը վերջակետն էր

ու ապագայի մը մեկնակետը։ Այդ օրը հայը նմանեցավ թշնամի բանակե մը պաշարյալ ժողովուրդի մը, որուն պահապան զինվորներեն սակավաձեռն ջոկատ մը կը մտաբերե և կը փորձե հանկարծական հարձակումով մը պաշարողները անհաբեկել և նահանջի պարտավորել։ Չի հաջողիր. բավական կորուստ տալե հետո կը վերադառնա իր պարիսպներուն մեջ, որպեսզի նոր պատրաստություններ տեսնե, նորեն հարձակի, փրկե երկիրն ու ժողովուրդը։ Բայց պաշարող թշնամին, որուն աչքերը բացված են, ավելի արթուն կը հսկե. պաշարյալներն ալ պարտավոր են քաջ ըլլալե առաջ վարպետ ըլլալ. պիտի ջանան իրենց ռազմական հատակագիծները գաղտնի պահել։ Գրականությունը, որ ցույցին օրը ծանրապես վտանգված էր ու վնասված, նորեն ինքզինքը պիտի գտնե։ Պիտի մտնե պաշարված ժողովուրդին մեջ, պիտի անցնի անոր գլուխը։

Գրական ուժերը, որ 1890 հոկտեմբերին քայքայված էին, նորեն իրար պիտի գտնեն, բայց ո՛չ «Արևելքին» կամ «Մասիսին» շուրջը. նոր կենտրոն մը պիտի հաստատվի։

Այդ շրջանին պատմությունը կը պահենք ուրիշ տեսության մը. անոր մեջ պիտի հիշատակենք անունները կարգ մը գրողներու, որոնք ուշագրավ դեմքեր կը հանդիսանան։

«Բանբեր գրականության և արվեստի»

Բ գիրք
1904, Ս. Պետերբուրգ

ԳՐԱԿԱՆ ՀՈՒՇՔԵՐ

Ա

Արևմտյան հայոց հիմակվան գրականության սկզբնավորությունը 1890-են կարելի է թվագրել. առաջին հանգրվանը դեպի նոր կյանքի մը ժամադրավայրը։

Այդ գրականությունը պարբերական մամուլին մեջ օթևանեցավ և տակավին հոն ասպնջականիլ կը շարունակե, ո՛չ միայն Պոլիս և Իզմիր, այլև արտասահման ալ։ Եթե գիրքը, նույնիսկ խեղճուկրակ հատոր մը, Թուրքիո մեջ՝ տպագրական տարապայման խստությանց երեսեն, անհամեմատ դժվարությանց կը հանդիպի հրապարակ ելլելու համար, գիրքը՝ հրատարակման և տարածման դյուրություններ չի վայելեր Եվրոպա, Ամերիկա, Եգիպտոս, ուր հայ գրագետին գրիչը ոևէ կաշկանդումի հար-

կազմված չէ։ Օրվան մտատանջանքները շատ կը դժվարացնեն ծնունդն այնպիսի երկասիրության, որոնք երկարատև աշխատությամբ կը պատրաստվին։ Եվ մինչ պարբերական մամուլը ծովեր ու ցամաքներ կտրելով՝ թեթևաթռիչ կը վազվռտե Ամերիկայեն Եգիպտոս, Եգիպտոսեն Ամերիկա, գիրքը հոգատար խնամակալներու կը կարոտի, որպեսզի զինքը մեկ երկրեն ուրիշ երկիր մը փոխադրեն և տեղ մը հանգչեցնեն։

Կ. Պոլիս 1890-ին հայերեն մեկ օրաթերթ կանոնավորապես և լրջորեն կը հրատարակվեր՝ «Արևելքը» և մեկ ալ ազգային-գրական երկշաբաթաթերթ մը՝ «Մասիսը»: Այս հանդեսը, որ 1889 սեպտեմբերեն սկսյալ, գրագետներու խումբի մը գրական ու քաղաքական բերանն էր, դադրեցավ 1890 հոկտեմբեր 15-ին, իր գլխավոր խմբագիրներուն բանտարկությամբն ու տարագիր ցրվելովը։

«Մասիսին» աներևութացման դժբախտությամբը, Թուրքիո հայոց մտքին գերագույն վարիչը «Արևելքը» կը ներկայանար, Բյուզանդ Քեչյանեն ներշնչյալ։ Երիտասարդ և հանրածանոթ հրապարակագիրը, թեև «Արևելքին» 1884-են ի վեր կ՚աշխատակցեր իբր «գլխավոր խմբագիր», բայց վարչական մարմնի մը անտանելի հսկողությունը իր մտքին վրա կը ծանրանար միշտ, սակայն 1890 ամի փետրվարին՝ «Արևելքի» վարչական մարմնին կրած փոփոխություններովը, «գլխավոր խմբագիրն» ալ հետզհետե դեպի անկախություն կը դիմեր, մինչև որ Նախ—էջին բացարձակորեն տիրապետեց. երկրորդ և երրորդ երեսները թեև իրենց անկախությունը պահել կը նկրտեին, բայց Քեչյանի ազդեցությունը թերթին ամբողջությանը մեջ կը սողոսկեր։

Կ. Պոլսո այժմու մեծագույն օրագրին՝ «Բյուզանդիոնին» տեր և խմբագիրը, հետ քառորդ դարու մը հրապարակագրության, դեռ մինչև այսօր ալ ոևէ որոշ գաղափարի մը դրոշակիրը չի ներկայանար, ո՛չ առաջադիմական, ո՛չ հետամնաց, ո՛չ պահպանողական, ո՛չ ազատական։ Հրապարակագրին կոչումը փաստաբանական գործի հետ շփոթմամբ, կը կարծե մերթ այս դատին պաշտպան հանդիսանալ, մերթ այն, առանց ոևէ անպատեհության, ըստ պահանջման օրվան նկատումներուն։ Գեղեցիկ գրականության, գեղարվեստի, գաղափարական թռիչնի բնազդմամբ՝ հակառակորդ, այդ շատ «գործնական» խմբագիրը հաջողեցավ ամենակարճ ժամանակամիջոցի մը մեջ «Արևելքի» ճակատին վրա կոխել տալ «Նպարավաճառ թերթի» դատակնիքը։

«Մասիսին» դադարմամբը, գրագետ երիտասարդությունը՝ անտուն, անտեղ, անօթևան, անապաստան կը մնար։ Գրականությունը չգիտցավ տպնջականություն խնդրել թերթ մը, որուն խմբագրապետը հանրային միտքը կը ջանար սատամոքսասեր մղել, հայ ժողովուրդը հեռու պահելու

համար գաղափարական թռիչներու փորձանքներեն. ուղեղին ու սրտին տեղ՝ փորն ու որովայնը,— ներվի բնապաշտ բացատրություն։ Եվ հայ ժողովուրդն ալ չէր հանդուրժեր կաշկանդվիլ որովայնասեր մամուլի մը եռւեն, վասնզի նոր կյանքի մը արեւածագը կը նշողեր։ Ժողովուրդը իր հավատարժարժ մամուլին վերածննդյանը կ՚ակնկալեր անձկակարոտ։ Կը սպասեր մարդու մը, կը սպասեր թերթի մը։ Մարդն ալ եկավ, թերթն ալ։ Մարդը՝ Հովհաննես Շահնազարը, թերթը՝ «Հայրենիքը»։

***

Բանտերուն դուռները այն ինչ կիսով մը բացվեցան 1891 հունվար 5-ին, վերածնության թերթի մը ստեղծման գաղափարը կայծակեց Հովհաննես Շահնազարի մտքին մեջ։ Երիտասարդ օրենսգետը գտավ «Արեւելքի» հիմնադիրներեն մին, որ դադրած «Մասիսին» խմբագրության ալ մասնակցած էր, և հետ կարճատև խորհրդակցության մը՝ որոշեց «Հայրենիքը» գնել։ Նոր «Հայրենիքը» հրատարակվեցավ 1891 հունիս 13—25-ին։

Հովհաննես Շահնազար Փարիզեն հինգ տարի առաջ Պոլիս վերադարձած էր, փաստաբանի վկայականով։ Շատ չանցած՝ իրեն կը հանձնըվեր բազմագումար դատ մը, զոր օսմանյան կառավարության դեմ կը բանար Հիրշ Պարոնը, սեփականատեր եվրոպական Թուրքիո երկաթուղիներուն։ Հռչակավոր եվրոպացիեն երիտասարդ հայ փաստաբանին ցույց տրված վստահությունը՝ գործի միջավայրերու ուշադրությունը անոր վրա դարձուց, ու մեծկակ դատեր իրեն կը տարվեին։ Եվ անհատ հանկարծ Շահնազարը խմբագրական ասպարեզին հետ կը փոխանակեր այն փաստաբանական ասպարեզը, որ այնքան շահավետ ապագայով մը ապահովյալ էր։

Նորեկ խմբագիրը հետը նաև հազար ոսկիի դրամագլուխ մը կը տաներ, «Հայրենիքին» հարատև հաջողության իբր երաշխավորություն։ Մինչև այդ ժամանակ՝ հայ մը թերթի արտոնատեր կը դառնար առանց ասպարեզ մը զոհելու. ու ո՛չ ոք ալ այնքան անխոհեմ եղած էր իր անձնական կարևոր մեկ գումարը հատկացնել հայկար թերթ մը հրատարակելու։

Թե՛ գործ, թե՛ դրամ զոհող այդ եզական— երևույթ խմբագիրը միանգամայն անձնավորություն մըն էր, բարձրագույն ուսումն ստացած։ Թուրքիո հայոց օրագրությունը առաջին անգամն էր, որ հրատարակիչ մը կ՚ունենար, համալսարանն շրջանավարտ։ Հմուտ գրագետներ հայ մամուլին մեջ խմբագրապետի պաշտոն վարած էին, ինչպես Տերոյենց,

Մամուրյան և ուրիշներ, բայց Մասնագետ—Համալսարանական մը՝ ոչ։

Հրապարակագրի և գրագետի հռչականուն համբավով սպառազինված չէր, երբ Շահնազար կու գար օրագրության մեջ խիզախել. երբ բարեկամներեն ոմանք միայն կը հիշեին, թե 1879-ին «Հենց» ու «***» ծածկանունով կրակոտ քանի մը հոդվածներ հրատարակած էր «Մշակին» մեջ։ Սրվանձտյանցին գրած և Մանանային ներմուծումներուն շարքը զետեղված խանդավառ նամակ մը ուսանողության օրերու հիշատակ մը կ՚արթնցներ։ Փարիզեն վերադարձին՝ «Արևելքին» պզտիկ պատմվածքներ տված էր, կամ գնահատումներ, որոնք իրենց կարճառոտության մեջ ցույց կուտային, թե երիտասարդ գրագետը «հասարակ տեղիքներե» սարսափող մըն է, ու մինչև իսկ ըմբոստ մը, որ չի հարգեր «անվիճելի» համարված «ճշմարտությունները»։ Բայց այդ «գրեթե անծանոթը» շատ պիտի չուշանար ինքզինքը ճանչցնել տալու։ Իր ուժանակ-պայթուցիկ գաղափարները ժողովուրդը կը սարսեին, կը ցնցեին, մինչև որ օր մը «Հայրենիքն» ալ օդը հանեցին։

Իրավաբանը նաև սիրող մըն էր ընկերաբանական ուսումներու, զորս կը մշակեր, ինչպես նաև քաղաքական տնտեսագիտության ալ, որուն ուսուցչի պաշտոնին կոչվեցավ Կեդրոնական վարժարանը, և հոն հզորապես նպաստեց գաղափարանվեր երիտասարդության մը փթթումին կամ պայթումին։ «Հայրենիքը» Շահնազարի տնօրինությամբը սքանչելապես ընկերվարական թերթը եղավ, անծայրածիր առաջադիմության նվիրված, որքան որ կը ներեր,— կամ որքան որ չէր ներեր,— Թուրքիո գրաքննությունը։ Հանդգնամիտ հրապարակագիրը մեր ընկերային և հանրային կյանքը ընկերվարի էլեկտրավառ լույսեն առաջնորդել ուզեց, ա՛լ բավական համարելով յուղասուն պլպլուն պատրույգը, ազգին աչքերը հավկուրող։

Անկախ մտքով երիտասարդ գրողները՝ աղվոր գրականության սիրատարփներու մտավորական վերածնունդի գաղափարին նվիրված, որոնք բացն էին մնացեր, որմեհետև կիսամսյակ «Մասիսը» ա՛լ չէր հրատարակվեր, այդ գրողները նորեն իրենց հոլարան մը գտան «Հայրենիքի» մեջ։

«Հայրենիքին» հրատարակվելեն վեց ամիս ետքը, 1892 հունվար 4-ին, «Մասիսը» վերստին հրապարակ ելավ, երեք շաբաթը անգամ մը հրատարակվող հանդես, խմբագրությամբ երիտասարդ երկու փաստաբան գրագետներու՝ Գրիգոր Զոհրապ և Հրանդ Ասատուր։

Նորագույն «Մասիսը» ուզեց պաշտոնաթերթ մը հռչակվիլ ավարտուն արվեստին, ուստի և ջանաց խույս տալ հանրային կյանքի մարտընչումներե, որոնք իր գեղատենչի հանգստությունը պիտի վրդովեին։

Բայց գրական և գեղարվեստական թերթ մը չէր կրնար թվականի մը տենդոտ մտքին հետ հոգեկան հաղորդակցութենե կտրված մնալ. իր հրատարակած կենսագրականները, գրական տեսությունները, պատմական ուսումնասիրությունները, բանաստեղծությունները, վիպակները, ամենքն ալ տևական հիշատակ մը թողուցին թե մտքերու, թե սրտերու մեջ։

«Հայրենիք» և «Մասիս» իրարու չհակառակեցան. գրական հանդեսին խմբագիրները կ'աշխատակցեին քաղաքական-ազգային օրաթերթին, որուն խմբագիրներն ալ «Մասիսին» մեջ կ'երևնային։ Այս գրական եղբայրակցությունը տևեց մինչև 1893-ին սկիզբները, երբ հանկարծ «Մասիսին» կողմեն «Հայրենիքին» դեմ անիմաստ հրատարակություն մը սիրալիր հարաբերությունները խզեց։ Բայց երկու թերթերուն անկախ աշխատակիցները իրենց գրական հարաբերությունները շարունակեցին ատեն մը ևս, մինչև որ 1893 օգոստոսին «Մասիսը» օրհասեցավ։ Տպագրական տեսչությունը գրական հանդեսը առժամյա դադարումի դատապարտած էր. թերթի խմբագրությունը այս առիթեն օգտվեցավ հրապարակեն քաշվելու համար։ «Մասիսը» գրասեր հասարակության հաճելի թերթ մը թեև, բայց իր երկու փաստաբան խմբագիրներուն շատ հոգնություն կը պատճառեր։ Սակայն այդ 1892-93-ի հավաքածոն գրական աղվոր հիշատակարան մը պիտի մնա, մեջեն ջնջելով անտեղի և անիմաստ երկու հոդված, որոնք թեթևամտության պահու մը «Հայրենիքին» դեմ արձակվեցան։

«Հայրենիքին» և «Մասիսին» հետ միաժամանակ հրատարակվող «Արևելքեն» զատ, ուրիշ հանդեսներ և հայատառ բայց թրքաբարբառ թերթեր ալ կը հրատարակվեին՝ «Արևելյան մամուլ», «Փունջ», «Ծաղիկ», «Բյուրակն», և «Մանզումե», «Ծիրիտե», «Մեճմուա»։ Ասոնց մեջ ալ երբեմն երբեմն գրական էջեր տեսնված են, բայց իբր դիպվածական բացառություն։ Մեր լավագույն գրողներուն մեծամասնությունը, 1890-են ասդին, «Հայրենիքին» և «Մասիսին» մեջ կրնանք գտնել։

Բ

Նորագույն գրականության շուրջը դեգերինք 1891-ի երկրորդ կեսեն, այսինքն թվականի մը, երբ «Հայրենիքը» կ'երևի և քիչ ետքը՝ Ասատուր-Զոհրապ «Մասիսը»։

Մեր գրական բեղմնավորությունը բռնադատ հանգստի պարտավորված էր 1890 հոկտեմբերեն մինչև 1891 հունիս։ Նորագույն գրողներեն մեկը՝ Արշակ Չոպանյան՝ այդ «ամլության շրջանին» վրա իր սկսնակի տպա-

վորությունը 1891 հունիսին արձանագրած է, ըսելով՝ «այն գրական ամլության հուսահատեցուցիչ շրջանին մեջ, հորում կ'ապրինք, մինչդեռ ծանոթ գրագետները մեծագույն մասամբ հրապարակեն քաշված են կամ երբեմն միայն հոն կ'երևեին»։ Բայց ահա այդ ծանոթ գրագետները խմբովին «Հայրենիք» կը փոխադրվին, իրենց գործը հոն շարունակելու համար, և ուր նորեկ գրողները պիտի գտնեն «գեղեցիկ շրջան մը», արդեն պատրաստված։ Միևնույն Չոպանյանը, մին այդ նորեկներեն, ահա ինչպես կը նկարագրե, 1891 հունիսին, այն գրական շրջանը, ուր իրենք ալ մտնել կուզան։ «Ու ահա կը ծագի այսօր իրապաշտ դպրոց մը, լեզուն հետզհետե կը ճշտվի, գրականությունը կը ճոխանա իսկատիպ գրվածներով. վեպեր, քրոնիկներ, նորավեպեր, ֆանթեզիներ կը սկսին երևիլ. հայ գրականության ամենեն հասուն (հասունություն, որ վաղահաս է) և ամենեն գեղեցիկ շրջանին մեջ կը գտնվինք»։

Այդ «հասուն շրջանի» գրագետներեն ոմանց վրա հաճախ խոսված է, ինչպես՝ Բաշալյան, Զոհրապ, Կամսարական. երեքն ալ գրեթե միևնույն ժամանակները երևցան, 1884—1885-ին բոլորտիքը. ասոնք, իբր արվեստագետ գրողներ, իրենց համբավը գլխավորապես վիպագրության կը պարտին։ Համառոտ հիշատակություններ ընենք «նորերուն»— բնականաբար՝ այդ թվականին մեջ դեռ «նոր»։ Անոնցմե ոմանք դեռ մինչև հիմակ ալ հինցած չեն համարվիր։

***

ՍԻՊԻԼ, *երբեմն օրիորդ Զապել Խանճյան և այժմ տիկին Հրանդ Ասատուր, արևմտյան հայ գրագետներուն շարքը առաջնակարգ դիրք կը գրավե, իսկ իբրև «կին հեղինակ» առաջին և անմրցակից։ Իրական կյանքի բանաստեղծն է, առանց իրար խառնակելու իրականություն և բնապաշտություն։ Ընթերցողը ցնցողական ստեղծագործություններով չի հափշտակեր և ոչ ալ մտքե չանցնելիք պատկերներով կը զմայլեցնե, բայց իր թախծության ու ցավերու երգերեն սրտահեշտ տրտմություն մը կը ցայտե։ Մեր այն սակավաթիվ տաղաչափներեն է, որոնք թույլ, տարտղնած չեն գրեր. ոտանավորի օրենքներուն քաջատեղյակ, զանոնք խղճմտորեն կը հարգե։ Վեպ մըն ալ գրած է 1890—91-ին, «Աղջկան մը սիրտը», առանձին հատորով ալ հրատարակված։ Հեղինակություն մը, ուր դեռատի գրագիտուհիին կարողությունները շատ տեղ երևան կու գան։ Այդ գրքին ընթերցումեն կարելի է գուշակել, թե տիկին Սիպիլ պիտի կրնար տաղանդավոր վիպագիր մը ըլլալ, եթե իր ուժերը մանր աշխատության շուրջը չսպառեր։ Իբրև գաղափարի հեղինակ, տիկին Հրանդ*

Ասատուր միջնորդ մըն է պահպանողականության ու առաջադիմության միջև. տնաշեն տանտիկին գրող մը և ոչ թե պոռչտող տնաքանդ մը։

ՏԻԿԻՆ ՄԱՐԻ ՍՎԱՃՅԱՆ *1896-ին Պոլսեն Փարիզ փոխադրվելով, մեր արդի կյանքեն վիպակներ գրեց, նյութ ընտրելով օրվան աղեխարշ դեպքերը։ Բայց նախ Պոլիս՝ «Հայրենիքին» մեջ երևցավ իր այն վեպը, որ կյանքի փորձառությամբ հոծ՝ բազմաշառաչ աղմուկով դղրդեցուց մասնավոր միջավայրեր, որոնց ընտանեկան բարքերը և ամուսնական տխուր կենցաղավարությունը կը լուսանկարեր կամ կը մթանկարեր։*

ԿԱԼԻԲՍՈ՝ *տիկին Մարի Պեյլերյան։ Հայ կինը տիկին Մարի Պեյլերյանին նախաձեռնությամբը իր առաջին «պաշտոնաթերթը» կ'ունենար՝ «Արտեմիսը», Եգիպտոս։ Բայց երբ ֆրանսուհիներն իսկ չկրցին իրենց «Լա ֆրոնտը» պահպանել, չզարմանանք, որ հայ կիներու թերթ մըն ալ ռոժամապես երևցած ըլլա, վերստին հրատարակման հուսադրությամբ։ Տիկին Պեյլերյան իր գրական առաջին փորձերը Պոլիս ըրած է, կրակոտ թվականի մը, 1892—95, մասնակցությամբ միանգամայն օրվան ծանր դեպքերուն։ Եգիպտոս փոխադրվելով, մինչև առանձին թերթ մը ունենալը, տեղական օրագիրներուն մեջ արձակ և ոտանավոր գրեց, տաք մտքով և ավելի տաք սրտով։*

ԱՆԱՅԻՍ՝ *տիկին Ավետիսյան, «Արևելքի» մեջ սկսավ գրել, մինչ տակավին օրիորդ Չոպանյան էր։ Անկե ի վեր պարբերաբար հոդվածներ կը հրատարակե, ջանալով հետզհետե ավելի նրբորեն և վայելչազարդ աշխարհաբար մը գրել, Ֆրանսայի ակնապաշտ գրականության հակած թեթև իմն։*

ՎԱՀՐԱՄ ՍՎԱՃՅԱՆ, *տիկին Մարի Սվաճյանին զավակը. երաժշտության սիրահար ու դաշնակահարության մեջ մեծ համբավով արվեստագետ, բայց նաև քաջ հայագետ, հմուտ ըլլալով ֆրանսերենի, իտալերենի, գերմաներենի։ Նախ իբր ոտանավոր գրող հայտնվեցավ, բայց վիպակներովն է, որ առաջնակարգ գրագետ մը հանդիսացավ Պոլիս, ուր «Հայրենիքին» մեջ փոքրիկ հրաշակերտներ թողած է**։

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՓԱՆՈՍՅԱՆ, *տաղաչափությամբ երգիծաբանը, չի վերլուծվիր. եզական երևույթ մը Պոլսո մամուլին մեջ, գյուտերուն նորությամբը և հանկարծականովը, հանգերուն երևակայությամբ՝ ընթերցողը կը խելահեղե։ Փանոսյան նաև քաջ ֆրանսագետ մըն է. ֆրանսերեն լեզվով իր բանաստեղծությունները ամեն անգամ, որ հրապարակ կելլեն՝ շատ համակիր ընդունելություն կը գտնեն։ Փարիզ 1884-ին «Պառնասի»*

---

* *Ծանոթ. «Գեղունիի» խմբագրության.— «Ասոր կը հաջորդե Երվանդ Օտյանի կենսագրությունը, սակայն ձեռագրի մեկ մասը կորսվելով՝ ստիպվեցանք դուրս թողուլ»։*

բացած գրական մրցակցության մասնակցող հարյուրեն ավելի բանաստեղծներուն մեջ Փանոսյան առաջիններեն հանդիսացավ՝ իր «Հուսահատություն» տրտմահոծ քերթվածովը։

ԳԱՌՆԻԿ ՖԸՆՏԳԼՅԱՆ, *Ասատուր-Ջոհրապ «Մասիսին» զորավիգներեն մին, կարևոր դիրք մը գրավեց գրական հայ խումբին մեջ, իր լեզվաբանական, ուսումնական և գրական հմտություններովը։ Վաճառական երիտասարդ մը, որ մեր հին պատմությունը և մատենագրությունը լավ ուսումնասիրած է. գրաբար հայերենի քաջատեղյակ, լավ գիտե նաև զանազան լեզուներ ալ։ Հիմակ Մանչեսթր առևտրական կարևոր տան մը թեև վարիչ, բայց և այնպես ժամանակ կը գտնե գրականության համար։ Թարգմանեց համբավավոր Օմար Խայամը, ու պարբերաբար հրապարակ կը հանե այլևայլ հոդվածներ, որոնք պատմական նյութեր կ'ուսումնասիրեն։*

ՀՐԱՆԴ ԱՍԱՏՈՒՐ *շատ երախտիք ունի մեր նոր աշխարհաբարին վրա, որ վերջին քսան տարվան ժամանակամիջոցին կամաց կամաց բարեշրջեցավ ու իր առաջխաղացությունը կը շարունակե։ Հրանդ Ասատուր այն սակավաթիվ գրողներեն է, որոնք կը տքնին— և կը հաջողին— ճշգրիտ քերականությամբ աշխարհաբար գրելու։ «Արևելքին», «Հայրենիքին» աշխատակից, ինչպես և «Մասիսին», որուն խմբագիր տնօրեններեն մին եղավ ժամանակ մը, շատ բան գրած է, բայց ուշագրավ գրագետ մըն է այն ուսումնասիրությանց մեջ, որոնք հմտություն կը պահանջեն։ Երբեմն ալ իր քրոնիկներուն մեջ տրտում բանաստեղծ մը, թերևս առանց իսկ անդրադառնալու։*

ՏԻԳՐԱՆ ԱՐՓԻԱՐՅԱՆ, *«Մասիս» շաբաթաթերթին հիմակվան խմբագիրը, կյանքի ջախջախվածներուն սիրահար գրագետն է. անոնց համար միշտ արցունք մը ունի։ Հյուծված պատանին մահճին վրա կը հառի, սիրտը անոր սրտին վրա կը դնե. գերեզմանները կը դեգերի ու կ'երազե։ Օրվան դժբախտութենե մը սիրտը վիրավորված, նույն րոպեին թուղթին վրա կը նետե սրտեն ցայտած վշտի արցունքը, առանց մտաբերելու թե գրականություն կ'ընե։ Մեր այն սակավաթիվ գրողներեն է, որոնց բոլոր հոդվածները հին թերթերու մեջ մոռցված մնալու դատապարտված չեն։ Իրմե հատոր մը պիտի մնա ապագային, հատոր մը՝ զոր պատանիները ուռենիներու ներքև նստած պիտի ուզեն կարդալ։*

ՀՈՎՍԵՓ ՅՈՒՍՈՒՖՅԱՆ, *«Արևելքին» սկզբնավորությանը՝ գիտական-գրական նոր ճյուղ մը ստեղծեց, որ թերթին գլխավոր հրապույրներեն մեկը մնաց երկար ատեն։*

ՏՈՔԹ. ԳՈԼՈԼՅԱՆ, *երիտասարդ բժիշկը Փարիզեն «Հայրենիքին» գրած առողջաբանական հոդվածներովը, իսկատիպ գրագետ երևան եկավ։*

Առողջաբանության մեջ գրական աղվորությունը երևույթ մըն էր, որ անշուշտ շատ սովորական չէր։

ՏԻՐԱՆ ՔԵԼԵԿՅԱՆ, Թուրքերեն լեզվով ականավոր հրապարակագիր, նշանավոր նաև հայ մամուլին մեջ, ուր «Հայրենիքին» տված բազմազան նյութերու վրա լրջամիտ տեսություններ, ժողովուրդին դյուրամատչելի, բայց հաճախ նաև գեղեցիկ գրականությամբ զարդարուն։

ՄՐՄՐՅԱՆ, հրատոշոր գրող, մարգարեաշունչ կրոնաբան, միստիք մը, ինչպես կ'երևի «Ալելուիա Երուսաղեմեն»։ Քաջ հայագետ։

ՆՇԱՆ ՃԻՎԱՆՅԱՆ, Հորո ծածկանունով, տարիներու ընթացքին հրատարակեց և մինչև հիմակ ալ կը շարունակե հրատարակել կրոնական-պատմական տեսություններ, բազմակողմանի հմտությամբ լեցուն։

ԱՐՇԱԿ ՉՈՊԱՆՅԱՆ, Պոլսո մամուլին մեջ երևցավ 1890-ին, մինչ Կեդրոնական վարժարանը դեռ ուսանող էր։ Դպրոցեն 1891-ին շրջանավարտ ելլելով, նախ «Արևելքին» ու ապա «Հայրենիքին» ու «Մասիսին» աշխատակից եղավ. պահ մը ալ «Ծաղիկ» հանդեսը իբր ամսաթերթ խմբագրեց։ Թեև գրականության համար հուսալիր ապագա մը կը խոստանար, բայց դեռատի գրողը հազիվ զարգանալ սկսած, ուզեց մեկեն ի մեկ փայլիլ մատենագրական ամեն ճյուղերուն մեջ. բայց ո՛չ մեկուն մեջ նշանավոր հետք մը թողուց, վասնզի միշտ հապճեպով կը գրե, շատ թերի ու երեսի հմտությամբ։ Մինչ այսօր կրնանք մեծ հաճույքով կարդալ Կամսարականին, Օտյանին, Զոհրապին, Բաշալյանին վիպակները, որոնք իրենց հրատարակման թվականեն տասնհինգ տարի ետքն ալ դեռ կրնան նորություն համարվել, կարելի չէ առանց ամենածանր ձանձրույթի թղթատել Չոպանյանի «Թուղթի փառքը»։ Իր ոտանավորներուն մեջ՝ Չոպանյան ուշադիր է տաղաչափության արհեստին, բայց իբր բանաստեղծ՝ շատ տկար մըն է։ «Հասարակ տեղիքներու սիրատարփ մը». ցո՜ւրտ զերթ գիշեր ու սգավոր՝ ինչպես բուն։ «Մահը» սև կմախային էակն է. հուրը՝ «հերարձակ ու կարմիր տարր», որ «անհամար թազուկներով չարագործ». արևն ալ՝ «առտուներն իր արյունոտ անկողնեն» կ'ելլե։ Ոտանավորներուն մեջ չես հանդիպիր պատկերի մը, մտածության մը, որ ուշադրությունդ գրավե։ Բացառություն եվրոպական ընթերցումներե վերհիշումներու համար։ Չոպանյան թեև տասըհինգ տարի է կը գրե, բայց մեր լեզվին, մեր գրականության ու մեր մտավորականության զարգացմանը օգտակար ծառայություն մը չէ կրցած մատուցանել, վասնզի անխնամ ոճով անհոգ գրող մըն է, շատ հարևանցի մտքերով*։

---

* Ծանոթ. «Գեղունիի» խմբագրության.— «Խիստ չէ՞ արդյոք քննադատությանը»։

ԲԱՐԹՈՂ ՇԱՀՐԻԿՅԱՆ, *Արմաշու դպրեվանքը քանի մը տարի ուսում ստանալե հետո, «Հայրենիքին» խմբագրությանը մասնակցեցավ, կը գրեր գլխավորապես կրոնական նյութերու վրա, «Կունծիկ աբեղա» անունով։ Կիրակի օրերը կը հրատարակեր կիրակնօրյա խոսքերը, որոնք շատ պարզ ու վայելուչ լեզվով կը բացատրեին քրիստոնեության ընկերաբանական իմաստասիրությունը։ Շնորհալի, փափուկ ու գրավիչ ոճով գրող մը, որուն մեծ ապագա պահված էր մեր գրականության մեջ, բայց մեղք, որ կարճ եղավ արևը խեղճ երիտասարդին։*

Պոլսական մամուլը, որ կը նկրտեր եվրոպական գրականության ազդեցությամբը բարգավաճիլ, այդ մամուլը առաջնորդ պիտի հանդիսանար Հայաստան ծնող գրասեր մտքերու։ Նոր շրջանին մեջ ունեցանք գրագետներ, ավելի կամ նվազ ուշագրավ, որոնցմե երեքը հիշեցնենք, շնորհիվ այն համբավին, զոր կը վայելեն նույնիսկ պոլսեցի շատ խըստապահանջ գրագետներուն մոտ։

ԹԼԿԱՏԻՆՑԻ, *Խարբերդեն։ Կորովալիր բանաստեղծ մըն է, արձակագիր, որ նախ «Հայրենիքին» մեջ երևաց։ Հայաստանի կյանքը խորապես ուսումնասիրած, երկրի լեզվին համովն ու հոտովը կը գրե, իրարու խառնելով երևակայության տեսիլք և իրականություն։ Շատ անգամ վսեմին սահմանները կ՚արշավե։ Ոճը, մերթ վայելչապես գեղահյուս պարբերություններու շարք մը, մերթ գնդակատիպ ձուլումներ կարճ, ինքնազուսպ, շեշտակի սուրացող։*

ՌՈՒԲԵՆ ԶԱՐԴԱՐՅԱՆ, *Խարբերդեն. երևցավ «Հայրենիքին» մեջ. նրբացած արվեստագետ. աշակերտ Լոթիի ու Տոտեի, զգայնիկ և՛ խորհող, ոճի հղկումին մինչև իսկ բծախնդիր մը։ Իր վիպակները տրտմաթաթավ ու կենսաբորբ գործեր են, որոնք որոշ թվականի մը գրականության «ինչուն» կը պարզեն։*

ԳԵՂԱՄ, *Տարոնեն. երևցավ «Մասիս» շաբաթաթերթին ու «Արևելք» օրագրին մեջ։ Նկարագրիչ մը Հայաստանի կյանքեն, տոհմական ոճով, լեզվով, զգացումներով։ Իր բազմազան ու բազմերփին գրությունները ընթերցողը ուխտավայրե մը գեղը կը փոխադրեն, գեղեն՝ քաղքի մը ժխորին մեջ կը նետեն, իր գրչին տակ ավանդությունները, պատրանքները, երազները, իրականությունները խառնամառն կու գան գրավել սրտերու հետ և մտքերն ալ։ Գեղամին հոդվածները ընդհանրապես երկայնաձիգ են, բայց միշտ հաճույքով կը կարդացվին նույնիսկ պոլսեցի գրագետներեն, որոնք եվրոպական մատենագրության մտերիմներն են։*

Արևմտյան հայ մամուլը՝ այն շրջանին մեջ, որ 1891-են կը սկսի, պարտավորվեցավ հետզհետե ավելի զգուշավոր վարմունքով վերաբերիլ դեպի Արևելյան հայուն կյանքը և գրականությունը։

Կ. Պոլսո և Իզմիրի մամուլները, 1890-ի դեպքերեն հետո, չշարունակեցին զբաղիլ Կովկասով։ «Հայրենիք» իրենը ըրավ այն ուղղությունը, որուն կը հետևեր երբեմն «Արևելք», Ռուսիո հայոց գործերուն մեջ։ Հռչակվեցավ «Պոլսո Մշակը», իսկ «Արևելքն» ու «Արևելյան մամուլը» Կովկասի պահպանողական կուսակցության հարեցան։ Տպագրական տեսչությունը ծայրահեղ խստության պետք չտեսավ. իսկ մամուլն ալ կովկասյան խնդիրները կ'ուսումնասիրեր զգուշավորությամբ։ Բայց 1892-են սկսյալ՝ կացությունը փոխվեցավ. կառավարությունը արգիլեց մինչև իսկ հիշատակությունը Թիֆլիսի հայ թերթերու անունին։ Միայն մաքսանենգությամբ հնարավոր էր անվնաս հոդված մը արտատպել թերթերե, որոնք գաղտագողի ստացված էին. բայց Թիֆլիսի հետ հարաբերությունները չխզվեցան. Կ. Պոլսո հետ «Մշակին» հարաբերությունները կը կեդրոնանային «Հայրենիքին» խմբագրատունը, ուրկե անընդհատ կը շարունակվեին թղթակցությունները դեպի Կովկաս։

Բայց Արևմտ. հայոց գրականությունը իր նոր ընթացքին մեջ կանգ առավ 1895-ի վերջին ամիսները։ Կառավարական խստությունները անհեղորեն ծանրացան մամուլին վրա, որուն խմբագիրները հուսախաբության ներքև ընկճված էին ժողովուրդին հետ։ «Հայրենիքի» 1895-ի դեկտեմբեր ամսվան վերջին օրերը խափանվեցավ անպայման ժամանակի մը համար. իր գլխավոր խմբագիրներեն ոմանք հարկադրվեցան Պոլիսը թողուլ, որպեսզի թերթին վերաբացումը հնարավոր ըլլա։ Այդ չուեն քանի մը ամիս հետո, առաջադիմական օրագիրը վերստին հրատարակման թույլտվություն կը ստանար, բայց ամսե մը ետքը կը ջնջվեր, իր տնօրենին՝ Հովհաննես Շահնազարին բանտարկությամբը ու հետո տարագրությամբը։

Այսպես ահա, գահավեժ անկումի, խուճապական տագնապի, արյուն արցունքի մեջ նսեմաստվեր կ'աղոտանար 1891—1895-ի մտավորական վերածնունդի արևածագը, որ սակայն անջնջելի հիշատակ մը կը թողուր, բեղմնավորման արտը պատրաստած։

«Գեղունի»
1905, թիվ 1—10

***

ԹՈՒՐՔԻՈ ՀԱՅՈՑ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

(1880—1900)

Ա

«Գեղունիին» մեջ ընդարձակ հոդվածով մը խոսեցանք Թուրքիո հայոց արդի գրականության վրա։ Մեր չուկետը եղավ 1850 թվականը, և կանգ առինք 1880-ին, Հիմա կ'ուզենք այդ ժամանակամիջոցեն մեկնելով հասնիլ մինչև մեր օրերը։ Բայց պետք կը զգանք «Գեղունիին» տեսությունը նախապես համառոտ մը ծանոթացնել «Բազմավեպի» ընթերցողներուն ալ, որպեսզի կարենան առանց դժվարության հետամըտել մեկ թվականեն մյուսին փոխանցմանը։

* * *

Թուրքիո հայոց մտավորական շարժումին կեդրոնավայրը Պոլիսը եղած է, վասնզի հոն կը կեդրոնանա իրենց տնտեսական և քաղաքական կյանքը։ Օսմանյան մայրաքաղաքը ընդհանուր ազգային կյանքին վրա գերազդեցիկ իշխանություն ունեցավ, շնորհիվ հոն հիմնված վարչական և կրոնական ազգային նոր իշխանության մը, որ Պատրիարքությունն է։

Մեր արդի գրականությունը երեք ճյուղավորմամբ զարգացավ. հայրենագիտական, թարգմանական, հրապարակագրական։ Մխիթարյանները մշակեցին առաջինը, տոհմային պատմության և լեզվի մեծամեծ հրատարակություններով, որոնց կցորդեցին դասական գրքերու հայացումը։ Իզմիր՝ եվրոպական արդի մատենագրությունը տարածեց մեր մեջ։ Կ. Պոլսո հատկանիշը հրապարակագրությունը եղավ։

Ինչ որ ընդհանուր առումով Թուրքիո հայոց գրականությունը կը կոչվի՝ պոլսականն է։ Հայաստան մատենագրություն չունի. գլխավորապես այն պատճառավ, որ հայրենի հողին վրա տպարանի հաստատությունը անհնարին եղած է։

Կ. Պոլսո գրականությունը հրապարակագրական եղավ և հրապարակագրական մնաց, վասնզի իրեն նպատակ մը առաջադրած էր՝ ցեղին վերածնունդը։ Հաջողությունը՝ մաքառում է։ Միևնույն ատեն հայ ժողովուրդը կ'ընդլայներ ազգայնության ըմբռնումը։ Լոկ պատմական-կրոնական հայրենիքի մը զգացումին կը միացներ պատմական-աշխարհական հայրենիքի մը գաղափարն ալ։ Օրագրություն, ատենաբանություն, թատրոն, բանաստեղծություն, միևնույն շարժումեն մղված կը առաջանային։ Եվրոպական դաստիարակությամբ զարգացած նոր երիտասարդություն մը այդ շարժումին վարիչն էր։

Պոլսո և Իզմիրի մտավորական շարժումին ամբողջությունը հատվածներու բաժնելով, յուրաքանչյուրը պատկերացուցինք իրեն հատուկ դեմքի մը ուրվագրությամբ։ Տեսանք, որ ազգային-կրոնական ավանդության անվթար պահպանումին ախոյանը կը կանգնի պրուսացի Տերոյենց Չամուրճի պատվելին, խավարյալներու պետը։ Լուսավորչականներուն կ'առաջնորդե Պալյան-Ռուսինյան-Օտյան գեղարվեստասերներու խումբը· Պեշիկթաշլյան՝ հայրենիքին երգիչն է. Սերենց-Շիշմանյան՝ վիպասանը։ Մամուրյան ու Չիլինկիրյան եվրոպական արդի գրականությունը կ'ընտելացնեն հայոց, ու միանգամայն նոր հրապարակագրության մը նախաձեռնությունը՝ կ'ունենան։ Դուրյան՝ սրտի բանաստեղծը։ Շահնազարյան վարդապետ՝ նոր տիպար եկեղեցականն է։ Մատաթյա Գարագաշյան հայոց պատմությունը գիտակորեն քննող կը հանդիսանա ու մեր նոր աշխարհաբարը գրաբարին մեջ կաղապարելու կը տքնի։

Այս դեմքերեն յուրաքանչյուրը խումբ մը կը ներկայացնե. այդ խումբերուն համախմբումը հայ մտավորականությունն է 1850-են 1880։

Բ

Քանի մը տարվան մեծամեծ դեպքերը Թուրքիո ընդհանուր վիճակը փոխած ըլլալով, բնականաբար հայ կյանքն ալ պիտի կրեր պատահարներուն հզոր ազդեցությունը։ Խաղաղության թվականը, որ 1888-են հետո կը բացվի, նոր կյանք մը կ'այգորե հայ ցեղին ալ։ Անոր հորիզոնը նոր արշալույսի մը ծագիլ կը թվի։ Զայն ավետողը պատրիարք մըն է։

Հայ ազգին պատրիարքե մը դեպի նոր կյանք այս առաջնորդությունը, արդեն կը հաստատե ժողովուրդին ու եկեղեցականության միջև հարաբերությանց բարեփոխումը։ Սահմանադրությունը վերջ մը դրած ըլլալով պատրիարքարանին միահեծան իշխանությանը, այլևս ո՛չ եկեղեցական, ո՛չ աշխարհական կրնան ժողովուրդը ճնշել։ Ատելության շարժառիթները օրե օր կը պակսին։ Միևնույն ատեն երկու ժողովրդական պատրիարք՝ Խրիմյան և Վարժապետյան՝ մտքի և սրտի հատկությանց շնորհիվ կը հաջողին պատրիարքությունը և հետը՝ եկեղեցականությունը հարգելի ընել։ Գում-Գաբու կը հառին ազգին ամեն ըղձանքները։

Սագըզ-Աղաճիի պատրիարքարանն ալ հանդարտած է։ Մաքառումները վերջացած են փոխադարձ զիջողություններով։ Նոր պետ մը՝ Ազարյան պատրիարք՝ հաշտարար քաղաքականությամբ մը ժողովուրդը կը սիրաշահի։

Վախճանի մը հանգած են ուրեմն այն բոլոր մարտնչումները որոնց

նպատակակետն էր ներքին բարեկարգություն, կամ ազգային-եկեղեցական իրավունքներու պաշտպանություն։

Վերջացեր են նաև կրոնական հալածանքները։ Աշխարհական հայրենիքի գաղափարը կը միացնե հայ ցեղը։ Նույնիսկ կրոնական իշխանությունները՝ Գում-Գաբու, Սազըզ-Աղաճ, Ֆինճանճըլար-Յոգուշը, այդ գաղափարին պաշտոն կը մատուցանեն։ Հայաստանի տնտեսական, բարոյական, մտավորական վիճակին հոգածությունը կը գրավե մտքերը։

Հայաստանը կը փնտռվի, ու հայրենագիտական գրականությունը կը զարգանա։ Հայաստանի հնախոսության հեղինակին հաջորդները մեզի կու տան Շիրակ, Սիսվան, Արարատ, Սիսական: Սրվանձտյանց գրչովը կը պեղե Հայաստանը ու կու տա Գրոց և Բրոց, Հնոց և Նորոց, Մանանա, Համով Հոտով, Թորոս Աղբար: Հայաստանի կյանքեն հայաստանցիի մը գրած վեպը կ'ունենանք, Սեդրակյանցի (Տեվկանց) Շահենը:

Հայրենի երկրին հին ու նոր կյանքի ուսումնասիրությունը օր մը ճամփա պիտի բանա զուտ հայկական կյանքե գրականության մը։ Առայժմ նոր գրականության հայացումը կը նախապատրաստե։ Օտար հողի վրա ծնած կամ հոն փոխադրված հայ միտքերը պիտի նմանին այն հայոց, որոնց հայերը օտար երկրի մեջ ատենոք մոռցեր են հայրենի ավանդություններ ու լեզու։ Օր մը իրենց թոռները վերստին կը հայանան, սպասելով հայրենիք վերադարձի օրվան։

Ընթերցող ժողովուրդին ճաշակն ալ նրբանալ սկսած է։ Թարգմանված գրքերը՝ ըլլան անոնք մեծ հեղինակություններ, ինչպես՝ Հյուգոյի «Թշվառները», ըլլան զբոսցնող վեպեր, ինչպես՝ Դյումայի «Մոնտե Քրիստոն», հայ միտքը քիչ շատ ընտելացուցած են եվրոպական ոճին։ Հիմակ հայ գրագետը պիտի ջանա հայկական համով հոտով ու եվրոպական ոճով գրել։

* * *

Ինչպես քաղաքական ու մտավորական, նույն և գրական փոխանցումի թվականի մը սկզբնավորությունն է 1878 տարին: Բայց պատմական երկու թվականներու միջև ճշտագիծ սահմանագլուխ մը չ'երևնար։ Քսաներորդ դարուն առաջին տարիները որոշակի ինչո՞վ կը տարբերվեին վերջացող դարուն ետքի օրերեն։ Այսպես և մեր կյանքը։ Կը զգա՞նք փոփոխման օրը. բայց կը փոխվի՜նք, կը փոխվի՜նք։

Նոր գրականության ծագումեն երեսուն տարի վերջը, շատ փոխված տեսարանի մը առջեն ենք։ Պեշիկթաշլյան՝ վաղուց է մեռած, առանց իր տաղանդին արժանավոր մեծկակ գործ մը ձգած ըլլալու։ Մեռած է

Ռուսինյան։ Կը թողու սահմանադրություն մը, Ներքին Կանոնագիր մը, պերճախոս ատենաբանություններ, բայց ո՞ւր է չմոռցվող գիրքը։ Դուրյան՝ հույսեր տված մեկներ էր։ Ու Օտյան՝ վտարանդի մըն էր։ Հեռու անոնցմե, զոր կը սիրեր։ Երանությունը մահվան մեջ փնտռող հուսահատը։ «Աշխարհն զզված եմ, ելլամ երթամ աշխարհե։ Երթա՜մ ի լույս աստվածատեսության»։ Ա՛լ բոլորովին անկապաշտ գրագետ։

Այդ սերունդեն երիտասարդացած է Շիշմանյան, այլափոխմամբ Սերենցի։ Ուժեղ ու կորովի մարդն է. ցեղ մը սրտապնդող տիպար մը։ Հրապարակագրությունը չէ թողած, վասնզի արյունը դեռ կ՚եռա, բայց ա՛լ մարտնչող մը չէ։ Մարտնչի որո՞ւ դեմ։ Նոր դարը կը գուշակե. և անոր առմարին մեջ ալ կ՚արձանագրվի։ Հիմակ է, որ իրարու ետևե կը գրե այն վեպերը, որոնք օրվան կարոտին հագուրդ կու տան։

Գ

Ո՞ւր է սակայն նոր սերունդը ներկայացնող գրականությունը։ Պատրաստվելու վրա է։

Փոխանցումի թվականին դեռ որոշ չէ գծագրված ազգին նոր իդեականը։ Հին սերունդը կատարելիք գործ մը ուներ, անոր հետամտեցավ, զայն ամբողջացուց։ Ազգին կազմակերպություն մը տալով զայն ինքնամփոփ մարմին մը ըրավ։ Գրականությունը որոշ ձգտումի մը չէր ծառայեր։ Այդ ատեններն էր, 1870-են սկսյալ, որ նոր գրողներ երևան եկան։ Ասոնք օժտված կը թվեին ձիրքերով, որոնք ճշմարիտ գրական մարդը կը հորինեն։ Ու սակայն իդեական մը կը պակսեր իրենց։ Իրենց իդեականը անձերնին եղավ։ Ու ահա ինքնամոլության հիվանդոտ գրականություն մը ծայր տալ սկսավ։ Յուրաքանչյուր գրող ինք իր փառաբանանքը կը կարդար։ Քիչ մը ևս ու ահա հիվանդությունը պիտի համաճարակվեր։ Ունայնամտությունը շուտով իրեն կովան կը պատրաստե դատարկ ուղեղներու մեջ։ Բայց ժամանակը երկունքի մեջ էր։ Մըտքերը հասունացած էին, և գրական ձգտումներով գրականություն մը ուղղություն պիտի տար ազգային մտքին։

***

Արշալույսը՝ որ հորիզոնը երկցած էր, հետզհետե կը խուսափեր։ Ու մարը մտնելու վրա էր արևը պատրիարքին, որ զայն ավետած էր։ Կիսաստվերը կ՚երկնընար։ Ետևեն՝ խավարում։ Երկյուղալից ապագա մը։

Ժամանակին գրությունները երբ ուշադիր կարդանք, պիտի անդրադառնանք, թե նոր հրապարակագիրները նմանած են կենդանիներու

որոնք երկրաշարժի ցնցումը կը նախազգան և վրդովման նշանները ընազդաբար երևան կը բերեն։

Այդ նախազգացման գրականության դուզընթաց կը առաջանա ընկերական գրականությունը, որ նոր կը ծնի։ Օրագրության մեջ Վալեսի անունը կ՚արտասանվի։

Մեզի համար «ընկերային խնդիրներ» բացատրությունը ամբողջապես այն իմաստը չունի, որով կ՚ըմբռնեն զայն եվրոպացիները։ Հայուն ընկերային խնդիրը ազգային շրջանակեն դուրս չ՚ելլեր։ Երկրին վարչական կազմակերպությունը նպաստավոր չէ մամուլին ազդեցությանը այն ամեն գործերուն մեջ, որոնք կառավարական ձեռնհասության կը պատկանին։ Բայց իբր սկզբնավորություն կը բավե ազգային շրջանակն ալ։ Մեր բարոյական կյանքին տնօրինության ամբողջակի իրավունքը վայելելով, կարող ենք ներքնապես մենք մեզ բարեկարգել, սպասելով ավելի լայնատարած մտածություններու։ Ու նույնիսկ կան նյութական կարգ մը խնդիրներ ալ, որոնց վրա մամուլը կրնա հզորապես ներգործել։ Հայը հայուն հետ տնտեսական հարաբերություններ ունի, և ասոնք ալ գրողներուն ուշադրությունը կը հրավիրեն։ Գրական սեռ մը բարգավաճիլ պիտի սկսի, ընկերային խնդիրներու մտահոգության իբր հետևանք։ Վիպասանությունն է, որ պիտի մշակվի ներքին կյանքի բարեփոխման մասնավոր ձգտումով։ Տիկին Սրբուհի Տյուսաբի առաջին վեպը ու Բաշալյանի առաջին նորավեպը ընդհանուր կերպով գաղափար մը կրնան տալ, թե ի՛նչ պիտի ըլլա հայ վիպասանությունը իր սկզբնավորությանը ու զարգացմանը զանազան փուլերուն։

Վեպը թատրոնին բաց թողած տեղը պիտի բռնե։ Հանգամանքները այլևս չեն թույլատրեր հայ թատերգության շարունակությունը։ Հազիվ ծիլ արձակած մատղատունկը կը չորնա։ Վիպագրությունը՝ իր նախափորձերուն իսկ՝ ավելի կատարելագործյալ արվեստով մը կը ներկայանա, քան թե թատրերգությունը իր առաջին արտադրությանցը մեջ։ Բաշալյան, Զոհրապ, Կամսարական երբ իրենց վիպակները կը հրատարակեն, բաղդատաբար ավելի ինքնատիպ արվեստագետներ երևան կու գան, քան թե Պեշիկթաշլյան, Դուրյան, Թերզյան իրենց թատերգություններովը։

Թատրոնին հետ կը վերջանա ազգային երգը։ Կը փոխվին նաև գրքի հրատարակության պայմանները։ Շատ դժվար գործ մը կ՚ըլլա առանձին հատորով երկասիրության մը երևումը։ Ուստի և օրագրությունը բացարձակ տերը կը դառնա գրական հրապարակին։

Ու արդեն նոր արյունախառնությամբ կազդուրված է։ Շատ երիտասարդ հրապարակագիր մը, Բյուզանդ Քեչյան, «Մասիսի» խմբագրության

մէջ առաջնակարգ դեր մը ստանձնելով, կը հաջողի հայ լրագրութիւնը վերանորոգել։

«Մասիսը» սակայն չի բավեր գոհացում տալ ամբողջ այն երիտասարդութեան, որ քանի մը տարի է հանրային գործունյա կյանք մը կը վարե։ Այդ երիտասարդութիւնն ալ իր գրական ուժը հանրային մաքառումներու պիտի նվիրե, նման նախորդ սերունդին։ Քիչ շատ տարբեր պայմաններե շրջապատյալ սակայն։

Պոլսո մամուլին մեջ ընկերային խնդրին կը ժամանակակցի «հարուստ» կոչված դասակարգին դեմ պայքարը։ Նոր երևույթ մը նաև այդ դասակարգն ալ, որ հետո «Ազնվաշուք» տիտղոսով սկսավ ճանչցվիլ։

«Ազնվաշուքը» կը համապատասխանե «Նոր հարուստ» բառին։ Ղրիմի պատերազմին ետքը, երբ հայ սեղանավորութիւնը ա՛լ կը փչանար արագաբար, հայ վաճառականութիւնն ալ սկսավ ծաղկիլ, շնորհիվ Եվրոպայի հետ հարաբերութեանց դյուրացման։ Ընդարձակորեն առևտուր ընող, կառավարութեան հետ մեծ գործերու ձեռնարկող, վաշխառութեան դրութիւնը շարունակող բազմաթիվ հայեր առաջ եկան Պոլիս։ Ասոնցմե շատերը մասնակցեցան ազգային գործերու։ Ընդհանրապես— քիչ բացառութեամբ— բարեխիղճ երևցան հանրային դրամին գործածութեանը մեջ։ Ու մինչև իսկ իրենցմե ոմանք բավական կը նպաստեին բարեգործական ու կրթական հաստատութեանց։ Նյութական առավելութեամբը զոր կը վայելեին, այդ նոր հարուստները բնականաբար պիտի գրավեին ժողովուրդին մեծարանքը։ Նյութապես հարուստ, բայց մտավորապես աղքատ ազնվաշուքները ուզեցին չափազանցորեն անկախութեամբ վարել իրենց հանձնված ազգային պաշտոնները։ Հո՛ն, ուր նյութականը մտավորականին աջակցութեանը կը կարոտեր, հո՛ն ազնըվաշուքները իրենց «խելքովը» շատ վնասակար կը դառնային։ Ու իրենց հավակնոտութիւնը զավեշտականի համեմատութիւններ կ՚առներ։ Միևնույն ատեն այս հարուստներեն շատերը չարաչար կը հարըստահարեին իրենց անձնական գործերուն մեջ գտնվող պաշտոնյաները, բանվորները, ամեն ոք։ Ու կատարելագործութեան կը հասցնեին տնտեսանքանդ վաշխառութիւնը։

Եվ ահա կը տեսնենք որ հրապարակագրութիւնը կը ջանա այդ դասակարգին իշխանութիւնը սահմանափակել։ Խմբագրական հոդվածներն ու վեպը կը նկրտին այդ նպատակին։

* * *

Ընկերային խնդիրներու բաժնին մաս կը կազմե կրոնքին մեր անհատական կյանքին վրա ունեցած իշխանութիւնը։ Շատ դարեր անցեր

էն որմեհետե հաստատված են կանոններն ու օրենքները, որոնք հայուն անհատական ու ընտանեկան կենցաղավարության պայմանները կը տնօրինեն։ Բարեփոխումի ժամանակը հասած է։ Հայրենապետները օրենսդրած են՝ աչքի առջև ունենալով իրենց ժամանակակիցները։ Հարյուրավոր տարիներ հետո գալիք սերունդները հոգածության առարկա չէին կրնար ըլլալ։ Ոչ ոք շոգին ու էլեկտրականությունը գուշակած էր։ Մեռածները չեն, որ ողջերուն կյանքը պիտի վարեն։ Այս մտածութենե կը ծագի եկեղեցիին վարչական օրենքներու բարեփոխման պահանջումը։ Այդ բարեփոխումը դյուրացնելու համար, հրապարակագրությունը կ՚ազդե մտքերու վրա. վիպագրությունը կ՚ուզե սրտերը իրեն կուսակցել։

Ազնվաշուք դասակարգին հետ կես դարու մեջ մեծցեր է ուրիշ խըմբակ մըն ալ։ էֆենդիներունը։ Ամիրայությունը թեև վերջացած է, բայց պնոր հաջորդած է էֆենդիությունը։ Որքան ատեն, որ այդ դասակարգին ներկայացուցիչները Օտյան մը, Սերվիչեն մը կը հանդիսանան, ազգին սիրտը հանդարտ կը մնա։ Բայց այլասերումը չ՚ուշանար։ Վրդովումը ծայր կու տա։ էֆենդիներու դեմ կռիվը կը մղվի երկու միջոցով. ուղղակի և անուղղակի։ Ազգային ժողովին մեջ՝ ուղղակի. օրագրությամբ՝ անուղղակի։

Բայց միևնույն ատեն տարօրինակ կերպով կնճռոտ էր ազգային կյանքը։ Խաղաղության թվականը, որ բացված էր 1878-են հետո, օրե օր վրդովման շրջանի մը կը փոխվի։ Պոլսո մամուլին հոդվածները հոգիներու խռովքը կը ցոլացնեն։

Դ

Վերջին քսնի մը տարվան ընթացքին մեջ Ռուսիո և Թուրքիո հայոց հարաբերությունները աներևակայելի կերպով ընդարձակված և մտերմացած էին։ «Արևելք» թերթի հիմնարկութենեն առաջ Թուրքիո հայերը շատ քիչ բան կ՚իմանային Ռուսիո հայոց կյանքեն։ Ու փոխադարձաբար։ Հայաստան կրթություն տարածող ընկերությանց հաստատմամբը, 1876-են սկսյալ կանոնավոր հարաբերություններու սկզբնավորություն եղավ Կ. Պոլսո և Ռուսիո հայոց միջև, միջնորդը «Մշակ» թերթն էր։ Նորահաստատ կապերը հզորապես պիտի ազդեին ազգային կյանքին և Պոլսո օրագրության վրա։

Ա՛լ անկե ետքը «Մշակի» խմբագրությունը իրեն համար բերան մը ուներ Թուրքիո հայոց մեջ։ «Արևելքի» հրատարակությունը սկսելեն քանի մը ամիս ետքը, «Մասիսը» այլևս կարող չէր շարունակվիլ, ու 1884

Հուլիսին իբրև օրաթերթ ըլլալէ կը դադրէր երկսուն երեք տարվան թերթը, և կու գար անձնատուր ըլլալ «Արևելքի»։

«Արևելքի» լայնածավալ էջերը բաց էին «Մշակի» վարիչներուն առջև։ Գրիգոր Արծրունի, Րաֆֆի, Առաքելյան, Մալումյան կ՚երևէին «Արևելքի» մէջ։ Կովկասեն ամեն մշակական «Արևելքը» իբր իր թերթը կը նկատէր։ Ազգային ամեն խնդիր թե՛ «Մշակի», և թե՛ «Արևելքի» մեջ գաղափարներու կատարյալ համերաշխությամբ կը քննվէր։ Զգացումներու և մտածումներու համանմանությունը երևան կու գար հանրային ուրիշ գործերու մեջ ալ։

Հարկ է սակայն այս առթիվ հիշեցնել, որ հիմակվան «Արևելքը» ո՛րևէ առնչություն չունի 1884-ի «Արևելքին» հետ։ Անունը և հաստատման թվականը միևնույնն են։ Մարդիկն ալ փոխված են, ուղղությունն ալ։

Ու իբր միջանկյալ հարկ է հիշեցնել, որ նույնիսկ նախկին «Արևելքը» մշակականության մղվեցավ ո՛չ թե հավաքական հավանությամբ, այլ անհատական ազդեցությամբ։ «Արևելք» կը խմբագրվէր վարչական մարմնի մը հսկողությամբ։ Երբ 1890 փետրվար 12-ին վարչական մարմնին մեջ փոփոխություններ տեղի ունեցան, «Արևելք» ալ սկսավ դադրիլ «Մշակի» հետ որևէ համերաշխութենէ։ Այդ միջոցին Պոլսո մշականները առժամապես ուրիշ հանդես հրատարակեցին, վասնզի ժամանակը «երկունքի մեջ էր»։ Իսկ 1891-ին «Արևելք» բոլորովին հակամշական եղավ, մասնավորապես Քէչյանի ազդեցությամբը։ Բայց 1891-ին ալ հիմնվեցավ «Հայրենիքը»։

* * *

Կովկասի հետ սերտ հարաբերությունները տարօրինակ կերպով ազդեցին Թուրքիո վրա։ Մինչև այն ատեն Հայաստան Կ. Պոլսեն կը ներշընչվէր, հիմակ սկսավ Ռուսիո հայոցմեն ալ գաղափար ստանալ։ «Մշակը» ամեն կողմ կը տարածվէր. Րաֆֆիի վէպերը մտան ամեն քաղաք, ամեն գյուղ, ամեն տուն, ամեն խան։

Այսպես, Թուրքիո հայոց պոլսական գրականությունը 1878-են մինչև 1890 կը փոխվի տիրապետող գաղափարներուն և զգացումներուն ազդեցությամբ։ Կը ներշնչե ժողովուրդին, կը ներշնչվի ժողովուրդեն։ Իսկ երբ կը հասնինք 1890 թվականը՝ կը հասկնանք, թե ճգնաժամի մը մոտ է Թուրքիո հայությունը։ Գրականության մեջ նմանը չտեսնված խրաբանցում կա։ Բուան ապրում մը։

***

Հանդստության միջնարար մը, որ յոթը ամիս կը տևե։ Այդ միջոցին «Արևելք» կը պատկերացնե մաս մը հայոց հանդարտասեր ձգտումը։ Բայց շատ չանցած, 1891 հուլիս 13—25-ին նոր «Հայրենիքը» կը հիմնվի Հ. Շահնազարի կողմե։

Այն բոլոր գաղափարները, որոնք տասնհինգ տարիե ի վեր կը խտանային հայոց մտքերուն մեջ, այն բոլոր զգացումները, որոնք այդ ժամանակամիջոցին հայոց ոգիները կը տագնապեին, ատոնք ամենքը կու գան կը համբարին «Հայրենիքի» մեջ։ Ու հոնկե կը թրթռին հայ աշխարհը։

Մարտնչող, կորուկ, զարնող գրականություն մը երևան կու գա «Հայրենիքի» մեջ, բայց միշտ՝ հրապարակագրության հովանավորությամբ։

Մեր ժամանակակից գրականությունը «Հայրենիքի» մեջ կը պայթեցնե իր բոլոր գեղարվեստական, լեզվաբանական զորությունը։ Գրողները կարծես նախազգացումն ունենան մոտալուտ պատահարներու թան մը իրենց կ՚ըսե, թե քիչ մը ևս ու ա՛լ ազգին քովը պիտի չըլլան։ Կը զգան, թե կափարիչ մը պիտի դրվի կես գաշու գաղափարական գրականության վրա։ Ու կ՚ուզեն անեղծելի դրոշմով շիրիմը «կնքյալ պահել մինչև ցգալուստ»։

Ե

Այժմու գրականությունն ալ դարձյալ օրագրության մեջ է։ Անոր վրա ծանրանալ պիտի չուզենք։ Դեռ պատմության շրջանակին մեջ չէ անցած։ Կը բավականանանք ըսել, որ 1895-ի գրականության շարունակությունը շատ զգալի կերպով ընդհատված կը տեսնվի։ Վաղնջուց աշխատավորներ կը շարունակեն ըստ պարագայից գրել։ Հանգամանքներու փոփոխությունը իրենց վրա չէ ազդած։ Էն ինչ որ եղած էին, և պիտի ըլլան ինչ որ են։ Ո՛չ ժամանակը, ո՛չ միջոցը կ՚ազդե իրենց վրա։

Բայց նոր գրողներ ալ երևան եկած են։ Ասոնց մեջ աչքի զարնող, ուշագրավ դեմք մը չի տեսնվիր։

Հանրային կյանքի պայքարներու դադարման միջոցն է։ «Արվեստը արվեստին համար» գրականության մը փորձերը տեղի կ՚ունենան նորագույններուն կողմե, բայց մեծ անհաջողությամբ։ Իսկ նախորդներեն— որոնք՝ էր երբեմն որ «նոր» կը հորջորջվեին— դեռ իրական տաղանդ մը կը փայլեցնեն սովերամած օրագրության մեջ։

Պոլսո հիմակվան գրականության մեջ որևէ գաղափարի մը նույնիսկ գաղտնածածուկ ազդեցությունը չի նշմարվիր։ Եվ ոչ ալ զգաց-

ման մը գերիշխանությունը կը հայտնվի։ Գրողները կիրք մը չունին։ Ո՛չ լավատես են, ո՛չ հոռետես, ո՛չ հուսալիր, ո՛չ հուսահատ։ Ներքին վրդովումի թեթև նշան մը իսկ չի տեսնվիր։ Պոլսո հայ ժողովուրդին, հայ վարչության ամբողջ պատկերը Պոլսո օրագրության մեջ կը ցոլա։

Ու ծանր հիվանդության մը ախտանիշն է «եսին» հաճախումը և ընդհանրացումը։ Վերջին ատեններս գրել սկսողներեն շատերը առանց «եսի», «իմի» քանի մը տող չեն կրնար արտադրել։ Դպրոցեն նոր ելլողը, որ ծածկանունով մը հրապարակ կ'իջնե, կը կարծե թե ամբողջ ազգը անձկանոք կը սպասե իմանալու, թե ի՞նչ պարագաներու բերմամբ այդ ծածկանունը առած է վրան և ոչ ուրիշ մը։ Դատարկամիտներու այդ հիվանդութենե երբեմն կը բռնվին նաև այնպիսի գրողներ ալ, որոնք իրական տաղանդ և արժանիք ունին, ուստի և համեմատությունը իրենց պետք չէր սոսկում ազդեր։ Բայց հիվանդության միջավայրի մը մեջ առողջներն ալ կրնան պլշտկիլ։

* * *

Տասը տարիե ի վեր է, որ Հայաստանեն ալ «եվրոպականորեն» գրողներ սկսան տեղ մը գրավել Պոլսո օրագրության մեջ։ Այդ երիտասարդները գրականության համար օժտված են բնատուր ձիրքերով։ Ու պոլսեցիներուն վրա բազմաթիվ առավելություններ կը վայելեն տոհմային մատենագրության մը ստեղծումին համար։ Կ'ապրին հոն, ուր կապրի ցեղին հոգին բյուրավոր տարիներե հետե։ Հոն է լեզուն, պատմությունը, հիշատակարանը, ավանդությունը։ Հոն է Ապագան, վասնզի Անցյալը հոն եղած է. ու Ներկան ալ հոն է։

Անոնք որ Հայաստանեն սկսած են գեղեցիկ դպրության դրոշմովը գրել, անոնք սակավաթիվ մենաշնորհյալներ են։ Երևան կու գան իբր շուրջերնին դիտող մտքեր ու խորապես զգացող հոգիներ, բայց ակներև կը տեսնվի, թե իրենց կը պակսին բարգավաճման ընդարձակ միջոցներ։ Բնածիր տուրքերը չեն բավեր, և ոչ ալ միջավայրը ինքնիրենը կը բավե լուրջ գրականության մը ստեղծումին։ Եվ չմոռանանք, որ նա մանավանդ մեզի համար գեղեցիկ գրականությունը՝ ընկերասիրական գրականությունը պիտի ըլլա։ Պետք է սորվիլ, բայց ո՞ւր գտնել իմաստասիրական, պատմական, ընկերաբանական, գիտական, գեղարվեստական գրքերն ու հանդեսները, որոնք միտքը կ'արգասավորեն։ Դժբախտությունը հոս է։ Եթե Հայաստանի գրողներեն ոմանց դյուրություն ընծայվի քանի մը տարի Եվրոպա անցընելե հետո երկիր վերադառնալ, տարակույս չունինք, որ հիմակվանեն այլապես գերազանց եվրոպական-հայ մատենագրություն մը պիտի սկսինք ունենալ։

Զ

«Գեղունիին» հոս շարունակված այս տեսությունը կը վերջացնենք քանի մը նկատողություններով, որոնք կրնան իրենց կարգին ընդարձակ հոդվածներու նյութ մատակարարել։

***

Պետք չէ մեղադրել Կ. Պոլսո գրագետները, եթե մեծ խնամքով պատրաստված ընդարձակ գրքեր չեն կրնար հեղինակել։ Ժամանակը կը պակսի իրենց։ Յուրաքանչյուր գրագետ պետք է զբաղի իր անձնական գործովը։ Գրելու համար հարկ է հանգստի ժամերեն կորզել։ Ու գիտենք, թե Պոլսո երթևեկության եղանակները որքան հոգնեցուցիչ են։ Առտուն տունեն պետք է կանուխ դուրս ելլել, ու իրիկվան հոգնած դադրած ներս մտնել։

Օրագրողներն ալ լավագույն վիճակի մեջ չեն։ Թերթի մը հազարումեկ հոգերը չեն թույլատրեր խնամոտ աշխատություն մը։

Հայաստանի գրողները աշխատելու լավագույն պայմաններու մեջ կը գտնվին։ Երթևեկության դժվարություններեն ազատ են. մանավանդ ձմեռը երկար ժամերով տուներնին կը մնան ամեն օր։

Պոլսո հայ գրողները նաև չեն վայելեր ինքազարգացման դյուրություն։ Ո՛չ հայերեն, ո՛չ օտար լեզուներով գրքերու մատենադարան կը գտնեն։ Եվ ոչ ալ միշտ առձեռն պատրաստ են հանդեսներ ու գրքեր։ Պետք է միշտ գնել, ու ենթադրելով իսկ թե դրամական դյուրություն չպակսի— ինչ որ հազվադեպ պարագա մըն է— բայց և այնպես գիրք հայթայթելու դժվարությունները շատ են։

Այս տեսությանց մեջ պարզվեցան նաև այն կարգ մը պատճառներն ալ, որոնք կը շլատեն մեր գրականության բարգավաճումը։ Շատ երկար պիտի ըլլա ուրիշ խոչընդոտներու թվումը։ Հիշատակման առիթները պիտի չպակսին։

Իսկ առ այժմ բավական համարենք ըսել, որ երբ նկատողության կ'առնենք բոլոր այն հանգամանքները, որոնք մտավորական բարգավաճման դեմ պատնեշ կը կանգնեն Թուրքիո հայոց համար, ձայն մը մեր սրտեն մեզի կ՚ըսե, թե կես դարու մեր գրականությունը իր բոլոր թերություններովը մեկտեղ, դարձյալ տոհմային հզոր կենսականության ապացույցն է։ Պիտի չվարանինք զայն հրաշագործության մը ծնունդ նկատել։

Ու ցեղային հաստատ հավատքն է այդ հրաշքը պարգևողը։ Պահենք հավատքը, ու օր մը հրաշքը հզորագույն պիտի փայլի։

«Բազմավեպ»
էջ 321—328

ՀՐՊԵՏ

ԳՐԱԿԱՆ ԴԵՄՔԵՐ

Թուրքիո Հայոց արդի գրականությունն ու գրագետները ուսումնասիրել ուզողը մեծ արգելքի մը կը հանդիպի։ Գիրք գրեթե չկա։ Փնտրել, գտնել պետք է երեսուն քառասուն տարվան թերթերու և հանդեսներու բյուրավոր թիվերը։ Անոնց մեջ մոռցված կը մնան գրական, իմաստասիրական, պատմական էջեր, վեպեր ու վիպակներ, որոնք վերջին քառորդ դարում մեր գրականությունը կը ներկայացնեն։ Անոնք, որ հանձն չեն առներ հնախույզի այդ աշխատությունը, բայց միանգամայն հարկ մը կը տեսնեն ուրվագրել մեր մտավորական արդի շարժումը, անոնք իբր ուղեցույց իրենց հիշողությունը կրնան միայն ունենալ։ Այդ առաջնորդությամբ է, որ «Գեղունիին» ու «Բազմավեպին» մեջ քիչ շատ լայնկեկ բռնված տեսությամբ մը ներկայացուցինք կես դարու մեր գրականության հատկանշական գծերը։ Հիմակ ալ կը խոսինք մեզի ավելի մոտիկ քանի մը դեմքերու վրա։

ԵՂԻԱ ՏԵՄԻՐՃԻՊԱՇՅԱՆ

Ամեն հայ, որ Թուրքիո օրագիր կը կարդա, լսած է Եղիա Տեմիրճիպաշյան անունը։ Հանրածանոթ գրագետը երեսուն տարիեն ավելի է, որ Պոլսո բոլոր թերթերուն մեջ միշտ և հանապազ կ'երևի։

Եթե կարելի ըլլար անոր արտադրությանցը հավաքածոն ընել, պիտի ունենայինք «Աստվածաշունչին» ստվարությամբը տասնեն քան հատոր։

Եվրոպական մատենագրության ընտելացած հայ մը, երբ դիպվածով Տեմիրճիպաշյանեն ոսկե էջ մը կը կարդա, ոճեն անմիջապես կ'անդրադառնա, ստորագրությունը նույնիսկ չտեսած, թե մեծ գրականության մտերմացած հեղինակի մը հետ կը գտնվի։

Եվ սակայն այդ գրագետը, որ առաջնակարգ հատկություններով օժտված է, ո՛չ մեր նոր գրականության ընթացքին վրա ազդեց, ո՛չ ալ հանրային մտքին վրա տպավորություն մը թողուց, վասնզի հիվանդոտ գրագետը եղավ։ Իր բոլոր մտածությունները իր անձին շուրջը խտացուց։ Թո՛ղ խոսի Բայրընի վրա կամ Միցկևիչի, թող Նիրվանան հիշատակե կամ Արամազդը, Պղատոնը թե Օգյուստ Քոնթը, միշտ՝ առաջաբան ու վերջաբան իր անձն է։ Կը պատմե, թե ինչպես կ'ապրի, ի՛նչ կ'ուտե, ի՛նչ կը հագնի։ Մանրամասնորեն կը ծանոթացնե իր ազգականները, իր ընտանիքը, ամենքն ալ իբր մասունքներ Մեծ-ամբողջին, որ ինքն իսկ է։ «Ինք, միշտ ինք, ամենուրեք ինք»։

Մտքի հավասարակշռության խանգարման ախտանիշն է՝ իր անձը նկարագրելու ծայրահեղ մոլեգնությունը։ Տեմիրճիպաշյան կ'ուզեր, և միշտ ալ կ'ուզե, որ Թուրքիո հայերը ամեն օր իր պատկերը իրենց աչքերուն առջև ունենան։ Ո՛չ միայն իր գրությանցը միջոցով հայ ժողովուրդը՝ իր անձովը զբաղելու կը բռնադատեր, այլև կը ջանար գործնական խաղերով ալ հանրային մտագրավմանը առարկա ըլլալ։ Կիրակի օր մը Գատըգեղի եկեղեցիին դուռը կը կայնի ու ֆեսը բացած կը մուրա։ Էֆենդիները զինքը կ'առնեն տուն կը տանին, ճաշի վար կը դնեն։ Նույն օրը ամբողջ Գատըգեղ, և միուս օրը ամբողջ Պոլիս այդ արհեստական խենթության վրա կը խոսին։ Օր մը կ'երթա ծովամուտ կենազրավիլ բայց նախապես խոհեմությունը կ'ունենա հայ նավավար մը Մոտան սպասցնել տալ։ Երբ ավազին վրա քանի մը քայլ կը առաջանա, փրկիչն ալ անդենեանց կը հասնի ետևեն։ Իրիկուն չեղած Պոլիս կ'իմանա, թե Եղիան ինքնասպանությամբ պիտի կորսվեր եթե հրաշքով մը այդ պահուն Պետոն Մոտա գտնված չըլլար։ Ու կեղծ մուրացիկը, դերասան անձնասպանը մոլեգնած կը բորբոքի, երբ կը գտնվին լրագիրներ, որ լռություն կը պահեն այդ ունայնասեր զավեշտներուն վրա։

Տեմիրճիպաշյանին ամբողջ կյանքը ունայնամիտ ինքնամոլության ցուցադրություն մը եղած է։ Այդ ախտեն բռնված ըլլալուն է, որ ուզած է համայնագետ, ծովածավալ տաղանդ մը երևիլ։ Ունկնդիրներն ու ընթերցողները թերահավատ թողուլ, ահա ինչ եղած է իր խելքը միտքը։ Ուստի և երեսուն տարիե ի վեր կը տեսնենք զինքը հրապարակավ ամեն նյութի վրա խոսող ու գրող։ Հին ու նոր կրոնքներ, իմաստասիրություն, անտեսագիտություն, լեզվաբանություն, բանաստեղծություն, գեղարվեստ, գիտություն ամենուն վրա ճառած է։ Չկա գրագետ մը, գեղարվեստագետ մը, բանաստեղծ մը, իմաստասեր մը, պատմաբան մը, մանկավարժ մը, լեզվաբան մը, որուն անունը հիշատակած չըլլա, որուն գործերուն վրա խոսած չըլլա, և որուն ինքզինքը աշակերտ ու դավանող— և մինչև իսկ շարունակող— չհռչակե։ Այո՛, պարզ ժողովուրդը զարմացած կը մնա այս օվկիան գիտության հանդեպ, բայց ով որ ֆրանսերեն քանի մը հանդես աչքե անցնելու առիթ ունեցած է, կամ Լարուսի մեծ բառարանը տեսած է, անմիջապես կ'անդրադառնա Տեմիրճիպաշյանին հնարիմաց վարպետության գաղտնիքին։ Պարզ թարգմանություններ, կամ օրվան ընթերցումի մը տպավորություններ կը հրամցվին իբր հեղինակություններ։ Ու ըսենք նաև, որ ընթերցողը բան մը չի հասկնար այդ գրվածներեն, վասնզի գրողը ինքն իսկ բան մը չէ հասկցած իր գրածեն։

Տեմիրճիպաշյան— միշտ ունայնամտության հիվանդությամբ— ճոռո-

մաքան տիտղոսներով հրապարակ հանած է պարբերականներ, որոնք թեև չափազանցորեն նորամիտ պարունակությամբ կը ներկայանան, բայց կը կոչվին «ԳՐԱԿԱՆ ԵՎ ԻՄԱՍՏԱՍԻՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄ», «ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ԲԱՌԳԻՐՔ!!»։ «Օ՜հ, խոշո՛ր, խոշո՛ր անուններով պզտիկ բաներուն ազդեցությունը ամբոխին վրա», կը գոչե Մեթերլինկ։

Տեմիրճիպաշյանին նորագույն մեկ գրութենեն քանի մը տող լուսանկարի մը պես կը պատկերացնե անոր ինքնախաբ և խաբող միտքը։ Պոլիս 1896-ին տպված ֆրանսահայ բառգրքի մը— վասնզի բառգրքեր ալ շինած է— առաջաբանեն կ՚առնենք հետևյալը.

«Մեր— եթե կրնա այսպես բացատրվիլ— մտավորական լեզուն միշտ ֆրանսերենը մնաց՝ հակառակ գուշակությանց։ Մեր պատմաբանը Միշլեն է, մեր գիտունը՝ Գլոտ Պեռնար, մեր իմաստասերը՝ Լիգռեն կամ Տենը, մեր գրադատը՝ Լմեդռ կամ Պրյունդիեռ, մեր մանկավարժն՝ անմահ Ռուսոն, մեր պատգամն՝ հավետ՝ Ֆեռնեյի նահապետը, մեր երգիչը՝ Բեռանժեն, մեր նկարիչը՝ Տլագռուան, մեր վհուկը՝ Ռընան, մեր վեպը՝ «Մադամ Բովարի», մեր գուսանը՝ Լամալիպրան, և՝… մեր մեռելն է հե՛գ Պոլ Վեռլենն»։

Նախ պետք է դիտել, որ այս անուններեն շատը հայոց անծանոթ են։ Եթե՝ «մեր վիպասանը Հյուգոն կամ Դյուման է» ըսվեր, ինչ և է. ատ անունները հանրածանոթ են հայոց, բայց ո՞վ լսեր է, կամ նույնիսկ ֆրանսերեն գիտցող հայոցմե քանի՞ հոգի կարդացած են Ֆլոբերի համբավավոր վեպը՝ «Մադամ Բովարին»։ Լամարթինը ամենքս ալ գիտենք, բայց Վեռլե՞նը։ Եվ սակայն հայոց ամբողջությանը անծանոթ, անընտել անունները ափիբերան կը պահեն ժողովուրդը։ «Ինչե՜ր ալ գիտե», պիտի գոչեն։

Եվ այս հիշատակությունները եթե մինչև իսկ հարևանցիկ ակնարկով քննենք, անմիջապես կը տեսնենք թե Տեմիրճիպաշյանի միտքը տրամաբանությամբ չի հոգնիր։ Առնենք Լամալիպրանը։ «Մեր գուսանը Լամալիպրան»։ Ի՞նչ է գուսան մը։ Երգեցող մը։ Արդ՝ որպեսզի երգեցող մը «մե՛րը» կարենա ըսվիլ, պետք է, որ զինքը լսելու դյուրություն ունենանք։ Հեղինակ մը կրնաս կարդալ հեռուեն, բայց երգի՞չ մը։ Արդ՝ Լամալիպրան Ֆրանսա գտնված է, որով Թուրքիո հայերը զինքը լսած չէին կրնար ըլլալ։ Ու հետո, յոթանասուն տարի առաջ մեռած է, երբ հազիվ թե մեկ երկու հայ կրնային Փարիզ գացած ըլլալ։ Ու չմոռնանք որ Մալիպրան և ոչ իսկ ֆրանսացի էր։

Ու Բերանժե՞ն։ Արդյոք այդ տողերը գրողը լսա՞ծ է Բերանժեի մեկ երգը։ Շատոնց է որ Ֆրանսայի մեջ ալ ոչ ոք Բերանժեն կը հիշատակե։

Հապա Տըլագռուան, ինչո՞ւ մեր նկարիչը։ Մեր գիտունը Գլոտ Պեռնար. ուսկի՞ց։ Իրա՞վ լրջաբար կարելի է կարծել, որ Ռուսոն «Էմիլը»

մեզ կը դաստիարակե, կամ թե՝ մեր մտքին վրա ոևէ ներգործություն ունեցած է Վոլտեր, զոր «Ֆեռնեյի Նահապետ» հասարակ տեղիքովը կ'որակե։ Կովկասցի հայ մը, երբ այդ տողերը կարդա, պիտի ենթադրե, որ Թուրքիո ֆրանսագետ հայերը Թենի կամ Միշլեի այնպես ընտանի են, ինչպես իրենք՝ Տոլստոյի կամ Տուրգենևի։

Տեմիրճիպաշյան իր բոլոր սքանչելի կարողությունները նվիրեց այս արհեստական ու խաբեպատիր գրականության տարածումին— եթե երբեք «գրականություն» անվանել ներելի է այս բանդագուշանքը։

Խասգեղի Ներսեսյան, ու ետքեն ալ Շահնազարյան վարժարանին աշակերտը, ստացած էր այն կրթությունը, որուն հիմը ֆրանսերենի ընտելացումն է, մեկտեղ քիչ մըն ալ մատենագրական ծանոթություն։ Դպրոցեն դուրս ուրիշներուն պես ինքն ալ ինքնակրթությամբ զարգացած է։ Միայն թե մինչև ուրիշները ողջամտություն ունեցած են գրել այն նյութերուն վրա միայն, որոնց տեղյակ են, անդին «Փիլիսոփայական բառգիրքին» հեղինակը խենթ ու խելառ խոսած է անանկ խնդիրներու վրա, զորս հիմնովին կ'անգիտանար։ Այսպես ահա, եղավ ատեն մը, որ Տեմիրճիպաշյան ինքզինքը հայ Լիթռե հռչակեց, այսինքն՝ Օգյուստ Քոնթի դրական փիլիսոփայության տարածողը։ Օր չէր անցըներ առանց «Դրական» և «Փիլիսոփայո:թյուն» բառերը հեղհեղելու։ Կարելի՞ է մտաբերել, որ հիմնապես գիտություն չսորված մեկը կարող ըլլա Քոնթի դասախոսություններեն բան մը հասկնալ և Դրական Փիլիսոփայության հմտանալ։ Ո՜ւր մնաց, որ անհնարին է հայոց պես հազիվ թե շատ տարրական կրթություն առած ժողովուրդին մեջ դրական իմաստասիրություն տարածել, ան ալ քանի մը էջով։

⁂

Եղիա Տեմիրճիպաշյան երեսուն տարիե հետե շարունակ կը գրե, բազմաքանակ հոդված արտադրած է. սակայն այսօր իրմեն հատոր մը չի գտնվիր հայոց ձեռքը։ Ու ամբողջ երեսուն տարվան մեջ անազդեցիկ մնացած է հայ մտքին վրա։ Այս չեքուչեքը մեզի կ'ուրախացնե։ Ո՛չ ոք կը փափագի, որ հիվանդություն մը պլշտկե ժողովուրդը, թող այդ հիվանդությունը բարոյական ըլլա կամ մտավորական։

Բայց նաև, իբր հայ մատենագրության բարգավաճմանը փափագող, խորապես կը ցավինք, որ Տեմիրճիպաշյան այսքան գեշ գործածած ըլլա գրականության համար այն բնատուր գեղեցիկ հատկությունները, որոնցմով օժտված հայերը շատ բազմաթիվ չեն։ Եթե երբեք օր մը գտնվի բանասեր հայ մը, որ խնամքով կարդա ամեն ինչ, որ Տեմիրճիպաշյան

գրած է ու անոնց մեջեն հատվածիկ մը դուրս հանե, ապագա սերունդը պիտի տեսնե, թե որքան կորսված է ճշմարիտ գրագետի կոչում ունեցող հայ մը։

ՍՐԲՈՒՀԻ ՏՅՈՒՍԱԲ

Հանգուցյալ տիկին Տյուսաբ ծանոթ է հանրային կյանքովը և հրատարակություններովը։ Այս քանի մը տողերը գրագետին հատկացված են։

Հայ հեղինակուհին երեք վեպ գրած է. «Մայտան», «Սիրանույշ», «Արաքսիա»։ Վերջին երկուքը բազմաթիվ ընթերցողներ չունեցան։ Առաջինը ընդունելության գտավ նորույթին հրապույրովը։

Այս վիպասանությունները ամենքն ալ ազնվազգի զգացումներե ներշնչված են, բայց ամենքն ալ կարդացողին հոգին բերանը կը բերեն, այնքան ձանձրացուցիչ են։ Քարոզ վեպեր։ Քարոզը՝ ժամը։ Շատ երկայնամիտ համբերությամբ զորացած պետք է ըլլալ, ավարտել կարենալու համար այն հարյուրավոր էջերը, ուր սիրող սրտերը սիրելու տեղ վարդապետելու ելեր են։ Վեպեն ալ — ու մանավանդ վեպեն — «գործ և ոչ խոսք» կը պահանջվի։ Առաքինասերները հանրային բարոյականի դեմ մեղանչում կը համարեն վեպին մեջ մոլության հոլանի գեղերումը։ Բայց ընդունինք նաև, որ վիպասանը մահացու մեղք կը գործե, երբ խստամաղձոտ դեմքով առաքինությունը ամենուրեք մեզի կը հանդիպեցնե։

Տիկին Տյուսաբ միանգամայն մեծ վստահություն մը չէր կրնար ներշնչել նույնիսկ իբր հայ կնոջ դատը պաշտպանող փաստաբան — քարոզիչ։ Ֆրանսերենի հմտություն և ֆրանսական վիպասանության ընտելացումը բավական չեն ստեղծելու համար առաքելական պաշտոնով գրագիտուհին։ «Մայտային» հեղինակը ո՛չ հայ կինը կը ճանչնար, ո՛չ հայ ընկերությունը, ո՛չ հայ կյանքը։ Եվրոպականացյալ հայուհի մըն էր։ Թե՛ ինքը, և՛ թե իրեն հետևողները երբ «հայ կին» կ՚ըսեն, թվի թե կը հասկնան Պոլսո կամ Իզմիրի հայ քաղքականության պատկանող, եվրոպական տարազով պճնազարդիկ հայուհին միայն։ Պաշտպանելով անոր «դատը», կը կարծեն հայ կնոջ դատը պաշտպանած ըլլալ։ Կը սխալին։

Ո՞ւր է հայ կինը, ի՞նչ է իր դատը։

Հայ կինը հայ հողին վրան է։ Եվ որ անոր դատը պաշտպանել կ՚ուզե, պետք է, որ նախ անոր կյանքը ուսումնասիրե, հետը ապրելով։ Ինչ որ հեռուեն «չարիք» կը թվի եվրոպականացած Ֆրանսագետ հայ կնոջ աչքին, թերևս ամենեն «բարիք» է։ Հայաստանի հայ կինը անոր իր կրոն-

քը, իր ավանդությունները, իր հիշատակները, իր ընկերական կյանքը, որոնք անցյալի մը ծնունդ են։ Այդ անցյալը, պոլսեցի հայ կնոջ համար գրեթե խաթարյալ, բայց Հայաստան միշտ կը պայծառափայլի և տոհմային կյանքը կը պահպանե։ Ոչ ոք կրնա հայ կնոջ դատին պաշտպանությունը լրջորեն ստանձնել, պարզապես տիկին Սթալ, տիկին Ժորժ Սանդ, Դյումա Որդի կարդալով։ Տիկին Տյուսաբ Ֆրանսերեն վեպերու ընթերցումեն ուսումնասիրեց և դատեց հայ կինը։ Իր տեսությունները ուրեմն մնացին առանց ոևէ հյութեղ գաղափարի։

Այսպես առհա Տիկին Տյուսաբին գրքերը մեր ժամանակակից մատենագրության մեջ նշանավոր տեղ մը չգրավեցին, ու նաև զգալի ազդեցություն չունեցան հայ կնոջ և հայ ընկերական կյանքին վրա։ Այդ գրքերուն կը պակսեր թե՛ ընկերական կյանքի գիտություն, թե՛ վիպասանության արվեստը։

Կը փափագինք, որ այդ աշխատասեր հայ տիկնոջ, որ ազնիվ զգացումներով առոգորված էր, այս գրական դժբախտությունեն օգտվին ամեն անոնք, որ հայ կնոջ դատը պաշտպանել կուզեն։

Նախ հայ կինը ճանչնան։

ԹՈՎՄԱՍ ԹԵՐԶՅԱՆ

Երկար տարիներ ի վեր է, որ Թովմաս Թերզյան այլևս մեր օրվան գրականության մեջ երևան չի գար։ Կյանքի հոգերը շատ կանուխեն հանգստի դատապարտեցին բեղմնավոր տաղանդ մը։ Բայց կը կարծենք, որ իր առաջին գործերուն գոնե կարևոր մեկ մասը օրվան նորություն պիտի ըլլա տարիներ հետո։ Հավանորեն Նաումի թատրոն մը օրին մեկը նորեն պիտի ներկայացնե «Արշակ Բ-ը», առաջին ու վերջին հայ օպերան, հեղինակություն Թերզյանի։

Մեկուսացյալ բանաստեղծին ողբերգություններն ու քնարերգական բանաստեղծությունները բազմաթիվ են, տպագրյալ կամ դեռ անտիպ։ Առաջիններուն մեջ է «Սանդուխտ» ողբերգությունը, որ Ալիշանի

Կուտանք հայոց նոր շուշան
Տեսեք ի դաշտ Շավարշան

համբավավոր քերթվածին ներշնչությամբ գրված է։ Խանդի ու ավյունի բանաստեղծություն մը այդ ողբերգությունը, որ շատ տարիներ թե Պոլիս և թե Կովկաս հայ ժողովուրդը հրճվեցուց։

Բայց «Անակրեոնի» թարգմանիչը իբր քնարերգակ բանաստեղծ թեթևցուցած է հայ երիտասարդության սիրտը, քառորդ դար մը առաջ։ Այս-

օր մեր աչքերում առջև չունինք Թերզյանի ոևէ մեկ ոտանավորը, զոր պարզությամբ կարդալով վերլուծենք ու քննդատենք կամ գնահատենք։ Բայց մեր սրտերում խորը տակավին կը հեծեծեն մեղեդիներ, որոնք երբեմն տրտմեցուցին մեզ։ Քսան և հինգեն ավելի տարիներ անցան. անկե ի վեր թախծության շատ նվագներ եկան խռովեցին մեր հոգիները, սակայն տիկին Բեմպե Պալյանի մահվան եղերգը միշտ կը մնա անմոռաց։

Թերզյան Ալիշանին աշակերտած ըլլալու բախտավորությունը ունեցած է։ Վարժապետը աշակերտին մեջ կը զգար խանդավառ հոգին, զոր ինքն ալ կը բորբոքեր։ Ապագա քնարերգակը դպրոցին մեջ մատենագրական լուրջ ուսումնասիրություններ ըրավ ու եռանդով փարեցավ մեր հին լեզվին։ Ոսկեբերանը զինքը գրաված էր. ձեռքեն չէր ձգեր. մինչև իսկ գիշերները բարձին տակը։ Մեր ոսկեդարյան հայերենին Թերզյանին վրա բարերար ազդեցությունը ակներև կը տեսնվի անոր պերճ աշխարհաբարին մեջ։ Խանդավառ երիտասարդը Պոլիս վերադառնալով, շատ չանցած իր անունն ալ Պեշիկթաշլյանին զուգաբարբառ կը հնչվի գրեթե։

Այդ ատեններն էր, որ արքունի ճարտարապետ Պալյան Հակոբ բեյ խանդավառ բարեկամ կը հանդիսանար հայ գրագետներու և արվեստագետներու, կը կառուցաներ Օրթագեղի թատրոնը, ուր Ադամյան և Հրաչյա արվեստագետներ էին, և Թերզյան տիտղոսավոր թատերգակ բանաստեղծ։ Հայ թատրոնին մեծ ապագա մը կը պատրաստվեր։ Հակոբ բեյին ընտանեկան դժբախտությունը ու վաղաժամ մահը ցիր ու ցան տարտղնեցին Օրթագեղի բանաստեղծական բույնը։

Թերզյան ամուսնացած, բազմադիմի մտատանջություններով ծանրաբեռն, օրն ի բուն աշխատելու դատապարտյալ, այլևս չէր կրնար երգել։ Ինք որ արվեստին երկրպագուն էր, կը զգար թե բանաստեղծ մը ո՛չ միայն ներշնչյալ մը պետք է ըլլա, այլ, և աշխատող մը։ Եվ չէր կրնար աշխատիլ։ Ու ընկերական կյանքի նոր պայմաններն ալ ջլատեցին զինքը։

Հիմակ Թերզյան կը մնա սիրված հիշատակ մը. սակայն օր մը պիտի վերակենդանանա, և այն ատեն իր անտիպ ոտանավորներն ալ օրվան նորություն ըլլան թերևս։

Այս հույսով սպասենք։

ՀՐԱՆԴ ԱՍԱՏՈՒՐ

Ներկայեն ավելի՝ անցյալին, և անցյալեն ավելի՝ ապագային գրական մարդը։

Հրանդ Ասատուր առանձաշնորհյալ վիճակ մը ունի։ Հիմակ ինքն

է Թրքահայ միակ գրողը, որ դյուրություն կը վայելեր ամբողջ ժամանակը գրականության նվիրելով լուրջ երկասիրություն մը ստեղծելու երկարատև աշխատությամբ։ Միանգամայն իր կյանքն ալ միացուցած է ճշմարիտ գրագիտուհիի մը, Սիպիլի. երբեմն օրիորդ Զապել Խանճյան, և այժմ տիկին Հրանդ Ասատուր։ Կյանքի ու նաև գրականության լուծը մեկտեղ կրելու գրական ու սիրական ամոլ մը։ Իր տեսակին մեջ եզական նորություն մը մեր գրականության համար։ Կաշխատին առանց հապճեպի։ Ահա ինչու համար Հրանդ Ասատուրը ավելի ապագային մարդը կը համարենք, քան թե հիմակվան։

Օգտվինք այս դադարեն, հետադարձ ակնարկ մը տալու համար անցյալին։

Հրանդ Ասատուր 1885-ի վերջերն էր, որ Փարիզեն Պոլիս վերադարձավ, փաստաբանության վկայագրով։ Ֆրանսայի մայրաքաղաքին մեջ լուրջ ուսանող մը եղած էր, բայց մը իսկ սպառապ վատնելէ վախնալով։ Իր ընտանիքին համար սիրագեղ սրտով լեցված, կ՚ըմբռներ պարտականությունները, որ կը ծանրանային իր վրա։ Պիտի գար Պոլիս ինքն իր ճամփան պատրաստելու և դիպվածին հարվածները դարմանելու։ Ապագա գրական երիտասարդը կանուխեն ուրեմն կը տագնապեր որոշ պարտականության գաղափարով։

Այդ առենները Փարիզ տարագրյալ կ՚ապրեր Օտյան։ Ամենուն պես Ասատուր ալ հմայված էր այդ ժողովրդական անունեն, անոր բարեկամական համակրանքը վայելեց։ Այդ բարեկամությունը հզորապես ազդեց երիտասարդ ուսանողին թե՛ սրտին, թե՛ մտքին վրա։ Ըսենք՝ գժբախտ հետևանքներով— բնականաբար ըստ մեր կարծիքին։

Զախչախված մարդն էր այն առեն Օտյան։ Նմանած էր առասպելին հովվին, որ օր մը արքայական պալատ մը կը փոխադրվի՝ իբր թագավորին փեսա։ Գիշեր մըն ալ հանկարծ այդ մեծութենեն խլված, ինքզինքը նորեն իր հանգրվանը կը գտնե, ցուպը ձեռքը, տուրեկը անութեն կախ։ Օտյան իր հյուղակն ալ չէր վերադարձած։ Վտարանդի էր, տարագրյալին ավանդական ցուպը. ձեռքը, թշվառության մախաղը անութեն վար։ Խորտակված պետական անձնավորությունը ըմբոստ մը չէր սակայն։ Բախտին տնօրինության կը համակերպեր անապատականի մը համբերությամբն ու անհոգությամբը։ Երբ «Արևելք» թերթը հրատարակեց Հրանդ Ասատուրին ծածկանուն քրոնիկները, երեսփոխան հրապարակագիր մը՝ հանգուցյալ Ստեփան Փափազյան, որ լավ պիտի ճանչնար իր ժամանակակիցները, «Հայրենիքին» մեջ Օտյանին վերագրեց ինչ որ նորեկ փաստաբանը ինք գրած էր։

Տարաբախտ տաղագրին մահվանը լուրը Պոլիս հասնելուն, Հրանդ Ասատուր անոր հիշատակին նվիրեց տրտմաթախիծ բանաստեղծության ու վշտակիր իմաստասիրության էջ մը, որ չի մոռցվիր։ Ու տասնհինգ տարիներ են, որ անցած են անկե ի վեր։

Հրանդ Ասատուր անցյալին ու ապագային գրական մարդն է, ըսինք քիչ մը վերը. բացատրություն մը։

Երիտասարդ փաստաբանը 1887-ին Պոլիս հասած օրը հետը կը բերեր նաև գրականության համար իր հանձնարարականը։ Հոդված մըն էր քարանթինայի սպասումի ժամերուն գրված։ «Արևելք» Անգլիո մայրաքաղաքին այդ նկարագրությունը փութաց հրատարակել, ու Թուրք մամուլն ալ զայն թարգմանեց։ Փոխառություն մը, որ հաճախադեպ պատահում չէր։ Այդ առաջին հոդվածին գտած ընդունելությունը քաջալերանք մը եղավ երկյուղած սկզբնակին։ Ա՛լ կանոնավորապես «Արևելքին» տվավ այն փարիզյան համով հոտով քրոնիկները, որոնք «սկըզբնակը» շուտով «Նոր գրագետի» աստիճանին բարձրացուցին։ Շատ չանցած՝ Հրանդ Ասատուր սկսավ վայելել համբավ մը, որ կը տարածվեր մինչև Կովկաս ալ, ուր լսելիքները ընդհանրապես կը խլանան պոլսահնչակ անուններու դեմ։ Ամուսնական խնդիրներ ուսումնասիրող հոդված մը ամբողջապես արտատպվելով դժվարահաճ «Մշակին» մեջ, այդ համբավը նվիրագործեց։

Հրանդ Ասատուր ուշագրավ հրապարակագիր մը եղած էր, գրական դրոշմով. սակայն փափագեցավ հետզհետե ընդլայնել շրջանակը, ուր սեղմված էր։ Մտաբերեց վիպագրությունն ալ փորձել։ Վիպասանի կոչումին կը պատրաստվեր մատենագրական խնամյալ ուսումնասիրություններով։ Ընդարձակ վեպի մը ծրագիրը՝ որ մեր ժամանակին ընտանեկան-ընկերական բազմաթիվ խնդիրները կ՚ընդգրկեր՝ կես մը խորհուրդ, կես մը ձեռագիր վիճակին մեջ իսկ հավաստում մը եղավ անոնց, որ մոտեն տեղեկացան անոր։ Այդ հաստատումն այն էր, թե փաստաբան հրապարակագիրը ինքզինքը նվիրելով վիպասանության, մեր նոր մատենագրության պիտի տար վեպեր, որոնք դյուրազգաց սիրտ մը ու շուրջը դիտող միտք մը պիտի հայտնեին։ Ծրագիրը ծրագիր մնաց։ Այս լքումին պատճառները կրնան հոգեբանական ուսումնասիրության նյութ ըլլալ։ Ապագային կարելի է քննության առնել այս պարագան, երբ Հրանդ Ասատուր իբր պատմագիր ներկայանա։

«Իբր պատմագիր» բաժնեցավ։ Նորավեպի մը փորձեն հետո՝ Հրանդ Ասատուր բոլորովին պատմագրության հարեցավ։ Իբր նախապատրաստություն՝ ձեռնարկեց ինչ ինչ աշխատություններու, որոնց մեջ Զարյանի և Պարոնյանի կենսագրությունները։ Այս վերջին գործեն հրատա-

թակվեցան քանի մը կտորներ։ Մակայն հոգեկան վերլուծումներ, որոնք Հրանդ Ասատուրը նահանջի պարտավորեցին հրապարակագրի ասպարեզեն ու Թեակտուր թողին վիպասանի թռիչը, այդ միևնույն պատճառները թերևս— կամ՝ անտարակույս— հետաձգեցին կենսագրականներու շարունակությունը։ Ինքն՝ հեղինակը՝ ունէ մեկ գործին թերությանը անդրադառնալու կարող, ընտելացած ըլլալով եվրոպական մատենագրության, բայց երբ կարգը որոշագրելու կու գա, ան ատեն վարանումը կը սկսի ու կը տևէ։ Գաղափարի տարածման գրականության մեջ— թո՛ղ անիկա ներկայանա ինչ ձևի տակ որ կ՚ուզե՝ հոդված, վեպ կամ կենսագրական— հայ հեղինակ մը պետք է քիչ շատ «չլեբաց» մը— սան–ֆյուլոք երենա։ Տասնհինգ տարիներու գրական կյանքե մը ետքը, Հրանդ Ասատուր տակավին տեսքն ունի ամչկոտ նոր հարսի մը։ Հիմակ կը ներկայանա իբր պատմագիր մը։ Հիվանդանոցի ընդարձակ օրացույցին մեջ Պատմական ժամանակագրությունը, զոր ինք գրած է, աշխատության մըն է, որուն օգտակարությանը վրա ավելորդ է ծանրանալ։ Ընդհանուր գոհունակությունը որ հայտնվեցավ ազգին մեջ, կ՚ապացուցանե թե՛ գործին կարևորությունը, թե՛ անոր պատրաստության խղճամիտ կանոնավորությունը։

Կը տեղեկացվի թե Հրանդ Ասատուր այժմ ինքզինքը նվիրած է Կ. Պոլսո հայոց պատրիարքներուն, և հետևաբար Կ. Պոլսո հայոց ալ պատմությանը գրելու։ Տարակույս չկա թե հայ ժողովուրդը ջերմագին շնորհակալությամբ պիտի ողջունե այդ պատմությունը, որ հայության ժամանակակից կյանքը իմաստավորելու նյութերը պիտի հայթայթե։ Ուրեմն առ այժմ սպասենք ապագային։

Այս քանի մը տեղեկությունները վերջացնելու ատեն ըսենք, թե Հրանդ Ասատուրի գրական հատկություններն են գաղափարներու հըստակ արտահայտություն, ոճի պարզություն, լեզվի ճշտություն ու կանոնավորություն։ Իբրև խորհող մարդ՝ առաջադիմությունը հանդարտօրեն քարեշրջումի մեջ փնտրած է, առանց պատմության ընթացքին վրա բռնազբոսիկ ճնշումի։ Հապճեպին թշնամին է։ Իր գաղափարներուն համակարծիք ըլլանք կամ ոչ, պիտի ընդունինք որ խղճամիտ գրող մը եղած է միշտ, ու պիտի մնա։

«Բազմավէպ», 1963
էջ 378—385

ՀՐԳԵՏ

ՐԱՖՖԻ ԵՎ ՀԱՅ ՎԻՊԱՍԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ա

Երբ Պոլիս վերադարձա Թիֆլիզեն, ամեն բարեկամներս անվրեպ ինձ կ'ուղղեին հետևյալ հարցումները.— Տեսա՞ր Րաֆֆին։— Խոսակցեցա՞ր հետը։— Ինչպե՞ս մարդ է։— Ի՞նչ կ'ընե։ Մինչև իսկ կային այնպիսիք, որք երանի կարդացին այն աչաց, որք արժանի եղած էին հայ վիպասանը տեսնելու։ Որպիսի՜ փոփոխում ժամանակի։ Ատեն մը նույա համար էին երանիներն, որք Ս. Գեղարդն, էջմիածին համբուրած ի տուն կը դառնային։ Բայց բարեշրջման օրենքը ճշմարտություն է։ Գրքերը այժմ մրցում կ'ընեն մասունքներու հետ։

Եվ այդմ ոչինչ կա տարօրինակ. ցավոց օրերու մեջ մեր հարց սըրտերը կարոտակեզ էին մխիթարանաց. երկրային հույսը բառ մ'եր, որ նշանակություն չուներ իրենց համար. Հայք բոլոր իրենց կարողությունները կեդրոնացուցած էին իրենց հոգիներուն վրա։ Այժմ այլևս այդ օրինակ տառապանաց օրեր չենք գուշակեր. այժմ նոր կյանք, նոր գաղափարներ և սոցա համար նոր առաջնորդներ։

Մին այդ առաջնորդներեն աներկբայապես Րաֆֆին է։ Այն մեծ համակրանքը, զոր Րաֆֆի կվայելե ի Պոլիս և ի Ռուսիա, ունի յուր նշանակությունը ամեն անոնց համար, որք քայլ առ քայլ կը հետևին ազգային գաղափարաց զարգացման և փոփոխությանց։ Ով է անձնավորություն, երբ այս աստիճան յուր վրա կը հրավիրե ազգին համակրալիր ուշադրությունը, կրնանք ապահովապես ըսել, թե այդ անձնավորությունը ժողովուրդին վրա յուր հզոր ազդեցությունն ունի։ Այդօրինակ ազդեցություն ձեռք բերել կարելի է միայն ժողովուրդին զգացմանցն ու գաղափարաց ճշմարիտ թարգմանն հանդիսանալով։ Այդ թարգմանը կրնալ մի Ներսես Պատրիարք լինել կամ մի Րաֆֆի, յուրաքանչյուրն ունենալով գործելու իրեն հատուկ շրջանակն։ Ժողովուրդներն կը պարտին իրենց բարգավաճումը գործիչներու մեջ աշխատության բաժանման։ Ազգին սերն ու հույսը կը հաստատե աշխատությանց միջև ներդաշնակության կապը։ Արդ երբ ուսումնասիրենք այդ անձնավորությունները և իրենց գործերը, կրնանք բավական ճշտությամբ գիտնալ, թե ի՞նչ է ազգին ոգին, ո՞րք յուր գաղափարներն, և ո՞ւր կը դիմե։

Րաֆֆիի անունը Ռուսիո Հայոց մեջ ուներ արդեն յուր մեծ նշանակությունը, իսկ առ մեզ ժողովրդական եղավ երբ «Արևելքի» մեջ հրատարակեցինք «Խաչագողի հիշատակարանը»։ Յուր կամքեն անկախ պատճառներ անհնարին ըրած են Թուրքիո հայ մամլույն ծանոթացնել Րաֆֆիի գործերն ավելի մանրամասնաբար։

Ընդհանրապես աշխարհ բավական աննպաստ կարծիք կը սնուցանե վիպասաններու համար։ Վերացյալ էակներ, ահա՛ այն գեղեցիկ տիտղոսը, որ կը համարվի վիպասաններու շքանշանը։ Այդ աննպաստ կարծիքը նախապաշարում է, բայց նախապաշարումները որքան ալ խորը թափանցած լինին մարդկության ամեն խավերուն մեջ, բայց և այնպես նախապաշարում են, և ներելի չէ զայնս ճշմարտություն համարել։ Նախապաշարումները սովորություններ են. եթե երբեք փոքր ինչ քննության ձանձրույթն հանձն առնունք, շատ շուտ պիտի տեսնենք, թե որքան խարխուլ են, չըսենք իրենց հիմունքը, այլ իրենց հեցարաններն։ Սակայն շատ դժվար է մարդուս համար ի բաց վանել սովորություն մը, որ յուր թե՛ մարմնավոր, և թե՛ մտավոր ապրելու եղանակին մաս կը հորինե։ Այսպես է նաև վիպասաններու մասին տիրած նախապաշարման համար։ Ո՛չ մեկ դար այնքան շռայլորեն արտադրած է վեպեր, որքան տասնևիններորդ դարու վերջին կեսը. և ո՛չ մեկ դար ալ այնքան պարծեցեր է, թե ինքը դրականության մարմնացումն է, որքան մեր այս վերջին կես դարը։ Կա՛մ պետք է հայտարարել, թե վերացյալ դարու մը մեջ կապրինք, կա՛մ պետք է խոստովանիլ, որ վիպասանությունը դրական գիտություն մ'է, և այնու միայն կարող եղած է այնքան բարգավաճում ստանալ դրական դարու մը մեջ։ Զենք կարող առաջին հայտարարությունը ընել, ուրեմն հարինք վերջնույն։

Եվ արդարև է՞ր վիպասանը նկատել մի վերացյալ էակ։ Դրակա՛ն է այն անձը, որ երկաթի կտորի մը վրա կը կատարե մանրախույզ քննություններ. դրակա՛ն է այն անձը, որ ապավինած ապակիի մը, կը սլանա աչքերովն ու մտոքը երկնային բարձր գավառներու մեջ, աստղի մը հետքը որոնելու համար. դրակա՛ն է նա, որ մարդուս աղիքներն ու թոքերն յուր աշխատության առարկա ընտրած է։ Վերացյա՞լ է նա, որ մեր սիրտը կ'ուսումնասիրե, որը ծածուկ ցավերն ճանաչելն շատ ավելի դժվար է, քան նորա շոշափելի վերքերն։ Միթե հեշտի՞ն է հըրճվանք ազդել մեզ, սարսուռ և հուզումներ։ Խորազննին քննել ժողովուրդի մը անցյալն, հեռատես լինել նորա ապագային համար, մատնանիշ ընել այն ճանապարհն ընդ որ պարտի ընթանալ, միթե թեթև ուղեղի գործ է։ Պե՞տք է արհամարհել զնա, որ մեր սրտին ամեն մեկ ծալքն, մեր հոգվույն ամեն մեկ սլացն իբր լուսանկար մեր աչքերու առաջ կը պարզե։ Միթե ավելի դյուրի՞ն է հոգեկան վշտերն սփոփել, քան մարմնո ցավերը։ Ճշմարիտ վիպասան մը այնքան դրական գիտուն մ'է յուր ճյուղին մեջ, որքան բժիշկ մը կամ երկրաչափ մը։

Բարեբախտաբար ժողովուրդի հետ խոսելու կարող մեծ մտքերն, ուշ թե կանուխ կը հասնին իրենց նպատակին։ Վալուիեֆ մը, պետական

անձ, երբ կը հեռանա գիւղանկարչական հրապարակեն, շատ շուտ յուր անունը կը մոռցվի. բայց Վալուիեֆ իբր ազգային վիպասան միշտ ռուս ազգին ուշադրության առարկան է։

Հույլ ի հույլ պետական անձանց անուններու շարքին մեջ Պիքոնս-Ֆիլտի մը անունը շուտով անտես կը լինի, բայց վիպասանը միշտ կեն-դանի է։ Նոքա, որք համարած էին վիպասաններն թեթևամիտ արարած-ներ, անշուշտ փութով վերահասու եղան իրենց սխալանաց, երբ տեսան, թե Անգլիո պես ազգ մը, զոր հավանորեն կարելի չէ մեղադրել իբր ժո-ղովուրդ մը հետամուտ երևակայական շահերու, կը վստահեր յուր ազ-գային բախտը, վիպասանի մը երևակայությանը։ Եվ միթե մինչև այսօր իսկ Անգլիո Պահպանողական կուսակցությունը վշտով չի՞ տեսներ, թե յուր առաջնորդներն կարող չեն իրենց ուղղության ցույց տալ այնքան ապահով կերպիվ, որքան վիպասան Պիքոնսֆիլտ։

Ուրեմն երբ հայ մատենագրության մեջ հզոր գիրք մը կը գրավե վիպասանությունը, չենք կարող ողբեր ու կոծեր արձակել, թե՝ հայ գրականությունը թեթևության դրոշմովը կը մկրտվի։ Ընդհակառակն, պետք է գոհ մնանք և ուշի ուշով հետամուտ լինինք այն ուղղության ում հետևած է, կը հետևի և պիտի հետևի հայ վիպասանությունը։ Հայ վիպասանությունը կրնանք նկատել մինչև աստիճան մը իբր մի վիճա-կագրություն մեր արդի գաղափարներու, մեր արդի զգացմանց։

Քննելով այդ վիճակագրությունը, կը տեսնենք, թե մեր զանազան կարգի գաղափարները համերաշխություն ունին իրենց մեջ և կը կազմեն ամբողջություն մը, որ մեր ապագա զարգացման երաշխավորն է։ Հայ վիպասաններն ի հանդես կ'ածեն այդ համերաշխությունը, այդ ամբող-ջությունը։

Ֆրանսական վիպասանության քննադատք ուսումնասիրելով իրենց Ֆլոբերներու, Տոտեներու, Քլարեթիներու գործերն, այն եզրակացության կը հանգին, թե՝ Ֆրանսայի արդի վիպական դպրոցը չընծայեր մի հեղի-նակ, որ կարող լինի յուր գործոց մեջ հանդիսանալ ներկայացուցիչ ֆրանսական ընկերականության։ Արդի վիպական դպրոցը մասնավոր դասերու զգացմանց թարգմանն է։ Մեղավորը մատենագիրները չեն համարիր, այլ ֆրանսական ընկերականությունը, որ յուր ազգային հիմ-նարկություններովն և գաղափարներովը չներկայացներ այն ամբողջու-թյունը, որ միայն կարող է արտադրել Ֆիլտինկներ և Ռիչարտսըններ։ Անգլիո յուր ազգային հիմնարկությունները կրոնական նոր դավանու-թյամբ զորացուցած կը ներկայացներ հոծ միություն մը երբ Ֆիլտինկ և Ռիչարտսըն կը գրեին իրենց վեպերը։ Անշուշտ հայ ազգի ներկա դրու-թյունը չէ կարելի համեմատել Անգլիո վիճակին հետ, սակայն կրնանք,

պկչճպանելով ամեն համեմատություններ, գտնել բաղդատության կետերն։ Սերենց, Մանուրյան, Պերճ Պռոշյանց, Տեր Սարգսենց, իրենց պարագլուխ ունենալով Րաֆֆին, կը ներկայացնեն հայ ազգի ոգին և ի նմա տիրապետող գաղափարներն։ Մեր վիպասաններն որքան ալ տարբեր դրության հետևին, որքան ալ իրենց նյութ ընտրեն տարբեր ժամանակներու նկարագիրներ, բայց ամենուն մեջ տիրապետող ոգին միևնույնն է, որով այդ վիպասաններն ճշմարտապես կը ներկայացնեն հայ ազգի ոգին։ Պատմական իմաստասիրությունը, որուն առաջ այնքան ընդարձակ հորիզոններ կրնա պարզել մեր պատմությունը, բավական լըրջորեն կրնա խորհել այն երևույթին վրա, զոր մենք կ'ընծայենք։ Ազգ մը, որուն մեջ այսքան զանազան կարգի բաժանումներ կը տիրեն, ազգ մը, որ թեպետ այնքան ցիրուցան չէ, որքան սխալմամբ կը կարծվի լինել, բայց կը գտնվի ընդ հովանեավ այնպիսի տերության, որք իրարմե բոլորովին տարբեր քաղաքակրթության կը հպատակին, այդ ազգը թե՛ յուր հողին վրա, և թե՛ յուր գաղթականության մեջ կը սնուցանե գաղափարներու համերաշխություն։ Պ. Րաֆֆի այդ գաղափարներու ամենեն կենդանի ներկայացուցիչը հանդիսացավ։ Ակնարկ մը տուր ի Ռուսիա հայ գիտնականին գրադարանին, մտի՛ր հարուստին[illegible]տունը, այցելե աղքատին խրճիթը, գնա՛ զինվորին զորանոցը, կամ վաճառականին խանութը, տե՛ս երիտասարդը, ծերը, աղջիկն ու մանչը, ամենուք հափշտակված է Րաֆֆիով։ Ինչո՞ւ։ Վասնզի, ինչ որ ըսած են լոկ սրտի հետ խոսող մեծ վիպասանության համար, նույնը կրնանք ըսել ազգային վիպասանության համար։ Այդ մեծ վիպասանություններն գիտեն անսխալ կերպով թե մեր հոգվո ո՛ր թելերն պետք է թրթռացնեն, իսկ ազգային վիպասանությունը կարող եղած է հավասարապես ներգործել մեր վրա, իբրև մարդ և իբրև հայ։ Րաֆֆի լավ քննած է մեր զգացմանց բազկերակը և գիտե թե ունէ ազգի համար հուսահատությունը մահու զանգակի ղողանջն է։ Մահաբեր անհատից, մահաբեր է ազգերու համար «գերեզմանին այդ սև կաթը»։ Այդ հուսահատությունը հալածել մեր սրտերեն հեռի պահելու համար ազգին ամեն գեղեցիկ հոգիներն իրարու ձայն կուտային և Ազգային բանաստեղծը կը հրավիրե.

Դիտուն, թո՛ղ գիրքդ ժամ չէ կարդալու,
Գեղջուկ, դու էլ թո՛ղ եզներ ու գութան,
Տերտեր, դու էլ դադարե մեռել թաղելուց։

Բ

Ամեն կրունկ կարող է ձեռնտու լինել գեղարվեստից զարգացման, բայց մատենագրությունը որպեսզի ապրի, որպեսզի յուր բարգավաճումն

ստանա, կարօտ է ընկերական այնպիսի կազմակերպության, որ դըժբախտաբար մեզ անծանոթ է։ Եվ սակայն աննպաստ այդքան պայմաններու մեջեն հայ մատենագրությունը ընծայած է «Սև լեռան մարդը», «Շահինը», «Թորոս Լևոնին», «Հացի խնդիրը» և «Կայծերը»։

Նոքա որոց անծանոթ է մեր անցյալն և այն ոգին, որ մեր ամեն թշվառության մեջեն միշտ մաքրափայլ մեզ ավանդ պահված է, չեն կարող նոքա տալ մեկնություն գրական այդ երևույթին։ Հզոր է այդ ոգին և անանջատ ի մենջ. հզոր այնքան, մինչ միմյանց հակադիր այդքան մտքեր կը նվիրեն իրենց խելքը, իրենց սիրտը, իրենց ոգին վասն հաջողության միևնույն գաղափարի։

Բայց պատմական վիպասանք թե կարող են, շնորհիվ կորովի մտաց և անզուսպ ոգվո, հրաժարիլ բազմաթիվ պայմաններե, համարված անհրաժեշտ, այլ սակայն կը կասի իրենց թռիչը, կը մթագնի իրենց մտաց հորիզոնը, եթե պահ մը չապրին ի մեջ վայրացն, ուր ապրած են դյուցազունք, որք կը պատկերանան վիպասանին մտաց առաջ։

Արդարև օտար երկիր մը որքան ալ շռայլաբար օժտյալ լինի բնության պարգևներով, բայց և այնպես անզոր է խորին կերպով սիրտ գրավելու։ Անտարակույս շատ ցավալի լուր մը պիտի համարինք, իբր սիրողք գեղարվեստից, երբ իմանանք թե Փարիզի Լյուքսեմբուրգն այրած է, բայց սակայն այդ ցավը կարելի՞ է համեմատել այն վշտին հետ՝ զոր պիտի զգանք, երբ Աղթամար անհետ լինի։

Մեր վիպասաններեն միայն Մամուրյան գրեց «Սև լեռան մարդը», առանց այցելած լինելու այն վայրեր, զոր կը նկարագրե։ Սակայն այն բուռն զորությունը, որ անդիմադրելի կերպով կը ներգործե բանաստեղծին վրա, և անհնարին կ՚ընե նմա կիսկատար թողուլ յուր գործը, մինչև որ չարտահայտե յուր բոլոր զգացումներն, այդ անդիմադրելի զորության ճնշման ներքև չգտնվեցավ Մամուրյան և յուր մեծ գործը մնաց թերակատար։

Տեր Սարգսենց, նույնիսկ յուր մատղաշ օրերը, սիրտը գորոված, հոգին հուզյալ, մտոքն հափշտակյալ էր Տոսպյան ծովու տեսարաններովն, հանդիսավայր հիսուն դարերու հիշատակաց։

Պերճ Պռոշյանց կը ճանչնար յուր Աշտարակը, կը սիրեր զայն և Այրարատյան կենաց մանրանկարը կ՚ընծայեր պատմելով Աշտարակի բարքերը։

Կ՚ունենայի՞նք «Թորոս Լևոնին», եթե Ծերենց յուր սրտին բաբախ-

մանց ունկն դրած չլիներ Թորոսի ապրած վայրերն, և չկարենայինք իրեն համար ըսել.

...Եկն իսկ ըստեպ Վիկտորիոս
Ի կուճս այս ոգի ծըծել, ընդ հայրենին սրտմտյալ
դիս.
Թափառեր անմռունչ, Առնոսական ամայությունս՝
Պըշուցյալ կաթոգին ընդ դաշտորայն և ընդ երկինս.
Եվ մինչ ո՛չ և մի տեսիլ կենսածաղիկ բուժեր
զթախիծն,
Անողոքն աստ հանդչեր մահուն դալուկն ի դեմսն,
և հույս։

Ա՜հ, ոչ, հույսն ի սրտին էր, բայց մահու դալուկն ի դեմս չհանգչեցավ Տերենց ի շիրիմս հայրենի, այլ տառապյալ ոգվով ի Կիպրոս առանձնացյալ, անդ կ՚ապրեր. կարծես հողմոց բերած հիշատակներովը կենաց հմայս հաներ ապագային։

Եվ պիտի վայելեի՞նք այդ սրտագրավ տխրությունը, որ մտահույզ կ՚ընե զմեզ և երազող, այդ հայրագորով սրտի արտահայտություններն, որք «Երկունքի» և «Թեոդորոս Ռշտունվո» մեն մի տողին մեջ զմեզ կը հափշտակեն, եթե օր մը Տերենց, իբր Վոլնեյ մը, հայու սրտով չթափառեր հավերակս անդ, որոց համար կրնար ըսել.

Ո՜վ դու անցյալն և այժմուս Իտալիա՛ նազելի,
Ո՜վ վայելուչ դու սպարտեզ տիեզերաց շուրջակա,
Հանդե՜ս հանուրց արվեստից, գեղո բնության
հայելի.
Ամայության իսկ քում՝ ո՞վ իցե բնավ քեզ հավասար.
Գեղեցկագեղք են համայն վայրենագույն իսկ քո
տունկք.
Տաղկին երեզքըդ խոպան, քան թե զավառք բարեբունք.
Դու և անկման անդ քոյին վերերեվիս քաջափառ,
Եվ ավերակքըդ խանգար շողան շնորհք անսպառ։

Րաֆֆի, ծնած և մեծցած Պարսից և Ռուսաց հողերուն վրա, միշտ մանրախույզ քննությամբ ուսումնասիրած էր ազգին անցյալ և ներկա վիճակը։ Բարք, սովորույթք, կրոնք, ավանդությունք, գաղափար և ոգի, ո՛չ մի ինչ անծանոթ էր նմա։

Կովկասյան պատմության վերջի ժամանակներու փառահեղ և տըխրագույն դրվագն կը կազմե Մելիքներու պատմությունը։ Կարդա՛ «Խամսայի մելիքություններն» և կարծես թե բոլորովին մի նոր աշխարհ կը տեղափոխիս։ Ազգային առաքինություններն, ազգային թերություններն

տարօրինակ գույներով կը պատկերանան աչացդ առաջ, ի լույս նոր Տիտաններու դյուցազներգությանց։ Ժամանակը կրնա մեր մտքերեն ջնջել մեր կարդացած գրքերու շատ էջերն, սակայն ո՛վ որ կը կարդա մի անգամ «Խամսայի մելիքությունները», ալ այնուհետև ո՛չ մին այդ տեսարաններեն անհետ կը լինի յուր աչքերեն, ո՛չ մին այդ դյուցազանց անուններեն կը ջնջվի յուր սրտեն։ Մեն մի անուն կը մխի սրտին խորը։ Բայց.

Երևեցան իբր աստղ, անհետացան իբր երազ,

Էին որ զինչ և էին, արդ այսպիսիք են ահա։

Ինչպես մի Մելիքզադե հոգվով ու մտոք չհափշտակվեր, երբ կը ճեմեր յուր հարց հողերուն վրա, յուր յուրաքանչյուր քայլին կրնար ըսել.

Եվ հղփոշի զոր կոխեսն աստ՝ դյուցազունք կոխեցին.

Րաֆֆի կը սարսեր, իրեն հետ կը սարսռի ժողովուրդն ալ։ Պատմական վիպասանության մեջ սարսուռը կիսամեռ հոգիներու էլեկտրական ցնցումն է։

Մեր կամքեն անկախ պատճառներ անհնարին կ'ընեն մեզ գրել պ. Րաֆֆիի գործոց վրա այն եղանակով, որ կը համապատասխանե մեր փափագանաց և տրամադրության, հետևաբար հարկադրյալ ենք գոհանալ ընդհանուր տեսություններով։

Գ

Երբ մի հեղինակ սիրելի է մտքիդ ու սրտիդ հավասարապես, կարծես թե բան մը կը պակսի ի քեզ, թե այդ հեղինակի կենաց մանրամասնություններուն իսկ տեղյակ չլինիս։ Հեղինակին ներքին կենաց և յուր գործոց մեջ թվի թե սերտ կապ մը կա, և առանց այդ կյանքն գիտնալու կարծես դժար է ըմբռնել հեղինակին ոգին։ Երբ անցյալ տարի Ժյուլ Հոշ հրատարակեց յուր սիրուն գիրքը «Բարբիզցիք իրենց տան մեջ», այդ գիրքը շատերնիս ուրախությամբ ողջունեցինք, վասն զի ի դեպ կուգար, մեզ զանազան մեկնություններ տալ ֆրանսացի մեր սիրած հեղինակներու ներքին կենաց, մինչև իսկ տան մեջ ապրելու եղանակի վրա։

Բնական էր, որ երբ Թիֆլիզ էի, առիթ որոնեի այս հետաքրքրությանս գոհացում տալ։ Կ'ենթադրեի Րաֆֆիի մասին, թե այս հետաքրքրության մասնակից են Թուրքիո հայոց մեջ Րաֆֆին սիրողներեն բազումք։ Երբ կ'ուզեի տեղեկություն ստանալ պ. Րաֆֆիի ներքին կենաց վրա, համոզվեցա, թե այս տեսակ խնդիրներու մեջ հետաքրքրությունը մինչև ո՛ր աստիճան օգտակար գյուտերու ծնող կրնա լինիլ։

Թիֆլիզ հասնելուս երկրորդ օրն ապրիլ 26 եչ. երեկոյան դեմ էր. մինչ կ՚անցնեի արքունի փողոցեն, տեսա թե հեռվեն կուգար միջահասակ, բավական լայն մի պարոն, կապույտ ակնոցներով։ Քովեն անցնելով ձեռք երկնցուցի.

— Բարև, պ. Րաֆֆի, ինչպե՞ս եք։

— Բայց, պարոն...

Եվ զարմացած կը նայեր, թե ո՞վ է անծանոթն, որ զինքը կը ճանաչեր։ Ծանոթացուցի զինքս, և երկար չկեցա, վասնզի ընկեր ունեի։

Հաջորդ օրը երբ միասին էինք, պ. Րաֆֆի զարմացմամբ կը հարցներ, թե ինչպե՞ս բազմության մեջ զինքն ճանչցա, վասնզի ոչ զինքը տեսած էի և ո՛չ ալ լուսանկարը։ Ընկերս ալ ամենևին բան մը չէր ըսած։

Վասնզի, այս է պատասխանս, խուռն բազմության մեջ գեղեցիկ տաղանդ մը անտես չանցնիր. չեմ գիտեր ի՛նչ շնորհք կա դեմքին վրա, որ մագնիսական զորությամբ կը քաշե տեսնողն։

Րաֆֆիի լուռ բնավորությունը, մի քիչ խորհրդավոր դեմքը, շարժումներն ոչ ինչ ի նմա ենթադրել կուտա, թե վիպասան լինելու համար առեղծված լիներ։ Սակայն երբ օր մը կը տեսնես զնա, շլաբկան հանած, գլուխը բաց, այն ժամանակն է, որ այդ գեղեցիկ ճակատը, որ արգարև վսեմ ճակատ մ՚է, կը հարկադրե զքեզ մտածել, թե ի՛նչ որ ալ լինի արտաքին երևույթը, այդ ճակատն կրողը սքանչելի կերպով բանաստեղծ, վիպասան կրնա կոչվիլ։

Թե օր մը բարեկամաբար սեղանի մը վրա Կախեթու գինին հանկարծ մի քիչ շատ փախչի և ներևակայությունդ փոխադրվի աչքերուդ մեջ ու տեսնես, թե վիպասանը որպիսի բարեկամական գորով ցույց կուտա, այն ատեն կ՚ըմբռնես, թե արտաքուստ անտարբեր երևցած կերպարանք մը շատ տաքուկ սիրտ կը կրե։ Եվ վիպասան մի մը տաքուկ սիրտ չունի— կը նմանի կնոջ մը, որ կուզե գեղեցիկ կոչվիլ առանց ունենալու աղվոր աչքեր։

Պ. Րաֆֆին տեսնելուս մյուս օրն էր, որ միասին գնացինք յուր տունը անցնելով այն լայն, մեծ ու անհոգ փողոցներեն, որ քիչ շատ բնակչաց բնավորությանը համարացված են։ Կ՚ուզե՞ք ճանչնալ ժողովուրդի մը բարքը, կացությունը, գաղափարներն. երբ կը մտնեք քաղաք մը, այցելեցեք փողոցներն և շուտով ըստ բավականին գաղափար մը կը կազմեք ձեզ հետաքրքրող այս կետերուն վրա։

Մտանք միապաղաղ Սոլոլակի թաղը և հասանք Սվեչնիկյան տան դուռը։ Դուռը արդեն բաց է, և անմիջակ քիչ մը հողի վրայե անցնելով, փայտե սանդուղք մը աստիճաններեն ելնելով, ներս մտանք սենյակի մը մեջ, զոր պատեր պաշարեր էին գարնանային տերևներն։ Ո՞ր ենք,

քարակերտ փողոցի՞ մեջ, թե այգեստան մը։ Կանանչ տերևներն մթնշաղ գույն մը կ՚ընծայեն բնակարանին. փոքրիկ սենեկին մեջ, փոքրիկ գրասեղան մը կա, որու վրա անհնարին է նշմարել փոշվո հյուլե մ՚իսկ։

Ըսած են, թե «ոճը մարդն է», բայց ուրիշներն ալ կ՚ըսեն, թե «կարասիքը մարդն է»։

Զափավոր մեծությամբ գրասեղանին ձախակողմն է մի գրադարան, ուր կը պահվին մեյմեկ օրինակ հեղինակին գործերեն, և մի քանիներն յուր սիրած գրքերեն։ Պ. Րաֆֆիի աշխատանաց սենեկի հանդեպ ուրիշ մի սենյակ կը պարունակե գրքեր ավելի մեծ քանակությամբ։

Ուր որ աչքերդ ածես Րաֆֆիի սենեկի մեջ, ակներև կը տեսնես գեղեցիկ ճաշակով օժտյալ տանուտերը։ Գրքերը կազմված են գեղեցիկ, թավշապատ, ոսկեզօծ։ Գրասերներու համար հեշտության մեծագույնն է իրենց ափերուն գզվել գեղակազմ մատյան մը։ Յուր փարթամության մեջ Ռոչիլտներեն մին, որ այնքան դժբախտ վախճան ունեցավ, երկու մեծ հրճվանք ուներ,— աղքատաց բարիք ընել և աչքերն պարարել ի տես փառակազմ գրոց մատենադարաններու։

Րաֆֆիի սենեկին մեջ մի քանի պատկերներ, պարսկական սօֆա մը և նստարանք, կ՚ամբողջացնեն համեստ կարասիքը։

Այս տեսարանը ինձ համար տարօրինակ էր. չէի կրնար ըմբռնել թե ինչպես մի մարդ կարող է գրել, երբ մեծ գրասեղանի մը վրա յուր թևերն ազատ չի պարզեր, երբ գրքերու կույտ մը զինքը չի պաշարեր, և գրասեղանը չնմանիր քաոսի մը։— Բայց այդ կոկիկ, պարզ սենեկին մեջ Պ. Րաֆֆի կ՚ամփոփե յուր միտքը, կը չափավորե հոգվույն թռիչը Ռուսիո մեջ գրող մը, նույնիսկ երբ օրագրի մեջ կը գրե, պարտավոր է ամեն միջոց ձեռք առնել, յուր եռանդը սահմանափակ ընելու համար…

Եթե հեղինակը ինքնին չփութա օրագրի մը էջերուն մեջ հրատարակելիք հոդվածոց կամ վիպասանության մասին շղթայապիրկ ընել յուր միտքը, արդեն Պ. Մանասթրյանց անդ կեցած է։ «Մշակ» օրագրի մեջ հրատարակյալ վիպասանության կամ պատմական գրվածոց ձեռագրերն տեսա. արյունաներկ թանաքը շատ սքանչելի տողեր կիսամեռ անդ ձգած է։ Մարդ կ՚ապշի, որ քաղաքակրթության մեծ դարուն վերջերը տակավին օրագրությունը ենթարկյալ լինի մեծ պետության մը մեջ ամեն անզարգացած մանասթրյանցներու հաճույից, և մեծ տաղանդ մը պարտավոր լինի յուր ամենեն գեղեցիկ տողերն զոհել ռաէ անձի հիմարական մտածության։ Տասնևիններորդ դարու վերջերը անհանդուրժելի է այդ ընդդեմ մտաց բարբարոսությունը… Ինչ, ահեղ պետություն մը ափ մը հանդարտ և հավատարիմ ժողովրդեն կը սարսափի՞, որ նորա մամուլը այնքան չարաչար կը կաշկանդե։

Սակայն չհուսահատինք քաղաքակրթության հաղթանակեն։ Մտաց արտահայտությունները ատեն մը ուրիշ կարմիր գույնով կը ներկվեին. այժմ արյան տեղ հաջորդած է կարմիր թանաքն, յուր կարգին նա ալ անհետ կը լինի։

Բայց մինչև որ անհետ լինի, իցե՜ թե Ռուսիո կառավարությունը փոխանակ խավարամիտ կատքոֆներու, ունկն դներ մարդկության ճըշմարիտ բարեկամներու ձայնին, որք միանգամայն ազգաց բարեկամներն են։

Երիտասարդ, լի կորովով կ՚երևի Ռուս ժողովուրդը, սակայն մտքի կաշկանդումը շատ շուտ անդամալույծ կ՚ընե հույժ քաջառողջ երևացող ազգն իսկ։

«Մարդկային ցեղ մը կրնա ուրիշ ցեղերե վերջ երևան գալ պատմության մեջ, բայց միանգամայն անկման դրոշմովը դրոշմված լինիլ, այնքա՜ն շուտ կը ծերանան ժողովուրդք ստրկության մեջ, այնքա՜ն քիչ ժամանակ կը բավե կորաքամակ ընելու զիրենք և կերպարանափոխ։ Տեսար զանոնք երեկ. լի, զեղուն էին կենդանությամբ. այսօր կ՚անցնիս, բայց այլևս զիրենք չես ճանաչեր։ Շատ ավելի վատ է հետևությունը, երբ խնդրո առարկա են ժողովուրդք, որք բնավ ազատ չեն եղած։ Անոնց ամեն մեկ օրը մի դար կը հաշվի։ Կը կարծեք, թե երիտասարդ են, զի ոչինչ ըրած են, իբր այն, թե ի անհիշատակ ժամանակաց անտի ստըրկությունն չլիներ աշխատության ամենեն դժնդակը։ Ի հեռուստ ձեվ թվի, թե՝ են նոքա պարզամիտ առաքյալք սպագային. և սակայն նոցա ճակատներու վրա արդեն դրոշմյալ են վաղահաս ծերության կնճիռներն, զոր անիրավության թմբրական արեգակն ի նոսա փորած է իրենց օրորոցին մեջեն։ Մերձեցեք դեռատի այդ ցեղերուն. ինչ կը գտնեք.— մահամերձ ծերունիներ, որք տակավին կյանք չվայելած արդեն հյուծյալ են» (Է. Գինե.— «Իմաստասիրություն Ցրանսայի պատմության»)։

Իմաստասիրին ցաված ոգվույն արտահայտություններն կը փափագինք, որ օր մը չլինին տխուր իրականություն։ Վասն զի եթե իբր մարդ ամեն ազգաց և ժողովրդոց զարգացման և մեծության փափագողներն ենք, անշուշտ իբր հայ կը տենչանք, որ քաղաքակրթության մեջ շուտ հառաջանան, որչափ հնար է շուտ, այն պետությունք, որոց հովանվույն ներքև կ՚ապրին հայեր։ Տիրապետող ժողովուրդի քաղաքակրթությունը մեծապես կը ներգործե հպատակ ազգին զարգացման վրա։

Եվ սակայն առայժմ առկախ կը թողունք մեր այցելությունը Րաֆֆիի տան մեջ, և հաջորդ շաբթվան կը պահենք ներկայացնել զանազան առարկաներ, որոց միջոցով Կովկասու և Անդրկովկասու հայ

ժողովուրդը կարծած է ավելի զգալի կերպով արտահայտել յուր համակրանքն առ Գ. Րաֆֆի։

Դ

Ռուսիո Հայոց մեջ գրական անձինք միշտ կանգնած են բարձր պատվանդանի վրա, և ժողովուրդը կ'արտասանե նոցա անուններն ակնածությամբ և համակրանոք։ Ռուս ժողովուրդը մեծապես նպաստած է այս զգացմանց և գաղափարաց զարգացմանն ի Հայս։ Հրապարակախոս, վիպասան, պատմաբան, գրականության ամեն ճյուղերուն պատկանող անձնավորությունք վայելած են ամեն ատեն ռուս ազգին սերը, և իրենց ազդեցությունը միշտ մեծ եղած է իրենց ազգին վրա։ Ռուս ազգը մին է ի նոցանե, որք ինչքան ալ թերությանց ենթակա լինին, բայց և այնպես հայրենյաց սերը իրենց առաքինությանց գլխավորն է։ Հայրենասեր ժողովուրդ մը պետք է նաև լինի գրասեր։ Ազգային ոգվո զարթնում և ազգային գրականության բարգավաճում ժամանակակից են միմյանց։

Միևնույն երևույթը ակներև կը տեսնվի Կովկաս, և այսօր ազգային մատենագիրն կը գտնվի անդ այնպիսի դրության մեջ, որ անծանոթ էր Նալբանդյանցներու և Նազարյանցներու։ Գ. Րաֆֆիի հոբելյանին առթիվ ի հանդես եկած բուռն համակրանաց արտահայտությունը շոշափելի ապացույցն եղավ Ռուսիո Հայոց մատենագրական սիրահարության։

Գրական հոբելյա՞ն. գյուտ մ'է Ռուսիո Հայոց կողմանե, և այդ բառի նշանակությունը տակավին անծանոթ է մեզ։ Ո՞վ ի մենջ օր մը մտածեց թե՝ ո՞ր գրագետն առ մեզ բոլորած է յուր աշխատանաց քսան և հինգ տարվան շրջան մը։ Թերևս հաջորդ տարվա մեջ տոնենք կրթական հոբելյան մը, բազմաշխատ և բազմարդյուն ծերունվո մը, Պ. Քրիստոսատուր Ղազարոսյանի մեծ վաստակոց սկզբնավորության քսան և հինգերորդ ամյակը, բայց գրական հոբելյան մը ծափահարելու նշանը տակավին չենք տեսներ։

Խանդն ընդհանուր է. ամենափոքր գյուղն մրցում կ'ընե մեծ համալսարանին հետ. ամեն ոք բորբոքյալ է միևնույն ոգվով, և համենեուստ կը տեղան առ Գ. Րաֆֆի ապացույցք այդ սրտաբուխ սիրույն։ Այդ ապացույցք հայու հանդիման ցույց կուտան, թե ինչպե՞ս բանաստեղծ մը կարող եղած է ներգործել յուր ազգի վրա։

Արդեն մեր նախորդ հոդվածոց մեջ խոսեցանք ի մասին այն ներդաշնակության, որ գոյացած է ժողովրդային զգացմանց և հեղինակներու գործոց միջև, և եթե ամեն կողմանե առ Գ. Րաֆֆի առաքյալ

հիշատակներն մեր աչաց առաջ ունենանք, կը տեսնենք թե ինչպես կապված են միմյանց հետ Րաֆֆի և հայ ժողովուրդը։

Րաֆֆիի համար Ռուսիո ամեն կողմերեն դրամական նվերներ ղրկվեցան ի Տփղիս։ Երիտասարդներու մասնախումբ մը կեդրոն էր այդ հավաքմանց։ Մշակ սիրով կը հյուրընկալեր առաքված նվերները։

Մատենագրության զարգացման փափագողք անտարակույս շատ գոհ կը լինին, երբ հեղինակի մը նյութական վիճակի բարվոքման լուրն առնեն։ Գրագետի մը համար միայն տաղանդ ունենալ չբավեր, այլ լավ քսակ մը ալ անհրաժեշտ է։ Հեղինակներն որքա՛ն ալ կաշկանդվին օրինաց շրջանակին մեջ, բայց և այնպես այդ կաշկանդումն այնքա՛ն ծանր չէ, որքան՝ ստիպյալ լինիլ նյութական անձկության պատճառավ լռել։ Պ. Րաֆֆիի գտած դրամական քաջալերությունը չենք ըսեր թե այնքան մեծ է, որ այսուհետև զինքն ազատ պիտի կացուցանե բոլորովին ոևէ մտածութենե, բայց գումարն որքա՛ն ալ լինի, զի մեզ քանակն անծանոթ է, դիտելու կետն այն է, թե՝ Ռուսիո հայ ժողովուրդն սկսած է վերահասու լինիլ այն ճշմարտության թե՝ ազգ մը, որ լավ մատենագրություն ունենալ կը փափագի, պարտավոր է նաև լավ վճարումներ ընել։ Ռուսիո Հայք դեռ նոր կքայլափոխեն հառաջադիմության այս շավղին մեջ և կը մաղթենք կատարյալ հաջողություն։

Սակայն դրամական նվերներն երկրորդական կրնան համարվիլ համեմատությամբ ուրիշ կարգի նվերներու։ Հեղինակի մը սրտին շատ ավելի քաղցր է իրեն սիրահար սրտի մը արտահայտություններն, քան ոևէ նյութական փոխարինություն։ Ի՞նչ դրամ կարող էր այնքան հուզել Միվսեի մը հոգին, քան տեսնել երիտասարդ մը, որ հուշիկ հուշիկ յուր ետեվեն կ՚երթար և յուր բերնեն ձգած գլանիկի մը մնացորդն վեր առնելով իբր մասունք կը պահպաներ։ Խնդրեցի Պ. Րաֆֆիեն, որ հաճի ինձ ցույց տալ մի քանիներն այն հիշատակներեն, զոր յուր ընթերցողք ընծայած են հեղինակին։ Դժբախտաբար ժամանակ անցավ և ամենեն կարող չեմ հիշել, և օրինակածներս այժմ հազիվ թե կարող եմ կարդալ, զի գրեթե ջնջված են։

Մոսկվայի հայ հասարակությունը, որ միշտ այնքան հոժարակամությամբ մասնակցած է մեր զարգացման ամեն ձեռնարկներու, անտարակույս պետք էր գեղեցիկ կերպով ներկայանար գրական այդ տոնախմբության։

Թավշապատ գրքի վրա արծաթե թանաքաման մը և ուղերձ մը Մոսկվայի հայոց զգացմանց ապացույցն են։ Թանաքամանը (ըստ մեզ կաղամար) նուրբ շինված մ՚է ընտիր ճաշակով, և զարդարյալ ոսկի փա-

ռավոր գրչով մը։ Բավական է ըսել, թե այդ գործը Ռուսաց արքայական ոսկերիչ Պ. Խլեպնիկովի մատանց ամենեն գեղեցիկ վաստակող մին է։

ՄՈՍԿՎԱՅԻ ՀԱՅՈՑ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵՆԻՑ 1859— ՐԱՖՖԻ— 1884

Ժողովուրդի մը շնորհակալությունններն երկու բառով բացատրել հնարավոր է. այդ երկու բառերը ցույց կուտան թե հայ հասարակությունը և Րաֆֆի միմյանց հետ կապված են շատ սերտ կապերով։

Սակայն Մոսկվայի հասարակությունը չբավականանար թվի թե լակոնական ոճով, այլ կուգա վայրկյան մը, որ իրենց սիրտը կարոտ է ավելի պերճախոս արտահայտության, և ահա իրենց խանդավառ հոգվոյ բարեմաղթությունններն գեղեցիկ ուղերձներով ի հայտ կուգան։ Շատ սիրուն գրություն մը պահպանված արծաթապատ սքանչելի թղթապանակի մը մեջ, կհայտնե, թե Րաֆֆի ինչե՞ր ըրած է Հայոց համար։

Խարկով կարող չէր ետ մնալ Մոսկվայից։ Համալսարանական ուսանողք, որք մինչև այն ատեն իրենք զիրենք բավական սեգ կը կարծեն, կամ անտարբեր հեղինակի մը համար գորովալիր զգացումներ արտահայտելու, այդ համալսարանականք իրենց կարգին հաղթված են Պ. Րաֆֆիի գրչեն և մի հույժ գեղեցիկ թանաքաման ղրկելով իրենց հիշատակ առ Պ. Րաֆֆի, Խարկովի համալսարանի հայ ուսանողությունը հայտնած է թե՝ ի՛նչ որ ալ լինին իրենց ավանդված ուսումներն, ինք ունի սիրտ մը ազգային սիրով բաբախող։

Իրավ է, որ չպակսեցան ազնվամիտ անձինք, որք այս ցույցերն իբր հակա-կառավարական ցույցեր նկատելով, ըստ այնմ տեղեկագրեր ուղղեցին ուր որ անկ է. Ռուսիո մեջ հեղինակներն պարտավոր են սպասել ամեն տեսակ քաջալերության, ամեն տեսակ խոչընդոտներու։

Երկար պիտի տևե մի առ մի թվել այն ամեն հիշատակները, որք Ռուսիո հայոց և ի մասնավորի միջակ դասու ազնիվ զգացմանց արտահայտությունք են։ Մեկ կողմ կը տեսնես Տուրգենևի, Ռուսաց ազգային մեծ վիպասանի ամբողջ գործերն, գեղեցիկ կազմով, նվիրված Ներսեսյան սանուց կողմանե։ Պատանի ուսանողք զգացված Տուրգենևի մելամաղձիկ նկարագրություններե, չէին կարող թերևս այլ կերպով հայ վիպասանին արտահայտել իրենց զգացումներն, քան այդ նվերով ցույց տալ, թե հայ պատանեկությունն այլ գիտե, յուր սրտին հետ միացնել իբր մարդ և իբր հայ սուրբ զգացումներ։

Գեղարվեստից ներկայացուցիչք անտարբեր հանդիսատեսներ չին

պաշտոնակցի մը տոնախմբությանը։ Պ. Հովհաննիսյան ի Մոզդոկե կը նվիրե հեղինակին պատկեր մը, ուր տխրադեմ կին մը զավակաց ձեռքերեն բռնած՝ կ'ողբա աներևույթ եղած ցան և ցիր քաղաքներու շիրմաց վրա։

Այդ պատկերին հանդեպ Սահակ Մեսրոպ են, որք ավելի տխուր կ'ընծայեն այդ ավերակաց անցելույն և ներկային միջև տարբերությունը։ «Աղբյուրի» խմբագիրն է, որ այս փափուկ նվերն ըրած է։

Ավերակաց և Սահակ Մեսրոպի մոտ կը տեսնես Պ. Րաֆֆիի պատկերն, զոր հեռագրատանց մեջ աշխատող հայ երիտասարդ մը յուր հանգըստյան վայրկյաններն օգուտ քաղեր է պատրաստելու համար։

Սակայն այս հոբելյանի ոգին շատ պարզ կերպով բացատրած է երիտասարդի մը վրձինն ու գրիչն։ Քնար մը յուր մեջ պարունակած հետևյալ տողերեն կը բացատրե ամեն ինչ.

Իմ կյանքից անցան տարիք քսան ու չորս
Բայց ես մինչ այսօր մնացի վիրախոս,
Իսկ այսուհետև գիտեմ՝ հայերեն
Մի քանի բառեր կարդալ ու խոսիլ։

Ի՞նչ տեղից գիտեմ, հարցուր ընթերցող,
Կամ՝ ինձ հայերեն ո՞վ էր ուսուցող,
Այդ մարդն էր Րաֆֆին յուր անմահ գրչով,
Որ լեզուս բացեց յուր սուրբ գրքերով։

Ե

Ի՞նչ ըրավ գրական քննադատությունը Պ. Րաֆֆիի համար։ Ներելի էր մեզ ի սկզբան հուսալ, թե՝ կովկասյան հայ տաղանդը, զարգացած գերմանական և ռուսական համալսարանաց մեջ, ուներ յուր տրամադրության ներքև բազմադիմի միջոցներ գաղափար մը տալու մեզ այն գրական քննադատության, որո պարտքն է պարզել գրքի մի ունեցած կոչումը և նորա ազդեցությունը ժողովրդյան մտաց և բարուց վրա։ Դըժբախտաբար կովկասյան հայոց մեջ ի հայտ չեկավ այն քննադատը, զոր կը փափագեինք տեսնել։ Կարելի՞ է երևակայել, որ Ռուսիո հայոց մեջ քննադատը տակավին այն վիճակին մեջ գտնվի, որ կարծե թե յուր պաշտոնը «գյուղական վարժապետի մը նման միայն թաթպան բաշխել լինի աշակերտաց»։— Արդարև ամենեն ընդարձակ քննադատությունը, զոր տեսանք Պ. Րաֆֆիի գործոց մասին, ուրիշ բան չէր ներկայացներ մեզ՝ բայց եթե ատելության շունչ մը։

Այո՛, եվրոպական գրադատության այս զարգացման միջոցին դեռ

հայ գրագատը կը զբաղի հատկացուցչի և հատկացյալի սխալներ որոնելով։ Աշխարհագրական չեմ գիտեր որպիսի անճշտություններ կ՚ուզեն գտնել, և հաստատել, թե Րաֆֆիի այս ինչ գործին մեջ և ուրիշ հեղինակի մը այս ինչ գործին մեջ նմանության կետեր կան. հետևությո՞ւնը. ուրեմն Րաֆֆի բանագող մ՚է։ Իսկ այն ամեն փիլիսոփայական և ուրիշ զանազան կարգի գաղափարները զոր հեղինակը կը ծավալե ժողովուրդին մեջ, նոքա անտես կը լինին։ Ինչ որ վիպասանության մը կյանքը կը հորինե, կամ նորա տկար կողմը կը համարվի, այդ ամենը մոռացության կը տրվի։ Սիրտ մ՚ունի վիպասանը, հոգի մը, զոր կը ցոլացնե յուր վիպասանությանց մեջ, որոնք ոսկեզօծ շրջանակը կը կազմեն բեղմնավոր տաղանդի մը հրապույրներն. և այդ սիրտը, այդ հոգին, ժողովուրդի սիրտն է, ժողովուրդի հոգին է, և քննադատը որպիսի մթնոլորտի մը մեջ կ՚ապրի, որ չ՚ուզեր այդ ամենը տեսնել։ Ընդհակառակն, կ՚ուզե շատ և շատ պարզել այն կետերն, որք զհեղինակն իսկ գուցե կասկածելի ընծայեն, առանց յուր գիտության, հաշիս բարձրագույն իշխանութեան։

Բայց, սակայն առ ի՞նչ օգուտ քննադատի մը հարվածներն, երբ նոքա չեն հենած այնպիսի հիմանց վրա, որք ինքնին արդեն խարխուլ լինին։ Կոթողի մը դեմ ամեն հարված անզոր է։ Ժողովուրդը, ազգը կը լափե այդ հատորներն, որոց մեջ կը գտնե յուր սրտին արձագանքն։ Իսկ թե քննադատ մը կարենար պարզել այն առնչությունը, որ կը կայանա ազգին և հեղինակի միջև, այն ատենն է, որ քննադատը պաշտոն մը կատարած կը համարվի, հեղինակին աչ բաղումը կը նկատվի, նորա գաղափարաց տարածման մեծ գործին է և ըստ այնմ յուր ընդունելությունն ալ մեծ կը լինի ժողովուրդի մեջ։

Ինչպես ըսինք մեր առաջին հոդվածով, զանազան պարագաներ, անկախ մեր կամքեն, հնարավոր չեն ընծայեր մեզ տալ ըստ մեր փափագանաց պետք եղած տեղեկությունները Պ. Րաֆֆիի գործոց մասին, հետևաբար մեր ուրիշի կարգի տեսություններն ալ ստիպյալ ենք զանց առնել։

Պ. Րաֆֆի, կորովի թե՛ մտոք, և թե՛ մարմնով, կարող է տակավին ընծայել մեզ բազմաթիվ պատվական հեղինակություններ, որոց մի մասն արդեն պատրաստ յուր մոտն ունի։ Խնդրեցի իրմեն մի գործ «Արևելքի» համար, սակայն, ահա՛ քար գայթակղության բառը։ Երբ «Խաչագողի հիշատակարանը», որուն մեկ մասը «Մշակի» մեջ տպված և մյուս մասը անտիպ էր, տակավին, «Արևելքի» մեջ հրատարակելու արտոնություն խնդրեցինք, առաջարկելով ընդունիլ յուր պայմաններն, Պ. Րաֆֆի այնքան բարի եղավ, որ չուզեց առաջարկել ոևէ պայման, որուն համար այս առթիվ մեր շնորհակալություններն վերստին կը կրկնենք։

Դ

Մեր այս հակիրճ տեսության մեջ հայ վիպասանության մասին չուզեցինք խոսիլ զանազան վիպական գործոց վրա, զի թերևս առիթ ունենանք օր մը, երբ պարագաները ներեն, ավելի ընդարձակ ուսումնասիրություն մը ներկայացնել։ Ոմանք դիտողություն ըրին թե՝ Աբովյանի «Վերքը» չենք հիշատակած։ Սակայն այդ մեծ գործը ավելի ժողովրդական դյուցազներգություն մ՚է, քան վիպասանություն մը, և միանգամայն մեր վերջի տասնհինգ տարիներու գրական շարժման շրջանակեն դուրս է։

Այժմ կը մնա մեզ խորհիլ, թե ի՛նչ ապագա կը պատրաստվի հայ վիպասանության։ Մեր կարծյոք գրական զանազան ճյուղերու մեջ վիպական ճյուղն է, որ ամենեն ավելի գրավական ունի զարգանալու։ Արդարև, շատ դժվար է այսօր մեր մեջ մշակել պատմության, փիլիսոփայության և գիտության զանազան ճյուղերն։ Այդ դժվարությունը ոչ միայն մեզ, այլ նաև օտար ազգերու համար իսկ գոյություն ունի։ Միայն ընթերցողաց բազմությունը չէ, որ կը քաջալերե եվրոպացիներն և ամերիկացիները նվիրել իրենք զիրենք այդ ճյուղերու մշակման, այլ նաև զորավոր աջակցություններ, բազմառատ վարձատրությունք, պաշտոնական փոխարինությունք և պատիվք հնարավոր կ՚ընծայեն այդ ճյուղերու զարգացումն։ Մեր արդի վիճակը չներեր այսպիսի շռայլություն, և տակավին եկեղեցականաց կամ վանական միանձանց մենաշնորհն է նույնիսկ մեր պատմության ուսումնասիրությունը, և այն ալ մեծ մասամբ հնագիտության տեսակետով և ոչ թե պատմական փիլիսոփայության։ Սակայն այժմ վանքերն ալ հետզհետե կը դանդաղին հոգալ մեր այդ կարգի պետքերն։ Վենետիկի Մխիթարյանք իրենց դպրոցներու կը նվիրեն իրենց ամեն առույգ ուժերն. Վիեննայի Մխիթարյանք դրամական տագնապի մեջ չեն կարող ոչինչ ընել։ Առայժմ մեծ հույսեր չունինք Էջմիածնե, Երուսաղեմե, Մուշե։

Սակայն վիպասանությունը թեպետ մատենագրության ամենեն հեշտին ճյուղը չէ, բայց հեշտություն պատճառող է։ Մեր վիպասանությունը բարեշրջման ենթակա է, և երբ պատմական էր, այժմ կ՚սկսի իրեն ասպարեզ ընտրել մեր ժամանակակից կյանքն։ «Մտյտան» կամ «Գարնան մի ասուպ» այդ բարեշրջման երախայրիքն են։ Եվ արդարև, եթե պատմական վիպասանությունը ըստ բավականին յուր դերը կատարեց, արդի վիպասանությունը շատ առատ հունձք ունի իրեն համար։ Երիտասարդ տաղանդներն համարձակ կրնան թևակոխել այդ ասպարեզ, այն վստահությամբ, որ կենաց իրական պատկերներ ներկայացնելով կարող են մեր ընկերական բազմադիմի խնդրոց լուծումն ի հրապարակ հանել։ «Մասիս» և «Արևելք» իրենց աջակցությունը հոժարակամ պիտի նվիրեն այն ամեն երիտասարդներու, որք մեր ընկերական կենաց ուսումնասիրությունը իրենց աշխատանաց ասպարեզ կ՚ընտրեն։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Արդարության ոգեշունչ մունետիկը Հակոբ Մարգարյան III

Պատմվածքներ

Օրհնյալ գերդաստանը 3
Արվեստահանդես գացող կովկասցին 13
Ազգիս բարերարները 18
Քանիներ տեսա 24
Սրտի հաղթանակը 28
Ծովուն հետ 34

Կյանքի պատկերներ

Դատապարտյալը 40
Երազի մը գինը 76
Կատակ մը 89
Ապուշը 108
Դերասանուհին 157
Հոգու զավակը 179
Հաճույքի համար 230

Վիպակներ և վեպեր

Մինչև ե՞րբ 240
Ոսկի ապրանչան 256
Կարմիր ժամուց 309

Գրականագիտական հոդվածներ

Պատմություն ԺԹ դարու Թուրքիո հայոց գրականության 371
Արևմտյան հայոց արդի գրականությունը 410
Գրական հուշեր 476
Թուրքիո հայոց գրականությունը 487
Գրական դեմքեր 498
Րաֆֆի և հայ վիպասանությունը 508

Արփիար Արփիարյան ԵՐԿԵՐ (պատմվածքներ, վիպակներ) **Арпиар Арпиарян**
СОЧИНЕНИЯ (рассказы, повести) (на армянском языке) Издательство «Советакан грох» Ереван, 1987

Խմբագիր՝ Ռ. Մ. Մուրադյան, *Նկարիչ՝* Մ. Ռ. Սոսոյան, *Գեղ. խմբագիր՝* Գ. Խ. Գյուլամիրյան, *Տեխ. խմբագիր՝* Վ. Գ. Ավագյան, *Վերստուգող սրբագրիչ՝* Ա. Ա. Ասրյան:

ИБ № 5901

Հանձնված է շարվածքի 12. 08. 86 թ.։ Ստորագրված է տպագրության 10. 02. 87 թ.։ Ֆորմատ 60×84 1/16։ Թուղթ՝ տպագր. № 1։ Տառատեսակ «Գրքի սովորական»։ Տպագրություն բարձր, 31,15 պայմ. մամ., 31,49 պայմ. ներկ. թերթ., 28,9 հրատ. մամ.։ Տպաքանակ՝ 51000։ Պատվեր՝ 2150։ Գինը՝ 2 ռ. 80 կոպ.։

«Սովետական գրող» հրատարակչություն, Երևան—9, Տերյան 91։

Издательство «Советакан грох», Ереван-9, ул. Теряна, 91.

ՀՍՍՀ հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետական կոմիտեի Հակոբ Մեղապարտի անվան պոլիգրաֆկոմբինատ, Երևան—9, Տերյան 91։

Полиграфкомбинат им. Акопа Мегапарта Госкомитета по делам издательств, полиграфии и книжной торговли Арм. ССР, Ереван-9, ул. Теряна, 91.